Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***



ՍԱՍՈՒՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄՈՒՍԱՆԵՐԸ ՉԼՌԵՑԻՆ

Հայաստանի մշակույթի գործիչները 1941—1945 թթ.
Հայրենական մեծ պատերազմում, զոհված հայ
արվեստագետներ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏՄԱԿԱՍՏԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ, ԱԿՆԱՐԿՆԵՐ,
ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԵՎ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂ» 1989

ԳԱԴ 63.3(2)722
Գ 888

Նվիրում եմ
Հայրենական մեծ պատերազմում
զոհված հորս՝
ՍԵՐՈԲ ԳՐԻԳՈՐԻ ԹՈՐՈՍՅԱՆԻ
պայծառ հիշատակին:

Հեղինակ

Վերջաբանը ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆԻ

Գրիգորյան Ս. Ս.

Գ 888 **«Մուսաները չլռեցին»** (Հայաստանի մշակույթի գործիչները 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում, զոհված հայ արվեստագետներ): Պատմա-փաստագրական հոդվածներ, ակնարկներ, վավերագրեր և մատենագիտություն: Գիրք I.— Եր.: Խորհրդային գրող, 1989 թ. 392 էջ,36 նրդ.

Գրքում հանգամանորեն ներկայացված է հայ կոմպոզիտորների, երաժիշտների, նկարիչների, ռեժիսորների, դերասանների, կինեմատոգրաֆիստների և ժուռնալիստների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին: Զոհված մշակութային գործիչներին նվիրված են առանձին դիմանկարային ակնարկներ: Գիրքն ունի Հայրենական մեծ պատերազմին (ՀՄՊ) մասնակից և զոհված արվեստագետների անվանացանկ, Մեծ հայրենականի տարիների մշակութային կյանքի կարևոր իրադարձությունների տեղեկատու և մատենագիտություն: Առաջին գիտամփոփ աշխատությունն է ՀՄՊ-ին հայ արվեստագետների ունեցած մասնակցության մասին:

Նախատեսվում է ընթերցող լայն շրջանների համար:

Գ $\frac{4802000000}{705(01)89}$ 89 «Տ» ԳԱԴ 63.3(2)722

ISBN 5.550.00163-2

«©» «Խորհրդային գրող» հրատարակչություն, 1989

Տպագրվում է Հայկ. ԽՍՀ կոմպոզիտորների, նկարիչների, թատերական գործիչների և ժուռնալիստների միությունների երաշխավորմամբ:

ԽՈՍՔ ԸՆԹԵՐՑՈՂԻՍ

1939 թ. սեպտեմբերին բռնկված Համաշխարհային երկրորդ պատերազմը, որն ավարտվեց 1945 թ. սեպտեմբերին, Երկիր մոլորակի խաղաղ և ստեղծագործ ժողովուրդներից խլեց 50 միլոն մարդկային կյանք, պատճառեց 4000 միլիարդ դոլլարի նյութական վնաս:

Չնայած դեռ 1939 թ. օգոստոսից գոյություն ուներ ԽՍՀՄ-ի հետ խաղաղ համագործակցության դաշինք, բայց և այնպես Գերմանիան դրժեց իր ուխտը: 1941 թ. հունիսի 22-ին, առանց պատերազմ հայտարարելու, նա Խորհրդային Միության դեմ դուրս բերեց միանգամից 153 դիվիզիա, մոտ 4 հազար տանկ, 5 հազար ռազմական ինքնաթիռ, 47 հազար հրանոթ ու ականանետ: Գերմանիայի անից իր հետ դաշնակցած խորհրդային զինվորի դեմ կռվում էին իտալական, հունգարական, ռումինական և ֆիննական զորքերը: Մինչ այդ Հիտլերը զավթել էր Ավստրիան, Չեխոսլովակիայի սուդետական մարզում հաստատել ֆաշիստական ռեժիմ, 1939 թվականից կռվի մեջ էր Ֆրանսիայի և Լեհաստանի դեմ, 1940-ի հունիսից իրեն էր ենթարկել Բելգիան, Հոլանդիան ու Նորվեգիան: Հիտլերյան բարբարոսները, նվաճելով նոր երկրներ և ստրկացնելով Եվրոպայի ժողովուրդներին, սողեսող մոտենում էին Խորհրդային Միության սահմաններին:

«Սպանիր ամեն մի ռուսի, ամեն մի խորհրդային քաղաքացու, կանգ չառնես, եթե քո առջև ծերունի է կամ կին, աղջիկ է կամ երեխա, սպանիր...»— այսպիսին էր Հիտլերի հրամանը, և նրա կամակատարները 1941—1945 թվականներին խոշտանգեցին, սպանեցին ու գնդակահարեցին տարբեր տարիքի, տարբեր սեռի, ազգային ու կրոնական տարբեր պատկանելության ավելի քան քսան միլիոն խորհրդային քաղաքացիների:

Երկրորդ համաշխարհային պատերազմին մասնակցեց վաթսունից ավելի պետություն, ռազմի շինել հագավ աշխարհի շուրջ 110 միլիոն մարդ, ռազմաբեմ դարձավ 22 միլիոն քառակուսի կիլոմետր տարածություն, որի վրա սպանվեց և վերքերից մահացավ 50 միլիոնից ավելի մարդ, վիրավոր և խեղանդամ դարձավ 90 միլիոնից ավելի քաղաքացի: Միայն երկրորդ համաշխարհային պատերազմի ռազմական ծախսերը կազմեցին 1384 միլիարդ դոլլար: Պատերազմի բռնկումից չանցած մի շաբաթ (30.6.1941 թ.) Խորհրդային Միությունում ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտե Ի. Վ. Ստալինի գլխավորությամբ: Պաշտպանության պետական կոմիտեի անդամ ընտրվեց նաև խորհրդային ականավոր քաղաքական և պետական գործիչ Անաստաս Միկոյանը, իսկ Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանն ընտրվեց Անդրկովկասյան ռազմական օկրուգի խորհրդի անդամ: Հայրենիքի պաշտպանությունը դարձավ հրամայական պահանջ. 16-ից մինչև 50 տարեկան յուրաքանչյուր այր պետք է ուսաներ ռազմական գործ և զինվորագրվեր պաշտպանելու հայրենի հողն ու ժողովրդին: Ռազմապաշտպանական գործը ինչպես ողջ երկրում, Հայաստանում նույնպես մասսայական, քաղաքական և հայրենասիրական բնույթ կրեց՝ ընդգրկելով կյանքի բոլոր բնագավառները: «Ամեն ինչ հայրենիքի համար» կոչին զինվորագրվեցին բանվորն ու գյուղացին, գիտնականն ու մշակույթի գործիչը, կուսակցական, խորհրդային աշխատողները: Արյան, ավերի, ազատության և հայրենիքի պաշտպանության այդ դառը օրերին հայ ժողովուրդը ոչ միայն ռազմադաշտ էր ուղարկում իր հա-

զարավոր որդիներին (600 000-ից ավելի մարդ), այլև նամակով նրանց կոչում էր սխրանքի և հերոսության: Իրոք, հայ զինվորը իրեն փառքով պսակեց: Տեղին է նորից հիշելու մեծանուն Վարպետի՝ Ավ. Իսահակյանի խոսքը. «Հայ մարտիկները աշխարհի առաջ բարձրացրին հայ ժողովրդի պատիվն ու անունը և մեր հնադարյան պատմությունը վսեմացրին նորանոր պանծալի դրվագներով»: Մեծ հայրենականի դաժան բոցերում մարտական փառավոր ուղի անցավ եռակի շքանշանակիր 89-րդ հայկական Թամանյան դիվիզիան, որի շարքերում թշնամու դեմ մարտնչում էին բազմաթիվ գրողներ, նկարիչներ, երաժիշտներ, բեմարվեստի, կինոյի և մամուլի տասնյակ հարյուրավոր ներկայացուցիչներ: Կովկասյան լեռներից դիվիզիան, մարտնչելով թշնամու դեմ, հասավ մինչև Բեռլին: Ցավոք հերոսամարտերի ընթացքում հայ մշակույթի բազմաթիվ երախտավորներ ընկան թշնամու գնդակից: Բանակ զորականչված հայ արվեստագետները գերմանական զավթիչների դեմ կռվում էին ոչ միայն հայկական հինգ դիվիզիաներում, այլև ինտերնացիոնալ տարբեր զինվորական ստորաբաժանումներում: Անձնվեր արիության և քաջարի սխրանքի համար Հովհաննես Բաղրամյանին, Արմենակ Խամփերյանցին (Խուդյակով), Հովհաննես Իսակովին և Համազասպ Բաբաջանյանին շնորհվեցին Խորհրդային Միության մարշալի, իսկ 104 հայորդիների՝ Խորհրդային Միության հերոսի կոչումներ: 66.302 հայ զինվոր պարգևատրվեց ԽՍՀՄ շքանշաններով և մեդալներով, նրանց թվում և՝ հարյուրավոր գրողներ, կոմպոզիտորներ, նկարիչներ, դերասաններ, լրագրողներ և մշակույթի այլ երախտավորներ: Հայրենական մեծ պատերազմում աչքի ընկած ակնառու զինվորական սխրանքների և անձնվեր զինծառայության համար Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման արժանացան Հովհաննես Իսակովն ու Աշոտ Ղազարյանը (հետագայում ԽՍՀՄ ԳՄ անդամներ):

Մեծ հայրենականում զոհված և պատերազմից հաղթանակով վերադարձած՝ երաժշտության, կերպարվեստի, բեմի, կինոյի և մամուլի հազարից ավելի հայ գործիչների ռազմի սխրանքին և հայրենապաշտպանությանն է նվիրված փաստագրական սույն գիրքը, որի վրա հեղինակն աշխատել է շուրջ քսանհինգ տարի: Տպագրության է պատրաստվում գրքի երկրորդ մասը, ուր ներկայացված է հայ գրողների մասնակցությունը Մեծ հայրենականին:

Վրիպումների, բացթողումների, գուցե և սխալների համար, սիրելի ընթերցող, ներող կլինես: Ես պատրաստ եմ ունկնդրելու Ձեր ամեն մի լրացումն ու ուղղումը, քանզի սույն աշխատությունն իր բնույթով և տարողունակությամբ, հերոսների հավաքագրմամբ և դիմանկարի բացահայտմամբ (թեև կա զոհված հերոսների մասին մատենագիտություն) չի կարող լիակատար լինել, չէ որ այն գրվել է, ի մի բերվել ոչ թե մի գիտահետազոտական ինստիտուտի կողմից, այլ Մեծ հայրենականում զոհված շարքային մի զինվորի որդու անձնական նախաձեռնությամբ և ջանքերով:

Օգտվելով գրքի լույս աշխարհ գալու հանգամանքից՝ հեղինակն իր խորին շնորհակալությունն է հայտնում զոհված արվեստագետների հարազատներին, ընկերներին, բարեկամներին և ծանոթներին, ՀՄՊ-ին մասնակցած մշակույթի մեր երախտավորներին, Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի (հատկապես № 1 գիտընթերցասրահի) աշխատակիցներին, Մոսկվայի (հատկապես Պոդոլսկի), Լենինգրադի, Կիևի, Մինսկի, Դոնի Ռոստովի, Կերչի, Օդեսայի, Վոլգոգրադի, Քիշնևի, Տուապսեի, Թբիլիսիի, Բաքվի, ինչպես նաև Բեռլինի, Վարշավայի, Բուդապեշտի և բոլոր այն քաղաքների արվեստի, գրականության թանգարանների, զինվորական արխիվների, ֆոնդադարանների, մարտական փառքի սրահների աշխատակիցներին, ԽՍՀՄ և Հայաստանի գրողների, նկարիչների, կոմպոզիտորների, թատերական գործիչների և ժուռնալիստների միություններին, որոնք ամեն կերպ ընդառաջել են իրեն փաստագրական նյութեր ձեռք բերելու, դրանք ճշգրտելու և Մեծ հայրենականին վայել պատմա-փաստագրական համահավաք աշխատություն ստեղծելու՝ պատերազմի մասնակից հայ արվեստագետների և զոհված մշակութային գործիչների կյանքը, վաստակը, սխրանքն ու հիշատակը հավերժացնելու համար:

ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՍ ԵՐԳԵԼՈՎ ԿՈՒԶԵՄ ՄԵՌՆԵԼ

...Հայտնի՞ են, արդյոք, բոլոր այն երաժիշտների, երգիչների, կոմպոզիտորների անունները, ովքեր զենքը ձեռքին ընկել են մարտի դաշտում...

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԸ ԵՎ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻՆ

ԵՐԲ ՀՆՉԵՑ ՌԱԶՄԻ ՇԵՓՈՐԸ

«...Ես չգիտեմ, պատերազմի բոլոր ծանր տարիների ընթացքում խորհրդային մարդկանց կյանքում երաժշտության ունեցած դերի ու տեղի մասին գրվա՞ծ է, արդյոք, ընդհանրացնող աշխատություն: Հաշվվել և գնահատվե՞լ են, արդյոք, ռազմահայրենասիրական թեմայով մեր կոմպոզիտորների գրած բոլոր ստեղծագործությունները: Հայտնի՞ են, արդյոք, բոլոր այն երաժիշտների, երգիչների, կոմպոզիտորների անունները, ովքեր զենքը ձեռքին ընկել են մարտի դաշտում...»:

Մեծ հայրենականի թեժ տարիներին հյուսված «Երկրորդ սիմֆոնիայի» աշխարհահռչակ հեղինակի՝ Արամ Խաչատրյանի, այս մտահոգությունն ու հարցադրումները մեկ անգամ ևս մեզ հիշեցնում են, որ Մեծ հայրենականում զոհված հատկապես հայ կոմպոզիտորների երաժշտական վաստակի գնահատման, հավերժացման և պրոպագանդման գործում մենք դեռևս մեծ պարտք ունենք:

Ով գեթ մեկ անգամ եղել է Լենինգրադի և Մոսկվայի կոնսերվատորիաներում, ԽՍՀՄ կոմպոզիտորների միությունում, անպայման մարմարե հուշաքարերին, Մեծ հայրենականում զոհված խորհրդային կոմպոզիտորների ընդհանուր հուշացանկում կարդացած կլինի ԹՈՒՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ, ՀՐԱՉԻԿ ՄԵԼԻՔՅԱՆԻ, ՄԻՔԱՅԵԼ ՉԱՂԱԼՅԱՆԻ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԱԴԻՐՅԱՆԻ, ՍՏԵՓԱՆ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ, ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ՇԻԼՏՈՎԻ (ՇԼԴՅԱՆ) անունները: Զոհված կոմպոզիտորների սիրած աղջիկներից ոմանք կարոտ մնացին հարսանեկան պսակի, շատերն այսօր տատիկներ են և չեն կորցրել դեռ յուրայինների վերադարձի հույսը:

Ապրում են զոհված կոմպոզիտորների քույրերը ու եղբայրները, մի քանիսի անհայտ մեծացած երեխաները իրենց տղաներին կնքել են հայրերի անուններով: Քանի-քանիսը այսօր հաճույքով կուզենային ունկնդրել կյանքից վաղաժամ հեռացած իրենց սիրած կոմպոզիտորների թեկուզ անավարտ ստեղծագործությունները: Արդյո՞ք այդ ուղղությամբ իրենց բարոյական պարտքը կատարել են հանրապետության կոմպոզիտորների միությունը, կուլտուրայի մինիստրությունը, հեռուստառադիոպետկոմը, հրատպետկոմն ու մեր մամուլի օրգանները: Կարծում ենք՝ ո՛չ: Մի՞թե հնարավոր չէ պետական պատկերասրահում, գրականության և արվեստի կամ Խորհրդային Հայաստանը Հայրենական մեծ պատերազմում թանգարաններում մի փոքր ցուցասրահ հատկացնել զոհված նկարիչներին, դերասաններին, կոմպոզիտորներին և գրողներին: Ինչո՞ւ մինչ այսօր չունենք զոհված կոմպոզիտորների կյանքն ու ստեղծագործությունն ամփոփող դիմանկարային մի ժողովածու, ինչո՞ւ Հայֆիլհարմոնիայի կատարողական երկացանկում տեղ չունեն զոհված երաժիշտների ստեղծագործությունները... Ինչուները շատ են, իսկ Մեծ հայրենականը գնալով դառնում է պատմություն: Այդ պատմության էջերում Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի սաներ **Սամվել Ավետիսյանը, Վալենտին Իզրաիլովը, Պարույր Իսահակյանը, Ռաֆիկ Մեհրաբյանը, Գագիկ Զալալբեկյանը, Սիմակ Ռամազյանը** և էլի շատ ուրիշներ իրենց անուններն անմահացրել են զինվորական տարբեր զորաբաժանումներում և տարբեր ռազմաճակատներում՝ գերմանական ֆաշիզմի դեմ ցուցաբերած սխրանքով և հայրենիքին նվիրած իրենց երիտասարդ կյանքով: Երախտապարտ մեր ժողովուրդը հավերժ կհիշի ռադիոյի ժողգործիքների անսամբլի մենակատար **Գուրգեն Գալոյանին**, թառիստներ **Նորիկ Ռուշանյանին** և **Անդրանիկ Բունիաթյանին**, Լենինականի ֆիլհարմոնիայի մենակատարներ **Արմենակ** և **Սերյոժա Էլոյաններին** և շատ ուրիշ-

ների: Նրանք ևս զոհ գնացին թշնամու գընդակին, ապացուցելով, երբ խոսում են թընդանոթները, մուսաները չեն լռում, չեն լռում, որովհետև «Երգը մարտնչող զինվոր է», ինչպես ասել է Արամ Խաչատրյանը համանուն խորագրով իր հոդվածում՝ ցույց տալով Հայրենական մեծ պատերազմում երգի նշանակությունը.

«..Հիշում եմ պատերազմի առաջին օրերը: Մոսկվա: Կոմպոզիտորների միություն: Առավոտից մինչև ուշ երեկո այստեղ չի լռում ձայների աղմուկը, բոլոր սենյակներից լսվում են երգերի ու քայլերգերի հնչյունները: Մայրաքաղաքի կոմպոզիտորներն ու բանաստեղծները այստեղ են բերում ֆաշիստական զավթիչների դեմ պայքարի հայրենասիրական թեմային նվիրած իրենց նոր ստեղծագործությունները:

Մարտական, քնարական, երգիծական երգերը դուրս եկան կրակի առաջին գիծ՝ դառնալով պատերազմական ծանր փորձությունների ժամին խորհրդային մարդկանց հոգեկան բոլոր ուժերը մոբիլիզացնող հզոր զենք: Պատերազմի առաջին իսկ օրերից երգին՝ այդ առավել ճկուն արվեստին, երաժշտական արվեստի «օպերատիվ» ժանրին, դիմեցին ողջ Խորհրդային Միության կոմպոզիտորները: Այն ժամանակ ես Կոմպոզիտորների միության ղեկավարներից մեկն էի, և հիշողությանս մեջ մնացել են մի քանի տվյալներ, որ մեզ էին հասնում յուրատեսակ «ճակատային երաժշտական ամփոփագրերի» ձևով: Պատերազմի առաջին երկու օրը միայն Մոսկվայի կոմպոզիտորներն ու բանաստեղծները ստեղծեցին քառասունից ավելի երգ, իսկ չորրորդ օրը դրանց թիվն անցավ հարյուրից: Այդ երգերը անմիջապես ունկնդրվում էին, լավագույններն ընտրվում, բոլոր մատչելի միջոցներով իսկույն բազմացվում, սովորելու համար բաժանվում արտիստներին ու երգչախմբերին, կատարվում էին ռադիոյով, կայարաններում ռազմաճակատ մեկնող Սովետական բանակի զորամասերի առջև: Արդեն հունիսի 26-ին, պատերազմն սկսվելուց ընդամենը չորս օր անց, երկիրը լսեց Վ. Լեբեդև-Կումաչի խոսքերով գրած՝ Ալեքսանդր Ալեքսանդրովի «Սրբազան պատերազմ» հզոր երգը, որը դարձավ, ինչպես մեկն է ասել, «Հայրենական մեծ պատերազմի հերոսական երաժշտական խորհրդանիշը»:

...Ռազմահայրենասիրական թեման կարմիր թելի նման անցնում է պատերազմի փորձությունների տարիներին ստեղծված շատ երկերի միջով: Այս թեման իր արտացոլումը գտավ նաև իմ Երկրորդ սիմֆոնիայում, որն առաջին անգամ կատարվեց 1943 թվականի ձմռանը Մոսկվայում: —Այնուհետև հանձարեղ երգահանը շարունակում է.— Արմատապես սխալ կլիներ պատկերացնել, որ պատերազմական ժամանակների իրադարձությունները և խորհրդային մարդկանց ապրումները միայն հերոսական հնչեղություն ունեցող երաժշտության մեջ են մարմնավորվել: Իհարկե, ոչ: Ինձ թվում է, որ առաջներում քնարականությունը, հոգեկան ջերմության, կյանքի հանդեպ եղած սիրո զգացմունքները երբեք այդպիսի խոր և լիահունչ արտահայտություն չէին ստացել, ինչպես Նիկոլայ Մյասկովսկու, Ռեյնգոլդ Գլիերի, Վիսսարիոն Շեբալինի, Տիխոն Խրենենիկովի, Վասիլի Սոլովյով-Սեդոյի այն ժամանակ գրած մի շարք կամերային ստեղծագործություններում:

Պատերազմական տարիներին ոչ մի օր չէր դադարում խորհրդային երաժշտական թատրոնների, ֆիլհարմոնիական կազմակերպությունների, ռադիոստուդիաների գործունեությունը: Եվ նույնիսկ ֆաշիստական ավիացիայի հարձակումները՝ Մոսկվայի վրա, չկարողացան խախտել մայրաքաղաքի սովորական երաժշտական կյանքը, խլացնել ռուսական, արտասահմանյան դասական կոմպոզիտորների մեծ ստեղծագործությունների, իմ ընկերների՝ խորհրդային կոմպոզիտորների սիմֆոնիկ, օպերային և երգային լավագույն երկերի ձայնը:

...Ինձ թվում է, որ այդ ահեղ և հերոսական ժամանակներում, երբ Ստալինգրադի տակ, Վարշավայի պարիսպների մոտ և Բեռլինի մատույցներում տեղի ունեցող ճակատամարտերում վճռվում էր մարդկության ճակատագիրը, մեզնից՝ կոմպոզիտորներիցս, յուրաքանչյուրը մի առանձին ուժով էր զգում իր կենսական կապը ժողովրդի, նրա ճակատագրի հետ: Որքա՜ն անհեթեթ, որքա՜ն ողորմելի կլիներ այն ժամանակ ուզածդ արվեստագետի դիրքը, որը կփորձեր ժամանակից և տարածությունից դուրս արվեստը արվեստի համար ստեղծագործելու իր «իրավունքը» հաստատել: Այդ «իրավունքը», իհարկե, նրանից ոչ ոք չէր խլի, սակայն հազիվ թե նա հույս ունենար ուշադրություն գրավել թշնամին իր ծլվլոցի վրա՝ իր այն հայրենակիցների կողմից, որոնք զբաղված էին պատերազմով և հետ-

պատերազմյան վերականգնումով: Բարեբախտաբար, մեզ մոտ՝ Խորհրդային Միությունում, «փղոսկրյա աշտարակներում» այդպիսի բնակվողներ չեն եղել: Արվեստի յուրաքանչյուր գործիչ, մշակույթի ճակատում ինչ տեղ էլ որ գրաված լիներ, գիտակցում էր, որ ինքը մոբիլիզացված է թշնամու դեմ պայքարելու, հարազատ մշակույթը պաշտպանելու համար»[1]:

Հայրենիքի «մշակութային» զորականչին իրենց սրտի ձայնը միացրին նաև հայ կոմպոզիտորները: Աշոտ Սաթյանի, Հարո Ստեփանյանի, Միքայել Միրզոյանի, Արամ Մերանգուլյանի, Արտեմի Այվազյանի, Մարտին Մազմանյանի, Կարո Զաքարյանի, Երվանդ Սարդարյանի, Վարդան Բունիի, Վարդգես Տալյանի, Արտաշես Խաչատրյանի, Երվանդ Սահակունու, Դանիել Ղազարյանի, Անուշավան Տեր-Ղևոնդյանի, գուսաններ Շերամի, Աշոտի, Հավասու, Շահենի ջերմ, հուզաթաթավ, հայրենանվեր և ազատաբուն երգաշարը համալրեցին երիտասարդ կոմպոզիտորներ Ալեքսանդր Հարությունյանը («Մեր գործն ապրում է» նախերգանքը, «Մեզ չկա պարտություն», խոսք՝ Գ. Բորյանի), Էդվարդ Միրզոյանը («Հայրենիքն է կանչում», խոսք՝ Ազատ Վշտունու, «Գովք», «Երգ խաղաղության», խոսքերը՝ Սարմենի), Գրիգոր Եղիազարյանը («Հերոսական», խոսք՝ Սարմենի), Ռոբերտ Աթայանը («Հրաժեշտի երգ», խոսք՝ Սարմենի) և բազմաթիվ այլ երգահաններ:

Խաղաղության, սիրո և հայրենաբաղձության իր խրոխտ ձայնը հնչեցրեց հետագայում Առնո Բաբաջանյանն իր «Բալլադ հերոսականով»:

Կովկասյան քաջեր, ելե՛ք վաշտ առ վաշտ,
Ելե՛ք գունդ առ գունդ, բանակ առ բանակ,
Առա՛ջ սլացեք, դեպի՛ մարտ անհաշտ,
Դեպի՛ ռազմադաշտ, դեպի հաղթանակ:

«Կովկասյան քաջեր» (Ա. Տեր-Ղևոնդյան), «Հայրենիքիս նման չկա» (Ար. Մերանգուլյան), «Բանակ եմ գնում» (Մ. Միրզոյան) և բազմաթիվ այլ երգերի տեքստեր հորինեց բանաստեղծ Ազատ Վշտունին: Քաջ Բաղրամյանին, հերոս Նելսոնին, գնդապետ Զաքյանին և հայ ժողովրդի զինվորական ականավոր այլ գործիչների նվիրեցին իրենց երգերը խորհրդահայ կոմպոզիտորներից շատերը:

[1] Տես «Ավանգարդ», 1979 թ., 5 մայիսի:

Մեծ հայրենականը խորհրդահայ կոմպոզիտորներին հուշեց վերանայել իրենց ստեղծագործական թեմատիկան: Ոչ միայն վոկալ գործերով, այլև լայն մասշտաբի կոմպոզիցիոն ստեղծագործություններով հանդես եկան Հարո Ստեփանյանը («Առաջին սիմֆոնիա»), Սերգեյ Բալասանյանը («Հայկական ռապսոդիա»), Առնո Բաբաջանյանը («Դաշնամուրային կոնցերտ»), Գրիգոր Եղիազարյանը («Հայաստան» սիմֆոնիկ պոեմ) և ուրիշներ:

1941-ին Երևանի օպերային թատրոնը կյանքի կոչեց Կ. Զաքարյանի «Մարջան» օպերան: Հայրենասիրական բուռն ոգևորությամբ հանդիսատեսն ընդունեց Արմեն Տիգրանյանի «Դավիթ Բեկն» ու Լևոն Խոջա-Էյնաթյանի «Երեք հանդիպում» օպերաները: Բալետի սիրահարներին մեծ բավականություն պատճառեց Գ. Բուդաղյանի «Խանդոթը»: 1943-ին իր հանձարեղ «Գայանեի» համար Արամ Խաչատրյանին շնորհվեց պետական մրցանակ: «Գայանեն» հայաստանյան բեմ բարձրացավ միայն 1947-ին, առաջին անգամ այն բեմադրվեց Պերմում 1942-ին՝ Լենինգրադի Կիրովի անվան օպերայի և բալետի թատրոնի դերասանների ուժերով: Խաչատրյանի այս բալետի մասին «Սովետսկայա մուզիկա» ժողովածուում Դ. Կաբալևսկին գրեց. «Գայանեի» երաժշտությունը ունկնդրին գրավում է արտասովոր կենսահագեցվածությամբ, լույսով, բերկրանքով: Այն ծնվել է Հայրենիքի, նրա հրաշալի մարդկանց, շռայլ ու գեղատեսիլ բնության սիրուց... «Գայանեի» երաժշտությունը հարուստ է մելոդիկ գեղեցկությամբ, հարմոնիկ թարմությամբ, մետրոռիթմիկ գյուտարարությամբ: Հոյակապ է նրա օրկեստրային հնչեղությունը...»[1]:

Թեմատիկ բազմազանությունը երաժշտության մեջ ևս առաջ բերեց կերպարների բացահայտման լայն հնարավորություն, անցում երաժշտական տարբեր ժանրերի (ռոմանս, քայլերգ, ռապսոդիա, սոնատ, ռոնդո, սիմֆոնիկ և դաշնամուրային պիես, օպերա, բալետ և այլն):

Պետք էր ուժեղացնել երաժշտական երկերի հուզական, հայրենասիրական կողմը, վկայակոչել ժողովուրդների հերոսական անցյալի դյուցազնական էջերը: Այս նպատակով և նոր հնչեղու-

[1] Սովետսկայա մուզիկա (ժողովածու), Մ., 1943, էջ 53—54:

թյամբ իրականացվեց «Արշակ Երկրորդ» օպերայի բեմադրությունը Երևանում:

Բարբարոսների, բռնակալների, զավթիչների դեմ կռվել գիտակցված հայրենասիրությամբ— այս նշանաբանով ոտխի դեմ մարտնչեցին ոչ միայն հայ կոմպոզիտորներն ու երաժիշտները թիկունքում, այլև ռազմադաշտում: **Մաթևոս Մուրադյանը, Ալեքսանդր Թադևոսյանը, Արամ Սաթունցը, Գևորգ Արմենյանը, Գուսան Շահենը, Ղազարոս Սարյանը, Ալեքսանդր Օհանյանը, Էդվարդ Փաշինյանը, Հրանտ Գրիգորյանը, Սերգեյ Քյոսայանը, Ալեքսեյ Հեքիմյանը և Խաչատուր Ներսիսյանը** (ինքնուս կոմպոզիտոր) ժամանակավորապես հրաժեշտ տվեցին մուսաներին և ընդունեցին զինվորական երդում: Ստեղների սովոր նրանց նուրբ մատների տակ ոչ թե դաշնամուրը հնչեց, այլ հրանոթների, գընդացիրների ու հրացանների շիկացած փողը, չկար իդիլլա. միայն ռազմերգեր էին ծնվում և մեռնում էքսպրոմտ վիճակում: Նոտաների աշխարհը վերածվել էր արյունախեղդ դիերի անտառի, ուր ոչ թե սոխակների դայլայլն էր լսվում, այլ ռումբերի որոտը: Պաշարված Լենինգրադում, ամենածանր պայմաններում, որպես գթության քույր և ռազմիկ, իրեն քաջարի դրսևորեց Լենինգրադի կոնսերվատորիայի սան, պրոֆեսոր Ք. Ս. Քուշնարևի (Քուշնարյան) ինտերնացիոնալ կոմպոզիցիոն դասարանի ուսանողուհի **Գայանե Զեբոսարյանը,** չիմանալով, որ իր սիրելի հայրենակիցն ու համակուրսեցին՝ կոմպոզիտոր Թունիկ Հովհաննիսյանը, զոհվել է մի քանի կիլոմետր հեռու՝ Ցամ-Իժորա կայարանի համար մղված մարտերում, կռվի հենց առաջին տարում՝ 1941-ի դեկտեմբերի 24-ին: Ի՞նչ իմանար Գայանեն, որ Թունիկն էլ չի վերադառնա, որ պրոֆ. Քուշնարևի հետ էլ խմբովի չեն նկարվի ինքն ու Թունիկը[1]:

Ապրումի և զգացումի խորություն, նուրբ դրամատիզմ և նուրբ մեղեդայնություն, շիկացած ցասում և նպատակ. ահա այն ամենը, ինչ բնորոշ են Մեծ հայրենականի տարիներին ստեղծված վոկալ և սիմֆոնիկ երաժշտությանը: Միթե դրա վառ ապացույցներից չեն Ավ. Իսահակյանի խոսքերով հյուսած՝ Ռ. Աթայանի «Ազատության զանգ» վոկալ սիմֆոնիկ պոեմը, Ա. Խուդոյանի «Բալլադը»՝ գրված բասի և սիմֆոնիկ նվագախմբի համար, Ումրշատի «Հայրենիք» խմբերգային պոեմը, Վարդգես Տալյանի (խոսք՝ Վազգեն Տալյանի) «Կոլխոզային» սիմֆոնիկ պոեմը, Վարդան Տիգրանյանի «Հանդիսավոր կանտատը»՝ գրված Գեղամ Սարյանի տեքստերով, Կ. Զաքարյանի «Երկիր իմ հայրենին» (խոսք՝ Հովհաննես Շիրազի) և բազմաթիվ այլ ստեղծագործություններ:

Ոչ միայն երգային և օպերային, այլև կամերային-գործիքային, աղեղնային և փողային գործիքների, գործիքային անսամբլների և դաշնամուրի համար հորինված ստեղծագործություններում հայ կոմպոզիտորները պատերազմի տարիներին ձգտում էին ներկայացնել խորհրդային քաղաքացու ոչ միայն մարտական սխրանքը, անսասան հավատն ու կամքի ուժը, այլև կարոտի նուրբ զգացումն ու զգացումի լարվածությունը, ապրումի խորությունն ու շիկացածությունը: Եվ իրոք, հայրենախոս երգը պատերազմի ժամանակ հայրենապահ զինվոր էր՝ հավատարիմ հողի և արյան ձգողական ուժին:

Պատերազմական տարիներին ծնունդ առած և մասսայականություն ձեռք բերած հայ կոմպոզիտորների 36 երգեր 1944-ին հրատարակեց Հայպետհրատը՝ **«Հայաստանի կոմպոզիտորները Հայրենական մեծ պատերազմին»** խորագրով: Ցասման, պայքարի, հավատի և հաղթանակի ոգով ջրդեղված իրենց ռազմի երգերում հայ կոմպոզիտորները ոչ միայն հզոր ինտոնացիայով, ցնցուն մեղեդայնությամբ, ռազմակոչի պաթոսով երաժշտական հուզաշխարհ և կերպարներ էին ստեղծում՝ միշտ շիկացած պահելով **«Հայրենիք, Մայր և Տուն»** հավերժախոս լարը, այլև բորբոքում էին կարոտի և սիրո կրակը, ջերմացնում մարտի ելած զինվորներին, կրկնապատկելով նրանց կամքի ուժն ու հավատի պայծառափայլությունը: Ռազմաճակատային առաջխաղացումները, թշնամու ջախջախումը Ստալինգրադում և Հյուսիսային Կովկասում, հայ ռազմիկների քաջարի սխրանքները ստեղծագործական նոր սյուժե և ոգևորություն էին հաղորդում երգի մշակներին: Թամանցիների մասին երգեր հորինեցին Հ. Ստեփանյանը, Մ. Միրզոյանը, Կ. Զաքարյանը: Արամ Քոչարյանի «Հաղթանակի քայլերգ», Ումրշատի «Առաջ ընթացեք», Մուշեղ Աղայանի «Մահ ֆաշիզմին», Կարո Զաքարյանի «Հնչե՛ք, փողե՛ր», Մարտին Մազմանյանի «Զարկեցե՛ք, ընկերնե՛ր», Ազատ Մանուկյանի «Զիլ զարկենք», Ռոբերտ Աթայանի «Վրեժ» և այլ երգեր իրենց քաղաքացիական հրապարակախոսությամբ և մարտական երաժշտականությամբ ոխ ու վրեժ, հատուցում էին պահանջում հիտլերյան ոճրագործների հանդեպ, համակված էին ժողովրդական ցասմամբ և ազատության շեշտով: Հայ ժողովրդի հերոսական անցյալի երաժշտական մարմնավորումը, Սասունցի Դավթի, Վարդան Մամիկոնյանի, Դավիթ Բեկի և ազգային-ազատագրական պայքարի այլ հերոսների և դյուցազնավարների անունների հոլովումն իսկ երաժշտական տեքստերում ստիպում էր հայ ռազմիկին հանուն իր նախնյաց պատվի ու փառքի, հանուն իր վերածնված հայրենիքի և ժողովրդի գերագույն ուժով ջախջախել թշնամու մոռթը, հեռացնել նրան մեր արտ ու կալից, մեր ագութներից: Գեներալներ Բաղրամյանին և Մարտիրոսյանին, գնդապետ Զաքյանին, կապիտան Գաստելլոյին, կոմերիտուհի Զոյա Կոսմոդեմյանսկայային և մեծ սխրանքներով աչքի ընկած այլ հերոսների գովաբանող ջերմ ու սրտառուչ երգերի հետ 40-ական թվականներին ծնվեցին նաև փքուն ձոներգեր, որոնք թիթեռի կյանք ունեցան և ոչինչ չավելացրին ռազմական օրերի երգապնակին:

Պատերազմի բոցերի մեջ հայրենի տանը, սիրած աղջկան, մորը, յուրայիններին կարոտած զինվորի խոհաքնարական ապրումները հավաքագրող գրական-երաժշտական կուռ համաձուլվածք է Աշոտ Սայթանի «Մարտիկի երգը»՝ գրված Գ. Սարյանի «Կարոտ» բանաստեղծության հիման վրա:

Հայրենիքն իմ սրտում,
Թե չընկնեմ ես մարտում,
Ա՛խ, իմ մայր թանկագին,
Տուն կգամ ես կրկին,
Կսփոփեմ քո հոգին,
Համբույրով սրտագին
Կսեղմեմ քեզ իմ կրծքին:

Երգի լավատեսական վերջաբանն իր մեջ ունի վերադարձի մի անքթող հավատ, անկաշառ ձվիրում և հայրենաբաղձություն, որոնք մեծատաղանդ կոմպոզիտորի նուրբ մեղեդայնությամբ և բանաստեղծի պատկերային տողերով վերականգնում են զինվորի աչքին հայրենի եզերքը:

Ա. Սայթյանի «Մարտիկի երգը» փողային նվագախմբի կատարմամբ պատերազմի թեժ օրերին հնչեց Մոսկվայի Կարմիր հրապարակում՝ մեկ անգամ ևս ցույց տալով հայ զինվորի հոգու խորությունն ու մտքի սլացքը, անհագ փափագն ու կռվից հաղթանակով վերադառնալու հույսը: «Մարտիկի երգը» որպես լիցքավորված փամփուշտ ուղեկցեց հայ զինվորին և հաղթանակած տուն դարձավ, հիշեցնելով մեր անտունիներն ու «Կոունկը»:

Բազմաթիվ երգերի ստեղծմանը զուգընթաց Ա. Սայթյանը հյուսեց նաև Մեծ հայրենականի տարիներին «Հայֆիլմի» արտադրած «Գվարդիական կինը» (1942 թ.), «Դուստրը» (1943), «Դավիթ Բեկ» (1944) գեղարվեստական կինոնկարների երաժշտությունը, որոնցում նորից հնչում է հայրենասիրության սրբազան գաղափարը, այս անգամ ավելի մեծ լիցքով, մեծ թափով և ընդգրկմամբ՝ բացահայտելով յուրաքանչյուր հերոսի ազատաբաղձ ոգին, գովաբանելով նրա սրի ուժն ու հայրենանվիրվածությունը:

Բացի հայրենասիրական երգերից Երկրորդ համաշխարհայինի տարիներին հայ կոմպոզիտորները նրբորեն կերտեցին նաև իրենց ամուսիններին ռազմադաշտ ճամփու դնող կանանց, սիրած աղջիկների և նրանց համար իրենց կյանքը չխնայող անսասան մարտիկների քնարական-երաժշտական դիմանկարները: Փոքրածավալ այնպիսի ստեղծագործություններ, ինչպիսիք են «Իմ կոմանդիր լարը» (Կ. Զաքարյան), «Սպասում եմ քեզ» (Ա. Խաչատրյան), «Բարի երթ» (Մ. Միրզոյան), «Արտերի երգը» (Ա. Դոլուխանյան), «Դուետ» (Է. Կզարթմյան), «Հրաժեշտի երգը» (Ռ. Աթայան) գործերը, դրանց առհավատչյան են և նմանվում են մեր պանդխտության և կռվի գնացող քաջերին ձոնված տողերին:

Հիշենք նաև, որ ռազմահայրենասիրական երգի մրցույթն ու Մոսկվա, Թբիլիսի և այլուր կազմակերպված հայկական երգակատարողական կոլեկտիվների փոխայցելությունները նոր որակ և սյուժե հուշեցին հայ կոմպոզիտորներին՝ ինտերնացիոնալիզմը, թշնամու դեմ միասնական ուժերով պայքարի դուրս գալը և հայրենիքի ազատության համար զոհվելը համարելով բնական անհրաժեշտությունից ծնված հանապազօր-

[1] Լենինգրադի կոնսերվատորիայում ուսանած հայ երաժիշտների և Թ. Հովհաննիսյանի մասին տրված հաղորդումների համար շնորհակալություն ենք հայտնում Լենինգրադի պատմության պետական թանգարանի գիտաշխատող Լյուդմիլա Պլեխանովային:

յա պահանջ: Սյուժետային, թեմատիկ և գաղափարական այս անցումներին հավասարապես զինվորագրվեցին ոչ միայն հայ կոմպոզիտորները, այլև արվեստի մյուս բնագավառների առաջատար ուժերը: Հայրենիքի և ժողովրդի ցավով ապրող և նրա ճակատագրի համար ոտքի ելած մեր գրական ավագանու և թիկունքի գրողների՝ Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Գ. Սարյանի, Սարմենի, Աշ. Գրաշու, Ս. Տարոնցու, Խ. Դաշտենցի, Հովհ. Շիրազի բազմաթիվ բանաստեղծություններ դարձան ոչ միայն հոգեպարար երգ, այլև՝ սվին և խոցեցին թշնամուն: Հայրենիքը, խորհրդային բանակը, կուսակցությունն ու մեր մեծ զորավարներին փառաբանող բազմաթիվ երգեր իրենց մարտական պաթոսով, ջերմ հայրենասիրությամբ և մեղեդայնությամբ վրեժի և ատելության հրով էին համակել հայ ռազմիկներին: Պատերազմի տարիներին ծնված երգերում ունկնդիրը երբեք լալկանության, հուսահատության, հոռետեսության և անկումայնության շեշտեր չի լսում, ընդհակառակը՝ անգամ բանահյուսական երգերը լավատեսություն են բուրում.

Կռվի ծակատում, մայրի՛կ ջան, վիրավորվեցի,
Հայրենիքիս սիրո համար արյուն թափեցի,
Մի՛ լար, մայրի՛կ, որ քո որդին կռվում զոհ գնա,
Քո որդու տեղ հայրենիքը անպարտ կմնա:
Ինձ կհիշեն ընկերներս խաղաղ օրերին,
Իրենց սրտում վառ կպահեն Անմահ զինվորին[1]:

«Զինվորի երգը» ժողովրդական ստեղծագործության գաղափարը իրոք որ դարձել էր յուրաքանչյուր հայ զինվորի հոգու պարտքը: Իսկ այդ պարտքը՝ հայրենապաշտպանությունը, դարձած հույզ, կիրք, զգացմունք, միտք և ոգի, երգի միջոցով հասնում էր ռազմաճակատ, բլինդաժ և խրամատ՝ յուրօրինակ սփոփանք հաղորդելով հոգնած, վիրավոր ու միշտ կռվի պատրաստ ազատության զինվորին: Այդ մասին թերևս ավելի անմիջական կլինի հիշել Հայաստանի երգչախմբային ընկերության՝ Մեծ հաղթանակի 30-ամյակին նվիրված (25.4.75 թ.) պլենումում կոմպոզիտոր, Մեծ հայրենականի մասնակից ԳԵՎՈՐԳ ԱՐՄԵՆՅԱՆԻ ելույթը. «Դժվար է գերագնահատել այն մեծ և կարևոր նշանակությունը, որ ունեցել է երաժշտությունը, մասնավորապես խորհրդային երգը ամբողջ պատերազմի ընթացքում... Պատերազմը սկսվելու երկրորդ օրը կենտրոնական թերթերում տպագրվեցին հայրենասիրական մի շարք բանաստեղծություններ, այդ թվում և Լեբեդև-Կումաչի «Սրբազան պատերազմը»: Նույն գիշեր Ալեքսանդր Ալեքսանդրովը հորինեց իր սքանչելի, բոցաշունչ երգը, որն իրավամբ Հայրենական պատերազմի երաժշտության խորհրդանիշը դարձավ: Պատերազմի հենց առաջին օրերին գրվել է ավելի քան հազար երգ...

57-րդ բանակի 155-րդ գնդի հետախույզ-կապավոր Գևորգ Արմենյանը բանակ է զորակոչվել 1941 թ. մայիսին: Պարգևատրվել է ՀՍՊ-ի 2-րդ աստիճանի շքանշանով և մի շարք մարտական մեդալներով:

Ես դժվարանում եմ ասել, թե ինչպես էին այդ երգերը հասնում մեզ, սակայն փաստ է, որ մենք բոլոր երգերը գիտեինք, և երգելու ցանկությունը բոլորիս մոտ պահանջ էր դարձել: Երգում էին բոլորը՝ անկախ ձայնական տվյալներից ու երաժշտական ունակություններից: Երգերը ոչ միայն պահպանում էին մեր բարձր տրամադրությունն ու մեզ սիրանքի կոչում, այլև կապում էին մեզ մեր տանը, մեր հարազատներին: Մեծ ոգևորություն էին պատճառում Դունաևսկու, Սոլովյով-Սեդոյի, Բլանտերի, Ֆելցմանի, Զախարովի, Ֆրատկինի և այլոց երգերը:

Հայ կոմպոզիտորները ևս անմաս չեն մնա-

[1] «Երգարան», Ե., 1951 թ., էջ 90:

Կոմպոզիտոր մարտիկ Գ. Արմենյանը (նստած) ռազմընկերների հետ: 1942 թ.:

ցել այս մեծ գործում... Խորհրդային կոմպոզիտորները,— այնուհետև գրում է Գ. Արմենյանը,— պատերազմի թեման արտացոլել են նաև մեծ կտավի գործերում, ինչպիսիք են Դմիտրի Շոստակովիչի Յոթերորդ սիմֆոնիան, որը ես ունկնդրել եմ 1942-ի դեկտեմբերի 21-ին Կույբիշև քաղաքում, ուր մեր գունդը Կերչի ծանր իրադարձություններից հետո փոխադրվել էր վերակազմավորման: Հեռավոր Ռումինիայում ռադիոյով ունկնդրեցի Արամ Խաչատրյանի Երկրորդ սիմֆոնիան, որի սքանչելի երրորդ մասը՝ «Ռեքվիեմը», որ գրված է հայկական ժողովրդական «Որսկան ախպեր» երգի մոտիվներով, ցնցող տպավորություն գործեց բոլորիս վրա: Նախորդ օրը մենք հողին էինք հանձնել մեր ավագ լեյտենանտին... Հիշում եմ. 1942-ի մայիսին Կերչի ռազմաճակատ այցելեց Հայաստանի էստրադային նվագախումբը, որը մայիսի 2-ին ելույթ ունեցավ ռազմաճակատի շտաբում, Լենինսկոյե գյուղում, ապա մեկնեց ճակատային գիծ: Թեև ծանր օրեր էին մեզ համար, բայց և այնպես էստրադային նվագախմբի գալուստն ու ելույթները մեզ ափոփում էին, ոգևորում... Եթե պատերազմի ավարտի առաջին օրերին մտածում էիր, որ քայլելով Թբիլիսիից մինչև հեռավոր Հունգարիա ես հասել ռումբերի, արկերի, գնդակների տարափի տակ, ճաշակել հաղթանակի քաղցրությունը, ապա այսօր՝ տարիների հեռվից, հիշում ես զոհված ընկերներիդ ու մտաբերում պոետի թևավոր խոսքերը.

Գ. Արմենյանը Մեծ հաղթանակի առթիվ նորից հնչեցնում է հարմոնը: Հունգարիա, 1945 թ.:

«Ինչպիսի հերոս ընկերներ մեռան,
Մեռան, չկորան...»:

Ահա 1941 թ. մի խմբանկար. Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի զինվոր-երաժիշտների էստրադային նորաստեղծ նվագախումբն է: Ղեկավարն է շիկահեր ու պարթևալանջ մի երիտասարդ:

— Ո՞վ է այս կիթառահարը:

— Ես եմ,— ներքին հպարտությամբ ասում է Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ ԱՐԱՄ ՍԱԹՈՒՆՑԸ և ցույց տալիս նվագախմբի մյուս անդամներին: Փողհարը Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի դիրիժոր Վահան Այվազյանն է, դաշնակահարը՝ Երևանի պետկոնսերվատորիայի պրոֆեսոր Էդուարդ Փաշինյանը: Զրույցից պարզվում է, որ կոմպոզիտորի «Մարտակոչ», «Մահ դահիճներին», «Առա՛ջ, հաղթանակը մերն է», «Հայրենիք» և այլ երգեր ծնվել են պատերազմի առաջին ամիսներին:

Սեղանին կոմպոզիտորի անձնական գործերն են: Պատերազմական տարիներին Սաթունցի

գործունեությունը բնորոշող բազմաթիվ շնորհակալական նամակներ, լուսանկարներ, պատվոգրեր և հոդվածներ կան այստեղ, որոնք այսօր դարձել են արխիվ-հուշամատյան:

— Ռազմադաշտում երգի խիստ պահանջ զգացվո՞ւմ էր:

— Այն էլ ինչպե՜ս:— Ասածը հաստատելու համար զանգեզուրցի նախկին երիտասարդը մեջտեղ է բերում 1941-ի մայիսի 21-ին լույս տեսած «Բոյեվայա զվեզդա» թերթը, ուր կարդում ենք. «...Մեծ հաջողությամբ են ընդունվում № զորամասի կարմիր բանակայինների ինքնագործ էստրադային նվագախմբի ելույթները՝ կոմպոզիտոր, զինվորական կոչումով ավագ, Արամ Սաթունցի ղեկավարությամբ...»:

Ձախից 6-րդը 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի էստրադային նվագախմբի ղեկավարն է՝ մարտիկ կոմպոզիտոր Արամ Սաթունցը:

Պատերազմի թեժ օրերին Ս. Զաքյանի ղեկավարած 89-րդ հայկական դիվիզիայի մարտիկ Արամ Սաթունցը Թամանյան թերակղզում Աշոտ Գրաշու խոսքերով հյուսեց իր «Փառք սովետական բանակին» երգը, որն իր մարտական տրամադրությամբ, հոգեհարազատ մեղեդայնությամբ և կարոտի խոր զգացումով համակեց կարմիրբանակայիններին, անցավ շրթից շուրթ և տպագրվեց Անդրկովկասյան զինվորական օկրուգի օրգան «Լենինյան դրոշ» թերթում: Իսկ նրանց հեղինակը նորից ռումբերի տարափի տակ, մահվան և ավերների միջով անցնում էր զորամասից զորամաս, հոսպիտալից հոսպիտալ և հնչեցնում հայրենասիրական և մարտաշունչ երգեր՝ ոգևորելով զինվորներին և հիշեցնելով նրանց իրենց նախնիների հերոսական անցյալն ու անսասան կամքը:

Պատերազմական ծանր օրերին Աշոտ Սաթյանը հաճախ էր մասնակցում իր եղբոր՝ Արամ Սաթունցի ղեկավարած էստրադային նվագախմբի փորձերին և անհրաժեշտ ցուցումներ տալիս:

— Հենց այդ օրերին,— հիշում է զրուցակիցս,— Աշոտը երկնեց իր «Մարտիկի երգն» ու «Զաքյանի դիվիզիայի քայլերգը» ստեղծագործությունները, որոնք արժանացան ժողովրդի սիրուն և համակրանքին...

Պատերազմի ավարտից տարիներ են անցել... Թոթափելով հուշերի ծանր բեռը՝ կոմպոզիտորը նվագում է իր հանրաճանաչ «Սիրո վալսն» ու շարունակում.

— 1950-ից մինչև 55 թվականը եղել եմ Թամանյան դիվիզիայի երգի և պարի ինքնագործ անսամբլի գեղարվեստական ղեկավարը, Անդրկովկասյան զինվորական օկրուգի օլիմպիադայում շահել երկրորդ մրցանակը: Ես երգով եմ գնացել մարտի և մարտը շահել եմ երգով...

Ռազմաշեֆական իր բուռն գործունեության,

«Տոնական պարային սյուիտի» և «Փառք Սովետական բանակին» ստեղծագործությունների համար 1974-ին Արամ Սաթունցը, առաջինը հայ կոմպոզիտորներից, պարգևատրվեց Ալեքսանդրովի անվան մեդալով, մինչ այդ էլ՝ «Կուլտուրական շեֆության գերազանցիկ» կրծքանշանով:

Մեծ հաղթանակի 30-ամյակի առթիվ «Հայաստան» հրատարակչությունը լույս ընծայեց մանկավարժ կոմպոզիտորի կազմած խորհրդահայ կոմպոզիտորների հայրենասիրական երգերի հատընտիրը՝ հայերեն և ռուսերեն:

Հայաստանի կոմպոզիտորների միության ռազմաշեֆական հանձնաժողովի նախագահ Արամ Սաթունցը 1951—55 թվականներին երաժշտության ուսուցիչ էր մայրաքաղաքի 56-րդ և Չկալովի անվան դպրոցներում, մինչ այդ նա Ղ. Ղուկասյանի անվան պիոներպալատի մանկական երգչախմբի գեղարվեստական ղեկավարն էր: Անվանի կոմպոզիտորը 1958, 1962 և 1965 թվականներին հրատարակել է դպրոցական և պիոներական երգերի երեք ժողովածու: Եվ այսօր էլ, չնայած իր առաջացող տարիքին, նա նորից է նստում դաշնամուրի առջև, հիշում պատերազմը, Հյուսիսային Կովկասը, Կերչը, Թամանը, և մի ներքին թախծից ծնվում է խաղաղության և եղբայրության ազնիվ հիմնը որպես մի նոր վալս, մի նոր ռապսոդիա...

Լենինգրադի պետական կոնսերվատորիայում պետական քննությունները նոր էր հանձնել երևանցի ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԸ, երբ գերմանական զավթիչները ներխուժեցին ԽՍՀՄ-ի արևմտյան սահմանները: Հուլիսի 4-ին հազարավոր ուսանողների պես Ալեքսանդրը ևս կամավոր զինվորագրվեց հայրենիքի պաշտպանությանը: Իր զինծառայության մասին ահա թե ինչ է պատմում պատերազմից 40 տարի հետո Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, երաժշտագետ և մանկավարժ Ալ. Թադևոսյանը. «1941 թ. հուլիսից ֆաշիզմի դեմ կռվել եմ Լենինգրադի Հոկտեմբերյան շրջանի կամավորական դիվիզիայի գնդացրահրետանային առանձին գումարտակում, այնուհետև 85-րդ հրաձգային դիվիզիայի կազմում: Ինձ հետ էր նաև ընկերս՝ երաժիշտ Սուրեն Միրզոյանը, նա 1941-ին էլ զոհվեց: Եղել եմ սակրավոր, թշնամու դեմ դասընկերոջս՝ Գագիկ Զալալբեկյանի հետ մարտնչել եմ Կրասնոյե Սելո, Նևսկայա Դուբրովկա շրջանների

Երաժշտագետ Ալեքսանդր Թադևոսյան

Երաժշտագետ Մաթևոս Մուրադյան

ազատագրական մարտերում: Ծառայել եմ նաև 42-րդ բանակի ագիտբրիգադում (1942 թ.), կռվել 657-րդ գնդի մարտիկների հետ՝ շտաբային մարտկոցում: Իբրև երաժիշտ 1943 թ. մարտից հանդես եմ եկել 221-րդ հրաձգային գնդի ագիտբրիգադում: Պարգևատրվել եմ Լենինգրադի պաշտպանության համար, Մարտական ծառայության համար, 1941—1945 թթ. Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար և այլ մեդալներով»: Ավարտելով ռազմի իր համառոտ կենսագրությունը, Ալ. Թադևոսյանը առաջարկում է, որ ես անպայման ներկայացնեմ նաև իր վաստակաշատ և ավագ գործընկերոջը՝ Հայկական ԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի նախկին գիտաշխատող և երաժշտական բաժնի վարիչ, արվեստագիտության դոկտոր ՄԱԹԵՎՈՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ (գրական կեղծանունը Ավրորա) ռազմի անցած ճանապարհը: Մ. Մուրադյանը բանակ է զորակոչվել 1940 թ., երբ կոնսերվատորիայի 3-րդ կուրսի ուսանող էր: Ծառայել է Անդրկովկասյան զինօկրուգի 415-րդ գնդում որպես քաղղեկի տեղակալ: 1942-ի օգոստոսին որպես 127-րդ առանձին զենիթահրետանային մարտկոցի կոմիսար նա հիտլերականների դեմ կուրծքը դեմ տված մարտնչել է Հյուսիսային Կովկասում: Հարավային և Ուկրաինական № 1 և № 2 ռազմաճակատներում ցուցաբերած սխրանքի համար արժանացել է բազմաթիվ շքանշանների և մեդալների: ԽՍՀՄ պաշտպանության մինիստրության Պոդոլսկի արխիվում՝ առանձին զենիթահրետանային 3-րդ դիվիզիոնի հրամանատար, մայոր Տուրովի կողմից 1944 թ. փետրվարի 13-ին տրված բնութագիր-միջնորդության

մեջ ասված է, որ Մ. Մուրադյանը մարտերում ցուցաբերած արիության և սխրանքի, կուսակցական-քաղաքական կազմակերպվածության և անձնական վարքագծի համար արժանի է Մարտական ծառայության համար մեդալի[1]: Կապիտան Մ. Մուրադյանը խիզախաբար է իրեն դրսևորել ոչ միայն եղբայրական Ուկրաինան թշնամուց ազատագրելիս, այլև արիաբար է մարտընչել Լեհաստանի և Չեխոսլովակիայի համար ծավալված ազատամարտերի ժամանակ:

Բազմաթիվ մարտական շքանշաններով և մեդալներով կուրծքը զարդարած վանեցի քաջորդին Մեծ հաղթանակը դիմավորեց Չեխոսլովակիայի Կոշիցե քաղաքում:

Խորհրդահայ անվանի կոմպոզիտոր, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի նախկին ռեկտոր, պրոֆեսոր ՂԱԶԱՐՈՍ ՍԱՐՅԱՆԸ ևս Մեծ հայրենականի աներեւ մարտերի մասնակիցներից է: Նա բանակ է զորակոչվել 1939 թ. նոյեմբերին և ծառայել մինչև 1945 թ. սեպտեմբերը: 1941 թվականի նոյեմբերի 29-ի «Կոմունիստ» թերթում (ռուս.) լրագրող Լ. Իսահակյանը «Որդին ռազմաճակատում» ակնարկում նկարագրում է սերժանտ Ղազարոս Սարյանին (տպագրված է նաև լուսանկարը): Ահա մի հատված, ուր պատկերված է մարտական պահը. «Երեկ ես մի խուրձ նոնակներ նետեցի գերմանական զրահամեքենայի տակ ու բղավեցի «Մերոնց համար»: Ափսո՜ս, դուք չտեսաք, թե ինչպես օդ թռավ թշնամու զրահամեքենան...»:

Կոմպոզիտոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ղազարոս Սարյան, 1942 թ.:

Թիկունքում գույներով, նկարներով շնչող իր արվեստանոցում 1942 թ. կարդաց մեծանուն Մարտիրոս Սարյանը հակաօդային պաշտպանության (7-օй. ЗПП) 4-րդ կորպուսի զինվոր որդու նամակը և ներքին մի հպարտությամբ քաջալերեց նրան. «Ես ամենևին չեմ զարմանա, եթե Խորհրդային Միության հերոսների և կամ պարգևատրվածների թվում կարդամ նաև քո անունը: Ես գիտեմ, որ իմ որդին ոչ միայն լավ երաժիշտ է, այլև խորհրդային հայրենիքի բոցաշունչ հայրենասեր, ազնիվ մարդ»[1]:

Մեծ հայրենականը ոչ միայն մեծ պատերազմ էր, այլև մեծ ստուգարք՝ հայրենանվիրվածության ստուգատես, որտեղ ինչպես մեր մեծ հայրենիքի բյուրավոր որդիները, այնպես էլ հայաստանցի կոմպոզիտորներն ու երաժիշտները իրենց փառքով պսակեցին: Երևանի Ն. Օստրովսկու անվան մանկավարժական ուսումնարանի երգչախմբի գեղարվեստական ղեկավար և խմբավար, հանրապետության վաստակավոր ուսուցիչ, Մեծ հայրենականի մասնակից ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ԻՍԱՀԱԿԻ ԲԱՐՈՅԱՆՆ իր հուշերում պատմում է, թե ինչպես են գերմանացիները 1942-ին Իզյում-Բարվենկովսկում կրակ բաց արել «Քոչարի» պարող յոթ հայորդիների վրա, բայց նրանց չի հաջողվել տապալել նրանցից ոչ մեկին: Պարի ցնցող տեսարանից թշնամին պարտվում է հոգեպես, զենքը վայր է դնում և սկսում ծափ տալ: Օգտվելով հարմար առիթից՝ դարան մտած մի խումբ պարտիզաններ նրանց գերի են վերցնում, գրավում թշնամու ռազմամթերքն ու ռազմի հարձակման պլան-քարտեզը: Երգի ու պարի շնորհիվ ոչնչացումից փրկվում են մի քանի հետևակային դասակ ու գումարտակ:

— Բացի սիրո, կարոտի ու հայրենանվեր երգերից ուրիշ էլ ի՞նչ երգացանկով էիք հանդես գալիս ռազմիկների առջև,— հարցիս իբրև կոնկրետ պատասխան խմբավար մանկավարժը պատասխանում է.

— «Ինտերնացիոնալով» և «Բամ որոտանով»...

Այո, Էժեն Պոտյեի «Ինտերնացիոնալը աշխարհը փրկեց» խոսքերը հաճախ են կրկնել երաժշտագետները, երբ տարբեր ազգերի ներկայացուցիչ խորհրդային բանակի մարտիկները, կարոտ դաշնամուրի և երգեհոնի ստեղներին,

[1] Տե՛ս ԽՍՀՄ ՊՄԿԱ, ֆոնդ 33, ցուցակ 686044, գործ 30, 43, թերթ 145:

[1] Տե՛ս Գ. Ալեքյան, Հայաստանի երիտասարդությունը Մեծ հայրենականին, Ե., 1979, էջ 40:

ձեռքն են առել նոնակն ու հրացանը և գրոհել թշնամու տանկերի և «Մեսերշմիդտների» վրա: Մեծ հայրենականի տարիներին, երբ բոլոր սրտերը ոսոխի հանդեպ լցված էին ոխով և ատելությամբ, երբ հայրենի հողն ավելի էր քաղցրացել, անհրաժեշտություն զգացվեց ստեղծել մեր մեծ Միության՝ ԽՍՀՄ-ի հիմնը: Այս սրբազան գործում հայ ժողովրդի որդիներից մեկը՝ կարմիրբանակային ԳԱԲՐԻԵԼ ԷԼ-ՌԵԳԻՍՏԱՆԸ (Ուրեկլյան) Սերգեյ Միխալկովի համահեղինակությամբ գրեց ԽՍՀՄ-ի պետական հիմնի տեքստը, որի երաժշտությունը հյուսեց մեծատաղանդ Ալեքսանդր Ալեքսանդրովը:

ԽՍՀՄ-ի հիմնը ուժեղացրեց խորհրդային ժողովուրդների սրբազան դաշինքը ոչ միայն թիկունքում, այլև ռազմաճակատում:

Հայ մարտիկներին կրկնակի ուրախություն պատճառեց Խորհրդային Հայաստանի պետական նոր հիմնը (1944 թ.): Նրա հեղինակներ Արամ Խաչատրյանն ու Սարմենը գտել էին մեր ժողովրդին բնորոշ պատմագեղարվեստական և երաժշտական ճշգրիտ հուզաշտրիխներ, որոնք և ըմբոստության, ատելության և պատվախնդրության կիրք էին հաղորդում մայր հայրենիքի ազատության համար մարտնչողներին, հիշեցնելով նրանց հայ ժողովրդի «բազում դարեր անցած դժան ճամփան»:

«Մեծ հայրենականը և Արամ Խաչատրյանի ստեղծագործությունը» թեման ոչ միայն տարողունակ է, բովանդակալից և բազմաժանր, այլև հետաքրքիր և հուզող: Չէ որ «Երկրորդ սիմֆոնիան» և «Գայանեն» իրենց ստեղծագործական վիրտուոզ տեխնիկայով, իրենց արդիականությամբ և ակտիվ քաղաքացիականությամբ դասվում են Շոստակովիչի Յոթերորդ սիմֆոնիայի, Ա. Պրոկոֆիևի «Պատերազմ և խաղաղություն» օպերայի, Ն. Մյասկովսկու «Սիմֆոնիա-բալլադի», Դ. Կաբալևսկու «Մեծ հայրենիք» կանտատի շարքին: Զինվորի ներաշխարհը, նրա սերը, խոհը, կարոտը, ձգտումը, նվիրումը, խիզախումը, անվեհերությունն ու մարտիրոսությունը, հաղթանակի հավատն ու անձնազոհությունը այնքան էին մտատանջում, երաժշտական իրենց լուծումը պահանջում կոմպոզիտորից, որ անտեսանելի ձևով դառնում էին պարային ու սիմֆոնիկ սյուիտ, խորեոգրաֆիկ վալս, չորս գործողությամբ բալետ («Գայանե»), կանտատ-օրատորիա, դաշնամուրային պիես, ռոմանս,

ՀՍՊ-ի տարիներին ԽՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության քարտուղար, «Հայկ. ԽՍՀ պետական հիմնի» (երաժշտության) հեղինակ Արամ Խաչատրյան

խմբերգ կամ կինոերաժշտություն, փողային նվագ կամ կոնցերտային արիա: Հոգու մաքրության վերահաստատում և հայրենիքի պաշտպանություն—ահա այն հիմնական գաղափարները, որոնցով ներծծված են «Քայլերգ Հայրենական պատերազմի հերոսներին», «Հզոր Ուրալ», «Ուրալցիները կռվում են քաջաբար», «Գվարդիական քայլերգ», «Սպասում եմ քեզ», «Ուրալուին», «Զայրույթի երգ», «Ծովը բալթիական», «Կապիտան Գաստելլո», «Փառք մեր հայրենիքին» և բազմաթիվ այլ երգեր, ռոմանսներ ու խմբերգեր: Արամ Խաչատրյանի սիմֆոնիկ ստեղծագործություններից «Երկրորդ սիմֆոնիան» կամ «Զանգով սիմֆոնիան» (1942), «Գայանե» բալետի երեք սյուիտը (1943), հատկապես երրորդ սյուիտի «Սուսերով պարը», «Դիմակահանդեսի» (ըստ Լերմոնտովի համանուն պոեմի) երաժշտությունը (1941—1943), «Խորեոգրաֆիկ վալսը» (1944) ոչ միայն առնական, դրամատիկ և հնչեղ կառուցվածք ունեն, այլև համակված են նուրբ մեղեդայնությամբ, կյանքին սիրահարված արվեստագետի ներքին նվիրումով, որը ունկնդրին ոչ միայն ձգում է, մոտեցնում, այլև վարակում մի ներքին լուսավոր թա-

խիծով՝ զարթեցնելով նրա մեջ անսահման սեր և բարություն աշխարհի և մարդու հանդեպ: Խաչատրյանի ռոմանտիզմը իր լուսապսակով իրեն միշտ ճանաչել է տալիս ոչ միայն կարճ կտավի կոնցերտային արիաներում (նվիրված կնոջը՝ Նինա Մակարովային), այլև լայն մասշտաբի ստեղծագործություններում՝ «Գայանե» և «Սպարտակ» բալետներում, ինչպես նաև դաշնամուրային պիեսներում («Այուիտ երկու դաշնամուրի համար՝ երեք մասից», 1944 թ.):

Պատերազմի տարիներին չնայած Արամ Խաչատրյանը ապրում էր Սվերդլովսկի մարզի Զեռնոբորովսկի խորհրդտնտեսությունում (սովխոզ) և որոշ ժամանակ կտրված էր Հայաստանից, բայց և այնպես նա նորից ու նորից հոգով ու մտքով իր ժողովրդի հետ էր, սնվում էր նրա հնագույն երգակունքներից և դրանց հաղորդում երաժշտական կատարելություն: 1943-ին մեծանուն կոմպոզիտորը, որը միևնույն ժամանակ ԽՍՀՄ կոմպոզիտորների միության քարտուղարներից էր, չի կարողանում հեռու մնալ հասարակական եռուն կյանքից, վերադառնում է Մոսկվա և ծավալում ստեղծագործական ու հասարակական բեղուն գործունեություն, հանդես գալիս և՛ ռադիոյով, և՛ ռազմիկների առջև:

1944-ին նա ԽՍՀՄ կոմպոզիտորների միության կա.լմկոմիտեի պլենումում կարդում է հատուկ զեկուցում՝ նվիրված պատերազմի տարիներին ծնված երաժշտությանն ու նրա հետագա զարգացման հեռանկարներին: Մեկ տարի անց ռեժիսոր Մ. Ռոմմի «Մարդ № 247» հակաֆաշիստական ֆիլմի համար գրում է երաժշտություն: Այս ամբողջ գերծանրաբեռնվածության ընթացքում հայրենանվեր կոմպոզիտորն իր երաժշտական կապերը չխզեց Մոսկվայի Գորկու անվան գեղարվեստական թատրոնի հետ: 1942-ին այստեղ բեմադրվող՝ Ն. Պոգոդինի «Կրեմլյան կուրանտները» («Ծովը Բալթիական» խոսքը՝ Յու. Ռոդիոնովի), իսկ 1943-ին էլ Ա. Կրոնի «Խոր հետախուզություն» պիեսների համար հյուսեց առինքնող երաժշտություն, որոնք և նրան էլ ավելի մեծ ճանաչման արժանացրին:

«Ով ինչ զենք ունի, թշնամու դեմ նրանով պետք է պայքարի».— ասում է ժողովուրդը: Խաչատրյանի ձեռքին պատերազմի ժամանակ այդ զենքը երաժշտությունն էր, որով նա անմնացորդ պայքարեց թշնամու դեմ՝ հավերժ շողացնելով երգահանի, խմբավարի և քաղաքացու իր «Թուր-կեծակին»՝ խաչատրյանական մեծազոր տաղանդը:

Թերևս հարկ չլիներ այսքան խրվելու Մեծ հայրենականի «երաժշտական հորձանուտը», եթե ամեն անգամ Երևանի Դեմիրճյան փողոցով անցնելիս կամ կոմպոզիտորների տուն մտնելիս ստիպված չլինեի հիշելու Ա. Խաչատրյանի իմաստուն խոսքը. **«Երգը մարտնչող զենք է»:** Իսկ զենքը ուժեղ է և կրակում է անվրեպ միայն այն դեպքում, եթե այն գտնվում է հմուտ նշանառուի ձեռքում: Իսկական ժողովրդական երգը, որպես մարտնչող զենք, անհրաժեշտություն էր Երկրորդ համաշխարհայինի տարիներին, քանզի այն իր մեջ բովանդակում էր Հայրենիք, Խաղաղություն և Մարդասիրություն:

Այս սուրբ գաղափարների անաղարտության համար բազմաթիվ խորհրդային կոմպոզիտորներ, նրանց թվում և հայեր, բանակ մեկնեցին կամավոր կամ զորակոչվեցին Երևանից, Թբիլիսիից, Բաքվից, Մոսկվայից, Լենինգրադից: Ընկան նրանցից շատերը մեծատաղանդ բանաստեղծի խոսքը շուրթերին.

Ես երգելով կուզեմ մեռնի...

Երգելով և երգի համար զոհվեցին **Թունիկ Հովհաննիսյանը, Հովհաննես Նադիրյանը, Հրաչիկ Մելիքյանը, Ստեփան Տերտերյանը, Միքայել Զաղալյանը, Անդրանիկ Պախարյանը, Կոնստանդին Ճլդյանը:** Նրանց կարճատև կյանքը, ռազմի սիրալի անցյալն ու համեստ երգապնակը հրամայում են գնալ նրանց հետքերով, մոռացությունից փրկել այն ամենը, ինչ չհասցրին կենսագործել նրանք դաժան ճակատագրի բերումով:

●

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա: Պրոռեկտոր Միքայել Խաչատրյանի հետ բարձրանում ենք երկրորդ հարկ: Պատին ամրացված մարմարե հուշատախտակին քանդակված է.

ՍԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՎԱԼԵՆՏԻՆ ԻՋՐԱԻԼՈՎ
ՊԱՐՈՒՅՐ ԻՍԱԱԿՅԱՆ
ՌԱՖԻԿ ՄԵՀՐԱԲՅԱՆ
ԳԱԳԻԿ ՋԱԼԱԼԲԵԿՅԱՆ
ՍԻՄԱԿ ՌԱՄԱԶՅԱՆ

Բոլորն էլ զոհված են:

Մտնում ենք ռադիոտուն: Հանրապետության վաստակավոր արտիստ Կարո Արիստակեսյանը տեղեկացնում է, որ Մեծ հայրենականի տարբեր ռազմաճակատներում հերոսաբար են մարտնչել և զոհվել ռադիոյի ժողգործիքների անսամբլի թառիստներ **Նորիկ Ռուշանյանը, Անդրանիկ Բունիաթյանը** (409-րդ դիվիզիայից, խոցվել է Մոզդոկում) և սիրված մեներգիչ **Գուրգեն Գալոյանը:**

— Գուրգենի բանակ գնալը շատ ազդեց Մերանգուլյանի վրա, նրան արտոնագիր ուղարկեցին, մերժեց: Մերոնցից կովից վերադարձան **Լևոն Հարությունյանն** ու **Աշոտ Գասպարյանը,**— ավելացնում է երաժշտական հաղորդումների գլխավոր խմբագրության հնագույն աշխատակից Օֆիկ Պետրոսյանը և տեղեկացնում, որ Գուրգեն Գալոյանի կատարմամբ ձայնադարանում մի ժամանակ պահպանվում էր Շերամի «Աստղերը շողում են» երգի ձայնաժապավենը:

«Դե, որ երգիչներ, պարողներ, նվագողներ մասնակցել են կռվին, մասնակցած կլինեն և կոմպոզիտորները»,— խորհում եմ ինքս ինձ և բռնում Հայաստանի կոմպոզիտորների միության ճանապարհը... Վարչության նախագահ, կոմպոզիտոր Էդուարդ Միրզոյանն արդեն գիտի այցիս նպատակը: Նա թվարկում է բոլոր այն կոմպոզիտորներին և երաժշտագետներին, ովքեր զինվորի շինել են հագել, կրել հրացան ու նռնակ, մահվան աչքերին նայել անվարան և երբ նվաճել են Մեծ հաղթանակը, շատերը տուն են վերադարձել, շարունակել իրենց անավարտ ստեղծագործությունները, իսկ ոմանք...

Այնուհետև Էդ. Միրզոյանը շատ սեղմ պատմում է Մեծ հայրենականի ժամանակ իր կարճատև զինվորական ծառայության մասին և անմիջապես ավելացնում.

— Զոհված բոլոր կոմպոզիտորներին էլ գիտեմ: Ծանանչում եմ նրանց հարազատներին: **Կոնստանտին Ճիլտովը** ռոստովցի հայ էր, Արամ Խաչատրյանի մտերիմներից: Նա Իտալիայում ապրող աշխարհահռչակ նկարիչ Գրիգոր Ճլդյանի կրտսեր եղբայրն է: **Զաղալյանի** մասին ձեզ նյութեր կարող է տրամադրել նրա այրին՝ հանրապետության ժողովրդական արտիստ, խմբավար Էմմա Ծատուրյանը: **Թունիկին** լավ գիտի Գայանե Չեբոտարյանը: Նրանք միասին սովորել են Լենինգրադի կոնսերվատորիայում: **Հրաչիկ Մելիքյանին** վերաբերող տեղեկություններ ձեզ կհաղորդի նրա մորաքրոջ աղջիկը՝ բժշկուհի Զեմֆիրա Հարությունյանը կամ Հրաչիկի այրին՝ Եվգենյա Իոսիֆովնա Զախնինան, ապրում է Մոսկվայում: **Ստեփան Տերտերյանի** մասին դիմեք Ավետին, նրա հորեղբայրն է: Թե չեմ սխալվում, Մոսկվայում թե Պոդոլսկում հարազատներ ունի: **Նադիրյանին** ճանաչողներից կամ դասընկերներից որևէ մեկի ծանոթ չեմ: Նրա հետքերը և մերձավորներին ևս կգտնեք Մոսկվայում՝ Լևոն Բրուտյանի միջոցով: **Անդրանիկ Պախարյանը** մարտադաշտից վերադարձավ վիրավոր և մահացավ 1947-ին, 30 տարեկան հասակում: Նրան լավ գիտեն Ալեքսանդր Թադևոսյանն ու Արմեն Բուդաղյանը...

Բաժանվում եմ Կոմպոզիտորների տնից և բռնում այլ ճանապարհ, այն նորից ինձ բերում է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա·

Պրոֆեսոր Մագդալինա Գալուստովա (Սիմոնյան):

Այստեղ կադրերի բաժնում Արմենուհի Գասպարյանի աջակցությամբ կարողանում ենք ճշտել ՀՄՊ-ին մասնակցած, ԽՍՀՄ կոմպոզիտորների միության անդամ, կոնսերվատորիայի դասախոսների ցանկը, հանդիպել նրանցից մի քանիսին: Ահա նրանք՝ Մեծ հայրենականի վետերաններ, պրոֆեսորներ ՄԱԳԴԱԼԻՆԱ ՍԻՄՈՆՅԱՆԸ (ԳԱԼՈՒՍՏՈՎԱ), ԷԴՈՒԱՐԴ ՓԱՇԻՆՅԱՆԸ, ԷԼԵՈՆՈՐԱ ՈՍԿԱՆՅԱՆԸ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ՓԱՐԱՋԱՆՅԱՆԸ, ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐՅԱՆԸ և դոցենտ ՔՐԻՍՏԱՓՈՐ ԲԱԲԱՅԱՆԸ:

ՄԱԳԴԱԼԻՆԱ ՍԻՄՈՆՅԱՆԸ (ԳԱԼՈՒՍՏՈՎԱՆ) բանակ է մեկնել կամավոր: Ծառայել է 56-րդ և 18-րդ մեխգնդերի բուժսանմասերում: 1943 թվականին նա 393-րդ գումարտակում էր ծառայում, միևնույն ժամանակ որպես մենակատար մասնակցում էր զինվորական համերգներին, ոգեշնչում մարտիկներին, նրանց ի զեն

կոչում: Մ. Սիմոնյանը արժանացել է մարշալներ Մալինովսկու և Բաղրամյանի շնորհակալագրերին: Պատերազմից հետո հայրենիքի դուստրը ամբողջապես իրեն նվիրել է երաժշտական արվեստին: Նա այսօր Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի վաստակաշատ և սիրված դասախոսներից է, պրոֆեսոր:

Երաժշտագետ և մանկավարժ ԷԴՈՒԱՐԴ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ երեսուն տարուց ավելի է, ինչ ճանաչում եմ: 60-ական թվականներին նա դասավանդում էր Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում: Կոմպոզիտոր Մարտին Մազմանյանի և նրա հետ հաճախ էինք տարբեր թեմաների շուրջ զրուցում: Էդուարդը (մտերմությունը թույլ է տալիս նրան այդպես կոչել) ոչ մի անգամ չէր հիշեցնում, որ ինքը ՀՄՊ-ի մասնակից է: Այդ մասին արդեն «խոսում էր» նրա վիրավոր ձեռքը: Էդ. Փաշինյանը բանակ է զորակոչվել 1941 թ. դեկտեմբերին: Որպես 89-րդ Հայկական հրաձգային դիվիզիայի անսասան մարտիկ 400-րդ գնդի ռազմընկերների հետ նա թշնամու ոհմակների դեմ քաջաբար մարտնչել է Ղրիմում և Սևաստոպոլում: 1944 թ. մայիսի 9-ին Սևաստոպոլի համար ծավալված կատաղի մարտերից մեկի ժամանակ թշնամու գնդակը խոցել է պարթևալանջ հայորդուն: Ուշակորույս վիճակում ընկերները նրան մի կերպ հասցրել են սանմա: Երկարատև բուժումը թեև փրկեց խիզախ թամանցուն, բայց նա պրդեն ի վիճակի չէր նորից զենք բռնել և դուրս գալ թշնամու դեմ: Որպես 2-րդ խմբի հաշմանդամ այդ նույն թվականի նոյեմբերին նա զորացրվեց: ԽՍՀՄ կոմպոզիտորների միության անդամ, Երևանի Կոմիտասի անվան պետկոնսերվատորիայի պրոֆեսոր Էդ. Փաշինյանի կուրծքն այսօր զարդարում են ՀՄՊ-ի մի քանի շքանշաններ և մարտական մեդալներ: Նա Հայաստանի կոմպոզիտորների միության ռազմաշեֆական խորհրդի գործունյա երախտավորներից է և այսօր էլ հաճախ է հանդիպումներ ունենում զինակոչիկների և զինվորների հետ, դրվագներ պատմում Մեծ հայրենականից, ժողովուրդների համատեղ պայքարից և մշակույթների ու հոգևոր կապերի փոխմերձեցմամբ սերունդների մեջ դաստիարակում ինտերնացիոնալիզմ և հայրենասիրություն:

Պրոֆեսոր Էդուարդ Փաշինյան

Պրոֆեսոր Էլեոնորա Ոսկանյան:

Լությունն ու համեստությունը, երաժշտությունը ու մարդասիրությունը երաժշտագետ, մանկավարժ ԷԼԵՈՆՈՐԱ ՈՍԿԱՆՅԱՆԻ կյանքի անբաժան ուղեկիցներն են: Նա երբեք իր սաներին չի ասում, որ ինքը պատերազմի դաժան տարիներին (1943 թ.) որպես դաշնակահար ծառայել է Հյուսիս-կովկասյան ռազմաճակատի քաղվարչության ստորաբաժանումներից մեկում: Երբ դադարել են ռմբակոծումն ու փոխհրաձգությունը, առանց գրիմի և բեմական նազերի նրա նուրբ մատները նորից Կոմիտաս և Բեթհովեն են հնչեցրել, բուժել վիրավոր հոգիներն ու կարոտաբաղձ սրտերը, մարդկանց մղել նոր սխրանքների և հերոսության: Հայրենիքի պաշտպանությանը մատուցած անձնվեր ռազմական ծառայության համար Սովետական բանակի գլխավոր քաղվարչությունը իր դստերը պարգևատրել է ՀՄՊ-ի երկրորդ աստիճանի շքանշանով, մեդալներով ու շնորհակալագրերով: Պրոֆեսոր Է. Ոսկանյանի դասախոսություններն այսօր Կոմիտասի անվան կոնսերվատորիայում հայրենասիրության, ազատապաշտության և մարդասիրության առանձին դասեր են, որոնց նպատակը մեկն է՝ պաշտպանել Երկիր մոլորակի խաղաղությունը:

— 1941 թվականի սեպտեմբերի 7-ից մինչև 1945 թվականի նոյեմբերը ծառայել եմ Սովետական բանակում: Եղել եմ օդանավակայաններին սպասարկող հատուկ ստորաբաժանումներից մեկի 505-րդ գումարտակի շարքային զենիթային,— կարճ ներկայացնում է իր ռազմի անցյալը Հայկ. ԽՍՀ վաստակավոր արտիստ, պրոֆեսոր ՀՈՎՀԱՆՆԵՍ ՓԱՐԱՋԱՆՅԱՆԸ և հիշեցնում, որ ծառայել է Հարավային ռազմաճակատում: Մեծ հայրենականի շքանշանակիր և մեդալակիր

Պրոֆեսոր Հովհաննես Փարաջանյանը (ձախից) իր ռազմընկերոջ հետ: Հարավային ռազմաճակատ, 1943 թվական:

նախկին զինվորն այսօր ամենուր սիրված անուն է, վաստակաշատ, համեստ ու բարի՝ երաժիշտ և մանկավարժ, մենակատար և ստեղծագործող...

ՄԻԽԱՅԻԼ ԱՐՏԵՄԻ ՏԵՐՅԱՆԸ (Տեր-Մարտիրոսյան) ևս Մեծ հայրենականի նախկին զինվորներից է: Պատերազմի տարիներին Լենինգրադում բնակվող հայորդին ինքնակամ զինվորագրվեց Հայրենիքի պաշտպանությանը: Որպես հրաձիգ նա ծառայել է 8-րդ Կրասնապրեսնենսկայա դիվիզիայի 24-րդ գնդում: Պաշարված, անջուր, անհաց և ռմբակոծված այս քաղաքում ինչպիսի փորձությունների ասես, որ մասնակից կամ ականատես չի դարձել 2-րդ գումարտակի 2-րդ վաշտի հրամանատար խիզախ հայորդին: Հայրենիքը բարձր է գնահատել Մ. Տերյանի զինծառայությունները. նրան շնորհել է ՀՄՊ-ի երկրորդ աստիճանի շքանշան, Լենինգրադի պաշտպանության համար և բազմաթիվ այլ մեդալներ: Երաժիշտ, պրոֆեսոր Մ. Տերյանն այսօր Երևանի Կոմիտասի անվան պետկոնսերվատորիայի վաստակաշատ երախտավորներից է:

Հայրենական մեծ պատերազմում ՔՐԻՍՏԱՓՈՐ ԲԱԲԱՅԱՆԸ 1943 թ. օգոստոսից ծառայեց 13-րդ գվարդիական հրաձգային գնդում: Մարտում նա ծանր վիրավորվեց: Եվ երբ բուժհանձնաժողովը նրան ասաց. «Հետայսու Ձեզ չի թույլատրվում զենք վերցնել», վիրավոր հայորդին խոր վիշտ ապրեց. չէ որ շուրջբոլորը մահ էր և ավեր: Ի՞նչ արած. զորացրվեց: Դոցենտ Ք. Բաբայանն այսօր աշխատում է Երևանի պետկոնսերվատորիայում: Նա պարգևատրված է

Պրոֆեսոր Միխայիլ Տերյան (Տեր-Մարտիրոսյան):

Դոցենտ Քրիստափոր Բաբայան:

մարտական շքանշաններով և մեդալներով:

Կոնսերվատորիայի ՀՄՊ-ի վետերաններից է նաև պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ ԱՂՅՈՇԱ ՓԻՐՈՒԶՅԱՆԸ: Անշուշտ էլի են եղել Մեծ հայրենականի մասնակից երաժիշտներ (գուցե և կոմպոզիտորներ), որոնք մահացել են կամ տեղափոխվել այլ հանրապետություն: Ցավոք, նրանց մասին անհրաժեշտ նյութեր չունենալու պատճառով, ստիպված ենք լռել: Լռել, բայց չմոռանալ, որ Մեծ հայրենականի ակտիվ մասնակիցներից էր նաև Հայկ. ԽՍՀ կուլտուրայի մինիստրության արվեստի գործերի վարչության նախկին պետ, երաժշտագետ ՀԱԿՈԲ (ՍԵՊՈՒՀ) ԽԱՆԶՅԱՆԸ՝ «Միքայել Թավրիզյան», «Երգը կանչում է», «Կարո Կարապետյան» գրքերի հեղինակը: Զութակահար, մենակատար, երաժշտագետ, մանկավարժ **Հակոբ Խանջյանը** Կարմիր բանակ է զորակոչվել 1939 թ. սեպտեմբերին: Նա հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայի քաջարի մարտիկներից էր: Դիվիզիան 1940 թ. հուլիսի 16-ից վերանվանվեց Կ. Ե. Վորոշիլովի անունով: Մի քանի ամիս անց դիվիզիայում ձևավորվեց 560-րդ գաբուչինյան հրաձգային գունդը: 1941 թ. օգոստոսի 25-ին

Զութակահար Հակոբ Խանջյան:

Անդրկովկասյան ռազմաճակատի 47-րդ բանակի կազմի մեջ մտնող այս դիվիզիան տեղափոխվեց խորհրդա-իրանական սահման (Նախիջևան): Մեկ ամիս անց (սեպտեմբերի 27-ից) 38-րդ բանակի կազմում դիվիզիան առաջին անգամ երես առ երես դուրս եկավ գերմանական զավթիչների դեմ: Լենինգրադի կոնսերվատորիայի շրջանավարտ, ջութակահար Հակոբը նրանց հետ էր, խիզախաբար էր մարտնչում թշնամու դեմ Հարավ-արևմտյան ռազմաճակատում: Նա սխրանքով աչքի ընկավ Խարկովի, Դոնեցկի, Բելգորոդի համար մղվող կատաղի մարտերում: Ու երբ լռում էին ռումբերն ու կրակը, դիվիզիայի երաժշտական նվագախումբը Հակոբ Սեպուհի ղեկավարությամբ նորից հնչեցնում էր հարմոնն ու ջութակը: Հայկական, ռուսական, վրացական, ուկրաինական ազատամարտի երգը սիրով ու կարոտով էր համակում հայրենանվեր քաջորդիներին: Պատահել է այնպես, որ բլինդաժում, մոմի աղոտ լույսի տակ զինվորական ջազային նվագախմբի համար նրանց հրամանատար Սեպուհը երաժշտություն է հորինել, հետևները նվագել ու երգել: Այդ մասին դեռ ռազմաճակատային մամուլում գրել է Հրաչյա Քոչարը: 21-րդ, հետո 6-րդ բանակի կազմում 1942—1944 թթ. Հակոբ Խանջյանը (Սեպուհ) 76-րդ դիվիզիայի անսասան մարտիկների հետ, մի ձեռքին հրացան, մյուսում Երևանից տարած իր ջութակը, քանի-քանի անքուն գիշերներ է լուսացրել խրամատներում, ընկել ռմբակոծության և կրակի տակ, վերհիշել կնոջը՝ Տաթևիկ Սազանդարյանին. (այժմ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ), իր Դավիթ որդուն, հետո վրեժով և ցասումով լեցուն հետևել թշնամու առաջխաղացմանն ու անցել հակագրոհի, որ պատերազմի սև ծուխը Երևան չհասնի, որ պատերազմի սև ծուխը չնստի Արարատի գագաթին, որ պատերազմի սև ծուխը չմթագնի Սևանի լաջվարդ երկինքը... 1942 թ. նոյեմբեր: Ստալինգրադյան ահեղ բոցերում, Պավլովի տնից քիչ հեռու, հանկարծ իրար են հանդիպում երևանցի երեք ընկերներ, երեք հայ զինվորներ, հուզվում, գրկախառնվում: Նրանցից մեկը Հրաչյա Քոչարն էր, մյուսը՝ սերժանտ, բանաստեղծ Հրաչյա Հովհաննիսյանը, երրորդը՝ դիվիզիայի երաժշտական խմբի ղեկավար Հակոբ Խանջյանը: Ծուրջ բոլորը ռումբերի պայթյուն էր, գնդացիրների, հրանոթների և հրացանների անդադար կրակահերթ, երկինքն ու երկիրը մթնել էին: Վոլգան արյունից խեղդվում էր, ծխում էր կուրգանը... Խորհրդային զինվորական տարբեր ստորաբաժանումների ուժեղ ճնշման տակ հնարավոր եղավ ճեղքել թշնամու 330-հազարանոց զորքով շրջափակված Ստալինգրադը: Կարևոր այս օպերացիայի հաջող իրականացման մասնակիցներից էր նաև 30-ամյա Հակոբ Խանջյանը:

Հակոբ Խանջյանը և Հրաչյա Քոչարը ռազմընկերների հետ, 1942 թվականի նոյեմբեր:

«Սիրելի Գրիգոր, շուրջբոլորս կրակ է, ռմբակոծություն, ավեր ու մահ: Այստեղից փրկվողը նորից է ծնվում: Խնդրում եմ՝ ուշադիր լինես (թեև գիտեմ, որ այդպիսին ես) հայրիկի և մամայի հանդեպ, մերոնց հանդեպ, ձեռքդ Դավիթի գլխից անպակաս թող մնա...— Այնուհետև փոքր եղբորը (այժմ ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ)՝ Գրիգոր Խանջյանին գրած նամակում կարդում ենք:— Եղբայր ջան, ճակատային թերթերից տեղեկանում եմ թիկունքի մասին, Տաթևիկի ռազմաշեֆական համերգների մասին, ուրախանում եմ և հպարտանում... Թեև զոհերը շատ են (երկու կողմից), բայց մենք կհաղթենք, մեր գործը արդար է: Կարոտել եմ բոլորիդ, գրկում և համբուրում եմ, ողջ մնացեք: Միշտ Ձեր Հակոբ.

Գործող բանակ, 23.11.42 թ.»:

1943 թ. հունիս: Դադարի պահ էր, դիվիզիայի քաղաբաժնի պետ, փոխգնդապետ Դեմենտի Լեոնտևիչ Մեդվեդևը դիվիզիայի երաժշտական խմբի ղեկավար, լեյտենանտ Հակոբ Խանջյանին է հանձնում «Կարմիր Աստղի» շքանշան, հետո էլ՝ «Մարտական ծառայության համար» մեդալ: Այնուհետև երաժիշտ մարտիկը 51-րդ լեռնահրաձգային դիվիզիայի հետ (այսպես վերանվանվեց 76-րդ հրաձգային դիվիզիան 1942 թ. նոյեմբերին) մասնակցեց Կենտրոնական, Վորոնեժյան, 2-րդ Մերձբալթյան և 1-ին Մերձբալթյան ռազմաճակատներում ծավալված ցընցող մարտերին: Կլետսկայա կայարանի (1943 թ. հունվար), Բելգորոդ—Կուրսկ ուղղությամբ ծավալվող թեժ կռիվների, Պոլոցկի, Իրիշկայի ազատագրության ժամանակ գնդի մարտիկները զարմացել էին, թե քանի՜, քանի անգամ իրենց հայրդի ռազմընկերը կարողացավ մանևրել մահը և մնալ տոկուն ու անհաղթ՝ արժանանալով ՀՄՊ-ի երկրորդ աստիճանի շքանշանի: Թշնամու դեմ մարտնչելով որպես ռազմիկ և երաժիշտ՝ Հակոբ Խանջյանը մասնակցեց նաև Լատվիայում կուրլյանդական խմբավորման ջախջախմանը: Միայն մեծ հաղթանակից հետո բախտ վիճակվեց երգընկացի Վերգինե մայրիկին և իր հաշվապահ ամուսնուն՝ Սեպուհին, գրկախառնվել իրենց զինվոր որդու հետ: Սկզբում որպես մենակատար Հակոբն աշխատանքի անցավ Հայֆիլհարմոնիայում, որպես առաջին ջութակահար որոշ ժամանակ աշխատեց օպերային թատրոնում: Այնուհետև նա տարբեր տարիներին որպես տնօրեն ղեկավարեց երաժշտա-մշակութային այս երկու մեծ կազմակերպությունները, պարգևատրվեց «Աշխատանքային արիության համար» մեդալով: Նկատի ունենալով Հ. Խանջյանի կազմակերպչական հմուտ ձիրքն ու անշահախնդիր, բարի և սրտացավ վերաբերմունքը դեպի գործընկերները ու երաժշտական մշակույթը, նրան առաջ քաշեցին պատասխանատու աշխատանքի (երկար տարիներ նա Հայկ. ԽՍՀ կուլտուրայի մինիստրության արվեստի գործերի վարչության պետն էր): Մեծ է Հ. Խանջյանի վաստակը խորհրդահայ երաժշտական մշակույթը մեր անծայրածիր հայրենիքում և արտասահմանում ներկայացնելու գործում: Իր անբասիր և արգասավոր վաստակի համար Հ. Խանջյանը պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, արժանացել Հայկ. ԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչմանը: Կյանքի վերջին տարիներին նուրբ, համեստ և հմուտ երաժիշտն ու հայրենիքի նախկին զինվորը որպես ավագ գիտաշխատող իր համեստ լուման էր բերում Հայկ. ԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտահետազոտական հունձքին: Նրա գրչին է պատկանում Ալ. Հարությունյանի «Սայաթ-Նովա» օպերայի լիբրետոն, ինչպես նաև բազմաթիվ գրքեր և հոդվածներ՝ նվիրված հայ երաժշտական մշակույթի երախտավորներին: Միութենական երաժշտական բազմաթիվ ստուգատեսների դափնեկիր, ջութակահար-մենակատար, հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ և վաստակավոր արտիստ, հայրենիքի նախկին զինվոր և ազնիվ նվիրյալ Հ. Խանջյանը կյանքից հեռացավ 1958 թվականին հիսունվեց տարեկան հասակում՝ անավարտ թողնելով բազում մտահղացումներ և ծրագրեր:

Ինչպես հայ մշակույթի հազարավոր երախտավորները, պատերազմի տարիներին զինվորի շինել հագան, հրացան բռնեցին և գերմանական ելուզակների դեմ դուրս եկան նաև ինքնուս կոմպոզիտորներ գուսան Շահենն ու Խաչատուր Ներսիսյանը:

ԽՍՀՄ գրողների և ԽՍՀՄ կոմպոզիտորների միությունների անդամ, Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ ԳՈՒՍԱՆ ՇԱՀԵՆԸ (Սարգսյան) երեսուներկու տարեկան էր, Հայֆիլհարմոնիայի երգի-պարի պետական անսամբլում մեներգիչ էր, երբ զորակոչվեց Սովետական բանակ: Հյուսիսային Կովկաս, Ղրիմ, Ուկրաինա... Քանի-քանի անքուն գիշերներ է անցկացրել սահմանային ուղեփակոցներում գնդի անկնուն մարտիկ, կրասարցի (այժմ Ղուկասյանի շրջան) Եղիազարի որդին ռազմի մահաբեր ճամփաներին, բայց մնացել տոկուն և համառ, հավատալով, որ կհաղթի խորհրդային ժողովուրդը, կհաղթի Կարմիր բանակը: Ռազմադաշտում անգամ գուսան Շահենին մուսաները չէին լքում. նա և՛ գրում էր, և՛ երաժշտություն հորինում, և՛ երգում: Պատերազմից հաղթանակով վերադառնալուց հետո Շահենը ղեկավարեց Հայֆիլհարմոնիայի «Շիրակ» գուսանական անսամբլը, մասնակցեց Մոսկվայում

Հայրենիքի նախկին զինվորը՝ գուսան Շահենն այսօր

Նախկին հետախույզ, կոմպոզիտոր Խաչատուր Ներսիսյան:

(1945 թ.) Մեծ հաղթանակի առթիվ կազմակերպված երաժշտական ստուգատեսին: Գրչով, զենքով ու երգով Գուսան Շահենը ստեղծագործել է, կռվել և երգել իր ժողովրդի համար, նրա ապագայի համար, վկա՝ ժողովրդասիրված գուսանի և նախկին զինվորի «Գուսան Հայաստանի» ստեղծագործությունների ժողովածուն, նրան շնորհված կոչումները, զինվորական շքանշաններն ու մեդալները:

Հեռուստատեսության և ռադիոյի Ա. Մերանգուլյանի անվան ժողգործիքների անսամբլի նվագարար, ինքնուս կոմպոզիտոր ԽԱՉԱՏՈՒՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԸ թշնամու դեմ կռվել է 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայի մարտիկների հետ, եղել հետախույզ, պարգևատրվել շքանշաններով և մեդալներով: Երևանցի Աղասի Գալֆայանի (թառ), Հարություն Հարությունյանի (Տուշո, դուդուկահար), Գառնիկ Բեգլարյանի (պար), Գուրգեն Մնացականյանի (դափ) հետ նա ոչ միայն կռվել է ոսոխի դեմ, այլև մասնակցել դիվիզիայի զինվորական ինքնագործ անսամբլի համերգներին: Խ. Ներսիսյանի մասին այսօր էլ գովեստով են խոսում նրա ռազմընկերները: Պատերազմից հետո կոմպոզիտորը հյուսել է բազմաթիվ հայրենասիրական և սիրային երգեր: Նա այսօր Հայկ. ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ է:

Բազմաթիվ են կոմպոզիտոր և երաժիշտ հայ զինվորները...

Ճանապարհները հեռուներ են տանում:

ԶՈՀՎԱԾ ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ

ԵՍ ԵՐԳԵԼՈՎ ԿՈՒԶԵՄ ՄԵՌՆԵԼ

ԹՈՒՆԻԿ (ՀԱՐՈՒԹՅՈՒՆ) ՍԱՐԳՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (1908—1941):

Գատչինայից, Պուշկինոյից, Մգայից և Յամիժորայից վերադարձել ենք Կոլպինո կայարան: Կոլպինո, Կոլպինո: Քանի-քանիսը 42-րդ և 47-րդ բանակի մարտիկներից ընկան քեզ համար, հայրենիքի համար: Հազիվ զսպելով ներքին հուզմունքը՝ Լյուդմիլա Նիկոլաևնա Պլեխանովան մոտենում է ծաղկեպսակներով շրջապատված մարմարե հուշասյանը և, աչքերը հառած լենինգրադյան կանչուտ երկնքին, շարունակում.

— 1941-ի սեպտեմբերի 8-ից Լենինգրադն օղակվեց թշնամու կողմից և ընկավ պաշարման մեջ: 900 օր ու գիշեր քաղաքը վառոդի և հրդեհի ծուխ շնչեց, սոված, ծարավ և անլույս՝ պայքար մղեց գերմանական գիշատիչների դեմ...

1944 թ. Լենինգրադի վրա ռումբեր էր շաղ տալիս թշնամու 370 ինքնաթիռ: Հիտլերյան հրոսակները հյուսիսից թե հարավից, ծովից թե ցամաքից ամեն տեսակի մահաբեր զենքերով ուզում էին ծունկի բերել հեղափոխության օրրանը: 124 հազար խորհրդային քաղաքացիներ արհամարհելով մահը պաշտպանում էին իրենց սրբազան քաղաքը: Միայն 1944 թ. հունվարին ռուսական քաղաքների թագուհին վերջնականապես ազատագրվեց թշնամուց...

Կոլպինո, Կոլպինո: Մի խումբ պիոներներ ծաղիկներով այցի են եկել նրանց, ովքեր իրենց հայրերի ու պապերի հետ տարիներ առաջ կատաղի մարտեր են մղել Լադոգայի և Բալթիկայի ափերին, ովքեր ծանր վիրավոր շարունակել են մարտնչել թշնամու դեմ Նովգորոդի մոտ, Լյուբանում, Տոսնոյում, Կրասնոգվարդեյսկում, Ռոպշայում, Լենինգրադի մերձակա այլ բնակավայրերում, բայց հիմա չկան. հանգչում են սոչիների և ակացիաների հովանու տակ: Թվարկվում, հիշվում են եղբայրական այս շիրմում հանգչողների անունները, նրանց թվում և՝ Թ. Ս. Հովհաննիսյանը:

Գուգարքի շրջխորհրդի մշակույթի բաժնի վարիչ Միհրան Բաղդասարյանին և ինձ հետաքրքրողը «Տ. Ս. Օգանեսյանն է»: Լյուդմիլա Նիկոլաևնան տեսնելով, որ մեզանից «պրծում չունի», ծոցատետրիս մեջ իր ձեռքով գրում է երկու հասցե և ինձ առաջարկում գնալ Լենինգրադի պատմության պետական թանգարան (Նաբերեժնայա Կրասնովո ֆլոտա, № 44 շենք):

Հաջորդ օրը, պայմանավորված ժամին, թանգարանում ենք: Այստեղ հարյուրավոր այցելուներ օրվա ընթացքում դիտում են «Լենինգրադը պաշարման մեջ» և «Լենինգրադի ուսանողները՝ Լենինգրադի պաշտպան» ցուցահանդեսի վահանակները և թուղթ ու մատիտ առած գրառումներ, նշումներ կատարում: «Լենինգրադի հերոսական պաշտպանության համար քաջաբար մարտնչել են **Սոֆյա և Ռուզաննա Լալայան** քույրերը, բժշկական ծառայության կապիտան **Լենա Բուռնազյանը**, բժշկական ծառայության ավագ լեյտենանտ **Աստղիկ Սանոյանը, Կատյա Զմշկյանը:** Որպես երկրորդ կարգի զինվորական բժիշկ **Սոֆյա Լևոնի Լալայանը** 156-րդ բժշկական սանիտարական գումարտակում վիրահատել է 153 վիրավոր մարտիկների և զոհվել վիրահատության

Եղբայրական այն գերեզմանը Կոլպինո կայարանում, որի հուշասյան վրա հավերժացված է նաև Թունիկ Հովհաննիսյանի անունը:

սեղանի առաջ 1944 թ. փետրվարին: Նրա աճյունը հանգչում է Լուժսկի շրջանի Կրասնի Գորի գյուղում...»,— գրանցում եմ ծոցատետրիս առաջին էջում:

Մի պահ գրիչը ձեռքիս քարանում է: Ընկնում եմ մտորումների մեջ, հիշում Եղիշեի «Եվ տիկնայք փափկասուն հայոց ոշխարհի...» տողերը, մտոք տեղափոխվում Լենինգրադից Ավարայր: Հետո նորից եմ մոտենում թանգարանի էքսկուրսավարին և խնդրում ինձ ծանոթացնել Թունիկի մասին եղած նյութերին:

Ահա մի քանի դեղնած ու հնամաշ ազդագրեր: Առաջինում գրված է.

«Дом культуры Армянской ССР в Москве приглашает Вас на показательный концерт юных и молодых композиторов Армении:

Арно Бабаджаняна (Ереван)
Котика Арутюняна (Ереван)
Туника Ованесяна (Ленинград)
Григория Восканяна (Москва»...».

Այնուհետև նշված է՝ 21 մայիսի, ժամը 20.30 (Մոսկվա, 1937 թ.):

Ծանոթանում ենք ծրագրին: Ա. Բաբաջանյանը նվագել է իր ստեղծագործություններից «Շուրջպարը», «Անդանտեն», «Սկերցոն» և «Ութ վարիացիաները», Ալ. Հարությունյանը՝ «Քայլերգ» սուիտից, «Վարիացիաներ», «Չորս պրելյուդ» և «Պար», Թ. Հովհաննիսյանը՝ «Վարիացիաներ», իսկ Գր. Ոսկանյանը՝ «Երգեր կլարնետի համար», «Երկու երգ» և «Կվարտետ՝ երկու ջութակի, ալտի և թավջութակի համար» ստեղծագործությունները:

Նայում եմ, ծանոթանում 40-ամյա ազդագրին և ակամա խորհում. եթե ուզենաս Երևանում ձեռք բերել երևանյան որևէ համերգի ազդագիր կատարումից թեկուզ 1—2 ամիս հետո, կգտնե՞ս, թե՞ ոչ: Խորհում եմ ինքս ինձ, և մեկ էլ Լյուդմիլա Նիկոլաևնան առաջարկում է ծանոթանալ 1941 թ. մայիսի 15-ին Խորհրդային Միության կոմպոզիտորների լենինգրադյան պլենումին նվիրված կամերային ստեղծագործությունների 4-րդ համերգի ազդագրին: Համերգը կայացել է պետական ակադեմիական երգչախմբի դահլիճում:

Ծրագրում նորից չորս կոմպոզիտորներ են՝

Թ. Ս. Հովհաննիսյան
Վ. Վ. Շչերբաչևա
Մ. Ֆ. Գնեսինա
Վ. Վ. Վոլոշիպովա:

Համերգից 36 օր հետո բռնկվեց Մեծ հայրենականը: Լենինգրադի շրջանավարտ Թունիկ Սարգսի Հովհաննիսյանը ևս նետվեց մարտի. 1941-ի հուլիսն էր: Մի այլ ցուցավահանակում հանդիպում ենք ճարտարապետ Սերգեյ Թումանյանի և Լենինգրադի կոնսերվատորիայի դասախոսներ Գեորգի Տիգրանովի, Տիգրան Մարտիրոսյանի, ուսանողներ Կորյուն Անանյանի, Սուրեն Միրզոյանի, գեղարվեստի ակադեմիայի ուսանողներ, նկարիչներ և քանդակագործներ Գաբրիել Գաբրիելովի, Սաքո Հովհաննիսյանի, Հակոբ Հակոբյանի, Սուրեն Սարգսյանի, Սահակ Մովսիսյանի, Լևոն Տոնականյանի, Դեդուշ Արշակունու և այլոց ուսանողական կամ մարտական լուսանկարներին:

— Եթե իմ հաղորդումները ձեզ չեն գոհացնի, խնդրեմ, այցելեք կոնսերվատորիա, գեղարվեստի ակադեմիա, տեխնոլոգիական ինստիտուտ և այլ բուհեր: Նրանց արխիվներում, մարտական փառքի սրահներում և կարմիր անկյուններում ձեզ հետաքրքրող բազմաթիվ նյութեր կգտնեք,— ասում է Լյուդմիլան:

Պիտկարևյան գերեզմանոց:

Ահա «Մայր Հայրենիք» կոթողը:

Գրանիտե պատվանդանին խոյացած՝ առնական, հպարտ, բրոնզաձույլ այս կնոջ կեցվածքը ոչ միայն պատմական մեղադրանք և հաղթանակ է խորհրդանշում, այլև՝ հավատ և նվիրում: Բազմաթիվ, բազմանուն և բազմազգ զոհերին նվիրված այս հուշարձան-կոթողը կոմպոզիցիոն հետաքրքիր լուծում ունի. Խաղաղություն, Նվիրում և Վրեժ: Նելսոն Ստեփանյան, Լազր Չախչախյան... և էլի, էլի հայկական անուններ եմ մտաբերում՝ նայելով քարե այս մատյաններին և որմնաքանդակներին: Է՜, ո՞ւմ, որի՞ն հիշես, մարդկային հոսանքը ստիպում է սգո մեղեդիների տակ հարգանքի տուրք մատուցել բոլոր զոհերին, գլխահակ և հուզախեղդ թողնել Պիսկարևյան գերեզմանոցը:

Ստ. Շահումյան փողոցի վրա գտնվող «Լադոգա» հյուրանոցում ենք: Երեկո է: Գորիսեցի Կոլյա Հակոբյանն ու աշտարակցի Թամար Կարապետյանը առաջարկում են էքսկուրսիայի նոր պլան կազմել: Նրանք խնդրում են հաջորդ առավոտյան միասին այցելել Էրմիտաժ: Էրմիտաժի դիրեկտոր, ակադեմիկոս Բ. Պիատրովսկին սիրով է դիմավորում մեզ: Նա խորհուրդ է տալիս լինել քաղաքի № 361 դպրոցում և տեխնոլոգիական ինստիտուտում:

Դպրոցում ենք: Այն կրում է 42-րդ բանակի ռազմական խորհրդի անդամ, գեներալ-մայոր, Լենինգրադի հերոս պաշտպան Բենյամին Գալստյանի անունը: Ահա անվանի զորապետի կիսանդրին: Քիչ այն կողմ մարտական փառքի սրահն է: Ցուցավահանակում կարդում ենք.

«Գալստյանի անունը մենք մտցրել ենք Լենինգրադի հերոս պաշտպանների ցուցակում և նրան ընդմիշտ կհիշենք որպես մեր մեծ քաղաքի սքանչելի հայրենասերի:

Նիկոլայ Տիխոնով»:

Հպարտանում ենք, որ Լենինգրադի փողոցներից մեկը կրում է հայ քաջորդու անունը: Թեև ամեն մի թանգարանում հանդիպում ենք «ողջ կամ զոհված» հայանունների, բայց և այնպես ինձ հետաքրքրողը նորից Կոլպինոյի եղբայրական գերեզմանոցում հանգչող կոմպոզիտոր Թունիկ Հովհաննիսյանն է:

Կրկին Կոլպինոյում ենք: Հուշասյան մոտ զբոսաշրջիկների նոր խումբ է հավաքվել: Էքսկուրսավարը այստեղ հանգչող յուրաքանչյուր զոհվածի մասին համառոտ տեղեկություն է հաղորդում, առանձնակի շեշտում Թ. Ս. Հովհաննիսյանի կենսագրականն ու սխրանքը: Կռահելով, որ խմբում հայաստանցիներ շատ կան, նա մեր սպասածից ավելի փաստաշատ տեղեկություններ է հայտնում Թունիկի մասին, իսկ ես գրառում եմ. «Թունիկ Սարգսի Հովհաննիսյանը ծնվել է Վրացական ԽՍՀ Բոլնիս-Խաչեն գյուղում, 1908 թվականին: Ունեցել է գրկանքներով լի մանկություն: 1921-ին Թբիլիսիում հաճախել է միջնակարգ դպրոց, այն ավարտել է 1925-ին: Դեռ վաղ պատանեկան տարիներին ուշիմ և ընդունակ տղան սիրում էր նվագել ժողովրդական գործիքներ...

Լեզվագրական և երաժշտական ընդունակություններից բացի Հովհաննիսյանն ունեցել է նաև մաթեմատիկոսի անուրանալի ձիրք, որը երևացել է դպրոցն ավարտելուց հետո, Թբիլիսիում հաշվապահական դասընթացներում սովորելու ժամանակ: Թունիկը, ինչպես տեղեկացնում են նրա մասին պահպանված նյութերը, աշխատել է որպես ուսուցիչ Ծալկայի շրջանի Դորոխով գյուղում (ՎԽՍՀ), որտեղից էլ ստացել է միջնորդագիր՝ ընդունվելու Երևանի երաժշտական ուսումնարան»:

Կռահելով, որ մեզ հետ կլանված իրեն ենթադրում ողջ զբոսաշրջիկները, Լ. Պլեխանովան շարունակում է. «1928-ին Թունիկն ընդունվում է Երևանի երաժշտական ուսումնարան: Նկատի ունենալով նրա ստեղծագործական առաջին հաջող քայլերը, 1933-ին Երևանի կոնսերվատորիան Թունիկին գործուղում է Լենինգրադ: Այստեղ նա ընդունվում է կոնսերվատորիային կից երաժշտական ուսումնարան (պրոֆ. Բ. Վ. Ասաֆևի դասարան): Որպես կոմպոզիտոր Հովհաննիսյանը ձևավորվեց և ճանաչում ստացավ Լենինգրադում: Երբ թշնամին ներխուժեց հեղափոխության օրրանը, Թունիկը ևս դուրս եկավ թշնամու դեմ: Նա կռվում էր Մերեցկովի հրամանատարությամբ գործող բանակում: 1941-ի դեկտեմբերի 24-ին կոմպոզիտոր հայ մարտիկը խոցվեց թշնամու գնդակից Ցամ-Իժորա կայարանի մոտակայքում և թաղվեց այստեղ՝ Կոլպինոյում, Մգայից քիչ հեռու: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք գնալ կոնսերվատորիա, այնտեղ ծանոթանալ արխիվային նյութերին»:

— Թունիկի մասին տեղեկություններն ըստ երևույթին կարելի է ընդարձակել,— հարց-առաջարկիս էքսկուրսավարը պատասխանում է.

— Սիրո՜վ: Միայն թե շաբաթ օրը...

Բաժանվում ենք Կոլպինոյից: Ուր որ է ավտոբուս ենք նստելու: Միջին տարիքի մի մարդ ծաղիկներ է դնում եղբայրական այն գերեզմանին, որի մարմարե հուշասյանը քանդակված է. «Հավերժ հիշատակ Լենինի քաղաքի պաշտպաններին, որոնք 1941—1945 թթ. իրենց կյանքը

տվեցին մեր հայրենիքի պատիվը, ազատությունն ու անկախությունը պաշտպանելու համար»: Ավտոբուսը շարժվում է: Տեսադաշտից կամաց-կամաց հեռանում են մարմարե հուշասյունն ու նրա կողքին գլխիկոր կանգնած մարդը: Մեր հետագա հետաքրքրությունը բավարարած լինելու համար Լյուդմիլա Նիկոլաևնան տեղեկացնում է, որ ծաղիկներ դնողը հայ է, ճնարիչ, անունը՝ Գերասա, ապրում է Կոլպինոյում:

Հյուսիսի՝ մեզ անսովոր ցուրտը ստիպում է դեկտեմբերյան այդ երեկոն անցկացնել հյուրանոցում: Լենինգրադյան մարտերի մասնակից Պարգև Ղազարյանը (Աբովյանի կուսշրջկոմից) պատմում է այն դաժանությունների մասին, որ կիրառել են Բեթհովենի հայրենակիցները Ռիմսկի-Կորսակովի երկրացիների հանդեպ: Ուշ գիշեր է: Պետրոպավլովյան ամրոցի Միք. Նալբանդյանի մենախցից մտոք տեղափոխվել եմ Վոլխովի ռազմաճակատ: Կարծես տեսնում եմ այստեղ վիրավորված իմ ավագ ընկերներին՝ Խանզադյանին և Շաթիրյանին... Նորից՝ խոհեր, մտորումներ: Քնում եմ անհանգիստ: Ըստ պայմանավորվածության շաբաթ օրը ներկայանում եմ ժամադրավայր՝ Լենինոսերվատորիա: Այստեղ, ինչպես քաղաքի բազմաթիվ հիմնարկ-ձեռնարկություններում, հուշատախտակին անմահացել են կոնսերվատորիայից ռազմադաշտ մեկնած և չվերադարձած բազմաթիվ մանկավարժներ և սաներ: Զոհվել են պրոֆեսոր Մ. Զերնոգորովը, արվեստագիտության թեկնածուներ Վ. Տոլչանինն ու Մ. Գերգիլևիչը, մանկավարժներ Ա. Վյատսկիխը, Վ. Գրիգորևը, Խ. Լևինը, Ի. Ագաֆոնովը, Ս. Կորնեման, ասպիրանտներ Ն. Շաստինն ու Յու. Բուբնովը, ռեժիսոր Դ. Ֆենստերը, երգիչ Ս. Լիխաչևը, կոմպոզիտորներ Վ. Տոմիլինը, Թ. Հովհաննիսյանը, Բ. Ֆլեյշմանը և բազմաթիվ այլ երաժիշտներ:

Միայն կոնսերվատորիայից 200 մարդ կյանքի գնով պաշտպանել են իրենց սիրելի քաղաքը: Թշնամու դեմ ինքնակամ կռվելու դիմումներ են ստացվել այդ օրերին ոչ միայն տղամարդկանցից, այլև կանանցից և աղջիկներից:

— Եթե ձեր հայրենակիցներից շատերի մասին եք ուզում տեղեկություններ ստանալ, խնդրեմ, ծանոթացեք կոնսերվատորիայի հնագույն դասախոս Վերգինե Բագրատովնայի հետ: Նա հին լենինգրադցի է և իր բոլոր հայրենակիցներին լավ է հիշում: Ավետ Աբգարյանցը, Ասյա Վարոսյանը, Հովհաննես Եղիազարովը, Էդուարդ Գրիկուրովը, Տիգրան Տեր-Մարտիրոսյանը, պրոֆեսոր Գեորգի Տիգրանովը և էլի անվանի ուրիշ հայ արվեստագետ մանկավարժներ կան կոնսերվատորիայում: Ես բոլորին չեմ ճանաչում: Միգուցե նրանք այլ տեղեկություններ էլ ունեն Թունիկի մասին,— հուշում է ուղեկիցս և ավելացնում,— պրոֆեսոր Քրիստափոր Ստեպանովիչ Քուշնարևը (1890—1960) մեր կոնսերվատորիայում դասավանդել է կոմպոզիցիա և երաժշտության տեսություն: Նա ևս դասավանդել է Թունիկին: Ահա այս նկարը, պրոֆեսորը նկարված է իր սանի՝ Թունիկի հետ: Սա մեր թանգարանի էքսպոզիցիայում ցուցադրված է, պատճենը նվիրում եմ Ձեզ:

Շնորհակալություն հայտնելով Լյուդմիլային՝ միասին մտնում ենք կոնսերվատորիայի կադրերի բաժնի 1930—1955 թթ. փաստաթղթերի և ձեռագրերի ֆոնդադարան:

Նալբանդյան Հովհաննես Ռոմանի (1871—1942), պրոֆեսոր, ՌԽՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ: Շաթիրյան Սերգեյ Ալեքսանդրի (1907—1959 թթ.), 1934-ին ավարտել է դիրիժոր Ս. Ելցինի դասարանը, մինչ այդ՝ Երևանի կոնսերվատորիան, 1950—56 թթ. դասավանդել է Լենինոսերվատորիայում: Շիլտով Սերգեյ Ֆադեևիչ (1895), Շենյան Սոֆյա Վլադիմիրովնա (1882), Խենթովա Սոֆյա Միխայլովնա (1922), այս վերջին երեքն էլ գուցե հայեր են, չի գրված, չգիտենք,— ավելացնում է ավագ ֆոնդապահուհին ժպիտը դեմքին:

Թ. Հովհաննիսյանը (ձախից) իր դասախոս Ք. Քուշնարյանի հետ: Լենինգրադ, 1938 թվական:

Ահա ուսանողական մայր մատյանը: Թունիկ (Հարություն) Սարգսի Հովհաննիսյանի հասցեն է՝ Լենինգրադ, Մարատի փող. № 8, բն. 8:

Այս փողոցն ու բնակարանը դժվարանում ենք գտնել:

— Եթե չգտնես, փնտրիր կնոջը՝ Նինային, ազգանունը՝ Մինկևիչ,— նախօրոք պատվիրել էր բանաստեղծ Խ. Դաշտենցն ու ավելացրել,— մինչև գաս, Թունիկի եղբորը՝ Հուսիկին, ես կհանդիպեմ, և ամեն ինչ լավ կլինի: Թունիկին լավ գիտի Վարդանը: Թե չեմ սխալվում՝ նրանք իրար հետ են սովորել: Թունիկին Զարենցն է ծանոթացրել Տարոնցու և ինձ հետ: Տաղանդավոր, հոյակապ տղա էր Թունիկը, շատ սրամիտ և հումորով, Ղ. Աղայանին հեռավոր բարեկամ էր: 1937-ին Մոսկվա էր եկել, ուսանողական մեր հանրակացարանում «մի համերգ» տվեց, ականջիս է դեռ «Կարինե» օպերայից Թունիկի կատարումը.

Մենք քաջ տոհմի զավակներ ենք, չե՞նք վախի,
Մանր-մունր փորձանքներից չենք փախչի,
Մենք դեռ փոքրուց միշտ սիրել ենք քաջություն,
Ինչ որ լինի, չենք հանդուրժի պարտություն...

— 1932-ին,— ավելացնում է Դաշտենցը,— Սողոմոն Տարոնցու տեքստով Թունիկի գրած «Բանակ գնացի» երգը մի լրագրող որակել էր. «Նա արտահայտում է ոչ այսօրվա կոլխոզնիկ գյուղացու տրամադրությունը, այլ անցյալ ժամանակների...»: Թունիկը սա վերհիշել էր, վրդովվել, լցնում էր բաժակն ու շեշտակի կրկնում.

Մենք դեռ փոքրուց միշտ սիրել ենք քաջություն,
Ինչ էլ լինի, չենք հանդուրժի պարտություն...

Իմանալով, որ Թունիկի «Մեր սարերը նորել են» երգի տեքստի հեղինակը Դաշտենցն է, խնդրում եմ պոետին ծանոթացնել իր այս բանաստեղծությանը: Հաջորդ առավոտ Խ. Դաշտենցից ստանում եմ սույն տեքստը և մի կարճ ծանուցում՝ «կոլեկտիվացման ժամանակ եմ գրել».

ՄԵՐ ՍԱՐԵՐԸ ՆՈՐԵԼ ԵՆ

Աղջի, Լուսի՛կ, դուրս արի,
Տես, արևը լվացվել,
Ծողք է զարկել սարերին,
Ինչքան կակաչ է բացվել:

Տես, ինչ սիրուն շարքերով
Ավտոները վազում են,
Մեր սարերը խաղում են,
Մեր սարերին սազում են:

Ավտոն սարից ցած գնաց,
Արտից թռան լորերը,
Կակաչները կարմրած
Գլուխները կորորեն:

Աղջի, Լուսի՛կ, դուրս արի,
Մեր սարերը նորել են,
Ավտոները գյուղ մտան,
Ձեն են տալիս ծորերը:

●

Վարդան Տիգրանյանի տանն ենք: Գերեզմանոցում, հոր շիրիմը ավելորդ խոտերից ու փշերից մաքրելիս, օձը խայթել է կոմպոզիտորի ձեռքը: Թեև անցել է երկու-երեք շաբաթ, բայց և այնպես նա «դեռ լրիվ ուշքի» չի գալիս: Դեսից-դենից խոսելով հասնում ենք Թունիկին:

— Աստվածային տղա էր: Ափսո՜ս, նրա կյանքն ու ստեղծագործությունը մնացին անավարտ: Ահա այս լուսանկարը. մեջտեղինը հայրս է՝ Արմեն Տիգրանյանը, ձախ կողմում Թունիկն է, աջում՝ ես: Այս խմբանկարն արդեն լենինգրադյան ծագում ունի (նկարի ետևում գրված է՝ Թ. Հովհաննիսյան, Կ. Հովհաննիսյան, Ի. Խարաջյան (I շարք), Հ. Խանջյան, Ռ. Անդրիասյան, Վ. Տիգրանյան (2-րդ շարք): Շատ կազմակերպված, լուրջ, սրամիտ և հայրենասեր տղա էր: Կոմպոզիցիայից և հարմոնիայից միշտ «հինգ» էր ստանում: Դեռ ուսանող՝ նվաճեց

Կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը (մեջտեղում) Թունիկի և իր որդու՝ Վարդան Տիգրանյանի հետ

Կոմպոզիտոր Հարո Ստեփանյանը (կենտրոնում) իր սաների հետ. (ձախից) Տելեմակ Ավետիսյան, Միքայել Չաղալյան, Վարդան Տիգրանյան և Թունիկ Հովհաննիսյան, Երևան, 1932թ.:

ոչ միայն Լենինգրադի կոնսերվատորիայի դասախոսների, այլև կոմպոզիտորների միության Լենինգրադի բաժանմունքի և Լենֆիլհարմոնիայի ուշադրությունը:— Զրուցակիցս իր ասածները հաստատելու համար հիշեցնում է, որ 1937-ին Լենինգրադի կոնսերվատորիայի 75-ամյակի առթիվ Ռոբերտ Անդրեասյանը կատարել է Թունիկի «Դաշնամուրային վարիացիաները», իսկ Հ. Խանջյանը՝ «Օրորոցային» և «Պար դաշնամուրի և ջութակի համար» ստեղծագործությունները: Նույն թվականի մայիսի 21-ին Թ. Հովհաննիսյանի «Վարիացիաները» հնչում են Մոսկվայում Հայկ. ԽՍՀ մշակույթի տանը կազմակերպված Հայաստանի պատանի և երիտասարդ կոմպոզիտորներ Ա. Բաբաջանյանի, Կ. Հարությունյանի և Գրիգոր Ոսկանյանի ստեղծագործական երեկույթին՝ արժանանալով խստապահանջ ունկընդիրների բարձր գովեստներին: Թունիկի «Դաշնամուրային վարիացիաների» մասին դրվատանքով է խոսել Լենինգրադում լույս տեսնող «Մուզիկա» երկշաբաթաթերթը[1]:

[1] Տե՛ս «Մուզիկա» երկշաբաթաթերթը, Լենինգրադ., 5 դեկտեմբերի 1937 թ., № 30:

Թունիկի մասին Վարդան Տիգրանյանի հաղորդումները ստիպում են հանրային գրադարանում թերթել 30-ական թվականների երաժշտական հայ մամուլն ու գտնել Թ. Հովհաննիսյանի ստեղծագործությունները: Պարզվում է, որ Պետհրատը 1932-ին լույս է ընծայել սկսնակ և շնորհաշատ կոմպոզիտորից երկու մեներգ՝ «Բանակ գնացի» (խոսք՝ Ս. Տարոնցու) և «Մեր արտերում» (խոսք՝ Ն. Հարությունյանի) ստեղծագործությունները: «Խորհրդային արվեստ» ամսագրի 1933 թ. № 6-ից (էջ 32) իմանում ենք, որ հունիսին գրողների տանը կայացել է Կարո Զաքարյանի, Տելեմաք Ավետիսյանի, Թունիկ Հովհաննիսյանի և Մարտին Մազմանյանի ստեղծագործական երեկոն, որտեղ կոմպոզիտորներ Ա. Տեր-Ղևոնդյանը, Մ. Միրզոյանը, երաժշտագետներ Գ. Բուդաղյանն ու Ս. Գասպարյանը, գրող Դ. Դեմիրճյանը բարձր են գնահատել երիտասարդ Թունիկի ստեղծագործական առաջին քայլերը:

Զեռքիս տակ է հայկական մի այլ պարբերական՝ «Խորհրդային Հայաստանը»: Այն տեղեկացնում է, որ Բախի, Մոցարտի, Դեբյուսիի, Տարտինիի, Բուզոնիի, Հ. Ոսկանյանի, Մ. Մազմանյանի, Ռ. Աթայանի ստեղծագործությունների հետ միասին Երևանի ֆիլհարմոնիայի դահլիճում կլարնետիստ Զավեն Վարդանյանն ու ջութակահար Հակոբ Սեպուհը (Խանջյան) կատարել են նաև Լենինգրադի կոնսերվատորիայի ուսանող Թունիկ Հովհաննիսյանի ստեղծագործու-

Լենինգրադի կոնսերվատորիայի մի խումբ ուսանողներ: Նստած են (ձախից) Թ. Հովհաննիսյանը, Կ. Հովհաննիսյանը և Ի. Խարաջանյանը, կանգնած են (ձախից) Հ. Խանջյանը, Ռ. Անդրիասյանը և Վ. Տիգրանյանը:

Թ. Հովհաննիսյանի «Թեմա վարիացիաներով» գրքի շապիկը:

թյունները՝ Ա. Դոլուխանյանի և Մ. Մխիթարյանի նվագակցությամբ[1]:

Կոմպոզիտոր հայորդու ստեղծագործությունները ոչ միայն գնահատվում և կատարվում էին Երևանում, այլև տեղ էին գտնում Լենինգրադի և Մոսկվայի համերգային ցանկերում: Լարային կվարտետի համար 1938-ին գրած՝ Թ. Հովհաննիսյանի գեղջկական սյուժեով ստեղծագործությունը այնպիսի ջերմությամբ ընդունվեց երաժշտասերների կողմից, որ այն տեղ գտավ Լենինգրադի Գլազունովի անվան կվարտետի երկացանկում, հնչեց կոմպոզիտորների միության ստեղծագործական ստուգատեսին (25-ը մայիսի 1939 թ.), իսկ նոյեմբերին էլ՝ խորհրդային երաժշտության տասնօրյակի բացմանն ու կոմպոզիտորների միության լենինգրադյան պլենումում (1941 թ. մայիսի 15): Թունիկի այս կվարտետը հնչեց նաև Աուրեի անվան քառյակի կատարմամբ: Հետագայում այն տեղ գտավ նաև Կոմիտասի անվան կվարտետի համերգային ազդագրերում և պատերազմի հաղթական ավարտից մեկ ամիս անց՝ 1945-ի հունիսին (տես՝ «Կոմունիստ», Ե., 30/6, 45 թ., № 130) Ա. Գաբրիելյանի, Ն. Նալբանդյանի, Մ. Տերյանի և Ս. Ասլամազյանի վարպետ կատարմամբ ներկայացվեց հայ երաժշտասերներին:

Զանցած մի քանի ամիս, ինչպես վկայում է «Սովետական Հայաստան» թերթը (17/11—45 թ., № 245), զոհված կոմպոզիտորի այս ստեղծագործությունը Կոմիտասի անվան կվարտետը նորից հնչեցրեց Երևանում, Հայֆիլհարմոնիայի դահլիճում[1]: 1939 թվականին կոնսերվատորիան փայլուն ավարտելուց հետո, վկայում է Գայանե Զեբոտարյանը, Թունիկը շարունակում է մնալ Լենինգրադում և կատարել կոմպոզիտորների միության պատվերները, գրել (ավելի շուտ շարունակել) կվարտետի մնացած երկու մասերը: Հաջողությամբ ավարտում է դրանք և հանձնում ընդունող հանձնաժողովին: Թունիկի «Լարային կվարտետի» մասին 1939 թ. հուլիսի 4-ին «Լենինգրադյան պրավդան» տպագիրում է երաժշտագետ Վ. Իոխելսոնի «Նշանակալից երաժշտական ստեղծագործություն» խորագրով հոդվածը՝ դրվատելով հայ կոմպոզիտորին: Այս մասին խոսվում է նաև «Սովետական Հայաստանի երաժշտությունը» գրքում (Ե., 1973 թ., էջ 341—342), որտեղ ընթերցողը հանդիպում է Թունիկի և Հրաչիկ Մելիքյանի լուսանկարներին: Ցավոք զոհված մյուս կոմպոզիտորների մասին ժողովածուն լռում է:

Կոլպինոյում թաղված հայ կոմպոզիտորի թե մեներգերը, թե դաշնամուրային վարիացիաները և թե լարային կվարտետը վկայում են, որ հայ երաժշտական մշակույթը պատերազմի պատճառով կորցրեց մեծատաղանդ մի արվեստագետ, ինչպիսին Թ. Հովհաննիսյանն էր: Նրա անունը հպարտությամբ է շեշտել ՌԽՖՍՀ ժողովրդական արտիստ Յու. Բրյուշկովն իր «Լենինգրադի կոնսերվատորիան և հայ երաժշտական կուլտուրան» փաստաշատ և արժեքավոր հոդվածում[2]:

[1] Տե՛ս «Խ. Հայաստան», 14/5 1936 թ., № 109:

[1] Թ. Հովհաննիսյանի Հայաստանում տպագրված և կատարված ստեղծագործությունների մասին տես նաև Ռ. Մազմանյանի «Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն» գրքում (Ե., 1979, էջեր՝ 115, 121, 198, 288, 294: Ծնթ.—Ս.Գ.):

[2] Տե՛ս «Բարեկամություն», ժողովածու (կազմող՝ Ա. Արզումանյան), հ. 2, Ե., 1963, էջ 23:

— Թունիկի մասին նյութեր էի հավաքել, ուզում էի գրել, բայց չեմ հասցնում,— մեր հանդիպման ժամանակ ասում է Սամսոն Գասպարյանն ու խորհուրդ տալիս կարդալ Լիվշիցի գիրքը (1964 թ.), Հարո Ստեփանյանի փոքրիկ հոդվածը՝ տպագրված «Սովետական արվեստում» (1958 թ., № 8) և «Պսակ» ժողովածուն (1960 թ.), անպայման ունենալ Բ. Վ. Ասաֆևի՝ 1958 թ. Մոսկվայում լույս տեսած «Ակնարկներ Հայաստանի մասին» գիրքը, որի 12-րդ էջում մեծանուն կոմպոզիտորն ու մանկավարժը անհուն սիրով և դրվատանքով է խոսում իր աշակերտի՝ Թունիկի մասին. «...Ինձ համար պարզվեց, որ ես այնքան էլ վատ չեմ սովորեցրել նրան՝ պահպանել և զարգացնել իր ստեղծագործություններում հայկական ազգային երաժշտության տարրերը... չպարտադրելով նրան եվրոպականը և ռուսականը որպես հարկադիր կաղապաններ»: Դեռ ուսումնառության առաջին տարիներին Բորիս Վլադիմիրովիչը հրապուրվեց Թունիկի տաղանդով և Հայկ ԽՍՀ լուսժողկոմին միջնորդագիր գրեց՝ տեղում ընդառաջելու երիտասարդ կոմպոզիտորին:

«В Наркомпрос Армении.
Отзыв.

Студент Туник Оганесян занимается у меня по классу музыкальной композиции. По моему мнению, он безусловно обладает способностями композитора. То, что я видел из сочинений Оганесяна, обнаруживает чуткую музыкальность, изобретательность и знание струнных инструментов. Но дарование Оганесяна требует большой и упорной работы над собой и работы по усвоению западноевропейской музыкальной культуры и музыкальной техники, и прежде всего овладения роялем.

К сожалению, те жизненные условия, в которых находится студент Оганесян в данное время, сводят на нет все его старания, усилия и стремления.

Я полагаю, что помочь ему нужно безотлагательно, так как и его способности, и его серьезное отношение к делу вполне заслуживают поддержки.

2. 12-1933 г.

Профессор ЛГК Асафьев».

Լենինգրադի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Բ. Վ. Ասաֆևի կարծիքը Թունիկ Հովհաննիսյանի մասին՝ հասցեագրված Հայաստանի լուսժողկոմին:

Երաժշտական բարձրագույն կրթություն ստանալով Լենինգրադի Ռիմսկի-Կորսակովի անվան կոնսերվատորիայում, քաջատեղյակ դառնալով ռուսական և եվրոպական երաժշտական դպրոցներին և երաժշտության անցած պատմական ճանապարհին, Թունիկ Հովհաննիսյանը միշտ մնաց հայ կոմպոզիտոր՝ չհեռանալով ազգային երաժշտության մայրակուղքներից: Այդ մասին է վկայում նաև «Սովետսկայա մուզիկա» ամսագիրը: Այստեղ կարդում ենք. «1940 թվի շրջանավարտների մեջ Թունիկ Հովհաննիսյանը առանձնահատուկ տեղ գրավեց: Նրա ստեղծագործություններում հաջողությամբ համադրվում են հայկական և եվրոպական դասական երաժշտության սկզբունքներով օժտված ժողովրդայնությունը: Այդ մասին են հավաստում ինչպես նրա կվարտետն ու վարիացիաները, այնպես էլ սիմֆոնիան (կոմպոզիտորի դիպլոմային աշխատանքը սիմֆոնիան էր, որի դեռ երկու մասն էր ավարտված): Սիմֆոնիան, որն ունի կամերային ժանրի տարրեր, խստաշունչ է և ազգային՝ իր լադային գունավորումներով և հետաքրքիր ու սուր ռիթմինտոնացիաներով...

Զուսպ, հավասարակշռված ձևով գրված երաժշտությունը իր ներքին բովանդակությամբ խիստ էմոցիոնալ է: Սիմֆոնիայի առաջին մասը, գրված սոնատային ալլեգրոյի ձևով, լայնաշունչ է, երգային, բացահայտում է հեղինակի մասշտաբային մտածելակերպը: Երկրորդ մասը հայկական նուրբ ու նազելի պարեղանակ է, որը գերում է իր քնքուշ կենսուրախությամբ: Զարգացման ընթացքի որոշ ստատիկան բոլորովին չի նսեմացնում սիմֆոնիայից ստացած հիանալի տպավորությունը»[1]:

Երաժշտագետ Մ. Զուլակի այս կարծիքը մեկ անգամ ևս վկայում է, որ Թ. Հովհաննիսյանի ստեղծագործությունները մինչև ուղն ու ծուծը ազգային են, ապրված, ծնված հայկական մաքուր զգացողությունից, հարուստ՝ հարավցու ջերմությամբ և ազգային կրակով:

Թ. Հովհաննիսյանը ձևավորված, ինքնատիպ կոմպոզիտոր էր, 1940 թ. ԽՍՀՄ կոմպոզիտորների միության անդամ: Նրա ստեղծագործություններին անծանոթ լինելն ու երաժշտական համեստ գիտելիքներս հնարավորություն չեն տալիս այսօր սպառիչ և բնութագրող խոսք ասել, լիարժեք ներկայացնել Թունիկի կոմպոզիտորական դիմանկարը, մի արվեստագետի, որի մասին տեղին է նորից հիշեցնել երաժշտագետ Էրա Կարագյուլյանի 1974 թ. տպագրած խոսքերը. «Թունիկ Հովհաննիսյանի հերոսական մահը՝ Լենինգրադի մատույցներում, զրկեց նրան

1. «Советская музыка». 1940 г., № 10, стр. 89.

ունկնդիրների հետ հանդիպելու ցանկալի հաճույքից: Բայց հանդիպումը նրա ստեղծագործությունների հետ որոշ չափով կծածկի կոմպոզիտորի հետ չկայացած հանդիպման բացը»[1]:

Ե. Զարենցի «Հիշո՞ւմ ես, արդյոք» բանաստեղծությունը, որը դեռ 30-ական թվականներին երաժշտության էր վերածել Թ. Ս. Հովհաննիսյանը, այսօր էլ մեզ իրավունք է վերապահում մեր երաժիշտ կատարողների ականջին շշնջալ.

— Հիշո՞ւմ եք, արդյոք, Թունիկ Հովհաննիսյանին... Եթե այո, ապա... ինչո՞ւ չեք հնչեցնում նրա ստեղծագործությունները: Չէ՞ որ նա իր հերոսական մահից առաջ սիրում էր կրկնել «Ես երգելով կուզեմ մեռնել...» վարուժանական հանճարեղ իմաստախոսությունը:

1967—1980 թ.
Լենինգրադ—Երևան

ԹՈՒՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Հովհաննիսյան Թունիկ**—«Լարային կվարտետ»— (երկու ջութակի. ալտի և թավջութակի համար: Պարտիտուրա: Խմբ. Տ. Տեր-Մարտիրոսյանի): Երևան, Հայպետհրատ, 1961 թ. (գիրքն ունի հրատարակչության կողմից ձանոթագրություն—տեղեկանք Թ. Հ.-ի մասին):
2. **Հովհաննիսյան Թունիկ**—«Թեմա վարիացիաներով՝ դաշնամուրի համար» (նվիրված է Ք. Քուշնարյանին, խմբ.՝ Լ. Աստվածատրյան), Ե., 1961 թ.:
3. «Պսակ» (ժողովածու, կազմող և առաջաբանի հեղ.՝ Հարո Ստեփանյան), Երևան, Պետհրատ, 1960 թ.:
4. **Գրիգորյան Սասուն**— «Ես երգելով կուզեմ մեռնել»—«Գարուն» 1981 թ., № 6, էջ 47—49:
5. **Հայրապետյան Հ.**— «Տաղանդավոր կոմպոզիտորը՝ Հայրենիքի զինվորը», ՍՎ, Թբիլիսի, 9 մայիսի 1983 թ.:
6. **Գրիգորյան Սասուն**— «Սրբազան պարտք», ԳԹ, 21 մարտի 1980 թ. (Նրա մասին և լուսանկարը):
7. **Կարագյուլյան Էրա**— «Թունիկ Հովհաննիսյան», Երևան, 1974 թ.:
8. «Հիշատակի երեկո» (Արմենպրեսի ինֆորմացիա)—ԵԵ., 3 հուլիսի 1980 թ.:
9. **Ստեփանյան Հարո**—«Երաժիշտներ» (զոհված կոմպոզիտորների մասին)—«Սով. արվեստ», Ե., 1958 թ., № 8:
10. **Գրիգորյան Սասուն**—«Մուսաները չլռեցին»—ԳԹ, 5 մայիսի 1985 թ., № 18, էջ 2:
11. Т. О.—«Тема с вариациями для фортепиано. Л-М., Музгиз, 1940 г., стр. 23.
12. «Սովետսկայա մուզիկա», 1940 թ., № 10, էջ 81 (տես Մ. Ի. Զուլակի հոդվածը)
13. «Մուզիկա», Լենինգրադ, 1937 թ., № 30 (տե՛ս Ք. Ս. Քուշնարյանի կարծիքը Թ. Հ.-ի «Դաշնամուրային վարիացիաների» մասին):
14. **Իոխելսոն Վ.**—«Նշանակալի երաժշտական ստեղծագործություն», «Լենինգրադսկայա պրավդա», 1939 թ., 4 հուլիսի (խոսքը Թ. Հ.-ի «Լարային կվարտետի» մասին է):
15. «Բանակ գնացի», խոսք՝ Ս. Տարոնցու, երաժշտ.՝ Թ Հ.-ի: Երևան, Պետհրատ, 1932 թ.:
16. Մեր արտերում (խոսք Ն. Հարությունյանի, երաժշտ. Թ. Հ.-ի՝ դաշնամուրի նվագակցությամբ), Երևան, Պետհրատ, 1932 թ.
17. «Խորհրդային արվեստ», 1933 թ., № 6, էջ 32—33 (տեղեկացնում է, որ կատարվել է նաև Թ. Հ.-ի ստեղծագործություններից և արժանացել Դ. Դեմիրճյանի պրոֆ. Գ. Բուդաղյանի, Ա. Տեր-Ղևոնդյանի, Ս. Գասպարյանի, Միք. Միրզոյանի ուշադրությանը):
18. «Խորհրդ. Հայաստան», 1939 թ., 14 մայիսի, № 109, տեղեկացնում է, որ Հայֆիլհարմոնիայի դահլիճում Բախի, Մոցարտի, Դեբյուսիի ստեղծագործությունների հետ ջութակահարներ Հակոբ Սեպուհն ու Ջավեն Վարդանյանը կատարել են նաև Թունիկի ստեղծագործություններից: Նվագակցել է Ալ. Դոլուխանյանը:
19. «Կոմունիստ» (30 հունիսի 1945 թ., № 130) թերթից իմանում ենք, որ Կոմիտասի անվան քառյակը (Ա. Գաբրիելյան, Ն. Բալաբանյան, Մ. Տերյան և Ս. Ասլամազյան) Հայֆիլհարմոնիայի դահլիճում հնչեցրել է Մյասկովսկու, Կոմիտասի, Հ. Ստեփանյանի և Թ. Հովհաննիսյանի ստեղծագործություններից:
20. **Մազմանյան Ռ.** «Սովետական երաժշտական կյանքի տարեգրություն», Ե., 1979 թ.: Վկայում է, որ Կոմիտասի անվան քառյակը այդ նույն ստեղծագործությունը կատարել է նույն դահլիճում նաև 1945 թ. նոյեմբերի 17-ին:
21. «Очерки об Армении» (Կազմեց Գ. Տիգրանով), Մ., 1958 թ., էջ 12:
22. **Лившиц А.**—Жизнь за родину свою, М., 1964, стр. 280—289.
23. Газ. «Музыка», М., 5 декабря 1937 г., № 30.
24. Афиши: 1 — Москва, 21 мая 1937 г.
2. Ленинград, 15 мая 1941 г.
25. «Սովետական Հայաստան», թ., 1945 թ. 16 նոյեմբերի, № 245:
26. **Արզումանյան Աշոտ**—«Բարեկամություն» Ե., 1963 թ., հ. 2, էջ 23:
27. **Մազմանյան Ռ.**—«Սովետական երաժշտական կյանքի տարեգրություն», Ե., 1979 թ., էջեր՝ 115, 121, 198, 288, 194:
28. «Սովետական Հայաստանի երաժշտությունը» (ժողովածու), Ե., 1973 թ., էջ 341—342:
29. «Հայկական սովետական հանրագիտարան», Ե., 1980 թ., հատոր 6-րդ, էջ 570:
30. «Պսակ» (ժողովածու զոհված կոմպոզիտորների մասին, կազմեց Հարո Ստեփանյանը), Ե., 1960 թ.:
31. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 8, Երևան, 1970 թ. (տես «Սովետահայ երաժշտությունը մեծ հայրենականի տարիներին» բաժինը), էջ 199:
32. Сто лет ленинградской консерватории. (сборник)—Ленинград, 1962 г.; стр: 171.
33. **Տոնիկյան Ա.**—«Սովետահայ կոմպոզիտորները Հայրենական մեծ պատերազմի տարիներին», Ե., 1945:

[1] Է. Կարագյուլյան, Թունիկ Հովհաննիսյան, Ե., 1974 թ., էջ 59:

ԿՈՄՊՈԶԻՏՈՐԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ՈՐԴԻՆ

ՀՐԱՉՅԱ ՍՊԻՐԻԴՈՆԻ ՄԵԼԻՔՅԱՆ (1913—1941)

1934 թվականին էր: Երեք տարի Մոսկվայի ավտոմոբիլային գործարանում ֆրեզերագործ աշխատելուց և տեխնիկական բուհ չընդունվելուց հոգնած, Հրաչիկը, հակառակ իր կամքի, «բախտը փորձեց» կոնսերվատորիայում: Միխայիլ Գնեսինը զարմացավ տղայի արտակարգ ընդունակությունների վրա, նախատեց Հրաչիկին, որ իր շնորհքի և տաղանդի հետ հաշվի չի նստել. «օտար» ինստիտուտների դռներ է բախել:

«Ընդունվել եմ կոնսերվատորիա, կոմպոզիցիոն ֆակուլտետ». դիմորդ Հրաչիկ Մելիքյանի այս հեռագիրը Սաթենիկ մայրիկի համար ամենաթանկ փաստաթուղթը դարձավ:

— Հրաչիկը ծնվել է 1913 թ. Թբիլիսիում, կոմպոզիտոր Սպիրիդոն Մելիքյանի ընտանիքում: Նրա մայրը իմ մորաքույրն էր,—տեղեկացնում է զոհված կոմպոզիտորի մասին Զեմֆիրա Հարությունյանը (Սաղոյան) և հետաքրքիր հուշեր պատմում իրենց մանկության և ուսումնառության տարիներից: Այնուհետև Զեմֆիրան իրենց անձնական գրադարանից բերում է «Սպիրիդոն Մելիքյան» ժողովածուն և ընթերցում Սաթենիկ Մելիքյանի հուշերից մի հատված.

«1913 թվականի հուլիս ամիսն էր: Մենք արդեն ամառանոց էինք մեկնել՝ Ղարաքիլիսա (այժմ Կիրովական), մեր նորածին մանկան՝ Հրաչիկի հետ: Այստեղ ապրում էինք մի հարմար բնակարանում, որը պատկանում էր Կլեկչոնց Թաթոսին: Երեկոյան դեմ Սպիրիդոնը սենյակում նստած աշխատում էր, իսկ ես՝ երեխան գրկիս, պարտեզում զբոսնում էի: Հանկարծ հայացքս ուղղեցի մեր կողմը եկող մի միջահասակ, նիհար հոգևորականի վրա: Իսկույն կռահեցի, Կոմիտասն է: Ես շփոթվել եմ՝ չգիտեմ շտապե՞լ Սպիրիդոնի մոտ, թե՞ ոչ: Բայց Կոմիտասը վրստահ մոտեցավ ինձ, սիրալիր սեղմեց իմ ձեռքը և իր գիրկն առավ Հրաչիկիս: Ես նրան առաջնորդեցի դեպի տուն: Ահա և սենյակից շտապ դուրս եկավ Սպիրիդոնը: Ինչպես հայր և որդի, նրանք գրկախառնվեցին: Ուրախության արցունքներ, սրտառուչ խոսքեր և, իհարկե, աշխույժ կատակներ: Կոմիտասը բռնցքահարում է իր աշակերտին և հետո նորից գրկիցս վերցնում Հրաչիկին, թոցնում ու գուրգուրում...»[1]:

Թերևս ապագայում մայրն այս եղելությունը պատմել է Հրաչիկին, իսկ նա էլ, երբ հայրը մահացել է (1933 թ.), վճռել է իր միակ ճանապարհը. գնալ հոր շավղով՝ հարազատ մնալ կոմիտասյան երգի ավանդույթներին: Դեռ սկսնակ Հր. Մելիքյանը նախանշեց ստեղծագործական իր խառնվածքը՝ չկտրվել ազգային երգի մայրուղուց: Հետագայում, անդրադառնալով զոհված կոմպոզիտորի ստեղծագործություններին (տես «Պսակ», Ե., 1960 թ.), Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Հարո Ստեփանյանը Հրաչիկի մասին գրել է. «Հր. Մելիքյանի ստեղծագործությունները խորապես կապված են հայկական ժողովրդական երաժշտության ակունքներից բխող երգայնության հետ: Նրա թե սիմֆոնիան և թե պոեմը (խոսքը «Սասունցի Դավիթ» պոեմի մասին է—Ս. Գ.) գործիքավորված են վարպետորեն, գունեղ և հնչեղ... Երիտասարդ կոմպոզիտորը գրել է հետաքրքիր լարային կվարտետ և վոկալ երգերի մի ստվար շարք»:

— Զուլֆին նկարում էր, նկարիչ դարձավ: Իսկ Հրաչիկը սիրում էր և՛ նկարել, և՛ նվագել, և՛ ոտանավոր գրել, և՛ թատրոնում խաղալ, և՛ սպորտով զբաղվել, և՛ էլեկտրիկ-ինժեներ կամ շինարար դառնալ...,— տեղեկացնում է բժշկուհի Զեմֆիրա Հարությունյանը և ցույց տալիս Հրաչիկի տարբեր տարիների լուսանկարները:

Խմբակային մի լուսանկարից իմանում ենք (մակագրությունից), որ Հրաչիկը Գնեսինի դասարանից տեղափոխվել է Շեբալինի դասարանը, մասնակցել կոնսերվատորիայի սիմֆոնիկ նվագախմբի ինքնագործունեությանը: Մի ուրիշ խմբանկարում նա մասնակցում է գործիքային անսամբլի փորձերին: Հետաքրքրասիրությունը հայ ժողովրդական երգարվեստի և երաժշտական գործիքների հանդեպ, նուրբ ճաշակն ու անսպառ աշխատասիրությունը դարձան նրա ինքնահաստատման գրավականը:

Դրա վառ ապացույցն են Մոսկվայի կոնսերվատորիայի մեծ և փոքր դահլիճներում տված նրա ստեղծագործական համերգները, որոնց ունկնդրում էին ոչ միայն անվանի երաժիշտները, այլև Մոսկվայում ուսանող Հրաչիկի ընկերներն ու բարեկամները: «Մոսկվայի պետական կոնսերվատորիայի կոմպոզիտորական ֆակուլտետի ուսանողների երգային ստեղծագործությունները»,— այսպես է կոչվում այն ժողովածուն, որին կոնսերվատորիայի գրադարանում ծանոթացնում է մեզ ավագ գրադարանավար Դեմյանովան և ցույց տալիս Հր. Մելիքյանի 1935 թ. գրած «Սիրած աղջիկ» երգը: Ահա այն.

Девушка, милая,
Встань, проснись,
Свежему утру
Ты улыбнись.

Видишь? В долины
Легла роса.
Солнце приходит
На небеса.

Солнце нам светит,
Ждёт земля,
Нашей работы
Жаждут поля.

Песню звонко
Ты звени. —
Пой про горячие
Наши дни.

Այդ նույն թվականին, երբ Հրաչիկը երկրորդ կուրսի ուսանող էր, հյուսում է սոնատ դաշնամուրի և թավջութակի համար, իսկ մի տարի անց՝ 1936-ին, Կոմիտասի անվան քառյակը առաջին անգամ Երևանում կատարում է 23-ամյա Մելիքյանի կվարտետը, որի պրեմիերային մասնակցում էին կոմպոզիտորի մայրն ու միակ քույրը՝ Զուլֆին:

Հրապուրված երիտասարդ կոմպոզիտորներ Դմիտրի Շոստակովիչի և Արամ Խաչատրյանի ստեղծագործական հաջողություններով, երկրպագելով նրանց արվեստը, Հրաչիկ Մելիքյանը, հատկապես կոնսերվատորիայի վերջին երկու կուրսերում սովորելու տարիներին, երկնում է իր սիմֆոնիկ սյուիտը և մի շարք կամերային երգեր և պիեսներ ջութակի, դաշնամուրի և ֆլեյտայի համար: 1938—39 թվականներին, երբ Խորհրդային Հայաստանի աշխատավորությունը պատրաստվում էր շուքով նշելու իր ազգային դյուցազներգության 1000-ամյա հոբելյանը, երբ Դավթի և Մեծ ու Փոքր Մհերների ստեղծագոր-

[1] Տե՛ս «Սպիրիդոն Մելիքյան» (կազմողներ՝ Ս. Մելիքյան, Ալ. Թադևոսյան), ՀԳԱ հրատարակչություն, Եր., 1964 թ., էջ 107:

Հրաչիկ Մելիքյանը Մոսկվայի կոնսերվատորիայի կոմպոզիտորական բաժնի ուսանող իր ընկերների հետ (Շեբալինի դասարան), 1936—1937 ուստարի:

Սաթենիկ Մելիքյանը որդու՝ Հրաչիկի և հորեղբորորդու՝ Արալիկի հետ (վերջինս ևս զոհվել է ՀՍՊ-ում):

ծական կերպարների կերտմանն իրենց ներդրումը էին բերում ավագ, տարեց և սկսնակ արվեստագետները, Մոսկվայի կոնսերվատորիայի ուսանող Հրաչիկ Մելիքյանը չուզեց անմասն մնալ: Նա իր դիպլոմային աշխատանքը՝ սիմֆոնիան, նվիրեց Սասունցի Դավթի կերպարի երաժշտական բացահայտմանը: 1940 թվականի գարուն: Մոսկվայի կոնսերվատորիայի մեծ դահլիճում հարյուրավոր ունկնդիրներ սրտի անհուն թրթիռով վայելում են տաղանդաշատ Մելիքյանի «Սասունցի Դավիթ» սիմֆոնիկ պոեմից ստացած բերկրանքը: Բոլորը շնորհավորում են երիտասարդ կոմպոզիտորին մեծ կտավի երաժշտական լիարժեք երկ ստեղծելու համար: Բոլորից շատ հուզված էր դիպլոմանտի ուսուցիչը՝ պրոֆեսոր Շեբալինը: Նա իր ուրախությունն ու հրճվանքը ջերմ ողջագուրանքով փոխանցեց իր սանին և խորհուրդ տվեց. «Հարազատ մնա՛ ժողովրդին. նրա հերոսությունն ու նրա պատմությունը հավերժական երգ են...»:

Հր. Մելիքյանի կյանքի մանրամասներին ծանոթանալուց պարզվեց, որ նա Մոսկվայի կոնսերվատորիան ավարտելուց հետո մանկավարժական աշխատանքի է նշանակվել Երևանի կոնսերվատորիայում՝ ԽՍՀՄ կուլտուրայի մինիստրության հրամանով: Մինչդեռ հերթական պարտադիր զինծառայությունը հետաձգել է 26-ամյա կոմպոզիտորի գործուղումը հայրենի քաղաք, և 1940-ին նա զինվորագրվել է Կարմիր բանակին:

«Գուցե վերջին լուսանկարը լինի: Ի՞նչ իմանաս...»,— նկարվելիս կես կատակ, կես լուրջ շշնջացել է տիկնոջ ականջին: Քիչ հետո գնացքը նրան տարել է այլ ուղղությամբ:

Դիվիզիայի զինվորական խումբը, որ ղեկավարում էր երգահանը, այնպիսի հաջողություններ հասավ, որ բոլորին թվաց, թե «Կոմպոզիտորը, ուր որ է, կչվի»: Մինչդեռ բռնկվեց պատերազմը: Հրաչիկը, որ մինչ այդ երկու անգամ արժանացել էր բանակի գլխավոր հրամանատարության շնորհակալագրերին, խնդրեց իրեն ուղարկել կրակի առաջին գիծ: Կոմպոզիտորի խնդրանքը մերժվեց:



Հ. Մելիքյանի «Սասունցի Դավիթ» գրքի շապիկը, Ե., 1964 թ.:

— Բացի կռվելուց երգել է պետք,— եղավ դասակի հրամանատար Վասիլևի պատասխանը: Եվ ահա Կարմիր բանակի 23-րդ տարեդարձն է: Զինվորների ուժերով պատրաստված գրական-երաժշտական երեկոյին հնչում է Հր. Մելիքյանի «Օդաչուների երգը» (խոսք՝ Ա. Պրոկոֆևի): Ավաղ, սա եղավ 28-ամյա կոմպոզիտորի կարապի երգը: 1941-ի հուլիսին Մոգիլյովի մոտ թշնամու օդային և ցամաքային հուժկու գրոհներից մեկի ժամանակ անսպասելի կերպով իր հերոսական մահով անմահացավ բոլորից սիրված կոմպոզիտոր հայորդին:

Հր. Մելիքյանն իր երաժշտական նախնական կրթությունը ստացել էր Երևանում, պրոֆեսոր Ա. Մ. Մնացականյանի մոտ, դեռ մանկուց ունկընդրել Էջմիածնից, Ապարանից, Աշտարակից և հանրապետության այլ շրջաններից իր հոր գրառած և մշակած ժողովրդական երգերը: Մոսկվայում էլ, երբ կարոտում էր Երևանին, Հրազդանի կիրճին, Կոնդին և իր քրոջ նատյուրմորտներին, սիրում էր դնդնալ.

Կռո՛ւնկ, մեր աշխարհեն խաբրիկ մը չունի՞ս...

Մելիքյանի մահվան լուրը ցնցեց ոչ միայն իր հարազատներին, այլև Մոսկվայի կոնսերվատորիայի դասախոսներին: Այսօր էլ այցելուն կոնսերվատորիայի նախասրահի մարմարե հուշատախտակին կկարդա նրա անունը: Հրաչիկի ողբերգական վաղաժամ մահվան լուրը ցավով տարավ նրա առաջին ուսուցիչը՝ մեծ Գնեսինը. «Իմ կոմպոզիցիոն դասարանն ընդունվեց Սպիրիդոն Մելիքյանի որդին, խիստ շնորհալի մի երիտասարդ, որը, դժբախտաբար, այդպես անժամանակ կորավ մարտերում (տես. «Սովետական արվեստ», 1958 թ., № 8, էջ 59): Կորա՞վ մարտերում: Ո՛չ, երբե՛ք: Քանի կան «Սասունցի Դավիթ» սիմֆոնիկ պոեմը, «Երեք պրելյուդը», ով գոնե մեկ անգամ լսել է նրա «Օդաչուների երգը», հաստատ կարող է Հրաչիկի շուրթերով մի հարց ուղղել հրատարակիչներին ու երաժիշտներին:

— Ե՞րբ եք ստեղծագործություններս լրիվ հրատարակելու, ինչո՞ւ չեք ընդառաջում կնոջս՝ Եվգենյա Զախնինային, նրան, ում մոտ գտնվում է արխիվս: Զոհված եմ, բայց գիտեմ՝ ում ձեռքով: Բեռլինի կոնսերվատորիայի դիրեկտոր, պրոֆեսոր Ռիխարդ Շմիդտի թոռներից մեկնումեկի ձեռքով, այն մեծ երաժշտի, որի մոտ 1905—1908 թվականներին աշակերտել է հայրս՝ Սպիրիդոն Մելիքյանը, այն Շմիդտի, որը 1911 թ. մայիսի 18-ին մի արտաճմլիկ նամակով հայրիկիս գրել էր.



Հրաչյա Մելիքյանը կնոջ՝ Եվգենյա Իոսիֆովնա Զախնինայի հետ: 1941 թ. հունիս, Մոսկվա:

«Կինս, դուստրս և ես լավ ենք: Բոլորս սրտագին բարևներ ենք ուղարկում Ձեզ: Գրեցեք շուտով, կրկին և մանրամասն: Կոմիտասից վաղուց ի վեր ոչինչ չէի լսել... Բեռլինում այս ձմեռ համերգների մի իսկական հեղեղ է: Չէի՞ք ցանկանա արդյոք գոնե մի բան լսել դրանցից: Շարունակեցեք ինձ սիրել, ինչպես ես եմ սիրում Ձեզ»[1]:

ՀՐԱՉՅԱ ՄԵԼԻՔՅԱՆԻ ՄԱՍԻՆ

(Ստեղծագործությունները առանձին գրքերով, ձայնասկավառակը և գրականություն նրա մասին)

1. «Սասունցի Դավիթ» (սիմֆոնիկ պոեմ, պարտիտուրա: Խմբագիր՝ Լևոն Աստվածատրյան):— Երևան, Հայպետհրատ, 1964 թ., 92 էջ:

[1] Հր. Մելիքյանին վերաբերող նյութերը մեզ է տրամադրել նրա այրին՝ Եվգենյա Իոսիֆովնա Զախնինան (ապրում է Մոսկվայում):

2. «Соната для виолончели и фортепиано»—Москва, изд. «Советский композитор», 1976 г., редактор Ю. Челкаускас.
(Ունի հեղինակի մասին կենսագրական համառոտ ծանուցում):
3. Квартет для двух скрипок, альта и виолончели» М.—1979 г., изд. СК, редактор В. Шуть:
(Ունի հեղ. մասին կենսագրական համառոտ ծանուցում, տպված է նաև լուսանկարը):
4. Профессор **Штейнберг М.** О.—«Государственные экзамены композиторского факультета» (статья.)—гз.: «Советский музыкант», орган МГК, июнь 1940 г.
5. **Б. Я. [Борис Яарустовский]**—Семидесятый выпуск—гз:«Советский музыкант», орг: МГК, июнь 1940 г
(Տպված է Հ. Մելիքյանի լուսանկարը իր ընկերներ Վ. Նավոևի, Ս. Տուլիկովի, Մ. Մագիդենկոյի և Ն. Պելկոյի հետ):
6. Курсант **Б. Сынзыныс** — «Курсант композитор» (армейская газета), Тула, февраль, 1940 или 1941 г...?
7. Осипов Р.—«Памяти павших», журн. «Музыкальная жизнь». М., 1975 г., № 5.
8. **Գրիգորյան Սասուն**— «Սրբազան պարտք», ԳԹ, 21 մարտի 1980 թ., էջ 1 (իր մասին և լուսանկարը):
9. **Գրիգորյան Սասուն**—«Ճանապարհ երգով» (նրա մասին և լուսանկարը՝ դասընկերների հետ), ՀՁ, 14 հունվարի 1981 թ.:
10. «Հիշատակի երեկո» (Արմենպրեսի ինֆորմացիա) — ԵԵ., 3 հուլիսի 1980 թ.:
11. **Ստեփանյան Հարո**— «Երաժիշտներ» (Զոհված կոմպոզիտորների մասին), «Ս. Արվեստ», 1958 թ., № 8, էջ 58—59:
12. «Պսակ» (ժողովածու զոհված կոմպոզիտորների մասին, կազմեց և առաջաբանը գրեց Հ. Ստեփանյանը), Ե., 1960 թ.:
13. **Մելիքյան Սաթենիկ** (կոմպոզիտորի մայրը) —«Էջեր իմ հուշերից». տես «Սպիրիդոն Մելիքյան» (ժողովածու, կազմողներ՝ Սաթենիկ Մելիքյան, Ալեքսանդր Թադևոսյան), Ե., ԳԱ, 1964 թ., էջ 107
14. **Սիմոնյան Մ.**— «Հիշողության ուժը» (1985 թ. հուլիսին Երևանի կամերային տանը Հր. Մելիքյանի և Կոնստ. Ճլդյանի լարային կվարտետների կատարման մասին է: Կատարող՝ Երևանի լարային քառյակը. Զարեհ Սահակյանց (ղեկավար), Արտաշես Մկրտչյան, Գարեգին Հարությունյան և Վարուժան Բարթիկյան), ՍՀ, 24 հուլիսի 1985 թ., էջ 4:
15. **Գրիգորյան Սասուն**— «Մուսաները չլռեցին» (Մեծ հայրենականում զոհված հայ արվեստագետների մասին), ԳԹ, 5 մայիսի 1985 թ., № 18, էջ 2:
16. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 8, Երևան, (տե՛ս «Սովետահայ երաժշտությունը Մեծ հայրենականի տարիներին» բաժինը), էջ 199:
17. Югославская газета «Освобождение», 1976 г., 5 декабря (Рецензия на концерт пианистки М. Гамбарян, исполнявшей «Прелюдий» Г. Меликяна).
18. Грампластинка «Г. Меликян—концерт», соната, пьесы. Слово о Г. М. профессора А. Лившица. Всесоюзная фирма грампластинок «Мелодия». Стерео: 33—С—10—11751—52. Исполнители: Квартет Гостелерадио СССР: Леонард Бруштейн, Ирина Бутырина, Валентин Фейгин, Татьяна Железникова, редактор грампластинок К. Симонян.
19. Афиша «Вечер фортепианной музыки». от 9 марта 1975 г. Москонцерта (Октябрьский зал Дома Союзов).
В программе: **Фрид**—Венгерский альбом
Меликян—Три прелюдии
Э. Левина—Соната.
Цинцадзе—Прелюдия и токата
Галинин—Концерто-гроссо
Исполнитель: **Гита Атласман**
20. **Лившиц А.**—«Жизнь за Родину свою», Москва, 1964 г., стр.: 215—217.

ԴԱՇՆԱՄՈՒՐԸ ԲԱՑ ՄՆԱՑ[1]

ՄԻՔԱՅԵԼ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՉԱՂԱԼՅԱՆ (1907—1942)

Կրակի առաջին գծում էր: Դադարի պահին ստացվեց դաշտային փոստը: Բացեց ծրարը և կարդաց հանրապետության զինկոմ Աատրյանի ստորագրությամբ կնքված մի գրություն:

— Դուք տարկետում եք ստացել... կարող եք վերադառնալ թիկունք,— եղավ գնդի հրամանատար Տիգրան Սայադյանի զգուշացումը:

—Դա անհնար է: Ես եկել եմ կռվելու և հաղթելու, ես եկել եմ իմ հայրենիքն ազատագրելու թշնամուց,— հետևեց Միքայել Չաղալյանի պատասխանը: Եվ որպեսզի Հայաստանի կոմպոզիտորների միությունը տեղեկանար իր ուղարկած գրության արդյունքին, Չաղալյանը Միության վարչության նախագահ Հարո Ստեփանյանին հասցեագրած նամակը վերջացրեց այսպես. «Կամ չեմ վերադառնա, կամ ետ կգամ հաղթա-

[1] Չաղալյանի մասին նյութերը մեզ է տրամադրել Նրա այրին՝ խմբավար, Հայկական ԽՍՀ ժող. արտիստ, պրոֆեսոր Էմմա Ծատուրյանը:

նակով...»: Ու նորից նետվեց մարտի...

Միքայել Չաղալյանը բնիկ շուշեցի է, ծնվել է 1907 թվականին ծառայողի ընտանիքում: Հայրը՝ Նիկողայոս Ավագյանը, մի երեկո տուն եկավ ու կնոջն ասաց.

— Թագուհի, վաղը Ելենային, Նինային, Միշային և Սաշային գեղեցիկ կհագցնես, գնում ենք Բաքու...

Այստեղ Մանթաշովի գրասենյակի գործավար Ավագյանը (Չաղալյանի հայրը) ձգտում էր, որ իր երեխաները կանոնավոր կրթություն ստանան: Դեռ վաղ հասակից, Շուշվա կրթական դպրոցում սովորելիս, Միքայելի մոտ երևան էին եկել երաժշտական և գրական հակումներ. սիրում էր թատ նվագել, բանաստեղծություններ գրել: Բաքվի հայկական դպրոցի սան էր և արդեն անուն հանած թատիստ, երբ նրան իր մոտ հրավիրեց բժիշկ, խմբավար Իոննիսյանը և ասաց.

— Մնա մեր ֆիլհարմոնիայի ժողգործիքների անսամբլում և թատ նվագիր...

Չանցած մի քանի տարի գանգրահեր և աշխույժ Միքայելն արդեն վիրտուոզ թատիստ էր: Առիթ ունեցավ ծանոթանալու անվանի կոմպոզիտոր Անտոն Մայիլյանի հետ: «Ծովի երգի» հեղինակը դարձավ ինքնուս պատանու առաջին ուսուցիչն ու երաժշտական մեկենասը: Անտոն Մայիլյանի անձնական նախաձեռնությամբ 1932 թ. Միքայելն ընդունվեց Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ստեղծագործական բաժինը: Անվանի երաժշտագետներ Սարսի անվան կոնսերվատորիայի ստեղծագործական բաժինը: Անվանի երաժշտագետներ Սար-

Երևանի պիոներների պալատի ժողգործիքների անսամբլի ղեկավար Մ. Չաղալյանը իր սաների հետ, պարապմունքի ժամին: Երևան, 1940 թ.:

Մ. Չաղալյանը իր ղեկավարած ժողգործիքների անսամբլի հետ հաճախ էր ելույթ ունենում (Նստած է, ձախից 5-րդը):

գիս Բարխուդարյանն ու Վարդգես Տալյանը չորս տարի իրենց հոգու և մտքի գանձարանը բացեցին Միքայելի առջև: 1936-ին փայլուն առաջադիմությամբ Զաղալյանն ավարտեց իր նախընտրած ֆակուլտետն ու անմիջապես աշխատանքի անցավ Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում՝ ղեկավարելով ժողգործիքների բաժինը: Նկատի ունենալով երիտասարդ կոմպոզիտորի ստեղծագործական և հասարակական գործունեության վառ դրսևորումները՝ Հայկական ԽՍՀ լուսժողկոմատը 1937-ին նրան նշանակեց Երևանի պիոներ-դպրոցականների նորաբաց պալատին կից (այժմ Ղ. Ղուկասյանի անվան) մանկական երգչախմբի և ժողգործիքների անսամբլի ղեկավար: Մանկավարժական աշխատանքը և երաժշտական առօրյա հոգսերը նոր մտահղացումներ առաջացրին. հավաքել, գրի առնել հայկական երաժշտական բանահյուսության նշխարքները, մշակել դրանցից լավագույնները: Այս սրբազան գործում ևս Զաղալյանն իր արժանի լուման ներդրեց: Հիշենք նրա Ղարաբաղի ժողովրդական հորովելի՝ «Հո, մարալի» մշակումը: 1936—40 թվականներին երիտասարդ կոմպոզիտորը ստեղծում է մի շարք մեներգեր (Սարմենի «Օդաչու աղջիկը», Մ. Մկրտչյանի «Բերքը հասուն»), խմբերգեր, երգեր՝ դաշնամուրի, ժողգործիքների նվագակցությամբ, կանտատ՝ մանկական երգչախմբերի համար և այլ ստեղծագործություններ: Անձնական մտերմությունը՝ Սարմենի, Արտյոմ Շահբազի, Հովհաննես Շիրազի և այլոց հետ, առիթներ է ստեղծում, որ շնորհաշատ կոմպոզիտորը անդրադառնա իր ընկերների ստեղծագործություններին, նրանց հաղորդի երաժշտական ռիթմ և մեղեդի: 1940-ին, Հայաստանի խորհրդայնացման 20-ամյակի առթիվ, հանրապետության տարբեր բեմերից հաճախ էին հնչում Զաղալյանի «Քասանամյակը», «Դար», «Կոմերիտ աղջիկ», «Հո, մարալ» ստեղծագործությունները, իսկ կանանց երգչախմբի համար գրված «Հունձը ոսկեթել» (խոսք՝ Հովհ. Շիրազի) երկձայն խմբերգը այնքան մասսայական դարձավ, որ այն հետագայում զետեղվեց Դանիել Ղազարյանի խմբագրած «Դրպրոցական երգարանում»: 1940 թվականին կոմպոզիտոր Զաղալյանը Վարդան Բունիի հետ ղեկավարում էր Հայֆիլհարմոնիայի ժողգործիքների նվագախումբը:

— Այսօրվա պես հիշում եմ,— պատմում է ամուսնու մասին Էմմա Ծատուրյանը,— ապրում էինք Աբովյան փողոցի վրա, այժմյան ռուսական թատրոնի ետևում գտնվող մի սենյականոց բնակարանում: ԽՍՀՄ կոմպոզիտորների միության շարքերն ընդունվելը արտակարգ ոգևորել էր Միշային. աշխատում էր դաշնամուրային պիեսի

Բորիսին գրկած, Մ. Զաղալյանը ունկնդրում է Ասլան պապին՝ գրառելու համար ժողովրդական մեղեդի: 1939 թ.:

Արևելյան ժողգործիքների եռյակ, մեջտեղում Մ. Զաղալյանն է:

վրա, ես փոքրիկիս՝ Բորիսին էի կերակրում, և հանկարծ... դաշնամուրը բաց մնաց. ինքը դուրս գնաց: Քիչ հետո պիոներ-պալատի տնօրեն Ավետիք Փանոսյանի հետ ներս եկավ, զանգահարեց երաժշտական ուսումնարան, ջղայնացավ, քաշվեց մի կողմ, գնաց-եկավ, ձեռքիցս վերցրեց երեխային ու սկսեց հետը խոսել. «Գերմանացին չի ուզում, որ հորով-մորով մեծանաս...»:

1941-ի սեպտեմբեր: Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի տղամարդ մանկավարժներից շատերը չմտան լսարան, մեկնեցին ռազմադաշտ, նրանց թվում և՝ Միքայել Զաղալյանը:

Նա Թելավիի ռազմական ուսումնարանի հրամկազմի կուրսանտ դարձավ: Մի քանի ամիս անց՝ 1942-ին, նշանակում ստացավ 408-րդ հրաձգային դիվիզիայում (հրամանատար՝ Պ. Ն. Կիցուկ, քաղբաժնի պետ՝ Բիկոն, հետո՝ Ս. Մ. Սարգսյան): Սեպտեմբերի 15-ին դիվիզիան հերոսական մարտեր էր մղում գերմանական ֆաշիզմի դեմ Գելենջիկից արևմուտք՝ մտնելով Սևծովյան № 47 բանակի կազմի մեջ: Էրիվանսկայա, Ծապսգորսկայա բնակավայրերի և Ծիզե բարձունքի համար մղած մարտերում քնարական մեղեդիների սովոր կոմպոզիտոր հայ մարտիկը ռումբերի տարափի տակ դիմադրում էր ոսոխին: Զումատովո, Էրիվանսկայա, Լինդերովո, Կրասնայա Պոբեդա և այլ բնակավայրերում 672-րդ գունդը հրամանատար Տիգրան Սայադյանի գլխավորությամբ ծանր մարտեր մղեց թշնամուդեմ, կատաղի հանդիպումներ ունեցավ հակառակորդի 3-րդ լեռնահրաձգային դիվիզիայի հետ: Վերջինը իր ուժերը կենտրոնացրել էր Ախտրիսկայա և Նիկոլաևսկայա բնակավայրերի շրջակայքում: Կատաղի այդ մարտերում գնդի № 1 գումարտակի կոմիսար Ռուբեն Աղաբաբյանն ու նրա համհարզ Միքայել Զաղալյանը, կապիտան Մուշեղ Թահիրովը, ավագ լեյտենանտ Ալեքսան Թադևոսյանը, քաղաշխատողներ Լևոն Կարապետյանն ու շարքայիններ Սիմոն Մովսիսյանը, Վարազդատ Փիլոյանը և շատ-շատերը իրենց փառքով պսակեցին և արժանացան Կարմիր աստղի շքանշանի և մեդալների:

Զաղալյանի նամակներից իմանում ենք, որ 1942 թ. սեպտեմբերի 26-ին ինքը զինվորական բլուզի թևքը պատռել և կապել է գումարտակի հրամանատար Աղաբաբյանի վիրավոր, արյունաբամ ձեռքը, մեկ ուրիշ նամակից (30/9—42 թ.) տեղեկանում ենք, որ իրենց 672-րդ հրաձգային գնդի մասին դրվատանքով է գրել «Հանուն հայրենիքի» ռազմաճակատային թերթը (խմբագիր՝ Արշավիր Հակոբյան), իսկ 47-րդ բանակի ռազմական խորհրդի հրամանով Գրեչկոն և Մալցևը իրենց շնորհակալությունն են հայտնել և որոշ

Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի ուսուցիչներ, Երևանի կոնսերվատորիայի շրջանավարտներ, 408-րդ հայկական հրաձգային դիվիզիայի աննկուն մարտիկներ (ձախից) Անդրանիկ Ծատուրյանը, Պարույր Իսահակյանը և Միքայել Զաղալյանը Հյուսիսկովկասյան ռազմաճակատում: 1942 թ.: Երեքն էլ զոհվեցին:

զինվորականների ներկայացրել կառավարական պարգևների (այդ մասին տես նաև «Սովետական Հայաստան» թերթի 1942 թ. հոկտեմբերի 18-ի համարը):

Սեպտեմբերի վերջերին թշնամին ձեռնարկեց նոր հարձակում Տուապսեի ուղղությամբ: 408-րդ դիվիզիան արդեն պետք է կռվեր 18-րդ բանակի կազմում՝ գեներալ-լեյտենանտ Կամկովի գլխավորությամբ: 672-րդ գունդը Նովոռոսիյսկի շրջակայքից հոկտեմբերի 14-ին տեղափոխվեց Տուապսե և պաշտպանական դիրք գրավեց Փշիշի հովտում: Գոյթխ գյուղի համար մղված մարտերում կոմպոզիտոր Միքայել Զաղալյանը ականատես դարձավ իր ամենամոտ ընկերոջ՝ ռեժիսոր Գուրգեն Մարինոսյանի գնդակահարությանը: Մարտերը կատաղի բնույթ ստացան, շրջակա խաղաղ գյուղերն ու քաղաքներն էին ռմբակոծում, ավերում ու ավարում գերմանական 46-րդ հետևակային դիվիզիայի բարբարոսները՝ ֆաշիստական գեներալ Լանցի գլխավորությամբ: Անարկու այդ բախումների և Զաղալյանի հերոսական մահվան մասին ահա թե ինչ է գրել ականատեսը՝ գնդի հրամանատար, պահեստի գնդապետ Տ. Սայադյանն իր հուշերում. «408-րդ դիվիզիայի 672-րդ հրաձգային գունդը մինչև հոկտեմբերի 10-ը համառ պաշտպանական մարտեր էր մղում հակառակորդի գերակշռող ուժերի դեմ: Այդ հակագրոհներից մեկի ժամանակ առաջին գումարտակի ավագ համհարզ, կոմպոզիտոր Միքայել Զաղալյանը ձեռքի երկու նռնակները նետեց գրոհող հակառակորդի խմբի վրա, իսկ 3-րդ նռնակը նետելու պահին թշնամու գնդակից ընկավ հերոսի մահով...»[1]:

ԵՐԿԻՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Խոսք՝ ՄԵԼԻՔ ՄԵԼԻՔՅԱՆԻ
երաժշտ.՝ Մ. ԶԱՂԱԼՅԱՆԻ

Ցասման ծովն է փոթորկվում
Ամրոցում նոր աշխարհի.
Արշալույսն է շողշողում
Հաղթանակող մարտերի:
Կրկներգ—Երկիր հարազատ,
Հերոսների չքնաղ մայր,
Ապրիր կյանքով միշտ ազատ,
Արևաշող ու անմար:
Ֆաշիստ դաժան գայլերին
Մենք կշանթենք մարտերում,
Որ քո աստղը, Հայրենիք,
Հավերժ շողա աշխարհում:
Երկիր հարազատ,
Հերոսների չքնաղ մայր.
Ապրիր կյանքով միշտ ազատ,
Արևաշող ու անմար:[1]

[1] Հուշեր Մեծ հայրենականից (ժողովածու), Ե., «Գիտելիք», 1968, էջ 75:

Հպարտ ու սեգ ծակատիդ
Մենք կդնենք հաղթության
Պսակները լուսաձին՝
Հյուսված խինդից մարդկության:
Երկիր հարազատ,
Հերոսների չքնաղ մայր.
Ապրիր կյանքով միշտ ազատ,
Արևաշող ու անմար:[1]

ՄԻՔԱՅԵԼ ԶԱՂԱԼՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. «Հայրենասիրական երգեր»— (երգարան, կազմեց Ա. Տոնիկյանը), Ե., 1944, էջ 14—15:
2. **Գրիգորյան Սասուն**— «Դաշնամուրը բաց մնաց» (նրա մասին), ԵԵ., 1978, 12 հոկտեմբերի, № 240, էջ 3:
3. **Գրիգորյան Սասուն**— «Սրբազան պարտք», ԳԹ, 21 մարտի. 1980 թ.,էջ 1 (նրա մասին և լուսանկարը):
4. **Գրիգորյան Սասուն**— «Կյանքը շարունակվում է երգերում», ԵԵ, 3 հոկտեմբերի 1978, էջ 3:
5. «Հիշատակի երեկո» (Արմենպրեսի ինֆորմացիա)—ԵԵ, 3 հուլիսի 1980:
6. **Ստեփանյան Հարո**— «Երաժիշտներ» (զոհված կոմպոզիտորների մասին), «Ս. արվեստ», 1958 թ., № 8, էջ 58—59:
7. «Պսակ» (ժողովածու զոհված կոմպոզիտորների մասին, կազմեց և առաջաբանը գրեց Հարո Ստեփանյանը), Ե., 1960:
8. **Սայադյան Տիգրան**—«408 հայկական հրաձգային դիվիզիան», **«Հուշեր մեծ Հայրենականից»** գրքում (կազմեց Հայկ Սինանյանը), Երևան, «Գիտելիք», 1968, էջ 75:
9. **Лившиц А.**—«Жизнь за родину свою», М., 1964, стр: 327—329:
10. **Գրիգորյան Սասուն**—«Մուսաները չլռեցին» (զոհված արվեստագետների մասին): Կա նաև Մ. Զ.-ն, ԳԹ, 5 մայիսի 1985 թ., № 18, էջ 1:
11. Հայ ժողովրդի պատմություն, հատ. 8, Ե., 1970, էջ 199:

ՇԵԲԱԼԻՆԻ ՍԻՐԱԾ ԱՇԱԿԵՐՏԸ

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՇԼՈՅԱՆ (ՇԻԼՏՈՎ) (1905—1941)

Կոնստանդին Շլոյանը ծնվել է 1905 թ. հոկտեմբերի 16-ին Նոր Նախիջևանում: Նրա մանկությունն ու պատանեկությունը անցել են Դոնի Ռոստովում: Դեռ վաղ մանկությունից (4—5 տարեկան) փոքրիկ Կոստյայի (այդպես էին կոչում նրան) մոտ երևան եկան երաժշտական արտակարգ ընդունակություններ և նկարչական ձիրք: Հարազատները ապագա երաժշտին ցույց տվեցին պրոֆեսոր Ֆրադենին, որը և նախապատրաստեց 9-ամյա տղային՝ ընդունվելու Ռոստովի երաժշտական ուսումնարան: Փոքրիկ Կոստյան ավարտեց Վ. Վ. Շալպի դաշնամուրային դասարանը փայլուն գիտելիքներով: Բոլորը սպասում էին, որ նա մեծ դաշնակահար կդառնա: Իրավաբան հոր վաղաժամ մահը խաթարեց պատանու երազանքները. ընտանիքի հոգսն ընկավ Կոստյայի վզին, և նա ստիպված Դոնի Ռոստովում աշխատանքի անցավ ըստ իր մասնագիտության: Որպես անվանի երաժիշտ 1925—1930 թթ. Կոստանդին Շլոյանը մեծ համբավ ձեռք բերեց, չէ որ Դոնի Ռոստովում նոր կազմակերպած սիմֆոնիկ նվագախումբը, որի առաջատար ուժերից մեկն էլ ինքն էր, հետաքրքիր ու բարձրարվեստ ծրագրով ջերմորեն էր ընդունվում քաղաքի երիտասարդության կողմից: Դոնի Ռոստովում, թեև երիտասարդ, մեծ համբավ էր վայելում նաև Կոստյայի ավագ եղբայրը՝ Գրիգորը: Նա այսօր աշխարհահռչակ նկարիչ է, ապրում և ստեղծագործում է Իտալիայում, ցուցահանդեսներով հանդես է եկել գրեթե ողջ աշխարհում, ինչպես նաև Մոսկվայում: Աշխատանքից հետո ազատ ժամերին երաժշտասեր Կոստյան զբաղվում էր ստեղծագործական կյանքով. երգեր էր հորինում: Վստահ իր երաժշտական գիտելիքներին՝ նա Հրաչիկ Մելիքյանի հետ 1934-ին բախեց Մոսկվայի կոն-

[1] «Հայրենասիրական երգեր» (երգարան, կազմեց Ա. Տոնիկյանը) Ե., Հայպետհրատ, 1944, էջ 14—15:

սերվատորիայի դուռը: Պրոֆեսոր Վ. Յա. Շեբալինը լսեց հայ երիտասարդին, զարմացավ նրա երաժշտական գիտելիքների վրա և միանգամից Կոստյային առաջարկեց դառնալ կոմպոզիտորական բաժնի երկրորդ կուրսի ուսանող: Ամբողջ 4—5 տարի ռոստովցի հայ տղան սովորեց մեծանուն կոմպոզիտոր մանկավարժի մոտ և կոնսերվատորիան ավարտեց գերազանց գնահատականներով: Տարիներ անց Շեբալինը նրա մասին գրեց. «Կոստյա Շիլտովը շնորհաշատ լինելուց բացի չտեսնված համառ և ջանասեր էր աշխատանքում»: Ցլդյանի հայրենակիցներն ու ընկերներն ուրախացան:

Նա ավելի մեծ պատասխանատվություն էր զգում, մեծ երազանքներ ուներ, չէ որ արդեն ամուսնացած էր: Մոսկվայում նա ապրում էր Դիմիտրովյան հանրակացարանում: Տնտեսական կարիքների ճնշման տակ սկսնակ կոմպոզիտորը աշխատանքի անցավ երկաթուղայինների կուլտուրայի տանը որպես դրամատիկական խմբակի երաժշտական մասի վարիչ: Մոսկովյան երաժշտական կյանքին մոտիկից շփվելը, անձնական ծանոթությունը անվանի երաժիշտների և կոմպոզիտորների հետ, կոնսերվատորիայի ներքին կյանքին ակտիվորեն մասնակցելը նոր ոգևորություն և եռանդ հաղորդեցին ուսանող տղային, նա նորից սկսեց մեներգեր հորինել և գործիքավորել: 1938 թվական: Կոնսերվատորիայի մեծ դահլիճում ավարտական քննության ժամանակ Կոնստանդին Ցլդյանը փայլուն կերպով կատարում է իր դաշնամուրային ստեղծագործություններից և արժանանում իր մեծ ուսուցչի՝ Շեբալինի բարձր գնահատականին: Նկատի ունենալով Կոնստանդին Ցլդյանի հակումը դեպի ժողովրդական, հատկապես արևելյան երգը, կոնսերվատորիայի ղեկավարությունը նրան անմիջապես աշխատանքի է գործուղում Թուրքմենիա: Աշխաբադում Ցլդյանը նախընտրում է աշխատել երաժշտական բանահյուսության կաբինետում և ոչ թե զբաղվել մանկավարժությամբ, չէ որ ինքն ավարտել էր կոմպոզիտորական բաժինը և ավելի շատ իրեն մտահոգում էր երգը, ժողովրդական, արևելյան ջերմ, պարզ, սրտահույզ մեղեդին: Որոշ ժամանակ Աշխաբադում թուրքմենական երաժշտական բանահյուսությանը ծանոթանալուց հետո կոմպոզիտորը վերադառնում է Մոսկվա և որպես խմբագիր աշխատանքի անցնում համամիութենական ռադիոյի երաժշտական հաղորդումների գլխավոր խմբագրությունում: Ի դեպ մինչև թոշակի անցնելը այստեղ էր աշխատում նաև Ցլդյանի այրին՝ կոմպոզիտոր և երաժշտագետ Լիդյա Վասիլևնա Շիլտովան:

1941 թվական: Հուլիսյան տոթը և պատերազմի գույժը շշմեցրել են բոլորին: Մեկ ամիս է, ինչ թշնամու ռմբակները, հրի ու ավերի մատնելով խորհրդային քաղաքներն ու գյուղերը, առաջ են շարժվում դեպի Մոսկվա: Կոմպոզիտոր հայորդին, ինչպես և միլիոնավոր երիտասարդներ, զինվորագրվում է հայրենիքի պաշտպանությանը: Զինվորական հավաքակայանում՝ Ուսպենսկի նրբանցքի առջևի դպրոցում, 1941-ի հուլիսի 17-ին վերջին անգամ նա հրաժեշտ է տալիս կնոջը և կրկնում. «Լիդյա, եթե կտեսնես վիճակներդ շատ կբարդանա, տեղափոխվիր Դոնի Ռոստով՝ մերոնց մոտ, կամ գնա Հայաստան...»:

Համբույր և արցունքներ: Գնացքը սուլոցով բաժանվում է կայարանից, ետևում թողնելով ծխի սև քուլաներ: Բազմաթիվ ճանապարհողների հետ տիկին Շիլտովան ևս վերադառնում է տուն, նորից անցնում աշխատանքի: Շատ չանցած Մոսկվա են վերադառնում երկու ընկեր և տեղեկացնում, որ Փոքր Յարոսլավեց քաղաքի մոտ, Ուվարովո կայարանում, Կոնստանդին Ցլդյանը ընկել է թշնամու շրջափակման մեջ և զոհվել հերոսաբար: Ալ. Լիվշիցի գրքում բերված են Հրաչիկ Մելիքյանի և Կոնստանդին Ցլդյանի մասին Շեբալինի հիշողությունները, որտեղ նրանց մասին իրենց հանրահայտ և մեծատաղանդ ուսուցիչը գովեստով է խոսել, նկատելով, որ երկուսն էլ երիտասարդ էին, տաղանդավոր և մեծ ապագա խոստացող.

«Թե մեկը և թե մյուսը դեռ ուսանող եղած ժամանակ արդեն կվարտետների, իսկ Հրաչիկ Մելիքյանը նաև «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական էպոսի հիման վրա հյուսած սիմֆոնիկ պոեմի հեղինակներ էին:

Մելիքյանն ու Շիլտովը կոնսերվատորիան ավարտեցին գերազանց, պատերազմը երկուսին էլ խանգարեց նվիրվելու իրենց սիրած գործին՝ երաժշտությանը»[1]:

Այո, Մեծ հայրենականը մեր ժողովրդից

---

1 Лившиц Ал. — «Жизнь за родину свою», М., 1964, стр. 232—233:

տաղանդավոր ուժեր խլեց ոչ միայն գրականության, գեղարվեստի և թատրոնի անդաստանից, այլև երաժշտության բնագավառից: Խոսելով Մեծ հայրենականում զոհված իր սաների մասին՝ Վ. Շեբալինը գրել է.

«Կոնսերվատորիայում աշխատած երկար տարիներին շատ աշակերտներ եմ ունեցել, և շատերը, որոնց հետ կապված եմ եղել, հիշողությունիցս ջնջվել են: Մինչդեռ ես երբեք չեմ կարող մոռանալ այդ հետաքրքիր, ամենանվիրված երիտասարդներին, որոնց խլեց պատերազմը»: Մեծանուն կոմպոզիտորի և մանկավարժի այս կարծիքը զոհված կոմպոզիտորներ Տրոշինի, Գոլովկովի, Մելիքյանի և Ցլդյանի մասին սրտի ցավով են կիսում նաև Կոստյայի հայրենակից երաժշտաստեղծները, որոնք մինչ օրս ծանոթ չեն մայր Հայաստանը երբեք չտեսած, բայց իր մտապատկերում փայփայած 36-ամյա հայ կոմպոզիտոր ստեղծագործություններին, մի արվեստագետի, որի անունը անմահացել է Մոսկվայի կոնսերվատորիայի և ԽՍՀՄ կոմպոզիտորների տան նախասարահների մարմարե հուշատախտակներին:

ԿՈՍՏԱՆԴԻՆ ՑԼԴՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Գրիգորյան Սասուն**— Շեբալինի սիրած աշակերտը, «Սովետական Հայաստան», Ե., 1981 թ. 6 օգոստոսի, էջ 4:
2. «Հիշատակի երեկո» (Արմենպրեսի ինֆորմացիա), ԵԵ, 4 հուլիսի 1980 թ., էջ 3:
3. **Գրիգորյան Սասուն**— «Մուսաները չլռեցին», ԳԹ, 5 մայիսի 1985 թ., № 18, էջ 2:
4. **Պակլին** («Իզվեստիա» թերթի սեփ. թղթակից Իտալիայում), «Նկարչի ծակատագիրը» (Հոդվածը նվիրված է Կ. Ցլդյանի եղբորը՝ Իտալիայում ապրող աշխարհահռչակ նկարիչ Գրիգոր Ցլդյանին: Հիշատակվում է նաև Կոնստանդին Ցլդյանը)— «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, Երևան, 1983 թ., 1 հունիսի:
5. **Միմոնյան Մարգարիտա:**—«Հիշողության ուժը» (հոդվածը նվիրված է Հր. Մելիքյանի և Կոնստ. Ցլդյանի ՀՍՊ-ի 40-ամյակի առթիվ Երևանի կամերային տանը կատարված ստեղծագործություններին:
Կատարող՝ Երևանի լարային կվարտետ, ղեկավար՝ արվեստի վաստ. գործիչ Ջարեհ Սահակյանց, ՍՀ. 24 հուլիսի 1985 թ., էջ 4:
6. **Шилтов К.**—«Квартет для двух скрипок, альта и виолончели» ((партитура).
Москва, изд. «Советский композитор», 1963 г. (редактор Лалинов М.).
7. **Лившиц А.**—«Жизнь за родину свою», М., 1964 г: Музгиз, стр: 232—233.

ՎԱԹՍՈՒՆԻՑ՝ ՄԵԿԸ

(Ստեփան Տերտերյանի հետքերով)

ՍՏԵՓԱՆ ՄԻՔԱՅԵԼԻ ՏԵՐՏԵՐՅԱՆ
1906—1943

Մոսկվայի Զայկովսկու անվան պետական կոնսերվատորիայում ենք: Նախամուտքում կանգնեցված մարմարե հուշատախտակին փորագրված են երիտասարդ այն երաժիշտների անունները, որոնց կյանքը ռումբերի տարափի տակ վերածվեց կպրպի երգի և անմահացավ. նրանք են՝ Մ. Ակսենով, Վ. Բատենին, Վ. Բելով, Յու. Բուբլիկով, Վ. Վինոգրադով, Յու. Վենկով, Գ. Դժիոև, Ա. Վայնշտեյն, Ա. Դյակով, Մ. Դուշսկի, Լ. Դայն, Վ. Զայց, Ա. Զուբկով, Վ. Կրիվոնոսով, Գ. Կիլինի, Կ. Կուրպեկով, Ի. Կոլբախ, Գ. Լուզենին, Ս. Լեշչինսկի, Լ. Լյուբեցկի, Տ. Լևիտ, Մ. Մերցեդին, Վ. Մալին, Գ. Նիկոլաև, Ա. Պիպոզ, Ա. Օկաեմով, Վ. Պոլ, Ա. Պետրով, Ա. Ռյաբով, Յու. Ռոգինսկի, Ե. Սավինցև, Բ. Տրոշին, Ս. Թոփչիև, Վ. Տրոիցկի, Ի. Ֆրոլով, Է. Խազին, Ս. Խամիդուլին, Վ. Խմելնիցկի, Մ. Ցուրսկի, Կ. Շոտնին, Վ. Շանիձե, Վ. Շինկովսկի, Ն. Յուտանով, Ն. Անգերտ, Ա. Բուբակինսկի, Ս. Քելյալետդինով, Ա. Վոինով, Ա. Գոլովկով, Վ. Գուսակով, Ռ. Ելիբան, Կ. Մակարով-Ռակիտին, **Հ. Մելիքյան, Ի. Նադիրով**, Վ. Պանկով, Ս. Սաիչկին, Յու. Սմիրնով, Վ. Ֆեոդորով, **Կ. Շիլտով**, Ի. Շտեյնման, Ն. Յակովլև:

Նադիրո՞վ, Մելիքյա՞ն, Շիլտո՞վ... Կոնսերվատորիայում մեզ հաջողվեց պարզել, որ Իվան Նադիրովը (Հովհաննես Նադիրյան) եղել է մե-

ծանուն կոմպոզիտոր և մանկավարժ Նիկոլայ Յակովլևիչ Մյասկովսկու ստեղծագործական դասարանից:

Նկատի ունենալով, որ Մյասկովսկու մոտ են սովորել այնպիսի տաղանդներ, ինչպիսիք են Դ. Կոբալևսկին, Ա. Խաչատրյանը, Վ. Շեբալինը և ուրիշներ, այցելում ենք Արամ Խաչատրյանին: Նա փոքր-ինչ կանգ է առնում կոնսերվատորիայի «պատերազմական» պատմությանը, իսկ ես պրագ-արագ գրառումներ եմ անում:

1941-ի սեպտեմբերի վերջերին, հոկտեմբերի սկզբներին, ԽՍՀՄ կառավարության որոշմամբ, Մոսկվայի կոնսերվատորիան Էվակուացվեց Սարատով: Ինստիտուտի բազմաթիվ դասախոսներ և ուսանողներ, խմբով և առանձին, զինվորագրվեցին հայրենիքի պաշտպանությանը: Հոկտեմբերի 23-ին Սարատով փոխադրվեց ռազմախմբավարական ֆակուլտետը, իսկ կոմպոզիտորական ֆակուլտետի բազմաթիվ ուսանողներ և դասախոսներ դուրս եկան՝ կյանքի գնով պաշտպանելու մեր մեծ Միությունը: Մոսկվայի պաշտպանությանն անդամագրվեցին նաև **Հրաչիկ Մելիքյանը, Իվան Նադիրովը և Կոնստանտին Շիլտովը (Շլդյան)**, որոնք 8-րդ Կրասնոպրեսենսկայա դիվիզիայի անվեհեր մարտիկների հետ կենաց և մահու պայքարի մեջ մտան Մոսկվայի մատույցներում:

Կոնսերվատորիայի բազմաթիվ սաներ թշնամու դեմ անհավասար մարտերում զոհվեցին, ողջերից ոմանք գերվեցին: Թշնամին գերի վերցրեց գեղարվեստական ինքնագործունեության բրիգադը, որի ղեկավարն էր անվանի երաժիշտ Ա. Դյակովը: Ռազմադաշտերում, համակենտրոնացման ճամբարներում և այլուր թշնամու գնդակին զոհ գնացին 60-ից ավելի երաժիշտներ, որոնք իրենց հոգիներում և մտապատկերում պահպանում էին Մոսկվայի կոնսերվատորիան: Նրանցից բանահյուսական կաբինետի գիտաշխատող Վ. Կրիվոնոսովը, օպերական ստուդիայի դիրեկտոր Հ. Խ. Ջիովը, թեորետիկ ասպիրանտ Ա. Յու. Միպոզը և բազմաթիվ այլ տաղանդներ էլ բեմ չբարձրացան. զոհվեցին...

Շնորհակալություն հայտնելով մեծանուն կոմպոզիտորին, շարունակում ենք նրա խորհրդով հանդիպել տարբեր արվեստագետների և մանկավարժ երաժիշտների, որոնք Մեծ հայրենականի վետերաններ են և իրենց փաստական տվյալներով օգնում են մեզ:

Պարտիզանների հետ կապ ունենալու համար գերմանացի հրոսակները Բելոռուսիայի համար մղվող ազատամարտերի համար գնդակահարել են Մոսկվայի կոնսերվատորիայի տաղանդաշատ սաներ Ալեքսանդր Օկաեմովին և Գ. Պ. Լուզենինին: Այդ մասին սրտի ցավով է պատմում կոմերիտմիության և Մեծ հայրենականի վետերան, բանաստեղծ Յակով Շվեդովը և տեղեկացնում, որ իր խոսքերով գրված՝ Վ. Բելոմի «Օրլյոնոկ» երգը 30-ական թվականներին առաջինը կատարել է Օկաեմովը, գեղեցիկ և բոլորին հուզող երիտասարդ այն երգիչը, որի անունը հանգչում է Բելոռուսիայում, Կրիչևի եղբայրական գերեզման-հուշահամալիրում: Ինչպես վկայում են Մոսկվայի կոնսերվատորիայի դասախոսները, պատերազմի առեղ օրերին հերոսական ճանապարհ է անցել թեորետիկ բաժնի ուսանող Պ. Ապոստոլովը: Թշնամու դեմ քաջաբար է կռվել նա Նովոռոսիյսկում, Թամանում, Ղրիմում, Լենինգրադում, Չեխոսլովակիայում և Գերմանիայում: Ապոստոլովի վկաները թերևս նրա ռազմի սպիացած վերքերն են: Գլինկայի անվան երաժշտական մշակույթի կենտրոնական թանգարանի ֆոնդադարանի արխիվային փաստաթղթերը ցույց են տալիս, որ հիտլերյան ֆաշիզմի դեմ խիզախաբար են մարտնչել նաև Մոսկվայի կոնսերվատորիայի ռազմախմբավարական ֆակուլտետի բազմաթիվ դասախոսներ, նրանց թվում և **Հայկ Սմբատի Մարությանը** (ծնվ. (1913 թ.): Նա հայկական և վրացական հանրապետությունների արվեստի վաստակավոր գործիչ է: Մեր թոռոցիկ զրույցի ժամանակ Մարությանը հիշեցնում է, որ չպետք է մոռանալ իրենց ֆակուլտետի տաղանդաշատ սաներից շատ-շատերին, որոնց թվում և **Կ. Ա. Ակուլյանին**, Ա. Ն. Էլինսոնին, Վ. Ի. Բախտարովին, Կ. Ս. Բախմուտովին, Լ. Ե. Սիմիլուցկուն, որոնց հողին հանձնելը ուղեկցվել է ոչ թե սգո մեղեդիներով, այլ ռումբերի և ականների պայթյուններով: Հերոսական այդ օրերին խորհրդային ամեն մի քաղաքացու խոհերը, ապրումները, նրա կարոտը, զայրույթն ու ցասումը, նվիրումն ու ըմբոստ ոգին գեղարվեստական իրենց կատարյալ արտացոլումը գտան Լենինգրադի կոնսերվատորիայի դասախոս, մեծատաղանդ Դ. Շոստակովիչի «Յոթերորդ սիմֆոնիայում», որի պրեմիերան կատարվեց Մոսկվայի Միությունների տան Սյունազարդ դահլիճում 1942 թ. մարտի 29-ին, գրե-

թե այն ժամանակ, երբ Մոսկվայի մատույցներում խորհրդային բանակը վճռական հարված էր հասցնում հիտլերյան բարբարոսներին:

— «Մոսկվայի պաշտպանության համար» մեդալով Մեծ հայրենականի ժամանակ ունեցած ռազմա-շեֆական օգնության համար պարգևատրվել է, ի թիվս շատերի, նաև ձեր հայրենակիցը՝ մեր աշխատանքային լավագույն ընկերը՝ դիրիժոր **Մինաս Գևորգյանը**,— հետաքրքրասիրությունս բավարարելու համար զրույցի ընթացքում ավելացնում է միջազգային մրցույթների դափնեկիր, կոնսերվատորիայի ասիստենտ Զինաիդա Ալեքսեևնա Իգնատևան և անմիջապես շարունակում:— Մինաս Գերասիմիչին ես չեմ տեսել, նա մահացել է 1959-ին: Ընկերուհիս՝ Նինան, եղել է նրա սանը և միշտ գովեստով է պատմում իր ուսուցչի մասին: Ասում է, որ նրա նման օպերային թատրոնի ռեժիսոր ինքը չի ճանաչել: Մինաս Գերասիմիչը Վախթանգովի թատրոնին կից հայկական ստուդիայի հիմնադիրներից է եղել, 1932—1958 թվականներին դասախոսել է մեր կոնսերվատորիայում...

Գրողների միության Մոսկվայի կազմակերպության ռազմագեղարվեստական գրականության հանձնաժողովի նախագահ Զանգեզուրովի հետ ծանոթանում ենք կոնսերվատորիայի երգչախմբային ֆակուլտետի «պատերազմական անցյալին»: Մինչ կողքի դահլիճում կնախապատրաստվեն փորձի, տարեց դասախոսներից մեկի հետ միջանցքում զրուցում ենք:

— Մեծ հայրենականում ձեր ֆակուլտետից ինչպիսի՞ երաժիշտներ են զոհվել...

Զրուցակիցս կռահելով, որ ես գրառումներ եմ կատարում, նայում է ձեռքի ժամացույցին և սիրահոժար մեզ տրամադրում իր սուղ ժամանակից թանկ րոպեներ.

— Ագեև, Բելովոդսկի, Մարտինով, Լուզենին... Գենադի Պավլովիչ Լուզենինին անձամբ ճանաչում էի: Նա կամավոր մեկնեց ճակատ: Գենադիի հետ միասին ենք սովորել: Նա Պերմից էր: 1930-ին փայլուն քննությամբ ընդունվեց կոնսերվատորիա, 1935-ին ավարտեց: Սկզբում աշխատեց կոնսերվատորիայի օպերային ստուդիայում՝ Դանիլինի մոտ որպես օգնական, իսկ 1936-ին դարձավ այդ ստուդիայի գլխավոր խորմայստերը... Ի՜նչ տղա էր, ի՜նչ տաղանդ: Առաջինը նա այստեղ բեմադրեց Ռիմսկի-Կորսակովի «Սնեգուրոչկան»... Եթե չզոհվեր Կրիչևում, վերադառնար, այսօր խորհրդային օպերային թատրոնը ևս մի աստղ կունենար...— Մինչ ես կհասցնեմ իմանալ խոսակցիս ով լինելը, նա թաշկինակը մոտեցնում է աչքերին և լրացնում. —1938-ին Գենադիին հրավիրեցին Մոսկվայի պետական ֆիլհարմոնիա, 39-ին նա մեզ մոտ՝ կոնսերվատորիայում, մանկավարժական աշխատանքի անցավ, հատուկ դասընթացներ էր կարդում: 1940-ին Ալեքսանդրովի հրամանով նշանակվեց ֆակուլտետի դեկանի տեղակալ... Նրա հիշատակի համար ես ամեն տարի գնում եմ Կրիչև (Բելոռուսիա) և ծաղկեպսակ դնում այն եղբայրական գերեզմանին, ուր հանգչում է նաև Գենադի Պավլովիչը:

— Շնորհակալությո՛ւն... չէի՞ք ասի ձեր ով լինելը, ձեր պաշտոնը:

— Պաշտոնս՝ պրոֆեսոր, անուն-ազգանունս պետք չէ, եթե շատ է ձեզ հետաքրքրում, արձանագրեք՝ «Տեղեկությունները Լուզենինի մասին հաղորդեց՝ նրա սիրած աղջիկը, որը կրում է դեռ նրա նշանի մատանին և, հավատարիմ իր սիրո ուխտին, չի ամուսնացել ուրիշի հետ... Ցտեսություն...»:

Օպերային ֆակուլտետի մարմարե սանդուղքներով լռակյաց իջնում ենք: Դահլիճ-լսարանում բեմադրության է պատրաստվում «Ֆիգարոյի ամուսնությունը»: Ի՞նչ Ֆիգարո, իմ մեջ ծնվում է «Լուզենինի ամուսնությունը»: Ոչինչ չեմ կարող նախաձեռնել. ճերմակահեր պրոֆեսորը՝ Լուզենինի սիրած աղջիկը, մտապատկերումս է:

Ուրիշ հասցեներ էլ կան, նրանց հետքերով պիտի գնալ... Երևանում կոմպոզիտոր Ավետ Տերտերյանը մի հասցե է տվել...

Հեռաձայնում եմ, լսափողը վերցնող չկա: Ստիպված եմ կոնսերվատորիայում փնտրել Գնեսինի անվան երաժշտական ուսումնարանի երեսնականների վերջերին ուսանած երաժիշտների, որոնք **Ստեփան Միքայելի Տերտերյանի** հետ սովորել են կոմպոզիտոր, պրոֆեսոր Վիսարիոն Յակովլևիչ Շեբալինի (1902—1963) ստեղծագործական դասարանում: Թերևս ամենամեծ ուրախությունն այդ օրը ինձ համար եղավ Յուրի Միխայլովիչ Սոլոնովի հետ հանդիպումը:

— Ստեփան Տերտերյանը ծլագումով Շուշիից էր: 1928-ին ավարտել էր միջնակարգ դպրոցը, հետո էլ՝ 1930-ին, Բաքվի մանկավարժական տեխնիկումը: Պատանու ինժեներ-տնտեսագետ դառնալու նախասիրությունները իրեն շուտ դավանա-

նեցին. 3-րդ կուրսից Ստեփանը «լքեց» ինստիտուտը: Բժիշկ հայրը՝ Միքայելը, կուահելով որդու երաժշտական ընդունակությունները, նրա անհուն սերն ու նվիրումը դեպի երաժշտությունը՝ հատկապես դեպի արևելյանը, տղային խորհուրդ տվեց լրջորեն զբաղվել:

«Երաժշտությունը, արվեստը սիրողը պետք է դժվարությունների առջև գլուխ չխոնարհի»,— հորդորում էր հայրը: Հանցած մի քանի **ամիս**, Ստեփանը տանը կոմպոզիցիայի դասեր է առնում Ի. Կապլանից և Ս. Բարխուդարյանից: 1934—36 թվականներին Կարմիր բանակում ծառայելը ժամանակավորապես ընդհատում է հայորդու երաժշտական ուսումնառությունը: 1937-ին նա ընդունվում է Մոսկվայի Գնեսինների երաժշտական ուսումնարանի ստեղծագործական դասարանը (ղեկ. Վ. Յա. Շեբալին): Գերազանց գիտելիքներով ուսումնարանն ավարտելուց հետո Մոսկվայի կոնսերվատորիայում նա աշակերտում է Ռ. Մ. Գլիերին: Փայլուն առաջադիմության համար Ստեփանին ուսանողական հատուկ թոշակ նշանակվեց: Կոմպոզիտորական բարձրագույն կրթությունը, սիմֆոնիկ և կամերային երկու-երեք տասնյակի հասնող ստեղծագործությունների հաջող ընդունելությունը ոգևորեցին երիտասարդ կոմպոզիտորին, և նա, հետևելով իր դասախոսների խորհրդին, ուզում էր վերադառնալ Անդրկովկաս:

Բայց... Կովի հենց առաջին օրերին Ստեփան Տերտերյանը ինքնակամ զինվորագրվում է հայրենիքի պաշտպանությանը: Շուրջ երկու տարի անմնացորդ նվիրումով մաքառում է հայրենի ամեն մի թիզ հողի ազատագրման համար և 1943 թվականին, 37 տարեկան հասակում, (ծնվ. 1906 թ.), զոհվում է Սևաստոպոլի մատույցներում:

Թե ում մոտ են պահվում զոհված կոմպոզիտորի սիմֆոնիաները, սիմֆոնիկ պոեմը, ջութակի համար գրված տրիոն, դաշնամուրի և ժողգործիքների համար գրած ստեղծագործությունները, անհայտ է: Ի պատիվ Ս. Տերտերյանի, կոմպոզիտոր Հարո Ստեփանյանը 1960-ին Երևանում լույս տեսած «Պսակ» ժողովածուի առաջաբանում գրել է. «Նրա ստեղծած սիմֆոնիան ազգային է, գունեղ, դինամիկ և հուզիչ: Խորապես տպավորիչ են սիմֆոնիպլի լիրիկական անդանտեն, հրճվալից սկերցոն և ֆինալը: Իր կարճատև կյանքում Ս. Տերտերյանին հաջողվել է գրել մի շարք գործիքային և վոկալ գործեր, որոնք, ցավոք, մինչև օրս չեն կատարվել»:

— Ուրիշ արվեստագետների գիտե՞ք, որոնք կռվել են Սևաստոպոլում,— հարցիս պատասխանը կարծես Յուրի Միխայլովիչը վաղուց էր պատրաստել և մի անգամից հուշում է.

—Բորիս Մոկրոուսովը, Վալենտին Մակարովը, Զապլիգինը, Ռոզենը և տասնյակ երիտասարդ կոմպոզիտորներ, այդ թվում և ես ոչ միայն գիշեր ու ցերեկ կռվում էինք թշնամու դեմ, այլև հանգստի, ավելի շուտ դադարի ժամանակ գրողներ Ա. Ռոմմի, Յա. Սաշինի, Ա. Լունաչարսկու, Պ. Պանչենկոյի, Գ. Գայդովսկու, Լ. Լագինի, Ա. Իլլիչի, Լ. Դլիկի հետ զրուցում, վիճում, նրանց տեքստերով երգեր էինք գրում: Այդ մասին ձեզ թող մանրամասն պատմի «Կրասնի Զերնոմորեցի» խմբագիր Պավել Իլլիչը:

— Յուրի Միխայլովիչը համեստորեն չի ուզում ասել, որ «Ղրիմի պաշտպանությունը» (խոսք՝ Պ. Պանչենկոյի), «Առաջ, մեր գործը արդար է» (խոսք՝ Ա. Լունաչարսկու) երգերը ինքը հյուսել է այն պահերին, երբ մեր շուրջը կարկուտի պես թափվում էին գերմանական արկերի բեկորները: Այդ երգերը առաջինը կատարվում էին խրամատում, հետո՝ Սևծովյան բանակի երգի-պարի անսամբլի կողմից, որի հմուտ ղեկավարն էր տաղանդաշատ կոմպոզիտոր Ն. Զապլիգինը: Խրամատում ծնված որոշ երգերի դուք կարող եք հանդիպել «Սևծովայինների երգը» 1942 թե 1943 թ. լույս տեսած ժողովածուում,— լինում է Պավել Իլլիչի ծանուցումը:

ՍՏԵՓԱՆ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Գրիգորյան Սասուն**— «Սրբազան պարտք», ԳԹ, 21 ապրիլի 1980 թ., էջ 1 (նրա մասին և լուսանկարը):
2. **«Հիշատակի երեկո»** (Արմենպրեսի ինֆորմացիա), ԵԵ, 3 հուլիսի 1980 թ.:
3. **«Պսակ»** (ժողովածու զոհված կոմպոզիտորների ստեղծագործությունների, կազմեց և առաջաբանը գրեց Հարո Ստեփանյանը), Ե., Պետհրատ, 1960 թ.:
4. **Ստեփանյան Հարո**—«Երաժիշտներ» (զոհված կոմպոզիտորների մասին), Սովետ. արվեստ, 1958 թ., № 8, էջ 58—59:
5. **Գրիգորյան Սասուն**—«Մուսաները չլռեցին», ԳԹ, 5 մայիսի 1985 թ., № 18, էջ 2:
6. **Лившиц Александр Борисович**—«Жизнь за родину свою», Москва, 1964 г., стр. 329.
7. Հայ ժողովրդի պատմություն, Ե., 1970, հատ. 8, էջ 199: էջ 199:

Թունիկ Հովհաննիսյան
Туник Сванесян

Խոսքերը Ե. Չարենցի
Слова Е. Чаренца

ՀԻՇՈՒՄ ԵՍ
ПОМНИШЬ ЛИ ТЫ



Թունիկ Հովհաննիսյան (Զոհված կոմպոզիտոր), Եղ. Չարենց— «ՀԻՇՈՒՄ ԵՍ ԱՐՈՅՈՔ» (հատված):

Երգչախումբ Մեղրյան
Хор имени Меграна

ԵՐԵՔ ՊՐԵԼՅՈՒԴ
ТРИ ПРЕЛЮДИИ

Allegro

I



Հրաչյա Մեղիքյան (Զոհված կոմպոզիտոր)— «ԵՐԵՔ ՊՐԵԼՅՈՒԴ» (հատված):

ՄԵՐ ՍԱՐԵՐԸ ՆՈՐԵԼ ԵՆ
НАШИ ГОРЫ НОВЫЕ

Խոսքերը Խ. Դաշտենցի
Слова Х. Даштенца

Moderato mf

Ելի՛ ջի, Լու՛սիկ, դուրս գա՛ր, տե՛ս որ-
Вый-ди, Лу-сик, рас-све-ло, сколь-ко



քա՛ր-վը լա՛վաց-վել ողջ է զար-կել սա-
ма-ков рас-цве-ло, солн-це дав-но над

ռերը, ինչ՞-ֆա՛ն կա-կաչ է բաց-
го-рой у-мы ва-ет-ся ро-

Թունիկ Հովհաննիսյան (Զոհված կոմպոզիտոր), Խ. Դաշտենց— «ՄԵՐ ՍԱՐԵՐԸ ՆՈՐԵԼ ԵՆ» (հատված):

Ստեփան Տերտերյան
Степан Тертерян

ՀՈՎՎԱԿԱՆ
ПАСТУШЕСКАЯ

Op. 92

Violoncello

Andantino

tranquillo

pp

p dolce

Ստեփան Տերտերյան (Զոհված կոմպոզիտոր)— «ՀՈՎՎԱԿԱՆ» (հատված):

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ
КОЛЫБЕЛЬНАЯ

Op. 89

Violoncello

Andante moderato

pizz. arco pizz. arco pizz. arco pizz. arco

p

dolce

p

Ստեփան Տերտերյան (Զոհված կոմպոզիտոր)— «ՕՐՈՐՈՑԱՅԻՆ» (հատված):

ՀՈ ՄԱՐԱԼ
ГЕЙ МАРАЛ

Ժողովրդական. Народная

Andante

S: Հո մա-ռալ, հո ջեյ-ռան, հո,
Гей ма-рал, гей джей-ран, гей,

A: Հո մա-ռալ, հո ջեյ-ռան,
Гей ма-рал, гей джей-ран,

T: Հո մա-ռալ, հո մա-ռալ, հո, մա-
Гей ма-рал, гей джей-ран, гей, ма-

B: Մա-
Ма-

հո, գեյ, մա-ռալ հա, մա-рал гей, ռալ, рал, հո, гей, հա-չիր լ-զը, та-ни, гей джан, հո, гей, լ-զը, гей, не մա-սիկ մա-տաղ, гей, не ле-нись, մա-տաղ, ле-нись. մա-
ма-

Միքայել Չաղալյան (Զոհված կոմպոզիտոր)— «ՀՈ ՄԱՐԱԼ» (Ղարաբաղի ժողովրդական հորովել, հատված):

Միքայել Չահալյան
Михаил Чахалян

ՊԱՐ ТАНЕЦ

Allegretto grazioso

Միքայել Չաղալյան (Զոհված կոմպոզիտոր)—«ՊԱՐ» (հատված):



ՀՄՊ-ում զոհված երաժիշտներին նվիրված մարմարե հուշատախտակ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում:

ՂԱԶԱԽՍՏԱՆԸ ՉԻ ՄՈՌԱՆԱ ԵՐԲԵՔ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ՆԱԴԻՐՅԱՆ (ԻՎԱՆ ՆԱԴԻՐՈՎ) (1907—1941)

Կրասնոկազարմեննայա փողոցի լույսերը կըռվում են իջնող մթնշաղի հետ: Սպայի տանը մի բաժակ սրճի շուրջ հուշերի իրենց կծիկն են բացել նախկին ռազմաճակատայինները: Անատոլի Լունաչարսկու և Ստեփան Տերտերյանի մասին, Սևաստոպոլում, Ղրիմում, Նովոռոսիյսկում և Տուապսեում մարտնչած արվեստագետների մասին տեղեկություններ աղագրելուց հոգնած, վերադարձել եմ հյուրանոց: Անսիստեմ և շուտափույթ գրառումներս ինձ դուր չեն գալիս: Զայրանում եմ: Մի՞թե չպիտի կարողանամ գտնել Իվան Նադիրովի հետքերը: «Հանդիպել Ալեքսանդրը Բորիսովիչ Լիվշիցին կամ Ալլա Վլադիմիրովնա Բոգդանովային»: Ալեքսանդր Թադևոսյանի և Ռոբերտ Աթայանի խորհուրդն է: Հեռախոսը չի պատասխանում: Օրը մթնել է, երևի ուշ ժամի անհանգստացնենք: Բախտս չի բերում. հեռախոսազանգին պատասխանող չկա: Ալլա Վլադիմիրովնան տանը չէ: Դուրս եմ գալիս պատշգամբ: Սառը օդը ստիպում է վերադառնալ սենյակ: Փետրվարյան մառախուղը կամաց-կամաց մթնեցնում է էլեկտրասյուներից ճառագող լույսը: Մոսկվան մշուշի մեջ է: Ընդարձակ նախասրահից հեռուստատեսությամբ հնչող «Սրբազան պատերազմի» հնչյունները հուշում են միացնել սենյակի հեռուստացույցը: Ելույթ է ունենում Դմիտրի Շոստակովիչը: Նրա Յոթերորդ և Ութերորդ սիմֆոնիաները վերացրել, տարել են ինձ խոհերիս, երազներիս և անուրջներիս անտեսանելի աշխարհը: Վերհիշել եմ հանճարեղ երգահանի՝ Լենինգրադում պաշարման ժամանակ ծնունդ առած ստեղծագործությունները և դրանց երկունքի մասին իր իսկ խոստովանանքը. «Ես չէի կարող դրանք չգրել: Պատերազմի հենց առաջին օրերին ես նստում էի դաշնամուրի առջև և սկսում աշխատել: Ես այդ ժամանակ ապրում էի կոնսերվատորիայի շենքում, իմ երաժիշտ կոլեգաների հետ գտնվելով զորանոցային դրության մեջ որպես հակաօդային պաշտպանության ջոկի զինվոր...»:

Փետրվարի 23-ն է, Բանակի օրը: Ա՜յ, եթե Իվան Նադիրովն ու Հրաչիկ Մելիքյանն էլ ողջ լինեին, երևի այսօր մասնակցեին կոմպոզիտորների տանը կազմակերպված երեկոյին, նրանք էլ կլսեին Սերգեյ Պրոկոֆևի «Հինգերորդ» և «Վեցերորդ» սիմֆոնիաները, «1941 թիվ» սյուիտը, «Բալլադ անհայտ մնացած տղայի մասին», «Պատերազմ և խաղաղություն» էպիկական օպերայից մի հատված, «Իվան Ահեղ» կինոֆիլմի համար գրված երաժշտությունից հատվածներ:

Դահլիճում բուռն ծափահարություններ են, բեմ է հրավիրվում «Երկրորդ սիմֆոնիայի» և «Գայանեի» հեղինակը՝ Արամ Խաչատրյանը: Բռավոների և ծափերի անվերջ հեղեղ է: Նա շնորհակալություն է հայտնում և Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանի կողքին զբաղեցնում իր տեղը: «Երկրորդ սիմֆոնիայի» («Որսկան ախպոր») կախարդական ելևէջները ստիպում են, որ մարշալը թաշկինակը մոտեցնի աչքերին և հանդիսատեսների ուղեկցող ծափերի ռիթմի տակ իր համբույրը դրոշմի աշխարհափայլ իր հայրենակցի ճակատին:

Դահլիճում թագավորում է լռությունը: Կուլիսների ետևից հնչում են Ռոբերտ Ռոժդեստվենսկու խոսքերը.

Մարդի՛կ,
Քանի դեռ
Ձեր սիրտն է խփում,
Հիշեցեք Նրանց:

Եվ հիշվում են, ընթերցվում զոհված 40 կոմպոզիտորների և երաժիշտների անունները[1]...

Հոտնկայս լռություն: Զոհվածների սուրբ հիշատակը հավերժացվում է նրանց ստեղծագործությունների կատարմամբ: Դահլիճում զոհվածների հարազատներից և ընկերներից շատերը հուզված են:

[1] Զոհված կոմպոզիտորների և երաժիշտների ցանկը տես «Ես երգելով կուզեմ մեռնել» բաժնի վերջում, էջ 92:

«Աշուղների երգը Լենինի մասին» ստեղծագործությունը՝ ջութակի և դաշնամուրի համար, ևս ընդունվում է ջերմությամբ: Օրվա ճառախոսը՝ կոմպոզիտոր Ալեքսանդր Լիվշիցը, իր խոսքում հիշատակում է նաև Նադիրովի անունը: Ընդմիջմանը մոտենում ենք նրան՝ Ալեքսանդր Բորիսովիչին, և խնդրում որոշ տվյալներ հաղորդել Նադիրովի մասին: Նա չի մերժում:

— Վանյային (այսպես են շրջապատում ճանաչել Նադիրովին) լավ գիտի կոմպոզիտոր Ն. Նարիմանիձեն, նրանք Նիկոլայ Մյասկովսկու դասարանից էին... Վանյային փնտրեք Կովկասում, Ղազախստանում, Մոսկվայում...

Որոշ տեղեկությունների համար Ալեքսանդրը Բորիսովիչը մեզ խորհուրդ է տալիս ընթերցել իր գիրքը՝ «Կյանք հանուն Հայրենիքի», լինել Գլինկայի անվան երաժշտական մշակույթի պետական կենտրոնական արխիվում, Ռուսական երաժշտական ընկերությունում:

Գլինկայի անվան երաժշտական մշակույթի պետական կենտրոնական թանգարանի տնօրեն Եկատերինա Նիկոլաևնա Ալեքսեևան, իմանալով, որ կոլեգա եմ (թանգարանի տնօրեն), ցուցում է տալիս «ազատորեն օգտվել բոլոր ֆոնդերից»: Օրվա երկրորդ կեսն է, ֆոնդադարանում բոլորին խնդրում եմ պատերազմում զոհված հայ երաժիշտների մասին եղած նյութերը ինձ ցույց տալ: Գալյա Վասիլևնան Մոսկվայի կոնսերվատորիայի արխիվային նյութերի հիման վրա ինձ ծանոթացնում է Նադիրովի կենսագրականին, և ես գրառում եմ.

«Իվան Նադիրով (Հովհաննես Նադիրյան). ծնվել է 1907 թ. Գյանջա (Գանձակ) քաղաքում, ոսկերչի ընտանիքում: Ցարական կառավարության դեմ կազմակերպված խռովություններին մասնակցել է նաև Վանյայի հայրը և ցարի կարգադրությամբ բանտարկվել: Վանյան ունեցել է երեք եղբայր և երկու քույր: Մինչև Մոսկվայի կոնսերվատորիայի ստեղծագործական դասարանը ավարտելը Վանյա Նադիրովը Գյանջայում (այժմ Կիրովաբադ) իր կազմակերպչական (սկաուտիստ) և ստեղծագործական նվիրվածությամբ մեծ հեղինակություն է վայելել: 1921-ից նա ՀամԼԿԵՄ անդամ էր, 1923—1924 թթ. ծառայել է Կարմիր բանակում: 1924 թ. եղել է կոմերիտական բջջի քարտուղար, պատի թերթի խմբագիր, ապա ԴԿՕ-ի բյուրոյի անդամ, իսկ 1926—1927 թթ. աշխատել է ԱԼԿԵՄ Գյանջայի գավկոմում որպես հրահանգիչ...»:

1927 թվականին դրական բնութագրով Իվան Նադիրովը ընդունվում է Բաքվի համալսարանի արևելագիտության բաժինը: Հայ, ռուս, վրացի, ադրբեջանցի ընկերների հետ շփվելը, նրանց երգ ու պարին ծանոթանալը նոր սեր և համակրանք են առաջացնում 20-ամյա երիտասարդի մեջ, և նա սկսում է լրջորեն պարապել երաժշտությամբ: Գեղարվեստական ինքնագործունեությամբ զբաղվելը դարձավ բանասեր Նադիրովի տարերքը. նա նվագում էր, երեկոներն էլ համատեղությամբ աշխատում պատանի հանդիսատեսի թատրոնում (գործիքային անսամբլում որպես փողահար): Աշխույժ, սրամիտ երիտասարդին սիրեցին բոլորը: Գրականությունն ու երաժշտությունը նրա սրտում «բախվեցին», և երգասեր երիտասարդը 1928-ին թողեց համալսարանն ու բախեց Բաքվի երաժշտական տեխնիկումի դուռը: Չանցած որոշ ժամանակ, Իվան Նադիրովը Բաքվի կոնսերվատորիայի կոմպոզիտորական ֆակուլտետի ուսանող էր և կոմերիտական կազմակերպության քարտուղարը: 1930 թվական: Գնեսինների մոտ կամաց-կամաց ձևավորվում է երաժիշտ Վանյան, այնուհետև նրա շեֆությունը ստանձնում է մեծատաղանդ Նիկոլայ Յակովլևիչ Մյասկովսկին, որի դասարանն էլ նա ավարտում է փայլուն առաջադիմությամբ:

Դեռևս կոնսերվատորիայի ուսանող, Նադիրյանը գործուղվում է Ղարաբաղ, աշուղներից երգեր գրառում, զբաղվում երաժշտական բանահյուսության մշակմամբ: Դրա վառ ապացույցներից է այն հազվագյուտ նկարը, որը պատկերում է մի խումբ ուսանողների (արշավախմբի), որոնք Արցախում խոսեցնում, երգել են տալիս երաժիշտ բանասացներին և գրառում երգեր ու խաղիկներ, պարերգեր ու բայաթիներ, ժողովրդական բանահյուսության փշրանքներ և նշխարներ, որոնք դարեր շարունակ ուղեկցել են հայ, վրացի և ադրբեջանցի լեռնականներին ու շինականներին: Երաժիշտ բանահավաքի և կոմպոզիտորի իր ակտիվ մասնակցությունը Նադիրովը դրսևորեց «Աշուղների երգերը Լենինի մասին» (1936 թ., Մոսկվա) ժողովածուն հրատարակելիս:

Այնուհետև Գալյա Վասիլևնան, հենվելով կոմպոզիտորներ Միխայիլ Ֆաբրիանովիչ Գնեսինի, Ն. Նարիմանիձեի, Ա. Ժիվցովի անձնական ծանոթությունների, կարծիքների և տվյալների վրա, հաղորդում է, որ Իվան Նադիրովը եղել է բազմաժանր կոմպոզիտոր, գրել է մեներգեր, զուգերգեր, պարեղանակներ, սոնատներ, դաշնամուրի, ջութակի և ժողգործիքների համար առանձին ստեղծագործություններ: Նա հիշում է Նադիրովի «Պարային» («Пляски»— 1934 թ.) և դաշնամուրի և ջութակի համար հյուսած սոնատը, ինչպես նաև բայանի համար հորինած «Անցումներով պար» սյուիտը:

Երաժշտական աղքատիկ գիտելիքներս ինձ հնարավորություն չեն տալիս մանրամասն ծանոթանալ և գնահատել այն ստեղծագործությունները, որոնք հյուսել է 20—25 ամյա Վանյան կոնսերվատորիայում ուսանելիս: Թանգարանի գրապահոցում գոյատևող «Մուզիկալնայա սամոդեյատելնոստ» ամսագրից տեղեկանում ենք, որ մի խումբ երիտասարդ կոմպոզիտորների հետ Նադիրովը մասնակցել է «Կրասնի պրոլետար» գործարանում կազմակերպված հանդիպման երեկոյին, խոսել երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործական խնդիրների մասին, ներկայացրել երեկոյի մասնակից իր կոլեգաներին:

1936 թ. Նադիրյանն ավարտել է կոնսերվատորիան: 29-ամյա երգահանն իր ստեղծագործական հասունության շրջանում մեծ հեղինակություն է ձեռք բերել: Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ նա եղել է ԽՍՀՄ կոմպոզիտորների միության երիտասարդ կոմպոզիտորների սեկցիայի սիրված և գնահատված անդամներից, բազմաթիվ մրցույթներում տարած նրա հաղթանակների մասին գովեստով է խոսել մոսկովյան երաժշտական մամուլը: Որպես երգչախմբի և տարբեր ժողգործիքների անսամբլի ղեկավար Իվան Նադիրովը պատերազմից առաջ բազմիցս հանդես է եկել Մոսկվայում, Բաքվում, Լենինգրադում, Ալմա Աթայում և այլուր: Ղազախստանի «Խորհրդային գրող» հրատարակչության բաժնի վարիչ, բանաստեղծ Տումումբանը Ռիգայում, Ռայնիսի անվան գրողների ստեղծագործական տանը հանգստանալիս, դրվատանքով էր խոսում Իվան Նադիրովի մասին: «Ի՞նչ կապ է ունեցել Նադիրովը Ղազախստանի հետ» հարցիս ղազախ բանաստեղծը պատասխանեց.

— Թիվը կոնկրետ չեմ հիշում. կամ 37-ին կամ 38-ին է եղել: Բանաստեղծ Ա. Թաժիբաևի լիբրետոյի հիման վրա Նադիրովը Ալմա-Աթայում բեմադրել է «Երազանք» օրատորիան և «Գարուն» բալետը: Նա պարգևատրվել է Ղազախական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով: Բալետը նվիրված է եղել կոլտնտեսային կյանքին: Որքան գիտեմ, դա մեր ազգային առաջին բալետն է: Նրանից հետո Նադիրովը 3—4 տարի, մինչև պատերազմի սկիզբը, աշխատել է մեզ մոտ, գրել է «Տերեն-Կուլ» օպերան և մի կանտատ, որոնք կատարվել են ոչ միայն Ալմա Աթայում, այլև Մոսկվայում... Գրչընկերս իր ասածը հաստատելու համար նշում է, որ Նադիրովի բալետում գլխավոր դերերից մեկը կատարել է Ղազախական ԽՍՀ վաստակավոր արտիստուհի, պարուհի Շարա Ժանդարբեկովան:

Որ Իվան Նադիրովը եղել է ղազախական օպերային թատրոնի 1938—43 թվականների առաջատարներից, այդ մասին խոսվում է նաև արվեստագետ Պերենբեկ Մոմինովի «Ղազախական օպերային արվեստը» գրքում[1]:

Այստեղ (էջ 13) կարդում ենք. «...Այդ տարիներին գրվեցին և բեմադրվեցին ըստ Ա. Թաժիբաևի լիբրետոյի Ի. Ն. Նադիրովի «Խոր լիճը» («Տերեն-Կուլ») օպերան և «Գարուն («Կոկտեմ») բալետը...»:

«Տերեն-Կուլ» օպերայում Դաուրենի առաջին դերակատարը (1937-ին է բեմադրվել) եղել է Անուարբեկ Ումբետբաևը (ներկայումս Ղազախական ԽՍՀ ժողովրդական արտիստ և պետական մրցանակի դափնեկիր)[2]: Պ. Մոմինովի աշխատությունից (էջ 59—60) պարզվում է, որ ղազախական հանրահայտ երգչուհի Գարիֆուլլա Կուրմանգալիևը ևս անձնական ծանոթություն է ունեցել կոմպոզիտոր Իվ. Նադիրովի հետ: «Տերեն-Կուլ» օպերայում երգչուհին հանդես է եկել Ծուակեի դերում և արժանացել հանդիսատեսի ջերմ դրվատանքին: Ղազախական ԽՍՀ ժողովրդական արտիստ Սերգալի Աբժանովը ազգային օպերային թատրոնի իր երգացանկում հավերժ կհիշի Բուլատի դերերգը «Տերեն-Կուլ» օպերայից: Չէ որ հայ կոմպոզիտորի հետ նրանք նույն ժամանակ (1937 թ.) բեմ բարձրացան՝ ղազախական ազգային բարձրարվեստ օպերա ստեղծելու և բեմադրելու համար:

---

[1] П. Момынов — «Казахское оперное искусство» — Алма-Ата, 1963 г., стр: 13.

[2] Նույն տեղում, էջ 55:

1962 թ. Մոսկվայում «Սովետսկի կոմպոզիտոր» հրատարակչության կողմից լույս ընծայված Գ. Բերնանդտի «Օպերային բառարան» (ռուսերեն) գիրքը տեղեկացնում է, որ «Տերեն-Կուլ» օպերայի լիբրետոյի հեղինակները Մ. Օ. Աուեզովն ու Ա. Տ. Թաժիբաևն են: Թե ինչու Պ. Մոմինովն իր գրքում չի հիշատակել Մուխտար Աուեզովի՝ լիբրետոյի հեղինակակից լինելը— մեզ անհայտ է: Օպերայի սյուժեն վերցված է Ղազախստանում քաղաքացիական կռիվների պատմությունից: Ստեղծագործության պրեմիերան կայացել է 1939 թ. մարտի 20-ին Ալմա-Աթայում, ռուսական և ղազախական օպերային և բալետային թատրոնների միավորումում: Օպերայի դիրիժորը եղել է Ֆ. Ա. Կուզմինը, իսկ ռեժիսորը՝ Մ. Գ. Դիսկովսկին, նկարիչը՝ Վ. Մ. Կոլոդենկո[1]:

— Նադիրովի մասին ձեզ գուցե լրացուցիչ տեղեկություններ կտան ձեր հայրենակիցները, ովքեր ծանոթ են եղել նրան,— մեր բոլոր հանդիպումների ժամանակ ինձ տրված այս խորհուրդը դեռևս իրականություն չի դարձել:

Ժամանակն է, որ Նադիրովի հարազատները՝ Իրինա Ֆեոդորովնա Մասլովան՝ կինը և որդին՝ Ռազմիկը,[2] բարձրացնեն նրա արխիվը և տպագրության հանձնեն զոհված կոմպոզիտորի ստեղծագործությունները՝ Մոսկվայում, Երևանում կամ Ալմա-Աթայում[2]:

Նադիրովի կյանքի և ստեղծագործական ուղու ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նա 1940 թ. Ղազախստանից տեղափոխվել է Մոսկվա: Այստեղ է նա ստեղծել «Պարտիզաններ» կանտատը և այլ ստեղծագործություններ: Պատերազմի չար գույժը ստիպել է, որ կիրովաբադցի հայ երիտասարդը իր կնոջն ու տղային տեղափոխի Բաքու, հարազատների մոտ, իսկ ինքը կամավոր մեկնի ռազմադաշտ: Մոսկվայի Կրասնայա Պրեսնյայի շրջանի զինվորական հավաքակայանում 1941-ին Նադիրովը վերջին անգամ հրաժեշտ է տվել կնոջը, իսկ Բելոռուսական կայարանից հեռախոսով տեղեկացրել, որ իրեն ուղարկում են կրակի առաջին գիծ՝ ռազմաճակատ: 1941-ին Մոսկվա—Վյազմա—Սմոլենսկ ռազմաճակատային գծում կոմունիստ կոմպոզիտոր Հովհաննես Նադիրյանը, կուրծքը դեմ տված թշնամու մահաբեր գնդակին, մտքում հյուսում էր հաղթանակի և նվիրումի իր սիմֆոնիան, երբ գերմանական գնդակը Սմոլենսկում խլեց նրա ստեղծագործական երևակայության, քնարի և կյանքի թելը, զոհվեց համեստ և տաղանդաշատ մի արվեստագետ, որի ստեղծագործական կարճատև կյանքը եղավ մի տրակտատ, հերոսական մի ռապսոդիա անմահությունից առաջ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԱԴԻՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Գրիգորյան Սասուն**—«Սրբազան պարտք», ԳԹ, 21 ապրիլի 1980 թ., էջ 1 (նրա մասին և լուսանկարը):
2. «Հիշատակի երեկո—(Արմենպրեսի ինֆորմացիա), ԵԵ, 3 հուլիսի 1980 թ.:
3. **Ստեփանյան Հարո**—«Երաժիշտներ» (զոհված կոմպոզիտորների մասին), «Սովետ. արվեստ», 1958 թ., № 8, էջ 58—59:
4. «Պսակ» (ժողովածու զոհված կմպոզիտորների, կազմեց և առաջաբանը գրեց Հարո Ստեփանյանը), Ե., 1960 թ.:
5. **Գրիգորյան Սասուն**—«Մուսաները չլռեցին»—ԳԹ, 5 մայիսի 1985 թ., № 18, էջ 2:
6. Հայ ժողովրդի պատմություն, Ե., 1970, հատ. VIII, էջ 199:
7. **Лившиц Александр Борисович** — «Жизнь за родину свою», Москва, 1964 г., стр. 105.
8. «Воспоминания о московской консерватории», Москва, 1966 г., стр.: 234, 247, 250.
9. **Брутян Левон** — «Симфония театра», Ереван, 1984, 290 стр.
10. **Бернандт Г.**—«Словарь опер», Москва, 1962, стр. 297, 298, 389.

---

[1] **Бернандт Г.** «Словарь опер», Москва, 1962 г., стр. 297—298.

[2] Երկարատև որոնումներից հետո պարզվեց, որ Մոսկվայում են ապրում կոմպոզիտորի այրին՝ **Իրինա Ֆեոդորովնա Մասլովան**, նրա որդին՝ **Ռազմիկը** և մերձավոր ազգականուհին՝ **Ֆլորա Արամի Թումանյանը**, իսկ Բաքվում բնակվում է զոհված կոմպոզիտորի քույրը՝ **Մարիա Մկրտչի Նադիրովան** (վերջինիս հասցեն է՝ Բաքու, Լենինի պողոտա № 80, բ. № 70):

ԱՐՑԱԽՅԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԸ

ԱՆԴՐԱՆԻԿ (ԱՆԴՐԵՅ) ՀՄԱՅԱԿԻ ՊԱԽԱՐՅԱՆ (1917—1947)

«Քառասուն տարուց ավելի է անցել այն օրից, երբ մեր կոմպոզիտոր և երաժիշտ ընկերներից շատերը մեկնեցին պատերազմ և չվերադարձան: Մենք նրանց հիշում ենք այնպես, ինչպես կային նրանք այն ժամանակ՝ պարզհոգի, տաղանդավոր երաժիշտ, հետաքրքիր մարդ: Շատերը նրանցից արդեն հասցրել էին ապացուցել իրենց անուրանալի ձիրքը: Մեր սերունդը լավ է հիշում Կոնստանտին Մակարով-Ռակիտինի, Վիկտոր Տոմիլինի, Վենիամին Ֆելեյզմանի, Միխայիլ Դուշկու, Հրաչիկ Մելիքյանի և շատ-շատերի երաժշտությունը: Եթե նրանք ողջ մնային, կդառնային մեր երաժշտական մշակույթի հպարտությունը...»[1]: Երբ ընթերցում ես ԽՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության առաջին քարտուղար, ՀՄՊ-ի վետերան Տիխոն Խրենենիկովի այս խոսքերը, ակամայից քո դեմ են հառնում ոչ միայն նշված անուններն ու Հրաչիկ Մելիքյանը, այլև արցախորդի կոմպոզիտորներ Ստեփան Տերտերյանը, Միքայել Չաղալյանն ու Անդրանիկ Պախարյանը և բազմաթիվ երիտասարդ ու սկսնակ գրողներ, դերասաններ, նկարիչներ, որոնց կյանքը կարճվեց Մեծ հայրենականի պատճառով:

Անդրանիկ (Անդրեյ) Հմայակի Պախարյանը ծնվել է 1917 թ.: Երաժշտական նախնական կրթությունը ստացել է Բաքվի «Հայարտանը» կից երաժշտական դպրոցում: Տղայի արտակարգ ընդունակություններն այստեղ էլ դրսևորվեցին. և Անդրանիկն սկսեց մասնակցել քաղաքային երաժշտական միջոցառումներին՝ շահելով առաջնություն որպես շնորհաշատ կատարող: Երաժշտական դպրոցը գերազանցությամբ ավարտելուց հետո Պախարյանն ընդունվում է Բաքվի պետական կոնսերվատորիայի դաշնամուրի բաժին, հետո սովորում է կոմպոզիցիայի ֆակուլտետում: Այստեղ ևս երիտասարդ ուսանողը փայլում է իր տաղանդով: Այդ մասին ահա թե ինչ է գրել կոմպոզիցիայի գծով նրա դասախոս, պրոֆեսոր Բ. Ի. Զեյդմանը. «Անդրեյ Պախարյանը շատ շնորհաշատ երաժիշտ էր, սքանչելի դաշնակահար և կոմպոզիտոր: Նա ստեղծել է մի շարք ուշագրավ երկեր, այդ թվում դաշնամուրային պրելյուդներ և ֆուգաներ, լարային կվարտետ, սիմֆոնիկ սյուիտ և այլն: Նրա դիպլոմային աշխատանքն էր «Դաշնամուրային կոնցերտը»: Պախարյանի ստեղծագործությունները գրավում



Ա. Պախարյանի «Պրելյուդ-Ֆուգա» գրքի շապիկը. Ե., 1958 թ.:

---

[1] Памяти погибших композиторов и музыковедов 1941—1945, ред. и составитель: А. Богданова, выпуск I, М., 1985, стр. 3.

են իրենց մելոդիկ հարստությամբ, մտքի խորությամբ և ձևի կատարելությամբ[1]:

Դեռ կոնսերվատորիայի ուսանող էր, երբ կոմպոզիտոր հայորդու ստեղծագործությունները գրավեցին երաժիշտ կատարողների ուշադրությունը Բաքվում: Մենահամերգի էր պատրաստվում, բայց չհասցրեց. ստիպված էր զենքը ձեռքին գերմանական հրոսակների դեմ կռվել Հյուսիսային Կովկասում, Ուկրաինայում և թշնամուն հետապնդել մինչև իր որջը՝ Բեռլին: Պատերազմից կոմպոզիտոր Պախարյանը վերադարձավ շքանշաններով և մեդալներով պարգևատրված, բայց հոգեպես և ֆիզիկապես վիրավոր ու հաշմանդամ: 1945—1947-թթ. նա որպես մենակատար-դաշնակահար և երաժշտության տեսության ուսուցիչ աշխատեց ԼՂԻՄ-ի Ստեփանակերտ քաղաքում, ուր և 1947-ին պատերազմում կրած մահացու վերքերի և թոքախտի պատճառով երեսուն տարեկան հասակում բաժանվեց կյանքից:

Անդրանիկ Պախարյան կոմպոզիտորի երաժշտական վաստակը բարձր են գնահատել նրա կոլեգաներ Հարո Ստեփանյանը, Գեորգի Բուդաղյանը, Ալեքսանդր Թադևոսյանը և հայ երաժիշտ կատարողները: Վաղամեռիկ կոմպոզիտորի «Պրելյուդներ», «Պրելյուդ—ֆուգա» և այլ ստեղծագործություններ Հայպետհրատի կողմից լույս են տեսել առանձին գրքերով, տեղ գտել ՀՄՊ-ում զոհված հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների «Պսակ» ժողովածուում (Ե., 1960 թ.)[1]:

Ա. Պախարյանի ստեղծագործությունները բազմիցս զբաղեցրել են Հայֆիլհարմոնիայի տարբեր տարիների կատարողական երկացանկը, հաղորդվել ռադիոյով և թելուստատեսությամբ:

Լեյտենանտ կոմպոզիտորի բազմաթիվ երաժշտական ձեռագրեր ևս լույս կտեսնեին հետմահու, եթե Բաքվում որդու վաղաժամ մահվան կսկիծն ու ցավը չստիպեին նրա մորը՝ Աննա Ասատուրի Պախարյանին ևս անսպասելի բաժանվել կյանքից:

ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱԽԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. «Պրելյուդներ», Հայաստան, Ե., 19 թ.:
2. «Պրելյուդ-ֆուգա», Հայպետհրատ, Ե., 1958 թ.:
3. «Լարային կվարտետ», Հայպետհրատ, 1966 (խմբ.՝ Լ. Աստվածատրյան):
4. **Ստեփանյան Հարո**—«Երաժիշտներ», Սովետական արվեստ, Ե., 1958 թ., № 8:
5. «Պսակ» (զոհված հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների ժողովածու), Ե., 1960 թ.:
6. **Գրիգորյան Սասուն**—«Մուսաները չլռեցին», ԳԹ, 5 մայիսի 1985 թ., № 18, էջ 2:
7. Հայ ժողովրդի պատմություն, Ե., 1970, հատ. VIII, էջ 199:

[1] Տես հեղինակի «Պրելյուդ—ֆուգա» գրքի տեղեկատուն, էջ 2:

[1] Աննա Պախարյանը Բաքվում ապրել է Դիմիտրովի փողոցի 75-րդ շենքի № 73 բնակարանում: Կոմպոզիտորի մոր հասցեն հայտնաբերելու համար շնորհակալություն ենք հայտնում երաժշտագետ Արմեն Բուդաղյանին:

ԶՈՀՎԱԾ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ ԵՎ ՄԵՆԱԿԱՏԱՐՆԵՐ

ՖԱԳՈՏԻՍՏ ԵՎ ԿԼԱՐՆԵՏԻՍՏ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

ՍԱՄՎԵԼ ԵՐՎԱՆԴԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ (1918—1943)

ՄԻՔԱՅԵԼ ԵՐՎԱՆԴԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ (1915—1942)

Երկու եղբայրն էլ Կարսում են ծնվել. Եղեռնն ու բռնի տեղահանությունը պատճառ դարձան, որ Ավետիսյանների ընտանիքն էլ թողնի հայրենի օջախը, հաստատվի Ալեքսանդրապոլում: Սկզբնական երաժշտական կրթությունը երկու եղբայրն էլ այստեղ ստացան: Մեծ էր Համասփյուռ Մայրիկի ուրախությունը, երբ իր որդիներին տեսնում էր պատանի երաժիշտների խմբում՝ մասսայական միջոցառումների ժամանակ ելույթներ ունենալիս: Երևանում Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանը գերազանց գնահատականներով ավարտելուց հետո Սամվելն ընդունվեց Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ֆագոտի և դաշնամուրի բաժինը: Սովորելուն զուգընթաց նա աշխատում էր օպերային թատրոնում որպես մենակատար ֆագոտիստ: Մշտազբաղ այդ սուղ ժամանակից էլ դուրս Սամվելը երաժշտության տեսություն էր դասավանդում Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ դպրոցում: Երբեմն էլ իր ուսուցիչ Ռոբերտ Անդրեասյանի հետ ծափերով ու բռավոներով հեռանում էր բազմամարդ երաժշտական դահլիճներից՝ ծաղիկներ տանելով իր հետ: Համերգից համերգ ծաղկում էր երիտասարդ երաժշտի տաղանդը, մեծանում նրա երկրպագուների թիվը:

— Հենց պատերազմի լուրը գուժեցին, երկու եղբայրներս էլ կամավոր գինվոր դարձան:— Պատմում է Երևանի օպերային թատրոնի մենակատար, արվեստի վաստակավոր գործիչ Սպարտակ Ավետիսյանն ու ավելացնում,— Միքայելը Մոսկվայի կոնսերվատորիայից գնաց: Նա այնտեղ սովորում էր կլարնետի բաժնում (Վոլոդինի դասարան), իսկ Սամվելը՝ Երևանից: 1942 թվական, Հարավային ռազմաճակատ: Մեկը մեկից անտեղյակ կռվում են այստեղ երկու եղբայր՝ Սամվելն ու Միքայելը: Ուժեղ ռմբակոծություններից մեկի ժամանակ Միքայելը զոհվում է, այնինչ քույրերը՝ Սեդան ու Սոնան, դեռ նամակով պահանջում էին. «Միշտ ջան, խընդրում ենք զինվորական հագուստով նկարվես և ուղարկես...»: Օրեր էին անցնում, քույրերը պատասխան չէին ստանում: «Չէ՛, որ հնարավոր լիներ, Միշտ չէր լռի»: Էլ չհնչեց նրա կլարնետը, դադարեցին համով-հոտով կատակներն ու անեկդոտները. Միշտ զոհվել էր: «Սամվելն ինչո՞ւ չի գրում»,— հենց ուշանում էին նամակները, սկսվում էր տպնեցիների ու բարեկամների անհանգստությունը: Սուխումի ռազմական ուսումնարանը լեյտենանտի կոչումով ավարտեց Սամվելն ու գործուղվեց կրակի առաջին գիծ: Կազբեկի լեռնաշղթան ճեղքելու համար գերմանական բանակը գործադրում էր ամեն ջանք. ռմբակոծություն՝ օդից, ցամաքից՝ կրակ: Երկուստեք ծանր մարտեր են: Ձյունն ու ցուրտը նեղում

են: Սամվելն իր դասակով ընկել է շրջափակման մեջ: Խզված է հեռախոսային կապը: Ամպն ու մառախուղը անանցանելի են դարձրել ձյունապատ կածանները: Փամփուշտի պակասությունն ու սննդամթերքի վերջանալը զուգադիպել են շրջափակմանը: Ցրտահարությունը որքան նեղում է թշնամուն, այնքան էլ ճնշում է անզեն և անկրակ երիտասարդին ու անփորձ խորհրդային մարտիկներին, ու մինչ 18-րդ բանակի հետախույզները կհասնեին օգնության, ֆագոտիստ հայորդին ցրտից արդեն անզգայացել էր: Մի քանի հայ, օսեթ և վրացի զինվորների ուժերով ավագ լեյտենանտ Ավետիսյանը հասցվում է սանվաշտ: Բուժումներն անզոր եղան: Բժիշկների ցուցումով գումարտակի կոմիսար, ավագ լեյտենանտ Սամվել Ավետիսյանին ետ են ուղարկում թիկունք՝ ապաքինվելու: Չանցած մի քանի շաբաթ, Լենինականի երաժշտասեր հասարակությունն ու հարազատները վերջին հրաժեշտը տվեցին տաղանդաշատ երաժիշտ ու սիրված մանկավարժ քաջորդուն:

ՄԵՆՔ ՉԵՋ ՀԵՏ ԵՆՔ ՄԻՇՏ...

ԴԱՆԻԵԼ ԱՎԵՏԻՍԻ ԲԱՆԴՈՒՐՅԱՆ (1916—1942)

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՍԻ ԲԱՆԴՈՒՐՅԱՆ (1923—1944)

Մի օր Արդահան է այցելում հանրահռչակ Ջիվանին և ելույթ ունենում հասարակությամբ լեցուն մի մեծ օդալում: Ավետիս Բանդուրյանը իր նման երաժշտասեր մանուկների հետ միայն պատուհանից է տեսնում ու լսում Ջիվանու երգն ու նվագը... Տուն վերադառնալիս նա պատրաստում է ջութականման մի գործիք՝ ձիու պոչի տարբեր մազերից, դրանք ձգում է լարերի նման և փորձում նվագել «Բարի գեղեցիկը»: Հետո ինքնուրույն սովորում է նվագել երաժշտական տարբեր գործիքներ: Հետագայում ձեռք է բերում թառ, քամանչա, ջութակ, մանդոլին: Տարիներ հետո, երբ արդեն երեխաների հայր էր, նա իր որդիներին սովորեցնում է նվագել: Լենինականում, լուսանկարիչ աշխատելու ժամանակ, ամառվա շաբաթ երեկոներին բաց պատշգամբում հանախ իր ընտանեկան «անսամբլով» Ավետիսը համերգներ էր տալիս՝ շուրջը համախմբելով երաժշտասեր հարևաններին: Այդ համերգների ժամանակ հատկապես առանձնանում էին Դանիելի մանդոլինի նվագն ու Հակոբի քամանչան ու երգը:

Ավագ որդու՝ Դանիելի մոտ (ծնվել է 1916 թ. Ազովի ծովափնյա Եյսկ քաղաքում) դեռևս վաղ մանկությունից նկատվեցին գրական և նկարչական հակումներ: Հայրը որդուն ապահովեց անհրաժեշտ նկարչական պարագաներով և սկսեց ուշադիր հետևել նրան: 10—13 տարեկան Դանիելի նկարչական առաջին թոթովանքները, նշանավոր կտավների արտանկարումները (լուսանկարներ), ծաղիկներն ու նատյուրմորտները (ջրաներկ), դիմանկարները (մատիտ) և ինքնուրույն ստեղծագործական կոմպոզիցիաները հիացմունք էին պատճառում դիտողներին: Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետում ուսանելիս Դանիելը ստեղծեց նաև «Լենինը Սմոլնիում», «Առաջնորդի ճառը զրահամեքենայից» մեծ կտավի գործերը, որոնք ցուցադրվեցին Մոսկվայում բացված ժողովրդական տընտեսության նվաճումների ցուցահանդեսի (BDHX) հայկական տաղավարում: Այդ մասին ժամանակին «Խորհրդային գրականություն և արվեստ» ամսագրում գրվեցին երիտասարդ նկարչի տաղանդը հաստատող ջերմ ու դրվատալի տողեր:

1939 թ. բարձր գնահատականներով Դանիելն ավարտեց համալսարանն ու զորակոչվեց Կարմիր բանակ: Բանակում նա նույնպես ստեղծագործում էր. նկարում էր, միաժամանակ զբաղվում լուսանկարչությամբ: Եղբայրներին հղած մի նամակում 1941 թ. հունվարի 30-ին նա տեղեկացնում է. «...Այս նամակը ես գրում եմ մեր ֆոտոլաբորատորիայում, որտեղ այժմ ուժեղ էլեկտրական

15-ամյա Դանիելը Լենինականի գբոսայգում նկարում է Գիժ Սարգսին (մատիտանկար):

լուսավորության տակ մի մեծ կտավի վրա յուղաներկով նկարում եմ մեր բոլոր մարշալներին: Պատրաստվում եմ մասնակցելու օկրուգային զինվորական ցուցահանդեսին և Կարմիր բանակի 23-րդ տարեդարձին: Ինձ համար ստեղծել են բոլոր հարմարությունները. հերթական նարյադներից և աշխատանքներից ազատված եմ...»: Իսկ հորն ու մորը գրած նամակում էլ թե՝ «...Ես ազատ ժամանակ քիչ եմ ունենում, քանի որ բացի զինվորական ուսուցումից ծանրաբեռնված եմ նաև հասարակական աշխատանքներով, այն է՝ մեր ուսումնարանի կոմսոմոլի բյուրոյի և խմբկոլի անդամ եմ, նկարում եմ և այլն...

Դեկտեմբերի վերջին մեր ինքնագործ խումբը գնալու է Տաշքենդ՝ օլիմպիադայի, որտեղ ես էլ եմ մասնակցելու որպես լարային խմբի անդամ (մանդոլինա)...»:

Մեկ տարի էր մնում զինծառայության ավարտին, երբ պայթեց Մեծ հայրենականը, և Դանիելը կրտսեր լեյտենանտի կոչումով Լենինաբադից մեկնեց ռազմաճակատ:

Նկարիչ երաժշտի եղբոր՝ բանաստեղծ Գարիկ Բանդուրյանի մոտ, պահպանվել են Դանիելի ռազմաճակատային մի քանի նամակները: Նրանցից հորն ուղարկած նամակում, հարցնելով բանակ զորակոչված եղբոր՝ Հովհաննեսի (Վանյա) ու դեռևս չզորակոչված Հակոբի (Յաշայի) մասին, Դանիելը հուսադրում է հորը. «...Մենք ամեն ինչ կանենք անարգ ոսոխի դեմն առնելու և նրան իր եկած ճամփան ցույց տալու համար...»: Ավաղ. սա եղավ մարտիկ նկարչի վերջին նամակը:

Որդու ճակատագրով տագնապած հոր նամակին ի պատասխան ստացված բացիկում հատուկ ականանետային գումարտակի հրամանատար Կոտովը հայտնում է. «Ձեր որդին՝ Դանիել Ավետիսի Բանդուրյանը, 1942 թ. փետրվարի 5-ին Լենինգրադի մարզի Պեննո գյուղի մոտ մղվող մարտերում զոհվեց հերոսի մահով...»:

Գումարտակի ավագ քաղղեկ Մ. Բրիզգինը Ավետիս և Սաթիկ Բանդուրյաններին գրել է. «Ձեր որդին լավ ու քաջարի հրամանատար էր. մեծ հեղինակություն էր վայելում հրամանատարների և մարտիկների կողմից...»:

Զոհվեց Դանիելը, լռեց նրա մանդոլինի հոգեպարար մեղեդին, հավերժ կանգ առավ նրա շնորհագեղ վրձինը:

Երկրորդ եղբորից՝ Հովհաննեսից հետո, 1941 թ. բանակ զորակոչվեց Բանդուրյանների երրորդ եղբայրը՝ 9-րդ դասարանցի Հակոբը (ծնվ. 1923 թ. Եյսկում): Նախ սովորեց Ստեփանավանի զինվորական հետևակային ուսումնարանում, ապա մարտնչեց Նովոռոսիյսկի մատույցներում, վիրավորվեց և ապաքինվեց, ինչպես շատերը, նորից նետվեց մարտի, այս անգամ արդեն եղբայրական Լատվիայի հողում: Այստեղ նա երկրորդ անգամ վիրավորվեց ոտքից: Հոսպիտալից կրտսեր եղբորը՝ դպրոցական Գարիկին գրած նամակում կարդում ենք. «...Թշնամին ուժեղ մինոմյոտնի կրակ էր բացել: Մի

Գարիկ, Հակոբ և Վանուշ (Հովհաննես) Բանդուրյանները իրենց մոր՝ Սաթենիկի հետ 1941 թ. Վանուշին բանակ ճանապարհելուց առաջ:

Լեդուրգա գյուղի (Լատվիական ԽՍՀ) եղբայրական գերեզմանոցի մարմարե այն հուշատախտակը, որի տակ իր զինընկերների հետ հանգչում է Հակոբ Բանդուրյանը:

Բանաստեղծ Գարիկ Բանդուրյանը յուրայինների և Լեդուրգա գյուղի դպրոցականների և ուսուցիչների հետ ամեն տարի սեպտեմբերի 21-ին այցելում է եղբոր շիրմին:

ռուս զինվոր բղավում էր. «Բրատցի, պամագիտե»: Տեսա՝ շատ ծանր վիրավոր էր... Մոտիս երկու բինտով պերեվյազկա արի նրա գլուխն ու ոտքը, հենց այդ ժամանակ էլ ոտքից վիրավորվեցի: Շուտով ինձ դուրս կգրեն հոսպիտալից, ու ես նորից կմեկնեմ առաջավոր գիծ...»:

Նամակից երեք շաբաթ անց Երևանի Շիրվանզադեի անվան դպրոցի աշակերտ Գարիկ Բանդուրյանը տուն գալիս հարևաններից իմանում է, որ իր մորը կանչել են զինկոմիսարիատ: Շտապում է գնալ մոր ետևից, բայց մի քանի քայլ հազիվ էր արել, երբ դեմից եկող երկու կին տուն էին բերում ուշագնաց Սաթենիկ մայրիկին՝ իր երկրորդ որդու «սև թուղթը» ձեռքին: Այնտեղ պարզ գրված էր.

«Ցավով հայտնում ենք, որ ձեր որդին՝ գվարդիայի եֆրեյտոր Յակով Ավետիսի Բանդուրյանը, հավատարիմ մնալով զինվորական իր երդմանը և ցուցաբերելով արիություն ու հերոսություն, 1944 թ. սեպտեմբերի 21-ին զոհվեց Հայրենիքի համար մղվող մարտերում...»: Ապա նշված էր գերեզմանի տեղը՝ Լատվիական ԽՍՀ Լիմբաժսկի շրջանի Լեդուրգա գյուղի եղբայրական գերեզմանոց:

Այսպես՝ կյանքից վաղաժամ հեռացավ նաև երկրորդ եղբայրը, լռեցին նրա քամանչան ու կարկաչուն ձայնը, որոնք, ըստ ծանոթների, Հակոբին խոստանում էին երգարվեստում գալիք բարձունքներ:

Մեծ հաղթանակի քառասնամյակի օրերին զոհված հերոսների եղբայրները՝ Հայրենական մեծ պատերազմի վետերան, պահեստի կապիտան Հովհաննես Բանդուրյանն ու բանաստեղծ Գարիկ Բանդուրյանը, իրենց կանանց հետ, Լատվիական ԽՍՀ Լիմբաժսկի շրջանի Լեդուրգա գյուղի դպրոցի ղեկավարության հրավերով մասնակցեցին տեղի հոբելյանական հանդիսություններին: Նրանք եղան Լեդուրգիայի եղբայրական գերեզմանոցում, ուր հանգչում են Խորհրդային հայրենիքի տարբեր ազգությունների 75 հերոս զինվորներ: Այստեղ մարմարե վեց հուշատախտակներից յուրաքանչյուրի վրա փորագրված են 12—13 անմահների անուններ: Նրանցից մեկն սկսվում է իրենց եղբոր՝ գվարդիայի եֆրեյտոր Բանդուրյան. Հ. Ա.-ի անվամբ:

«Հայրենի հողը թող թեթև լինի քո վրա»,— լացով շշնջացին նախկին զինվորն ու բանաստեղծը և երգիչ իրենց եղբոր ու նրա ընկերների շիրմին ավելացրին Հայաստանից բերված երկու բուռ հող: Հակոբի վերջին պատվիրանն էին իրագործում նրանք.

— Ուր էլ թաղվեմ, իմ գերեզմանին Երևանից, Արաքսիից երկու բուռ հող կլցնեք...:

Երեք եղբայրներով շրջապատված երևանյան այս լուսանկարի կենտրոնում Մերի Բանդուրյանն է: Նրա աջակողմյան երկու եղբայրներն այսօր չկան, բայց նրանց կտավները, երգն ու նվագը հուշում են.

— Երբ ցուցահանդես կայցելեք կամ թանգարան, երբ համերգ կունկնդրեք, գիտցեք՝ մենք Ձեզ հետ ենք միշտ...

ԲԱՆԴՈՒՐՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Հր. Մ՝ալիլյան— Պատմում են եռանկյունի նամակները, Եր. Ե., 30 ապրիլի 1985 , էջ 3:

ԱՂՋԻԿԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ Է ՀՈՐ ԴԻՄԱՆԿԱՐԸ

ԱՐՄԵՆԱԿ ՍԵԴՐԱԿԻ ԷԼՈՅԱՆ
(1908—1944)

ՍԵՐՅՈԺԱ ԱՍԱՏՈՒՐԻ ԷԼՈՅԱՆ
(1923—1943)

Սև մութ ամպեր ծակտիդ դիզվան,
Դուման հագար, Ալագյազ,
Արտումս արև էլ չի ծագում,
Սիրտս էր դուման, Ալագյազ...
Ավ. Իսահակյան

Լենինականի ֆիլհարմոնիայի բեմում վերջին անգամ այս բառերը թրթռացին Արմենակ Էլոյանի շուրթերին, և նա մենակատարներ Ավագ Մխիթարյանի, Կարո Սնդոյանի և Մկրտիչ Կարապետյանի հետ դուրս եկավ «դերասանական դռնից»: Հաջորդ առավոտյան երեքն էլ ճանապարհվեցին երկաթուղու կայարան: Գնացին: Գնացին ու էլ չեկան: Արմենակի երեխաները փոքր էին. Սեդան 12 տարեկան էր, իսկ Ժորան՝ 9: Տարիները սև մութ ամպերի պես ցրվեցին, անցան: Անհայր մեծացան քույր և եղբայր, ընտանիք կազմեցին: Եվ ահա Էլոյանի դստեր տանն ենք:

Լռություն, փոխադարձ հայացք, նորից լռություն: Սեղանին բլուրվում է եռանկյունն նամակների կապոցը: Ու մինչ կբացենք դրանք, զոհված երգչի դուստրը՝ բանասիրական գիտությունների թեկնածու Սեդա Էլոյանը, միացնում է ձայնագրիչը, և հնչում են «Հանիկ նանար», «Շուշոն ելեր, կերթա էգին», «Հոյ Նուբար, Նուբար» քաղցրահնչյուն երգերը: Ձայնաժապավենը շարունակում է «գլորվել», և «Գորանի», «Դերկո նինա», «Հաբրբան», «Ծամթել» և մի շարք անանուն երգեր հիշեցնում են 1933 թվականը՝ Լենինականում կազմակերպված ֆիլհարմոնիան և նրա առաջին երկացանկը:

— Ուրիշ էլ ի՞նչ երգեր էր երգում հայրիկդ,— հարցիս Սեդան պատասխանում է.

— Զիվանու «Զախորդ օրերը», «Մայրիկը», Սայաթ-Նովայի «Դուն էն գլխենը», «Նազանին»: Խնջույքներում նա նազուտուզ անել չէր սիրում, գովնդ էր բռնում (պար) և պարբաշի դարձած ղեկավարում խնդության սեղանը: Հիշում եմ՝ «Կիլիկիա» և «Գանձարան հայկական երգերու» գրքեր ունեինք: Դրանք կարդում էր, երբեմն էլ իրենից երաժշտություն հորինում ու երգում: Առաջին անգամ ես հայրիկիցս եմ լսել «Մշեցու օրորոցայինը» և «Տալվորիկի զավակ եմ քաջ» երգերը: Հայրիկն այնպես շեշտված, ռիթմիկ և վարակիչ էր երգում, որ բոլորս ձայնակցում էինք նրան:

Մինչ ես Սեդայից կհասցնեմ ևս մի քանի տեղեկություններ իմանալ, ներս են մտնում Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ Ժան Էլոյանն ու պահեստի գնդապետ Վլադիմիր Թամրազյանը:

— Ժանը հորեղբայրս է, մնացածը թող ինքը ասի: Ծանոթացեք Վոլոդյայի հետ. ամուսինն է:

— Սրանք մեր Արմենակի նամակները չե՞ն,— հարցումով միջամտում է մեր բուն խոսակցությանը հանրահայտ արտիստը:— Փոքր եղբայրս է: Ութ թվի (1908) ծնունդ: Խնուսա բերդից ենք. Բաշքոյնու գյուղից... Գաղթ, կոտորած, արուն-ավեր մեր գլխով էլ է անցել: Քեռի Սեթոյի օգնությամբ 1914 թ. Մուշում միացանք ռուսական բանակին: Էլ Հարամիկի ռուսական, էլ Թիֆլիսի ամերիկյան որբանոց... ո՞ւր ասես, որ չենք ընկել: Հարամիկի որբանոցում Արմենակի խնամակալը ֆելիետոնիստ, խնուսցի Անդրանիկ Մխիթարյանն էր: 18-ին օսմանցին հրաման տվեց Խնուսը դատարկել: Որպեսզի թշնամու ձեռք չանցներ ունեցվածքը, Անդրանիկը ամեն ինչ բաշխեց որբերին և որբանոցի բանալին էլ բոլորի աչքի դեմ պահեց, պատվիրելով՝ «ով շուտ գա, թող դուռը բացի...»: Արմոն անուշ ձեն ուներ: «Խորո՛ն, Խորո՛ն,— դիմում էին հարևանները մորս,— մեր երեխեքն էլ երգեկ Արմոյի պես երգեին... անուշ կերգե Արմոն...»: Զրուցակիցս

Արմենակ Էլոյանը (ձախից առաջինը) ռազմաճակատային ընկերների հետ, Դոնի Ռոստով, 1943 թ.:

տեղեկացնում է, որ իր եղբայրը Թբիլիսիում եղել է կոշկակար, Այնքպոլում՝ բանվոր: Ամեն տեղ բանվորական ակումբների և գեղարվեստական ինքնագործ խմբերի մրցույթներում փայլել է իր երգացանկով: Էլոյանի կատարմամբ Գյումրվա ժողովրդական ազգային կատակերգերը, Տարոն-Տուրուբերանի գեղջկական, աշխատանքային, հերոսական, հարսանեկան, մանկական և երգիծական համով-հոտով երգերից կազմված փունջը հոգեկան և գեղագիտական մնայուն հետք է թողել ժամանակակիցների սրտում: Այդ մասին թերևս ամենատպավորիչը Ծովիկ Ղազարյանի և Գևորգ Գասպարյանի անկեղծ բնութագրերն էին: Լենինականի ֆիլհարմոնիայի նախկին դիրիժոր, կոմպոզիտոր Մարտին Մազմանյանի վկայությամբ Արմենակ Էլոյանի երգած «Գըլգլալեն ջուր է գալիս Մշո բարձրիկ սարերից» և «Մշու երկիր մշուշ է» երգերը ժամանակին ձայնագրել է Ռոմանոս Մելիքյանը: Նա բեմից Արմենակի կատարմամբ լսել է «Գորանի», «Դոնիկ, դոնիկ», «Սասունցոց պարերգ», «Երուսաղեմ ուխտ եմ արե», «Համբարձման երկուշաբթին» և այլ բանահյուսական երգեր ու խաղիկներ, որոնք երգիչն ընդօրինակել էր իր ծնողներից: Չունենալով երաժշտական կրթություն, ինքնակրթությամբ Արմենակ Էլոյանը օր-օրի կատարելագործվում էր: Նրա երգացանկում իրենց մշտական տեղն էին զբաղեցնում Կոմիտասն ու Կարա-Մուրզան, նա հետևում էր իր հանճարեղ հայրենակցի՝ Արմենակ Շահմուրադյանի կատարողական ավանդույթներին, Շերամի անտիպ երգերի առաջին կատարողներից էր: Ցավոք «Հոյ, Նազան իմ, Նազանի» երգի անզուգական կատարողը ժամանակից շուտ հեռացավ բեմից: Նա մերժեց Լենինականի զինկոմ Լևոն Մարտիրոսյանի՝ որպես երգչի իրեն տրված արտոնագիրը և 1941 թ. կամավոր մեկնեց պաշտպանելու հայրենի հողը: Կիրովականի զինվերապատրաստման դասընթացներում սովորելուց հետո լեյտենանտ Էլոյանը որպես 17-րդ բանակի ռազմիկ խիզախաբար մարտնչեց Մարիուպոլի և Ղրիմի ազատագրության համար: Մի քանի անգամ վիրավորվելուց և ապաքինվելուց հետո նորից նետվեց մարտի, մշեցի ընկերոջը՝ Մամիկոնին, հիշեցնելով.

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտի մեռնի,
Բայց երանի ով յուր ազգի
Ազատությանը կզոհվի:
(Միք. Նալբանդյան)

Կերչ, Դոնի-Ռոստով, Մելիտոպոլ, Կրիվոյ-Ռոգ, Դնեպրոպետրովսկ—Խարկով ռազմաճանապարհին կրած ֆիզիկական և հոգեկան դժվարությունների մասին են պատմում այն նամակներն ու բացիկները, որ հասցեագրել է երգիչ մարտիկն իր դպրոցական դստերը. «Ես շատ եմ մտածում Նանեի մասին: Արդյո՞ք էլ իմ մորը չպիտի տեսնեմ...»: 1943 թ. դեկտեմբերի 8-ին Ծախտիից (Ռոստովի մարզ) Էլոյանը նամակ է ուղարկում Լենինական (39-րդ փողոց, 144 տուն) և նորից մտահոգված ասում. «...արդյո՞ք կլինի այնպես, որ ես ողջ և առողջ վերադառնամ, տեսնեմ մորս և ձեզ բոլորիդ: Սեդա ջան, անչափ ուրախացա. դու ինձ գրել էիր Մամիկոնի գալուստի մասին: Նա պատմած կլինի, թե ինչեր ենք քաշել: Այդ ոչի՛նչ: Մոտ է վայրկյանը, նրանք պիտի տապակվեն իրենց արյան մեջ, իրենց հողի վրա, նրանք՝ այդ շները, ֆաշիստները, գազանները, որոնք միլիոնավոր մարդկանց մահվան պատճառը դարձան: Շուտով նորից գնալու եմ ճակատ՝ ջնջելու ֆաշիստներին, եթե զոհվեմ, դա կլինի Հայրենիքի ազատության համար... և թող դաս լինի ձեզ... Ժան ջան, շատ ուրախ եմ քո հաջողությամբ, այդ մասին Սեդան՝ իմ անուշ աղջնակը, ինձ գրել է: Դու ինձ համար մեծ պարծանք ես... Ժան ջան, էլ ավելին եմ ցանկանում քեզ թե՛ բեմում, թե՛ կյանքում: Մի խնդրանք ունեմ՝ Ասատուրի և իմ բալիկներին լավ խնամիր: Գրիր քո անսամբլի և ձեր գաստրոլների մասին: Համբուրում եմ...»:

Ինչպես ցույց են տալիս նամակները, մարտադաշտում անգամ դասակի հրամանատար, երգիչ Էլոյանը նորից յուրայինների հետ է, նրանցով է շնչում-ապրում, նրանց և աշխարհի խաղաղության համար է կռվում: 1944-ի փետրվարին երգիչ մարտիկը ռումբերի և նռնակների տարափի տակ, ավտոմատը կրծքին սեղմած ներողություն է խնդրում իր աշակերտ աղջնակից, որ մոռացել է շնորհավորել նրա ծննդյան տարելիցը: Ահա թե ինչ է գրել նա կրակային գծից իր դստերը. «...Սիրելի բալիկ ջան, ներիր հայրիկիդ, որ մոռացել էր քո ծնունդը շնորհավորել: Հունվարի 12-ին լրացավ ուղիղ 15 տարիդ, շնորհավորում եմ: Ներող կլինես, որովհետև ուշք-խելք չի մնացել: Իմ Սեդիկ ջան, եթե ես տանը լինեի, ուրիշ կերպ կնշեինք քո տարելիցը, բայց ոչինչ: Գուցե բախտ ունենամ՝ ողջ և առողջ վերադառնալ, այն ժամանակ ես նվերներ կառնեմ չմասնակցածս քո բոլոր տարելիցների առթիվ և թշիկներդ համբույրներով կօծեմ: Հա՞...»: Այնուհետև խրամատում գրած նամակում Էլոյանը շարունակում է. «Սեդիկ ջան, ես գիտեմ, որ դուք կարիք եք զգում փողի: Ի՞նչ արած, որքան կարող եմ, կօգնեմ: Ոչինչ, մի կերպ յոլա գնացեք: Այստեղից վերադարձող մեր տղաներից մեկի մոր հետ ուզում էի քեզ մի նվեր առնել, ուղարկել, բայց գրպանս չներեց: Ոչինչ, պապան այդպես չի թողնի ձեզ, շուտով կհաղթենք թշնամուն, կվերադառնանք, և ամեն ինչ լավ կլինի: Նամակներ շուտ-շուտ գրիր:

Պաչիկներով՝ քո **հայրիկ**
18.3.44 թ.
Գործող բանակ»

Ու մինչ մենք կհասցնենք ծանոթանալ մեր երգչի ռազմաճակատային լուսանկարներին և հուշերին՝ Ժորա Էլոյանը միացնում է ձայնագրիչը և ասում.

— Էս երգերը ժամանակին բեմից երգել է հայրս: Խնդրում եմ լսեք:

...Գովեմ, սրտով ուրախանան,
Թիֆլիս քաղաքն պատվական,
Հույժ գեղեցիկ են, սիրական
Վրաստանա գոգալներն:
Ես Նաղաշն եմ, մեղաց ծով եմ,
Նոցա սիրով ու գինով եմ,
Խաբար չեմ, թե ինչպես գովեմ
Վրաստանա գոգալներն:

— Նաղաշ Հովնաթանի այս երգը հայրիկը վրացերեն էլ էր երգում: 4—5 տարի Թբիլիսիում ապրելիս նա սովորել էր վարժ խոսել ու երգել նաև վրացերեն: Հայրիկը քրդերեն էլ գիտեր: Միշտ պատմում էր, որ 1914-ի կոտորածի ժամանակ իրենց գյուղի տանուտեր Հասան աղան է Էլոյանների տոհմը թաքցրել թուրք ենիչերներից, թե չէ... Հիշում եմ հայրիկի «Խանդմդմն» և «Բրինդար ըմ» երգերն ու մի քանի խաղիկներ, որոնք ժամանակին ձայնագրվեցին Ջասմե Ջալիլի կողմից և հաղորդվեցին ռադիոյով,— լրացնում է եղբոր միտքը Սեդան և ցույց տալիս մի քանի լուսանկարներ, որոնք ծնվել են ֆիննանում է եղբոր միտքը Սեդան և ցույց տալիս մի քանի լուսանկարներ, որոնք ծնվել են ֆիննա-

Ռոստովի մարզի Ծախտի քաղաքից իր դստերը՝ Սեդա Էլոյանին (այժմ բանասիրական գիտ. թեկնածու, ԳԱ լեզվի ինստիտուտի՝ ավագ գիտաշխատող), Արմենակ Էլոյանի գրած նամակը, 1944 թ.:

կան կոիվների տարիներին, երբ Արմենակ Էլոյանը զորակոչվել էր հերթական ծառայության (1939—1941 թթ.):

1944-ին թշնամու ջախջախված ոհմակները ետ էին նահանջում դեպի իրենց որջը: Հակառակորդի «Մեսսերշմիդտ-109», «Յունկեր» և այլ տիպի կործանիչ ինքնաթիռների հարյուրավոր կմախքներ ննջում էին խորհրդային զինվորների սապոգների տակ: Հակահարձակումը և վայրկյան առ վայրկյան մոտեցող հաղթանակը ոգեվորել էին ամենքին:

Դասակի հրամանատար Էլոյանի հասցեն փոխվեց. 13488 դաշտային փոստ: Ուկրաինական 2-րդ բանակում Ուկրաինայի համար մարտընչելիս թշնամու դարանակալած գնդակը 1944 թ. գարնանը նորից է խոցում մշեցի քաջորդուն. սա արդեն ծանր էր: Ահա 20.6.1944 թ. Արմենակի գրած նամակի վերջաբանը. «...Սեդա ջան, շատ հեռու եմ ձեզանից: Այնպիսի տեղ եմ գտնվում, որ ոչ գիշերն է հայտնի, ոչ ցերեկը. կոիվ է՝ առանց դադարի: Նամակս գրում եմ ճակատից և հույս ունեմ՝ կվերադառնամ ողջառողջ, շքանշաններով պարգևատրված, արդեն մի քանիսն ունեմ: Դուք լավ սովորեք: Որ եկա, քեզ, Թամարին, Վալոդին, Ժորային, Լյովային նվեր կբերեմ... նորից ուղարկում եմ 200 ռուբլի: Բարև քեզ և քո ընկերուհիներին, որոնց հետ սովորում ես...»: Ինչ իմանար անվեհեր հայ մարտիկը, որ սա իր վերջին գրավոր զրույցն է լինելու իր 15-ամյա դստեր հետ, որ ինքն էլ չի հանդիպելու իր Զուսն և Ազնիվ քույրերին և եղբորը՝ Ժան Էլոյանին: Ինչպե՞ս իմանար երգիչ ռազմիկը, որ դեռ 1943 թվականի փետրվարի 2-ին, 89-րդ հայկական դիվիզիայի 390-րդ հրաձգային գնդում մարտնչելիս, դիվիզիայի հրամանատար, գնդապետ Արտաշես Վասիլյանի զոհվելու օրը զոհվել է նաև իր եղբոր՝ Ասատուրի որդի Սերյոժան՝ կյանքի 20-ը դեռ չլրացրած: Սերյոժա Էլոյանն ավարտել էր Լենինականի № 3 դպրոցը: Այստեղ էր, որ առաջինը նկատեցին պատանու պարելու շնորհքը և նրան ներկայացրին Լենֆիլհարմոնիայի երգի-պարի անսամբլի բալետմայստեր Աղասի Շաբոյանին: Քննությունն անցավ հաջող, միայն գեղարվեստական ղեկավարն առաջարկեց.

— Սերյոժա, քանի որ դուք նաև մեր քաղաքի առաջատար ֆուտբոլիստներից եք, լավ կլինի նախընտրեք՝ կամ բեմը, կամ ֆուտբոլը:

— Կպարեմ,— եղավ ծուռտիկ Սերոժի (այսպես էին կոչում մտերիմները նրան ֆուտբոլ խաղալու համար) պատասխանը: Սերյոժան չհասցրեց 1942-ին ստանալ միջնակարգ դպրոցի իր հասունության ատեստատը: Մեկնեց ռազմաճակատ: Խիզախաբար մարտնչելով Գեորգիևսկի, Միներալնիե Վոդի, Ստավրոպոլ քաղաքների ու նրանց շրջակա բնակավայրերի ազատագրության համար զոհվեց 20-ամյա հրաձիգը, որը հայկական իր մենապարերով, զուգապարերով և խմբակային պարերով այնքան հրճվանք էր պատճառել հանդիսատեսներին, որոնցից շատերը չեն մոռանում «Ծափ պար», «Հովիվների պար», «Կատակպար», «Յարխոշտա», «Գորանի» «Շիրակի», «Բերոյապար» և բազմաթիվ այլ ստեղծագործությունների՝ Սերյոժայի գեղարվեստական բարձրորակ կատարումները:

Եկավ Մեծ հաղթանակի մայիսը: Լենինականում ամենուր խնդության և բարի գալուստի սեղաններ բացվեցին: Սակայն Էլոյանների տանը ցընծության գավաթ չբարձրացավ, չէ որ երիտասարդ երգիչը 1944-ի հունիսին թշնամու գնդակից զոհվել էր Խարկովի մոտ՝ կարոտ խաղաղ երկնքի, խաղաղ բեմի և իր փոքր երեխաներին:

ԱՐՄԵՆԱԿ ԷԼՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Գրիգորյան Սասուն**— «Աղջիկը վերականգնում է հոր դիմանկարը. ՀՁ, Ե., 9 մայիսի 1979 թ., № 19, էջ 5:
2. **Գրիգորյան Սասուն**— «Հայրենի հողը՝ վերջին բեմ», Ավանգարդ, 9 մայիսի 1982 թ.:
3. **Գրիգորյան Սասուն**— «Հայրենի հողը՝ ռազմաբեմ», Թատ. Երևան, 1985 թ., № 9, էջ 9:

ԴԱՇՆԱԿԱՀԱՐ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

ՎԱԼԵՆՏԻՆ ՄԻԽԱՅԻԼԻ ԻԶՐԱԻԼՈՎ (ԻՍՐԱՅԵԼՅԱՆ) (1907—1941)

Նրան բախտ չվիճակվեց լինել իր պապերի ծննդավայրում, Ակրոպոլիսից դիտել Աթենքն ու Էգեյան ծովը: Դեռ փոքրուց հույն տղան հրապուրված էր հունական առասպելներով, Հոմերոս էր սիրում կարդալ և Էսքիլես, Անթեյի պես անտես նա ուժ էր առնում հողից, ամառային արձակուրդների ժամանակ պատանի ալպինիստների հետ երազում էր թափառել Գառնիում և Գեղարդում, գնալ Զվարթնոց ու Սևան: Ու թեև նա ծնվել էր հայոց Ալեքսանդրապոլ (այժմ Լենինական) քաղաքում, ուր դարեր շարունակ Անահիտ է պաշտվել և Վահագն, բայց նրա հոգին թափառում էր իր համար այնքան հեռու-հեռու՝ Զևսի ու Աֆրոդիտեի հայրենիքում: Աշխույժ էր, ընդունակ ու կատակասեր: Ծնողները՝ Միխայիլ Անաստասովիչն ու Մարիա Գրիգորևնան, իրենց սպորտասեր տղային հազիվ կարողացան համոզել, որ հանախի երաժշտական սալոն-ստուդիա: Նինա Գրիգորի Գյանջումովայի դասարանում էր սովորում Վալենտինը:

— Երաժշտական ստուդիան ավարտելուց հետո,— պատմում է տնտեսագետ Ելենա Միխայլովնան,— եղբայրս ընդունվեց Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիա, ուր 1928—1932 թվականներին սովորեց դաշնամուրի բաժնում:

Օլգան ու Յուլիան հիշում են, թե դասերից հետո առանց այդ էլ նեղ իրենց սենյակում Վալենտինն ու իր հայ ընկերները ինչպիսի «համերգներ» էին տալիս: «Հեռվից երաժշտության ձայն լսողը կկարծեր, թե մեր տանը հարսանիք է,— սրտաճմլիկ պատմում է Յուլիան և ավելացնում:— Եղբորս արխիվում այսօր էլ դեռ պահպանվում են Կոմիտասի, Չայկովսկու, Բեթհովենի, Հենդելի, Մոցարտի, Գլինկայի բազմաթիվ ստեղծագործություններ: Բանակ գնալուց առաջ Վալենտինը դրանք պահ է տվել մորս, որ վերադարձից հետո օգտագործի...»:

Ահա Պուշկինի դիմանկարով մի տետր. այնտեղ դասաբաշխումներ և դասացուցակներ են: Պարզվում է, որ Վ. Իզրաիլովը կոնսերվատորիան ավարտելուց հետո որպես ուսմասվար և դաշնամուրի դասատու աշխատել է Երևանի Ավ. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցում: Հայկական, հունական, ռուսական և եվրոպական դասական երաժշտության՝ Իզրաիլովի դաշնամուրային վարպետ կատարումները մեկ անգամ չէ, որ հուզել են երևանյան և մոսկովյան երաժշտասերներին: 1937—1940 թվականներին Հոկտեմբերյան հեղափոխության և Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու քսանամյակների կապակցությամբ, ինչպես վկայում են դասընկերները, դաշնակահար-մանկավարժ Վլ. Իզրաիլովը մենահամերգներ է տվել իր ծննդավայրում՝ Լենինականում և Երևանի կոնսերվատորիայի դահլիճում: Նա Հայրենական մեծ պատերազմին մասնակցեց որպես հայկական դիվիզիայի զինվոր: Թշնամու դեմ կռվեց Կերչում, Թամանում և Սև ծովի մերձափնյա քաղաքներում: 1941 թ. դեկտեմբեր: Թշնամու գերակշռող ուժերը ստիպում են, որ խորհրդային զինվորները ժամանակավորապես ետ նահանջեն: Կերչից Նովոռոսիյսկ զինվորներ տեղափոխող և դեսանտ կազմակերպող խորհրդային ռազմանավի վրա էր նաև Վալենտին Իզրաիլովը: Նավը Նովոռոսիյսկի ծովափ չհասած թշնամու կողմից ենթարկվեց ուժեղ ռմբակոծման, այլոց հետ զոհվեց և 34-ամյա երաժիշտը՝ չհասցնելով ափ դուրս գալ և փոստ գցել քիչ առաջ (31.12.1941 թ.) գրած նամակը: Նրանում հայաստանցի հույն զինվորը իր մորը՝ Մարիա Գրիգորևնային գրում է. «Մամա ջան, քեզ պինդ պահիր: Ես քո համար, քույրերիս համար, պապայի և Գրիշայի համար կյանքս չեմ խնայի, թշնամու դեմ կկռվեմ այնքան, մինչև տեսնեմ նրա վերջին զինվորի կործանումը: Ես հայկական դիվիզիայում նորից շրջապատված եմ ազնիվ ընկերներով ու հին ծանոթ տղաներով՝ Լենինականից և Երևանից: Ջոկի հրամանատար

եմ, ոուսերեն իմանալը ինձ այստեղ շատ է օգնում: Մի երկու անգամ էս դարդ ու ցավի մեջ համերգ ենք տվել, քաղաքացի կողմից պարգևատրվել եմ 100 հատ լրացուցիչ փամփուշտով: Մամա ջան, բանակում դրանից թանկ նվեր չկա. չէ որ նրանով կարող ես քեզ սպանողին դու սպանել: Ինձ հետ է ծառայում նաև Սիրուն Լևոնը՝ Թոթովենցի տղան, ճիշտ է՝ նա նկարիչ է, բայց լավ էլ նվագում է: Կրակելուց էլ անպայման մի նեմեց գլորում է: Քանի անգամ է նա ինձ մահից փրկել, ազնվագույն տղա է: Մամա ջան, իմ մասին մի մտածեք, մի օր հանկարծ դուռը կբացես, և ես կկանգնեմ քո դեմ: Երանի այդ օրը: Համբուրում եմ քեզ, Լենային, Օլգային, Յուլային, իմ քաղցր Գրիշային:

Կգանք հաղթանակով: Միշտ և հավիտյան

Քեզ **Վալենտին:**

31 դեկտեմբերի, 1941 թ.»:

Գործող բանակում, ծովի վրա գրած հույն զինվորի այս նամակը մահից փրկված նրա ռազմընկերները մի քանի այլ փաստաթղթերի հետ ուղարկեցին Իզրաիլովի ծնողներին:

Դաշնակահար-մանկավարժ Վալենտին Իսրայելյանին բախտ չվիճակվեց նորից մտնել լսարան, նորից բռավոներ և ծաղիկներ տանել երևանյան բեմերից, նորից ինչեցնել դաշնամուրի ստեղները ու նոր-նոր ելույթներով ոգեշնչել իր ուսուցիչներին և աշակերտներին: Նա հանրապետության ռադիոյի սիրված ու գնահատված մենակատարներից էր, նրա դաշնամուրային վարպետ կատարումները բազմիցս ձայնագրվում էին և հաղորդվում ռադիոյով, տոնական համերգների ժամանակ սևահոնք ու խաժաչյա արվեստագետին որպես վիրտուոզ դաշնակահարի հանախ էին ունկնդիրները բեմ հրավիրում...

Վալենտին Միխայիլի Իզրաիլովի (Իսրայելյան) անունն այսօր անմահացել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի նախասրահի մարմարե հուշատախտակին, նրա երախտապարտ սաների, հարազատների և ընկերների սրտում:

ՎԱԼԵՆՏԻՆ ԻԶՐԱԻԼՈՎԻ ՄԱՍԻՆ

Գևորգյան Դ.—Զոհված ուսանող մարտիկների հիշատակին, ՍՀ, 7 հունվարի 1959, № 5, էջ 4:

ԴԵՊԻ ԲԱՐՁՈՒՆԴԸ ՄԱՀԻ ՈՒ ՓԱՌՔԻ

ՊԱՐՈՒՅՐ
ԵՐՎԱՆԴ
ԻՍԱՀԱԿՅԱՆ
(1910—1942)

Խաչիկ Դաշտենցի հետ Ավետիք Իսահակյանի Իրինդ գալը, Սեմալենց Գալուստի, Խաչիկի, հովիվ Խոդեդանի, տարեց ու ջահել սասունցիների հետ նստել-վերկենալը, նրանց հետ Սուլթանապատի աղբյուրներին այցի գնալը, Զաթինդարի ձորում Իսրոյի և Ադամի[1] մասին ժլլելը (զրուցելը) տոն էր Արագածի փեշին ծվարած Սասնա նորածուխ շենների համար:

Գրական թոթովանքներս զուգադիպեցին վարպետի իրինդյան վերջին շրջագայությանը: Առաջին բանաստեղծը, որին տեսա աշակերտ ժամանակ, Վարպետն էր: Մեր գյուղից Իրինդ ոտով 10—15 րոպեում հասա: Ու թեև իմ ցանկությունը Մեծ բանաստեղծին տեսնելն էր, բայց սիրտ չարի:

Հորաքույր Ռեհանը իմացավ թե չէ, Ազատին հորդորեց. «զԱրշոն կանչե, թող գդղան ցցու Վարբեդին»: Հորաքույրն այնքան մտերմիկ էր խոսում Իսահակյանի մասին, կարծես նա իր եղբայրն էր, հասարակ մի գյուղացի: Ինչ իմանայի, որ պատերազմի դաժան տարիներին Վարպետն Իրինդում է ապրել, ծանոթ է ամեն տան և անգամ լավաշից ջոկում է, թե ով է թխել: Հորաքույր Ռեհանը նրան մածունով ու սերով, գրրկով ու ճմուռով շատ էր հյուրասիրել: «Դարդ չենիս,— ասում էր նա,— եթե Սոֆիկը լէ էգերը, ընդրը միճոցով գքզի գլդանիմ խոչ Վարբեդ...»: Հետո իմացա, որ Սոֆիկը տիկին Սոֆին է, վարպետի կինը: Ուրախացա, որ հորաքույրս տիկ.

[1] Իսրո, Ադամ— ազգային-ազատագրական պայքարի մարտիկներ, սասունցի հայդուկներ:

Սոֆիի և Արշոյի[1] միջոցով ինձ ներկայացրեց Մեծն Վարպետին.

— Իմ ախպոր տղեն է: Պան-ման գըկրե: Վարբեդ, զքու ծեռ վրեն պահե... Ուր բաք (խոսքը հորս մասին էր) պատերազմի ժամանակ զոհվեր է...

Ամոթից քիչ է մնում լեզուս կապ ընկնի: Դողում եմ: Վարպետը զգում է իմ վիճակը, ձեռքիցս բռնած մոտեցնում է իրեն, շոյում գանգուրներս և ինձ ծանոթացնում ինձնից 5—6 տարով փոքր մի տղայի հետ, հիշեցնելով՝ թոռս է: Հետո էլ թե՝ գործերիցդ մի բան ասա, լսենք: Ամոթից շնչել չեմ կարողանում, ուր մնաց, թե արտասանել: Մի կերպ ինձ հավաքելով՝ հազիվ կմկմում եմ.

Սասնա լարն է իմ հոգին,
Սասնա պարն է իմ հոգին,
Թող բարբառեմ ես հավերժ,
Ծովասարն է իմ հգին:

— Կեցցե՛ս, լա՛վ տղա ես: Քեզ սասունցո՛ւ պես պահիր: Մեր պատմությունն ու գրականությունը լա՛վ սովորիր: Բարբառը չմոռանաս: Որ կգաս Երևան, մեր տունն էլ արի, Ավիկը լավ տղա է, քեզ ընկեր կլինի:

Ոգևորությանս սահման չկա: Թիկունքիս Խաչիկ Դաշտենցն ու հորաքույր Ռեհանն են: Յոթերորդ երկնքում է հորաքույրս: Ի նշան Վարպետի ջերմ ընդունելության նա Ավիկին ու ինձ հրավիրում է իրենց տուն, հյուրասիրում մածնահատիկով և «թրժը սերով»: Մեծ հաղթանակի 10-րդ տարին է: Բոլոր զրույցները սկսվում և ավարտվում են գաղթով-կոտորածով կամ Հիտլերին անիծելով ու հայհոյելով:

— Մեր ցեղն էլ քաջ կռվողներ է տվել,— զրույցի մեջ է մտնում Վարպետը և թվարկում մի քանի անուն, որոնցից հիշողությանս մեջ հազիվ մնացել են՝ Իսահակ, Աբաս, Երվանդ, Պարույր: Այդ օրից անցել է 35 տարի: Սեղանիս է Վարպետի «Հավերժ սիրելի Պարույրի» արխիվը, որը ժամանակավորապես ինձ է տրամադրել նրա դուստրը՝ Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի ուսուցչուհի Լիլյա Իսահակյանը: Եվ որպեսզի զոհված երաժիշտ մարտիկի դիմանկարը լիարժեք ներկայացվի, ես նրա արխիվանյութերը բաժանել եմ հինգ մասի.

1. Պարույրի նախնիները
2. Պարույրի ծնունդն ու ուսումնառությունը
3. Աշխատանքային կենսագրությունը:
4. Մարտ հանուն Հայրենիքի
5. Մատենագիտություն՝ նրա մասին:

Պարույրի նախնիները բասենցիներ են: Իրոք որ, ինչպես Վարպետն էր ասում, իրենց ցեղն էլ քաջ կռվողներ է տվել: «Հեքիաթ արևի տակ» (1912 թ.) գրքի հեղինակը՝ բանաստեղծ, արձակագիր Իսահակ Իսահակյանը, զենքը ձեռքին եղեռնի տարիներին կռվել է օսմանյան վայրագների դեմ և զոհվել 1916 թ., քսաներեք տարեկան հասակում: Իսահակի հայրը՝ Գևորգը, Վարպետի ավագ եղբայրներից էր: Նա վառ հայրենասիրությամբ էր դաստիարակել նաև իր մյուս որդուն՝ Աբասին: Վերջինս 1918—1920 թվականներին հերոսաբար է մարտնչել Ճիրակ ներխուժած թուրք բարբարոսների դեմ: Իսահակյանի մյուս եղբորորդին՝ Ռուբենի տղան՝ Նիկողայոս Իսահակյանը, զինվորական կրթություն էր ստացել Կիևում: 1917-ին այստեղ ավարտել էր զինդպրոցը, մեկնել Հայաստան և զենքը ձեռքին կռվել Սարդարապատի ճակատամարտում:

«Ավանգարդ» թերթի 1978 թ. օգոստոսի 11-ի համարում տպագրված՝ Մ. Նարյանի «Իսահակյանների գերդաստանը» հոդվածից տեղեկանում ենք, որ Վարպետի մեկ այլ հարազատ՝ Աշոտ Իսահակյանը, ևս «օտար ամայի ճամփեքի վրա» կռվել է գերմանացի ելուզակների դեմ, արժանացել մարտական պարգևների և մեդալների:

Պարույր Իսահակյանի արխիվի ամենաուշագրավ նյութերից են իր հորը ներկայացնող հազվադեպ որակյալ լուսանկարներն ու մի վկայական՝ տրված 1914 թ. դեկտեմբերի 16-ին № 370 դաշտային զինհոսպիտալի գլխ. բժշկի կողմից (Ալեքպոլ): Նրանում կարդում ենք.

Удостоверение

Выдано от 370-го первого запасного госпиталя в том, что старший унтер офицер 155-пехотного Кубинского полка Ервант Исааков, находился в 370 запасном полевом госпитале на излечение от полученного сквозного огнестрельного ранения левого предплечья от 6-го по 21-е ноября и умер 21-го ноября от раневого столбняка, что подписью и приложением казанной печали удостоверяется.

Доктор медицины, Коллежский советник **Фролов.**
Старший ординатор — Декарь — **Шустов.**

[1] Արշոն Արշակ Քոթանյանն է, հետագայում դպրոցի դիրեկտոր էր Իրինդ գյուղում:





Պարույրի հայրը՝ ցարական բանակի ավագ սպա, 1914 թ. նոյեմբերի 21-ին թուրքական գնդակից զոհված Երվանդ Իսահակյանը և նրա մահը վավերացնող վկայագիրը:

Ցարական բանակի սպա Երվանդ Իսահակյանը թուրքերի դեմ կռվել է և զոհվել Ալեքսանդրապոլում: Նրա քաղաքացիական արտակարգ հագուստ-կապուտը, կնոջ հետ իրենց պսակադրության լուսանկարը և այլ փաստաթղթեր վկայում են, որ նա եղել է վերին աստիճանի զարգացած և բարեկիրթ անձնավորություն: Երբ Երվանդը զոհվեց, նրա որդին՝ Պարույրը, ընդամենը յոթ տարեկան էր:

Պարույր Երվանդի Իսահակյանը ծնվել է 1910 թ. Լենինականում: Երևան տեղափոխվելուց հետո ապրել է Սունդուկյան փողոցի № 54 դ շենքում (այժմ Լենինյան պողոտայի վրա գտնվող Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի շենք):

Դեռ Լենինականում, միջնակարգ դպրոցում էր սովորում Պարույրը, երբ որպես փականագործի աշակերտ աշխատանքի ընդունվեց Լուկաշինի անվան նորակառույց բամբակամանվածքային գործարանում: 1926 թ. հուլիսի 15-ից մինչև 1928 թ. սեպտեմբերի 25-ը[1] Պարույր Իսահակյանը իրեն դրսևորեց ոչ միայն որպես ուշիմ և աշխատասեր պատանի, այլև լուրջ և կազմակերպչական ջիղ ունեցող երիտասարդ: Նա այստեղ անդամագրվեց ՀամԼԿԵՄ-ին: 1928 թվականին Պ. Իսահակյանն ընդունվում է Երևանի պետհամալսարանի տեխնիկական ֆակուլտետի առաջին կուրս: Մի տարի ուսանելուց հետո 18-ամյա Պարույրը տնտեսական վատթար պայմանների պատճառով թողնում է ուսումնառությունը և որպես բանվոր աշխատանքի անցնում մեկ Երևանի սառնարանի շինարարությունում, մեկ՝ ձեթօճառ կոմբինատում և այլուր[1]:

[1] Տես Պ. Ի.-ի անձնական արխիվում այդ գործարանի կառուցման ժամանակավոր կոմիտեի 1928 թ. հոկտեմբերի 22-ին տրված № 303 վկայական-տեղեկանքը:

Պարույր Իսահակյանը (2-րդ շարք, ձախից 3-րդը) Երևանի պետհամալսարանի 1928 թ. տեխֆակուլտետի ուսանողների հետ:

Ամեն տեղ Պարույրը փայլում էր ոչ միայն իր աշխատանքով, այլև կարգապահությամբ և հասարակական ակտիվ գործունեությամբ: Պ. Իսահակյանի դստեր մոտ, իր հոր անձնական արխիվում, շարունակում են ապրել երկու կարմիր գրքույկներ, որոնց վրա տպագրված է «Հարվածայինի վկայական», մեկը տրված է ձեթօճառ կոմբինատից, մյուսը՝ Երևանի պետկոնսերվատորիայից: Կոնսերվատորիայում տրված «Հարվածայինի վկայականից» իմանում ենք, որ դեռ 1934թ. Պարույրը եղել է ԽՄԿԿ անդամության թեկնածու: 1933-ին ընդունվելով կոնսերվատորիա (լարային բաժին, կոնտրաբասի դասարան)՝ Պ. Իսահակյանը նորից ամառային արձակուրդների ժամանակ աշխատել է շինարարությունում կամ երաժշտական խմբերին միացած մեկնել հեռավոր շրջաններ, բանասացներից հավաքել և գրառել երաժշտական նշխարքներ, մոռացությունից փրկել բանահյուսական բազմաթիվ գոհարներ: 1936 թ. օգոստոսի 10-ին տրված ՀԽՍՀ ժողկոմխորհին կից արվեստի վարչության № 6-00 տեղեկանքը վկայում է.

«ՀԽՍՀ պետական կոնսերվատորիայի ուսանող ընկ. Պարույր Իսահակյանը հանդիսանում է Ծամշադինի շրջանի երաժշտական ֆոլկլորի հավաքման էքսպեդիցիայի անդամ»:

Արվեստի վարչության պետի տեղակալ Ս. Ամիրխանյանի և պետկոնսերվատորիայի տնօրեն Վ. Սամվելյանի ստորագրած բազմաթիվ հրամանագրեր խոսում են այն մասին, որ կոնսերվատորիայի շնորհառատ ուսանող, կոմպոզիտոր Մ. Զաղալյանի և այլոց հետ Պարույրը մասնակցել է հանրապետության երաժիշտ բանահավաքների գործունեությանը, կորստից փրկել հայկական ժողովրդական բազմաթիվ երգեր:

Պ. Իսահակյանի աշխատանքային կենսագրությունը նրա ուսումնառության տարիներից էլ առաջ է սկիզբ առել: Փականագործ, շինարար բանվոր, երաժիշտ, բանահավաք, 1936 թ. դեկտեմբերի 9-ից մինչև 1938 թ. սեպտեմբերի 1-ը՝ Գ. Սունդուկյանի անվան պետթատրոնում երաժիշտ տեսուչ: Թատրոնում էլ է Պ. Իսահակյանն իր գիտելիքներով և աշխատասիրությամբ փայլել, դրա վառ ապացույցներից է թատրոնի 1937 թ. դեկտեմբերի 27-ին տրված № 35 հրամանը. «Թատրոնի երաժշտական մասի վարիչ և դիրիժոր ընկ. Աշոտ Սաթյանի հիվանդության պատճառով u/թ դեկտեմբերի 27-ին «Արսենն» ներկայացումը չձախողելու նպատակով, «Արսենի» երաժշտությունը վարելու համար Ա. Սաթյանին փոխարինող եմ նշանակում նվագախմբի տեսուչ Պարույր Իսահակյանին: Առաջարկում եմ

[1] Տես անձնական գործում № 5284 տեղեկանքը՝ տրված 16.10.1929 թ.:

բոլոր երաժիշտներին ներկայացման ընթացքում լսել ընկ. Պ. Իսահակյանի ցուցումները:

Պետթատրոնի դիրեկտոր՝
Տ. Ճամիրխանյան»:

Փոխարինել Աշոտ Սաթյանին: Սա ինքնին նշանակում է ունենալ ոչ միայն գիտելիքների մեծ պաշար, մեծ կազմակերպչական ձիրք, այլև հեղինակություն: Եվ Պարույրն ուներ: Թեև վերջին կուրսի ուսանող էր, բայց արդեն մասնակցում էր հանրապետությունում աչքի ընկնող երաժշտական գրեթե բոլոր միջոցառումներին: Գալարափող նվագողների մի խմբանկարում ճանաչողները առաջին հայացքից այսօր էլ կարող են անմիջապես գտնել իրենց սիրելի, սրադեմ, լայնալանջ, պարթևահասակ, արծվաքիթ Պարույրին: Ֆիզիկական աշխատանքն ու սպորտը այնպես էին նրան կոփել, որ երիտասարդ երաժիշտը աչքի էր ընկնում ոչ միայն իր նուրբ ներաշխարհով, ընկերասիրությամբ, այլև արտաքինով: 1937 թ. մայիս: ՀԿԿ Ալավերդու շրջկոմը մի տեղեկանք է ուղարկում Երևանի պետական կոնսերվատորիա: Նրանում կուսշրջկոմի քարտուղար Գ. Խաչատրյանը գրել է. «Տրվում է սույնը պետկոնսերվատորիայի երաժշտական բրիգադայի բրիգադավար՝ ընկ. Պարույր Իսահակյանին առ այն, որ նրա բրիգադան ս/թ մայիսի 7-ին եղել է Ալլահվերդում, որտեղ ունեցել է 2 ելույթ, մեկը՝ կուսակտիվի, մյուսը՝ Մանեսի աշխատավորության համար: Բացի այդ խումբը ելույթ է ունեցել նաև Լամբալուի «Ծխախոտագործ» սովխոզի բանվորների համար»:

Արխիվային բազմաթիվ վավերագրեր այսօր հաստատում են, որ Պ. Իսահակյանը եղել է ոչ միայն շնորհառատ գալարափողհար, այլև հասարակական ձեռներեց և եռանդուն գործիչ, ամեն կերպ նպաստել հայ երաժշտական մշակույթի զարգացմանն ու պրոպագանդմանը: Թե կյանքը ինչպիսի ճամփաներով, ուր տարավ նրա ընկերներին, որտեղ են այսօր Գրիգոր Ղարագյոզյանը, Ռուբեն Հովհաննիսյանը, Աղասի Հովսեփյանը, Կարո Ղարագյոզյանը, Գարեգին Հովհաննիսյանն ու Ժորա Խումարյանը— մեզ պարզ չէ, բայց այն լուսանկարը, ուր պատկերված է նաև Պարույր Իսահակյանը, մեկ անգամ ևս հուշում է՝ գնալ Պարույրի հետքերով, իմանալ՝ որտեղ է աշխատել նա՝ կոնսերվատորիայի ԼԿԵՄ կազմ. քարտուղարը և կոնսերվատորիան ավարտելուց հետո ինչպիսի հաջողությունների է հասել: Ահա Երևանի Կոմիտասի անվան պետկոնսերվատորիայի 1938 թ. փետրվարի 23-ի № 45 հրամանագիրը. «Ս/թ փետրվարի 1-ից Պարույր Իսահակյանին նշանակել երաժշտական գրագիտության, երաժշտության թեորիայի և սոլֆեջոյի դասատու: Տրամադրել հետևյալ ժամերը.

Երաժշտական գրագիտություն	—96 ժամ
Եր. թեորիա	—192 ժամ
Սոլֆեջո	—192 ժամ
ընդամենը՝	480 ժամ
ամսական աշխատավարձը՝	221 ռուբլի:

Հիմք. ուսմասվարի գրությունը՝ դիրեկտորի մակագրությամբ»:

Զրուցում ենք կոնսերվատորիայի այն ժամանակվա դիրեկտոր, երաժշտագետ Սամսոն Գասպարյանի հետ և հետաքրքրվում, թե ուրիշ ով կա, որ կարող է լավ ճանաչել Պարույրին: Նա թե՝ Դոմբանը: Նա այդ տարիներին կոնսերվատորիայի ուսմասվարն էր: Կոմպոզիտոր Արամ Քոչարյանը: Նրա մոտ՝ Ռ. Մելիքյանի անվան երաժշտական գիտահետազոտական կաբինետում, Պարույրն աշխատել է: Երաժշտական ուսումնարանում, ֆիլհարմոնիայում շատերը նրա հետ սովորել են, աշխատել: Դիմիր նրանց...

Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում ենք: Զրուցում ենք ուսումնարանի տնօրեն, կոմպոզիտոր Մարտին Մազմանյանի և ուսմասվար Գոհար Հարությունյանի հետ: Պարզվում է, որ Գոհար Հարությունյանը ոչ միայն քաջ գիտի Պարույրին որպես երաժշտի և հայրենակցի (լենինականցու), այլև մոտիկից ճանաչում է նրա միակ դստերը՝ Լիլյա Իսահակյանին, որն ապրում է հենց նույն հասցեում. ուսումնարանի շենքում (մուտքը Ամիրյան փողոցից):

Հանդիպում ենք Լիլյային: Նա ապրել է տատի՝ Պարույրի մոր՝ Շուշանիկի խնամքով, ստացել բարձրագույն կրթություն, ընտանիք կազմել և իր երեք երեխաներին ավանդել՝ «Այս թղթապանակը ամուր և զգույշ կպահե՛ք: Այնտեղ հայրիկիս արխիվն է: Ձեր պապիկի: Նա զոհվել է Մեծ հայրենականում»: Ե՛վ Սամվելը, և՛ Հռիփսիկը, և՛ Արթուրը այսօր քաջ գիտեն, որ սա «Պարույր պապի գործերն են»: Լիլյան ռուսաց լեզու և գրականություն է դասավանդում Երևանի Զայկովսկու անվան երաժշտական դպրոցում: Նա հին ու նոր լրագրերից, դեսից-դենից հավաքում է ամեն մի փաստ, լուսանկար, հոդված և իր համար վերականգնում զոհված հոր դիմանկարը: Ահա մի լուսանկար. Թբիլիսիից Ալեքսանդր Օգանեզաշվիլու անձնական արխիվը Հայաստան տեղափոխելու գործուղումից վերադարձել է Ռ. Մելիքյանի անվան երաժշտական գիտահետազոտական կաբինետի դիրեկտորի տեղակալ Պարույր Իսահակյանը և, կարոտած, իր 9-ամյա դստերը գիրկն առել: Նկարի հետևում գրված է. «Լիլյա՛, իմ կյանք: 28 դեկտեմբերի, 1940 թ.»:

1940—1941 թվականներին Նալբանդյան փողոցի № 106 տանը հաճախ կարելի էր տեսնել երաժիշտների, բանահավաքների, կատարողների, որոնք գալիս էին այստեղ՝ Ռ. Մելիքյանի անվան երաժշտական գիտահետազոտական կաբինետ, հանդիպում Պ. Իսահակյանին, նրա տնօրինությանը հանձնում աշխարհի տարբեր մասերում սփռված հայ կոմպոզիտորների և երաժիշտ կատարողների անձնական արխիվները: Հետազոտական-հավաքչական այդ աշխատանքների շնորհիվ է, որ այսօր ԳԱ արվեստի ինստիտուտն ու Գրականության և արվեստի Ե. Չարենցի անվան պետական թանգարանը ունեն գիտահետազոտական-երաժշտական հարուստ ֆոնդեր: Արխիվային մեկ այլ փաստաթուղթ խոսում է այն մասին, որ Պ. Իսահակյանը 1939 թ. Մոսկվայում մասնակցել է հայկական մշակույթի տասնօրյակին և Հոկտեմբերի 28-ին ելույթ ունեցել Մեծ թատրոնում տեղի ունեցած հանդիսավոր երեկոյի համերգին որպես գալարափողհար:

Հոկտեմբերյան հեղափոխության 22-րդ տարելիցին նվիրված այդ ջազ-նվագախմբի համերգը ղեկավարել է Գ. Ի. Կիտայգորոդսկին: Մոսկվյան այդ տասնօրյակի մի քանի հրավիրատոմսեր այսօր Պ. Իսահակյանի արխիվային թանկարժեք վավերագրերից են:

— Ամենուր պայծառ հետք է թողել Պարույրը,— ասում է կոմպոզիտոր Գրիգոր Հախինյանը և հուշում, որ կոնսերվատորիայի նախասրահում, մարմարե հուշաքարին քանդակված է նաև Պ. Իսահակյանի անուն-ազգանունը որպես զոհված երաժիշտ մարտիկի:

1941-ի հունիս: Եսենտուկիում հանգստացող Վարպետը հանուն վրեժի և ատելության իր ցասման և մարտակոչի ձայնն է բարձրացնում. ծնվում է նրա «Ռազմակոչ» բանաստեղծությունը: Մի քանի օր անց Երևանում էր: Հորեղբորը ցտեսություն ասելու համար Պարույրը Լիլյայի ձեռքից բռնած հյուր է գնում: Դուռը բացում է հորեղբորորդին՝ Վիգենը: Վարպետը Պարույրին հրավիրում է իր աշխատասենյակն ու նրան կարդում մի հատված «Ռազմակոչից».

Երևանի Կոմիտասի անվան պետկոնսերվատորիայի գալարափողհարների բաժնի մի խումբ ուսանողներ: Վերջին շարքում կանգնած է (ձախից առաջինը) Պարույր Իսահակյանը:

...Էյհե՜յ, լսեցե՛ք, վեհ հայրենիքի
Կորիծ զավակնե՛ր, ժողովուրդնե՛ր քաջ,
Ելե՛ք, զարթնեցե՛ք, կանգնեցե՛ք արթուն,
Գիտցե՛ք, քնում են գետերն ու քամին,
Սակայն չի քնում երբեք թշնամին:
Ահա ոճրամիտ մեր ոսոխը չար
Շղթա է բերում, լուծ ու կապանքներ՝
Ընկճելու ազատ մեր եղբայրներին
Եվ անարգելու Հայրենիքը մեր:

Էյհե՜յ, լսեցե՛ք, ճայն տվեք իրար,
Ամե՞նքդ եք ոտքի, մարդ քնած չկա՞,
Շուտ հագե՛ք, կապե՛ք զենքեր ու զրահ,
Գոտեպնդվեցե՛ք ատելությամբ վառ,
Գոտեպնդվեցե՛ք անձնազոհ կամքով,
Գոտեպնդվեցե՛ք ահեղ վրեժով,
Շառաչե՛ք ոռմգին, կաղնինե՛ր հզոր,
Խոլ վրնջացե՛ք, նժույգնե՛ր խիզախ,
Մրրկի նման զարկեցե՛ք շեփոր,
Դեպի ռազմի դաշտ, դե՛պ հերոսացում,
Դեպի ռազմի դաշտ, սուրբ դրոշի տակ
Դեպի բարձունքը մահի ու փառքի,
Կանեցե՛ք հեռու թշնամուն վայրագ,
Մեր խրծիթներից, մեր հնձաններից,
Մեր արտ ու կալից վանեցե՛ք հեռու:
Հավե՛րժ պիտ մնա Հայրենիքը մեր,
Հզոր ու ազատ և հավերժ կանգուն
Մեր իդեալների սուրբ դրոշի տակ:
Դեպի՛ ռազմի դաշտ, դե՛պ հերոսացում,
Դեպի բարձունքը մահի ու փառքի...

— Հորողպե՛ր, ըդորով ընձի բա՞ն կհասկըցնես,— փարվելով Ավ. Իսահակյանին՝ կատակախառն հարցնում է Պարույրն ու ավելացնում.

— Եկել եմ Ձեզ ցտեսություն ասելու, վաղը կռիվ պիտի էրթամ...

«Հայրիկի աչքերը արցունքով լցվեցին,— պատմում է կինոռեժիսոր Վիգեն Իսահակյանը:— Նա գրկեց Պարույրին, համբուրեց և ասաց. «Մեր ցեղը քաջ կռվողներ է տվել, նրանց պատիվը բարձր կպահես: Հիշի՛ր՝ Երվանդի տղան ես»: Պարույրը լցվեց, շուռ եկավ հայրիկի կողմն ու ավելացրեց. «Մեր սուրը փառքով կդնենք պատյան»: Գնաց ու էլ չեկավ: Նրա քաջագործությունների և զոհվելու մասին մենք իմացանք մամուլից և ռադիոյից»...

1941 թ. սեպտեմբերի 19: Արդեն լրիվ ձևավորված 408-րդ հայկական դիվիզիան պատրաստ է մարտի: Դիվիզիայի ղեկավարությունը ստանձնել է 1918 թ. ԽՄԿԿ անդամ, քաղաքացիական կռիվների բովով անցած աննկուն մարտիկ, Կարմիր դրոշի շքանշանակիր, գնդապետ Պավել Նիկոլայի Կիցուկը: Կոմիսարն է նախկին քաղաշխատող Իվան Նիկոլայի Գրիշինը, շտաբի պետը՝ մայոր Լեոնիդ Ալեքսանդրի Կոլոբովը: 1942 թ. մարտ-ապրիլ ամիսներին դիվիզիան վերակազմավորվեց և ստացավ 408-րդ հայկական հրաձգային դիվիզիա անվանումը: Այն կազմված էր 11500 մարդուց, որից 11160-ը հայեր էին, 215-ը՝ ռուսներ, 63-ը՝ ուկրաինացի, 62-ը՝ եղբայրական մյուս ազգերից[1]:

Պարույր Իսահակյանը աշխատանքի ժամին:

Հետադարձ հայացք գցելով դիվիզիայի պատմական ուղուն՝ ընթերցողը բացի Պարույր Իսահակյանից, որը եղել է 462-րդ առանձին մոտոհետախուզական վաշտի հրամանատարը, կիմանա, որ այդ դիվիզիայի տարբեր ստորաբաժանումներում են ծառայել ռեժիսոր Գուրգեն Մարինոսյանը, գրողներ Արտյոմ Շահբազը, Գևորգ Հայրյանը, Արամ Ինճիկյանը, Մելիք Քոչարյանը, Արմենակ Թամազյանը, Արսեն Հովհաննիսյանը (հետո տեղափոխվել է Թամանյան դիվիզիա), լրագրողներ Խաչիկ Մանոյանը, Սուրեն Գրիգորյանը, Եղիշե Հովհաննիսյանը, Երվանդ Խալեյանը, Արշավիր Հակոբյանը (դիվիզիայի «Հանուն հայրենիքի» թերթի խմբագիր), կինոօպերատոր Արտաշես Զալալյանը, կոմպոզիտոր Միքայել Զաղալյանը, երաժշտագետ Ալեքսանդր Թադևոսյանը և շատ ու շատ ուրիշներ:

---

[1] Саркисян С. М. — 408-ая армянская стрелковая дивизия в битве за Кавказ, Е., 1985, стр. 7—8.
Գրքի բազմաթիվ էջերում խոսվում է Պարույր Իսահակյանի մասին:

— Պարույրի վերքը ծանր էր,— պատմում էր դիվիզիայի վիրաբույժ. բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անդրանիկ Ճաղարյանը:— Նա գլուխը բինտով փաթաթած նորից նետվեց մարտի: 1942 թ. հոկտեմբերի 5—12-ին իր վաշտի հետ անձնուրաց մաքառեց թշնամու դեմ 977,0 բարձունքը Գունայկայում անվնաս պահելու համար: Առաջին անգամ վիրավորված հրամանատարի վերքը կապեց վաշտի քաղղեկ Կիրակոս Գևորգյանը, երկրորդ անգամ՝ ադիգեյցի Շամիլ Ուջակովը:

Արշ. Հակոբյանը գործող բանակում 1942 թ. հոկտեմբերին գրած իր «Խիզախ հետախույզները» ակնարկում դրվատանքով է խոսել Պ. Իսահակյանի և նրա ռազմընկերներ Արմենակ Փարսադանյանի (Ղափանից), քաղղեկ Կիրակոս Գևորգյանի և սերժանտ Սարգիս Նավասարդյանի մասին: Նրանք ռազմական, տակտիկական և ֆիզիկական ուժի գործադրմամբ թշնամուն կարողացել են պատճառել մեծ վնաս, ապահովել 977,0 բարձունքի անառիկությունը մինչև լրացուցիչ ուժեր ստանալը՝ արժանանալով «Խիզախության համար» մեդալի:

1942 թ. հոկտեմբերի 23-ին «Զնամյա ռոդինի» բանակային թերթը տպագրել է մի խումբ առաջավոր մարտիկների լուսանկարները, նրանց թվում և Պարույրինը: Նրանում ահա թե ինչ է գրված Պ. Իսահակյանի մասին.

«Командир роты ни на минуту не упускал из своих рук управление боем. Он твердо осуществлял свою волю, а бойцы ответно действовали, выполняли его замысел... Рота с успехом выполнила боевую задачу, немцы с большими потерями были отброшены с высоты. Этот бой — пример того, как нужно использовать огневые средства, пример того, как командир должен осуществлять план боевых действий...».

Գոյթխի մոտ (այժմ Շահումյան) թշնամու ճնշող ուժերի դեմ մեկ շաբաթ (1942 թ. հոկտեմբերի 5—12-ը) գիշեր ու զոր առանց քուն ու դադարի, հիտլերականների շրջափակման մեջ, հետախուզական իր առաջադրանքն էր իրագործում գալարափողհար լեյտենանտը՝ հաստատ համոզված լինելով, որ մերոնք կհաղթեն:

«Մամ ջան, Նորիկ ջան, իմ մասին մի՛ մտածեք: Ես կռվում եմ, որ թշնամին չգա ձեզ սպանի, որ իմ անուշ Լիլիկի աչքերը արցունք և արյուն չտեսնեն, որ գալարափողս նորից բեմ բարձրանա: Ա՜խ, այնպես եմ կարոտել երևանյան բեմին, իմ աշակերտներին, ուսանողներին, ձեզ: Վերջերս ձեռքս ընկավ օգոստոսի 8-ի «Սովետական Հայաստան» թերթը: Հորեղբորս հոդվածը ինձ և բոլոր հայ մարտիկներին շատ հուզեց: Մամա ջան, եթե չես կարդացել, չեմ ալարում, մի հատված արտագրում եմ և քեզ եմ ուղարկում: Ահա այն. «Մենք ճանաչում էինք ու սիրում կլասիկ Գերմանիան՝ «բանաստեղծների ու փիլիսոփաների հայրենիքը», ռոմանտիկական կապույտ ծաղկի երկիրը, իդեալիստ և երազող, այն Գերմանիան, ուր երբ Էռնեստ Ռենանը 19-րդ դարի առաջին կեսերին այցելեց, ծունկի եկավ և համբուրեց նրա հողը: Գյոթեի Գերմանիան, Նոր Աթենքը, Վայմարի ոգին: Սակայն այդ Գերմանիան ճզմվեց պրուսական յունկերի կրունկի տակ, Ֆրիդրիխ Մեծի երազած ֆելդֆեբելյան կրթությունը այլասերեց երիտասարդությանը, միլիտարիզմը դարձավ կրոն, պատերազմը՝ պաշտամունք...

...Ռուս մեծ ժողովրդի գլխին պատմության մեջ շատ փորձություններ են պայթել, բայց նա հաղթանակել է բոլորին: Ռուս ժողովուրդը վերջնականապես խորտակել է մոնղոլների աշխարհակալությունը և հետ է շպրտել Եվրոպայից, մահացու հարվածներ է տվել Նապոլեոնի և Վիլհելմ կայզերի բանակներին, և հիմա նրան ամենապատվաբեր միսիան է վիճակվել՝ խորտակելու ֆաշիզմը և փրկելու մարդկությունը հիտլերյան եղեռնագործ բանդաներից, հորդաներից: Մենք խորապես հավատացած ենք, որ ճշմարտությունը և արդարությունը պիտի հաղթանակեն չարության վրա: Մեր արքազան կռիվը կլինի վերջին կռիվը...»:

Մամա ջան, հորեղբայրն այնքան փաստալի և ոխով է գրել, որ ես էլ ցասմամբ ու վրեժով կռվեմ այդ իժերի դեմ: Այս մի քանի օր է № բարձունքի գրավման համար հետախուզության ժամանակ տասնյակ նեմեցներ սպանեցինք: Մեր կողմից էլ զոհեր եղան: Աչքիս դեմ միայն հինգ լեյտենանտ են զոհվել: Ես վահից չեմ վախենում, կռվում եմ քաջաբար քո՛ համար, Լիլիկի՛ համար, Նորիկի՛ համար:

Միայն հիմա եմ հասկանում, թե որքան մեծ մարդասիրություն, ծնողասիրություն կա հորեղբոր այս տողերում.

Սիրտս գալլերին թող բաժին դառնա,
Միայն թե մայրս մահս չիմանա:

Մամ ջան, ես չեմ մահանա, հաղթանակով և շքանշաններով ետ կգամ: Նորից ու նորից կգրկեմ ու կհամբուրեմ քեզ և փոքրիկ Լիլիկիս:

Ընդունեցեք համբույրներս,

Քո **Պարույր**,

5 հոկտեմբերի 1942 թ.

Գործող բանակ»:

Ու մինչ Երևանի պետկոնսերվատորիայի գործավար Շուշանիկ (Սուսաննա) Իսահակյանը կընթերցեր սույն նամակը, իր լեյտենանտ որդին՝ Թբիլիսիի հետևակային ուսումնարանի նախկին սանը, որ № 462-րդ մոտոհետախուզական վաշտի հրամանատարն էր, հինգ ժամ ձեռնամարտի էր բռնվել թշնամու հետ: Ու մինչ անվեհեր քաջորդուն օգնության կհասներ Արմենակ Գրիգորյանի գումարտակը, և լիակատար հաղթանակը 977,0 բարձունքում՝ Գունայկայում կապահովվեր, ծպտված հիտլերականների արձակած արկից ընկավ երաժիշտ հայ ռազմիկը: Տարիներ անց 408-րդ հայկական հրաձգային դիվիզիայի քաղաքաժնի պետ Սիմոն Սարգսյանը հերոսական այդ մարտերի մասին գրել է. «...Բարձունքի լանջերին՝ խրամատներում, զոհվել էին հերոս հետախույզները, որոնցից շատերը կոմունիստներ էին: Բայց դաշտում ընկածների մեծ մասը ֆաշիստներ էին: Ահա և նա՝ պաշտպանության գլխավոր հերոսը, լեյտենանտ Պարույր Իսահակյանը: Արյան մեջ կորած, ականի բեկորներից վիրավոր, կանգնել է բարձունքին և երերում է՝ ինչպես դրոշն է ծածանվում քամուց...

...Չորս սանիտար պատգարակի վրա նրան տանում են Գոյթխ, ճակատային գծից հեռու, այնտեղ դադարում է բաբախելուց կոմունիստ դյուցազնի, հայրենիքի հավատարիմ զավակի սիրտը...»[1]:

Տարիներ են անցել: Նորից Իրինդում եմ: Վաղուց մահացել են Սեմալենց Գալուստն ու Խաչիկը: Հորաքույր Ռեհանն էլ չկա: Չկա նաև Մնասարի ու Սուլթանապատի բրաբիոն ծաղիկը՝ Խաչիկ Դաշտենցը:

Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի Լիլյա Իսահակյանը (աջից 2-րդը) հաճախ է այցելում Տուապսեի շրջանի Գոյթխ (Հայթաղ, Շահումյան) գյուղ, ծաղիկներ դնում և նկարվում այն հուշահամալիրի մոտ, ուր հանգչում է իր հայրը՝ գալարափողհար Պարույր Իսահակյանը:

Արշավիր Քոթանյանի հետ շրջում ենք Սուլթանապատում և Չաթինդարում, վերհիշում Վարպետին: Մտաբերել եմ Շուշանիկ մայրիկի նամակները, որ նա ուղարկել է զինվորական և թանգարանային տարբեր հասցեներով՝ իր որդու մասին վերջնական և ճշգրիտ լուր իմանալու համար... հիշել եմ Պոդոլսկի զինվորական արխիվում և այլուր Պարույրին վերաբերող փաստագրական նյութերը: Դիմացի քարափից դեպի մեզ է գալիս էջմիածնեցի մի որսկան՝ Նշան Գազազյանը: Թվում է կորնգանի կարմիր արտերից մի մամիկ նրան է դիմում.

—Որսկան ախպեր, սարեն կուգաս,
Սարի մարալ կփնտրես,
Ասա՛, յարաբ, դուն չտեսա՞ր
Իմ մարալս, իմ բալես...

[1] «Սովետական Հայաստան» ամս., 1964, № 5, էջ 4—5:

Ու չիմացավ մայրը՝ որտեղ է զոհվել, որտեղ է թաղված իր որդին: Իսկ Լիլյա՞ն. նա ամեն տարի, մեծ Հաղթանակի օրը ծաղիկները ձեռքին ուխտի է գնում Տուապսեի շրջանի Գոյթխ (Հայթաղ, այժմ Շահումյան) բանավանում հավերժ ննջող իր հոր շիրմին: Շահումյանի գեղեցիկ փողոցներից մեկն ա՝սօր կրում է երաժիշտ, մանկավարժ, հետախույզ, լեյտենանտ Պարույր Իսահակյանի անունը, մի քաջորդու, որի դուստրն այսօր իր զոհված հորից մեծ է արդեն տասնհինգ տարով, անունը մի դյուցազնի, ում համար բարձունքում մեռնելը Ազատություն էր խորհրդանշում և հիշեցնում հանճարեղ Ավ. Իսահակյանի անմոռաց տողերը՝ «Մեր ցեղն էլ քաջ կրովողներ է տվել...»:

ՊԱՐՈՒՅՐ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Հակոբյան Արշավիր**— «Խիզախ հետախույզներ», ՍՀ, 22 հոկտեմբերի 1942 թ., № 275:
2. **Գրիգորյան Վահան**—«Սասմա թոռը», Սովետական գրականություն, 1943 թ., № 1:
3. **Սարգսյան Սիմեոն**— «Հերոսական կյանք», ՍՀ ամսագիր, 1964 թ., № 5, էջ 4—5:
4. **Սարգսյան Սիմեոն**—«Այրվող անտառ», Երևան, 1965:
5. «Սովետական Հայաստան». օրաթերթ, 1 փետրվարի 1969 թ., № 27:
6. **Սարգսյան Սիմեոն**— «Անմոռաց անուններ», Ե., 1978 թ., էջ 13—17:
7. **Саркисян С. М.**—«408-ая армянская стрелковая дивизия в битве за Кавказ», Е., 1985 г., разные страницы.
8. «Знамя родины» (армейская газета) — 23 октября 1942 г.
9. «Правда»—15 и 16 ноября 1942 г.
10. **Նարյան Մուշեղ**— «Իսահակյանների գերդաստանը», «Ավանգարդ», 11 օգոստոսի 1978 թ., էջ 4:

ԵՍ ՀԱՂԹԱՆԱԿԻՑ ՀԵՏՈ ԿԳԱՄ

ՌԱՖԻԿ
ՆԻԿՈԼԱՅԻ
ՄԵԵՐԱԲՅԱՆ
(1912—1943)

Ծուլավերցի Նիկոլայ և Նարդոս Մեհրաբյանները չորս որդի ուղարկեցին ռազմաճակատ: Չորսից միայն Գուրգենը վիրավոր վերադարձավ, իսկ մյուս երեք եղբայրները՝ Լևոնը, Մեհրաբն ու Ռաֆիկը, զոհվեցին: Նրանց սիրած աղջիկները այդպես էլ չհարսնացան: Ամեն անգամ, երբ անցնում էին նրանք Ռաֆիկենց տան մոտով, տանից դուրս էին կանչում Մանիկին, հարցուփորձ անում... Նկատում էր զինվորամայրն այդ բոլորը և թաքուն խեղդում հուզմունքն ու արցունքները, որպեսզի հանկարծ ջրտուքից վերադարձող ամուսնու նախատինքը չլսի. «Տղա ունեցողը զինվորի մայր է: Զինվորի մայրը լաց լինելու իրավունք չունի: Տղաներդ կռվի են գնացել հողի պահանջով: Քո արցունքը ես կսրբեմ, հողի արցունքը սրբել չի լինի: Խելքի՛ եկ, այ կին... Թող Հիտլերի մայրը լացի, որ այդպիսի հրեշ է ծնել, դու ինչո՞ւ ես լացում: Հո իմ տղերքը չե՞ն գնացել գերմանացու հողը զավթելու: Նրանք իմ երկիրը, իմ տունն են թշնամուց ազատագրում: Բա տղա ունեցողը լա՞ց կլինի»:

Ականջալուր ամուսնու խորհուրդ-մեղադրանքներին, ներս ու դուրս էր անում Նարդոս մայրիկն ու հիշում, հիշում Ռաֆիկի գրած վերջին նամակի վերջին տողը՝ «Ես կգամ հաղթանակից հետո»: Լևոնն ու Մեհրաբն էլ լուռ էին. նրանց նամակներն էլ դադարել էին: Դե, մայրական սիրտ, եկ ու դիմացիր: Թեև վշտի ցավը հանգիստ չէր տալիս Մեհրաբյան ամուսիններին, բայց նրանք իրենց զգոն էին պահում, որպեսզի Կորյունն ու Մանիկը ևս դիմանան այդ «սև թղթերին», թիկունքային հոգսերին և դասերից ետ չընկնեն... Տոկուն էր Նարդոս մայրիկը, համառ ու աշխատասեր: Չնայած ամուսնու հորդորները նրան մեկ-մեկ հանում էին թմբիրից, բայց ինքը հո գիտեր, որ Նիկոլը փխրուն սիրտ ունի, նրան էլ հուսադրել է պետք, չէ՛ որ գիշերը մինչև լույս չի քնում, որքան էլ հոգնած է լինում, որդիներին է հիշում, ինքն իրեն մտմտում, դուրս գալիս գյուղամեջ, որ փոստատարին մի վայրկյան շուտ հանդիպի, մի լուր իմանա...

Пролетарии всех стран, соединяйтесь!

Пригласительный билет № 191

Тов. Меграбян Р.Н.

Комитет по делам искусств при Совнаркоме Союза ССР приглашает Вас на прием участников декады Армянского искусства.

Прием состоится 4 ноября 1939 г. в 8 часов вечера в Кремле в Большом Кремлевском Дворце.

Гардеробная комната, стол № 12

Вход через Спасские и Боровицкие ворота.

ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից արվեստի վարչության կողմից 1939 թ. նոյեմբերի 4-ին Ռաֆիկին տրված № 191 հրավիրատոմսը՝ Մոսկվայում հայկական մշակույթի տասնօրյակին մասնակցելու համար:

Խոհերով ծանրաբեռ կիսաննջում էր թոնրաշրթին Նարդոս մայրիկը, երբ դռան շրխկոցն ու փոստատարի ներս մտնելը լսեց.

— Աչքներդ լույս. Ռաֆիկից նամակ ունեք...

Ծյուղատար փոքրիկ հյուսերը ետ գցեց Մանիկն ու զգուշ բացեց եղբոր եռանկյունե նամակը: Նրանում գրված էր. «Մամա ջան, գիտեմ, վիշտդ խորն է: Այն կբուժվի, երբ գերմանացի հրեշներին ետ շպրտենք մեր հող ու ջրից և եղբայրներով ողջ-առողջ վերադառնանք տուն: Թերթերից արդեն գիտեք, որ նրանք Լենինգրադը պաշարել են: Միևնույն է՝ հաղթանակը մերը կլինի, մենք կովում ենք Սասունցի Դավթի և Ալեքսանդր Նևսկու պես... Ի՞նչ լուր Գուրգենից, Լևոնից: Մեհրաբի հասցեն փոխվել է, հենց նամակ ստանամ, նոր հասցեն կուղարկեմ: Մամա ջան, հայրիկին սիրտ տուր: Գիտես՝ նա շատ փուխր մարդ է, հուսադրիր մինչև մեր վերադարձը: Բոլորիդ համբուրում եմ և կարոտալի բարեվում: Մեկնում եմ առաջավոր գիծ: Հանուն Մանիկի այստր մի քանի ֆաշիստ իր ծննդյան տոնի առթիվ «այն աշխարհը» կուղարկեմ: Նորից ու նորից համբուրում եմ քեզ, հայրիկին, Կորյունին և Մանիկին»: Ու մինչ այս նամակը կհասներ հասցեատիրոջը, Լենինգրադից 20—25 կիլոմետր դեպի հյուսիս-արևելք բժիշկները վիրակապում էին Ռաֆիկի վերքերը, նրա ձախ ուսամասում ականի բեկորներ էին հայտնաբերվել: Դաշտային հոսպիտալը անտառում էր: Քիչ այն կողմ մի ուրիշ բժիշկ զննում է Գուրգեն Մեհրաբյանի սպիացող վերքն ու խորհուրդ տալիս՝ չքորել, արդեն վտանգն անցնում է: Վիրավոր, տնքում են միևնույն հոսպիտալում երկու եղբայր՝ մեկը մեկից անտեղյակ: Հանկարծ գթության քույրը մոտենում է ջութակահար ռազմիկին, պարզում նրան Վրացական ԽՍՀ Մառնեուլի շրջանի Շահումյան գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտուհի Մանիկ Մեհրաբյանի նամակն ու ավելացնում. «երևի քո՞ւյրդ է գրել»: Ռաֆիկը գլխով այո է ասում և շտապ-շտապ կարդում. «Եղբայր ջան, Ռաֆիկ ջան, քո և Գուրգենի հետադարձ հասցեները նույնն են: Ինչո՞ւ չեք նկարվում և ուղարկում. գիտես՝ մայրիկն ու հայրիկը ինչքան կուրախանան...»: Չհասցրեց եղբայրը քրոջ նամակը մինչև վերջ կարդալ. գնաց, որ գտնի եղբորը: ...Ու մինչ վիրավոր զինվորը դաշտային նույն հոսպիտալում կփնտրեր իր եղբորը՝ Գուրգենին, վերջինն արդեն մի քանի ժամ առաջ ապաքինված ուրիշ զինվորների հետ ուղղություն էր վերցրել դեպի Վոլխովի ռազմաճակատ: Իսկ Ռաֆի՞կը: Նա հիվանդանոցում էլ դադար չուներ: Իմանալով նրա երաժիշտ լինելը, հիվանդները տարբեր «պատվերներ» էին ներկայացնում. մեկը «Կռունկ» էր ուզում լսել, մեկը՝ «Բամ որոտան», մեկը բալաթի էր ուզում, մեկը՝ չաստուշկա... Ու թևածում էր Ռաֆիկի բամբ ձայնը:

— Ծո, քիչըմ կամաց երգե, թե չէ Հիտլերը մեր հոսպիտալի տեղը կիմանա, կոմբակոծե,— սրամտում է լենինականցի սիրուն Լևոնն ու առաջարկում,— Ռաֆիկ ջան, սիրտս «Զախորդ օրերը» լսել կուզե...

Ընդամենը երեք շաբաթ լեյտենանտ Մեհրաբյանը մնաց հիվանդանոցում, ու թեև բժիշկները ասում էին՝ մնա՛, մի քանի օր էլ մնա՛, բայց Ռաֆիկը չհամբերեց: Ապաքինված վիրավորների նոր խումբը, որոնց ինքն էլ միացավ, ճանապարհ ընկավ դեպի Օրյոլ-Կուրսկ:

Ծնողները այստեղից էլ նամակներ ստացան: Ահա թե ինչ էր գրում. «Սիրելի մայրիկ, կարոտով որդիներիդ սպասող իմ բարի, բարի հայրիկ, եթե այս Սոդոմ-Գոմորից պրծա, էլ ինձ մահ չի լինի: Կովում եմ ինքնամոռաց, մի գերբնական ուժ է լցվել մեջս, մինչև թշնամուց ձեր մուրը չլուծեմ, ետ չեմ գա տուն, չէ որ ես լեյտենանտ եմ: Մամ ջան, ասում ես՝ արի՛, մի քանի օրով արձակո՛ւրդ արի: Ռազմադաշտում

ոչ միայն օրը, վայրկյանն անգամ բախտորոշ կարող է լինել հազարավոր կյանքի համար: Ո՞նց գամ, երբ կողքիս մարդիկ կովում են, մեռնում: Հիտլերյան ավազակները սպանված խորհրդային զինվորի վրա նորից են կրակ բացում, որպեսզի ապահով թալանեն նրա գրպանների պարունակությունը, նրա զենքը, նրա փամփուշտը: Եթե սպանվածի բերանում ոսկե ատամ են տեսնում, ջարդում հանում են: Այնպիսի հրեշավոր բաներ են անում, որ ոչ մարդու մտքով է անցնում և ոչ էլ կարելի է նկարագրել: Մարտերում ցուցաբերած խիզախության և արիության համար ԽՍՀՄ Գերագույն գլխավոր հրամանատար ընկ. Ստալինի ստորագրությամբ Շնորհակալագիր եմ ստացել: Թե քանի ֆաշիստ եմ սպանել— աստված գիտի: Մինչև Հաղթանակը չգա, ես չեմ գա:

Համբուրում եմ բոլորիդ և գնում առաջ: Իմ հասցեն է Դ/Փ-2429, զինվաս-25:

Կգամ հաղթանակով՝ Ձեր **Ռաֆիկ**

15-հունվարի 1943 թ.»:

Ստույգ թե որտեղ, որ ամսին, որ օրը կտրվեց Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի 1941 թ. շրջանավարտ, փողհար և դաշնակահար, ավագ լեյտենանտ Ռաֆիկ Նիկոլայի Մեհրաբյանի կյանքի թելը, յուրայիններն էլ չգիտեն:

Մինչ կոնսերվատորիա ընդունվելը Ռաֆիկը սովորել էր Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում (1933—1937 թթ.): Նա 1912 թ. հոկտեմբերի ծնունդ էր: Մեր այն հարցին, թե հիշո՞ւմ եք ձեր համագյուղացի, զոհված երաժիշտ Ռաֆիկ Մեհրաբյանին, բանաստեղծուհի Մարո Մարգարյանը զարմանքով և ափսոսանքով պատասխանում է. «Մանիկի եղբո՞րը: Ինչպե՞ս չէ: 1930-ին, հենց դպրոցը ավարտեց, մեր գյուղի (Շուլավերի) երաժշտախմբում (Մուզկոմանդում) էր նվագում... Որ շատ զոռես, սիրած աղջկա անունն էլ կասեմ,— կատակում է սիրված բանաստեղծուհին և ավելացնում.— Ռաֆիկի դասատուները, ավելի ճիշտ դասախոսները, կոնսերվատորիայում եղել են Արամ Մանգասարյանը, պրոֆեսոր Կոպտևը, Կ. Մելիք-Վրթանեսյանը: Ռաֆիկը 1939 թվականին Մոսկվայում մասնակցել է հայ մշակույթի տասնօրյակին... Բյուրեղյա հոգու տեր, ազնիվ, անշահախնդիր, արվեստով ապրող տղա էր... Ափսո՜ս, կյանքը չծպտաց. երեսունմեկ տարեկան հասակում զոհվեց նա...»:

Ռաֆիկ Մեհրաբյանի ողբերգական մահից անցել է քառասունհինգ տարի: Հայրենիքն ու յուրայինները չեն մոռացել իրենց խիզախ քաջորդուն և տաղանդաշատ երաժշտին: Ամեն տարի Մայիսի 9-ին վաստակաշատ գյուղատնտես Մանիկ Մեհրաբյանը երեք փունջ վարդեր է գնում: Առաջինը դնում է իրենց տանը՝ Ռաֆիկի լուսանկարի կողքին, երկրորդը տանում է կոնսերվատորիա՝ զոհված երաժիշտների մարմարե հուշատախտակը զարդարելու, իսկ երրորդը Երևանի հաղթանակի և հանգստի զբոսայգում տեղ է գտնում անհայտ զինվորի գերեզմանին:

Եվ ապրում է Ռաֆիկը:

...ՈՐ ՈՉ ՄԻ ԵՐԳ ԷԼ ԱՆԿԱՏԱՐ ՉՄՆԱ...

ՍՈՒՐԵՆ ԳՈՒՐԳԵՆԻ ՄԻՐԶՈՅԱՆ (1916—1941)

Լենինգրադ: Պիսկարևյան գերեզմանատուն: Հավերժական դնով ննջում են այստեղ 470 հազար լենինգրադցիներ: 900 օր ու գիշեր ոռնում էին էրմիտաժային այս քաղաքում թշնամու ցամաքային և օդային մահաբեր զենքերը: Հիտլերի ծրագիրն էր «Վերևից Լենինգրադը, ներքևից Կովկասը վերցնել: Եվ ԽՍՀՄ-ը մերը կլինի»: Նրա պլանները չիրականացան: Լենինգրադյան ռազմաճակատի զորքերը Լենինգրադի բնակիչների և աշխարհազորայինների հետ թշնամու մուտքը կասեցրին քաղաքի մատույցներում: Գազազած հիտլերականները և նրանց միացած ֆիննական զավթիչները գործադրում էին ամեն ջանք՝ արյան մեջ խեղդելու Պետրոս Մեծի և Պուշկինի սրբատեղին, հեղափոխության օրրանում ծածանելու ֆաշիստական դրոշը: «Ռու-

սաստանն առանց ռուսների» հիտլերյան լոզունգը քաջ հայտնի էր ամեն խորհրդային զինվորի և քաղաքացու: Եվ նրանք կռվում էին: Մեր բազմազգ ընտանիքի համատեղ պայքարին անկեղծ նվիրումով էին մասնակցում ոչ միայն բանակ զորակոչված հայաստանցիները, այլև Լենինգրադում ապրող և ուսանող ամեն մի հայորդի: Ու մինչ ռումբերից ծակծկված Լենինգրադյան երկնքի ներքո ծնունդ կառներ Շոստակովիչի «Յոթերորդ սիմֆոնիան», կոնսերվատորիայի դասախոսներ Գեորգի Տիգրանովը, Տիգրան Մարտիրոսյանը, կոմպոզիտոր Թունիկ Հովհաննիսյանը, ուսանող Սուրեն Միրզոյանը և էլի շատ ու շատ ուրիշ հայորդիներ հրաժեշտ էին տվել գիտամանկավարժական, ստեղծագործական իրենց աշխատանքներին և ուսանողական լսարաններին: Ստեղների և ջութակի փոխարեն նրանց մատները հրացանի և գնդացրի ձգանների վրա էին նվագում, այդ նվագից ոչ թե մարդն էր վեհանում, այլ սպանվում էր ֆաշիստը, դահիճը, մեր հողն ու ջուրը, մեր հայրենին ապականողը: Զոհվեց Թունիկը՝ Քուշնարևի և Շոստակովիչի սիրած սանը՝ տաղանդավոր կոմպոզիտորը: Ինչ, ի՜նչ իմանար նա, որ իրենից մի քանի մետր հեռու թշնամու կողմից շրջափակված քաղաքում քաջաբար մարտնչում է աշխարհազորայիններին միացած Սուրենը: Սուրեն Միրզոյանը ծնվել էր Թբիլիսիում 1916 թվականին կոմպոզիտոր և մանկավարժ Գուրգեն Միրզոյանի հարկի տակ: Դեռ մանկուց, երբ աչքը բաց արեց, իրենց տանը երգ-երաժշտություն լսեց: Հորեղբոր որդու՝ Էդիկի հետ փայլում էին իրենց երաժշտական ընդունակությամբ: Հետո, երբ Էդիկն սկսեց ստեղծագործել, կոմպոզիտորական իր ձիրքն էր դրսևորում, Սուրենը նրան թե. «Ես էլ ստեղծագործություններդ կկատարեմ»: 1937-ին հաջողությամբ ավարտելով Լենինգրադի № 1 երաժշտական տեխնիկումը, ուր ընդունվել էր 1939 թ., գանգրահեր և խաժաչյա Սուրենը, որին աղջիկները Սիրուն Սուրիկ էին կոչում, ընդունվեց Լենինգրադի պետական կոնսերվատորիա (Պ. Ա. Սերեբրյակովի դասարան): Արդեն չորրորդ կուրսում էր, որոշել էր ավարտելուց հետո գալ Երևան, Հայֆիլհարմոնիայում (հայրն այստեղ ղեկավարում էր ժողգործիքների նվագախումբը) կամ կոնսերվատորիայում անցնել աշխատանքի, ընտանիք կազմել, բայց... 1941 թ. հենց առաջին ամիսներին, ինչպես վկայում են նրա լենինգրադյան ժամանակաշրջանի մասին պատմող, Երևան քաղաքի պատմության թանգարանում պահպանվող վավերագրերը, Սուրենն էլ լսարան չմտավ, ապացուցելով, «երբ խոսում են թնդանոթները, մուսաները չեն լռում»: Կռվի հենց առաջին տարում (1941-ի սեպտեմբերին) խզվեց նրա 25-ամյա կյանքի թելը:

Պիսկարևյան գերեզմանոց: Ամեն-ամեն անգամ այստեղ ոտք դնելուց, ծաղկեփունջը ձեռքին, հուզվում է կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանը, չէ՞ որ հավերժական հինջով այստեղ 470 հազար հանգչողներից մեկը իր հորեղբոր որդին է, իր մանկության ու պատանեկության ամենաքաղցր ընկերը, այն Սուրենը, որ իրեն խոստացել էր. «Էդիկ ջան, դու լավ երգեր հորինիր, ես կկատարեմ»:

— Չէ՞, Սուրենը չի զոհվել, Սուրենը կա... Նրա սերն ու սխրանքը քայլող հավերժությունն են՝ կյանքին, հայրենիքին ձոնված մի նոր սիմֆոնիա, որը դեռ չի գրվել...— ասում է Էդ. Միրզոյանն ու հուշում. «Սուրենի մասին այլ նյութեր կարող եք ստանալ Էմմայից[1]: Սուրենը զոհվեց, որ ոչ մի երգ անկատար չմնա»:

ՍՈՒՐԵՆ ՄԻՐԶՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Սահակյան Մարատ**—Լենինի քաղաքի հայ պաշտպանները, Ե., 27 հունվարի 1974 , էջ 3 (Լենինգրադի ազատագրման 30-ամյակի առթիվ):
2. **«Անձնական ֆոնդերի կատալոգ»** (Երևան քաղաքի պատմության թանգարանի հրատարակություն), Ե., 1983, էջ 93:
3. **Էլլարյան Ի.**— «Անմահության հուշարձաններ», Ե., 1976 թ., էջ 21:

---

[1] Էմմա Միրզոյանը Սուրեն Միրզոյանի քույրն է, ապրում է Երևանում: Նա եղբոր արխիվը հանձնել է Երևան քաղաքի պատմության թանգարանին:

ՋՈՒԹԱԿԻ ՓՈԽԱՐԵՆ ԱՎՏՈՄԱՏՆ ԷՐ ՋԵՌՔԻՆ

ԳԱԳԻԿ
ԼԵՎՈՆԻ
ՋԱԼԱԼԲԵԿՅԱՆ
(1912—1942)

Լենինգրադի կոնսերվատորիա: Այսօր էլ այստեղ երաժիշտներ կան, որոնք մինչ պատերազմը սովորել են Գագիկ Ջալալբեկյանի հետ: Ո՞վ է 1942 թ. Պուշկինոյում գերմանական գրնդակից խոցված ասպիրանտ երաժիշտը: Կոնսերվատորիայի արխիվային նրա փաստաթղթերում գրանցված են. մայրը՝ Աղավնի Սարգսի Ջալալբեկյան, մանկավարժ, հայրը՝ Լևոն Ղահրամանի Ջալալբեկյան, հաշվային աշխատող, եղբայրները՝ Հենրիկ, Ռաֆիկ, քույրը՝ Գոհար: Հարցուփորձն ու հետքերը Լենինգրադից մեզ բերում են Երևան, ուր և քաղաքային 4-րդ պոլիկլինիկայում հանդիպում ենք Գագիկի քրոջը՝ բժշկուհի Գոհար Ջալալբեկյանին: Նա սիրով մեզ է տրամադրում եղբոր լուսանկարն ու հաղորդում անհրաժեշտ տվյալներ, ցույց տալիս նրա ռազմանկատային և ուսանողական օրերի նամակները՝ վերստեղծելով զոհված երաժիշտ մարտիկի դիմանկարը:

Ծնվել է Գագիկը 1912 թ. Երևանում: Ալ. Մյասնիկյանի անվան միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, ծնողների խնդրանքով, ընդունվել է Երևանի բժշկական ինստիտուտ: Դեռ փոքրուց Գագիկը երգ-երաժշտության սիրահար էր, ուներ երաժշտական միջնակարգ կրթություն (ավարտել էր Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանը), հանդես եկել պիոներական և ուսանողական փառատոներում, շահել առաջնություն, մամուլում արժանացել գովեստների: Թերևս դա էր պատճառը, որ բժշկի մասնագիտությունը նրան չհրապուրեց, և մի օր էլ նա հայտնվեց Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում որպես ուսանող: Սկզբում նրա դասախոսն էր Ա. Կոտլարևսկին, հետո՝ պրոֆեսոր Լեկկերը: 1935 թ. Գ. Ջալալբեկյանը փոխադրվում է Լենինգրադի կոնսերվատորիա, ուսանում լարային բաժնում, որպես ասպիրանտ խորանում երաժշտության պատմության մեջ: 1941 թվականին Գագիկն արդեն Լենկոնսերվատորիայում հանձնել էր դիպլոմային-պետական քննություններն ու ասպիրանտուրայի մինիմումները, շուտով գործուղվելու էր Երևան: Բայց... պայթեցին ռումբերը: Հարկ եղավ ջութակի փոխարեն զենք վերցնել: Կախարդական հնչյունների սիրահար նրա մատները ջութակի և դաշնամուրի ստեղների փոխարեն հրացանի ձգանի վրա նվագեցին: Ահա թե մորը գրած նամակում Գագիկը ինչպես է ներկայացնում թշնամու կողմից պաշարված հեղափոխության օրրանը. «Մամա ջան, դրությունը հիմա շատ լուրջ է. ամենուր թեժ մարտեր են, երկինքն ու գետինը խեղդվել են ծխի, փոշու, արյան ու ավերների մեջ: Ջութակի և դաշնամուրի փոխարեն այսօր Լենինգրադում ռումբերն ու գնդացիրներն են նվագում: Պաշտպանության ժողկոմ Ի. Վ. Ստալինի ճառը հուզել է բոլորիս... Մենք խիզախաբար ենք կռվում, ոչ միայն դիմադրում ենք, այլև անցել ենք հակահարձակման: Ամոթ Հիտլերին. նա Գյոթեի և Բեթհովենի հայրենակիցներից բանակ է կազմել և հիմա ուզում է ստորացնել Պյոտր Մեծի հետնորդներին, սպանում է Պուշկինի թոռներին, ռմբակոծում նրա ծննդավայրը: Պատմությունը նրան չի ների... Մամա ջան, եթե նամակներս ուշանան, կամ էլ լուր չստանաս, մի անհանգստանա, ձեռքիս հիմա ջութակի փոխարեն ավտոմատն է. զենք բռնողը սպանելուց և սպանվելուց պիտի չվախենա...»:

Ավաղ, սա եղավ Գագիկ Ջալալբեկյանի վերջին նամակը. զոհվեց նա սույն նամակը փոստ գցելուց, զոհվեց հենց Պուշկինի ծննդավայրում՝ Պուշկինոյում, մի քանի քայլ դասընկերոջից՝ Ալեքսանդր Թադևոսյանից հեռու, հազիվ ապրած կյանքի քսան գարուն: Դա 1942-ին էր:

Նորից Երևան գալը, նորից մասնակցելը սիմֆոնիկ նվագախմբի ելույթներին և մոսկովյան փառատոներին, որոնց բեմ բարձրանալը. Կո-

միտաս և Բեթհովեն, Չայկովսկի և Սարասատե հնչեցնելը, իր մենահամերգին Լենկոնսերվատորիայի իր ընկերներ, կոմպոզիտորներ Թունիկ Հովհաննիսյանին և Սուրեն Միրզոյանին հրավիրելը Գագիկի համար երազանք մնացին: Լենինգրադի և Երևանի կոնսերվատորիաների մարմարե հուշատախտակների վրա այցելուն այսօր երախտագիտությամբ է կարդում Գագիկ Լևոնի Զալալբեկյանի անունը, անունը այն ջութակահար, ասպիրանտ և մարտիրոս հայ տղայի, որի համար լենինգրադյան հողը դարձավ ոչ միայն ոազմաթեմ, այլ՝ վերջին բեմ, ուր ջութակի փոխարեն իր հերոսական ռապսոդիան հնչեցրեց Գագիկի ավտոմատը:

ՄԻԲԵՑԻ, ՅԱՐՍ ՏԱՐԱՆ...

ԿԱՐՈ
ԱԼԵՔՍԱՆԻ
ՍՆԴՈՅԱՆ
(1904—1944)

— Լավ կնվագե, ինչրխ հերն էղնի... Լենինականյան գործուղման ժամանակ պատահաբար հայտնվեցի երաժշտական մի ցերեկույթի: Մասնակիցները համակրանքով էին նայում դուդուկահար Ժորային, տարեցների շուրթերից նույն խոսքն էի լսում՝ «Լավ կընվագե, ինչրխ հերն էղնի...»:

Ժորա Սնդոյանի հայրը՝ դուդուկահար Կարո Ալեքսանի Սնդոյանը, զոհվել է Մեծ հայրենականում: Ծնունդով (1904 թ.) եղել է գյումրեցի: Նրանց տոհմում, ինչպես դիպուկ բնութագրեց բանաստեղծ Քաջիկ Գրիգորյանը, «էն գլխեն էլ չալողներ են եղել»: Կարոյի հորեղբայրները՝ Ռափն ու Արամը, նվագել են շվի ու զուռնա: Փոքրիկ Կարոն, հետևելով նրանց, ձեռքն է առել դուդուկը, հետո՝ կլարնետը: Տեսնելով, որ հորեղբայր Արամը փողային այլ գործիքների վրա էլ է նվագում, ուրվականի պես հետևել է նրան:

— Հին Գյումրիում ով մի գիշեր հարսանիքի մասնակցեր, երգող, պարող կամ նվագող կդառնար,— պատկերավոր ներկայացնելով սիրելի քաղաքի անցյալը, ժողովրդական, հարսանեկան ծեսերն ու «հազար ու մի գիշերների քաղցր խորաթեքը», այնուհետև Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ Ժան Էլոյանը, որն եղել է ժամանակին Լենինականի թատրոնի և ֆիլհարմոնիայի ղեկավարներից, հուշում է, որ գրի առնեմ Մեծ հայրենականի մասնակիցներից մի քանիսի անունները.

Ղազարյան Աշիկ— քամանչահար
Սահակյան Մուկուչ— դհոլչի
Հակոբյան Հակոբ— ձայնակցող
Գրիգորյան Գրիգոր— դափահար
Ռաֆայելյան Արամայիս— կլարնետիստ
Մխիթարյան Ավագ— մենակատար
Էլոյան Հովհաննես— պարող
Էլոյան Արմենակ— երգիչ
Էլոյան Սերյոժա— պարող
Կարապետյան Մկրտիչ (Յալդուզի տղան)— դհոլչի
Սնդոյան Մարտին— ջութակահար
Օղլախչյան Խաչիկ— պարող

— Արմոն եղբայրս էր, Սերոժը՝ մյուս եղբորս տղան: Երկուսն էլ զոհվել են:

— Մարտին Սնդոյանն էլ հորեղբորս որդին է: Լենինականի Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանն էր ավարտել: Նա էլ զոհվեց՝ ջահել-ջահել...— միջամտում է Ժորան և շարունակում պատմել իր հոր մասին:

— Հայրս աշակերտել է գուսան, դուդուկահար Կարո Եղոյանին, որը հայտնի էր Փանչո անունով: Որքան գիտեմ՝ նրանց տոհմը Գուսանագյուղից է: Որպես նրա աշակերտ հայրս քսանական թվականներին (որոշ ժամանակ) շրջագայել է Թիֆլիսում, հետո վերադարձել Լենինական և աշխատանքի անցել (1932 թ.) Լենինականի արևելյան երաժիշտների կոլեկտիվում (տնօրեն՝ Արտաշ Շահբազյան, գեղ. ղեկավար՝ Լևոն Մադոյան):

1938 թվականին Կարո Սնդոյանն արդեն ճանաչված դուդուկահար էր: Նրան սիրով հրավիրեցին աշխատանքի ռադիոյի արևելյան ժողովրդական գործիքների անսամբլում (ղեկավար՝ Լևոն Կարախան): 1939 թվականին Մոսկվայում Կարո Սնդոյանը Լևոն Մադոյանի հետ մասնակցում է Հայկական ԽՍՀ մշակույթի տասնօրյակին, կատարողական բարձր արվեստի համար պարգևատրվում առաջին աստիճանի դիպլոմով և պատվոգրով: Մի տարի հետո լենինականյան ունկընդիրն արդեն քաղաքում հռչակված երաժշտին տեսնում էր երկաթուղագործների Սևյանի անվան մշակույթի պալատի երգի-պարի անսամբլում:

— Շերամի և Իսահակյանի երգերը մեր բեմից չէին իջնում,— վերհիշում է նախկին պարուհի Շողիկ Հակոբյանն ու ասում,— երբ Կարոն դուդուկով կնվագեր «Մանկպ ես, բեզարած ես», «Որսկան ախպեր», «Սիրեցի, յարս տարան», «Մայր Արաքսի ափերով», «Դուն իմ մուսան ես», «Որսկան ախպեր», «Սիրեցի, յարս տարան», սի ծափեր էին տիրում, որ մեր ողջ անսամբլը «էդ փառքեն կօգտվեր»:

1943 թ. դեկտեմբերի 31: Թեև Նոր տարին շուտով պիտի խուժեր ամեն տուն, բայց ուրախացող գրեթե չկար. հայրենիքին զինվոր էր պետք: Երկաթուղու կայարանում իրարանցում է. ողջագուրվում են մայր ու որդի, քույր ու եղբայր: Սիրած աղջիկները, ամոթխածությամբ և արցունքով, թաշկինակները ձեռքներին սեղմած, հեռվից են նայում իրենց ընտրյալներին: «Զգույշ կեղնես», «Հիտլերին կսպանես, նոր կվերադառնաս», «Քաղաքի պատիվը չգցես», «Մեկ-մեկ նամակ կգրես»,— պատվեր, պատգամ, կտակ... և հանկարծ բոլորի միջից ամուսնուն է մոտենում դեռատի մի կին, թղթի մեջ փաթաթված ինչ-որ բան պարզում վեր: Գնացքի պատուհանից ամուսինը վերցնում է այն, բացում և զարմանքով կնոջն ասում.

— Ծո, ես կովի՞ եմ գնում, թե՞ գաստրոլներ. դուդուկն ի՞նչ կենեմ...

Շուրջը ծիծաղ, քաղցր ժպիտ, ողջագուրանք: Արմենուհի Սնդոյանի փոխարեն երգչուհի Ծովիկ Ղազարյանը գործընկերոջը, թե.

— Բանակում էլ անսամբլ կեղնի: Կնվագես: Տխուր ժամանակ՝ տխուր մեղեդի, ուրախ ժամանակ էլ՝ ուրախ: Բեռլինում էլ «Քոչարի» կչալես...

Եվ դուդուկը ծոցագրպանում ռազմադաշտ մեկնեց Հերիքնազ մայրիկի որդին՝ աչքի դեմ իր չորս ձագուկները՝ Միշան, Վալենտինան, Ժորան ու Լևոնը: Գնաց նա, որ աշխարհում ոչ մի առաջին դուդուկ բեմից չիջնի, որ ոչ մի դափ, թառ, քամանչա... ու ջութակ սգո մեղեդիներ չհնչեցնեն, որ «Բամ որոտանը» թնդացնի հայոց աշխարհիկը:

1944 թվականի հունվար: Փոթի հետևակային ուսումնարանի կուրսանտ Կարո Սնդոյանը կնոջը գրում է. «Մեկնում եմ ճակատ: Զանհանգստանաս, երեխեքին լավ կնայես: Համբուրում եմ բոլորիդ: Պատից կախած դուդուկս կտաս՝

Լենինականի արևելյան ժողգործիքների անսամբլը. 2-րդ շարքում ձախից 5-րդը դուդուկահար Լևոն Մադոյանն է, իսկ 3-րդ շարքի (ձախից) 3-րդը՝ Կարո Սնդոյանը:

երեխեքը նվագել սովորեն. հոր արհեստ է. թող իմանան: Հաղթանակով ետ կուգամ:

Համբույրներով՝ **քո Կարո:**

2182— Դաշտային փոստ, 612 զինման»:

Վերջին և միակ նամակից անցել է արդեն քառասունչորս տարի, բայց Կարո Սնդոյանը չի զորացրվում: Լենինականի Շիրակացու փողոցի № 185 շենքի № 13 բնակարանում դուդուկը շրթին, պատից կախ մի լուսանկար կարծես դեռ շարունակում է նվագել.

Սիրեցի, լարս տարան,
Յարա տվին ու տարան,
—Էս ինչ զուլում աշխարհ է,
Պոկեցին սիրտս, տարան...

ԿԱՐՈ ՍՆԴՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Գրիգորյան Սասուն**— «Հայրենի հողը՝ վերջին բեմ», Ավանգարդ, 9 մայիսի 1982 թ., էջ 4:
2. **Գրիգորյան Սասուն**— «Հայրենի հողը՝ ռազմաբեմ», Թատերական Երևան, 1985 թ., № 9, էջ 4:

ՀԵՏՈ ԻՄԱՑԱՎ, ՈՐ ՀԱՅՐ Է ԱՐԴԵՆ...

ՍԻՄԱԿ ՄԵԽԱԿԻ ՌԱՄԱԶՅԱՆ (1916—1942)

Անծանոթ հայրիկ,
Ես քեզ ծանոթ եմ մորս պատմածով,
Քո ընկերների վառ հիշողությամբ,
Քո նամակներով և քո նկարով,
Քո սխրանքներով ու քո լռությամբ,
Մայիսի ինձի այս հաղթանակով,
Որի մասին դու երազում էիր,
Բայց չգիտեիր, թե երբ է գալու...
Ա՜խ, հա՛յր իմ, հա՛յր իմ,
Դու շուտ զոհվեցիր,
Լավ է՝ հասցրիր նկարս տեսնել
Եվ պատվիրեցիր՝ մայրիկին լսեմ,
Լինեմ միշտ խելոք և օգնեմ նրան,
Նրա հետ սպասեմ քո վերադարձին...
Օ՜, շատ սպասեցինք,
Բայց, ա՜խ, դու չեկար,
Էլի սպասեցինք... սպասում ենք երկար,
Թե ուր որ է, հա՛յր,
Գուցե ետ կգաս:
Բայց հո գիտենք, որ զոհվել ես,
Թե ոչ, այսքան չէիր լռի,
Ա՜խ, որտե՞ղ է շիրիմը քո,
Կուզեմ ուխտի գալ քո շիրմին...
Հա՛յր, վիրավոր քո անյունը
Ո՞ւմ հողում է այսօր ննջում,
Միթե՞, հայրիկ դու իմ մասին
Չես մտածել վերջին շնչում...
Համբուրում եմ ես քո անհայտ շիրիմը, հա՛յր,
Հողի տակ էլ դու քեզ հանգի՛ստ, հպա՛րտ զգա.
Չէ՞ որ մայրս հիշատակդ սուրբ է պահել,
Նայում է միշտ պատից կախված քո նկարին,
Ինձ է նայում,
Փնտրում մեր մեջ նման գծեր,
Նրա համար՝ դու միշտ ջահել,
Իսկ ինքը՝ ծեր...
Այսօր տոնն է Հաղթանակի,
Հանուն քո վառ հիշատակի
Թոռներիդ հետ ես ու մայրս
Այսօր պիտի վարդեր գնենք
Եվ ծաղկունքն այդ պիտի դնենք
Շիրմին Անհայտ հայ զինվորի:
Անհա՛յտ զինվոր.
Ա՜խ, չէ՛, հայրի՛կ, դու անհա՛յտ չես,
Չէ՞ որ հավերժ ապրում ես դու
Ոչ միայն քո այրի կնոջ,
Այլև քո որբ դստեր սրտում:

Ո՞վ է հայրը, որին այդպես մելամաղձիկ ու անկեղծ իր սիրտն է բացել Երևանի Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի դաշնակահար մանկավարժ Էլեոնորա Ռամազյանը:

— Ես ծնվել եմ հորս բանակ մեկնելուց տասնհինգ օր հետո,— ասում է սույն բանաստեղծության հեղինակն ու ավելացնում:— Հորս լուսանկարով եմ ճանաչում: Ինձ պահել, մեծացրել է

մայրս. նա երկար տարիներ աշխատել է ֆիլհարմոնիայում, երաժշտական դպրոցներում և այլուր: Այժմ անցել է վաստակած հանգստի. ուշքն ու միտքը թոռներն են: Մայրս՝ Քնարիկ Միքայելյանը, հորս վերջին նամակը ստացել է 1941-ի օգոստոսի սկզբներին Ուկրաինայից: Այլ տեղեկություններ՝ հորս վերաբերող, կարող եք իմանալ մորիցս և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայից...

Կոնսերվատորիայում ենք: Նախասրահի մարմարե հուշատախտակին վեց ազգանուն է փորագրված, նրանցից մեկը՝ ՍԻՄԱԿ ՌԱՄԱԶՅԱՆ: Ծանոթանում ենք կոնսերվատորիայի արխիվի վարիչ Արմենուհի Գասպարյանի (Սազանդարյան) հետ: Շատ արխիվներում ենք եղել, բայց նման սրտացավ, ուշադիր վերաբերմունք արխիվային փաստաթղթերի և նրանց տերերի հանդեպ չենք տեսել: Ամեն ինչ տեղը տեղին է. ծանոթագրված, համարակալված և լուսանկարով վավերացված, «հների» մասին նա պահում է առանձին հուշագիրք-տեղեկատու՝ հարազատների հետ կապ հաստատելու, այս կամ այն հարցը պարզաբանելու համար: Եվ իզուր չէ, որ կոնսերվատորիայի ռեկտոր, կոմպոզիտոր Ղ. Սարյանը Արմենուհի Տիգրանովնային «քայլող հանրագիտարան» է անվանում: Նրա շնորհիվ է, որ կարողանում եմ գտնել ոչ միայն զոհված կոմպոզիտորների և երաժիշտների շատ և շատ հարազատների, այլև հայտնաբերել նրանց անտիպ ստեղծագործություններն ու նրանց վերաբերող վավերագրությունները, այդ թվում և Ս. Ռամազյանի մասին: Ծնվել է Սիմակ Ռամազյանը 1916 թ. ապրիլին Զորագյուղում (Գուգարքի շրջան): Հայրն ու մայրը՝ Մեխակն ու Ելենան, մահացել են: Եղբայրները՝ Սարգիսը, Սամվելն ու Սիմոնը, այսօր ապրում են Երևանում: Զորսն էլ եղել են հայրենիքի զինվոր: Սարգիս Ռամազյանը 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի փառաբանված փոխգնդապետներից է, այժմ թոշակառու: Նա պարգևատրվել է (Մեծ հայրենականին մատուցած ծառայությունների համար) կառավարական և մարտական շքանշաններով ու մեդալներով: Սամվելը ծանր վիրավորվել է մարտադաշտում: Որպես Մեծ հայրենականի ակտիվ մասնակից և հաշմանդամ նա այսօր էլ ատելությամբ է լցված բոլոր նրանց դեմ, ովքեր ուզում են վրդովել Երկիր մոլորակի անդորրն ու աշխարհը նորից ողողել ռումբերով ու մահերով: Սիմոնը ևս անցել է ռազմի բովով: Սպիացած նրա վերքերը այսօր էլ տնքում են մի անտեսանելի ցավից, Իսկ Սիմա՞կը՝ նրանց եղբայրը: Նա զոհվեց...

Սիմակի մանկությունն անցել է Ստեփանավանում: Այստեղ դրսևորվեցին նրա երաժշտական ընդունակությունները: Դեռ դպրոցում մասնակցում էր երաժշտական ինքնագործունեությանը որպես սիրող փողհար: Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում Սիմակը փայլուն գիտելիքներ ստացավ և որպես հանրապետության առաջատար փողհարներից մեկը երեկոյան ժամերին աշխատում էր ֆիլհարմոնիայում: Ուսումնարանի գերազանցիկության դիպլոմը ձեռքին 1939 թվականին նա բախեց Երևանի կոնսերվատորիայի դուռը: Երկրորդ կուրսից բանակ կանչվեց՝ հերթական պարտադիր զինծառայության: 1940 թ. Ուկրաինայի Կրեմենչուկ և Նիկոլաև քաղաքներից հանախ էր կարոտալի բարևներ հղում Երևանի կոնսերվատորիայի հանրակացարանում (այժմ Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի շենք) բնակվող իր կնոջը՝ ուսանող-մենակատար Քնարիկ Միքայելյանին: Քիչ էր մնացել զորացրվելուն, անհամբեր ուզում էր իր միակ դստերը՝ Էլեոնորային տեսնել: Կնոջ ու դստեր լուսանկարը հանախ էր նա ցույց տալիս գնդի հրամանատարին և ժպտալով խնդրում. «Աղջիկս ինձ է սպասում, թողեք շուտ գնամ»: Ու մինչ ինքը կգար, 1941-ի հուլիսի 29-ին մի նամակ հասցեագրեց իրեն անհամբեր սպասող կնոջն ու աշխարհի ցավ ու դավերին դեռ անտեղյակ դրստերը. «Սիրելիներս՝ իմ քաղցր Քնարիկ, իմ անուշ, անուշ Էլեոնորա, ներեք ինձ, որ չեմ կարող Ձեզ ուրախացնել: Գերմանիան, Հիտլերի գլխավորությամբ, թույն է խառնում աշխարհի անարատ հացին. նա ուզում է, որ ողջ ազգերը գերմանացիների ստրուկը դառնան: Լավ է, որ հեռու եք. չեք տեսնում ֆաշիզմի բարբարոսությունները: Երեկ անտառում խորհրդային զինվորներս տեսանք, թե ինչպես էին բերանն ի վայր մի քանի կանանց ու նորածինների մեկընդմեջ ծառերից կախել ի ցույց մեզ, որպեսզի վախենանք և անձնատուր լինենք: Անմիջապես ես ձեզ հիշեցի. արյունը տվեց գլխիս: Որոշել եմ այդ գիշատիչների դեմ կռվել մինչև վերջին շունչս, որպեսզի կոիվը Հայաստան չհասնի: Քնարիկ ջան, ես քո և մեր փոքրիկի համար կյանքս

չեմ խնայի, համոզված եղիր՝ հաղթանակով ետ կգամ... և մի օր էլ քեզ հետ միասին բեմ կբարձրանանք: Երնեկ այդ օրը...»: Սիմակի երազանքը չիրագործվեց: Մենակատար իր կնոջ հետ բախտ չունեցավ բեմ բարձրանալ, չհասցրեց

Սիմակ Ռամազյանի ռազմաճակատային վերջին լուսանկարը՝ ուղարկված մահից մի քանի օր առաջ:

գրկել, համբուրել, գուրգուրել իր դեռատի դրստերը: Կտրվեց նամակագրությունը...

Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիա: Ուսանողական օրերից անցել է 45—50 տարի: Նորից են հանդիպել երկու ընկերուհիները՝ Արմենուհին ու Քնարիկը: Երկուսն էլ լավ են հիշում փողային բաժնի Սիմակին: Առաջինը խընդրում է, որպեսզի երկրորդն ընթերցի 1942 թ. Արևմտյան Ուկրաինայում զոհված իր ամուսնուն ձոնված բանաստեղծությունը: Որպես զրուցակից ես լարված ունկնդրում եմ տարեց երկու մամիկների հուզախառն զրույցը, կարդում զոհված զինվորի այրու ներաշխարհի ալեբախումներն, ու գրիչս հազիվ հասցնում է սղագրել.

Քառասունհինգ տարի, ա՜խ, ինչպե՞ս անցավ,
Սիրտս առանց քեզ ինչպե՞ս դիմացավ...
Սևավոր, վիրավոր լորիկ եմ դարձել,
Բայց երբեք, երբեք, քեզ չեմ մոռացել:
Քո նամակներն եմ ես հաճախ կարդում,
Հոգսից ու ցավից սիրտս է պայթում.
Կարծես խոսում եմ, զրուցում քեզ հետ,
Կարծես բանակից ետ ես եկել, ետ...

Նայում եմ՝ հոգսից, ցավից և սիրուց ճերմակած՝ զոհված փողհարի մենակատար այրուն, լսում նրա չափածո ինքնայրումը, և մի պահ թվում է, թե աչքիս դեմ կանգնած զրուցում են Երևանի Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնի երաժշտական մասի փողհար Սիմակ Ռամազյանն[1] ու ինձ անծանոթ նրա դաշնակահար և մանկավարժ դուստրը, և վերջինը նորից պնդում է.

— Ա՜խ, չէ՛, հայրի՛կ, դու անհայտ չես.
Չէ որ հավերժ ապրում ես դու
Ոչ միայն քո այրի կնոջ,
Այլև քո որբ դստեր սրտում:

[1] Ս. Ռամազյանի ռազմաճակատային հասցեն էր՝ Դ/Փ 453, 305—ՕՋԱԴ, 3-րդ գումարտակ:

ՀՈՒՇԱՏԵՂԵԿԱՏՈՒ

ԵՐԳԸ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ ԵՎ ՌԱԶՄԱԲԵՄՈՒՄ

(Երաժշտական հուշաթերթիկ և մատենագիտություն)

Հետադարձ հայացք գցելով պատերազմական տարիների Խորհրդային Հայաստանի երաժշտական կյանքի տարեգրությանը, չենք կարող չասել, որ ամեն մի երաժիշտ, թեկուզ թիկունքում, իր համեստ ներդրումն է ունեցել մեծ Հաղթանակի ընդհանուր գործին: Հայկական բեմից երբեք չեն իջել Բեթհովենն ու իր հայրենակիցները անգամ այն ժամանակ, երբ նրանց անարժան հետնորդ Հիտլերի ցուցումով հազարավոր կոմպոզիտորներ և երաժիշտ կատարողներ սեփական արյամբ ներկեցին ոչ միայն իրենց զենքը ու համազգեստը, այլև անտիպ ստեղծագործությունները, որոնք դեռ նոր պիտի կյանքի կոչվեին: Երևանի Չարենցի անվան արվեստի և գրականության թանգարանում, Հայկ. ԽՍՀ ԳԱ պատմության և արվեստի ինստիտուտների ֆոնդերում, թատրոններում բազմաթիվ արխիվային նյութեր, ազդեր և հին ազդագրեր մեզ պարտադրում են հիշել նաև բոլոր նրանց, ովքեր 1941 թ. հունիսից մինչև 1945-ի Մայիսի 9-ը ոչ միայն հայկական և եղբայրական ժողովուրդների բեմերից, այլև խրամատներում ու ռազմական հանպատրաստի բեմերում հնչեցրել են Կոմիտաս և Բեթհովեն, Գլազունով և Գլինկա, Լիստ և Պագանինի, Շուբերտ և Մոցարտ, Սարասատե և Խաչատրյան...

Համամարդկային ո՞ր հանճարը պատերազմի օրերին չի հնչեցրել ազատամարտի, պայքարի և հաղթանակի իր փողը: Միայն Երևանի ֆիլհարմոնիայի 1941 թ. հուլիսի կատարողական երկացանկը թողցիկ դիտելիս հառնում են քո դեմ Գրիգն ու Մենդելսոնը, Շոպենն ու Չայ-

Լուսանկարիչը Հովհաննես Բաղրամյանին պատկերել է (աջից՝ 2-րդ շարքի 2-րդը) Արամ Խաչատրյանի, Արամ Փիրուզյանի (Հայկ. ԽՍՀ Մինիստրների **խորհրդի նախագահ**), Շարա Տալյանի, Ավետ Ավետիսյանի, **Գուրգեն Ջանիբեկյանի**, Հայկանուշ Դանիելյանի, **ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի** և այլ արվեստագետների հետ (3-րդ շարքի կենտրոնում):

կովսկին, Հենդելն ու Ռիմսկի-Կորսակովը և էլի, էլի ուրիշ հանճարներ: Բեռլիոզի, Վեբերի, Վենյավսկու, Լիստի և Շուբերտի սիմֆոնիկ ստեղծագործությունների կատարումները (ղեկավար՝ Կ. Սարաջև, Ի. Խարաջանյան) 1941 թ. օգոստոսին Երևանում մեկ անգամ ևս հիշեցնում են, որ թշնամու դեմ համաժողովրդական պայքարում իրենց են միացել Օֆենբախն ու Բիզեն, Ռոսսինին և Բորոդինը: Վերջիններին սիմֆոնիկ ստեղծագործությունների կատարողական բարձր արվեստի մասին 1941 թ. սեպտեմբերի 18-ին և 21-ին «Կոմունիստ» թերթը Երևանում հնչեցրեց իր դրվատանքի խոսքը:

Սիրելի ընթերցող, քո հիշողությունը վերլուծական մեկնություններով չծանրաբեռնելու համար ստորև ներկայացնում եմ համեստ մի հուշագիր, ուր կխոսի երաժշտական կյանքի տարեգրությունը, ըստ իս համառոտ, քանզի հիշել բոլոր դեպքերն ու դեմքերը և՛ հեռու է մեր խնդրից և՛ բարդ՝:

1941 թ.

ՀՈՒԼԻՍ

ՕՐԸ

6.—Սիմֆոնիկ համերգ՝ Երևանի հայֆիլ. դահլիճում (դիր.՝ Կ. Սարաջև): Ծրագրում՝ Մոցարտ-սիմֆոնիա o moll, Գրիգ-սիմֆոնիկ պատկեր, Գլինկա—«Արագոնյան խոտա»

ՍՀ, 6 հուլիսի, № 159:

15.—Սոնատի երեկո Երևանի ֆիլհարմոնիայի դահլիճում՝ պաշտպանության ֆոնդի օգտին: Կատարողներ՝ Ա. Ազատյան (ալտ), Ն. Խանզադյան (դաշնամուր), Ծրագրում՝ Մարչելո, Գլինկա, Հենդել, Տորչինի, Գրիգ

Կոմունիստ, 15 նոյեմբերի № 271:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ:

1. **Шавердян А.** — Песни о священной войне, «Известия», 29 июня 1941, № 152.
2. **Գասպարյան Ս.**—Սովետական օդաչուների քայլերգը փողային նվագախմբի համար, պարտիտուրա). Երևան, Պետհրատ.
3. **Միրզոյան Մ.**— Հաղթողներին (երկձայն երգչախմբի և դաշնամուրի համար) Խոսք՝ Հովհ. Ծիրազի: Երևան, Պետհրատ.

---

[1] Բացթողումների և վրիպումների համար ներողություն եմ խնդրում, քանզի ես ոչ երաժշտագետ եմ և ոչ էլ 1941—1945 թթ. երաժշտական կյանքի ականատես (Ս. Գ.)

[2] Մատենագիտության մեջ հիշատակվող «Կոմունիստը» Երևանում ռուսերեն հրատարակվող «Коммунист» թերթն է, իսկ ՍՀ-ն՝ «Սովետական Հայաստանը»

1942 թ.

ՓԵՏՐՎԱՐ

ՕՐԸ

4.— Ջութակահար Հրաչյա Բոգդանյանի համերգը Երևանի ֆիլհար. դահլիճում՝ պաշտպանության ֆոնդի օգտին. նվագակցեց Գ. Դոմբաևը

Կոմունիստ, 4 փետրվարի, № 29:

9.—Սիմֆոնիկ համերգ՝ Երևանի ֆիլհար. դահլիճում (դիր. Կ. Սարաջև): Ծրագրում՝ Բեթհովենի 5-րդ սիմֆոնիան, «Էգմոնդ» սիմֆոնիկ նախերգանքը

Կոմունիստ, 8 փետրվարի № 33:

21—22.—Դաշնակահար Կոնստանդին Իգումնովի և երգչուհի Անատոլի Դոլիվոյի համերգները Երևանի ֆիլհար. դահլիճում: Մասնակցեց Ա. Ռուբբախը: Ծրագրում՝ Բեթհովեն, Մենդելսոն, Շուման, Լիստ, Չայկովսկի:

Կոմունիստ, 22 փետրվարի, № 45:

ՄԱՐՏ

14.—Ուկրաինական «Դումկա» պետկապելլայի համերգը Երևանի կարմիր բանակի տանը (գեղ. ղեկ.՝ Վ. Ս. Մինկա, դիր.՝ Կ. Ֆ. Գորոդովենկո):

Կոմունիստ, 14 մարտի, № 62:

25—29.— Թամարա Խանումի (Պետրոսյան) հյուրախաղերը՝ Երևանի ֆիլհար. դահլիճում:
Ծրագրում՝ ԽՍՀՄ ժողովուրդների երգեր և պարեր:

ԱՊՐԻԼ

27—28.—Թամարա Խանումի հյուրախաղերը Լենինականում: Ծրագրում՝ ԽՍՀՄ ժողովուրդների երգեր և պարեր:

Աշոտ Սաթյանը «Գվարդիական կինը» գեղարվեստական կինոնկարի համար գրեց երաժշտություն:
«Հայկական կինոարվեստը», Երևան, 1958 թ., էջ 211:

ՄԱՅԻՍ

Հայկական պետ. ջազ-նվագախմբի համերգները Ղրիմի ռազմաճակատում (գեղ. ղեկ.՝ Ա. Այվազյան, դիր.՝ Մ. Թադևոսյան)

Կոմունիստ, 24 մայիսի, № 121:

ՀՈՒՆԻՍ

22.—Երևանում բացվեց երաժշտական կոմեդիայի պետթատրոնը:

ՍՀ, 18 հուլիսի, № 150

ՀՈՒԼԻՍ

1.—Հայաստանի ժողովրդական գործիքների անսամբլի համերգը՝ Երևանի ֆիլհար. ամառային թատրոնում (ղեկ.՝ **Գ. Միրզոյան**):
Ելույթ ունեցան երգչուհիներ Ծ. Մկրտչյանը և Ա. Բաղդասարյանը:

7.—Ջութակահար Հրաչյա Բոգդանյանի համերգը Երևանի ֆիլհար. դահլիճում, Ծրագրում՝ Հենդել, Բախ, Պագանինի, Չայկովսկի, Կրեյսլեր, Սարասատե, Ա. Խաչատրյան: Նվագակցեց Գ. Դոմբաևը:

10.—Դմիտրի Շոստակովիչի 7-րդ սիմֆոնիայի կատարման առթիվ Հայաստանի արվեստի գործերի վարչության կողմից Երևան հրավիրվեցին Ն. Մյասկովսկին, Յու. Շապորինը, Գ. Կիլաձեն, Շ. Մշվելիձեն, Կ. Իգումնովը, Ա. Գաուկը, Պ. Ռյազանովը, Վ. Նեչաևը, Ա. Բալանչիվաձեն, Շ. Ազմայպարաշվիլին, Պ. Խուչուան, Ա. Տիգրանյանը, Ս. Բարխուդարյանը:

Կոմունիստ, 11 հուլիսի, № 162:

11—12.—Դմիտրի Շոստակովիչի 7-րդ սիմֆոնիայի առաջին կատարումը՝ Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետթատրոնում: Ներածական խոսք՝ Ա. Շահվերդյանի: Կատարեց օպերայի և բալետի պետթատրոնի սիմֆոնիկ նվագախումբը (ղեկ.՝ Մ. Թավրիզյան): Հանրապետական մամուլը լայնորեն արձագանքեց, լույս տեսան այդ ստեղծագործության և կատարման մասին բազմաթիվ հոդվածներ, դրանցից են՝

Սարաջև Կ.— Բացառիկ ուժի ստեղծագործություն:
ՍՀ, 12 հուլիսի, № 163:

Դանիելյան Հ.— Երաժշտական հիանալի հուշարձանը:
Նույն տեղում:

Գուլակյան Ա.— Լիարժեք սիմֆոնիա:
Նույն տեղում:

Թավրիզյան Մ.—7-րդ սիմֆոնիայի մասին:
Նույն տեղում:

Շահվերդյան Ա.— Շոստակովիչի 7-րդ սիմֆոնիան:
ՍԳ, № 7, էջ 111—113:

Դեմիրճյան Դ.— Ռուսական սիմֆոնիզմի մեծ հաղթանակը:
Նույն տեղում, էջ 114:

Սարյան Մարտիրոս— 7-րդ սիմֆոնիան:
Նույն տեղում:

Վաղարշյան Վ.— Մեր ժամանակի խոշորագույն ստեղծագործությունը:
Նույն տեղում:

«Կոմունիստ» թերթի նույն թվականի հուլիսի 14-ի № 164-ում իրենց խոսքն ասացին Ն. Յ. Մյասկովսկին, Ալեքսանդր Գաուկը, Ծալվա Մշվելիձեն, Պ. Ռյազանովը, Ս. Բարխուդարյանը, Գ. Կալաձեն, Պ. Խուչուան, Ա. Տեր-Ղևոնդյանը, Դ. Դեմիրճյանը և ուրիշներ:

14.—Դմիտրի Շոստակովիչի 7-րդ սիմֆոնիայի կատարումը զինվորների և հրամանատարների համար՝ Երևանի Կարմիր բանակի տանը: Կատարեց Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետթատրոնի սիմֆոնիկ նվագախումբը (դիր.՝ Մ. Թավրիզյան):

Կոմունիստ, 15 հուլիսի, № 165:

14—15.—Անդրկովկասյան զինվորական օկրուգի կարմիր բանակայինների երգի-պարի անսամբլի համերգը Երևանի ֆիլհար. դահլիճում (գեղ. ղեկ.՝ Յու. Շապորին, բալ.՝ Ի. Արբատով, դիր.՝ Ա. Ուստինով):

Կոմունիստ, 21 հուլիսի, № 170:

17.—Անդրկովկասյան զինվորական օկրուգի կարմիր բանակայինների երգի-պարի անսամբլի համերգը Լենինականում (գեղ. ղեկ.՝ Յու. Շապորին, բալետմայստեր՝ Ի. Արբատով, դիր.՝ Ա. Ուստինով):

Բանվոր, 17 հուլիսի, № 88:

22.—Համերգ զինվորների համար՝ Երևանի Կարմիր բանակի տանը:

Ելույթ ունեցավ հայկական ժողովրդական երգի-պարի անսամբլը (գեղ. ղեկ.՝ Թ. Ալթունյան), մասնակցում էին Պ. Լիսիցյանը, Ա. Գաբրիելյանը, Ա. Դոլուխանյանը, Հ. Դանիելյանը, Մ. Դենիսովը, Գ. Ադամյանը, Ղ. Պողոսյանը, Թ. Միանսարովան:

Կոմունիստ, 24 հուլիսի, № 173:

ՕԳՈՍՏՈՍ

4.—Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետթատրոնում նշվեց Ծարա Տալյանի բեմական գործունեության 30-ամյակը:

«Վոկալ արվեստի վարպետը». ՍԳ, № 8, էջ 95:

23—25.—Համերգներ Լենինականի ռուսական թատրոնում: Ելույթ ունեցան Ա. Դուլուխանյանը, Պ. Լիսիցյանը, Վ. Սուրովը, Լ. Վոլնովա-Ծիկանյանը, Գ. Գևորգյանը, Տ. Սազանդարյանը:

Բանվոր, 25 օգոստոսի, № 104:

ՍԵՊՏԵՄԲԵՐ

14.—Սիմֆոնիկ համերգ Երևանի ֆիլհար. դահլիճում (դիր.՝ Կ. Սարաջև): Մենակատար-թավջութակահար Լևոն Գրիգորյան, Ծրագրում՝ Գլազունով—6-րդ սիմֆոնիա, Դեբյուսի—պրելյուդ, Սեն-Սանս—կոնցերտ թավջութակի համար, Նվագախմբի հետ:

Կոմունիստ, 11 սեպտեմբերի, № 217:

21.—Սիմֆոնիկ համերգ Երևանի ֆիլհար. դահլիճում (դիր.՝ Ի. Խարաջանյան): Մենակատար-դաշնակահար՝ Գրիգորի Գինզբուրգ: Ծրագրում՝ Շուբերտ, Գրիգ, Վեբեր:

Կոմունիստ, 20 սեպտեմբերի, № 223:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

17—18.—Համերգներ Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետթատրոնում՝ Կարմիր բանակի օգտին: Մասնակցում էին՝ Հ. Դանիելյանը, Կ. Իգումնովը, Շ. Տալյանը, Մ. Դենիսովը, Պ. Լիսիցյանը, Կ. Էրդելին, Ս. Ռոշալը, Լ. Վոլնովա-Ծիկանյանը, Ա. Ավետիսյանը, Գ. Գաբրիելյանը, Տ. Սազանդարյանը, Ս. Սարգսյանը, հայկական ժողովրդական երգի-պարի պետանսամբլը (գեղ. ղեկ.՝ Թ. Ալթունյան), Հայաստանի ժողովրդական գործիքների անսամբլը (ղեկ.՝ Գ. Միրզոյան), երգչուհի Ծ. Մկրտչյանը: Նվագակցեցին Ա. Դուլուխանյանը, Թ. Միանսարովան, Ն. Ճաչենկոն:

ՍՀ, 17 հոկտեմբերի, № 246:

ՆՈՅԵՄԲԵՐ

17.—Երևանում ավարտվեց երաժշտական ստեղծագործություններին նվիրված մրցանակաբաշխությունը: Առաջին մրցանակը շնորհվեց Ռ. Աթայանի «Ազատության զանգը» գործին՝ գրված երգչախմբի և սիմֆոնիկ

Նվագախմբի համար (խոսք՝ Ավ. Իսահակյանի) երեք երրորդ մրցանակները շնորհվեցին Ա. Տեր-Ղևոնդյանին «Հեծելազորների քայլերգի», Ա. Դոլուխանյանին՝ «Պատերազմի երգեր» վոկալ շարքի (խոսք՝ Հովհ. Շիրազի), Ա. Մերանգուլյանին՝ «Հայրենիք» երգի համար (խոսք՝ Ա. Կշտունու): Պատվոգրերով պարգևատրվեցին Ժ. Համբարձումյանը «Հեծելազորների քայլերգի» և Մ. Միրզոյանը՝ «Հերոսական» երգի համար (խոսք՝ Ավ. Իսահակյանի):

Կոմունիստ, 18 նոյեմբերի, № 272:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ա) Նոտաներ

1. **Մանուկյան Ա.**— Ռազմա-հայրենասիրական երգեր՝ ինքնուս ստեղծագործողների աշխատանքներից, կազմեց և խմբագրեց Ա. Մանուկյանը: Երևան:
2. **Սաթյան Ա.**— Ջաքիյանի դիվիզիայի քայլերգը (փողային նվագախմբի համար), պարտիտուրա: Երևան, Պետհրատ:
3. **Խաչատրյան Ա.**— Կապիտան Գաստելլո, խոսք՝ Ա. Լուգինի: Մոսկվա, «Մուզգիզ»:

բ) Հոդվածներ

4. **Բաբայան Ս.**— Տիգրան Չուխաջյանը և նրա «Արշակ Բ» օպերան:
ՍԳ., № 8, էջ 69—74:
5. **Ծահվերդյան Ա.**— Հայաստանի կոմպոզիտորները Կարմիր բանակին:

Կոմունիստ, 6 մարտի, № 55:

6. **Լիսիցյան Պ.**— Արտիստի ռազմադաշտային ձայնագրությունները:

Կոմունիստ, 11 մարտի, № 59:

1948 թ.

ՀՈՒՆՎԱՐ

ՕՐԸ

9.— Տավղահարուհի Քսենյա Էրդելի համերգը Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետթատրոնում՝ երգչուհի Հ. Դանիելյանի մասնակցությամբ:

ՍՀ, 9 հունվարի, № 7:

10.—Ջութակահար Ավետ Գաբրիելյանի համերգը Հայֆիլ. դահլիճում՝ պաշտպանության ֆոնդի օգտին: Ծրագրում՝ Գրիգ, Շոսսոն, Սարասատե, Ա. Խաչատրյան, Ալ. Սպենդիարյան, Ն. Տիգրանյան:

Կոմունիստ, 10 հունվարի, № 8:

ՓԵՏՐՎԱՐ

14.—Սիմֆոնիկ համերգ՝ Հայֆիլ. դահլիճում (դիր.՝ Կ. Սարաջև): Մենակատար-կլարնետիստ՝ Գեղամ Ֆլջյան: Ծրագրում՝ Սոցարտ:

Կոմունիստ, 14 փետրվարի, № 37:

15.— Սիմֆոնիկ համերգ՝ նվիրված Դմիտրի Շոստակովիչի ստեղծագործություններին՝ Հայֆիլ. դահլիճում (դիր.՝ Ի. Խարաջանյան): Ելույթ ունեցան ջութակահարներ Ն. Բալաբանյանը, Կ. Կոստանյանը, թավջութակահարներ. Լ. Գրիգորյանը, Գ. Թալալյանը: Մենակատար դաշնակահարուհի Մուզա Պավլովա: Ծրագրում՝ սիմֆոնիա, կոնցերտ դաշնամուրի համար նվագախմբի հետ, դաշնամուրային կվինտետ:

Կոմունիստ, 18 մարտի, № 62:

25.—Դաշնակահար Կոնստանդին Իգումնովի համերգ՝ Հայֆիլ. դահլիճում: Ծրագրում՝ Չայկովսկի:

ՍՀ, 25 մարտի, № 67:

27— Համերգ Սայաթ-Նովայի ստեղծագործություններից: Հայֆիլ. դահլիճում: Ելույթ ունեցան Սայաթ-Նովայի անվան հայկական գուսանական երգի անսամբլը (գեղ. ղեկ.՝ Վ. Սահակյան), Հայաստանի ժող. գործիքների անսամբլը (ղեկ.՝ Գ. Միրզոյան), երգիչներ Ժ. Մկրտչյանը և Մ. Աղալանը:

ՍՀ, 27 մարտի, № 68:

ԱՊՐԻԼ

6.— Համերգ Ավետիք Իսահակյանի գրած տեքստերով: Հայֆիլ. դահլիճում: Մասնակցեցին երգչուհիներ Հ. Դանիելյանը, Տ. Սազանդարյանը, Թ. Բեջանյանը, Ա. Գյուլզադյանը, Լ. Մամաջանյանը: Նվագակցեցին Ա. Դոլուխանյանը և Ն. Խանզադյանը:

ՍՀ, 16 ապրիլի, № 75:

20.—Սիմֆոնիկ համերգ՝ նվիրված Նիկողայոս Տիգրանյանի ստեղծագործություններին, Հայֆիլ. դահլիճում (դիր.՝ Կ. Սարաջև):

ՍՀ, 20 ապրիլի, № 83:

26—Սիմֆոնիկ համերգ Հայֆիլ. դահլիճում (դիր.՝ Կ. Սարաջև): Մենակատար-երգիչ՝ Միխայիլ Դենիսով: Ծրագրում՝ Մյասկովսկի, Ա. Այվազյան, Ա. Դոլուխանյան:

Կոմունիստ, 25 ապրիլի, № 89:

29.—Սիմֆոնիկ համերգ Հայֆիլ. դահլիճում (դիր.՝ Գ. Վարժապետյան): Ծրագրում՝ Ռիմսկի-Կորսակով—«Շեհերազադե» սիմֆոնիկ սյուիտ, Ալ. Սպենդիարյան—«Ղրիմի էսքիզներ», «Երևանյան էտյուդներ», «Էտյուդ հրեական թեմաներով», «Պարսկական քայլերգ» «Ալմաստ» օպերայից:

Կոմունիստ, 28 ապրիլի, № 91:

ՄԱՅԻՍ

7.—Երեկո՝ նվիրված Ալեքսանդր Սպենդիարյանի մահվան 15-ամյակին, Երևանի պետկոնսերվատորիայի դահլիճում: Բացման խոսք՝ Ջ. Վարդանյանի: Հուշեր պատմեցին Գ. Լևոնյանը, Տ. Հախումյանը, Մ. Սարյանը, Ավ. Իսահակյանը, Տ. Սպենդիարովան, Ն. Թումանյանը, Մ. Գևորգյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը:

ՍՀ, 7 մայիսի, № 86:

ՀՈՒՆԻՍ

21.—Երեկո՝ նվիրված դաշնակահար Կոնստանդին Իգումնովի Ծննդյան 70-ամյակին, Հայֆիլ. դահլիճում: Ներածական խոսք՝ Ջ. Վարդանյանի: Ջեկ.՝ Գ. Դոմբաև: Ողջույնի խոսք՝ Ս. Գասպարյանի, Կ. Սարաջևի, Հ. Դանիելյանի, Ա. Տեր-Ղևոնդյանի, Մ. Դամբարյանի: Պատասխան խոսքով հանդես եկավ Կ. Իգումնովը: Համերգային բաժնում ելույթ ունեցավ Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետթատրոնի սրսֆոնիկ նվագախումբը (դիր.՝ Կ. Սարաջև): Մենակատար Կ. Իգումնով: Ծրագրում՝ Չայկովսկի—կոնցերտ դաշնամուրի համար նվագախմբի հետ, Տանեև—անտրակտ «Սրեսթեյա» օպերայից, Ալ. Սպենդիարյան—«Պարսկական քայլերգ» «Ալմաստ» օպերայից:

Կոմունիստ, 23 հունիսի, № 130:

25—27.—Երևանի պետկոնսերվատորիայի դասատու Կոնստանդին Իգումնովի դաշնամուրային դասարանի ուսանողների համերգը՝ Հայֆիլ. դահլիճում:

Կոմունիստ, 27 հունիսի, № 133:

ՀՈՒԼԻՍ

3.—Համերգ՝ Կոմիտասի ստեղծագործություններից, Հայֆիլ. դահլիճում: Ելույթ ունեցան Հ. Դանիելյանը, Ժ. Տալյանը, Ա. Գաբրիելյանը:

Կոմունիստ, 2 հուլիսի, № 136:

4.—Համերգ Հայֆիլ. ամառային թատրոնում: Ելույթ ունեցան Ա. Գաբրիելյանը, Պ. Լիսիցյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը, Ա. Դոլուխանյանը, Արտ. Խաչատրյանը և հայկական ժողովրդական երգի-պարի պետանսամբլը (գեղ. ղեկ.՝ Թ. Ալթունյան, բալ.՝ Է. Մանուկյան, գործիքային մասի ղեկ.՝ Ա. Ալեքսանդրյան): Ծրագրում՝ Չայկովսկի, Շոպեն, Կոմիտաս, Սայաթ-Նովա, Ալ. Սպենդիարյան:

Կոմունիստ, 4 հուլիսի, № 138:

19.— Սիմֆոնիկ համերգ Հայֆիլ. ամառային թատրոնում (դիր.՝ Ի. Խարաջանյան): Ծրագրում՝ Լյադով, Մուսորգսկի:

Կոմունիստ, 18 հուլիսի, № 148:

ՕԳՈՍՏՈՍ

Աշոտ Սաթյանը «Դուստրը» գեղարվեստական կինոնկարի համար գրեց երաժշտություն:

«Հայկական կինոարվեստ» Երևան, 1958, էջ 211:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

7.—Անդրկովկասյան ռազմաճակատի փողային նվագախմբի համերգը Երևանում՝ Մ. Դենիսովի մասնակցությամբ (դիր.՝ Ս. Բաբլոև և Մ. Բրուդնիկով):

Կոմունիստ, 6 հոկտեմբերի, № 205:

9—10.— Դաշնակահար Սվյատոսլավ Ռիխտերի համերգները՝ Հայֆիլ. ճմեռային համերգաշրջանի բացմանը: Ծրագրում՝ Բեթհովեն, Լիստ, Չայկովսկի, Ռախմանինով:

Կոմունիստ, 10 հոկտեմբերի, № 208:

11.—Սիմֆոնիկ համերգ Հայֆիլ. դահլիճում (դիր.՝ Ի. Խարաջանյան): Մենակատար-դաշնակահար՝ Սվյատոսլավ Ռիխտեր: Ծրագրում՝ Չայկովսկի—6-րդ սիմֆոնիա, կոնցերտ դաշնամուրի համար նվագախմբի հետ, սյուիտ «Շչելկունչիկ» բալետից:

Կոմունիստ, 10 հոկտեմբերի, № 208:

13—15.— Լենինգրադի ջազ-նվագախմբի հյուրախաղերը Հայֆիլ. դահլիճում՝ Կլավդիա Շուրժենկոյի ղեկավարությամբ և մասնակցությամբ:

Կոմունիստ, 13 հոկտեմբերի, № 210:

16.—Արև Բաղդասարյանի և Սեդա Ավագյանի համերգը Հայֆիլ. դահլիճում: Ծրագրում՝ ԽՍՀՄ ժողովուրդների երգեր և պարեր:

ՍՀ, 16 հոկտեմբերի, № 212:

18.—Սիմֆոնիկ համերգ Հայֆիլ. դահլիճում (դիր.՝ Ի. Խարաջանյան): Մենակատար-դաշնակահար՝ Յակով Ֆլիեր: Ծրագրում՝ Չայկովսկի, Լիստ:

Կոմունիստ, 17 հոկտեմբերի, № 213:

ՆՈՅԵՄԲԵՐ

17.—Գ. Տիգրանովի դասախոսությունը՝ «Հայ օպերայի զարգացման ուղին» թեմայով, Լենինականում:

Բանվոր, 17 նոյեմբերի, № 267:

20.—Մոսկվայի Այսեդորա Դունկանի անվան բալետային ստուդիայի երեկոն՝ Երևանում:

Կոմունիստ, 21 նոյեմբերի, № 237:

25—28.—Հոբելյանական գիտական--կատարողական նստաշրջան՝ նվիրված Պ. Ն. Չայկովսկու մահվան 50-ամյակին՝ Երևանի պետկոնսերվատորիայում:

Կոմունիստ, 27 նոյեմբերի, № 241:

29.—Սիմֆոնիկ համերգ Հայֆիլ. դահլիճում (դիր.՝ Կ. Սարաջև): Մենակատար-դաշնակահարուհի՝ Լիդիա Մազմանյան: Ծրագրում՝ Բեթհովեն—3-րդ սիմֆոնիա, Լիստ-կոնցերտ № 1 դաշնամուրի համար նվագախմբի հետ, «Պրելյուդներ» սիմֆոնիկ պոեմ:

Կոմունիստ, 28 նոյեմբերի, № 242:

ԴԵԿՏԵՄԲԵՐ

3.—Թբիլիսիի ֆիլհարմոնիայի մենակատար-դաշնակահարուհի Լիդիա Մազմանյանի համերգը Հայֆիլ. դահլիճում: Ծրագրում՝ Շոպեն, Լիստ, Մետներ, Սկրյաբին:

Կոմունիստ, 3 դեկտեմբերի, № 245:

13—15.—Սիմֆոնիկ համերգ Հայֆիլ. դահլիճում (դիր.՝ Ի. Խարաջանյան): Մենակատար—երգչուհի՝ Լյուբով Լազարևա: Ծրագրում՝ Վեբեր, Գլինկա, Գլազունով, Շտրաուս-վալսեր:

Կոմունիստ, 15 դեկտեմբերի, № 254:

13—21.—ԽՍՀՄ ռազմաձովային նավատորմի «Կարմիր նավատորմային» երգի-պարի կենտրոնական անսամբլի հյուրախաղերը Հայֆիլ. դահլիճում (գեղ. ղեկ.՝ Վ. Մուրադելի):

Կոմունիստ, 16 դեկտեմբերի, № 255:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Шавердян А. «Музыка Армении в период Отечественной войны»—«Информационный сборник», № 3—4, стр. 38—39 (о Гр. Егиазаряне).

1944 թ.

ՀՈՒՆՎԱՐ

ՕՐԸ

Համերգ՝ Նվիրված հայկական երաժշտությանը, Մոսկվայի Պ. Ի. Չայկովսկու անվան համերգային դահլիճում: Ներածական խոսք՝ Գ. Տիգրանովի: Ելույթ ունեցան Տ. Սազանդարյանը, Գ. Գաբրիելյանը, Ա. Գաբրիելյանը, Պ. Լիսիցյանը, Հ. Դանիելյանը, ԽՍՀՄ պետսիմֆոնիկ նվագախումբը (դիր.՝ Կ. Սարաջև), Ս. Թավրիզյանը, Լ. Ավետիսյանը, Մ. Դամբարյանը, Հայֆիլհարմոնիայի դաշնամուրային տրիոն (Ա. Ամբակումյան, Կ. Կոստանյան, Լ. Գրիգորյան), Ալ. Սպենդիարյանի անվան պետկվարտետը (Հ. Բոգդանյան, Հ. Աբաջյան, Ա. Ազատյան, Գ. Ադամյան): Ծրագրում՝ Կոմիտաս, Հ. Ստեփանյան, Ռ. Մելիքյան, Ալ. Սպենդիարյան, Ա. Խաչատրյան: Նվագակցեցին Ա. Դոլուխանյանը, Ն. Խանզադյանը:

Պրավդա, 28 փետրվարի, № 51:

ՓԵՏՐՎԱՐ

3.—Համերգ՝ Նվիրված հայկական երաժշտությանը, Մոսկվայի Պ. Ի. Չայկովսկու անվան համերգային դահլիճում: Ելույթ ունեցավ ԽՍՀՄ սիմֆոնիկ նվագախումբը (դիր.՝ Կ. Սարաջև): Մենակատար—դաշնակահար՝ Ալեքսանդր Հարությունյան: Ծրագրում՝ Մ. Մազմանյան—«Հաղթանակի պոեմ», Ա. Տեր-Մարտիրոսյան—սիմֆոնիկ պոեմ, Ա. Հարությունյան—կոնցերտ դաշնամուրի համար Նվագախմբի հետ, Գ. Եղիազարյան—«Հայաստան» սիմֆոնիկ պոեմ:

«Լիտերատուրա ի իսկուսստվո», 5 փետրվարի, № 6:

7.—Սիմֆոնիկ համերգ՝ Նվիրված Բեթհովենի ստեղծագործություններին, Հայֆիլ. դահլիճում (դիր.՝ Ի. Խարաջյան): Ծրագրում I և 5-րդ սիմֆոնիաները:

Կոմունիստ, 6 փետրվարի, № 26:

16—18.—Ջութակահար Դավիթ Օյստրախի հյուրախաղերը Հայֆիլ. դահլիճում, Նվագակցեց Ա. Մակարովը:

Կոմունիստ, 18 փետրվարի, № 34:

26—27.—Երգիչ Խան Շուշինսկու համերգները Հայֆիլ. դահլիճում՝ Բաքվի Մագոմաևի անվան ֆիլհարմոնիայի մենակատարներ Ս. Կադիմովայի (երգ), Ս. Սեյրանյանի, Ա. Ջավանշիրովի (թառ), Ն. Գրիգորյանի (քամանչա), Ա. Մամեդովի (դափ) մասնակցությամբ:

Կոմունիստ, 29 փետրվարի, № 42:

ՄԱՐՏ

20.—Հանդիսավոր երեկո՝ Նվիրված Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի ծննդյան 100-ամյակին, Հայֆիլ. դահլիճում: Ջեկ.՝ Գ. Տիգրանով: Հուշեր պատմեց Ա. Տեր-Ղևոնդյանը: Ելույթ ունեցան երգչուհիներ Հ. Դանիելյանը, Տ. Սազանդարյանը: Ծրագրում՝ Ռիմսկի-Կորսակով:

Կոմունիստ, 19 մարտի, № 56:

ԱՊՐԻԼ

10.—Ալ. Սպենդիարյանի անվան պետկվարտետի համերգը՝ Հայֆիլ. դահլիճում: Կազմը՝ Հ. Բոգդանյան, Հ. Աբաջյան, Ա. Ազատյան, Գ. Ադամյան: Ծրագրում՝ Մոցարտ, Շուբերտ, Ա. Բաբաջանյան:

Կոմունիստ, 9 ապրիլի, № 71:

Աշոտ Սաթյանը «Դավիթ Բեկ» գեղարվեստական կինոնկարի համար գրեց երաժշտություն:

ՍՀ, 12 ապրիլի, № 73:

Հայկական պետ. ջազ-նվագախմբի հյուրախաղերը՝ Բաքվում, Թբիլիսիում, Կիրովականում (գեղ. ղեկ.՝ Ա. Այվազյան, դիր.՝ Մ. Թադևոսյան):

Կոմունիստ, 19 ապրիլի № 78:

23.—Մոլդավական «Դոյնա» երգի-պարի պետանսամբլի համերգը Հայֆիլ. դահլիճում (գեղ. ղեկ.՝ Գ. Գերշֆելդ, խորմ.՝ Մ. Բրեզդենյակ):

Կոմունիստ, 23 ապրիլի, № 81:

26.—Արշակ Ադամյանի զեկուցումը՝ «Շեքսպիրի պոեզիայի սկզբունքները երաժշտության մեջ» թեմայով, համամիութենական շեքսպիրագիտական 6-րդ կոնֆերանսում՝ Նվիրված Շեքսպիրի ծննդյան 380-ամյակին՝ Սունդուկյանի անվան պետթատրոնում:

Կոմունիստ, 29 ապրիլի, № 85:

ՄԱՅԻՍ

6, 7, 14.— Դաշնակահար Ավյատոսլավ Ռիխտերի համերգները՝ Հայֆիլ. դահլիճում: Ծրագրում՝ Չայկովսկի, Ռախմանինով, Բեթհովեն, Լիստ:

Կոմունստ, 7 մայիսի, № 91:

26—28.—Երգչուհի Շողիկ Մկրտչյանի համերգները Հայֆիլ. դահլիճում: Մասնակցեց Հայաստանի ժողովրդական գործիքների անսամբլը (ղեկ.՝ Գ. Միրզոյան)

ՍՀ, 27 մայիսի, № 105

ՀՈՒՆԻՍ

5.—Երգչուհի Սաթենիկ Գասպարբեկի համերգը Հայֆիլ. դահլիճում: Ծրագրում՝ Կոմիտաս, Ռ. Մելիքյան, Հ. Ալեմշահ, Հ. Ստեփանյան: Նվագակցեց Օ. Վագենգելմը:

ՍՀ, 4 հունիսի, № 111:

13.—Սիմֆոնիկ համերգ՝ Նվիրված Մ. Ի. Գլինկայի ծնընդյան 140- ամյակին, Հայֆիլ. դահլիճում (դիր.՝ Կ Սարաջև): Ներածական խոսք՝ Գ. Տիգրանովի: Մենակատար-երգչուհի՝ Հ. Դանիելյան:

Կոմունիստ, 12 հունիսի, № 116:

14.— Դաշնամուրային դուետի երեկո Հայֆիլ. դահլիճում: Ելույթ ունեցան Բրունո Լուկը և Աննա Կլասը (Էստոնիա): Ծրագրում՝ Մոցարտ, Շուման, Արենսկի, Շուբերտ, Պրոկոֆև, Է. Կապպ:

Կոմունիստ, 18 հունիսի, № 120:

18.—Անդրկովկասյան ռազմաճակատի կարմիրբանակայինների երգի-պարի անսամբլի համերգը Երևանում (գեղ. ղեկ.՝ Բ. Պոնոմարենկո, դիր.՝ Ս. Բաբլոև):

Կոմունիստ, 18 հունիսի, № 120:

19.—Համերգ՝ ծակատայինների երեխաների օգնության ֆոնդի օգտին, Հայֆիլ. ամառային թատրոնում: Ելույթ

ունեցան Հ. Դանիելյանը, Տ. Սազանդարյանը, Գ. Գաբրիելյանը, Թ. Խաչատրյանը, Լ. Կոյնովա—Շիկանյանը, Ս. Սարգսյանը, Լ. Լազարևան, Գ. Մելքումյանը, Գ. Ադամյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը: Նվագակցեցին Օ. Վագենգելմը, Ն. Կայալովը, Ա. Հարությունյանը:

Կոմունիստ, 18 հունիսի, № 120:

ՀՈՒԼԻՍ

2—Հայաստանի ժողովրդական գործիքների անսամբլի համերգը Հայֆիլ. դահլիճում (ղեկ.՝ Գ. Միրզոյան): Մենակատարներ՝ Շողիկ Մկրտչյան և Սողոմոն Սեյրանյան:

ՍՀ, 21 հուլիսի, № 131:

5.— Համերգ՝ Ազատ Մանուկյանի ստեղծագործություններից, Հայֆիլ. դահլիճում: Ելույթ ունեցան երգիչներ Հ. Դանիելյանը, Լ. Մամաջանյանը, Ա. Մուշկամբարյանը, Ռ. Գուլաբյանը, Վ. Մաթևոսյանը, Մ. Աղայանը:

Կոմունիստ, 7 հուլիսի, № 133:

8.— Արամ Խաչատրյանի 2-րդ սիմֆոնիան Հայաստանի կոմպոզիտորների միության դահլիճում կատարեցին դաշնակահարներ Է. Ապրեսովան և Ա. Դոլուխանյանը: Քննարկմանը մասնակցեցին Հ. Դանիելյանը, Գ. Տիգրանովը, Ջ. Կարդանյանը, Ք. Քուշնարյանը, Ա. Ադամյանը, Տ. Տեր-Մարտիրոսյանը, Մ. Մազմանյանը, Է. Միրզոյանը, Գ. Դոմբաևը, Հ. Ստեփանյանը:

Կոմունիստ, 9 հուլիսի, № 135:

Դաշնակահար Գրիգորի Գինզբուրգի համերգը Հայֆիլ. ամառային դահլիճում: Ծրագրում՝ Բախ, Բեթհովեն, Լիստ, Պագանինի:

Կոմունիստ, 26 հուլիսի, № 147:

ՍԵՊՏԵՄԲԵՐ

16—19.—Գեներալ-գնդապետ Չիստյակովի զորքերի ջազ-նվագախմբի համերգները Հայֆիլ. ամառային թատրոնում (գեղ. ղեկ.՝ Հ. Խանջյան):

Կոմունիստ, 17 սեպտեմբերի, № 185:

17.—Համերգ ծակատայինների երեխաների օգնության ֆոնդի օգտին, Հայֆիլ. ամառային թատրոնում: Ելույթ ունեցան երգչուհիներ Հ. Դանիելյանը, Տ. Սազանդարյանը, Կոմիտասի անվան պետկվարտետը (Ա. Գաբրիելյան, Ն. Բալաբանյան, Մ. Տերյան, Ս. Ասլամազյան) և գեներալ-գնդապետ Չիստյակովի զորքերի ջազ-նվագախումբը (գեղ. ղեկ.՝ Հ. Խանջյան):

ՍՀ, 17 սեպտեմբերի, № 186:

20—21.—Երգիչ Դավիթ Անդդոլաձեի համերգները Հայֆիլ. ամառային թատրոնում: Ծրագրում՝ Ջ. Փալիաշվիլի, Ալ. Սպենդիարյան, Չայկովսկի: Նվագակցեց Մ. Կամոևան:

Կոմունիստ, 20 սեպտեմբերի, № 187:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

14—15.—Երգչուհի Նինա Դորլիակի համերգները Հայֆիլ. դահլիճում: Ծրագրում՝ Մոցարտ, Շուման, Լիստ, Մեյերբեր, Դելիբ, Դեբյուսի, Չայկովսկի, Ռախմանինով: Նվագակցեց Կ. Շուբերտը:

Կոմունիստ, 14 և 15 հոկտեմբերի, № 204 և 205:

ՆՈՅԵՄԲԵՐ

17.—Թառահար Սողոմոն Սեյրանյանի և դուդուկահար Լևոն Մադոյանի համերգը Հայֆիլ. դահլիճում:

ՍՀ, 7 նոյեմբերի, № 228:

18.—Երգիչ Նիկոլայ Սերդորովի, թավջութակահար Գուրգեն Ադամյանի և դաշնակահար Գրիգորի Դոմբաևի համերգը Հայֆիլ. դահլիճում:

Կոմունիստ, 18 նոյեմբերի, № 228:

19.—Դաշնակահար Գևորգ Սարաջևի համերգը Հայֆիլ. դահլիճում:

Կոմունիստ, 19 նոյեմբերի, № 229:

23.—Համերգ Հայֆիլ. դահլիճում՝ Շողիկ Մկրտչյանի (երգ), Սողոմոն Սեյրանյանի (թառ), Լևոն Մադոյանի (դուդուկ), Հայաստանի ժողովրդական գործիքների անսամբլի (ղեկ.՝ Գ. Միրզոյան) մասնակցությամբ:

ՍՀ, 23 նոյեմբերի, № 232:

ԴԵԿՏԵՄԲԵՐ

7.—Կոմիտասի անվան պետկվարտետի համերգը Հայֆիլ. դահլիճում: Կազմը՝ Ա. Գաբրիելյան, Ն. Բալաբանյան, Մ. Տերյան, Ա. Ասլամազյան: Ծրագրում՝ Չայկովսկի—կվարտետ № 1, Ն. Չեմբերջի—«Թեմա վարիացիաներով», Ս. Ասլամազյան—«Վարիացիաներ Պագանինիի թեմաներով»:

7 դեկտեմբերի, № 241:

12.—Անդրկովկասյան ռազմաճակատի կարմիրբանակայինների երգի-պարի անսամբլի համերգը Երևանում (դիր.՝ Ս. Բաբլոև, խորմ.՝ Գ. Բրուշտեյն, բալ.՝ Ի. Արբատով): Ծրագրում՝ ԽՍՀՄ ժողովուրդների երգեր և պարեր:

ՍՀ, 12 դեկտեմբերի, № 246:

16—17.— Թավջութակահար Դանիել Շաֆրանի համերգները Հայֆիլ. դահլիճում՝ դաշնակահարուհի Նինա Մուսինյանի մասնակցությամբ: Ծրագրում՝ Բախ, Մոցարտ, Շոպեն, Չայկովսկի:

ՍՀ, 17 դեկտեմբերի, № 280:

17—26.—Անդրկովկասյան հանրապետությունների խորհրդային երաժշտությանը նվիրված տասնօրյակը՝ Թբիլիսիում: Ներածական խոսք՝ Գ. Տիգրանովի: Ելույթ ունեցան Հայաստանի ժողովրդական գործիքների անսամբլը (ղեկ.՝ Ա. Մերանգուլյան, Գ. Միրզոյան), Սայաթ-Նովայի անվան հայկական գուսանական երգի անսամբլը (գեղ. ղեկ.՝ Վ. Սահակյան), հայկական պետ. ջազ-նվագախումբը (ղեկ.՝ Ա. Այվազյան):

ՍԳԱ, № 12, էջ 92—96:

18.—Համերգ Թբիլիսիում՝ նվիրված հայկական կամերային-գործիքային երաժշտությանը, անդրկովկասյան հանրապետությունների խորհրդային երաժշտության տասնօրյակին: Ելույթ ունեցան Գ. Չեբոտարյանը, Ա. Պետրոսյանը, Գ. Գաբրիելյանը, Տ. Սազանդարյանը, Թ. Խաչատրյանը, Ալ. Սպենդիարյանի անվան

պետկվարտետը (Հ. Բոգդանյան, Հ. Աբաջյան, Ա. Ազատյան, Գ. Ադամյան), Կոմիտասի անվան պետկվարտետը (Ա. Գաբրիելյան, Ն. Բալաբանյան, Մ.Տերյան, Ս. Ասլամազյան), ծրագրում՝ Գ. Չեբոտարյան, Մ. Միրզոյան, Ա. Տեր-Ղևոնդյան, Կ. Ջաքարյան, Հ. Ստեփանյան, Ա. Մանուկյան, Լ. Խոջաէյնաթյան, Է. Միրզոյան, Ա. Հարությունյան, Ա. Բաբաջանյան:

Կոմունիստ, 22 դեկտեմբերի, № 252.:

79.—Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետթատրոնի սիմֆոնիկ նվագախմբի համերգը Թբիլիսիում՝ անդրկովկասյան հանրապետությունների խորհրդային երաժշտությանը նվիրված տասնօրյակին (դիր.՝ Ս. Զարեքյան, Գ. Բուդաղյան, Ռ. Ստեփանյան): Մենակատար-դաշնակահար՝ Առնո Բաբաջանյան. Ծրագրում՝ Հ. Ստեփանյան, Ա. Հարությունյան, Ա. Տեր-Ղևոնդյան, Կ. Ջաքարյան, Ա. Բաբաջանյան, Է. Միրզոյան:

Տե՛ս Գ. Տիգրանով. «Սովետական Հայաստանի կոմպոզիտորները պատերազմի տարիներին»:

Կոմունիստ, 31 դեկտեմբերի, № 259:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ա) Նոտաներ

1. **Աթայան Ռ.**—Վրեժ, ձայնի համար՝ դաշնամուրի նվագակցությամբ: Խոսք՝ Ղ. Կոմունու, Երևան, Պետհրատ:
2. **Դոլուխանյան Ա.**— Սեր, ձայնի համար՝ դաշնամուրի նվագակցությամբ: Խոսք՝ Հովի. Ծիրազի: Երևան, Պետհրատ:
3. **Եղիազարյան Գ.**— Ատելության երգ, ձայնի համար. դաշնամուրի նվագակցությամբ: Խոսք՝ Մ. Մելիքսեթյանի: Երևան, Պետհրատ:
4. **Ջաքարյան Կ.**— Իմ սիրելի հրամանատար, ձայնի համար՝ դաշնամուրի նվագակցությամբ: Խոսք՝ Ա. Վը2տունու: Երևան, Պետհրատ:
5. «Սովետական Հայաստանի կոմպոզիտորները Հայրենական մեծ պատերազմին»— կազմեց Ս. Գասպարյանը, խմբագիր՝ Ա. Դոլուխանյան: Երևան, Պետհրատ:
6. **Հարությունյան Ա.**—Մենք չունենք պարտություն, ձայնի համար՝ դաշնամուրի նվագակցությամբ: Խոսք՝ Գ. Բորյանի, Երևան, Պետհրատ:
7. **Ստեփանյան Հ.**—Կարմիր պահակ, ձայնի համար՝ դաշնամուրի նվագակցությամբ: Խոսք՝ Մ. Մելիքյանի: Երևան, Պետհրատ:
8. «Սովետական Միության հիմնը» երկձայն երգչախմբի համար, դաշնամուրի նվագակցությամբ: Երևան, Պետհրատ:
9. **Վարդանյան Ջ.**—Ռազմական քայլերգ, ձայնի համար՝ դաշնամուրի նվագակցությամբ: Երևան, Պետհրատ:
10. **Տալյան Վ.**— Կովկասի հերոսները, ձայնի համար՝ դաշնամուրի նվագակցությամբ: Երևան, Պետհրատ:
11. **Տեր-Ղևոնդյան Ա.**— Կովկասի հերոսները, ձայնի համար՝ դաշնամուրի նվագակցությամբ: Երևան, Պետհրատ:

բ) Հոդվածներ

12. **Աղայան Մ.**, Ռիմսկի-Կորսակով Ն. Ա.—(ծննդյան 100-ամյակի առթիվ):

ՍԳԱ, № 2—3, էջ 95—102:

13. **Գասպարյան Ս.**—Ռիմսկի-Կորսակով (ծննդյան 100-ամյակի առթիվ),

ՍՀ, 18 մարտի, № 65:

14. **Տիգրանյան Գ.**— Սովետական Հայաստանի կոմպոզիտորները Հայրենական պատերազմի տարիներին:

ՍՀ, 31 դեկտեմբերի, № 260:

15. **Գլիեր Ռ.**— Հայ երաժշտության մասին: Նույն տեղում:
16. **Մշվելիձե Ծ.**— Վարպետություն և հասունություն:

Նույն տեղում:

17. **Белза Игорь**—Две новые симфонии (А. Хачатурян)—«Известия», 5 января, № 4:
18. **Хачатурян Арам**—Симфония № 2 (Автор о своей симфонии)—Литература и искусство, 8 января, № 2:
19. **Кузнецов К.**—Об одном концерте (2-ая симф. Хачатуряна)—Литература и искусство», 18 февраля, № 12:
20. **Шагинян А.**—«Красноармейская художественная самодеятельность», «Коммунист», 9 июля, № 135.

1945 թ.

ՀՈՒՆՎԱՐ

12—13.—Կայացավ Հայաստանի կոմպոզիտորների միության առաջին համագումարը Երևանում: Հաշվետու զեկուցումով հանդես եկավ կոմպոզիտորների միության նախագահ Հ. Ստեփանյանը: Մտքերի փոխանակմանը մասնակցեցին Ա. Տեր-Ղևոնդյանը, Գ. Դոմբաևը, Ռ. Ստեփանյանը, Հ. Դանիելյանը, Գ. Բուդաղյանը, Ս. Կոպտևը, Տ. Տեր-Մարտիրոսյանը, Ջ. Ջուշնարյանը, Մ. Աղայանը, Գ. Եղիազարյանը, Էդ. Միրզոյանը, Էդ. Կզարթմյանը, Ա. Ծառուկյանը (Բարսամյան) Ջ. Վարդանյանը, Ա. Այվազյանը, Ծ. Տալյանը, Խ. Թոռջյանը, Գ. Տիգրանովը, Ց. Բրուտյանը, Վ. Տալյանը, Վ. Բունին, Ա. Ջոչարյանը, Ա. Բաբաջանյանը, Հ. Պողոսյանը, Ս. Կարապետյանը, Ջ. Գրիգորյանը:

Կոմունիստ, 14 հունվարի, № 9:

20.—Թառահար Սողոմոն Սեյրանյանի և դուդուկահար Լևոն Մադոյանի համերգը Հայֆիլ. դահլիճում:

ՍՀ, 19 հունվարի, № 12:

29—31.—Բելոռուսիայի ջազ-նվագախմբի հյուրախաղերը Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետթատրոնում՝ Էդդի Ռոզների ղեկավարությամբ և մասնակցությամբ:

Կոմունիստ, 2 փետրվարի, № 22:

ՓԵՏՐՎԱՐ

18—19.—Ջութակահար Միխայիլ Ֆիխտենգոլցի համերգները Հայֆիլ. դահլիճում: Ծրագրում՝ Շոպեն, Ռախմանինով, Վիտալի, Վենյավսկի, Բիզե, Ֆիխտենգոլց, Մոցարտ, Ֆրանկ, Պրոկոֆև: Նվագակցեց Լ. Ֆիխտենգոլցը:

Կոմունիստ, 18 հունվարի, № 34:

24—25.—Դաշնակահար Իսահակ Միխնովսկու համերգները Հայֆիլ. դահլիճում: Ծրագրում՝ Բախ-Բուզոնի, Շոպեն,

Շուբերտ, Լիստ, Սկրյաբին, Զայկովսկի, Ռախմանինով, Միխնովսկի:

Կոմունիստ, 24 և 25 փետրվարի, № 38, 39:

ՄԱՐՏ

2.—Երգիչ Նիկոլայ Սերդոբովի համերգը Հայֆիլ. դահլիճում: Ծրագրում՝ Գուրիլյով, Դարգոմիժսկի, Գլինկա, Ռախմանինով, Զայկովսկի, Մոցարտ, Վերդի, Բրամս, Շուման: Նվագակցեց Գ. Դոմբաևը:

Կոմունիստ, 2 մարտի, № 42:

15.—Ինքնագործ արվեստի օլիմպիադա Հայֆիլ. դահլիճում: Ելույթ ունեցան Երևանի երգչախմբային կոլեկտիվները և երգիչ-մենակատարները:

Կոմունիստ, 24 մարտի, № 58:

17.—Երգչուհի Ծողիկ Մկրտչյանի, քամանչահար Գուրգեն Միրզոյանի և թառահար Ալեքսանդր Սարգսյանի համերգը Հայֆիլ. դահլիճում:

ՍՀ, 17 մարտի, № 53:

29.—Երգչուհի Գոհար Նազարյանի համերգը Երևանի արվեստի աշխատողների տանը: Ներածական խոսք՝ Գ. Տիգրանովի: Ծրագրում՝ Մոցարտ, Պուչինի, Վերդի, Կոմիտաս, Ռ. Մելիքյան, Հ. Ստեփանյան, Ա. Տեր-Ղևոնդյան, Վ. Տալյան: Նվագակցեց Ծ. Ջաքարյանը:

Կոմունիստ, 30 մարտի, № 62:

29—30.—Դաշնակահարուհի Մարիա Գրինբերգի համերգները Հայֆիլ. դահլիճում: Ծրագրում՝ Բախ, Բեթհովեն, Շուբերտ, Մենդելսոն, Լիստ, Ռախմանինով:

ՍՀ, 30 մարտի, № 62:

ԱՊՐԻԼ

1.—Ռոմանոս Մելիքյանի երգերի երեկոն՝ նվիրված նրա մահվան 10-ամյակին, Հայֆիլ. դահլիճում: Մենակատար՝ Տաթևիկ Սազանդարյան: Նվագակցեց Ն. Սաղյանը:

ՍՀ, 1 ապրիլի, № 64:

2.—Երգչուհի Գոհար Նազարյանի համերգը Հայֆիլ. դահլիճում: Ծրագրում. Շուբերտ, Բելլինի, Ֆրանց, Պուչինի, Բրամս, Կոմիտաս, Ռ. Մելիքյան, Հ. Ստեփանյան, Ա. Տեր-Ղևոնդյան: Նվագակցեց Ս. Բունիաթյանը:

Կոմունիստ, 1 ապրիլի, № 64:

13—15.—Լենինգրադի Կիրովի անվան օպերայի և բալետի պետթատրոնի մենակատար Նիկոլայ Սերեդայի համերգները Հայֆիլ. դահլիճում: Մասնակցեցին Հ. Բոգդանյանը և Գ. Դոմբաևը: Ծրագրում՝ արիաներ Վերդիի «Տրավիատա», «Ռիգոլետտո», Մասնեի «Վերթեր», «Մանոն», Զայկովսկու «Եվգենի Օնեգին» և Նապրավնիկի «Դուբրովսկի» օպերաներից:

ՍՀ, 13 ապրիլի, № 72:

16.—Ալտիստ Արշալույս Ազատյանի համերգը Հայֆիլ. դահլիճում: Ծրագրում՝ Հենդել, Ռուբինշտեյն, Վլասով, Շուման, Գրանադոս, Ռ. Ստեփանյան, Ա. Հարությունյան: Նվագակցեց Օ. Վագենգեյմը:

Կոմունիստ, 15 ապրիլի, № 74:

27.—Երգիչ Լև Առաքելովի և դաշնակահարուհի Լյուսի Եսայանի համերգը Հայֆիլ. դահլիճում: Ծրագրում՝ Բախ, Լիստ, Սկարլատի, Ռամո, Գոդովսկի, Զայկովսկի, Կոմիտաս, Ս. Բարխուդարյան, Ռախմանինով: Նվագակցեց Ե. Տեր-Մինասովան:

ՍՀ, 27 ապրիլի, № 82:

29.—Ջութակահար Նիկոլայ Պողոսովի համերգը Հայֆիլ դահլիճում: Ծրագրում՝ Հենդել, Շուբերտ, Զայկովսկի, Ա. Խաչատրյան, Սեն-Սանս, Լիստ: Նվագակցեց Ե. Պսարովան:

ՍՀ, 29 ապրիլի, № 84:

ՄԱՅԻՍ

12—13.—Երգիչ Սերգեյ Միգայի համերգները Հայֆիլ. դահլիճում: Ծրագրում՝ Գլինկա, Դարգոմիժսկի, Ռախմանինով, Զայկովսկի: Նվագակցեց Դ. Ծվեդովը:

ՍՀ, 12 և 13 մայիսի, № 94 և 95:

26.—Հայաստանի ռադիոկոմիտեի ժողովրդական գործիքների անսամբլի համերգը Հայֆիլ. դահլիճում (ղեկ.՝ Ա. Մերանգուլյան): Մասնակցեցին երգչուհիներ Ա. Գյուզգադյանը, Մ. Դոլգորուկյանը, Օ. Համբարձումյանը:

ՍՀ, 26 մայիսի, № 104:

31.—Մոսկվայի ֆիլհարմոնիայի պարի անսամբլի համերգը Հայֆիլ. դահլիճում (գեղ. ղեկ.՝ Ս. Նալբանդյան): Ծրագրում. կովկասյան ժողովրդական պարեր[1]:

Կոմունիստ, 3 հունիսի, № 111:

---

[1] Հուշաթերթիկը ծշգրտված է նաև ըստ Ռուզան Մազմանյանի «Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն» գրքի, որը լույս է ընծայել Հայկ. ԽՍՀ ԳԱ հրատարակչությունը, 1979 թվականին:

ՀՈՒՇԱՑԱՆԿ ՀՄՊ-ՈՒՄ ԶՈՀՎԱԾ ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ, ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԻ

ԶՈՀՎԱԾ ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ

Հովհաննիսյան Թունիկ (Հարություն)
Մելիքյան Հրաչիկ
Նադիրյան Հովհաննես (Նադիրով Իվան)
Շլդյան (Շիլտով) Կոնստանդին
Զաղալյան Միքայել
Պախարյան Անդրանիկ (Անդրեյ)
Տերտերյան Ստեփան

ԶՈՀՎԱԾ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ ԵՎ ՄԵՆԱԿԱՏԱՐՆԵՐ

Ավետիսյան Սամվել
Ավետիսյան Միքայել
Ակուլյան Կ. Ա. (Մոսկվա)
Բանդուրյան Հակոբ
Բունիաթյան Անդրանիկ
Գալոյան Գուրգեն
Էլոյան Արմենակ
Իզրաիլով Վալենտին
Իսահակյան Պարույր
Կարապետյան Մկրտիչ
Մեհրաբյան Ռաֆիկ
Միրզոյան Սուրեն
Մկրտչյան Ռոբերտ
Ջալալբեկյան Գագիկ
Ռամազյան Սիմակ
Ռուշանյան Նորիկ
Մնդոյան Կարո
Մնդոյան Մարտին
Ճաբոյան Կարո

ՀՈՒՇԱՑԱՆԿ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՎ 1941—1945 Թ.Թ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄ ԾԱՌԱՅԱԾ ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ, ԵՐԱԺՇՏԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԻ[1]

Արմենյան Գևորգ
Աճեմյան Ալեքսանդր
Բաբայան Քրիստափոր
Գալուստովա (Սիմոնյան) Մագդալինա
Գուսան Շահեն (Սարգսյան)
Գևորգյան Մինաս (դիրիժոր, Մոսկվա)
Թադևոսյան Ալեքսանդր
Խանջյան Հակոբ (Սեպուհ)
Կոպտև Սերգեյ
Մարության Հայկ (Մոսկվա)
Միրզոյան Էդուարդ
Մուրադյան Մաթևոս
Օհանյան Ալեքսանդր
Տերյան Միքայել
Սաթունց Արամ
Սարյան Ղազարոս
Սարգսյան Սարգիս
Ներսիսյան Խաչատուր
Ոսկանյան Էլեոնորա
Հախինյան Գրիգոր
Հեքիմյան Ալեքսել
Քյոսայան Սերգեյ
Փարաջանյան Հովհաննես
Փաշինյան Էդուարդ

ՀՈՒՇԱՑԱՆԿ ՀՄՊ-ՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԽՍՀՄ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՆԻ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻ[2]

Կոնստանդին Մակարով-Ռակիտին
Նիկոլայ Գոլուբև
Բորիս Տրոշին
Միխայիլ Դուշսկի
Թունիկ Հովհաննիսյան
Ալեքսել Գոլովկով
Իսահակ Շտեյնման
Իվան Նադիրով (Նադիրյան)
Վլադիմիր Կրիվոնոսով
Բորիս Գոլց
Ջաուր Գագոլև
Հրաչիկ Մելիքյան
Ֆարիդ Յարուլլին
Աբրահամ Դյակով
Ստեփան Տերտերյան
Վիկտոր Մորոշկին
Վենյամին Ֆելելման
Միխայիլ Կրոշներ
Տվոյի Ճնիման
Ադոլֆ Վեդրո
Միքայել Զաղալյան
Ալեքսանդր Օկայեմով
Վիկտոր Տոմիլին
Միխայիլ Գերգիլևիչ
Ռաուֆ Գաբիտով
Ռամազան Ելեբաև
Ֆեոդոր Կլիմենտով
Նիկոլայ Մալուխովսկի
Նաթան Պոլյակ
Վլադիմիր Իվանիշին
Միխայիլ Բրաիլովսկի
Սեմիոն Գրես-Կուկրիչկին
Կոնստանդին Ճոտնիև
Նիկոլայ Շաստին
Նիկոլայ Մամուն
Աբրահամ Գեյֆման
Ալեքսանդր Միմպոզ
Վլադիմիր Տորնոպոլսկի
Կոնստանդին Շիլտով (Շլդյան)
Վլադիմիր Ֆրիզե

---

[1] Եթե անուններ կան բաց թողնված, դրա համար ներողություն ենք խնդրում և սպասում Ձեր նամակ-տեղեկություններին և դիտողություններին (հեղինակ)։

[2] Սույն անունները վերցված են ԽՍՀՄ կոմպոզիտորների միության և Մոսկվայի պետկոնսերվատորիայի նախասրահներում զոհվածների հիշատակը հավերժացնող մարմարե հուշատախտակներից և տարբեր գրքերից (Ս. Գ.)։

ԿՏԱՎՆԵՐԸ ՄՆԱՑԻՆ ԱՆԱՎԱՐՏ

Իմ վրձինը և իմ կյանքը պատկանում են իմ ժողովրդին...

ԿՈՐՅՈՒՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ռազմաճակատային նամակից

ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ ԵՎ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՈՒՄ

ՇԻԿԱՑԱԾ ՆԵՐԿԱՊՆԱԿ

1914 թվականին, երբ բռնկվեց Համաշխարհային առաջին պատերազմը, «երիտասարդ թուրքերը» մշակեցին հատուկ ծրագիր՝ կազմակերպելու հայ ժողովրդի մասսայական ջարդը: Որպես ցեղասպաններ երիտթուրքերն իրենց զինվորներին հիշեցնում էին. «Անշուշտ հայոց ջարդերից հետո զայրույթի ու բողոքի մի մեծ ալիք կբարձրանա ամեն տեղ, և Թուրքիայի բարոյական վարկը մեծապես կվնասվի, սակայն չպետք է մոռանալ, որ դա ժամանակավոր բան է, և շուտով ամեն ինչ մոռացության կտրվի»: Թուրքական ֆաշիստները սխալվեցին: Մարդկությունն ինչպե՞ս կարող է մոռանալ երկու միլիոնից ավելի հայերի ջարդը: Մի՞թե Սիամանթոն ու Վարուժանը, Զոհրապն ու Ռուբեն Սևակը և հայ մշակույթի եղեռնազոհ հարյուրավոր քանքարավորներ կմոռացվեն: Մարդկության մոռացության վրա հույս դնելը ֆաշիզմի տվյալ քայլի անհրաժեշտությունից բխող քաղաքականություն էր:

Ցեղասպանության մարդատյաց թուրքական այս տեսակետը որպես ֆաշիստական դրույթ և հորդոր 1939 թվականին Հիտլերը հիշեցնում էր էսէսական իր զինվորներին և մղում նրանց կոտորելու ազնիվ, խաղաղասեր ու անմեղ լեհ ժողովրդին. «Անխնա կոտորեցե՛ք տղամարդկանց, կանանց ու երեխաներին, կարևորը դաժանությունն ու արագությունն է: Շուտով ամեն ինչ կմոռացվի, ո՞վ է այսօր հիշում հայկական ջարդերը...»: Ինչպես երևում է՝ ֆաշիստը, մարդասպանը, թխամորթ լինի, թե դարչնագույն, ունի մի հոգեբանություն: Այդ նույն գերմանացի ցեղասպանների նախնիներն էին, որ 1870—1881 թվականներին (ֆրանս-գերմանական պատերազմի տարիներին) վայրի մոլուցքով լցված բարբաջում էին. «Մերն են Ֆրանսիան և ֆրանսիացիները, Ֆրանսիայի անտառները, դաշտերը և տները... մերն են նույնպես Ֆրանսիայի բոլոր կանայք...»: «Մադմուազել Ֆիֆի» պատմվածքի ցինիկ հերոսի այս հոգեբանությունը բնորոշ է նաև Մոպասանի «Մենամարտ» պատմվածքի մեջ հանդես եկող գերմանացի լկտի սպային. «Քսան տարի չանցած ամբողջ Եվրոպան կպատկանի մեզ: Պրուսիան կլինի ամենքից ուժեղը... Եթե հրամանատարը ես լինեի, կվերցնեի Փարիզը և ամեն ինչ կվառեի, ամենքին կսպանեի: Այլևս Ֆրանսիա չէր լինի...»: Ինչպես ցույց է տալիս պատմությունը, ամբողջ աշխարհին տիրելու իմպերիալիստական Գերմանիայի ծրագիրը հակայական վաղեմություն ուներ: Եվ նա այս հոռի նկրտումներով էլ 1941-ի հունիսի 22-ին հարձակվեց ԽՍՀՄ-ի վրա: Բայց ինչպես կասեր ժողովուրդը՝ «Նա եկավ բրդի, ետ գնաց խուզված»... Բոլոր զոհվածներին անուն առ անուն հիշելը ողջերի պարտքն է, իսկ գրողներինը՝ ներկայացնել բոլոր անմահներին, այդ թվում և նրանց, ովքեր, դեռ կարոտի նշանի մատանու, առաջին սիրո, առաջին երգի, գրքի, դերի և ցուցահանդեսի, «մնաս բարով» ասացին հայրենի տանը և իրենց սեր ու գարուն երգող քնարն ու վրձինը փոխարինեցին սվինավոր հրացանով, գրչի փոխարեն ձեռքն առան գնդացիրն ու նռնակը և իրենց կյանքի, սիրո և սիրանքի պատմությունը հանձնեցին ոչ թե թղթին և կտավին, այլ հավերժացրին հայրենի հողի վրա՝ ներկելով այն սեփական արյունով:

Հիշելով հայ ժողովրդի նկատմամբ կիրառած ցեղասպանությունը, անդրադառնալով պատմական փաստերին (կոնկրետ դեպքում «Ամենուն տարեցույցի» լուրերին, 1918—1920 թթ.), մեր դեմ է հառնում Պոլսի Խասգյուղի հայկական թատերախմբի դերասան, հետագայում ամենքից սիրված տաղանդաշատ գծանկարիչ, բեմանկարիչ,

գեղանկարիչ և մանկավարժ **Խաչիկ Թահտանյանը** (ծնվել է Պոլսում 1847 թ.)։ Նա իր նկարագարդումներով լույս էր ընծայել իր նկարչական գործերի ժողովածու-ալբոմը։ Ուզում էր անհատական ցուցահանդեսներ բացել, բայց չհասցրեց. զոհվեց Պոլսում 1914-ին։ Տարին դեռ չլրացած (1915 թվականին) Տրապիզոնում թուրքական արյունախում դաշույնի զոհը դարձավ Տրապիզոնի հայկական դպրոցի նկարչության ուսուցիչ, տաղանդաշատ գեղանկարիչ **Պետրոս Մարիմյանը։** Ավազակաբարո մարդասպանները ոչ միայն սպանեցին հայ նկարչին, այլև այրեցին նրա կտավները, գծանկարները ու էսքիզները և բազմաթիվ այլ ստեղծագործություններ, որոնք նա կերտել էր Տրապիզոնում և Կովկասում ուսուցիչ աշխատելու տարիներին և ցուցադրել 1895 թվականին Թիֆլիսում կազմակերպված ցուցահանդեսում։ Պետրոս Մարիմյանը ավարտել էր Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը, երկրպագում էր Միքելանջելոյին, Լեոնարդո դա Վինչիին և վերածնության արվեստը։ Ցավոք, վաղաժամ հեռացավ կյանքից քանքարավոր հայորդին...

Հայաստանի նկարչի տուն։ Ոչ միայն պատերազմի տարիներին, այլև դրանից հետո, գրեթե ամեն տարի, չկա մի ցուցահանդես, որտեղ ընդդեմ պատերազմի, հանուն խաղաղության հանդես չգան հայ նկարիչն ու քանդակագործը։ Միայն Մեծ հայրենականի առաջին տարում հայ արվեստագետները պատերազմը նզովող չորս ցուցահանդես են կազմակերպել։ 1942-ին Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհին կից արվեստի գործերի վարչությունն ու Հայաստանի խորհրդային կերպարվեստագետների միությունը անցկացրին հոբելյանական ցուցահանդես «Հայրենական մեծ պատերազմը» թեմայով՝ նվիրված Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության 25-ամյակին։ Այդ է վկայում սույն խորագրով 1942-ին Երևանում հրապարակված ցուցահանդեսի կատալոգը, որի առաջաբանի հեղինակն է արվեստագետ Ռուբեն Դրամբյանը։ Կատալոգի երկրորդ էջում կարդում ենք. «Այսօր,

Ավարտվեց Մեծ հայրենականը։ Մ. Սարյանը (աջից), Ավ. Իսահակյանն ու Վաղ. Վաղարշյանը սիրով ընդունեցին հայ ժողովրդի փառապանծ որդիներին։ Այս անգամ նրանց հյուրն է Խորհրդային Միության հերոս Սարգիս Մարտիրոսյանը։ Երևան, 1945 թ.։

Զոհված հայ նկարիչների հիշատակը հավերժացնող մարմարե հուշատախտակ Հայաստանի Նկարչի տան նախասրահում։

Մարտիրոս Սարյան— «ԾԱՂԻԿՆԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԱՐՏԻԿՆԵՐԻՆ»
1945 թ. (ՀՊՊ-ի ֆոնդ)։

Զավեն Սարգսյան— «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ» («Ընդդեմ պատերազմի» շարքից)։

Սուրեն Սաֆարյան— «ԱԶԱՏԱՐԱՐԸ»:

Սուրեն Սաֆարյան— «ԱՆԴՈՐՐ»:

Համլետ Ավետիսյան— «ՆՐԱՆՔ ՉԵՐԱԴԱՐՁԱՆ» (ՀՄՊ-ում զոհված հայ նկարիչներ), ՀՊՊ-ի ֆոնդ։

Համլետ Ավետիսյան— «ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՋԻՆՎՈՐՆԵՐԸ»։



Վանիկ Կարապետյան (Զոհված նկարիչ)— «ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ» (թուղթ, տուշ), Լենինական, 1930 թ., ՀՊՊ-ի ֆոնդ:

Վանիկ Կարապետյան (Զոհված նկարիչ)— «ԲԵՐԴԱՀԱՎԱՔ» (թուղթ, տուշ), 1930 թ. ՀՊՊ-ի ֆոնդ:



Մանուկ Հարությունյան (Զոհված նկարիչ)— «ԱՐԹԻԿՏՈՒՖԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ», ՀՊՊ-ի ֆոնդ:

Մանուկ Հարությունյան (Զոհված նկարիչ)— «ԱԼԱՎԵՐԴՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՆՔԱՓՈՐՆԵՐԸ», ՀՊՊ-ի ֆոնդ:

Սարգիս Մովսիսյան (Զոհված քանդակագործ)— «ՀԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ» (գիպս), Լենինգրադ, 1937 թ.:

Սուրեն Սարգսյան (Զոհված քանդակագործ)— «ԾԵՐ ԿՆՈՋ ԴԻՄԱՌԱՆԴԱԿ», (գիպս), Լենինգրադ, 1940 թ.:

Համլետ Գևորգյան (Զոհված նկարիչ)— «ԻՄ ՍԻՐԱԾ ԱՂՋԻԿԸ՝ ԶԵՄՖԻՐԱՆ» (մատիտանկար): 15.6.1942 թ., Երևան (Պահվում է նկարչի քրոջ՝ Աստղիկ Գևորգյանի մոտ):

Համլետ Գևորգյան (Զոհված նկարիչ)— «ԶՈՒԼՖԻ» (մատիտանկար), Երևան, 1941 թ. (Պահվում է նկարչի քրոջ՝ Աստղիկ Գևորգյանի մոտ, Երևանում):

Համլետ Գևորգյան (Զոհված նկարիչ)— «ԻՆՔՆԱԴԻՄԱՆԿԱՐ» (Նկարչի քրոջ՝ Աստղիկ Գևորգյանի մոտ է պահվում)։

Համլետ Գևորգյան (Զոհված նկարիչ)— «ԿՈՄԻՏԱՍԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ ՀԱՎԱՔԵԼԻՍ»։

Զազիկ Ալթունյան (Զոհված նկարիչ)— «ՄԻՆՉԵՎ ՄՐՑՈՒՄԸ» (թուղթ, տուշ): (Պահվում է նկարչի քրոջ՝ Սաթիկ Ալթունյանի մոտ, Երևանում):

Զազիկ Ալթունյան (Զոհված նկարիչ)— «ՀԱՆՈՒՆ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԻ» (շարժ): (Պահվում է նկարչի քրոջ՝ Սաթիկ Ալթունյանի մոտ, Երևանում):



Սարգիս Ալեքսանյան (Ջոհված նկարիչ) — «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» էպոսի նկարազարդումներից (№ 1), ՀՊՊ-ի ֆոնդ:

Սարգիս Ալեքսանյան (Ջոհված նկարիչ) — «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» էպոսի նկարազարդումներից (№ 2), ՀՊՊ-ի ֆոնդ:

Սարգիս Ալեքսանյան (Զոհված նկարիչ)— «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» էպոսի նկարազարդումներից (№ 3), ՀՊՊ-ի ֆոնդ։

Սարգիս Ալեքսանյան (Զոհված նկարիչ)— «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» էպոսի նկարազարդումներից (№ 4), ՀՊՊ-ի ֆոնդ։

Սարգիս Ալեքսանյան (Զոհված նկարիչ)— Վեսպերի «ՆԿԱՐԻՉ ՀԱՅՐԻԿԻ ԽՈՍՏՈՒՄԸ» գրքի արտաքին ձևավորումը, 1942 թ.:

Անդրանիկ Մարկոսյան (Զոհված նկարիչ)— «ԻՆՔՆԱԴԻՄԱՆԿԱՐ» (պահվում է նկարչի որդու՝ Ֆելիքս Մարկոսյանի մոտ):

Անդրանիկ Մարկոսյան (Զոհված նկարիչ) —«ՄԻՋՕՐԵ» (Պահվում է նկարչի որդու՝ Ֆելիքս Մարկոսյանի մոտ):

Անդրանիկ Մարկոսյան (Զոհված նկարիչ)— «ԲՆԱՆԿԱՐ», 1938 թ. (Նկարչի որդու՝ Ֆելիքս Մարկոսյանի մոտ է պահվում):

Անդրանիկ Մարկոսյան (Զոհված նկարիչ)— «ԳԱՐՈՒՆ Է ԳԱԼԻՍ», 1939 թ., (Նկարչի որդու՝ Ֆելիքս Մարկոսյանի մոտ է պահվում):



Անդրանիկ Մարկոսյան (Զոհված նկարիչ)— «ԱԾՆԱՆԱՑԻՆ ՏԵՍԱՐԱՆ», 1939 թ.,
(Նկարչի որդու՝ Ֆելիքս Մարկոսյանի մոտ է պահվում)։



Կորյուն Սիմոնյան (Զոհված նկարիչ)— «ԻՆՔՆԱԴԻՄԱՆԿԱՐ», 1940 թ., ՀՊՊ-ի ֆոնդ։

Կորյուն Սիմոնյան (Զոհված նկարիչ)— «ԾԱՌԵՐ» (Էդյուդ), 1937 թ., ՀՊՊ-ի ֆոնդ:

Կորյուն Սիմոնյան (Զոհված նկարիչ)— «ՑՈՒՍՈՒՖԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ», 1939 թ., ՀՊՊ-ի ֆոնդ:



Կորյուն Սիմոնյան (Զոհված նկարիչ)— «ԱՐԱՐԱՏԸ ԵՐԵՎԱՆԻՑ», 1930 թ., ՀՊՊ-ի ֆոնդ։

Կորյուն Սիմոնյան (Զոհված նկարիչ)— «ՊԱՐՏԻԶԱՆՆԵՐԸ», 1940 թ., ՀՊՊ-ի ֆոնդ։

Լևոն Տոնականյան (Զոհված նկարիչ)— «ԱԶԱՏԱՐԱՐՆԵՐԸ», 1940 թ.:

Լևոն Տոնականյան (Զոհված նկարիչ)— «ՆԱՏՑՈՒՐՄՈՐՑ», 1935 թ.:

Լևոն Տոնականյան (Ջոհված նկարիչ) — «ՏԵՍԱՐԱՆ ԿՈՆԴԻՑ-1» և «ՏԵՍԱՐԱՆ ԿՈՆԴԻՑ-2» (Յուղանկարներ, Երևանի պատմության թանգարանի ֆոնդ):





Լևոն Տոնականյան (Ջոհված նկարիչ) — «ԵՐԵՎԱՆՅԱՆ ՏԵՍԱՐԱՆ», (Յուղանկար, Երևանի պատմության թանգարանի ֆոնդ):

Հակոբ Եկմալյան (Զոհված նկարիչ)— «ՀԱՑՐԵՆԻՔԻ ՋԻՆՎՈՐԸ», 1941 թ., (Պահվում է նկարչի եղբոր՝ քանդակագործ Ռաֆայել Եկմալյանի տանը):



Հակոբ Եկմալյան (Զոհված նկարիչ)— «ԻՆՔՆԱԴԻՄԱՆԿԱՐ» (Պահվում է նկարչի եղբոր՝ քանդակագործ Ռաֆայել Եկմալյանի տանը):

Հակոբ Եկմալյան (Ջոհված նկարիչ) — «ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ», 1938 թ. (Պահվում է նկարչի եղբոր՝ Ռաֆայել Եկմալյանի տանը)։



Հակոբ Եկմալյան (Ջոհված նկարիչ) — «ԻՄ ՄԱՅՐԸ», 1939 թ. (Պահվում է նկարչի եղբոր՝ քանդակագործ Ռաֆայել Եկմալյանի տանը)։

Լևոն Թոթովենց (Զոհված նկարիչ)— «ԳԱՐՈՒՆԸ ԿԱՆՉՈՒՄ Է» (մատիտանկար), 1939 թ.: Լուսիկ Թոթովենցի սեփականություն (Այժմ պահպանվում է Հայկ. ԽՍՀ ժողովրդական նկարիչ Մոռեր Աբեղյանի մոտ):

Լևոն Թոթովենց (Զոհված նկարիչ)— «ԱՆԱՎԱՐՏ ԲՆԱՆԿԱՐ», (մատիտանկար, թվականն անհայտ է): Լուսիկ Թոթովենցի սեփականություն: (Այժմ պահպանվում է Հայկ. ԽՍՀ ժողովրդական նկարիչ՝ Մոռեր Աբեղյանի մոտ):

Բաբկեն Գևորգյան (Զոհված նկարիչ)— «ՍԵՎ ՋՐԻ ԱՓԻՆ» (կտավ, յուղ., պահվում է եղբոր՝ Էդ. Ավագյանի մոտ):



Բաբկեն Գևորգյան (Զոհված նկարիչ)— «ՃԱՆԱՊԱՐՀ» (ջրաներկ, պահվում է եղբոր՝ Էդ. Ավագյանի մոտ):

Բաբկեն Գևորգյան (Զոհված նկարիչ)— «ՄԵՐ ԳՅՈՒՂԻ ԳԵՏԸ» (թուղթ, ջրանկ. պահ-
վում է եղբոր՝ Էդ. Ավագյանի մոտ):

Բաբկեն Գևորգյան (Զոհված նկարիչ)— «ԳԵՏԱՓԻՆ» (պահվում է եղբոր՝ Էդ. Ավագյանի
մոտ):



Սուրեն Պիպոյան— «ՎԵՐԱԴԱՐՁ», 1975 թ.:

Գևորգ Մնացականյան— «ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ» («Սերգեյ Օհանյանի մարտկոցը»), 1985 թ.:

Սարգիս Արուտչյան— Ջ. Խալափյանի «ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ» պիեսի բեմադրության ձևավորման էսքիզ, 1975 թ. (Լենինականի Ա. Մոավյանի անվան պետական թատրոն):

Հովհաննես Շարամբեյան— «ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻԾԱՏԱԿԻՆ», 1968 թ.:

Սարգիս Մանգասարյան— «ՎԵՐԱԴԱՐՁ», 1979 թ.:

Էդուարդ Արէրունյան— «ԲՐԵՍՏԻ ԱՄՐՈՑԸ»:



Սամվել Պետրոսյան— «ՊԱՏԵՐԱԶՄ»



Լևոն Կոջոյան— «ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ՊԱՐԸ», 1975 թ.:



Խանջյան Գրիգոր—«ՎԵՐԱԴԱՐՁԱՎ», 1975 թ.:



Բաղդասարյան Սարգիս— «ՀՈՒՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ», 1958 թ., բրոնզ, (բ. Ղափան):

ՀՊՄ-ում զոհված՝ գեղարդ տեխնիկումի մանկավարժների և ուսանողների հիշատակը խորհրդանշող մարմարե հուշատախտակ Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանի նախասրահում:

պատմական այս ահեղ օրերին, մեր երկրի ճակատներում, Անդրկովկասի նախադռների մոտ, երբ մեր մեծ Միության ժողովուրդների հետ միասին Հայաստանի զավակները կռվում են հանուն ազատության, անկախության և մեր ժողովուրդների լուսավոր ապագայի, թիկունքում բոլոր ուժերը ուղղված են ֆրոնտին օգնություն ցույց տալու համար:

Սովետական Հայաստանի կերպարվեստագետները իրենց արվեստով իրենց լուման են մուծում թշնամու դեմ մղվող պայքարի ու հաղթանակի ընդհանուր գործին»[1]:

Եվ իրոք, դրա վառ ապացույցն են աշխարհահանրաճանաչ նկարիչ Մարտիրոս Սարյանի «Խորհրդային Միության հերոս Դ. Մարգուլիսի դիմանկարը» (կտավ, յուղնկ. 1942 թ.), «Ծովակալ Հովհաննես Իսակովի դիմանկարը» (կտավ, յուղնկ. 1943 թ.) գեղարվեստական ստեղծագործությունները: «Նատյուրմորտ», «Ծաղիկներ՝ Հայրենական մեծ պատերազմի մարտիկներին» (1945 թ.) և «Խորհրդային Միության մարշալ Հովհ. Բաղրամյանի դիմանկարը» (1947 թ.) գեղանկարչական աշխատանքները արվեստի իրենց կատարելությամբ խոսում են ոչ միայն եղեռնն ու պատերազմը նզովող մեծահամբավ նկարչի պատերազմատյացության, խաղաղապաշտության և մարդասիրության մասին, ոչ միայն դրվատում են Իսակովին և Բաղրամյանին, այլև երիտասարդությանը սովորեցնում են հայրենասիրություն, նորեկ նկարիչներին՝ ունկնդիր մնալ ժողովրդի հոգու ձայնին, պատկերել նրա քաջորդիներին, հերոսներին, իսկական մարտիրոսներին: Այս կտավները Հայաստանի պետական պատկերասրահի (ՀՊՊ) ոսկե ֆոնդերից են:

1942-ին ծնունդ առան նաև հանրապետության ժողովրդական նկարիչ Գաբրիել Գյուրջյանի «Ֆաշիստական ռազմանավերի ոչնչացումը», Երանուհի Ասլամազյանի «Աղջիկներին ճանապարհում են ռազմաճակատ», Մարիամ Ասլամազյանի «Լենինգրադցիները», Հովհաննես Զարդարյանի և Եփրեմ Սավայանի «Ռոստովի գրավումը», Հակոբ Կոջոյանի «Ս. Զաքյանը ռազմաճակատում» և բազմաթիվ մեծարժեք, յուղաներկ այլ կտավներ, որոնց թարմությունը, ներքին հերոսականությունն ու ըմբոստ ոգին ապացուցում են, որ կտավները ևս մի-մի զինվոր դարձած կռվել են ֆաշիզմի դեմ, ոգևորել, առնականության և հավատի ուժ ներարկել ամեն մի ռազմիկի:

Հանրապետության ժողովրդական նկարիչ Էդվարդ Իսաբեկյանը արյան ու ավերի այն դաժան օրերին, արհամարհելով մահը, մի խումբ արվեստագետների հետ (Ն. Զարյան, Ս. Տարոնցի և ուրիշներ) այցելեց Կերչում կռվող հայ մարտիկներին: Ստեղծագործական այդ գործուղման արդյունք-վավերագրերն են «Ռազմաճակատային ճեպանկար» (գրաֆիկա), «Դրոշների հանձնում Հայկական դիվիզիային Կերչում» և «Քաղաքի ազատագրումը» մեծադիր յուղաներկ կտավները, որոնց գունային լուծումներում շեշտված են կամքը, մարտունակությունը, տոկունությունն ու նվիրումը, ազատության վայելքն ու գիտակցական պայքարի անհրաժեշտությունը: Եվ այս բոլորը վրձնի, գույների և հոգու լեզվով: «Տանյան» և «Արազի ափին» յուղաներկ կտավները ևս ստեղծված են պատերազմական թեմատիկայով: Արարատ Ղարիբյանի «Ֆաշիստական դեսանտի ոչնչացումը», «Կարմիր բանակի գրոհը», «Օդային մարտ», «Ֆաշիստական տանկի ոչընչացումը» գեղանկարներն ու գրաֆիկ այլ գործեր ծնվեցին կռվի առաջին տարում՝ 1941 թ.:

«Մեր հիշողության մեջ դեռ թարմ է մնացել Հայրենական պատերազմի տարիներին Երևանում ստեղծած նրա մի քանի կտավների թողած ուժեղ տպավորությունը,— գրում է ակադեմիկոս, նկարիչ Արա Սարգսյանը Դմիտրի Նալբանդյանի մասին և շարունակում.— նրանցից անշուշտ լավագույնն էր «Գնդապետ Ս. Զաքյանի վերջին պատգամները» բազմաֆիգուր կոմպոզիցիոն կտավը (1942): Զնայած նկարի ողբերգական բովանդակությանը, աշխատության մեջ առկա էր ռազմական արիության տրամադրություն, հերոսականության շեշտ և հնչեղություն»[1]:

Պատերազմի տարիներին ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, պետական մրցանակի դափնեկիր Դ. Ա. Նալբանդյանը ստեղծեց հատուկ գունապնակ՝ պատկերելու «Ֆաշիստական բանակի ջախջախումը Մոսկվայի մատույցներում» (1943) կոմպոզիցիոն կտա-

[1] Մեծ հայրենականին վերաբերող հուշատեղեկատու գրականությունը տես գրքի վերջում:

[1] Տես «Դմիտրի Նալբանդյան» ցուցահանդեսի կատալոգը, Ե., 1963, էջ 10:

վը, որը, ինչպես «Նամակ ֆրոնտից», «Պլակատ՝ Առաջ» ստեղծագործությունները, նոր հմբավ և հեղինակություն բերեց դիմանկարի հանձարեղ վարպետին:

Պատերազմի ահեղ օրերին շատերն էին իրենց վրձինը որպես զենք գործածում: Վարդգես Աղաբաբյանի «Հաղթանակ Ստալինգրադի տակ» (1944) և «Պարտիզանները ընթերցման պահին» (1943) գունանկարն ու գրաֆիկ գործերը այդ մասին են խոսում, ցույց տալիս հայրենանվեր զինվորներին մարտադաշտում և խաղաղ պահին:

Մեր Աբեղյան: Այս անունը շուրջ կես դար է, ինչ հոլովվում է մեր կերպարվեստի պատմության մեջ: Մեծ հայրենականի թեժ օրերին, երբ Ստալինգրադում օդն ու հողը ռումբով, ծխով ու արյունով էին ներկված, Երևանում գիշեր ու ցերեկ Մանուկ և Մեր (հայր ու որդի) Աբեղյանները խորհում, տանջվում էին մարդկության գլխին պայթած մեծ աղետի համար: Եվ իրոք, թեև թիկունքում, թշնամու դեմ կռվում էին նրանք, մեկը՝ գրչով, մյուսը՝ վրձնով: «Հանուն հայրենիքի», «Զինվորի մահը», «Վերադարձ», «Վերջ» լինոտիպագրություններից է կազմված «Հերոս քաղաք Ստալինգրադը» նկարաշարը, ուր կերպավորված են հայրենիքի ազատության, անկախության, հաղթանակի և խաղաղության վերահաստատման համար մահն արհամարհող ժողովրդի դյուցազուն որդիները՝ իրենց ըմբոստությամբ և գեղեցկությամբ:

Ստալինգրադի հերոսական պաշտպանությունը ստեղծագործական նոր սյուժեներ հուշեց գրեթե բոլոր նկարիչներին: Հակոբ Կոջոյանի մեծատաղանդ վրձինը 1943-ին կյանքի կոչեց երկու գրաֆիկ ստեղծագործություն՝ «Գվարդիականները մաքրում են Ստալինգրադի գործարանային թաղամասը», «Մարտ Ստալինգրադի գործարանային թաղամասում» (թուղթ, գուաշ):

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ կերպարվեստագետների ստեղծած հոգևոր արժեքների մասին խոսելիս դժվար է չհիշատակել Ռուբեն Բեդրոսյանի «Թշնամու տանկի ոչնչացումը», Պետրոս Գևորգյանի «Գրոհ բարձունքը գրավելու համար», «Խորհրդային Միության հերոս Նելսոն Ստեփանյանի դիմանկարը», Հակոբ Կոջոյանի «Ֆաշիստական ռազմագերի գեներալները», Սեդրակ Ռաշմաճյանի «Մենամարտ», Հովհ. Ծավարշի «Լինե՞լ, թե՞ չլինել», «Համաշխարհային ատրակցիոն», Աշոտ Մամաջանյանի «Բնակավայրի գրավումը», Հայկ Մուրադյանի «Ս. Բուդյոննու դիմանկարը», Արմեն Զիլինգարյանի թատերական բազմաթիվ ձևավորումներն ու «Հավաքիր մետաղի ջարդոն» պլակատը, Սերգեյ Արուտչյանի «Կարմիր բանակի դասերը», Կ. Ստեփանյանի «Կրտսեր սերժանտ Գլուշկո», «Կարմիր բանակային՝ ուսով» և այլ գրաֆիկ ստեղծագործություններ, որոնք ծնվել են ազնիվ զայրույթից և ազատաբաղձությունից:

Հայրենական մեծ պատերազմն իր արտացոլումը գտավ նաև Մարիամ և Երանուհի Ասլամազյանների ստեղծագործություններում: Հիշենք Երանուհու «Գեներալ-մայոր Ա. Ղազարյանի դիմանկարը» (1942), «Խորհրդային Միության հերոս, գեներալ-մայոր Ա. Կարապետյանի դիմանկարը» (1949) գործերը: Երանուհի Ասլամազյանի յուղաներկ կտավները և իր ավագ քրոջ՝ Մարիամի «Նորակոչիկներին ճանապարհում են ռազմաճակատ» (1943), «Ամեն ինչ ռազմաճակատի համար» (1941, թուղթ, ջրաներկ) գունանկարներն ու «Կհատուցենք», «Արյուն՝ արյան դիմաց» (թուղթ, ջրաներկ, 1942), «Կվերականգնենք» (թուղթ, գուաշ, 1943) ստեղծագործությունները մեր ասածի վկայությունն են:

Թիկունքի ծանր աշխատանքն ու հայրենանվիրվածությունը իրենց արտացոլումն են գտել նաև Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան նկարչական ուսումնարանի դասատու, նկարչուհի Անժելա Սարգսյանի ստեղծագործություններում: Անժելան Մեծ հայրենականում զոհված շնորհաշատ քանդակագործ, Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայի սան Սուրեն Սարգսյանի և հանրապետության վաստակավոր նկարիչ Էդվարդ Սարգսյանի քույրն է: Նա ընդամենը 25 տարեկան էր, երբ պայթեցին մեծ Հայրենականի ռումբերը: Սիրո և խնդության իր կտավները թողած անավարտ՝ երիտասարդ նկարչուհին 1941-ին կերտեց իր «Առաջին օգնությունը վիրավորներին» (վիմագրություն, 31×44) և «Օգնություն կոլտնտեսությանը» (լինոտիպագրություն, 32×44) ստեղծագործությունները՝ երկուսն էլ նվիրված Մեծ հայրենականին, մեկը՝ ռազմաճակատի, մյուսը՝ թիկունքի կյանքին:

Երկրորդ համաշխարհայինի դաժան տարիներին, երբ խորհրդային գրեթե յուրաքանչյուր ընտանիքից մեկը (կամ մի քանիսը) ռազմաճակատում մարտնչում էր ֆաշիզմի դեմ, երբ

աշխարհի առաջադեմ մարդկությունը դատապարտում էր Գերմանիայի մարդասպան քաղաքականությունն ու գործած ոճիրները, Երևանում (1942 թ.) բացվեց մի նոր ցուցահանդես՝ «Հայաստանի խորհրդային նկարիչները Հայրենական մեծ պատերազմին» խորագրով: Ցուցահանդեսում ներկայացված աշխատանքների, նրանց բովանդակության, սյուժեի, որակի, հեղինակների և ժամանակի մասին ընդհանուր գաղափար կազմելու համար մեջբերում ենք ցուցահանդեսի կատալոգի առաջաբանը որոշ կրճատումներով.

«...Ցուցահանդեսի գեղանկարչական խոշոր աշխատանքներից ուշադրություն է գրավում «Մոսկվայի պաշտպանությունը» մոնումենտալ բազմաֆիգուր պանոն (գործ՝ ժող. նկ. Մ. Սարյանի, նկ. Խ. Եսայանի, Բ. Քոլոզյանի բրիգադի)... ...Հերոսական էնտուզիազմի բոցով է տոգորված երկրորդ պանոն՝ «Լենինգրադի պաշտպանության համար» (արվ. վաստ. գործիչ Ս. Առաքելյանի, Օ. Զարդարյանի և Մ. Տիրատուրյանի բրիգադ)...

«Բալթիական Կարմիր Ռազմածովային նավատորմի» մարտական հզորության թեման վարպետորեն է արտահայտված երրորդ պանոյում (գործ՝ արվ. վաստ. գործիչ Գ. Գյուրջյանի):

Սովետական ժողովրդի խիզախ հերոսների քաջարի ստեղծագործություններին և վսեմ հայրենասիրությանը նվիրված գեղանկարչական ստեղծագործությունների ցուցահանդեսում աչքի են ընկնում Բ. Քոլոզյանի «Հեծելազորի գրոհը», Ս. Ղարագյոզյանի «Դոնորները», Խ. Եսայանի «Մարտական ընկերուհիները», Մ. Տիրատուրյանի «Պատրաստում են տաք հագուստ Կարմիր բանակի համար», Վ. Գայֆեճյանի «Սովետական տանկիստի սխրագործությունը» և բազմաթիվ այլ աշխատանքներ...»:

Մանրամասն կանգ առնելով ցուցադրված նյութերի սյուժեներին և բովանդակությանը, անդրադառնալով քանդակագործական աշխատանքներին, առաջաբանի հեղինակը՝ արվեստագետ Մ. Բաբենչիկովը, այնուհետև շարունակում է.

«...Ժողովրդական հերոսության և ժողովրդական քաջարիության օրինակներ են տրված նաև ցուցահանդեսի քանդակագործական ստեղծագործություններում:

Դինամիկ, հերոսական թափով լի «Պարտիզան» քանդակն ստեղծված է մեծ խառնվածք ունեցող՝ արվեստի վաստակավոր գործիչ Արա Սարգսյանի ձեռքով:

Ուժեղ և արտահայտիչ է իր շարժման մեջ արվ. վաստակավոր գործիչ Ս. Ստեփանյանի «Դեպի պարտիզանները» քանդակագործական խումբը: Քաջարի «Պարտիզանի» կերպարն է տվել շնորհալի Ս. Մանասյանն իր քանդակի մեջ: Գ. Կեպինովը ճշմարտացի և կենդանի կերպով է տվել Սովետական Միության հերոս, հպարտ բազե, անվախ սավառնող Վ. Տալալիխինի առնական կերպարը իր կոմպոզիցիոն դիմանկարի մեջ: Քանդակագործական մյուս ստեղծագործություններից ցուցահանդեսում ուշադրություն են գրավում Ա. Ուրարտուի, Ս. Ստեփանյանի, Թ. Չորեքչյանի և ուրիշների աշխատանքները...»[1]: Ինչպես վերը նշված ստեղծագործությունները, այնպես էլ պատերազմի ժամանակ (1942 թ.) Արա Սարգսյանի կերտած «Բարձունքի գրավումը» (բրոնզ), «Կապիտան Ա. Միրզոյանի դիմաքանդակը» (բրոնզ) նրբաճաշակ և մնայուն կերտվածքները, որոնք ցուցադրված են մեծանուն քանդակագործի տուն-թանգարանում, խոսում են այն մասին, որ իրոք պատերազմը խոր հետք է թողել ոչ միայն Սարգսյանի հոգում, այլև նրա հոգևոր երկունքի՝ մոնումենտալ քանդակների վրա:

Հայաստանի պետական պատկերասրահի հիմնական ֆոնդերն են համալրում Նիկողայոս Նիկողոսյանի «Զեմ ասի» (1942 թ.), Խորհրդային Միությունն մարշալներ Ս. Մ. Բուդյոննու, Հովհ. Բաղրամյանի և գնդապետ Մալխասյանի բրոնզե դիմաքանդակները: Ոչ միայն պատերազմի տարբեր վիճակներ, այլև մարդկանց հոգեբանական տարբեր պահեր բացահայտելու գաղափարը Մեծ հայրենականի տարիներին միշտ էլ ուղեկցել է հայ կերպարվեստագետներին:

Հ. Կոջոյանը «Բոլոր ուժերով ընդդեմ ֆաշիզմի» նկարով, Հ. Գրիգորյանը «Սովետական ժողովուրդը գիտի, թե ինչ է պաշտպանում» պլակատով ռազմակոչի և ցասման իրենց խոսքն ուղղեցին հայ ժողովրդի քաջարի մարտիկներին:

«Արմտագի պատուհան» քաղաքական-երգիծական նկարաշարը Մեծ հայրենականի տարիներին մամուլի ամենահետաքրքիր նորույթներից էր. (վկա Հովհ. Ծավարշի սուր երգիծանքը):

[1] Տե՛ս «Հայաստանի սովետական նկարիչները Հայրենական մեծ պատերազմին» ցուցահանդեսի կատալոգը, Ե., 1942 թ., էջ 3—9:

«Ով մեզ վրա սրով կգա, նա էլ սրից կգնա» (1941), «Դիվիզիաներն արդարացրին իրենց կոչումը» (1942), «Մոտենում է փոխհատուցման ժամը» (1944) երգիծական պլակատները երիտասարդ նկարիչ Աշոտ Մամաջանյանին մեծ ճանաչում բերեցին: «Դիվիզիաներն արդարացրին իրենց կոչումը» (թուղթ, գուաշ) տպագրվեց «Արմտագի պատուհանի» 1942 թ. № 46-ում: Քաղաքական-ռազմական նոր բովանդակությամբ հնչեց Սերգեյ Արուտչյանի՝ թշնամուն իր ոճիրները հիշեցնող «Ինչ որ ցանես, այն կհնձես» նկարչական մեղադրանքը: Պատերազմի ողջ ընթացքում մեր պլակատիստները սուր ծաղրի, սարկազմի էին ենթարկում ֆաշիզմը, նրա պարագլուխներին և նրանց գաղափարական ընչաքաղցությունը (հիշենք Լևոն Գենչի տպագրված ծաղրանկարներն ու 1944 թ. Երևանում բացված անհատական ցուցահանդեսները): Պատերազմի ավարտից հետո երևան եկած Ռաֆայել Նանուշյանի «Եռապլակատ պատիժ», Գեորգի Յարալյանի «Ֆաշիստներից են սովորել», «Կառավարման ղեկը», Վլադիմիր Աբրոյանի «Ռևանշիստի բաժակաճառը», Ռուբեն Արուտչյանի «Չիրականացավ—նույն վերջը է», Կարապետ Փաշայանի «Վերջին պարգևը ֆաշիզմին» և շատ ու շատ հակապատերազմական ստեղծագործություններ ունեն մեկ նշանաբան՝ «Հիշիր անցյալը» (գործ՝ Սուրեն Պիպոյանի) և «Պատերազմի զենքերն ուղարկել պատմության թանգարան» (գործ՝ Լևոն Կարսյանի):

Անցյալը հիշելու և պատերազմի զենքերը պատմության թանգարան ուղարկելու ազնիվ զգացումին չեն կարող իրենց սրտի ձայնը չմիացնել բոլոր նրանք, ովքեր տեսել են արճճե կարկուտ և դիակների մոխրաբլուրներ: Նման իրավիճակի ականատեսներից էր Հայկական ԽՍՀ ժողովրդական նկարիչ, պրոֆեսոր ԱՐԱ ԲԵՔԱՐՅԱՆԸ: Ահա թե ինչ ասաց նա մեր հանդիպումներից մեկի ժամանակ.

— Դեռ ականջումս չէին լռել ֆիննական պատերազմի պայթյունները, երբ նորից զինվորագրվեցի հայրենիքի պաշտպանությանը՝ այս անգամ արդեն որպես 187-րդ հրաձգային դիվիզիայի զինվոր-հրաձիգ: Ուկրաինական 3-րդ ռազմաճակատում ծանր վիրավորվեցի (Կիևի համար մղվող մարտերում): Մինչ այսօր էլ այդ վերքի սպին ինձ հիշեցնում է. «Մարդի՛կ, զգոն եղեք աշխարհի խաղաղությունը պաշտպանելիս»:

Արա Բեքարյանը պարգևատրվել է ՀՄՊ-ի 2-րդ աստիճանի և Պատվո նշան շքանշաններով, Կիևի ազատագրման համար և այլ մեդալներով, արժանացել մարտական պատվոգրերի, իր համեստ ավանդը ներդրել սոցիալիստական հայրենիքը թշնամուց ազատագրելու սրբազան գործին:

Արա Բեքարյան

Սուրեն Ազիզյան

— Է՜հ, ինչպե՞ս, ինչպե՞ս չատեմ պատերազմը և բոլոր զենքերը... Ինչո՞ւ եմ քայլում մի ոտքով...,— դառնանում է ՍՈՒՐԵՆ ԱԶԻԶՅԱՆԸ, մի նկարիչ, որը կռվել է Կալինինյան, Առաջին Մերձբալթյան և Լենինգրադյան ռազմաճակատներում, երեք անգամ ծանր վիրավորվել, կորցրել մի ոտքը և 1945 թ. մարտի 7-ից հենակներ է կրում:

— Եթե կռիվ լինի, հիմա էլ կգնամ ճակատ, միայն թե աշխարհը նորից արյուն չտեսնի, թոռներս խաղաղ մեծանան,— վստահեցնում է արվեստի վաստակավոր գործիչ, Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի պրոֆեսոր ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ՇԱՔԱՐՅԱՆԸ: Նրա ռազմի ճանապարհն անցել է Կուբան, Կերչ, Դնեպր, Դնեպրոպետրովսկ, Դնեպրոձերժինսկ, Զերկաս և այլ քաղաքներով ու գյուղերով, որոնց ազատագրման համար 1943—1944 թվականներին Խորհրդային Միության հերոս Իվան Օսիպովիչ Ցյուրուպի ղեկավարությամբ մարտական փառավոր ուղի է անցել արվեստագետ մանկավարժը:

Պատերազմի աահեղ տարիներին թշնամու դեմ մեկը զենքով էր կռվում, մեկ ուրիշը՝ վրձնով:

1941 թվականից ընդգրկված հայկական հինգ դիվիզիաներում և զինվորական այլ ստորաբաժանումներում Հայաստանի հազարավոր որդիներ Կովկասյան նախալեռներից թշնամու դեմ մարտնչելով հասան Բեռլին՝ թշնամու որջը: Շատերը զոհվեցին, շատերը վերադարձան հաղթանակած, բազմաթիվ հայ քաջորդիներ շարունակեցին իրենց ծառայությունը խորհրդային բանակում: Եվ բոլոր այդ օղակներում ու ճակատում հայ նկարիչներն ու կերպարվեստագետները իրենց փառքով պսակեցին:

Հմայակ Ավետիսյան

Սուրեն Սաֆարյան

ՀՄԱՅԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ անհատական ցուցահանդեսի (1973 թ.) կատալոգի 5-րդ էջում կարդում ենք. «Որքաշխարհի դառը ճակատագիրը բաժին է ընկել և Ավետիսյանին, սակայն մեր ժողովրդի արշալույսված կյանքը ժպտաց նրան...— Քիչ հետո էլ (էջ 6) առաջաբանի հեղինակ, արվեստաբան Եղ. Կուրդոյանը շարունակում է.— Ավետիսյանի ստեղծագործական ծրագրերի իրականացումն ու երազանքները ընդհատվում են Հայրենական մեծ պատերազմի հետևանքով: Եվ միայն 1945 թ. նկարիչը վերադառնում է իր սիրած զբաղմունքին»:

1978 թ. ապրիլ: Նկարչի տանն ենք՝ պրոֆեսոր Յուրի Սարգսյանի և որդուս՝ Մհերի հետ: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Վանի Մանդան գյուղից Հմայակը հրաշքով փրկվել է եղեռնից և միացել ռուսական բանակին, հասել Արաքսի այս ափը և հանգրվանել Երևանի ու Լենինականի որբանոցներում: Լենինականի նկարչական ստուդիան ավարտելուց հետո ուսումնատենչ պատանին ընդունվել է Երևանի գեղարդ տեխնիկում, այնուհետև ուսումը շարունակել (1932—37 թթ.) Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայում: 1931-ից իր դասընկերներ Կորյուն Սիմոնյանի, Սարգիս Ալեքսանյանի հետ առաջին անգամ մասնակցել է ցուցահանդեսի և արժանացել Աղասի Խանջյանի ուշադրությանը: Երբ բռնկվեց Մեծ հայրենականը, մի քանի ամիս անց, 30-ամյա Հ. Ավետիսյանը (ծնվ. 1912 թ.) կամավոր մեկնեց ռազմաճակատ: 1942 թ. 6-րդ տանկային դիվիզիայում նա տվեց իր զինվորական երդումը: Զանցած մի քանի ամիս, 47-րդ, հետո 16-րդ բանակի մարտիկների հետ որպես ջոկի քաղղեկ խիզախաբար մարտնչեց նա թշնամու դեմ Հյուսիսային Կովկասում, Ստալինգրադում և Ուկրաինայում:

— Մարտադաշտում 1942-ին, դադարի պահին,— պատմում էր նկարիչը,— երկու ճեպանկարի եմ կյանք տվել: Ահա դրանք. մեկը ընկերոջս՝ սերժանտ Զ. Մալդգիկովի, դիմանկարն է՝ գլխարկով և շինելով, մյուսը կոչել եմ «Հայրենական պատերազմի հերոսը»... Մեծ հայրենականը ականատեսի համար, գաղթ, կռիվ, կոտորած տեսած մարդու համար ստեղծագործության հավերժական թեմա է: «Ազատության զինվորները» կտավի վրա աշխատելու ժամանակ ես միշտ ապրել եմ պատերազմի սարսափն ու հաղթանակի հրճվանքը...

Այդ նույն զրույցը տեղեկացրեց, որ 1963-ին Հ. Ավետիսյանը կերտել է նաև Թամանյան դիվիզիայի քաջարի հրամանատար, գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի դիմանկարը (յուղ. կտավ, 99×84: Հայկ. ԽՍՀ կուլտուրայի մինիստրության ֆոնդ):

— Հայրենասիրության, ազատության և խաղաղապաշտության իմ ստեղծագործական գլուխգործոցը սա կլինի, կհաջողե՞մ ավարտել, թե չէ, չգիտեմ,— ասում է արվեստի վաստակավոր գործիչն ու ցույց տալիս «Ազատության զինվորները» (Անդրանիկն ու Գայլը) մեծադիր կոմպոզիցիոն կտավը, որն իրոք հայրենանվիրվածության և ազատության իսկական խորհրդանիշ է:

Հյուսիսային Կովկաս — Կուբան — Ուկրաինա — Բելոռուսիա — Լեհաստան — Գերմանիա — ահա հանրապետության ժողովրդական նկարիչ, Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի պրոֆեսոր ՍՈՒՐԵՆ ՍԱՖԱՐՅԱՆԻ անցած ռազմի ճանապարհը: Ս. Սաֆարյանը մասնակցել է նաև Պրագայի ազատագրմանը, պարգևատրվել ՀՄՊ-ի I աստիճանի շքանշանով և բազմաթիվ մեդալներով: 1946 թ. 23-ամյա նկարիչը զորացրվեց բանակից և իր ուսումնառությունը շարունակեց Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտում: 1952 թ.

«Հունան Ավետիսյանի սխրանքը» կտավը դարձավ Սուրենի ոչ միայն դիպլոմային աշխատանքը, այլև երաշխավորեց, որ նրան ընդունեն ԽՍՀՄ նկարիչների միության անդամ: Թեև պատերազմն ավարտվել էր, բայց նրա հետքերն ու սպիները Սաֆարյան նկարչին ստիպում էին իր ցասման ու նզովքի ձայնը բարձրացնել ընդդեմ պատերազմի, հանուն խաղաղության: Մնունդ առան նախկին զինվորի «Վերջին նռնակը», «Հայրենի մեղեդիներ», «Ազատարարները», «1945 թվականի գարնանը», «Չվերադարձան» կտավները: 1975 թվականին, Մեծ հաղթանակի 30-ամյակի օրերին, Ս. Սաֆարյանը արվեստի երկրպագուներին ուրախացրեց «Անդորր», իսկ 40-ամյակի ժամանակ՝ «Սպասում», «Եռանկյունի նամակներ» բազմապտուղ կտավներով: Միասնություն, նվիրվածություն, անսասան կամք և հաղթանակի հավատ. ահա այն հիմնականը, որ գույների գերիչ լեզվով խոսում են նախկին զինվորի կտավներից, նրա հերոսների արտաքին նայվածքից, խոհից ու թախծից: Մի՞թե մեր ասածի առհավատչյան չէ «Սպասում» գեղանկարի գլխավոր հերոսի՝ սպասող մոր կերպարը:

«Ենիսեյի ափերին», «Եղիշե Չարենց», «Ամբոխները խելագարված», «Կոմիտաս» կտավների հեղինակ, հանրապետության վաստակավոր նկարիչ ՌԵԳԻՆԱ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ այսօր ո՞վ չի

Ռեգինա Ղազարյան

ճանաչում: Ինչ իմանար երևանցի Թադևոս Ղազարյանը, որ Մեծ եղեռնի տարում (1915 թ.) ծնված իր աղջնակը պիտի 25 տարեկան հասակում Մոսկվայի օդաչուական դպրոցը թողնի կիսավարտ և զինվորի բլուզ հագնի, կրի կարմիր աստղով պիլոտկա (գլխարկ) և զենքը ձեռքին մարտնչի թշնամու դեմ 15-րդ ասերուփակոցային գնդում (1943 թ.) որպես հակաօդային պաշտպանության քաջարի մարտիկ և ռազմական ինքնաթիռների ուղեկցորդ: Ռ. Ղազարյանը հայրենի տուն վերադարձավ որպես ՀՄՊ-ի երկրորդ կարգի հաշմանդամ՝ պարգևատրված մարտական շքանշաններով և մեդալներով:

Հանրապետության ժողովրդական նկարիչ ՄԿՐՏԻՉ ՍԵԴՐԱԿՅԱՆ: Նա հայրենիքի պաշտպանությանը զինվորագրվեց կամավոր, 1941 թ. օգոստոսի 28-ին հագավ զինվորի գորշ շինել: Քութայիսի կրտսեր հրամանատարական կուրսերն ավարտելուց հետո որպես 10-րդ առանձին հրաձգային բրիգադի հրամանատար գերմանական ոհմակների դեմ 1942—1943 թվականներին նա կռվեց Մոզդոկում, Տուապսեում, իսկ հետո, միացած 18-րդ բանակի զորքերին, վեց ամիս անսասան մարտեր մղեց Մալայա Զեմլյայի և Նովոռոսիյսկի ազատագրման համար, մասնակցեց Ղրիմի, Կերչի, Սևաստոպոլի, Սիմֆերոպոլի, Յալթայի հավերժ անմոռաց ազատամարտերին: ՀՆ միության ռազմա-շեֆական հանձնաժողովի նախագահ (նախկին) Մ. Սեդրակյանի ռազմի սխրանքի մասին հետաքրքիր էջեր կգտնի ընթերցողը Վ. Սարգսյանի «Լեգենդար պլացդարմը» գրքում (էջ 116—117, Ե., 1977 թ.):

Բելոռուսական ռազմաճակատի (հրամանատար՝ գեներալ Ժուկով) մարտիկների հետ Մ. Սեդրակյանն անցավ հերոսական ճանապարհ, հետապնդելով թշնամուն մինչև իր որջը՝ մինչ Բեռլին: 1985 թ. «Սովետական արվեստ» ամսագրի 9-րդ համարում տպագրվեց Մ. Սեդրակյանի «Բեռլին, 1945-ի մայիս» ստեղծագործությունը: Այստեղ պարզ պատկերված են խորհրդային անհաղթ ռազմիկի ոչ միայն քաջությունն ու մարդասիրությունը, այլև ուշադիր, խնամակալ վերաբերմունքը անգամ թշնամու որբացած մանկան հանդեպ: Մ. Սեդրակյանի ռազմի բոլոր կտավներին դիպուկ են հումանիզմն ու լավատեսությունը: Աշխարհի վաղվա քաղաքացու հանդեպ հայ գեղանկարիչը միշտ էլ սեր և ուշադրություն է սերմանում, չէ որ աշխարհի վաղվա ճակատագիրը նրանից է կախված: Հայաստանի հեղափոխության պետական թանգարանում այցելուն այսօր կարող է ծանոթանալ նախկին զինվորի «Օդերի անցումը», Խորհրդային Հայաստանը Հայրենական մեծ պատերազմում թանգարանում՝ «Խորհրդային Միության հերոս Սերգեյ Օհանյանի սխրագործությունը» յուղաներկ կտավներին: Որքան, որքան սրտեր է հուզել, քանիքանի ցուցահանդեսներում են ներկայացվել Մ. Սեդրակյանի «Մայրեր», «Փախուստ», «Անեծք»,

Հայկ ԽՍՀ ժողովրդական նկարիչ **Մկրտիչ Սեդրակյանն** ու իր ռազմաճակատային ընկերները հաղթանակի առթիվ խնդության սեղանի շուրջ. 1945 թ., Գերմանիա:

«Մալայա Զեմլյա», «Դադար», «Զորավար Գայ» մեծադիր կտավները: «Խաղաղության թեման գրչով և վրձնով չի սպառվի: Խաղաղության համար, ընդդեմ պատերազմի ես այսօր էլ եմ նկարում»,— ասում է արվեստի վաստակավոր գործիչ Մ. Սեդրակյանն ու ցույց տալիս մի լուսանկար, որի ետևում գրված է «Քաղ. Կոսվիկ, Էլբայի վրա, Գերմանիա: Խմում ենք մեր հաղթանակի կենացը, մեր հայրենի օջախ վերադառնալու կենացը»: Շքանշաններով ու մեդալներով պարգևատրված, 1946 թվականին Մ. Սեդրակյանը վերադարձավ հայրենի Էջմիածին: Նույն տարում էլ ընդունվեց Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտ: Այսօր պատերազմի վետերան հայորդին այդ նույն ինստիտուտում գեղանկարչություն է դասավանդում՝ իր սաներին հիշեցնելով, որ պատերազմի բոլոր զենքերը կտավների կողքին պետք է տեղ գտնեն միայն և միայն թանգարաններում: «Սերունդները թող իմանան,— մեր զրույցի ժամանակ ասում է նա,— որ հայրենի հողը իր արյունով է ներկել ամեն մի հայ զինվոր: Կենաց և մահու այդ դաժան օրերին ոսոխի դեմ դուրս էին եկել ոչ միայն Հայաստանի նկարիչները, այլև Ռուսաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, Միջին Ասիայում, Ուկրաինայում և այլուր բնակվող սկսնակ և ավագ բազմաթիվ հայ արվեստագետներ: Մարտական սխրանքներով լի ռազմի փառահեղ ճանապարհ են անցել ՀՐԱՆՏ ՄԱՐԳԱՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ (ծնվ. 1915 թ., քաղ. Օրջոնիկիձե), ՍՈՒՐԱՏ ԿԻՐԱԿՈԶՈՎԸ (ծնվ. 1918 թ., Վրաց. ԽՍՀ վաստակավոր նկարիչ), արցախորդիներ ԶԱՎԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՎԱԿԻՄՈՎԸ (ծնվ. 1910 թ.) և ՇՄԱՎՈՆ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՆԳԱՍԱՐՈՎԸ (ծնվ. 1907 թ.), երկուսն էլ՝ վաստակավոր նկարիչներ, որոնց հետ ես 1969 թ. մասնակցել եմ Թբիլիսիում կայացած «Մեծ հայրենականի մասնակից նկարիչների Անդրկովկասյան ցուցահանդեսին»: Մեծ հայրենականում զոհված իր ուսուցիչների և դասընկերների մասին գրելիս Մ. Սեդրակյանը պահանջում է, որ չմոռանանք ԳՐԻԳՈՐ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ, ՀԱԿՈԲ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ՀԱՅԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ անունները, չէ՛ որ նրանք նոր էին ընդունվել կամ նոր էին ավարտել գեղարդ տեխնիկումը, երբ մայր հայրենիքը նրանց ի զեն կոչեց: Խոցվեցին

նրանք տարբեր ռազմադաշտերում՝ հավատարիմ ազատագաշտության իրենց զինվորական ուխտին...

Հանրապետության վաստակավոր նկարիչ ԱՐՏԱՇԵՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ քսանմեկ տարեկան էր, երբ հրաժեշտ տվեց Երևանի գեղարդ տեխնիկումին և զինվորագրվեց հայրենիքի պաշտպանությանը: Նրա ռազմի ճանապարհը 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի մարտական անցած ուղին է, որն սկսվեց Հյուսիսային Կովկասից, ավարտվեց Բեռլինում: Նկարիչ մարտիկը ծառայում էր 400-րդ գնդի վաշտերից մեկում որպես կապավոր: Կերչում, ծանր մարտերից հետո, 1944 թ. նա ընդունվում է ԽՄԿԿ շարքերը: Ա. Աբրահամյանը պարգևատրվել է Կարմիր աստղի, Հայրենական մեծ պատերազմի 3-րդ աստիճանի շքանշաններով, Խիզախության համար, Կովկասի պաշտպանության համար, Վարշավայի ազատագրության համար, Բեռլինի գրավման համար, Մարտական ծառայության համար և այլ մեդալներով:

«Զենքս ցած եմ դրել 1945 թ. մայիսի 2-ին նախկին Հումբոլտ-Հայն ամրոցը գրավելուց հետո»,— կարդում ենք նախկին զինվորի ինքնակենսագրականում:

Արտաշես
Աբրահամյան

Խաչիկ
Ադամյան

Ծնունդով (1921 թ.) երևանցի է ԽԱՉԻԿ ԱԴԱՄՅԱՆԸ: Նա 1941 թ. մայիսից հերթական զինծառայության մեջ էր 232-րդ հրաձգային գնդում, գտնվում էր Էստոնիայի Եկվա քաղաքում, երբ ֆաշիստական Գերմանիան հարձակվեց մեր հայրենիքի վրա: Պատմական գրականության վկայությամբ 1941 թ. հունիսի 21-ին խորհրդային սահմանագծից այն կողմ թշնամին կենտրոնացրել էր 190 դիվիզիա, 50 հազար հրանոթ և ականանետ, ավելի քան 3500 տանկ և 4900 ինքնաթիռ: Թշնամու հարձակման առաջին հարվածները հենց առաջին ռազմաճակատային գծում իրենց վրա ընդունեցին խորհրդային սահմանապահ զորամասերը: Վայրաբարո այդ դաժան մարտերում, դեպի Լենինգրադ ստիպված նահանջող խորհրդային ռազմիկների շարքերում օգոստոսի 8-ին հիտլերյան գնդակը խոցեց քսանմյա մի հայ երիտասարդի: Ուշագնաց վիճակում թշնամին նրան տարավ գերության: Թե քանի-քանի համակենտրոնացման և մահվան ճամբարներում քարշ տվեց Խաչիկը իր դառն օրերը, այդ միայն ինքը գիտի և մահվան զընդաններից իր հետ մազապուրծ ազատված մյուս ռազմագերիները: Խաչիկ Ադամյանը պարգևատրված է Հայրենական մեծ պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով և բազմաթիվ մեդալներով: Նա գերությունից ազատագրվել է 1945 թ. մարտին, նորից զենքը ձեռքին մարտընչել ոսոխի դեմ, հայրենի տուն վերադարձել 1946-ի հուլիսին: ԽՍՀՄ նկարիչների և ճարտարապետների միությունների անդամ Խաչիկ Մնացականի Ադամյանը Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարիչ է: Պատերազմի և խաղաղության թեման այսօր էլ նրան հանգիստ չի տալիս:

Երևանի կերպարվեստի տեխնիկումի սան ԳՐԻԳՈՐ ԱԶԻԶՅԱՆԸ թշնամու դեմ ճակատ առ ճակատ հանդիպեց մերձմոսկովյան ռազմաճակատում որպես 1030-րդ գնդի գումարտակներից մեկի կապավոր: Դա 1942-ի հունվարին էր: Հետո նրանց գունդը տեղափոխվեց Ստալինգրադ: Այստեղ, կատաղի մարտերում, սեպտեմբերի 22-ին անվեհեր կապավորը երկու ձեռքից ծանր վիրավորվում է և տեղափոխվում Ալթայի երկրամասի Կեմերովո քաղաքի հոսպիտալը: Ապաքինվելուց հետո, 1943—1944 թթ. (մինչ փետրվար ամիսը Գր. Ազիզյանը ծառայում է 490-րդ առանձին հրաձգային գնդի վաշտերից մեկում: Այնուհետև մարտիկ նկարիչը տեղափոխվում է լենինգրադյան ռազմաճակատ որպես 450-րդ առանձին կապի վաշտի հեռախոսավար և սակրավոր: Պատերազմը նա ավարտում է Էստոնիայում և շքանշաններով ու մեդալներով պարգևատրված բանակից զորացրվում Մեծ հաղթանակից երկու տարի անց՝ 1947 թվականին: Մի տարի հետո նա արդեն ԽՍՀՄ նկարիչների

միության անդամ էր: 1986-ին Գր. Ազիզյանին շնորհվել է հանրապետության վաստակավոր նկարչի կոչում: Մեծ հայրենականի տարբեր ռազմաճակատներում են մարտնչել և մի օր էլ զինվորական բլուզներին շքանշաններ ու մեդալներ ամրացրած բախել են հայրենի օջախի դուռը ՅՈԼԱԿ, ՍՈՒՐԵՆ ԵՎ ՍԱՐԳԻՍ ԱԶԻԶՅԱՆՆԵՐԸ: Նրանցից առաջինը ծնվել է Աշտարակի շրջանի Կարպի գյուղում, երկրորդը՝ Երևանում,

Գրիգոր
Ազիզյան

Յոլակ
Ազիզյան

Վլադիմիր
Այվազյան

Միքայել
Առաքելյան

երրորդը՝ Լենինականում: Նրանք միայն վրձնի և զենքի եղբայրներ են, ոչ արյունակիցներ: «Վերջին ռազմավարը Բեռլինում», և «Վերջ» (Յ. Ազիզյան), «Բաքուն էլ կարմիր կլինի», «Միքայել Նալբանդյան» (Ս. Ազիզյան), «Հանգիստ» և «Արգինայի պարտիզանները» (Ս. Ազիզյան) գեղանկարները ծնվեցին մեծ հաղթանակից հետո, ծնվեցին սվին, գնդացիր, ռումբ և նռնակ բռնող տաղանդաշատ նույն ձեռքերով, մեկ անգամ ևս ապացուցելով, թե ինչի է ընդունակ մարդկային ձեռքը պատերազմի և խաղաղության պայմաններում: Կարծես նման ձեռքերի գովքն է ներբողել զոհված զինվորի բանաստեղծ որդին, երբ գրել է.

Զեռք կա աշխարհում, որ կյանք է փրկում,
Զեռք կա ծեղքում է սիրտը մայրական,
Մեկն իր ձեռքով մանկանն է գրկում,
Մեկը ծուլում է ռումբեր ու ական:
Համբուրում եմ ես այն ձեռքը մաքուր,
Որը չի փակում ոչ մի բախտի դուռ:

Ս. Գ.:

Մեծ հայրենականի բոցերում խանձված, երբեմն էլ վիրավոր, բայց կյանքին, աշխարհին և ազատությանը սիրահար քանի-քանի երիտասարդ ձեռքեր հաղթանակից հետո իրենց կերտած կտավներում, քանդակներում և պլակատներում ձաղկեցին պատերազմը, նրա հրձիգներին, փառաբանեցին հայրենի վիրավոր հողն ու նրա համար իր կյանքը չխնայած զինվորին:

ՎԼԱԴԻՄԻՐ ԱՅՎԱԶՅԱՆԸ հայ մշակույթի մեծավաստակ երախտավոր Ստ. Աղաջանյանի սաներից է, գրաֆիկ, վաստակաշատ նկարիչ և արվեստի վաստակավոր գործիչ: Նա 1939—1946 թվականներին կրել է զինվորական համազգեստ, սովորել զինվորական դասընթացներում, սպայական կոչումով 61-րդ հրաձգային դիվիզիայի 112-րդ առանձին վաշտի հետ ընդունել թշնամու առաջին հարվածները մեր երկրի արևմտյան սահմանագոտում: 1942 թ. Արևմտյան ռազմաճակատում Վ. Այվազյանը 10-րդ տանկային բրիգադի մարտիկների հետ դիմադրում էր մեր սուրբ հողը ներխուժած թշնամու ոհմակներին: Մարտերում թրծված անսասան քաջորդին հետո տեղափոխվեց Հեռավոր արևելք: 204-րդ տանկային հատուկ միավորման մարտիկների հետ վայոցձորցի Տիգրանի որդին այստեղ մասնակից դարձավ ճապոնական դրագուլյան բանակի վերջին մոհիկանների ջախջախմանը: Գրաֆիկ Վլ. Այվազյանը արժանացել է ՀՄՊ-ի երկրորդ աստիճանի շքանշանի, Մարտական ծառայության համար, Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար, Ճապոնիայի դեմ տարած հաղթանակի համար և բազմաթիվ այլ շքանշանների ու մեդալների: Նրա ստեղծագործություններից շատերը ցուցադրվել են ոչ միայն Երևանում, Մոսկվայում, Լվովում, Տարտուում և մեր անծայրածիր Միության այլ քաղաքներում և պատկերասրահներում, այլև արտասահմանյան բազմաթիվ երկրներում (Բուլղարիա, Դանիա, Բելգիա, Սի-

րիա, Շվեդիա, Լեհաստան, Իտալիա, Ֆրանսիա, Հունգարիա, Գերմանիա (դեմոկրատական), Մոնղոլիա և այլուր):

«Նոան գույնը», «Բարև, ես եմ», «Հեղնար աղբյուր», «Մենք ենք, մեր սարերը» և բազմաթիվ այլ գեղարվեստական կինոնկարների նկարիչ-բեմադրող ՄԻՔԱՅԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ այսօր շատերն են ճանաչում: Բայց քչերը գիտեն, երևի, որ նա դեռ գեղարդ տեխնիկումի 2-րդ կուրսից զինվորագրվել է հայրենիքի պաշտպանությանը և որպես ականանետային դասակի, հետո էլ 120-րդ ականանետային մարտկոցի հրամանատար թշնամու դեմ կռվել Հյուսիսային Կովկասում, Ուկրաինայում, Բելոռուսիայում, մասնակցել Քյոնիգսբերգի, Պրագայի, Բեռլինի ազատագրմանը: 2-րդ Ուկրաինական և 3-րդ Բելոռուսական ռազմաճակատների աննկուն զինվորը արժանացել է գվարդիայի լեյտենանտի կոչմանը, պարգևատրվել ՀՄՊ-ի առաջին և երկրորդ աստիճանի շքանշաններով և տասներեք մարտական մեդալներով: Պատերազմի և աշխատանքի վետերան Միքայել (Միշա) Առաքելյանը այսօր էլ երիտասարդական ավյունով շարունակում է իր ստեղծագործական աշխատանքը «Հայֆիլմ» կինոստուդիայում:

Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի գծանկարի ամբիոնում է աշխատում պրոֆեսոր, Հայկ. ԽՍՀ վաստակավոր նկարիչ, արվեստի վաստակավոր գործիչ, Հայրենական մեծ պատերազմի երկրորդ կարգի հաշմանդամ ՎԱՂԻՆԱԿ ՍԻՐԵԿԱՆԻ ԱՍԼԱՆՅԱՆԸ: Մեզ տված նրա ինքնակենսագրականում կարդում ենք. «Ծնվել եմ 1918 թ. դեկտեմբերի 21-ին Երևանում, Արևմտյան Հայաստանից գաղթած բանվորի ընտանիքում: 1934—1938 թթ. սովորել և ավարտել եմ Երևանի գեղարվեստական ուսումնարանը: 1938—1939 թթ. աշխատել եմ Կալինինոյի շրջանի Սարատովկա գյուղում որպես մանկավարժ: 1939—1942-ին ծառայել եմ Կարմիր բանակում (63-րդ Անդրկովկասյան հրաձգային դիվիզիայի 170-րդ սակրավորների հատուկ գումարտակում): Զինվորական կոչումս եֆրեյտոր է: 1941 թ. օգոստոսի 25-ից մեր դիվիզիան գտնվում էր Պարսկաստանում (Խոյ և Մակու քաղաքներում՝ թուրքական սահմանի մոտ): 1941 թ. դեկտեմբերի 31-ին (1942-ի հունվարի 1-ի լուսաբացին) Նովոռոսիյսկից մեկնած մեր առաջավոր զորքերի հետ դեսանտ իջեցրինք և գրավեցինք Թեոդոսիա քաղաքը՝ աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհ. Այվազովսկու ծննդավայրը: 1942 թ. հունվարի 16-ին Թեոդոսիայի պաշտպանության համար մղվող ճակատամարտում վիրավորվեցի, մեծ դժվարությամբ ինձ տեղափոխեցին Կերչի հոսպիտալ: Հունվարի 23-ին հաջողվեց գերմանական ավիացիայի գնդակոծության տակ մեր նավը էվակուացնել Տուապսե քաղաք, որտեղից էլ մեզ՝ վիրավորներիս, անմիջապես տեղափոխեցին Կիսլովոդսկ: Որոշ ժամանակ բուժվելուց հետո ինձ ուղարկեցին թիկունք՝ Բաքու, որտեղից էլ վերջնականապես զորացրվեցի որպես Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամ...»: Պատերազմի և աշխատանքի վետերան Վ. Ասլանյանին շնորհվել է ՀՄՊ-ի երկրորդ աստիճանի շքանշան և բազմաթիվ մարտական մեդալներ:

Վաղինակ Ասլանյան

Գուրգեն Արամյան

Գրաֆիկ ԳՈՒՐԳԵՆ ԼԵՎՈՆԻ ԱՐԱՄՅԱՆԸ 1939 թվականից ծառայել է Կարմիր բանակում: Քիչ էր մնում զորացրվելուն, երբ հարկ եղավ որպես ավագ սերժանտ Կենտրոնական ռազմաճակատի մարտիկների շարքերում կասեցնել հիտլերականների ներխուժումը: Պատերազմի թեժ օրերին թբիլիսցի 22-ամյա երիտասարդը գերի ընկավ և տարվեց Մոժայսկի համակենտրոնացման ճամբար: Երկու ամիս թշնամու գնդանում մնալուց հետո Գուրգենին հաջողվում է մի քանի ռազմագերիների հետ փախչել, միանալ խորհրդային բանակայիններին և նորից շարունակել վրեժխնդիր մարտերն ընդդեմ ոսոխի: Մոսկվայի համար ծավալված բորբոքուն կռիվների ժամանակ Երևանի գեղարդ տեխնիկումի սանը ծանր վիրավորվում է, տեղափոխվում մոսկովյան հոսպիտալ, այնտեղից տարվում Վլադիմիր, հետո էլ՝ Կովրովո: 1942 թ.

մարտին Գուրգենը վերադառնում է գործող բանակ՝ կրակային առաջին գիծ, միանում իր զինմասին և դասակի գլուխն անցած շարունակում գրոհել թշնամու վրա: Հիտլերականները պարտություն պարտության հետևից կրելով նահանջում էին՝ տալով զորքի և զինամթերքի մեծ կորուստներ: Միացած առաջին Բելոռուսական ռազմաճակատի մարտիկներին՝ Գ. Արամյանն անվեհեր խիզախություն և անզիջում դիմադրություն է ցույց տալիս Քյոնիգսբերգի և Բեռլինի գրավման ժամանակ, ետ է կանչվում և № դիվիզիայի մարտիկների հետ գործուղվում Հեռավորարևելյան ռազմաճակատ, քաջաբար դրսևորում իրեն միլիտարիստական Ճապոնիայի դեմ մղվող պայքարում: Կարմիր աստղի և ՀՄՊ-ի առաջին աստիճանի շքանշաններ, Մարտական ծառայության համար, Մոսկվայի պաշտպանության համար, Քյոնիգսբերգի գրավման համար, Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար, Ճապոնիայի դեմ տարած հաղթանակի համար— ահա ոչ լրիվ ցանկը այն շքանշանների և մեդալների, որոնք զարդարում են այսօր Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի դասախոս Գուրգեն Արամյանի կուրծքը:

Երկրորդ Ուկրաինական ռազմաճակատի ռազմիկների հետ ուս-ուսի տված մարտնչում էին հիտլերյան բանակի դեմ 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայի 677-րդ գնդի մատակարարման գումարտակի մարտիկները, նրանց թվում էին և նկարիչներ ԿՈՐՅՈՒՆ ՍԻՄՈՆՅԱՆՆ ու ՄԱՐԿՈՍ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԸ: Կորյունը (ինչպես վկայում է մեզ հանձնված՝ Մ. Տ. Արզումանյանի ձեռագիր ինքնակենսագրականը) Մոզդոկի մոտ օդային ծանր մարտերից մեկի ժամանակ, 1943 թվականին զոհվում է, իսկ ինքը երեք անգամ ծանր վիրավորվելուց հետո կոնտուզիա է ստանում, կորցնում լսողությունն ու ընկնում հիվանդանոց: Ռազմա-հայրենասիրական ծառայությունների համար նկարիչ, կապիտան, իգդիրցի Տիգրանի որդին պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով և մեդալներով: Պատերազմից հետո նրա վրձինը ծնունդ է տվել հայ ականավոր զորահրամանատարներ, գեներալներ Հայկ Մարտիրոսյանի և Ասքանազ Կարապետյանի դիմանկարներին: Մ. Արզումանյանը ԽՄԿԿ շարքերն է ընդունվել Հյուսիս-կովկասյան ռազմաճակատում 1943 թվականին: Նա Հայկ. ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ է:

1975 թ. Երևանի Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում Ա. Անկիլովի «Զինվորի այրին» պիեսի բեմադրության նկարչական ձևավորման համար ՍԱՐԳԻՍ ՏԻԳՐԱՆԻ ԱՐՈՒՏՉՅԱՆԻՆ շնորհվեց Հայաստանի պետական մրցանակ, չանցած տասը տարի (1984 թ.) նա արժանացավ Հայկ. ԽՍՀ ժողովրդական նկարչի կոչման: Արդյոք մասնակցե՞լ է վրձնի

Մարկոս Արզումանյան

Սարգիս Արուտչյան

վարպետը Մեծ հայրենականին. ե՞րբ և որտե՞ղ է կռվել, ինչպիսի՞ պարգևների է արժանացել. նախապես մշակված այս հարցերը մտքումս՝ այցելում եմ մայր թատրոնի գլխավոր նկարչին: Մի քանի օր անց արդեն սեղանիս է ձեռագիր մի ինքնակենսագրական, ուր կարդում եմ. «Ծնվել եմ 1920 թ. սեպտեմբերի 25-ին Դոնի Ռոստովում: Միջնակարգ կրթությունս ստացել եմ Երևանի Խաչատուր Աբովյանի անվան դպրոցում: 1941 թ., Երևանի գեղարվեստական ուսումնարանում դիպլոմային աշխատանքները կատարելու ժամանակ, սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Դիպլոմային աշխատանքը հանձնելուց հետո կուրսի բոլոր տղաների հետ մեկնեցի ռազմաճակատ: Ռազմական մկրտությունս ստացել եմ Ճախտի քաղաքում: Զինվորական երդում ընդունել եմ 73-րդ հրաձգային դիվիզիայի հրետանային 11-րդ գնդում: Եղել եմ շարքային զինվոր հրետանու վրա: Ռազմական մարտերին մասնակցել եմ՝ Միլլերովո, Դոնեցկ, Վյոշենսկայա, Բոտայսկ, Նովոչերկասկ, Ռոստով քաղաքներում, Հյուսիսային Կովկասում և այլուր: 1943 թ. կոնտուզիայից և ծանր հիվանդությունից հետո զորացրվել եմ...»: Կովկասի պաշտպանության համար, Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար և բազմաթիվ մարտական այլ մեդալներով

կուրծքը զարդարած, պատերազմի հաղթական ավարտից հետո Ս. Արուտչյանն ընդունվում և 1950 թ. ավարտում է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտը: Երևանի տիկնիկային, պատանի հանդիսատեսի, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի, Մեղրու միջշրջանային, հետագայում Գ. Սունդուկյանի անվան թատրոններում աշխատած ժամանակ նկարիչ Ս. Արուտչյանը միշտ էլ իր ստեղծագործություններում սովորեցրել է ատել ֆաշիզմն ու պատերազմը, սիրել հայրենիքն ու խաղաղությունը: Թերևս գաղափարական այս նպատակաուղղվածությունն ու նկարչական բարձր արվեստն են այն հիմնական ազդակները, որ մեր մեծ Միությունում և արտասահմանում նկարչի ցուցահանդեսները և բեմադրությունները վերածում են տոնախմբությունների:

Ով գեթ մեկ անգամ տեսած լինի Խորհրդային Միության հերոս Հունան Ավետիսյանի՝ Ղափանում կանգնեցված բրոնզե արձանը, ով եղել է Խորհրդային Միության մարշալներ Հովհաննես Բաղրամյանի և Համազասպ Բաբաջանյանի ծննդավայրում և գլուխ խոնարհել «Հայրենական մեծ պատերազմում զոհված չարդախլվեցի մարտիկներին» (կոփածո պղինձ) հուշակոթողին, նա չի կարող իր մտապատկերից հանել այդ ստեղծագործությունների տաղանդաշատ հեղինակին՝ Հայկ. ԽՍՀ ժողովրդական նկարիչ ՍԱՐԳԻՍ (ՍԵՐԳԵՅ) ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ:

ԼՂԻՄ-ի Հադրութի շրջանի Բանազուր գյուղում է ծնվել նա 1923 թ. սեպտեմբերի 5-ին: Վաղ բաժանվեց փոքրիկ Սերգեյը հայրենի բնօրրանից. նրանց ընտանիքը տեղափոխվեց Երևան, ուր և պատանին սովորեց Պուշկինի անվան դպրոցում և Ղ. Ղուկասյանի անվան պիոներ-դպրոցականների պալատի քանդակագործական խմբակում, մասնակցեց «Մեր պատանի ստեղծագործողները» հանրապետական ցուցահանդեսին, շահեց առաջնություն: Երևանի գեղարվեստի ուսումնարան մեկնելու փոխարեն 1942-ին երիտասարդ քանդակագործը հայրենիքի զինվոր դարձավ: Բաքվի № 1 հետևակային ուսումնարանն ավարտելուց հետո լեյտենանտի կոչումով, որպես ականանետային դասակի հրամանատար, ուղարկվեց Հյուսիս-կովկասյան ռազմաճակատ: Թշնամու դեմ մղված առեղ մարտում նա ծանր վիրավորվում է և տեղափոխվում հոսպիտալ: «Եթե մեռնելու եմ, թող կրակային գծում զոհվեմ»,— լինում է արցախորդի զինվորի վճիռը: Բուժվելուց հետո նա հայտնվում է 4-րդ Ուկրաինական ռազմաճակատում, նորից ղեկավարում ականանետային մի դասակ: Կատաղի փոխհրաձգությունների և օդային ռմբակոծության ժամանակ լեյտենանտ Բաղդասարյանը երկրորդ անգամ է ծանր վիրավորվում և ստանում կոնտուզիա: Նորից հիվանդանոց, նորից բուժումներ: Մի քանի ամիս անց նա պահեստային զինմասում գնդի հրամանատարի համհարզն էր: Թշնամուն վաղաժամ պարտված տեսնելը Սերգեյի երազանքն էր, և դա էր պատճառը, որ նա անդամագրվեց հայ թամանցիներին և որպես հրետանային մարտկոցի հրամանատար քաջաբար դրսևորեց իրեն Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Հունգարիայի համար ծավալված թեժ մարտերում, արժանացավ ՀՄՊ-ի առաջին աստիճանի և Պատվո նշան շքանշանների, ինչպես նաև՝ բազմաթիվ մարտական մեդալների և Գերագույն գլխավոր հրամանատարության շնորհակալագրերին: Ավագ սպա, քանդակագործ Ս. Բաղդասարյանը զինվորական համազգեստին հրաժեշտ տվեց միայն 1946 թ. և նույն տարում էլ ընդունվեց Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի քանդակագործական բաժինը: Նա այժմ այդ նույն ինստիտուտում պրոֆեսոր է: Հայրենիքի նախկին զինվորին շնորհվել է Հայկ. ԽՍՀ պետական մրցանակ: Նրա բազմաթիվ ստեղծագործությունների ծնունդի դրդապատճառը Հայրենական մեծ պատերազմն է, Համաշխարհային Մարդ-քաղաքացու խինդն ու ցավը, ազնիվ ինտերնացիոնալիզմն ու ժողովուրդների անշահախնդիր եղբայրությունը: Միթե դրա առհավատչյան չեն ոչ միայն մեր մեծ Միությունում, այլև արտասահմանում (Հունգարիա և այլուր) ցուցադրված և ամենուր սիրված նրա բազմաթիվ քանդակները:

Սարգիս
Բաղդասարյան

Հայ մոնումենտալ-դեկորատիվ խեցեգործությունը անհնար է այսօր պատկերացնել առանց հանրապետության ժողովրդական նկարիչ (1985 թ.) ՀՄԱՅԱԿ ԲԴԵՅԱՆԻ: Մեր պահանջով գրած նրա «ռազմի ինքնակենսագրությունը» շատ համեստ է. «...1943 թ. փետրվարի 16-ին, 10-րդ դասարանից, մեկնեցի բանակ: Մի ամիս հետո արդեն 381-րդ դիվիզիոնում էի, ռազմաճակատում, Արմավիր քաղաքի մոտ: Ֆաշիստական սավառնակների դեմ մարտնչելով հասանք Խարկովի մոտ գտնվող Վարշանով քաղաքը: Պատերազմի ավարտը դիմավորեցի 86-րդ զինվորական ճանապարհային ջոկատում՝ խորհրդահրանական սահմանին:

Հմայակ
Բդեյան

Պետրոս
Բալբուրդյան

Պարգևատրված եմ Հայրենական մեծ պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով և մի շարք մեդալներով...»:

Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամ է Մոսկվայի Սուրիկովի անվան պետական նկարչական ինստիտուտի սան, բազմավաստակ գեղանկարիչ և գրաֆիկ ՊԵՏՐՈՍ ԱՐԱՄԻ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆԸ: 1941—1943 թթ. նա հիտլերյան ոհմակների դեմ կռվել է Սմոլենսկի, Վյազմայի և Մոսկվայի մատույցներում, արժանացել շքանշանների և մեդալների:

«Խաղաղություն» և «Խաղաղության աղավնին» պլակատների հեղինակ ՎԱԶՐԻԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ տասնյոթ տարին նոր էր լրացել, երբ ավարտեց Մոսկվայի Վ. Սուրիկովի անվան գեղարվեստի դպրոցը և հագավ ծովային համազգեստ: 1942—1943 թվականներին նա կուրսանտ էր Կարմրադրոշ ռազմածովային նավատորմների միավորման հատուկ դպրոցում, իսկ 1944—1945 թվականներին ծառայող՝ «Թելման» սուզանավի վրա: Որպես ծովային հետևակի շքանշանակիր զինվոր Վ. Գաբրիելյանը խորհրդային բանակի շարքերից զորացրվեց 1946 թվականին: Նա պարգևատրվել է ՀՄՊ-ի տարբեր շքանշաններով և տասներկու մարտական մեդալներով:

«1945 թ. մասնակցել եմ Մեծ հաղթանակի մոսկովյան շքերթին: Պարգևատրված եմ Հայրենական մեծ պատերազմի շքանշաններով և մեդալներով: Բանակ եմ զորակոչվել 1940 թվականին: 1941 թ. ծառայել եմ 104-րդ ծովային հրաձգային դիվիզիայում:— Այնուհետև նկարիչ ՀԱԿՈԲ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ձեռքով գրված ինքնակենսագրականում կարդում•ենք.— Մասնակցել եմ Մուրմանսկի ուղղությամբ մղվող մարտերին: 1943—1947 թթ. ծառայել եմ Կարմրադրոշ ռազմա-ծովային կատերների (փոքր ռազմանավ) բազայում: 1944-ին մասնակցել եմ Պատսամո (Պեչենգա) քաղաքի ազատագրմանը: Զորացրվել եմ 1947 թվականին»: Ասված է ամեն ինչ...

«Ինձ համար՝ քսաներեքամյա երիտասարդիս համար, պատերազմի դեմքը ավելի զզվելի բացահայտվեց, երբ ոտք դրեցի իմ ծննդավայրը՝ Կրասնոդար: Սիրտս ճմլվեց, լաց եղա: Մանկությանս ընկերներին էի ուզում գտնել, իմ ծնված տունը, մեր բակը, մեր փողոցը... Ավա՜ղ, ոչ ոքի չգտա: Գլխիս վրայով գնդակներ էին սուրում բոլոր ուղղություններով, քաղաքը ռմբակոծված էր, ծխի ու մխի մեջ կորած: Հիշում էի մերոնց, մեր ինտերնացիոնալ թաղը, թուրքական յաթաղանից մազապուրծ այստեղ հիմնված, տուն-տեղ դրած գաղթական հայերին, նրանց բարբառները, նիստն ու կացը, և մի տեսակ վրեժի զգացում էի ապրում՝ կոտորել, կոտորել անխնա ամեն մի

Վազրիկ
Գաբրիելյան

Հակոբ
Գրիգորյան

զինվոր գերմանացու, ով ընկնի ձեռքս, անկախ իր սեռից, դեմքից ու դիրքից... Նման ծանր մրցավանջի մեջ էի, երբ ընկերներիցս մեկը դարանակալած թշնամու անվրեպ գնդակից փլվեց ուսիս...»,— հուզված, զոռ տալով վերհուշին, պատմում է Կ. Էնֆենջյանը:

Մեր երկար հարցազրույցից պարզվեց, որ ԿԱՐԱՊԵՏ (ԿԱՐՈ) ԷՆՖԵՆՋՅԱՆԸ հայրենիքի զինվոր է դարձել կռվի հենց երկրորդ ամսին (27.7.1941 թ.): Թբիլիսիի հրետանային ուսում-

Կարապետ Էնֆենջյան

Վաչե Թևանյան

նարանը լեյտենանտի կոչումով ավարտելուց հետո 1943 թ. նա ուղարկվել է Հյուսիս-կովկասյան ռազմաճակատ, կռվել Կրասնոդարում և Թաման թերակղզում: 4-րդ Ուկրաինական ռազմաճակատի մարտիկների հետ հրանոթային դասակի հրամանատար Կ. Էնֆենջյանը քաջաբար է դրրսևորել իրեն կարպատյան մարտերում, հատկապես չեխոսլովակյան մի շարք քաղաքների (Պրագա, Բրատիսլավա, Օլոմուց, Կեժմարոկ) համար մղվող մարտերում, որոշ ժամանակ իրենց գունդը ղեկավարել է չեխ անվանի զորավար Լյուդվիգ Սվոբոդան: Կ. Էնֆենջյանը պարգևատրվել է Կարմիր աստղի, Հայրենական մեծ պատերազմի առաջին և երկրորդ աստիճանի շքանշաններով, ինչից ավելի մարտական մեդալներով: 1946 թ. անհաղթ հայորդին զորացրվեց բանակից, մի տարի անց ընդունվեց Թբիլիսիի գեղարվեստի ակադեմիա, Երևանում ավարտեց գեղարվեստա-թատերական ինստիտուտը:

1938 թվականին Երևանի գեղարդ տեխնիկումն ավարտելուց հետո Հովհաննես Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում գլխավոր նկարիչ-ձևավորող էր աշխատում ՎԱՉԵ (ՎԱՉԱԳԱՆ) ԹԵՎԱՆՅԱՆԸ: Մանկան ներաշխարհը բացահայտող, կյանքն ու բնությունը իր գունավոր և գրաֆիկ նկարներում յուրովի վերարտադրող ստեղծագործություններով նա հաճախ էր զարդարում «Պիոներ» և «Հոկտեմբերիկ» մանկապատանեկան ամսագրերը: 1940 թ. Վաչեն արդեն Մոսկվայի գեղարվեստի ինստիտուտի ուսանող էր (պրոֆ. Կրամարենկոյի դասարան), փոխադրվում էր երրորդ կուրս, երբ պայթեց Մեծ հայրենականը: Ինստիտուտը տեղափոխվեց Սամարղանդ (Ռեգիստանի փողոց, № 45): 1942 թ. սեպտեմբերի 1-ին ինստիտուտի գերազանցիկ հայ ուսանողը կամավոր ներկայացավ զինկոմիսարիատ և բազմաթիվ ապագա նկարիչների հետ բարձրացավ զինակոչիկների վագոնը (այսպես էին կոչվում գնացքների այն վագոնները, որոնք զինակոչիկներ էին տեղափոխում ռազմաճակատ): Սկզբնական շրջանում Վաչեն հրաձգային ջոկի հրամանատար էր՝ 368-րդ հրաձգային պահեստային գնդում: Որպես ավագ սերժանտ խիզախորեն նա մարտի դուրս եկավ թշնամու դեմ Հարավային ռազմաճակատում: Երկար ժամանակ յուրայինները նրանից նամակներ չէին ստանում: 1946 թվականի մայիսին միայն զինվորական կյանքին և թշնամուց ստացած տանջանքներին հրաժեշտ տվեց 424-րդ սահմանապահ զորամասի հրաձգային ջոկի նախկին հրամանատար Վ. Թևանյանը: Նա ծագումով (ծնվ. 12.7.1915 թ.) Ղուկասյանի շրջանի Մուսալելյան գյուղից էր (մահ. 1970 թ.):

Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի պրոֆեսորի պաշտոնակատար ԱԶԱՏ ԼԵՅԼՈՅԱՆԸ մինչև հերթական զինծառայությունը (1944 թ. հունիս) սովորել է Երևանի № 17 դպրոցում: Սևաստոպոլի զենիթա-հրետանային ուսումնարանի քառամսյա դասընթացները վերջացնելուց հետո նա I Ուկրաինական ռազմաճակատի 31-րդ հատուկ պահեստային գնդում որպես շարքային զինվոր կռվել է թշնամու դեմ մեր հայրենիքի արևմտյան սահմաններում, դեկտեմբերին ծանր վիրավորվել է և տեղափոխվել № 1742 էվակոհոսպիտալ (Ուֆա): Ապաքինվելուց հետո լենինականցի հայորդին (ծնվ. 1926 թ.) իր զինծառայությունն անց է կացրել Տամբովի հրետանային տեխնիկական ուսումնարանում և № 1414 էվակոհոսպիտալում: Նկարիչ (գեղարվեստական ապակու գծով), մանկավարժ Ա. Լեյլոյանը Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամ է՝ պարգևատրված մարտական և աշխատանքային մի շարք մեդալներով:

Պատերազմի և աշխատանքի վետերան դեռ չեն կոչում նրան, քանզի ԳԵՎՈՐԳ ԽԱՆԱՂՅԱՆԸ միշտ «մարտական» պոստում է. նկարիչ-գրաֆիկի իր վրձինն ու մատիտը նա այսօր էլ հաճախ է ուղղում նրանց դեմ, ովքեր ուզում են պղտորել Երկիր մոլորակի անդորրը: Հայաստանի նկարիչների միության նրա անձնական գործերից տեղեկանում ենք, որ Երևանի գեղարդ տեխնիկումի 3-րդ կուրսը թողած անավարտ՝ զինվորի համազգեստ է հագել և, դեռ աղվամազը չսափրած, 1942-ին նախնական զինվորական պատրաստություն ստացել Բուլնակ քաղաքի ռազմահետևակային ուսումնարանում: 1943 թ. օգոստոսին հնչեց տագնապի ազդանշանը, և բոլոր կուրսանտները, որպես հետևակային զինվորներ, հրացաններն ուսած, դուրս եկան մարտադաշտ՝ Միուս գետի ափին: 4-րդ Ուկրաինական ռազմաճակատի 24-րդ գնդի հրաձիգներից շատերի պես սկսնակ նկարիչը ևս ընկավ ոմբակոծության և հրետանային կրակի տակ: Ուշագնաց վիճակում ընկերները նրան հազիվ կարողացան հասցնել սանմաս, այնտեղից էլ՝ հոսպիտալ: Նոր էին վերքերը սպիացել, երբ Գևորգը հայտնվեց 156-րդ հրաձգային պահեստային գնդում և իր ջոկի հետ քաջաբար մարտնչեց Անդրկարպատներում, Ուկրաինայում, Լեհաստանում ու Չեխոսլովակիայում՝ արժանանալով Հայրենական մեծ պատերազմի առաջին աստիճանի շքանշանի և Մարտական ծառայությունների համար, Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար մեդալների:. Մարտադաշտում հատուկ զինվորական հանձնարարությունը օպերատիվ կենսագործելու համար 1944 թվականին նրան ընդունում են ԽՄԿԿ շարքերը (անդամության թեկնածու): Ավագ սերժանտ Գևորգ Նիկոլայի Խանաղյանը բանակից զորացրվել է 1947 թ. մարտին, մի տարի հետո ընդունվել Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտ: 1985 թ. Գ. Խանաղյանին շնորհվել է Հայկ. ԽՍՀ վաստակավոր նկարչի պատվավոր կոչում:

Ազատ Լեյլոյան

Գևորգ Խանաղյան

Պաշտոնաթող սպա, նկարիչ և մանկավարժ ԼԵՎՈՆ ԱՐՍԵՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ Թբիլիսիում (այստեղ է նա ծնվել 1912 թ.), Կիրովականում, Կրասնոդարում, Մուրմանսկի մարզի Նիկել քաղաքում, Երևանում, Ապարանում և այլուր (ուր նա աշխատել է կամ սովորել), բոլորն են հարգանքով և երախտագիտությամբ ողջունում: Չէ որ նա դեռ 1937 թ. ծառայել է Խորհրդային բանակում, մասնակցել ֆինական պատերազմին: Որպես դասակի հրամանատար 490-րդ ատրոդրոմային ծառայության հատուկ գումարտակի ավագ լեյտենանտը Մեծ հաղթանակը դիմավորել է Պրագայում: Պատերազմի և աշխատանքի վետերան նկարչի կուրծքն են այսօր զարդարում Հայրենական մեծ պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանն ու Կովկասի պաշտպանության համար, Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար, Պրագայի ազատագրման համար և բազմաթիվ այլ մեդալներ:

Բորբոքուն և անմիջական բնավորություն ունի Մեծ հայրենականի վետերան, հանրապետական, անդրկովկասյան, միութենական և միջազգային բազմաթիվ ցուցահանդեսների մասնակից ՀՐԱՉՅԱ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆԸ՝ արտաշատցի Տիգրանի որդին: Մեր այն հարցերին, թե երբ է զորակոչվել բանակ, որտեղ է կռվել, ինչպիսի պարգևներ ունի... ահա թե գրավոր ինչ պատասխան տվեց նա. «...Երևանում սովորել

Լևոն Խաչատրյան

Հրաչյա Խուդավերդյան

եմ Մռավյանի և Աբովյանի անվան դպրոցներում, իսկ 1937—1941 թվականներին՝ կերպարվեստի ուսումնարանում: 1941 թ. զորակոչվել եմ բանակ: Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիայի 964-րդ (Կովկասյան ռազմաճակատ) և 394-րդ հրաձգային դիվիզիայի 956-րդ հրետանային (Հարավ-արևմտյան և 3-րդ Ուկրաինական ռազմաճակատներ) գնդի կազմում որպես հրետանավոր մարտերով անցել եմ Կովկասյան լեռնաշղթայից մինչև Բուլղարիա: Մասնակցել եմ Քիշնև-Յասսի խմբավորման լիկվիդացմանը, Դնեպրոպետրովսկ, Դնեպրոձերժինսկ, Կրիվոյ-Ռոգ (ԽՍՀՄ), Կոստանցա, Ռուշուկ (Ռումինիա) քաղաքների ազատագրմանը: Պարգևատրվել եմ՝ Մարտական ծառայության համար, Կովկասի պաշտպանության համար, Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար

Վահան
Կաժոյան

Լևոն
Կոջոյան

մեդալներով, Հայրենական մեծ պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով և շնորհակալագրերով: 1946 թ. զորացրվել եմ (520-րդ բրիգադից) որպես կրտսեր սերժանտ և ընդունվել Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի գեղանկարչության բաժինը, 1954 թ. ավարտել եմ այն և մասնակցել ցուցահանդեսների»:

Բեռլինի գրավման ակտիվ մասնակիցներից է հանրապետական մամուլի, հեռուստատեսության և հրատարակչությունների սիրված, երկարամյա նկարիչ-ձևավորող ՎԱՀԱՆ ԿԱԺՈՅԱՆԸ: Իմ խնդրանքով գրված նրա ինքնակենսագրականում ընթերցողը կարող է կարդալ. «...1942 թ. մարտին իմ երկու եղբայրների հետ մեկնել եմ Սովետական բանակ և մասնակցել Հայրենական մեծ պատերազմին՝ մինչև հաղթանակը: Եղել եմ մի քանի ռազմաճակատներում (Անդրկովկասյան—1942 թ., 82-րդ գվարդիական գնդում որպես հրաձիգ, I Բելոռուսական—1944 թվակ. ապրիլից, 28-րդ բանակի 157-րդ հրետանային գնդում)»: Վ. Կաժոյանի ձեռագիրը վկայում է, որ ինքը գվարդիայի ավագ սերժանտ է՝ պարգևատրված բազմաթիվ մարտական շքանշաններով ու մեդալներով և միայն 1946 թ. մայիսին է զորացրվել խորհրդային բանակի շարքերից:

— Հայրի՛կ, որ մեծանամ, ես էլ Սասունցի Դավթի պես մեր թշնամիներին կսպանեմ,— սիրում էր թոթովել փոքրիկ Լևոնը, երբ ձեռքն էր առնում իր մեծատաղանդ հորեղբոր՝ Հակոբ Կոջոյանի, «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի առթիվ կատարած նկարազարդումները: Երկու տարի էլ չանցավ այդ մեծ տոնից, երբ գերմանական «մարա մելիքները» զենքով ու զորքով «վեր կացան մեր վրա»: Հավատարիմ իր պատանեկան խոսքին՝ 1942 թ. փետրվարին ԼԵՎՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԿՈՋՈՅԱՆԸ կամավոր ներկայացավ զինկոմիսարիատ և խնդրեց իրեն ուղարկել ռազմաճակատ: Մի ամիս հետո՝ մարտի 1-ին, նա շարքի առաջ հպարտությամբ ընդունեց իր զինվորական երդումը և որպես շարքային համալրեց 363-րդ հրետանային գնդի դասակներից մեկն ու Հյուսիս-կովկասյան ռազմաճակատում թշնամուն հանդիպեց դեմ առ դեմ: 1943 թ. մայիսին հիվանդության պատճառով Լ. Կոջոյանը զորացրվում է և շարունակում իր ուսումնառությունն ու ստեղծագործական աշխատանքը:

— Որդիս գերմանացու դեմ գնա-կռվի, ես նստե՞մ տանը,— ինքնամեղադրանքը հանգիստ չէր տալիս Լևոնի հորը՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (ԱՐՏԵՄ) ԿՈՋՈՅԱՆԻՆ: Եվ չնայած արտոնագիր (բրոնյա) ուներ բանակ չմեկնելու, բայց չհամբերեց. գնաց Կիպովոդսկի զինկոմիսարիատ և խնդրեց.

— Ինձ ուղարկե՛ք տղայիս մոտ...

— Ձենք կարող. դուք մեծ եք, 46 տարեկան, անվանի նկարիչ, մեր քաղաքի ճանաչված արվեստագետներից մեկը, «Ունիվերպրոմ» և «Խուդոժպրոմ» գեղարվեստական միավորումների վարպետը... չենք կարող...

Զինկոմիսարիատում չկարողացան կոտրել վարպետ Արտեմի համառությունը և նրան որպես եֆրեյտորի զինվորագրեցին № 53 հրետանային պահեստային գնդում: 4-րդ Ուկրաինական

և I Բելոռուսական բանակի քաջասիրտ մարտիկների հետ իր կյանքի 47-րդ գարնանամուտը Հ. Կոջոյանը տոնեց Բեռլինում: Հայրենիքը գեղանկարիչ և մանկավարժ Հարություն Գրիգորի Կոջոյանին արժանացրեց Բեռլինի գրավման համար, Արիության համար, Մարտական ծառայությունների համար և Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար մեդալների: Նկարիչ, զինվոր և մանկավարժ Հ. Կոջոյանը կյանքից հեռացավ 1972 թվականին:

Հարություն
Կոջոյան

Հրաչյա
Ռուխկյան

1942 թ. նոյեմբերի 2-ին Կիզելում Հյուսիս-կովկասյան ռազմաճակատի որոշ գումարտակների հետ նահանջելիս թշնամու ոմբակոծության տակ ընկավ Թբիլիսիի գեղարվեստի ակադեմիայի 1941 թ. սան, նկարիչ և լեյտենանտ ՀՐԱՉՅԱ ԼԻՊԱՐԻՏԻ ՌՈՒԽԿՅԱՆԸ: Ձախ ոտից արյունաքամ լենինականցի հայորդուն թշնամին գերեց և տարավ Մալսկի աղյուսի գործարան, որը ֆաշիստները վերածել էին համակենտրոնացման ճամբարի, նրա հետ էր նաև գերված վրացի մի բժիշկ: Վերջինիս օգնությամբ, դեռ վերքերը չապաքինված, մարմնում դարանակալած ականներ, ձեռնափայտի և հնարամտության շնորհիվ, նա մի օր գիշերով փախչում է համակենտրոնացման այս ճամբարից: Ամբրոսնկա գյուղում, նկատելով իրեն փնտրող էսէսականներին, խիստ սառնամանիքի տակ Հրաչյան ձյունների մեջ թաքցնում է իր զինվորական շինելն ու մի կերպ կառչում Կրասնոդար սլացող գնացքից: Այստեղ նա ներկայանում է տեղի զինկոմիսարիատ, որտեղից էլ գործուղվում է Դոնի Ռոստով՝ Հյուսիս-կովկասյան զինօկրուգի տրամադրության տակ որպես պահեստային սպա: 1943 թ. գարնանը Հր. Ռուխկյանը, դեռ լրիվ չապաքինված, մոբիլիզացվում է և ուղարկվում ռազմաճակատային գիծ: Նորից ծանր մարտեր: Հիշում է վիրավոր լեյտենանտը Բաքվի հետևակային ուսումնարանը, ուր 1941 թվականին չորս ամիս սովորել է, մտաբերում է այնտեղ նույն նստարանին իր հետ դասընթացների եկած արձակագիր և լրագրող իր ընկերոջը՝ Ավետիս Դեբենցին, մտոք տեղափոխվում է Թբիլիսիի զինուսումնարան, ուր տոպոգրաֆիայի, և քարտեզագրության դասատու էր, հիշում է առաջին հանդիպումը թշնամու հետ Պրոխլադնիում, հետո Կազբեկում և Մինվոդիում, յուրայիններն են միտքը գալիս, իր ուսուցիչները՝ Ս. Աղաջանյանը, Վ. Գայֆեճյանը, Ս. Առաքելյանը... Կարոտը խեղդում է, ուզում է նկարել, ձեռքն առնել վրձինը կամ մատիտը, անհնար է. թշնամին ռումբերի կարկուտ է տեղում: Նա ստիպված ձեռքը մեկնում է հրացանին, նռնակների փունջը կապում մեջքին և իր գումարտակի մարտիկներին կոչում գրոհի: Նորից վերքեր, ծանր արյունահոսություն: Հոսպիտալում հրաշքով փրկվում է անսասան մարտիկը և 1944-ին զորացրվում:

«Հեշտ է ասել զորացրում: Ի՞նչ զորացրում. պատերազմը շարունակվում էր հոգուս և սրտիս մեջ, երազում անգամ ես իմ մարտական և զոհված ընկերներին էի տեսնում,— պատմում է մի հանդիպման ժամանակ նկարիչն ու շարունակում մեր զրույցը:— Վերքերի ցավից չէի քնում, մտքով զրուցում էի կապավորների և հրաձիգների, հրետանավորների և սանիտարների հետ: Մայրս պատմում էր, որ ես զառանցանքի մեջ էլ բղավել եմ «Կմեռնե՛նք, բայց չե՛նք հանձնվի»...

— Պատերազմի հաղթական ավարտից հետո պատերազմի և խաղաղության թեման ի՞նչպես արտահայտվեց ձեր ստեղծագործություններում,— հարցիս ի պատասխան հանրապետության ժողովրդական նկարիչը ցույց է տալիս իր բնակարան-արվեստանոցում հանգրվանած հայ բազմաթիվ ազատաբերների յուղաներկ և գրաֆիկ դիմանկարները: Ահա նրանցից մարշալներ Հովհ. Բաղրամյանը, Հովհ. Իսակովը, Հմ. Բաբաջանյանն ու Արմ. Խանփերյանցը (Խուդյակով): Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի, հերոսներ Հայկ Մարտիրոսյանի, Աշոտ Ղազարյանի, հրետանու գեներալ-գնդապետ Մ. Պարսեղովի, հայ ժողովրդի սրտում հավերժ սրբացած Վարդան Մամիկոնյանի և Անդրանիկ զորավարի խիստ ինքնատիպ, բովան-

դակահարուստ, հույզով, լույսով և վառ հայրենասիրությամբ թրծված կտավներից յուրաքանչյուրը հուշում է՝ «Կորչի՛ պատերազմը...»:

Հայ ժողովրդի «Բույլ հանձարացի», Սայաթ-Նովայի, նրա գյոզալների, Խաչատուր Աբովյանի... և Կոմիտասի դիմանկարների հեղինակը՝ պատերազմի և աշխատանքի վետերան Հրաչյա Ռուխկյանը (ծնվ. 1915 թ.) պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով, 1985-ին նրան շնորհվել է Հայկ. ԽՍՀ ժողովրդական նկարչի պատվավոր կոչում: Թեև Մեծ հայրենականից տասնյակ տարիներ են անցել, և սպիացել է հին օրերի վերքը, բայց ամեն անգամ, երբ մտերիմներն ու բարեկամները ողջունում են նրան, պատասխանը վրձնի վարպետի կողմից լինում է՝ «Խաղաղություն ամենեցուն...»:

Գեղամ Ասատրյան

Էվրիկ Մկրտչյան

1939 թ. ավարտելով գեղարդ տեխնիկումը, տասնիհնամյա ԳԵՂԱՄ ԱՍԱՏՐՅԱՆԸ աշխատանքի անցավ Երևանի տիկնիկային թատրոնում: Երկու տարի անց նա զինվոր դարձավ, շքանշաններով և մեդալներով պարգևատրված վերադարձավ իր ծննդավայրը՝ Երևան: Գեղարվեստա-թատերական ինստիտուտն ավարտելուց հետո, առանց կտրվելու ստեղծագործական աշխատանքից, նախկին զինվորը զբաղվեց մանկավարժությամբ: 1959 թ. նա հայկական հեռուստատեսության ճանաչված ու սիրված բեմադրող նկարիչներից է: Չնայած կրած ռազմի տառապանքներին՝ արվեստի վաստ. գործիչը չի սիրում պատմել իր անցած մարտական ուղու մասին: «Բոլորի պես ես էլ եմ կռվել թշնամու դեմ... Ի՞նչ ասեմ. հերոսը նա էր, ով զոհվեց: Նմանների մասին գրեք»,— լինում է Գեղամի պատվիրանը:

Գեղանկարիչ, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի գծանկարի ամբիոնի դասախոս, համեստ, բարի և աշխատասեր հայ մարդ, պատերազմի ու աշխատանքի վետերան, հանրապետական, միութենական և արտասահմանյան բազմաթիվ ցուցահանդեսների մասնակից— այսպիսին է բոլորի մտապատկերում ԷՎՐԻԿ ԱՎԵՏԻՍԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ դիմանկարը: Դեռ չէր լրացել նրա տասնհինը տարին (ծնվել է 1923 թ. նոյեմբերի 23-ին Երևանում), երբ զինվոր դարձավ: Դա Մեծ հայրենականի տարելիցի օրն էր՝ 1942-ի հունիսի 22-ը: Մինչ տանեցիներին և յուրայիններին «մնաք բարով» կասեր, գնաց Շահումյանի անվան դպրոց և գեղարվեստի ուսումնարան: Միայն կանայք և տարեց տղամարդ ուսուցիչներ կային ուսուցչանոցում, դասընկերների մեծ մասն արդեն ռազմաճակատում էր: Ողջագուրվեց ու գնաց: Սկզբում 157-րդ հրաձգային բրիգադի կազմում մասնակցեց Հյուսիս-կովկասյան մարտերին՝ Մոզդոկի, Արմավիրի և Գեորգևսկի շրջանում: Ռազմական սխրանքի համար արժանացավ «Արիության համար» մեդալի, ընդունվեց ԽՄԿԿ շարքերը: «1943-ին տեղափոխվել եմ 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի 390-րդ գունդը որպես կապավոր,— գրել է նա իր ինքնակենսագրականում և ավելացրել:— 89-րդ հայկական դիվիզիայի կազմում մասնակցել եմ Կերչի, Սևաստոպոլի, այնուհետև Լեհաստանի ազատագրման մարտերին: Մասնակցել եմ գերմանական բազմաթիվ բնակավայրերի և Բեռլինի գրավմանը: Պարգևատրվել եմ Հայրենական մեծ պատերազմի երկրորդ աստիճանի, Փառքի երրորդ աստիճանի շքանշաններով: Երկու անգամ արժանացել եմ Արիության համար մեդալի, տարբեր ժամանակներում ինձ շնորհվել են Մարտական ծառայության համար, Կովկասի պաշտպանության համար, Վարշավայի ազատագրության համար, Բեռլինի գրավման համար և այլ մեդալներ ու շնորհակալագրեր»...

Էվրիկ Մկրտչյանը մարտական պոստում

Պատերազմի և խաղաղության թեման Էվրիկ Մկրտչյանին հաճախ է հուզել, վկա՝ այդ թեմաներով կերտած նրա բազմաթիվ ստեղծագործություններն ու նկարչական ձևավորումները:

ԽՍՀՄ նկարիչների և ԽՍՀՄ ճարտարապետների միությունների անդամ է Հայկ. ԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի բաժնի վարիչ, ճարտարապետության դոկտոր (1966 թ.) ՍՏԵՓԱՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԸ: Նա 1941 թ. նոր էր ավարտել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարության ֆակուլտետը, երբ հարկ եղավ շինարարական կամ նախագծային հիմնարկի փոխարեն ռազմադաշտ մտնել: Հուլիսին արդեն կարմիրբանակային էր: Կույբիշևի անվան ռազմահնձեներական ակադեմիայի դասընթացները լեյտենանտի կոչումով ավարտելուց հետո նոր բայազետցի Խաչատուրի որդին (ծնվ. 18.11. 1917 թ.) Ստալինգրադի, ապա Բելգորոդի մարզում կամրջաշինարարական վաշտի հրամանատար էր: Դնեպրի վրա (Իզդեշկովո կայարանի մոտ) նրա անմիջական նախագծով և ղեկավարությամբ 1943 թ. մի քանի կամուրջներ կառուցվեցին, որոնք նպաստեցին 2-րդ Ուկրաինական ռազմաճակատի զորքերը դեպի արևմուտք տեղափոխելուն և գերմանական ելուզակներին ջախջախիչ հարված հասցնելուն: ԽՍՀՄ պաշտպանության մինիստրության կենտրոնական արխիվում Ստ. Մնացականյանի պարգևատրման թերթիկից իմանում ենք, որ նա քաջաբար է իրեն դրսևորել Դանուբի գետանցման և Բուդապեշտի ազատագրման համար ծավալված մարտերում, որի համար էլ № 052/Ն Հարավային զորամասային խմբի հրամանատարության կողմից արժանացել է Կարմիր աստղի շքանշանի:[1]

— Ծառայել եմ սկզբում 19-րդ սակրային բրիգադի 1407-րդ գումարտակում, հետո եղել եմ 2-րդ Ուկրաինական ռազմաճակատի 126-րդ առանձին կամրջաշինարարական գումարտակի վաշտերից մեկի հրամանատարը: —Ու մինչ ճարտարապետի ճարտարապետ կինը՝ Սեդա Պետրոսյանը (Մնացականյան) հյուրասիրության իր ջերմ սեղանը կբացի, 70-ամյա զրուցակիցս շարունակում է,— 1944-ի օգոստոսին մեր վաշտը աչքի ընկավ Յասսի-Քիշնևյան կատաղի մարտերի, Ռումինիայի, հետո Բուլղարիայի, Հարավսլավիայի և Հունգարիայի ազատագրության համար ծավալված գործողությունների ժամանակ: Անձամբ թշնամու դեմ կռվել եմ Բուխարեստում, Վիեննայում և Լինցում, կազմակերպել եմ և ապահովել մեր զորքերի գետանցումները Պրուտի, Տիսսայի և Դանուբի վրայով...

Լեյտենանտ, ճարտարապետ և արվեստաբան Ստ. Մնացականյանը շքանշաններով և մեդալներով պարգևատրված խորհրդային բանակից զորացրվեց Մեծ հաղթանակից ամիսներ հետո:

Բանակից զորացրվելուց և Երևանի նորաստեղծ գեղարվեստա-թատերական ինստիտուտը ավարտելուց հետո քսան տարի Արտաշատի Ամո Խարազյանի անվան պետական թատրոնում որպես գլխավոր ձևավորող նկարիչ էր աշխատում ղափանցի (Ուժանիսից) Սահակի որդին՝ ՍՈՒՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ: Նա բանակ էր մեկնել 1941 թ. Երևանից, երբ էքսկուրսա-

Ստեփան Մնացականյան

Սուրեն Հովհաննիսյան

[1] Տես ԽՍՀՄ ՊՄ կենտրոնական արխիվ (Պոդոլսկ), ֆոնդ 33, ցուցակ 686196, գործ 5168, թերթ 27:

վար էր նկարչի տանը: Դիվիզիայի դպրոցի կուրսանտին գործուղեցին Թբիլիսիի հրամանատարական դպրոց: Այն վերջացնելուց հետո լեյտենանտ Սուրենը ծառայեց 10-րդ գվարդիական հրաձգային զորամասում: Թշնամու դեմ երես առ երես նա առաջին անգամ հանդիպեց Հյուսիսային Կովկասում: Երեք տարի տարբեր ռազմաճակատներում նա քաջաբար մարտնչեց ոսոխի դեմ: 1943 թ. Սուրենը ծանր վիրավորվեց և որպես պատերազմի հաշմանդամ վաղօրոք հեռացավ կրակային առաջին գծից:

Նկարիչ ԳԵՎՈՐԳ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ տասնութ տարին հենց լրացավ, զինվորագրվեց Կարմիր բանակին (1939 թ.): Խարկովում էր ծառայում, 35-րդ հրաձգային դիվիզիայում, երբ հարկ եղավ մասնակցել ֆիննական պատերազմին: 1940 թ. երիտասարդ բանակայինը շարունակում էր իր ծառայությունը Դավգավպիլիս քաղաքում (Լատվիա) որպես նկարիչ և փողհար: Պատրաստվում էր զորացրվել, բայց հարկ եղավ դուրս գալ թշնամու դեմ: «Պատերազմը սկսվելու պահին,— գրում է Գ. Հովսեփյանը,— մեր զորամասը գտնվում էր Լատվիայից Լիտվա տանող ճանապարհին: Կալինինի մարզի Գարշկովա գյուղի մոտ գլխից ծանր վիրավորվեցի: Ծանր վիճակում ինձ տեղափոխեցին Եսենտուկիի զինվորական հոսպիտալ»:

Վիրահատված լենինականցի հայորդին երկու ամիս այստեղ ապաքինվելուց հետո իր բուժումները շարունակեց Երևանի զինհոսպիտալում:

1942 թ. Գևորգը նորից մարտադաշտում էր: Որպես 69-րդ հրաձգային գնդի քաջարի մարտիկ նա, ոխով և վրեժխնդրությամբ լեցուն, ոսոխի դեմ մարտնչում էր Սևաստոպոլի մատույցներում: Երկրորդ անգամ թշնամին Գևորգին խոցեց Սև ծովի ափին, այս անգամ՝ ոտքից: Արյունաքամ հայ զինվորին ընկերները մի կերպ հասցրին Նովոռոսիյսկ, որտեղից նրան տարան Սարատովի զինհոսպիտալ: 1943 թ., մի շարք շքանշաններով և մեդալներով կուրծքը զարդարած, վիրավոր և հաշմանդամ մարտիկը վերադարձավ հայրենի օջախ, ընտանիք կազմեց և անցավ խաղաղ, ստեղծագործ աշխատանքի:

Եթե որևէ մեկի ձեռքն ընկնի արվեստագետ Մանյա Ղազարյանի կազմած «ՀՐԱՆՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ» (Ե., 1971 թ.) ուղեցույցը, նրա ստեղծագործություններին ծանոթանալուց հետո անմիջապես կզգա, որ Հայկ. ԽՍՀ վաստակավոր նկարիչը Հայրենական մեծ պատերազմի մասնակից է: Հրանտի քսանը հենց լրացավ, ավարտեց Երևանի գեղարդ տեխնիկումը (1939 թ.): Երեք ամիս անց՝ հոկտեմբերին, բյուրականցի Սարգսի նկարիչ որդին հայրենիքի զինվորը դարձավ: Ծառայում էր Խարկովում, 217-րդ հրաձգային գնդում: Ինչպես իր համագնդեցիները, Հրանտը ևս, արհամարհելով մահը, դուրս եկավ թշնամու դեմ որպես 16-րդ հրաձգային բրիգադի

Գևորգ Հովսեփյան

Հրանտ Հովսեփյան

մարտիկ: Հյուսիսային Կովկասի, Կուբանի, Ղրիմի, Ուկրաինայի ազատագրման համար մղվող մարտերում քանի-քանի անգամ է կրտսեր լեյտենանտն ընկել ռմբակոծությունների տակ: 1943 թ. փետրվարի 19-ը երբեք չի մոռացվի: Նկարիչ հրաձիգը աջ ոտքից ծանր վիրավորվեց, տեղափոխեցին հոսպիտալ: Ու թեև վերքը ապաքինվեց, բայց Հրանտն արդեն հաշմանդամ էր: Եվ մինչ իր անժամանակ մահը (1987 թ.) թշնամու ռումբի բեկորներից մի քանիսը դարձել էին նրա մարմնի «բաղադրամասերը», նրանցից նախկին զինվորը չկարողացավ ազատվել: Հ. Հովսեփյանը պարգևատրվել էր ՀՄՊ-ի 2-րդ աստիճանի շքանշանով, Կովկասի պաշտպանության համար և այլ մեդալներով, բազմիցս արժանացել էր բանակի գլխավոր հրամանատարության շնորհակալագրերին: Թե հանրապետական և թե միութենական տարբեր ցուցահանդեսներին նախկին ռազմիկը մասնակցել է պատերազմատյաց և խաղաղապաշտ մնայուն կտավներով, որոնցից շատերն այսօր տեղ են գտել Հայկ. ԽՍՀ պետական պատկերասրահում, երևանյան ու միութենական տարբեր թանգարաններում: Հր. Հովսեփյանը 1958—1964 թթ. աշխատել է Հայկ. ԽՍՀ

կուլտուրայի մինիստրությանը կից շրջիկ արվեստանոց-ցուցահանդեսի գեղարվեստական ղեկավար, հետո անցել է մանկավարժական գործունեության:

Դանիել Դզնունու «Հայ կերպարվեստագետներ» հատոր բառարանից (Ե., 1977 թ.) իմանում ենք, որ ՀԱՅԿԱԶ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆԸ Երևանի գեղարվեստի ուսումնարանի և Մոսկվայի Վ. Սուրիկովի անվան գեղարվեստի ինստիտուտի սաներից է: Ով տարբեր ցուցահանդեսնե-

Հայկազ Ղարագյոզյան

Գևորգ Մնացականյան

րում, թանգարաններում և պատկերասրահներում դիտել է նրա «Ռոստովի գրավումը», «Արգինայի ձորում», «Նալբանդյանը Լոնդոնում՝ Գերցենի մոտ», «Երևանի բերդի պաշտպանումը արաբներից», «Վերադարձ Պետրոգրադ», «Շահումյանը Ժնևում՝ Լենինի մոտ» և բազմաթիվ այլ գեղանկարներ, ով ծանոթացել է նրա կենսագրությանը, կենսաուղեցույցներին, անպայման կիմանա, որ կարսեցի Հայկազ Ղարագյոզյանը նաև Հայրենական մեծ պատերազմի մասնակից է: Հենց պատերազմի երկրորդ տարում (1942 թ.) նա ընդունվեց ԽՍՀՄ նկարիչների միության շարքերը: 1941 թ. կամավոր զինվորագրվեց ժողովրդական աշխարհազորին և ֆաշիզմի դեմ մարտնչեց Սմոլենսկի շրջանում: Հետո տեղափոխվեց Հարավային ռազմաճակատ և որպես 256-րդ հրետանային գնդի հետախուզական ջոկի ճակատային անձնվիրաբար մաքառեց գերմանական զավթիչների դեմ, մասնակցեց Նովոռոսիյսկում խորհրդային զորքերի դեսանտ իջեցնելուն: 1944—1945 թթ. Հ. Ղարագյոզյանը որպես գեղանկարիչ ծառայել է Ստալինիր (Օսեթիա) քաղաքում: Նա ցուցահանդեսների է մասնակցել ՌԽՖՍՀ-ում, Ուզբեկստանում, Տաջիկստանում, Ուկրաինայում և այլուր:

Աշխատանքի և պատերազմի վետերան Հայկազ Մկրտչի Ղարագյոզյանը պարգևատրված է Հայրենական մեծ պատերազմի առաջին և երկրորդ աստիճանների շքանշաններով և բազմաթիվ մարտական մեդալներով:

«1942 թ. զորակոչվել եմ կարմիր բանակ: 1943—1944 թթ. եղել եմ գործող բանակում: 1944 թ. զորացրվել եմ հիվանդության պատճառով:— Այնուհետև մեզ տված իր ձեռագիր ինքնակենսագրականում Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի դոցենտ ԳԵՎՈՐԳ ԱՐՇԱԿԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԸ գրում է.— Գործող բանակում ծառայել եմ Երկրորդ Բելոռուսական ռազմաճակատի 410-րդ գնդում որպես գնդացրորդ: Մասնակցել եմ Դնեպրի գետանցմանը: Կուրսկի աղեղից հասել եմ մինչև Բելոռուսիայի Մոզիր քաղաքը»:

Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարիչ Գ. Ա. Մնացականյանը պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի բազմաթիվ շքանշաններով և մեդալներով:

Առանձին-առանձին ներկայացնելով Հայրենական մեծ պատերազմին մասնակցած հայ նկարիչներին, այսօր մենք իրավունք չունենք չհիշատակել ԼԵՎՈՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՆԱՍԵՐՅԱՆԻ, ՍԱՄՎԵԼ ՄԵՍՐՈՊԻ ՄԱՆԱՍՅԱՆԻ, ՍԱՐԳԻՍ ԱՐՍԵՆԻ ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆԻ, ԳԱՐԵԳԻՆ ՀՄԱՅԱԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ, ԱԴԱՄ ՂԱԶԱՐԻ ՄԱՇԻՆՅԱՆԻ, ԿԱՐԱՊԵՏ ՄԻՀՐԱՆԻ ՄԵԹԱՏՈՒՐՅԱՆԻ, ՀՐԱՉՅԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՄԵՔԻՆՅԱՆԻ, ԵՍԱՅԻ ՀՈՎԱԿԻՄԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ, Լենինականում ապրող և ստեղծագործող ՇԱՆԹ ՍԱՐԳՍՅԱՆԻ (նրա բազմաթիվ կտավները Մեծ երկրաշարժին զոհ դարձան) և տասնյակ այլ նկարիչների, քանդակագործների ու գրաֆիկվարպետների զինծառայությունները Մեծ հայրենականի տարբեր ստորաբաժանումներում և չգնահատել այն մեծ ավանդը, որ ներդրել են նրանք հաղթանակի և խաղաղության օգտին: Ոչ միայն վրձնով, այլև զենքով է մարտընչել հիտլերյան ֆաշիզմի դեմ գրաֆիկ, ԽՍՀՄ նմ անդամ (1939 թ.) ՆԻԿՈՂԻՄՈՍ ԱՐՏԱՇԵՍԻ ՄԿՐՏՉՅԱՆԸ (ծնվել է 1913 թ. հունիսի 8-ին Աշտարակի շրջանի Փարպի գյուղում): Գեղարդ տեխնիկումն ավարտելուց հետո նա իր ուսումնառությունը շարունակում էր Երևանի մանկա-

վարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում: 4-րդ կուրսի ուսանող էր, երբ հագավ զինվորական համազգեստ, կրեց նռնակ ու հրացան, դուրս եկավ թշնամու դեմ: Կովի հենց առաջին տարում էլ 31-րդ դիվիզիայի շարքային զինվոր Ն. Մկրտչյանը Հալդիրում (Տագանրոգի պաշտպանության ժամանակ) ծանր վիրավորվում է և տեղափոխվում հոսպիտալ:

«Հանգվի ափը», «Անձրևից հետո», «Գրոհ» ստեղծագործությունների հեղինակը պարգևատրվել է մարտական և աշխատանքային պատվոգրերով, մեդալներով և շքանշաններով:

Նիկոդիմոս Մկրտչյան

Մակար Մնացականյան

«Հայգորգ» արտադրական միավորման գլխավոր նկարիչ, պատերազմի վետերան ՄԱԿԱՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԸ ևս Աշտարակի ծնունդ է (Անտառուտ գյուղից): Նրա պատանեկությունն անցավ հարևան Օրգով և Բյուրական գյուղերում: Յոթնամյա կրթությունը Օրգովում ստանալուց հետո Մակարը միջնակարգն ավարտեց 1944 թ. Բյուրականի Հովհ. Թումանյանի անվան դպրոցում և անմիջապես զինվորագրվեց հայրենիքի պաշտպանությանը: Սկզբում նա Վրաստանում պահեստային գնդում էր ծառայում, հետո ուղարկվեց Արևմտյան ռազմաճակատ որպես գնդացրորդ (63-րդ ականանետային բրիգադ). 2-րդ Ուկրաինական ռազմաճակատի անսասան ռազմիկների հետ 18-ամյա Մակարը խիզախաբար մարտնչեց հիտլերյան վայրագների դեմ Չեխոսլովակիայի Բռնո քաղաքի համար ծավալված մարտերում, 1945-ի մայիսի 1-ին ծանր վիրավորվեց: Հոսպիտալային բուժումներից հետո նրան տեղափոխեցին 950-րդ հրաձգային գունդ: 1945 թ. մայիսի վերջերին Մակար Մնացականյանը Հեռավոր Արևելքում (Բայկալյան ռազմաճակատ) և սահմանային գծում նորից զինվոր էր: Այսօր էլ նա հաճախ է մտոք տեղափոխվում Մոնղոլիա, Խինգանյան լեռնաշղթա, Չինաստան և Պորտ Արտուր, հիշում այն դաժան և դառն օրերը:

Սահմանապահ № զորամասում էր ծառայում ապագա նկարիչը, երբ տեղափոխվեց զինմասի քարտեզագրման բաժին, ուր և ծառայեց 1946 թ. մինչև 1950 թվականը:

Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար, Ճապոնիայի դեմ տարած հաղթանակի համար, Կորեայի ազատագրության համար և բազմաթիվ այլ մեդալներ են այսօր զարդարում «Սայաթ-Նովա», «Գառնիկ ախպեր» «Բյուրական», «Աշտարակ», «Արաքս», «Արծիվ» հանրահայտ և բարձրաճաշակ գորգերի հեղինակի Մակար Հարությունի Մնացականյանի կուրծքը: ԽՍՀՄ ՆՄ անդամ, նկարիչ հայորդին միայն զինծառայությունից հետո է ընդունվել և ավարտել Երևանի գեղարդ տեխնիկումը և ԵԳԹ ինստիտուտը:

1947 թ., երբ ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱՎԹԻ ՄԻՆԱՍՅԱՆՆ ընդունվեց Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարան, դեռ նախկին զինվորի իր համազգեստն էր հագնում՝ առանց ուսադիրների: Վոլոդյան (ընկերները այսպես էին կոչում նրան) բանակ զորակոչվեց 1941 թ. հոկտեմբերի 13-ին Երևանի Մոլոտովյան շրջանի զինկոմիսարիատի կողմից: Կրտսեր սերժանտի կոչումով նա 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի հրետանային, հետո հետախուզական ջոկերից մեկի գլուխն անցած, Հյուսիսային Կովկաս, Թաման, Կերչ, Սևաստոպոլ ռազմագծով քաջարի հայ մարտիկների հետ

Վլադիմիր Մինասյան (ձախից առաջինը)

մտավ Բեռլին: Թե քանի, քանի անգամ է 89-րդ դիվիզիայի ռադիո-հետախուզականի պետ Վլ. Մինասյանը փրկել իր ռազմընկերներին թշնամու անսպասելի հարձակումներից, այդ մասին տարբեր առիթներով նրան հաճախ էր գովում 89-րդ դիվիզիայի ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար Գեորգի Տեր-Ղազարյանցն ու ավելացնում. «Երբ ուզեցինք Վոլոդյային ներկայացնել ՀԼԿԵՄ Կենտկոմի պարգևատրմանը՝ բազմաթիվ անգամ իրեն զգոն և աչալուրջ դրսևորելու, մարտական առաջադրանքները ժամանակին կատարելու համար, իմացանք, որ նա ՀԼԿԵՄ անդամ չէ: Ծիծաղեցինք: Մտքիցս չի գնում Վոլոդյայի ինքնարդարացումը. «Ռազմաճակատի էս թոհուբոհում կուսակցական, կոմերիտական, թե անկուսակցական՝ հավասար ենք: Ունենք մի թշնամի. ֆաշիստական Գերմանիան: Մինչև նրա մոռթը չջախջախենք, պիտի տուն չդառնանք: Ես միշտ ձեզ հետ եմ»: Այս պատասխանից մի քանի օր հետո հենց ռազմադաշտում էլ Վոլոդյան ընդունվեց ԽՄԿԿ-ի շարքերը»:

Երևանի Գնունու փողոցի 2-րդ փակուղու 4-րդ շենքի 17-րդ բնակարանում հաճախ էինք զրուցում Վ. Մինասյանի, նրա կնոջ՝ Ռոզայի, դստրիկների՝ Լուսյայի, Սուսաննայի և Նունեի հետ: Վարդանին՝ միակ տղային, ծնկներին դրած վեր-վեր էր թոցնում նախկին թամանցին և հրճվում: Կարծիքներ էինք կիսում «Բռնվեցին», «Խաղաղ առավոտ», «Չի մոռացվի» գեղանկարների մասին:

— Բանակից ե՞րբ եք զորացրվել:

— 1946 թ. մայիսին:

Մեր այս կարճ երկխոսությունից հետո իմացա, որ հայորդի թամանցին իր մարտական սխրանքի համար արժանացել է Կարմիր Աստղի, Հայրենական մեծ պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանների և տասից ավելի մեդալների, որոնց մասին ինքը չէր սիրում խոսել: «Դե, հիմա զինվոր չեմ, հիմա մանկավարժ եմ և նկարիչ, հերի՞ք չեղավ ինձ քննես և դարդերս քամուն տաս»,— այսպես ավարտվեց վաստակաշատ գեղանկարիչ Վոլոդյա Մինասյանի և մեր վերջին հանդիպումը:

«Իմ մասին երկար-բարակ չգրես:— Դուրս ենք գալիս Վ. Մինասյանի բնակարանից և շարունակում մեր զրույցը «Սովետական Հայաստան» օրաթերթի նկարազարդման բաժնի վարիչ ՌԱՖԱՅԵԼ ՆԱՆՈՒՇՅԱՆԻ հետ:— Գրիր՝ 1942—1945 թվականներին կռվել եմ թշնամու դեմ, պարգևատրվել շքանշանով և մեդալներով: 1947-ին զորացրվել եմ բանակից, և... վերջ»: Պայմանը խախտում եմ: Ծնվել է Ռաֆիկ Պողոսի Նանուշյանը 1924 թվականի հունվարի 17-ին Ախալքալաքի շրջանի Ալաստան գյուղում: 1942-ին ավարտել է Ախալքալաքի միջնակարգ դպրոցը ու կամավոր մեկնել Կարմիր բանակ: Նրա մարտական ուղին սկսվել է Հյուսիսային Կովկասից և ավարտվել Բեռլինում: Մեծ հաղթանակից հետո էլ Ռաֆիկը երկու տարի ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելու հենց

Ռաֆայել Նանուշյան

Զավեն Սարգսյան

առաջին տարում էլ ընդունվել է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի գրաֆիկայի բաժինը, այն ավարտել 1953 թվականին: Դեռ աշակերտական նստարանից նկարել է: 19-ամյա հայ զինվորի «Սասունցի Դավիթ» պլակատը ծնվեց ռազմաճակատում և առաջին անգամ (1943 թ.) լույս տեսավ դիվիզիայի թերթում՝ խորհրդանշելով հայ ռազմիկի կյանքի հետագա ուղին: Ուսանող էր (1949 թ.), երբ առաջին անգամ մասնակցեց հանրապետական ցուցահանդեսի: Նրա դիպլոմային աշխատանքը՝ «Էջեր Հայրենական մեծ պատերազմից» նկարաշարը (1953 թ.), այնպես էր հուզել նկարիչների ավագ սերնդին և իր ուսուցիչներին, որ նրանք էլ հենց երաշխավորեցին Ռաֆիկին ընդունելու ԽՍՀՄ նկարիչների միության շարքերը: Ռ. Նանուշյանի «Խաղաղություն ժողովուրդներին» գեղանկարը, «Մի սերնդի պատմություն» նկարաշարը (գրաֆիկա), «Կորչի պատերազմը» և «Զքվեք» պլակատներն ու «Վարդան Մամիկոնյան» և «Ռազմաճակատային նամակներ» ստեղծագործությունները իրենց հեղինակի մահից (1976 թ.)

հետո էլ մեկ անգամ ևս հաստատում են, որ Դ. Դեմիրճյանի «Վարդանանք», Գ. Սարյանի «Բալլադներ», Ա. Մալխասյանի «Սովետական բանակի հայ գործիչները», Բ. Պրուսի «Փարավոն», Ա. Դունաևսկու «Կայի հետքերով», Ռաֆֆու «Սամվել» և շուրջ քառասուն այլ անուն հայրենասիրական գրքերի նկարիչ-ձևավորող հայորդին միշտ եղել է համաշխարհային խաղաղության և իր հայրենիքի իսկական զինվորը: Ռ. Նանուշյանի «Խաղաղություն աշխարհին» պլակատը 1961 թ. Բեռլինի միջազգային ցուցահանդեսում արժանացավ դիպլոմի:

1972 թ. Հայաստանի նկարչի տան հրատարակած անհատական ցուցահանդեսի ուղեցույցում կարդում ենք. «ԶԱՎԵՆ ԱՐՏԱՇԵՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ ծնվել է 1922 թ. Թբիլիսիում: 1950 թ. ավարտել է Վրաստանի Գեղարվեստի ակադեմիան: 1952—1959 թվականներին որպես զինվորական նկարիչ աշխատել է մի խումբ խորհրդային բանակայինների հետ ԳԴՀ-ում: Այնտեղ էլ նա խորհրդային մարտիկների համար լույս տեսնող «Խորհրդային բանակ» օրաթերթում սկսել է տպագրվել, ձևավորել է նաև դրամատիկ թատրոնում երկու բեմադրություն («Պորտ Արթուր» և «Թովուան աղջիկը»): 1961 թ. ապրում և աշխատում է Երևանում»...

Զ. Սարգսյանին հանդիպեցինք Հայաստանի նկարչի տանը: Նա հանրապետության ժողովրդական նկարիչ Մկրտիչ Սեդրակյանից հետո Հայաստանի նկարիչների միության ռազմաշեֆական աշխատանքների հանձնաժողովի նախագահն է (հասարակական հիմունքներով): Ե՞րբ է մասնակցել պատերազմին, որտե՞ղ է կռվել, ե՞րբ է զորացրվել բանակից, զինվորական ի՞նչ կոչում ունի, արժանացե՞լ է պարգևատրումների, թե՞ ոչ և այլ հարցերի շուրջ երկար տևեց մեր զրույցը: Պարզվեց, որ Զավենը բանակ է մեկնել 1942 թ. Թբիլիսիի գեղարվեստի ակադեմիայի երկրորդ կուրսից: Նույն թվականի օգոստոսից մինչև հաջորդ տարվա սեպտեմբերը 177-րդ հրետանային գնդի գումարտակներից մեկի քաղաղեկի տեղակալն է եղել, մասնակցել է Չերկասի, Գեորգևսկի, Պյատիգորսկի և Լերմոնտովսկի ազատագրմանը: 34-րդ մոտո-հրաձգային գնդի կազմում նա քաջաբար է մարտնչել թշնամու դեմ Ռովնոյի և նրան մերձակա քաղաքների ու գյուղերի շրջանում: Գումարտակի կոմերիտմիության քարտուղար էր, սպա, երբ խորհրդային քաջարի մարտիկների հետ մտավ Պոտսդամ:



Կապիտան Զավեն Սարգսյանը Պոտսդամում, 1945 թ.:

Կապիտան Զ. Սարգսյանը (ձախից առաջինը, երկրորդ շարք) մարշալ Գրեչկոյի հետ, Պոտսդամում, 1956 թ.:

1945-ի դեկտեմբերին Զ. Սարգսյանը զորացրվեց զինծառայությունից և շարունակեց իր ուսումնառությունը Թբիլիսիի գեղարվեստի ակադեմիայում:

Պահեստի կապիտան, Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարիչ Զ. Ա. Սարգսյանը Մեծ հայրենականում ցուցաբերած արիության և սրխրանքի համար արժանացել է ՀՄՊ-ի 2-րդ աստիճանի շքանշանի և տասից ավելի մարտական մեդալների:

Երբ Հայաստանի կոմերիտմիության Կենտկոմի քարտուղար Բաքկեն Վարդանյանն առաջարկեց «Մարշալ Խուդյակով», «Արշալույս», «Խ. Աբովյան» քանդակների հեղինակ ՍԱՀԱԿ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ քանդակել ՀԼԿԵՄ պատմության պետական թանգարանի համար «Սպարտակի» հիմնադիր անդամներից Ար. Բուդաղյանի մարմարե կիսանդրին, նա սիրով համաձայնեց: Այս կապակցությամբ նորաստեղծ այդ թանգարանի (այն ժամանակ գտնվում էր Ղուկասավան գյուղում) տնօրենս բազմիցս առիթ ունեցա հանդիպելու Սահակին: Առույգ, փարթամ, հաստաբազուկ, 50-ին մոտեցող սառնաղբյուրցի (Անիի շրջան) նախկին զինվորի և իմ միջև հաստատված մտերմության ընթացքում նա ոչ մի անգամ խոսք չբացեց ՀՄՊ-ին ունեցած իր մասնակցության մասին: Ազատության պողոտայի սեփական իր տան շուրջը քարաբեկորներ են և քանդակներ: «Մայրություն» ստեղծագործության վրա էր նա աշխատում, այնպես էր մարմարը ենթարկվում նրան, ինչպես կավը խեցեգործին կամ բրուտագործին: Սրբելով ճակատի քրտինքը, ուղղեց մեջքը և ոտքի կանգնեց.

— Վա՛յ, պատերա՛զմ, քո հնարողը շուն դառնա:

— Ի՞նչ պատերազմի մասին է խոսքը: Դու պատերազմ ե՞րբ ես տեսել,— երկխոսության մեջ եմ մտնում ես:

— Ինչպե՞ս թե: 1941-ին, տասնութս հազիվ բոլորած, կամավոր ռազմաճակատ եմ մեկնել: Ծառայել եմ 663-րդ հրաձգային գնդում: Մասնակցել եմ Նովոռոսիյսկի, Տուապսեի և Գելենջիկի համար մղվող մարտերին: 1942—1943 թվականներին եղել եմ ռազմաճակատային առաջին գծում, ծանր վիրավորվել եմ, փոխադրվել Թբիլիսիի հոսպիտալ՝ (նախկին Ներսիսյան դպրոցի շենք): Ապաքինվելուց հետո ծառայել եմ թիկունքում որպես շարքային զինվոր՝ 42692-րդ զորամասի հրաձգային գումարտակում: Մեդալներ ու պատվոգրեր էլ եմ ստացել:— Դառնալով ինձ,— գիտե՛մ՝ չես հավատում, ջահել եմ երևում... Սպիացած վերքս մեկ-մեկ իրեն զգացնել է տալիս, հատկապես ամպոտ եղանակներին: Ոչի՛նչ: Աշխատանքը ամեն ինչ մոռացնում է, կարևորը ստեղծագործելն է, չէ՞...— հարցական ժպիտն ուղղելով ինձ՝ կարծես լրացնում էր նա իր ռազմի ինքնակենսագրությունը:

Հայրենական մեծ պատերազմը պատճառ դարձավ, որ ցմահ երկրորդ խմբի հաշմանդամ դառնա ռոստովցի ԱՆԴՐԱՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ: Տասնյոթամյա պատանի էր, աղվամազը դեմքին, երբ ընդունվեց Թբիլիսիի գեղարվեստի ուսումնարան: Երկրորդ կուրսից, 1943 թ. հունվարի 18-ին, մեկնեց ռազմաճակատ, հասավ մինչև Բեռլին, զորացրվեց Մեծ հաղթանակից երեք տարի անց (1948 թ.): Բաքվի զենիթային հրետանու գնդի դպրոցում կուրսանտ էր: Հետո կռվեց Հարավային ռազմաճակատում, մասնակցեց իր ծննդավայր Ռոստովի ազատագրմանը, տեղափոխվեց 3-րդ Մերձբալթյան ռազմաճակատի 25-րդ հակատանկային բրիգադ: Քյոնիգսբերգի, Շաուլյայի համար մղվող մարտերում պարգևատրվեց «Արիության համար» մեդալով: Դաժան այդ կռիվներում ոչնչացրեց թշնամու երեք տանկ: Հետո՞: Հետո Առաջին Բելոռուսական ռազմաճակատի մարտիկների հետ (հրամանատար՝ Գ. Ժուկով) մասնակցեց Օդերի գետանցմանն ու Բեռլինի գրավմանը: Մարտական, հերոսական այդ ճանապարհին քանի, քանի անգամ ընկավ Անդրանիկը թշնամու կրակի և ռմբակոծության տակ, քանի անգամ ուշագնաց նրան հոսպիտալ տեղափոխեցին: Պատերազմից հետո, երբ ծնունդ

Սահակ Սահակյան

Անդրանիկ Պետրոսյան

էին առնում Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի նախկին շրջանավարտի «Զինվորական նատյուրմորտ» (1980), «Հաղթանակի օրը» (1981), «Հաղթանակի ուրախությունը» (1982), «Կյանքի ճանապարհին» (1982), «Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվի» (1982), «Վարդերը սաղավարտի վրա» (1983) գունանկարները, նրանց հեղինակը հիշողությամբ վերապրում էր ռազմի անցյալը, իր կրած հոգեկան և ֆիզիկական տառապանքները և գեղանկարչի իր վրձինն ուղղում բոլոր նրանց դեմ, ովքեր պղտորում են Երկիր մոլորակի անդորրը:

Պատերազմի հաղթական ավարտից հետո Անդրանիկ Պետրոսյանը հաստատվել է Երևանում, նա այժմ Հայկ. ԽՍՀ անասնաբուծության և կերարտադրության գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատող է, քսանից ավելի գիտական աշխատությունների հեղինակ:

ԽՍՀՄ ՆՄ անդամ (1971 թ.), Մեծ հայրենականի վետերան Ա. Հ. Պետրոսյանը այսօր էլ լի է ստեղծագործական և գիտական ավյունով: Նրա կուրծքն են զարդարում մարտական, աշխատանքային և հոբելյանական բազմաթիվ շքանշաններ և մեդալներ՝ վկա այն անձնվեր նվիրումի, որ ունեցել է նա հայրենի հողի և իր ժողովրդի հանդեպ:

Երբ ֆաշիստական Գերմանիայի բանակները ներխուժեցին Խորհրդային Միության սահմանները, և պատմության մեջ մտավ Հայրենական մեծ պատերազմը, արցախորդի ՍՈՒՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ տասնվեց տարեկան էր (ծնվ. 1925) և նոր-նոր սկսել էր զբաղվել նկարչությամբ, Գալուշայում և Խանաբադում նրան արդեն նկարիչ էին կոչում: Երկար չտևեց պատանու խնդությունը: 18-ը դեռ չլրացրած մնաս բարով ասաց գունամատիտներին, ներկերին ու վրձնին, դուրս եկավ հիտլերյան զավթիչների դեմ:

1943 թ. մարտի 13: Ստեփանակերտից հազարավոր ղարաբաղցի հայորդիների հետ նա էլ Բաքու ճանապարհվեց: Սնայպերական (դիպուկ կրակողների) դպրոցում կարճ ժամկետում վերապատրաստվելուց հետո գործուղվեց կրակային գիծ: Դնեպրի աջ ափին թշնամու և խորհրդային զորքերի երկկողմանի ուժեղ փոխհրաձգությունների ժամանակ կրտսեր սերժանտ Պետրոսյանը եռակի ծանր վիրավորվում է, ուշագնաց վիճակում, ընկերների թևերին, հասցվում սանմաս, այնտեղից էլ հոսպիտալ: Ապաքինվելուց հետո Սուրենը կռվում է նաև Ջոնիգսբերգում: ՀՄՊ-ի 2-րդ աստիճանի շքանշանով, «Արիության համար», «Ջոնիգսբերգի գրավման համար» մեդալներով պարգևատրված՝ նա հայրենի տուն վերադարձավ:

Սուրեն Պետրոսյան

Սուրեն Պիպոյան

— Պատերազմական թեմայով իմ ամենալավ ստեղծագործությունը, ըստ իս, «Գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի» դիմանկարն է, որը հանգրվանում է Խորհրդային Հայաստանը ՀՄ պատերազմում (1941—1945 թթ.) թանգարանում:— Մեր հանդիպման ժամանակ իր խոսքն է ավարտում արվեստագետ վետերանը և պատրաստվում մեկնել Ստեփանակերտ՝ իր անհատական ցուցահանդեսի բացմանը:

«Ո՞ր դիվիզիաներում, ո՞ր գնդերում եք ծառայել» հարցիս «Խորհրդային Միության հերոս Սարգիս Մարտիրոսյան», «Քանդակագործ Այծեմնիկ Ուրարտու», «Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյան», «Հովհաննես Շիրազ», «Նկարիչ Գրիգոր Խանջյան» դիմանկարների հեղինակ, արցախյան հոգսացավերով տառապող Սուրեն Պետրոսյանը կտրուկ է պատասխանում. «Սկզբում 194-րդ դիվիզիայի 954-րդ գնդում, իսկ հետո, մինչ պատերազմի վերջը, 96-րդ դիվիզիայի 331-րդ հրաձգային գնդում»:

Եղիշե Կուրդոյանի (Հովհաննիսյան) տանը մի առիթով հավաքված մի խումբ արվեստագետներ զրուցում էին Հայրենական մեծ պատերազմի թեմայով ստեղծված գեղանկարչական ստեղծագործությունների շուրջ:

— Իմ կարծիքով,— միջամտեց խոսակցությանը «ՍՈՒՐԵՆ ՊԻՊՈՅԱՆ» մատենագրության հեղինակը,— եթե առանձնացվի «Հայրենական մեծ պատերազմի արտացոլումը հայ գեղանկարչության մեջ» առանձնահատուկ մի ցուցահանդես, չեմ կասկածում, որ Ս. Պիպոյանի «Կիևի գրավումը», «Ազատագրում», «Խաղաղության պաշտպանության դիրքերում» ստեղծագործությունները իրենց հատուկ տեղը կգտնեն: Չէ՞ որ այդ գործերը ծնունդ են առել նախկին զինվորի ձեռքով, վերարտադրում են պատերազմի դարհավիրքը, տեսածի և ապրածի գունային լուծումներ-մեկնություններ են:

1942 թ. 172-րդ տանկային գումարտակի կապավորը քանի՛, քանի՛ անգամ է վերականգնել ռադիոհեռախոսային վնասված գիծը, անխափան կապ հաստատել խորհրդային բանակի տարբեր ստորաբաժանումների հետ, «որսացել թշնամու ձայնը», հայտնաբերել նրա թաքստոցը: Պատերազմում ցուցաբերած խիզախության համար նորբայազետցի Սուրեն Պիպոյանը (ծնվ. 1922 թ.) պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով, Մարտական ծառայության համար, Ճապոնիայի դեմ տարած հաղթանակի համար և այլ մեդալներով:

Թեև պատերազմի հաղթական ավարտից տասնյակ տարիներ են անցել, բայց ռումբերի պայթյունը, ինքնաթիռների կործանումը, քաղաքների ու գյուղերի ավերվելը, մարդկային անթիվ զոհերն ու պատերազմի արհավիրքները երբեք չեն ջնջվում Հայկ. ԽՍՀ վաստակավոր նկարիչ, Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի դասախոս Ս. Պիպոյանի մտապատկերից: Նրանք դարձել են գեղանկար, ցուցադրվել բազմաթիվ ցուցահանդեսներում (Երևանում, Մոսկվայում, արտասահմանում), հուզել միլիոնավոր սրտեր և նախկին ռազմիկ կապավորին և ճապոնական միլիտարիստների դեմ մարտնչող հայ քաջորդուն արժանացրել Պատվո նշան շքանշանի (1986 թ.):

Ս. Պիպոյանը խորհրդային բանակում ծառայել է 1942—1946 թթ., զորացրվելուց հետո է ընդունվել և ավարտել ԳԹ ինստիտուտը:

Լենինգրադի համառուսական ակադեմիայի ճարտարապետական ֆակուլտետի ուսանող էր վանեցի Վահրամի որդի՝ ՕՆԻԿ (ՀՈՎՀԱՆՆԵՍ) ՊՈՂՈՍՅԱՆԸ (ծնվ. 1912 թ.), երբ թշնամին շրջափակեց Հոկտեմբերյան հեղափոխության օրրանը: Ակադեմիան տեղափոխվեց Սամարղանդ, իսկ ուսանողներն ու դասախոսները՝ ռազմադաշտ: 276-րդ թնդանոթահրաձգային գումարտակի կամավորներից Օ. Պողոսյանը նշանակում

ստացավ՝ ծառայել գումարտակի քաղշտաբում որպես նկարիչ: Քաղհրատի բազմաթիվ բյուլետեններ, մարտական և պատի թերթեր, անվանի զորահրամանատարների և քաջարի ռազմիկների դիմանկարներ ծնունդ առան Օնիկի վրձնի շնորհիվ, լույս տեսան այսուայնուր: Մոսկվայի և Լենինգրադի հակաօդային պաշտպանությունում (ՊՎՕ) ցուցաբերած արիության և հրամանատարության առաջադրանքները անթերի կենսագործելու համար Օ. Վ. Պողոսյանին շնորհվել է Հայրենական մեծ պատերազմի երկրորդ աստիճանի շքանշան և Լենինգրադի պաշտպանության համար մեդալ: Պատերազմից հետո նախկին հայ զինվորը Լենինգրադի նույն ակադեմիայում (Ռեպինի անվան) ավարտեց ոչ միայն ճարտարապետության (1945 թ.), այլև գունանկարչական (1946 թ.) ֆակուլտետները և վերադարձավ Երևան: Պատանի հանդիսատեսի թատրոնի նախկին բեմադրող նկարիչը (հիշենք «Գնդի որդին» և «Հատուկ առաջադրանք» բեմադրությունների նրա ձևավորումները) Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի գծանկարի ամբիոնի դոցենտ է: 1963 թ. Օ. Պողոսյանը իր ազնիվ ու անբասիր աշխատանքի համար արժանացել է Աշխատանքային արիության և Աշխատանքի վետերանի մեդալների:

Գաղթ, կոտորած, եղեռն, Մեծ հայրենական տեսած վանեցի հայորդու վրձինը, մանկավարժական աշխատանքին զուգահեռ, հանգիստ չի առել: Օ. Պողոսյանի «Վախթանգ Անանյանի դիմանկարը», «Զրավազան», «Ցամաքաբերդ», «Դժվար ճանապարհ», «Գյուղի մոտ» և այլ ստեղծագործություններ հաճախ են զարդարել տարբեր ցուցասրահներ՝ այցելուներին պատճառելով անհուն հրճվանք և բավականություն:

Օնիկ Պողոսյան

Տիխոն Տերնով

Հայաստանի նկարիչների ինտերնացիոնալ ընտանիքի անդամներից է ռուս ժողովրդի զավակ ՏԻԽՈՆ ՆԻԿԻՖՈՐԻ ՏԵՐՆՈՎԸ: Ծնվել է նա 1923 թ. մայիսի 5-ին Կեմերովոյի մարզի Տոնկի քաղաքում: 17-ամյա պատանի էր, երբ նրանց ընտանիքը տեղափոխվեց Սվերդլովսկի մարզի Բոգդանովիչի կայարան: Այստեղ կինոթատրոնում նկարիչ, ազդեր ձևավորող էր աշխատում, երբ պայթեց պատերազմը: Մեզ տված իր ձեռագիր ինքնակենսագրականում նա գրել է. «1942 թ. հունվարին զորակոչվեցի բանակ՝ Սուխոլոտսկու շրջգինկոմիսարիատից, ուղարկվեցի Սվերդլովսկի № 2 ռադիոկուրսեր: Ավարտելուց հետո, 1942 թ. ապրիլին ստդեն ռազմաճակատում էի: Մեր՝ 54-րդ գվարդիական ականանետային գունդը կազմավորվեց Մոսկվայում, պաշտպանական դիրքեր գրավեց Սուխինիչի մոտ, այն մտնում էր 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի կազմի մեջ: Ես ավագ ռադիոհեռախոսավար էի: 1944 թ. հոկտեմբերին գործուղվեցի սովորելու Օմսկում (2-օe МГАУ), մի քանի ամիս անց ուսումնարանը կազմալուծվեց, ինձ տեղափոխեցին նույն գծով ուսանելու Բառնաուլում, և միայն 1946 թ. Ռոստովում ես ավարտեցի զինուսումնարանությունս և ստացա սպայի կոչում»: Ն. Տերնովի ինքնակենսագրականը տեղեկացնում է, որ հետագայում նա ծառայել է Գերմանիայում և մի տարի անց տեղափոխվել է Հայաստան, ուր և իր զինծառայությունն է անցկացրել մինչ 1954 թ.: Նույն տարում էլ 31-ամյա Տիխոն Նիկիֆորիչը ընդունվել է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտ և որպես գեղանկարիչ 1960 թ. ավարտել այն:

— Իմ ստեղծագործությունների հիմնական թեման ինձ շրջապատող աշխարհն է: Բնական է, որ այն Հայաստանն է,—ասում է ռուս նկարիչը և մեզ ծանոթացնում իր «Հաղթանակի կամուրջը», «Զանգվի ձորը», «Երևանի քաղաքային թանգարանը», «Հարավային սահմանում», «Ալավերդի» և այլ ստեղծագործություններին: Կոմունիստ (1942 թ.), ԽՍՀՄ ՆՄ անդամ, պատերազմի վետերան, գեղանկարիչ Տ. Ն. Տերնովը իր մարտական ծառայությունների համար արժանացել է ՀՄՊ-ի I աստիճանի շքանշանի, Խիզախության համար, Արիության համար, Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար և այլ մեդալների: Վաստակաշատ մարտիկ գեղանկարիչը պատրաստվում է բացել անհատական նոր ցուցահանդես:

«Դե որ Լենինական ես գնում, նպատակդ գիտեմ, գնա «Բանվորի» խմբագրությունն, նկարիչ ԳՈՒՐԳԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ գտիր, իմ ողջույնը միացյալ հայրենակիցն է՝ Լենինականցի-մշեցի: Նրա մասին էլ գրիր: Գուրգենը ոչ միայն տաղանդավոր և սիրված նկարիչ է, այլև քաջ ռազմիկ, հին զինվոր... Նա Հյուսիսային Կովկասից, Կերչից ոտով Բեռլին է հասել: Նրա մասին անպայման կգրես...»,— եղավ Հովհ. Շիրազի հորդոր-հրամանը: Եվ իրոք, ով ծանոթանա նկարչի «Մինչև Բեռլին մնացել է 35 կմ», «47-րդ բանակի Հալլե շտաբը», «Զինվորի սերը», «Ոսկե Ֆինլանդիա», «Գնդի խոհանոցը» ստեղծագործություններին, անմիջապես կզգա, որ դրանք ծնունդ են առել միայն պատերազմ տեսած, բանակն ու բանակային առօրյան քաջ գիտցող տաղանդավոր մարդու ձեռքով:

— Արի՛, արի՛ գնանք ցուցահանդես,— ձգելով թևիցս, դեպի քաղաքային թանգարան է առաջնորդում գրողների միության Լենինականի բաժանմունքի քարտուղար, բանաստեղծ Ծմավոն Թորոսյանը:— Տե՛ս՝ ի՞նչ հրաշքներ ունի Գուրգենը: Այս մեկը՝ «Մշեցի տատոն», աստվածային ստեղծագործություն է, մոր և երկրի խտացված միասնություն՝ լեցուն խոհով, սիրով, թախիծով, կարոտով: Գուրգենի «Անվանի լենինականցիներ» շարքը, «Կապսի ձորում», «Հաղթանակի վանքը», «Արագածը երեկոյան», «Ծիրակ», «Վահրամաբերդի եկեղեցին», «Միքայել Նալբանդյանը և Գերցենը», «Տատիկն ու թոռը» գեղանկարչական ստեղծագործությունները, Ավ. Իսահակյանի «Ալագյազի մանիները» գրքի նկարազարդումները լրիվ կբավարարեն մի տոմ-թանգարանի...

Ու մինչ Ծմավոնը հուզմունքով շարունակում է ներկայացնել նկարիչ Գուրգենին, ընկերս՝ Վարդգես Մովսիսյանը, ընդհատում է նրան և առանց նկարչին հարցնելու ներկայացնում նրա մարտական ուղին: Պարզվում է, որ Գ. Կարապետյանի կենսագրությանը քաջածանոթ էր ոչ միայն մեծն Հովհ. Շիրազը, որի դիմանկարը կերտել է նկարիչը և ստացել պոետի շնորհակալական նամակը, այլև ամեն մի լենինականցի մտավորական:

— Գուրգենը բանակում եղել է հրետանավոր,—շարունակում է Վարդգեսի խոսքն արձակագիր Պատվական Ղուկասյանը,—թշնամու դեմ կռվել է Նովոռոսիյսկում, Մալայա Զեմլյայում: Խիզախաբար է մարտնչել Ռոստովի, Խարկովի, Կիևի համար մղվող ազատագրական մարտերի ժամանակ: Բանակում հրամանատարության առաջադրանքը իրագործելու, ցուցաբերած խիզախության և արիության համար պարգևատրվել է Կարմիր աստղի և Հայրենական մեծ պատերազմի 2-րդ աստիճանի շքանշաններով:

Եվ իրոք, նկարիչ մարտիկը ծառայել է մարշալ Կ. Ռոկոսովսկու հրամանատարությամբ գործող բանակում, մասնակցել Վարշավայի ազատագրմանը: Ողջ կռվի ընթացքում զենքի պես օգտագործել է վրձինը: Քանի, քանի՜ շարժեր, ծաղրանկարներ մատիտագիր վիճակում երկնեց նա օտար երկինքների տակ: Այսօր էլ նրա հին ալբոմում մտերիմները կտեսնեն անավարտ էսքիզներ, զորահրամանատարների դիմանկարներ, փոքրիկ ճեպանկարներ, որոնց չհասցրեց խրամատներում և բլինդաժներում լրիվ կյանք տալ զինգծագրող (տոպոգրաֆ) հայ մարտիկը:

Գուրգեն Կարապետյան

Արամ Ֆիդանյան

— Շատ գովելուց մարդ ամաչում է: Ես էլ բոլորի պես կռվել եմ հիտլերականների դեմ, բախտ վիճակվեց՝ տուն վերադարձա, նկարչությամբ և մանկավարժությամբ եմ զբաղվում,— համեստորեն եզրափակում է սիրված նկարիչը իր անվան շուրջ պտտվող մեր զրույցը և առաջարկում չմոռանալ, անպայման գրել նաև կյանքից վաղաժամ հեռացած լենինականցի նկարիչ և մարտիկ ԱՐԱՄ ՖԻԴԱՆՅԱՆԻ մասին[1]:

[1] Ու մինչ սույն գիրքը լույս աշխարհ կգար, Նկարիչ Գուրգեն Կարապետյանը, ինչպես և գրողներ Վարդգես Մովսիսյանն ու Պատվական Ղուկասյանը 1988 թ. դեկտեմբերյան Մեծ երկրաշարժին զոհ գնացին:

Մերկուրովի անվան դպրոցի սան, գեղանկարիչ Արամ Ֆիդանյանին այսօր շատերն են հիշում: Երևանի Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանն ավարտելուց հետո նա նոր էր աշխատանքի անցել իր ծննդավայրում՝ Լենինականում, երբ պայթեց պատերազմը:

— Ամեն ինչ վերջացավ,— այսպես մտածեց Լենինգրադի Էրմիտաժում ցուցադրված «Երևանի օպերայի կառուցումը» կտավի (նրա դիպլոմային աշխատանքն էր) հեղինակը և դուրս եկավ պաշտպանելու Լենինգրադն ու Կիևը, Օդեսան ու Կերչը:

«Լեյտենանտ Ա. Ֆիդանյանը,— կարդում ենք «Բանվոր» թերթում,— մինչ պատերազմը դասատու էր քաղաքի նկարչական դպրոցում: Նա առաջիններից մեկն էր, որ ռազմաճակատ մեկնեց մեր հայրենիքի պատիվն ու անկախությունը պաշտպանելու համար: Շատ մարտերի է մասնակցել խիզախ հայրենասերը, ցույց տվել քաջության և անվեհերության օրինակներ»: Դա ապացուցում են նաև կյանքից ողբերգականորեն հեռացած (1948 թ.) երիտասարդ նկարչին շնորհված Կարմիր աստղի շքանշանը, Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար և Աշխատանքային արիության համար մեդալները:

Պատերազմից հաղթանակով վերադարձած նկարիչը իր ռազմի օրերի ապրումները, ցասումը ու սերը, հավատն ու նվիրվածությունն է խտացրել «Խորհրդային Միության հերոս Աշոտ Ամատունի» (կտավ., յուղ., 65×50)[1], «Հաղթանակի օրը Լենինականում» (կտավ., յուղ., 56×49) և բազմաթիվ այլ ստեղծագործություններում, որոնք 1945 թ. ցուցադրվեցին Լենինականում[2]: Ա. Ֆիդանյանը, ըստ քրոջ տված տեղեկությունների, ավարտել է Պյատիգորսկի զինուսումնարանը, սկզբում ծառայել է 89-րդ Թամանյան դիվիզիայում, եղել հետախույզ և դասակի հրամանատար, անձնվեր մարտնչել է Հյուսիսային Կովկասի, Թամանի, Կերչի, Ուկրաինայի համար ծավալված մարտերում, ռազմադաշտում էլ հենց ընդունվել է ԽՄԿԿ շարքերը: Հետախույզ-քաղղեկի մարտական սխրանքների շարքում երբեք

1. «Լենինականի նկարիչների ցուցահանդես», կատալոգ, կազմեց Ռ. Պարսամյանը, Ե., 1945 թ., էջ 13—14:

[2] Նկարչի մասին տես նաև «Բանվորում», 1985 թ., 18 հունիսի:

չի մոռացվի վիրավոր ընկերներին մարտադաշտից գիշերով շալակած բուժկետ հասցնելը: Այդ մասին են գրել նրա ծնողներին շտաբի պետ, կապիտան Մարկ Պավլովիչ Վելիչկոն և Նիկոլայ Պավլովիչ Տիմոֆեևը:

Երևանի տիկնիկային թատրոնի նկարիչ Անահիտ Առաքելյանի հետ կարճ տևեց մեր հարցազրույցը: Ըստ նրա տված տվյալների իր հայրը ԳԵՎՈՐԳ ԱԹԱՆԵՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԸ, ծնվել է Արտաշատի շրջանի Դալար գյուղում 1914 թ. նոյեմբերի 17-ին: Գեղարդ տեխնիկումն ավարտելուց հետո (1936 թ.) աշխատանքի է

Գևորգ Առաքելյան

անցել տիկնիկային թատրոնում որպես նկարիչ: Երեք տարի հետո զորակոչվել է Կարմիր բանակ և մասնակցել ֆիննական պատերազմին: Այնուհետև Անահիտը ներկայացնում է մի հին ծոցագրքույկ. այն իր հոր ռազմի օրագիրն է: Նրանում պարզ գրված է. **«22.7.1941 թ.**— Ես կրակների տակով ուղևորվում եմ դեպի հին զորամաս, որտեղ գտնվում է կապիտանիս ընտանիքը, այն էվակուացնելու: Կապիտանը ծանր վիրավոր է: **22—27 հունիսի**— ֆիննական զորքերը հարձակվում են մեր ամրությունների վրա... **...30 հոկտեմբերի 1941 թ.**— Կարելսկայա Մասելկա գյուղում մենք օղակված ենք: Ճանապարհները փակ են, մատակարարում չկա: **10 փետրվարի 1942 թ.**— Մերոնք մեծ ջարդ տվեցին թշնամուն: Ես մի քանի անգամ ընկա անհուսալի դրության մեջ: Ո՞վ կարող է մտածել ողջ մնալու մասին, երբ գետնի երեսին ամեն մի քայլ տանում է դեպի մահ...»: Այնուհետև Ժորայի օրագրում հանդիպում են ռազմընկերների անուններ, հասցեներ, էքսպրոմտ գրված բանաստեղծություններ և տարբեր զինվորականների լուսանկարներ ու շարժեր, որոնք ինքնին վկայում են, որ նկարիչ հայորդին անգամ մարտադաշտում հավատարիմ է մնացել մուսաներին. կյանք է

տվել շարժերի, դիմանկարների և գրաֆիկ ժանրի փոքրածավալ ստեղծագործությունների, որոնք հաճախ են տեղ գտել իրենց դիվիզիայի թերթում: Հետո նախկին զինվորի դուստրը ազգանիս է դնում երկու վկայական, նրանցից մեկի վրա տպված է. «За оборону Советского Заполяря», իսկ մյուսի վրա՝ «За победу над Германией в Великой Отечественной войне 1941—1945 гг.»: Որպես հետախուզական դասակի, այնուհետև հրաձգային վաշտի հրամանատար Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի նախկին ուսանողը անմնացորդ

Պերճ Ակնունի

Վարդգես Բաղդասարյան

կռվեց մեր երկիրը նվաճող գերմանական ելուզակների դեմ, արժանացավ նաև «Գերազանցիկ հետախույզ» կոչմանը, նրան շնորհվեց ՀՄՊ-ի երկրորդ աստիճանի շքանշան և մի շարք մարտական մեդալներ: Մինչև իր կյանքի վերջը (1966 թ.) Ժ. Առաքելյանն աշխատում էր «Հայֆիլմում» և Երևանի տիկնիկային թատրոնում:

Երկրորդ համաշխարհային պատերազմը զինվորի շինել հագցրեց հարյուրավոր նկարիչ հայորդիների: Եվ եթե նրանցից շատերի մասին (ՊԵՐՃ ԱԿՆՈՒՆԻ, ՎԱՐԴԳԵՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ և ուրիշներ) մենք ընդարձակ խոսք չենք ասել, պատճառը միայն փաստագրական նյութի պակասն է եղել, պահանջվող տվյալները մեզ կամ հասանելի չեղան: 1945-ի Մայիսի 9-ի հաղթանակով ավարտվեց խորհրդային ժողովրդի արդարացի պատերազմը գերմանական ֆաշիզմի դեմ: Հաղթանակը նվաճող բազմաթիվ նկարիչ և քանդակագործ հայ քաջորդիներ ազատության ցայգալույսից առաջ խոցվեցին: Անհետ նրանցից մի քանիսի դիմանկարները:

ԶՈՀՎԱԾ ՆԿԱՐԻՉՆԵՐ ԵՎ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՆԵՐ

ԿՅԱՆՔՍ ԿՏԱՄ, ՀՈՂՍ՝ ԵՐԲԵՔ

ՍԱՐԳԻՍ ԹՈՐՈՍԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ (1910—1942)

Սարգիս Ալեքսանյանն արդեն անհատականություն էր: Նրա ստեղծագործությունների մասին «Սովետական արվեստ» ամսագրի 1940 թվականի № 7—8 միացյալ համարում (էջ 74) գրված է. «Պետք է ընդունել, որ հետաքրքրական մատիտանկարիչ է վերջին տարիներս զգալիորեն առաջ գնացած շնորհալի Ս. Ալեքսանյանը: Նրա մատիտանկարները բնորոշ են ճկուն և լակոնիկ գծերով, որոնք հարթության վրա հստակ կերպով կազմում են սիլուետը և նրա ներքին ենթակա մասերը: Գեղանկարչությունը պահելով լուսաստվերի արտահայտության համար, որի օգնությամբ նա քանդակում է պլաստիկական ձևը, Ալեքսանյանը հայ փոքրաթիվ նկարիչների շարքում ուժեղ կերպով ձգտում է ձեռք բերել գծի հստակություն, նրա ռիթմը, արտահայտությունը» (Մ. Բաբենչիկով):

Սարգիս Ալեքսանյանը ծնվել է 1910 թվականի հունվարի 10-ին Արևմտյան Հայաստանի Բասենի շրջանի Գոդաբազ գյուղում: Ինչպես իր շատ ընկերները նա ևս, դեռ մանուկ, ականատես եղավ թուրք մարդասպանների վայրագություններին, որոնք կիրառվում էին հայ ժողովրդի արևմտյան հատվածի նկատմամբ: Գաղթ, կոտորած, որբանոց—ահա Ալեքսանյանի մանկության ճանապարհը: Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ ուսումնառություն Լենինականի որբանոցում, հետո՝ նկարչական ընդունակությունների դրսևորում, առաջին քայլերը Լենինականի նորաբաց նկարչական ստուդիայում...

Տասնինը տարեկան էր, երբ առաջին անգամ մասնակցեց նկարչական ցուցահանդեսի և արժանացավ վրձնի վարպետների ուշադրությանը: 1939-ին Սարգիս Ալեքսանյանն ավարտում է Երևանի գեղարվեստի տեխնիկումը, իսկ 1941-ին՝ Մոսկվայի կերպարվեստի ինստիտուտը: Նա ուսանել է հանրահայտ նկարիչ, պրոֆեսոր Վ. Ա. Ֆավորսկու մոտ: Ալեքսանյանի «Զանգվի ափը», «Գրոհ», «Այգեկոթ», «Փախուստ» գեղանկարչական ստեղծագործությունները, բազմաթիվ փորագրությունները, ջրանկարները ու մատիտանկարները հիմք են տալիս նրա մասին խոսելու գովեստով: Գրասեղանիս են հրաձգային գնդի անվեհեր զինվոր Սարգիս Ալեքսան-

Սարգիս Ալեքսանյանը կնոջ՝ Վարյա Բաղդասյանի հետ:

ՀՄՊ-ում զոհված Նկարիչներ (ձախից) **Լևոն Տոնականյանը, Սարգիս Ալեքսանյանն** ու **Վանիկ Կարապետյանը:**

յանի՝ Քանաքեռից, Թբիլիսիից, Գորիից, Խարկովից ուղարկած մարտական նամակներն ու հուշագրառումները: Դրանցից մեկի ռազմաճակատային հասցեն է՝ «803-րդ դ/փ, 606 հրաձգային գունդ»: Կարդում ես, և հուզմունքից աչքերդ խոնավանում են, չէ որ փոքրիկ աղջնակին՝ Աիդային... «Մի՛ լաց, գնում եմ քեզ խաղալիք բերելու» հուսադրող հայրը մարտադաշտից չվերադարձավ: Որպես սուրբ մասունք նրա բազմաթիվ, բազմաժանր անավարտ կտավները, լինոփորագրությունները, ակվարելներն ու էսքիզները այսօր էլ շարունակում են գոյատևել այն կոոպերատիվ տանը (Պուշկինի փողոց № 72 բն. 9), ուր նա տիկնոջը՝ Վարյային, զգուշացրեց. «Ես թշնամուն կտամ կյանքս, վրձինս. բայց հո՞ղս՝ երբե՛ք... Մի՛ հուսահատվիր: Եթե նեղն ընկնեք, թեկուզ ամենաէժան գներով վաճառեք նկարներս և ապրեք...»:

Ալեքսանյան նկարչի հիշատակը հավերժացնելու համար Երևանի № 29 դպրոցի նախկին ուսուցչուհի Վարյա Բադասյանը զոհված ամուսնու բազմաթիվ գործերը հանձնել է Հայաստանի պետական պատկերասրահին և նկարչական ֆոնդին: Որոշ էսքիզներ, անավարտ գործեր նա համարում է իր հավերժական ուղեկիցները, ամուսնու հիշատակ-մասունքները: Հայաստանի պետական պատկերասրահի նախկին տնօրեն, հանրապետության ժողովրդական նկարիչ Էդուարդ Իսաբեկյանը տեղեկացնում է, որ Սարգիս Ալեքսանյանից ՀՊՊ ֆոնդերում պահպանվում են 30-ից ավելի ստեղծագործություններ (յուղաներկ, տուշ, ջրաներկ, մատիտանկար, փորագրություն, գրաֆիկա, գրքերի ձևավորումներ): Արխիվային փաստերը հաստատում են (տես «Պոլիգրաֆիստ» բյուլետենը, 1934 թ., 23-ը փետրվարի), որ երիտասարդ նկարիչը (ԽՍՀՄ ՆՄ անդամ 1929 թ.) ոչ միայն վայելում էր հայ գրականության դասական Ավ. Իսահակյանի, Ն. Զարյանի (միասին լուսանկարված են), այլև իր բազմաթիվ գործընկերների և ուսանողների սերն ու համակրանքը:

Ս. Ալեքսանյանի ստեղծագործական ճանապարհի ամփոփումը կլինի, եթե տարբեր տարիներին կազմակերպված Հայաստանի նկարիչների ցուցահանդեսների կատալոգներից ի մի բերվի նրա ստեղծագործությունների ցանկը: Թե ինչպիսի տաղանդով էր օժտված քսանամյա նկարիչը և ինչպիսի բեղուն վրձին ուներ, վկայում է 1930 թ. Երևանում կազմակերպված գեղաշխի կերպարվեստի ցուցահանդեսը, որտեղ ՕՄԱՀՐ-ի անդամ Սարգիսը ներկայացրել է 19 ստեղծագործություն՝ տարբեր սյուժեներով և բովանդակությամբ (տես I ցուցահանդեսի կատալոգը, Ե., 1930, էջ 14, № 165—183):

1940 թվականին կերպարվեստի պետական թանգարանը հրատարակել է 1939 թ. Երևանում

Այն ցուցահանդեսի կատալոգները, որոնց մասնակցել է **Ս. Ալեքսանյանը** և որոնցում կա նրա մասին:

կազմակերպված «Հաշվետու ցուցահանդեսի» կատալոգ, որի ձևավորումը իրականացրել է Ս. Ալեքսանյանը: Վերոհիշյալ կատալոգի առաջաբանում կարդում ենք.

«Գրավչուրան առանձնապես անհրաժեշտ է գրքի պատկերազարդման մեջ, իսկ վիմագրությունը խոշոր հնարավորություն է տալիս բազմացնելու մշակված գծանկարները: Մենք ունենք որակավոր կադրեր այս ասպարեզում աշխատելու համար: Այդ են ապացուցում **Ս. Ալեքսանյանի** և Ռ. Բեդրոսովի սակավաթիվ գրավչուրաները: Մնում է խրախուսել ընկերներին ավելի պատշաճ ուշադրություն դարձնելու գրաֆիկայի այդ արժեքավոր տեսակի վրա» (էջ 8):

Հաջորդ էջում նշված է. «Մեզ մոտ հաջող փորձեր են արվում օգտագործելու հայկական ձեռագրերի ձևավորման դարավոր մեծ կուլտուրան: Ցուցահանդեսում այդ տեսակետից հետաքրքիր են Տիրատուրյանի, Տարագրոսի, Ալթունյանի, **Ալեքսանյանի** և Տիրատուրյան Կ.-ի գործերը»:

Պատմական տպագիր այս աղբյուրը վկայում է նաև, որ **Սարգիս Ալեքսանյանը այդ ցուցահանդեսին ներկայացել է հետևյալ գործերով** (էջ 14).

1. **«Աղբյուրի մոտ»,** 1936 թ., փայտագրություն, 7×11:
2. **Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմի** (գրքի) շապիկը, 1936 թ., փայտագրություն, 20,7×15:
3. **Ճեպանկարներ,** 1936 թ., թուղթ-մատիտ, 32×23:
4. **Դառ,** 1936 թ., ——»—— 36×27:
5. **Ֆատյուրմորտ,** 1937 թ., լինոփորագրություն, 48,5×32,5
6. **Կատու,** 1937 թ., թուղթ-մատիտ, 23,2×32:
7. **Բնորդուհի,** 1939 թ., ——»—— 42×35:
8. **«Խաղողաքաղ»** ——»—— յուղանկար:

Շանցած մի տարի (1940 թ.) Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու 20-ամյակի առթիվ կազմակերպված հատուկ ցուցահանդեսում, որպես նկարչական նոր ուժ, Մոսկվայի կերպարվեստի ինստիտուտի ուսանող Սարգիս Ալեքսանյանը փայլուն մասնակցություն է ցու-

Մոսկվայի կերպարվեստի ինստիտուտից սոցմրցման հարվածային ուսանող Սարգիս Ալեքսանյանին տրված պատվոգրի լուսապատճենը:



ГРАМОТА
СТУДЕНТУ ЛУЧШЕМУ
УДАРНИКУ
МОСКОВСКОГО ИНСТИТУТА
ИЗОБРАЗИТЕЛЬНЫХ ИСКУССТВ
ТОВАРИЩУ

Треугольник московского института изобразительных искусств награждает тебя, дорогой товарищ, званием нашего лучшего ударника за лучшие показатели по качеству учебы, за активную общественную работу и выполнение тобою взятых на себя обязательств по соцсоревнованию. Мы уверены, что ты и в дальнейшем с большевистской настойчивостью будешь развивать свои завоевания, упорно будешь бороться за подготовку качественно хорошего специалиста-общественника. Под руководством партийной и профессиональной организации будешь вести социалистическое соревнование во всех звеньях нашей работы.

Директор института
Секретарь партбюро ВКП(б)
Председатель профкома

Ս. Ալեքսանյանի ձեռավորած գրքերից:

ցաքերում: Նկարչի «Սասնա բերդի անվանումը», «Դավիթը գնում է որսի», «Դավթի և Մըսրա Մելիքի հանդիպումը» և այս շարքի մոտ 20 աշխատանքներ մինչ այդ էլ, «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի տոնակատարության օրերին (1939 թ.), արժանացել էին բազմահազար դիտորդների դրվատանքին, իսկ «Աշտարակյան պեյզաժը» (թուղթ և տուշ), մի քանի նկարագարդումներ և ակվարելներ դրական լուրջ խոսակցության տեղիք էին տվել: Ս. Ալեքսանյանի անունն արդեն դուրս էր եկել հանրապետության շրջանակներից: Մոսկվայից նա արդեն պատվերներ էր ստանում: Այդ է վկայում նկարչի անձնական արխիվում (տանը) պահպանվող ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր արվեստի գործերի կոմիտեի գեղարվեստական ցուցահանդեսի և պանորամայի դիրեկցիայի պատվերը (1941 թ.), ինչպես նաև 1942 թ. ապրիլի 28-ին ԽՍՀՄ նկարիչների միության կազմկոմիտեի առաջարկը՝ մասնակցելու «Նկարիչների խնդիրները Հայրենական պատերազմի ժամանակ» ԽՍՀՄ նկարիչների միության 7-րդ պլենումի որոշումների կենսագործմանը: Նկարչին հասցեագրված մոսկովյան այս գրություն-առաջարկը Երևան հասավ, երբ Ալեքսանյանը թշնամու դեմ կենաց և մահու մարտեր էր մղում Խարկովի մոտ, որտեղ էլ զոհվեց 1942-ի մայիսի 28-ին՝

Ս. Ալեքսանյանի դիմումը Մոսկվայի կերպարվեստի ինստիտուտի փոխտնօրեն Գ. Գորոշչենկոյին և վերջինիս պատասխանը 5-րդ կուրսի ուսանող հայ նկարչին:



Тов. Горощенко!

Я ученик из института по декоративным Прикладам с 1937 года с 5-го Курса. Зачислен по факультету декора мне справка, что за мною сохраняется право на защиту диплома в государственных художественных Комиссиях.

В течение 1938-1940 гг. я скоро кончается срок защиты. Могу приехать защищать диплом и по этому прошу срочно ответить. Когда я могу выехать.

С приветом С. Александян

Мой адрес:
г. Ереван
ул. Л. Толстого № 48
Саркису Александяну

Ереван 13/VI 1940 г.

Тов. Александян !

Защита дипломных работ может быть организована только во второй половине февраля месяца 1941 года.

До этого срока будет проводится зачетная сессия по институту и организовать комиссию невозможно.

Думаю, что для Вас будет целесообразно присылать свои работы раньше о том, чтобы кафедра графики могла иметь свое мнение до защиты и сообщить его Вам, хотя конечно Вы имеете право в случае отрицательного суждения кафедры, все же подвергнуть работы на просмотр Гос. экзаменационной комиссии.

Работы присылайте по адресу: Москва, ул. Пушкина, д. № 47 Московский Государственный Художественный Институт

ЗАМ. ДИРЕКТОРА ИНСТИТУТА
ПРОФЕССОР /Г. ГОРОЩЕНКО/



Ս. Ալեքսանյան, «Հասնել և անցնել» (շրջապլակատ):

առաջին անգամ անպատասխան և անկատար թողնելով ընդունած պատվերը:

Յուղանկար, մատիտանկար, ջրանկար, գրաֆիկա, փորագրություն, գրքի ձևավորում, անվանաթերթի, հայկական զարդապատկերներով գլխազարդերի, ներդիր էջերի և վերջնազարդերի հմուտ կատարում, քաղաքական հումորով հագեցած պլակատներ և ծաղրանկարներ... ինչպիսի գործեր ասես, որ չհասցրեց ստեղծել ընդբանաշակ և նրբազգաց նկարիչը: Ալեքսանյանի «Հոռմի պապը», «Զան Կայ շին», «Ծովից ծով Հայաստան» ծաղրանկարները վկայում են, որ երիտասարդ նկարիչը ժամանակին արձագանքել է միջազգային և քաղաքական երևույթներին ու առօրյա հարցերին:

«Տանում են գնդակահարության», «Կարմիր բանակ», «Կոլտնտեսություն», «Պեյզաժ», «Բրիգադը», «Ածխահանքում» փորագրությունները, «Նավթի աշտարակները», «Պղնձաձուլություն», «Լինոտիպ մեքենայի մոտ» գրչանկարները խորհրդային քաղաքացու, աննկուն զինվորի, կոլտնտեսականի և բանվորի անվեհեր սխրանքին են նվիրված: Նրանցում արտացոլված է երիտասարդ Խորհրդային Հայաստանի բնաշխարհը՝ իր մարդկանցով և հարուստ առօրյայով:

Սարգիս Ալեքսանյանի՝ Մեծ հայրենականում զոհված երեսուներկուամյա հայրենանվեր քաջորդու հիշատակը պարտադրում է հավաքել, ի մի բերել, ցուցադրել և առանձին գրքով հրատարակել նրա ստեղծագործությունների ընտրանին:

Սարգիս Ալեքսանյան նկարիչ արվեստագետի անունը երբեք չի մոռացվել: Նրա մասին հաճախ են «Սովետական Հայաստան», «Ավանգարդ», «Երեկոյան Երևան», «Բանվոր», «Կոմունիստ» թերթերն ու «Սովետական արվեստ» ամսագիրը իրենց խոսքն ասել: «Հայկական Սովետական Հանրագիտարանի» առաջին հատորում նկարչին տեղ է հատկացվել: Հայաստանի նկարչի տան նախասրահում կանգնեցված մարմարե հուշասյանը ի թիվս զոհված նկարիչների փորագրված է նաև Սարգիս Ալեքսանյանի անունը:

ՍԱՐԳԻՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Ստեփանյան Գառնիկ,** Կենսագրական բառարան, Ա. գիրք, Ե, 1973, էջ 48:
2. **Գրիգորյան Սասուն,** Անավարտ կտավները («Մուսաները չլռեցին» գրքից), Սովետ. արվեստ, 1978, № 12, էջ 41—42
3. **Գրիգորյան Սասուն,** Կյանքս կտամ, հողս՝ երբեք. ԵԵ, 1979, 25 հուլիսի:
4. **Դզնունի Դանիել,** Հայ արվեստագետներ (համառոտ բառարան), Ե, 1977, էջ 24:
5. **Գրիգորյան Սասուն,** Հիշեցեք Նրանց, Ավ., 18 մայիսի 1975, էջ 3:
6. **Ռոլոզյան Բարկեն, Հարությունյան Վահան**— Նկարիչներ (զոհված հայ նկարիչների մասին), Սովետ. արվեստ, 1958, № 8, էջ 55—58:
7. **Կուրդոյան Եղիշե,** Կտավները մնացին անավարտ, ՍՀ, 9 մայիսի 1974, էջ 4:
8. **Սասունցի Դավիթը** գառնարած (Ս. Ա.-ի նկ. ձնավորումներից էպոսի 1000-ամյակի առթիվ) ԳԹ, 1939, № 24, 30 օգոստոսի, էջ 1:
9. **Հայկական Սովետական Հանրագիտարան,** հատոր II, Ե, 1974, էջ 160:
10. **Գրիգորյան Սասուն,** Մուսաները չլռեցին (կա նաև Ս. Ա.-ի մասին), ԳԹ, 5 մայիսի 1985, № 18, էջ 2:
11. Библиографический словарь. (Художники народов СССР), М., 1970, том I, стр. 95.

---

[1] Քանի որ նկարչական կատալոգները մեր ակնարկում հիշատակվում են, մատենագիտությունը չծանրաբեռնելու համար դրանք չենք նշել (Ս. Գ.):

ՇԱՀԱԲՅԻ ՆԿԱՐԻՉԸ

ՄԻՆԱՍ
ՊՈՂՈՍԻ
ԱՆՏՈՆՅԱՆ
(1920—1941)

Ինքնուս նկարիչ Մինաս Պողոսի Անտոնյանը ծնվել է 1920 թ. Շահաբ գյուղում: Դեռ մանկուց փոքրիկ Մինասը արտակարգ ընդունակություններ էր դրսևորում թատրոնի, նկարչության և երաժշտության նկատմամբ, փորձում էր ոտանավորներ գրել: Զարդար մայրիկը ուրախանում էր, ոգևորում Մինասին, չէր թողնում, որ Պետրոսը, Վոլոդյան և Հրանուշը խանգարեն եղբորը, հատկապես, երբ նա նկարչությամբ էր զբաղված:

«Առյուծաձև Մհեր», «Դավթի և Խանդութի հանդիպումը», ««Սասունցի Դավիթ» որմնանկարները այսօր էլ զարդարում են Շահաբի այն հին տան առաստաղը, այն տան, ուր անցել է Մինասի մանկությունն ու պատանեկությունը:

Միջնակարգ կրթություն ստանալուց հետո Մինասն ուներ մի երազանք. ընդունվել գեղարվեստի ինստիտուտ: Քանի որ Հայաստանում նման ինստիտուտ չկար, նա որոշեց մի քանի տարի ուսուցիչ աշխատելուց և իր վրձինը կատարելագործելուց հետո գնալ Լենինգրադ կամ Մոսկվա, ընդունվել գեղարվեստի ակադեմիա կամ կերպարվեստի ինստիտուտ: Բայց 1939 թ. սկսնակ նկարիչ ուսուցիչը կանչվեց հերթական զինծառայության, մասնակցեց ֆիննական պատերազմին:

— Մինասը մեր գյուղի աչքի ընկնող երիտասարդներից էր: Ինքնատիպ, պատկերավոր մտածողության տեր, աշխույժ և կատակասեր: Ձեռաց շարժեր էր նկարում, քարից, փայտից փոքրիկ, գեղեցիկ քանդակներ էր պատրաստում: 10-րդ դասարանցի էր, երբ մասնակցեց հանրապետական օլիմպիադայի և շահեց առաջնություն:— Պատմում է Մ. Անտոնյանի մասին բանաստեղծ Հրաչյա Հովհաննիսյանն ու ավելացնում.— Գնա՛ մեր գյուղ՝ Շահաբ. այնտեղ են ապրում Մինասի եղբայրները: Լյուդվիգ Դուրյանն ու Հովհաննես Ղազարյանը նրանց լավ գիտեն, կօգնեն քեզ: Գուցե պահպանված կտավներ հայտնաբերեք...

Ավագ գրչեղբորս խորհուրդները նկատի ունենալով, մեկնում եմ Մայակովսկի (նախկին Շահաբ): Հանդիպումը, ցավոք, այնքան էլ արդյունավետ չէ. յուրայինների անփութության պատճառով 18—19-ամյա նկարչի մատիտանկարներից, ջրանկարներից և յուղանկարներից ոչ մեկը չի պահպանվել՝ բացի առաստաղային հիշաձև նկարազարդումներից:

Մինաս Անտոնյանը Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ծառայել է Կարելիայում: Կոլա թերակղզուց ուղարկված նրա նամակները պահպանվել են այնքան, մինչև ողջ է եղել Զարդար մայրիկը: Զոհվել է քսանամյա նկարիչը Լենինգրադյան ռազմաճակատում, պատերազմի հենց առաջին տարում, 1941-ի ուշ աշնանը:

ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆ ԷԼ ԶՈՀՎԵՑԻՆ

ՆԵՐՍԵՍ
ԻՍՐԱՅԵԼԻ
ԻՍՐԱՅԵԼՅԱՆ
(ԽՈՇԱԲՅԱՆ)
(1907—1944)

Համաշխարհային առաջին պատերազմը և հայ ժողովրդի նկատմամբ կիրառած թուրքական ցեղասպան քաղաքականությունը իրենց սև կնիքը դրեցին նաև Իսրայել Խոշաբցյանի ընտանիքի ճակատին: Տեսնելով իր հարազատներին սպանված և անթաղ, ճաշակելով որբության դառնությունն ու բռնած պանդխտության անհայտ ճանապարհը, 1915-ին փոքրիկ Ներսեսը դեռ ութ տարեկան էլ չկար (ծնվ. 1907 թ.), երբ գաղթականների խմբին միացած հայտնվեց

Ն. Իսրայելյան, «Իմ բանաստեղծ ընկեր Թաթուլ Հուրյանը» (մատիտանկար), 1938 թ., Բաքու:

Երևանի գեղարդ տեխնիկումի մի խումբ ուսանողներ, նստած են 2-րդ շարքում (ձախից 3-րդը և 4-րդը) Ներսես և Բենիկ Իսրայելյան եղբայրները:

Մասիսի փեշերին: Վերջին անգամ նայեց նա մշուշի մեջ կորած Սիփանին ու Նեմրութին, մտքով փայփայելով Վանա լճի ոսկե հայելին, իր եղբայրների՝ Գրիգորի և Բենիամինի, քույրերի՝ Նվարդի ու Սիրվարդի հետ միացավ ռուսական բանակին: Վերջինս, անապատան վանեցի որբուկներին փրկելով կոտորածից, հանձնեց Էջմիածնի վանքի պատերի տակ քաղցից և հիվանդություններից տառապող գաղթականների խմբին: Կրելով գաղթի և կոտորածների ողջ դառնությունը՝ համաճարակից այստեղ մահացավ նրանց մայրը՝ Մարիենն: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը փրկեց կորստից Ներսեսին, որին արդեն Ալեքսանդրապոլի ամերիկյան որբանոցում Իսրայելյան ազգանունն էին կնքել: Լենինականի նկարչական ստուդիան ավարտելուց հետո (ուսուցիչ՝ Ստ. Ալթունյան) պատանին ընդունվեց Երևանի գեղարդ տեխնիկում: Գույների և լույսի ճիշտ ընտրությունը, պատկերավոր մտածողությունն ու վառ երևակայությունը հնարավորություն տվեցին, որ Ներսես Իսրայելյանը շրջապատում ճանաչվի իր վրձնի շնորհիվ և դրական բնութագրով գործուղվի Մոսկվայի կերպարվեստի ինստիտուտ: Ուսանողական տարիներին կոմե-

Ն. Իսրայելյան. «Գնդապետ Սիմոն Զաքյան» (մատիտանկար)



Ն. Իսրայելյանի նամակը քրոջը՝ Նվարդ Հացագործյանին՝ գրված ռազմաճակատից:

ՀՄՊ-ում զոհված նկարիչ, ինժեներ-տեխնոլոգ Բենիամին Իսրայելյանը:

ռիտական եռանդուն աշխատանքի և ստեղծագործական ու հասարակական ակտիվ գործունեության համար Ներսես Իսրայելյանը արժանանում է գովեստների և խրախուսանքների, իսկ 1932-ին՝ Մեծ Հոկտեմբերի 15-ամյակին նվիրված ուսանող նկարիչների համամիութենական մրցույթում շահում առաջնություն «Կարմիր զինվոր» գրաֆիկ աշխատանքի համար: Ներսես Իսրայելյանը ամուսնացած էր, ապրում էր Մոսկվայում, գրաֆիկա էր դասավանդում նկարչական ուսումնարանում: Երբ պայթեցին Մեծ հայրենականի առաջին ռումբերը, նա հրաժեշտ տվեց իր կնոջը՝ Մարուսյային, համբուրեց 10-ամյա որդուն՝ Սուրենին, և դստերը՝ Նինային (նրանք այժմ ապրում են Մոսկվայի մարզում), դուրս եկավ կրծքով պաշտպանելու Մոսկվան և մեր մեծ հայրենիքը: Մոսկվայի մատույցներում 1941 թ. Ներսեսը երկու ոտքից վիրավորվեց, բուժվեց Մոսկվայից 380 կմ հեռու գտնվող մի հոսպիտալում և նորից մեկնեց ռազմաճակատ:

Վյազմա քաղաքից 1944-ի մարտի 23-ին նրա գրած նամակը եղավ վերջինը: Հայորդի նկարիչը զոհ գնաց գերմանական գնդակին և չհասցրեց տեսնել Մոսկվայում բացվող իր ստեղծագործությունների անդրանիկ ցուցահանդեսը: Մոսկվայից բանակ զորակոչվեց և իր կյանքը հայրենիքին նվիրաբերեց նաև Ներսեսի կրտսեր եղբայրը՝ Բենիամինը, որը եղբոր հետ ծառայում էր նույն գնդում (դ/փ-43-177 «Ե»): Բենիամինը ևս խոստումնալից նկարիչ էր, ավարտել էր Իվանո-Վոզնեսենսկի տեխնոլոգիական ինստիտուտը և ամուսնացել Զինաիդա անունով մի ռուս աղջկա հետ, միասին էլ աշխատում էին: Թե երբ և որտեղ խզվեց Բենիամինի կյանքի թելը, մեզ անհայտ է:

ՆԵՐՍԵՍ ԵՎ ԲԵՆԻԱՄԻՆ ԻՍՐԱՅԵԼՅԱՆՆԵՐԻ մասին.

1. **Գրիգորյան Սասուն**—Անավարտ կտավներ, Սովետ. արվեստ, Ե, 1978 թ., № 12, էջ 45—47:
2. **Գրիգորյան Սասուն**—Սուսանները չլռեցին, ԳԹ, 5 մայիսի 1985 թ., № 18, էջ 2:

ՉՀԱՍՑՐԵՑ ՆԿԱՐԵԼ ՍԻՐԱԾ ԱՂՋԿԻՆ

ՎԱՆԻԿ (ՎԱՀԱՆ) ԿԱՐԱՊԵՏԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (1910—1942)

Մեծ հայրենականի մասնակից նկարիչները այսօր էլ խոր վիշտ են ապրում, երբ տեսնում են, որ իրենց շարքերում չէ Վանիկ Կարապետյանը: Ցոլակ Ազիզյանը ինձ հուշում է, որ Վանիկն ու Լևոն Տոնակյանցը մոտ ընկերներ են եղել և նույն օրն էլ ընդունվել են ԽՍՀՄ նկարիչների միության շարքերը: Իրոք այդպես է: Զեռքիս տակ է Վահան (Վանիկ) Կարապետի Կարապետյանի անձնական գործը՝ վերցված Հայկ. ԽՍՀ նկարիչների միության արխիվից: Մեջբերենք նկարչի ձեռագիր ինքնակենսագրությունը՝ առանց փոփոխությունների. «Ծնվել եմ 1910 թ. Տաճկահայաստանում՝ Մոկսի նահանգի Հաղին գյուղում, գյուղական ընտանիքում՝ բաղկացած 7 հոգուց: Իմպերիալիստական պատերազմի շրջանում, 1915 թ. փախուստի ժամանակ սպանվում է հայրս: 1916 թ. Էջմիածնում խոլերայից և այլ հիվանդություններից մեռնում են մայրս, 2 եղբայրներս և 2 քույրերս: Ինձ որպես անապատանի վերցնում են մանկատուն (սկզբնական շրջանում բարեգործական ընկերության, հետո՝ ամերիկյան մանկատուն), եղել եմ հետևյալ քաղաքների մանկատներում՝ Էջմիածնի, Երևանի, Ղարաքիլիսայի (ներկ. Կիրովական), Թիֆլիսի, Ղարսի և ավելի երկարատև՝ Լենինականի: 1927 թ. մանկատնում վերջացրել եմ մանկավարժական տեխնիկումը, նույն թվին դուրս եմ եկել մանկատնից և ընդունվել Երևանի գեղարդ տեխնիկումը, այն ավարտել 1929 թ.: 1929—31 թթ. աշխատել եմ Լենինականի երկաթգծի մանկօջախում որպես նկարի և ծեփի անկյան ղեկավար և վարիչի օգնական: 1931 թ. Լուսժողկոմատի կողմից գործուղվել եմ Լենինգրադ, գեղարվեստի ակադեմիայում սովորելու: 1937 թ. վերջացրել եմ Լենինգրադի ակադեմիան և համամիութենական Ժողկոմխորհին կից Արվեստի կոմիտեի կողմից գործուղվել եմ Երևան, կերպարվեստի հանրապետական ուսումնարան, որպես գեղանկարչության և նկարչության դասատու: Կոմերիտական եմ 1926 թ., պրոֆմիության անդամ՝ 1928 թ. ...»:

1938 թվականի դեկտեմբերի 13-ին գրված Վահանի այս կենսագրությանը քիչ բան կա ավելացնելու: Եղել է ամուրի, ապրել Երևանում՝ Աբովյան փողոցի № 79 ա տանը:

«Նա այստեղ ապրում էր մորաքրոջ տանը: Շուտով կոոպերատիվ բնակարան պիտի ստանար Պուշկինի փողոցի № 72 շենքի 3-րդ հարկից: Նկարիչների կոոպերատիվ մեր այդ շենքը անավարտ էր, երբ բռնկվեց պատերազմը: Ասում են՝ Վանիկը զոհվել է Կերչում, մի անձրևոտ օր,— պատմում է նրա մասին իր որբանոցային ընկեր Համո Ավետիսյանն ու ավելացնում:— Ընկերները նրա ուսապարկում գտել են մի փունջ գունավոր մատիտներ, մի աղջկա լու-

սանկար և այդ ուսանողուհու դիմանկարի էսքիզները: Ըստ երևույթին սիրած աղջիկն է եղել... Նա ուրիշ էլ ո՞վ ուներ. բոլորը կոտորվել էին: Լենինականի ամերիկյան պոլիգոններում, ճիշտ մեր Թումանյանի Գիքորի պես, նստում էինք ամռան երկար գիշերներին և պատմում մեր գլխով անցածը: Վանիկը աշխույժ էր, կատակասեր: Հիշում եմ՝ Մոլիերի «Սկապենի արարքները» ներկայացման մեջ Վանիկն ու Լևոնը առանձին դերեր էին ստանձնել, երկուսն էլ փառահեղ խաղացին: Որքանոցի մեր աղջիկներից մեկը (անունը չեմ տալիս) սիրահարվել էր Վանիկին ...Ա՜խ, ի՜նչ տղա էր, ի՜նչ տղա...»

Ուզում եմ հրաժեշտ տալ զրուցակցիս և ասել շնորհակալություն, բայց նա դեռ ասելիք ունի: Նորից է ինձ նստեցնում ու ցույց տալիս մի լուսանկար-խմբանկար. իր զոհված ընկերներն են, նկարիչներ՝ Կորյուն Սիմոնյանը, Սարգիս Ալեքսանյանը, Վահան Կարապետյանը, Լևոն Տոնակյանն ու Անդրանիկ Մարկոսյանը: Լուսանկարին նա նոր կյանք է տվել. վերածել է յուղաներկ գեղարվեստական կտավի և կոչել այն «Նրանք չվերադարձան» (1973 թ., 152×136 սմ): Հմ. Ավետիսյանի այս ստեղծագործությունը իրոք որ Վանիկի և իր ընկերների հոգևոր ու երազներով լի կյանքի գունավոր դիմապատկերն է: Այն այսօր իր մշտական տեղն ունի Հայաստանի պետական պատկերասրահում: Այստեղ՝ ՀՊՊ-ի ֆոնդադարանում, Վ. Կարապետյանից պահպանվում է միայն երկու աշխատանք. «Գործարանում» (թ. տուշ, 28,5×21,5 սմ, Բ-1164) և «Բերքահավաք» (թ. տուշ, 28×19 սմ, Բ-1176): Պատկերասրահում հնարավորություն ունեցանք ծանոթանալու բազմաթիվ կատալոգների: Մեր ձեռքի տակ է Գեղաշխի կերպարվեստի սեկցիայի առաջին ցուցահանդեսի կատալոգը՝ տպագրված 1930 թ. մայիսին Երևանում: Նրանից տեղեկանում ենք, որ Մեծ Հայրենականում զոհված նկարիչներ Սարգիս Ալեքսանյանը այդ ցուցահանդեսին ներկայացրել է տասնինը ստեղծագործություն (էջ 14), Կորյուն Սիմոնյանը՝ վեց (էջ 22), իսկ Վանիկ Կարապետյանը՝ ինը աշխատանք (էջ 18): Դրանք են՝

1. «Պիոներներ» (տուշ)
2. «Պիոնե՛ր, պատրա՛ստ» (տուշ)
3. «Հնոցի մոտ» (տուշ)
4. «Երևանի հիդրոշինի առուն» (յուղաներկ)
5. «Աշնանային պեյզաժ» (յուղաներկ)
6. «Բաշգյանների ջրաղացները» (յուղաներկ)
7. «Արարատ գործարան» (յուղաներկ)
8. «Ածխահատ» (տուշ)
9. «Գործարանում» (տուշ)

Մեծանուն նկարիչներ Գ. Գյուրջյանի, Վ. Գայֆեճյանի, Փ. Թերլեմեզյանի, Հ. Կոջոյանի, Ար. Սարգսյանի և հայ կերպարվեստի այլ քանքարավորների հետ ժողովրդին ներկայանալը, կարծում ենք, թույլատրելի է միայն բացառիկներին և տաղանդներին: Զոհված նկարչի անձնական թերթիկը տեղեկացնում է, որ Վահան Կարապետյանը մասնակցել է ցուցահանդեսների նաև Լենինականում և ՀամԼԿԵՄ 20-ամյակին նվիրված հոբելյանական ցուցահանդեսին՝ Երևանում: «Ո՞ր թանգարաններում ունեք աշխատանք և քանի՞ հատ» հարցին նկարիչը պատասխանել է. «Հայկ ԽՍՀ պետթանգարանում՝ երկու աշխատանք, Գեղարվեստի ակադեմիայի թանգարանում՝ մեկ»: (Տես՝ ՀՆՄ արխիվ, Վ. Կ.-ի անձ. գործ, էջ 5): Թե որտեղ են պահպանվում և գոյություն ունե՞ն այսօր Վ. Կարապետյանի «Ցամաքաբերդ», «Նորքի էտյուդ», «Ստեփան Ալթունյանի դիմանկարը» գործերը, մեզ անհայտ է: Այդ ստեղծագործությունները հիշատակում է արվեստաբան Դանիել Դզնունին իր «Հայ կերպարվեստագետներ» համառոտ բառարանի 227-րդ էջում (Երևան, 1977 թ.): Երևանյան պատկերասրահում մի այլ կատալոգ («10-ամյա կերպարվեստի ցուցահանդես. I Օլիմպիադա», Ե., 1930 թ., էջ 15—16) մեզ տեղեկացնում է, որ Վանիկը որպես լենինականցի երիտասարդ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու տասնամյակին նվիրված առաջին օլիմպիադային մասնակցել է քսան ստեղծագործությամբ: Դրանք տուշ էին, մատիտանկար, ջրաներկ և յուղաներկ աշխատանքներ, որոնցում երիտասարդ նկարիչը պատկերել է Հայաստանում Մայիսյան ապստամբության ղեկավարներ և աննկուն հեղափոխականներ Ղուկաս Ղուկասյանին, Արմենակ Բուդաղյանին, Բատիկ Բատիկյանին, Սարգիս Մուսայելյանին և Եգոր Սևյանին: Վանիկի «Լենտեքստիլ գործարանում», «Արթիկտուֆ», «Զորագէս», «Լենինական», «Բերքահավաք», «Շախտայում», «Էտյուդ», «Լենին» ստեղծագործություններն իրենց արդիական թեմատիկայով և գունային արտահայտչամիջոցներով դարձել էին ցուցահանդեսի զրույցի և վեճերի շարժառիթ:

— Այդ օրերին Վանիկի «Ալավերդում» նկարաշարն ու նրա «Ինքնանկարը» այնպիսի ջերմությամբ ընդունվեցին Ստ. Աղաջանյանի, Գ. Գյուրջյանի, Ստ. Ալթունյանի կողմից, որ մեզ թվաց, թե նրանց հեղինակը մի գիշերում դարձավ կլասիկ,— պատմում է այդ ցուցահանդեսի մասին նկարիչ Էդ. Սարգսյանն ու հավաստիացնում. —եթե Վահանը չզոհվեր, մեր գեղանկարչությունն այսօր, չեմ կասկածում, կունենար իր ազգային մեծերից մեկը: Նա նաև կոմերիտական ակտիվ աշխատող էր: Միության մեջ ընդունվելուց հետո նրան ընտրել էինք նկարիչների միության կոմերիտմիության քարտուղար: Մենք մոտ էինք Վանիկի հետ: Հասարակական աշխատանքում նա եռանդուն էր, շիտակ և անկողմնապահ: Նրան բոլորն էին սիրում: Գեղարդ տեխնիկումում մեր պրոֆիլիազորն էր, գեղարվեստի ակադեմիայում էլ՝ կոմերիտմիության քարտուղարի տեղակալը: Ո՞վ էր հավատում, թե կյանքն ու ճակատագիրը այդքան դաժան կարող են վարվել...

Մեծ հայրենականին խորհրդահայ կերպարվեստագետների մասնակցության մասին խոսելիս չկա մեկը, որ երախտագիտությամբ չհիշատակի Վանիկի անունը, մի սուրբ անուն, որին կարելի է հանդիպել Երևանի նկարչական ուսումնարանի (նախկին գեղարդ տեխնիկում) նախասրահի մարմարե հուշաքարին, Հայաստանի նկարչի տանը՝ զոհված հայ նկարիչների հիշատակը հավերժացնող հուշատախտակին, 30-ական թվականների նկարչական կատալոգներում, հանրապետական մամուլում և այլուր: Ռազմադաշտից իր ընկերոջը՝ Հմայակ Ավետիսյանին հասցեագրած նամակի մի հատվածով ուզում եմ ավարտել Վահան (Վանիկ) Կարապետյանի մասին համառոտ ակնարկս.

«...Ովքեր կապրեն մեզանից հետո, թող Արևին և Հողին պարզ նայեն, թող չվրդովեն ջրերի անդորրը, թող Մարդու հանդեպ հանցանք չգործեն: Ի՜նչ մեղք է Երկիր մոլորակը... Մարդիկ ապրում են նրա վրա, և հանկարծ Հիտլերի պես մի խելագար այսօր ուզում է այն պայթեցնել... Մարդու վերքը կարելի է բուժել, հողի վերքն է անբուժելի: Ո՞վ է հողի բժիշկը: Ո՞վ է այն վերջին գյուտարարը, որ կվերացնի բոլոր զենքերն ու նրանց փոխարեն կարտադրի հաց, գիրք, նկար, երաժշտություն... Համո ջան, եթե ես մեռնեմ, իմացի՛ր՝ զոհվում եմ հանուն Հայրենի հողի, հանուն Մարդու և հանուն Գեղարվեստի»:

Իր գիտակցված մահով հավերժ անմահ է զոհված նկարիչը:

ՎԱՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Գրիգորյան Սասուն**—Անավարտ կտավներ (հատված «Մուսաները չլռեցին» գրքից), Սվ. արվեստ, Ե, 1978, № 12, էջ 44—45:
2. **Դզնունի Դանիել**—Հայ կերպարվեստագետներ, Ե, 1977, էջ 227:
3. **Ստեփանյան Գառնիկ**—Կենսագրական բառարան, Բ գիրք, Ե, 1981, էջ 102:
4. **Քոլոզյան Բաբկեն, Հարությունյան Վահան**—Նկարիչներ (զոհված հայ նկարիչների մասին), Սովետ. արվեստ, 1958, № 8, էջ 55—58:
5. **Կուրդոյան Եղիշե**—Կտավները մնացին անավարտ, ՍՀ, 9 մայիսի 1974, էջ 4:
6. **Գրիգորյան Սասուն**—Մուսաները չլռեցին, ԳԹ, 5 մայիսի 1985, № 18, էջ 2:

ՈՒՍՏԱ ՄԱՆՈՒԿԸ

ՄԱՆՈՒԿ ՎԱԽԹԱՆԳԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (1907—1943)

1936 թվականին Երևանում, երբ Հայպետհրատը պատրաստվում էր հրատարակել Ն. Օստրովսկու «Ինչպես է կոփվում պողպատը» և Մ. Զավախիշվիլու «Արսեն Մարաբելդի» գրքերը, գրաֆիկ Մանուկ Հարությունյանը հրատարակչության գեղարվեստական գրականության բաժնի վարիչ Եղիշե Չարենցին առաջարկեց իր համեստ մասնակցությունը: Չարենցը չմերժեց: Այդ գրքերը լույս տեսան Մանուկի ձևավորմամբ: Բազմաթիվ գրքերի, լրագրերի («Ավանգարդ»), ամսագրերի («Հոկտեմբերիկ») և պլա-

կատների նկարչական բարձրորակ գրաֆիկան և ձևավորումները այսօր էլ բարի նախանձով են հիշեցնում Մանուկ Վախթանգի Հարությունյանին կամ, ինչպես մտերիմներն են կոչել նրան, Ուստա Մանուկին: Ծնվել է նա 1907 թվականին Սուրմալուի գավառի Կողբ գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում: ԽՍՀՄ նկարիչների միության մեջ ընդունվելու առթիվ 1938 թ. դեկտեմբերի 15-ին գրած իր ինքնակենսագրականում կարդում ենք. «Ինձ խնամել և մեծացրել է պապը՝ հայրիկիս հայրը, որովհետև հայրս իր ամբողջ կյանքը անց է կացրել պանդխտության մեջ: 1918 թ. գաղթելով Սուրմալուից՝ ապրում եմ Երևանում: Հաջողվեց ինձ միայն 1920 թվականին, Հայաստանի խորհրդայնացումից հետո, մտնել դպրոց և սովորել գրագիտություն: 1921 թ. մտել եմ պատկոմական կազմակերպության շարքերը, որտեղ դաստիարակվել եմ. 1925 թ. կոմսոմոլ եմ...»: Մանուկ Հարությունյանն իր մասնագիտական կրթությունը ստացել է 1924—1929 թվականներին Երևանի գեղարդ տեխնիկումում: Այնուհետև սովորել և ավարտել է (1929—1934 թթ.) Մոսկվայի կերպարվեստի ինստիտուտը, ստացել գրաֆիկ-նկարչի որակավորում: Երևանում նրան դասավանդել են Հակոբ Կոջոյանն ու Միքայել Արուտչյանը, իսկ Մոսկվայում՝ Ֆավորսկին, Դ. Մոորը, Ս. Գերասիմովը, Ա. Դեյնեկան և ուրիշներ: Որպես ՕՄԱԽՐ-ի ակտիվ անդամ Ուստա Մանուկը 1928 թվականին առաջին անգամ մասնակցում է մամուլի նկարիչների «Պրավդայի» կազմակերպած մոսկովյան ցուցահանդեսին (ներկայացրել է 10 աշխատանք): Նույն տարի Երևանում (տես նկարչի անձն. թերթիկը, էջ 2, ՀՆՄ արխիվ), իսկ մի տարի անց Մոսկվայում նա ցուցադրում է երեսուն ստեղծագործություն՝ արժանանալով այցելուների ուշադրությանը: Ծնորհաշատ նկարչի «Քրդուհին» և «Լեռնցիները», «Մուրճ և մանգաղ» գործարանը Մոսկվայում», «Կարմիր հեծելազոր», «Աշտարակցի կինը», «Հետախուզություն» և այլ ստեղծագործություններ ժամանակի արվեստագետների կողմից լուրջ գնահատականի են արժանացել: Հայաստանի պետական պատկերասրահում շարունակում են գոյատևել Մ. Հարությունյանի «Ալավերդու երիտասարդ հանքափորները» (ֆոնդ—1178) և «Արթիկտուֆի արտահանումը» (ֆոնդ—1179) աշխատանքները: 1928, 1931, 1939 թթ. Մոսկվայում և 1928, 1929, 1931, 1934, 1939, 1940 թվականներին Երևանում նկարիչ-գրաֆիկ Մանուկ Հարությունյանը մասնակցել է «Հայաստանի երիտասարդ նկարիչների», «Հայկ. ԽՍՀ կերպարվեստը 11 տարում», «Հայկ ԽՍՀ նկարիչների և քանդակագործների ստեղծագործությունների շրջիկ ցուցահանդես», «Գրաֆիկական մասնաճյուղի հաշվետու ցուցահանդես», «Հայկ. ԽՍՀ կերպարվեստը քսան տարում» և բազմաթիվ այլ ցուցահանդեսների: 1934 թ. Երևանում հրատարակված «Խորհրդային Հայաստանի կերպարվեստը» գրքում ընթերցողը կհանդիպի նաև նկարչի մի քանի պլակատների (էջ՝ 82, 83), որոնցում պարզ երևում են երեսնական թվականների նկարչական մտածողության և հասարակական առօրյային արձագանքելու գեղարվեստական արտահայտչաձևերը: Ուստա Մանուկի «Պիոներների ճամբարը» ստեղծագործությունը զարդարել է «Հոկտեմբերիկ» ամսագրի 1938 թ. № 8-ի չորրորդ էջը: Գունավոր է, կոմպոզիցիոն լուծմանը նպաստել են հեղինակի սուր տեսողականությունն ու գույների խաղաղ ու պարզ համաձուլվածքը, որոնք և պիոներական առօրյային հաղորդել են մտերմիկ ու տաք կոլորիտ, ներքին ուրախություն և փոխմերձեցում: Մանուկ Հարությունյանի մի այլ ստեղծագործություն ետմահու տեղ է գտել «Տվորչեստվո» ամսագրում (Մոսկվա, 1958 թ. № 3, էջ 9): Նկարչի անձնական թերթիկի վկայությամբ իր մի քանի գրքային ձևավորումները հանգրվանում են Մոսկվայի Արևելյան մշակույթի թանգարանում:

Ոչ միայն որպես նկարիչ-գրաֆիկ, այլև որպես հմուտ մանկավարժ և հասարակական ակտիվ գործիչ, գեղագետ, ձևավորող և ժուռնալիստ Մանուկ Հարությունյանը շրջապատում մեծ հարգանք և սեր է վայելել. 1934—1936 թթ. նա Երևանի շինարարական տեխնիկումում գծագրություն է դասավանդել, 1936—1938 թթ. եղել է նկարչության և գրաֆիկայի ուսուցիչ Երևանի գեղարդ տեխնիկումում, իսկ հետագայում նրան հրավիրել են Երևանի արդյունաբերական (պոլիտեխնիկ) ինստիտուտ որպես գծագրության և գեղանկարի դասախոս՝ շինարարության և ճարտարապետության ֆակուլտետներում: Ստեղծագործական-մանկավարժական աշխատանքին զուգահեռ Ուստա Մանուկը մնում էր Հայպետհրատի և մանկական ու երիտասարդական թերթերի էնտուզիաստներից՝ իր գրաֆիկ գործերով

թրծում էր ու դաստիարակում աճող մի սերունդ՝ ներարկելով մատաղ սրտերում հայրենասիրության, քաջության, խաղաղության և մարդասիրության անշեջ հուրը, գույների լեզվով հավատացնելով, որ միշտ հաղթում են գեղեցիկը, բարձրը և բարին: Մինչդեռ միշտ չէ, որ այդպես է. 1943 թ. Հյուսիսային Կովկասում գերմանական ֆաշիզմի դեմ մղվող կենաց և մահու հերոսամարտում խոցվեց 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայի հետևակային վաշտի ավագ լեյտենանտ Մանուկ Հարությունյանը Մոզդոկն ազատագրելիս: Դիվիզիայի հայ մարտիկները և 46-րդ բանակի քաղաշխատողներից ոմանք վշտով հողին հանձնեցին իրենց ակումբի և գինվորական թերթի սիրված նկարչին: Պահպանվե՞լ են արդյոք զոհված նկարչի ռազմանկատային ստեղծագործությունները, թե ոչ, մեզ անհայտ է:

Ուստա Մանուկը ամուսնացած էր, ապրում էր Երևանում (Մարատի փող. № 4): Ո՞վ է եղել նրա կինը, ունեցե՞լ է նա երեխաներ, թե՞ ոչ, ո՞ւմ մոտ են պահվում զոհված նկարչի նամակները, նկարներն ու արխիվը՝ առայժմ մեզ անհայտ է:

ՄԱՆՈՒԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Գրիգորյան Սասուն**—Ուստա Մանուկը (նրա մասին և լուսանկարը), ԳԹ, 13 հուլիսի 1984, № 29, էջ 4:
2. **Գրիգորյան Սասուն**— Անավարտ կտավներ (հատված «Մուսաները չլռեցին» գրքից), Սովետ. արվեստ, Ե., 1978, № 12, էջ 44—46:
3. **Դզնունի Դանիել**— Հայ կերպարվեստագետներ, Ե., 1977, էջ 260:
4. **Ստեփանյան Գառնիկ**— Կենսագրական բառարան, Բ գիրք, Ե., 1981, էջ 186:
5. **Քոլոզյան Բաբկեն, Հարությունյան Վահան**—Նկարիչներ (զոհված հայ նկարիչների մասին), Սովետ. արվեստ, 1958, № 8, էջ 57—58:
6. **Գրիգորյան Սասուն**— Մուսաները չլռեցին (կա նաև Մ. Հ.-ի մասին), ԳԹ, 5 մայիսի 1985, № 18, էջ 2:
7. **Սարգսյան Մինաս**—Սովետական Հայաստանի գրաֆիկան, Ե., 1981, էջ 58—60:
8. Библиографический словарь (Художники народов СССР), М., Искусство, том. I, 1970, стр. 206.

ՌԱԶՄԱՍԵՐԸ

ՌԱԶՄԱՍԵՐ ՎԱՂԱՐՇԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (1924—1945)

Քանի-քանի՜ տաղանդներ կտար մեր ժողովրդին Հառիճը, եթե չլիներ պատերազմը, եթե հիտլերյան գնդակը չխլեր բանաստեղծներ Մերուժան Սահակյանի (Մեր-Սեր), Թադևոս Դավթյանի (Հառիճեցի), դերասան Հայկ Եղոյանի, ժուռնալիստ Ալիկ (Ալեքսանդր) Հովհաննիսյանի, ինքնուս նկարիչ Ռազմասեր Հարությունյանի և էլի շատ ու շատ երիտասարդ, շնորհաշատ տղաների ծաղկող կյանքի թելը:

Ռազմասեր Հարությունյանը Գալուստ Մեծավորի տոհմից էր, ըստ գյուղացիների պատմելու՝ մի հին, համբավավոր տոհմածնունդ, բարի, տաքարյուն, սրամիտ ու աշխատասեր, համեստ ու ամաչկոտ մի տղա, որն ամբողջ օրը «խելքը տվել էր թուղթ ու մատիտին»: Ու մինչ գյուղացիները իմացան, որ Ռազմասերի նկարները ցուցադրվել են Արթիկի պիոներտանն ու Լենինականի պիոներպալատում, որ նա շուտով պիտի գնա Երևան գեղարվեստի տեխնիկումում սովորելու, սկսվեց պատերազմը: Գալուստենց հինավուրց օջախը ռազմադաշտ ուղարկեց հայրեր և որդիներ Վաղարշին և Ռազմասերին, Խորենին ու Պարույրին: Վաղարշը զոհվեց Բելայա Ցերկովում, նրա եղբայրներ Գալուստն ու Խորենը՝ առաջինը հունգարական Բատրաշ գյուղում, երկրորդը՝ Մոսկվայի մատույցներում: Խորենի որդին՝ Պարույր Հարությունյանը, հանգչում է Ստավրոպոլում, իսկ Ռազմասերը՝ Վաղարշի նկարիչ որդին, Լենինականում, Բեբժա գետի հովտում, 1945-ի գարնանից: «Նա պետք է նկարիչ դառնար» ակնարկում համագյուղացի Ալ. Հովհաննիսյանը գրում է. «...Բորովկինը հարազատի պես էր ցավում Ռազմասերի համար, ուզում էր նրան հեռու պահել վտանգավոր դեպքերից: Զգուշացնում էր նաև ենթականերին. «Խնայե՛ք տղային, գիտե՞ք՝ ի՞նչ նկարիչ կդառնա»: Ռազմասերի համար նա,

Ռ. Հարությունյան, «Բենիամին Գալստյան» (մատիտանկար), 1944 թ.:

մի լեհ ընկերոջ օգնությամբ, ձեռք էր բերել գունավոր մատիտներ և թուղթ: Լեյտենանտի գետնատնակում, մի մեծ թղթապանակի մեջ խնամքով պահվում էին Ռազմասերի մատիտանկարները: Զինվորը հասցրել էր առանձին-առանձին պատկերել մարտկոցի անձնակազմի մեծ մասի դիմանկարները:— Այնուհետև «Մեր գյուղի տղերքը» գրքի 122-րդ էջում կարդում ենք:— Բորովկինը նորից մտաբերեց անցած օրվա դեպքը: Իր խնդրանքով Ռազմասերը փայտածուխով սպիտակ սավանի վրա վարպետորեն գծեց Հիտլերի ծաղրանկարը: Ֆյուրերի դեմքը կատաղություն էր արտահայտում, ճակատին իջած մազափնջից ֆաշիստական սվաստիկայով ոումբ էր կախված, ատամները պատկերված էին արկերի տեսքով, իսկ գլխավերևում կախաղանի օղակն էր...»:

Վասիլի Բորովկինի, Վադիմ Բելյուկովի խորհրդով Ռազմասերի այս ընկարչական էքսպրոմտը, փայտե շրջանակի մեջ, գիշերով տեղադրվում է թշնամու առաջացող գծի դիմաց՝ մի փոքր բլրի վրա: Ցայգալույսին հիտլերականները, տեսնելով ֆյուրերի ծաղրանկարը, սկզբում ծիծաղում են, հետո վախենում այդ ուղղությամբ խորհրդային ռազմիկների վրա կրակ բաց անել: Օգտվելով հարմար առիթից, Բորովկինի մարտկոցի ռազմիկները գնդացրային կրակ են տեղում դարանակալած թշնամու ոհմակի վրա, հրդեհի մատնում հակառակորդի զինապահեստը ու այնտեղից դուրս եկող բեռնված ավտոմեքենան: Ֆյուրերի այդ ծաղրանկարի և թշնամուն պատճառած մեծ զոհերի համար հատուցի ընկարիչ մարտիկը պարգևատրվում է իր ընկերների կողմից «մի տուփ մախորկայով»: Նկարիչ Ռ. Հարությունյանի սխրանքների փառավոր էջերը հարուստ են անմոռաց դեպքերով: Մահից առաջ նա ամեն կերպ ձգտել է օգնել կարմիրբանակայիններին և նոնակներ ու փամփուշտ տեղափոխող ավտոմեքենայի վիրավոր վարորդին: Տեսնելով, որ թշնամին հետևում է, անվեհեր հայորդին բեռնաթափել է ավտոմեքենան և 300 մետր քարշ տվել ռազմամթերքով լի չորս արկղ: Դիմացից հեռադիտակով նրան հետևող գերմանացի սպան գնդացրային կրակ է բացել: Ու մինչ լեյտենանտ Վ. Բորովկինի՝ մատակարարման մարտկոցի հայրենասերները կհասնեին Ռազմասերին օգնության, մեջքից մահացու վերք ստացած հայ քաջազունը հազիվ հասկացրել է. «Գազիկը» զինամթերքով քիչ այն կողմ է»:

«Հառիճավանք», «Զորավար Վարդան Մամիկոնյան», «Վարդավառ», «Զրաղացը ձորում», «Մակատամարտ», «Մեծ պապս» և բազմաթիվ այլ գեղանկարների հեղինակը մահից մի քանի օր առաջ հասցրել էր նամակով իր սիրտը բացել Հովհաննես հորեղբորը.

«Սիրելի հորեղբայր, շուտով թշնամուն կջախջախենք: Նա սովահար շան պես վիրավոր ու հևհև իր բունն է փախչում: Լեհական այս քաղաքում (անունը ռազմական գաղտնիքի պատճառով չեմ նշում) թշնամին աչքիս դեմ հրդեհեց մի թանգարան-պատկերասրահ: Մինչ մենք կհասցնեինք այն ազատագրել, ես տեսա, թե աչքիս դեմ ինչպես էր բոցերի, ծխի և մրի մեջ ճրճտում մի մեծ գեղանկար, մի մասը մի կերպ փրկեցի (ձեռքս մի քիչ այրվեց): Մի պահ թվաց, թե թուրքը մտել է մեր գյուղը և «Վարդավառս» է այրում, գժվեցի և ահա վրեժով լցված նորից մարտի եմ գնում: Արդեն հաղթանակը երևում է»: Եկավ հաղթանակը, բայց հայր և որդի Վաղարշ և Ռազմասեր Հարությունյանները բախտ չունեցան այն տեսնելու. հայրը զոհվեց Բելոռուսիայում, իսկ քսանամյա որդին՝ Լեհաստանում 1944-ին:

ՌԱԶՄԱՍԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Հովհաննիսյան Այբերտ—Մեր գյուղի տղերքը, I գիրք, Ե., 1987, Սովետ. գրող, էջ 119—125:

ՍԱՔՈՅԻՆ ՀՄՈՌԱՆԱՔ

ՍԱՐԳԻՍ (ՍԱՔՈ) ԲԱԳՐԱՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (1914—1942)

Ամեն անգամ Հայպետհրատում, ընկարչական ցուցահանդեսներում կամ այլուր հանդիպելիս հրատարակչության գեղարվեստական խմբագիր, ընկարիչ Օգսեն Ասատրյանը ինձ հիշեցնում էր.

— Ընկերոջս՝ Սաքոյին, չմոռանաք...

Օգսենի ընկերը Սարգիս Հովհաննիսյանն է: Նա ծնվել է 1914 թ. Կարսում: Երբ աչք բացեց, Արարատն էր իր դիմաց՝ Հայոց լեռնապարի թագուհին:

—Որդիս պիտի ընկարիչ դառնա և Արարատը ընկարի,— սիրում էր կրկնել կարսեցի Բագրատը: Մի տարի անց պատերազմ եղավ: Ծատերի պես Հովհաննիսյանների գերդաստանն էլ մազապուրծ հանգրվանեց Ախուրյանի այս ափին՝ Ալեքսոլում: Տեղի ընկարչական ստուդիան ավարտելուց հետո Սարգիսը տեղափոխվում է Երևան, ընդունվում գեղարդ տեխնիկում (Վ. Գալֆենյանի դասարան): 1934 թ. շնորհաշատ և ուշիմ հայորդին ավարտում է տեխնիկումը և մի տարի աշխատելուց հետո մի խումբ դասընկերների հետ (նրանց թվում և Օգսեն Ասատրյանը) բախում Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայի դուռը: Այստեղ Սարգիսը մասնակցում է ուսանողական ցուցահանդեսի՝ ներկայացնելով «Նևան գիշերով» յուղաներկ կտավը: 1937 թ. մեծ Հոկտեմբերի 20-ամյակի առթիվ պրոֆ. Վ. Սերովի հայ սանը նորից շահում է առաջնություն: Կյանքն ու տաղանդը օրավուր ծաղկեպսակ էին հյուսում ուսանող տղայի անվան շուրջ: 1940 թ. ավարտելով ակադեմիան՝ Ս. Հովհաննիսյանն ուզում էր մնալ Լենինգրադում, էլ ավելի կատարելագործվել:

Բռնկված պատերազմի բոցերը լափեցին նաև երիտասարդ հայորդու բնանկարներն ու դիմանկարները: Ինչպես բոլորը, Սարգիսը ևս դուրս եկավ պաշտպանելու հեղափոխության օրրանը: Մարտերն անհավասար էին: Պաշարված քաղաքում, բլոկադայի ծանր օրերին, աչքը Նևայի ջրերին հառած, մտապատկերում մի կապուտակ Սևան, մի վեհ Մասիս և հայրենի տուն, խոցվեց երկնի ու երկրի սիրահար ընկարիչ քաջորդին: Դա 1942-ին էր:

ՍԱՔՈ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Գրիգորյան Սասուն**—Անավարտ կտավներ, Սովետական արվեստ, Ե., 1978, № 12, էջ 43:
2. **Դգնունի Դանիել**—Հայ կերպարվեստագետներ (համառոտ բառարան), Ե., 1977, էջ 278:
3. **Զոլոզյան Բաբկեն, Հարությունյան Վահան**— «Նկարիչներ» (զոհված հայ նկարիչների մասին), Սով. արվեստ, 1958, № 8, էջ 55—58:

Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայի ուսանողներ (ձախից) Սարգիս Հովհաննիսյանն ու Օգսեն Ասատրյանը, 25 հունվարի 1937 թ.:

ԼԵՅՏԵՆԱՆՏ ՆԿԱՐԻՉԸ

ԶՈՐԻԿ
ՄԻՔԱՅԵԼԻ
ՄԱԴԱԹՅԱՆ
(1921—1943)

1944 թ. մարտին Երևանի Գնունի փողոցի 14 շենքի № 1 բնակարանի հասցեով Կուրսկի մարզից մի նամակ ստացվեց: Միքայել Մադաթյանը ուզեց կնոջից՝ Թամարից թաքուն այն բացել, չէ որ նամակը մի անծանոթ կին էր գրել, այն էլ՝ կրակային գծից: Դեռ չբացած՝ հայրական սիրտը վատ բան էր գուշակում. չլինի՞ թե... Չհամբերեց, հենց կնոջ ներկայությամբ զգույշ պատռեց ծրարը, և նրա կմկմացող շուրթերը հազիվ լսելի արտաբերեցին.

«Զորիկի ծնողներին՝ անծանոթ Դուսյայից:

Զորիկի սիրելի ծնողներ, ստացա ձեր ուղարկած նամակը և իմացա, որ Ձեզ համար անսպասելի իմ բոթաբեր նախկին նամակը ստացել եք: Աշխատանքի վայրում էի, երբ ինձ տվեցին ձեր նամակ-հարցումը: Այն բերեցի տուն, ցույց տվեցի ծնողներիս: Մայրս լաց եղավ, ասաց, որ Զորիկի խեղճ ծնողները վշտից կմեռնեն: Հիմա էլ՝ այդ ծանր վշտից ութ ամիս հետո, երբ գրում եմ այս նամակը, մենք տխուր լուր ստացանք. հայրս է վիրավորվել, տեղափոխել են հոսպիտալ՝ հետագա բուժման համար:

Զորիկի սիրելի ծնողներ, դուք գրել եք, որ ես ձեզ նամակով ավելի մանրամասն գրեմ ձեր զոհված որդու՝ Զորիկի մասին: Նա հանուն սոցիալիստական հայրենիքի մարտում ցուցաբերեց անկարագրելի հերոսություն և խիզախություն: Երբ փառապանծ Կարմիր բանակը ազատագրեց մեր հողերը գերմանական բարբարոսներից, հայրս ճանապարհաշինարար բրիգադիր էր, աշխատում էր խճուղային ճանապարհների վրա: Տուն վերադառնալիս նա տեսնում է ձյան վրա ընկած, սպանված քսան խորհրդային զինվոր: Խիղճը տանջում է, չէ որ ինքն էլ է մարտերի մասնակցել: Մոտենում է (ինչ համարձակությամբ. շուրջ բոլորը դարանակալած ֆաշիստներ են լինում), ձյունը մաքրում, ջուր է բերում, բայց՝ ապարդյուն: Զորիկը ընկած է լինում ձյան մեջ՝ շինելի վրա, սապոգները հագին, առանց գլխարկի: Բացի այն ամենից, ինչ ուղարկել եմ Ձեզ, մոտը ուրիշ փաստաթուղթ կամ լուսանկար չի լինում: Զորիկը վիրավորվել էր կողքից 1943-ի փետրվարին: Արյան հոսքը ձմեռ ժամանակ, երբ թշնամին վերևից կրակ էր թափում, հնարավոր չի եղել կանգնեցնել: Մարտերից երեք օր հետո, երբ հայրս հանդիպել է նրան, արդեն անհնար էր վերակենդանացնել: Զորիկը ոչ մի բառ չի խոսել: Մահանալուց հետո հայրս ուզեցավ Զորիկի դիակը տեղափոխել, բերել ձեզ մոտ, ցավոք նրան բանակ կանչեցին, ես էլ որոշեցի ձեր որդու մասին գոնե այսքանը ձեզ հայտնել:

Սիրելի ծնողներ, Ձեր որդի Զորիկը սոցիալիստական հայրենիքի հանդեպ ցուցաբերել է բացարձակ հերոսություն և խիզախություն: Նա մարտական շքանշաններ և մեդալներ ուներ ամրացված իր զինվորական բլուզին: Ես կարծում եմ, որ մեր զինվորները Ձեր սիրելի որդու, ավագ լեյտենանտ Զորիկի վրեժը կլուծեն գերմանական բարբարոսներից: Զորիկի ծնողներ, եղբայրներ ու քեռիներ, բոլոր հարազատներ, ցանկանում եմ Ձեզ ամենայն բարիք և ամենագլխավորը՝ առողջություն:

Բարևներով՝ **Դուսյա**

Իմ հասցեն է՝

Կուրսկի մարզ, Ն. Իսկալ կայարան, Վելիկո-Միխայլովսկի շրջան, գյուղ Կուզկինա.

Նովիկովա Եվդոկիա Գավրիլովնա»:

Ո՞վ է նման հերոսություն և սխրանքներ գործած Զորիկը, որի եղերական մահը նկարագրող այս նամակը նրա կրտսեր եղբոր՝ Հրանտի, ձեռքն է անցել Մեծ հաղթանակից քառասուն տարի հետո:

Զորիկի (Զորայր, Զարիկ) նախնիք սերում են ԼՂԻՄ-ի Ասկերանի շրջանի Չանախչի գյուղից, ռուսական բանակի փառաբանված հայազգի զորավար, գեներալ-լեյտենանտ Վալերիան (Ռոստոմ) Գրիգորի Մադաթովի տոհմից: Զորիկի հայրը՝ Միքայել Ռոստոմի Մադաթյանը, եղել է ինժեներ-մեխանիկ, նախապատերազմյան տարիներին հանրապետության առաջավոր մասնագետներից էր: Մայրը՝ Թամարա Վասակի Մադաթյանը, մայրաքաղաքում սիրված, վաստակաշատ բժշկուհի էր: Երկուսն էլ ծանր տարան իրենց նկարիչ որդու վաղաժամ մահը և պատերազմից հետո վախճանվեցին: Զորիկի միակ քույրը՝ Սոնան, ևս այսօր չկա: Ապրում են միայն կրտսեր եղբայրները՝ Մեծ հայրենականի մասնակից, նախկին հրաձիգ Արայիկ Մադաթյանն ու ինժեներ-շինարար Հրանտ Մադաթյանը (այժմ Հայսանտեխմոնտաժ տրեստի 3-րդ շարասյան գլխ. ինժեներ): Հրանտի տանը առաջին հայացքից այցելուի ուշադրությունը գրավում է պատից կախված գեղարվեստական մի կտավ (80×80 սմ): «Ո՞վ է» հարցը միշտ արցունք է ծնում տանտիրոջ աչքերում: «Եղբորս ինքնանկարն է: Նրանից մնացած միակ մասունքը: Ինքը զոհվել է Մեծ հայրենականում»,— միայն այսքանն է ասում: Իսկ որ Զորիկը հենց այդ «Ինքնանկարով» և «Արարատյան դաշտը և Մասիսները», «Սևանա լիճը և կղզին», «Զերմուկի նոր աղբյուրը շատրվանելիս», «Արաքսը Նախիջևանից» և բազմաթիվ այլ կտավներով 1938—1940 թվականներին մասնակցել է Երևանում, Թբիլիսիում, Մոսկվայում տարբեր առիթներով կազմակերպված ուսանող նկարիչների փնջային ցուցահանդեսներին և մրցանակներով ու պատվոգրերով վերադարձել, այդ մասին երևի Հրանտը չգիտի, չէ որ նա այն ժամանակ փոքր է եղել:

Ծնվել է Զորիկը Երևանում 1921 թ. մարտի 1-ին: Սովորել է Շահումյանի անվան միջնակարգ դպրոցում: Դասընկերոջ՝ Հակոբ Եկմալյանի հետ, դեռ դպրոցական հասակից մասնակցել է «Մեր պատանի ստեղծագործողները» հանրապետական օլիմպիադային, արժանացել Մոսկվայում (ԺՏՆՑ) բացված «ՀԼԿԵՄ-20» ցուցահանդես գործուղվելու պատվին:

1937 թ. Զորիկը ընդունվում է Երևանի գեղարդ տեխնիկումի գեղանկարչության բաժին: Վ. Գալֆեճյանի, Կ. Սիմոնյանի, Ց. Ազիզյանի ուշիմ և գերազանցիկ սանը, ինչպես իր դասընկերներ Սուրիկ Սաֆարյանն ու Վանիկ Սևաչերյանը, Պապին Գյոդակյանն ու Համլետ Գեվորգյանը, դիպլոմային քննություններից հետո ինքնակամ զինվորագրվեց հայրենիքի պաշտպանությանը:





Եվդոկիա Նովիկովայի նամակը Զ. Մադաթյանի ծնողներին:

— Ախր, ա՛յ որդի, քո ձախ ականջը չի լսում, ֆուտբոլ խաղալու ժամանակ վնասել ես... ինչո՞ւ ես զինկոմիսարիատի բժիշկներից թաքցրել, քեզ բանակ չեն տանի, մի՛ գնա...— մոր խոսքերը Զորիկին ոչ միայն իր վճռից ետ չպահեցին, այլև պատճառ դարձան վրդովմունքի.

— Եթե ես չգնամ, էն մյուսը չգնա, ամեն մեկը մի պատճառաբանությամբ իր գլուխը պահի, մի քանի օր հետո Հիտլերը կմտնի Երևան, ...Ների՛ր, մայրի՛կ, գնալո՛ւ եմ. ես իմ ընկերներից ետ չեմ մնա...

1941-ի հուլիսի 10: Երևանի երկաթուղու կայարանում իրարանցում է. ողջագուրանք, համբույր, լաց, պատգամ:

«Կգանք հաղթանակով,— գնացքի լուսամուտից հավաստիացնում է Զորիկը մորը և խընդրում, —մա՛մ ջան, լաց մի՛ լինիր, ես ողջ և առողջ ետ կգամ: Դու ներկեր ճարիր ինձ համար, վրձին ու կտավ: Հիմա, հո գիտես, արդեն պրոֆեսիոնալ նկարիչ եմ: Հենց վերադառնամ, առաջինը քո պորտրեն եմ նկարելու...»:

Մի քանի օր անց բժշկուհի Թամարա Մադաթյանը կյանքում առաջին անգամ եռանկյունի նամակ ստացավ. Զորիկից էր, գրել էր Ավչալու կայարանից: Թբիլիսիի հրաձգային ուսումնարանում սովորեց մի քանի ամիս, մասնակցեց զինակոչիկ ուսանողների նկարչական ցուցահանդեսին ու մի օր էլ հրաժեշտ տվեց գրքերին, քարտեզներին, թղթերին, ուսումնական զենքերին և վրձնի փոխարեն ավտոմատը ձեռքին դուրս եկավ թշնամու դեմ: Հյուսիսային Կովկաս, Կուբան, Ստալինգրադ ռազմաճակատային գծում լեյտենանտ Զորիկ Մադաթյանը իր գումարտակի խիզախ մարտիկների հետ քանի-քանի անգամ է գնդակոծել ու ռմբակոծել թշնամու մահաբեր տանկերն ու ռազմամթերք տեղափոխող տրանսպորտը, ինչպիսի ծանր մարտերով է հասել Օրյոլ—Կուրսկ: Ստալինգրադյան ջարդերից հետո պարտությունն ու նահանջը անպարտելի հորջորջվող հիտլերյան զորքերի ուղեկիցն էին: Նրանք իրենց հետ դարձի ճանապարհին կրակ էին բացում ոչ միայն խորհրդային սպանված զինվորների վրա, այլև հրդեհում էին տուն և դպրոց, գործարան և մանկապարտեզ, մարդկանց այրում էին ողջ-ողջ, կրակում էին անգամ հրդեհված գոմերից փախչող անասունների վրա, գերիներին սպանում էին տեղնուտեղը, վայրագությունն ու վայրենությունը հասել էին գերագույն աստիճանի: Այսպիսին էր դրությունը Կուրսկի մարգի Վերխնի-Միխայլովսկի շրջանում և Կուզկինա խուտորում 1943-ի ձմռանը: Խորհրդային ռազմիկների հուժկու հարվածներից թշնամին խուճապահար փախչում էր: Նահանջելիս ուժեղ դիմադրություն էին ցույց տալիս իրենց ջախջախվող զորամիավորումներից ետ ընկած ջոկերն ու այստեղ-այնտեղ թաքնված հիտլերականները: Թվում էր, թե շրջապատը անվտանգ է: Ցավոք դարանակալած մարդասպանները թաքստոցից կրակ բացեցին Զորիկ Մադաթյանի և նրա ռազմընկերների վրա: Ու մինչ փամփուշտը վերջացած մարտիկներին օգնության կհասներ 76-րդ հրաձգային դիվիզիայի հետախուզական ջոկատը, թշնամուն հաջողվեց գործել իր սև ոճիրը. սպանել ավագ լեյտենանտ Զորիկ Մադաթյանին և իր տասնինը քաջերին, որոնց մահից միայն երեք օր հետո տեղացիները հայտնաբերեցին հաստ ձնաշերտերի տակ, դուրս բերեցին և թաղեցին Կուզկինա խուտորի դպրոցի բակում:

Եղերական այս դեպքից քառասուներկու տարի հետո Դուսլայի նամակի հետքերով ինժեներ-շինարար Հրանտ Մադաթյանը գնացել, գտել է իր եղբոր՝ Զորիկի շիրիմը, գտել է նրան այստեղ հողին հանձնող Գավրիլ Նովիկովի դստերը՝ արդեն կյանքի 70-ը թևակոխած Եվդոկիա Գավրիլովնա Նովիկովային (այժմ՝ Լոմակինա): Այդ նրա և երախտապարտ Կուզկինայի դպրոցականների ու բնակիչների շնորհիվ է, որ տարին բոլոր, ցուրտ լինի թե շոգ, Զորիկի և իր ռազմընկերների հուշարձանին թարմ ծաղիկներ են բուրում:

«Դուսիայի՝ հեռավոր քրոջս հետ, այս տարի հայկական կարմիր տուփից Զորիկի և Կուզկինայի եղբայրական գերեզմանում հանգչող մարտիկների վրա Հուշակոթող եմ կանգնեցնելու... Սա արդեն որպես կրտսեր եղբոր իմ պարտքը է...»:

Բաժանվում ենք Հրանտից: Եվ կարծես պատից նայող Զորիկի «Ինքնանկարն» ասում է.

— Շնորհակալ եմ, ինձ չեք մոռացել:

ՋՈՐԻԿ ՄԱԴԱԹՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Դգնունի Դանիել**, Հայ կերպարվեստագետներ (համառոտ բառարան), Երևան, 1977, էջ 299:
2. **Գրիգորյան Սասուն**, Անվարտ կտավներ, ՍԱ, Ե., 1978 թ., № 12, էջ 47:

...ՈՐ ՀՐԱՁԴԱՆԸ ՀԼԱՑԻ

ԳԵՎՈՐԳ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ (1919—1944)

«Էս կյանքում՝ Վան, էն կյանքում՝ դրախտ,— սիրում էր կրկնել իր ծննդավայրի կարոտից մխացող Քրիստափոր Մանդակունին կնոջը՝ Սիրանուշին, պատգամելով,— թե պատահի շուտ մեռնեմ, ամեն ինչ կանես, որ Գևորգս իր նպատակին հասնի, նկարիչ դառնա»:

Նկարչական հակումը դեռ մանկուց բախտորոշ եղավ թե՛ Գևորգի, թե՛ իր կրտսեր եղբոր՝ Վաղինակի համար: Գևորգը, որ Երևանում էր ծնվել 1919-ին և իր պապի ու հոր ծննդավայրը չէր տեսել, մի օր հորը ցույց է տալիս ջրաներկ մի փոքրիկ գունանկար՝ ծով և կղզի:

— Աղթամա՛րն է,— հուզված ձեռքը նկարին է պարզում վանեցի նախկին ուսուցիչն ու համբուրում որդու ճակատը:

Մ. Գորկու անվան միջնակարգ դպրոց: Ընկերություն Էսպերանս Բայազցյանի հետ: Երկուսով հաճախում են Ղ. Ղուկասյանի անվան նորաբաց պիոներդպրոցականների պալատ, նկարչական խմբակ, աշակերտում երիտասարդ քանդակագործ Սամվել Մանասյանին: Հայաստանի խորհրդայնացման 15-ամյակի օրերին 16-ամյա Գևորգի «Մեր բակը» յուղանկարը շահում է առաջնություն: Երկու տարի անց՝ 1937-ին, նա ընդունվում է Երևանի գեղարդ տեխնիկում: Բարկեն Քոլոզյանի և Հմայակ Ավետիսյանի հոգատար ձեռքերի տակ օրավուր ծաղկում է ուսանող նկարչի տաղանդը, կատարելագործվում՝ նրա վրձինը: Գևորգը, ինչպես իր դասընկերներ Վանիկ Կաժոյանը և մյուսները, «Սասունցի Դավթի» 1000-ամյակի նախօրեին ստեղծում է «Խանդութ Խաթուն», «Գառնարած Դավիթը», «Մհերը գնում է որսի» և այլ սյուժեներով մի քանի գունանկարներ:

— Եկող տարի ցուցահանդեսի կմասնակցենք,— զրույցի էին բռնվել Գևորգն ու Էսպերանսը, երբ ուսումնարանի տնօրեն Ներսես Իսրայելյանը ձեռքը դրեց իրեն չնկատած նկարիչ տղաների ուսին և ժպտալով ավելացրեց.

— Հաջողություն եմ ցանկանում...

Ու մինչ կգար հաջողությունը, Գևորգը զինակոչիկ դարձավ:

1939 թ. նոյեմբերի 24: Ի՞նչ իմանար Գորկու անվան դպրոցի սանը, որ ինքը, իր դպրոցական ընկերներ և պիոներպալատի սաներ Մարսել Մարտիրոսյանը, Անդրանիկ Տոնոյանը, Ղարիբ Ղարիբյանը, Օսիկ Փափուջյանը, Մուկուչ Բաղրամյանը, Սուրիկ Մուսախանյանը, Վիգեն Երիցյանն ու Միշա Խանլարյանը կգնան ու կզոհվեն: Ի՞նչ իմանային նկարիչներ Գևորգն ու Էսպերանսը, որ էլ չեն տեսնելու իրենց դասարանցի բանաստեղծին՝ Կաղլեն Մելիքսեթյանին, որ թշնամու ականը մի օր կխլի այնքան սիրելի Վահագն Ղարագյոզյանի, Մուկուչ Պապանյանի, Ռաֆիկ Ստեփանյանի, Լևոն Աբրահամյանի, Սաշիկ Մկրտչյանի, Կիմ Պետրոսյանի, Միհրան Միրիջանյանի կյանքի թելը: Ի՞նչ իմանային նրանք, որ պիոներպալատում տարիներ անց (1961 թ. մայիսի 9) «Փոխարինողներին փոխարինողներ են գալիս» ավանդական հուշ օր կհիմնվի և իրենց անունները երախտագիտությամբ ու սիրով կհիշեն իրենց ուսուցիչներն ու դասընկերները: Ինչ իմանային, որ նախկին ճակատային-ներ, պիոներական բազայի (դրուժինայի) նախկին նախագահներ, բանաստեղծ-դասախոս Ռաֆիկ Հարությունյանը, մանկավարժ, պիոներպալատի տնօրեն Սարգիս Դարբինին (Մնացականյան), ջոկատավարներ Ազգուշ Պետրոսյանն ու Սվետլանա Հեքիմբաշյանը թշնամու գնդակից կյանքից վաղաժամ հեռացած իրենց ընկերների և սաների համար կհեկեկան, կմտաբերեն նրանց և բոլորի անունները կգրանցեն Նելսոն Ստեփանյանի անվան պիոներական դրուժինայի պատվո մատյանում: Ի՞նչ իմանար Գևորգ Մանդակունին, որ տարիներ հետո երևանցի մի աղջնակ՝ անունը Լաուրա Վարդանյան, կդառնա ՀԼԿԵՄ Սպանդարյանի շրջկոմի առաջին քարտուղար և պատվո տողանի ժամանակ, Լենինի հրապարակում, կշշնջա.

— Հավե՛րժ փառք ֆիզիկական և հայրենա-

կան պատերազմներում գերմանական ֆաշիզմի դեմ հերոսաբար մարտնչած, Մոլդավիայի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Լեհաստանի ազատագրության համար բազմաթիվ անգամներ վիրավորված, նախկին սահմանապահ, հետո ակադեմետային վաշտի հրամանատար մեր համաքաղաքացի, նկարիչ և ռազմիկ Գևորգ Քրիստափորի Մանդակունուն...

Թեև պատերազմը չթողեց, որ ծաղկեն Գևորգի պեյզաժները, նատյուրմորտները, դիմանկարներն ու կոմպոզիցիոն ստեղծագործությունները, բայց կյանքը այսօր էլ աճեցնում ու ծաղկեցնում է նրա անունը, հիշատակն ու սխրանքը՝ հաստատելով պատերազմից 16 օր առաջ գրած անվեհեր հայորդու նամակի սրբազան տողերը... «Եթե մեկը հայրենիքի համար կըռվելով է մահանում կամ զոհվում, նա անմահանում է: Ու եթե մի օր չեն ցուցադրվելու իմ կտավները՝ ինձանից անկախ, ապա թող ցուցադրվի մեր սխրանքը՝ մենք կռվել ենք և զոհվել, որ ոչ մի թշնամու ոտք չմտնի Արարատյան դաշտ, որ Սևանը ռումբերից չպղտորվի, որ Հրազդանը չլացի»:

ԳԵՎՈՐԳ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՒ ՄԱՍԻՆ

1. **Արրահամյան Արտ.**— Նրանք երիտասարդ մնացին, Ե., 1971 թ.:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԿԱՐԻՉԸ

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1920—1942)

Կոնստանդին Մարգարյանը թեև նկարչական կրթություն չէր ստացել, բայց ինքնակրթությամբ ետ չէր մնում ժամանակի երիտասարդ թատերական նկարիչներից: Դեռևս Երևանի Աբովյանի անվան դպրոցում, հետագայում էլ պոլիտեխնիկական ինստիտուտում ուսանելիս նա սիրով է ձևավորում պիոներական դրուժինայի և ուսանողական պատի թերթերը: Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետի ուսանող էր, երբ որպես նկարչի օգնական, հետո նկարիչ-ձևավորող աշխատանքի անցավ Երևանի ադրբեջանական, հետագայում էլ ռուսական թատրոններում: Դ. Պրիստլիի «Վտանգավոր շրջադարձի» (ռեժ.՝ Յ. Կրակոպոլսկի) նկարչական ձևավորումը (1940 թ.) ռուսական թատրոնում դարձավ քսանամյա ստեղծագործողի դեբյուտը, որն ընդունվեց գոհունակությամբ: Հետո նա տեղափոխվեց Լենինականի պետթատրոն: «Ժայռը» (5/2—40 թ.) դարձավ նրա լենինականյան առաջին բեմական ձևավորումներից մեկը: Այն ջերմորեն ընդունեց ռեժիսոր Վ. Թերզիբաշյանը և Կոստյային խորհուրդ տվեց «չթողնել Լենինականը...»: 1941-ին Կ. Մարգարյանը ձևավորեց Ալեքսանդր Աֆինոգենովի[1] «Մաշենկան»: Լենինականի թատրոնում շնորհաշատ բեմանկարիչը ինքատիպ ոճով, գույների նրբին ընտրությամբ և պիեսի բովանդակությանը հարազատ արտահայտչամիջոցներով ներկայացրեց «Օղակում» պիեսը, որի համար անվանի ռեժիսոր, դերասան և դրամատուրգ Վ. Վաղարշյանը հեղինակային իր շնորհակալությունն ու գոհունակությունը հայտնեց երիտասարդ նկարչին: Կոնստանդինին այլ ճակատագիր էր սպասվում. նա չհասցրեց Լենինականի թատրոնում «մնաք բարով» ասել իրեն այնքան գրկաբաց ընդունող Արշակ Բուրջալյանին, Արտավազդ Փաշայանին, Ժան Էլոյանին, Ալ. Արաքսմանյանին և այլոց, որոնց հետ նոր-նոր ծանոթացել էր և, նկարչական ռոմանտիկայով տարված, բազմաթիվ էսքիզներ հյուսել, որ մի օր դրանց կյանք տա: Ամեն ինչ անավարտ մնաց. մարտադաշտից Կոնստանդին Մարգարյանը չվերադարձավ և իր ուսումնառությունը չշարունակեց պոլիտեխնիկական ինստիտուտում: Նրա վերջին ձևավոր կտավը դարձավ հայրենի հողը, որը ներկվեց 22-ամյա նկարչի հայրենանվեր արյունով:

[1] Ալ. Աֆինոգենովը ևս զոհվեց Մեծ հայրենականում:

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Գրիգորյան Սասուն**—Անավարտ կտավներ (հատված «Մուսաները հլոեցին» գրքից), Սովետ. արվեստ, Ե., 1978, № 12, էջ 48—49:
2. **Դզնունի Դանիել**— Հայ կերպարվեստագետներ (համառոտ բառարան), Ե., 1977, էջ 315:
3. **Ստեփանյան Գառնիկ**—Կենսագրական բառարան, հատոր Բ,, Ե., 1981, էջ 304:
4. **Գրիգորյան Սասուն**— Ռազմաճակատը՝ վերջին բեմ, ԳԹ, 11 մայիսի 1979, էջ 4:
5. **Գրիգորյան Սասուն**—Հայրենի հողը՝ վերջին բեմ, Ավ., 9 մայիսի 1982, էջ 4:
6. **Քոլոզյան Բաբկեն, Հարությունյան Վահան**—Նկարիչներ (զոհված հայ նկարիչների մասին), Սովետական արվեստ, 1958, № 8, էջ 55—58:
7. Русский театр имени К. С. Станиславского XXX лет. Ереван, 1967, стр. 18, 28, 62.

ԼՈՒՅՍԻ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՒՇԵՂԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ (1913—1944)

«Գարնանային տեսարան», «Ամռան այգում», «Զնհալ», «Նկարիչ Ստեփան Աղաջանյան», «Ինքնանկար» կտավների և մատիտանկարների հեղինակը՝ Անդրանիկ Մուշեղի Մարկոսյանը, ծնվել է 1913-ին, Արևմտյան Հայաստանի Մշո Բուլանուխ գավառի Բերդ գյուղում: Նա ևս, ինչպես Սարգիս Ալեքսանյանն ու Կորյուն Սիմոնյանը, Վանիկ Կարապետյանն ու Մանուկ Հարությունյանը, Համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ զրկվեց ծնողներից. հորը 1915-ին սպանեցին թուրքերը, իսկ մայրը՝ Հեղինեն, մահացավ 1919-ին, որդուն թողնելով որբ ու անապաստան: «1920 թվականին (չեմ հիշում ում միջոցով) ինձ տեղավորում են Լենինականի պոլիգոնի ամերիկյան մանկատուն, որտեղ մնացի մինչև 1927 թվականի օգոստոսը:— Այնուհետև նկարիչը ԽՍՀՄ նկարիչների միությանը տված ինքնակենսագրականում գրում է.— 1927 թ. վերջերին ՀԽՍՀ Սոցգլխավարչության պետ ընկ. Տ. Մուշեղյանի միջոցով ինձ տեղափոխում են Լուսժողկոմատի Երևանի մանկատուն:

1927 թ. սեպտեմբերից հաճախում եմ Երևանի հանրապետական կերպարվեստի տեխնիկում: 1928 թ. դուրս եմ գալիս մանկատնից: Ավարտելով կերպարվեստի տեխնիկումը, մինչև 1930—1932 թթ. օգոստոս ամիսը աշխատել եմ Շամշադինի շրջանում որպես նկարչության և այլ առարկաների դասատու: 1932 թվականի սեպտեմբերի մեկից մինչև 1933 թ. վերջը եղել եմ Լենինգրադի նկարչական ակադեմիայի ուսանող...»: Անդրանիկ Մարկոսյանի հետագա կենսագրությունն արդեն նրա աշխատանքային գործունեությունն է: 1933—1935 թթ. քսանամյա Անդրանիկը Լենինականի կերպարվեստի դպրոցի տնօրենն էր: Հետագա երկու տարիներին կոմերիտական Մարկոսյանը գտնվում էր հերթական զինծառայության մեջ: Պարտադիր զինվորական ծառայությունից հետո նա մշտապես հաստատվում է Երևանում, զբաղվում ստեղծագործական և մանկավարժական գործունեությամբ: 1938 թ. արդեն մի քանի ցուցահանդեսների մասնակցած շնորհաշատ գեղանկարչին, որը միևնույն ժամանակ Երևանի Սպանդարյանի անվան № 42 դպրոցի նկարչության ուսուցիչն էր, բոլորն էին գովում: Տասնյոթ տարեկան էր Անդրանիկ Մարկոսյանը 1930 թվականին, երբ առաջին անգամ մասնակցեց ՕՄԽՐ-ի (Հեղափոխական երիտասարդ նկարիչների միավորման) կազմակերպած ցուցահանդեսին՝ ներկայացնելով վեց ստեղծագործություն: Երեք տարի հետո նորից վեց նոր աշխատանքով է Անդրանիկ Մարկոսյանը ներկայանում «Խորհրդային կերպարվեստը տասներեք տարում» ցուցահանդեսին (տե՛ս նշածս ցուցահանդեսների կատալոգները): Նկարչի անձնա-

[1] Աշխատել է Ներքին Կարմիր աղբյուր գյուղում (ծանոթ.— Ս. Գ.):

կան գործից (ՀՆՄ արխիվ) տեղեկանում ենք, որ երիտասարդ նկարիչը կերպարվեստագետների միության մեջ ընդունվելու դիմում է ներկայացրել 1939 թ. մայիսի 15-ին: Հունիսի 3-ին գեղանկարչական սեկցիան որոշել է նրան ընդունել որպես անդամության թեկնածու: Ա. Մարկոսյանը հիմնականում աշխատում էր յուղաներկով և ջրաներկով: 1944 թ. Սմոլենսկի համար մղված մարտերում զոհվեց Հակոբ Կոջոյանի սիրած աշակերտը: «Իմ ռուս կապիտանը», «Անտառում», «Առավոտ» և մի քանի այլ յուղաներկ կտավներ, ակվարելներ և մատիտանկարներ որպես իր կյանքի հավերժական ուղեկիցներ շարունակում է փայփայել Եղիսաբեթ Ջիլավյանը՝ նկարչի այրին: Զրուցում ենք նրա հետ:

— Անդրանիկը լուրջ, հայրենասեր մարդ էր: Մանկությունից այնքան զրկանքներ էր կրել, որ կյանքը նրան իմաստնացրել էր: Քչախոս էր, ամբողջ ժամանակ գրքերի հետ էր: Ճանապարհորդելու համար խելքը իրենը չեր: Ցուցադրվել, պրոպագանդվել չէր սիրում: Խոհն ու տխրությունը նրա դեմքին կարդացվում էին: Պարզ մարդ էր: Նրա տարերքը գյուղն էր և բնությունը...

Իրոք, 1940 թվականին Երևանում հրատարակված «Հաշվետու աշխատանքների երրորդ ցուցահանդեսի կատալոգից» անգամ երևում է Մարկոսյանի բնապաշտությունը: «Այգում», «Գարնանային տեսարան», «Քարափը», ինչպես նաև «Անտառում», «Զանգվի ափին» և այլ ստեղծագործություններ իրենց գունային արտահայտչաձևերով մաքրում են մարդուն, նրան տանում դեպի լույսի և սիրո աղբյուրը: Ըստ երևույթին դա բխում է Մարկոսյանի մանկավարժական խառնվածքից: Մարկոսյան նկարիչը մոայլ գույներ չի օգտագործում. նրա մոտ գրեթե բացակայում է դեղինը: Կարմիրի և կանաչի, սպիտակի և երկնագույնի հարաբերական համաձուլվածքով երիտասարդ գեղանկարիչը կարողանում է արտահայտել սեր և կարոտ, նվիրում ու սպասում, խինդ և թախիծ... «Զգացումներն էլ պետք է ունենան իրենց գույնն ու ձայնը: Այո՛, ձայնը: Ո՞ւմ է պետք անձայն, համրը, սառը և անկիրք գունանկարը... Կա՞ արդյոք «Զոկոնդայի» պես խոսող անմահություն»,— կարդում ենք ուսանողական իր ընկերոջը՝ նկարիչ Սամվել Մանասյանին գրած մի նամակում: Արվեստի փիլիսոփայական իր ըմբռնումները երիտասարդ գեղանկարիչը չհասցրեց վրձնով ու գույներով ներկայացնել. զոհվեց նա կյանքի երեսունը հազիվ լրացրած:

Ա. Մարկոսյան— «Իմ ռուս զինընկերը» (մատիտանկար), 1943 թ., Ուկրաինա:

1940 թ. «Սովետական Հայաստանի կերպարվեստը քսան տարում» ցուցահանդեսին մասնակցելը հնարավորություն տվեց, որ Անդրանիկ Մարկոսյանին նկարիչների միության անդամության թեկնածուից փոխադրեն միության իսկական անդամ: «1940-ին Անդրանիկն ընտրվեց նաև միության կերպարվեստի սեկցիայի նախագահ,— վերհիշում է արվեստագետ Եղիշե Հովհաննիսյանը՝ ավելացնում,— նա մասնակցել է նաև Երևանի օպերային թատրոնում «Ալմաստ» օպերայի նկարչական ձևավորման աշխատանքներին: Այն ղեկավարում էր Մարտիրոս Սարյանը»: Որպես շնորհառատ երիտասարդ Անդրանիկ Մարկոսյանի մասին այսօր էլ դրվատանքով են խոսում Հայաստանի նկարիչների միությունում (այստեղ զոհված նկարիչներին նվիրված մարմարե հուշատախտակին փորագրված է նաև նրա անունը): Լենինականի նկարչական, Շամշադինի շրջանի Ներքին Կարմիր աղբյուր գյուղի, Երևանի Սպանդարյանի անվան № 42 դպրոցներում նկարիչ և մանկավարժ մշեցին եղել է լույսի և գեղեցկության սերմնացան:

1941 թվական, հունիսի 23: Խաղաղ և տխուր երևանյան առավոտ էր Սվերդլովի փողոցում: Այս անգամ № 107 տան առաջ խոնված բազմությունը՝ բարեկամներ ու ընկերներ, ծանոթներ ու հարազատներ, եկել էին ողջերթի խոսք ասելու Անդրանիկ Մարկոսյանին: Հուզվել էին բոլորը. չէին կարողանում նկարչի միակ տղեկին՝ հնգամյա Ֆելիքսին, պոկել հոր կրծքից:

— Մի՛ լաց, շուտով կգամ և քեզ կնկարեմ...

—համոզում, հորդորում էր հայրը, համբույրներ տեղում որդու այտերին ու աչքերին, թաթիկներին ու ճակատին և նրան ամուր սեղմում իր կրծքին...

«Շուտով ետ կգամ...»,— առաջին անգամ հայրը դրժեց իր խոստումը: Երևաննախագիծ ինստիտուտի ճարտարապետ Ֆելիքս Մարկոսյանը մինչև օրս էլ դեռ հոր անձնական արխիվում իր դիմանկարի էսքիզներն է փնտրում: Մինչդեռ հայրը այն տարել էր իր հետ՝ իր սրտում և մտապատկերում. այն յուղանկար և գրաֆիկա չդարձավ: Թշնամու դեմ նկարիչ ռազմիկը խիզախաբար մարտնչեց Հյուսիսային Կովկասում, երկու անգամ ծանր վիրավորվեց ոտքից, հոսպիտալում բուժվելուց հետո նորից նետվեց ի մարտ: Որպես 408-րդ դիվիզիայի մարտիկ. Անդրանիկ Մարկոսյանը, հիտլերյան վայրագների դեմ քաջաբար մարտնչելով, 1944-ի դեկտեմբերին հասավ Սմոլենսկ: Այստեղ էլ զոհվեց գեղանկարիչ Ստեփան Աղաջանյանի մտերիմ սանը՝ իրենից անկախ դրժելով միակ որդուն տված իր խոստումը.

— Մի՛ լաց... Ետ կգամ, քեզ կնկարեմ...

Նկարչի փոխարեն Երևան եկավ մեծ Հաղթանակը, բայց Ֆելիքսի նկարը անավարտ մնաց:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Գրիգորյան Սասուն**—Անավարտ կտավներ (հատված «Մուսաները չլռեցին» գրքից), Սովետ. արվեստ, Ե., 1978, № 12, էջ 43—44:
2. **Դզնունի Դանիել**— Հայ կերպարվեստագետներ, Ե., 1977, էջ 317:
3. **Ստեփանյան Գառնիկ**— Կենսագրական բառարան, Բ գիրք, Ե., Սովետ. գրող, 1981, էջ 304:
4. **Գրիգորյան Սասուն**—Հիշեցեք նրանց, Ավ., 18 մայիսի 1975, էջ 3:
5. **Կուրդոյան Եղիշե**—Կտավները մնացին անավարտ, ՍՀ, 9 մայիսի, 1974, էջ 4:
6. **Գրիգորյան Սասուն**—Նկարիչը տուն չվերադարձավ, ՍՀ, 26 մարտի 1985, № 70, էջ 4:
7. **Գրիգորյան Սասուն**— Մուսաները չլռեցին (կա նաև Ա. Մ.-ի մասին), ԳԹ, 5 մայիսի 1985, № 18, էջ 2:

ՋԵՋ ՀԱՄԱՐ, ԼԵՆԻՆԳՐԱԴ

ՍԱՀԱԿ ԻԳՆԱՏԻՈՍԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ (1906—1943)

Լենինգրադյան ռազմաճակատում, 1942 թվականին, թշնամու ռումբերի տարափի տակ, մտապատկերում՝ մի կապույտ Սևան, աչքի դեմ՝ Մասիս և Արարատյան դաշտ, կյանքին հրաժեշտ տվեց Լենինգրադի Ռեպինի անվան գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ, 1906 թ. Երևանում ծնված տաղանդավոր քանդակագործ, լեյտենանտ Սահակ Մովսիսյանը: Մինչև վերջերս էլ Մոսկվայի ԺՏՆՑ-ի հայկական տաղավարի մուտքի մոտ այցելուի ուշադրությունն էր գրավում մի շքեղ քանդակ՝ «Հովիվը»: Ի՞նչ իմանային Մոսկվայի Ձերժինսկի մետրոկայանի քանդակագործների ստեղծագործական բրիգադի անդամները (ղեկավար՝ Մ. Գ. Մանիզեր), որ մի քանի տարի հետո իրենց գործընկերը կզոհվի հերոսաբար Լենինգրադի Պուլկովայա բարձունքում, 625-րդ հրաձգային դիվիզիայի իր մի քանի ընկերների աչքի առջև: Այդ նույն դիվիզիայի 749-րդ գնդում էր ծառայում սերժանտ, նկարիչ Բորիս Կորնեևը: Արխիվային բազմաթիվ էսքիզներ վկայում են, թե ինչպիսի թռիչք էր սպասվում երիտասարդ արվեստագետին: Ահա Լենինի կերպարի մի քանի էսքիզներ: Ահա Վ. Խլղաթյանի, նկարչի հոր՝ Իգնատիոսի և քրոջ՝ Սեդայի դիմաքանդակները: Սեդայի մոտ պահպանվել են մեղբոր քանդակների լուսապատճենները: Ցավոք չկա նրանց հեղինակը, այն սրամիտ և ծիծաղաշատ Սահակը, որը

Ս. Մովսիսյան, «Հովիվը» (Գիպս, Մոսկվայի ԺՏՆՑ-ի ֆոնդ):

1928 թ. ավարտել էր Երևանի գեղարվեստի տեխնիկումը, իսկ 1929-ին մասնակցել ցուցահանդեսի որպես ՕՄԽՐ-ի անդամ: Սահակը ամուսնացած էր քանդակագործ Իրինա Նիկոնովայի

Ս. Մովսիսյանը իր հոր՝ Իգնատիոսի հետ, Երևան, 1931 թ.:

հետ, նրա որդին՝ Արտոն, այժմ ապրում է Լենինգրադում, մակետչիկ է:

Սահակ Մովսիսյանի Լենինգրադում վարձած, առանց այն էլ այնքան նեղ բնակարան-արվեստանոցում հաճախ էին հավաքվում գեղարվեստի ակադեմիայի հայ ուսանողները: Նրանցից քանդակագործական ֆակուլտետի շնորհաշատ ուսանողներ, երևանցի Հակոբ Հակոբյանն ու երփնագրող, թբիլիսցի Գաբրիել Գաբրիելյանը գրեթե ամեն շաբաթ այստեղ «ստեղծագործական թեժ մարտեր» էին բացում, որոնք խաղաղվում էին միայն Մովսիսյանի՝ նույն ակադեմիայում ուսանող կնոջ՝ Իրինա Նիկոնովայի «դատավարությամբ»: Հակոբ Հակոբյանը, որպես աչքի ընկնող քանդակագործ, 1939-ին կազմակերպված միջակադեմիական ուսանողական ցուցահանդեսում շահել էր առաջնություն:

Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայում Ս. Մովսիսյանը հաճախ էր դասերից հետո այցելում իր ընկերներին և սաներին, իր խորհուրդներով աջակցում նրանց:

Ս. Մովսիսյան, «Զոհված կինը» (գիպս), Լենինգրադ, 1938 թ.:

Մնում էր մի տարի, որ Հակոբը, Գաբրիելն ու Դեդուշը ակադեմիան ավարտեին, բայց թշնամին օղակեց Լենինգրադը: Ինչ իմանար քանդակագործ դասախոսը, որ երկու տարի հետո, ինչպես Սուրեն Սարգսյանը, Գաբրիելը, Սաքո Հովհաննիսյանը, Դեդուշ Արշակունին և բազմաթիվ այլ արվեստագետներ, ինքը ևս պետք է զոհվի՝ չհասցնելով Երևան՝ յուրայիններին ուղարկել «Ա. Ս. Պուշկին» կիսանդրու համար ինստիտուտի գեղխորհրդի իրեն տրված շնորհակալական պատվոգիրն ու «Սասունցի Դավթի» 1000-ամյակին նվիրված կոմպոզիցիոն քանդակի էսքիզները ու այլ նյութեր:

Սահակ Մովսիսյանը «Խաղողաքաղ» ստեղծագործության վրա աշխատելիս:

Ս. Մովսիսյանը Մոսկվայի «Ձերժինսկի» մետրոկայարանի որմնաքանդակների վրա աշխատելիս (ղեկավար՝ Մ. Մանիզեր):

ՍԱՀԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Գրիգորյան Սասուն**—Արձանները մնացին անավարտ, ԳԹ, 1981, 26 հունիսի, էջ 4:
2. **Գրիգորյան Սասուն**—Անավարտ կտավներ (հատված «Մուսաները չլռեցին» գրքից)—Ե., Սովետական արվեստ, 1978, № 12, էջ 43, 49:
3. **Դզնունի Դանիել**—Հայ կերպարվեստագետները (համառոտ բառարան), Ե., 1977, էջ 348—349:
4. **Գրիգորյան Սասուն**— Հիշեցեք նրանց, Ավ., 1975, 18 մայիսի, էջ 3:
5. **Զոլոզյան Բաբկեն, Հարությունյան Վահան**—Նկարիչներ (զոհված հայ նկարիչների մասին), Սովետական արվեստ, 1958, № 8, էջ 55—58:
6. **Կուրդոյան Եղիշե**—Կտավները մնացին անավարտ, ՍՀ, 9 մայիսի 1974, էջ 4:
7. **Գրիգորյան Սասուն**—Մուսաները չլռեցին (Մեծ հայրենականում զոհված արվեստագետների մասին: Կա և Ս. Մ.-ի մասին), ԳԹ, 5 մայիսի 1985, № 18, էջ 2:

ԵՐԵՔ ՆԿԱՐԻՉ՝ ՄԻ ՏԱՆԻՑ

ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳԻ ՍԱՐԳՍՅԱՆ (1918—1945)

Ամեն անգամ դպրոցից վերադառնալուց Անժիկն ու Սուրիկը նախատում էին իրենց ավագ եղբորը՝ Էդուարդին. «Մեզ էլ սովորեցրու նկարել... մենք էլ ենք ուզում նկարիչ դառնալ»:

Նկատելով երեխաների սերն ու հետաքրքրությունը դեպի նկարչությունն ու կերպարվեստը, նրանց հայրը՝ Գևորգ Սարգսյանը, Անժելային ու Սուրենին էլ ոգևորեց, նրանք ևս ընդունվեցին Երևանի գեղարդ տեխնիկում:

Սուրենը 1918 թ. ծնունդ էր, ավարտել էր Երևանի Խ. Աբովյանի անվան դպրոցը: Դեռ վաղ պատանեկան տարիներից հրապուրված էր քանդակագործությամբ և երբ ընդունվեց տեխնիկում, արժանացավ ժողովրդական նկարիչներ Արա Սարգսյանի և Սուրեն Ստեփանյանի ջերմ համակրանքին և ուշադրությանը: 1937 թ., փայլուն գիտելիքներով ավարտելով գեղարդ տեխնիկումը, Սուրենն ընդունվեց Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայի քանդակագործության ֆակուլտետը: Ամռանը, կարոտած իր ծննդավայր Երևանին, նա գալիս էր Հայաստան, շրջագայում և ծանոթանում Գառնիում, Գեղարդում, Ծաղկաձորում, Դիլիջանում, Լենինականում, Զանգեզուրում կառուցված ճարտարապետության և քանդակագործության ակնառու կոթողներին, մոտիկից շփվում գյուղի և քաղաքի անվանի մարդկանց: Կյանքի ռեալ ճանաչողության և այդ շրջանի նրա ստեղծագործական վառ երևակայության արգասիքը դարձան Թալինի շրջանի Զիթհանքով գյուղի անվանի կոլտնտեսուհի, հետագայում՝ Սոցիալիստական աշխատանքի հերոս «Մարիամ Մարտիրոսյանի ֆիգուրան», «Հերոսի հանդիպումը իր ընտանիքի հետ» և «Խաղողաքաղ» կոմպոզիցիոն քանդակները, ինչպես նաև բազմաթիվ այլ քանդակներ, հախճապակե փոքրիկ արձանիկներ և այլ ստեղծագործություններ: 1940 թվականին գեղարվեստի ակադեմիայի ուսանող Սուրեն Սարգսյանն առաջին անգամ մասնակցեց Երևանում Խորհրդային Հայաստանի 20-ամյակին նվիրված հոբելյանական ցուցահանդեսին և շահեց առաջնություն... 1940 թվականին էլ նրան ընդունեցին կերպարվեստագետների (նկարիչների) միության անդամության թեկնածու:

Ս. Սարգսյան, «Շքանշանակրի դիմավորումը», 1937 թ.:



Ս. Սարգսյան, «Լենինգրադցի ստախանովական բանվորի կիսանդրի» (գիպս, 1941 թ.):

Ս. Սարգսյան, «Ա. Պուշկինի «Ոսկե ձկնիկ» մոտիվներով» (գիպս, Լենինգրադ, 1939 թ.):

Հայրենիքի հանդեպ սիրով, թշնամու նկատմամբ անհուն ատելությամբ են հագեցած Սուրեն Սարգսյանի՝ ֆիննական ռազմաճակատից յուրայիններին հասցեագրած նամակները: Նրանցից տեղեկանում ենք, որ երիտասարդ նկարիչը արժանացել է բանակի գլխավոր հրամանատարի շնորհակալագրերին, շքանշանների և մեդալների՝ գերմանական բարբարոսների դեմ ցուցաբերած անվեհերության և սխրանքի համար: Իր ստեղծագործությունների պես անավարտ մնաց Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայի 4-րդ կուրսի (1941 թ.) ուսանող Սուրեն Սարգսյանի կյանքի ուղին: Քանդակագործի դիպլոմ պաշտպանող 27-ամյա հայ քաջորդին Արևելյան Պրուսիայում 1945 թվականի փետրվարին զոհվեց՝ ներունդների սրտում կանգնեցնելով իր անմահության հուշարձանը: Սուրեն Սարգսյանի անունը փորագրված է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան ուսումնարանի Մեծ հայրենականում զոհվածներին նվիրված մարմարե հուշատախտակին, ինչպես նաև Հայաստանի նկարչի տան նախասրահում կանգնեցված մարմարե հուշաքարին:

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Գրիգորյան Սասուն**—Անավարտ կտավներ («Մուսաները չլռեցին» գրքից), Սովետ. արվեստ, Ե., 1978, № 12, էջ 49:
2. **Գրիգորյան Սասուն**—Հիշեցեք նրանց, Ավանգարդ, 18 մայիսի 1975, էջ 3:
3. **Կուրդոյան Եղիշե**—Կտավները մնացին անավարտ, ՍՀ, 9 մայիսի 1974, էջ 4:
4. **Գրիգորյան Սասուն**—Մուսաները չլռեցին, ԳԹ, 5 մայիսի 1985, № 18, էջ 2:

ԹԱՄԱՆՅԻ ՎԱՆԻԿԸ

ՎԱՆԻԿ
ԳԵՎՈՐԳԻ
ՍԵՎԱՁԵՐՅԱՆ
(1921—1943)

«Մայրիկ ջան, թշնամու գազանությունները մեզ ավելի են բորբոքում, զինում ատելությամբ ու ոխով: Թե ինչ անխիղճ, ինչ գիշատիչ, ինչ մարդակերներ են մեր դեմ կռվում, դա մենակ կգգա նա, ով կողքին տեսնում է, թե ինչպես մի յոթ-ութ ամսական երեխա, չզգալով, որ մայրը սպանված է, մոր կուրծքը բերանին, փաթաթվել է նրա վզով: Քիչ այն կողմ թշնամին բռնել, զոռով քարշ էր տալիս խորհրդային մի հետախույզի: Եթե մենք շուտ չհասանենք, այդ խեղճ տղան վզին փաթաթված, ուժեղ ձգված հեռախոսալարից պիտի խեղդվեր: Ֆրիցները հենց մեզ տեսան, ուզեցին փախչել, կրակ բաց արին, բայց որդուդ անվրեպ գնդակը նրանց գետին տապալեց. փրկվեց մեր դիվիզիայի կապավորը: Որպես հայկական դիվիզիայի զինվոր ես իմ ժողովրդի, իմ ծնողների պատիվը գետնով չեմ տա: Մամա ջան, Երևանում նկարելու թեմա, սյուժե չէինք գտնում, այստեղ էլ այնքան բան կա նկարելու, բայց ժամանակ չկա: Կողքիս ծնվում և մեռնում են իսկական հերոսներ: Եթե ողջ մնամ, էսքիզներիցս շատերը (իմ կարծիքով) մնայուն կտավներ կդառնան: Իմ մասին, մամա՛ ջան, մի՛ մտածիր: Մահից առաջվա պես չեմ վախենում. արդեն սովորական բան է: Երբեմն, անկախ մեզանից, շրջանցում ենք սպանվածներին, վայրկյանն այստեղ վճռական է, ես հետևում եմ թշնամուն՝ մեր զոհված ընկերների, մեր վիրավոր հողի վրեժը լուծելու»:

Նոր էր Սաթենիկ Մկրտչյանն ավարտել որդու նամակի ընթերցումը, երբ Էմման թռվռալով ներս մտավ և հպարտ-հպարտ բարձրաձայն ասաց. «Ահա «Սովետական Հայաստանը»: Վանիկի և իր ընկերների մասին, տես, ինչ գովեստով է գրել...»:

Իրոք, հանրապետության մայր թերթի 1942 թվականի նոյեմբերի 22-ի համարում ռազմաճակատային թղթակից Խիկար Բարսեղյանը դրվատանքով էր ներկայացրել Թամանյան դիվիզիայի կրտսեր լեյտենանտ Վանիկ Սևաչերյանի և իր մարտական ընկերներ Ա. Դուշյանի (հրամանատար), հրետանավորներ Վ. Ափինյանի, Ա. Արզումանյանի, Մ. Գասպարյանի, Ա. Ղահրամանյանի քաջագործությունները «Խիզախություն» ակնարկում: Ուրախանում էր Սաթենիկ մայրիկը, երբ որևէ մեկը Վանիկի մասին բան էր պատմում, գովում նրան, ներկայացնում նրա չարաճճիությունները: Ամենաթանկը այն պահն էր, երբ Սաթենիկ մայրիկը ստանում էր որդու ձեռքով գրված նամակը. դա նշանակում էր, որ նամակագիրը դեռ ողջ է. դրանի՞ց էլ մեծ ուրախություն: Դուռը նորից թակեցին, փոստատարն է. «Վանիկից է»,—մեկնեց նամակն ու շտապեց՝ մյուս հարևաններին էլ լուր տանելու: «Տեսնես՝ ի՞նչ նորություն գրած կլինի»— մի ներքին վախով բացեց մայրը որդու եռանկյունի նամակը: Կերչի թերակղզուց հրետանավոր որդին այս անգամ մորը գրում է. «Մամ ջան, համբուրում եմ քեզ, հայրիկին, Էմմային, բոլոր-բոլորին, ում համար ես այստեղ քրտինք և արյուն եմ թափում: Իմ մասին մի մտածեք. պատերազմը առանց զինվորի չի լինում, ես զինվոր եմ, ուրեմն և ռազմիկ. ինձ սպանողին ես կսպանեմ: Մամ ջան, մի քիչ կոշտացել եմ (ոչ թե կոպտացել), էլ նախկին «ֆըսֆըսան նկարիչը» չեմ, իմ մասին մեր դիվիզիայի թերթում գրել են, կուղարկեմ, կարդա, ուրախացիր: Չնայած գիտեմ՝ ո՞նց կարող ես ուրախանալ, երբ միանուագար որդիդ զենքը ձեռքին թշնամու դեմ «փոր է թափում»: Պինդ մնա, մամ ջան. ես հաղթանակով ետ կգամ և Մասիսներ կնկարեմ՝ հպարտ ու անհաղթ: ...Բանակը մարդու կոփում է, թրծում նրա կամքը, մարդու մեջ հավատ և նվիրում մշակում, մարդը միանգամից տղամարդ է դառնում ոչ միայն ֆիզիկապես, այլև մտքով և հոգեպես: Լավ նշանառու եմ: Տղաները երեկ ինձ ձեռ առան, կատակեցին. «Եթե էսպես շարունակես անվրեպ կրակել, շուտով Հիտլերին էն աշխարհը կուղարկես»: Ա՛յ, թե ձեռս ընկներ, ես աշխարհի մուռը նրանից կհանեի: Հիմա կասես՝ նկարիչ տղաս մարդասպան է դարձել... չէ՛, մա՛մ ջան, այդպես մի՛ մտածիր. նա աշխարհի բոլոր մայրերին է այսօր լացացնում: Նա ստիպեց, որ ես կտավներս թողնեմ անավարտ, վրձնի փոխարեն զենք առնեմ ձեռքս ու ընկնեմ քար ու չոլ: Խղճալ, երբ դիմացդ մարդ է: Համաշխարհային դահճին խղճալը համաշխարհային հանցագործություն է... Ինչևէ, այդ շան մասին շատ խոսեցի: Այ, ո՞նց չջղայնանաս. երեկ մեր տղերքն ասացին, որ մեր ուսուցիչները էլ մեզանից հետո ինքնակամ դուրս են եկել թշնամու դեմ: Կորյուն Սիմոնյանին և Սարգիս Ալեքսանյանին Մոզդոկի և Մայկոպի մոտ տեսնողներ են եղել: Ախար նրանք ի՞նչ հրացան բռնող են, ի՞նչ թշնամի սպանող: Ընկեր Կորյունը այնքան նուրբ, փխրուն մարդ է, որ եթե անգամ թշնամի էլ տեսնի սպանված, կարող է նստել կողքին, լաց լինել: Ախար նրան ինչո՞ւ են բերել բանակ: Մամա ջան, խընդրում եմ՝ ինձ գրես, թե ընկերներիցս՝ Սարգիս Արուտչյանից, Սաֆարյան Սուրիկից, մեր մյուս տղերքից ի՞նչ լուր կա, խոմ չե՞ն զոհվել... Մի կարգին ցուցահանդես էլ չհասցրինք բացել, ո՞նց չջղայնանամ...»:

Դոլգայա լեռան, Վերխնի Բականսկի, Կրասնի Կուրգանի համար ծավալված դաժան մարտերում նկարիչ լեյտենանտ Վանիկ Սևաչերյանը դրսևորեց ռազմական մեծ կազմակերպվածություն, արագ կողմնորոշում և մարտը գերազանց վարելու հմտություն: Թշնամու գերակշռող ուժերի ճնշման տակ, երբ Վանիկի գումարտակը շարունակում էր իր անվեհեր մարտը, Մոզդոկի շրջակայքում, 1943-ի սեպտեմբերի 18-ին հիտլերյան գնդակը խզեց նրա 22-ամյա կյանքի թելը:

Վանիկ Գևորգի Սևաչերյանը ծնվել է 1921 թ. հունվարի 29-ին Երևանում, ծառայողի ընտանիքում: 1926—1934 թթ. սովորել է մայրաքաղաքի Կաթողկի դպրոցում (Հայկ. ԽՍՀ ԳԱ հին շենքի հետևում, Աբովյան փողոցի վրա): Ութամյա կրթություն ստանալուց հետո Վանիկն ընդունվել է գեղարդ տեխնիկում: Նրա դիպլոմային աշխատանքը՝ «Բերքահավաքը Արարատյան դաշտում», 1941-ին ընդունվեց գերազանց գնահատականով: Պաշտպանությունից մի քանի օր հետո, ինչպես իր դասընկերները, Սևաչերյանը ևս չհասցրեց տուն տանել իր ավարտական դիպլոմը, ինքն էլ կամավոր զինվոր դարձավ:

Վանիկ Սևաչերյանը (վերևի 2-րդ շարքում, ձախից 3-րդը) իր ռազմընկերների հետ: Թաման թերակղզի, 1942 թ.:

Վանիկ Սևաչերյանի վերջին զինվորական նկարներից:

«Վանիկի ստեղծագործությունները, նամակները, նկարները ու մյուս փաստաթղթերը մայրս մահից առաջ նվիրել է Երևան քաղաքի պատմության թանգարանին,— մեր հանդիպման ժամանակ ասում է նկարչի քույրը՝ Երևանի № 4 պոլիկլինիկայի բուժքույր Էմմա Սևաչերյանն ու օգտվելով մեր մտերմիկ զրույցից, բարձրաձայն արտահայտում իր խոհերը,—տեսնես՝ ո՞վ է եղել եղբորս սիրած աղջիկը... Թե իմանայի, Վանիկիս կարոտը նրանից կառնեի...»:

Ուսանողական տարիներին Վանիկ Սևաչերյանը մասնակցել է ցուցահանդեսների: Զինվորական ուսումնարանում, անգամ մարտադաշտում երիտասարդ նկարչին մուսաները չեն լքել (նամակներն են վկայում), նատյուրմորտներ է նկարել և կոմպոզիցիոն կտավների էսքիզներ: Սևաչերյանի անունն այսօր անմահացել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան նկարչական ուսումնարանի նախասրահի մարմարե հուշաքարին և բոլոր նրանց սրտերում և հիշողության մեջ, ովքեր մոտիկից են ճանաչել կենսախինդ, նկարիչ և ռազմիկ հայորդուն՝ մի երիտասարդի, որը Սուխումի ռազմահետևակային ուսումնարանն ավարտելուց հետո մարտադաշտ մտավ կրտսեր լեյտենանտի կոչումով, իսկ մահից առաջ արդեն ավագ լեյտենանտ էր՝ պարգևատրված մարտական շքանշաններով ու մեդալներով:

ՎԱՆԻԿ ՍԵՎԱՉԵՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Բարսեղյան Խիկար**— Խիզախում, ՍՀ, 1942, 22 նոյեմբերի:
2. **Դալլաքյան Ղևոնդ**—Մարտական 89-ը, Ե., 1968, էջ 124:
3. **Գրիգորյան Սասուն**—Մուսաները չլռեցին, ՍԱ ա, 1978, № 12, էջ 47:

ԳՈՒՅՆԵՐԻ ՎԱՐՊԵՏԸ

ԿՈՐՅՈՒՆ ՍՏԵՓԱՆԻ ՍԻՄՈՆՅԱՆ (1912—1943)

Կան արվեստագետներ, որոնք ազգային մշակույթի գանձարանում միանգամից են տեղ գտնում: Նման երախտավորներից է Կորյուն Սիմոնյանը, մի նկարիչ, որն ապրեց միայն երեսուն տարի: Զոհվեց նա Հյուսիսային Կովկասում 1943-ին՝ ծանր վիշտ պատճառելով ոչ միայն իր միակ քրոջը՝ Սաթենիկին, այլև իր ուսուցիչներ Վահրամ Գայֆեճյանին, Գաբրիել Գյուրջյանին, Տարագրոսին, Օսմյորկինին և բոլոր նրանց, ումից ինքն էր ուսանել, ում ինքն էր դաս տվել: Կորյուն Սիմոնյանը ծնվել է 1912 թ. Կարսի նահանգի Բասենի գավառի Ստան գյուղում: Երբ թուրքական զինված ոհմակները Արևմտյան Հայաստանում հրի ու սրի մատնեցին հայ մարդուն, նրա տունն ու տեղը, երկու միլիոնի պես եղեռնի զոհեր դարձան նաև Կորյունի փոքր քույրն ու եղբայրը՝ Սեպուհն ու Փառանձեմը: Նրա աչքի առաջ արյունախում ենիչերին գլխատեց իր հորն ու մորը՝ Սիմոնենց Ստեփանին ու Գայանեին: Ուշագնաց Սաթենիկին և նրա երեք տարեկան եղբորը հայ հայդուկները մի կերպ կարողացան փախցնել և հանձնել Մուշից վերադարձող ռուսական բանակի խնամակալությանը: «Այնուհետև,— շարունակում է Սաթենիկ Սիմոնյանը,— միացած հազարավոր անտունների քարավանին, ես և Կորյունը հայտնվեցինք Կարսի ամերիկյան որբանոցում: Որոշ ժամանակ անց մեզ տեղափոխեցին Ալեքսանդրապոլ: Դա արդեն 1920 թվականին էր: Որբանոցում մենք տարբեր մասնաշենքերում էինք ապրում, միշտ իրար այցելելիս ես իմ ուտելիքից էի Կորյունին թաքուն մի բան բերում, նա էլ՝ ինձ:— Թաշկինակը մոտեցնելով արցունքալի աչքերին՝ շարունակում է իր վերհիշը Սաթենիկ մայրիկը:— Ա՜խ, որքա՜ն ենք քույր ու եղբայր կոտորածի ճամփեքին և որբանոցներում հիշել մերոնց ու լաց եղել: Ե՞րբ, ե՞րբ հասցրեցինք ուրախանալ: Որբանոցում նորից իրար կորցրինք: Ճակատագիրը ինձ գցեց Բաքու, Թիֆլիս, Ալավերդի, իսկ նրան՝ Լենինգրադ: Տասնհինգ տարի ես ողբում էի կորցրած եղբորս համար: Մի օր էլ Ալավերդում տեսա մի քանի ջահել տղաների, էտյուդնիկների ծնկներին դրած ամեն մեկն իր համար նկար էր անում: Հիշեցի եղբորս և ինձնից անկախ մի օր հայտնվեցի դրանցից մեկի գլխավերևը: Նայեցին, ժպտացին: Չկարողացա հուզմունքս պահել. լաց եղա: Պատմեցի ամեն ինչ: Եվ հանկարծ նրանցից խաժաչյա, միջինից ցածր բոյով մի տղա ոտքի կանգնեց ու հարցումով մոտեցավ ինձ. «Սաթի՛կ, դո՞ւ ես»: Մենք գրկախառնվեցինք ու լաց եղանք: Կորյունի որբանոցային ընկերն էր՝ Համո Ավետիսյանը: Տղաները խառնվեցին: Միաբերան ինձ հորդորեցին, թե լաց մի՛ լինի. Կորյունը կա, ողջ է, նա մեզ հետ 1931-ին ընդունվել է Լենինգրադի գեղարվեստի ակադեմիա, այս տարի կավարտի: Դա 1936-ին էր: Նույն օրը տղաները ինձ տարան փոստ, նամակ և հեռագիր ուղարկեցին Կորյունին: Չանցած մի քանի օր Կորյունը Ալավերդում էր: Նկարեց պղնձի գործարանը, Սանահինը և Հաղպատի պատմա-ճարտարապետական համալիրը, միասին գնացինք Դսեղ՝ Հովհաննես Թումանյանի ծնդավայրը: Լռվա հիասքանչ բնությունը, հին-հին հուշարձաններն ու պարզ մարդիկ ոգևորել, գերել էին Կորյունին: Բազմաթիվ յուղաներկ և ջրաներկ կտավներով նա վերադարձավ Լենինգրադ: Նամակով ինձ հայտնեց, որ մասնակցել է ուսանողական ցուցահանդեսի, շահել առաջնություն, պարգևատրվել է մեկ ամսով ստեղծագործական գործուղում գնալու, որտեղ ինքը կամենա...»:

Կիրակի երեկո է, ուզում եմ ցտեսություն ասել Սաթենիկ մայրիկին, նա չի համաձայնում. բացել է իմ առջև իր ամենաթանկ և սուրբ հոգեպահուստը՝ մի դեղնած թղթապանակ՝ լեցուն Կորյունի տարբեր լուսանկարներով: Ահա նրանցից մեկը. լուսանկարում ութ ընկերներ են, նրանցից չորսը՝ Կորյունը, Սարգիսը, Լևոնն ու Վանիկը, զոհվել են Մեծ հայրենականի տարբեր

Կորյուն Սիմոնյանը Երևանի գեղարվեստի տեխնիկումի ուսանող իր սաների հետ (2-րդ շարքի մեջտեղում, ձախից 4-րդը):

ռազմաճակատներում: Մի ուրիշ լուսանկար պատկերում է Կորյունին Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայում իր ուսանող ընկերների ու դասընկերների հետ: Թղթապանակում կան լուսանկարներ Կորյունի առօրյա կյանքից՝ աշխատելիս, Յալթայում, Սոչիում, Լոռիում հանգըստանալիս: Բոլոր այդ լուսանկարներից երևվում է, որ Կորյուն Սիմոնյանը եղել է իրոք մարդամոտ, պարզ, համեստ ու սիրված:

«Որպես ուսուցիչ նա խիստ էր և հետևողական, ջերմ ու արտաքավ: Հոգ էր սիրում ծույլերին ու անհետաքրքրասերներին: Դասը վարում էր ապրված, հոգելով նաև մեզ: Պահանջում էր կտավը չծանրաբեռնել, վրձինը մաքուր պահել, ճկարել աջ ձեռքով...— վերհիշելով իր ուսուցչի առաքինությունները, այնուհետև Հրաչյա Խուդավերդյանը շարունակում է.— Կորյուն Սիմոնյանը 1928—1930 թվականներին սովորել է Երևանի գեղարդ տեխնիկումում, 1936-ին, գեղարվեստի ակադեմիան ավարտելուց հետո, նշանակվել էր գեղանկարչության ուսուցիչ նույն տեխնիկումում: Երևանական թվականների վերջին մենք իրոք որ բարձրորակ ուսուցիչներ ունեինք: Նրանք բոլորն էլ կրթվել էին Լենինգրադում կամ Մոսկվայում: Պատերազմը պատճառ դարձավ, որ իմ ուսուցիչներից և դասընկերներից շատերը վրձնի փոխարեն զենք վերցնեն: Գեղանկարչության մեր ամենասիրված ուսուցիչը, որը նաև հայտնի ֆուտբոլիստ էր, Լևոն Տոնականյանը, զոհվեց պաշարված Լենինգրադում, իսկ մեր տեխնիկումի դիրեկտոր Ներսես Իսրայելյանը՝ Մոսկվայի համար մղվող ճակատամարտում: Նրանք Կորյունով հպարտանում էին, իսկ Մարտիրոս Սարյանը Կորյուն Սիմոնյանի հետ մեծ հույսեր էր կապում: Կորյունի ամենամտերիմ ընկերը Խաչատուր Եսայանն էր... Պատերազմը մեր ուսուցչի և մեր երազները անավարտ թողեց: Երևանում մեր ուսուցիչը ապրում էր Սարի թաղում, վարձով, հետո տեղափոխվեց Տպագրիչների փողոց: Բնակարան էր ստանալու Պուշկինի փողոցի մի անկյունում կառուցվող նկարիչների կոոպերատիվ շենքից: Լսել էինք, որ ԽՍՀՄ նկարիչների միության անդամ մեր ուսուցիչը շուտով պիտի ամուսնանա և անհատական ցուցահանդես բացի... Էլի, էլի բաներ էինք լսել մեր ուսուցչի մասին: Բայց գերմանական ֆաշիզմը շարունակեց թուրք ենիչերիների սև գործը. բասենցի Սիմոնենց Ստեփանի միակ տղային՝ Կորյունին, սպանեց Մոզդոկում 1943-ին»:

...Կորյուն Սիմոնյանի նկարչական ընդունակությունները ի հայտ եկան ամերիկյան որբանոցում: Տղայի նկարչական հակումներն ու առօրյա դեպքերին նկարչական-գունային ինքնուրույն լուծում հաղորդելը հուզեց որբանոցային իր ընկերներին, և նրանք Կորյունին տարան Լենինականի նորաբաց նկարչական ստուդիա: Պարզվեց, որ ոչ միայն Կորյունը, այլև իրեն ուղեկցողները՝ Սարգիսը, Համոն, Լևոնն ու Վանիկը, օժտված են նկարչական բնատուր ձիրքով: Նրանց բոլորին իր հովանու տակ առավ նկարիչ-մանկավարժ Ստեփան Ալթունյանը: Հետագայում, երբ Կորյունն ավարտել էր Լենինգրադի գեղարվեստի ակադեմիան և վերադարձել Երևան, այստեղ արդեն Կորյունին էր աշակերտում Ստ. Ալթունյանի միակ որդին՝ Զազիկը: Ցավոք նա ևս, ինչպես իր ուսուցիչը, մարտադաշտից չվերադարձավ: Պատանի Կորյունը առաջին անգամ ցուցահանդեսի մասնակցել է իրենց դպրոց-ստուդիայում (Լենինական): Պաշտոնապես երիտասարդ նկարչին որպես գեղարդ տեխնիկումի սանի և Հեղափոխական նկարիչների երիտասարդական միավորման անդամի հնարավորություն է ընձեռվել հանրապետական ցուցահանդեսի մասնակցել 1930 թվականին: Տասնութամյա նկարչի «Այղր լճի ջրհան կայանը», «Երևանի նորակառույց սառցարանը», «Կրոնը և իմպերիալիզմը», «Մեխանիկական գործարան» և երկու այլ կտավներ միանգամից իրենց նորօրյա մտածողությամբ գրավեցին այցելուների ուշադրությունը: «Հայկ. ԽՍՀ կերպարվեստը տասնմեկ տարում» (Ե. 1931 թ., էջ 22) կատալոգից իմանում ենք, որ Կորյունը հաջորդ տարի նորից է մասնակցել հանրապետական ցուցահանդեսի, այս անգամ արվեստասեր հասարակայնությանն է ներկայացրել կենսախինդ, ուրախ տրամադրությամբ լի, գունային պայծառ լուծումներով «Պիոներները ճամբարում» և «Մայիսմեկյան տոնակատարությունը Նոր Բայազետում» ստեղծագործությունները: Կորյուն Սիմոնյանի հետագայում կերտած կտավները աչքի են ընկնում գույնի և լույսի ներքին համադրությամբ և հայ ժողովրդի կրած տառապանքների՝ կոտորածների, գաղթի, հեղափոխական, քաղաքացիական և նոր կյանքի կառուցման գեղարվեստական գունախտացումներ են: Հայաստանի պետական պատկերասրահում պահպանվող «Երևան», «Ճանապարհով վերադարձող հոտը», «Աշուն», «Զմեռ» և մի քանի այլ յուղաներկ կտավներ նկարիչը ստեղծել է 1940 թվականին: Նախապատերազմյան տարիները Կորյուն Սիմոնյանի ծաղկումի և լիաուատ բերքատվության տարիներն էին: «Ինքնադիմակարն» ու «Յուսուֆի սպանությունը», «Արարատ» և «Փողոց Գորիսում», «Պարտիզաններ» և «Լենինի հրապարակը Երևանում», «Արածող ոչխարներ» յուղաներկ կտավները, լայնամասշտաբ կոմպոզիցիոն ստեղծագործությունները, էտյուդներն ու ակվարելները մեկ անգամ ևս վկայում են, որ Կ. Սիմոնյանն ունեցել է ոչ միայն նուրբ զգացողություն և ներաշխարհ, կյանքի խոր ու նուրբ ճանաչողություն, այլև ստեղծագործական պայծառ երևակայություն և նպատակակետ, դրա համար էլ գույների զսպվածությունն ու համոզչականությունը լիովին են բացահայտում նրա տեսա-զգացողական ասելիքը: «Յուսուֆի սպանությունը» (1939 թ.) կոմպոզիցիոն յուղաներկ կտավը, որը տաղանդավոր նկարիչը նվիրել է «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակին, լի է ատելությամբ և զայրույթով ամեն տեսակ թշնամու դեմ: Կտավի տաք գույները համակված են պոետական խոսքի անմիջականությամբ, դիտողի

ИЗВЕЩЕНИЕ №

Срочно

Симонян Корюн Степанович

Домашний адрес Водопьянова 103

Служебный адрес

Предлагается Вам „2" XII 1940 года к „11" часам явиться

~~„ часть Спецдрянского Райвоенкомата, ул. Налбандян, № 11~~

„школа им. Шевченко и Свердлова

При явке иметь с собой военный билет и настоящее извещение

За несвоевременную явку Вы будете привлечены к ответ

РАЙВОЕНКОМ

Извещение Симоняна К.

ПОЛУЧИЛ: „ „ 194 г. „ „

(Подпись)

Երևանի Սպանդարյանի շրջանի զինկոմիսարիատից Կ. Սիմոնյանին ուղղված զինակոչի ծանուցագիրը:



Հայաստանի նկարիչների միության վարչության շնորհակալագիրը Կ. Սիմոնյանին՝ Մարտիրոս Սարյանի ստորագրությամբ:

մեջ ոչ միայն ատելություն են պատվաստում թշնամու հանդեպ, այլև վարակում նրան հայրենապաշտությամբ և անձնվեր նվիրումով: Զոհված նկարչի ամեն մի գիծ, գույն, ամեն մի գունախտացում կամ նոսրացում ունի որոշակի նպատակ: «Արարատը» նա պատկերել է Երևանից: Նկարչի երկշերտ գունաբաժանումը խորհրդանշում է հայոց ծաղկող քաղաքամայրն ու նրա դիմաց խորհրդավոր մշուշով պատված բիբլիական Նոյան լեռը: Արարատը հավերժակեցության խորհրդանիշ է, Երևանը կտավում լույսի և խոյանքի տեսքով է հառնում: Կորյուն Սիմոնյանը, որքան որ հմտորեն էր պատմական թեմատիկային տալիս արդիական գունալուծումսեկնություն, այնքան էլ կարողանում էր վարպետորեն ներքողել նորը, որը վաղը պիտի պատմություն դառնա: Միթե դրա վառ ապացույցը չէ նկարչի «Հանդիպում» ջրաներկ ստեղծագործությունը, որը ցուցադրվեց Երևանում 1942 թ.: Մեծ հոկտեմբերի 25-ամյակին նվիրված հոբելյանական այս ցուցահանդեսի ժամանակ Կ. Սիմոնյանը 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայի 505 (մինչ այդ 677) հրաձգային գնդերից մեկի մատակարարման բաժնում էր ծառայում: Լեյտենանտ նկարիչը Տուապսեի, Մայկոպի, Մոզդոկի մոտերքում՝ Պշիշի հովտում, բազմիցս գընդացրային կրակ է բաց արել թշնամու վրա: Ի՞նչ իմանար զինվոր բասենցին, որ ինքը էլ չի վերադառնալու իր ժողովրդի գիրկը, չի կարդալու արվեստաբան Մ. Բաբենչիկովի գովեստն իր ստեղծագործությունների մասին, նորից չի թերթելու «Հայաստանի կերպարվեստը քսան տարում» և «Հայաստանի նկարիչները Հայրենական մեծ պատերազմին» ցուցահանդեսների կատալոգները, չէ որ նրանցում իր մասնակցությունը կար... «Անձրևից հետո», «Նորքը այգիներից», «Սևանի ափին», «Ցամաքաբերդ», «Թոխմախան լիճը» և բազմաթիվ ու բազմանուն այլ ստեղծագործություններ տեսնող-գնահատողները համոզված են, որ Կ. Սիմոնյանն ավելի կաճեր: Դա է վկայում նաև 1939 թ. «Նկարչական շրջիկ արվեստանոցի էտյուդային աշխատանքների հաշվետու 3-րդ ցուցահանդեսի» կատալոգը (էջ 34, 73—74): Նկարչի տարասլուժե, տարբեր լուծման և տարբեր չափսերի այստեղ ցուցադրված տասնյոթ ստեղծագործություններն էլ արժանացել էին արվեստասեր հասարակայնության բարձր գնահատականին: Այդ նույն ցուցահանդեսի կատալոգում 1940 թ. տպագրվել էր նաև Կ. Սիմոնյանի «Զմեռ» էտյուդային աշխատանքը: Կ. Սիմոնյանի կտավները նրա հերոսական մահից հետո էլ շարունակում են զարդարել Հայաստանի պետական պատկերասրահը: Քառասունհինգ տարուց ավելի է, ինչ «Յուսուֆի սպանությունը» (147×193) յուղաներկ կոմպոզիցիան չի իջնում պատկերասրահի պատից: ՀՊՊ-ի 1956, 1960 և 1965 թվականներին տպագրված կատալոգներում Կ. Սիմոնյանին առանձնահատուկ տեղ է հատկացված: Նրա անունը փորագրված է Հայաստանի նկարչի տան նախամուտքի մարմարե հուշատախտակին: Չնայած հանրապետական մամուլում («Սովետական արվեստ», «Սովետական Հայաստան», «Երեկոյան Երևան» և այլուր) Կ. Սիմոնյանի և պատերազմում զոհված մի քանի նկարիչների մասին եղել են խիստ ամփոփ նյութեր, բայց և այնպես ցավալի է, որ մինչ այսօր ընթերցողը, արվեստի երկրպագուն ձեռքի տակ չունի մի գիրք, մի մատյան կամ հուշալրոմ, որտեղ հնարավոր լիներ ծանոթանալ հայրենիքի համար գիտակցված մահով անմահացած տաղանդաշատ նկարչի ստեղծագործական և մարտական ուղուն: Չէ որ դեռ քառասուներեք տարի առաջ Հյուսիսային Կովկասի ազատագրման համար մղված մարտերից հոգնած՝ նա նորից վիրավոր ձեռքն է առել գրիչը և մարդուն ու ապագային երկրպագելով գրել է. «Իմ կյանքը և իմ վրձինը պատկանում են իմ ժողովրդին...»:

Ռազմաճակատից ստացած Կ. Սիմոնյանի մի նամակի հենց այս տողերով էլ սկսեց իր գրույցը «Արմենիա» հյուրանոցի սրճարանում Հայկ. ԽՍՀ ժողովրդական նկարիչ Խաչատուր Եսայանը: Ֆրանսահայ Զոհրապ Մուրադյանին ճանապարհելուց հետո պրոֆ. Հրանտ Թամրազյանին, արձակագիր Մուշեղ Գալշոյանին և ինձ վաստակաշատ նկարիչը հրավիրում է իր տուն, սեղանին դնում Կ. Սիմոնյանից ստացած նամակները, անմոռաց հուշերով վերականգնում ընկերոջ դիմանկարը: Ցավոք ես այդ օրը չհասցրի դրանք արտագրել: Ուրախալի է, որ զոհված նկարչից պահպանված գրավոր այդ մասունքները այսօր մշտապես հանգրվանում են Հայաստանի պետական պատկերասրահում (Խ. Եսայանի ֆոնդ): Այստեղից էլ ձեռագրային բաժնի վարիչ Անգին (Գանա) Առաքելյանի օգնությամբ որոշ նամակներ ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը, քանզի դրանք ոչ միայն ռազմաճակատային փաստագրություններ են, այլև խոհեր, դատողություններ Մարդու, Արվեստի, Հայրենիքի և Կյանքի մասին:

ԿՈՐՅՈՒՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Սիրելի ընկ. Խաչիկ.

Երկար ժամանակ է, ինչ բաժանված եմ ընկերներից և ոչ մեկից ոչ մի տեղեկություն չունեմ: Այդ խնդրում հանցանքն իմն է, չնայած ամեն անգամ մտածում եմ գրելու...

Այժմ կարդալով բացված ցուցահանդեսի վերաբերյալ տեղեկություններ, որպես երբեմնի արվեստի աշխատակից, ողջունում եմ Հայրենական մեծ պատերազմին նվիրված Հայաստանի կերպարվեստագետներին. նրանց՝ հաջողություն, վրձնին՝ թափ, մուրճին՝ հատու հարված, գրչին՝ առավել սրություն:

Ներկա Հայրենական ազատագրական պատերազմի պայմաններում սովետական կերպարվեստի դերն ու նշանակությունը ավելի քան մեծ է: Կտավի վրա պատկերել կարմիր բանակի սքիրագործությունները, սովետական ժողովուրդների դյուցազն զավակների լեգենդար էպիզոդները, մասսային զինել մարտական ոգով, անհուն ատելության կրակ վառել ընդդեմ նենգ թշնամու՝ նրան վերջնականապես ջախջախելու համար: Թող ձեր վրձինները մարտական՝ դառնան զենք, կտավները՝ ձգող ուժ...

Խաչիկ ջան, չգիտեմ՝ դու մտաբերում ես քո ընկերոջը, որը ամենախորը զգացումներով կապված է քեզ հետ:

Խոստովանում եմ, տեսնվելու մեծ կարոտ եմ զգում, սա չվերագրես սենտիմենտալիզմի, հանախ մտաբերում եմ զանազան մանրամասնություններ և մի տեսակ հաճելի է հիշելը:

Խաչիկ ջան, մի փոքր տեղեկություն իմ մասին, աշխատում եմ գնդիս ակումբում որպես նաչալնիկ, շատ ծանրաբեռնված եմ լինում, բացի դրանից դիվիզիայի շտաբից էլ զանազան հանձնարարություններ եմ անում, իհարկե, արվեստի գծով:

Այժմ դիվիզիայի համար իլյուստրացիայի եմ վերածում 130 հրամանը, էսքիզները այսօր ներկայացրի, հույս ունեմ վատ չի լինի:

Գրի ցուցահանդեսի մասին, քո աշխատանքների մասին:

Հայտնիր խորին հարգանքներս վրձնի մեծ վարպետ Մ. Սարյանին, մեր վարպետ նկարիչներին, հատկապես Գ. Գյուրջյանին, Ա. Սարգսյանին, Ս. Ստեփանյանին, Ուրարտուին, Սեթոյին, Մհերին, Արմիկին, Կոջոյանին, Քոլոզյանին, Սավալանին և մյուս նկարիչներին:

Բարևիր Սեդային, Ռուզաննային (ալո, ո՞վ է խոսողը):

Շան տղա, օյին չսարքես: Ասա՛, թող գրեն: Առանձնապես բարևներս Ռուզաննային:

Մտերմական բարևներով՝ **Կորյուն**

11.5.42 թ.

Полевая почта,
Станция 1460, 677 с. полк,
11—б-он, взвод снабжения,
Симоняну Корюну

Խաչիկ ջան, խնդրում եմ շտապ պատասխանես:

●

Խաչիկ ջան,

Ի սրտե շնորհավորում եմ պարտշարքերը անցնելդ որպես թեկնածու, հույս ունեմ բոլշևիկորեն կկատարես քո վրա դրված հույսը, միշտ բարձր պահելով այդ բարձր կոչումը...

Խաչիկ ջան, Հայրենական պատերազմի պայմաններում պարտիականի դերը առանձնապես կարևոր է: Այժմ իմ ամենամեծ ցանկություններից մեկը դա է՝ լինել պարտիայի անդամ, բայց այստեղ համատեղ աշխատանքի մեկ տարվա պարտիական ընկերներ չունեմ: Պահանջվում է երեք հոգի, կարգը գիտես, ուզում եմ ընկ. Արային դիմել երաշխավորելու համար: Նրան կգրեմ առանձին:

Զգիտեմ՝ էլ ովքեր կան, որոնք ինձ կարող են երաշխավորել:

Խաչիկ ջան, ձեր նամակների պատասխանը ուղարկել եմ, ինչպես երևում է չեք ստացել, որ Ռուզաննան էլի չարացած է վրաս:

Սրանով երեք նամակ եմ գրում այսօր, մի քիչ ազատ եմ: Երևի յոթ երեխա ունեցող հայրը այնքան չի անհանգստանում իր ընտանիքով, որքան ես՝ ձեզանով: Ծտապում եմ, լցվեցին, սեմինար է լինելու:

Ես շատ լավ եմ, ձեր կարոտն եմ քաշում, համբուրում եմ բոլորիդ:

Խաչիկ ջան.

Տեսնում եմ, որ լռության մեջ դու ինձանից համառ ես: Եթե ես երկու նամակ գրելուց հետո իրավացի էի նամակի սպասելու, ապա դու իրավացի չէիր լռելու: Ինձանից չնեղանաս, Խաչիկ ջան: Տեսնում ես, որ էլի ես եմ գրում: Գուցե քեզ հասկանալի չէ իմ պահանջկոտությունը նամակի խնդրում. չեմ աշխատում բացատրել, հավանական է, շատ ես զբաղված. ես աշխատում եմ հասկանալ քո դրությունը և ոչնչով չեմ մեղադրում քեզ:

Խաչիկ ջան, դու խնդրել էիր, որ աշխատեմ, մի բան ներկայացնեմ ցուցահանդեսին: Մի էտյուդ էի նկարել, նայում էի և հրճվում, առանց չափազանցելու, էտյուդը կատարյալ էր թվում ինձ: Գիտես, որ չեմ սիրում իմ մասին խոսել: Բայց տվյալ դեպքում իմ կողմից մեծամտություն չհամարես և հավատա, որ նկարածս էտյուդը արժեքավոր է, գոնե ինձ այդպես է թվում: Հատկապես հաջող են սպիտակ մարմարյա սյուները:

Այդ աշխատանքիս հետ մի դժբախտություն պատահեց, որ մինչև հիմա ափսոսում եմ: Ափսոսում եմ, որովհետև երբևիցե ինձ չի հաջողվելու այդպիսի աշխատանք տալու: Երբ դիտում էի և մտածում ցուցահանդեսին ուղարկելու, արթնացա և հույսերս ու նկարս անհայտացան:

Խաչիկ ջան, դրա կողքին մի իրականություն էլ կա, որը ինձ չի ոգևորում, խոսքս վերաբերում է «Հանդիպում» էսքիզին, որը, հավանական է ստացել ես նկարիչ Հարությունի միջոցով: Քո լռելն էլ ասում է, որ ասելիք չկա:

Խաչիկ ջան, այժմ ընկերների լռելն ավելի է անհանգստացնում, քան թե չաշխատելը, բոլորը խոսքը մեկ են արել...

Գուցե միանգամայն մտերմական տոնով գրած իմ կատակներով քեզ վիրավորանք եմ պատճառել, այդ մասին նույնպես մտածում եմ:

Երբեք չեմ կարծում, որ որևէ փոքր խնդիր կարող է մեր մտերմության մեջ դեր խաղալ, քանի որ դրա հիմքում, մեզ կապող լուրջ կողմ կա, դա արվեստն է, իսկ դրանում դեռ ինձ իրավունք եմ վերապահում:

Խաչիկ ջան, հիշո՞ւմ ես՝ մի ցուցահանդեսում մի էտյուդ ունեի, այգին աշնանը, վարդագույն գամայով, որը հավանեցիր և ուզում էիր հիշատակ ունենալ: Այժմ շատ եմ ափսոսում, որ չեմ տվել, ոչ թե քեզ արժանի չեմ համարել, երբեք, այլ չեմ սիրել առհասարակ նման բան:

Այժմ ինձ մեծ բավականություն պատճառելու համար կուզենամ այդ նկարը նվիրած լինել քեզ:

Միայն անհարմար ոչ մի բան չզգաս, գրեմ մերոնց, դու գիտես՝ որն է և կվերցնես: Հասցեն.

Водопиянова
103 Елоян
հորեղբայրս է

Գրիր ձեր աշխատանքների մասին, ինչպե՞ս է գնում ցուցահանդեսի նախապատրաստությունը:

Շատ բարևներ հայտնիր Արմիկին, Ռուզաննային...

Խորին հարգանքներս մեծանուն վարպետ, Հայաստանի արև Մ. Սերգեևիչին, Գ. Միխայլովիչին, Հ. Գերասիմովիչին, ընկ. ընկ. Արային, Ստեփանյանին և մյուս բոլոր նկարիչներին:

Սպասում եմ...

Մնամ միշտ հավատարիմ՝
քո ընկեր **Կորյուն**
2.10.42 թ.

Հարգանքներս Ռուզաննային
Նոր հասցես է
1460 Полевая почта, часть 505
Симоняну К. С.

Խաչիկ ջան.

Ստացա ուղարկածդ բացիկը, ինչպես երևում է նամակներիցդ, շատ զբաղված ես կամ վազեվազ նոր ես եկել, կամ նոր ես վազելու, եթե բացիկ էլ գրում ես, քո տաղանդին ես պարտական: Երբ խաղաղ ժամանակ սրընթաց աքաղաղն էլ քեզ չէր հասնում, ապա այժմ մրրիկի հետ ես մրցում: Ոտնատակ տալով Երևանն իր շրջակայքով, շատ տեղեր ոտդ չի առնում հողին, վրայից ես թռչում:

Երևի բացիկը թռչելու մոմենտին ես գրել, որ ժամանակ չի եղել մի երկու խոսք քո և ընկերների աշխատանքի մասին ասելու: Կարծում եմ շատ բան կար ասելու, իսկ քո «շեդևրի» մասին լռելը երևի հիմք ունի: Կամ թե արդեն իրոք խամրել ես իմ կողքին: Տո շա՜ն տղա, մենակ դու չես, որ զզվել ես քեզանից, հալա մոտդ

կանգնածներին հարցրու, Ռուզաննային հարցրու...

Տո անամոթներ, տո քաչալ շան տղերք, երբ պետք է մարդ դառնաք, մարդկանց դարդը իմանաք, մի երկու տող էլ ա գրեք:

Քաչալ ջան, շատ շնորհակալ եմ քո հոգատարության համար, որ արժանացա այս ցուցահանդեսին մի փոքրիկ տեղ ունենալու... Ցուցահանդեսի բացման առթիվ լույս տեսած հոդվածը կարդացի: Թույլ տվեք մի փոքր ուշացումով շնորհավորելու Նկարիչների Միության կազմակերպած ցուցահանդեսի բացումը և ամբողջ սրտով ցանկանալ նկարիչների ստեղծագործող ամբողջ կոլեկտիվին նորանոր հաջողություններ: Խաչիկ ջան, թերթում տեսա Բաբկենի աշխատանքի ռեպրոդուկցիան: Լսեցի, որ ինձ նկարել է կոմպոզիցիայի մեջ և շատ հաջող է: Նախ շատ ուրախ եմ, որ վերջապես ընկա պատմության մեջ, և, եթե կարող է, թող իր նկարի ֆոտոն ուղարկի, ինչպես և դու, գոնե ֆոտոներով գաղափար կազմեմ ձեր աշխատանքների մասին:

Կատալոգը չմոռանաս:

Շան տղա, ուլտրամարինի սերը նորից արթնացնում ես, իրոք որ սիրում եմ, այդ գույնի ազդեցությունը զգում եմ բոլոր առարկաների վրա այս կամ այն չափով... Բայց դու պակաս չես ուտում ուլտրամարին:

Գրիր ցուցահանդեսի մասին:

Բարևիր Բաբկենին (ապերախտ է)

Աշոտին (նույնպես)

Օնիկին

Թարյանին

Քաչալ ջան, հույս ունեմ՝ այս անգամ մի հիմնական նամակ կգրես, թռչող մեքենադ ռեմոնտի կտաս, ինքդ էլ մի փոքր տեղդ կնստես և կգրես:

«Զզվելի շուն»,

Համբուրում եմ՝
միշտ քո **Կորյուն**
20.11.42 թ.

«Անտաղանդ շան տղա», ասում են՝ իմ էսքիզի պատճառով քո աշխատանքի մոտ լիքը ժողովուրդ է հավաքվում, դու էլ քո աշխատանքն ես ցույց տալիս. «Էստի՜ համեցեք»...

Գրիր մի լավ բան:

2.12.42 թ.

Սիրելի Խաչիկ.

Այս նամակով առանձնապես ոչինչ չունեմ քեզ գրելու:

Այժմ գրում եմ չիմանալով ինչ գրել:

Այսօր ամբողջ ժամանակ մտածել եմ ինչ գրելու չեմ կարողացել նյութ գտնել, բայց գրում եմ քեզ տեղյակ դարձնելու միայն մի նորության (փոփոխության) մասին: Այդ պարտքի գիտակցությամբ գրում եմ, որ էլի վրաս չհարձակվեք հայհոյանքներով, եթե բախտ ունենամ քեզանից նամակ ստանալու:

Սիրելիս, մի խնդիրք ունեմ, որ սրանից հետո հաճախ գրես՝ առանց սպասելու նամակներիդ ժամանակին պատասխանի:

Դու ինքդ պետք է հասկանաս, թե որքան դժվար կլինի այսուհետ ազատ րոպե գտնել գրելու:

Վաղը մեկնում ենք. իմ տեղի և դրության մասին կտեղեկացնեմ, հասցեն առայժմ մնում է նույնը:

Ես շատ լավ եմ, տրամադրությունս՝ բարձր, հայրենիքի հանդեպ ունեցած պարտքի գիտակցումը ինձ մարտի է մղում օր առաջ:

Իմ սիրելի ազգի ազատությունը ամենաբարձրը իդեալն է ինձ համար. պաշտում եմ իմ հայրենիքը, նրա հողն ու ջուրը, նրա բարձրանիստ լեռներն ու ծաղկուն հովիտները, նրա մրգաստանները: Սրբություն է այդ ազգի անցյալ, դարավոր, հոյակապ կուլտուրան, այն ենթարկվել է տարբեր ժամանակներում հրոսակախմբերի ավերման և ոչնչացման, բայց մեր ազգասեր, ստեղծագործ ժողովուրդը գոյություն ունենալու իրավունք է նվաճել:

Պարտք ունեմ հայրենիքիս հանդեպ. նրա չքնաղ առօրյայի, նրա մանուկների ժպիտի, նրա դրախտ այգեստանների գոյության հանդեպ:

Սիրելիս, դե թույլ տուր գրկախառնվելու Մասիսի չքնաղ ֆոնի վրա:

Բարևիր բոլորին...

Միշտ նույնը՝ քո **Կորյուն**

ԿՈՐՅՈՒՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Կուրղինյան Կոնստանդին**— Ծաղիկներ արվեստագետ մարտիկի շիրմին, ՀՉ, 1980, 7 մայիսի, էջ 5;

2. **Գրիգորյան Սասուն**—Անավարտ կտավներ («Մուսաները չլռեցին» գրքից), Սովետական արվեստ, Ե., 1978, № 12, էջ 41—43:
3. **Գրիգորյան Սասուն**—Գույների վարպետը, Ավանգարդ, 27 հունիսի 1984, № 78, էջ 3:
4. **Դգնունի Դանիել**—Հայ արվեստագետներ (համառոտ բառարան), Ե., 1977. էջ 447:
5. **Գրիգորյան Սասուն**—Հիշեցեք նրանց, Ավանգարդ, 18 մայիսի 1975, էջ 3:
6. **Քոլոզյան Բաբկեն, Հարությունյան Վահան**— Նկարիչներ (զոհված հայ նկարիչների մասին), Ս. արվեստ, 1958, № 8, էջ 55—58:
7. **Կուրդոյան Եղիշե**—Կտավները մնացին անավարտ, ՍՀ, 9 մայիսի 1974, էջ 4 (տպագրված է նաև Կ. Ս.-ի «Ինքնանկարը»):
8. Հայկական ԽՍՀ ներկարվեստը (կազմեց Մանյա Ղազարյանը), Մոսկվա, Սովետ. խորհրդային, 1978, էջ 211—212, իսկ էջ 80-ում տպագրված է նկարչի «Ինքնանկարը»—ՀՊՊ-ի ֆոնդերից:
9. **Գրիգորյան Սասուն**— Մուսաները չլռեցին, ԳԹ, 5 մայիսի 1985, № 18, էջ 2:
10. Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 10, Ե., 1984, էջ 377:
11. **Առաքելյան Անգին**— «Նամակները չեն ծերանում», ԳԹ, Ե., 1985, 9 մայիսի, էջ 4:

ԿՐՈՒՆԿ ԼԵՎՈՆԸ

ԼԵՎՈՆ ԱՐԱՄԻ ՏՈՆԱԿԱՆՅԱՆ (1911—1943)

Երևանի Ղուկասյան փողոցի № 16 շենքի բակում ազատ ժամերին հաճախ էին հարայհրոցով, ամեն ինչ մոռացած պատանիները ֆուտբոլ խաղում: Կենտրոնական հարձակվողն ու գոլերի մեծ մասի հեղինակը Լևոն Տոնականյանն էր՝ № 1 տան աշխույժ ու չարաճճի տղան: Բոլորը նրան Կրունկ Լևոն էին ասում (կրունկով հմտորեն գնդակներ խփելու համար): Ֆուտբոլից և լողից բացի, Լևոը սիրում էր նաև մասնակցել դպրոցում կազմակերպվող թատերական միջոցառումներին, երգում էր ու պարում, մեկմեկ էլ թաքուն բանաստեղծություններ էր գրում:

— Եղբայրդ նկարե՞լ էլ գիտի,— կատակով ուզեցել են ընկերուհիները խաղալ Անահիտի հոգու հետ:

— Իհարկե. Լենինականում Լևոնը սովորում էր նկարչական ստուդիայում:

— Մի խոսքով, ասա, ախպերդ շարժական արվեստանոց է...— սրամտել էր մի ուրիշը:

Դառն է եղել Լևոնի մանկությունը: Չորս տարեկան էր, երբ արյունախում ասկյարները ներխուժեցին իր հայրենի քաղաքը՝ Արդահան: 1915 թվականն էր: «Որոշված է հիմնովին բնաջնջել Թուրքիայում ապրող բոլոր հայերին: Ուշադրություն մի դարձրեք ոչ տարիքին, ոչ սեռին, ոչ խղճի խայթին»,— այսպես էր հրամայել Թուրքիայի ներքին գործոց մինիստր Թալեաթը՝ Հիտլերի էլ ավելի վայրի նախատեսակը: Եվ իրոք. մի քանի օր հետո մասսայական բնաջնջմանը զոհ գնացին մանկավարժ Արամ Տոնականյանն ու նրա կինը՝ Լուսիկ Ազնաուրյանը: Անապատան հայ որբուկների բանակին ավելացան Հայկուշ և Անահիտ, Վարդան և Լևոն Տոնականյան քույրերն ու եղբայրները: Մանկատնից մանկատուն, որբանոցից որբանոց (Ախալքալաք, Սուրամի, Թիֆլիս, Կարս...), ո՞ւր ասես, որ կյանքը չնետեց նրանց, մինչև որ հանգրվանեցին Ալեքսոլի (Լենինական) ամերիկյան որբանոցում: Լևոնն այստեղ ապրեց մինչև 1926 թ.: Որբանոցում հաճախեց դպրոց, նկարչության առաջին դասերը նա այստեղ ստացավ: Իր հետագա գործունեության մասին նկարիչների միությանը տված ինքնակենսագրականում նա համառոտ գրել է. «1926 թ. Լենինականից եկել եմ Երևան և ընդունվել գեղարվեստաարտադրական տեխնիկում: 1930-ին ավարտել եմ տեխնիկումը և մեկ տարի որպես ուսուցիչ աշխատել Լենինականում: 1931 թ. ինձ գործուղել են սովորելու Լենինգրադի Գեղարվեստի ակադեմիա: 1937 թ. ավարտել եմ Լենինգրադի Գեղարվեստի ակադեմիան և գործուղվել Ուկրաինա աշխատելու: Այստեղ ես աշխատեցի մի տարի: Այժմ ես Երևանի Գեղարվեստի ուսումնարանում ուսուցիչ եմ»: Այսպես է ավարտվում նկարիչների միության մեջ ընդունվելու համար



Լ. Տոնականյանի նամակը եղբորը՝ Վարդանին (վերջինս ևս զոհվել է ՀՄՊ-ում):

Լևոնի ձեռագիր կենսագրականը: Անձնաթերթիկային տվյալներից իմանում ենք, որ Լևոնը ՀամԼԿԵՄ անդամ է եղել 1931 թվականից, ակադեմիայում սովորել է գեղանկարչության բաժնում (Ֆրենցի արվեստանոց), Ուկրաինայում մեկ տարի գեղանկարչություն է դասավանդել Դնեպրոպետրովսկ քաղաքում: Երևան տեղափոխվելիս որոշ ժամանակ ապրել է Ասրիև փող. № 1 շենքի № 5 բնակարանում: Մինչև հերթական զինծառայության կանչվելը Լևոնը կռվել է սպիտակ ֆինների դեմ (1939 թ.), եղել է մայրաքաղաքի գեղարդ տեխնիկումի կոմպոզիցիայի և գեղանկարչության սիրված դասատուներից, 1939 թ. ապրիլին նա ընդունվել է ԽՍՀՄ նկարիչների միության շարքերը (տես՝ ՀՆՄ-ում նրա անձնական գործը, էջ 1): Պատերազմը Լևոնը դիմավորեց Լենինգրադում: Այստեղից նա եղբորը՝ ինժեներ Վարդան Տոնականյանին, որը հետո զոհվեց Մոլդոբեկում, գրում է. «Վարդան ջան, ինչպես հայտնի է, ես այս ամռանը Լենինգրադում էի, և դա իզուր չանցավ. զինվորական լագերում 15 օր մնացի, ավարտեցի «Լետնյայա շկոլա, պերվայա ստուդիան» բավական հաջող... Լագերից հետո ստացա շատ մեծ պատվեր՝ 15000 ռուբլու առանձին և 4000 ռուբլու առանձին...»:

Զինվորական քաղաքաժնի կողմից ստացած պատվերները հասցրե՞լ է իրագործել Ֆրենցի գերազանցիկ հայ սանը, թե՞ ոչ. ի՞նչ այժմեներ են ունեցել Լևոնի այդ կտավները, պահպանվո՞ւմ են դրանք այսօր, թե՞ նրանք էլ պաշարված Լենինգրադում ունեցան իրենց հեղինակի ճակատագիրը. զոհվեցին... Այս բոլոր հարցերին միգուցե կարողանա պատասխան տալ նրա այրին՝ նկարչուհի Ելենա Տաբակովան, զոհված նկարչի ուսանողական օրերի և կարճատև կյանքի ընկերուհին, որը 1939-ին Լևոնի հետ կարճ ժամանակով եղավ Հայաստանում (Ցավոք նրա հետ մինչ օրս չենք կարողացել կապվել և լրացուցիչ տեղեկություններ ստանալ Լևոնի մասին):

Լևոն Տոնականյանը, ինչպես գեղարվեստի ակադեմիայում սովորող իր ընկերներ Կորյուն Սիմոնյանն ու Անդրանիկ Մարկոսյանը, որոնք ևս զոհվեցին Մեծ հայրենականի տարբեր ռազմաճակատներում, ստեղծագործական իր առաջին քայլերով շնորհալի արվեստագետի ապագա էր խոստանում: Որպես ՕՄԽՐ-ի անդամ տասնյոթամյա Լևոնը (ծնվ. 1911 թ.) առաջին անգամ ցուցահանդեսի է մասնակցում՝ ներկայացնելով հետևյալ ստեղծագործությունները.

1. «Դաշնակցական Հայաստանը» (տուշ)
2. «Դաշնակների բարբարոսությունը» (տուշ)
3. «Հեղափոխական բանվոր» (տուշ)
4. «Ստիլիզացիա» (տուշ)
5. «Զրվեժ» (էտյուդ, յուղ. կտավ)
6. «Ալագյազ» (էտյուդ, յուղ. կտավ):

Երիտասարդ արվեստագետների հայաստանյան առաջին օլիմպիադային նվիրված «Հայկ. ԽՍՀ կերպարվեստի ցուցահանդես. 1928—1930 թթ.» կատալոգից (Եր., 1930 թ.) տեղեկանում ենք, որ Լևոնի հետ այդ ցուցահանդեսին մասնակցել են նաև իր դասընկերները՝ Վ. Կարապետյանն ու Գ. Բրուտյանը, Ա. Կարճիկյանն ու Կ. Ղազարյանը, Լ. Մոլևանն ու Յու. Վերեժեբեցկայան, Մ. Փանոսյանն ու ուրիշներ, որոնց հետ նա ուսանել է Լենինականում Ստեփան Ալթունյանի մոտ:

Լևոն Տոնականյանի ստեղծագործություններից մեկը, որ կոչվում է «Ինքնադիմանկար» (յուղ. կտավ, 49×42,3), այսօր պահպանվում է Հայաստանի պետական պատկերասրահում (Բ-1705, 11319): Երևան քաղաքի պատմության

Լ. Տոնականյան, «Ինքնադիմանկար» (ՀՊՊ-ի ֆոնդ):

Լ. Տոնականյանը կնոջ՝ Ելենա Տաբակովայի հետ (այժմ հանրահայտ նկարչուհի, ապրում է Լենինգրադում):

թանգարանում «հավերժական» ֆոնդ են ճանաչվում զոհված նկարչի «Վերակառուցվող Երևանը» (մուտք № 879) և մայրաքաղաքի հնագույն թաղամասերից մեկը՝ Կոնդը, պատկերող երկու այլ (մուտք № 956 և 960) յուղաներկ կտավները, որոնք խոնավությունից և անուշադիր վերաբերմունքի պատճառով խամրել են, գունաթափվել ու ծակծկվել: Թանգարանային անձնագրերից իմանում ենք, որ «Վերակառուցվող Երևանը» (75×95 սմ) յուղաներկ կտավը Լևոնը նկարել է 1935 թվականին: Թանգարանն այն գնել է հեղինակից 1940 թ., այսինքն «ողջ և առողջ» վիճակում: Քանի որ թանգարանի նորոգման պատճառով ֆոնդադարանը «խառն էր» (մեզ այդպես պատասխանեց ֆոնդերի տարեց պահապանը), մենք հնարավորություն չունեցանք տեղում աչքով տեսնելու զոհված նկարչի 40—45 տարի առաջ ստեղծած «Տեսարան Կոնդից-1» և «Տեսարան Կոնդից-2» կտավները, ստիպված բավարարվեցինք նրանց համառոտ «պասպորտիզացիայով»: Ահա դրանք՝ ըստ իրենց մուտքային համարների.

«879—«Վերակառուցվող Երևանը»: 1935 թ.: Նկարում առաջին պլանի խարխուլ տներից հե-

տո ցուցադրված է նորակառույց շենք, աջ անկյունում՝ ինքնագիրը: Վիճակը վատ, գույները խամրած: Կտավ, յուղաներկ: Ձեռք է բերված հեղինակից 1940 թվականին, չափը՝ 75×95»:

«956— «Տեսարան Կոնդից-1»: 1940 թ.: Ձեռք է բերված Երևանում 1940 թ. 359 ռուբլով, կտավ, յուղաներկ: Նկարում՝ Կոնդի զանգվածից մի տեսարան, առաջին պլանում՝ մի ծուռ փողոց: Վիճակը՝ մաշված-թարմացրած, չափը՝ 81×132 սմ»:

«960— «Տեսարան Կոնդից-2»: Յուղաներկ կտավ, 80×130 սմ: 1939 թվական: Ձեռք է բերված 1940 թ. հեղինակի հարազատներից: Վիճակը՝ մաշված, ծակ, ստորին մասում գույնը թափված: Նկարում՝ հին, ցածրահարկ տներ, կենտրոնում՝ փռած լվացք»:

Ծանոթանում ենք Լևոն Տոնականյանի Երևան քաղաքի թանգարանում «պահպանված» կտավների կենսագրությանն ու զարմանում. այդ կտավնե՞րն են միայն այդպես **ծակ, մաշված, խամրած, գույնը թափած,** թե՞ նրանց խնամակալների պարտականությունն ու խիղճը: Այցելում ենք Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղը, հանդիպում Լևոնի քրոջը՝ Հայկուշին: Նրա մոտ լռության և անհայտության ճակատագրով դատապարտված շարունակում են մանառների կարասների գլխավերևում «գինեհոտով արբենալ» զոհված նկարչի «Նատյուրմորտ» և «Պարտիզաններ» յուղաներկ կտավները: Բաժանվում ենք Հայկուշ Տոնականյան-Ֆահիրադյանից և մտածում, որ նման դժբախտ ճակատագրերի չէին արժանանա Լևոն Տոնականյանի ստեղծագործությունները, եթե նրանց իսկական տերը՝ Հայաստանի նկարիչների միությունը, զոհվածներին նվիրված հուշատախտակին Լևոն Արամի Տոնականյանի անունը փորագրելուց բացի սրտացավ վերաբերվեր նաև նրա վաստակին. Լենինականից, Երևանից, Լենինգրադից, Դնեպրոպետրովսկից, Աշտարակից... հավաքեր, ի մի բերեր և տպագրեր ու ցուցադրեր հայրենիքի համար իր երեսուներկուամյա կյանքը զոհած երիտասարդ նկարչի, մանկավարժի և անձնվեր զինվորի այսուայնուր սփռված բազմաժանր և բազմաբովանդակ ստեղծագործությունները: Չէ որ զոհված արվեստագետը առաջին հերթին ապրում է իր ստեղծագործություններով, հետո նոր միայն քարին փորագրված իր անունով: Զոհվածների հիշատակը պարտադրում է ուշադիր ու հոգատար լինել նրանց ժառանգության և վաստակի հանդեպ:

ԼԵՎՈՆ ՏՈՆԱԿԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Գրիգորյան Սասուն**—Անավարտ կտավներ (հատված «Մուսաները չլռեցին» գրքից), Սովետ. արվեստ, Ե., 1978, № 12, էջ 44—45:
2. **Դզնունի Դանիել**—Հայ կերպարվեստագետներ, Ե., 1977, էջ 494:
3. **Գրիգորյան Սասուն**—Հիշեցեք նրանց, Ավ., 18 մայիսի, 1975, էջ 3:
4. **Քոլոզյան Բաբկեն, Հարությունյան Վահան**— Նկարիչներ (զոհված հայ նկարիչների մասին), Ս. Արվեստ, 1958, № 8, էջ 55—58:
5. **Կուրդոյան Եղիշե**—Կտավները մնացին անավարտ, ՍՀ, 9 մայիսի 1974, էջ 4:
6. **Գրիգորյան Սասուն**—Մուսաները չլռեցին, ԳԹ, 5 մայիսի 1985, № 18, էջ 2:

ԸՆԿԵՐՈՋՍ ԵՂԲԱՅՐԸ

ՍՈՒՐԵՆ ԱԴԱՄԻ ԱԴԱՄՅԱՆ (1923—1942)

Ամեն անգամ Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի գրապահոցից զոհված արվեստագետների մասին պահանջվող պատվերներս ժամանակից շուտ էին տեղ հասնում: Թեև ուրախանում էի, բայց միշտ այդ «շտապ օգնությունը» ինձ համար մնում էր անվերծանելի: Անսպասելի կերպով գաղտնիքը բացվեց: Պատվիրված ցուցահանդեսային կատալոգների, նկարչական տեղեկատուների, թերթերի ու ամսագրերի հետ մի օր ինձ է ներկայանում տարեց մի կին՝ հանրապետության վաստակավոր գրադարանավարուհի Նազիկ Ադամյանը:

— Դուք գիրք կամ հոդված գրելիս սիրո՞ւմ եք օգտվել հավաստի աղբյուրներից...

— Անշո՛ւշտ: Երախտապարտ կլինեմ, եթե գտնվի «հավաստի աղբյուրը»:

— Այդ դեպքում զոհված նկարիչ Սուրեն Ադամյանի մասին փոխանակ այդքան փաստագրական գրականություն ընթերցելու, Ձեզ խորհուրդ կտայի՝ հանդիպե՛ք ձեր աշխատանքային ընկերոջը՝ Բաբկեն Ադամյանին կամ նրա եղբորը՝ տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի դասախոս Զավեն Ադամյանին:

— Ձեմ հասկանում...

— Շա՛տ իզուր... Ձեր փնտրած զոհված նկարիչը նրանց եղբայրն է:

— Իսկ Դուք ի՞նչ գիտեք:

— Ես նրանց քույրն եմ...,— հուզված պատասխանում է գրապահոցի աշխատակցուհին և ափի մեջ սեղմած թաշկինակը մոտեցնում աչքերին: Իրոք գտել եմ «հավաստի աղբյուրս»,— խորհում եմ և այդ նույն երեկոյան այցելում ընկերոջս՝ Բաբկեն Ադամյանին:

— Եղբայրս,— սկսում է զրույցը «Հայպետտեխհրատի» նախկին խմբագիր Բաբկեն Ադամյանը,— ծնվել է Երևանում 1923 թ. հունիսի 20-ին: Հայրս ուսուցիչ էր և Սուրենի գրական նախափորձերին ջերմ համակիր և խորհրդատու: Մայրս՝ Աննան, ևս փափագում էր, որ իր որդին բանաստեղծ դառնա: Սուրենի գրական թռթռվանքները արժանացել էին Ալազանի և Նորենցի հավանությանը: Նրանք երբ Սուրենին ցույց էին տվել Եղիշե Չարենցին, վերջինս ասել էր.

— Դեռ տասներկու տարեկան է. փոքր է, որ տասնհինգ դառնա, կհասունանա, քաղցրությունը բերքից կզգանք...

Երևանի Աբովյանի անվան դպրոցի սանին այլ ապագա էր սպասվում. նրան գերել էր գույների կախարդական աշխարհը: 1937-ին Սուրեն Ադամյանի նկարչական ինքնաբացահայտումքննությունը Վահրամ Գայֆեճյանն ու Հմայակ Ավետիսյանը «գերազանց» գնահատեցին. Սուրենը ընդունվեց Երևանի գեղարդ տեխնիկում (Հմ. Ավետիսյանի դասարան): Օր-օրի աճում ու ձևավորվում էր երիտասարդ գեղանկարչի մտահորիզոնն ու գունապնակը: Անցավ չորս տարի, ու երբ պետական քննական հանձաժողովը դիտում էր «Բարիկադների վրա» կոմպոզիցիոն աշխատանքը, քննական սրահում ուրախ տրամադրություն էր համակել բոլորին: Սուրեն Ադամյանի դիպլոմային աշխատանքը գնահատվեց «գերազանց», հանձնաժողովի նախագահ Կորյուն Սիմոնյանն ու Ներսես Իսրայելյանը հրապարակավ հայտնեցին, որ իրենց սանին միջնորդում են ընդունվելու ԽՍՀՄ նկարիչների միություն որպես անդամության թեկնածու: Այդ օրվա դիպլոմային պետական քննությունը նման ապագա էր խոստացել նաև Սուրենի մի քանի ընկերներին՝ Սուրեն Ավագյանին, Պապիկ Գյոդակյանին, Վանիկ Մնաչերյանին, Համլետ Գևորգյանին, Հայկազ Գրիգորյանին, Լևոն Թոթովենցին, Զազիկ Ալթունյանին, նրանց ևս իրավունք էր վերապահվում առանց քննությունների, Հայաստանի կերպարվեստագետների միության միջնորդագրով ընդունվելու Լենինգրադի գեղարվեստի ակադեմիա կամ Մոսկվայի կերպարվեստի ինստիտուտ:

— Ցավոք այդ բոլոր ընկերներս էլ զոհվեցին: Ես էլ վերադարձա, ինչպես տեսնում եք, կաղ...— վերհուշի և պատերազմական դառնությունների սև կծիկը քարկապելով ոտքի է կանգնում Մեծ հայրենականի վետերան Հրաչյա Խուդավերդյանը ու նգովում բոլոր նրանց, ովքեր պատճառ դարձան, որ կտավները մնան անավարտ, ներկապնակը՝ գոց, վրձինը՝ չորացած:

— Սուրենը,— շարունակում է իր տեղեկանքը նկարչի եղբայրը,— հայրենիքի պաշտպանությանը զինվորագրվեց կամավոր: 1942-ին նա Բաքվի ռազմա-հետևակային ուսումնարանում ստացավ լեյտենանտի կոչում և որոշ ժամանակ անց արդեն մարտական դիրքերում էր: Նա իր նամակներում տեղեկացնում էր, որ իրենց գունդը թշնամու դեմ կռվում է Հյուսիս-օսեթական ինքնավար մարզի Օրդոնսի շրջանում: Ինքը վստահ է, որ թշնամին կպարտվի: Ահա ռազմաճակատային մի նամակից հատվածներ. «...Բաբկեն ջան, իմ մասին մի մտածեք. ինձ նման միլիոններ կան կողքիս, որոնք թողած տուն ու տեղ արնախում նեմեցի դեմ կռվում են գիշեր ու զօր՝ մոռացած քուն ու հանգիստ: Ինչպե՞ս կարող ես դու քեզ հանգիստ զգալ, երբ տեսնում ես, որ թշնամին, եթե մի երկու քայլ էլ առաջ գնա, կմտնի քո տուն, կսպանի քո հորն ու մորը, քրոջն ու եղբորը, քո սիրած աղջկան. հրդեհի բոցերի դեղին մահճում պիտ փոշիանան քո կտավները... Բաբկեն ջան, խնդրում եմ «Մորս պորտրեն» սրբությամբ պահպանես, անավարտ է, որ գամ, ավարտեմ... Դու գիտես, որ ես Հ-ին սիրում եմ, բայց ես իրեն ոչինչ չեմ ասել, աչքդ վրան պահիր, խաթրին կպնող չլինի... Օրերս մասնակցեցի մեր դիվիզիայի ցուցահանդեսին: Նկարս՝ «Հանձնվող նեմեցը», արտակարգ ընդունվեց, զինվորական թերթերը այդ մասին շատ գրեցին: Ուրախությունից և ներքին հպարտությունից ամաչում եմ: Դիվիզիայի տղաներն ինձ Խուդոժնիկ են ասում, արդեն ինձ իմ անունով ճանաչող չկա... Համբուրիր մերոնց, բարևներս հաղորդիր իմ ուսուցիչներին, իմ ընկերներին: Ասա՛, որ Սուրենը շուտով կգա. թշնամին անձնատուր կլինի»:

Վերջին նամակն էր. Ռասսվեց գյուղի մոտ թշնամու արձիճե գնդակը 1942-ի նոյեմբերին խոցեց տասնիննամյա հայ նկարչին: Գնդի հրամանատար Ժորայի (Գեորգի) և մյուս ընկերների վրեժխնդրությունն ու ցասումը դարձան զոհված նկարչի պատվո պահակները: Իր վերջնական հանգիստը պսակելով անմահությամբ՝ թաղվեց Սուրեն Ադամյանը Օսեթիայում, Ռասսվեց գյուղի եղբայրական գերեզմանում:

Բաժանվում եմ զրուցակիցներիցս և ցավում, որ չհաջողվեց զոհված նկարչից գոնե մի ստեղծագործություն գտնել՝ բացի նրա անավարտ «Վարդան Մամիկոնյանից»:

ՍՈՒՐԵՆ ԱԴԱՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Գրիգորյան Սասուն**— Անավարտ կտավներ (հատված «Մուսաները չլռեցին գրքից»), Սովետ. արվեստ, Ե., 1978, № 12, էջ 47.

ԶԱԶԻԿ (ԶԱՐՄԱՅՐ) ՍՏԵՓԱՆԻ ԱԼԹՈՒՆՅԱՆ (1922—1942)

— Զազի՛կ, Զազի՛կ, ինչո՞ւ ես ուշանում... Արի՛, շո՛ւտ արի, ընկերներդ արդեն ցուցահանդեսի են պատրաստվում, դու ո՞ւր ես: Կիսատ նկարներդ ո՞վ պետք է ավարտի, յուղաներկերդ չորանում են... արի՛, շո՛ւտ արի. ցուցահանդեսից մի՛ ուշանա...

Մահամերձ մոր վերջին խոսքերը ցնցում էին սնարի շուրջը հավաքվածներին, բոլորի հիշողության մեջ վերականգնվել էր Զարմայր Ալթունյանի դիմանկարը՝ երկար և թավ հոնքեր, սև աչքեր, ծիծաղկոտ, հումորով և հարցականով լի արատես հայացք:

Թեև մահվան տենդի մեջ Վարսենիկ մայրիկը տուն էր կանչում որդուն, բայց կարծես գիտեր, որ սուտ է, իզուր է. որդին զոհված կլինի, այլապես մի՞թե նա այդքան անսիրտ կգտնվեր մոր աղեկտուր նամակների, հոր հեռագրերի և քույրերի հեռավոր կանչերի հանդեպ...

Վաղուց է, ինչ կյանքին հրաժեշտ են տվել Ստեփան և Վարսենիկ Ալթունյանները, բայց նրանց տանը շարունակում է ապրել Երևանի գեղարդ տեխնիկումի գեղանկարչական բաժնի 1941 թ. շրջանավարտ Զազիկ Ալթունյանը: Պատից այցելուի ուշադրությունն են գրավում Զազիկի «Տեսարան Լենինականից» և «Զարթոնք» յուղաներկ կտավները: Սաթիկը հուզված է. նա դողդողալով հրամցնում է մեզ մի թղթապանակ, որը կոչվում է «Զազիկի արխիվ»:

Թերթում ենք: Ահա եռանկյունի մի նամակ՝ ուղարկված Թաման թերակղզուց, 1942 թ. մայիսի 8-ին: Կարդում ենք. «...Գրում եմ արդեն Ղրիմի ռազմաճակատից, բայց ահա էլի եմ կըրկնում, իմ մասին չմտածե՛ք. ես լավ եմ, առողջ: Վերջապես ինձ հաջողվեց պաշտպանել հայրենիքս և կռվել հանուն հայրենիքի: Մամա ջան, չմտածեք իմ մասին և չհուսահատվեք, կգանք հաղթանակով: Արդեն Կերչ քաղաքի մոտ ենք, համարյա Կերչում, առաջ դեպի հաղթանակ...»:

Ավաղ, սա եղավ 20-ը դեռ չբոլորած նկարիչ մարտիկի վերջին նամակը, վերջին խոսակցությունը մոր հետ: Գեղարդ տեխնիկումի (այժմ ուսումնարան) տված ատեստատից իմանում ենք, որ Զազիկը 1936-ին է ընդունվել տեխնիկում, 1941-ին ավարտել և առանց դիպլոմը ստանալու մեկնել է բանակ: Հասցրել է դիպլոմը պաշտպանել գերազանցությամբ: Կոմպո-

Զազիկ Ալթունյան— «Կանգառ» (թուղթ, տուշ)

զիցիա, քանդակ, գրաֆիկա, գծագրություն առարկաների դիմաց զոհված մարտիկի ատեստատում գրված է՝ գերազանց: Թղթապանակում պահվում են նաև 1938 թ. Երևանում, Հայպետհրատի կողմից հրատարակված երկու մանկական գրքույկ, որոնք նկարազարդել է 16-ամյա Զազիկ Ալթունյանը: Դրանցից մեկը Վեսպերի «Թելիկն ու Մելիկն» է, մյուսը՝ Ս. Առստամյանի «Մանկական ոտանավորները»:

Նայում ես այդ գրքերի նկարչական ձևավորումներին և մի տեսակ ատելությամբ ես լցվում ոսոխի հանդեպ. դեռ որքա՜ն, որքա՜ն գրքեր, պլակատներ, թերթեր և ամսագրեր կձևավորեր ու կնկարազարդեր պատանի Զազիկը, եթե թշնամու գնդակը չբաժաներ նրան իր վրձնից ու կտավից: Ահա Լենինականի քաղկոմի օրգան «Բանվոր» և ՀԼԿԵՄ Կենտկոմի օրգան «Ավանգարդ» թերթերում տպագրված՝ Զազիկ Ալթունյանի մարզական թեմաներով նկարած «Սերգո Համբարձումյանը ծանրություն բարձրացնելիս», «Մեղրու ֆիզկուլտուրայի դահլիճի վիճակը», «Այս ամառն էլ անցավ», «Սպորտային հանգիստ» գծանկարներն ու գրաֆիկ աշխատանքները: Ինչպիսի սուր դիտողականություն և հումոր, ժամանակի կարևոր հարցերի գեղարվեստական արձագանք և քննադատություն, երիտասարդական ինչպիսի խանդավառություն և լավատեսություն կա «Կանգառ», «Ժողովը հանգիստ է անցնում», «Հանուն առաջին տեղի» և մի քանի այլ գրաֆիկական ստեղծագործություններում, որոնց բնօրինակներն այսօր պահպանվում են զոհված մարտիկի քրոջ՝ Սաթիկ Ալթունյանի մոտ:

Զազիկ Ալթունյանը ծնվել է 1922 թվականին Լենինական քաղաքում, նկարչի ընտանիքում: Երկաթգծի դեպոյին կից դպրոցում նախնական կրթություն ստանալուց հետո հայրը՝ վաստակաշատ նկարիչ Ստեփան Ալթունյանը, նրան առաջնորդեց Լենինականի նորաբաց նկարչական ստուդիա: 1935 թվականին 13-ամյա Զազիկը մասնակցում է մանուկ ստեղծագործողների հայաստանյան օլիմպիադային և արժանանում մրցանակի: Ահա թե ինչ է գրում այդ մասին մեծատաղանդ Հովհաննես Շիրազը «Բանվոր» թերթում 1935 թ. մայիսի 6-ի համարում տպագրված «Մեր մանուկ ստեղծագործողները» ինֆորմացիայում. «Մանուկ ստեղծագործողների Հայաստանի օլիմպիադան մեծ ոգևորություն առաջ բերեց մեր պատանիների մեջ: Լենինականից իրենց բանաստեղծություններով, պատմվածքներով, նկարներով, թատրոնական մակետներով մրցանակի արժանացան հետևյալ պատանիները.

Ալթունյան Զազիկ՝ նկար, Ավալյան Վարազդատ՝ գրվածք, Գևորգյան Համլետ՝ նկար: Մանուկյան Հմայակ (Մանուկ Համո)՝ գրվածք, Մամիկոն՝ նկար, Սարդարյան Նինել՝ գրվածք, Սարգսյան Վարդգես՝ գրվածք, Կարապետյան Զավեն՝ նկար, Պարսամյան Ռուբիկ՝ գրվածք, Եղիազարյան Ռոմեն՝ գրվածք, Շատվորյան Մկրտիչ՝ գրվածք, Հանեսաղլյան Մամիկոն՝ նկար, Ֆիդանյան Արամ՝ նկար, Շահգելդյան Լյովա՝ նկար, Զոնրիդ՝ նկար:

Ահա այս բոլորը ցույց են տալիս, որ խորհրդային հարազատ հայրենիքի երեխաները, պատանի նոր սերունդը, ունենալով լայն հնարավորություններ, լծվել է ստեղծագործական արդյունավետ աշխատանքի...»:

Ստեղծագործական արդյունավետ աշխատանք: Ցավոք այն չհասցրեց տալ իր հասուն բերքը: Վերոհիշյալ ընկերներից ոչ միայն Զազիկը, Համլետ Գևորգյանն ու Մկրտիչ Շատվորյանը (գուցե և ուրիշներ) զոհվեցին Մեծ հայրենականում:

Երկու օրինակ Զ. Ալթունյանի նկարազարդած գրքերից, 1938 թ.:

— Ծանոթացեք այս գրաֆիկ աշխատանքներին,— առաջարկում է Սաթիկը և ցույց տալիս եղբոր անտիպ գործերից մի քանիսի բնօրինակները:— Ա՜յ, սրանք 16—17-ամյա Զազիկի շարժերն ու պարոդիաներն են՝ «Միայն տուրնիկ», «Մինչև մրցումը», «Սպորտային ախորժակ» գործերը: Զգիտեմ՝ մարզական թեմաներով այս ստեղծագործությունները նա որևէ տեղ ցուցադրել է, թե ոչ: Դրանք գտա մորս սնդուկում, ձեռքս չի բռնում (չէ որ դրանք սուրբ մասունք են) թանգարանին հանձնել...

«Ֆաշիզմի ջախջախումը» գրաֆիկական պլակատը պատանի նկարիչը ստեղծել է, երբ ոսոխը հրի և սրի էր մատնում Լեհաստանը: «Եղիր պատրաստ աշխատանքի պաշտպանությանը» խմբակի մարզասեր սանը, որ 2 անգամ արժանացավ՝ գրվածք, Գևորգյան Համլետ՝ նկար: Մանուկյան Հմայակ (Մանուկ Համո)՝ գրվածք, Մամիկոն՝ նկար, Սարդարյան Նինել՝ գրվածք, Սարգսյան Վարդգես՝ գրվածք, Կարապետյան Զավեն՝ նկար, Պարսամյան Ռուբիկ՝ գրվածք, Եղիազարյան Ռոմեն՝ գրվածք, Շատվորյան Մկրտիչ՝ գրվածք, Հանեսաղլյան Մամիկոն՝ նկար, Ֆիդանյան Արամ՝ նկար, Շահգելդյան Լյովա՝ նկար, Զոնրիդ՝ նկար:

Ահա այս բոլորը ցույց են տալիս, որ խորհրդային հարազատ հայրենիքի երեխաները, պատանի նոր սերունդը, ունենալով լայն հնարավորություններ, լծվել է ստեղծագործական արդյունավետ աշխատանքի...»:

Ստեղծագործական արդյունավետ աշխատանք: Ցավոք այն չհասցրեց տալ իր հասուն բերքը: Վերոհիշյալ ընկերներից ոչ միայն Զազիկը, Համլետ Գևորգյանն ու Մկրտիչ Շատվորյանը (գուցե և ուրիշներ) զոհվեցին Մեծ հայրենականում:

Զ. Ալթունյան, «Չեմպիոնների կշեռքը», 1938 թ.:

նացել էր կրծքանշանի, աշխարհի չեմպիոն Սերգո Համբարձումյանի գերբնական ուժը տեսնում էր նրա 359 կգ (այն ժամանակ ռեկորդային թիվ էր) ծանրաձողի տակ, ուր իր բնում ճզմվող օձի գլուխը հիշեցնում էր Հիտլերին իր որջում:

— Որպես քաղաքական պլակատ այն բոլորին դուր էր գալիս,— հիշում է զոհված նկարչի քույրն ու մեզ ցույց տալիս «Բանվոր» թերթի 1934 թ. մայիսի 29-ի համարը (հոդվածագիր Արաքսմանյան), որտեղ խոսվում է Լենինականի գեղարվեստական ստուդիայի 10 շրջանավարտների նորաբաց ցուցահանդեսի և այնտեղ ներկայացված Զ. Ալթունյանի «Ուժեղացնենք երկրի պաշտպանությունը» պլակատի գեղարվեստական և քաղաքական կատարելության և բովանդակության մասին:

Ահա մի ուրիշ թերթ: «Եթե կենդանի լինեին» հոդվածում նախկին ճակատային, նկարիչ Գուրգեն Կարապետյանը խորհրդային բանակի կազմավորման 50-ամյակի առթիվ վերհիշել է Մեծ հայրենականում զոհված տաղանդաշատ նկարիչներ Սարգիս Ալեքսանյանին, Կորյուն Սիմոնյանին, Վանիկ Կարապետյանին: Իսկ իր մանկության ընկերոջ՝ Զազիկ Ալթունյանի մասին գրել է. «Հիշում եմ, թե ինչպիսի կրակոտ կերպով էր սիրում արվեստը, աշխատանքը... ծնվեց նա մեր քաղաքի լավագույն նկարիչ Ստեփան Ալթունյանի ընտանիքում: Դեռ սովորում էր, երբ սկսվեց Համաշխարհային երկրորդ պատերազմը: Նա ևս իր հասակակիցների նման դարձավ զինվոր ու գնաց պաշտպանելու հայրենի երկիրը: Հիմա էլ իմ աչքի առաջ են նրա գողտրիկ էտյուդները՝ նվիրված Շիրակի աշխարհին:

Սիրտս կամացուկ շշնջում է, որ եթե նրանք կենդանի լինեին, այժմ մեզ հետ կոգևորվեին հարազատ քաղաքի հոյակապ վերելքով, կլծվեին ստեղծագործական աշխատանքի, կստեղծեին գունագեղ գեղարվեստական գործեր:

...Եթե կենդանի լինեին..»:

Երևանի Թամանցիների փողոցի 10-րդ շենքի № 9 բնակարանում երևանյան վերջալույսն ազդարարում է վառել էլեկտրական լամպերը: Սաթիկ Ալթունյանը հուզված բացել է հուշերի քաղցրը ու դառը կծիկը, ամեն մի բառ, ամեն մի խոսք Զազիկի մասին է: «1975 թ. Մեծ Հաղթանակի 30-ամյակի առթիվ Հայաստանի նկարչի տանը կազմակերպված ցուցահանդեսում հանրապետության վաստակաշատ նկարիչներ Սարգիս Արուտչյանը, Քնարիկ Վարդանյանը, Արմեն Աթայանը, Վարդգես Բաղդասարյանը (պատկերասրահի գլխավոր նկարիչ-վերականգնող) ցուցահանդես էին բացել: Նրանք բոլորն էլ եղբորս համակուրսեցիներն էին: Ուրախացա: Տխրեցի, երբ այնտեղ չգտա նրանց մյուս դասընկերների՝ Սուրիկ Ավագյանի, Վանիկ Սևաչերյանի, Տիգ-

Զ. Ալթունյանի ուսանողական տոմսի լուսապատճենը:

Երևանի գեղարվեստի տեխնիկումի մի խումբ սաներ, որոնցից մի քանիսը ՀՄՊ-ում զոհվել են: Լուսանկարում ձախից նստած են՝ Պապիկ Գյոդակյանը, Նորիկը, Զազիկ Ալթունյանը, Համլետ Գևորգյանը: Կանգնած են՝ Գևորգը, Վարդգես Արզումանյանը, Շահեն Հակոբյանն ու Սարգիս Արուտչյանը (Լուսանկարը մեզ է տրամադրել Հայկ. ԽՍՀ ժող. Նկարիչ Ս. Արուտչյանը):

րան Արաքաջյանի, Պապիկ Գյոդակյանի գործերից: Վերջիններս զոհվել են»,— լրացնում էր իր խոսքը բժշկուհի Սաթիկ Ալթունյանն ու մեզ ցույց տալիս 1940 թվականին Երևանում ռուսերեն լույս տեսած (հայտնի չէ՝ «Կոմունի՞ստն» է, թե՞ «Կոմսոմոլեցը») թերթում տպագրված մի լուսանկար, այն պատկերում է ստեղծագործական պրոցես: Կարդում ենք մակագրությունը. «В республиканском училище изобразительных искусств (Ереван). На снимке: учащиеся IV «б» курса за работой. Фото Г. Джамгаряна».

Ի պատասխան հարցիս, թե ովքեր են եղել Զազիկի ուսուցիչները, Սաթիկը երախտագիտությամբ հիշում է. «Պրոֆեսորներ Հակոբ Կոջոյանը ու Գարեգին Լևոնյանը, նկարիչներ Հմայակ Ավետիսյանը, Արարատ Ղարիբյանը, Արա Բեքարյանը, Բաբկեն Քոլոզյանը, Կորյուն Սիմոնյանը, Վահրամ Գայֆեճյանը... և իհարկե մեր հայրը՝ Ստեփան Ալթունյանը»:

Քույրը պատմում է, իսկ պատից կարծես լսում և հսկում է մեր խոսակցությունը փոստարկղը № 100-ի 10-րդ դասակի հետախույզ, հրետանավոր Զազիկ Ալթունյանի զինվորական լուսանկարը, այն Զազիկի, որի մասին Պապիկ Գյոդակյանը մինչ զոհվելը գրել է իր ուսուցչին՝ նկարիչ Ստեփան Ալթունյանին. «Ընկերական սիրո կարոտը կրակի նման լափում է սիրտս, այրում, ամբողջ ժամանակ նա աչքիս առաջից չի հեռանում, իմ տառապանքները կրկնապատկվում են նրան հիշելիս: Ինչպիսի խոսքերով նկարագրեմ ես այն սերն ու նվիրվածությունը հանդեպ նրա՝ Զազիկի: Զազի՛կ... ի՞նչ քաղցր է հնչում այս անունը, ի՞նչ խոսքերով գովերգել նրան. բառեր չեմ գտնում խոսել այդ մասին, նշանակում է հնարել մի նոր լեզու, խոսել մի այլ լեզվով, որը բոլորովին հնարավոր չէ: Սիրելի ծնողներ, ես սրանից 6 ամիս առաջ, երբ նոր էի գնացել ֆրոնտ, պատահեցի մի տղայի, որը Զազիկի հետ եղել է ճակատում, նա պատմեց Զազիկի մասին: Նա շատ լավ է, նրա մասին չմտածեք:

Պապիկ Գյոդակյան
5.1.1943 թ.»:

Երևանի տպագրիչների փողոցի № 3 տան բնակիչ, նկարիչ Ստեփան Ալթունյանը Պապիկից էլ նամակ չստացավ:

— Մի առավոտ վաղ,— պատմում է զոհված մարտիկի քույրը,— հայրիկը տանից դուրս եկավ և քիչ հետո վերադարձավ՝ ձեռքին մի «ոսկե շրջանակ»: Նրա մեջ տեղադրեց Զազիկի դիպլոմային աշխատանքը և կախեց իր մահճակալից վերև, պատվիրելով՝ ոչ ոք ձեռք չտա...

Դուրս եմ գալիս Ալթունյանների բնակարանից, ուշ երեկո է: Թվում է, թե տենդի մեջ տառապող մայրը դեռ շարունակում է կանչել իր միևնույն որդուն.

— Զազի՛կ, Զազի՛կ, շո՛ւտ արի... ներկերդ չորանում են, կտավներդ մնացին անավարտ... ցուցահանդեսից մի՛ ուշանա... Զազի՛կ...

ԶԱՐՄԱՅՐ ԱԼԹՈՒՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Շիրազ Հովհաննես**— Մեր մանուկ ստեղծագործողները, Բանվոր, Լ., 6 մայիսի 1935 թ.:
2. **Գրիգորյան Սասուն**—Նկարիչ մարտիկը, «Ավանգարդ», 9 մայիսի, 1979, էջ 1:

ՍՏԱՎՐՈՊՈԼՈՒՄ ԾԻԱՆ ԼԱՎ ԳԻՏԵՆ

ՍՈՒՐԵՆ
ԳԵՂԱՄԻ
ԱՎԱԳՅԱՆ
(1921—1943)

Խաժաչ էր, թավ հոնքերով: Ամեն տարի մայիսի 5-ին տիկին Սոնյան և Գեղամը արտաշատյան գինով, չիր ու չամիչով էին զարդարում Սուրենի ծննդյան օրվա սեղանը: Ամեն անգամ, երբ խոսք էր բացվում Արտաշատի՝ իր ծնողների ծննդավայրի մասին, փոքրիկ Սուրիկը աղմկում էր.

— Ինձ տարե՛ք տատիկենց տուն, Արտաշատ: Այնտեղից Մասիսը ավելի մոտիկից է երևում...

Ու հենց Արտաշատն էլ, ճերմակաթագ Արարատն ու Սուրենի նկարիչ քեռին՝ Արարատ Ղարիբյանը, պատճառ դարձան, որ Երևանի Խ. Աբովյանի անվան դպրոցի աշակերտ Սուրեն Ավագյանը հրապուրվի գեղանկարչությամբ: 1941 թ. Սուրենը նոր էր ավարտել Երևանի գեղարդ տեխնիկումը և հազար ու մի երազներ էր փայփայում, երբ վրա հասավ պատերազմի ծանր բոթը: Մի քանի օր անց Սուրենը, ինչպես Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնի իր աշխատանքային ընկերները՝ Վազիկը, Լևոն Ասատրյանն ու Սերոբ Հարությունյանը, Հայկ Քոչարյանն ու Պերճ Գևորգյանը, թշնամու հանդեպ ոխով ու ատելությամբ լցված, որոշեց կամովին ներկայանալ Կիրովյան շրջգինկոմիսարիատ, պահանջելով՝ «ի՛նձ էլ ուղարկեք ռազմաճակատ...»:

Դերասաններ Արշավիր Ղազարյանն ու Պարույր Սանթրոսյանը, Պերճ Գևորգյանն ու Մելիք Քոչարյանը հավաստիացնում, հուսադրում էին Վազիկին և Սուրենին, թե պատերազմը շուտ կվերջանա, տխրել, հուսալքվել պետք չէ: Իրոք անկոտրում էր նկարչի կամքը: Նա ոչ միայն աշխատում էր պատանի հանդիսատեսի թատրոնում, այլև Հովհ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնի սիրված աշխատողներից էր: Ընկերները հիշում են, թե ինչպիսի եռանդով, նվիրումով և բարեխղճությամբ էր Սուրենը մասնակցում «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի տոնակատարության նկարչական բրիգադի գործունեությանը, որը ղեկավարում էր մեծատաղանդ Մարտիրոս Սարյանը:

1937 թ. Սուրեն Ավագյանն աշխատեց նաև Հայֆիլհարմոնիայում: Թատերասեր հասարակայնությունը մեծ հույսեր էր կապել երիտասարդ նկարչի անվան հետ:

«Սուրիկի դիպլոմային աշխատանքի («Կավալերսկի բոյ») ղեկավարը Հակոբ Կոջոյանն էր՝ Սասունցի Դավթի ամենամեծ նկարիչն ու նվիրյալը,— պատմում է նկարչի եղբայրը՝ կենսաբանական գիտությունների դոկտոր Ալբերտ Ավագյանն ու շարունակում ներկայացնել Սուրենին:— Երևի հենց Կոջոյանն ու նկարչության եղբորս ուսուցիչ Արարատ Ղարիբյանն էին նրան ամենուր գովել, դրա համար էլ Սուրենը աշխատանքի հրավեր էր ստանում մայրաքաղաքի գրեթե բոլոր թատրոններից: Մինչև հիսունական թվականների կեսերը մեր հին տանը դեռ պահպանվում էին եղբորս բեմական էսքիզներից և ջրանկարներից մի քանիսը: Մորս մահով կարծես Սուրենը կորցրեց իր «ժառանգության խնամակալին»: Սուրենի աշխատանքներից մեկը պատկերում էր Երևանի Աստաֆյան փողոցը, մի ուրիշ նկարում Արարատն էր՝ Արտաշատից: Մեծ հաղթանակի 15-ամյակի առթիվ իրենց տեխնիկումը (այժմ ուսումնարան) կազմակերպել էր ցուցահանդես՝ նվիրված զոհված նկարիչներին: Ցուցահանդեսի «օգուտը» եղավ այն, որ ցուցասրահից անհայտացավ եղբորս ամենապաշտելի յուղանկարը՝ «Ուսանողուհին»: Ըստ քրոջս՝ Զեմմային հասած տեղեկությունների, «գողը» Սուրենի սիրած աղջիկն է. նկարում ինքն է, գիրքը ձեռքին, բազմոցին նստած, խորհող հայացք ունի: Կողքին փոքրիկ սեղան կա՝ վրան գրքեր, տետր և մատիտ: Երևի աղջիկը քննության է պատրաստվում... Ա՜խ, երանի թե նա՝ եղբորս մեզ անծանոթ սիրած աղջիկը, տարած լիներ այդ կտավը. մենակ նա իրավունք ունի տիրանալու այդ ստեղծագործությանը...»:

«Օ՜, ինչպես եմ ուզում Կազբեկը նկարել:



Ե՛վ Սուրեն Ավագյանը, և՛ իր համակուրսեցի Զազիկ Ալթունյանը ինքնակամ դուրս եկան ոսոխի դեմ, երկուսն էլ զոհվեցին:

Ուրիշ է նրա հմայքը: Ալբերտ ջան, ձեռնարկել եմ մի նոր գործ՝ «Լերմոնտովը Կովկասում»: Որոշել եմ լերմոնտովյան թեմաներով՝ Մծիրի, Դև, նկարաշար ստեղծել: Իմ ազատ ժամերին ես էլ դրանով եմ զբաղվում: Զամպալիտը խոստացել է, եթե հավանի, դրանք կուղարկի Մոսկվա՝ կարմիրբանակայիններին ցուցահանդեսին... Սա կլինի երևի իմ Հյուսիս-կովկասյան ռազմաճակատի նկարչական բերքը»:

Երկար ժամանակ չանցավ սույն նամակից: Քսաներկու տարեկան հասակում Ստավրոպոլի մարզի Չերկեսկ քաղաքը գերմանական գազազած վայրագներից ազատագրելիս 1943 թ. հունվարի 23-ին հերոսի մահով ընկավ նկարիչ ռազմիկը՝ անավարտ թողնելով իր վերջին փափագը.

«Ալբերտ ջան, կվերադառնամ ռազմաճակատային նկարների կապոցով, ինչպես գալիս էի Զանգվի ձորից... Քեռու հետ մեր պատշգամբում քեզ կանգնած պիտի նկարեմ...

Համբույրներ բոլորին՝ քո Սուրեն»:

Տարիներ են անցել: Հայրենիքի համար իր կյանքը զոհած հայ նկարչի հարազատների և Չերկեսկի բնակիչների ու դպրոցականների միջև ամրապնդվել է մի սրբազան բարեկամություն, որը կարծես միշտ Սուրենին հիշեցնելով ասում է. «Թեև քո կտավներն ու կյանքը մնացին անավարտ, բայց անմահ է քո սիրանքը, Հայրենիքի գինվոր»:

Եվ իրոք, ամեն տարի Սուրեն Ավագյանի հարազատները, երբ այցի են գնում նկարչի և նրա մարտական ընկերների եղբայրական գերեզմանին, տեսնում են այն թարմ ծաղիկներով զարդարված:

Ծաղիկեր, էտյուդներ ու նատյուրմորտներ նկարող, Երևանի Հայֆիլհարմոնիայի նկարիչ-ձևավորող Սուրեն Ավագյանն այսօր (1985 թ.) արդեն վաթսունչորս տարեկան է, որից քառասունն ապրում է ծաղիկների տակ՝ հավատարիմ յուրայիններին գրած նամակի վերջին տողերին. «Հայրենիքին ոչ միայն գիտնական, բանաստեղծ, կոմպոզիտոր ու նկարիչ է պետք, այլև գինվոր: Այսօր ես գինվոր եմ, եթե պահանջվի իմ կյանքը, ես այն չեմ խնայի»:

ՍՈՒՐԵՆ ԱՎԱԳՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. Գրիգորյան Սասուն— Անավարտ կտավներ «(Մուսաները հլոեցին» գրքից), ՍԱա, 1978, № 12, էջ 47:

ՀԱՐՅԱՆԵՑԻԱՆ ՍԵՂԱՆԸ ՀՈՒՅՍԻՍ

ՍԵՐՈԲ
ԳՐԻԳՈՐԻ
ԱՆՃԱՐԱԿՅԱՆ
(1920—1943)

Սերոբ Անճարակյանը ծնվել է 1920 թ. Հունաստանի Սալոնիկ քաղաքում, որտեղ 1915 թ. եղեռնից մազապուրծ հանգրվանել էին նրա ծնողները՝ հրի ու ավերի բերանին թողնելով իրեց հայրենի օջախը՝ Բուրսայի գավառի Ծաղկասար գյուղը, որին թուրքերը Գյոլադաշ անունն էին կպցրել: Եղեռնից հետո հայերից բռնագրավված սեփական այդ տները նրանք դարձրել էին գինվորական առողջարաններ և հանգստյան տներ:

— Վա՜յ, Մարիա՛մ, վա՛յ. թե մեկ էլ ոտքս մեր տունն ընկներ, ես կիմանայի, թե ինչ կանեի...,— մխացող կարոտի կսկիծը կիսելով կնոջ հետ՝ հաճախ էր զրույցի բռնվում վարպետ Գրի-

գորը և սրաքարով ու հեսանով «ուշքի բերում քոռ ուրագը», հետո էլ, դառնալով ավագ որդուն՝ Սերոբին, պատվիրում.

— Որ մեծանաս, իմ ծնունդավայրն էլ նկարիր: Ի՜նչ բնություն ուներ, ի՜նչ սարեր, ի՜նչ աղբյուրներ...

1926-ին Անճարակյանների ընտանիքը Սալոնիկից տեղափոխվեց Երևան: Սերոբը հաճախեց Վորոշիլովի անվան դպրոց: Այստեղ երևան **եկան** պատանու նկարչական ընդունակությունները: Յոթնամյակն ավարտելուց հետո նա ընդունվեց Երևանի գեղարդ տեխնիկում: Վահրամ Գայֆեճյանը, Հմայակ Ավետիսյանը, Յոլակ Ազիզյանը սիրով և հավատով էին լցված պատանու և նրա ծաղկող տաղանդի հանդեպ: Որպես ուսուցիչներ նրանք կռահում էին, թե ինչպես էր քննությունից քննություն, արձակուրդից արձակուրդ աճում Սերոբը: «Տասնհինգամյա Հայաստան» կտավով 1935 թ. Անճարակյանը մասնակցեց Խորհրդային Հայաստանի 15-ամյակին նվիրված պատանի ստեղծագործողների հոբելյանական ցուցահանդեսին: Նկարիչներ Ժենյա Ավետիսյանը, Վաղինակ Ասլանյանը, Արմ. Ֆիդանյանը վկայում են, որ Սերոբը ավելի փայլեց բեմանկարչության մեջ, դրա համար էլ 1939 թ., երբ ավարտեց տեխնիկումը, անմիջապես աշխատանքի անցավ Արթիկի շրջպետթատրոնում:

«Խաթաբալայի» բեմանկարչական ձևավորումով նույն թվականի նոյեմբերին նա մասնակցեց Հայաստանի շրջանային և պետական թատրոնների ստուգատեսի առաջին տուրին: Ռեժիսոր Սիսանոս Հովհաննիսյանի հետ Արթիկի թատրոնում Անճարակյանը մասնակցեց նաև «Պլատոն Կրեչետ», «Փարոսի կրակները», «Դատավճիռ» պիեսների բեմադրություններին: Հետագայում արթիկցի հանդիսատեսի թատերա-գեղագիտական և նկարչական ճաշակի զարգացմանը մեծապես նպաստեցին ռեժիսոր Ա. Խոսրովի և Հր. Մանվելյանի կողմից կյանքի կոչված «Հայրը», «Պատվի համար», «Գոշ», «Շողոքորթը», «Անմեղ մեղավորներ» թատերգությունների բեմադրությունները: Դրանց նկարչական ձևավորման և զգեստների հեղինակը 18—19-ամյա Սերոբն էր: Նրա ուրախությանը սահման չկար, երբ Հայաստանի նորընտիր թատերական ընկերության կազմակերպած «Նկարիչը թատրոնում» զեկուցման մեջ Վաղարշ Վաղարշյանի շուրթերով լսեց իր հասցեին գովեստի խոսքեր:

— Իմ հիշողությունից չեն ջնջվում երբեք «Լալվարի որսի» անճարակյանական գունագեղ ձևավորումները, նրա էսքիզները: Ես այնտեղ Իսմայիլ էի խաղում, ռեժիսոր Հրանտ Մանվելյանը՝ Ռոստոմ բեկ: Սերոբն այնպես էր բեմը ձևավորել, որ թվում էր, թե գործողություններն ընթանում են ոչ թե բեմում, այլ Լալվարի փեշին, իսկական բնության գրկում: Թե չեմ սխալվում, Ժաննան այդ օրվանից սիրահարվեց Սերոբին:— Գովեստով և քաղցր հուշերով պատմում է արվեստի վաստակավոր գործիչ Մուսայել Գալոյանը:

Այցելում ենք Հայկ. ԽՍՀ ժողովրդական արտիստ, Լենինականի պետական թատրոնի դերասանուհի Ժաննա Թովմասյանին:

— Պատից կախվածը իմ անավարտ դիմանկարն է, չհասցրեց վերջացնել. մեկնեց բանակ, 1942-ին էր:— Սրբելով խունացած աչքերը՝ շարունակում է արտիստուհին:— 1941-ին մեծ հաջողություն ունեցան Արթիկի թատրոնի «Անմեղ մեղավորները», «Մադմուազել Ֆիֆի», «Ծովափի ձկնորսուհին», «Անտառները շարժվում են» ներկայացումները: Բոլորն էլ Սերոբի ձևավորածն էին...

1942 թ. հունվարի 20: Վեց ամիս էր, ինչ գերմանական բարբարոսները իրենց թաթը դրել էին ԽՍՀՄ-ի արևմտյան սահմաններին: Ժողովուրդը դուրս էր եկել պաշտպանելու հայրենի հողը: Արթիկի թատրոնի արտիստներից շատերը զինվոր դարձան: Բեմադրության էր պատրաստվում Ն. Զարյանի «Վրեժը»: Դերասանները պակասեցին, և ահա ռեժիսոր Հրանտ Մանվելյանը ստանձնում է Շրեդերի դերը, Սերոբը հանդես է գալիս Մուշեղի դերում, իսկ Ժաննա Թովմասյանը՝ Լարիսայի: Բեմադրության մասին իմանում է Ն. Զարյանը: Իր մոտ է հրավիրում Սերոբին, ծանոթանում պիեսի նկարչական էսքիզներին և իր երիտասարդ բարեկամին ասում. «Քո նկարչական ձևավորումն ու քո խաղը անսպառ վրեժ էին: Քո վրիժառությանը ես հավատում եմ...»:

Անցավ մի քանի ամիս: Բեմ բարձրացավ Սերոբի կարապի երգը՝ նրա վերջին բեմանկարչական աշխատանքը՝ «Վայաթ-Նովա» ներկայացումը (3 ապրիլի, 1942 թ.): Ու գնաց նկարիչը: Բեմը դարձավ ռազմաբեմ: Թշնամու դեմ զենքով ու վրձնով կռվեց նա Հյուսիսային Կովկասում, Կուբանում: Հաճախ էր նամակով ծնողներին և փոքր եղբորը՝ Հակոբին (այժմ նկարչության և

պատմության ուսուցիչ է Երևանի № 64 դպրոցում) հուսադրում. «Մամա ջան, Ժաննային հեռվից լավ կնայեք: Պատրաստվեք, հենց որ եկա, հարսանեկան մի լավ սեղան կբացեք: (Վայ էն կատակին, որի կեսը լուրջ չէ): Ասելիքս շատ է, կարոտս՝ անսպառ: Ժամանակը չի ներում: Գնում ենք առաջ: Համբուրում եմ քեզ, հայրիկին, Հակոբին, քեռի Թորոսին: Նեմեցներին ետ ենք քշում, ամենաուշը մի քանի ամիս հետո տանը կլինեմ: Ողջ մնաք:

Համբույրներով՝ Ձեր **Սերոբ**:

2—մարտի 1943 թ.

Հասցես է՝ Դաշտային փոստ-721, զինմաս 782»:

Օրերն անցնում էին: Մարիամ մայրիկը իսկապես հարսանիքի պատրաստություն էր տեսնում, իսկ Գրիգորը, կյանքի և պատմության փորձով իմաստնացած, անհանգստանում էր որդու համար ու մի օր էլ Սերոբի դասընկերներից մեկից, որը բանակում բժիշկ էր, մի նամակ ստացավ: Այնտեղ գրված էր. «1943 թ. մարտի 6-ին թե 7-ին Կուբանում, Լենինսկոյե գյուղում (պաշտպանությունը Ուրոխոցկի գյուղում էր, որտեղ Սերոբն էր) ես հանդիպեցի մի քանի հայ տղաների, որոնք գնում էին առաջ, որոնց մեջ էր նաև Սերոբը: Կանգնեցինք, իրար հետ խոսեցինք մոտ մեկ ժամ, որից հետո բաժանվեցինք: Անցավ մի երկու օր: Ինձ հանդիպեցին այն տղաներից, որոնք եղել էին Սերոբի հետ միասին: Նրանք վիրավորվել էին, ես նրանց վիրահատեցի: Նրանք ինձ ասացին, որ Սերոբն ու մի երևանցի տղա, Գուրգեն անունով, սպանվեցին...

1943 թ. մարտի 13-ին, երբ մենք վերադարձանք ժամանակավորապես հանգստանալու, իրենց գնդի տղաներից հարցրեցի Սերոբի մասին, նրանք էլ նույնը ասացին:

Հարգելի Գրիգոր եղբայր, ֆրոնտում ամեն ինչ պատահում է, ովքեր դեռ ողջ են, մի բանի մասին են մտածում՝ վերջ տալ Հիտլերին և վերադառնալ հայրենի տուն: Ուղարկում եմ Սերոբի նկարը, հիշեք, որ նա ֆրոնտից է վերադարձել... Սեղմում եմ ձեր ձեռքը և իմ կողմից բարևում Սերոբի հարազատներին, ցանկանում ձեզ խաղաղություն, առողջություն և երկար կյանք: Նամակս գրում եմ ֆրոնտից:

Վարդգես Թորգոմյան

2—մարտի 1943 թ.

Իմ տան հասցեն է՝ Երևան, Ստալինի պողոտա № 51»:

Իրոք, 1943 թ. մարտից դադարեցին հարազատներն ու նշանած աղջիկը Սերոբից նամակներ ստանալ: Խոցվեց նկարիչ մարտիկը ոսոխի գնդակից, և այդպես էլ Երևանի Մայակովսկու փողոցի № 47 տանը (այժմ № 60) նկարիչ Սերոբ Անճարակյանի և դերասանուհի Ժաննա Թովմասյանի պսակադրության-հարսանեկան սեղանը չբացվեց:

ՍԵՐՈԲ ԱՆՃԱՐԱԿՅԱՆԻ ՆԿԱՐՉԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՄԱՍԻՆ

1. 1/1.38 թ. «Պլատոն Կրեչետ» (ռեժ.՝ Ս. Հովհաննիսյան)[1]:
2. 28/10.38 թ. «Փարոսի կրակները» (ռեժ.՝ Ս. Հովհաննիսյան):
3. 7/11.38 թ. «Դատավճիռ» («Ժանտախտ», ռեժ.՝ Ս. Հովհաննիսյան):
4. 5/11.39 թ. «Խաթաբալայով» Արթիկի թատրոնը մասնակցեց Հայաստանի շրջ. թատրոնների ստուգատեսի առաջին տուրին (ռեժ.՝ Ս. Հովհաննիսյան):
5. 13/4.40 թ. «Հայրը» (ռեժ.՝ Ա. Խոսրով): Հիմնվեց Հայաստանի թատերական ընկերությունը, որը հուլիսի 1-ին կազմակերպեց «Նկարիչը թատրոնում» միջոցառումը, զեկ.՝ Վաղ. Վաղարշյան, որը գովեց նաև Ս. Ա.-ին:
7. 5/11.40 թ. «Պատվի համար» (ռեժ.՝ Ա. Խոսրով):
8. 29/11.40 թ. «Գոշ» (ռեժ.՝ Ա. Խոսրով):
9. 20/12.40 թ. «Շողոքորթը» (ռեժ.՝ Ա. Խոսրով):
10. 20/5.40 թ. «Անմեղ մեղավորներ» (ռեժ.՝ Հ. Մանվելյան):
11. 30/7.40 թ. «Մադմուազել ֆիֆի» (ռեժ.՝ Հ. Մանվելյան):
12. 20/9.41 թ. «Լալվարի որսը» (ռեժ.՝ Հ. Մանվելյան):
13. 4/10.41 թ. «Ծովափի ձկնորսուհին» (ռեժ.՝ Հ. Մանվելյան):
14. 2/12.41 թ. «Անտառները շարժվում են» (ռեժ.՝ Հ. Մանվելյան):
15. 20/1.42 թ. «Վրեժ» (ռեժ.՝ Հ. Մանվելյան), Ս. Ա.-ն այստեղ խաղաց Մուշեղի դերը, իսկ Ժաննան՝ Լարիսայի[2]:
16. 3/4.42 թ. «Սայաթ-Նովա» (ռեժ.՝ Հ. Մանվելյան):
17. **Հարությունյան Բաբկեն**— Սովետահայ թատրոնի տարեգրություն, Ե., 1961 թ., գիրք I, էջեր՝ 514, 548, 551, 573, 622, 631, 650, 656, 661:
    Գիրք 2-րդ, Ե., 1969 թ., էջեր՝ 39, 44, 48, 49, 55, 63, 70:

---

[1] Սիանոս Հովհաննիսյանն այժմ ապրում է Աշտարակ քաղաքում:

[2] Ժաննա Թովմասյանն այժմ Հայկ. ԽՍՀ ժողովրդական արտիստուհի է, ապրում և աշխատում է Լենինականում:

ԲԵՄԱՆԿԱՐՉԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ ՔՈՒՅՐԵՐԸ

ԳԵՎՈՐԳ ՄՆԱՑԱԿԱՆԻ ԲԱԲԱՅԱՆ (1914—1943)

Բեմանկարիչ Գևորգ Մնացականի Բաբայանը ծնվել է Երևանում, թիթեղագործի ընտանիքում, 1914 թ.: Միջնակարգն ավարտելուց հետո նա իր ուժերի ներածին չափով օգնում էր հորը՝ թեթևացնելով տան հոգսը: Դեռ մանկուց վրձնի, ներկերի սիրահար տղան արդեն ինքնուս նկարիչ էր, երբ բախեց Երևանի գեղարդ տեխնիկումի դուռը: «Պատրաստի նկարիչ է». Վահրամ Գայֆեճյանի քննական այս բնութագիրը վճռական և ճակատագրական եղավ Գևորգի համար: Նա ընդունվեց բեմանկարչության բաժին, աշակերտեց Մ. Սարյանին, Գ. Գյուրջյանին, Վ. Գայֆեճյանին և այլոց: 1938-ին փայլուն գնահատականներով Գ. Բաբայանն ավարտում է տեխնիկումը և աշխատանքի նշանակվում Արագածի քրդական թատրոնում: Երկու տարի այստեղ աշխատելուց հետո որպես նկարիչ-ձևավորող Գևորգը տեղափոխվում է Վաղարշապատի շրջանային պետթատրոն:

— Գևորգի մասին ես քեզ կպատմեմ,— մի օր Հրաչիկ Ղալումյանի հետ Ապարան գործուղվելիս անսպասելի ասաց գործընկերս՝ Հայկական ԽՍՀ «Գիտելիք» ընկերության վարչության ռեֆերենտ Սուրեն Գինոսյանը և անմիջապես ավելացրեց.— 1939 թ. Ալագյազի քրդական շրջիկ պետթատրոնը բեմադրեց իմ «Միրաքի աղջիկը» պիեսը: Ռեժիսորը Ցոլակ Նիկողոսյանն էր, հկարիչը՝ Գևորգ Բաբայանը: Նրա քույրերը այսօր էլ կան...

Ս. Գինոսյանի շնորհիվ ծանոթանում եմ «անհայտ հերոսիս» քույրերին, նրանցից իմանում, որ 1940—1941 թվականներին Գևորգ Բաբայանը ռեժիսոր Բ. Բժիկյանի հրավերով աշխատել է Վաղարշապատի թատրոնում: Նա այստեղ բեմանկարչական կյանք է տվել «Կամո», «Երկու քույր» («Արզումանի կռիվը»), «Հաղթանակի մարտերում», «Նրա կինը», «Լրտեսի հետքերով» և այլ ներկայացումների:

— Եղբայրս,— պատմում է նկարչի մեծ քույրը՝ Հայկանուշ Բաբայանը,— բազմաթիվ նկարներ ստեղծեց «Սասունցի Դավթի» 1000-ամյակի տոնակատարության կապակցությամբ: Դրանցից շատերը տարբեր ցուցահանդեսներում գովեստների էին արժանանում: Թերթերն ու ռադիոն նրան շատ էին գովում: Մերոնց ուրախությանը չափ ու սահման չկար: Մեծ եղավ մեր ուրախությունը, երբ Գևորգին ընդունեցին ԽՍՀՄ նկարիչների միության մեջ որպես անդամության թեկնածու: Այդ նույն (1940) թվականին նկարչի տանը բացվեց Գևորգի (մի քանի թատերական նկարիչների հետ) ստեղծագործությունների ցուցահանդեսը:

— Ուրիշ ի՞նչ կավելացնեիք... Ի՞նչ ունեք ասելու ձեր եղբոր մասին,— հարցերիս ի պատասխան Երևանի 83-րդ կապի բաժանմունքի աշխատակից Աելիտա Բաբայանը զոռ է տալիս վերհուշին.

— Եղբայրս բանակ է մեկնել 1941 թվականի հուլիսի 6-ին: Դրանից հետո էլ դեռ Էջմիածնի թատրոնում շարունակում էին բեմադրվել նրա ձևավորած «Խանգարող հանգամանք», «Ծովափի ձկնորսուհին», «Նա հրամայեց» և այլ ստեղծագործություններ: Գևորգի բանակ գնալուց հետո նրան փոխարինեց Պ. Սիմոնյանը: Թատրոնի ռեժիսորներ Ա. Խոսրովն ու Բ. Բժիկյանը նրան ճամփու դնելիս մեր տանն ասացին. «Գնա՛, կռվի՛ր և հաղթանակով ետ արի: Քո տեղը միշտ կա ու կա»: Եղբայրս, որ բանակ գնաց, ես 10—12 տարեկան աղջնակ էի: Նա ուներ մի քանի մոտիկ դերասան ընկերներ, որոնք միշտ մեր տանը խնջույք էին սարքում: Աչքիս դեմ են Գ. Ստամբոլցյանը, Խ. Ներսիսյանը, Հովհ. Հարությունյանը: Հիշում եմ «Նրա կինը» պիեսի Ցեզարինայի դերակատար Ե. Ցուզբաշյանին... Գևորգը բանակ զորակոչվեց Երևանի Սպան-

դարյան շրջանի զինկոմիսարիատի ծանուցագրով: Սկզբում նա որպես հրաձիգ ծառայում էր Կիրովականում: Այստեղ նա զորավարժվեց, հետո այդ գնդի հետ էլ մեկնեց ճակատ: Նրանից մի քանի նամակ ստացանք Դերբենտից: Իսկ 1943 թ. Մախաչկալայից ուղարկված նամակը եղավ վերջինը: Նամակը գրված էր դեկտեմբերի 26-ին...

Տարիներ են անցել: Բաբայանների տոհմական ծառի ճյուղերն ընդարձակվել են ու զորացել: Նրանցից շատերն այսօր իրենց հորեղբայր և քեռի Գևորգին ճանաչում են լուսանկարով. ժամանակից խունացած ու դեղնած նկարչական էսքիզներով ու նամակներով: Ու երբ ամեն անգամ Գևորգի մասին խոսք է բացվում, քույրերին թվում է, թե ուր որ է իրենց եղբայրը, թևատակին նոր գնած ներկեր, թուղթ ու կտավ, ներս կմտնի և ժպտալով կասի.

— Հե՛ր ջան, քեզ՝ ուստա Մնացին որ չնկարեմ, էլ ո՞ւմ պիտի հավերժացնեմ...:

ԳԵՎՈՐԳ ԲԱԲԱՅԱՆԻ ՁԵՎԱՎՈՐԱԾ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱ ՄԱՍԻՆ

1. Արագածի պետթատրոնում, 25 հունիսի 1939 թ., «Միրաքի աղջիկը» (ռեժ.՝ Ց. Նիկողոսյան):
2. Վաղարշապատի պետթատրոնում, 15 հունվարի 1941 թ., «Կամո» (ռեժիսոր՝ Բ. Բժիկյան):
3. Վաղարշապատի պետթատրոնում, 18 մարտի 1941 թ., «Երկու քույր» («Արզումանի կռիվը», ռեժ.՝ Բ. Բժիկյան):
4. Վաղարշապատի պետթատրոնում, 12 հուլիսի 1941 թ. «Հաղթանակի մարտերում» (ռեժ.՝ Բ. Բժիկյան):
5. Վաղարշապատի պետթատրոնում, 18 հոկտեմբերի 1941 թ., «Նրա կինը» (ռեժ.՝ Բ. Բժիկյան)[1]:

[1] Քանի որ Գ. Բաբայանի ձևավորած այլ բեմադրությունների մասին ստույգ տեղեկություններ չունենք, ուստի դրանք չենք շեշտում: Որոշ տվյալներ հաղորդելու համար շնորհակալ ենք մանկագիր Գրիգոր Եղիկյանին (Ս. Գ.):

ԷՍՊԵՐԱՆՍԸ

ԷՍՊԵՐԱՆՍ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԲԱՅԱՋՅԱՆ (1920—1941)

Հրաչյա Քոչարի անունը կրող փողոցի № 25 շենքի առաջին հարկի իր արվեստանոցում հանդիպում ենք Սարդարապատի հուշահամալիրի քանդակագործական խմբի անդամ Սամվել Մանասյանին: Ծնորհավորում ենք նրան պետական մրցանակի արժանանալու համար և խնդրում պատմել Մեծ հայրենականում զոհված նկարիչների և քանդակագործների մասին:

— Զոհվեցին և՛ իմ ուսուցիչներից, և՛ իմ ընկերներից, և՛ իմ սաներից:

— Ո՞վքեր էին ձեր սաները, որտե՞ղ էին նրանք սովորում...

Հարցերիս վաստակաշատ քանդակագործը պատասխանում է սիրով և առաջարկում ծանոթանալ իր լուսանկարների ալբոմին:

— Այս լուսանկարում,— ներկայացնում է զրուցակիցս,— Էսպերանսն է, իսկ մյուսում՝ Հակոբը: Հակոբ Եկմալյանի մասին նյութեր կարող եք ձեռք բերել նրա եղբորից՝ քանդակագործ Ռաֆիկ Եկմալյանից, իսկ Էսպերանսի մասին՝ Մ. Գորկու անվան դպրոցից: Նա այդ դպրոցի սաներից է: Երևանի պիոներ-դպրոցականների պալատի քանդակագործական խմբակում ինձ մոտ է սովորել: Տաղանդավոր տղա էր, 1939-ին զորակոչվեց բանակ: Զոհվեց նա, որքան գիտեմ, Օդեսայում, 1941-ին:

Երևանի Մոսկովյան փողոցի վրա գտնվող պիոներների և դպրոցականների պալատում ենք: Հանդիպում ենք այստեղ վաստակաշատ մանկավարժ Հռիփսիմե Սիմոնյանին: Նրա ղեկավարությամբ պատանի հետախույզները փաստական նյութեր և ցուցանմուշներ են հավաքում պիոներպալատի նախկին սաների հարազատներից, ընկերներից ու բարեկամներից, հարստացնում իրենց թանգարանը: Նրանք առանձին թղթապանակում խնամքով պահպանում են Երևանի պիոներպալատի ստեղծագործական խմբակի նախկին սաներ, զոհված կոմպոզիտորներ Հրաչիկ Մելիքյանի, Միքայել Ջաղալյանի, նկարիչներ և քանդակագործներ Լևոն Թոթովենցի (Կրուպսկայայի անվան դպրոցից), Հակոբ Եկմալյանի (Ծահումյանի անվան դպրոցից), Էսպերանս Բայազյանի (Գորկու անվան դպրոցից), Վարդես Քոչարյանի և այլոց անձնական գործերը:

12-ամյա Էսպերանսի պահպանված նկարչական էսքիզներից՝ «Առյուծն ու ջայլամը» (մատիտանկար):

— Վարդգես Քոչարյանը, Նորիկ Նազարյանը, Խաչիկ Մալխասյանը,— պատմում են պիոներները,— 1935 թվականին մասնակցել են «Մեր պատանի ստեղծագործողները» հանրապետական մրցույթին և շահել գրական առաջնություն: Նրանք երեքն էլ զոհվել են Մեծ հայրենականի տարբեր ռազմաճակատներում:

Պատանի հետախույզները ինձ ցույց են տալիս «Պիոներ կանչ» թերթի 1935 թ. դեղնած և հնամաշ մի համար, որտեղ տպագրված են օլիմպիադայի հաղթողների լուսանկարները և խընդրում օգնել՝ հայտնաբերելու պիոներպալատի՝ նախկին ստեղծագործող սաներին, որոնք խոցվել են թշնամու գնդակից: Ահա պիոներպալատի թանգարանը: Կիսամութ քարանձավի առաջ, մահակը ուսին, զննող ու առնական կանգնած է Սասունցի Դավիթը: «Երիտասարդ Դավիթը»,— այսպես է կոչել իր ստեղծագործությունը Էսպերանս Բայազցյանը: 1939 թ. երիտասարդ քանդակագործի այս ստեղծագործությունը «Սասունցի Դավթի» 1000-ամյակի տոնակատարության ժամանակ ցուցադրվել է Երևանում և Մոսկվայում, արժանացել հանրապետական և միութենական մրցանակների և դիպլոմի:

«Սիրելի ծնողներ, մենք հատուկ ջոկատով գտնվում ենք անտառներում: Նամակ չգրեք, մինչև ինձանից պատասխան չստանաք,— կարդում ենք Մոդրավական Սորոկի քաղաքից քիչ հեռու գտնվող անտառում գրած հայ ռազմիկի սըրտահույզ նամակը՝ ուղարկված Երևան, Նարիմանովի փողոցի № 147 տան բնակիչ Հ. Բայազցյանին և տեղեկանում, որ նկարիչ մարտիկը հրանոթային կրակ է բացել քաղաքը ռմբակոծող հիտլերյան ինքնաթիռների վրա, ընկել ռմբակոծությունների տակ և նորից շարունակել մարտ մղել խորհրդային ամեն մի թիզ հողի համար: Էսպերանս Բայազցյանի սխրանքների ցանկում անմոռաց են հրդեհվող շենքերում խորհրդային քաղաքացիներին ցույց տված օգնությունը, վիրավորներին էվակուացնելը, Օդեսայում դեսանտայիններին սննդամթերքով և դեղորայքով սպասարկելը, դարանակալած ֆաշիստներին հայտնաբերելն ու նրանց գերելը: Կռվում էր անվեհեր հայ մարտիկը ուկրաինական և մոլդավական հողում, Կոդիմայում, Վոզնեսենսկայայում (Օդեսայի մոտ), Ֆալեշտի շրջանում և Բելցի քաղաքում, նորից աչքի դեմ Երևանն էր, պիոներների և դպրոցականների պալատը, Գորկու անվան դպրոցը, իր դասընկերները: Որքան էր նա սիրում Կաղեն Մելիքսեթյանին: Կաղենը բանաստեղծություններ էր գրում, խոստացել էր, որ մի ոտանավոր կձոնի Էսպերանսի սիրած աղջկան: Ինչ իմանար Էսպերանսը, որ իր ամենամտերիմ դասընկերը՝ գանգրահեր ու սևահոնք Կաղենը, խիզախաբար կմարտնչի թշնամու դեմ Կորսուն—Շևչենկովսկու ճակատամարտում և կզոհվի Վալլավայա բնակավայրն ազատագրելիս:

14-ամյա Էսպերանսի «Վագրն ու մարդիկ» մատիտանկարը Երևանի պիոներների պալատի նկարչական խմբակի ղեկավար Սամվել Մանասյանը գնահատել է «Գերազանց»:

«Պատերազմը կավարտվի: Կվերադառնամ տուն, եղբայրս էլ՝ Էդուարդը, կռվից ետ կդառնա, կավարտեմ Գեղարդ տեխնիկումը և լավ ցուցահանդես կբացեմ... Հաղթանակը մերը կլինի, իմ մասին չմտածեք»,— կարդում ենք 4-րդ դիվիզիայի 48-րդ հրաձգային գնդի կապավորների ջոկատի հրամանատար Էսպերանս Բայազցյանի՝ ռազմաճակատից ստացված վերջին լուսանկարը:

Էսպերանս Բայազցյանը «Երիտասարդ Դավիթը» քանդակի (գիպս) վրա աշխատելիս (Երևանի Ղ. Ղուկասյանի անվան պիոներդպրոցականների պալատի թանգարանի ֆոնդ):

Էսպերանս Բայազցյանի՝ ռազմաճակատից ստացված վերջին լուսանկարը:

յազցյանի ձեռքով մորը և հորը՝ Վարսենիկ և Հովհաննես Բայազցյաններին ուղարկած վերջին նամակում և խորհում, թե ինչո՞ւ, ինչո՞ւ չիրականացան նրա երազանքները. ինչո՞ւ նա զոհվեց, ինչո՞ւ եղբայրը՝ Էդուարդ Բայազցյանը, վիրավոր վերադարձավ, ինչո՞ւ չբացվեց քանդակագործի անհատական ցուցահանդեսը... Նայում եմ Երևանի Մ. Գորկու անվան միջնակարգ դպրոցի նախասրահում ձևավորված «Փոխարինողներին փոխարինողներ են գալիս» ցուցավահանակին, և մի պահ թվում է՝ վերակենդանացել են Էսպերանս Բայազցյանն ու իր քսանչորս դասընկերները՝ Ն. Ստեփանյանի անվան ջոկատի նախկին պիոներները, որոնց պատից կախված զինվորական լուսանկարները կարծես կրկնում են Յուլիուս Ֆուչիկի խոսքերը.

— Մարդի՛կ, ես սիրում եմ ձեզ: Եղե՛ք միշտ զգոն:

ԷՍՊԵՐԱՆՍ ԲԱՅԱԶՑՅԱՆԻ ՄԱՍԻՆ[1]

[1] **Աբրահամյան Արտավազդ**— Երիտասարդ Դավիթը, «Նրանք երիտասարդ մնացին», Ե., 1971, էջ 11—18:

1. Է. Բայազցյանի մասին նյութերը մեզ է տրամադրել նրա քրոջ՝ Էմմայի որդին՝ Հալզազարդի № 1 շինմոնտաժային վարչության տնտեսագետ Կարեն Սիմոնյանը: Նրա մոտ էլ պահպանվում են իր քեռու մի քանի նամակները, լուսանկարներն ու էսքիզները (Ս. Գ.):

ԴԻՄԱՆԿԱՐ ԸՍՏ ՀՈՒՇԱՏԵՏՐԻ

ՀԱՄԼԵՏ
ԲԱԳՐԱՏԻ
ԳԵՎՈՐԳՅԱՆ
(1921—1942)

Համլետ Բագրատի Գևորգյան: Երևանի գեղարվեստի ուսումնարանի 5-րդ կուրսի գերազանցիկ այս ուսանողի լուսանկարը՝ իր ուսուցիչ Բաբկեն Քոլոզյանի հետ, տպագրել է «Կոմսոմոլեց» թերթը: Նույն թերթի մի այլ լուսանկար պատկերում է Համլետին «Կոմիտասը հավաքում է ժողովրդական երգեր» կտավի էսքիզի վրա աշխատելիս: Էսքիզներ, բազմաթիվ մտահղացումներ այդպես էլ անավարտ մնացին: Դրանց փաստացի, ամփոփումը այն ծրարներն են, որոնցում ի մի են բերվել պոեզիայի և երաժշտության սիրահար պատանի նկարչի գրական նախափորձերը, ճեպանկարներն ու էսքիզները, որոնք բախտ չունեցան դառնալու լիարժեք գեղարվեստական կտավներ: Համլետի կյանքի մանրամասներին կարելի է ծանոթանալ նրա օրագրերի միջոցով, որի տարբեր էջեր գեղարվեստորեն ձևավորված են:

Ծնվել է 1921 թ. սեպտեմբերի 8-ին Ալեքսանդրապոլում (Լենինական), ուսուցչի ընտանիքում: 7 տարեկան է եղել, երբ ընդունվել է քաղաքի № 3 դալտոնպլանի փորձնական դպրոցը, ուր և Երևան եկան նկարչության նկատմամբ նրա նախասիրությունները: 6-րդ դասարանում էր, երբ ընդունվեց Լենինականի նկարչական ստուդիա և մասնակցեց մանուկ ստեղծագործողների քաղաքային ցուցահանդեսին՝ գրավելով առաջնություն (տես. «Բանվոր», 1935 թ., 6-ը մայիսի, Հ. Շիրազի թղթակցությունը):

1936 թվականին Համլետ Գևորգյանն իր ընկերներ Պապիկ Գյոդակյանի, Զազիկ Ալթունյանի հետ բախում է Երևանի գեղարդ տեխնիկումի դուռը: Սեպտեմբերին նրանք արդեն տեխնիկումի սովորողներ էին: Միասին էտյուդներ էին անում Նորքում, Հրազդանի կիրճում, Երգեսում: Արձակուրդներին գնում էր Լենինական, չարաճճի խաղեր՝ «օյիններ սարքում» ընկերների գլխին: Նրանք բոլորն էլ դեռ աղվամազը դեմքներին տղաներ էին, կարոտ առաջին սիրո, նշանի մատանու և անհատական ցուցահանդեսի: Պայթեցին ռումբերը, և կտավները մնացին անավարտ: Իր ընկերների պես Համլետն էլ հազիվ հասցրեց մտնել ուսումնարան, հրաժեշտի խոսք ասել իր ուսուցիչներ Գ. Լևոնյանին, Բ. Քոլոզյանին, Հ. Ավետիսյանին: Գևորգյանի օրագրում վերջին նշումը արված է 1942 թ. փետրվարի 14-ին: Ահա այն. «Նորից սիրտս բաբախում է, անհանգիստ ուրախությունից արագացնում եմ քայլերս. շուտով նորից պետք է տեսնեմ նրան: Ահա , ներս եմ մտնում ինձ հարազատ տունը, սիրելի դեմքեր են ինձ շրջապատում: Լսվում է ոտնաձայնը, նա գալիս է իր սենյակից որպես քայլող փարթամություն և մաքրություն, սեղմում եմ ձեռքը, բոլորած սեղանի

Համլետ Գևորգյան, «Ինքնադիմանկար», Երևան, 1942 թ.:

Հ. Գևորգյանը գեղարդ տեխնիկումի իր դասընկերների հետ (առաջին շարքի ձախից 2-րդը):

շուրջ անհանգիստ զրուցում ենք, հրճվանքից կարմրած և ոգևորված արտասանում եմ բառեր, իմ արտաքինը նույնպես ամուր է և կոշտացած, լրանում է ժամանակը, դժվարությամբ վեր եմ կենում, ինձնից առաջ նա վերարկուն հագած թռչում է դուրս: Կեսգիշեր է, լուռ ու մթին: Մեզ մենակ գտնելով նա իսկույն ամուր փաթաթվում է ինձ:

— Սիրելի՛ս, քո սիրտը երբե՛ք թող ինձ չմոռանա:

Համբուրվում ենք... հետո... արագ-արագ մտքեր փոխանակելով քայլում: Մոտ է ժամը, արդեն ուշանում եմ, հազիվ ամուր գրկում եմ իրանը և վերջին համբույրով հրաժեշտ տալիս...»:

Օրագիրն ավարտվում է: Հազիվ առաջին սիրո առաջին համբույրը ճաշակած Համլետն ար-

Համլետ Գևորգյանի այս նամակներն այսօր պահպանվում են նրա քրոջ՝ Աստղիկ Գևորգյանի մոտ, Երևանում:

Համլետ Գևորգյան, «Այգու տը-նակը» (մատիտանկար):

դեն ռազմաճակատում է և բացիկներ է ուղարկում հորը՝ Բագրատ Գևորգյանին: Նրանում նկարիչ մարտիկը գրում է. «Պապա և մամա ջան, ինձ համար անհոգ եղեք, ես լավ եմ, շարունակում ենք ճանապարհը, անցանք շատ հետաքրքիր վայրերով, որոնք պատկերելու համար նկարչին մի կյանք չի բավարարի: Գնացքում շատ էինք փնտրում մերոնց՝ վիրավորների մեջ... Այժմ հանգստանում ենք Կասպից ծովի զով ափերին:

Աստղիկ ջան, նկարներիս լավ կնայես: Հույսերս մեծ են՝ հետագայում նոր թափով շարունակելու: Համբուրում եմ բոլորիդ:

Համլետ
10/8.42 թ.»:

Երևանի հին ձեռագրերի ինստիտուտում ենք՝ Մատենադարանում: Համլետի քույրը՝ Աստղիկ Գևորգյանը, մեզ ներկայացնելու համար նորից է վերանայում եղբոր արխիվը: «Զեմֆիրա», «Զուլֆի», «Իմ ռուս ընկերը» մատիտանկարներն ու անավարտ մի քանի էսքիզներ հիշեցնում են եղբոր խնդրանքը՝ «Աստղիկ ջան, նկարներիս լավ կնայես....»: Եվս երկու շաբաթ, և զինվորի հասցեն հայտնի է՝ «ՊՊ-1662, Վ/չ-400, լիտեր-16»: Երկրորդ բացիկում (15/8.42) նկարիչ հայորդին նորից է հուսադրում ծնողներին. «Մենք անպայման կհաղթենք: Ես կգամ հաղթանակով...»:

Անցնում են ամիսներ: Հյուսիսային Կովկաս, Մարիական ինքնավար մարզ, ռուսական և ուկրաինական հող—մարտական այս ճանապարհներին, Մոզդոկում և Յոշկար-Օլայում երկու անգամ ծանր վիրավորվում է 1662-րդ դաշտային փոստի 974-րդ գնդի անհնկուն մարտիկը և զոհվում՝ չհասցնելով պատասխանել համակուրսեցիներ Գրիգոր Կոստանյանի, Արմեն Աթայանի, Պապիկ Գյոդակյանի և սիրած աղջկա՝ Զ-ի նամակներին:

Բեթհովենի, Կոմիտասի, Սպիրիդոն Մելիքյանի երաժշտությանը սիրահարված, կրկնակի վիրավոր նկարիչը մինչ կհասցներ պատվիրել ընկերներին. «Էսքիզներս ու նկարներս ուղարկեք Երևան, Պոռշյան № 2, հորս՝ Բագրատ Գևորգյանին», վրա հասավ մահը՝ փակելով քսանմեկամյա հայ նկարչի կյանքին ու գույներին սիրահար աչքերը:

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Գրիգորյան Սասուն**— Անավարտ կտավներ, «Սովետ. արվեստ», Ե., 1978, № 12, էջ 43:
2. **Գրիգորյան Սասուն**—Գեղարվեստի երկրպագուն, ՍՀ, 1980 թ., 10 հունիսի, էջ 4:
3. **Դզնունի Դանիել**—Հայ կերպարվեստագետներ, Ե., 1977, էջ 122:

«ԱՎԱՐԱՅՐԻ» ՆԿԱՐԻՉԸ

ՀԱՅԿԱԶ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
(1921—1942)

«Հայ ժողովրդի պատմություն» հեռուստատեսային հաղորդաշարի հերթական թեման «Ավարայրի ճակատամարտն» էր: Հաղորդման համար նախապես պատվիրված նկարչական ձեվավորումները նշանակված օրը Գեղամ Ասատրյանը չբերեց: Բոլորը զարմացան. նա միշտ իր խոսքի տերն էր, իսկ հիմա թե՝ չգտա:

— Իսկ ի՞նչ գտնելու մասին է խոսքը, չէ՞ որ դուք պետք է նկարեիք:

— Այդպես պայմանավորվել էինք... Ես ուզում էի, որ այդ օրը եթերում ցուցադրվեր Հայկազ Գրիգորյանի՝ Ավարայրին նվիրված նկարների շարքը: Փնտրեցի: Հարազատներից միայն քրոջը՝ Զեմմային գտա, իսկ ստեղծագործությունները՝ ոչ:

— Ո՞վ է Հայկազը... Մենք նման նկարիչ չունենք, չենք ճանաչում...— հարցնում է գլխավոր խմբագիր Վալերի Հարությունյանն ու հարցական նայում ինձ:

— Նա զոհվել է Հայրենական մեծ պատերազմում: Մենք միասին սովորել ենք գեղարդ տեխնիկումում... Հայկազը թատերական նկարիչ էր: Պատմական թեմատիկայով նկարած նրա կտավները մեր տեխնիկումի զարդն էին...

Երևանի Թելմանի փողոցի 28 շենքի 6-րդ տանն ենք: Զեմմա Գրիգորյանը բացակայում է, մեզ է դիմավորում նրա որդին՝ կինոռեժիսոր Հրանտ Հակոբյանը: Թեև Հրանտը քեռուն չի հիշում, բայց նրա մասին «ամեն ինչ գիտի»: Ծնվել է Հայկազ Հայրապետի Գրիգորյանը Երևանում 1921 թ.: Հայրը վարսավիր է եղել, մայրը՝ տնային տնտեսուհի: 1935-ին ընդունվել է Երևանի գեղարդ տեխնիկումի բեմանկարչական բաժին: Ուսումնառությանը զուգահեռ աշխատել է որպես բեմանկարիչ Երևանի պատանի հանդիսատեսի և Հովհ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոններում:

— Թերևս,— խորհուրդ է տալիս մեզ Հրանտը,— այդ թվականների թատերական կատալոգներից հնարավոր լինի պարզել, թե Հայկազը մինչև Մեծ հայրենականը ինչպիսի բեմադրություններ է ձևավորել...

Արդյո՞ք դրանք պահպանվել են. այս հարցը դեռ սպասում է իր հետազոտողին: «Վահան Տերյանի մահը»,— այսպես է կոչվել Հայկազ Գրիգորյանի դիպլոմային աշխատանքը: Ինչպես վկայում է նրա ուսուցիչը՝ Հայկ. ԽՍՀ վաստակավոր նկարիչ Բաբկեն Քոչոզյանը, Հայկազի այդ կտավը ցուցադրվել է Երևանում 1940 թ. մեծ բանաստեղծի մահվան քսանամյակի երեկոյին՝ արժանանալով բոլորի, հատկապես պոետի դստեր՝ Նվարդ Տերյանի ջերմ հավանությանը: Նկարչի հիշյալ այս ստեղծագործությունները պահպանվել են մինչև 60-ական թվականները,

Հ. Գրիգորյանի այս լուսանկարը վերցված է 408-րդ հայկական հրաձգային դիվիզիայի մարտիկներից:

իսկ հետո «նկարապաշտ գողերը» նրանցով այսօր երևի զարդարում են իրենց սենյակները՝ չմտածելով, որ երկրորդ անգամ են զոհում զոհված նկարչին...

Հայկազ Գրիգորյանը հայրենիքի պաշտպանությանը զինվորագրվեց 1942 թվականին: Որպես 408-րդ հայկական հրաձգային դիվիզիայի զինվոր հերոսաբար մարտնչեց նա Հյուսիսային Կովկասի և Կերչի համար ծավալված մարտերում (նրա ռազմի հասցեն էր Դ. Փ. 500, զինմաս 311): Դեռ չէր բոլորել նկարիչ ռազմիկի զինծառայության մեկ տարին, երբ Երևանում հայ մեծ գեղանկարիչ Վարդգես Սուրենյանցի անունը կրող փողոցի № 15 տան բնակչուհի Հրանուշ մայրիկը ստացավ որդու 1942 թ. դեկտեմբերի 1-ին գրած նամակը: Ավաղ այն եղավ վերջին զրույցը մոր հետ: Հայկազը զոհվեց՝ անավարտ թողնելով թշնամու դեմ տարվող մարտը, իր բեմանկարչական, գրաֆիկական ստեղծագործություններն ու իր 19-ամյա կյանքը:

Նկարիչ մարտիկը չէր հասցրել ամուսնանալ, նոր-նոր էր ընդունվել ԽՍՀՄ կերպարվեստագետների միության շարքերը որպես անդամության թեկնածու: Նրա իգդիրցի մայրն ու նախիջևանցի հայրը արդեն որդու համար առանձին տուն էին վարձել որպես արվեստանոց, գիշերցերեկ այնտեղ էր լինում Հայկազը:

«Անդրանիկ զորավարը օգնում էր բուլղարացիներին»,— այսպես էր կոչվում 1912 թ. թուրք-բուլղարական պատերազմն արտացոլող Հայկազի անավարտ կտավը: Ցավոք նրա տերն ու տեղը ևս անհայտ են: Հայկ. ԽՍՀ ժողովրդական արտիստ Արշավիր Ղազարյանը տեղեկացնում է, որ զոհված դերասանների և թատերական գործիչների մասին որոշ տվյալներ ու նյութեր իրենք հաղորդել են, հանձնել դերասան Պողոս Բորոյանին (Պավլուս): Այնտեղ եղել են նաև Հայկազին վերաբերող նյութեր ու լուսանկարներ: Պ. Բորոյանը մահացել է: Թե այժմ ո՞ւմ մոտ է պահվում նրա արխիվը, չի հաջողվել պարզել:

Հ. Գրիգորյանի հերոսական սխրանքների մասին ընթերցողը հետաքրքիր էջեր կգտնի № 408 դիվիզիայի քաղբաժնի պետ և տարեգիր Սիմոն Սարգսյանի «Այրվող անտառը» գրքում: Հեղինակն ականատես է եղել այն անմոռաց մարտերին, որ մղել է Երևանի գեղարդ տեխնիկումի սանը:

ՀԱՅԿԱԶ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Սարգսյան Սիմոն**— «Այրվող անտառը», Ե., 1965:

ԵՐՆԵԿ ՄԱՀԸ ՍՈՒՏ ԼԻՆԵՐ

ՀԱԿՈԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԵԿՄԱԼՅԱՆ (1918—1941)

Ծնողներն Աշտարակից նոր էին տեղափոխվել Երևան: Մայրաքաղաքը ոգևորել էր թե՛ Հակոբին, թե՛ Ռաֆիկին: Երկու եղբայրն էլ տարվել էին նկարչությամբ: Ծահումյանի անվան դպրոցում Հակոբն արդեն հայտնի էր բոլորին: Պատանի ստեղծագործողների հանրապետական մրցույթում (1935 թ.) առաջնություն էր շահել: Այնքան տարվեց գեղանկարչությամբ, որ ծնողներն ստիպված 9-րդ դասարանից նրան տեղափոխեցին Երևանի գեղարվեստի ուսումնարան: Հաջող քննություն, և մի ամիս հետո Հակոբ Եկմալյանը գեղանկարիչ Վահրամ Գայֆեճյանի ուսանողն էր: 1938 թվականին, գերազանց դիպլոմով ավարտելով գեղարդ տեխնիկումը, 20-ամյա Հակոբը (ծնվ. 1918 թ.) ծրագրել էր մեկնել Լենինգրադ՝ գեղարվեստի ակադեմիայում ուսումը շարունակելու: Մինչդեռ նրան ներգրավեցին «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի նկարչական հոբելյանական պատվերներն իրագործողների խմբում (գեղ. ղեկավար՝ Մ. Սարյան) և աշխատանքի նշանակեցին (1938 թ.) Երևանի օպերային թատրոնում: «Ալմաստ», «Անուշ», «Երկիր հայրենի» օպերաների և բալետի գեղարվեստական ձևավորման աշխատանքներում Հակոբը, որպես նկարիչ-կատարող, ցուցաբերեց ոչ միայն ակնառու ընդունակություններ, այլև իր անձնական առաջարկություններով և նկարչական միջամտություններով նոր որակ հաղորդեց այդ ստեղծագործությունների էսքիզների իրագործմանը:

Հակոբի մասին ընդհանուր տեղեկություն իմանալու համար այցելում ենք քանդակագործ Ռաֆիկ Եկմալյանին՝ Կինչան փողոցի վրա գտնվող արվեստանոցում: Հանգստասենյակի պատին կախված բրոնզե շրջանակներից մեզ են նայում երկու դիմակարներ: «Սրանք Հակոբն է նկարել: Մեկը մորս՝ Յուղաբերի, մյուսը հորս՝ Հարությունի, յուղաներկ դիմանկարներն են: Իսկ սա,— մատնանշում է արվեստագետը դիմացից կախված նկարը,— Հակոբի ինքնանկարն է: Ճիշտ է՝ ժամանակը աղոտել է նաև ռազմաճակատից ուղարկած «Մարտից առաջ» յուղանկարի որակը, բայց և այնպես դրանք ինձ համար թանկ են, ձեռքս չի բռնում պատկերասրահին կամ որևէ այլ թանգարանի հանձնել... Զմոռանամ ասել,— շարունակում է քանդակագործ եղբայրը նկարիչ եղբոր մասին,— Հակոբը սերտ կապերի մեջ էր թատրոնի և կինոյի վարպետների հետ: Երևանի Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի 1936—1939 թվականների հանրահայտ դերասանների դիմանկարների գրաֆիկական շարք էր ստեղծել, ուզում էր անհատական ցուցահանդես բացել, չհասցրեց: 1939-ին զորակոչվեց բանակ: Մասնակցեց ֆիննական պատերազմին, քիչ էր մնացել, որ վերջանար հերթական ծառայության ժամկետը, երբ բռնկվեց Մեծ հայրենականը: Վերջին նամակը ստացանք Լվովից, ուր նա ծառայում էր որպես 750-րդ գվարդիական գնդի շարքային զինվոր: Հակոբը խիզախաբար մարտընչեց հիտլերյան գիշատիչների դեմ և ծանր վիրավորվեց: Նա թեև իմ չափ բարձրահասակ չէր, բայց թիկնեղ էր, առույգ, կատակասեր և սրամիտ: Մեր այգուց մի բուռ հող թե տանեին, Հակոբը կբռնկվեր, էլ ո՞ւր մնաց, որ թշնամին գար, երկիրը զավթեր, իսկ ինքը անտարբեր մնար: Բեսարաբիայի ազատագրության ժամանակ ցուցաբերած անվեհերության, մարտական առաջադրանքների կատարման համար նա արժանացել էր բանակի գլխավոր հրամանատարության շնորհակալագրին, այդ մասին գրել էր ինձ՝ Բաքվում հակաօդային պաշտպանության (ՊՎՕ) զենիթային հրետանավորիս, հիշեցնելով. «Երբ վերադառնանք Երևան, երկու եղբորով մի կարգին ցուցահանդես կբացենք...»: Ցավով,— վառելով հերթական ծխախոտը, շարունակում է զրուցակիցս,— եղբորս բաղձանքը չիրականացավ: Այստեղ ապրում են միայն նրա նամակները, վրձիններն ու էտյուդները: Երանի, թե մահը սուտ լիներ:— Թափահարում է ձեռքը Ռաֆիկ Եկմալյանն ու հարցը ուղղում ինքն իրեն,— երբ մահը կա, մարդիկ էլ ինչո՞ւ են ուրիշների կյանքը կարճում...»:

ՀԱԿՈԲ ԵԿՄԱԼՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Աբրահամյան Արտավազդ**— Նրանք երիտասարդ մնացին, Ե., 1971, էջ 11—16:
2. **Գրիգորյան Սասուն**—Մի կարգին ցուցահանդես կբացենք, ԳԹ, 26 հունիսի 1981, էջ 4:
3. **Գրիգորյան Սասուն**—Անավարտ կտավներ, Սովետ. արվեստ, Ե., 1978, № 12, էջ 47:

ՍԻՐՈՒՆ ԼԵՎՈՆԸ

ԼԵՎՈՆ ՎԱՀԱՆԻ ԹՈԹՈՎԵՆՑ (1914—1943)

Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանի նախամուտքի ձախ պատին մարմարե մի մեծ հուշատախտակ է ամրացված՝ վրան 40 անուն: **Պապիկ Գյոդակյանի, Հակոբ Եկմալյանի, Վիգեն Ենոքյանի, Գրիգոր Կոստանյանի, Վանիկ Սևաչերյանի** հարազատները այսօր էլ դեռ հույսով սպասում են իրենց որդիների վերադարձին, քանզի ո՞վ է հավատում անհասցե մահին, չէ՛ որ նրանք դեռ պիտի նկարեին, քանդակեին, ցուցահանդեսներ կազմակերպեին, նրանք ունեին հազար ու մի երազանք: Ավաղ, քանի՜, քանի՜ ժողովրդական տաղանդներ չհասցրեցին ժողովրդի նկատմամբ մարել իրենց հոգու պարտքը: Ովքե՞ր են **Ս. Մակարյանը, Ս. Գրիգորյանը, Ս. Ավետիսյանը, Գ. Թադևոսյանը, Վ. Մեսրոպյանը, Հ. Վարդանյանը, Հ. Մարտիրոս-**

յանը և շատ-շատ ուրիշներ, ապագա որոնումները ցույց կտան: Այստեղ՝ հուշատախտակին, փորագրված Լ. Վ. Թոթովենց ազգանունի հետքերով գտնում ենք նրա մորը՝ Լուսյային: Բորբոքվում է հին վերքը, և վաստակաշատ մանկավարժը մեզ է տրամադրում Լևոն Վահանի Թոթովենցի անձնական արխիվը: Արդեն դեղնած, եռանկյունի այդ նամակներում տրոփում է պատանեկան ռոմանտիկայով հարուստ, հայրենանվեր և նուրբ մի սիրտ:

Թղթապանակը բացվում է հայ գրականության դասական Վահան Թոթովենցի՝ միակ որդուն նվիրած հետևյալ քառյակով՝

Նստի՛ր իմ ծնկին մանուկ ոսկեթել,
Նստիր ու շողա, ծաղիկ ոսկեթել,
Իմ սրտից արդեն արյուն է կաթում,
Դու բարձր ծչա, մանուկ ոսկեթել:

Մի այլ էջի վրա հազիվ ընթեռնելի քառյակներից մեկը ևս նվիրված է տղային և կոչվում է «Երգի՜ր, իմ մանո՜ւկ, իմ կապուտաչյա»: Այնուհետև նամակների մի հեղեղ է, ամեն մի նամակ իսկական մի ակնարկ է, մի նովել, մի բանաստեղծություն, որը գրել է հայկական 408-րդ հրաձգային դիվիզիայի մարտիկ Լևոնը Նովոռոսիյսկից, Գելենջիկից, Մալայա Զեմլյայից, Կերչից, Սուխումից, Տուապսեից: Ահա մի քանի պատառիկներ. «Մամա ջան, քո տված բինտը պահել եմ և ընկերներիս ասել, որ եթե վիրավորվեմ, դրանով կապեն վերքս և ես կլավանամ...»: Մի այլ նամակում կարդում ենք. «Իմ թանկագին մամա, ջանիկս, դնում եմ քո նկարը առջևս, նայում երկար: Փոխվել ես, տխուր ես երևում. տղա ունես պատերազմի դաշտում, որին տաս ամիս է չես տեսել...»: Լևոնի նամակներում ոչ միայն անհուն սեր կա մոր նկատմամբ, այլև մի անսասան հավատ իր սեփական ուժերի և մեր ժողովրդի հաղթանակի հանդեպ: Այդ մասին թերևս ավելի պերճ է խոսում 17/10—43 թ. գրած նամակը. «Իմ անչափ սիրելի, թանկագին հարազատներ, գրում եմ բոլորիդ և բոլորիդ: Նախ և առաջ իմացեք, որ այս վերջին շաբաթվա չտեսնված ուժգին, կատաղի, արյունալի մարտերից, (որոնց ես մասնակցել եմ ամենաառաջավոր դիրքերում՝ փողոցներում, ճանապարհներին և նույնիսկ շենքերում) դուրս եկա միանգամայն ողջ, առողջ և անվնաս:

Երկտողս գրում եմ ազատագրված ու մաքրված քաղաքից: Դրա համար նույնպես բոլորիդ հղում եմ հաղթական, մարտական ողջույն: Շնորհավորում եմ չափազանց մեծ և կարևոր հաղթանակներիս առթիվ: Քաղաքը վերջնականապես մաքրեցինք 16/6-43 թ.: Շարունակում ենք փախչող ֆրիցներին ոչնչացնել: Երկար և մանրամասն նամակիս սպասեք վաղը կամ մյուս օրը: Կարծում եմ՝ կհետաքրքրվեք: Առայժմ հանգիստ եղեք: Մահը բավական հեռացավ մեզանից: Անչափ կարոտալի և ջերմ համբույրներով.

Ձեր Լևոն...»:

Ոչ միայն Նովոռոսիյսկի, այլև 18-րդ բանակի 318-րդ գնդի ազատագրած բոլոր գյուղերի ու քաղաքների պաշտպանությանը ունեցած մասնակցության համար Լևոն Թոթովենցը պարգևատրվել է «Խիզախության համար» մեդալով: Այդ նա էր, որ գնդի ծանր վիրավորված հրամանատարին՝ կոզակ Վասիլևին, մարտադաշտից 5—6 կիլոմետր շալակելով հասցրեց սանիտարական կայան՝ նրա արյամբ ներկելով իր զինվորական շինելը:



Լ. Թոթովենց, «Մեռնող ծառը» (թուղթ, տուշ), 1939 թ.:

Լևոն Թոթովենցը 1924-ի ծնունդ էր: Սովորել էր Երևանի Կրուպսկայայի անվան ցուցադրական դպրոցում, 8-րդ դասարանից տեղափոխվել գեղարվեստի ուսումնարան: Սիրում էր ազատ ժամերին կլարնետ նվագել կամ նկարել: Մասնակցում էր աշակերտական-նկարչական ցուցահանդեսներին: Բարձրահասակ էր, կապուտաչ և վայելչակազմ:

— Սիրուն Լևոն էինք ասում,— պատմում էր նրա մասին Հայկական ԽՍՀ ժողովրդական նկարիչ, Մեծ հայրենականի մասնակից Սուրեն Սաֆարյանն ու ավելացնում,— նատյուրմորտներ, դիմանկարներ և գրաֆիկական աշխատանքներ նկարելիս Լևոնն անմրցելի էր:

Ձեռքիս տակ են Լ. Թոթովենցի մի քանի էսքիզները, բոլորն էլ իր ուսուցիչներ Մ. Աբեղյանի և Բ. Քոլոզյանի ստորագրությամբ գնահատված «գերազանց»:

«Պեյզաժ», «Դիմանկար», «Նատյուրմորտ» և պահպանված մի քանի այլ աշխատանքներ վկայում են, որ այսօր կունենայինք տաղանդաշատ մի նկարիչ, եթե Կերչում դեսանտայինների համար մակույկով դեղորայք տեղափոխելիս 19 տարեկան հասակում (1943 թ. նոյեմբերի առաջին տասնօրյակում) չզոհվեր Լևոն Վահանի Թոթովենցը:

ԼԵՎՈՆ ԹՈԹՈՎԵՆՑԻ ՄԱՍԻՆ

1. Նամակներ փառքի և անմահության (ժողովածու), Ե., 1969, էջ 295—298 (կա նաև նույն գրքի 2-րդ հրատարակությունում):
2. **Գրիգորյան Սասուն**—Հիշեցեք նրանց, Ավ., 18 մայիսի 1975, էջ 3:
3. **Գրիգորյան Սասուն**— Անավարտ կտավներ (հատված «Մուսաները չլռեցին» գրքից), Ե., Սովետ. արվեստ, 1978, № 12, էջ 47—48:
4. **Նալբանդյան Սիմոն**—Անմահ է փառքը նրանց, ԵԵ., 1982, 15 հոկտեմբերի:
5. **Նալբանդյան Սիմոն**—Կերչը գրոհողների շարքերում: ՍՀ, 13 հունվարի 1982:

ՉՀԱՍՑՐԵՑ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ ԲԱՑԵԼ

ԲԱԲԿԵՆ
ԹԱԴԵՈՍԻ
ԳԵՎՈՐԳՅԱՆ
(Հուրյան)
(1925—1943)

Խաթունարխում այսօր էլ, երբ խոսք է բացվում Մեծ հայրենականում զոհված համագյուղացիների մասին, բոլորն են ցավով և ափսոսանքով հիշում Աշխեն և Թադևոս Ավագյանների ավագ որդուն՝ Բաբկենին: Նա այստեղ է ծնվել՝ Խաթունարխում, 1925 թ. մարտի 13-ին: Դեռ դպրոցական էր, 3—4-րդ դասարանի աշակերտ, երբ ավագ քույրերը՝ Լուսիկն ու Էմման, նկատեցին իրենց եղբոր գեղարվեստով տարվելը: Բաբկենը դասերից հետո սիրում էր ընկերների հետ խաղալ ու վազվզել Սև ջրի ափերին, գետակում լողալ, հայացքն Արարատին հառած՝ բանաստեղծություն ձոնել նրան կամ էլ, մտքում Այվազովսկի դարձած, գույների լեզվով գովերգել վեհապանծ Մասիսն ու Հայկական պարը: Գյուղական անշուք, միհարկանի դպրոցում 30-ական թվականների վերջերին դերձակ Թադևոսի որդին փայլում էր բացարձակ առաջադիմությամբ. գերազանցիկ էր: Նրա գեղանկարներն ու բանաստեղծությունները արդեն իրենց պատանի հեղինակին Էջմիածնի շրջանում մեծ համբավ էին բերել: Բաբկենը չէր մեծամտանում, աշխատասիրությամբ կատարելագործում էր իր գրիչն ու վրձինը: 1942 թ. նա ավարտեց միջնակարգն ու եկավ Երևան, ընդունվեց գեղարվեստի ուսումնարան: Այստեղ նկարիչներ Վահրամ Գայֆեճյանն ու Ցոլակ Ազիզյանը շատ ուրախացան. «Էջմիածնից սա էլ Մկրտիչ Սեդրակյանից[1] հետո երկրորդն է, որ նկարչական փայլուն ձիրք ունի»,— եղավ քննող հանձնաժողովի կարծիքը: Բայց 17-ամյա Բաբկենին, որը ստորագրում էր նաև Հուրյան, դաժան բախտ վիճակվեց. ինչպես իր քույր Էմման, նա էլ 1942 թ. դեկտեմբերին ինքնակամ զինվորագրվեց պաշտպանելու հայրենի երկիրը: Լագոդեխիի զինվորական ուսում-

[1] Այժմ ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ:

Բ. Գևորգյան— «Ինքնադիմանկար» (Էսքիզ, նկարել է 17 տարեկան հասակում):

նարանում հատուկ զինվորական կուրսեր անցնելուց հետո, կրտսեր լեյտենանտի կոչումով Բաբկեն Գևորգյանը մեկնեց կրակի առաջին գիծ: Հերոսաբար մարտնչեց նա եղբայրական Ուկրաինայի Զեռնովիցի, Կրեմենչուկ և այլ քաղաքները թշնամուց ազատագրելու համար մղվող մարտերում: 1943 թ. հոկտեմբերին զոհվեց նա՝ անավարտ թողնելով իր օրագրերը, նկարչական էսքիզներն ու բանաստեղծությունները: Ծանոթանանք դրանցից մի քանիսին, որոնք այսօր որպես սուրբ մասունք պահպանվում են զոհված մարտիկի եղբոր՝ ինժեներ-մեխանիկ Էդուարդ Ավագյանի մոտ:

Բաբկենի օրագրերը

Բաբկեն Գևորգյանի օրագրերը լեցուն են ապագայի հանդեպ վառ երազներով, մարդու հանդեպ անհուն սիրով և ջերմությամբ, Հայրենիքի հանդեպ՝ անսահման նվիրվածությամբ: Ահա մի քանի պատառիկներ՝ առանց մեկնությունների:

«22.6.1942 թվական.

Արդեն վերջացան դպրոցական պարապմունքները, 1942 թ. մայիսի 31-ին մենք ավարտեցինք 10-րդ դասարանը: Ծուտով մեկնելու ենք հեռավոր շրջաններ ու գյուղեր, իսկ մի քանիսը՝ բարձրագույն դպրոցում սովորելու:

Սիրտս թռչում է դեպի գեղարվեստի բարձունքները, որտեղ ես պատմության գրքերում կկանգնեցնեմ իմ հուշարձանը: Սիրտս մի պահ իրեն զգում է նկարչական լայն սրահներում, որտեղ նկարիչ ընկերներիս հետ միասին գալիք կյանքի երջանկության կտավն ենք կերտում... ...Սիրտս լցված է նկարիչ դառնալու բուռն ցանկությամբ, անգամ երազում ես տեսնում եմ դա: Սակայն մտքիս տեսողության հորիզոնը կարճ է. ես դեռ չեմ նկարել իմ հայրենի երկրի չքնաղ տեսարանները, ձորերն ու լեռները, անտառները ու լճերը: Ես մի ցանկություն ունեմ. դառնալ մեծ նկարիչ, ճանապարհորդել քաղաքից քաղաք, ծովից-ծով, նկարել իմ տեսածն ու զգացածը և սքանչանալ...»:

Թերթելով զոհված հայորդու օրագրի 1941 թ. հունիսի 22-ից 27-ի գրառումները՝ այսօր էլ ընթերցողը կարող է ծանոթանալ այն ծանր ապրումներին, խոհերին ու մտատանջություններին, որ ունեցել է 9-րդ դասարանցի պատանին պատերազմի առաջին օրերին: Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մուսայել Քոչարյանի և բանասիրական գիտությունների դոկտոր Արտաշես Մարտիրոսյանի հետ երկյուղածությամբ (որովհետև հնությունից արդեն դեղնել ու քայքայվում է), թերթում ենք Բաբկենի 1941 թ. հոկտեմբերի 10-ի գրառումը: «Այսօր ես տավար եմ պահում. ձանձրալի աշխատանք: Նայում եմ շուրջս, գեղեցիկ տեսարաններ են: Նայում եմ Արարատի վեհափառ, ձյունոտ գագաթին, հիանում նրա կանաչ, գեղեցկաթով լանջերով: Այնտեղ է սլանում սիրտս. նրա սառն աղբյուրների, ծաղկափթիթ լանջերի հմայքից եմ հարբում: Ի՜նչ երանություն, ի՜նչ ձգողություն, ինչպիսի՜ վայելք: Նայում եմ Արարատին, և մեջս մի ցանկություն է առաջ գալիս. նկարել բիբլիական այս լեռը: Սակայն վրձինս դեռ անզոր է, Արարատը նկարելու համար Այվազովսկի պիտի լինել: Խորհում եմ այդ մասին, մտածում ու տխրում... Ոչի՜նչ, մի երջանիկ օր ես էլ կմտնեմ գեղարվեստից ակադեմիա, կկատարելագործեմ վրձինս և այն ժամանակ կանմահացնեմ քեզ, իմ վե՜հ Արարատ, իմ դրա՜խտ աշխարհ՝ Արարատյան դաշտ...»:

Ու մինչ ներքին խաթունարխի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի գերազանցիկ Բաբկեն Գևորգյանը իր օրագրում այսպես կբացահայտեր իր ներաշխարհն ու ապրումները, թշնամու ինքնաթիռները ռմբակոծում էին (ըստ ռազմիկի օրագրի) Խարկովն ու Օրյոլը և բազմաթիվ խորհրդային խաղաղ այլ քաղաքներ ու գյուղեր: Թեև ռազմաճակատից հազարավոր կիլոմետրեր հեռու էր գտնվում Բաբկենը, բայց և այնպես հոգեկան անդորր չուներ: 1942 թ. հունվարի 21-ին նա իր օրագրում պատանեկան անմիջականությամբ թղթին հանձնեց կյանքի և անմահության մասին իր փիլիսոփայական մենախոսությունը, իր ներքին տրտունջքը. «...Ինչո՞ւ է ծնվել մարդը: Մի՞թե ծնվել է կրելու կյանքի դառնությունները: Մի՞թե ծնվել է արյունոտ պատերազմների, թնդանոթների, գնդացիրների միս դառնալու: Ո՞ւմ համար... Նրանք քարոզում են Ազատություն, սակայն, ո՞ւր է այդ ազատությունը: Ինչպես երևում է՝ Ազատությունը հավիտենապես հեռու է մեզանից... Կյանքը մի մասի համար երջանկություն է, մյուս մասի համար՝ տանջանք...

Ո՞ւր է այդ Ազատությունը...



Բաբկեն Գևորգյանի ռազմաճակատային վերջին լուսանկարը:

Բ. Գևորգյան— «Հրեշտակն ու երեխաները» (Նկարել է 16 տարեկան հասակում, մատիտանկար):

Օ՜, Ազատության քաղցրություն».

Դեռ չճաշակած ազատության քաղցրությունը, կարոտ առաջին սիրո, առաջին ցուցահանդեսի և հայրենի խաղաղ երկնքի 1943 թ. հոկտեմբերին Տարաս Շևչենկոյի և Լեսյա Ուկրաինկայի հայրենիքը վայրագներից ազատագրելիս թշնամու մահաբեր գնդակը խոցեց ռոմանտիկ և ազատատենչ հրաձիգ հայորդուն: Բաբկեն Գևորգյանի պահպանված օրագրերը այնպես են ներկայացնում պատերազմական օրերի հայ գյուղի և գյուղացու առօրյան, նրա ծանր կացությունը, որ թվում է, թե նրանց հեղինակը անկեղծ, սրտաբաց և անսքող զրույցի է նստել քեզ հետ, իր սիրտն է դատարկում. «Արցունքներ են հոսում դժբախտ մայրերի աչքերից, որոնց որդիները զոհ են գնում երկաթյա հրեշներին: Պատերազմի ահեղ ճիրաններում զոհվում են հազարավորները, և դեռ շատ-շատերն են սպասում իրենց մոտալուտ վախճանին»: Մեկ ութիշ գրառման մեջ (5.8.1942 թ.) դպրոցական հա-

սունության ատեստատի քննություններին պատրաստվող Բաբկենն արձանագրել է. «..Դառն է մարդկանց վիճակը: Մայրս շարունակ անիծում է իր դժբախտ կյանքը (դա պարզ է նրան ճանաչողի համար), տանը հաց չկա, բոլորը սոված են: Սակայն փոքրիկների բերանից չի լսվում քաղցի աղաղակ. ողջ տանը լռություն է տիրում: Հայրս աշխատում է կարի արտելում և մասնակից չէ այդ լռությանը, բայց նա գիտի, ներքուստ տեսնում է այդ ամենը և անտես տանջվում: Եվ այսպես է ոչ միայն մեր տանը. սո՛վ է ողջ Ռուսաստանում, նրա ծայրամասերում»: Բաբկենը շիտակ է եղել ոչ միայն կյանքում, այլև իր բոլոր գրառումներում: Ստեղծագործելիս նրա համարձակությունն ու ըմբոստությունը երբեք կեղծիքի պատյան չեն հագել: Նրա աշակերտական գրիչն ու վրձինը 30-ական թվականներին երբեք տուրք չտվեցին անհատի պաշտամունքին: Ընդհակառակը... օրագրերից մեկում (19/9-1942 թ.) Բաբկենը մտատանջվում է բանակ զորակոչված իր ընկերների՝ Լյուդվիգի, Լիպոյի, Նորիկի, Արտուշի և շատ-շատերի համար: Մեկ ուրիշ գրառում ավելի պատկերավոր է: Նրանում կարդում ենք. «Արյունոտ պատերազմը շարունակում է մոլեգնել՝ նվաճելով նոր քաղաքներ ու գյուղեր: Կարծես սարսափելի մի փոթորիկ իր գիրկն է առել ծաղիկների մի հսկա փունջ և օրորում է՝ թափելով այդ փնջի գեղեցիկ թերթիկները՝ առանց գթալու նրանց...

...Դժվար է նայել գյուղին առանց ցավալու: Այժմ գյուղն իրենից ներկայացնում է մի կատարյալ անապատ, որտեղ հատուկենտ ճամփորդներ են երևում և այն էլ հենակավոր...

Պատերազմը շարունակվում է»:

Հետևելով օրագրի պատկերաշատությանը, սեղմ գրելաոճին, ասելիքի խտացվածությանը, դժվար չէ կռահել, որ խորհրդահայ գրականությունն այսօր կունենար տաղանդաշատ մի արձակագիր կամ բանաստեղծ, եթե ժամանակից շուտ չխզվեին նրա կյանքի և քնարի լարերը:

Այո՛, նաև քնարի:

Բ. Գևորգյան— «Հաղթանակած զինվորը» (Նկարել է 14 տարեկան հասակում, մատիտանկար):

Բաբկենի բանաստեղծությունները

Ոչ միայն օրագրերում, այլև իր բանաստեղծություններում, որոնք իրենց արվեստով թեև կատարյալ չեն, պատանի բանաստեղծը անկեղծ է, մարդամոտ: Օգնել մարդը բարձրանա, մաքրվի. աշխարհը խաղաղ տեսնել, «աշխատանքը միայն և միայն ամենաթանկ զարդը լինի»...և բազմաթիվ այլ խոհեր կազմում են գաղափարական այն առանցքը, որոնց շուրջ հյուսվել են Բ. Գևորգյանի սիրո, խաղաղության, հայրենիքի, բարեկամության և մարդերգությանը նվիրված գրական թոթովանքները, թոթովանքներ, գրական բողբոջներ, որոնց պտղակալումը կարկտահարեցին պատերազմի սև ամպերը:

Մութ են ծորերը,
Խավար է այնտեղ,
Սիրտս դարձրել եմ
Լուսավոր կանթեղ:

Վառվում է սիրտս
Հին ու նոր ցավից,
Պայքարի մեջ եմ,
Մի՛ խղճացեք ինձ:

Գրչի փոխարեն
Ես զենք եմ բռնել,
Հայրենյաց սերն է
Իմ սիրտը վառել:

Խավար գիշեր է
Անտառում վայրի,
Հետևում են ինձ
Ամպերն ու քամին:

Կբացվի լույսը,
Արևը վկա,
Իմ և քո մահով
Հաղթանակ կգա:

15/5—1943 թ.
ք. Լագոդեխի,
Վրաստան

Եփում էր դաղձով, համեմով ապուր,
Քիչ այն կողմ հայրս էր ինձ տաբատ կարում:

Խեղդելով լացը՝ մայրս խուլ ցավից
Անիծում էր չար թագավորներին,
Որ պատճառ դարձան՝ բաժանվեմ տանից,
Կիսատ թողնելով կտ վները իմ...

Մթնել է նորից, շուրջս եմ նայում,
Լացում են կարծես դաշտեր ու անտառ,
Քամին մորս տեղ փաղաքշում է ինձ,
Հորս պես սաստում ու դնում ծամփա:

Գնում եմ մարտի, հայրենի իմ տուն,
Է՜, մնա՛ս բարով, դաշտ Արարատյան,
Հավե՛րժ հիշեցեք ձեր զինվոր որդուն,
Եթե պահանջվի՛, կյանքս Ձեզ կտամ:

11.5.1943 թ.:

— Ոչ միայն խոհափիլիսոփայական, այլև բազմաթիվ սիրային բանաստեղծություններ էլ ունի Բաբկենը,— ծանոթացնելով մեզ եղբոր ձեռագրերին, ասում է Էջմիածնի ռուսական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Զեմմա Ավագյանն ու մղկտում, որ չի կարողացել եղբոր սիրած աղջկանից, թեկուզ արտագրելու պայմանով, վերցնել ռազմաճակատից ուղարկված կրտսեր լեյտենանտի քնարական, սիրային և հայրենաբաղձ ոտանավորները: Իսկ այն, ինչ պահպանվում է իր եղբոր՝ Էդուարդ Ավագյանի մոտ, դա պատանի ստեղծագործողի վաղ շրջանի թոթովանքներն են, նրա «երգերն ու վերքերը», որոնք չհասցրին հասունանալ և իրենց բույրն ու հմայքը հաղորդել բանաստեղծական գոհարներով հարուստ հայ դասական քնարերգության մշտադալար անդաստանին:

1942 թ. դեկտեմբերից մինչև 1943 թ. օգոստոսը Բաբկեն Գևորգյանը Անդրկովկասյան զինվորական ուսումնարանի կուրսանտ էր: Զինուսումնառության և զինվարժության դասերից հետո սիրում էր առանձնանալ, ձեռքն առնել թուղթն ու մատիտը, գրել կամ նկարել: Այստեղ՝ Լագոդեխիում է ծնվել «Հիշել եմ նորից» բանաստեղծությունը.

Հիշել եմ նորից իմ ընկերներին,
Հայրենի՛ իմ տուն, կանգո՛ւն միշտ մնա,
Անսասան է, տես, քո զինվոր որդին,
Եթե պահանջվի, կյանքն իր քեզ կտա:

Հիշել եմ մորս. ա՜խ, նա միշտ տխուր
Մեր հին պատի տակ օջախ էր վառում,

Փոստարկղ № 36-ից Երևան (Ռուսթավելու փողոց, № 104 տուն), Էմմա Գևորգյանին հասցեագրած Բաբկենի այս բանաստեղծությունը եղավ վերջին գրավոր նամակ-զրույցը քրոջ հետ. հետո նամակագրությունը դադարեց:

Բաբկենի նամակները

Դրանք կարծես իր օրագրերի և բանաստեղծությունների հոգեբանական շարունակությունը լինեն. լեցուն են լավատեսությամբ, յուրայինների հանդեպ անսահման սիրով և ուշադրությամբ, թշնամու հանդեպ սերմանում են ատելություն և վրեժխնդրություն: Ձեռքիս տակ է 1943 թ. հոկտեմբերին Կուրսկի մարզից ուղարկված մատիտագիր մի նամակ: Նրանցից պարզվում է, որ հրաձգային դասակի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Բաբկեն Գևորգյանը մարտում վիրավորվել է, տեղափոխվել հոսպիտալ և ապաքինվելուց հետո նորից մեկնել մարտի. «Թանկագին ծնողներ՝ հայրիկ և մայրիկ ջան, դուրս գալով հոսպիտալից (18-ին) մեկնում ենք դեպի մեր զինմասը: Այժմ ճանապարհին ենք, շուտով տեղ կհասնենք (Կուրսկի մարզ, Կրասնի Ցարուդ): Թանկագին ծնողներ, ես առայժմ ողջ և առողջ եմ: Մամա ջան, իմ մասին աշխատիր քիչ մտածել, քեզ լավ պահիր մինչև իմ վերադարձը: Հավերժ քաղցրանուշ իմ փոքր քույր ու եղբայր՝ Զեմմա և Էդիկ, երկուսիդ էլ սեղմում եմ կրծքիս և ջերմ, ջերմ համբուրում: Եթե երբևէ ջղայնացրել եմ ձեզ հանիրավի, ներող եղեք: Էդվարդ և Զեմմա ջան, մյուս նա-

Բ. Գևորգյան—«Ո՞վ է, ի՞նչ է ուզում» (մատիտանկար, էսքիզ)

մակներում էլ եմ պատվիրել, այստեղ էլ նորից կրկնում եմ և խնդրում՝ չջղայնացնեք մամային, սիրով կատարեք նրա բոլոր հանձնարարությունները, դա ոչ միայն ձեր որդիական պարտքն է, այլև՝ մեծ հայրենասիրություն: Լավ սովորեք, դուք դրանով կօգնեք թշնամու ջախջախմանը: Մամ ջան, ինձ հետ միայն մի հայ տղա կա, 1924 թ. ծնված, նրա հետ միասին ենք, ախպոր պես նայում ենք միմյանց, եթե երկուսս էլ ողջ վերադառնանք, նա իմ հարսանիքի քավորը կլինի, այդպես ենք ուխտել...»:

Չվերադարձավ Բաբկենը, չկատարվեց նրա պսակադրությունը, չունեցավ քավոր: Մեծ հաղթանակից հետո ավելի խորացավ որդեկորույս ծնողների կսկիծն ու ցավը: Ամեն առտու Աշխեն մայրիկը սնդուկից հանում էր մի կապոց՝ Բաբկենի նամակները, ոտանավորները, նայում պատից կախված որդու զինվորական լուսանկարին, նրա ջրաներկ ու յուղաներկ կտավներին, և արցունքն ու հեծկլտանքը դառնում էին ոխ և անեծք, հասցեագրվում Հիտլերին ու Ստալինին, որոնք «էս սև կրակը՝ էս պատերազմը, մեր ջանը գցին... Թե չէ տղաս ինչո՞ւ պիտի զոհվեր...: Նրա անունը ինչո՞ւ պիտի փորագրվեր գյուղի կենտրոնում կանգնեցված զոհվածների հուշարձանին...»:

Բաբկենը գեղանկարիչ

Սկզբում ծառ էր նկարում, ծաղիկ և թիթեռ: Հետո սկսեց նկարել սար, անտառ, սիրած աղջկան, դասընկերներին, ուսուցիչներին... հայոց մեծերի դիմանկարները... Դպրոցական պատի թերթերի ճակատներ նկարեց և ազդագրեր... Ինչե՛ր, ինչե՛ր ասես, որ չէր նկարում Բաբկենը: Արևը դարձրած պաշտամունք՝ նա իր համար կեղծանուն էր ընտրել՝ Հուրյան, նկարների տակ այդպես էլ ստորագրում էր՝ Բ. Հուրյան կամ Բ. Հ.: 1940 թվականին Էջմիածնի պիոներտանը կազմակերպված «Մեր պատանի ստեղծագործողները» շրջանային ցուցահանդեսի ժամանակ Բ. Գևորգյանի «Սև ջրի ափին» յուղաներկ կտավը գրավեց առաջին տեղը: ՀԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար Գեղամ Ալեքյանը Բաբկենին շնորհեց ՀԼԿԵՄ Կենտկոմի և Լենինի անվան պիոներական կազմակերպության պատվոգիր: 8-րդ դասարանցի նկարիչը ոգևորությունից գոտեպնդված նոր-նոր մատիտանկարներով, ջրաներկ կամ տուշ-նկարաշարերով, յուղանկարներով ուրախացնում էր իր ծնողներին, ուսուցիչներին և համագյուղացիներին: Հովհ. Թումանյանի, Պուշկինի, Լերմոնտովի, Շիլլերի բազմաթիվ դիմանկարներ կերտեց խաթունարխցի Աշխեն մայրիկի և Թադևոս քեռու ավագ որդին: Այսօր էլ

Բաբկեն Գևորգյանի երկու նամակն ու լուսանկարը՝ ուղարկված Լագոդեխիի զինվորական ուսումնարանից:

հանրապետական նշանակության թոշակառու, ինժեներ-մեխանիկ Էդուարդ Ավագյանի մոտ պահպանվում է «Բաբկենի գործերը» թղթապանակը: Արվեստի երկրպագուն չի կարող չուրախանալ և չհուզվել, երբ ծանոթանա նրա թեկուզ մի քիչ անվարժ վրձնով պատկերված բնանկարներին («Ճանապարհ», «Մեր գյուղի գետը», «Ջրվեժ», «Գետափը զարթնել է», «Հայոց մեծերը», «Հուզված աղջիկը», «Ինքնանկար»), դիմանկարներին և բազմաթիվ այլ ստեղծագործություններ: Կարդում ես Մեծ հայրենականում զոհված բանաստեղծ և նկարիչ հայորդու նամակները, օրագրերն ու գրական թղթովանքները, դիտում նրա վրձնի արտադրանքը և ակամայից քո դեմ է հառնում թումանյանական հանճարեղ հարցում-մեղադրանքը.

Որքան ծաղիկ պիտի բուսներ,
Որ չբուսավ էս հողին...

— Ո՞ւմ եք կտակելու Բաբկենի արխիվն ու կտավները,— հարցը շուրթիս բաժանվում եմ Խաթունարխից և ունկերիս դեռ զոհված մարտիկի եղբոր՝ Էդուարդ Ավագյանի պատասխանն է.

— Միակ տեղը ոչ թե պատկերասրահն է կամ որևէ թանգարան, այլ Երևանի մանկական գեղագիտական դաստիարակության կենտրոնը, քանզի ինձ մոտ պահպանված եղբորս աշխատանքները ոչ թե գլուխգործոցներ են, այլ 10—15 տարեկան մի աշակերտի ստեղծագործություններ, որոնք նա չհասցրեց ցուցադրել. զոհվեց, երբ նոր էր բոլորել կյանքի տասնութերորդ գարունը:

ԱՆԱՎԱՐՏ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ[1]

Մեծ հայրենականի բոցերը եղեռնական վիճակ ստեղծեցին հեղափոխության օրրանում՝ Լենինգրադում: Այստեղ պաշարման ծանր օրերին թշնամու գնդակին զոհ գնացին գեղարվեստի ակադեմիայի բազմաթիվ հայ սաներ: Նրանցից ԳԱԲՐԻԵԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ ծնվել էր Թբիլիսիում: Երրորդ տարին էր, ինչ Թբիլիսիի նկարչական դպրոցի սանը Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայում ուսանում էր պրոֆեսորներ Ա. Դելենեկայի և Վ. Սերովի մոտ: Ռմբակոծության տակ ընկած բազմաթիվ աշխարհազորայինների հետ զոհվեց և լեյտենանտ նկարիչը՝ Գաբրիել Գաբրիելյանը, 1943 թվականին:

Գեղարվեստի ակադեմիայի սաներից էր նաև ԴԵԴՈՒՇ ԱՐՇԱԿՈՒՆԻՆ: Նրա երիտասարդ կյանքը ևս այստեղ կարճվեց. զոհվեց նա կյանքի 25-ը դեռ չբոլորած:

Լենինգրադի հերոսական պաշտպանության ժամանակ, ինչպես իր դասախոս Սահակ Մովսիսյանը, իր անունը փառքով պսակեց նաև գեղարվեստի ակադեմիայի 3-րդ կուրսի ուսանող, շնորհաշատ քանդակագործ ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԸ: Նա մինչ այստեղ ուսանելը ավարտել էր Երևանի գեղարդ տեխնիկումը: Հակոբը աշխույժ և կատակասեր երիտասարդ էր, ակտիվորեն էր մասնակցում ակադեմիայի հասարակական-կոմերիտական աշխատանքներին: Հաճախ էր լինում Էրմիտաժում, ծանոթանում, ոգևորվում ռուս և համաշխարհային արվեստի գլուխգործոցներով: Նա 1940 թ. մասնակցեց ուսանող նկարիչների և քանդակագործների միջակադեմիական մրցանակաբաշխությանը և շահեց առաջնություն: Ցավոք Հակոբի պատվոգրերն ու գովասանագրերը ևս զոհվեցին պաշարված Լենինգրադում և իրենց տիրոջ պես չվերադարձան հայրենի տուն:

Լենինգրադյան բլոկադան հավերժ փակեց նաև տաղանդաշատ գեղանկարիչ ՎԻԳԵՆ ԽԱՆԶԱԴՅԱՆԻ (գրականագետ Ց. Խանզադյանի եղբորորդին) աչքերը. նա ևս զոհվեց՝ չհասցնե-

Պապիկ Գյոդակյան

Սարգիս Նալբանդյան

[1] Ներքոհիշյալ նկարիչների մասին ընդարձակ խոսք չենք կարող ասել, քանզի չենք գտել նրանց հարազատներին և ձեռքի տակ չունենք անհրաժեշտ տվյալներ (Ս. Գ.):

լով ստանալ գեղարվեստի ակադեմիայի իր դիպլոմը:

Անավարտ մնացին նաև լենինականցի շնորհաշատ նկարիչներ ՍԱՐԳԻՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ, ՊԱՊԻԿ ԳՅՈՌԱԿՅԱՆԻ և բազմաթիվ այլ նկարիչ զինվորների կյանքի և ստեղծագործության ապագա ճանապարհները, քանզի նրանք զոհ գնացին հիտլերյան զավթիչների մահաբեր գնդակներին ու ռումբերին տարբեր ռազմաճակատներում և բախտ չունեցան վերադառնալու հայրենի օջախ, նորից ձեռքն առնելու վրձինն ու քանդակագործի հատիչը, մարդու և աշխարհի առջև բացելու իրենց հոգու, սրտի, մտքի ու երևակայության անծիր տիեզերքը:

ԳԱԲՐԻԵԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Գրիգորյան Սասուն**—Անավարտ կտավներ, Սովետ. արվեստ, Ե., 1978, № 12, էջ 43:
Դզնունի Դանիել—Հայ կերպարվեստագետներ (համառոտ բառարան), Ե., 1977, էջ 104:
3. **Քոլոզյան Բաբկեն, Հարությունյան Վահան**—Նկարիչներ (զոհված հայ նկարիչների մասին), Սովետ արվեստ, 1958 թ., № 8, էջեր 55—58:
4. **Էլլարյան Իսկանդար**—Անմահության հուշարձաններ, Ե., 1976, էջ 20:

ԴԵՂՈՒՇ ԱՐՇԱԿՈՒՆՈՒ ՄԱՍԻՆ

1. **Գրիգորյան Սասուն**—Անավարտ կտավներ, Սովետ. արվեստ, Ե., 1978, № 12, էջ 49:
2. **Էլլարյան Իսկանդար**—Անմահության հուշարձաններ, Ե., 1976, էջ 21:

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Գրիգորյան Սասուն**—Անավարտ կտավներ, Սովետ. արվեստ, Ե., 1978, № 12, էջ 43:
2. **Դզնունի Դանիել**—Հայ կերպարվեստագետներ, Ե., 1977, էջեր 245—246:
3. **Քոլոզյան Բաբկեն, Հարությունյան Վահան**—Նկարիչներ (զոհված հայ նկարիչների մասին), Սովետ. արվեստ, 1958, № 8, էջեր 55—58:
4. **Էլլարյան Իսկանդար**—Անմահության հուշարձաններ, Ե., 1976, էջ 20:

ՀՈՒՇԱՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀՈՒՇԱՑԱՆԿ

ՋՈՀՎԱԾ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ ԹՈՐՈՍԻ

1. «Բերքահավաք», 1940 թ., կտավ, յուղ., 97×173 Ժ. 3337/7335
2. Մոր դիմանկարը ——»—— 65×547 Ժ. 5456/14030
3. Այգեկութ ——»—— 53×83,5 Ժ. 5457/14031
4. «Գևորգ Մարգպետունի» վեպի գլխազարդ էսքիզ թ., մատիտ, 22×30 Թ. 1168/977
5. Նույնը ——»—— 20,5×30,5 Ր. 1169/978
6. Բնանկար, 1940 թ. թ., տուշ, 21,2×47 Ր. 1293/1097
7—28. «Սասունցի Դավիթ» էպոսի նկարազարդումներ (21 թերթ), թ., ջրաներկ, 31×24,5 Ր. 2052/2072
29. Դաշնակցականների տիրապետությունից (3 թերթ) թ., տուշ 31×24,5 Ր. 1168/1162
30. Կոլտնտեսություն, 1930 թ., թ., տուշ, 45×36,5

ՍԻՄՈՆՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ ՍՏԵՓԱՆԻ

1. Երևան, 1940 թ., կտավ., յուղ., 60×70 Ժ.—4051/9885
2. Ինքնադիմանկար, ——»—— 70×59 Ժ.—4651/11318
3. Երևան (էտյուդ), ——»—— 39×43,5 Ժ. 1610/1876
4. Արածող ոչխարներ (էտյուդ) ——»—— 55×69 Ժ. 1759/2676
5. Ծանապարհով վերադարձող հոտը (էտյուդ), 1940 թ., ——»—— 54×69 Ժ. 1760/2677
6. Արարատ ——»—— 50×60 Ժ. 4050/9884
7. Փողոց Գորիսում ——»—— 50,5×43 Ժ.4498/10791
8. Աշուն (էտյուդ), 1940 թ., ——»——50×60 Ժ. 4499/10792
9. Ծառեր (էտյուդ) ——»—— 42×57 Ժ. 4501/10794
10. Ձմեռ (էտյուդ), 1940 թ., ——»—— 51×47 Ժ. 4500/10793
11. Լենինի հրապարակը Երևանում ——»——40×44 Ժ. 4502/10795
12. Պարտիզաններ ——»—— 77×85 Ժ. 4503/10796
13. Յուսուֆի սպանությունը, կտավ., յուղ., 147×193 բատ., թ.
14. Մեխանիկական գործարան, թ., տուշ, 14×32,5 Բ—1167
15. Հանդիպում: Էսքիզ: 1942 թ., ջրանկ., 29×41

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԱՀԱՆ (ՎԱՆԻԿ) ԿԱՐԱՊԵՏԻ

1. Գործարանում, թ., տուշ, 28,5×21,4 Բ—1164
2. Բերքահավաք, 1930 թ., ——»—— 28×19 Բ—1176

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՆՈՒԿ ՎԱԽԹԱՆԳԻ

1. Հանքագործներ, թ., տուշ, 38×58 Բ—1178
2. Այութիկտուֆի բեռնավորումը 44×59,5 Բ/1178

ՏՈՆԱԿԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ ԱՐԱՄԻ

1. Ինքնադիմանկար (ՀՊՊ-ի ֆոնդ), կտավ., յուղ., 49×42,3 Բ—1705/11319

Երևան քաղաքի պատմության թանգարանում տես ներքոհիշյալ 3 ստեղծագործությունները

1. Վերակառուցվող Երևանը, 1935 թ., կտավ, յուղ. 75×95 Մուտք—879
2. Տեսարան Կոնդից—1, 1930 թ., —»—, 81×132 Մուտք—956
3. Տեսարան Կոնդից—2, 1930 թ., Մուտք—960

ՀՈՒՇԱՑԱՆԿ ՋՈՀՎԱԾ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ[1]

ԽՍՀՄ ՆՍ ԱՆԴԱՄՆԵՐ

Ալեքսանյան Սարգիս Թորոսի
Իսրայելյան (Խոշաբցյան) Ներսես Իսրայելի
Կարապետյան Վահան (Վանիկ) Կարապետի
Հարությունյան (Ուստա) Մանուկ Վախթանգի
Հովհաննիսյան Սարգիս (Սաքո) Բագրատի
Մարկոսյան Անդրանիկ Մուշեղի
Մովսիսյան Սահակ Իգնատիոսի
Սարգսյան Սուրեն Գևորգի
Սիմոնյան Կորյուն Ստեփանի
Տոնականյան Լևոն Արամի

ՋՈՀՎԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՎ ՍԿՍՆԱԿ ՆԿԱՐԻՉՆԵՐ

Ադամյան Սուրեն Ադամի
Այթունյան Ջարմայր (Ջազիկ) Ստեփանի
Ավետիսյան Հայկ Հարությունի
Արաբաջյան Տիգրան
Ավագյան Սուրեն Գեղամի
Անծարակյան Սերոբ Գրիգորի
Արշակունի Դեդուշ
Բաբայան Գևորգ Մնացականի
Բայազցյան Էսպերանս Հովհաննեսի
Բանդուրյան Դանիել Հովհաննեսի
Գաբրիելյան (Գաբրիելով) Գաբրիել
Գևորգյան (Հուրյան) Բաբկեն Թադևոսի
Գևորգյան Համլետ Բագրատի
Գյոդակյան Պապիկ
Գրիգորյան Ս. Վ.
Գրիգորյան Հայկազ Հայրապետի
Գրիգորյան Հակոբ
Դանիելյան Ջավեն
Դիլանյան Ցոլակ
Եկմալյան Հակոբ Հարությունի
Ենոքյան Վիգեն
Ջաքարյան Ջ. Ա.
Թադևոսյան Լ.
Թոթովենց Լևոն Վահանի
Իսրայելյան (Խոշաբցյան) Բենիկ (Բենիամին) Իսրայելի
Լալայան Ա. Ա.
Խանզադյան Վիգեն
Խանջյան Ժորա
Խաչատրյան Պ. Թ.
Խաչատրյան Վ. Հ.
Խուրշուդյան Նազար
Կաժոյան Օնիկ
Կարապետյան Զ. Կ.
Կոստանյան Գրիգոր
Հարությունյան Ա. Ա.
Հարությունյան Ռազմասեր Վաղարշի
Հակոբյան Հակոբ
Ղազարյան Գ. Ա.
Ղարիբյան Սուրեն
Մանդակունի Գևորգ Քրիստափորի
Մադաթյան Ջորայր (Ջորիկ) Միքայելի
Մարգարյան Կոնստանդին
Մակարյան Թ. Ա.
Մակարյան Գ. Ա.
Մարտիրոսյան Թ. Խ.
Մեսրոպյան Վ. Մ.
Սևաշերյան Վահան (Վանիկ) Գևորգի
Միքայելյան Դ.
Պետրոսյան Հ. Պ.
Նալբանդյան Սարգիս (լենինականցի, թշնամին նրան ողջ-ողջ այրել է)
Սահակյան Մ. Հ.
Վարդանյան Հ.

[1] Մեզ համար չբացահայտված (անուն-հայրանունների առաջին տառերն են ցանկում նշված) զոհված նկարիչների ազգանունները վերցված են Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան (նախկինում Երևանի գեղարդ, հետո՝ կերպարվեստի) ուսումնարանի նախասրահում ամրացված մարմարե հուշատախտակից: Չեմ կասկածում, որ կլինեն և բացթողումներ: Հեղինակը խնդրում է բոլոր ընթերցողներին, եթե ճանաչում են նրանց կամ նրանց հարազատներին, հայտնեն, որպեսզի ապագայում հնարավոր լինի նրանց մասին ևս ընդարձակ տեղեկատու խոսք ասել:

ՀՈՒՇԱՑԱՆԿ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՎ 1941—1945 ԹԹ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄ ԾԱՌԱՅԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ

Աբրահամյան Արտաշես Սահակի
Ադամյան Խաչիկ Մնացականի
Ազիզյան Գրիգոր Մինասի
Ազիզյան Սարգիս Լևոնի
Ազիզյան Սուրեն Խաչատուրի
Ազիզյան Ցոլակ Լևոնի
Ակնունի Պերճ Արմենակի
Ահարոնյան Մինաս Քերոբի
Այվազյան Վլադիմիր Տիգրանի
Անանիկյան Հակոբ Հարությունի
Անտոնյան Մուշեղ Միսակի
Առաքելյան Գևորգ (Ժորժ) Աթանեսի
Առաքելյան Միքայել Միքայելի
Ասատրյան Գեղամ Մագնոսի
Ասլանյան Վաղինակ Սիրեկանի
Ասլյան Ալբերտ Արտեմի
Աստվածատրյան Ակնունի Արսենի
Ավագյան Գևորգ Սիմոնի
Ավակիմով Ջավեն Անդրանիկի
Ավետիսյան Համլակ Ավետիսի
Ավետիսյան Հրանտ Մարգարի
Արամյան Գուրգեն Լևոնի
Արզումանյան Մարկոս Տիգրանի
Արուտչյան Սարգիս Տիգրանի
Ամոլիկյան Վահան Ստեփանի
Աղաբեկյան Սուրեն Սողոմոնի
Բաբլոյան Հրանտ Թովմասի
Բաղալյան Գրիգոր Բաբայի
Բաղդասարյան Լևոն Գրիգորի
Բաղդասարյան Սարգիս (Սերգո) Իվանի
Բաղդասարյան Վարդգես Խաչատուրի
Բայբուրդցյան Պետրոս Արամի
Բդեյան Համլակ Գուրգենի
Բրեժնև Նիկոլայ Նիկոլայի
Բեքարյան Արա Վաղինակի
Գաբրիելյան Վազրիկ Ծերունի
Գալստյան Կարապետ Գևորգի
Գալստյան Սիմոն Մեսրոպի

Գևորգյան Գրադեոն Զոհրաբի
Գյոկչակյան Կարապետ (Գերաս) Գրիգորի
Գյուլամիրյան Խաչատուր Հովհաննեսի
Գրիգորյան Ադիբեկ Բալաբեկի
Գրիգորյան Հակոբ Հովհաննեսի
Գրիգորյան Հրայր Հաբեթի
Դանիելյան Դերենիկ Մկրտիչի
Դավթյան Արամ Սիմոնի
Եկմալյան Ռաֆայել Հարությունի
Եղիկյան Հովհաննես Աշոտի
Եսայան Մկրտիչ Սամվելի
Զաքարյան Արամ Բորիսի
Էնֆենջյան Կարապետ Արմենակի
Թևանյան Վաչագան Կարապետի
Թոքմաջյան Տիգրան Արմենակի
Ժամագործյան Հակոբ Սարգսի
Լեյլոյան Ազատ Արտաշեսի
Խանաղյան Գևորգ Նիկոլայի
Խաչատրյան Զաքար Ավագի
Խաչատրյան Լևոն Արսենի
Խաչատրյան Հայկազ Կարապետի
Խաչատրյան Վարազդատ Արշակի
Խաչիկյան Յակով (Հակոբ) Իվանի
Խուդավերդյան Ահարոն Գևորգի
Խուդավերդյան Հրաչյա Տիգրանի
Կաժոյան Վահան Ավետիքի
Կարապետյան Մկրտիչ Հովհաննեսի
Կիրակոզով (Կիրակոսյան) Սոկրատ
Կոջոյան Լևոն Հարությունի
Կոջոյան Հարություն Գրիգորի
Հարությունյան Աղասի Նազարեթի
Հարությունյան Վահան Հազարապետի
Հակոբյան Գուրգեն Ռուբենի
Հակոբյան Հրանտ Ստեփանի
Հակոբյան Ծմավոն Արտաշեսի
Հովհաննիսյան Հարություն Սեդրակի
Հովհաննիսյան Ծավարշ Արամի (Հովհ. Ծավարշ)
Հովհաննիսյան Սուրեն Սահակի
Հովհաննիսյան Տաճատ Հմայակի
Հովսեփյան Գևորգ Գարեգինի
Հովսեփյան Հրանտ Սարգսի
Հովսեփյան Մանուկ Կարապետի
Հունանյան Արտաշես Արմենակի
Ղազարյան Ռեգինա Թադևոսի
Ղարագոզյան Հայկազ Մկրտիչի
Մանասերյան Լևոն Հայրապետի
Մանասյան Սամվել Մեսրոպի
Մանգասարյան Սարգիս Արսենի
Մանգասարով Ծմավոն Գրիգորի
Մանուկյան Գարեգին Հմայակի
Մաշինյան Ադամ Ղազարի
Մեծատուրյան Կարապետ Միհրանի
Մեքինյան Հրաչյա Համբարձումի
Մինասյան Եսայի Հովակիմի
Մինասյան Կարապետ (Կարո) Հարությունի
Մինասյան Համլետ Վաղարշակի
Մինասյան Վլադիմիր Դավթի
Մկրտչյան Էվրիկ Ավետիսի
Մկրտչյան Նիկոդիմոս Արտաշեսի
Մնացականյան Գևորգ Արշակի
Մնացականյան Մակար Հարությունի
Մնացականյան Ստեփան Խաչատուրի
Մնացականյան Հենրիկ Կարապետի
Նանուշյան Ռաֆայել Պողոսի
Շահինյան Արշամ Արտաշեսի
Շաքարյան Վռամշապուհ Ավետիսի
Պետրոսյան Անդրանիկ Հակոբի
Պետրոսյան Բենիկ Հովհաննեսի
Պետրոսյան Սուրեն Աղալարի
Պիպոյան Սուրեն Վահանի
Պողոսյան Հարություն (Հատիկ) Գարեգինի
Պողոսյան Օնիկ (Հովհաննես) Վահրամի
Ռուխկյան Հրաչյա Լիպարիտի
Սահակյան Սահակ Սերոբի
Սամվելյան Վարազդատ Սամվելի
Սարգսյան Դանիել Դավթի
Սարգսյան Ջավեն Արտաշեսի
Սարգսյան Սմբատ Գևորգի
Սարգսյան Վաղարշակ Բագրատի
Սաֆարյան Սուրեն Սարգսի
Սեդրակյան Մկրտիչ Հովհաննեսի
Սիմոնյան Տիգրան Աբրահամի
Վարդանյան Գևորգ (Ժորա) Գրիգորի
Վարդանյան Երեմ Սրապիոնի
Վարդանյան Սարգիս (Սերժ) Հովսեփի
Վաղարշակյան Ծավարշ Տիգրանի
Տաբակյան Հարություն Գրիգորի
Տեր-Գրիգորյան Վեհիկ Ջալալի
Տերնով Տիխոն Նիկիֆորի
Տերունի Վահան Սիմոնի
Տիրատուրյան Մկրտիչ Թադևոսի
Քամալյան Մկրտիչ Հայրապետի
Ֆիդանյան Արամ Թորոսի

ՀՈՒՇԱՑԱՆԿ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՋՈՀՎԱԾ ԽՍՀՄ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ

Ավվակիմով Նիկոլայ
Ավալիանի Եվգենիյ
Ագրոնսկիյ Գերշոն
Անդրեև Իվան
Ապտեր Յակով
Բանդալին Գերասիմ
Բեզին Իվան
Բելաշև Միխայիլ
Բելյաև Վասիլիյ
Բերեզովսկի Ալեքսանդր
Բիրյուկով Իվան
Բուդդ Պետր
Վերետենննիկով Վասիլիյ
Վիտալին Զիգիզմունդ
Գրիգորև Գրիգորիյ
Գուրևիչ Միխայիլ
Դանկո Ն.
Դավիդով Պետր
Դավիդովիչ Եֆրեմ
Դուկովիչ Վալենտին
Պայն Յակով
Պաստերնակ Իոսիֆ
Պերֆիլև Իվան
Պոլյակով Իգոր
Պոպով Պետր
Պրոխորով Նիկոլայ
Ռադինա Լիդիյա
Ռժեզնիկով Արոն
Ռոզե Գրիգորիյ
Ռոզենբլիտ Բորիս
Զևին Լև
Իգումնով Սերգեյ
Կոլեսով Իվան
Կրավցով Արոն
Կրանց Գեորգիյ
Լապշին Ն.
Լուչանսկիյ Մորից
Մարկին Սերգեյ
Օրլով Գլեբ
Պավլով Նիկոլայ
Ռուսակովսկիյ Լիպա
Սավինով Ա.
Միլինով Նիկոլայ
Սոկոլիկ Նաում
Սուչկով Վալենտին
Միրոմյատնիկով Գերման
Տուգանով Գեորգիյ
Տուրեցկիյ Վալերիան
Տանչիկ Իվան
Տիրսան Ն.
Ֆավորսկի Նիկիտա
Ֆարմանով Գեորգիյ
Ֆիրսով Վլադիմիր
Ֆրիդրիխ Արկադի
Ֆետիրկին Լեոնիդ
Ֆեմյակին Ֆեդոսիյ
Շիլինգովսկի Պ.
Էբերիլ Իսահակ
Էյգես՝ Սերգեյ
Նեդբայլո Միխայիլ
Ցանով Կամեն
Վասիլև Գրիգորիյ[1]

[1] Եթե որոշ անուններ դուրս են մնացել սույն ցանկերից, և կան վրիպակներ, հեղինակը դրա համար ներողություն է խնդրում և սպասում ձեր նամակ-ճշգրտումներին և լրացումներին (Ս. Գ.):

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ ՌԱԶՄԱԲԵՄ

... Հայրենիքի համար, քո և երեխաների համար, 3000-ամյա հայոց թատրոնի բեմը խաղաղ, ազատ և ուրախ տեսնելու համար ես կկռվեմ, ու եթե պահանջվի, կզոհվեմ...

ԱՐՏԱՎԱԶԴ ԽԱԼԱԹՅԱՆԻ ռազմաճակատային նամակից

ԶԻՆՎՈՐ ԹԵ՛ ԲԵՄՈՒՄ, ԹԵ՛ ՄԱՐՏԱԴԱՇՏՈՒՄ

ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑ ՎԱՐԴԱՆ ԱՃԵՄՅԱՆԻ ՀԵՏ

Դերասանների տան գրեթե բոլոր բնակարանների լույսերն էլ վառ են: Նայում ես վառվող լույսերին և ներքին հրճվանքից ոգևորվում. ի՜նչ լավ է, երբ կողքիդ ապրում են մարդիկ, որոնցով կարող ես հպարտանալ: Վարդան Աճեմյանի տանն ենք: Մի երկու բառով ամփոփվում է մեր հանդիպման նախաբանը: Մեծանուն ռեժիսորը ոտքի է կանգնում, վերին շրթունքը կծոտելով շրջում սենյակում: Զգում եմ՝ ուզում է վերհիշել անցած-գնացածը. դերասանների, որոնք զոհվել են, դերասանների, որոնք մասնակցել են Մեծ հայրենականին: Գիտի բոլորին:

— Թուղթ ունե՞ս... դե՛, գրի՛ր: Ինչ անուն կասեմ, ամեն մեկը մի տողի վրա կգրես: Կգրե՛ս մեծատառով:— Ռեժիսորական ինքնատիպ հարցում-հրամանով Վարդան Նիկիտիչը թելադրում է:

—ՎԱՆՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՎԱՐԴԳԵՍ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
ԾԵՐՈՒՆ ՍԱՄՈԿՐԱՆՅԱՆ
ԱՐՓԻԱՐ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
ԱՐՏՈ ԽԱԼԱԹՅԱՆ
ՍԱՀԱԿ ՋԱՌԱՅԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽՋՄԱԼՅԱՆ
ՎԱՉԳԵՆ ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆ
ՆԻԿՈԼ ՆԱՋԱՐԵԹՅԱՆ
ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՇԱՔՐՈ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ԱՐՏԱՎԱԶԴ ԱԲԳԱՐՅԱՆ
ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐԻՆՈՍՅԱՆ
ՏԵԼՈՒՇ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՈՎՍԵՓ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ՀԱՅԿ ՔՈՉԱՐՅԱՆ

Վանյան շնորհալի ուժ էր: Վանեցի: Քույր ուներ: Եթե գտնես, նա քեզ շատ նյութ կտա: Ինչքան գիտեմ՝ անհայտ կորած է համարվում: Թե թատրոնում և թե «Հայֆիլմ» կինոստուդիայում սիրված դերասան էր: «Զանգեզուր» ֆիլմում նկարահանվել է: Վարդգեսի մասին կինը՝ Կլարա Շահբազյանը, կպատմի: Ծերունը Սունդուկյան թատրոն էր եկել Բաքվից, հրավիրել էին: Աղջիկ ունի: Արփիարը կոմիկական դերեր էր սիրում. Արտաշատի շրջանի Աղբաշ գյուղից էր (նոր անունը չգիտեմ): Արտո Խալաթյանը Արծրուն Հարությունյանի ընկերն էր: Խոսիր նրա հետ, հարազատներին կգտնես, կինը կա: Խզմալյանը թատրոնի մակետչիկն էր: Ընտանիքը կա, Երևանում է: Էսքանը՝ սունդուկյանցիներից: Վազգեն Մուրադբեկյանը տաղանդավոր կոմիկ էր, էս մեր Մհեր-Ֆրունզի 30-ական թվականների նախատիպն էր, որ դահլիճ մտներ, ծափ-ծիծաղ էր: Տյուզի[1] դերասաններից էր: Նրա քրոջը՝ Հասմիկին, կգտնես «Ոգնու» դիմացի գրախանութում: Տյուզի դերասաններից մեծ ապագա էր սպասվում նաև Հայկ Քոչարյանին և Վարդոյին՝ Մանասերյան, ափսո՜ս, նրանք էլ զոհվեցին... Հա՛, Սահակի՛ մասին. մեկը կա՝ մեր Վերջալույսը, նա Սահակին էլ, եղբորն էլ. բանաստեղծ էր, լավ գիտի... Հայկը ջահել տղա էր, մշեցի, Լենինականի թատրոնում էր խաղում, տղան կա, դերասան է, անունը Ռազմիկ: Տելուշը Լենինականի թատրոնի կոմսոմոլի քարտուղարն էր, սուր տղա էր: Գնա Լենինական, կգտնես քրոջը՝ Մանիկին: Գուրգեն Մարինոսյա՞նը, փառահեղ տղա էր, տաղանդավոր ռեժիսոր: Մարատի, Մարինոսյանի հայրն էր: Ո՞վ մնաց. Հովսե՞փը: Հովսեփը Արզականից էր, շատ սիրուն տղամարդ էր: Նա կռիվ ուշ գնաց. 42-ին, թե 43-ին: Վերջին անգամ նրան Ստեփանավանում եմ տեսել: Նիկոլ Նազար-

[1] Տյուզ (Тюз)—Պատանի հանդիսատեսի թատրոն:

յանը Արտաշատի, թե Ալավերդու թատրոնում էր խաղում: Տաղանդավոր դերասան էր: Արտո Աբգարյանը արթիկցի էր, նրան Ժանը լավ գիտի: Դե՛ գնա՛, գնա՛ ու գտիր բոլորին... Շաքրոյի՞ն: Շաքրոյին մոռացել էի. նրա հետքերը Կիրովականում փնտրիր, թե չեմ սխալվում՝ մարտունեցի էր...

Արդեն ուշ է: Միջանցքում ենք, պետք է դուրս գամ:

Վարդան Նիկիտիչը ինձ ետ է կանչում, նորից նստեցնում գրասեղանի առջև և հրամայում:

— Գրի՛ր, սրանց էլ գրիր. Ավոն, Զրաղացպանյանը, 38—40 թվականներին կուլել է Լենաստանում, թե Ֆինլանդիայում, ո՞ւմ դեմ՝ թող ինքը ասի: Ստեփան Աջաբխանյանին հինգ տարին մեկ զինկոմիսարիատը մեդալ է տալիս, ուրեմն մարդը կռվել է: Տիգրան Բախչինյանին, կարծեմ, ծանոթ ես, նա կռվել է Հունգարիայում: Նրա մասին Խաժակ Գյուլնազարյանից հարցրու: Թե ձեռքն ընկար, համ լավ կխմացնի, համ էլ հրսկայական նյութ կտա քեզ,— կկոցելով աչքերը՝ վերհիշում է մայր թատրոնի մեծ ռեժիսորն ու անցնում առաջ:— Նորիկ Գևորգյանի, Հովակ Գալոյանի, Վահրամ Եղշատյանի անուններն էլ գրիր... թե չէ, պրծում չունես. մարդիկ կռվել են, հաղթել, պատվով տուն են դարձել: Ցուցակումդ ավելացրու Նշան Գևորգյանի անունը: Հետո՝ Պարույրի, մեր նկարիչն էր: Բա մեր բեմի բրիգադիր Ավետիս Թերզյա՞նը, գլխավոր մեքենավար Անդրանիկ Էլազյա՞նը, մակետչիկ Ալեքսանդր Խզմալյա՞նը: Մարդ աստծո, ամբողջ թատրոնը Հիտլերի դեմ կռվում էր: Վա՜յ-վա՜յ, Լենային էի մոռացել: Ալվարյան Լենային: Իսկական հերոս է: Ինքն ու մեր գանձապահ Թերեզա Ուլոյանը ամբողջ օրը թողնես կպատմեն պատերազմում տեսածն ու կանիծեն Հիտլերին: Հա՛, կռվին մասնակցել է նաև դերասան Սուրեն Աբեղյանը՝ Մանուկ Աբեղյանի որդին... Էսքանն էլ, որ միանգամից հիշեցի, հսկայական նյութ է: Գնա՛, գնա ու գրիր: Էլ ի՞նչ ես ուզում...

— Ոչինչ չեմ ուզում: Ուզում եմ Քեզ միշտ այդպես կանգուն...

— Ցա՞, յա՞, ստո՛պ: Զոհվածներ շատ կան. բոլորին չեմ հիշում: Ուզո՞ւմ եք մանրամասն իմանալ, գնացե՛ք արվեստի և գրականության թանգարան, թատրոններ, արվեստի ինստիտուտ, կինոստուդիա: Դիմիր Սարգիս Մելիքսեթյանին, Գևորգ Ասլանյանին, Բաքկեն Հարությունյանին: Որ ուզենաս, շատերին կգտնես: Զոհվածների հարազատներից, ժամանակի մամուլից, հին աֆիշներից... որտեղից ասես՝ նյութ չես ճարի: Այ, տես, Խաչիկ Ավագյանի հրամանն եմ կատարում՝ Մեծ հաղթանակի երեսունամյակի առթիվ «Թատերական Երևանին» խոսք եմ գրում...

Ու մինչ մեծատաղանդ ռեժիսորը կպատասխաներ հեռախոսային զանգին՝ հնարավորություն տալով ճաշակելու ինձ համար պատրաստված դառը սուրճը, ես օգտվում եմ հարմար առիթից և շտապ-շտապ «թխում» նրա ձեռագրից.

«Այո, Մեծ հայրենականը «մասնավոր» մի կռիվ չէր, այլ կենաց ու մահու գոտեմարտ լույսի ու խավարի, առաջադիմության և հետադիմության, հումանիզմի, մարդկայնության և մարդատյացության միջև: Եվ այդ աշխարհասասան կռվին, իհարկե, մեր արվեստը չէր կարող չմասնակցել, չէր կարող սոսկ դիտող ու արձանագրող լինել: Եթե թշնամու դեմ ելնելու էր ողջ ժողովուրդը՝ իր բովանդակ էությամբ, իր պատմությամբ, ավանդույթներով, բարու և չարի պատկերացումներով, իր հոգեկան ու ֆիզիկական բոլոր ուժերով, ապա թատրոնն էլ ի զեն էր կոչելու իր ողջ զորությունը, փիրտ թափանցելու, միտք շարժելու, հուզելու, համակելու իր բոլոր կարողությունները՝ ատելություն բորբոքելու թշնամու հանդեպ, հաղթանակի հավատով ոգեշնչելու մարտիկներին, թիկունքի մարդկանց: Բոլոր կարողությունները: Ուրեմն՝ ողբերգություն, դրամա, կոմեդիա, վոդևիլ, ուրեմն՝ պատմություն, դիցաբանություն, հեքիաթ ու օրվա դեպքերի արձագանք, ուրեմն պատերազմական դրվագների պատկերում և փիլիսոփայական խոհ: Այո՛, նա՛և ծիծաղ, խինդ, թամաշա: Ոչ թե սոսկ հանդիսականին զվարճացնելու կամ «մխիթարելու» համար, այլ հավաստելու մարդու, մարդկայնության հավիտենականությունը. կյանքի, մարդկային ուրախության, խինդի ու ծիծաղի հավիտենականությունը: Հայացքի ու զգացմունքի այս լայնությամբ մեր դաշնակիցը դարձան, մեր բախտորոշ կռվի մասնակիցը Շեքսպիրն ու Մոլիերը, Պարոնյանն ու Սունդուկյանը... Նրանց իմաստնությունն ու ժպիտը թատրոնի բեմից ուղղում էին թշնամու դեմ և խոցում նրան կյանքի հավերժության խորհրդով...»:

Հավերժության խորհուրդ: Այս սուրբ զգացմամբ բաժանվելով մայր թատրոնի մեծ ռեժիսորից՝ գնում եմ փնտրելու նրանց, ովքեր դեռ լրիվ չսովորած իրենց մենախոսությունները, դեռ ռեժիսորական բազմաթիվ փորձերով չանցած, հանդիսատեսի քննության վախն ու դրվատանքը չճաշակած «մնաս բարով» ասացին իրենց թատրոններին, ողջագուրվեցին յուրայինների հետ և բռնեցին ռազմի ճանապարհը: Ցավոք այդ ճանապարհը շատերին ետ չբերեց.

Ովքե՞ր անցան ձեզանով,
Ո՞ւր գնացին, ծամփանե՛ր...

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ՝ ՌԱԶՄԱԲԵՄ

Ամեն անգամ, երբ հետադարձ հայացք ես գցում Մեծ հայրենականի բովով անցած հայ բեմի երախտավորների կյանքի կեռմաններին, ակամայից քո դեմ են կանգնում օպերային ու դրամատիկ թատրոնների բազմաթիվ երիտասարդ ռեժիսորներ ու դերասաններ, դրամատուրգներ, թատերանկարիչներ և երաժիշտներ, ովքեր մի օր մնաս բարով ասացին սիրած աղջկան, ողջագուրվեցին յուրայինների հետ, կռացան մանկան օրոցքին՝ խեղդելով իրենց մեջ բաժանումի ցավը, զինվորի գորշ շինել հագան և այս անգամ արդեն առանց գրիմի և կեղծ հրացանների ու բռավոների տեղ գրավեցին կյանքի ռազմաբեմում: Կռվեցին, խոցվեցին և ընկան, առաջին անգամ նրանց ոչ ոք ծաղիկներ չնվիրեց: Նրանց պայքարը պսակվեց եղբայրական գերեզմանոցներում հավերժ ննջելով և 1945-ի Մայիսի 9-ի հաղթանակով: Շատ էին նրանք՝ հայ բեմի երախտավորները: Ու եթե ոմանք տուն դարձան հաղթանակած, նորից հայոց հնամյա բեմը գրկաբաց ընդունեց նրանց, ապա եղան այնպիսիք, որոնք իրենց հերոսական մահով ապացուցեցին հանճարեղ Տուրգենևի կենսափիլիսոփայությունը. «Հայրենիքից դուրս երջանկություն չկա»:

Խաչի փոխարեն սուր է հարկավոր,
Սուր է հարկավոր իմ ժողովրդին:

Պատերազմի թեժ օրերին, կյանքի 30-ը հագիվ բոլորած, սևաստոպոլյան ռազմաճակատում գերմանական գնդակից խոցվեց այս տողերի հեղինակը՝ բանաստեղծ, դրամատուրգ ԹԱԹՈՒԼ ՀՈՒՐՅԱՆԸ (1912—1942): Մի քանի ամիս անց Բաքվի հայկական թատրոնում կյանքի կոչվեց նրա «Ֆրիկ» պատմական չափածո դրամա՝ ռեժիսորներ Արտաշես Հովսեփյանի և Ժիրայր Ավետիսյանի ուժերով:

Արյան դեմ՝ արյուն և մահվան դեմ՝ մահ,
Բռնության դիմաց՝ տեսեք բռնություն:

Դրանք բեմի երիտասարդ ռեժիսորներ Գրիգոր Ասլանյանի, Ալեքսանդր Ալեքսանյանի, Ալեքսանդր Ալեքսանդրյանի, Ալեքսանդր Ալեքսանդրի, Ալեքսանդր Ալեքսանդրի, Ալեքսանդր Ալեքսանդր

ցասում, վրեժխնդրություն և հայրենասիրություն էին կուտակում թշնամու հանդեպ և ատելությամբ լցնում բյուրավոր սրտեր:

Հ. Դանիելյանի, Ծ. Տալյանի, Պ. Լիսիցյանի, Տ. Սազանդարյանի, Զ. Դոլուխանյանի վարպետ կատարումները զենքի պես սատար էին հայ մարտիկներին: Նրանց ստեղծագործական թըշնամատյաց կիրքը էլ ավելի էին բորբոքում հայ բեմի մեծ երախտավորներ Միքայել Թավրիզյանն ու Արմեն Գուլակյանը:

Բեմը բեմից էր կռվում, իսկ օպերային երիտասարդ երգիչներ ու երաժիշտներ **Նար Հովհաննիսյանը, Սուրեն Շախիջանյանը, Հակոբ Ոսկանյանը, Վրույր Ազարյանը, Գուրգեն Մելիք-Անդրեասյանը, Դմիտրի Ռյաբկովը, Սուրեն Շինջյանը** և էլի ուրիշներ՝ կրակային գծից: Կռվում էին նրանք և հավատում մեր ժողովրդի հաղթանակին, հայ բեմի վաղվա լուսաբացին:

1941 թ. հունիսի 20-ին հայ գրականության դասական Նար-Դոսի բնակարանում խնդության սեղան էր բացվել. նրա որդին՝ ՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ, Թբիլիսիի կոնսերվատորիայում փայլուն պաշտպանել էր դիպլոմային աշխատանքը: Եվ դեռ դիպլոմը չստացած, երեք օր հետո՝ հունիսի 24-ին, նա կամավոր, ոչ միայն երգով, այլև զենքով, դուրս եկավ պաշտպանելու հայրենիքը, իր ժողովրդին, շատ-շատերին մեկ անգամ ևս հիշեցնելով. «Ով ժողովրդի հետ լիովին չի բաժանում նրա վշտերը, անպայման իրեն թըշվառ կզգա նույնիսկ նրա ուրախության տոնին» (Լ. Լեոնով): Նար Հովհաննիսյանը որպես Սևծովյան հատուկ զորամասի շարքային զինվոր հիտլերյան հրոսակների դեմ խիզախաբար մարտնչեց Հյուսիսային Կովկասում, մասնակից դարձավ Կերչի, Սևաստոպոլի, Թեոդոսիայի ազատագրմանը, միևնույն ժամանակ որպես զինանսամբլի մենակատար նա բալասանում էր վիրավոր հոգիներն ու կարոտած սրտերը: 1943 թ. Կերչում քաջարի հայորդին ծանր կոնտուզիա ստացավ, տեղափոխվեց դաշտային հոսպիտալ, այնտեղից էլ՝ Մոսկվա: Մարտական սխրանքների համար Նար Հովհաննիսյանը պարգևատրվել է ՀՄՊ-ի 2-րդ աստիճանի շքանշանով՝ 2 անգամ, Մարտական ծառայության համար, Սևաստոպոլի պաշտպանության համար, Կովկասի պաշտպանության համար և բազմաթիվ այլ շքանշաններով ու մեդալներով: 1945-ի Մայիսի 9-ի մեծ հաղթանակը երգիչ մարտիկին վերադարձրեց բեմ: ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Նար Հովհաննիսյանը նորից իր ունկընդիրների կողքին է: Ոգևորվում է և ոգևորում նրանց և ամեն անգամ օպերային թատրոն ոտք դնելիս հիշում է, որ Գյոթեի և Բեթհովենի հայրենակիցները սպանում էին Թումանյանի և Սպենդիարյանի հետնորդներին այն ժամանակ, երբ Երևանի Սպենդիարյանի անվան օպերային թատրոնը բեմադրում էր հանճարեղ գերմանացու «Ֆաուստը» (28 փետրվարի 1944 թ.):

Երեսուն տարի է, ինչ Երևանի պետօպերայի և բալետի թատրոնում որպես դիրիժոր, այսօր էլ գեղարվեստական ղեկավար և տնօրեն է աշխատում Կարմիր աստղի և Հայրենական մեծ պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանակիր, Հայկ. ԽՍՀ ժողովրդական արտիստ, պաշտոնատող կապիտան ՀԱԿՈԲ ՄԿՐՏՉԻ ՈՍԿԱՆՅԱՆԸ (Տեր-Ոսկանյան): «Ծնվել եմ 1924 թ. հուլիսի 20-ին Թբիլիսիում: 1942 թ. ավարտել եմ միջնակարգ դպրոցն ու երաժշտական ուսումնարանը որպես ջութակահար: Նույն թվի օգոստոսին զորակոչվել եմ խորհրդային բանակ: Ավարտելով զենիթային հրետանու սերժանտների դպրոցը, ուղարկվել եմ որպես զենիթային հրանոթի (ջոկի) հրամանատար Մոսկվյան հատուկ բանակ: Մոսկովյան հակաօդային պաշտպանության հատուկ միավորման մարտիկների հետ մասնակցել եմ Կուրսկի աղեղի ռազմական գործողություններին»: Այնուհետև ինքնակենսագրականից իմանում ենք, որ մարտական և աշխատանքային մի շարք մեդալների արժանացած նախկին զինվոր երաժիշտը 1944—1947 թթ. սովորել է Մոսկվայի կոնսերվատորիայի զինվորական դիրիժորների ֆակուլտետում, հետո ուղարկվել Թամանյան դիվիզիայի տրամադրության տակ: 1952—57 թթ. Հ. Ոսկանյանը Երևանի զինվորական սաների երաժշտական դըպրոցի ուսուցիչ էր, հետո՝ տնօրեն: Նա բանակից զորացրվեց միայն 1956 թ.:

Ռազմի դաժան ճամփաներով են անցել ոչ միայն դրամատիկական, օպերային թատրոնների բազմաթիվ դերասաններ, այլև Հայֆիլհարմոնիայի և ռադիոյի առանձին մենակատարներ, ինքնուս երաժիշտներ, երգիչներ, աստուածաբանողներ, բանահավաքներ և բանասացներ:

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրից 30-րդ հատուկ դիվիզիայի 64-րդ գընդում էր ծառայում Վանի նահանգի Շատախ գավառի Ջնուկ գյուղում 1905 թվականին ծնված ՀԱՅՐԻԿ ՄԱՆՈՒԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ: Գաղթ, կոտորած, ազգային հալածանք և հայրենազրկություն դեռ մանկուց տեսած հայ զինվորի համար Երկրորդ համաշխարհայինը ֆաշիզմի դեմ մարտնչելու համար յուրօրինակ ստուգարք էր: Եվ աննկուն ու անհաղթ մարտնչեց հիտլերյան ելուզակների դեմ ՀԿԿ Ախտայի շրջկոմի նախկին քարտուղար, ռեպրեսիաներ և հալածանքներ կրած երիտասարդ կոմունիստ և երգիչ Հայրիկ Մուրադյանը: Սկզբում նա ծառայում էր Իրանում, հետո տեղափոխվեց Հյուսիսային Կովկաս: Երկու հարյուր գիշեր ու ցերեկ լեյտենանտ հայորդին որպես քաղաշխատող 64-րդ ինտերնացիոնալ հատուկ գնդի ռազմիկների հետ անասան մարտերի մեջ մտավ թշնամու դեմ Թերեքի հովտում, մասնակցեց Հյուսիսային Կովկասի և Հարավային Ռուսաստանի բազմաթիվ քաղաքների և գյուղերի ազատագրմանը, պարգևատրվեց ՀՄՊ-ի 2-րդ աստիճանի շքանշանով և Կովկասի ազատագրության համար մեդալով: Մեծ հաղթանակից վեց ամիս անց միայն խորհրդային բանակի շարքերից զորացրվեց լեյտենանտ երգիչը և նորից անցավ արհմիութենական աշխատանքի, երբեք «մնաս բարով» չասելով երգի մուսաներին: Երկու մենագրություններից և տասնհինգ գիտական հոդվածներից բացի Երևանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետի նախկին շրջանավարտը ձեռնարկեց կորստից փրկելու 300-ից ավելի ազգագրական երգեր ու պարեղանակներ. դրանք այսօր ձայնագրված վիճակում պահպանվում են Հայկ. ԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի ձայնադարանում: Երաժշտագետ Ալինա Փահլևանյանի հետ միասին նա կազմել և հրատարակել է իր հավաքած երգերից մի երգարան (123 երգ): Հայ ազգային երգերի հավաքման, կատարման և պրոպագանդման համար ժողովրդասիրված երգիչն ու հայրենիքի նախկին զինվորը՝ Հայրիկ Մուրադյանը, 1955 թ. մայիսին արժանացել է Հայկ. ԽՍՀ վաստակավոր արտիստի պատվավոր կոչմանը: Ռադիոյով, հեռուստատեսությամբ, տարբեր հա-

Նար Հովհաննիսյանը (ձախից 3-րդը) իր ռազմաճակատային ընկերների հետ: Հյուսիս-կովկասյան ռազմաճակատ, 1943 թ.:

Նար Հովհաննիսյան

Հայրիկ Մուրադյան

Հաղթանակի լուրը ցնցել է բոլորին: Մարտիկների առջև ելույթ է ունենում զինանսամբլի մենակատար **Նար Հովհաննիսյանը**: 1945 թ. մայիս:

Կապիտան **Հակոբ Ոսկանյանը** (այժմ ՀԽՍՀ ժող. արտիստ) Երևանի Վ. Ի. Լենինի անվան հրապարակում զինվորական շքերթի ժամանակ (առաջին) շարքի ձախից առաջինը):

մերգասարահներից սիրով ու ջերմությամբ միշտ ընդունվող Հ. Մուրադյանի երգացանկով այսօր հրապարակի վրա է երեք ձայնապնակ: «Ինչ ես չէի հասցնում իրագործել, կյանքի էր կոչում դուստրս՝ Մարո Մուրադյանը: Ափսո՛ս, նրա էլ երազանքն ու կյանքը դրան չբավականացրին».— ասում է հայ երգի նվիրյալն ու շտապում Լուսաշխի տուն՝ փորձի:

Իսկ սունդուկյանցիներ՞ը... մայր թատրո՞նը: Լենինգրադից դեպի ֆիննական ծովեզերք մեկնող գնացքը միշտ էլ «շունչ է առնում» Օլկինո կայարանում: Այստեղ իր ձեռքով կառուցած փայտե առանձնատանն էր ապրում Մեծ հայրենականի ահեղ տարիներին և հաճախ էքսպրոմտ ելույթներ ունենում ռազմիկների և աշխատավորության առջև աշխարհահռչակ ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆԸ: Ով ընթերցել է նրա «Հետադարձ հայացքը», անշուշտ չի մոռանա հանճարեղ արտիստի հոգեցունց մտատանջությունը իր պարտեզի և ծաղկանոցի մասին. «Այն փոքրիկ ծաղկանոցը, որի տակ հանգչում է Թինան՝ իմ խաղաղ տան պարտեզում, սրբավայրերից մեկն է աշխարհի բոլոր վայրերից...»:

Թինան (Վալենտինան) Վ. Փափազյանի պաշտելի կինն էր, կյանքի անզուգական ընկերուհին: Նրանք ընտանյոք՝ դստեր, Մարիայի հետ, պատերազմի ողջ ընթացքում, թեկուզ մի օր, չլքեցին Օլկինոյի իրենց օջախը: Ցավոք թշնամու արձակած ռումբը վնասեց Փափազյանի հրաշք տնակը և զոհեց իր կողակցին: Թինայի հիշատակի հավերժացման, նրա հանդեպ ունեցած անհուն սիրո համար հանճարեղ արտիստը Օթելլոյի իր բեմական թիկնոցի մեջ փաթաթեց իր սպանված կնոջ աճյունը և այն հանձնեց իր պարտեզի փոքրիկ հողակտորին: Նրա վրա ծաղկանոց կառուցեց (և ոչ թե գրանիտե ծանր քարեկոթող) և մինչև իր մահը (1968 թ. հունիս) գուրգուրանքով էր խնամում ու աճեցնում այն: Այո՛, Վ. Փափազյանը Մեծ հայրենականի մասնակից է, նա թշնամու կողմից պաշարված Լենինգրադում կռվեց ոչ թե զենքով, այլ խոսքով, զգացմունքով, վրեժով և ատելությամբ, ոգևորեց խորհրդային ռազմիկներին, նրանց հետ կիսեց պատերազմի դառնությունն ու բլոկադայի ճեղքման քաղցր հրճվանքը և միայն պատերազմի հաղթական ավարտից հետո Օլկինոյից տեղափոխվեց Երևան, երբեք չկտրվելով այն փոքրիկ ծաղկանոցից, ուր հանգչում էր Թինան՝ իր պաշտելի Թինան...այն Լենինգրադից, որի մասին տարիներ անց սրտի ցավով, բայց հպարտությամբ գրեց. «Չի եղել պատմության մեջ մի քաղաք, որ այդքան երկար ժամանակ և այդքան անթարթ նայել կարենա մահվան աչքերին և տաժանա-

Պատերազմի օրերին պաշարված Լենինգրադում աշխարհահռչակ **Վահրամ Փափազյանը** նորից սրտեր էր հուզում և խորհրդային ռազմիկներին մղում նորանոր սխրանքների:

կիր ծանր հոգեվարքը պսակի հերոսական հաղթանակով, չորս տաժանակիր տարիներ գերեզմանի հետ ընտելանալուց հետո, իր հպարտ ճակատը զարդարի անթառամ դափնեպսակով: Հակառակ Հեկտորի՝ Տրովադան կործանվեց. հակառակ Հաննիբալի՝ Կարթագենը այրվեց. հակառակ Պոմպեոսի՝ Ալեքսանդրիան գրավվեց. Կատոնը չկարողացավ փրկել Ուտիկեն. չնայած անձնուրաց հերոսամարտի Կոնստանդին Տրակոցեսի՝ Այա-Սոֆիայի գմբեթներին մահիկը նրստեց. ասպետական Փարիզը անձնատուր եղավ երիցս. Հաբսբուրգյան գոռոզ Վիեննան մի օր իսկ դիմադրելու չափ կորով չունեցավ. Հոռոմը՝ նույնպես, Բեռլինը՝ նույնպես, բայց Լենինգրադը՝ Բալթիկայի դշխոն, մեռավ, բայց ծնվեց: ...Մի մեծ էպոս է այդ հերոսամարտը. մարդու լուսավոր ապագայի անխարդախ մի առհավատչյա, անմխալ դավանանք ժամանակների արդարության»[1]:

Մեծ հաղթանակից քառասուն տարի հետո էլ շատ-շատերի հիշողությունից չեն ջնջվում սունդուկյանցիների կերտած դերերից Ավետ Ավետիսյանի ֆելդմարշալ Կուտուզովը, Գուրգեն Զանիբեկյանի Վասիլի Գերասիմովը, Հրաչյա Ներսիսյանի Գայդարը, Վաղարշ Վաղարշյանի Գոռլովը, Արուս Ասրյանի Վալյան, Դավիթ Մալյանի Օգնեը, Արուս Ոսկանյանի Մարիա Նիկոլաևնան, Հասմիկի Մարֆա Պետրովնան: Ն. Զարյանի «Վրեժ», Կորնեյչուկի «Ռազմաճակատ» («Ֆրոնտ»), Կ. Սիմոնովի «Ռուս մարդիկ» դրամաները մեկ անգամ ևս հիշեցնում էին.

Ով սրով գա մեզ վրա,
Մեր սրից էլ կգնա:

Սերնդակիցներս այսօր էլ խենթի պես կծափահարեինք Ժան Էլոյանի Գագիկին, Աղասի Փաշայանի Վահրամ Պահլավունուն և Մարգպետունուն, Ցոլակ Ամերիկյանի ինժեներ Սերգեևին, Նինա Մանուչարյանի Մարֆա տատիկին... Հապա Վաղարշյանի Համլե՞տը, Ներսիսյանի Սաֆրոնո՞վը... Ի՜նչ տաղանդներ էին, ի՜նչ կերպարներ. ինչպես էին հուզում, ապրեցնում, ժողովրդին տանում Ազատության, Ազնվության և Հաղթանակի ետևից՝ հայրենիքի պաշտպանությունը դարձնելով քաղցր ու հավերժական պարտականություն, զոհվելը՝ գիտակցված նվիրաբերում: Կարծես նրանց մասին է հանճարեղ Բալզակն ասել. **«Մեռածները ողջերի պես մասնակցում են մեր երթին»:**

Դեպի ռազմի դաշտ, դեպ հերոսացում,
Դեպի բարձունքը մահի ու փառքի...

Հանճարեղ Վարպետի «Ռազմամակոչի» այս խոսքերը մայր թատրոնի բեմից շատերին ուղեկցեցին Կերչ և Սևաստոպոլ, Լենինգրադ և Կիև, Ստալինգրադ և Մոսկվա... Չնայած դերասանների մեծ մասը ուներ տարկետում, բայց «Մայր Հայրենիքն է կանչում» ինքնազգացումը թելադրում էր, որ ամեն ոք զենք վերցնի, չէ՞ որ կոիվը բեմական չէր, այլ իրական. թշնամին գալիս էր խլելու մեր հողը, ավերելու մեր տաճարները, սպանելու մեր հորն ու մորը, խոշտանգելու երեխաներին, առևանգելու մեր քրոջը ու սիրած աղջկան, հրդեհելու մեր դեզն ու կտուրը, սրբապղծելու մեր նախնյաց շիրիմները: «Մահ ոչ իմացյալ մահ է, մահ իմացյալ՝ անմահություն» ոսկեծղի Եղիշեի այս սուրբ պատգամը թրթռվող սունդուկյանական թատրոնի տասնյակ երիտասարդ ուժեր այդ օրերին մնաս բարով ասացին իրենց ուսուցիչներին ու ռեժիսորներին և մեկնեցին ռազմադաշտ: Որքա՜ն, որքա՜ն հուզվեցին Արշակ Բուրջալյանն ու

[1] Վ. Փափազյան, «Թանձրացումներ», Ե., 1988, էջ 114—115:

Տիգրան Շամիրխանյանը, Աղասի Ալայանն ու Արտաշես Հովսեփյանը կուլիսները կիսադատարկ տեսնելու համար:

«Կգանք հաղթանակով: Սպասեք մեզ»,— եղավ Ծերուն Սամոկրանյանի, Վանյա Դանիելյանի, Արտավազդ Խալաթյանի, Նիկոլ Նազարեթյանի, Սահակ Ջաուայանի պատասխանը: Ցավոք, նրանցից և ոչ մեկը սունդուկյանական թատրոնի իր սիրած բեմը էլ չբարձրացավ: Խոցվեցին նրանք հիտլերյան բարբարոսների գնդակից, ընկան նրանք, որ հայոց երեքհազարամյա բեմի վարագույրը չգոցվի, որ նորից Արարատը հպարտ նայի աշխարհին, որ թուրքական դահճից հետո գերմանական դահիճը ոտք չդնի Հայաստան աշխարհ: Ու եթե նրանք անմահացան իրենց սխրանքով ու կյանքով, ապա ռազմաճակատից վերադարձած **Ավետիք Ջրաղացպանյանը, Տիգրան Բախչինյանը** (մարտի թեժ պահին թշնամին նրան գերեց), **Նորայր Գևորգյանը** (կռվել և վիրավորվել է 83-րդ ծովային հետևակային դիվիզիայում), **Լենա Ալվարյանը, Վահրամ Եղշատյանը** (Հյուսիս-կովկասյան ռազմաճակատում է վիրավորվել), **Հովակ Գալոյանը** եկան ու կերտեցին բազմաթիվ կերպարներ, փոխարինելով միևնույն ժամանակ իրենց զոհված ընկերներին:

Տիգրան Բախչինյան

Նորայր Գևորգյան

«Ուրիշ ժողովրդի ստրկացնող ժողովուրդը,— ասել է Կ. Մարքսը,— կոում է իր սեփական շղթաները»: Միթե դա չեն ապացուցում Երկրորդ համաշխարհայինի հիսուն միլիոն զոհերն ու Բեռլինն ու Ռայխստագը երկու մասի բաժանող պատերը: Այսօր հայ թատրոնի պատմությամբ զբաղվողը չի կարող չնկատել նրան, ով պատճառ դարձավ, որ էլ Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնի բեմում չխաղա ժամանակի փայլուն Քաջ Նազարն ու Պավել Կորչագինը՝ ՎԱՉԳԵՆ ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆԸ: Ինչո՞ւ, ինչո՞ւ պիտի դերասան ՀԱՅԿ ՔՈՉԱՐՅԱՆՆ ու իր չորս եղբայրները գնային պատերազմ, և հինգից վերադառնար միայն մեկը՝ դրամատուրգ **Մելիք Քոչարյանը:** Վերադարձի բախտը չժպտաց նաև նույն թատրոնի արտիստներ ՎԱՐԴԳԵՍ ՄԱՆԱՍԵՐՅԱՆԻՆ և ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ: 1923-ի ծնունդ էր Աշտարակի շրջանային թատրոնի սկսնակ դերասան ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ (Վ. Մարգուկու եղբայրը): Նա ևս զինվոր դարձավ և, դեռ չբոլորած կյանքի քսան տարին, խոցվեց թշնամու գնդակից Նովոռոսիյսկում (1943 թ.):

Վահրամ Եղշատյան

Հովակ Գալոյան

Ռազմի սխրանքներով լի ճանապարհ է անցել ԵՊՀԹ-ի արտիստ **ՎԻՐԱԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ** (ծնվ. 1916 թ.): Որպես Բելոռուսական ռազմաճակատի 512-րդ դիվիզիայի շարքային զինվոր (գնդապետ Սերգեյ Կարապետյանի դիվիզիայից) անսասան մարտնչելով թշնամու դեմ՝ անվանի քաջորդին Բելոցերկով քաղաքի համար մղվող պայքարում ինքնաթիռի ռմբակոծությունից վիրավորվեց, ստացավ ծանր կոնտուզիա և 1945 թ. վերջերին զորացրվեց: Վ. Հարությունյանը պարգևատրվել է Կարմիր աստղի, Արիության համար, Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար և բազմաթիվ այլ շքանշաններով ու մեդալներով: Նա այսօր նորից բեմում է. աշխատում է Երևանի տիկնիկային թատրոնում:

Վիրաբ Հարությունյան

Արշավիր Ղազարյան

Արշավիր Ղազարյան (կռվել է Հարավային, Բելոռուսական և 2-րդ Մերձբալթյան ռազմաճակատներում), **Բաշխո Տրդատյան, Վարդգես Սողոմոնյան, Լևոն Ասատրյան** (մարտնչել է Հյուսիսային Կովկասում և Ղրիմում), **Սերոբ Հարությունյան, Պերճ Գևորգյան, Արշակ Գասպարյան, Պարույր Սանթրոսյան...** և էլի անուններ կան ԵՊՀԹ-ի՝ Մեծ հայրենականի վետերանների ցուցակում:

1942 թ. Թբիլիսիի զինկոմիսարիատ մտավ ԵՊՀԹ-ի դերասան ՀՐԱՉՅԱ ՂԱՓԼԱՆՅԱՆԸ և խնդրեց իրեն ուղարկել իր հոր մոտ՝ ռազմաճակատ: № 2 զինուսումնարանի սանը մի քանի ամիս անց արդեն Տուապսեի և Լազարևսկի մոտերքում անմնացորդ կռվում էր թշնամու դեմ: Թշնամական արկի պայթյունը սպառնաց դերասան զինվորին կուրացնել: Նրան շտապ տեղափոխեցին հոսպիտալ: 1943-ին Սոչիի զինվորական հոսպիտալից Շուշանիկ մայրիկը ստացավ երկու նամակ՝ մեկը ամուսնուց, մյուսը՝ որդուց: Ու մինչև մայրը որդուն կպատվիրեր տեսակցության գնալ նույն հոսպիտալի մյուս մասնաշենքում բուժվող հորը՝ Մկրտիչ Ղափլանյանին, վերջինս արդեն կազդուրվել էր և մի քանի ժամ առաջ մեկնել կրակային գիծ: Հայր և որդի Ղափլանյանները այդպես էլ նույն հոսպիտալում իրար չտեսան: Գյառգյառցի Մկրտիչ Ղափլանյանը վրեժխնդիր ու ցասկոտ նորից մարտի էր նետվել և Կերչի համար մղվող պայքարում զոհվել: Սոչիի զինհոսպիտալում ապաքինվելուց հետո Հր. Ղափլանյանը սովորեց Պոլտավայի տանկային ուսումնարանում, ստացավ տանկիստի որակավորում և տեղափոխվեց № զորամաս որպես պահեստային (ռեզերվային) դիվիզիայի հրամանատարի համհարզ, որտեղից էլ 1945-ին զորացրվեց: ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հր. Ղափլանյանը պարգևատրվել է մի շարք մարտական շքանշաններով և մեդալներով:



Լևոն Ասատրյան



Հրաչյա Ղափլանյան

Հրաչյա Ղափլանյան Կերչ, 1944 թ.:

Թեև Մեծ հայրենականից հետո գլորվել է չորս և կես տասնամյակ, բայց հին օրերի վերհուշը, հին օրերի սպիները նորից են բորբոքվում, երբ Երևանի Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնի արտիստներ **Վալենտին Ռուդովիչը, Ադիլ-Քյազիմ Սելիմխանովը, Եվգենի Ներսիսյանը, Անտոնինա Պանասենկոն, Իգոր Մեդվեդևը, Դավիթ Սարոյանը, Միխայիլ Օվչինինիկովը** մի պահ նորից վերապրում են իրենց տեսածն ու զգացածը: Միթե հոգու աչքով այսօր լաց չի լինում թատրոնի կոմերիտմիության այն ժամանակվա քարտուղար, ռեժիսորի օգնական և արտիստ ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳԻ ՍԱՐՈՅԱՆԸ: Նա որպես 46-րդ բանակի 394-րդ դիվիզիայի 815-րդ գնդի դասակներից մեկի հրամանատար քաջաբար մարտնչեց թշնամու դեմ Կլուխորի լեռնանցքում: Հյուսիսային Կովկասում նա հետախուզական ծառայության լեյտենանտ էր: Սարոյանը թշնամուն հետապնդեց մինչև իր որջը՝ Բեռլին: Մասնակցեց Լեհաստանի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի ազատագրմանը՝ օտար ափերում թողնելով իր մի թևը: Սարոյանի կուրծքը զարդարում են ԽՍՀՄ տարբեր շքանշաններ և մարտական ծառայության համար շնորհված մեդալներ: Ռուսական թատրոնը ծանր կորուստներ կրեց. էսէսական ոհմակների մահաբեր գնդակները տարբեր ռազմադաշտերում խոցեցին երիտասարդ տաղանդավոր դերասաններ ԳԱՐԻԿ ՄԵԼԻՔՈՎԻՆ, ՎԱՍԻԼԻ ԱԼԵՔՍԵԵՎԻՆ, ՊԱՎԵԼ ԿԱՄԵՆԿԻՆԻՆ: Քանի-քանի դերեր Երևանի

Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնում մնացին անկատար: Կարծես նրանց հիշատակին է հասցեագրել տարիներ հետո Սիլվա Կապուտիկյանը պոետական իր ջերմ խոսքը.

Օրհնանք և արցունք, օրհնանք և արցունք
Հեռու, հեռավոր մեր շիրիմներին:

Ընդարձակ է հայոց հեռու-հեռավոր շիրիմների աշխարհագրական քարտեզը: Լենինականի թատրոնի գլխավոր ռեժիսոր, Հայկ. ԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐԻՆՈՍՅԱՆԸ իր հավերժական հանգիստը գտավ Տուապսեի շրջանի Ծահումյան գյուղում: Նույն թատրոնի արտիստ ՏԵԼՈՒԾ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ հագիվ ապրեց կյանքի 30 գարուն: Խոցվեց նա Կերչում 1942-ին: «Մինչև փոխադրվես երկրորդ դասարան, ես կգամ»,—այսպես հուսադրեց Լենինականի Մոսվյանի անվան թատրոնի արտիստ ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ իր փոքրիկ Ռազմիկին: Գնաց ու չեկավ: Գուրգեն Մարինոսյանի պես ռազմի շինել հագավ նրա որդին՝ ՄԱՐԱՏ ՄԱՐԻՆՈՍՅԱՆԸ: Նա կռվեց, վիրավորվեց և հոր վրեժը

Երևանի Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնի ռեժիսորի օգնական **Դավիթ Սարոյանը** ընկերոջ հետ գնում է ռազմական հանձնարարություն կատարելու, 1942 թ., Կլուխորի լեռնանցք:

սրտում վերադարձավ հայրենի տուն: Այն, ինչ չհաջողեց իրագործել «Սևանի ձկնորսների» ռեժիսոր-բեմադրող Գուրգեն Մարինոսյանը, կյանքի կոչեց նրա որդին՝ ռեժիսոր, Հայկ. ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, Երևանի գեղար-

Մարատ Մարինոսյան

վեստա-թատերական ինստիտուտի պրոֆեսոր Մարատ Մարինոսյանը, իսկ Հայկ Խաչատրյանին սպասող նրա որդին՝ Ռազմիկ Վարդանյանը, իր հոր անավարտ և ապագա դերերն է շարունակում այսօր:

Հոգնած նայում եմ ճամփաներին,
Սերմնացանները չդարձան տուն...
Գ. Սարյան

«Ամեն անգամ ռուսական թատրոն ոտք դնելիս մտովի տեղափոխվում եմ 1937 թվականը. Երևանում հիմնվեց ռուսական թատրոն: Այդ օրը հիշեցինք Գրիբոյեդովի «Խելքից պատուհասի» առաջին բեմադրությունը Երևանում: Եվ ահա իսկական թատրոն ռուսերեն լեզվով՝ վերածընված Խորհրդային Հայաստանում: Դիրեկտորը Ղազար Մանուկիչն էր, գեղարվեստական ղեկավարը՝ Լևոն Քալանթարը, ռեժիսորը՝ Վավիկ Վարդանյանը, նկարիչները՝ Արմեն Չիլինգարյանն ու Պատվական Անանյանը: Հիշում եմ բոլորին...,— պատմում է դերասան և դրամատուրգ Միխայիլ Օվչիննիկովն ու ավելացնում,— նրանք սիրում, արտակարգ հոգատարություն էին ցույց տալիս բոլորիս, առավել ևս՝ Վասիլի Ալեքսեևին և Պավել Կամենկինին»:

ՊԱՎԵԼ ԿԱՄԵՆԿԻՆԸ ծագումով Մոսկվայից էր: Դեռ վաղ պատանեկան տարիներից նրա մոտ երևան էր եկել դերասանական ծաղկող ձիրքը: Թատերական ստուդիան և ինստիտուտն ավարտելուց հետո նա խաղում էր Կարմիր բանակի

թատրոնում: Սիրում էր և զբաղվում դրամատուրգիայով: Երևանում աշխատելու հենց երկրորդ տարում նա և Մ. Օվչիննիկովը գրում են «Վաղվա օրը» («Завтра») դրաման, որտեղ խարազանվում են Հիտլերը, Մուսոլինին և Ֆրանկոն: Այն բեմադրվում է 1939-ին ոչ միայն Ստանիսլավսկու անվան թատրոնում, որտեղ դերեր էին ստանձնել նաև պիեսի հեղինակները, այլև Ալավերդու, Կիրովականի, Կրոնշտադտի, Ստալինգրադի թատրոններում: Գերմանացի զինվորի դերակատար Պ. Կամենկինը և արդեն անվանի դերասաններ Գ. Գենն ու Կ. Գրիկուրովը ամենուր արժանանում էին ծափերի և ծաղիկների:

«Իսկական ռուս տղա էր: Իսկական դերասան և շնորհալի դրամատուրգ: Ես այդ տպավորությունն ստացա, երբ համատեղ աշխատանքի ընթացքում կատարում էի «Վաղվա օրը» նկարչական ձևավորումը»,— պատմում է Կամենկինի մասին Հայկ. ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, նկարիչ, պատերազմի վետերան **Վասիլի Վարդանյանը** և հիշեցնում, որ կռվի հենց առաջին օրերին ռուս դերասանը դարձել է մարտիկ, քաջաբար կռվել մեր հայրենիքը նվաճողների դեմ և հերոսաբար զոհվել Տուլայի պաշտպանության ժամանակ՝ 1942 թվականին:

Գերմանական գնդակը կտրեց նաև Երևանի Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնի դերասաններից մեկի՝ ՎԱՍԻԼԻ ԱԼԵՔՍԵԵՎԻ կյանքի թելը: Վասիլին, ինչպես և դերասաններ Վ. Դոբրովոլսկին, Վ. Լեոնովը, Ի. Լավրովը, Լ. Զեմբարաձեն, Կ. Գավրիլովը, Երևանի ռուսպետթատրոն էր եկել Թբիլիսիի զինվորական թատրոնից: Նա թատերական առաջին նախափորձերը կատարել էր Բաքվում՝ Մ. Գորկու, Ա. Տոլստոյի, Հ. Իբսենի տարբեր հերոսների դերակատարումներով:

«Վասիլի Ալեքսեևը ամուսնացած էր: Նոր էր ընտանիք կազմել, նոր-նոր դերերով դեռ պետք է հանդես գար, երբ բռնկվեց Երկրորդ համաշխարհայինը: Նա էլ զոհվեց»,— պատմում է իր խաղընկերոջ մասին Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ Գուրգեն Գենը՝ վերհիշելով Ալեքսեևի մարդկային առաքինություններն ու բեմական տաղանդը:

1942 թվականին ԳԱՐԻԿ ՄԵԼԻՔՅԱՆԸ (**Մելիքով**) թատերասեր հասարակայնությանը ուրախացրեց Գաուկի «Փոքրիկ մուկը» պիեսում իր ինքնատիպ խաղով: Ռեժիսոր Ցակ. Կրակոպոլսկին կոլիսների ետևում համբուրեց նրան և կրկնեց.

— Կեցցե՛ս, Գարի՛կ, շարունակի՛ր հենց այդպես...

Կինը՝ Վանդա Մելիքովան, ևս հավանեց ամուսնու խաղը և երկուսով ոգևորված տուն գնացին: Բարի և համեստ, արտակարգ ընդունակ և միջահասակ խարկովցի այս արտիստի անվան հետ ժամանակակիցները մեծ հույսեր էին կապում: Ցավոք կնոջն ու միակ դստերը հասցեագրված նամակի վերջաբանը՝ «Շուտով ես հաղթանակով կվերադառնամ», չիրականացավ, զոհվեց ևս մի հայ արտիստ, ապացուցելով, որ մարդ ամենից շատ պետք է ամաչի հայրենի հողից, եթե վերջինը կյանքն էլ պահանջի, պիտի զոհել, որպեսզի ոչ մի սեր և ոչ մի դեր անավարտ չմնան:

Վերադարձի բախտը չժպտաց նաև Լենինականի թատրոնի ռեժիսորի օգնական ու հուշարար ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ. (ծնվ. 1914թ. Լենինականում, զոհվել է 1943 թ. Կերչում), հյուսն ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏՈՆԱԿԱՆՅԱՆԻՆ և թատրոնի այլ համեստ մշակների: 1941-ին մոսվյանցիները հյուրախաղերի էին եկել Երևան, սունդուկյանցիները Մոսկվայում էին: Մայր թատրոնի բեմում լենինականցի դերասանները ներկայացնում էին Մուրացանի «Ռուզանը»: Զալալ իշխանի դերակատար Լևոն Զոհրաբյանը հուզված եկավ բեմի առաջամաս և իր կրակոտ խոսքն ուղղեց հանդիսատեսին.

— Իշխանե՛ր, ինչո՞ւ եք սառել: Մի՞թե մահն այդքան վախեցնում է ձեզ: Մեր մանկությունը պատել են արյունոտ խանձարուրում, մեր հասակն աճել է կռվի արհավիրքներում, հոգիներս էլ պիտի փչենք ռազմի դաշտի վրա: Թշնամու սրին, մինչև մեզ հասնելը, զոհվել են արդեն բյուր մեզ նմաններ, ինչո՞ւ, ուրեմն, հապաղեք մեր եղբարց բախտին կցորդ լինելու: Օն անդր. դեպի՛ սուր, անպաշտպան ժողովուրդը սպասում է մեզ...

Լևոն Զոհրաբյանի Զալալ իշխանի այս հորդորին հաջորդում է բեմում Գեղամ Հարությունյան-Ներսեհի զորականը.

— Դեպի՛ սուր, քաջե՛ր...

Այնուհետև սունդուկյանական բեմահարթակից միահամուռ հնչում է.

— Դեպի՛ սուր, դեպի՛ հաղթանակ...

Կորչի՛ ֆաշիզմը, մա՛հ Հիտլերին...

Քանի-քանի դերասաններ այդ նույն օրը գրիմի սենյակից ռազմադաշտ մեկնեցին: Գնացքներն այդ օրերին ո՞ւմ չէին տանում «դեպի ռազմի դաշտ, դեպ հերոսացում»:

Ոչ միայն զորքով-զինվորով, այլև բարոյապես, հոգեպես թատրոնը նեցուկ էր ռազմաճակատի հայ մարտիկներին, ոգևորում, թշնամու հանդեպ ոխ և վրեժ էր բորբոքում, սովորեցնում լինել խիզախ, անվախ, նմանվել մեր պատմական հերոսներին՝ Վարդան Մամիկոնյանին ու Սասունցի Դավթին, Գագիկ թագավորին և Դավիթ Բեկին: Ահա թե ինչ է գրում ռազմաճակատից 1943-ին սերժանտ Օնիկ Աբրահամյանը. «Սիրելի դերասաններ, հիմա մութ բլինդաժում նստած մտաբերում եմ ձեր լույս ներկայացումները. Մանուկ աղա—Ամերիկյանին, Աբիսողոմ աղա—Զոհրաբյանին, Շողակաթ—Ասրյանին, Փաշայանի Մարզպետունուն, Գեղամին, Ռշտունուն, ձեզ բոլորիդ... Շատ, շատ կարոտել եմ Արփաչայի քյամարը, իմ Լենինական քաղաքը, իմ անուշ հարազատներին... Այն էլ ասեմ, որ մենք արդեն թշնամու կոնակն ենք տեսնում և շարժվում ենք առաջ»[1]:

Պատերազմի բոթը ցավով ընդունեցին աբելյանցիները: Եվ եթե թատրոնի երիտասարդ, շնորհառատ դերասան ՇԱՔՐՈ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ (ծագումով Մարտունու շրջանից) ծաղկահասակ հեռացավ կյանքից, զոհվեց համակենտրոնացման ճամբարում, ապա **Աշոտ Գևորգյանը, Սուրեն Հովհաննիսյանը** (նա քաջաբար իրեն դրսևորեց Մարուխյան լեռնանցքում), **Ղազար Նազարյանը, Ասյա Սիմոնյանը, Կոլյա Աղայանը, Մամիկոն Զալյանը** և էլի ուրիշներ տուն եկան՝ քունքերին ռազմի փոշին, հոգիներն ու մարմինները ծվատված ու վիրավոր... Հապա՞ շրջանային և ժողովրդական թատրոնները, նրանց դերասանները:

Արթիկից վեց եղբայր ուղարկեց ռազմադաշտ Հոռոմսիմ մայրիկը: Բայց դիմավորեց միայն երեքին: Զոհվեց նաև նրա դերասան որդին՝ ԱՐՏԱՎԱԶԴ ԱԲԳԱՐՅԱՆԸ: Նա կռվեց ոչ միայն սպիտակ ֆիններ դեմ 1939-ին, այլև՝ գերմանացիների: Գնաց ու չեկավ: Պատերազմի տարիներին ՄՈՒՍԱՅԵԼ ԳԱԼՈՅԱՆԻՆ (այժմ Հայկ. ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ) ինչպիսի՞ տանջանքների չենթարկեց գեստապոն: Համակենտրոնացման ճամբարից նա վերադարձավ, վերադարձավ և իմացավ, որ թշնամու դեմ մղվող մարտում հիտլերյան գնդակը Լեհաստանում խոցել է իր հորը՝ զինվորական բժիշկ Անուշավան Գալոյանին, որի անունով էլ այսօր կոչվում է իր ծննդավայրը՝ Արթիկի շրջանի Փոքր Պարնի գյուղը:

Մուսայել Գալոյանը Հյուսիս-կովկասյան ռազմաճակատի զինվոր: 1941 թ.:

Պատերազմի վերհուշը հանգիստ չի տալիս ԵԼԵՆԱ (ԼԵՆԱ) ԱԼՎԱՐՅԱՆԻՆ: 1945-ին Գերմանիայում զոհվեց նրա ավագ եղբայրը՝ Ռուբենը: Լենան և իր մյուս եղբայրը՝ Սուրենը, հաղթանակը դիմավորեցին զինվորական համազգեստներով: Բաթումում, հակաօդային պաշտպանության դասակում էր ծառայում Լենա Ալվարյանը: Հատուկ հանձնարարություններ էր կատարում՝ ճանապարհ ընկնելով Բաթում—Կրասնովոդսկ—Ռոստով—Մոսկվա ռազմական երթուղով:

Որի՞ն, ո՞ր արվեստագետին հիշատակես, որ սպիացած վերքերը նորից չբորբոքվեն: Մի՞թե ՀՄՊ-ի մասնակիցներ, Երևանի երաժշտական կոմեդիայի թատրոնի արտիստ **Արտավազդ Մելիք-Ստեփանյանը,** Ղափանի Շիրվանզադեի ավան թատրոնի դերասան, հանրապետության ժողովրդական արտիստ **Միլիտոս Ղազարյանը,** թատերագետներ, արվեստի վաստակավոր գործիչ **Հրայր Հովակիմյանը, Սերգեյ Բարսեղյանը, Հայկազ Երանոսյանը, Գևորգ Աբաջյանը,** թատերական գործիչներ **Ալբերտ Ասլամազյանը, Վահե Մկրտչյանը, Մաքսիմ Հակոբյանը, Քրիստափոր Թուխտամիշյանը, Ամատունի Բարսեղյանը** կարող են ներել նրանց, ովքեր պատճառ դարձան 20 միլիոն խորհրդային անմեղ քաղաքացիների զոհվելուն: Հայ թատերասեր հանդիսատեսը երբեք չի կարող մոռանալ նկարիչներ **Սարգիս Արտուչյանի, Վասիլի Վարդանյանի, Գևորգ Վարդանյանի** ակտիվ մասնակցությունը Մեծ հայրենականի տարբեր ռազմաճակատներում: Ինչպե՞ս, ինչպե՞ս մտնես Երևանի ռուսական թատրոն կամ Լենինականի Մոավյանի անվան թատրոն և չհիշես թշնամու գնդակին զոհ գնացած երիտասարդ շնորհալի բեմանկարիչ, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի սան ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ: Այդ նա էր ձևավորել Վ. Վաղարշյանի և Ալ. Աֆինոգենովի պիեսների բեմադրությունները: Քառասուն տարուց ավելի է, ինչ սպիացել է Հայկական ԽՍՀ ժող. արտիստ Ժանննա Թովմասյանի հոգու վերքը. տուն չդարձավ նրա նկարիչ նշանածը՝ Արթիկի պետթատրոնի ձևավորող-բեմանկարիչ ՍԵՐՈԲ ԱՆՃԱՐԱԿՅԱՆԸ: Մի՞թե կիրովաբադյան թատերասերներն այսօր չգիտեն ԳՐԻԳՈՐ և ԹԵՎԱԴՐՈՍ ԱՍՐՅԱՆ եղբայրների մասին: Երկուսն էլ դերասան էին՝ օժտված բեմական-արտիստական շնորհքով և անհուն հայրենասիրությամբ: Երկուսն էլ զոհվեցին, Գրիգորը՝ Ստալինոյում 1943-ին, իսկ կրտսեր եղբայրը՝ Թևադրոսը, Մոզդոկում՝ 1942-ի սեպտեմբերի 16-ին: «Ում մասին կգրես, քո գործը՞ն է, Հովսեփին չմոռանաս»,— հաճախ էր մեր հանդիպումների ժամանակ հուշում մեծատաղանդ Վարդան Աճեմյանը: ՀՈՎՍԵՓ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ Արզականից էր: Նա աշխատել էր Մեղրու, Հոկտեմբերյանի, Ստեփանավանի ժողթատրոններում: Նա այստեղից գնաց ռազմադաշտ և այլևս չվերադարձավ ոչ բեմ, ոչ հայրենի տուն: **«Ամեն ինչ ռազմաճակատի համար», «Մայր հայրենիքն է կանչում», «Ֆաշիզմը կխորտակվի», «Մարտ հանուն հայրենիքի»** հայրենացումը կոչերը ստիպեցին, որ ռումբ ու գնդացիր, հրացան ու ատրճանակ բռնեն նաև Թբիլիսիի հայկական թատրոնի դերասաններ **Սուրեն Եղիազարյանը, Ստեփան Ալիխանյանը,** գնդապետի աստիճանի բարձրանա **Լևոն Բաբայանը:** Ո՞վ չգիտի, որ մարտական հերոսական ուղի են անցել **Գուրգեն Թոնունցը** (Մոսկվայից), **Ալեքսանդր Փչեմյանը, Միքայել Գրիգորյանը, Գ. Բարսամյանն** ու **Սուրեն Պիճիկյանը** (Կիրովաբադից) և բազմաթիվ այլ դերասաններ, ռեժիսորներ և հայ բեմարվեստի այլ երախտավորներ:

•

— Իմ մասին երկար պետք չէ գրել: Եթե պիտի գրես, խնդրում եմ՝ Քաջիկ Բարսեղյանի մասին գրես: Նա դրան իրոք արժանի է: Զէ՛ որ նա Մեծ հայրենականի երկրորդ խմբի հաշ-

Երևանի Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի արտիստ (ձախից առաջինը) **Ելենա (Լենա) Ալվարյանը** իր մարտական ընկերների հետ: Նստած են (ձախից) Ե. Ալվարյանը, Սիրոնենկոն, Վարշանյանը, Օվչիննիկովը և Գորդենինան: Բաթում, 30 հունիսի 1942 թ.:

[1] Տե՛ս Թատերական Երևան, № 9 (հատուկ թողարկում), 1975, էջ 18:

մանդամ է:—Թատերական ընկերությունում մեր հանդիպումներից մեկի ժամանակ եղավ ԹԳ միության վարչության նախագահ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հրաչյա Ղափլանյանի առաջարկը:

●

Դոմոդեդովոյի օդանավակայանում խոնված բազմության աչքից միշտ չէ, որ ազատ պոռ է վրիպում: Սպասասրահը նոր ներս մտած արտիստին՝ ՔԱՋԻԿ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ, շատերն էին ճանաչում երևանյան բեմից և հեռուստաէկրանից, ուզում էին ազատ նստաթոռ կամ բազմոց գտնել նրա համար: Չնայած գարնանային ցրտերը քիչ զգացնել էին տալիս, բայց վաստակավոր արտիստի դեմքին քրտինքի շիթեր էին երևում:

— Ի՞նչ է, հիվա՞նդ եք...

— Էհ՛: Մոտ մեկ տարի է բուժվում եմ Երևանի և Մոսկվայի տարբեր հիվանդանոցներում և գիտահետազոտական ինստիտուտներում... Պատերազմի վերքերը հանգիստ չեն տալիս...

Պատերազմի վերքերը:

Նրանք ո՞ւմ չեն նեղում: Դերասանն արդեն մի քանի՞ ծանր վիրահատություններ է տարել: Արդեն ձեռնափայտի օգնությանն է դիմում: Կարծես նա չէ, որ երեկ դեռ բեմում Մուշեղ էր («Վրեժ»), Աբգար Աբգարիչ («Կինը ուսադիրներով»), Մարտինով («Դատավճիռ»), Բաբկեն («Թաղի զավակը»): Իսկ հիմա՞. հիմա Դոմոդեդովոյի օդանավակայանում մի քանի րոպե չի կարող ոտքի վրա կանգնել. պատերազմի վերքերը, ծանր տարած վիրահատությունները նեղում են: Պատերազմից հետո Եղեգնաձորի, Արտաշատի, Երևանի դրամատիկական թատրոններում նախկին զինվորը հարյուր հիսուն դերեր է կերտել, խաղացել տասներկու կինոնկարներում, հուզել հանդիսատեսին, բեմի և կինոյի լեզվով նրան պատգամել. «Սիրի՛ր հողն ու ջուրը, սիրի՛ր քո հայրենիքը, քո ժողովրդին: Եղի՛ր աշխատասեր ու բարի, շիտակ և անձնվեր... Հարգի՛ր քո դիմացինին, կիսի՛ր նրա տխրությունը, մասնակցի՛ր նրա խնդությանը, օգնի՛ր կյանքում մնալուն վաստակ թողնել»: Վերհուշը, զոհված դերասան ընկերների վրեժը, ռայխի և էսէսականների վայրագությունները կարծես թելադրում են «դիմացի՛ր, մարդ»: Եվ դիմացավ, ապաքինվեց զինվորն ու նորից բեմ բարձրացավ:

Ի՞նչ, ի՞նչ դերեր չի խաղացել նա. Շիլլերի «Սեր և խարդավանքում» Վուրմ էր, Սունդուկյանի «Պեպոյում»՝ Զիմզիմով, Բ. Շոուի «Սատանայի աշակերտում»՝ Ռիչարդ Դաջեն, Լ. Միքայելյանի «Վարազդատում»՝ Վարազդատ, Օստրովսկու «Անօժիտում»՝ Կնուտով, Շիլլերի «Ավազակներում»՝ Ֆրանց: Իսկ հիմա՞— հիմա պատերազմի վերքերը հանգիստ չեն տալիս, ստիպում են, որ զինվոր դերասանը ևնրոբույժի և օնկոլոգի, վիրաբույժի և տրավմատոլոգի դռները բախի, դիմանա ռենտգենոլոգի և բուժհատուկ հանձնաժողովի եզրակացություններին, նորից ցավը զսպելով լսի... «ձեր մարմնում դարանակալված ականներ կան, ճարպակալվել են, մի քանիսը բորբոքվել, հապաղելը մահացու է...»:

Եվ 1973 թվականին Մոսկվայում ևնրովիրաբուժության գիտահետազոտական ինստիտուտում նորից վիրահատության տեղափոխեցին Բելոռուսական Երկրորդ ռազմաճակատի 413-րդ դիվիզիայի 13-20 գնդի նախկին հետախույզ, Երևանի դրամատիկական թատրոնի առաջատար դերասան Քաջիկ Բարսեղյանին: Ու մինչ բժիշկներն ու քույրերը նրան թմրեցնող դեղեր կսրսկեին, մինչ վիրաբույժը գործի կդներ բուժանձնակազմը ու կհագներ սպիտակ խալաթը, եղեգնաձորցի Սամսոնի որդին մտոք 136-րդ հրաձգային գնդի հետ Դիլիջանից մեկնեց ռազմաճակատ: 1943 թ. մասնակցում է «Բագրատիոն» օպերացիային՝ Պերիչի մոտերքում, կռվում է Բորբույսկում, Սլուցկում, Բարանովիչում, Ռուժանում և Պրոռուժանում, գետանցում է Բրուտը, Օմալը, Բերիզինան, Արևմտյան Բուգը, 1944 թ. հուլիսի 29-ին Լեհաստանի համար մղվող ազատամարտերն է վերհիշել և երկու ոտքից ու մեջքից վիրավորվելը: Նրան թվում է, թե նորից Բելովեժի, Բրեստի... և Կատովիցի ռազմական հոսպիտալներում է: Չէ որ նույն վերքերը, սպիացած վերքերն են մխում, 30—40 տարի հետո հիշեցնում մահը, անավարտ դերերն ու չապրված կյանքը: Նրան թվում է, թե Բորբույսկի համար դեռ մարտերի մեջ է, մի պահ մտքով տեղափոխվում է Բերեզինա, երկաթուղային կամուրջի համար ծավալված ցնցող դեպքերն է վերհիշում, հիշում է «կենդանի լեզու բերելը», ընկերոջ վիրավորվելը ու մահը: «Չէ, երևի այսօր չվիրահատեն»,— մտածում է նախկին հետախույզն ու ձեռքը տանում դեպի անզգայացվող ոտքը: Ծերմակ խալաթավորների խմբայցը ստիպում է, որ

հետախույզ դերասանը սթափվի: Ծանր, երրորդ ծանր վիրահատությունն է տանում Մեծ հայրենականի 2-րդ խմբի հաշմանդամ, դերասան ռազմիկը:

— Իսկ ինչպիսի՞ մարտական և աշխատանքային պարգևների եք արժանացել...

Պատասխանի փոխարեն Քաջիկ Բարսեղյանը գարնանային թեթև վերարկուի օձիքը ետ է տանում. նրա կուրծքն են զարդարում Հայրենական մեծ պատերազմի 1-ին աստիճանի, Փառքի 3-րդ աստիճանի շքանշանները, Խիզախության համար, Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար և բազմաթիվ այլ մեդալներ:

1944-ի նոյեմբերի 27-ից, Կատովիցի զինհոսպիտալից դուրս գրվելուց հետո, ռազմիկ հայ-

Քաջիկ Բարսեղյան

Գևորգ Աբաջյան

որդին նորից շարունակեց իր զինվորական ծառայությունը, այս անգամ՝ արդեն 101-րդ պահեստային գնդում, իսկ 1945-ից՝ գվարդիական շինարարական երկաթուղային բրիգադում և միայն 1947-ի օգոստոսին հրաժեշտ տվեց զինվորական համազգեստին:

— Արդեն 62 տարեկան եմ, 20 տարի է, ինչ Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ եմ: 1941-ին առաջին անգամ բեմ եմ բարձրացել Միկոյանի (այժմ Եղեգնաձոր) շրջպետթատրոնում: Չնայած ֆիզիկական անառողջ վիճակիս, ինձ պահողը նորից բեմն է, ես բեմից նորից թշնամու դեմ եմ կռվում, կռվում եմ ազնվության և խաղաղության համար, սիրո և ջինջ երկինքների համար և ամեն, ամեն անգամ, երբ հետադարձ հայացք եմ նետում կյանքիս կեռմաններին՝ Վայոց ձորից մինչև Բելոռուսիա, Լեհաստան, մինչև իմ երրորդ վիրահատությունը, երբ ձեռքս եմ առնում բեմական գործունեության համար ինձ շնորհված Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և ՀԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրերը, ինձ միշտ երիտասարդ և առողջ եմ զգում: Հետո ի՞նչ, որ «սև, մութ ամպեր են ճակտիս դիզվել», չէ որ ես այսօր հպարտ եմ նայում իմ իսկական բարեկամների և գործընկերների, իմ հանդիսատեսի և ժողովրդի աչքերին...— մեր վերջին հանդիպման ժամանակ ասում է նախկին զինվորն ու բռնում թատրոն տանող ճանապարհը:

●

Մտերմությունը գործընկերների հետ թույլ է տալիս, որ հեռուստատեսության ստուդիայում բոլորը նրան Աբաջ կոչեն, թեև բոլորը քաջ գիտեն, որ նրա իսկական անուն-ազգանուն-հայրանունը ԳԵՎՈՐԳ (ԳՈՒՐԳԵՆ) ԳԱՐԵԳԻՆԻ ԱԲԱՋՅԱՆ է: Լենինականի Մռավյանի անվան թատրոնում սիրող դերասան էր, տասնութ տարեկան, երբ զինվոր դարձավ: 45-րդ բանակի 111-րդ հատուկ բրիգադը 1942-ի հոկտեմբերին ձևավորվեց Հայաստանում: Հազարավոր զինակոչիկների գնացքը աշնանային մի օր դեպի հյուսիս տարավ, նրանց մեջ էր և պատանի Գևորգը: Ու երբ հասավ վերջին կանգառը, մեքենավար Գարեգին Աբաջյանը խնդրեց հրամանատարությանը իր մոտ հրավիրելու 5-րդ վագոնից Գևորգ Աբաջյանին՝ իր որդուն: Հայրը որդուն պատերազմ էր տանում... Խրատ, համբույր, հրաժեշտ և հուզմունք: Մի քանի ժամ հետո ականանետային բրիգադի զինվոր Աբաջյանն արդեն ռազմական վերապատրաստման կարճատև դասընթացներում էր: 1943 թ. մարտ: Թշնամու մինչ ատամները զինված գիշատիչների դեմ Մալայա Զեմլյայում կատաղի մարտեր էին մղում խորհրդային զինվորները: Անհրաժեշտություն էր զգացվում դեսանտ իջեցնել: Թշնամու ինքնաթիռները ռումբեր էին շաղ տալիս Ղրիմում և Կրասնոդարում, Սև և Ազովի ծովափերին: Ախուրյանցի (Զարախլի գյուղից) երիտասարդ ուսուցիչ Գուրգեն Սահակյանն ու գնդացրորդ Գևորգ Աբաջյանը (այժմ երկուսն էլ ապրում են Երևանում) տեսան, թե ինչպես ռմբակոծության տակ ընկավ իրենց ուկրաինացի ընկերը՝ Կաշիրինը: Վերջինս կոնտուզիա էր ստացել: Նրան մի

կերպ փրկում են, դուրս բերում ավերների միջից: Զգալով, որ մահը իրենց էլ է սպառնում, Գևորգը գնդացրի փողն ուղղում է դեպի գերմանական կործանիչը և կրակ բացում: Ինքնաթիռը բռնկվում է և ընկնում ցած: Դեսանտայինները, նրանց թվում և Գևորգն ու Գուրգենը, ծանր վերքեր են ստանում: Քանի որ ռազմընկերոջ վերքն ավելի սպառնալից էր, Գուրգենը զինվորական բլուզի թևքը պատռում է, փաթաթում Գևորգի արյունահոս վերքը, և մեկը մյուսին քարշ տալով, հասնում են բուժկետ (սանբատ): Մեկ, մեկուկես ամիս ապաքինվելուց հետո խիզախ գնդացրորդին ուղարկում են ուսանելու Կրասնոդարի հրաձգա-ականանետային ուսումնարան: Ավարտելուց հետո կրտսեր լեյտենանտի կոչումով Գ. Աբաջյանը նորից մեկնում է կրակային առաջին գիծ: Որպես գնդացրային դասակի հրամանատար նա քաջաբար է իրեն դրսևորում Արևմտյան Ուկրաինայում և Լեհաստանում, արժանանում Հայրենական մեծ պատերազմի առաջին աստիճանի շքանշանի, Մարտական ծառայության համար և մի շարք այլ մեդալների: Մեծ հաղթանակին ժամեր էր մնում, երբ գերմանական գնդակը Չեխոսլովակիայի մայրաքաղաք Պրագայում խոցեց (գլխից) շքանշանակիր հայ ռազմիկին. դա արդեն 1945 թ. Մայիսի 9-ին էր: Ապաքինվելուց հետո ավագ լեյտենանտ Գ. Աբաջյանը չզորացրվեց, շարունակեց ծառայել Գերմանիայում՝ թկուպացիոն գնդում, մինչև 1946 թ. ամառը: Պրագայի ազատագրման համար մեդալով պարգևատրվեց, վերադարձավ Երևան, ուսանեց ԳԹ ինստիտուտում և 1957-ից անցավ հայկական հեռուստատեսությունում աշխատանքի որպես ռեժիսոր: Արվեստի վաստակավոր գործիչ Գևորգ Աբաջյանը այսօր էլ լի է ստեղծագործական ավյունով. թոշակի անցնելուց հետո էլ նա շարունակում է աշխատել, մեկ-մեկ էլ այցի գնալ ռազմի իր անցած ճամփաներով (Հյուսիսային Կովկաս, Ղրիմ, Ուկրաինա, Լեհաստան, Չեխոսլովակիա, Գերմանիա), վերհիշել անցածը, հրճվանքով նայել վերակառուցված և շեն գյուղերին ու քաղաքներին, հանդիպել երիտասարդների ու վետերանների հետ և կյանքի փորձով իմաստնացած՝ կրկնել. «Խաղաղությունից քաղցր բան չկա...»:

Թեև ոչ ռազմաճակատում, բայց հայրենիքի պաշտպանությանը Բաքվի Վորոշիլովյան շրջանի զինկոմիսարիատի կողմից դեռ պատանի զինվորագրվեց ԷԼՄԻՐԱ ԱԲՐԱՀԱՄԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ (այժմ Հեքեքյան, ծնվ. 1928 թ.): Նա որպես լիցքավորող պատերազմի հենց առաջին օրերին կամավոր ծառայության անցավ զինվորական պաշտպանության հատուկ նշանակություն ունեցող փոստարկղերից մեկում: 1941 թվականի հոկտեմբերի 16-ին նրան տրված բնութագրում № օբյեկտի պետ, 3-րդ ռանգի ինտենդանտ Բերյոզինը և ավագ քաղղեկ Կատինը գրում են, որ Է. Աբրահամովան հրամանատարության առաջադրանքը գերազանց կատարելու համար արժանացել է շնորհակալագրի և ներկայացվել պարգևատրման: «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրում հեռուստառեժիսոր, ԹԳ միության անդամ Էլմիրա Հեքեքյանի մասին գրված ակնարկում արձակագիր Գրիգոր Զանիկյանը, ընթերցողին ծանոթացնելով հայրենիքի դստեր ռազմի օրերի ծառայությանը, գրել է.

«...Հաջորդ առավոտյան Էլմիրային տարան մի ուրիշ բարաք, ուր զենիթային արկեր էին պատրաստում: Նա դարձավ զինագործ վարպետի օգնական: Անունն էր այդպես, ուղղակի բանվորություն էր անում: Ամրացնում էր արկերի հրապատիճները, կողք-կողքի դրանք տեղավորում արկղերի մեջ, հետո բեռնատարներ էին գալիս, այդ արկերը տանում ճակատ, որ կարմիրբանակայինները հրե գրոհով քայլ առ քայլ ազատագրեին երկիրը...»[1]:

Հայրենի երկրի ազատագրության համար Հայկ. ԽՍՀ հեռուստառադիոհաղորդումների պետական կոմիտեի ռեժիսոր, արվեստի վաստակավոր գործիչ Էլմիրա Հեքեքյանն ու իր ամուսինը՝ Մեծ հայրենականի վետերան, լրագրող Արտյոմ Հեքեքյանը, նվիրվել են անմնացորդ: Էլ. Հեքեքյանը արժանացել է մեդալների և պատվոգրերի:

Աշխարհն ու մարդկությունը խաղաղ տեսնելու սուրբ երազներով է ապրում նաև ռեժիսոր, Հայկ. ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ ԱՎԻԿ ԳՐԻԳՈՐԻ ԹՈՐՈՍՅԱՆԸ (ծնվ. 1922 թ. Թբիլիսիում): Երբ պայթեց Մեծ հայրենականը, Ավիկը նոր էր ավարտել Գանձակի (այժմ Կիրովաբադ) հայկական միջնակարգ դպրոցը: Բազմաթիվ դասընկերների պես նա էլ կամավոր

[1] «Հայաստանի աշխատավորուհի», 1986 թ., № 8, էջ 30:

զինվոր դարձավ, չնայած որ զինկոմիսարիատը դեմ էր, չէ որ 18-ամյա Ավիկը կարճատես էր: Համառությունը հաղթեց, և 1941-ին էլ նրան ընդունեցին կրտսեր հրամանատարների ռազմական ավիացիոն ուսումնարան: Դեռ չավարտած ուսումնարանը, Ավ. Թորոսյանը նշանակում ստացավ իր զինվորական պարտքը կատարելու Հյուսիս-կովկասյան ռազմաճակատի 518-րդ հատուկ ավիոսպասարկման գումարտակում: «Մենք արդեն պատերազմի մեջ էինք: Պետք էր պաշտպանել ռազմական օդանավակայանները, որոնք մասնակցում էին մարտական գործողություններին:— Մեզ տված ինքնակենսագրականում գրել է Հայկ. ԽՍՀ հեռուստառադիոպետկոմիտեի երիտասարդական հաղորդումների գլխավոր ռեժիսորը և շարունակել:— Մեր վիճակը էլ հեշտերից չէր: Դժվար էր հատկապես գիշերները, երբ թշնամու հետ հանդիպելու վտանգը ռեալ էր: Իսկ հանդիպումներ լինում էին: Ես շարքային բանակային էի, հրաձիգ զինվոր: Չեմ վիրավորվել: Պատերազմի մասնակցի իմ ճակատագիրը դաժան չգտնվեց. 1942 թ. գարնանը վերադարձա տուն: Ինձ նվիրեցի իմ փայփայած և երազած թատերական արվեստին...»: 1951 թվականին Ավ. Թորոսյանն ավարտում է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտը և որպես ռեժիսոր մինչև օրս անբաժան է հայ բեմից: «Սերժանտ Կարոն» և բազմաթիվ հայրենասիրական այլ երկերի հեռուստաբեմականացումներն ու բեմադրությունները այսօր նորից են վկայում, որ ռեժիսոր Ավիկ Թորոսյանը միշտ մնում է իր հայրենիքի արթուն զինվորը: Նա պարգևատրվել է մարտական և աշխատանքային շքանշանով ու մեդալներով:

Էլմիրա Աբրահամյան

Ավիկ Թորոսյան

Մարտին Ավետիսյան

Ներսես Կագրամանյան

Ամեն-ամեն առտու հեռուստատեսության երաժշտական հաղորդումների գլխավոր խմբագրություն է մտնում, երկու հենակները թևատակին, Հայկ. ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ռեժիսոր ՄԱՐՏԻՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ: Նա նոր էր ավարտել Երևանի Շահումյանի անվան դպրոցը, ընդունվել պոլիտեխնիկական ինստիտուտ, ուսումնառությանը զուգահեռ աշխատում էր Երևանի երաժշտական կոմեդիայի թատրոնում որպես հուշարար, երբ հարկ եղավ կրծքով պաշտպանել երկիր հայրենին: Թամանյան դիվիզիայի 526-րդ գնդի երկրորդ գումարտակում ջոկի հրամանատար էր, անասան մարտեր էր մղում թշնամու դեմ Կերչի փողոցային կռիվների ժամանակ (1944 թ. հունվարի 27), երբ ծանր վիրավորվեց և կորցրեց ձախ ոտքը: ՀՄՊ-ի առաջին և երկրորդ աստիճանների շքանշանակիր, ԹԳՄ անդամ Մարտին Աբրահամի Ավետիսյանը այսօր էլ լի է ստեղծագործական ավյունով:

«Որտեղ ռեժիսորն ու դերասանը, այնտեղ էլ դրամատուրգն ու թատերագետը»,— այս սկզբունքով թշնամու դեմ դուրս եկան դրամատուրգներ **Գուրգեն Բորյանը, Թաթուլ Հուրյանը, Արամ և Աշոտ Պապայանները, Արտաշես Բաբայանը, Մելիք Քոչարյանը, Վարդգես Շողերյանը, Ալեքսանդր Սումարկովը...** Հյուսիսային Կովկասից Բեռլին ձգվեց հայկական Թամանյան դիվիզիայի անվեհեր զինվոր, «Կարմիր զինվոր» և «Առաջ հանուն հայրենիքի» թերթերի թղթակից, այժմ բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, կուլտուրայի վաստակավոր գործիչ, թատերագետ **Սերգեյ Դարոնյանի** ռազմի ճանապարհը: Պրոֆ. Ս. Դարոնյանը պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի 2-րդ աստիճանի

շքանշանով, Արիության համար, Մարտական ծառայության համար, Կովկասի պաշտպանության համար, Վարշավայի ազատագրության համար և բազմաթիվ այլ շքանշաններով ու մեդալներով: Հայկ. ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, թատերագետ ՆԵՐՍԵՍ ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆԻ ռազմի ինքնակենսագրականում կարդում ենք. «1941—1946 թթ. ծառայել եմ Խորհրդային բանակում: Եղել եմ 45-րդ բանակի «Մարտական աստղ» և 89-րդ Թամանյան դիվիզիայի «Կարմիր զինվոր» թերթի խմբագիր և գրական աշխատող: Խմբագրել եմ նաև 233-րդ Կրեմենչուկ-Զնամենսկյան դիվիզիայի թերթը: Պարգևատրվել եմ ՀՄՊ-ի 2-րդ աստիճանի շքանշանով և բազմաթիվ մեդալներով»:

Ընդհանուր հանրագումարի բերելով մեր խոսքը թատերական գործիչների Մեծ հայրենականին ունեցած մասնակցության մասին՝ կարող ենք միայն մի հարց տալ. «Այն ո՞վ է, որ չի կռվել թշնամու դեմ»: Չկան, չեն եղել այդպիսի ռեժիսորներ ու դերասաններ, չի եղել հայ թատրոնի նման բեմ: Կռվել են բոլորը. մեկը բեմից՝ բեմական խոսքով, մեկ ուրիշը՝ ռազմադաշտում, զենքով: Կռվել են բոլորը՝ դերասան, թե ասմունքող, երգիչ, թե պարող, ռեժիսոր, թե դիրիժոր... Հիշենք անվանի բալետմայստեր, Հայկ. ԽՍՀ ժող. արտիստ **Ազատ Ղարիբյանին** և Երքաղխորհրդի գործկոմի ՆԳ վարչության փողային նվագախմբի դիրիժոր **Բաղդասար Մարտիրոսի Գրիգորյանին:** Վերջինս մարտական մկրտությունն ստացավ 408-րդ հայկական հրաձգային դիվիզիայի 672-րդ գնդում:

Բելոռուսական 2-րդ ռազմաճակատում էր մարտնչում, դադարի պահերին գեղարվեստական միջոցառումներ կազմակերպում գվարդիայի ավագ, դերասան **Ստեփան Սերգեյի Ալիխանյանը:** Նրա մասին դրվատանքով է խոսել դիվիզիայի հրամանատար, գվարդիայի գեներալ-մայոր Սոլովևը:

— Իմ անուշ, անուշ Գրիշային չմոռանաք: Նա քաջի մահով խոցվեց,— պատմում էր ԳՐԻԳՈՐ ԱՍՐՅԱՆԻ մասին Կիրովաբադի հայպետթատրոնի նախկին տնօրեն և գլխավոր ռեժիսոր Աղասի Ալայանն ու ավելացնում.

— Գրիգորը կիսատ թողեց Կոնստանդին Սիմոնովի «Ռուս մարդիկ» պիեսում իր ստանձնած դերը և մեկնեց կամավոր: Գնաց ու էլ ետ չեկավ...

Ռազմի հերոսական ճանապարհ անցավ Թբիլիսիի Ստ. Շահումյանի անվան թատրոնի դերասան, ՎԽՍՀ վաստակավոր արտիստ **Սուրեն Եղիազարյանը:** Նա մեծ հաղթանակի բերկրանքը վայելեց Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում: Տարիներ անց ահա թե ինչ է նա գրել. «1941 թ. Թբիլիսիի լեռնահրետանային ուսումնարանն ավարտելուց հետո **Գրիշա Իսաբեկյանը, Ռաֆիկ Գրիգորյանը, Հայկազ Եղիազարյանը, Յուրա Ոսկանյանը** և ես ուղևորվեցինք Հայաստան, որտեղ կազմակերպվում էին 89-րդ և 409-րդ հայկական դիվիզիաները: Շատ չանցած ես նշանակում ստացա 409-րդ հրաձգային հայկական դիվիզիայի 677-րդ հրաձգային գնդի հակատանկային մարտկոցում: 1942 թվականի նոյեմբեր ամիսն էր, երբ մեզ՝ հրետանավորներիս, խորհրդակցության հրավիրեց դիվիզիայի հրետանու պետ, գնդապետ Սարկիսովը:

— Եկավ և մեր ժամը՝ պաշտպանելու հայրենի հողը: Թշնամին Անդրկովկասի դռներին է, ուզում է գավթել Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը: Դեպի մարտ...

409-րդ հրաձգային հայկական դիվիզիան մեկնեց ռազմաճակատ: Նրա շարքերում ես կռվեցի մինչև պատերազմի ավարտը: Հաղթանակի օրը ես դիմավորեցի Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում: 1947 թվին զորացրվելուց հետո վերադարձա Թբիլիսի: Նույն թվին էլ ընդունվեցի Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետը»:

Եվ եթե չխոսվեց Մեծ հայրենականի մասնակից բազմաթիվ արտիստների և արվեստագետների մասին, սա դեռևս չի նշանակում, թե մենք չենք հիշում Կերչում 1942 թ. զոհված Երևանի փաստավավերագրական ֆիլմերի կինոստուդիայի տնօրեն ԲԱՐՍԵՂ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ և իր ընկերներին: «Հայֆիլմի» տասնյակ երիտասարդներ ռեժիսորական, գրիմի կամ նկարահանման սենյակներից և խցիկներից մեկնեցին ռազմաճակատ՝ մարտնչելու ֆաշիզմի և նրա պարագլուխ Ադոլֆ Հիտլերի դեմ: Այդ նա էր ռազմական դիկտատուրա հաստատելու համար բարբաջում. «Կարգ հաստատելու համար հարկավոր է յուրաքանչյուր լապտերից մի-մի մարդ կախել...»: Մարդկանց մահվան ճամբարներ, դիակիզարաններ և կախաղաններ ուղարկող համաշխարհային այս ոճրագործի մասին ցասումով և վրեժխնդրությամբ հնչեց հայ բանաստեղծի խոսքը Հաղթաստանի մտավորականների միտինգում, զորահավաքից առաջ.

Սա չէ Ալեքսանդր և ոչ էլ թեկուզ մի գոռ
Բոնապարտ,
Որին չժպտաց Աուստերլիցի արևը կրկին,
Եվ զուր է փորձում ընդունել նրանց
կեցվածքը հպարտ
Այս հտպիտ հոգին:
Չինգիզ խանն անգամ մարդ էր՝ արնախում
այս հրեշի քով,
Գերմանիա, սրան քո ամոթը սև կներե՞ս միթե:
Ո՛չ, դու չես ների, և պիտի կախվի նա ինքն
իր ձեռքով,
Այդ ինքն էլ գիտե:

(Ն. Զարյան)

Մինչև Հիտլերի անհայտանալը գերմանական ավազակների գնդակին զոհ գնացին Գյոթեի և Շիլլերի հերոսների բազմաթիվ հայ դերակատարներ (հիշենք Ալավերդու թատրոնից ԿՈՐՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ), իսկ ողջ մնացածներից շատերն ու նրանց հետնորդները այսօր էլ փորձում են խաղաղասեր մարդկությանը ներկայացնել այն մեծ ոճրագործին, որին շատ դիպուկ է ներկայացրել գերմանացի մեծ մարդաբան, պրոֆեսոր, փորձագետ Մաքս ֆոն Գրուբերին Մյունխենի դատարանում, երբ դեռ Հիտլերը չէր անցել կառավարության գլուխ: Ահա պրոֆեսոր Գրուբերի հետազոտության համառոտությունը. «Նեղ, թեք ճակատ, տգեղ քիթ, լայն այտոսկրեր, փոքրիկ աչքեր: Դեմքի արտահայտությունը մատնում է իրեն վատ տիրապետող, ցավագար մարդուն»: Տարիների հեռվից, երբ հետադարձ հայացք ենք գցում անցյալին, մեր դեմ է հառնում իրոք «ցավագար» այդ մարդը, որը դափնիներ էր երազում իր գերեզմանի համար: Ճիշտ է կոահել «Պրավդայի» թղթակից, մեծանուն հրապարակախոս, ժուռնալիստ և գրող Իլյա Էրենբուրգը, երբ գրել է. «Դժվար թե նրա գերեզմանին թեկուզ քար դնեն: Կաղամախյա մի ցից—ահա նրան հարմար հուշարձան»: Այո, նա հուշարձանի արժանի չէր: Ցավոք հուշարձան-կոթողների արժանի բազմաթիվ արվեստագետներ վաղաժամ հեռացան բեմից ու կյանքից: Պատերազմի զոհերի և արվեստագետների հիշատակի հավերժացման համար միշտ էլ թարմ, սրտաբուխ և երախտալի է հնչում ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պետական մրցանակի դափնեկիր Գուրգեն Զանիբեկյանի հիշատակի խոսքը՝ ասված Մեծ հայրենականի փառապանծ հաղթանակի 30-ամյակի օրերին. **«Նոր սերունդը չի տեսել և թող երբեք չտեսնի պատերազմ, համաժողովրդական արհավիրք: Բայց մեր երիտասարդները, նաև արվեստի մարդիկ, պետք է միշտ հիշեն Մեծ հայրենականի ազնիվ նահատակներին: Հիշեն ոչ միայն գլուխ խոնարհելու և ոչ տրտմելու համար, այլ նրանցով հպարտանալու և նրանց գործը շարունակելու: Դա մեծագույն հարգանքը կլինի նրանց հիշատակին»:**

ՀԱՅ ԿԻՆՈԳՈՐԾԻՉԸ՝ ԸՆԴԴԵՄ ՖԱՇԻԶՄԻ

Ինչպես բոլոր արվեստները Մեծ հայրենականի տարիներին խորհրդահայ կինոն ևս «ռազմականացավ»: Առաջին պլանում կինոխրոնիկան էր: Գործարաններում, հանրային դաշտերում, գիտաստեղծագործական և մշակութային հիմնարկներում կինոնկարահանումներ կատարելու փոխարեն հայ կինոգործիչները ստիպված եղան մեկնելու ռազմաճակատ, վավերացնելու հայրենիքի ազատության համար մարտնչողների սքիրանքը, կամքն ու հերոսականությունը: Ռազմաճակատը, կրակային գիծը, հայրենի ոմբակոծված ու շիկացած հողը դարձան կինոգործիչի և դերատանի համար ոչ թե թատերաբեմ, այլ իսկական, հերոսական ռազմաբեմ, ուր դերասանը իսկական զինվոր էր, կինոօպերատորը՝ և՛ սցենարիստ, և՛ ռեժիսոր, և՛ օպերատոր, և՛ խմբագիր:

Ոչ միայն տասնմեկ փաստավավերագրական կինոնկար, այլև «Խորհրդային Հայաստան» կինոժուռնալի 54 թողարկում 1941—1945 թվականներին «Հայկինոխրոնիկան» հանձնեց հանդիսատեսին: Ղրիմյան ռազմաճակատում հայ ռազմիկների սխրանքի կինովավերացումները, շնորհիվ հայ կինոփաստագրողների, տեղ գտան «Սոյուզկինոխրոնիկայի» տարբեր թողարկումներում: Խորհրդային կինեմատոգրա-

ֆի Մեծ հայրենականի պատմությունը անշուշտ լիարժեք չի լինի, եթե նրանից հանվեն հայ կինոգործիչների կինոժապավենային վավերագրերը՝ նկարահանված Իրանում, Ղրիմում, Ուկրաինայում, Գերմանիայում և այլուր: Եվ եթե չենք խոսում **«Դավիթ բեկ»** (ռեժ.՝ **Համո Բեկնազարով**) ֆիլմի մասին, միայն այն է պատճառը, որ այն որպես լայն կտավի կինոգեղարվեստական ստեղծագործություն իր ծննդյան օրից (1944 թ.) քաջածանոթ և հոգեհարազատ է բոլոր կինոսիրողներին: «Դավիթ Բեկի» էկրան բարձրանալը հատուկ հպարտությամբ էր լցրել ոչ միայն նրա դերակատարների՝ Հր. Ներսիսյանի, Դ. Մալյանի, Հասմիկի, Ավ. Ավետիսյանի, Լ. Զոհրաբյանի, Տ. Մախմուրյանի, Գ. Ավետյանի, Ֆ. Դովլաթյանի, Ա. Կոթիկյանի և այլոց սրտերը, այլև արժանացել էր միութենական և հանրապետական մամուլի բացարձակ ուշադրությանն ու դրվատանքին: Այդ մասին են վկայում մամուլում տպագրված՝ Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Մ. Սարյանի, Արա Սարգսյանի, Հովհ. Շիրազի և մեր մյուս մեծերի ջերմ կարծիքներն ու դրվատանքները:

Խորհրդային կնոջ վառ հայրենանվիրվածության մասին է 1942 թ. նկարահանված Պատվական Բարխուդարյանի «Գվարդիականի կինը» ֆիլմը: Ֆիլմի սցենարի հեղինակ Մարո Երզնկյանը, բեմադրող ռեժ. Պ. Բարխուդարյանը, գլխավոր դերակատարներ Վ. Վաղարշյանը (պրոֆեսոր), Ն. Ալիսովան (Տատյանա), Ա. Ամիրբեկյանը (կառապան), Ե. Սամոյլովը (Բելկին) կարողացել են ստեղծել ռազմահոգեբանական լարվածությամբ լեցուն ցնցող, համառոտ մի կինոստեղծագործություն, ուր բարոյական առաքինությունն ու մարդասիրությունը դառնում են հոգեբանական նեցուկ՝ բուժելու մարտադաշտում տեսողությունը կորցրած զինվոր Բելկինին:

Չորս կինոնովելի, երկու կարճամետրաժ և մեկ լիամետրաժ կինոնկարների ծնունդը Հայկինոյում (այժմ Հ. Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա) և նրանց ռազմաճակատային ու թիկունքային էկրաններում երևալը ֆուգասային ռումբի արժեք ունեցան գերմանական ֆաշիզմը ջախջախելու գործում:

«Դուստրը» **(սց. Ֆ. Կնորեի, ռեժ.՝ Հ. Բեկնազարյան)**, «Մի անգամ գիշերով», «Հարսնացուն» **(ռեժ.՝ Բ. Բառնետ)**, «Առաջին հայկական կինոհամերգը» **(սց.՝ Պ. Բարխուդարյան և Գ. Հովհաննիսյան, ռեժ.՝ Պ. Բարխուդարյան)** ռազմահայրենասիրական (կամ ինչպես կոչում էին այդ տարիներին՝ պաշտպանական) ստեղծագործությունները ևս ծնվեցին Հայաստանում և բարձրացան միութենական ու ռազմի էկրան՝ հուզելով միլիոնավոր սրտեր: Խոսելով Մեծ հայրենականի տարիներին ստեղծված պատմահայրենասիրական և փաստա-վավերագրական հայկական կինոնկարների ստեղծման և նրանց

Օպերատոր (ձախից) **Գ. Խնկոյանը** և ռեժիսոր **Գուրգեն Բալասանյանը** 1942 թ. Կերչում «անմահացնում են» թշնամու վայրագությունները:

«Սոյուզկինոխրոնիկայի» ռազմաճակատային թղթակցական խմբի ղեկավար, կինոօպերատոր **Գևորգ Սանամյանը** հարմար պահ է որսում՝ նկարահանելու ռազմաճակատային կինոկադրեր: Ղրիմի ռազմաճակատ, 1942 թ.:

հեղինակների մասին հարկ է հիշատակել այն մեծ ներդրումը, որ ունեցել են այդ տարիներին հայ կինոարվեստում մեծաքանքար **Համո Բեկնազարյանը, Ամասի Մարտիրոսյանը, Լևոն Իսահակյանը** (ռեժիսորներ), **Գարուշ Վարդանյանը, Գարեգին Ասլանյանը** (օպերատորներ) և շատ ուրիշներ: Ոչ միայն կինոսցենարիստները, կինոռեժիսորներն ու կինոօպերատորները, այլև հայ կոմպոզիտորները պատերազմի թեժ օրերին թիկունքից խոցեցին թշնամուն: Մի՞թե դրա պայծառ առհավատչյան չէ մեծահանճար **Արամ Խաչատրյանի** «Ռուսական հարց», «Ստալինգրադի ճակատամարտ», «Գաղտնի հանձնարարություն», «Ծովակալ Ուշակով», «Մենամարտ» և 15-ից ավելի այլ կինոնկարների համար հյուսած առնական, քաղցր, ցնցող և մարտաշունչ երաժշտությունը: Արդյո՞ք հայ կինոդիտողը երբևէ կարող է մոռանալ «Դավիթ Բեկ» և «Երկիր հայրենի» (չենք շեշտում խաղաղ օրերին ստեղծված) կինոնկարների համար հյուսած հայաշունչ, կարոտաբաղձ և առնական երաժշտությունների տաղանդավոր հեղինակին՝ **Աշոտ Սաթյանին**: Հետադարձ հայացքի դեպքում մեր դեմ են հառնում ոչ միայն կինոնկարներ ստեղծող մշակութային գործիչները, այլև՝ տանկիստ, հրաձիգ, հետախույզ, կապավոր, օդաչու... պարտիզան հայ կինեմատոգրաֆիստները: Դաժան այդ օրերին, երբ երկինքն ու հողը վերքի ցավից տնքում էին, երբ թշնամին չորս կողմից կրակ էր բացում խորհրդային անմեղ գյուղացու և բանվորի, մոր և մանկան վրա, երբ շինարարի, քանդակագործի աչքի դեմ ոմբակոծվում, հողին էին հավասարեցվում իրենց կառուցած երկնաքերն ու քանդակը, հիմնահատակ կործանվում էին պատմամշակութային կոթողներն ու նորօրյա մոնումենտները, հայ կինոօպերատորը, արհամարհելով մահը, կինոնկարահանման իր խցիկն ուղղել էր դեպի հակառակորդը. տեսագրում, «հավերժացնում էր» նրա վայրագությունները:

1944 թ. ռեժ. ԳՈՒՐԳԵՆ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻ ջանքերով ծնունդ առան «Հայաստանի զավակները» և «Սևծովյան նավատորմի վերադարձը» փաստագրական ֆիլմերը: Եթե առաջին ֆիլմում կինովավերագրողը ներկայացնում է ականավոր հայ զորահրամանատարներ Հովհ. Բաղրամյանին, Նելս. Ստեփանյանին, Ս. Մարտիրոսյանին, Ս. Կարապետյանին, Նվ. Սաֆարյանին, նկարագրում Բեզիմյաննայա բարձունքի գրավումն ու Կուրլանդյան թերակղզում հիտլերյան երեսուն դիվիզիաների շրջապատումը, առաջին պլանում Հովհ. Բաղրամյանն ու հայ թամանցիներն են, ապա երկրորդ («Սևծովյան նավատորմի վերադարձը») կինոնկարը Օդեսայի, Սևաստոպոլի, Կերչի հերոսական պաշտպանությանն է նվիրված: Փոխծովակալ Խոլոստյակովի և հայորդի Հովհ. Իսակովի կերպարով այստեղ կարծես ամփոփվում է խորհրդային անհաղթ ծովառազմիկների դիմանկարը:

«Պատահել է. մի ձեռքով կրակել եմ, մյուսով՝

նկարահանել: Գուցե չհավատաք... Թե ինչպես ողջ մնացի, ինձ համար էլ է հանելուկ»,— պատմում էր կինովավերագրողների Ղրիմի ռազմաճակատային խմբի օպերատոր Գուրգեն Բալասանյանը՝ նկարագրելով, թե ինչպես է որսացել Նելսոն Ստեփանյանի և թշնամու ինքնաթիռների փոխադարձ հրաձգություններն ու խոյահարումները, թե ինչպես է ծովակալ Հովհ. Իսակովի խորհուրդներով վավերացրել հայ մարտիկների մասնակցությունը Մեծ հայրենականին: 1943—1945 թթ. Գ. Բալասանյանը որպես ռազմիկ օպերատոր և ռեժիսոր Թամանյան դիվիզիայի կազմում մարտնչեց թշնամու դեմ և Մեծ հաղթանակը դիմավորեց Բեռլինում՝ արժանանալով մարտական շքանշանների և մեդալների:

Կինոօպերատորներ **Իվան Դիլդարյանը, Նորայր Սիմոնյանը, Գարեգին Արամյանը, Գուրգեն Եղիազարյանը, Հովհաննես Եսայանը** ևս ռազմի շինել հագած անցան ավերների միջով և տուն դարձան հաղթանակով, շքանշաններով ու մեդալներով պարգևատրված:

Մարտական քաջարի սխրանքներով լի ճանապարհ են թողել ետևում Հ. Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիայի վետերաններ **Ստեփան Կևորկովը, Վիլյամ Հայկազյանը, Գրիգոր Մելիք-Ավագյանը, Էրազմ Մելիք-Քարամյանը, Յակով Քոչարյանը, Հմայակ Եղիազարյանը,** (կինոռեժիսորներ), **Արտաշես Ջալալյանը** (օպերատոր-բեմադրող): Նրանց մարտական սխրանքները պսակվեցին հաղթական վերադարձով, մարտական շքանշաններով և մեդալներով:

Միութենական և հանրապետական մամուլում հաճախ է խոսվել Մեծ հայրենականի ակտիվ մասնակից, արվեստի վաստակավոր գործիչ, Ղրիմյան ռազմաճակատի «Սոյուզկինոխրոնիկայի» թղթակցական խմբի ղեկավար, կինոօպերատոր ԳԵՎՈՐԳ ՍԱՆԱՄՅԱՆԻ մասին: Երևանի արվեստի և գրականության թանգարանում պահպանվող նրա արխիվում պատերազմը վերարտադրող բազմաթիվ վավերագրեր կան, որոնց մի մասը ժամանակին օգտագործվել է «Հայրենական մեծ պատերազմի կինոտարեգրությունում»: Կինոնկարիչ **Միքայել Առաքելյանը,** կինոռեժիսոր **Ռոբերտ Գասպարյանը** այսօր էլ, պատերազմական թեմայով նկարահանումներ

Իվան Դիլդարյանը իր ծակատային ընկերների հետ, 1943 թ., Կերչի թերակղզի:

կատարելիս, վերապրում են «Հին օրերի երգը», հիշում իրենց մարտական ընկերներին («Հայֆիլմ» կինոօպերատոր **Յոլակ Կարաօղլյանին** և այլոց), որոնց բախտ չվիճակվեց վերադառնալ հայրենի տուն:

ԻՎԱՆ ԴԻԼԴԱՐՅԱՆԻ օպերատորական առաջին ստեղծագործությունը ռեժիսոր Գուրգեն Մարինոսյանի (ՀՄՊ-ում զոհվեց) «Վեց համագարկ» գեղարվեստական ֆիլմն է: Ի. Դիլդարյանը Լենինգրադի Ա. Լունաչարսկու անվան կինոֆոտոտեխնիկումի շրջանավարտ էր, երբ «բնակվեց «Հայֆիլմում» Դանիել Դգնունու առաջարկով: Այնուհետև նա նկարեց «Զանգեզուրը» (ռեժ.՝ Հ. Բեկնազարյան): Հետո՞: Հետո ծնունդ առան «Լեռնային լճի գաղտնիքը», «Անահիտը», «Հովազաձորի գերիները», «Անձամբ ճանաչում եմ», «Նվագախմբի տղաները» և հանրահայտ այլ ֆիլմեր, որոնց օպերատորական բարձր արվեստը Դիլդարյանի անունը դրոշմեց կինոսիրողի սրտում և հիշողության մեջ:

— Նա էլ պատերազմի մասնակից է,— զգալով անտեղյակությունս՝ «Հայֆիլմի» տնօրեն Լևոն Արամյանն ու գլխ. խմբագիր Սաքիր Ռիզաևը ներկայացրին քիչ այն կողմ Արտ. Հայարտյանի և Արմ. Կոթիկյանի հետ զրույցի բռնված վաստակաշատ օպերատորին:

«Ե՞րբ և որտե՞ղ եք մասնակցել պատերազմին» հարցիս ահա թե ինչ պատասխանեց Իվ. Դիլդարյանը:

— Երբեք չեմ մոռանա 1941 թ. մայիս—հունիս ամիսները: Պատվական Բարխուդարյանի հետ Բյուրականում նկարահանում էինք «Առաջին հայկական համերգ» ֆիլմը: Հոգնած հենվել էինք մի հին պատի, երբ մեր գործընկերներից մեկը գուժեց պատերազմի լուրը: Նկարահանումները թողեցինք կիսատ, շտապ ետ եկանք Երևան, ուզում էինք ռազմաճակատ մեկնել, բայց արտոնագիր ստացանք: Մի քանի օր հետո ստուդիայի տնօրեն Կիմ Հովհաննիսյանն ասաց, որ ՀԿԿ Կենտկոմի ցուցումով հինգ-վեց կինեմատոգրաֆիստներ պետք է մեկնենք Իրան՝ նկարահանելու «Իրադարձությունները Իրանում» փաստագրական ֆիլմը: Այդպես էլ եղավ. Ստ. Կևորկովը, Է. Մելիք-Քարամյանը, ես և մի քանի ուրիշ տղաներ ավտոբուսով մեկնեցինք Ջուլֆա, այնտեղից էլ՝ Թավրիզ: Քաղաքագլուխը մեզ ջերմորեն ընդունեց, տարավ տուն, հյուրասիրեց: Նա մեզ համար ստեղծում էր բոլոր պայմանները նկարահանումները հաջող անցկացնելու համար: Մեր ժապավենը ուղարկվեց Մոսկվա, այն ցուցադրվեց «Էլնայի ճակատամարտը» ֆիլմի հետ որպես հատուկ թողարկում: Այնուհետև մենք դարձանք գինվորական կինոֆոտոթղթակիցներ: Կերչում երեք ամիս շարունակ (1942 թ.) կինոխցիկս ուսիցս ցած չեմ դրել: Ուսիս արդեն քերծվածքներ ու վերքեր էին առաջացել: Պատահեց այնպես, որ «Սոյուզկինոժուռնալ-38-ը» նկարահանելիս թշնամու գնդակը խոցեց կինոխցիկս: ...Լավ կլինի չհիշեմ

Ստեփան Կևորկով

Էրազմ Մելիք-Քարամյան

պատերազմը, նեղվում եմ, միտս են գալիս զոհված ընկերներս...

Ու մինչ կհետաքրքրվեմ, թե լեյտենանտ Իվ. Դիլդարյանը ինչպիսի մարտական պարգևներ ունի, Արմ. Կոթիկյանը բացում է հումորի պարկը.

— Բոլոր տեսակի շքանշաններ, մեդալներ, պատվոգրեր, շնորհակալագրեր և... պատերազմի անջնջելի սպիներ:

Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի կինեմատոգրաֆիայի պետական կոմիտեում աշխատելիս հաճախ էի առիթ ունենում հանդիպելու և զրուցելու «Հայֆիլմ» կինոստուդիայի ռեժիսորներ Ստեփան Կևորկովի, Էրազմ Մելիք-Քարամյանի, բեմադրող-օպերատոր Արտաշես Ջալալյանի և այլոց հետ: Եվ միայն հիմա, այդ օրերից 20—25 տարի անց, երբ ձեռքս եմ առնում ՍՏ. ԿԵՎՈՐԿՈՎԻ «Չնկարահանված ֆիլմ» հուշագրությունը, որը հրատարակել է «Սովետական գրողը» 1983 թ. ռուսերեն՝ Հր. Բագրազյանի և Կ Քալանթարի խմբագրմամբ, նոր եմ միայն զգում, որ խորհրդահայ կինոյի այս ժրաջան և անձնվեր երախտավորին պատերազմը ևս դառնություն և վիրավորանք է բաժին հանել:

Ծառայել է «Լենինային արշավ», «Անձամբ ճանաչում եմ», «Արտակարգ հանձնարարություն», «Կամոյի վերջին սխրագործությունը» (հարակից ռեժիսոր) ֆիլմերի բեմադրող-ռեժիսորը Իրանում, 51-րդ հրաձգային դիվիզիայում, այնտեղից տեղափոխվել է Պոլտավա, ծանր մարտերով հասել Խարկով: Այստեղ ընկել է ռմբակոծության տակ, ստացել կոնտուզիա, ձերբակալվել հիտլերականների կողմից, բանտից փախչելիս հայտնվել Կիևում: Կապեր է հաստատել ընդհատակյաների հետ, գտել իր «խնամակալին»՝ մեծատաղանդ կինոռեժիսոր Ալ. Դովժենկոյին, որի հետ աշխատել էր Մոսկվայում և միայն վերջինիս միջամտությամբ է հաջողվել ստանալ արտոնաթուղթ և գալ Հայաստան: ՀՄՊ-ի վետերան, կինոռեժիսոր Ստ. Կևորկովը (Գևորգյանց) պարգևատրվել է ՀՄՊ-ի երկրորդ աստիճանի, Հոկտեմբերյան հեղափոխության, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով և բազմաթիվ մեդալներով: Նա Հայկ. ԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր է, ԽՍՀՄ ժող. արտիստ:

Չնայած իր հաղթանդամ և մռայլ արտաքինին, ներքուստ նուրբ, բարեհամբույր ու փուխր էր ԷՐԱԶՄ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՄԵԼԻՔ-ՔԱՐԱՄՅԱՆԸ (ծնվ. 1912 թ.): Բանակ էր զորակոչվել 1941 թ. օգոստոսին, Անդրկովկասյան ռազմաճակատում զինվորական կինոթղթակից էր: Մի քանի ամիս անց (նոյեմբերին) Արևմտյան ռազմաճակատի 316-րդ հրաձգային դիվիզիայում նույն զինպաշտոնն էր վարում: Կռվի թեժ պահերին կարող էր հայտնվել կրակային առաջին գծում, փաստալի և զարհուրելի, թշնամատյաց և վրիժառու կինոկադրեր հասցնել «Սոյուզկինոխրոնիկային»: 1942 թ. Է. Մելիք-Քարամյանը չորս ամսով (մինչև օգոստոս) կուրսանտ էր Թբիլիսիի 2-րդ հետևակային ուսումնարանում, որտեղից և նշանակում ստացավ ծառայելու Հյուսիս-կովկասյան ռազմաճակատի 9-րդ լեռնահրաձգային դիվիզիայի 1329-րդ գնդում որպես վաշտի հրամանատար: 1943 թ. մայիսին գերմանական վայրագների դեմ մղվող կատաղի մարտում նա ծանր վիրավորվեց և բուժվեց 1818-րդ էվակուացիոն հոսպիտալում: Ապաքինվելուց հետո դիվիզիայի հրամանատարությունը երիտասարդ կինոթղթակցին որպես գրական աշխատող ծառայության ուղարկեց Հյուսիս-կովկասյան զինօկրուգի «Красное знамя» («Կարմիր դրոշ») թերթի խմբագրություն, որտեղից 1943 թ. դեկտեմբերին նա տեղափոխվեց «За родину» («Հանուն հայրենիքի») թերթի խմբագրություն որպես պատասխանատու քարտուղար: Մեկ և կես տարի այստեղ ծառայելուց հետո Է. Մելիք-Քարամյանը նորից անցավ գլխավոր քաղվարչության տրամադրության տակ. այս անգամ նա գրական աշխատող էր: Այստեղից էլ 1945 թ. դեկտեմբերին զորացրվեց: Լեյտենանտ, զինկինոթղթակից, ռեժիսոր Էր. Մելիք-Քարամյանը իր մարտական անբասիր ծառայության համար ԽՍՀՄ կառավարության և բանակի գլխ. հրամանատարության կողմից արժանացել է Կարմիր աստղի շքանշանի, Մոսկվայի պաշտպանության համար (1944 թ.), Կովկասի պաշտպանության համար (1944 թ.), Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար (1945 թ.) մեդալների, Սահմանապահ զինծառայող 2-րդ աստիճանի կրծքանշանի և բազմաթիվ հոբելյանական մեդալների: Պատերազմի տարիներին Իրանական Ադրբեջանում (1941 թ.), Հյուսիսային Կովկասում, Մոսկվայի մոտ նկարահանած քարամյանական կադրերը մտել են խորհրդային կինոյի տարեգրության մեջ: Պատերազմից հետո նախկին զինվորը նորից նվիրվեց իր մասնագիտությանը: Նրա նկարահանած «Կարո», «Զանգեզուր», «Լենինային արշավ», «Լենինային հեղեղ», «Արարատյան դաշտի աղջիկը» կինոնկարները հայ կինեմատոգրաֆի նվաճումներից են: Էրազմ Մելիք-Քարամյան լեյտենանտը ԽՍՀՄ և Հայկ. ԽՍՀ ժողովրդական արտիստ էր, Հայկ. ԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր:

Հակառակ Է. Մելիք-Քարամյանի կինոօպերատոր ԱՐՏԱՇԵՍ ՋԱԼԱԼՅԱՆԻ դեմքին միշտ ծաղկուն էր ժպիտը: ՀՄՊ-ի նրա մասնակցության մասին մեր հարցազրույցը տեղի ունեցավ նրա նկարահանած «Փառքի օղակներ» (նվիրված էր աշխարհահռչակ մարզիկ Հրանտ Շահինյանին) կինոֆիլմի պրեմիերայից հետո:

Բոլորս շնորհավորեցինք տաղանդավոր կինոօպերատորին: Էկրան բարձրանալուց հետո Ջալալյանի նկարահանած այս ֆիլմը պրոֆեսիոնալ օպերատորական աշխատանքի համար Փարիզում արժանացավ շքանշանների ու մեդալների: Արտաշես Սամվելի Ջալալյանը 1941—1945 թթ. ծառայել է 408-րդ Հայկական հրաձգային դիվիզիայում, որի սխրանքներին հաճախ անդրադարձել է իր հուշագրություններում դիվիզիայի քաղբաժնի պետ Սիմոն Սարգսյանը: Հյուսիսային Կովկասում հիտլերականների դեմ մղված անհավասար մարտում երիտասարդ հայ կինոօպերատորն ընկնում է ռմբակոծության և հրետանային կրակի տակ, ծանր վիրավորվում, ստանում կոնտուզիա: Հոսպիտալային երկարատև բուժումները թեև փրկեցին Արտաշեսի կյանքը, բայց նա մնաց «հավերժ» հաշմանդամ (2-րդ կարգի): Քսանհինգից ավելի գեղարվեստական ֆիլմերի բեմադրող օպերատոր, նախկին ավագ լեյտենանտը «Հայֆիլմ» կինոստուդիայում աշխատելիս հաճախ էր առիթ ունենում լինելու Հյուսիսային Կովկասի այն քաղաքներում ու շրջաններում, որոնց ազատագրման համար ինքն արյուն էր թափել: Եվ ինչպիսի՜ քաղցր և դառը հուշերով էր նա վերադառնում Նալչիկից ու Մոզդոկից, Մայկոպից ու Ստավրոպոլից:

— Ամուսինս ԽՄԿԿ շարքերն է ընդունվել 1943թ. ռազմաճակատում,—գրում է Նինա Ստեփանի Ջալալյանը և ավելացնում:— Հայրենիքը բարձր է գնահատել Արտյուշայի մարտական ծառայությունները. նրան արժանացրել է Հայրենական մեծ պատերազմի առաջին աստիճանի շքանշանը: Հյուսիսային Կովկասում հիտլերականների դեմ մղված անհավասար մարտում երիտասարդ հայ կինոօպերատորն ընկնում է ռմբակոծության և հրետանային կրակի տակ, ծանր վիրավորվում, ստանում կոնտուզիա: Հոսպիտալային երկարատև բուժումները թեև փրկեցին Արտաշեսի կյանքը, բայց նա մնաց «հավերժ» հաշմանդամ (2-րդ կարգի): Քսանհինգից ավելի գեղարվեստական ֆիլմերի բեմադրող օպերատոր, նախկին ավագ լեյտենանտը «Հայֆիլմ» կինոստուդիայում աշխատելիս հաճախ էր առիթ ունենում լինելու Հյուսիսային Կովկասի այն քաղաքներում ու շրջաններում, որոնց ազատագրման համար ինքն արյուն էր թափել: Եվ ինչպիսի՜ քաղցր և դառը հուշերով էր նա վերադառնում Նալչիկից ու Մոզդոկից, Մայկոպից ու Ստավրոպոլից:

Արտաշես Ջալալյան

Գրիգոր Մելիք-Ավագյան

— Ամուսինս ԽՄԿԿ շարքերն է ընդունվել 1943թ. ռազմաճակատում,—գրում է Նինա Ստեփանի Ջալալյանը և ավելացնում:— Հայրենիքը բարձր է գնահատել Արտյուշայի մարտական ծառայությունները. նրան արժանացրել է Հայրենական մեծ պատերազմի առաջին աստիճանի շքանշանի, Արիության համար, Մարտական ծառայության համար, Կովկասի պաշտպանության համար, ՀՄՊ-ում ունեցած բարեխիղճ աշխատանքի համար, Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար մեդալների: Նա շատ համեստ էր. միայն Մայիսի 9-ին էր կրում այդ բոլոր պարգևները: Հաճախ էինք խնդրում նրան լուսանկարվել՝ կուրծքը զարդարած, նա միայն երկար նայում էր ու քաղցր ժպտում: Նա միշտ իր հայրենիքի զինվորն էր:

Հայրենիքի, նրա ազատության և խաղաղության վաստակաշատ զինվորներից է նաև Հայկ. ԽՍՀ ժողովրդական արտիստ ԳՐԻԳՈՐ ԳԵՎՈՐԳԻ ՄԵԼԻՔ-ԱՎԱԳՅԱՆԸ: Ինձ տված իր ձեռագիր ինքնակենսագրականում նա գրել է. «1939 թ. ինձ՝ Մոսկվայի կոնսերվատորիայի ջութակի դասարանի ուսանողիս, զինակոչեցին Կարմիր բանակ՝ իսկական զինծառայության: Հեծելազորային գունդը, ուր ես ծառայեցի 1939 թ. սեպտեմբերի 19-ից և մասնակցեցի Արևմտյան Ուկրաինայի ազատագրմանը, գտնվում էր պետական հեռավոր սահմանային գոտում, Պերեմինա քաղաքի մոտ: Հունիսի 22-ին այստեղ ընկերներով նշում էինք ծննդյանս օրը: Առավոտյան ժամը 4 անց 15 րոպեին լսվեց ուժեղ պայթյուն, ռմբակոծվում էր շուրջ բոլորը, հրդեհ էր ու ծուխ...»: Պայքար և նահանջ: Արկի պայթյունից ուսանող հայորդին վիրավորվում է, ընկերներից շատերը մահանում են: Ապաքինվելուց հետո Գրիգորը զինվորագրվում է Դոնի կազակների գվարդիական 56-րդ կորպուսին: Մինչև 1945 թ. Մայիսի 9-ը այդ նույն կորպուսի զինվորների հետ նա հերոսաբար մարտընչում է ոսոխի դեմ և հաղթանակը դիմավորում ավստրո-չվեյցարական սահմանի վրա, Մինց քաղաքում: Գվարդիայի ավագ Գր. Մելիք-Ավագյանը պարգևատրվել է Կարմիր աստղի, ՀՄՊ-ի երկրորդ աստիճանի շքանշաններով և տասից ավելի մարտական մեդալներով: 1946 թ. բանակից զորացրվելուց հետո նա ընդունվում և 1951 թ. ավարտում է Մոսկվայում կինեմատոգրաֆի պետական ինստիտուտի (ВГИК) ռեժիսորական ֆակուլտետը և ընդմիշտ իր կյանքը կապում «Հայֆիլմ» կինոստուդիայի հետ: «Որտեղ գրողն ու դերասանը, կոմպոզիտորն ու նկարիչը՝ այնտեղ էլ մենք,— ցավով անցյալի մասին խոսելիս պատերազմական ցնցող դեպքեր է պատմում կինոռեժիսոր Գրիգոր Մելիք-Ավագյանը և հուշում:— Թող ոչ ոք չմոռանա Մեծ հայրենականում զոհված կինոօպերատորներ **Սուրեն Կաֆաֆյանին** և **Գ. Ասլանյանին:** Վերջինս զոհվեց Վիեննայի մոտ, աչքիս դեմ»:

Սուրեն Կաֆաֆյանի մասին Ա. Հովսեփյանը «Ավանգարդում» 1970 թ. մարտին հոդված է տպագրել: Մեծ հայրենականը ներկայացնող 300-ից ավելի փաստագրական ֆիլմեր են նկարահանել ռազմիկ օպերատորները: Իրոք այդ գործում մեծ է հայ կինոօպերատորներ **Գ. Ասլանյանի, Լ. Արզումանովի, Լ. Արիստակեսովի, Ի. Դիլդարյանի, Լ. Կաչուրյանի, Ն. Պետրոսովի, Ա. Պողոսովի, Գ. Սանամյանի, Ն. Սիմոն-**

յանի, **Գ. Խնկոյանի, Վ. Հայկազյանի, Օ. Մաղաքյանի, Ն. Մելիքովի** ստեղծագործական ներդրումը: Այդ մասին հետաքրքիր էջեր կան «Հայրենական մեծ պատերազմի կինոտարեգրությունը (1941—45)» գրքում, որը հրատարակվել է Մոսկվայում 1975-ին[1]: Միության սիրված կինոդերասաններից է **Գուրգեն Թոնունցը:** Նա ևս հին զինվոր է՝ պարգևատրված ռազմի շքանշաններով ու մեդալներով: Մեծ հայրենականի անկուն հերոսներից մեկի՝ կինոռեժիսոր **Թամարա Լիսիցյանի** մասին, որը հետախույզ է եղել, ընթերցողն այսօր էլ կարող է կարդալ Ռուբեն Շիրինյանի «Կրկնակի ծնվածը» ակնարկը «Երեկոյան Երևանում», ծանոթանալ նրա մարտական սխրանքներին:

— Մեծ հայրենականում քաջաբար են իրենց դրսևորել նաև «Մոսֆիլմի» հայ կինոգործիչները,— միջամտում է Գրիգորի և իմ հայցագրույցին ռեժիսոր Վիգեն Իսահակյանն ու հիշատակում Էյզենշտեյնի տաղանդաշատ հայ աշակերտի՝ ռեժիսոր **Քիշմիշովի** և խմբագիր **Կարեն Քաջազնունու** անունները:— Որքան գիտեմ, նրանք զոհվել են,— ավելացնում է Վարպետի որդին:

Քրքրելով անցյալի էջերը, ուսումնասիրելով փաստագրական արխիվներն ու ռազմաճակատային թղթակցությունները, այսօր հայ կինեմատոգրաֆիստները ևս կարող են հպարտությամբ ասել.

Մեր սուրը փառքով դրեցինք պատյան...

Հայրենական մեծ պատերազմի տարիներին, մի ուսին կինոխցիկը, մյուսին՝ հրացանը, թշնամու դեմ մարտնչում էր նաև նորնախիջևանցի կինոօպերատոր ԳԱՅ (ՀԱՅԿ) ԳՐԻԳՈՐԻ ԱՍԼԱՆՅԱՆԸ (ԱՍԼԱՆՈՎ): 1938 թ. Դոնի Ռոստովի գեղարվեստի ուսումնարանն ավարտելուց հետո Գայը (ծնվ. 1913 թ.) որպես օպերատորի ասիստենտ աշխատեց փաստագրական ֆիլմերի Ռոստովի ստուդիայում, իսկ երբ հարկ եղավ դուրս գալ թշնամու դեմ, նա չհապաղեց: 1941 թ. հոկտեմբերից նա արդեն որպես ռազմաճակատային կինոօպերատոր ընդգրկված էր Անդրկովկասյան ռազմաճակատի ռազմական իրադարձությունները նկարահանող խմբում, այնուհետև հրամանատարությունը նրան տեղափոխեց 4-րդ, հետո՝ 3-րդ Ուկրաինական ռազմաճակատ: Ասլանովի նկարահանած բազմաթիվ ռազմաճակատային կադրեր օգտագործվեցին «Սոյուզկինոխրոնիկայի» տարբեր թողարկումներում (կինոժուռնալներ), հարստացրեցին «Կոմերիտներ» և «Հաղթանակը հարավում» փաստագրական կինոնկարների տեսաշարերը՝ թշնամու հանդեպ սերմանելով ոխ, ատելություն և վրեժ: «Բուդապեշտ», «Վիեննա» և բազմաթիվ փաստագրական այլ ֆիլմեր, որոնք ծնունդ առան պատերազմի տարիներին, իրենց տարբեր հատվածներում հանդիսատեսին են ներկայանում որպես հայ կինոօպերատորի սխրանքի արգասիք:

— Պատերազմին ակտիվ մասնակցելու և պատերազմը խորհրդային կինեմատոգրաֆի էջերում անմահացնելու համար պարգևատրվել եմ Կարմիր աստղի շքանշանով, Արիության համար, ՀՄՊ-ում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար և բազմաթիվ այլ մեդալներով: Հայրենական մեծ պատերազմից հետո,— շարունակելով մեր զրույցը պատմում էր Գայ Գրիգորիչը,— վերադարձել եմ Ռոստով, աշխատել Կինոխրոնիկայում, հետո տեղափոխվել եմ Մոսկվա, աշխատանքս շարունակել փաստագրական ֆիլմերի կենտրոնական ստուդիայում (ՑՍԴՖ):

Կինոմշակույթի վաստակավոր գործիչ, ՀՄՊ-ի վետերան, կինոօպերատոր, լեյտենանտ Գայ Գրիգորի Ասլանովը վախճանվեց Մոսկվայում 1974 թ.:

«Նրանց զենքը կինոխցիկն է» (Մոսկվա, 1984 թ.) գրքի տարբեր էջերում ընթերցողը կհանդիպի ոչ միայն Ասլանովի, այլև կինոռեժիսոր ԼԵՎՈՆ ՆԻԿՈՂՈՍԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ (Լեոն Նիկոլայի Սահակով) անուններին: Լ. Սահակովը ևս անցել է ռազմի մահալի ճանապարհներով, ընկել ոմբակոծությունների և գնդակոծությունների տակ, բայց երբեք չի բաժանվել կինոխցիկից և կինոօպերատորներից: Նրա «Խելմ-Լյուբլին», «Բուդապեշտ», «Բեռլին» ֆիլմերը (նկարահանման ղեկավար) վկայում են, թե քանի-քանի անգամ է ռեժիսոր հայորդին իր կյանքը վտանգի մատնել, որպեսզի անմահացնի մարտական թե՛ դաժան, թե՛ պատվաբեր տեսարաններ, հավերժացնի (որպես մեղադրանք) թշնամու վայրագությունները՝ անմեղ ու անզեն մարդկանց հանդեպ: Մինչև ՀՄՊ Լեոն Սահակյանը (ծնվ. 1909 թ.) սովորել է Մոսկվայում, ավարտել (1935 թ.) կինեմատոգրաֆիայի պետական ինստիտուտը (ՎԳԻԿ): 1941 թվականին նա ևս, ինչպես հազարավոր արվեստագետներ, զինվորական համազգեստ հագավ: Բանակի ավիացիոն մասի քաղաքացի հրահանգիչ էր, իսկ 1944 թ. արդեն որպես պետ ղեկավարում էր փաստագրական ֆիլմերի կենտրոնական ստուդիայի (ՑՍԴՖ) ռազմաճակատային կինոխմբերի գործունեությունը: Պատերազմի հաղթական ավարտից հետո Լեոն Սահակյանը նորից լծվեց իր սիրած զբաղմունքին. «Մոսֆիլմ» կինոստուդիայում էր աշխատում: Նրա կրծքին միշտ փայլում էին մարտական շքանշաններն ու մեդալները:

— Դժվար թե հայտնաբերեք Մեծ հայրենականը պատկերող որևէ կինոնկարահանող խումբ, որտեղ հայ կինոգործիչ ընդգրկված չլինի,— մեր մի հանդիպման ժամանակ ծովակալ, գրող և ակադեմիկոս Հովհ. Իսակովի ծննդյան 70-ամյակի օրը Մոսկվայում, Գրողների տանը ասում է ԽՍՀՄ ժող. արտիստ, հանրահռչակ կինոռեժիսոր **Ռոման Կարմենը** և տալիս երկու հայանուն՝ Գ. Խնկոյան և Պ. Կաչուրյան:— **Գ. Խնկոյանը** Ա. Լևիտանի հետ 1942 թ., մահն արհամարհելով, բազմաթիվ կադրեր, տեսաշարեր նկարեց, «Մարտ Կովկասի համար» փաստագրական կինոնկարի համար: Այդ մասին խորհուրդ կտամ կարդաք շուտով լույս տեսնող մի գիրք՝ «Ռազմաճակատային օպերատորների աշխատանքը մարտական ռեպորտաժների վրա»: Ես նրա ձեռագրին եմ ծանոթ, այն միջնորդել եմ տպագրության: Ավելին ասեմ,— շարունակում է Ռոման Լազարևիչը,— Գ. Խնկոյանը մի խումբ օպերատորների հետ 1944 թ. մասնակցել է «Սոյուզկինոխրոնիկա» ժուռնալի № 22—24-ի ստեղծմանը, «На крымской земле» կինոժուռնալը նա է նկարահանել: Ի պատիվ ձեր հայրենակցի հիշատակենք, որ 1946 թ. փետրվարին փաստագրական այդ ֆիլմը ցուցադրվեց Նյուրնբերգյան դատարանում և որպես մեղադրանք այն մեծ տպավորություն գործեց բոլորի վրա: Այնտեղ էր նաև ձեր մեծ հայրենակիցը՝ Հովսեփ Օրբելին: Նա փայլուն ճառով մեղադրեց հիտլերյան վայրագներին, Էրմիտաժը ոմբակոծողներին...

Մեծ հայրենականին նվիրված կինոտարեգրություններում հաճախ են հիշվում Ի. Դիլդարյանի, Արտ. Զալալյանի, Ն. Սիմոնյանի, Գ. Սանամյանի և բազմաթիվ այլ կինոօպերատոր հայորդիների անունները, իսկ **Պ. Կաչուրյանի** անունը քաջ հայտնի է հատկապես Բելոռուսիայում:

— Այո՛, ես անձամբ հանդիպել եմ և ծանոթ եմ Կաչուրյանին,— Նիլ Գիլևիչի և ինձ հետ զրուցելիս ասում է բանաստեղծ Մաքսիմ Տանկը և ավելացնում:— Պ. Կաչուրյանն է նկարահանել (ռեժ.՝ Մ. Սադկովիչ) 34 այլ օպերատորների հետ «Խորհրդային Բելոռուսիայի ազատագրումը» յոթմասանոց փաստագրական կինոֆիլմը 1944 թվականին: Նա շատ մտերիմ էր Լ. Խմարայի հետ, վերջինս կարդում էր տեքստը...

Խոսելով Մեծ հայրենականին մասնակցած հայ կինոգործիչների մասին, այսօր մենք պարտավոր ենք հիշել նաև նրանց՝ ռուս, ուկրաինացի, բելոռուս, վրացի և եղբայրական մյուս ազգերի կինոմշակութային գործիչներին, ովքեր, թողած նկարահանման խաղաղ տաղավարները, ռազմադաշտ մեկնեցին որպես զինվոր: Մի՞թե կինովավերագրող վետերանները կմոռանան Վիեննայում, պաղատենտի շենքի դիմացի այգում, Ռինգշտրասսե փողոցի վրա (այսօր այնտեղ մարմարե հուշատախտակ կա) թշնամու գնդակից խոցված ինժեներ-կինոօպերատոր, կապիտան **Ս. Ստոյանովսկուն:** Հապա **Բ. Բալուխտինը, Ն. Բիկովը, Ա. Բիստրովը, Բ. Վակարը, Վ. Վիսոցկին, Մ. Կապկինը, Վ. Կիլոսանիձեն, Ի. Թաղիև-Զադեն, Ա. Սոլոդկովը...** Մոսկվայում, «Իսկուսստվո» հրատարակչությունում երկար տևեց մեր հարցազրույցը արվեստագետներ Վ. Ի. Ժիլտովի և Ա. Ա. Լեբեդևի հետ: Նրանք տպագրության էին ներկայացրել «Կինոխցիկը— ահա նրանց զենքը» փաստագրական գիրքը: Գրքի կազմողներին ես խնդրեցի, որ նրանք ինձ տեղեկացնեն, թե արդյոք մե՞ծ է ՀՄՊ-ում զոհված կինոգործիչների թիվը: Վերոհիշյալ ցանկը կոլեգաներս համալրեցին նոր անուններով: Ահա նրանք.

Մ. Կոյֆման	**Ն. Սամգին**
Պ. Լամպրեխտ	**Յա. Սլավին**
Յա. Լեյբով	**Ա. Սոլոդկով**
Ի. Մալով	**Վ. Սումկին**
Վ. Մուրոմցև	**Մ. Սուխովա**
Ա. Նիկոլաևիչ	**Վ. Սուշչինսկիյ**
Ն. Նոմոֆիլով	**Ա. Շեր**
Ֆ. Պեչոզ	**Բ. Շեր**
Ն. Պիսարև	**Ա. Շիլո**
Բ. Պումպյանսկի	**Դ. Էդելսոն**
Գ. Գոդնիչենկո	**Ա. Էլբերտ...**

[1] Տե՛ս նաև Կ. Արուտյունովի «Ոչ ոք չի մոռացվել» հոդվածը «Կոմունիստ» թերթում, Ե., 1985 թ., 20 փետրվարի:

Անշուշտ սա չէ լրիվ ցանկը զոհված խորհրդային կինոգործիչների: Եվ եթե նրանք զոհվեցին, ապա եղան շատերը (և շատ շատերը), որ տուն վերադարձան ձեռքից, ոտքից, գլխից, կրծքից, աչքից... վիրավոր ու հաշմանդամ: Զառանձնացնենք նրանց, միայն հիշեք, որ Գր. Բալասանյանի, Գ. Սանամյանի, Իվ. Դիլդարյանի, Արտ. Ջալալյանի, Ա. Արիստակեսովի և հայորդի բազմաթիվ այլ կինոօպերատորների հետ Հյուսիս-կովկասյան, Հարավային, Ուկրաինական, Բելոռուսական, Մերձբալթյան և այլ ռազմաճակատներում գերմանական ֆաշիզմի բարբարոսությունները և խորհրդային քաջարի զինվորի կամքն ու նվիրվածությունը, սիրանքն ու հերոսությունն են հավերժացրել այնպիսի անվեհեր կինովավերագրողներ, ինչպիսիք են **Նիկոլայ Վեխիրևը, Գեորգի Եպիֆանովը, Ալեքսեյ Լեբեդևը, Նիկոլայ Լիտկինը, Վլադիսլավ Միկոշան, Եվգենի Մուխինը, Բորիս Նեբիլիցկին, Վալենտին Օրլյանսկինը, Դմիտրի Ռիմարևը...** Ցանկը երկարում է, բայց ի՞նչ իրավունքով չհիշել Մեծ հայրենականի մարտական շքանշաններով և մեդալներով պարգևատրված՝ կինոմշակույթի երախտավորներ **Ալեքսեյ Սեմինին, Իվան Սոկոլնիկովին, Ավենիր Սոֆինին,** կինոխցիկը իր արյունով ներկած, զոհված տաղանդաշատ կինոօպերատոր **Նիկոլայ Սամգինին:**

— Նրանցից շատերը դեռ կինոինստիտուտի՝ ՎԳԻԿ-ի, վերջին կուրսի ուսանողներ էին, բայց ստիպված եղան ժամանակից շուտ փաստագրական ֆիլմ նկարահանել: Նրանք ոչ միայն ռազմիկ էին և կինոօպերատոր, այլև սցենարիստ, խմբագիր և հաղորդավար,— հուշում է մեր զրույցի ժամանակ Սոցիալիստական աշխատանքի հերոս Ռոման Կարմենը և իմ խնդրանքով իր մասին տեղեկացնում.— Ես 1941 թ. հունիսի 25-ին կինոօպերատորներ Բորիս Շերի, Նիկոլայ Լիտկինի և ադմինիստրատոր Ալեքսանդր Եշուրինի հետ Մոսկվայի երկաթուղու Բելոռուսական կայարանից մեկնեցի ուղիղ ռազմաճակատ: Ինձ ուղեկցողը, ինձ համար լացողը աչքիս դեմ կինս էր, Նինան: Նա ֆիզիոլոգիական վիճակում էր: Ես նրանից հուզմունքով բաժանվեցի, մտատանջությամբ, աննկարագրելի ցավով, ուրիշ ելք չունեի: Զգնալ չէր լինի: 1942—1943 թվականներին ծառայել եմ, հրաշքով մահից փրկվել Արևմտյան ռազմաճակատում, իսկ 1944 թ. իմ ռազմի ուղին եղել է 2-րդ Ուկրաինական ռազմաճակատի անցած մարտական ճանապարհը:

Այնուհետև կինոօպերատոր, ռեժիսոր, սցենարիստ և գրականագետ Ռոման Լազարևիչը պատմում է այն անհելի տառապանքների մասին, որ ինքը կրել է. «Գերմանաֆաշիստական զորքերի ջախջախումը Մոսկվայի տակ», «Լենինգրադը պայքարի մեջ», «Օրյոլի ճակատամարտը», «Վիսլայից մինչև Օդեր», «Բեռլին» և բազմաթիվ այլ փաստագրական ֆիլմեր ստեղծելիս:

Սաբիր Ռիզան

«Իսկ հայ արվեստագետները, կինոտեսաբաններն ու տեխնիկական անձնակազմը մի՞թե չեն մասնակցել Մեծ հայրենականին»,— կհարցնի ընթերցողը:

Կռվել են բոլորը...

1978 թ. դեկտեմբերի 20-ին Երևանում, Կինոյի տանը, բեմում, ամբիոնի մոտ սրտի ուժեղ կաթվածից հանկարծամահ եղավ ամենուր սիրված ու ճանաչված պրոֆեսիոնալ կինոգետ, արվեստագիտության դոկտոր (1969 թ.) ՍԱԲԻՐ ԱԼԵՔՊԵՐԻ ՌԻԶԱԵՎԸ (ծնվել է 1924 թ. ապրիլի 17-ին Երևանում): Խոսել խորհրդահայ կինոգիտության մասին և չհիշել Երևանի Պուշկինի անվան դպրոցի սան, Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի շրջանավարտ (1951 թ.), «Հայֆիլմ» կինոստուդիայի, հետագայում Հայկ. ԽՍՀ կինեմատոգրաֆիայի պետական կոմիտեի գլխավոր խմբագիր Սաբիր Ռիզաևին՝ Մեծ հայրենականի նախկին զինվորին և հրամանատարին, ոչ միայն ծանր մեղք է, այլև՝ ուրացություն: Ս. Ռիզաևը ոչ միայն լուռ և խորաթափանց, շիտակ և սկզբունքային թատերագետ էր, կինոարվեստաբան, այլև հմուտ ժուռնալիստ: Նա մինչ Լենինգրադի թատրոնի, երաժշտության և կինեմատոգրաֆիայի գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրան ընդունվելը Երևանում ռուսերեն լույս տեսնող «Կոմունիստ» թերթում էր աշխատել: Բարձրագույն կրթություն ստանալուն զուգընթաց· որպես պատասխանատու քարտուղար նա պաշտոնավարեց Հայկ. ԽՍՀ թատերական ընկերությունում (այժմ թատերական գործիչների միություն): Այսօր էլ երբ թերթում ենք վաղամեռիկ մեր ընկերոջ «Հրաչյա Ներսիսյան», «Վարդան Ամեմյան», «Թատրոն», «Թատերայնություն» գրքերը, ակամայից մեր դեմ է կանգնում մշտաժպիտ, բարեհամբույր և նրբաճաշակ Սաբիրը: Թվում է՝ նորից հրավիրում է Տերյան փողոցի վրա գտնվող իր բնակարանը («Հայֆիլմի» հարևանությամբ), զրույց բացում, սառը տրամաբանությամբ բանավիճում հայ թատրոնի, հայ կինոյի, հայ բեմի հոգսաշատ հարցերի շուրջ, երբեք չակնարկելով, որ ինքը Մոսկվայում միջնակարգն ավարտելուց հետո, հազարավոր երիտասարդների հետ 1942-ին կամավոր զինվորի համազգեստ է հագել և Սարատովի զինվորական ուսումնարանից ուղիղ մեկնել կրակային առաջին գիծ: Մոսկվայից մինչև Ռումինիա ձգվեց ապագա արվեստագետի ռազմի ճանապարհը: Հայաստանի ԳԱ արվեստի ինստիտուտի աշխատողները քաջ գիտեն, որ իրենց սիրված գործընկերը (մի ժամանակ ինստիտուտի թատրոնի և կինոյի սեկտորի վարիչ, հետո գիտական գծով փոխտնօրեն) Հայրենական մեծ պատերազմում գերմանական ֆաշիզմի դեմ ցուցաբերած անվեհեր սխրանքի համար արժանացել է ՀՄՊ-ի 2-րդ աստիճանի շքանշանի և հոբելյանական մեդալների: Ռազմադաշտում Ս. Ռիզաևը եղել է դասակի, վաշտի, հետո գումարտակի հրամանատար: Նրա զինվորական կոչումը ավագ լեյտենանտ էր:

Հետադարձ հայացք գցելով խորհրդային կինեմատոգրաֆի անցած ուղուն, ընթերցողը կտեսնի, որ այդ ողջ ընթացքում կինոարվեստը ևս որպես զենք մարտնչել է գերմանա-ֆաշիստական բանակների դեմ և մեր Մեծ հաղթանակին բերել իր համեստ ներդրումը:

ԶՈՀՎԱԾ ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆՆԵՐ, ՌԵԺԻՍՈՐՆԵՐ ԵՎ ԿԻՆՈԳՈՐԾԻՉՆԵՐ

ՎԵՑԸ ՄԻ ՏԱՆԻՑ

ԱՐՏԱՎԱԶԴ
ՎԱՐԱԳԻ
ԱԲԳԱՐՅԱՆ
(1918—1942)

Լենինգրադում հյուր ենք: Տանտիրուհին ոչ թանկարժեք գեղանկարներ է հավաքում, ոչ նամականիշեր: Նա ոչ հին փողի և ոչ էլ հին գրքերի սիրահար է: Ընդամենը թերթերից կըտրում է և պահում հերոս մայրերի ցուցակը և ցուցակը բոլոր այն կանանց ու մայրերի, ովքեր Մեծ հայրենականին մեծ թվով որդիներ են ուղարկել ռազմաճակատ:

Թամարա Աղավելովայի «Հերոս մայրերի» մատյանում ծանոթանում ենք նաև Հոռոմսիմ (Հռիփսիմե) Հովակի Աբգարյանին: Գեղջուկ այս կնոջը լավ ճանաչելու համար լենինգրադցի հայ մամիկը մեզ է տրամադրում «Իզվեստիա» թերթի 1962 թ. փետրվարի 28-ի համարում տպագրված «Մայրը» նամակ-թղթակցությունը: Կարդում եմ և զարմանում. այդ ինչպես է, որ գրեթե ամիսը մեկ ես և Գևորգ Աբգարյանը հանդիպում ենք, և ինքը ոչ մի խոսք չի ասում ոչ իր ռազմի ճանապարհի և ոչ էլ իր հինգ եղբայրների մասին, նրանց մասին, ովքեր մի օր մնաս բարով են ասել Հոռոմ գյուղին, ողջագուրվել Արագածի լուսաբացի հետ և զինվորագրվել՝ պաշտպանելու երկիր հայրենին:

«Վեց անգամ մայրս կայարան եկավ մեզ ճանապարհելու, բայց դիմավորեց միայն երեքիս...»,— կարդում ենք «Իզվեստիայի» նույն հոդվածում: Զոհված երեք եղբայրների ով լինելու մասին թերթից հազիվ կռահում ենք, որ առաջինը եղել է համալսարանի դասախոս, երկրորդը՝ արտիստ, երրորդը՝ մեքենավար: Արտի՞ստ: Չլինի թե՞ Խաչիկ Դաշտենցի պատմած Արտո Աբգարյանն է, հոռոմցի Վարագի տղան: Լենինգրադյան խորհրդածություններն ու զոհված դերասանի մասին նյութեր հայթայթելու ցանկությունը ինձ տանում են Արթիկի շրջանի Հոռոմ գյուղ: Լեռնային խաղաղ երեկոն ուրիշ հմայք և տեսք է տվել Հոռոմի բարձունքին խոյացած տուֆակերտ հուշարձանին: Տեղական վարդագույն տուֆից արթիկցի հանրահայտ քարագործը, ի նշան անսահման սիրո և երախտիքի, հուշարձանին հավերժացրել է, ի թիվս այլոց, Աբգարյան եղբայրների անունները:

Աբգարյան եղբայրներից գյուղատնտես Խաչիկի տանն ենք. «Ամբողջ պատերազմն անցավ, ողջ մնացի և հանկարծ պատերազմի ավարտից մի քանի օր առաջ՝ Մայիսի 1-ին, Հունգարիայում վիրավորվեցի: Ինչպես տեսնում եք՝ աջ ոտքս չկա: Թող եղբայրներս էլ տուն գային, իրենց ընտանիքներին տեր կանգնեին, թեկուզ քայլեին ինձ պես՝ հենակներով,— նզովելով պատերազմը՝ նախկին ռազմաճակատայինը ներկայացնում է յուրայիններին,— Վաչագանը հին լրագրող է, ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ, աշխատել է «Լեռնագործի» և «Երեկոյան Երևանի» խմբագրություններում, այժմ անցել է թոշակի: Նա էլ պատերազմի մասնակից է...»:

Ու մինչ Խաչիկը կներկայացներ եղբորը, մեր

զրույցին միջամտում է վաստակաշատ ժուռնալիստն ու ավելացնում. «1942-ին կռվում էի Կովկասյան ճակատում: Շատ խնդրեցի, որ ինձ էլ Կերչ ուղարկեն, Արմոյիս և Արտոյիս հետ թշնամու դեմ կռվելու, թեկուզ նրանց հետ զոհվելու, բայց լսողն ո՞վ էր: Թարս բան է. ասված մեր եղբայրներից լավերին ջոկեց, սպանեց: Չէ՛, ասված որ Ասված է, էլի ջոկողություն է անում»,— նայելով զոհված եղբոր ուսուցիչ որդուն՝ Նորիկին, հուզված ասում է Վաչագան Աբգարյանն ու ձեռքով փաղաքշում զոհված եղբոր թոռներին:

Միջօրեի արևը զոհվածների կարմրաբար հուշարձան-կոթողը ջերմացնելու ճիգեր է թափում: Մայիսի 9-ին մարդիկ ծաղկեփնջերով և ծաղկեպսակներով զարդարում են հուշարձանը, կարծես իրենց հարազատների կարոտն են առնում նրանից: 263-րդ հրաձգային դիվիզիայի ականանետային վաշտի հրամանատարի տեղակալ Գևորգ Աբգարյանի հետ ճեմում ենք այստեղ: Զրուցակիցս պատմում է, թե ինչպես է 1942-ի սեպտեմբերին «Կրասնի Կավկազ» հածանավով 45-րդ բանակի 408-րդ դիվիզիայի 672-րդ գնդի հետ իջել Գելենջիկի սևծովյան ափը և նավաստիներին միացած կռվել թշնամու դեմ: Հոկտեմբերին ոտքից վիրավորվել է և գերի վերցվել գերմանացիների կողմից, մինչև 1945-ի ապրիլը համակենտրոնացման տարբեր ճամբարներում նորից շարունակել է լեգալ պայքար մղել հիտլերյան բարբարոսների դեմ:

— Ապրիլին դաշնակից պետությունների բանակները ազատագրեցին նաև մեր ճամբարը, ինձ բախտ վիճակվեց վերադառնալ մերոնց մոտ և ծառայել 93-րդ դիվիզիայում... Է՛, գլխովս անցածը որ լրիվ պատմեմ, մազերդ կճերմակեն,— կարճում է Գևորգն իր խոսքն ու ինձ առաջնորդում եղբոր տուն:

— Երեքդ, որ ողջ եք, ձեր սասին պատմեցիք: Շնորհակալ եմ: Զոհված ձեր եղբայրների սասին, հատկապես Արտոյի մասին, տրվյալներ ո՞ւմից ստանամ,— կատակախառն հարցրս Աբգարյան եղբայրներն ընդունում են բարեկամաբար, և ես սկսում եմ գրառումներս:

Արամայիս Աբգարյանը ծնվել է 1906-ին Հոռոմում: Լենինականի բանֆակն ու Երևանի պետհամալսարանի պատմության ֆակուլտետն ավարտելուց հետո որպես ուսուցիչ աշխատել է Էջմիածնի շրջանում: 1938—41 թթ. սովորել է ասպիրանտուրայում, պաշտպանել թեկնածուականը: Մարքսիզմ-լենինիզմի հիմունքների դասախոսը 1941-ի դեկտեմբերից էլ լսարան չի մտել: Բաքվի ռազմական ուսումնարանն ավարտելուց հետո մեկնել է կրակի առաջին գիծ՝ Ղրիմ: 1942-ի մայիսին Կերչում ավագ քաղղեկ Աբգարյանը իր ընկերների հետ ընկել է թշնամու շրջափակման մեջ և զոհվել հերոսի մահով:

Հայկ. ԽՍՀ ժողովրդական արտիստ Ժան Էլոյանը (կենտրոնում) **Արտավազդ** (ձախից) և **Գևորգ Աբգարյանների** հետ. Լենինական, 1936 թ.

Այս նկարի բնագրի հետևում Ա. Աբգարյանը իր ձեռքով գրել է. **«Արտավազդ Աբգարյան: Նկարվեցի Արթիկում. 1937 թ. հունիսի 6-ին, դերի ժամանակ»:** Դժբախտաբար դերը չի նշված:

Նույն թվականի նույն ամսին, նույն քաղաքում՝ (1942-ի մայիսին Կերչում) թշնամու դեմ արիաբար մարտնչելիս կյանքին հրաժեշտ տվեց նաև Արամայիսի կրտսեր եղբայրը՝ դերասան **Արտավազդ Աբգարյանը:** Մի շաբաթվա ընթացքում մայրն ստացավ երկու սև թուղթ: Իսկ Աշոտի՝ մեքենավար որդու մասին, փոստատարը ոչինչ չասաց: Աշոտը պատերազմի բովով անցավ և վերադարձավ գյուղ՝ վիրավոր, հյուծված և առողջությունը քայքայված, տակավին երիտասարդ բաժանվեց կյանքից:

— Ի՞նչ երեխաներ ունեք,— Նորիկին ուղղած հարցիս զոհված դերասանի որդին պատասխանում է.

— Ցաված տեղս կզարկես. երեք աղջիկ: Մի փափագ ունեմ՝ տղա ունենամ, հորս անունը վրեն դնեմ...

Նորիկի երազանքը իրականացել է. նրա փոքրիկն այսօր կրում է պապիկի անուն-ազգանունը՝ Արտավազդ Աբգարյան: Տեսնելով, որ Նորիկը հուզվում է, հորը չի հիշում և մեզ ոչինչ չի կարող հաղորդել, ստույգ տեղեկությունների համար զրույցը վարում եմ զոհված դերասանի եղբոր՝ բանասիրական գիտությունների դոկտոր Գևորգ Աբգարյանի հետ: Նա թե. «Արտոն ծնվել է 1918-ի սեպտեմբերի 12-ին: 1926—1938 թթ. սովորել է մեր գյուղի դպրոցում՝ ակնհայտ ընդունակություններ ցուցաբերելով երգից, նկարչությունից և սամունքից: Արտոյի ամենասիրած ուսուցիչը եղել է 17-ամյա Խաչիկ Դաշտենցը, որը և խրախուսել է նրան ընդունվելու դերասանական ստուդիա: 1936-ին Արտոն Լենինականի պետթատրոնին կից դերասանական ստուդիայում դասեր էր առնում Վ. Աճեմյանից, Ց. Ամերիկյանից, Լ. Զոհրաբյանից և Ա. Արմենյանից: Ցոլակ Ամերիկյանը նրան շատ էր հավանում և ավագ եղբորս՝ Արամայիսին, հանդիպելիս միշտ հիշեցնում էր. «Տղին տիրություն արեք, կարգին դերասան կդառնա»: Ժան Էլոյանի հետ մոտ էինք:— Պատմելիս Գևորգը ցույց է տալիս մի լուսանկար, որտեղ կենտրոնում Ժ. Էլոյանն է, աջ և ձախ կողմերում՝ ինքն ու Արտոն և հանգիստ շարունակում:— 1937 թ. Արտոն Լենինականից եկավ Արթիկ: Թատրոնի տնօրեն և ռեժիսոր Սիանոս Հովհաննիսյանը սրտաբաց ընդունեց նրան[1]: Արթիկի պետական թատրոնը Սունդուկյանի մահվան 25-ամյակի առթիվ պատրաստվում էր Լենինականում բեմադրել «Քանդած օջախը»: Եղբայրս այստեղ ստանձնել էր երկու փոքր դեր՝ Միխոյի և Ծառայի: Էսօրվա պես հիշում եմ. խաղից հետո եղբորս դեբյուտը շնորհավորելու համար այդ նույն պիեսի դերակատարներ Ս. Բաղալյանի, Գ. Ցաղջյանի, թատրոնի ռեժ. Ս. Հովհաննիսյանի և նկարիչ Ա. Գասպարյանի հետ «մի լավ կոնձեցինք: Այստեղ էր, որ Գուրգեն Հակոբյանը (Գիժ մոզի) բաժակը բարձրացրեց և ասաց.

— Արտո՛ ջան, լավ խաղացիր. կեցցե՛ս, բայց քիչ ես խմում...

Հիշում եմ, Արթիկի պետթատրոնի այս գաստրոլի մասին Լենինականի «Բանվորում» 1937-ի օգոստոսին (№ 176) դրական գրախոսական տպվեց, որն իր հերթին ոգևորել էր Արտոյին»:

Այնուհետև Աբգարյան եղբայրները հայտնում են, որ իրենց եղբայրը դերասաններ Ա. Խաչատրյանի, Ա. Ղազարյանի, Ա. Թանգյանի, Ս. Գասպարյանի, Ն. Աբալյանի, Պ. Հարությունյանի, Մ. Հովհաննիսյանի, Գ. Պետրոսյանի, Գ. Ցաղջյանի, Ս. Խաչատրյանի և Ս. Յասամանյանի հետ Արթիկի պետական թատրոնի դահլիճում (և շրջագայությունների ժամանակ) Բ. Միրաքյանի **«Իլլիչի լամպերը»** պիեսում խաղացել է Հրանտի դերը՝ արժանանալով ծափերի: «Խորհրդային դպրոցի» խմբագրությունում ենք: Թերթի արտահայտիչին թղթակից, նախկին ռեժիսոր Սիանոս Հովհաննիսյանը Արտավազդ Աբգարյանին բնորոշում է որպես հմտեստ, խելոք, շնորհաշատ և մեծ ապագա խոստացող արտիստ, ավելացնելով. «Անբասիր մարդ էր: Տասնինը տարեկան էր, երբ եկավ թատրոն: Բոլորը նրան սիրահարվեցին: Դերասանուհիներից մեկը (անունը չեմ տա) Արտոյին առաջարկ էր արել. «Թե հետս ամուսնանաս, հետդ կխաղամ, չէ՝ չէ՛...»: Լենինականում, չեմ հիշում պիեսի անունը, նա և Գուրգեն Հակոբյանը նույն դերն էին կատարում. ռուս գեներալի դերը: Այնքան բնական և ազդեցիկ խաղաց Արտոն, որ նրանից հետո բոլորս նրան «գեներալ» էինք կոչում: Եվ եթե չզոհվեր, երևի գեներալ դառնար: Զմոռանամ ասել, որ Արտոն իմ բեմադրած **«Նամուսում»**, **«Պաղտասար աղբարում»**, **«Հայրենիքում»** հանդես է եկել տարբեր դերակատարումներով: Աֆիշներն ունեմ, կարող եմ ցույց տալ: Ա՜յ, նայե՛ք այս լուսանկարին, բերել եմ ձեզ ցույց տալու,— շարունակում է զրուցակիցս:— Այս նկարում Արտոն ռուս գեներալի դերում է, իսկ այն մյուսո՞ւմ (լայնեզր գլխարկով և ակնոցով)— չեմ հիշում. ծերացել եմ, դա էլ 40 տարի առաջվա դեպք է... ո՞նց հիշեմ...»:

Արտավազդ Աբգարյանի դերասանական դիմանկարը կմնա անավարտ, եթե չհիշատակենք Դիլիջանի պետթատրոնում (ռեժիսոր՝ այժմ Հայկ. ԽՍՀ ժող արտիստ Հովհաննես Կարապետյան) նրա խաղացած դերերը: Զաբարլու «1905 թ.» պիեսում երիտասարդ դերասանը հանդես է եկել գյուղացի Ալավերդու դերում (գրախոսականներից մեկում Աբգարյանի խաղը դրվատվել է), Արաքսմանյանի «Ատելությունում» նա Վռամ էր, Հացագործյան-Խուդավերդյանի «Խնդության սրինգում»՝ Պատվական Բարեղամիչ, Ծերեթելու «Կինտոյում»՝ կինտոներից մեկը[1]:

Երկրորդ համաշխարհայինի առաջին տարիներից սկսած Արտ. Աբգարյանը որպես 45-րդ դիվիզիայի կապավոր մասնակցել է ֆիննական պատերազմին, հետո ծառայել է Արևմտյան Ուկրաինայում, Ռովնոյում, Լուցկում: Քանի՜-քանի՜ անքուն գիշերներ է անցկացրել Բուգ գետի ափին, որպեսզի իրագործի իրեն տրված զինվորական հանձնարարությունը: Այդ մասին հետաքրքիր վավերագիր է զոհված մարտիկի մեզ հասած փոքրիկ օրագիրը, որից կարելի է տեղեկանալ, թե նա ինչպիսի սիրով, նվիրումով և ուշադրությամբ էր լցված դեպի ուկրաինացի և բելոռուս ժողովուրդները: Աբգարյանը խիզախորեն է իրեն դրսևորել 1940 թ. փետրվարին Մաներհայմի գծի ճեղքման ժամանակ: Որպես կապավոր ստորգետնյա կառույցների փլատակների մեջ ընկնելով, նա հրաշքով է փրկվել մահից: 1940-ի մայիսին, հերթական զինծառայությունից զորացրվելուց հետո, բեմի կարոտ հայ դերասանը նորից աշխատանքի անցավ Դիլիջանի թատրոնում... Ամուսնացավ Անատոլիայի հետ: Դեռ նոր էր բոլորել նրա խաղաղ և ստեղծագործ կյանքի մեկ տարին, երբ նորից հագավ

---

[1] Սիանոս Հովհաննիսյանն այժմ ապրում է Աշտարակ քաղաքում:

[1] Դիլիջանի թատրոնում Աբգարյանի խաղացած դերերի մասին տվյալները վերցված են Գ. Աբգարյանի ձեռագրից, որը պահվում է ինձ մոտ (Ս. Գ.):

Արտավազդ Աբգարյանը մեզ անհայտ դերում: Լուսանկարը պահպանվել է եղբոր՝ Մատենադարանի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր Գևորգ Աբգարյանի մոտ:

գինվորի շինելն ու հրաժեշտից առաջ բեմից ամոնքեց ազատամարտի եղիշեական պատգամը.

— Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից և ոչ էլ մահկանացուների ահռելի սրի դեմ թիկունքներս դարձնենք, այլ ոչնչացնենք նրանց զորությունը, որպեսզի բարձրանա ճշմարտության կողմը, իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ սահով ավարտելու այս պատերազմում, մահն ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չհանենք...

Հավատարիմ մամիկոնյանական սրբազան իր այս ուխտին, զոհվեց քաջասիրտ հայորդին՝ չհասցնելով Դիլիջանի թատրոնում նախապատրաստած իր նոր դերերին կյանք տալ: Այս թատրոնից ռազմաճակատ մեկնեցին ութ դերասան ևս, նրանցից և ոչ մեկին բախտ չվիճակվեց նորից բեմ բարձրանալ...

Օրը կամաց-կամաց իրիկնանում է: Հրաժեշտ ենք տալիս հոռոմցիներին, մեկ անգամ ևս խոնարհվում զոհվածներին նվիրված հուշակոթողի առջև, վերընթերցում Արամայիս և Արտավազդ Աբգարյանների անունները ու բռնում Երևանի ճանապարհը, այն Երևանի, որտեղ 1941-ին անցկացվող թատրոնների միջշրջանային ստուգատեսին մասնակցելը երազ մնաց Հոռոմսիմ մայրիկի դերասան որդու համար: Պատերազմին մասնակցեցին վեցը, վերադարձան երեքը: «Իզվեստիայի» տողերն եմ վերհիշել և մտոք շնորհակալություն եմ հայտնում բյոկադա տեսած լենինգրադցի Թամարա Աղավելովային՝ մտաբերելով նրա բանաստեղծ որդու՝ Օլեգ Շևտինկոյի խոսքերը.

Սակայն ո՞վ ասաց,
Թե հուշարձան չէ—
Այս պարզ երկինքը,
Այս ծառը, ժայռը
Այս բլուրն՝ ինքը
Եվ ես՝
Խոնարհված այս հող ու ջրին
Անմահ քաջերի
Աջյունին է լոկ
Ամեն ինչ կոթող
Ու արձան դառնում

ԱՐՏԱՎԱԶԴ ԱԲԳԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. 2.8.1938 թ.— Արթիկի Պետթատրոնում (հյուրախաղեր Լենինականի Մոռավյանի անվան թատրոնի շենքում՝ Գ. Սունդուկյանի մահվան 25-ամյակի առթիվ, ռեժ.՝ Սիանոս Հովհաննիսյան), «Քանդած օջախում»՝ Միխո և Ծառա. Բեմադրության մասին տես «Բանվոր», Լ., 1937 թ., 4 օգոստոսի, № 176
2. 22.2.1938 թ.—Արթիկի Պետթատրոնում (ռեժ.՝ Ս. Հովհաննիսյան), «Ալլիչի լամպերում»՝ Հրանտ:
3. **Ստեփանյան Միհրան**—Ծառն ամուր է արմատով (պատերազմում զոհված Արտավազդ Աբգարյանի և իր եղբայրների մասին), ԵԵ, 1980 թ., 30 ապրիլի
4. **Գրիգորյան Սասուն**—Ռազմաճակատը՝ վերջին բեմ: ԳԹ, 11 մայիսի 1979 թ., էջ 4:
5. **Գրիգորյան Սասուն**, «Հայրենի հողը՝ ռազմաբեմ», Թատերական Երևան, 1985 թ., № 9, էջ 10:
6. Зурабян Т.— «Шестеро», Коммунист, Е., 9 августа 1978 г., стр. 4
7. Абгарян Геворк «Мать», Известия, 28 февраля 1962 г., № 50, стр. 3.
8. **Հովհաննիսյան Ալբերտ**—Մենամարտ թշնամու թիկունքում, Ե., ՍԳ հր., 1989 թ., 292—308

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԻՄԱՆԿԱՐԻ ՀԱՄԱՐ

ԳՐԻԳՈՐ ՂԱՀՐԱՄԱՆԻ ԱՍՐՅԱՆ (1900—1943)

ԹԵՎԱԴՐՈՍ ՂԱՀՐԱՄԱՆԻ ԱՍՐՅԱՆ (1918—1942)

Թանգարանային աշխատողների համամիութենական խորհրդակցությունն ավարտվել է: Ես պետք է շարունակեմ որոնումներս. օրվա իմ ծրագրում նշված է՝ «Գնալ ՌԽՖՍՀ թատերական ընկերություն: Հանդիպել Յուրի Զավադսկուն կամ Ցարևին: Ժամը 6-ին լինել Ռուբեն Սիմոնովի մոտ. Վախթանգովի թատրոնում»: Գնալու նպատակը կոլեգաներիս հայտնի է, և երբ այդ մասին իմանում է Վազախստանի կուլտուրայի մինիստրության թանգարանների վարչության տեսուչ Գալինա Գեորգևնան, որին ես ծանոթ չեմ, մտերմիկ տոնով հարցնում է.

— Իսկ դուք գիտե՞ք դերասաններ Գրիգոր

և Թևադրոս Ասրյանների մասին: Նրանք ևս զոհվել են...

Անսպասելի այդ հարց-պատասխանի հետքերը ստիպում են նորից թերթել Բ. Հարությունյանի «Սովետահայ թատրոնի տարեգրությունը», գտնել Ասրյան ազգանունով դերասանների և նրանց հետ առնչվողների... Եվ ահա Կիրովաբադի հայկական պետթատրոնի նախկին գլխավոր ռեժիսոր Աղասի Ալայանի տանն եմ: Մինչ ես «հեռվից կգամ», տարեց արվեստագետը երկար կկոցում է աչքերը և հուզմունքով ասում. «Իմ քաղցր Գրիշան «Ֆրիկում» անավարտ թողեց իր դերը: Գնաց ու չեկավ: Հետո ես ստիպված թատրոնում աշխատանքի ընդունեցի նրա կնոջը՝ Մանուշակին: Գրիշա Ասրյանը չորս աղջիկ և մի տղա ուներ: Գտի՛ր նրանց: Իսկ թե ի՞նչ դերեր է խաղացել, ասեմ. Հայրապետ՝ «Նամուսում», Գիգոլի՝ «Պեպոյում», Տոլստիխ՝ «Առերեսումում», քեռի Համո՝ «Արշալույսին», Աթա քիշի՝ «Սևիլում», Միլլեր՝ «Սեր և խարդավանքում», Մաքսիմ՝ «Կամոյում», Կուրբան քիշի՝ «Հայաթում»: Վիդադու նրա դերակատարումը («Վագիֆում») մինչև օրս աչքիս դեմ է: Երբ խաղն ավարտվեց, պիեսի թարգմանիչներ Թաթուլ Հուրյանն ու Աշոտ Գրաշին, որ Բաքվից եկել էին մեր բեմադրությունը դիտելու, Գրիշային մի լավ գովեցին, հետո էլ, երբ «սուփրա էինք բացել», Թաթուլն ասաց. «Ֆրիկից» մի լավ դեր կառանձնացնենք Գրիգորի համար...»:

Երկար ենք զրուցում Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի դասախոսներ Աղասի Ալայանի, Արտաշես Հովսեփյանի և Սարգիս Քոչարյանի հետ: Նրանք բոլորն էլ քաղցր հուշերով ձգտում են վերականգնել Գրիգոր Ասրյանի դիմանկարը: «Ես նրան հիշում եմ դեռ 1938 թվականից: Առաջին անգամ տեսա «1905 թվին» պիեսում, Ալավերդու դերում: Բեմադրության ռեժիսորը Հ. Իսմայիլովն էր, երաժշտության հեղինակը՝ Մ. Մագոմաևը...— ասում է Արտաշես Հովսեփյանը և շարունակում:— Գրիգորի տղայի անունը Սոս է: Նա ևս շնորհառատ դերասան կդառնար, եթե իր կյանքը զինվորականության հետ չկապեր: Նոր է զորացրվել, որքան գիտեմ Երևանում է ապրում: Ռեժիսոր Ավիկ Թորոսյանը աղջիկներին լավ գիտի և նրա հարազատներին ընդհանրապես: Գուցե նա՞ օգնի...»:

Եվ իրոք Հայկական ԽՍՀ հեռուստառադիոպետկոմի երիտասարդական հաղորդումների գլխավոր ռեժիսոր Ավիկ Թորոսյանի միջոցով հաջողվում է հանդիպել զոհված դերասանի եղբորորդուն՝ Էդիկին և Գրիգոր Ասրյանի դստերը՝ Զրվեժի «Արդկապ» գործարանի աշխատակից Սեդա Ասրյանին: Վերջինս տեղեկացնում է, որ իր հայրը՝ Գրիգոր Ղահրամանի Ասրյանը, ծնվել է 1900 թվականին Շամխորի շրջանի Բադա գյուղում: Դեռ մանկուց կորցրել է հորը և մոր հետ միասին օգնել-մեծացրել իր Թևադրոս և Սարգիս եղբայրներին:

— Ի՞նչ դերեր է կատարել ձեր հայրը: Որևէ բան հիշո՞ւմ եք կամ գիտե՞ք...

Սեդան թե.

— Ոչ միայն ես, այլև քույրերս՝ Սիլվան, Սուսանն ու Փիրուզան էլ գիտեն, որ հայրիկը Կիրովաբադի հայկական թատրոնում ռեժիսոր Լ. Աբրահամյանի բեմադրած «Խավարի ճանկերում» պիեսում Խեչանի դերակատարն է եղել: Դա հաստատ գիտենք, որովհետև պրեմիերայից հետո մեր տանը բանկետ են տվել: Մայրս ասում էր, որ այդ օրվա պատվելի հյուրերի հետ մեր տանն է եղել կոմպոզիտոր Անտոն Մայիլյանը. բեմադրության երաժշտությունը նա է գրել: Զմոռանամ ասել, որ հայրիկս «Քաջ Նազարում» էլ է խաղացել: Այստեղ նա թամադայի դերակատարն է եղել...

Դերասանի որդին՝ Սոս Ասրյանը, նոր էր զորացրվել զինծառայությունից և անցել Լենինաթոշակի: Նա երկար տարիներ Կիրովաբադի մշակույթի պալատի ժողթատրոնում հանդես է եկել տարբեր դերերում:

— Ուզում էի գնալ հորս հետքերով, բայց չրստացվեց,— հուզված պատմում է նա իր գլխով անցածն ու շարունակում,— հայրս աշխատել է նաև ռեժիսոր Գ. Թավրիզյանի հետ: Նրա բեմադրած «Գանձում» գլխավոր հերոսներից մեկը՝ Սիմոնի դերակատարը, հայրս է եղել: Դա նրա վերջին դերն էր: «Ֆրիկում» չհասցրեց խաղալ. Ալ. Փչեմյանի և մի քանի ուրիշ դերասանների հետ գնաց բանակ և զոհվեց:

— Ի՞նչ գիտեք ձեր հոր ռազմաճակատային կենսագրությունից...

— Երևի քիչ բան. երկու ամիս ծառայելուց հետո որպես «մեծահասակ» զորացրել են, 1942-ին՝ նորից զորակոչել: Կռվել է Հյուսիսային Կովկասում, Կուբանում, Ուկրաինայում: Մի քանի անգամ ծանր վիրավորվել է և 1943 թ. օգոստոսին զոհվել Ստալինոյում (այժմ՝ Դոնեցկ):

Թևադրոս Ասրյանը Կակուլու դերում («Պեպո», Կիրովաբադի հայկական թատրոն):

— Լսել եմ, որ դերասան հորեղբայր էլ եք ունեցել: Նրա մասին ի՞նչ կասեք...

— Ոչ միայն դերասան էր նա, այլև բանաստեղծ և մաթեմատիկոս: Նրա անունը Թևադրոս էր: Բայց բոլորը Թորոս կամ Թևոս էին ասում: 1918-ի ծնունդ էր: Ավարտել էր Բաքվի մանկավարժական ինստիտուտը և մաթեմատիկայի ուսուցիչ էր աշխատում: Մինչ այդ Կիրովաբադի թատրոնում է խաղացել: Գեղեցիկ պարում էր և երգում: Թե՛ դպրոցում, թե ինստիտուտում նա երգի-պարի անսամբլի հայտնի մենակատարներից էր: Նրա կատարմամբ «Սևորակ աչքեր» երգը այն տարիներին հնչում էր ռադիոյով:

Թևադրոսը բանակ է զորակոչվել 1941 թ. հուլիսին: Սովորել է Սուխումի հետևակային ուսումնարանում, լեյտենանտի կոչումով մեկնել ճակատ: Կռվել է Նալչիկի, Մայկոպի, Օրջոնիկիձեի ազատագրության համար: Ռազմաճակատում էլ ընդունվել է ԽՄԿԿ-ի շարքերը որպես անդամության թեկնածու: 1942 թ. սեպտեմբերի 16-ին զոհվել է Մոզդոկի համար մղվող մարտերում:

— Ամուսնացա՞ծ էր, թե՞ ոչ: Եթե այո, ապա որտե՞ղ է ապրում նրա ընտանիքը:

— Թևադրոսի կնոջ անուն-ազգանունը Լաուրա Գան է: Նա գերմանուհի է: Պատերազմի տարիներին ճակատագիրը նրան նետեց Ղազախստան: Որպես անգլերենի և մաթեմատիկայի ուսուցչուհի աշխատեց Այատսկի և Վիկենգևկա գյուղերում: Պատերազմից հետո տեղափոխվել է Պավլոդար, այստեղ ապրում է Պավլովի փողոցի 13-րդ շենքի № 123 բնակարանում: Մինչև վերջերս էլ նամակներ էինք ստանում:

Ու մինչ Սոս Ասրյանը ինձ ցույց կտա Թևադրոսի Կակուլու դերակատարման լուսանկարն ու 1941 թ. օգոստոսի 1-ին կնոջը՝ Լաուրային, գրած նամակը, ես մտոք տեղափոխվում եմ Մոսկվա, «Ցունոստ» հյուրանոց և հիշում ալմաաթցի կոլեգային ինձ տրված հարցը. «Իսկ դուք գիտե՞ք դերասաններ Գրիգոր և Թևադրոս Ասրյաններին: Նրանք ևս զոհվել են»: Եվ երբ այդ մասին տեղյակ եմ պահում զոհված դերասանի որդուն, նա շատ հանգիստ պատասխանում է.

— Որ Ղազախստանում գիտեն մերոնց, մի զարմացեք. այնտեղ արդեն երկրորդ անգամ է, ինչ գերմաներենից թարգմանել և ռուսերեն տպել են Նելլի Վակկերի «Մեխակներ քեզ համար» գիրքը՝ հարյուր հազար տպաքանակով[1]: Երևի այդտեղից գիտի: Գուցե հեղինակի՞ն է ծանոթ կամ Լաուրայի՞ն:

Վերլուծումները իրոք որ համոզող են: Եվ ահա փաստական այլ նյութերի հետ պաշտոնաթող գնդապետը ինձ է տրամադրում սույն գիրքը՝ մի քանի լրացումներով և խնդրանքով:

— Թևոսի և նրա կնոջ այս նկարը միակն է: Խնդրում եմ՝ չկորցնեք: Հորեղբորս բանաստեղծություններից մեզ մոտ չեն պահպանվել:

---

[1] Ваккер Нелли, «Гвоздики для тебя», Алма-Ата, изд. «Жазуши», 1983, стр. 4—19.

Գուցե տատս պահել էր: Չգիտենք: Երբ հորս և երկու հորեղբայրներիս «սև թուղթն» ստացանք, նա հանկարծամահ եղավ: Գուցե գրե՞ք Լաուրային: Եթե ունենա, անպայման կուղարկի...

Ու մինչ կփորձեմ գրել Լաուրա Գանին, ընթերցում եմ նրան ուղղված ամուսնու մի նամակը, որն առ օրս չի անցել Լ. Գանի ձեռքը: Նամակի 3-րդ էջում իր գերմանուհի կնոջը Թևոսը գրում է. «Առայժմ մի բանի մասին ենք մտածում. շուտ ջարդել նենգ թշնամուն... Դիալեկտիկական մատերիալիզմը հաստատում է, որ աշխարհում ոչինչ մշտական չկա, ամեն ինչ շարժման մեջ է, ամեն ինչ փոփոխվում է ժամանակի ընթացքում: Այսօր պատերազմը ոչ ոք չի ժխտում, բայց կգա օրը, երբ նա կվերջանա ըստ բնության օրենքի: Այն ժամանակ ամբողջ աշխարհում կծածանվի Մարքսի-Էնգելսի-Լենինի-Ստալինի մեծ և կարմիր դրոշը...

...Մայրիկիցս վաղուց նամակ չեմ ստանում: Ամիսը նրան 100 ռուբլի փող եմ ուղարկում, անգամ դրա պատասխանն էլ չեմ ստանում: Սարգսից նամակ ենք ստացել, բայց այն ինձ չի հասել, չգիտեմ՝ որտե՞ղ է, ինչպե՞ս է...

Ցտեսություն: Սիրելի կինս, ամուր-ամուր համբուրում եմ քեզ:

Քո ամուսին՝ **Ասրյան Թ. Ղ.**

Բարևիր նաև մամայիդ»:

Մի կողմ եմ դնում սույն նամակը և բացում Նելլի Վակկերի «Մեխակներ քեզ համար» գիրքը: Տիտղոսաթերթից իմանում ենք, որ այն լույս է տեսել «Ժազուշի» հրատարակչության կողմից Ալմա-Աթայում: Ընթեռնելի ձեռագրով տիտղոսաթերթի ընծայագրում ասված է. «Թանկագին Մանուշակ, դու նրան մայր ես եղել: Նա քեզ շատ էր գնահատում: Պահպանիր այս էջերը (4—19) որպես հիշատակ նրա մասին:

Քո Լաուրա (hars)

Պավլոդար, 5/5.1983 թ.»:

Գրքի հենց առաջին պատմվածքը կառուցված է Թևադրոս Ասրյանի ռազմաճակատային նամակների հիմքի վրա: Պատմվածքը իրապատում է, որտեղ կա երկու հերոս՝ պատմողը և նամակագիրը: Ծինծու, կեղծ ոչինչ չկա այստեղ: Կինը պատմում է, որ 1941 թ. օգոստոսից մինչև 1942 թ. սեպտեմբերի 4-ը իր ամուսնուց ստացել է մոտ վաթսունհինգ նամակ և այն 398 օրերին, երբ իր ամուսինը եղել է զինվոր, ստացված նամակները եղել են նրա համար որպես երգ. ճակատային գիշերներից եկող հեռավոր ու հոգևոր արձագանք, կարոտ, սեր և համբույր, հույս և հավատ, վերհուշ և ուժ: Ահա թե ինչ է գրում կնոջից մի ամիս բաժանվելուց հետո կարոտած զինվոր հայորդին. «...Լաուրա ջան, ինչ նայիվ երեխաներ էինք մենք. ամբողջ ձմեռ պարի ;ամբակում իրար հետ պարում էինք, բեմում իրար հետ զուգերգ կատարում և ի՞նչ գիտեինք մեկս մեկի մասին: Միայն անունները: Հետո բարեկամներ դարձանք: Եվ նորից երկար ժամանակ անցավ մինչև առաջին համբույրը: Արդյունքը՝ միայն մեկուկես տարվա համատեղ երջանիկ կյանք... Երբեք մեկս մեկի չենք նեղացրել, ոչ մի անգամ չենք վիճել: Եվ ինչպես եմ ես սիրում քեզ—միայն հիմա եմ հասկանում: Նայիր այս ծաղկին—պատկերացրու քեզ. աճել է քարերի մեջ:— Նամակը թվագրված է՝ 29 օգոստոսի 1941 թ.: Երկու օր հետո Թևադրոսը նորից է ձեռքն առել գրիչը. —... Դու գիտես, թանկագի՛նս, թե ես ինչ փափկասիրտ եմ: Ես սկզբում անգամ չէի պատկերացնում, թե կարող

Թևադրոս Ասրյանը կնոջ՝ Լաուրա Գանի հետ:

եմ կուվել... Մարդ սպանել: Իսկ հիմա, երբ լսում եմ ու կարդում թշնամու վայրագությունների մասին, փոխվում եմ ու միանգամայն համոզված եմ, որ կկատարեմ որդիական պարտքս Հայրենիքիս առջև... Գրիգորն արդեն ռազմաճակատում է: Խեղճ Մանուշակը մնացել է չորս երեխաների հետ, շուտով կծնվի հինգերորդը: Սարգսից և մայրիկից լուր չունեմ: Որքա՜ն վիշտ, որքա՜ն դժբախտություն պատճառեց պատերազմը բոլորին: Ամենափոքրիկները ծնվում են արդեն որբ, իսկ մեր ծեր մայրերը կորցնում են ապրելու հենարանը...»:

Թ. Ասրյանի ռազմաճակատային նամակները որքան սիրով են լեցուն դեպի Հայրենիքը, այնքան էլ ուշադրություն են ամբարում յուրայինների՝ հատկապես մոր, կնոջ, եղբայրների ու նրանց ընտանիքների հանդեպ.

«Այժմ արդեն Սարգիսն էլ է ռազմաճակատում: Խեղճ իմ մայր». (տես 2/10.1941 թ.): Մի ուրիշ նամակում էլ՝ «Գրիգորն ու Սարգիսը վաղուց են կռվում: Մայրիկի մասին տխուր լուր եմ առել. այստեղ եկավ մեր գյուղից մի հարևան, եղբորիցս լուր բերեց: Այն օրից, ինչ Սարգիսը գնացել է պատերազմ, նա ընկել է անկողին...» (6/3.1942 թ.): Մարտադաշտում կռվող եղբայրների ճակատագիրը մի կողմից, նրանց ընտանիքների ծանր վիճակը մյուս կողմից, մոր հիվանդության լուրը, թեժացող մարտերը անտես կրծոտում էին իրոք փափկասիրտ զինվորին, և նա գերմանուհի իր կնոջը պատգամում է. «...Գնա սկզբից Մանուշակի մոտ: Նա դեռ գարնանը աղջիկ է ունեցել, այժմ աշխատում է թատրոնում: Ես նրան կօգնեմ, ինչով որ կարող եմ: Նա արդեն հինգ երեխա ունի... Եթե իմանաս, թե հիմա այնտեղ ինչպիսի շոգեր են... Երբ կստանաս հրավերքս, արի՛, շատ եմ սպասում...»:

Կարդում էր Լ. Գանը ամուսնու 1942 թ. հունիսի 27-ին գրած նամակը և չգիտեր, որ ամուսինը ծանր վերք ստացած պառկած է հոսպիտալում: Եվ հրամանատարի այն հարցին, թե որտե՞ղն է շատ ցավում, ի՞նչ է ուզում, արյունաքամ լեյտենանտը պատասխանում է.

— Համենայնդեպս՝ ո՛չ շքանշան, ո՛չ փառք... Հաղթանակ և Խաղաղություն եմ ուզում: Եթե առողջանամ (և հույս ունեմ մի քանի օրից ոտի կկանգնեմ), ինձ կրկնակի նոնակներ և փամփուշտ տվեք...

Մի քանի օր հետո, տեսնելով թշնամու առաջխաղացումը, ուսուցիչ զինվորը, առանց վերքերը լրիվ լավանալու, մի կերպ դուրս է գրվում հոսպիտալից: Նորից կրակի առաջին գիծ: «Լուսնյակի պես գեղեցիկ» Լաուրային է հիշել, զրուցում է նրա հետ. «...Դանթեն Լաուրայի հետ դժոխք էլ կգնար, ես քեզ հետ՝ պատերազմ: Արի՛, արի՛ գնանք: Չէ՞ որ դու ինստիտուտում նաև բուժքույրական կուրս ես անցել: Ե՛կ, վերքերս կապիր,— խորհում էր և տեղեկացնում կնոջը:— Ողջ եմ, առողջ: Վերջապես հնարավորություն տրվեց գրել քեզ մի քանի բառ: Երբ չի կարելի գրել, ես քեզ ավելի շատ եմ կարոտում: Հաճախ քո մասին երգում եմ. «Լուսնյակ, դու բարձրից գնա» և հավատում, որ նա կկատարի իմ խնդրանքը. ողջույնս կհասցնի քեզ»:

«Վերքիս ցավը ինձ այնքան չի նեղում, որքան Կարոտիս և Հայրենիքիս ցավը: Երբ նրանց վերքը բուժվի, ես կլավանամ»,— գնդի կոմիսարի հետ զրուցելիս ասում է կիրովաբադյան կարմիր նոների կարոտ հայորդին և կարդում նրան նոր-նոր գրած մի բանաստեղծություն.

«Նեմեցները հաչում են,
Վիրավորվել փախչում են,
Մարդասպաննե՛ր, իմացե՛ք,
Դուք մեր հողում տեղ չունեք:
Գերեզման էլ չենք տա ձեզ՝
Սուրբ է հողը մեզ համար.
Ո՞վ կթաղի ձեզ այստեղ.
Դեռ կոռնաք խելագար:
Յարիս համբույրն հեռավոր
Կմոռացնի ամեն վերք,
Առա՛ջ, իմ տա՛նկ, իմ զինվո՛ր,
Դեպի Բեռլին՝ մահ ու զենք»:

«Լաուրա ջան, նոր գրած այս ստիխս կարդացի մեր ղարաբաղցի տղաներից մեկին: Շատ հավանեց: Նա էլ թերթից կտրել-պահել էր Կոնստանտին Սիմոնովի «Սպասիր ինձ, ես կգամ» ստիխը: Իմը հեչ բան է նրա համեմատ: Երկուսն էլ ուղարկում եմ քեզ: Ոչի՛նչ, որ կռիվը վերջանա, ես էլ կուժեղանամ, համ էլ քո սերը ինձ ուժ կտա: Համբուրում եմ, լա՛վ, առո՛ղջ մնա: Մերոնցից ի՞նչ լուր»:

Անցավ մի քանի օր: Լաուրա Գանը ևս մի եռանկյունի նամակ ստացավ: Հասցեն, քանի որ քիմիական մատիտով էր գրվել, անձրևի տակ մի պահ թրջվելուց ջնջվել էր, հազիվ ընթեռնելի էր նամակի մյուս էջը. «...Ողջ եմ և առողջ: Շնորհակալություն՝ նամակների համար: Ես հիշում եմ միասին ապրած մեր բոլոր օրերը... Պատերազմը պատերազմ է, թանկագինս, և եթե ինձ վիճակվի զոհվել մարտում, գիտցիր՝ եղել է լուսնի տակ մեկը, որը լույսից շատ քեզ է սիրել... ինչո՞ւ եմ քիչ գրում, հետո կպատմեմ, եղա՞վ: Պատճառներ կան... Ողջույններս մայրիկիդ: Ի՞նչ ճիշտ էր նա, երբ ասում էր՝ կյանքը սև է առանց հույսի: Ցտեսություն, ջանս»: Եվս երկու նամակ, և 1942 թ. սեպտեմբերի 16-ին Մոզդոկում եռակի վիրավորված քաջորդին հավերժ փակեց աչքերը, իսկ մինչ այդ գրած հայերեն նամակավորը մի կերպ թարգմանեց ռուսերեն և որպես սիրո երդում և քաղցր վերհուշ ուղարկեց կնոջը՝ Լաուրային: Ահա այն, որը մեջ ենք բերում Նելլի Վակկերի գրքից (հայերեն բնագիրը չի պահպանվել).

Ты помнишь?
Два года прошло с той минуты.
Как мы в первый раз целовались.
А ныне пишу эти строки,
И вечность прошла, как расстались.

Ты помнишь?
Мы танго и вальс танцевали...
И видел тебя лишь одну я:
Казалось мне: я не танцую,
Нет, к звездному небу лечу я...

Ты помнишь?
Спал город... Мы долго ходили...
Рассвет близок был... Тьма редела...
Злой ветер дул с моря... Но сердце
И руки любовь наша грела.

Ты помнишь?
Мы клятв никаких не давали,
О верности не говорили,
Но помнить я буду, поверь мне,
Ту ночку до самой могилы...

Ու թեև քառասունհինգ տարի է անցել այս բանաստեղծության երկունքից, բայց Լաուրա Գան-Ասրյանը, ում հասցեագրված են սրբազան այս տողերը, ոչ միայն չի մոռացել նրա հեղինակին, այլև ամեն իրիկուն, երբ ուզում է քուն մտնել, նորից իր երգող, պարող, բանաստեղծ, դերասան, մաթեմատիկոս, մանկավարժ ամուսնու հետ է, այն տղայի, որը ռազմադաշտ մեկնելուց առաջ մորը խնդրեց.

— Մեր տան դուռը չկողպես, քե մատաղ... հանկարծ գիշերով ետ կգամ, չեմ ուզենա քունը խանգարել...

Թեև Ասրյանների տան դուռը միշտ բաց մնաց, բայց ոչ Գրիգորը, ոչ Թևադրոսը և ոչ էլ Սարգիսը էլ ետ չեկան... Քանի՜ դերեր, քանի՜ սերեր չծաղկեցին էլ ոչ բեմում, ոչ կյանքում:

ԳՐԻԳՈՐ ԱՍՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. 2/5.37 թ. Կիրովաբադի հայկ. թատ.[1] (ռեժ.՝ Ադ. Ալայան), «Նամուսում»՝ Հայրապետ:
2. 17/8.83 թ., Կիրովաբադի ՀԹ (ռեժ.՝ Ադ. Ալայան), «Պեպոում»՝ Գիգոլի:
3. 29/10.37 թ., Կիրովաբադի ՀԹ (ռեժ.՝ Ադ. Ալայան), «Հալաթում»՝ Կուրբա քիշի:
4. 8/2.38 թ., Կիրովաբադի ՀԹ (ռեժ.՝ Ադ. Ալայան), «Առերեսումում»՝ Տոլստիխ (այստեղ մի երիտասարդի և Գուրևիչի դերերում խաղում էր Նաև Ալ. Փչեմյանը):
5. 15/4.38 թ., Կիրովաբադի ՀԹ (ռեժ.՝ Հ. Իսմայիլով, երաժշտ. Ս. Մագոմանի), «1905 թվին»-ում՝ Ալավերդի:
6. 12/2.39 թ.՝ Կիրովաբադի ՀԹ (ռեժ.՝ Ադ. Ալայան), «Արշալույսինում»՝ քեռի Համո:
7. 12/5.39 թ., Կիրովաբադի ՀԹ (ռեժ.՝ Ադ. Ալայան), «Վագիֆում» (թարգմ. Թ. Հուրյանի և Ա. Գրաշու)՝ Կիդադի:
8. 3/7.39 թ., Կիրովաբադի ՀԹ (ռեժ.՝ Ադ. Ալայան), «Կամոյում»՝ Մաքսիմ:
9. 12/9.39 թ., Կիրովաբադի ՀԹ (ռեժ.՝ Լ. Աբրահամյան), «Քաջ Նազարում»՝ Թամադա:
10. 29/1.40 թ., Կիրովաբադի ՀԹ (ռեժ.՝ Ադ. Ալայան), «Սեվիլում»՝ Աթա քիշի:
11. 3/6.40 թ., Կիրովաբադի ՀԹ (ռեժ.՝ Ադ. Ալայան), «Խարդավանք և սերում»՝ Միլլեր:
12. 28/12.40 թ. Կիրովաբադի ՀԹ (ռեժ.՝ Լ. Աբրահամյան, երաժշտ. Անտոն Մալիլյանի), «Խավարի ծանկերում»՝ Խեչան:
13. 5/8.41 թ., Կիրովաբադի ՀԹ (ռեժ.՝ Գ. Թավրիզյան), «Գանձում»՝ Սիմոն:
14. 18/10.1940 թ., Կիրովաբադի ՀԹ (ռեժ.՝ Ա. Ալայան), «Ավազակներում»՝ Մոր:
15. **Հարությունյան Բաբկեն**—Սովետահայ թատրոնի տարեգրություն, Ե., 1961, գիրք I, էջեր՝ 488, 500, 504, 518, 527, 563, 574, 588, 615, 632, 660, գիրք II, Ե., 1960, էջ 44:
16. **Գրիգորյան Սասուն**—«Հայրենի հողը՝ վերջին բեմ»: Ավանգարդ, 9 մայիսի 1982, էջ 4:
17. **Գրիգորյան Սասուն**—«Ռազմաճակատը՝ վերջին բեմ», ԳԹ, 11 մայիսի 1982, էջ 4:
18. **Բաբաջանյան Հրանուշ**—«Հայրենասիրական մղումներով» (Կիրովաբադի հայպետթատրոնը Մեծ Հայրենականին, խոսվում է նաև Թ. Հուրյանի և Գ. Ասրյանի մասին): «Թատերական Երևան», 1975, № 9-ի հատուկ հավելված, էջ 23:
19. **Հարությունյան Սուրեն**— «Հայ նորագույն թատրոնը Ադրբեջանում», Ե., 1972, էջեր 142—146:
20. **Ваккер Нелли** — «Гвоздики для тебя», Алма-Ата, 1983 г. стр. 4—19:
21. **Գրիգորյան Սասուն**—«Հայրենի հողը՝ ռազմաբեմ», ԹԵ, 1985, № 9, էջ 3:

---

[1] Այսուհետև՝ ՀԹ:

ՏԵԼՈՒՇԸ

ՏԵԼՈՒՇ (ԹԵԼՄԱՆ) ԳԵՎՈՐԳԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ (1911—1942)

30-ական թվականներին լենինականյան բեմում հանդիսատեսը հաճախ էր Տելուշին տեսնում «Նապոլեոնի արշավանքը», «Հաց», «Անհնազանդ», «Ահ», «Խնդության փողոց» և այլ ներկայացումներում՝ մասսայական դերերում:

«Ջարդում» Վաղարշ Վաղարշյանը Տելուշին կազակի դեր վստահեց, «Դատում» (ռեժ.՝ Վ. Աճեմյան) նա ոստիկան էր, «Գոշում»՝ գյուղացի: 1937 թ. Լ. Քալանթարը Լենինականի թատրոնում բեմադրեց «Վենետիկի վաճառականը»: Դուքսի դերակատարը Տելուշն էր:

— Ծո, ըդպես օր շարունակվի, Համլետ էլ կխաղաս...,— կատակում էին ընկերները:

Օր-օրի ծաղկում էր Տելուշի բեմական տաղանդը, բացահայտվում էին նրա արտիստական կարողությունները: Նրան մեկ կարելի էր տեսնել քաղաքի բեմում որպես Սիմոն («Ագահը»), մեկ՝ ձկնորս («Էմանուել»), Սաշկով («Փարոսի կրակները»), ճապոնական զինվոր («Արծաթե ձորակում») և այլ դերերում: Ռեժիսոր Գուրգեն Մարինոսյանն իր բեմադրած «Լենին» պիեսում նրան վստահեց Բադրուկովի դերը (բեմադրվել է 1940 թ. մարտի 18-ին), իսկ Սիանոս Հովհաննիսյանը՝ Դանիելի դերը Շիլլերի «Ավազակներում» (բեմադրվել է 1940 թ. փետրվարի 2-ին):

— «Գոշում»,— պատմում է դերասան Ազատ Շերենցը,— ես և Տելուշը իրար հետ էինք հանդես գալիս գյուղացիների դերում: Էսօրվա պես հիշում եմ, թե ինչպես էր Գ. Մարինոսյանը ուրախացել, որ «Ռուզանում» Տելուշը փայլուն մեկնաբանեց ծերունու դերը:

Երևանի Չարենցի անվան արվեստի և գրականության թանգարանի ֆոնդերից պարզվում է, որ Տելուշ Գևորգյանը հանդես է եկել նաև «Քաջ Նազարում» որպես սենեկապետ, «Տանջյում»՝ ավտոկայանի պետ, «Օղակում» ներկայացման մեջ խաղացել է Մահմեդի դերը: Տելուշ Գևորգյանի խաղացած դերերի թիվը մեծ է՝ իր ապրած տարիների թվից:

Նա ծնվել է Լենինականում 1911 թվականին: Թուրքերը 1918-ին սպանել էին նրա հորը: Խորհրդային կարգերի հաստատումը Ալեքսանդրում, ինչպես ողջ շիրակցիների, Տելուշի առջև ևս բացեց կյանքի նոր հեռանկարներ: Գևորգյանը սովորեց Լենինականի Դալտոնպլանի (ներկայումս № 5) դպրոցում: Ակտիվորեն մասնակցում էր դպրոցական միջոցառումներին, հանդես գալիս տեքստիլագործների ակումբի ինքնագործ թատերական խմբում: Այստեղ էլ երևան եկան պատանի Տելուշի դերասանական ունակությունները: Մի օր էլ, երբ տեքստիլագործների հյուրն էր Վարդան Աճեմյանը, նա Տելուշ Գևորգյանին, Հայկ Խաչատրյանին հրավիրեց Լենինականի պետթատրոն: Քանի՜-քանի՜ դերեր դեռ ունեին նրանք իրագործելու, դեռ որքան ծափեր ու ծաղիկներ կվաստակեին, մինչդեռ պատերազմը վերջակետ դրեց նրանց երազանքներին ու կյանքին. երկուսն էլ ռազմադաշտից բեմ չվերադարձան: Այսօր էլ Լենինականում դեռ ապրում է Տելուշի քույրը՝ Մանիկ Գևորգյանը, իսկ նրանց մայրը՝ Արուսյակը, վախճանվել է 1978-ին: Տրված տեղեկությունների և նյութերի համար շնորհակալ ենք զոհված դերասանի քրոջը: Տելուշը Լենինականում ապրել է Պուշկինի փողոցի № 4 շենքի № 4 բնակարանում: Նրա մայրը որբանոցում մայրապետ է աշխատել, իսկ հայրը եղել է երգիչ, ասմունքող և դափահար:

Տելուշ Գևորգյանը մեզ անհայտ դերում:

— Զմոռանաք նշել,— ասում է նրա խաղընկերներից Վահե Մկրտչյանը,— որ Տելուշը մեր՝ Մոսավյան թատրոնի կոմերիտմիության սկզբնական կազմակերպության քարտուղարն էր: Ես նրան վերջին անգամ հանդիպեցի Կերչում, 1942-ի գարնանը: Մի քանի օր անց ընկերներից իմացա, որ Տելուշը զոհվել է:

ՏԵԼՈՒՇ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. 7/3.31 թ., Լենինականի Մոսավյանի անվան թատրոն, (հետայսու՝ ԼՄԹ, ռեժ.՝ Ս. Խաչատրյան), «Նապոլեոնի արշավանքում»՝ Բոյեր:
2. 18/10.31 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Աճեմյան), «Հացում»՝ գյուղացի (մուժիկ):
3. 20/12.31 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Աճեմյան), «Ահազ նգում»՝ կոմերիտական:
4. 15/1.32 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Գ. Հովհաննիսյան), «Ահում»՝ ուսանող:
5. 22/6.32 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Աճեմյան), «Խնդության փողոցում»՝ Սյաոլին:
6. 28/2.33 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Վաղարշյան), «Ջարդում»՝ կազակ:
7. 17/5.33 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Աճեման), «Դատում»՝ ոստիկան:
8. 29/1.36 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Աճեմյան), «Գոշում»՝ գյուղացի:
9. 28/2.37 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Լ. Քալանթար), «Վենետիկի վաճառականում»՝ Դուքս:
10. 1/5.37 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Աճեմյան), «1905 թվինում»՝ Մոլլա, (Վահե Մկրտչյանը՝ քահանա):
11. 5/3.38 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Ռ. Մինասյան), «Ագահում»՝ Սիմոն:
12. 14/7.38 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Աճեմյան), «Էմանուելում»՝ ձկնորս:
13. 29/10.38 թ., ԼՄԹ (Լենինյան կոմերիտ. 20-ամյակի առթիվ, ռեժ.՝ Վ. Աճեմյան, նկ.՝ Աշոտ Մամաջանյան), «Փարոսի կրակներում»՝ Սաշկով:
14. 29/1.38 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Աճեմյան), «Գոշում»՝ գյուղացիներից մեկը (մյուսը Ա. Շերենցն էր): Նոր բեմադրություն էր, հեղինակ՝ Լյուդվիգ Միքայելյան:
15. 10/3.39 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Ռ. Մինասյան), «Արծաթե ձորակում»՝ ճապոնական զինվոր:
16. 18/4.40 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Գ. Մարինոսյան), «Լենինում»՝ Բադրուկով:
17. 2/4.40 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Ա. Արմենյան, հարակից ռեժ.՝ Սիանոս Հ.), «Ավազակներում»՝ Դանիել:
18. 20/6.40 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Գ. Հարությունյան), «Տանջյում»՝ ավտոկայանի պետ:
19. 20/10.40 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Գ. Մարինոսյան), «Ռուզանում»՝ ծերունիներից մեկը:
20. 23/11.40 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Ջ. Ժամհարյան), «Օղակում»՝ Մահմեդ (Նվիրված էր Հայաստանի խորհրդայնացման 20-ամյակին):
21. 28/12.40 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Գ. Հարությունյան), «Քաջ Նազարում»՝ սենեկապետ (իսկ Հայկ Խաչատրյանը՝ վարժապետ):
22. 11/3.41 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Ջ. Ժամհարյան), «Կարազդատում»՝ Իկիլիկ (իսկ Հայկ Խաչատրյանը՝ Իսրայել):
23. **Հարությունյան Բաբկեն**—Սովետահայ թատրոնի տարեգրություն, Ե., 1961, գիրք I, էջեր 282, 292, 294, 297, 306, 323, 330, 466, 475, 487, 520, 540, 548, 552 566, 624, 632, 637, 649, 654, 660, գիրք II, 1969, էջ 24: 1969, էջ 24:
24. **Գրիգորյան Սասուն**—«Հայրենի հողը՝ ռազմաբեմ», ԹԵ, 1985 թ., № 9, էջեր 4 և 8:

ՁԱՊԱԵՎ ՀԱՅԿԸ

ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍԻ ԵՂՈՅԱՆ (ՄԱՆՎԵԼՅԱՆ) (1918—1942)

Դեռ իններորդ դասարանում էր սովորում, երբ «Մենք չապաևականներ ենք» խորագրով մի պիես գրեց: Շաբաթներ հետո Հառիճի եկեղեցին օղակող ձորում, կամուրջից ներքև, իրենց դերերն ու մենախոսություններն էին փորձում Հայկը, Սայադը, Թադոսը, Ռազմասերը, Ալբերտը, Մերուժանն ու պիեսի մյուս դերակատարները, երբ դպրոցի դիրեկտոր Աղասի Մինասյանը մարդ ուղարկեց Հայկ Եղոյանին կանչելու. «Ասե՛ք, քաղաքից մարդ է եկել, թող փորձը կիսատ թողնի, դպրոց գա»: Քաղաքից եկողը պրոֆեսոր Երվանդ Տեր-Մինասյանն էր: Այդ նույն

երեկոյան էլ Հաոիճի ակումբում ներկայացվեց դպրոցական Հայկ Եղոյանի պիեսը, ուր Զապաևի դերը ստանձնեց պիեսի հեղինակը:

— Ծո, էսի օր բեմի վրեն ըսպես անխիղճ մարդ կսպանե, օր պատերազմ էղնի, թշնամու քոքը կկտրե... Իսկական Զապաև է...

Ներկայացումից հետո Պետրոս քեռու դերասան որդուն գյուղում գրեթե էլ Հայկ ասող չկար, բոլորը նրան Զապաև էին կոչում: Ու մի օր էլ, երբ տասներորդն ավարտեց և Արթիկի պետթատրոնի դերասան էր, դպրոցի կոլեկտիվը մի նամակով դիմեց Երվանդ Տեր-Մինասյանին. «Հարգելի պրոֆեսոր, դուք մեր իմացած հեղինակավոր մարդկանցից եք. ուստի դպրոցի ողջ կոլեկտիվը դիմում է Ձեզ և խնդրում, որ հայրաբար տնօրինեք մեր սիրելի Հայկ Եղոյանի ճակատագիրը: Նա հոյակապ տվյալներ ունի՝ իր օգտավետ ծառայությունը բերելու հայ թատրոնին: Եթե լուծվի նրա ուսումնառության հարցը, մենք խորապես շնորհակալ կլինենք Ձեզ»:

Պրոֆեսորի տան դուռը բացեց դուստրը՝ փոքրիկ Լիլիթը, ու միանգամից արևախանձ ու ամաչկոտ տղային ներս հրավիրեց:

— Հայրի՛կ, Զապաևն է եկել, քեզ նամակ է բերել:

Հայագետ լեզվաբանը ծիծաղեց... Մի օր հետո մի կարճ բնութագիր ձեռքին Հայկը ներկայացավ Վահրամ Փափազյանին. «Գրաբերս, որը

Հ. Եղոյանի ռազմածակատային վերջին լուսանկարը:

մի շնորհաշատ և ուսումնատենչ երիտասարդ է, իմ համագյուղացին է, հաոիճեցի: Թատրոնի համար հուսալի ուժ է: Խնդրանքս է՝ կարելույն չափ օգնեք նրան:

Հարգանոք՝

Ձեր Ե. Տեր-Մինասյան»

Երևանի գեղարվեստա-թատերական ուսումնարան: 1936 թ.: Ընդունելության քննություններ են: Ներս է մտնում Հայկ Եղոյանը: Վահրամ Փափազյանը Հասմիկին և Արուս Ոսկանյանին ըստ «միջնորդագրի» ծանոթացնում է նորեկին և առաջարկում մի բան արտասանել:

«Թմբկաբերդի առումն» ու «Ալագյազի մանիները» ամփոփելուց հետո Հայկը Պուշկին և Ն. Զարյան է արտասանում, կոահելով հանձնաժողովի բարյացակամ վերաբերմունքը, «առաջ» է անցնում.

— Կուզե՞ք Զարենց արտասանեմ:

— Խնդրե՛մ, դղա՛ս,— համաձայնում է Փափազյանը:

...Ուսանող դարձավ: Ամառային արձակուրդները գյուղում էր անցկացնում: Սիրում էր լսել Մեր-Սերի և Թադևոսի նոր գրած բանաստեղծությունները, նրանց հետ զբոսնել վանքի բակում և ձորափին: Տխրել էր, որ էլ չեն թողնում արտասանի «Ես իմ անուշ Հայաստանին»: «Հանճարը ժողովրդի թշնամի ո՞նց կլինի»—նեղսրտում էր 18-ամյա Հայկն ու մնում անդրդվելի. «Միևնո՛ւյն է, ինչ ուզում է ասեն, «Ամբոխները խելագարվածն» իմ ռեպերտուարից ես չեմ հանի»:

— Ուրիշ ի՞նչ տվյալներ կհաղորդեք ձեր համագյուղացու և ընկերոջ մասին,— հարցիս արձակագիր, Մեծ հայրենականի վետերան Ալբերտ Հովհաննիսյանը ավելացնում է. «Հայկի մոր անունը Մարիամ էր, քույրեր ունի՝ Զարիկ և Բուրաստան անուններով: Եղբայրը՝ Ժորան, «Նաիրիտ» գիտա-արտադրական միավորման փորձնական գործարանում է աշխատում, գլխավոր ինժեների տեղակալն է, լրացուցիչ տե-

Հայկ. ԽՍՀ ժող. արտիստ Հասմիկին միշտ կարելի էր տեսնել ուսանողներով շրջապատված: Հայկ Եղոյանը, Մուսայել Գալոյանը, Ճահնազարյանը և ուրիշներ իրենց սիրված ուսուցչից «պոկ չէին գալիս»: Ձախից առաջինը (կանգնած) **Հայկ Եղոյանն է**: Երևան, 1938 թ.:

Հայկ Եղոյանը Զապաևի դերում

ղեկություններ նրանցից իմացեք և Հայկի դասընկերոջից՝ Մուսայել Գալոյանից: Միայն ավելացնեմ, որ Հայկը ավելի շատ հակում ուներ դեպի ասմունքը, քան դերակատարումները»:

Հրաժեշտ ենք տալիս Ալբերտին և Հաոիճին, կուսակցական աշխատողներ Հենրիկ Սահակյանի և Ռազմիկ Քրմոյանի հետ վերադառնում Երևան: Աջափնյակում, Կիևյան կամուրջի հարեվանությամբ, ամառային սրճարանում հանդիպում ենք Ժորա Մանվելյանին՝ Հայկի կրտսեր եղբորը: Զրուցակիցս պատմում է, որ Հայկը ռուսերենին լավ տիրապետել է Սոչիի հայկական դպրոցում աշակերտելիս, ուր դպրոցի տնօրենը իրենց հորեղբայրն էր՝ Արտավազդ Եղոյանը: Հայկը փայլուն տիրապետել է նաև գերմաներենին: Նա բնագրով Հայնե է արտասանել և Գյոթե, ուզում էր Շիլլերի «Ավազակներում» գերմաներեն լեզվով դեր ստանձնել...

1938 թ. ամռանը Երևանի թատերական ուսումնարանի ուսանող Հայկը Վ. Փափազյանի հետ հյուրախաղերի է մեկնում Թբիլիսի, Դոնի Ռոստով, սևծովյան հայկական բնակավայրեր: Այդ նույն թվականի ձմռանն էլ (դեկտեմբերին) ուսանող Հայկն արդեն Նախիջևանում 76-րդ հրաձգային դիվիզիայում էր ծառայում, հետո տեղափոխվեց Մերձբալթիկա, մասնակցեց սպիտակ ֆիններեի դեմ մղվող կռիվներին: Արդեն լրանալու էր նրա ծառայության ժամկետը, երբ հիտլերյան բանակները ներխուժեցին մեր հայրենիքի սահմանները: Հայկն այդ օրերին Մոլդավիայում էր: Որպես հետախուզական վաշտի հրամանատար նա առաջադրանք ստացավ Օդեսայի շրջանում բա-

Երևանի գեղարվեստա-թատերական ուսումնարանի դերասանական բաժնի ուսանող **Հայկ Եղոյանը** իր ուսուցչուհու՝ Արուս Ոսկանյանի հետ Երևան, 1938 թ.:

ցահայտել թշնամու քողարկված տանկային խումբ-բավորումների տեղանքը, ճշգրտել քարտեզը, «լեզու բերել», ծանր դրության պայմաններում շրջանցել հիտլերականների որոգայթը և կապ հաստատել մեր պարտիզանական ջոկատների հետ: Տասնութ օր, ըստ ճակատային ռազմընկերների վկայության, Զապան Հայկը մնացել է թշնամու թիկունքում, գերմաներենի իր գերազանց իմացությամբ ռազմական բազմաթիվ գաղտնի ակտեր կորզել, դրանք հասցրել մեր-ոնց, վերջում էլ, ընկնելով թշնամու ցամաքային և օդային պաշարման մեջ, «ինձ կենդանի չեք բռնի» ինքնավճռով, նռնակների կապոցը ամուր սեղմել է կրծքին և գրոհել թշնամու տանկերի վրա: Դա Օդեսայից քիչ հեռու էր՝ Սերպնովո գյուղի մոտ: Անհավասար հենց այս մարտում էլ, 1942 թ. ապրիլին, հերոսաբար զոհվել է կրտսեր լեյտենանտ Զապան Հայկը՝ չեկիստ Գավրիլովի վերջին դերակատարը Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում: Օրեր անց միայն գուժեց Հայկի «սև թուղթը».

«Հարգելի Պետրոս Եղոյիչ.

Ձեր որդին՝ կրտսեր լեյտենանտ Հայկ Պետրոսի Եղոյանը, առաջադրանք կատարելիս զոհվեց հերոսի մահով: Նրա դիակը գտնվել և հողին է հանձնվել տեղի բնակիչների ջանքերով: Կրտսեր լեյտենանտ Հ. Պ. Եղոյանը ետմահու ներկայացվել է կառավարական պարգևի:

Տեղյակ պահելով Ձեզ այդ տխուր լուրը, մենք խորապես ցավակցում ենք կոմունիստ հրամանատար Հ. Պ. Եղոյանի բոլոր հարազատներին և գլուխ ենք խոնարհում նրա շիրմի առաջ: Ի դեմս խիզախ հետախույզ Հ. Պ. Եղոյանի դուք դաստիարակել եք հայրենիքի իսկական զինվորի: Մենք վրեժխնդիր կլինենք մեր զոհված ընկերոջ համար:

Մահ գերմանական ֆաշիզմին:

Մի խումբ մարտական ընկերներ»:

ՀԱՅԿ ԵՂՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

[1] **Հովհաննիսյան Ալբերտ**— Մեր գյուղի տղերքը, Ե., ՍԳ հր., 1987, I գիրք, Դերասանի ծակատագիրը, էջ 42—48:

ՔԱՆԻ ԴԵՐԵՐ ԹՈՂԵՑ ԱՆԱՎԱՐՏ

ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՏԱՇԵՍԻ ԽԱԼԱԹՅԱՆ (1908—1942)

Թբիլիսիի Հայ դրամայի դերասաններից մի խումբ կազմած 1927 թ. օգոստոսին «Բոռի» բեմադրությամբ Օլգա Մայսուրյանը հյուրախաղերի մեկնեց Նոր Նախիջևան: Վավիկ Վարդանյանի, Մ. Մոնոռյանի և այլոց հետ Արտավազդ Խալաթյանն առաջին անգամ էր մեծ դահլիճներում հանդես գալիս: «Անպայման պիտի դերասան դառնամ»— Արտավազդի համառ նպատակադրումը մորը՝ Քալինկային, միայն ուրախություն էր պատճառում: Ավարտելով իր ծննդավայրի՝ Թբիլիսիի № 94 հայկական դպրոցը, Արտավազդ Խալաթյանն ընդունվեց տեղի Հայ դրամայի թատերական ստուդիան: Ուսումնառություն, դերասանական ամենօրյա փորձեր, մարմնամարզություն, քննություն՝ ռիթմիկայից և պլաստիկայից: Աշխույժ, երբեմն հոգնած նա տուն էր գալիս, երբեմն էլ Կառուցողների պալատում և այլուր ընկերների հետ գնում ելույթների: Վահան Տերյանի հիշատակին «Սալոմեն» բեմադրելիս արդեն Արտոն (ինչպես կոչում էին նրան մտերիմները) էլ առաջվանը չէր: Բեմադրության ռեժիսոր Արշ. Բուրջալյանն ու կոմպոզիտոր Ալ. Սպենդիարյանը այնպես հավանեցին Խալաթյանի Նաման, որ երեկոյի վերջում նրան ծանոթացրին օրվա ճառախոսի՝ Արշավիր Մելիքյանի հետ: Երեկոյի մասնակիցներ Դավիթ Մալյանը, Վավիկ Վարդանյանը, Ե. Սեբարն ու Գ. Աֆրիկյանը արտասանեցին Վ. Տերյանի բանաստեղծություններից, ստացված ծաղիկները նրանք նվիրեցին Արտ. Խալաթյանին: Երիտասարդ դերասանն արդեն լուրջ քննություն էր բռնել, ու երբ թատրոնը բացեց իր նոր խաղաշրջանը (1928 թ. հոկտեմբեր), հիմնական

կազմից բացի Հայ դրաման ուներ նաև իր օժանդակ խումբը, որի անդամներն էին Գ. Աշուղյանը, Ռ. Դիվանյանը, Ռ. Զարյանը, Ա. Լուսինյանը, Է. Միրիմանյանը, Ծ. Վրույրը, Արտ. Խալաթյանը և այլ տղաներ ու աղջիկներ:

— Օժանդակ խումբը ո՞րն է. թատրոն ճարե՛ք, գանք խաղանք,— կատակում էին սկսնակ դերասանները:

Բախտը ժպտաց: 1928-ի նոյեմբերին հիմնվեց Լենինականի Մոավյանի անվան պետթատրոնը: Տնօրեն Հ. Տայանն ու ռեժ. Թ. Սարյանը թարմ ուժեր էին հավաքագրում: Եվ ահա անմիջապես մոավյանցիների շարքերն են համալրում Վ. Աճեմյանը, Արծ. Հարությունյանը, Ա. Ասրյանը, Ա. Լուսինյանն ու Ա. Խալաթյանը:

— Սիրո՞ւն տղա, դու ո՞վ ես, անունդ ի՞նչ է, որտեղացի՞ ես. դերասա՞ն ես, թե՞ թատերասեր...— Թ. Սարյանի կատակախառն հարցերին երիտասարդը ժպտալով պատասխանեց.

— Հորս անունը Արտաշես է, ծագումով Իջևանի շրջանի Սևքար գյուղից է: Ես Արտավազդ Խալաթյանն եմ, նրա տղան: Ծնվել եմ 1908 թ. նոյեմբերի 8-ին Թբիլիսիում: Դերասա՞ն եմ, թե՞ թատերասեր՝ բեմում կերևա...

— Յա՛,— շուռ գալով Վարդան Աճեմյանի կողմը, ժպտալով արտաբերեց Թաթևոս Սարյանը,— պատասխաններն ավարտված են, մնում է՝ դերերը ավարտուն լինեն...

Անցան օրեր: Ինչպես ամենուր, սկսնակ դերասանին տրվեցին մանր դերեր: Հենց Թ. Սարյանի «Հոպլյա, մենք ապրում ենք» (Է. Տոլլեր) բեմադրության մեջ, որով Արտ. Խալաթյանն առաջին անգամ բարձրացավ լենինականյան բեմ, սկսնակ դերասանը ստանձնեց հեռագրիչի և ոստիկանի քարտուղարի դերերը: Մի ամիս հետո՝ 1929-ի դեկտեմբերին, Ռուբեն Սիմոնովը Լենինականի Մոավյանի անվան թատրոնի հանդիսատեսին ուրախացրեց Ա. Օստրովսկու «Արդյունավետ պաշտոնի» իր չքնաղ բեմադրությամբ: Մեծանուն ռեժիսորն այստեղ Արտոյին հանձնարարեց կերպավորելու աստիճանավորի դերը: Այնուհետև սկսվում է շնորհաշատ արտիստի ծաղկուն հասակը: Հանդիսատեսը 30-ական թվականների կեսերին նրան տեսնում է մեկ Սարգսի («Խաթաբալա», ռեժ.՝ Մ. Կոստանյան և Կ. Այվարյան), մեկ Հովակիմի («Դիկտատուրա», ռեժ.՝ Վ. Աճեմյան), Կարդինալի («Նապոլեոնի արշավանքը», ռեժ.՝ Ս. Խաչատրյան, նկարիչ՝ Արա Սարգսյան), Եգորի («Աչք», ռեժ.՝ Մ. Ջանան), Սոտինի («Հաց», ռեժ.՝ Վ. Աճեմյան) և ինքնատիպ ու բարդ այլ դերերում:

Արտ. Խալաթյան, Ժերունի («Ռուզանում»):

«Հուզել, ապրեցնել,, ուրախացնել, ոգևորել, գոտեպնդել, ուժ, հավատ և սեր ներարկել դահլիճին, թե չէ ինչո՞ւ ես բարձրանում բեմ: Այսպիսին էր Արտոյի պահանջը դերասանից: Նա աշխատասեր էր, դրա համար էլ բոլոր ռեժիսորները նրան սիրում և շուտ-շուտ դերեր էին տալիս,— պատմում է Խալաթյանի դասընկեր Արծրուն Հարությունյանն ու ավելացնում,— Արտոյին բարձրացնողը Աճեմյանն էր: Վարդան Նիկիտիչի բեմադրած «Անհազանգում» Արտոն քարոզիչ էր, «Նավթում»՝ քարտուղար, «Հատակում»-ի մեջ՝ Մեդվեդև, «Դատում»՝ Ֆրանց, «Մեծապատիվ մուրացկաններում»՝ Հակոբ աղա...»:

Երևանի Կասյան փողոցի № 2 շենքի 4-րդ տանն ենք: Տանտիրուհին՝ կոոպերատիվ տեխնիկումի նախկին ուսուցչուհի Սաթիկ Ակուլյանը, սեղանին է փռել ամուսնուց ստացած իր միակ ժառանգությունը՝ նրա դերակատարումների լուսանկարները: Մեր զրույցին մասնակցում է զոհված դերասանի կրտսեր որդին՝ Սամվելը: Նա ծնվել է 1941-ին, երբ հայրն արդեն ռազմաճակատում էր: Նա հորը ճանաչում է միայն լուսանկարով: Գիտի, որ հայրը դերասան է եղել: Լսել է, որ նա 1934—35 թթ. Լենինականի թատրոնում «Կրակե օղակում» ներկայացման մեջ խաղացել է Պրակոֆի, «Ժամագործն ու հավը» պիեսում՝ կոմիսարի, իսկ «Շահնամեում»՝ Զեմիլի դերերը:

Արտ. Խալաթյանի վերջին լուսանկարը քաղաքացիական հագուստով:

— 1936-ին ես եկա Երևան սովորելու՝ աշխարհագրության ֆակուլտետում: Ստիպված էինք ընտանեքով տեղափոխվել Երևան,— շարունակում է մեր զրուցը Սաթիկ Ակուլյանը:— Երևանում. Արտոն աշխատանքի անցավ Գորկու անվան բանվորական թատրոնում: Էսօրվա պես հիշում եմ. 1936 թ. հունվարի 4-ին գնացինք ընկերուհիներով դիտելու Սարգիս Քոչարյանի (Սաքուլի) նոր բեմադրությունը, որը կոչվում էր «Գործազուրկին արգելված է սիրել»: Արտոն այստեղ ոստիկանի դեր էր կատարում: Երբ տուն եկանք, ես ասի՝ կարգին դերերով հանդես արի: Էս մանր դերերից չհոգնեցի՞ր: Նա ծիծաղեց և ոտքերը արտիստիկ միացրեց, ձեռքը տարավ դեպի ճակատը և միանգամից՝ «Հրամանդ ի կատար»: Բանվորական թատրոնում ամուսինս երկար չաշխատեց: Նա այստեղ Մկրտիչ Զանանի «Պաղտասար աղբարում» Երկաթի դերը խաղաց: Էնքան էլ իր սրտովը չէր: Ու երբ Ս. Քոչարյանը տեղափոխվեց Խարազյանի անվան պետական թատրոն, Արտոյին էլ հետը տարավ: Դա 1937 թվականին էր...

Հանրապետության արվեստի և գրականության պետական թանգարանում պահպանվող արխիվային նյութերից, հին ազդագրերից, Բ. Հարությունյանի «Սովետահայ թատրոնի տարեգրությունից» և այլ աղբյուրներից տեղեկանում ենք, որ իրոք 1937 թ. մինչև 1941 թվականը Արտավազդ Խալաթյանը եղել է Խարազյանի անվան պետշրջիկ թատրոնի առաջատար դերասաններից: «Անմեղ մեղավորներում» (Ա. Օստրովսկի) Արտո Խալաթյանը Մուրով էր, Սկրոբատով՝ Գորկու «Թշնամիներում», Վրթանես Փափազյանի «Ժայռում»՝ Գրիգոր աղա:

«Ուրիշ էլ ի՞նչ դերերում է հանդես եկել ձեր ամուսինը» հարցիս Սաթիկ Ակուլյանը ավելացնում է, որ պատերազմից առաջ Արտավազդ Խալաթյանը խաղացել է նաև «Հացի խնդիրում» (պահպանվել է շամշադինյան հյուրախաղերի լուսանկարը), «Հյուրանոցի տիրուհին», «Փոթորկածիններ», «Հայրը» պիեսներում: Բոլորը միանգամից նա չի կարողանում մտաբերել:

«Անտառում», «Բեկում», «Ուրիշի երեխան» և այլ ստեղծագործություններում էլ է հանդես եկել երիտասարդ դերասանը: 1941 թ. հունիսին Խարազյանի անվան թատրոնը հյուրախաղերի էր Ախալքալաքի շրջանում, երբ սկսվեց Մեծ հայրենականը: Թատրոնն անմիջապես վերադարձավ Երևան: Հունիսի 24-ին Արտավազդ Խալաթյանը կամավոր մեկնեց Կիրովյան շրջանի զինկոմիսարիատ: Զանցած մի քանի շաբաթ՝ նա արդեն թշնամու դեմ կռվում էր Հյուսիսային Կովկասում, հետո էլ՝ Կերչում: Ստալինգրադում ծանր վիրավորվեց, կոնտուզիա ստացավ: Ապաքինվելուց հետո 4-րդ անգամ մեկնեց կրակի առաջին գիծ: 1942-ի հոկտեմբերի 12-ին Յանդկի քաղաքից (Կալմիկա) ստացվեց վիրավոր դերասան մարտիկից մի նամակ. «Սաթիկ ջան, Արտաշեսին և Սամվելին հետայսու և՛ մայր ես, և՛ հայր: Գիտեմ՝ դժվար է: Բայց հայրենիքը ի՞նչ մեղք ունի: Աշխարհի ամենագիշատիչ գազանը՝ Հիտլերը, ուզում է մեր մորը, մեր Հայրենիքը բզկտել: Եթե իմպեսները չկռվեն, նրա մոութը ո՞վ պիտի ջախջախի: Հայրենիքի համար, քո և երեխաներիս համար, 3000-ամյա հայոց թատրոնի բեմը խաղաղ, ազատ և ուրախ տեսնելու համար ես կկռվեմ ու եթե պահանջվի, կզոհվեմ... Երկու իղձ կմնա անկատար. մեկը, որ որդիներիս չկարողացա հասցնել իրենց նպատակին (հուսով եմ՝ դու դա կանես) և երկրորդը՝ չհասցրեցի քո երազած Սամվելի դերում երևանյան բեմ բարձրանալ: Դու Բաֆֆու «Սամվելը» շատ էիր սիրում, դրա համար որդուս Սամվել կոչեցինք... Ինչևէ: Ռումբերի տարափ է, ես

գնում եմ կրակի առաջին գիծ: Համբուրում եմ քեզ, իմ քաղցր բալիկներին, իմ հանդիսատեսներին:

Ձեր ամուսին, հայր, դերասան և զինվոր

Արտավազդ Խալաթյան

12. հոկտեմբերի 1942 թ.»:

Սա եղավ վերջին նամակը: Թե երբ, ինչպես զոհվեց և որտեղ է թաղված դերասան հայ մարտիկը,— մեզ անհայտ է: Թեև անհայտ հերոսներ չկան, բայց կան անհայտ հասցեներ, անհայտ զինվորի հուշակոթողներ և հավերժական կրակներ, որոնք խորհրդանշում են մարդու հերոսական վարքագիծն ու հայրենանվիրվածությունը: Արտավազդ Խալաթյանը պատրաստվում էր «Ռուզանում» Ջալալ իշխան խաղալ: Բայց բախտ չվիճակվեց. մարտադաշտում, հավատարիմ իր բեմական խոսքին, զոհվեց նա կյանքի 34-րդ գարնանամուտին:

ԱՐՏԱՎԱԶԴ ԽԱԼԱԹՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. 10/11.1929 թ. (Լենինականի Մռավյանի անվ. թատրոն, ԼՄԹ, ռեժ.՝ Թ. Սարյան) «Հոպլյա, մենք ապրում ենք»՝ հեռագրիչ և ոստիկանի քարտուղար:
2. 17/12.1929 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Ռ. Սիմոնով), «Արդյունավետ պաշտոնում»՝ Աստիծանավոր:
3. 2/3.1930 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Մ. Կոստանյան և Կ. Ալվարյան), «Խաթաբալայում»՝ Սարգիս:
4. 18/11.1930 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Աճեմյան, նկարիչներ՝ Մ. Արուտչյան և Մ. Բաբայան), «Դիկտատուրայում»՝ Հովակիմ:
5. 7/3.1931 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Ս. Խաչատրյան, նկ.՝ Արա Սարգսյան), «Նապոլեոնի արշավանքում»՝ Կարդինալ:
6. 24/5.31 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Մ. Ջանան, Նկ.՝ Արա Սարգսյան), «Աչքում»՝ Եգոր:
7. 18/10.31 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Աճեմյան), «Հացում»՝ Սոտին:
8. 20/12.31 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Աճեմյան), «Ահազանգում»՝ քարոզիչ:
9. 20/4.32 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Աճեմյան), «Նավթում»՝ քարտուղար:
10. 13/11.32 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Աճեմյան), «Հատակումում»՝ Սեդվեդև:
11. 17/5.33 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Աճեմյան), «Դատում»՝ Ֆրանց:
12. 25/2.34 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Աճեմյան, նկ.՝ Մ. Արուտչյան և Ա. Սարգսյան, երաժշտ.՝ Ս. Բարխուդարյանի), «Մեծապատիվ մուրացկաններում»՝ Հակոբ աղա և ծառա:
13. 7/6.34 թ., Լենինականի պատանի հանդիսատեսի թատրոնում (ռեժ.՝ Ց. Նիկողոսյան), «Կրակե օղակում»՝ Պրակոֆի:
14. 14/12.34 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Աճեմյան), «Ժամագործն ու հավը» պիեսում՝ կոմիսար:
15. 5/6.35 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Աճեմյան), «Շահնամեում»՝ Ջեմիլ:
16. 4/1.1936 թ., ԼՄԹ, «Գործազուրկին արգելված է սիրելում»՝ ոստիկան:
17. 15/3.1936 թ., Երևանի Գորկու անվան բանվ. թատրոնում (ռեժ.՝ Ս. Ջանան), «Պաղտասար աղբարում»՝ Երկաթ:
18. 22/6.1937 թ., «Անմեղ մեղավորներում»՝ Մուրով:
19. 28/3.1938 թ., Խարազյանի անվան պետ. շրջիկ թատրոն, Երևանում (Մ. Գորկու ծննդյան 75-ամյակի առթիվ, ռեժ.՝ Ս. Քոչարյան), «Թշնամիներում»՝ Սկրոբատով:
20. 21/4.38 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Աճեմյան), «Գոշում»՝ Առնակ:
21. 6/4.1939 թ., Խարազյանի անվան պետշրջիկ թատրոն (ռեժ.՝ Ա. Խարազյան), «Փոթորկածիններում»՝ անանուն դեր:
22. 6/6.1939 թ., Ա. Խարազյանի բեմական գործ. և իր անունը կրող թատրոնի 10-ամյակի առթիվ Երևանի Ստանիսլավսկու անվան ռուս. թատրոնում՝ ելույթ:
23. 13/4.40 թ., Արթիկի պետթատրոնում (ռեժ.՝ Ա. Խոսրով, նկ.՝ Ս. Անծարակյան), «Հայրում»՝ անանուն դեր:
24. 11/6.41 թ., Խարազյանի անվան թատրոն (ռեժ.՝ Աշխ. Խարազյան, նկ.՝ Ս. Թարյան), «Ժայռում»՝ Գրիգոր աղա:
25. **Հայկական սովետական հանրագիտարան,** I հատոր, Ե., 1974, էջ 324, կանգնած՝ 3-րդ շարքում, ձախից 6-րդը Ա. Խ.-ն է:
26. **Գրիգորյան Սասուն**—«Հայրենի հողը՝ ռազմաբեմ», Թե, 1985, թ., № 9, էջ 2 և 11:

ՀԱՅԿ ՏՈՆՈՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ (1908—1945)

ՄԾԵՑԻ ՀԱՅԿԸ

Երբ թատրոնի դիրեկտոր և գլխավոր ռեժիսոր Գուրգեն Մարինոսյանը իր իսկ բեմադրած «Ռուզանի» ներկայացումից հետո կամավոր մեկնեց պատերազմ, երբ Լևոն Զոհրաբյանի Ջալալ իշխանի զորականը՝ «Օն անդր, դեպի՛ սուր, անպաշտպան ժողովուրդը սպասում է մեզ» կոչը Հայկի ուղեղում պտտեց վերհուշի ժապավենը և այն ձգեց Տարոն-Տուրուբերանից (նա ծնվել է Բուլանըխում 1908 թ.) մինչև Ալեքսոլի ամերիկյան որբանոց, աչքի դեմ կանգնեցին իր անհաղթ պապերը, մի պահ ցնցվեց և ապա, բռնելով ընկերոջ ձեռքը, ասաց.

Հայկ Խաչատրյան (ձախից առաջինը), Զինվորական («Փարոսի կրակները»):

— Ժա՛ն, պիտի գնամ: Մենք՝ մշեցիներս, ճակատագրով դատապարտվածներ ենք. անհայր պիտի մեծանան մեր որդիները: Ի՞նչ մեղք են գործել Ռազմիկս ու Հասմիկս: Խեղճ Վարդուշ, ինչպե՞ս մեծացնի նրանց: Ո՞րք, անհա՞յր: Կգնամ, կկռվեմ, թեկուզ մեռնեմ, միայն թե երեխաներս ինձ պես գաղթ ու կոտորած չտեսնեն: Նինային ասա՝ հավանեցի իր Ռուզանը, Փաշայանի Բուրա-Նուին արտակարգ էր, Հակոբյանի Համտունը թունդ էր, Գեղամի Ներսեհը անզուգական, Ջրջան այնքան անտանելի էր, որ Արծրունյանը աչքիս արյունախում դարձավ. լավ խաղաց: Մնացածների մասին կարծիքս կհայտնեմ կռվից հետո, եթե ողջ մնամ: Գնացի...

Հաջորդ առավոտյան շատերին կարելի էր տեսնել Լենինականի այժմյան մանկական սանատորիայում, որը զինակոչիկների այն ժամանակվա հավաքակայանն էր: Այստեղ էր նաև Լենինականի Մոավյանի անվան պետական թատրոնի դերասան Հայկ Խաչատրյանը՝ մշեցի Տոնոյի որդին (ինչպես ասում էին տեղացիները): Գնացքի երկարատև սուլոցն ավելի ուժեղացրեց ուղեկցողների փղձկոցն ու լացը, գնացքի լուսամուտներից թափահարվող ձեռքերը իրենց հետ տարան կարոտ, սեր, երազանք, կամք և հաղթանակ: Կովկասյան նախալեռներից կռվելով գազազած թշնամու դեմ՝ «Տալվորիկի զավակ եմ քաջ» քայլերգը շուրթին դերասան զինվորը, քրտինք, արցունք և արյուն թափելով Ուկրաինայի, Բելոռուսիայի, Լեհաստանի ազատագրության համար մղվող մարտերում, մտնում է Գերմանիա՝ թշնամու որջը: Ռազմի այդ հերոսական ճանապարհի մասին նա կնոջը գրում է. «Ծնորհավորում եմ հաղթանակի նոր տարին: Սաշայի ու Անդրեյի հետ տարեմուտի երեկոյին խմեցինք հաղթանակի, մեր ընտանիքների կենացը: Ուրախացանք: Բայց և տխրեցինք, երբ Անդրեյը երկար նայեց ձեր նկարին, նրա կապույտ աչքերը արցունքոտվեցին: Վարդուշ ջան, այս գիշեր հարձակվելու ենք Բեռլինը գրավելու: Մնացել է երեսուն կիլոմետր: Եթե երեխաներիս բախտից ողջ մնացի, կտեսնվենք: Իսկ եթե ո՞չ... Լա՛վ, կանչում են: Այս երեսուն ռուբլին, որ ուղարկում եմ, երեխաներին տետր կառնես, որ լավ սովորեն: Համբուրում եմ ձեզ բոլորին, անսահման կարոտով, բարի գիշեր:

Ձեր Հայկ

20 հունվարի 1945 թ.
Արևմտյան Պրուսիա»:

Վերջին նամակ, վերջին մասունք և հիշատակ: Այն այսօր պահվում է դերասան Ռազմիկ

Հայկ Խաչատրյանը մեզ անհայտ դերում:

Վարդանյանի մոտ, այն տղայի, որին հայրը կայարանում խոստացավ. «Մինչև փոխադրվես երկրորդ դասարան՝ կգամ...»: Զեկավ. զոհվեց Կալինինի մարզի Պիկելմի շրջանի Բուդվետեն գյուղում: 1945 թ. գարնանը փոստատար Նիկոլը չէր հանդգնում բախել Վարդուշ Խաչատրյանի տան դուռը, չէ որ ձեռքին պահած ուներ մի «սև թուղթ»:

Տարիներ են անցել: «Արծաթե ձորակում» խաղացող դերասան հորը ծափահարող 7-ամյա մանուկն այսօր բեմ է բարձրացել որպես դերասան: Այն բեմը, ուր անավարտ մնաց իր հոր՝ Հայկ Խաչատրյանի վերջին դերը: Վերջին դերերում նա Կրավդենկո էր («Անտառները շարժվում են»), Գորոդովոյ («Գիքորում»), Իսրայել («Վարազդատում»), Վարժապետ («Քաջ Նազարում»), Թուրո և Խոսրով («Օղակում»-ում), Ծերունի («Ռուզանում»)... Հին ազդագրերից, արխիվային նյութերից և մատենագիտական տեղեկություններից իմանում ենք, որ Հայկ Խաչատրյանը 30-ական թվականներին ռեժ. Ա. Խոսրովի, Ռ. Մինասյանի, Գ. Հարությունյանի, Վ. Ամեմյանի, Լ. Քալանթարի, Վ. Թերզիբաշյանի, Գ. Մարինոսյանի, Ժ. Էլոյանի, Ջ. Ժամհարյանի լենինականյան բազմաթիվ բեմադրություններում հանդես է եկել տարբեր դերակատարումներով: Նրա վերջին դերը եղավ ոչ բեմական. ռազմիկի դեր՝ ռազմադաշտում, պայքար Հայրենիքի ազատության և ժողովուրդների ու սերունդների խաղաղության համար.— ահա դերասան մարտիկի հերոսական կերպարի նշանաբանը, որի համար էլ նա չխնայեց իր երիտասարդ կյանքը:

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. 3/10.32 թ., Լենինականի Մոավյանի անվան թատրոն (հետայսու՝ ԼՄԹ, ռեժ.՝ Ա. Խոսրով), «Ծերլոկ Հոլմսում»՝ անանուն դեր:
2. 12/2.38 թ., Ախալքալաքի սոց. կուլտուրայի տան թատերախմբում (ռեժ.՝ Հ. Գալստյան), «Նամուսում»՝ Ռուստամ:
3. 29/4.38 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Ռ. Մինասյան), «Առերեսումում»՝ Օտտո:
4. 14/7.38 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Ամեմյան), «Էմանուելում»՝ Աղազար:
5. 29/10. 38 թ., ԼՄԹ (ՀամԼԿԵՄ 20-րդ համագումարի առթիվ, ռեժ.՝ Վ. Ամեմյան), «Փարոսի կրակներում»՝ զինվորականներից մեկը (այդ մասին Արամ Գրիգորյանը գրել է «Բանվորում» 1938 թ. նոյեմբերի 15-ին, № 263-ում, «Արժեքավոր նվեր» հոդվածը):
6. 29/11.38 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Ամեմյան), «Գոշում»՝ Բագրատ (նոր բեմադրություն):
7. 10/3.39 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Ռ. Մինասյան), Լ. Քալանթարի թարգմանած «Արծաթե ձորակում»՝ Կոստենկո և կրտսեր լեյտենանտ:
8. 15/5.39 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Գոհար Հարությունյան), «Պավել Գրեկովում» շեկ տրակտորիստ, Լև Արկադիչ և Ստրուզաչ:
9. 5/12.39 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Գոհար Հարությունյան), «Իմ որդինում»՝ Պոկոր և բ.նտի պարետ:
10. 5/2.40 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Վ. Թերզիբաշյան, նկարիչ՝ Կոստանդին Մարգարյան), «Ժայռում»՝ Բաղդասար ամի և Կիրակոս:
11. 18/4.40 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Գ. Մարինոսյան), «Լենինում»՝ գյուղացի:
12. 30/6.40 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Գ. Հարությունյան), «Մանյալում»՝ Ֆուրմանով և Նավաստի:
13. 20/10.40 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Գ. Մարինոսյան), «Ռուզանում»՝ ծերունի:
14. 23/11. 40 թ., ԼՄԹ (նվիրված Հայաստանի 20-ամյակին, ռեժ.՝ Ջ. Ժամհարյան), «Օղակում»՝ Թուրո և Խոսրով:
15. 28/12. 40 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Գ. Հարությունյան), «Քաջ Նազարում»՝ վարժապետ:
16. 11/3.41 թ., ԼՄԹ (ռեժ. Ջ. Ժամհարյան), «Վարազդատում»՝ Իսրայել:
17. 23.4.41 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Ժ. Էլոյան), «Գիքորում»՝ գորոդովոյ:
18. 7/11.41 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Ջ. Ժամհարյան), «Անտառները շարժվում են»-ում՝ Կրավչենկո:
19. **Վարդանյան Ռազմիկ**— «Մինչև փոխադրվես երկրորդ դասարան, կգամ» (ակնարկ իր հոր Հ. Խ.-ի մասին): «Բանվոր», Լենինական, 1975, 25 մարտի, № 70, էջ 2:
20. **Գրիգորյան Սասուն**— «ՌազմաՀակատը՝ վեջին բեմ» (Կա Հ. Խ.-ի լուսանկարը դերում), ԳԹ, 11 մայիսի 1979 թ., էջ 4:
21. **Վարդանյան Ռազմիկ**—Այն տարիներին (ոչինչ չի մոռացվել), «Թատերական Երևան», 1975 թ., № 9-ի հատուկ հավելված, էջ 30—31:
22. **Գրիգորյան Սասուն**— «Հայրենի հողը՝ ռազմաբեմ», ԹԵ, 1985 թ., № 9, էջեր 4 և 9:
23. **Հարությունյան Բաբկեն**—«Սովետահայ թատրոնի տարեգրություն», Ե., 1961 թ., գիրք I, էջեր՝ 308, 516, 529, 540, 548, 553, 566, 576, 606, 615, 624, 637, 649, 654, 660, գիրք II, Ե., 1969 թ., էջեր՝ 24, 30, 53:

ՕՊԵՐԱՏՈՐԸ ՉՎԵՐԱԴԱՐՁԱՎ ՍՏՈՒԴԻԱ

ՍՈՒՐԵՆ
ՄԻՔԱՅԵԼԻ
ԿԱՖԱՖՅԱՆ
(?)

Մոսկվա: Ժուռնալիստի կենտրոնական տուն: Մեծ հայրենականում զոհված ժուռնալիստների հիշատակը հավերժացնող հուշատախտակին փոքրագրված է նաև Սուրեն Կաֆաֆյանի ազգանունանունը: Նախապատերազմական և պատերազմի առաջին տարիներին միութենական (հատկապես մոսկովյան) թերթում տպագրված ֆոտոթղթակցությունների տակ հաճախ էր ընթերցողը հանդիպում այս ստորագրությանը: Սուրենն ուզում էր ինժեներ դառնալ, բայց լուսանկարչության սերը հաղթեց: Նա անավարտ թողեց Լենինգրադի պոլիտեխնիկական ինստիտուտը և տեղափոխվեց Մոսկվա: Այստեղ ընդունվեց և ավարտեց կինեմատոգրաֆիայի պետական ինստիտուտի (ՎԳԻԿ) օպերատորական ֆակուլտետը և աշխատանքի անցավ «Մոսֆիլմ» կինոստուդիայում: Շուտով էկրան բարձրացավ «Պիշկա» ֆիլմը (ռեժ.՝ Վոլչոկ), որի օպերատորը Սուրեն Կաֆաֆյանն էր: Բոնկվեց Մեծ հայրենականը: Սուրենը նորից անբաժան էր նկարահանման իր սարքերից: Խորհրդային 236 օպերատորների հետ նա ևս «այցելում էր» տարբեր ռազմաճակատներ թե՛ որպես օպերատոր, թե որպես լուսանկարիչ՝ հետևելով իր ավագագույն ընկերներին՝ «Պրավդայի» ֆոտոթղթակից Միխ. Կալաշնիկովին, կինոօպերատորներ Վլադիմիր Սուշինսկուն և Սերգեյ Ստրունինիկովին: Մոսկվայի տակ, Ստալինգրադում, Ղրիմում, Հյուսիսային Կովկասում և այլուր նոնակներով և ատրճանակով զինված հայ ռազմիկը խրամատից խրամատ էր անցնում՝ ուսից կախ կինոօպերատորի և լուսանկարչի սարքավորումները: Արմեն Հովսեփյանի վկայությամբ[1] մարտական սխրանքների, ռազմական առաջադրանքների իրագործման և ռազմաճակատային թղթակից օպերատորի իր պարտականությունները անձնվիրաբար իրագործելու համար ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը Սուրենին պարգևատրել է Կարմիր դրոշի (երեք) և Կարմիր աստղի (երկու) շքանշաններով ու մեդալներով:

Թե որտեղ և երբ կտրվեց երիտասարդ կինեմատոգրաֆիստ լրագրողի կյանքի թելը, մեզ պարզ չէ: Բայց երբ խոսք է բացվում 40-ից ավելի զոհված կինոօպերատորների մասին, Սուրեն Կաֆաֆյանին բոլորն են հիշում: Չէ՞ որ ԽՍՀՄ Պետկինոյի արխիվում, կենտրոնական և ռազմաճակատային մամուլում շարունակում են ապրել Կաֆաֆյանի նկարահանած և լուսանկարած կադրերը, որոնք անհուն սիրով են լցված Հայրենիքի, նրա զինվորների հանդեպ և բուռն ատելությամբ են համակված դեպի ֆաշիզմը:

[1] «Չվերադարձավ», «Ավանգարդ», 19 մարտի 1970 թ., էջ 3:

ԴԵՐԱՍԱՆԻ ԴԵՐԱՍԱՆ ԵՂԲԱՅՐԸ

ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԱՐՇԱԿԻ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
(1907—1941)

Հովհաննես Հայրապետյանը ծնվել է Նորքում 1907 թվականին: Միջնակարգն ավարտելուց հետո նա էլ կյանքում հազար ու մի դռներ բախեց՝ վաստակելու իր հացը: Պատանեկան տարիներից նրան ուղեկցող թատերասիրությունը կյանքի այլ ճանապարհ ընտրեց նրա համար: Սկզբում որպես ասմունքող, երաժիշտ, թառահար և սիրող դերասան աշխատանքի անցավ Երևանի լուսաշխի տանը: Աշխատասիրությունն ու բեմական ձիրքի ակնառու դրսևորումը նրան տարան Կարմիր բանակի թատրոն (ռեժ.՝ Վրույր Մանվելյան): Որոշ ժամանակ անց ինքնուս դերասանի բեմական բարձր կուլտուրան, զուսպ խաղառնը, ռեժիսորական ցուցումների դերասանական բացահայտումները դարձան այն գրավականը, որով նա անդամագրվեց Ամո Խարազյանի շրջիկ թատրոնին: 1933—1938 թ. Հովհ. Հայրապետյանը այս թատրոնի սիրված դերասաններից էր, այստեղից տեղափոխվեց Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն: Մշակութային այս նոր օջախում բացահայտվեցին նորքեցի Արշակ քեռու դերասան որդու ստեղծագործական բոլոր հնարավորությունները: Առաջինը ռեժիսոր Սարգիս Քոչարյանն էր, որ նրան «Ջլամկա Կոպաչում» դեր (Ջորեխ) վստահեց: Հովհաննեսը արդարացրեց իր նկատմամբ եղած վստահությունը: Այնուհետև 1938—1941 թվականներին (տես խաղացանկը) Հ. Հայրապետյանը այս նույն թատրոնում «Ինչպես է կոփվում պողպատը», «Թոմ Կենտի», «Անվեհերները», «Ավազակներ», «Արտիստը» և բազմաթիվ այլ բեմադրություններում ստանձնեց մեծ և փոքր դերեր՝ արժանանալով հանդիսատեսների ծափերին և ռեժիսորներ Ս. Քոչարյանի, Ա. Մարտիրոսյանի, Ա. Աղասյանի գովասանքին: Հովհաննես Հայրապետյանի դերասանական խաղը, կերպարների յուրահատուկ մեկնությունը դուր էր եկել նաև մայր թատրոնի (Սունդուկյանի անվան) ստեղծագործական կոլեկտիվին: Արշ. Բուրջալյանն ու Վ. Վարդանյանը նրան ուզում էին տեղափոխել մայր թատրոն:

1940 թ. նոյեմբերին Մոսկվայում մանկապատանեկան թատրոնների համամիութենական ստուգատեսին Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնը լուրջ քննություն բռնեց: «Գիքոր» և «Քաջ Նազար» բեմադրություններում մի քանի դերասանների, հատկապես Վազիկ Մուրադբեկյանի և Հովհաննես Հայրապետյանի խաղն արժանացավ հատուկ մրցանակների: Օր-օրի ծաղկում էր Հովհաննեսի բեմական տաղանդը: Թատրոնից դուրս նա Շեքսպիր էր կարդում և Շիլլեր, Օստրովսկի և Սունդուկյան: Տիգրան Շամիրխանյանի «Թատերական բեմարվեստի հիմունքները» գիրքը նրա ամենօրյա ուղեկիցն էր: Նոր-նոր դերերի էր պատրաստվում երիտասարդ արտիստը, երբ ռադիոն հայտարարեց պատերազմի գույժը:

«Չէ՞, ես էլ պիտի գնամ: Ընկերներս՝ **Վազիկը, Հայկը, Վարդոն,** արդեն դիմում են տվել՝ ինքնակամ ռազմաճակատ մեկնելու: Ես ո՞ւմից եմ պակաս, վաղը ես էլ եմ գնալու»,— այս գրույցը Գ. Սունդուկյանի անվան թատրոնի դերասան իր եղբոր՝ Հարությունի հետ, եղավ վերջին մտերմիկ խոսակցությունը: Մի օր հետո Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնի արտիստներ **Լևոն Ասատրյանի, Սերոբ Հարությունյանի,** նկարիչ **Հայկազ Գրիգորյանի** հետ Հովհաննեսը ևս զինակոչիկների հավաքակայանում էր, որտեղից էլ գնացքը նրանց տարավ հյուսիս՝ դեպի ռազմադաշտ: Դոնի Ռոստովի ռազմական հատուկ ուսումնարանում նախապատրաստական դասընթացներն ավարտելուց հետո, որպես ջոկի հրամանատար, Հովհաննես Հայրապետյանը նշանակում ստացավ ծառայելու Հյուսիս-կովկասյան ռազմաճակատում: Մի քանի ամիս անց՝ 1941-ի աշնանը, գերմանական վայրագների արձակած գնդակը խզեց կրտսեր լեյտենանտ քաջորդու կյանքի թելը՝ մի դերասանի, որ դեռ չէր հասցրել ընտանիք կազմել և լեցուն էր հազար ու մի պայծառ երազներով: Հովհաննեսի փոխարեն հայրենի քաղաք վերադարձավ հավերժող և սրբազան մի անուն և փորագրվեց հայոց մայրաքաղաքի Դերասանի տան բեմարվեստի զոհված մշակներին նվիրված մարմարե հուշատախտակին:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. 12/3.1938, Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն՝ ԵՊՀԹ (ռեժ.՝ Սարգիս Քոչարյան), «Ջլամկա կոպաչում»՝ Ջորեխ:
2. 29/11—1938, ԵՊՀԹ (ռեժ.՝ Ա. Մարտիրոսյան), «Ինչպես է կոփվում պողպատում»՝ Ստրուչկով, Յասաուլ:
3. 15/12—1938, ԵՊՀԹ (ռեժ.՝ Ա. Աղասյան), «Թոմ կենտիում» («Արքայազնն ու աղքատը»)՝ արհեստավոր:
4. 5/3—1939, ԵՀՊԹ (ռեժ.՝ Ա. Մարտիրոսյան), «Անվեհերներում»՝ Համբարձում:
5. 14/Բ—1939, ԵՊՀԹ (ռեժ.՝ Ս. Քոչարյան), «Քաջ Նազարում»՝ Հյուր:
6. 14/5—1939, ԵՊՀԹ (ռեժ.՝ Ա. Աղասյան), «Գիքորում»՝ Հաթուն:
7. 21/10—1939, ԵՊՀԹ (ռեժ.՝ Ս. Քոչարյան), «Ավազակներում»՝ Ռազման:
8. 22/2—1939, ԵՊՀԹ (ռեժ.՝ Ս. Քոչարյան), «Արտիստում»՝ Սելյոդկա:
9. 25/2—1939, ԵՊՀԹ (ռեժ.՝ Ս. Քոչարյան), «Անահիտում»՝ Դոնապահ:
10. 27/4—1940, ԵՊՀԹ (ռեժ.՝ Ա. Աղասյան), «Գալիլեո Գալիլեյում»՝ Ջուզեպպե:
11. 20/10—1940, ԵՊՀԹ (ռեժ.՝ Ա. Աղասյան), «Տուն № 5-ում»՝ Ֆիլին:
12. **Գրիգորյան Սասուն**— «Հայրենի հողը՝ ռազմաբեմ», ԹԵ, 1985 թ., № 9, էջ 5:

ԴԵՐԱՍԱՆԸ, ՌԵԺԻՍՈՐԸ, ՄԱՐՏԻԿԸ

ՀՈՎՍԵՓ
ԳԵՎՈՐԳԻ
ՀՈՎՍԵՓՅԱՆ
(1904—1942)

Հրազդանի (նախ. Ախտա) շրջանի Արզական գյուղում է ծնվել Հովսեփ Հովսեփյանը 1904 թ. օգոստոսի 15-ին, Աղեկեցց Գևոյի հարկի տակ: Դեռ դպրոցական տարիներից Գեղամն ու Գարսևանը տեսնում էին, թե ինչպես են ծաղկում իրենց եղբոր դերասանական ձիրքն ու թատերասիրությունը: Ուսումնառության տենչը Հովսեփին տարավ Մոսկվա՝ թատերական ստուդիա, որտեղ աշակերտեց Ռուբեն Սիմոնովին: 1934—1936 թթ. որպես ժողթատրոնի ռեժիսոր և դերասան Հովսեփն աշխատեց Մեղրիում, այնուհետև տեղափոխվեց Հոկտեմբերյան, հետո էլ՝ Ստեփանավան: Հովսեփը ոչ միայն օժտված էր ռեժիսորական ձիրքով, այլև շնորհաշատ կինոդերասան էր: Նրան անձամբ ճանաչողները այսօր էլ «Լենինյան մարշում» կարող են տեսնել իրենց սիրելի ընկերոջն ու բարեկամին: 30-ական թվականների վերջերին Հոկտեմբերյանի պետական շրջանային թատրոնում[1] Հ. Հովսեփյանը բեմադրեց «Կույր երաժիշտը», «Հայրենիք», «Թող բացվեն վարդերը», «Սևիլ» պիեսները: Հոկտեմբերյանի շրջանի «Բոլշևիկյան տեմպով» թերթում (4 սեպտեմբերի 1939 թ., № 83) Ա. Դաղբաշյանը դրվատանքով է խոսել «Հայրենիք» ներկայացման մասին: Որպես դերասան Հ. Հովսեփյանը ժամանակին հանդես է եկել Ստյոպկայի դերում («Պլատոն Կրեչետ», Միկոյանի շրջպետթատրոն, ռեժ.՝ Ջ. Ղամբարյան), Օթարյանի դերում («Պատվի համար», Ստեփանավանի շրջպետթատրոն, ռեժ.՝ Ա. Կայծունի), Մարտինի դերում («Օղակում», Ստեփանավանի շրջպետթատրոն, ռեժ.՝ Ա. Կայծունի): «Հերոսների ստվերում» ներկայացման մեջ նա գլխավոր հերոսի՝ բժշկի դերակատարն էր, իսկ «Նամուսում»՝ Սեյրանի:

— Շուտ էր մտնում դերի մեջ, կարողանում էր դերը լիովին բացահայտել,— պատմում էր Հովսեփի մասին Ստեփանավանի թատրոնի այն ժամանակվա ռեժիսոր Արամայիս Կայծունին և ավելացնում.

— Վ. Վաղարշյանը դիտեց «Օղակումի» մեր բեմադրությունը Ստեփանավանում 1940 թ. նոյեմբերին: Այն նվիրված էր Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 20-ամյակին: Որպես պիեսի հեղինակ և ռեժիսոր նրա վրա արտակարգ լավ տպավորություն թողեց Մարտինի դերակատար Հովսեփը: Դերը «թրջելու» համար Հովսեփն ու ես Լոռու բերդի մոտ, Դեբեդի ափին մի լավ խնջույք սարքեցինք: Ափսո՜ս. Հովսեփը գնաց և... զոհվեց...

Ստեփանավանի շրջպետթատրոնում Հ. Հովսեփյանը հանդես է եկել նաև որպես ռեժիսոր: Նա այստեղ բեմադրել է «Հայրենիքի հողը», «Կիսակայարանում», «Հին ամառանոցում» ստեղծագործությունները (նկարիչ՝ Ն. Քոչկանյան):

Հովսեփ Հովսեփյանը բանակ մեկնեց 1942 թ. փետրվարի 20-ին Ստեփանավանից: Մի քանի ամիս անց Դոնբասից ստացվող նրա նամակները դադարեցին: Հիտլերյան գնդակը պատճառ դարձավ, որ գանգրահեր ու վառվռուն Հովսեփը էլ բեմ չբարձրանա: Զոհված ռեժիսորի արխիվն ու փաստաթղթերը այժմ պահվում են Երևանում, նրա այրու՝ Վերայի և որդիների՝ Զանիկի, Լուիզայի և Էմմայի մոտ: Էմման ուսուցչուհի էր մայրաքաղաքի № 100 միջնակարգ դպրոցում, այժմ Հայպետագրոնախագիծ ինստիտուտի ինֆորմացիայի բաժնում է աշխատում: Դերասան, ռեժիսոր և մարտիկ Հ. Հովսեփյանի մասին թերևս հետաքրքրվողներին էլ ավելի ընդարձակ տեղեկություններ կարող է հաղորդել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Պարսամյանը: Նրանք մերձավոր բարեկամներ և մտերիմներ էին:

Հ. Հովսեփյանի անունը անմահացել է Երևանի դերասանի տանը՝ հայ բեմի զոհված երախտավորներին նվիրված մարմարե հուշատախտակին:

[1] 1938 թ. մարտի 23-ին Հոկտեմբերյանի դրամատ. թատրոնը պետականացվեց, և գլխ. ռեժիսոր նշանակվեց Հ. Հ.-ն—(Ս. Գ.):

ՀՈՎՍԵՓ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. 30/4.1938 թ., Հոկտեմբերյանի պետական շրջանային թատրոն, «Կույր երաժիշտը» (ռեժ.՝ Հով. Հովսեփյան և Կ. Եփրեմյան):
2. 1/9.1938 թ., Հոկտեմբերյանի պետ. թատրոն, «Հայրենիք» (ռեժ.՝ Հ. Հովսեփյան, այդ մասին տես Ա. Դաղբաշյանի «Հայրենիք» հոդվածը «Բոլշևիկյան տեմպով» թերթում, 1938 թ., 4/9, № 83):
3. 10/3.1939 թ., Միկոյանի շրջ. թատրոն (ռեժ.՝ Ջ. Ղամբարյան), «Պլատոն Կրեչետում»՝ Ստյոպա:
4. 28/12.1939 թ., Ստեփանավանի պետ. թատրոն (ռեժ.՝ Ա. Կայծունի), «Պատվի համարում»՝ Օթարյան (տեղ. մամուլը գովել է):
5. 23/2.1940 թ., Ստեփանավանի պետ. թատրոն (ռեժ.՝ Ա. Կայծունի), «Հայրենիքում»՝ Արշիլ:
6. 2/3.1940 թ., Ստեփանավանի պետ. թատրոն (ռեժ.՝ Ա. Կայծունի, բեմականացումը Թ. Սարյանի), «Նամուսում»՝ Սեյրան (նաև Կայծունին էր խաղում):
7. 30/4. 1940 թ., Ստեփանավանի պետ. թատրոն (ռեժ.՝ Ա. Կայծունի), «Հերոսների ստվերում»՝ բժիշկ (գլխ. դեր):
8. 24/11.1940 թ., Ստեփանավանի պետ. թատրոն (ռեժ.՝ Ա. Կայծունի), «Օղակում»՝ Մարտին:
9. 15/9.1941 թ., Ստեփանավանի պետ. թատրոնը բեմադրեց (ռեժ.՝ Հով. Հովսեփյան) «Հայրենիքի հողը», «Կիսակայարանում» և «Հին ամառանոցում» պիեսները (նկարիչ՝ Ն. Քոչկանյան):
10. Հարությունյան Բաբկեն—Սովետահայ թատրոնի տարեգրություն, Ե., 1961, գիրք I, էջեր՝ 529, 542, 566, 609, 617, 619, 627, 654, գիրք II, Ե., 1969 թ., էջ 47:
11. **Գրիգորյան Սասուն**—«Ռազմաճակատը՝ վերջին բեմ», ԳԹ, 11 մայիսի 1979 թ., էջ 4:
12. **Գրիգորյան Սասուն**—«Հայրենի հողը՝ վերջին բեմ», Ավանգարդ, 9 մայիսի 1982 թ., էջ 4:
13. **Գրիգորյան Սասուն**—«Հայրենի հողը՝ ռազմաբեմ», Թատ. Երևան, 1985 թ., № 9, էջ 2—11:

ԱՐԾԻՎՆԵՐԸ ԲԱՐՁՐՈՒՄ ԵՆ ՄԵՌՆՈՒՄ

ԳՈՒՐԳԵՆ
ՍԱՀԱԿԻ
ՄԱՐԻՆՈՍՅԱՆ
(1904—1942)

1941 թվականի հունիսի 22: Զով կեսօր է: Սունդուկյանցիները հունիսի 5—17-ը Մոսկվայում հյուրախաղերի են: Ս...նդուկյանցիների թափուր բեմը տրամադրվել է հանրապետության երկրորդ քաղաքի դերասաններին: Բեմադրվում է Մուրացանի «Ռուզանը»: Լենինականցիների հյուրախաղերը աշխուժություն են մտցրել թատերասերների մոտ: Դահլիճը լիքն է: Ներսեհի դերակատար Գեղամ Հարությունյանը հանկարծ ցնցվեց. ինչ-որ անսովոր մի գույժ դահլիճը ոտքի հանեց: Ամբոխը բռնկվեց, վրեժի և ատելության զգացումը, պատվախնդրությունն ու հայրենիքի պաշտպանությունը դարձան հրամայական պահանջ: Վրդովված ամբոխին հասավ միայն Ներսեհի զորականը. «Դեպի սո՛ւր, քաջե՛ր...»: Դերասաններից յուրաքանչյուրը մի-մի Զալալ իշխան դարձած բեմից երդվեցին. «Այս սուրը պատյան չի մտնի, մինչև Բեռլինից հաղթանակով չվերադառնա...»: Բեմ բարձրացավ նաև միջահասակ, շագանակագույն մազերը սանրած, մարտական կեցվածքով մի երիտասարդ և շեքսպիրյան բառերով դիմեց խռնված հանդիսատեսներին.

Արյան դեմ՝ արյուն, և մահվան դեմ՝ մահ:
Բռնության դիմաց տեսեք բռնություն:
Եվ արդ, ուրեմն.—
Գնդե՛ր, շարժվեցե՛ք, դրո՛շ փողփողեք,
մեր գործն է արդար...

Շեքսպիրի «Հենրիխ չորրորդի» այս խոսքերն արտասանողը «Ռուզանի» բեմադրող ռեժիսոր Գուրգեն Մարինոսյանն էր:

Գուրգեն Սահակի Մարինոսյանը ծնվել է 1904 թվականի սեպտեմբերի 10-ին, Նոր Բայազետում: Քաղաքացիական - կռիվների ժամանակ մայրը՝ Օլինկան, հաճախ էր վիճում ամուսնու հետ, թե «էս քյորփա երեխին հետդ մի տար, մեղք է, ի՞նչ իմանաս՝ քո վրա կրակողը քո երեխային էլ չի սպանի...»:

Փոքրիկ Գուրգենը հորից անբաժան էր: 1920—1921 թվականներին, դեռ դեմքի աղվամազը չսափրած, որպես կամավորական Սևանի ավազանում նա կռիվ էր մղում դարանակալած մուսաֆաթականների և թուրք բանդիտների դեմ: Տասնվեց տարեկան էր, երբ ուսից կախված հրացանն իր հետքը թողեց. վիրավորեց ոտքը: Պատանի Գուրգենը ուզում էր հետախույզ դառ-

նալ: Հետագայում ներգրավվեց կոմերիտական աշխատանքի ոլորտը, աշխատեց որպես քաղկոմի քարտուղար, որոշ ժամանակ անց (1926 թ.) ընդունվեց Երևանի պետհամալսարանի բանֆակը: 1930 թվականին այն ավարտեց և նույն տարում էլ փայլուն քննությամբ դարձավ Մոսկվայի կինեմատոգրաֆիայի պետական ինստիտուտի (ВГИК) ուսանող: 1935 թվականին Մարինոսյանն ավարտեց ռեժիսորական ֆակուլտետը ու անմիջապես աշխատանքի անցավ «Հայֆիլմ» կինոստուդիայում: Այստեղ նա աշխատեց մինչև 1939 թվականը: **«Քանաքեռցին», «Երևանը Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք», «Լենինականը Խորհրդային Հայաստանի երկրորդ քաղաքն է»** փաստագրական ֆիլմերի ռեժիսորը միանգամից գրավեց արվեստագետների և հանդիսատեսի ուշադրությունը:

«Գուրգենը սովորում էր Սերգեյ Էյզենշտեյնի մոտ: Հանճարեղ այս կինոռեժիսորի ազդեցությունը, որ ուներ Գուրգենը, ինձ բաժին ընկավ ճաշակելու «Հայկինոյում», երբ ստեղծագործական բուռն ոգևորությամբ նա նկարահանեց **«Սևանի ձկնորսները»**: Սցենարը ես էի գրել: Որպես նույն ինստիտուտի շրջանավարտներ, գործընկերս ինձ միշտ ասում էր. «Ինչ սովորել ենք, կիրառել է պետք: Թե չէ ում են պետք լեկցիաները»: Տանջում էր, սիրով ու խստապահանջությամբ էր տանջում թե՛ սցենարիստիս, թե՛ դերասաններին: Նրա նուրբ դիտողությունը, առաջարկը, մեկնությունը, իրոք, իսկական արվեստի համար մղվող պայքար էին...— Մանրամասնությամբ և դիպուկ բնորոշելով ռեժիսոր Մարինոսյանին, գրող Աշոտ Շայբոնն այնուհետև ավելացնում է.— Ամեն անգամ, երբ հանդիպում եմ Մարատ Մարինոսյանին, ինձ թվում է, թե Գուրգենն է դեմս. իսկակա՛ն հայրն է: Լավ է, որ հոր մասնագիտությունն է ընտրել: Գուրգեն Սահակիչին լավ ճանաչելու համար լավ կլինի դիտել նրա նկարահանած **«Փախուստ», «Վեց համազարկ»** գեղարվեստական լիամետրաժ և **«Ծաղկող Հայաստան»** վավերագրական ֆիլմերը...»:

1938 թվականին, հաշվի առնելով երիտասարդ ռեժիսորի ստեղծագործական կարողություններն ու ազնիվ նվիրումը, արվեստի երկրպագուները նրան ընտրում են Հայկական ԽՍՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի դեպուտատ, մի տարի հետո՝ 1939-ին, Մարինոսյանը նշանակվում է Լենինականի Մոսավյանի անվան պետթատրոնի տնօրեն և ռեժիսոր, ուր հասցնում է աշխատել երկու տարի[1]:

— Լավ հիշում եմ,— պատմում է հոր մասին ռեժիսոր, արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Մ. Մարինոսյանը:— Ես տասնհինգ տարեկան էի: Վարդան Նիկիտիչը և հայրս Լենինականի թատրոնում բեմադրել էին Կապլերի և Զլատոգորովայի «Լենին» պիեսը: Երբեք չեմ կարող մոռանալ, թե նա ինչպիսի դրվատանքով էր խոսում Վարդան Աճեմյանի մասին: Դեռ ականջումս են նրա՝ «Ես նրան երախտապարտ եմ... Մեծ, շատ մեծ ռեժիսոր է, վախթանգովյան ստիլի...» խոսքերը՝ հասցեագրված Վարդան Նիկիտիչին, մի մարդու, որը ուսուցիչ եղավ ոչ միայն հորս, այլև ինձ համար... Հայրս հետո առանձին բեմադրեց «Ռուզանը»: Անշուշտ, մեծանուն ռեժիսորը նորից էր նրան օգնում, ուղղություն տալիս: Հիշում եմ՝ մի ընկերոջ հետ հայրս թարգմանել էր «Տիկնիկային քաղաք» պոեմը: Հունիսի 22-ին, երբ «Ռուզանը» բեմադրվում էր Երևանում, պայթեց պատերազմը: Աչքիս դեմ է, թե ինչպես նա, դառնալով մորս և ինձ, ասաց. «Հասմի՛կ, գնացե՛ք տուն: Մարատն ու Ինեսան թող դասերը սովորեն, քիչ հետո ես կգամ, կճաշենք...»: Մեզանից շուտ հասավ տուն: Վերցրեց անձնագիրն ու զինգրքույկը, դիմում գրեց կամավոր բանակ մեկնելու մասին, համբուրեց բոլորիս և ուսապարկն առած դուրս եկավ... երեկոյան գնացք նստեց Երևանի կայարանից: Ահա նրա վերջին օրը և մեր վերջին հանդիպումը:

«Ռուզանի» երևանյան բեմադրության հաջորդ առավոտյան Լենինականի թատրոնի գլխավոր ռեժիսոր Արշակ Բուրջալյանն ու նկարիչ Մելիքսեթ Սվաղչյանը երկար զրուցեցին: «Թատրոնը վերակառուցել է պետք»,— եղավ միակ եզրակացությունը:

Լենինականի զինվորական ուսումնարանի դասընթացներում մեկ-երկու ամիս սովորելուց հետո Գուրգեն Մարինոսյանը Կովկասյան նախալեռներում զենքը ձեռքին մարտնչում էր մեր երկիրը ներխուժած գերմանական հրոսակների դեմ: Որքան անքուն գիշերներ, ռազմի անանցանելի ճանապարհներ տեսավ ու կտրեց 408-րդ

[1] Տես՝ ՍԼԻ-ի կուսարխիվ, ֆոնդ 1, ցուցակ 70, գործ 1389:



ՀՄՊ-ում զոհված հայ բեմի երախտավորներին նվիրված մարմարե հուշատախտակ Երևանում, Դերասանի տանը:

Արտավազդ Խալաթյան (Զոհված դերասան)— ԳՐԻԳՈՐ ԱՂԱՑԻ դերում («Ժալո», 1941 թ.):

Արտավազդ Խալաթյան (Զոհված դերասան)— ԿԱՐԴԻՆԱԼ, «Նապոլեոնի արշավանքը», Լենինականի պետթատրոն, 1931 թ.:

Շաքրո Մելքոնյան (Զոհված դերասան)— ՋՈԼԼԱ («Ռուզան», Կիրովականի պետթատրոն, 1940 թ.):

Շաքրո Մելքոնյանը և Գ. Միրզոյանը «Ռուզան» ներկայացման 4-րդ տեսարանում: Ձախից 1-ը **Շ. Մելքոնյանն** է (զոհված դերասան):

Ջուլա-Շաքրո Մելքոնյանը Ռուզանի դիակի մոտ։ «Ռուզան», Կիրովականի պետթատրոն, 1940 թ.։

Շաքրո Մելքոնյան (Զոհված դերասան)— Կապլալների տեսարանում, («Ռուզան», Կիրովականի պետթատրոն, 1940 թ.)։



Շաքրո Մելքոնյան (Զոհված դերասան)— ԳԻՎԻ, «Արսեն», Կիրովականի պետթատրոն, 1939 թ.:

հայկական հրաձգային դիվիզիայի գնդերից մեկի կոմիսար, կոմունիստ Գուրգեն Մարինոսյանը, վկա են այն դեղնած և արդեն մասունք դարձած նամակներն ու բացիկները, որոնք գործող բանակից նա հասցեագրել է կնոջը՝ Հասմիկ Մարինոսյանին:

1942 թվականին Նեֆտեգորսկի և Խադիջենի վրայով գերմանական «Ֆ» ստորաբաժանումը հարձակման է անցնում Գեյման, Գունայ և Օպլեպեն լեռների շրջանում: Խորհրդային 18-րդ բանակը և սևծովյան զորքերի հրամանատարությունը ամեն կերպ ջանում են կասեցնել թշնամու մուտքը դեպի Տուապսե և Ստալինգրադ: Նովոռոսիյսկի մոտից 408-րդ դիվիզիան Պշիշի հովտում 328-րդ դիվիզիայի և 40-րդ մոտոմեխ բրիգադի միասնությամբ կատաղի մարտեր էր մղում թշնամու դեմ: Ինչպես վկայում է դիվիզիայի կոմիսար, փոխգնդապետ Ս. Սարգսյանը, Գուրգեն Մարինոսյանի ղեկավարած 670-րդ հրաձգային գունդը գնում էր առջևից: Հակառակորդ երկու բանակներն էլ տալիս են բազմաթիվ զոհեր և վիրավորներ: Դաժան այդ օրերի և ռազմամարտերի մասին ռեժիսոր մարտիկը կնոջը գրել է. «...Հասմիկ ջան, դիրքավորվել ենք անտառում: Գունդը կորուստներ ունի: Եվ դա հասկանալի է: Խաղ չէ, այլ պատերազմ: Մեծ, շատ մեծ պատերազմ: Դիմացի՛ր: Վստահ եղիր՝ երեսիս ցեխ չի կպչի: Ամեն ինչ լավ կլինի: Հաղթանակը մերը կլինի: Այդ հաղթանակում քո Գոգոն իր համեստ բաժինն ունի...»: Պշիշի հովտում դաղարի հարմար պահին նորից երիտասարդ զինվորը յուրայինների հետ է, նրանց մասին է խորհում և չի մոռանում որդուն պատվիրել. «...Դու հիմա արդեն հասկանում ես, որ քո յուրաքանչյուր քայլը պետք է կատարվի հանուն հայրենիքի պաշտպանության: Քո յուրաքանչյուր գործում օրինակ եղիր, իմ Մարատիկ»: Ավաղ, սա եղավ ռեժիսորի վերջին նամակը: Մի քանի օր հետո Վոլչեյ բարձունքի պաշտպանության ժամանակ Գոյթխի վրա տեղացին թշնամու ռումբերը: Նորից զոհեր և կորուստ: Վայրաբարո թշնամու գնդակը ջարդում է կոմիսար Մարինոսյանի ուսը, իսկ նոնակի բեկորից վնասված ձեռքը «դառնում է լրիվ ավելորդ և կախ ընկած բեռ»: Արյունահեղ այդ մարտում ծանր վիրավորված ռեժիսոր կոմիսարն ընկնում է թշնամու թակարդը: Զեռքերը ոլորած, հայ զինվորին ծեծկըռտուքի ենթարկելով, թշնամին հարցաքննում է և ոչ մի ռազմական գաղտնիք չի կարողանում կորզել նրանից: Տեսնելով, որ կոմիսարը մնում է աննկուն, համառ, հնարամիտ և աներեր՝ հիտլերյան «Էդելվայսի» հետախույզ-դահճապետ Օբերստի հրամանով 1942 թվականի հոկտեմբերին Շահումյան բանավանի համար մղվող մարտերի ժամանակ Գոյթխ (Հայթաղ) կայարանի մոտ, Վոլչեյ բարձունքում, ի ցույց խորհրդային զինվորների հիտլերականները ավտոմատի մի քանի կրակահերթով նրան գնդակահարում են և ժայռից գլորում անդունդ:

— Արծիվները բարձրում են մեռնում,—կողքից շշնջում են գերված ընկերները:

Անցել են տարիներ: Տուապսեի շրջանի Շահումյան ավանի փողոցներից մեկն այսօր կրում է ռեժիսոր և անվեհեր մարտիկ Գուրգեն Մարինոսյանի անունը, գավառագիտական թանգարանում ցուցադրված են նրա լուսանկարն ու նամակները: Քաղաքի պիոներ-դպրոցականները ամեն տարի զոհված հայ զինվորի հարազատների հետ թարմ ծաղիկներ են դնում եղբայրական այն հուշարձան-կոթողին, որի վրա փորագրված է նաև Գուրգեն Սահակի Մարինոսյանի անունը, մի անուն, որ հավերժ կհիշվի ոչ միայն Մեծ հայրենականի, այլև խորհրդային կինեմատոգրաֆի և թատրոնի պատմության մեջ, մի անուն, որն իր կոմիսարական վերջին խոսքը ռեժիսորական մատուցմամբ ուղղելով յուրայիններին, հիշեցրեց նրանց Ռիչարդ Երրորդի զորականչի հորդորը.

Զարդե՛ք ու ջնջե՛ք ժանտ բռնակալին—
Քաղցր կլինի ձեր նինջը հանգիստ:
Կռվե՛ք, կոտորե՛ք ի սեր հայրենյաց—
Եվ հայրենիքը չի մոռանա ձեզ.
Կռվի՛ գնացեք հանուն ձեր կանանց պատվի ու բախտի—
Եվ ձեր դեմ կգան ձեր ուրախ կանայք:
Կռի՛վ մղեցեք հանուն որդկերանց—
Եվ ձեզ կգգվեն ձեր թոռնիկները ծերության օրին:

Մարինոսյան ռեժիսոր մարտիկը չհասցրեց ապրել իր ծերության օրը, տեսնել իր թոռներին: Նա զոհվեց ի սեր հայրենյաց՝ քաջ գիտենալով, որ հայրենիքը չի մոռանա իր համար, սերունդների համար իրենց կյանքը գիտակցաբար զոհողներին, այդ թվում գնդի կուսքարտուղար Կարոյին, որին թշնամիները ժայռից անդունդ գլորեցին, համհարզ Գրիգորյանին, օպերատիվ հերթապահ Արամին, շտաբի պետ Վլադիմիր Կովալևին... և շատ-շատերի:

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐԻՆՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. 18/4.1940 թ., Լենինականի Ալ. Մոավյանի անվան թատրոնում (ԼՄԹ) բեմադրել է «Լենին» պիեսը (հեղինակներ՝ Ա. Կապլեր և Տ. Զլատոգորովա):
2. 27/4.1940 թ., ԼՄԹ-ում բեմադրված «Տիկնիկային քաղաքը» (հեղ.՝ Ե. Շվարց) պիեսի թարգմանիչն է:
3. 3/6.1941 թ., ԼՄԹ (ռեժ.՝ Գոհար Հարությունյան) բեմադրած «Ով վերջինն է ծիծաղում» (հեղ.՝ Կ. Կրակովա) պիեսի թարգմանիչն է:
4. **Գրիգորյան Սասուն**—«Վերջին թնմը՝ հայրենի հողը» (տպված է նաև զինվորական լուսանկարը), ԳԹ, Ե., 1978, 23 հուլիսի, № 25, էջ 1.
5. **Ստեփանյան Գառնիկ**—«Կենսագրական բառարան», հատոր Բ, Ե., «Սովետական գրող» հր., 1981, էջ 309:
6. **Սարգսյան Սիմոն Մկրտչի**— «Անմոռաց անուններ», Ե., 1978, էջ 39—68:
7. **Գրիգորյան Սասուն**— «Ռազմաճակատը՝ վերջին բեմ», ԳԹ, Ե., 1979, 11 մայիսի, էջ 4:
8. «Կոմիսար Գուրգեն Մարինոսյան» (անստորագիր), «Թատերական Երևան», 1975 թ., № 9-ի հատուկ հավելված, էջ 34—35:
9. **Սարգսյան Սիմոն**— «Կոմիսարը», ՍԳ, 1972, № 5, էջ 98—110:
10. Саркисян С. М. — «408-ая армянская стрелковая дивизия в битве за Кавказ», Е., 1985 г.
11. **Գրիգորյան Սասուն**— «Հայրենի հողը՝ ռազմաբեմ», ԹԵ, 1985 թ., № 9, էջ 6:
12. **Սարգսյան Սիմոն**— «Այրվող անտառը», Ե., 1965:

ԴԵՐԱՍԱՆԸ՝ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

ՎԱՐԴԳԵՍ ԱՐԻՍՏԱԿԵՍԻ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ (1908—1943)

Մանասերյանի տոհմը Էջմիածնի շրջանի Աղջաղալա գյուղ էր տեղափոխվել անցյալ դարի կեսերին Պարսկաստանի Մակու քաղաքից: Որոշ ժամանակ այստեղ մնալուց հետո Արիստակես Մանասերյանը տեղափոխվեց Երևան՝ գիմնազիայում սովորելու: Երևանում նա ամուսնացավ Անուշ (Աննա) Ղազարյանի հետ: 1908 թ. մայիսի 3-ին ծնվեց նրանց Վրթանես որդին (ըստ զագա-ի): Մտերիմները նրան Վարդո կոչեցին, իսկ շրջապատը՝ Վարդգես: Տոթնամյա կրթությունը Վարդգես Մանասերյանը ստացավ Երևանի Մ. Գորկու, իսկ միջնակարգը՝ Ալ. Մյասնիկյանի անվան դպրոցներում: Աշակերտական տարիներին էլ երևան եկան աշխույժ, կատակասեր և սրամիտ տղայի գրական և դերասանական հակումները: Նա բանաստեղծություններ էր գրում, մասնակցում դպրոցի թատերական խմբակի ելույթներին, հետո որպես սիրող դերասան աշխատանքի ընդունվեց պատանի հանդիսատեսի թատրոնում: Հակառակ Վարդգեսի նախասիրություններին, ծնողներն ուզում էին, որ իրենց որդին գյուղատնտես դառնա: 1930—33 թթ. Վարդգեսը սովորեց և ավարտեց ՀԽՍՀ Հողժողկոմատի գյուղատնտեսության ինստիտուտի դաշտավարական ֆակուլտետը՝ ստանալով ագրոքիմիկի որակավորում: Չնայած որոշ ժամանակ նա աշխատեց հիդրոմետծառայության Երևանի բաժանմունքում, բայց և այնպես դերասանական հակումները նրան հանգիստ չէին տալիս: Եվ մի օր էլ, շուռ գալով ընկերոջ կողմը, կտրուկ ասաց.

— Չէ՛, Վազրի՛կ, ինձանից ոչ գյուղատնտես դուրս կգա, ոչ էլ հիդրոմետ ծառայող. ես նորից պիտի թատրոն գնամ[1]:

Եվ գնաց: Նրան սիրով ընդառաջեցին: Հիշում են ընկերները, թե 21-ամյա Վարդգեսը Ռ. Սիմոնովի և Ա. Գուլակյանի բեմադրած «Հողմերի քաղաքում» (1929 թ.) առաջին անգամ ինչպիսի հմտությամբ կատարեց Աշոտի դերը: Ռ. Սիմոնովի «Քեզ մեծ դերասանական ապագա է սպասվում, եթե այդ ճյուղով հմտանաս» քաջալերումը Վարդգես Մանասերյանին տարավ Վավիկ Վարդանյանի նորաբաց թատրոն-ստուդիա: Դերասանի վարպետության, գեղարվեստական ընթերցանության, թատրոնի պատմության, գրիմի, ռիթմիկայի, պարերի, արվեստի, պատմության և այլ առարկաների գերազանց ուսումնառությունն ու բեմում դրանց հմուտ վերարտադրումը Վարդգես Մանասերյան դերասանի մասին առանձնահատուկ վերաբերմունք մշակեցին իր ուսուցիչներ Վավիկ Վարդանյանի, Մուրադ Կոստանյանի և Վրույր Մանվելյանի մոտ:

[1] Վազրիկ Սեկոյանը այժմ թոշակառու է: Մինչ այդ եղել է ՀԽՍՀ շինանյութերի արդյունաբերության մինիստր:

Թատրոն-ստուդիայի բեմադրած՝ Մոլիերի «Տարտյուֆում» Վարդգեսը խաղաց Դամիս, «Սկապենի արարքներում»՝ Օկտավ, Հեյերմանսի «Հույսի կործանում»-ում՝ Հեերդ:

1938 թ., երեք տարվա տեսական և գործնական թատերական գիտելիքների փայլուն իմացությամբ, Մանասերյանն ավարտեց արվեստի վաստակավոր գործիչ Վ. Վարդանյանի ղեկավարած թատրոն-ստուդիան (անձնական գործում պահվում է վկայականը) և աշխատանքի անցավ Երևանի Ա. Միկոյանի անվան պատանի հանդիսատեսի թատրոնում:

— Մինչև ՊՀԹ-ում աշխատանքի անցնելը,— վերհիշում է այդ նույն թատրոն-ստուդիայի շրջանավարտներից դրամատուրգ Վարդգես Ծողերյանը,—Վարդգես Մանասերյանի հետ միասին Երևանում՝ Կարմիր բանակի տանը, 1937 թ. ապրիլին խաղացել ենք Մուրադ Կոստանյանի բեմադրած «Օդաչու Վոլկով» կամ, ինչպես ասում էին, «Վոլկովների ընտանիքը» պիեսում: Վարդգես Մանասերյանն այստեղ Սազոնով էր, իսկ նրա կյանքի ապագա ընկերուհին՝ Կլարա Շահբազյանը՝ Ելենա Սերգեևնա: Մեր այդ խաղի մասին ժամանակին՝ 1937 թ. ապրիլին, «Ավանգարդում» տպագրվեց դրական գրախոսական: Որքան հիշում եմ՝ Գևորգ Ապլանյանն էր գրել:

Այնուհետև Վարդգես Ծողերյանը տեղեկացնում է, որ Վարդգես Մանասերյանի ղեկավարությամբ իրենց թատրոն-ստուդիայի ուժերով (ռեժ.՝ Մ. Կոստանյան) 1937 թ. հուլիսին իրենք հյուրախաղերի են մեկնել Ապարանի շրջան: Այստեղ ներկայացրել են «Անվանի թոռնիկը» պիեսը[1]:

Պատանի հանդիսատեսի թատրոնում Վարդգես Մանասերյանն առաջին անգամ բեմ բարձրացավ 1938 թ. մայիսի 10-ին Ոստիկանի և Միշայի դերերում: «Կույր երաժիշտի» հեղինակն ու բեմադրության ռեժիսոր Մելիք Քոչարյանը այսօր էլ սիրով և առանձին համակրանքով է ներկայացնում Վարդգեսին.

— Լայն ճակատով, սև, հաստ և երկար հոնքերով, խիստ հայեցի դիմագծերով տղա էր: Եղբորս՝ Հայկի, ընկերներից էր: Նույն թատրոնում էինք խաղում: Հաճախ էինք հավաքվում իրենց տանը՝ Սպանդարյան փողոցի վրա: Արիստոկրատ ծնողներ ուներ: Հայրը՝ Արիստակեսը, թատրոնին գիտակ մարդ էր... Հիշում եմ ցավալի մի դեպք: Տասնութ տարեկան աղջիկ էր Վարդգեսի կինը՝ օժտված աննկարագրելի գեղեցկությամբ: Ծննդաբերությունից մահացավ: Անունը Էմմա էր: Դրա համար էլ նա իր առաջնեկին անվանեց Էմիլ:

Այնուհետև դրամատուրգ և նախկին դերասան Մելիք Քոչարյանից իմանում ենք, որ Վարդգես Մանասերյանը ՊՀԹ-ում «Ինչպես է կոփվում պողպատը» բեմադրելիս (ռեժ.՝ Ա. Մարտիրոսյան) խաղացել է Կլիմկա, Սուխարկով և ինժեներ (երեք դեր), իսկ «Թոմ Կենտիում» եղել է Լորդ Կանցլեր: Նրա խաղընկերները «Թոմ Կենտիում» եղել են Պերճ Գևորգյանը, Արշավիր Ղազարյանը, Պարույր Սանաթրոսյանը, Հրաչյա Ղափլանյանը (Աղքատ տղա) և ուրիշներ:

Երևանյան խաղաղ երեկո է: Պատանի հանդիսատեսի թատրոնում աշխատանքներն ավարտվում են: Բեմազգեստները նորից զքաղեցնում են իրենց տեղերը: Դերասաններից ամեն մեկն

Վ. Մանասերյան, Միշա («Կույր երաժիշտը»):

[1] Այդ մասին տես նաև Բ. Հարությունյանի «Սով. թատ. տարեգրությունը», գիրք I, էջ 486:

Վ. Մանասերյանը իր առաջնեկի՝ Էմիլի հետ, Երևան, 1940 թ.:

ուզում է վայրկյան առաջ ազատվել գրիմից: Հանդերձասրահում հանդիպում ենք Հայկ. ԽՍՀ ժող. արտիստ Արշավիր Ղազարյանին և արդեն սովորույթի ուժով նրան ենթարկում «հարցաքննության»:

— Էն էլ ո՞նց եմ ճանաչում Վարդգեսին,— ասում է նա:— Մինչ պատերազմ գնալը քանի՞-քանի՞ անգամ ենք միասին բեմ բարձրացել: «Քաջ Նազարում» նա գանձապետի դերակատարն էր: «Գիքորում» Բաղո էր խաղում: 1939 թ. Մոսկվայում մասնակցեց հայ գրականության և արվեստի տասնօրյակին: Սեպտեմբերին Սարգիս Քոչարյանի բեմադրած «Ավազակներում», որը նվիրված էր Շիլլերի ծննդյան 180-ամյակին, Վարդգեսը փառահեղ դրսևորեց իրեն Գրիմմի դերում: Թե չեմ սխալվում՝ այդ նույն թվականին մենք միասին «Անվեհերներում» էլ խաղացինք: Վարդգեսի վերջին դերերից մեկը Բոբելի դերն էր «Արտիստում»...

— 1940 թ. փետրվարի 22-ին թատրոնում ասեղ գցելու տեղ չկար,— պատմում է դերասանի այրին՝ Կլարա Շահբազյանն ու ավելացնում:— Բեմադրությունից մի քանի օր հետո «Սովետական Հայաստանում», «Ավանգարդում», «Կոմունիստում», «Խորհրդային արվեստում» հոդվածներով հանդես եկան Մկրտիչ Կորյունը, Գարեգին Բեսը, Արամաշոտ Պապայանը, Հովհ. Ղազանչյանը: Բոլորը միաբերան հավանել էին Վարդգեսի խաղը:

1940 թ. սեպտեմբերի 7-ին, առանց թատրոնից կտրվելու, երիտասարդ դերասանն աշխատանքի անցավ հանրապետության Ժողովրդական ստեղծագործության տանը որպես թատերական բաժնի մեթոդիստ: Բռնկվեց Մեծ հայրենականը, և դերասան մեթոդիստ Վարդգես Մանասերյանի աշխատանքային գրքույկում արձանագրվեց № 79 հրամանի քաղվածքը. **«1941 թ. հունիսի 24-ից ազատված է աշխատանքից՝ բանակ գնալու պատճառով:**

Ժող. ստեղծագործության տան դիրեկտոր՝ Ա. Փանոսյան—ստորագրություն»:

Ռազմի ինչպիսի՞ ճանապարհ է անցել դերասան հայորդին, պահպանվե՞լ են, արդյոք, նրա ռազմաճակատային նամակները, նկարներն ու արխիվը, այս և նման հարցերով այցելում ենք զոհված արտիստի քրոջը՝ թոշակառու մանկավարժ Արուս Մանասերյանին (Երևան, Մռավյան 29, բն. 125): Բոլոր քույրերի պես Արուս մայրիկն էլ է հուզվում, վերհիշում իր դերասան եղբորը, փոում սեղանին եղբոր նամականին և լուսանկարները, առանձին-առանձին ներկայացնում Վարդգեսի հետ կապված ամեն մի եղելություն, դեմք ու դեպք:

— Վարդգեսն ու մյուս եղբայրս՝ Հուսիկը, որ ինժեներ էր, նույն օրը կամավոր գնացին՝ բանակ: Վարդգեսը զոհվեց, Հուսիկը վերադարձավ վիրավոր, մահացավ: Երրորդ եղբայրս՝ Պերճը, գյուղատնտես էր, նա վերջերս է մահացել: Վարդգեսը,— շարունակում է տիկին Արուսը,— ուներ չորս քույր՝ Աստղիկ, Արուս, Գոհար և Լաուրա: Վարդգեսի տղայի անունը Էմիլ է, աղջկանը՝ Ռիտա: Երեխեքը փոքր էին, նրանք իրենց հոր մասին ձեզ տեղեկություն չեն կարող տալ: Թե ինչպիսի հայրենասեր էր, դա նրա նամակներն են հաստատում:

Եվ իրոք, երբ հիշում ես արտիստի խաղացած դերերը, կարդում նրա ռազմաճակատային նամակները, զգում ես, որ նրանցում տրոփում է հայրենի հող ու ջրի և յուրայինների համար մարտի ելած գերզգայուն և ազնիվ մի սիրտ:

«Հայրենիքը մեծ պարտավորություն է դրել մեր վրա,— կարդում ենք 1942 թ. նոյեմբերի 18-ին կնոջը գրած մի նամակում,— որի կատարման համար պահանջվում է զոհել մեր կյանքը: Իհարկե, ամեն կերպ աշխատում ենք թշնամուն ոչնչացնել, իսկ եթե թուլամորթություն անենք, նա մեզ կոչնչացնի: Ես հույսով եմ՝ հաղթանակից հետո կհանդիպենք և երեսներս պարզ կշարունակենք մեր խաղաղ կյանքը:

Կլարա ջան, ես հիմա այդ ֆրիցներից 300 մետրի վրա եմ գտնվում, և ինչպես Ստալինն է ասել, նրանք այդքան վախենալի չեն: Մեր զորամիավորումը առաջադրանք ստացավ ցերեկով 20 մետր ևս մոտենալ նրանց: Մենք դուրս եկանք խրամատներից, կատարեցինք մարտական առաջադրանքը և բոլորս էլ ողջ վերադարձանք մեր խրամատները: Պատերազմն ունի իր և՛ դժվարությունները, և՛ հետաքրքիր, ոգևորիչ դեպքերը...»:

Այնուհետև դերասան մարտիկը գրում է, որ իր բացակայությունը, անշուշտ, կազդի ընտանիքի նյութական վիճակի վրա, կստեղծի ծանր դժվարություններ, երեխաների խնամքի և ապրուստի գործը կբարդանա:

...Նուրբ, բարի, հայրենասեր քաջորդին, ռումբերի տարափի տակ, խրամատից խրամատ, թշնամու վրա գնդացրային կրակ բացելով, նորից հայրենի եզերքն էր երազում, մտքով խոսում յուրայիններիի հետ, երջանկանում նրանց ուրախությամբ, ցավում, որ չի կարող Նոր տարուն տանը լինել. «Մինչև նամակիս ստանալը երևի ձեզ մոտ Նոր տարի կլինի: Շնորհավորում եմ ձեր Նոր տարին... Այս էլ երկու տարի է, որ մենք իրարից հեռու ենք այն դիմավորում: Ոչի՛նչ, ջանի՛կս, համբերի՛ր, վերջը լա՛վ կլինի:

Նամակիս անկանոնության համար՝ ներողություն:

Համբուրում եմ բոլորիդ պինդ՝

Ձեր հարազատ **Վարդո:**

18.11.1942 թ.

դաշտ. փոստ 1669, զինմաս-094»

Արուս Մանասերյանից իմանալով, որ զոհված զինվորի դուստրը՝ Ռիտան, մոր հետ ապրում է Չարենցի փողոցի վրա, այցելում ենք նրանց: Պատից կախված է Վարդգես Մանասերյանի մեծադիր նկարը, քիչ այն կողմ Ֆրանսիայի դիմադրության շարժման մասնակից, զոհված արձակագիր Լասի (Լուիզա Ալլանյանի) դիմանկարն է: Պարզվում է, որ զոհված դերասանի այրին՝ դերասանուհի Կլարա Շահբազյանը, Լասի մորեղբոր աղջիկն է: Նշատետրումս սկսում եմ երկուստեք գրառումներ կատարել:

«Որտե՞ղ է կռվել և զոհվել ձեր ամուսինը» հարցիս իբրև պատասխան վաստակաշատ դերասանուհին պարզում է 1943 թ. օգոստոսի 30-ին

Վ. Մանասերյանը (կանգնած, աջից առաջինը) զորավարժությունների ժամանակ:

գործող բանակից Վարդգես Մանասերյանի ընկերոջ, զինվորական բժիշկ Վրույր Ազիզյանի նամակը: Արտիստ հրամանատարի սխրանքի փաստացի վկայությունն է այն՝ տրված մասնակցի աչքերով՝ ամենայն մանրամասնությամբ, պարզ և հավաստի: Մեջբերում ենք նամակը մասնակի կրճատումներով՝ հարազատ մնալով հեղինակի «ռազմաճակատային բառաֆոնդին»: Այն իբրև պատասխան հասցեագրված է իր ամուսնու ճակատագրով հետաքրքրվող՝ Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնի արտիստուհի Կլարա Շահբազյանին: Ահա այն. «1942 թ. նոյեմբեր ամսից նա (խոսքը Վ. Մ.-ի մասին է:— Ս. Գ.) գումարտակի տնտեսական մասի պետն էր: Որպես մոտիկ ընկեր և արվեստի գաղափարակիցներ նա միշտ կգար իմ սենյակը: Ազատ ժամերը մենք միասին էինք անցկացնում: 11-րդ ամսվա վերջին նրան շտապ կերպով տեղափոխեցին անմիջապես խրամատ՝ որպես զվոդի կոմանդիր: Անցավ մի քանի օր, ես նրանից մի նամակ ստացա, որով գանգատվում էր իր առողջությունից: Ես նրան դեղորայք ուղարկեցի, այդ դեղորայքի վրա նա իրեն շատ լավ էր զգում: Վարդգեսի մարտի դաշտ մտնելու օրից, այն հատվածում, որում նրա մարտիկներն էին մարտնչում, մի մեծ փոփոխություն մտավ. սկսվեց պարծանքով խոսվել Վարդգեսի խիզախության մասին որպես քաջ հրամանատարի, որպես մտածված ու խելացի հրամանատարի: Այդ նույն ժամանակ մեր զորամասն էր եկել «Կոմունիստ» թերթի խմբագրությունից մի մարդ: Նա ինքը գրեց նրա անունը՝ թերթին տալու համար: Մանասերյանը դարձավ բոլորին ճանաչելի ոչ միայն որպես արվեստի լավագույն երիտասարդ գործիչներից մեկը, այլև քաջ ու խիզախ հրամանատար: Սկսվեց մեր երկար մարտակսն մարշը 1943 թ. հունվարի 2-ից: Ինքը՝ Վարդգեսը, առաջիններից էր, որ խիզախ քայլով ոտք դրեց թշնամու խրամատները ու շարժվեց առաջ: Ես նրան հանդիպեցի Սալդատսկում: Միասին ճաշեցինք: Նա երկար պատմեց իր մարտական հուշերից. մեծ ծիծաղ առաջ բերեց, երբ պատմեց, թե ինչպես մի ֆրից 15 մետրը հեռավորության վրա գտնված խրամատից նռնակը նետում է անմիջապես Վարդգեսի վրա: Վարդգեսը ճարպկորեն բռնում է նռնակը առանց պայթելու և այն շպրտում ֆաշիստական խրամատի մեջ: Նռնակի պայթյունի հետ լսվում է մի գազանային կալանչ-ոռնոց...

...Այսպիսի էպիզոդներ շատ կարելի է բերել նրա երկու ամսվա մարտական կյանքից...

Սալդատսկում իրարից չբաժանվեցինք: Նա մի քանի օր միշտ ինձ հետ էր, և ես նրան էի տալիս իմ ձին նստելու, ասելով «Քայլեցեք ինչպես հայ բեմի վրա»: Անցան շատ օրեր: Միշտ իրար հանդիպում էինք, ու Վարդգեսը միշտ իրեն շատ լավ էր զգում: 1943 թ. փետրվարի 9-ի երեկոյան եկավ ինձ տեսակցության: Մի քիչ քաղցած էր: Տվի իմ ունեցածից, մի քիչ կերավ և մի լավ կատակ արեց ու գնաց: Փետրվարի 9-ի՝ լույս 10-ի գիշերն էր. մեր զորամասը բռնվեց ուժեղ մարտի, որին և մասնակցեց ինքը՝ Վարդգեսը: Նա՝ այդ անձնվեր հերոսը, նույնպես հանդես եկավ իր ճարպկությամբ ու կամքի ուժեղ արիությամբ: Առաջին վիրավորները հենց նրա զինմասից էին: Նրանք հիացմունքով էին ներկայացնում Վարդգեսի ուղղակի գոտեմարտը թշնամու անհավասար ուժերի դեմ: Անցան ուժեղ մարտի մի քանի ժամեր: Կրկին եկան վիրավորներ: Նրանցից մեկը ինձ ասաց, որ Վարդգեսը ծանր վիրավոր ընկավ, օգնություն էր խնդրում: Պայմանները սուղ էին, օգնության հարցը հեշտ չէր, բայց հերոսի արյան ամեն մի կաթիլը թանկ էր մեզ համար: Ուղարկեցինք երկու մարդ՝ նասիլկայով: Մեծ դժվարությամբ մեկ ժամ հետո Վարդգեսին տեղափոխեցին ինձ մոտ, դա 1943 թ. փետրվարի 10-ին էր, ժամը մոտ 11-ին: Նա ինձ տեսնելով փլվեց. հերոսի արդեն գունատված ու չորացած աչքերից հազիվ կաթեցին երկու կաթիլ արցունք:

— Վրո՛ւյր, օգնի՛ր, օգնի՛ր,— այս էին նրա առաջին խոսքերը: Իսկ ես անձամբ քիչ բանով կարող էի օգնել իմ սիրելի, քաջ արվեստագետին ու մարտական ընկերոջը. նա ուներ երեք վերք որովայնից, որոնք մեկը մյուսից ծանր էին... Ես միայն դրանք կապեցի բինտով, պառկեցրի նասիլկայի վրա, կամեցա էվակուացնել, բայց հնարավոր չէր, քանի որ մենք գտնվում էինք կրակի ամեն տեսակի ու ամեն կողմից բռնկվող բոցերի մեջ, շարժման չնչին դեպքը ենթակա էր վտանգի: «Ի՞նչ անել» հարցը ինձ շատ տանջեց... Ես ձի նստած գնացի բերելու այն ամենը, ինչ անհրաժեշտ էր: Հրամայեցի հսկել Վարդգեսին: Գնալս անհաջողության մատնվեց, ճանապարհին ռմբակոծության ենթարկվեցի ու ինքս էլ ընկա անկողին, էլ ես տեղյակ չեղա Վարդգեսից: Միայն մարտի վերջում բժիշկները պատմեցին, որ նրան ինձանից հետո, կրակը հանգստանալու պահին, էվակուացրել են մեր բուժվաշտը: Թե ի՞նչ է եղել դրանից հետո, ասել չեմ կարող, իսկ նրանց (խոսքը զոհվածների մասին է— Ս. Գ.) ցուցակում էլ չկար:

Ահա այն ամենը, ինչ ես կարող էի գրել ձեզ, հարգելի ընկերուհի: Բայց դուք ցմահ հիշեք, որ դուք կինն եք եղել մի հերոս, մի կտրիճ, մի հայրենասեր երիտասարդի:

Բժիշկ **Վրույր Ազիզյան**

30.8.43թ.»:

Ու մինչ ես կավարտեմ մի կտրիճ, մի հերոս, մի հայրենասեր արտիստ մարտիկի ռազմաճակատային սխրանքի վավերագրի ընթերցումը, արցունքները սրբելով, նրա աղջիկը՝ Ռիտա Մանասերյան-Ղազինյանը, ինձ է հրամցնում **«Երեկոյան Երևան» թերթում տպագրված Հովհաննես Գրիգորյանի «Մի՛ թաքցրու արցունքներդ, աղջի՛կս» հոդվածը՝ իր հոր մասին...**

Վերականգնենք մեկ անգամ ևս մեր մտա-

Վ. Մանասերյանը իր ռազմընկերների հետ (վերևից 2-րդ շարքի ձախից 5-րդը):

Վ. Մանասերյանի՝ (աջից առաջինը) Հյուսիսկովկասյան ռազմաճակատից ուղարկված լուսանկարներից մեկը:

պատկերում դերասան և ռազմիկ Վարդգես Մանասերյանի դիմանկարը և նրա անունից «Երեկոյան Երևանի» խոսքերը հշնչանք նրա գյուղատնտես դստերը՝ Ռիտային.

— Մի՛ թաքցրու արցունքներդ, աղջի՛կս, մեր բոլորի արցունքներն են դրանք, մի՛ թաքցրու[1]:

ՎԱՐԴԳԵՍ ՄԱՆԱՍԵՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. 10.10.1929 թ., Երևանի պետական թատրոն (ռեժիսորներ՝ Ռուբեն Սիմոնով, Արմեն Գուլակյան), «Հողմերի քաղաքում»՝ Աշոտ:
2. 21.8.1934 թ., Ընդունվում է Վ. Վարդանյանի թատրոն —ստուդիա:
3. 7.4.1935 թ., Երևանի թատրոն-ստուդիա (ռեժ.՝ Վավիկ Վարդանյան), «Տարտյուֆում»՝ Դամիս:
4. 3.1.1937 թ., Երևանի թատրոն-ստուդիայի (ռեժ.՝ Վ. Վարդանյան) «Սկապենի արարքներում» (մեզ անհայտ դեր)
5. 13.4.1937 թ., Երևանի թատրոն-ստուդիա (ռեժ.՝ Վ. Վարդանյան), «Օդաչու Վոլկովում»՝ Սազոնով:
6. 10.7.1937 թ., Երևանի թատրոն-ստուդիա (ռեժ.՝ Վ. Մանասերյան, Ապարանում), «Ավանի թոռնիկում»՝ Սաշայի ընկեր:
7. 10.5.1938 թ., Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն՝ ԵՊՀԹ (ռեժ.՝ Ս. Քոչարյան), «Կույր երաժիշտում»՝ Միշա:
8. 29.11.1938 թ., ԵՊՀԹ (ռեժ՝ Ա. Մարտիրոսյան), «Ինչպես է կոփվում պողպատում»՝ Կլիկմա, Սուխարկով և ինժեներ:
9. 15.12.1938 թ., ԵՊՀԹ (ռեժ.՝ Ա. Աղասյան), «Թոմ Կենտիում»՝ Լորդ կանցլեր:
10. 14.4.1939 թ., ԵՊՀԹ (ռեժ.՝ Ս. Քոչարյան), «Քաջ Նազարում»՝ Գանձապետ:
11. 14/5.1939 թ., ԵՊՀԹ (ռեժ.՝ Ա. Աղասյան), «Գիքորում»՝ Բադ:
12. 21.10.1939 թ., ԵՊՀԹ (ռեժ.՝ Ս. Քոչարյան), «Ավազակներում»՝ Գրիմմ:
13. 22.2.1940 թ., ԵՊՀԹ (ռեժ.՝ Ս. Քոչարյան), «Արտիստում»՝ Բոբելի:
14. **Գրիգորյան Հովհաննես**— «Մի թաքցրու արցունքներդ, աղջիկս», ԵԵ., 1975 թ., 8 մայիսի, № 108, էջ 4:
15. **Գրիգորյան Սասուն**— «Ռազմաճակատը՝ վերջին բեմ»: ԳԹ, 11 մայիսի 1979 թ., էջ 4:
16. **Գրիգորյան Սասուն**—«Հայրենի հողը՝ ռազմաբեմ», ԹԵ, 1985 թ., № 9, էջեր 5 և 7:

[1] Մանասերյանի հարազատներին գտնելու և անհրաժեշտ նյութեր ձեռք բերելու համար շնորհակալություն ենք հայտնում ՀԿԿ Կենտկոմի ինֆորմացիայի և արտասահմանյան կապերի բաժնի նախկին վարիչ Լևոն Մանասերյանին և դրամատուրգ Վարդգես Ծողերյանին **(հեղինակ)**:

ՔԱՌԱՍՈՒՆՈՒԹ ՀԱՋԱՐԻՑ ՄԵԿԸ

ՇԱՔՐՈ
ՄՈՒԴԱՂԻ
ՄԵԼՔՈՆՅԱՆ
(1907—1945)

Շաքրո Մելքոնյան...

Ամեն անգամ այս անունը լսելիս թվում է, թե դեռ գործում են Բուխենվալդն ու Ռավենսբրյուկը, Օսվենցիմն ու Մայդանեկը... և համակենտրոնացման մյուս ճամբարները, որոնցում առիթ եմ ունեցել լինել պատերազմից 30—40 տարի անց: Նման մի զնդանում՝ Բերգեն-Բելզենում, 48.000 մարդ ապանվեց, խոշտանգվեց, այրվեց ու փոշիացավ: Քանի-քանիսի մաշկից ոճրագործները հիտլերյան դահճապետների կանանց ու երեխաների համար կաշվե պայուսակներ ու ձեռնոցներ պատրաստեցին, հատուկ օճառներ ու քսայուղեր: 48.000... Շրջում ենք Բուխենվալդում, և զրուցակիցս՝ Մուսայել Գալոյանը, վկայում է, որ այդ թիվը ավելի մեծ էր, չէ որ մարդ № 50008-ը Կիրովականի Հովհ. Աբելյանի անվան թատրոնի առաջատար դերասան Շաքրո Մելքոնյանն էր՝ Անդրեաս Էլիզբարովի և Ջոլլայի դերակատարը: Շաքրոն ինչպես կարող էր հավատալ, թե մահվան այդ գեհենից գոնե մեկը, այն էլ իր ամենամոտ ընկերը՝ Արթիկի թատրոնի դերասան Մուսայել Գալոյանը՝ Մարդ № 50009-ը, հրաշքով կարող է փրկվել, հասնել Երևան և քառասուն տարի հետո գրել ֆաշիզմի զնդաններում, համակենտրոնացման ճամբարներում, մահախցիկներում և այլուր կրած իրենց ծանր, դժոխային օրերի ոդիսականը, գրել որպես գիրք-իրապատում, եղելություն-հուշագրություն, նախկին կալանավորի կյանք և դրամ, Նոյեմ և Մուդաղ Մելքոնյանների ընտանիքում: Բազմանդամ այս տանը ամեն մեկն իր նախասիրությունն ու ընդունակությունը դրսևորելու հնարավորություն ուներ: Շինական ծնողների ձգտումը մեկն էր. իրենց երեխաները հայրենիքի համար պիտանի մարդ դառնան: Շաքրոն լեզուների, գրականության և պատմության սիրահար էր: Բանաստեղծություններ գրելու, պիեսներ բեմադրելու, գյուղում, հատկապես դպրոցում, գեղարվեստական միջոցառումներ կազմակերպելու ձիրքով էր օժտված: Թատերական ինքնագործունեությունը նրա մեջ հայտնաբերեց ապագա դերասանին, և մի օր էլ հայրենի գյուղի դպրոցի մայրենի լեզվի և գրականության ուսուցիչը բախեց Երևանի թատերական ուսումնարանի դուռը: Ռեժիսոր մանկավարժներ Տիգրան Շամիրխանյանն ու Հայկ Բելլերյանը զարմացան գյուղից եկած, արևախանձ ու ամաչկոտ տղայի դեպի բեմարվեստն ունեցած ընդունակությունները դրսևորելու՝ նրա խաղի և գիտելիքների վրա: Երեք-չորս տարի Տ. Շամիրխանյա-



ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ՝ ՌԱԶՄԱԲԵՄ

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՅԱՆ ՅՈՒՇԱԴՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

1937-38 ուս. տարի

Ճիրվանզադե

„ՊԱՏՎԻ ՀԱՄԱՐ"

Դրամա 4 արարվածով

ԳՈՐԾՈՂ ԱՆՁՆԱԳԻՐ

Անդրեաս Էլիզբարյան — Մելքոնյան Շաքրո
Միրզոյան Անուշավան
Յերանուհի — նրա կինը Մելքոնյան Լիկա
Բագրատ — Էլիզբարյանների ավագ փոքրը Հայրապետյան Սուրեն
Սարգիս Գեղամ
Ալիկոյան Կարեն
Սուրեն — Էլիզբարյանների կրտսեր փոքրը Համբարձումյան Յերուանդ
Մանուկյան Վանո
Ռոզալիա — Էլիզբարյանների մեծ աղջիկը Վարդանյան Մարուսյա
Մարգարիտա — Էլիզբարյանների փոքր աղջիկը Հակոբյան Մարուսյա
Արտաշես Ռոբերտյան — Անդրեասի հանգուցյալ ընկերոջ որդին Հակոբյան Հովհաննես
Գևորգյան Հարություն
Սաղաթել — Յերանուհու յեղբայրը և Սոֆոնա տի հավատարիմ աշակերտը Թումանյան Հայկ
Մարգարյան Թաքվորյան
Կարինյան — Անդրեասի հաշվապահը Ղազարյան Սերգո
Գրիգորյան Աստղիկ
Վարդան — ապաստավոր Իվանյան Գևորգ
Ճահինյան Տորիկ
Զարուհի — աղախին Մելքոնյան Լիկա
Դատատու ռեժիսորներ՝ Շամիրխանյան Տիգրան
Բելլերյան Հայկ

Տեսնես՝ «Պատվի համար» ներկայացման սույն ազդում հիշատակված անուններից ուրիշ էլ ովքե՞ր են մասնակցել Հայրենական մեծ պատերազմին։ Մի՞թե բացի Շ. Մելքոնյանից այս ազդագրում հիշատակված անուններից էլ ուրիշ զոհվածներ չկան։

խորհրդային ռազմիկի տոկունություն[1]: Այստեղ՝ «Մարդ № 50009»-ում, գլխավոր հերոսներից մեկը Շաքրոն է՝ գերության մեջ իր մահկանացուն կնքած մի հայրենանվեր ու խիզախ, անդավաճան ու բարի հայորդի, որը դերասան է եղել մինչ պատերազմը և ռազմիկ ու կալանավոր՝ մինչև 1945 թվականի մարտի 4-ը՝ մինչև իր ողբերգական մահը:

Ծնվել է Շաքրո Մելքոնյանը 1907 թվականին Մարտունու շրջանի Վերին Գետաշեն գյու-

[1] **Գալոյան Մ.**, «Մարդ 50009», Ե., Հայաստան հր., 1985 թ.:

Շաքրո Մելքոնյանը Մուդաղի դերում («Արշալույսին»), 1938 թ., Կիրովականի Հովհաննես Աբելյանի անվան թատրոն:

նի փորձառու և հմուտ ձեռքի տակ Շաքրո Մելքոնյանը ձեռք բերեց պրոֆեսիոնալ դերասանի որակավորում: 1938 թ. հուլիսի 5-ին տեղի ունեցավ Շաքրոյի բեմական դեբյուտը. որպես Անդրեաս Էլիզբարովի դերակատար դիպլոմնիկ Մելքոնյանը երևանյան բեմ բարձրացավ: Այսօր էլ զոհված դերասանի անձնական արխիվում, իր որդու մոտ, պահպանվում է Երևանի թատերական ուսումնարանի առաջին շրջանավարտների՝ Ալ. Շիրվանզադեի «Պատվի համար» ցուցադրական ներկայացման ազդը: Նրանից տեղեկանում ենք, որ Շաքրոյի խաղընկերներն են եղել **Սուրեն Հայրապետյանը, Հրայր Համբարձումյանը, Հովհաննես Հակոբյանը, Հայկ Թումանյանը, Սերգո Դավթյանն ու Գևորգ Իվանյանը:** Կանանց դերերում խաղացել են դիպլոմնիկներ Լիզա Մելնիկյանը (Երևանցի), Մարուսյա Հակոբյանը (Մարգարիտ) և Մարուսյա Վարդանյանը (Ռոզալիա): Այդ նույն բեմադրության փոխարինող կազմում գլխավոր դերերը զբաղեցրել են **Անուշավան Միրզոյանն ու Նիկոլ Նազարյանը, Վահան Մանուկյանն ու Հարությունն Գևորգյանը, Բաղդասար Սարգսյանն ու Ալիշան Անանյանը, Նորիկ Շահինյանն** ու էլի ուրիշներ: Չէի շեշտի անունների այս հսկա ցանկը, եթե այսօր պարզ լիներ, թե Շաքրոյի այդ ընկերներից էլ ովքեր են մասնակցել Մեծ հայրենականին: Գուցե նրանցից էլ զոհվածներ կան, որոնց թատերասերն այսօր անտեղյակ է:

Շ. Մելքոնյանը I ծերունու դերում («Ֆրոնտից եկած զինվորը»):

45—50 տարվա վաղեմություն ունեն այն լուսանկարները (դերասանի մակագրությամբ), որոնցից այսօր զոհված զինվորի որդին՝ Սերգեյ Մելքոնյանը, կազմել է մի հուշալբոմ: Նրանից տեղեկանում ենք, որ Երևանի թատերական ուսումնարանն ավարտելուց հետո Շ. Մելքոնյանը Կիրովականի Հովհ. Աբելյանի անվան թատրոնում մարմնավորել է Խմբապետ Մուրադի («Արշալույսին»), Գիվիի («Արսեն»), I ծերունու («Ֆրոնտից եկած զինվորը»), Զոհրաբյանի («Դատավճիռ»), Զոլլայի («Ռուզան»), նավաստու («Փարոսի կրակները») և այլ կերպարներ:

Շ. Մելքոնյան (ձախից երկրորդը), Անդրիաս Էլիզբարով («Պատվի համար»), Երևան, 1938 թ.:

Շ. Մելքոնյանի նավաստու դերը («Փարոսի կրակներում»), հազարավոր ծափեր է խլել հանդիսատեսներից:

— Ուրիշ էլ ի՞նչ դերեր է խաղացել ձեր ամուսինը,— հարցնում եմ Կիրովականի Հովհ. Աբելյանի անվան պետթատրոնի աշխատակից Վարսենիկ մայրիկին, և նա, առանց զոռ տալու վերհուշին, կտրուկ պատասխանում է.

— «Գոշում» Թորոս էր, «Կինտոյում»՝ մի կինտո, «Թող բացվեն վարդերում»՝ Ասլան պապ: Շաքրոն իր ծաղկումն էր ապրում, այսօր էլ դեռ կիրովականցի հին թատերասերները հպարտությամբ են հիշում և գովում «Ռուզանում» Զոլլայի նրա խաղը: Ի՞նչ արած, չնայած տարկետում ուներ, բայց գնաց: Գնաց կամավոր: Ու ես էլ մենակ երեք երեխա պահեցի, մեծացրի, տվեցի ուսման: Սերգեյս շինարար-էլեկտրիկ է, աշխատում է և ապրում Երևանում: Ուզում է՝ մոտը գնամ, չեմ կարող, ամուսնուս հիշատակի համար, մինչև չմեռնեմ, էս թատրոնից դուրս չեմ գա: Այստեղ բոլորն էլ ինձ հասկացել և սիրում են: Աղջիկներս՝ Զուլիետան և Ժենյան, այստեղ՝ Կիրովականում են ընտանիք կազմել, մեկը հաշվապահ է, մյուսը՝ մանկավարժ: Փառք աստծո, ես էլ դեռ ողջ և առողջ եմ, պահանջս խաղաղությունն է: Թող աշխարհում ոչ մի կյանք, ոչ մի դեր անավարտ չմնա: Թող զինվոր լինի միայն բեմի վրա: Ու թե զինվորի մայր կլինի, թող բեմում լինի: Ոչ թե սկեսուրիս պես չորս անգամ չորս որդի ուղարկի ռազմաճակատ ու միայն երկուսի վերադարձը տեսնի...

Իրոք. հայկական 408-րդ հրաձգային դիվիզիայի զինվոր Շաքրո Մելքոնյանը զոհվեց: Զոհվեց և նրա Անանով եղբայրը: Ադամովը տուն վերադարձավ որպես առաջին կարգի հաշմանդամ, իսկ Արարատին պատերազմական սպիացած վերքերը այսօր էլ հանգիստ չեն տալիս:

Վերին Գետաշեն, Կիրովականի պետթատրոն, Երևանի դերասանի տուն—այսօր ամենուր, բացի Բերգեն-Բելզենից, ուր հավերժ փակվեցին Շաքրոյի դերասանական աչքերը, և դադարեց բաբախելուց նրա տաք սիրտը, անմահացել է ազատաբաղձ հայորդու անունն ու հիշատակը: Թատերագետ Բ. Հարությունյանի «Սովետահայ թատրոնի տարեգրության» երկհատորյակում ընթերցողը հանախ կհանդիպի հայ, ռուս, վրաց և եվրոպական դասական դրամատուրգիայի անմահ հերոսներից շատերի շաքրոյական դերակատարումներին:

Շ. Մելքոնյանը Զոհրաբյանի դերում («Դատավճիռ»):

«Համլետ էր ուզում խաղալ և Օթելլո, ափսո՛ս, չհասցրեց. հիտլերյան ավազակների գոհ դարձավ հենց հիտլերյան մահադարանում»,— մեր զրույցի ժամանակ Շաքրոյի երազանքների մասին տեղեկացնում է նրա խաղընկեր, Հայկ. ԽՍՀ վաստակավոր արտիստ Ալեքսանդր Շագաֆյանն ու ընթերցում աբելյանցիներին գրած դերասան մարտիկի ռազմաճակատային մի նամակը, որից և մեջբերում ենք սույն հատվածը. «Իմ շատ սիրելի և անմոռանալի ընկերներ: Իմ սիրտն ու հոգին ամենուր, ամեն ժամ, ամեն վայրկյան ձեզ հետ են: Ես հիմա տեսնում եմ իմ ընկերներին, իմ սիրելի թատրոնը, որտեղ ձեզ հետ միասին բեմ եմ բարձրացել նաև ես, հուզվել, արտասվել, խնդացել, երբեմն էլ սուրը ձեռքիս մենամարտել եմ թշնամու դեմ: Իսկ այսօր ահա ես կանգնած եմ կյանքի ամենածանր բեմում՝ ռազմաճակատում: Ռազմաճակատն էլ, այո՛, մի մեծ բեմ է, և ես կռվում եմ արդեն ոչ թե Ջոլլայի սուրը ձեռքիս, այլ՝ ավտոմատը կրծքիս: Կռվում եմ խոր համոզմամբ, քաջ գիտենալով, որ մեր գործն արդար է: Սրանք ուրիշի խոսքերի կրկնությունը չեն լոկ, այլ իմ համոզմունքը: Ինքս գյուղացու զավակ եմ՝ ծնված ու սերված հայրենի արդար, հող ու ջրից: Իմ հայրն ասում էր. «Տղա՛ս, եթե արդար ես, միշտ կհաղթես, թեկուզ դիմացինդ աղյուծ լինի»: Սիրելի ընկերներ, ամեն ինչը սկիզբ և վախճան ունի: Այս պատերազմն էլ կվերջանա և իհարկե մեր հաղթանակով: Ու ես նորից կվերադառնամ ձեր գիրկը...»:

Պատերազմը, ինչպես կանխազգում էր Նոյեմ մայրիկի դերասան որդին, իրոք վերջացավ խորհրդային զինվորի ազատաբեր հաղթանակով: Ցավոք մարդ № 50008-ը՝ դերասան Շաքրո Մելքոնյանը, չվերադարձավ յուրայինների գիրկը: Բերգեն-Բելզենի համակենտրոնացման ճամբարից հրաշքով փրկվեց Մարդ № 50009-ը՝ դերասան Մուսայել Գալոյանը: Նա Երևանում գրեթե ամեն օր հանդիպում է Կոմիտասի փողոցի վրա, իրենց տան դեմ-դիմաց ապրող Սերգեյ Մելքոնյանին՝ Շաքրոյի միակ որդուն և ծանր հոգոց հանելով շշնջում.

— Դեռ ինչե՞ր, ինչե՞ր կան պատմելու քո հոր, իմ քաղցր և անզուգական ընկերոջ՝ Շաքրո Մելքոնյանի մասին:

ՇԱՔՐՈ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. 29/11.38 թ., Կիրովականի Հովհ. Աբելյանի անվան թատրոն՝ ԿԱԹ (ռեժ.՝ Խ. Հարությունյան), «Արշալույսին»՝ Մուրադ.
2. 27/2.39 թ., ԿԱԹ (ռեժ.՝ Ա. Սարգսյան, Նկ.՝ Ս. Արուտչյան), «Արսենում»՝ Գիվի.
3. 23/12.39 թ., ԿԱԹ (ռեժ.՝ Ջ. Ժամհարյան, Նոր բեմադրություն), «Գոշում»՝ Թորոս.
4. 6/1.40 թ., ԿԱԹ (ռեժ.՝ Ջ. Ժամհարյան), «Թող բացվեն վարդերում»՝ Ասլան պապ.
5. 23/11.40 թ., ԿԱԹ (ռեժ.՝ Աշ. Մաթ.), «Ռուզանում»՝ Ջոլլա:
6. 22/12.40 թ., ԿԱԹ (տես «Սոցարշավ» թերթ, 18/12-40թ., № 108): Ծերեթելու 100-ամյակի առթիվ բեմադրվեց «Կինտոն», այստեղ՝ կինտոներից մեկի դերում (Տես նաև Արմեն Ծովակի և Արտ Բար.-ի «Ավ.»-ի 17/1—41 թ. № 13-ում տված գրախոսությունը):
7. 25/1.42 թ., ԿԱԹ, «Ռուզանում»՝ Ջոլլա:
8. **Շագաֆյան Ալեքսանդր**—Դերասան մարտիկը. «Թատ. Երևան», 1975 թ., № 9 (հատուկ թողարկում), էջ 35:
9. **Գալոյան Մ.**— Մարդ-50009, Ե., 1985 թ. և 1989 թ.:
10. **Գրիգորյան Սասուն**—«48 հազարից մեկը», ԹԵ, 1989 թ., № 7, էջ 28—29:

ԲՈԼՈՐԻՑ ՍԻՐՎԱԾ ՎԱԶԻԿԸ

ՎԱԶԳԵՆ (ՎԱԶԻԿ)
ԼԵՎՈՆԻ
ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆ
(1917—1943)

1929-ին բացվեց պատանի հանդիսատեսի թատրոնը: Հենց առաջին դիմորդներից առաջինը փայլեց Վազիկի աստղը: «Պիոներիտում» նա կերտեց Վասիկի դերը, որը և եղավ նրա դերասանական դեբյուտը: Նուրբ դիտողականությունը, կերպարի հոգեբանական ըմբռնումն ու կենդանի վերարտադրելը, դեմքի միմիկան և ձայնի անկեղծ հնչյունագրավչությունը այնպես էին միաձյուսվում, որ Վազիկը աչքի էր զարնում: Եվ նա շահեց մանուկ, ջահել ու ծեր հանդիսատեսին, մտավ բոլորի սրտերը...

Վազգեն Մուրադբեկյանը տասնհինգ տարեկան հասակում խաղացել է Շարլ դը Կոստերի «Տիլ Ուլենշպիգել» բեմադրության մեջ Պուտուկի դերը: Նա իր ստեղծագործական-բեմական ուժերի ծաղկումն էր ապրում, երբ զորակոչվեց խորհրդային բանակ (1938 թ., Կիրովականի թատրոնից): «Եթե ես հարյուր կյանք էլ ունենայի, կտայի հայրենիքի ազատագրմանը» նշանաբանով, զենքը ձեռքին քսանամյա դերասանը կռվեց սպիտակ ֆիններեի դեմ Մուրմանսկ, Պետսամո, Կանդալակշա, Վոխտա քաղաքներն ազատագրելիս և 1939 թ. հայ զինվորներից առաջինը պարգևատրվեց Արիության համար մեդալով: Նոր էր խաղաղվել հայրենի երկինքը, երբ այս անգամ էլ ամբողջ աշխարհին տիրելու հրեշային ծրագրով հիտլերյան գիշատիչները հարձակվեցին Խորհրդային երկրի վրա: Մարտական հրմտություն, ուժեղ կամք և փորձություն տեսած հայ արվեստագետը նորից նետվեց մարտի: Մերձբալթյան հանրապետությունները թշնամուց ազատագրելիս Խորհրդային Միության հերոս, մարշալ Հովհ. Բաղրամյանի հրամանատարությամբ գործող 16-րդ բանակում երիտասարդ հայ դերասանը գնդացրային կրակով ոչնչացրեց թշնամու տասնյակ ուժեր, ոմբակոծեց ֆաշիստական երեք տանկ և խզեց հետախուզային կապը գերմանական բանակի զորամասերից մեկի հետ: Անվեհերության և սխրանքի համար նա պարգևատրվեց Մեծ հայրենականի երկրորդ աստիճանի շքանշանով, արժանացավ Գերագույն գլխավոր հրամանատարության շնորհակալագրին: «Համոզված եղիր, սիրելի՛ մայրիկ, որ ես կարդարացնեմ քո հույսերը... Կիտցիր, իմ կյանքը չեմ խնայի, մինչև արյան վերջին կաթիլը, մինչև վերջին շունչս կկռվեմ մարդակերների դեմ՝ հանուն հայրենիքի, հանուն իմ ժողովրդի, հանուն քեզ և իմ փոքրիկ Էզրիկի, իմ ընկերների ու հարազատների...»:

Մորը հասցեագրած նամակի սույն տողերը նա ոչ թե բեմից արտասանեց, այլ գրեց Բրյանսկի ռազմաճակատից, այն բանակի, որի շարքերում ռուս, ուկրաինացի, բելոռուս, ղազախ, վրացի և այլ ազգերի որդիներ ուս-ուսի տված թշնամուն հետ էին մղում Տուլայից, Օրյոլից և Բրյանսկից: Որպես սակրավոր Վազգեն Մուրադբեկյանը կռվում էր քաջաբար և միշտ հիշում Նիկոլայ Օստրովսկու իր այնքան սիրած խոսքերը. այն խոսքերը, որ նա հանախ փորձերի ժամանակ արտասանում էր թատրոնի բեմից. «...Մարդու համար ամենաթանկագինը կյանքն է. դա նրան մի անգամ է տրվում: Նա պետք է այդ կյանքն ապրի այնպես, որպեսզի դատնորեն չզղջա աննպատակ անցկացրած տարիների համար, որպեսզի ամոթից չայրվի իր անարգ և գծուծ անցյալի համար և որպեսզի մեռնելիս կարողանա ասել.— ամբողջ կյանքս և ուժերս ես տվի աշխարհում ամենագեղեցիկ բանին՝ մարդկության ազատագրման պայքարին...»:

Վազգեն Մուրադբեկյանի ռազմի հերոսական ճանապարհն ու կյանքի նպատակը կորչագինյան դյուցազներգություն են: Երևանի Կիրովյան շրջանի զինկոմիսարիատը 1941 թ., երբ Վազիկը զինծառայությունից եկել էր հերթական արձակուրդ, արտոնել էր՝ «մնա թատրոնում և խաղա», բայց նա չմնաց: Ի՞նչ արձակուրդ, ի՞նչ հանգիստ: Սևահեր, սրամիտ, աշխույժ և կատակասեր Վազիկը, որն իր կոմիկական դերերով արդեն նվաճել էր բեմն ու հանդիսատեսին և միշտ «բռավոներով» ու ծաղիկներով էր հեռանում բեմից, նորից թողեց հայրենի բեմը, ուր նա որակապես բարձրացել էր՝ Մոսկվայում Ռուբեն Սիմոնովի մոտ կատարելագործվելուց հետո (1934—1937 թթ.) և խաղում էր Վիտյա («Գյուտարարներ»), Ժան («Կոմունարի թոռը»), Սարիբաշ («Ատլանտյան ռոքինզոններ»), Ֆրից («Ֆրից Բաուեր»), Ահմեդ («Հրացան № 492—116»), Վոլոդյա («Անկա») և այլ հերոսների դերեր: Հանդիսատեսների հիշողությունից երբեք չեն ջնջվում Վազիկի անզուգական դերակատարումները, որոնք կերտել է նա «Խոպան» (Կոստյա), «Կրակե օղակում» (Հանես), «Կույր երաժիշտը» (բժիշկ Մուսյան), «Քաջ Նազար» (Նազար) և բազմաթիվ այլ պիեսներում: Դեռ որքա՜ն, որքա՜ն դերերով կհուզեր, կապրեցներ իր հանդիսատեսին Գ. Աշուղյանի և Ա. Բաղալյանի խաղընկերը, որը մինչ ռազմաճակատ մեկնելը գործուղվել էր սովորելու Կոստրոմայի ռազմական ուսումնարանում, որտեղից էլ զինվորագրվեց թշնամու ջախջախմանը:

— Եղբորից ստացած մասունքները հայրս մահից առաջ կտակեց, որ դնենք իր կրծքին: Չմերժեցինք,— պատմում է զոհված մարտիկի քույր Հասմիկ Մուրադբեկյանն ու մեզ ծանոթացնում Վազգենի գրած մի քանի նամակներին: Ինչպես խորհրդային երկրի բյուր որդիների խոսքը, դերասան հայորդու նամակները նույն-

Քաջ Նազարի դերակատարումը Վ. Մուրադբեկյանի անունը միանգամից հայտնի դարձրեց թատերասերներին:

պես պարունակում են թշնամու հանդեպ ատելություն և ցասում, մարտական կամք և տոկունություն, անհուն սեր հայրենի տան հանդեպ և մի անսպառ ու լուսե հավատ դեպի հաղթանակը: 1943 թ. հուլիսի 10-ին դերասան մարտիկը մորը՝ Արփենիկին, տեղեկացնում է, որ պայթեցրել է հակառակորդի երկու տանկ: Հուլիսի 18-ի նամակում կարդում ենք. «...Այժմ մեր ռազմաճակատում մի այնպիսի տուր ենք տալիս ֆաշիստներին, որ նրանք երկար չեն մոռանա, եթե ընդհանրապես հիշողություն մնա նրանց ջարդված գանգերի մեջ: Չեմ կարող նկարագրել, թե ինչպիսի մեծ ուրախություն է պատում, երբ աչքովդ տեսնում ես, որ քո գնդակը ցած է գլորում ֆաշիստին: Դուք գիտե՞ք, որ մեր ռազմաճակատի գլխավոր հրամանատարը սիրելի ու հարազատ Վորոշիլովն է... Բարձր տրամադրություն է տիրում մեր զորքերին, մենք շուտով դուրս կքշենք այդ անկոչ հյուրերին...»:

Երևան: Հեղափոխության թանգարան: Թանգարանի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Տիգրան Սաղաթելյանի հետ թերթում ենք Վազգեն Մուրադբեկյանի անձնական արխիվը: Ահա 1943 թ. հուլիսի 25-ին գրած նամակը: Նրանում հայ մարտիկը տեղեկացնում է, թե Սվերդլովսկի շրջանը թշնամուց ազատագրելիս ինչպիսի ապրումներ է ունեցել. «Մամա ջան, չեմ կարող նկարագրել, թե ինչ էի զգում, երբ հանդիպեցի մեր երեխաներին. նիհար, գունատ, բայց ուրախությունից վառ աչքերով մեզ էին նայում: Ես նրանցից մեկին նստեցրի ուսիս և ուրախությունից ու հուզմունքից արտասվեցի: Այս պատկերը ես երբեք չեմ մոռանա: Այդ երեխաների վրեժը, թեկուզ կյանքի գնով էլ լինի, պետք է լուծեմ: Վերջերս «Պրավդայում» (27 փետրվարի) կարդացի հայ աշխատավորության նամակը ճակատայիններին: Ես համոզված եմ, որ դու լինվին միանում ես մեր ժողովրդի այդ պատգամին՝ ուղղված հայ մարտիկներին: Ինչ վերաբերում է ինձ, կարող ես հանգիստ լինել, ես կաշխատեմ միշտ բարձր պահել մեր ժողովրդի անունն ու պատիվը և կոմունիստի բարձր կոչումը, խոստանում եմ քեզ և իմ ժողովրդին ազնվորեն ծառայել հայրենիքիս, պատվով ու հաղթանակով վերադառնալ: Մամա, ինձ շատ է անհանգստացնում մեր Հրանտի վիճակը (քրոջ՝ Հասմիկի ամուսինն է, նա ևս զոհվել է—Ս. Գ.): Ես երկար ժամանակ է, որ նրանից լուր չունեմ, խնդրում եմ՝ հայտնեք ինձ նրա վերջին հասցեն: Ես նրա հրամանատարին կգրեմ և կիմանամ այն ամենը, ինչ հետաքրքրում է մեզ: Մայրիկ ջան, խնդրում եմ՝ հայտնիր ինձ իմ ընկերների մասին, գրիր Երևանի նորություններից, ո՞նց է Վաղարշ Վաղարշյանը Համլետի դերում, ի՞նչ նորություններ կան մեր թատրոնում: Ընդհանրապես ամեն ինչի մասին գրիր...»:

Քո Վազիկ

25 հուլիսի 1943 թ.»:

Հաջորդ երեկոյան, հուլիսի 26-ին, Օրյոլի մարզի Սվերդլովսկի շրջանի Գուսարի խուտորն ազատագրելիս արյունախում գնդակին զոհ գնաց 26-ամյա դերասան մարտիկը՝ չհասցնելով փոստարկղ գցել լուսադեմին մորը գրած նամակն ու հորը՝ Լևոնին մակագրած զինվորական լուսանկարը: Վերջին երկուսը կուսակցական տոմսի և դստեր՝ Էլզայի լուսանկարի հետ ծակել էր գերմանական գնդակը և դրանք ողողել իրենց տիրոջ արյունով: «Վիրավոր այդ հարստությունը» ընկերները ծրարեցին և մահազդի հետ ուղարկեցին զոհված մարտիկի ծնողներին: ...Տարիներ են անցել: Սվերդլովսկի շրջանի եղբայրական գերեզմանին բարձրացած հուշասյունկոթողի տակ հանգչում է այսօր նաև Վազգեն Մուրադբեկյանի աճյունը:

Վազգեն Մուրադբեկյանը ծնվել է 1917 թվականի ապրիլի 13-ին, Երևանում: Աբովյանի անվան դպրոցում էր սովորում, երբ առաջին անգամ բարձրացավ իր սիրած թատրոնի՝ պատանի հանդիսատեսի թատրոնի բեմը: Չորս տարի թատրոնում դերասան աշխատելուն զուգընթաց նա սովորեց դպրոցում, ավարտեց այն 1933 թվականին: 1934 թ. սեպտեմբերի 1-ից Մոսկվայում սկսվեցին Մոսկվայի նորակազմ հայկական պետական դրամատիկական երրորդ ստուդիայի պարապմունքները՝ Ռուբեն Սիմոնովի ղեկավարությամբ: Աղասի Ալայանի, Սուրեն Քոչարյանի, Վաղինակ Բագրատունու, Ազատ Շերենցի, Տաթևիկ Սազանդարյանի, Թամարա Դեմուրյանի, Գևորգ Աշուղյանի և այլոց հետ ամեն օր դասի էր գնում նաև բոլորից սիրված Վազիկը: Ստուդիայում դասախոսում էին Սուրեն Քոչարյանը (խոսքի տեխնիկա), Ի. Կ. Լիպսկին (թատրոնի պատմություն), Մ. Վ. Լիսիցյանը, Ս. Պ. Բարխուդարյանը, Ի. Մ. Ռապոպորտը, Ս. Ի. Ալաջալյանը, Վ. Արիստակեսյանը, Մելիք-Նուբարովը և ականավոր այլ արվեստագետներ: Այդ ստուդիայի մասին դրվատանքով գրեցին «Իզվեստիան» (5/10—1934 թ., № 234), «Վեչերնյայա Մոսկվան» (1/9—1934 թ., № 201) և բազմաթիվ այլ պարբերականներ: 1937 թ. մարտին Մոսկվայի հայկական դրամատիկական երրորդ ստուդիան ռեժիսոր Բ. Ռապոպորտի ղեկավարությամբ բեմադրեց Շիլլերի «Սեր և խարդավանք» ստեղծագործությունը: Վազգեն Մուրադբեկյանի խաղացած Ֆերդինանդը լուրջ խոսակցությունների տեղի տվեց: Նա այստեղ հանդես էր գալիս նաև Կամերդինների դերում:

Գերազանց ուսումնառությամբ Վազիկը վերադարձավ Մոսկվայից: Մեկ-մեկուկես տարի աշխատեց Կիրովականի Հովհ. Աբելյանի անվան թատրոնում և, չնայած ռեժիսոր Գուրգեն Գաբրիելյանի առարկումներին, թողեց Կիրովականը և նորից երևանյան բեմում (ՊՀԹ) շարունակեց իր ստեղծագործական կյանքը: Ռեժիսոր Աստղիկ Աղասյանը, թատրոնի ողջ կոլեկտիվը գրկաբաց ընդունեցին իրենց հին ընկերոջը, չէ՞ որ նա Մոսկվա մեկնելուց առաջ այստեղ էր մարմնավորել իր գերագույն դերերից մեկը՝ Քաջ Նազարը և բազմաթիվ այլ դերեր: Եվ ահա նորից ծափեր: Այս անգամ նա «Հայրենիքի համարում» (1941 թ. դեկտեմբերի 27-ին) բեմ բարձրացավ որպես Հերբերտ, Հրաչյա Ղափլանյանը՝ Միտյա, Վ. Յավուրյանը՝ Նեմչենկո, Գ. Յաղջյանը՝ Կորոտկով: Թատրոնը պատրաստվում էր բեմադրել Ն. Օստրովսկու «Ինչպես է կոփվում պողպատը»: Վազիկը Պավել Կորչագին էր: Այդպես էլ չհասցրեց խաղալ, չհասցրեց անգամ «Կոմունիստում» կարդալ Ա. Գասպարյանի «Հայրենիքի համար» թատերախոսականը, որը լույս տեսավ 1942-ի հունվարի 28-ին: Զոհվեց Վազիկը:

Վազգեն Մուրադբեկյանի կյանքի և ռազմի սխրանքի մասին հետաքրքիր էջեր են գրվել «Նամակներ փառքի և անմահության» գրքում, «Թատերական Երևանի» տարբեր համարներում, «Երեկոյան Երևան», «Ավանգարդ» և այլ թերթերում: Նրա լուսանկարներն ու դերակատարումներն այսօր ցուցադրված են Երևանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Երևանի Աբովյանի անվան, ինչպես նաև Երևանի № 114 և 132 դպրոցների մարտական փառքի սրահներում: Վ. Մուրադբեկյանի անունը անմահացել է նաև Հայաստանի թատերական գործիչների միության շենքի (Դերասանի տուն) նախասրահի մարմարե հուշատախտակին:

ՎԱԶԳԵՆ ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. 16/4.1930 թ., Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն (հետայսու՝ ՊՀԹ, ռեժ.՝ Ա. Գուլակյան), «Ֆրից Բաուերում»՝ Ֆրից:
2. 7/5.1930 թ., ՊՀԹ-ում (ռեժ.՝ Ա. Աղասյան), «Ալտայան ոսքինզոններում»՝ Սարիբաշ (բեմադր. մասին տես՝ «ՍՎ», 11/5.30 թ., № 105-ում Մազմանյանի «Ալտայան ոսքինզոններ» հոդվածը):
3. 1/2.1931 թ., ՊՀԹ-ում (ռեժ.՝ Տ. Ճամիրխանյան), «Կոմունարի թոռներում»՝ թոռ:
4. 31/5.1931 թ., ՊՀԹ-ում (ռեժ.՝ Գ. Հովհաննիսյան), «Խոպանում»՝ Պետրով:
5. 19/10.1931 թ., ՊՀԹ-ում (ռեժ.՝ Ա. Աղասյան), «Կարմիր նիզակներում»՝ Ծու Չեն:
6. 12/4.1932 թ., ՊՀԹ-ում (ռեժ.՝ Ա. Գուլակյան), «Տիլ Ուլենշպիգելում»՝ Պուտուկ:
7. 29/11.1932 թ., ՊՀԹ-ում (ռեժ.՝ Տ. Ճամիրխանյան), «Կրակե օղակում»՝ Հանես:
8. 17/7.1933 թ., ՊՀԹ-ում (ռեժ.՝ Տ. Ճամիրխանյան, Ա. Աղասյան), «Անկայում»՝ Բազիկ և Կոլոդյա:
9. 17/4.1934 թ., ՊՀԹ-ում՝ նույնը:
10. 20/4.1934 թ., ՊՀԹ-ում (ռեժ.՝ Ա. Գուլակյան), «Քաջ Նազարում»՝ Նազար:
11. 1934 թ. սեպտեմբերի 1-ին սկսվեցին Մոսկվայի նորակազմ Հայկական պետական դրամատիկական երրորդ ստուդիայի պարապմունքները Ռուբեն Սիմոնովի ղեկավարությամբ: Դասախոսում էին Սուրեն Քոչարյանը (խոսքի տեխնիկա), Ի. Կ. Լիպսկին (թատրոնի պատ-

մություն), Մ. Վ. Լիսիցյանը, Ս. Պ. Բարխուդարյանը, Տ. Ա. Դիննիկը, Ի. Մ. Ռապոպորտը, Վ. Գ. Վագրինան, Ս. Ի. Ալաջալյանը, Վ. Արիստակեսյանը, Մելիք-Նուբարովը և այլ ծանաչված արվեստագետներ: Ուսանողներից էին Աղասի Ալայանը, Սարգիս Քոչարյանը, Վազ. Բագրատունին, Ազատ Շերենցը, Տաթևիկ Սազանդարյանը, Թամարա Դեմուրյանը, Գևորգ Աշուղյանը, Վազգեն Մուրադբեկյանը և ուրիշներ): Այդ մասին տես նաև «Վեչերնյայա Մոսկվա», 1934 թ., 1/9 № 201-ում և «Իզվեստիայի» նույն թվականի հոկտեմբերի 5-ում, № 234-ում):

12. 16/3.1937 թ., Մոսկվայի հայկական դրամատիկական ստուդիայում (ռեժ.՝ Ի. Ռապոպորտ), «Սեր և խարդավանքում»՝ Ֆերդինանդ և Կամերդիներ:
13. 30/2.1938 թ., Կիրովականի Հովհ. Աբելյանի անվ. թատրոն (ռեժ.՝ Ջ. Ժամհարյան), «Կույր երաժիշտում»՝ Մուսյան:
14. 22/6.1938 թ., Կիրովականի Հովհ. Աբելյանի անվ. թատրոն (ռեժ.՝ Գ. Գաբրիելյան), «Գիքորում»՝ Վանո
15. 27.12.1941 թ., ՊՀԹ-ում (ռեժ.՝ Աստղիկ Աղասյան), «Հայրենիքի համարում» Հերբերտ (Այդ մասին տես «Կոմունիստ» թերթում, 28/1.42 թ.):
16. **Գրիգորյան Սասուն**—«Մայր հողը՝ վերջին բեմ»: Եր., 1978 թ., 10 մայիսի, № 109, էջ 31:
17. **Գրիգորյան Սասուն**—«Ռազմաճակատը՝ վերջին բեմ», ԳԹ, 11 մայիսի 1979 թ., էջ 4:
18. **Ճիրոյան Անուշավան**—«Վազգեն Մուրադբեկյան», «Ս. արվեստ», 1958 թ., № 8, էջ 54—55:
19. **Սանթրոսյան Պարույր**—«Իմ ընկերոջ մասին» (տպված է և լուսանկարը):— «Թատ. Երևան», 1975 թ., № 3-ի հատուկ հավելված, էջ 33—34:
20. Սակրավոր Վազգեն Մուրադբեկյանի նամակները. «Նամակներ փառքի և անմահության», Ե., 1969 թ., էջ 394—401:
20. **Գրիգորյան Սասուն**—«Հայրենի հողը՝ ռազմաբեմ», ԹԵ, 1985, № 9, էջ 4 և 5:

ԴԵՐԱՍԱՆԸ՝ ԿՈՄԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՋԱՐՏՈՒՂԱՐ ԵՎ ՌԱԶՄԻԿ

ՍԱՀԱԿ ԿԱՐԱՊԵՏԻ ՋԱՌԱՅԱՆ (ՋԱՌԵՆՑ) (1918—1943)

Երևանի Գ. Սունդուկյանի անվան թատրոնի հնագույն դերասաններն ու ավագ հանդիսատեսները այսօր էլ սիրով են հիշում թատրոնի խոստումնալից ուժերից Սահակ Կարապետի Ջառայանին: Սահակը ծնվել է 1918 թվականին Էջմիածնում: Երևան տեղափոխվելուց նա տարրական կրթությունն ստացավ Կոիլովի, իսկ միջնակարգը՝ Շահումյանի անվան դպրոցներում: Առաջինը Սահակի դերասանական ընդունակությունները նկատեց Արմեն Գուլակյանը և տասնհինգամյա տղային հրավիրեց Երևանի պետթատրոն (այժմ Գ. Սունդուկյանի անվան): 1933 թ. նոյեմբերի 11-ին «Ֆիգարոյի ամուսնություն կամ խելահեղ օր» ներկայացման մեջ նա սպասավորի դերակատարն էր, իսկ 1935-ի մայիսին «Շահնամեում» հանդես էր գալիս որպես գյուղացի:

1936 թ. հոկտեմբերին, թատրոնի նոր խաղաշրջանի բացման ժամանակ, թատրոնին կից դերասանական ստուդիայի մի խումբ սաներ (Վ. Միրիջանյան, Տ. Բախչինյան, Ավ. Ջրաղացպանյան, Հ. Հայրապետյան, Մ. Տիրոսյան և ուրիշներ) հիմնական աշխատանքի անցան թատրոնում, նրանց հետ էր նաև Սահակը: Արմեն Գուլակյանի, Գուրգեն Գաբրիելյանի, Վավիկ Վարդանյանի, Օլգա Գուլազյանի, Գուրգեն Ջանիբեկյանի, Վաղարշ Վաղարշյանի և այլոց հոգատար վերաբերմունքն ու ուշադրությունը ոգեվորեցին երիտասարդ դերասանին:

Կերչում զոհված բանաստեղծ Մեսրոպ Մերուժանի նամակը եղբորը՝ դերասան **Սահակ Ջառայանին** (29 մայիսի 1936 թ.):

Սահակ Ջառայանը (աջինը) իր ռուս ընկերոջ հետ՝ Մոսկվայի մոտ, 1942 թ.:

— Ուներ գեղեցիկ ձայն և առոգանություն, դեմքը խիստ արտահայտիչ էր: Անզուգական ասմունքող էր: Դրա համար էլ ռադիոյից խնդրեցին, որ Սահակը իրենց մոտ էլ աշխատի: Եվ նա չմերժեց: Վերջին երկու տարում հայկական ռադիոյի սիրված հաղորդավարներից էր,— պատմում է Սահակ Ջառայանի մասին Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ Արշավիր Ղազարյանն ու ավելացնում.— հիշում եմ՝ 1941 թ. Սահակը մասնակցեց սունդուկյանցիների մոսկովյան տասնօրյակին: Հաշվի առնելով նրա դերասանական ծաղկող տաղանդը՝ արվեստի գործերի վարչությունը նրան գործուղեց Մոսկվա՝ թատերական կուրսերում վերապատրաստման: Սահակը նաև բանաստեղծություններ էր գրում, տպագրել էր մի քանի գործ, ստորագրում էր Ջառենց...

Որպես որակյալ հաղորդավարի և դերասանի Սահակ Ջառայանին 1941—42 թվականներին տրված էր զինծառայությունից ազատվելու արտոնագիր (տարկետում):

«Բեմում թշնամի սպանելով հայրենիքը չես պաշտպանի: Իմ բեմը հայրենի հողն է»,— 1942-ին ողջագուրվելով սունդուկյանցիների հետ, երիտասարդ դերասանը կրկնում էր իր այս խոսքերը և միանում ռազմաճակատ կամավոր մեկնող կոմերիտների խմբին:

«Նա եկավ կոմերիտմիության Կենտկոմ և ասաց. «Խնդրում եմ ինձ ուղարկեք եղբորս մոտ՝ նրա հետ ծառայելու... Թշնամին պետք է կործանվի մեր հարվածներից...»,— մեր զրույցի ժամանակ ավելի մանրամասն նկարագրեց Սահակի բանակ մեկնելը ՀԼԿԵՄ Կենտկոմի այն ժամանակվա քարտուղար Գեղամ՝ Ալեքյանը: Նա Սահակի մանկության ընկերներից է եղել, բարեկամական կապերով էին կապված միմյանց հետ...

Չանցած երկու ամիս Սահակն արդեն գործող բանակում էր: Խիզախ հայորդին որպես անվեհեր մարտիկ և քաղաքաշատող անմնացորդ մարտնչեց թշնամու դեմ Հյուսիսային Կովկասում, Կուբանում, Ուկրաինայում: Նամակներ էր գրում մորը՝ Մարգոյին, կնոջը և դստերը՝ Մարիանային, հավաստիացնում. «Շուտով Հիտլերը «կխաղա իր վերջին դերը». մենք կհաղթենք, ետ կգանք հաղթանակով»: Ցավոք 1943 թվականին նա կրկնակի վիրավորվելուց հետո զոհվում է Բորյանսկի ռազմաճակատում՝ Օրյոլի համար մղվող մարտերում, չիմանալով, որ մի տարի առաջ գերմանական նույն բարբարոսներից մեկի գընդակին զոհ է գնացել իր բանաստեղծ եղբայրը՝

Դերասան և ռազմիկ **Սահակ Ջառայանը** Օրյոլ—Կուրսկի աղեղում թշնամու դեմ մարտնչելիս ժամանակ էր գտնում լուսանկարվելու և այն ուղարկելու Երևան, մորաքրոջ աղջկան՝ Ժենյային: Վերջինիս մոտ են պահպանվում զոհված դերասանի և նրա բանաստեղծ եղբոր՝ Մեսրոպ Մերուժանի արխիվն ու նամակները:



Երևանի Գ. Սունդուկյանի անվան թատրոնի դերասան և ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար Ս. Ջառայանի նամակը՝ հասցեագրված մորը՝ Մարգո Ջառայանին, գրված Պոդոլսկում 1942 թ. հունվարի 1-ին:

Մեսրոպ Մերուժանը, Կերչի համար մղվող մարտերում: Անկատար մնաց Ջառայան եղբայրների երազանքը. Մեսրոպը չտեսավ իր առաջին գիրքը տպագրված, Սահակը չհասցրեց խաղալ Սամվելի դերը (Տիգրան Շամիրխանյանի հետ այդպես էին ծրագրել):

«Ի՞նչ դերերում և որտե՞ղ է հանդես եկել Սահակ Ջառայանը» հարցին ի պատասխան հիշատակենք, որ նա հիմնականում խաղացել է Երևանի պետական (ներկայումս Գ. Սունդուկյանի անվան) թատրոնում: «Արսենում» եղել է Ջուրիկո, «Կապուտանում»՝ Լիպարիտ, «Ռևիզորում»՝ Ուխավերդով, «Արաքսի ափինում»՝ կապիտան, «Մեծապատիվ մուրացկաններում»՝ Ստեփանոս աղա, «Անհանգիստ ծերությունում»՝ ուսանող...



«Մոսկվա—162, դաշտային փոստ 3881»—զինվորական հետադարձ այս հասցեներով հաճախ էր նամակներ ստանում Երևանի Լենինի փողոցի № 32 տան բնակչուհի, Երևանի կոմերիտմիության ակտիվիստ Մարգո Օհանջանյանը: Նա եղել է Սահակի եղբոր՝ Մեսրոպի, և հարյուրավոր հայ արվեստագետ ռազմիկների մտերիմ ընկերուհին և պատերազմի թեժ օրերին նրանց հետ պահպանել նամակագրություն: Վերոհիշյալ նամակն ու **Ս. Ջառայանի** մասին փաստագրական որոշ նյութեր նա է մեզ տրամադրել:

Սահակ Ջառայանին բնորոշ էր նաև հասարակական ակտիվ աշխատանքը: 1941-ի հունվարին նա մասնակցեց թատերական երիտասարդ ստեղծագործողների հանրապետական կոնգրեսին, հանդես եկավ ելույթով (տես. ՍՀ, 15 հունվարի 1941 թ.): Մի քանի ամիս անց, երբ սունդուկյանցիները քննարկում էին Մոսկվա մեկնելու իրենց խաղացանկը, Վ. Վաղարշյանի, Ա. Գուլակյանի, Վ. Վարդանյանի, Մ. Սարյանի ելույթներից հետո բոլորը հետաքրքրությամբ ունկնդրեցին թատրոնի կոմերիտական կազմակերպության քարտուղար Սահակ Ջառայանին՝ հաշվի առնելով նրա դիտողություններն ու առաջարկները: Հյուրախաղից հետո, երբ Հայկական թատերական ընկերությունը քննարկում էր մոսկովյան տասնօրյակի հաշվետվությունը, նորից ամբիոն բարձրացավ Սահակը:

«Ս. Ջառայանը ոչ միայն տաղանդաշատ դերասան էր, կոմերիտական ակտիվ գործիչ, այլև իսկական ընկեր»,— մեր զրույցի ժամանակ ասում է կոմերիտմիության վետերան Մարգո Օհանջանյանը և մեզ տրամադրում զոհված դերասանի մի քանի նամակներն ու լուսանկարները, որոնք նա ստացել է ռազմաճակատից:

ՍԱՀԱԿ ՋԱՌԱՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. 17/11. 33 թ., Երևանի պետթատրոն (ռեժ.՝ Ա. Գուլակյան), «Ֆիգարոյի ամուսնությունը կամ խելահեղ օրում»՝ սպասավոր:
2. 3/5.35 թ., Երևանի պետթատրոն (ռեժ.՝ Ա. Գուլակյան), «Շահնամեում»՝ գյուղացի:
3. 24/2.37 թ., Երևանի պետթատրոն (ռեժ.՝ Գ. Ժուրուլի), «Արսենում»՝ Ջուրիկո:
4. 6/5.38 թ., Երևանի Սունդուկյանի անվան թատրոն (ռեժ.՝ Վ. Վարդանյան), «Անհանգիստ ծերությունում՝» ուսանողներից մեկը (մյուսները՝ Ավ. Ջրաղացպանյան, Թ. Դեմուրյան, Գ. Մարտիրոսյան):
5. 24/6.38 թ., Երևանի Սունդուկյանի անվան թատրոն (ռեժ.՝ Գ. Գաբրիելյան), «Կապուտանում»՝ Լիպարիտ:
6. 6/1.40 թ., Երևանի Սունդուկյանի անվան թատ. (ռեժ.՝ Ա. Բուրջալյան), «Ռևիզորում՝» Ուխավերդով:
7. 25/10.40 թ., Ե. Սունդ. թատ. (ռեժ.՝ Վ. Վարդանյան), երեկո՝ նվիրված Անուշավան Վարդանյանի ծնն. 60-ամյակին), «Արաքսի ափինում»՝ կապիտան:
8. 14/1.41 թ., Երիտասարդ թատ. ստեղծագործողների հանրապետ. կոնգրես, բացման խոսք՝ Ա. Շահինյանի, ելույթ ունեցողներ՝ Գ. Ջանիբեկյան, Վ. Վարդանյան, Ա. Ավետիսյան, Գ. Ասլանյան, Ա. Կայծունի, Մելիք Քոչարյան, Սահակ Ջառայան (տես «Սովետական Հայաստան», 15/1.41 թ., № 12):
9. 4/2.41 թ., Սունդ. թատ. (ռեժ.՝ Վ. Աճեմյան, հար. ռեժ.՝ Հ. Ներսիսյան), «Մեծապատիվ մուրացկաններում»՝ Ստեփանոս աղա:
10. Զմռան դեմ (բանաստեղծ.)—«Հոկտեմբերիկ»; 1933 թ., № 12, էջ 4:
11. Հոկտեմբերիկին (բանաստեղծ.)— «Հոկտեմբերիկ», 1934 թ., № 1, էջ 2:
12. **Գրիգորյան Սասուն**— «Ռազմաճակատը՝ վերջին բեմ» (տպված է նաև զինվորական լուսանկարը), ԳԹ, 11 մայիսի 1979 թ., էջ 4:
13. **Ալեքյան Գեղամ**— «Հայաստանի երիտասարդությունը Մեծ հայրենականին», Ե., 1979 թ., էջ 38—39:
14. **Գրիգորյան Սասուն**— «Հայրենի հողը՝ ռազմաբեմ», «Թատ. Երևան», 1985 թ., № 9, էջ 4—5:
15. **Գրիգորյան Սասուն**– «Մուսաները չլռեցին», ԳԹ, 5 մայիսի 1985 թ., № 18, էջ 2:
16. **Գրիգորյան Սասուն**— «Դերասանը կոմերիտմիության քարտուղար և ռազմիկ», Ավանգարդ, 9 մայիսի 1989 թ.:
17. **Հարությունյան Բաբկեն**—«Սովետահայ թատրոնի տարեգրություն», Ե., 1961, գիրք I, էջեր՝ 345, 403, 460, 480, 529, 557, 612, 631, գիրք II, Ե., 1969, էջեր՝ 13, 19, 31, 48:

ՃԱՆԱՉԻ՛Ր ՁՈ ՀՈՐԸ, ՆՈՐԱ՛

ԾԵՐՈՒՆ ՂԵՎՈՆԴԻ ՍԱՄՈԿՐԱՆՅԱՆ (1910—1942)

Թող այս վերնագիրը, Էլեոնորա, քեզ չվախեցնի: Ես այն ամենը, ինչ լսել, կարդացել կամ ուսումնասիրել եմ զոհված հայրիկիդ մասին, քեզ լրիվ պետք է հաղորդեմ: Դու ծնվել ես, երբ հայրդ՝ Ծերուն Սամոկրանյանը, արդեն երեք տարվա դերասանական փորձ ուներ: Նա առաջին անգամ բեմ բարձրացավ 1930-ին Երևանի պետական թատրոնում (ներկայումս՝ Սունդուկյանի անվան) Յու .Յանովսկու «Յասում» պիեսում՝ կատարելով երկու դեր. մեկը՝ կոմերիտականի, մյուսը՝ կուլակի: Այո, երկու հակադիր կերպարներ՝ նույն օրը, նույն պիեսում, նույն բե-

Շերուն Սամոկրանյանը դստեր՝ Էլեոնորայի հետ:

մում: Դժվար է, անշուշտ, բայց, ինչպես պատմում է նրա խաղընկերը՝ Հովհաննես Ավագյանը (Պետիլի դերակատարը), հայրդ՝ վանեցի Ղևոնդի և Լուսնթագի որդին, հպարտորեն է իջել բեմից, ավելի ճիշտ՝ այդ օրն իսկ բեմադրության ռեժիսոր Արմեն Գուլակյանը համոզվել է, որ թատրոնին կից դերասանական ստուդիայի սաների հետ կարելի է լուրջ հույսեր կապել: «Ցասումի» բեմադրության մասին դրվատանքով է խոսել նաև «Խորհրդային Հայաստան» թերթը (հոդվածագիր՝ Ս. Մելիքսեթյան)[1]: Ձեզ տեղեկացնելու համար, հիշեցնեմ, Նորա, որ սկսնակ դերասան հայրիկիդ բախտ է վիճակվել իր առաջին դերը խաղալու Հասմիկի, Օլգա Գուլազյանի, Համբարձում Խաչանյանի, Վաղարշ Վաղարշյանի, Օրի Բունիաթյանի և այն ժամանակ արդեն ճանաչված անվանի այլ դերասանների և ռեժիսորների հետ: Հայրիկիդ առաջին դերի մասին ավելի մանրամասն ձեզ կարող են տեղեկություններ հայտնել Թաթուլ Դիլաքյանն ու Գարիկ Մուշեղյանը: Նրանցից առաջինը Անդրիկի, երկրորդը՝ գյուղացու դերակատարներն էին: «Ցասումի» բեմադրության առթիվ ժամանակին գրախոսականներ են տպվել «Ավանգարդում» (15.II.1930 թ., № 37), «Խորհրդային Հայաստանում» (22.2.1930 թ., № 45) և «Գրական դիրքերում» (1930 թ., № 3, էջ 78, Թիֆլիս): Թատրոնի ողջ կոլեկտիվի հետ հայրդ մասնակցել է Մոսկվայում կայացած երիտասարդ արվեստագետների օլիմպիադային: Մինչ այդ հյուրախաղերով հանդես է եկել Բաքվում, Թբիլիսիում, Դոնի Ռոստովում և այլուր: «Լապտերի մոտ». ահա այն երկրորդ պիեսը (հեղինակներ՝ Վ. Կորոլևիչ և Գ. Նիկիֆորով, բեմ. ռեժ.՝ Վ. Վաղարշյան), որտեղ հանդիսատեսը երկրորդ անգամ հանդիպել է Ծ. Սամոկրանյանին՝ գյուղացու դերում: Այդ նույն ամսին (ապրիլին) պետթատրոնի ռեժիսոր Տ. Շամիրխանյանը բեմադրության է պատրաստել Յու. Յուրինի «Երբ կանչում են աքաղաղները» պիեսը: Այստեղ քսանամյա (ծնվ. 1910 թ.) շնորհաշատ Ծերունը ստանձնել է Ցիգլերի դերը[1]:

— Մի քանի ամիս անց,— պատմում է Հովհ. Ավագյանը,— Ծերունի հետ հանդես եկանք «Առաջին հեծելազորում»: Ես՝ Վախմիստր, նա՝ մեկ զինվոր, մեկ՝ հեռագրիչ: Էն ժամանակ մեծ և փոքր դերի համար վեճեր չէին լինում: Ռեժիսորի ասածը օրենք էր: Վաղարշը, որ այդքան շնորքով էր և անուն հանած, այս նույն պիեսում մասսայական տեսարանում գյուղացի խաղաց, Հրաչյա Ներսիսյանը՝ բանվոր: Հե՛յ գիդի էն օրերը...— երևեկ տալով ջահելությանը՝ շարունակում է ժողովրդական արտիստը:— Ծերունի հետ մեկ էլ բեմում հանդիպեցինք երեք տարի անց՝ 1933-ին: Այս ընթացքում նա ամուսնացել էր, թե չեմ սխալվում, աղջկա հայր էր արդեն: Դեռ փորձը չավարտած իրեն գցում էր տուն, շատ էր ուրախացել...Դերասան Ծերունը աճում էր օրօրի: Արդեն լուրջ, ինքնատիպ դերեր էին նրան առաջադրվում: Կերպարների բացահայտում, իսկական դերասանական խաղ, հեղինակին մեկնաբանելու կարողություն, սեփական ասելիք... և այս բոլորը Ծերունը հաղթահարեց: Նա և Գ. Էլբակյանը Ա. Ֆադեևի «Ջախջախումում» փոխեփոխ Կանոնիկով էին խաղում: Հիշում եմ՝ պիեսը թարգմանել և բեմադրում էր Վաղարշյանը, երաժշտության հեղինակն էր Մարտին Մազմանյանը: Հրաչյան և ես Լևինսոնի դերակատարներն էինք...

Հիմա, Նորա՛, դու ինձ պատկերացրու նկարչի տան սրճարանում: Սեղանի շուրջ հավաքված են դերասաններ Ազատ Ծերենցը, Վաղինան

[1] Տես «Խ. Հ.», 6 փետրվարի 1930 թ.:

[1] **Բ. Հարությունյան**, «Սովետահայ թատրոնի տարեգրություն», Ե., 1961, հ. I, էջ 263:

Մարգունին և Մհեր Մկրտչյանը: Խոսք է գնում պատերազմի մասին: Հիշվում են այդ օրերին բեմադրված ստեղծագործություններ, տնտեսական դժվարություններ, մարդիկ, որ հիմա չկան.

— Արշակ Բուրջալյանը 1934-ին կանչեց ինձ և Վանյա Դանիելյանին ու ասաց՝ շտապ գտեք Ծերունին: Կես ժամ հետո եկավ նաև նկարիչ Միքայել Արուտչյանը: Պարզվեց, որ բեմադրելու ենք «Ռևիզորը»: Երեքիս էլ հանձնարարեց՝ կլինեք վաճառական, կարգին կխաղաք, խայտառակ չանեք, թե չէ, հետո դերի երես չեք տեսնի... «Ինձանից առնող-ծախող դուրս չի գա»,— կատակեց Ծերունը:

«Բա էլ ի՞նչ վանեցի ես... կխաղաս, վերջ»,— եղավ Բուրջալյանի կտրուկ խոսքը: Եվ խաղացինք: Ափսոս ոչ Վանյան կա, ոչ Ծերունը. երկուսն էլ զոհվեցին: Հիմա ինչքան առևտրականի դերեր են բաշխում, միտս է գալիս Ծերունի խոսքը. «Ինձանից առնող-ծախող դուրս չի գա»...

Տեսնում ես, Նորա՛, ընկերական շրջապատում հիշվում են և՛ քո հայրիկը, և՛ նրա կատակները:



1941 թ. հունվարին Բաքվի հայկական թատրոնը բեմադրեց «Դավաճանություն» պիեսը: Կարա Յուսուֆի դերում հանդես եկավ **Ծ. Սամոկրանյանը:**

Ծ. Սամոկրանյանը Ջոլլայի դերում («Ռուզան»):

1934-ի մայիս: Երևանի պետական թատրոնը Եղիշե Չարենցի թարգմանությամբ բեմ է բարձրացնում Մ. Գորկու «Դոստիգաևը և ուրիշներ» դրաման: Այստեղ արդեն Ցելովանովի դերը վստահվում է Սամոկրանյանին:

— Խաղից հետո,—շարունակում է Վաղ. Մարգունին Ծերենցի պատմությունը,— Վիկտոր—Գ. Ասլանյանի և Պրոպատեյ—Հ. Ասլանյանի հետ էդ գիշեր էնքան էինք խմել, որ հաջորդ առավոտյան փորձից ուշացանք: Թվում էր, թե Վաղարշյանը մեզ «լավ կմշակի», բայց էժան պրծանք... «Ցելովանովը երեկ լավ դրսևորեց իրեն, նրա խաթրու համեցեք», եղավ դիտողություն-թույլտվությունը: Որպես ծանոթություն հիշատակենք, որ Մ. Գորկու այս պիեսի բեմադրությունը լայն արձագանք գտավ հանրապետական մամուլում. գրախոսականներով հանդես եկան Գ. Զախիրյանը, Աշ. Ղազարյանը, Ռ. Աթայանը, Մ. Մազմանյանը, Հր. Միրզոյանը և ուրիշներ:

Սիրելի Նորա, դու աշխատում ես, գործդ իր բնույթով հեռու է արվեստից, քիչ է շփումը դերասանների հետ, այլապես շատ և շատ տեղեկություններ և ընդհանուր պատկերացում կունենայիր հայրիկիդ ստեղծագործական դիմանկարի մասին, քան ունես: Ճակատագրի բերումով հայ-

կական կրթություն չստանալդ, հայերեն գրել-կարդալ չիմանալդ, անշուշտ, դժվարացնում են քեզ ըստ գրավոր աղբյուրների ծանոթանալու հայրիկիդ խաղացանկին: Կարծում եմ՝ քեզ կհետաքրքրի, թե էլ ինչ դերերում է հանդես եկել հայրիկդ մինչև 1936 թվականը՝ մինչև Բաքվի հայկական թատրոնում հիմնական աշխատանքի անցնելը: Ասեմ: 1934-ի մայիսին Երևանի պետական թատրոնը երիտասարդ արվեստագետների օլիմպիադայի առթիվ հանդիսատեսին է ներկայացրել «Մեծապատիվ մուրացկանները» ըստ Վահան Թոթովենցի և Մկրտիչ Ջանանի բեմականացման: Բեմադրության ռեժիսոր Գարիկ Մուշեղյանը հավաստիացնում է. «Ծերուն Սամոկրանյանի Ուսուցչի դերը մինչև օրս մնում է անգերազանցելի: Այդ օրվա Նորիկ Գևորգյանի Բանաստեղծը, Վանյա Դանիելյանի Խմբագիրն ու Ծերունի Ուսուցիչը ամենագտնված կերպարներն էին: Դրա համար էլ դեռ կուլիսների ետևում էինք, երբ Գուրգեն Սարյանն ասաց. «Ես բեմադրության մասին պիտի գրեմ»: Եվ 1934-ի մայիսին «Ավանգարդում» գովեստի արժանացանք»:

Դ. Դեմիրճյանի «Նապոլեոն Կորկոտյանը» նախապատերազմական շրջանի խորհրդահայ դրամատուրգիայի լավագույն գործերից մեկն է՝ հարուստ դիպուկ երկխոսություններով, կոնֆլիկտներով, հումորով, կենսափիլիսոփայությամբ և քննադատությամբ: Այնպիսի մի բազմապլան ստեղծագործությունում, որտեղ գլխավոր դերերը կատարում էին Ավետ Ավետիսյանը, Գ. Ջանիբեկյանը (Բարեղամ), Օ. Գուլազյանը (Օլինկա), Մ. Մանվելյանը (Խորխորունի), Հ. Գարագաշը (Սվետլանա), Գ. Գաբրիելյանը (Բոնապարտ), Ծերուն Սամոկրանյանին բաժին էր ընկել Ռուբենի դերը:

— Նապոլեոնի պես դուրս եկավ դերի տակից...,— կատակախառն ասում է Թաթուլ Դիլաքյանն ու ավելացնում. — Իսկ դու գիտե՞ս, որ Ծերունի ընկերներից մեկն էլ, որ այստեղ Մըրրիկի դերկատարն էր՝ Արփիար Նավասարդյանը, ևս ռազմադաշտից չվերադարձավ...

Ինչպես տեսնում եք, Նորա՛, դերասաններից ոչ միայն ձեր հայրիկը, այլև **Վանյա Դանիելյանը, Արփիար Նավասարդյանը, Արտավազդ Խալաթյանը, Սահակ Ջառայանը, Ալեքսանդր Իզմայլյանը** (մակետչիկ) և էլի... Էլի երիտասարդ արվեստագետներ են եղել, որոնք **զոհվել են** գերմանական ֆաշիզմի դեմ մարտնչելիս՝ հայրենի հողը ոտքի տակ ունենալով որպես վերջին բեմ, խոցվել են, մահացել, բայց ոչ բեմական մահով, այլ իրապես, գիտակցված, որպեսզի ես, դու, նա և նրանց բոլոր հետնորդները խաղաղությունը միշտ թանկ գնահատենք և եթե աշխարհում տեսնենք պատերազմ, ապա՝ միայն բեմում:

Թե ինչպիսի հաջողություն է ունեցել «Նապոլեոն Կորկոտյանի» բեմադրությունը, Նորա՛, խորհուրդ կտայինք ծանոթանալ «Խորհրդային արվեստ» ամսագրի 1934 թ. 11-րդ համարին և և նույն թվականի «Խորհրդային Հայաստան» օրթերթում (2/11., 22/11 և 12/12. 1934 թ.) տպագրված հոդվածներին: Չէ՛ որ, երբ գովում են բեմադրությունը, դա ինքնին նշանակում է, որ հաջողված է և՛ ռեժիսուրան, և՛ դերասանական խաղը, իսկ որ Սամոկրանյանը հաջող է հանդես եկել իր ստանձնած դերերում, դա ականատեսները երբեք չեն մոռանում:

Ըստ մասնագիտական աղբյուրների և գործընկերների վկայության Ծ. Սամոկրանյանը Բաքվի հայկական թատրոնում առաջին անգամ բեմ է բարձրացել Թադևոս (Թաթիկ) Սարյանի բեմադրած (1936-ի փետրվար) «Գիքոր» պիեսում (բեմականացումը՝ Գ. Գաբրիելյանի): «Գիքորով», Նորա՛, սկսվում է հայրիկիդ բեմական գործունեության երկրորդ կամ Բաքվի շրջանը:



Ծ. Սամոկրանյանը Ջոլլայի դերում («Ռուզան»):

— Դե, Ծերունի մանկությունը Գիքորի մանկությունից էլ դառն է եղել: Խեղճ Ծերունը տեսել էր թուրքական յաթաղան, յուրայինների սպանությունը և, 5—6 տարեկան հասակում գաղթողների անհայտ քարավանին միացած, Վանից հասել Արևելյան Հայաստան, ընկել ամերիկյան որբանոց: Ինչ զրկանք ասես, որ չի կրել նա: Կոշկակար էր, սրամիտ, համով-հոտով, խոսող, ծիծաղեցնող տղա: Միանգամից այնպես կլըրջանար, որ կզարմանայիր: Բաքվում Ծերունի համար Ալեքսանդր Հովհաննիսյանն ու Արզո Արզումանյանը թև ու թիկունք էին: Երամյանների հետ էր մոտ. գիշեր-ցերեկ Հուսիկի հետ էին, անբաժան ընկերներ էին,— պատմում է Արարատ Բարսեղյանը և հիշեցնում, որ ինքը «Գիքորի» բեմադրության մասին ժամանակին դրական գրախոսական է տպել Բաքվի «Կոմունիստում»:

Ծ. Սամոկրանյանը մեզ անհայտ դերում:

— Այդ ինչպե՞ս է, որ քո գրածը հիշում ես, իմը չես հիշում,— ասում է «Կոմունիստի» նախկին խմբագիր, գրականագետ Համո Ամիրխանյանն ու լրացնում.— 1937-ին, եթե չեմ սխալվում նոյեմբերին էր, որ Լևոն Քալանթարը Բաքվի թատրոնում բեմ բարձրացրեց Կ. Տրենյովի «Լյուբով Յարովայա» պիեսը: Ժաամենի, Լևոն Երամյանի, Ալեքսանդր Հովհաննիսյանի, Արզո Արզումանյանի, Խորեն Հարությունյանի, Հովսեփ Ոսկանյանի, Հուսիկ Հովհաննիսյանի հետ աչքի ընկավ սև, հաստ և երկար հոնքերով մի ջահել դերասան՝ Սեմյոնի դերակատարը: Ծանոթացանք, Ծերունն էր: Հիմա, երբ թերթում եմ հոդվածներիս ցանկը, աչքիս է զարնում «Կոմունիստում» տպագրված իմ «Լյուբով Յարովայա» հոդվածը, որը հիշեցնում է ոչ միայն Ծերունին, այլև շատերի, որ հիմա չկան: Իմ գրախոսած թատերական ներկայացումների մեծ մասում Ծերունը խաղացել է: Հիշում եմ նրա Գորաձեն («1905», 1937 թ.), Մուրադը («Արշալույսին», 1938 թ.), Գրեկովը («Պավել Գրեկով», 1939 թ.) և այլ դերակատարումներ:

Նորա՛, չեմ կասկածում, որ հիմա, երբ տանը նստած թերթում ես հայրիկիդ ընտանեկան ալբոմում տեղ գտած լուսանկարները, տանջվում ես, որովհետև չգիտես, թե ինչ դերերում է հանդես եկել հայրիկդ, չնայած, որ լուսանկարը կա, բայց չկա ետևի մակագրությունը: Հանրապետության Գրականության և արվեստի պետական թանգարանում ենք: Այստեղ պահպանվող (ֆոնդ № 4749) և ինձ մոտ եղած լուսանկարների գիտական հետազոտումներից (ԳԱ թանգարանի բաժնի վարիչ Բախտիար Հովակիմյանի օժանդակությամբ) պարզվեց նաև, որ հայրդ 1938-ի փետրվարին բեմ բարձրացած Մ. Սաղյանի «Հայրենիք» պիեսում խաղացել է Ավագ, «Արսենում»՝ Միտրոխին, «Անուշում»՝ Կարո, «Իմ որդին» պիեսում նա կատարել է ոստիկանական խորհրդատուի դերը, իսկ «Օղակումում» եղել է դասակապետ: Նորա՛, հայրիկիդ լավագույն ընկերներից ու բարեկամներից էր հանրապետության ժողովրդական արտիստ Արտաշես Հովսեփյանը: Որպես ռեժիսորի մեծ է նրա ներդրումը Բաքվի հայկական թատրոնում: Այ, եթե ընթերցես Բ. Հարությունյանի «Սովետահայ թատրոնի տարեգրության» առաջին հատորի 545, 547, 611 և 646-րդ էջերը, կհամոզվես, որ միայն Արտ. Հովսեփյանի բեմադրած չորս պիեսներում հայրդ կերտել է չորս լիարժեք կերպարներ, որոնք մտել են խորհրդահայ թատրոնի գանձարանը, դրանք են՝ Վախթանգի («Պատիվ» կամ «Հայրենիք»), Կուլիկի («Կամո»), Սինցովի («Լենին», թարգմ.՝ Համո Ամիրխանյանի, այստեղ մայրդ՝ Ն. Սամոկրանյանը, կատարել է Նատաշայի դերը) և Վարգասի («Հայրենիք» կամ «Երդում») կերպարները: Թերևս, Նորա՛, չծնվեր այս նամակը, եթե ոչ միայն դու, այլև թատերասեր մեր երիտասարդությունն այսօր ձեռքի տակ ունենար դերասան Ծերուն Սամոկրանյանի կյանքն ու ստեղծագործությունն ամփոփող դիմանկարային մի հոդված կամ փաստագրական ակնարկ: Չէ՛ որ նա արժանի է դրան: Երեսունմեկ տարեկան

էր հայրդ, Նորա՛, արդեն հիսունից ավելի բեմական կերպարներ էր կերտել, ապրում էր հասարակական եռուն կյանքով, կոմունիստ էր, երբ մեկնեց գործող բանակ: Ի՞նչ իմանար Վանոյի («Գանձ»), Ջոլլայի («Ռուզան»), Կարա-Յուսուֆի («Դավաճանություն»), Զավենի («Վարազդատ») տաղանդաշատ դերակատարը, որ մի տարի հետո՝ 1942-ին, գերմանական ավազակների գնդակից պետք է իր մահկանացուն կնքի Կերչում, չհասցնելով ոչ թե Բաքվի, Դոնի Ռոստովի, Թբիլիսիի, Երևանի պետթատրոններում, ուր հանդես էր եկել հաճախ, այլև բանակի թատրոնում ևս խաղալու իր ամենասիրած դերը Շիլլերի «Ավազակներում»:

Անշուշտ, Նորա՛, սա չէ լրիվ և վերջնական խաղացանկը զոհված մի դերասանի, որը քո հայրն է, որն ապրեց ընդամենը կյանքի 31 տարի՝ տեսնելով Դեր-Զոր և Կերչ, ապրելով գաղթի և կոտորածի սարսափները, մահից առաջ հազիվ շշնջալով. «Ների՛ր ինձ, Էլեոնորա՛, փոքրիկ աղջնակս, որ պետք է անհայր մեծանաս...»:

Վերականգնելով զոհված հայրիկիդ դերասանական դիմանկարը, ես երևի քեզ բացի հոգեկան բավարարությունից, նաև հուզմունք պատճառեցի: Ների՛ր, Նորա՛...

ԾԵՐՈՒՆ ՍԱՄՈԿՐԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. 11/3.30 թ., Երպետթատրոն (ռեժ.՝ Ա. Գուլակյան), «Ցասումում՝» կոմերիտական և կուլակ:
2. 13/11.30 թ., Երպետթատրոն (ռեժ.՝ Ա. Գուլակյան), «Առաջին հեծելազորում՝» Լեյբ գուսար, I գինվոր, գինվոր, մարտիկ, բուդյոնովական, հեռագրիչ, հեռախոսավար, նաև՝ մասսայական տեսարաններում:
3. 23/1.33 թ., Երպետթատրոն (ռեժ.՝ Վ. Վաղարշյան) «Ջարդում՝» Կանոնիկով:
4. 9/1.34 թ., Երպետթատրոն (ռեժ.՝ Ա. Բուրջալյան), «Ռեվիզորում՝» վաճառական:
5. 12/5.34 թ., Երպետթատրոն (ռեժ.՝ Վ. Վաղարշյան), «Դոստիգանը և ուրիշները» պիեսում՝ Սելովանով:
6. 18/5.34 թ., Երպետթատրոն (երիտասարդ արվեստագետների օլիմպիադայի առթիվ, ռեժ.՝ Գ. Մուշեղյան), «Մեծապատիվ մուրացկաններում՝» Դասատու:
7. 4/11.34 թ., Երպետթատրոն (ռեժ.՝ Ա. Գուլակյան և Գ. Գաբրիելյան), «Նապոլեոն Կորկոտյան կամ համառոտ երջանկությունում՝» Ռուբեն:
8. 6/1.36 թ., Բաքվի հայկական թատրոն (ռեժ.՝ Գ. Գաբրիելյան), «Գիքորում՝» Ծամիր:
9. Բաքվի հայկական թատրոնում (ռեժ.՝ Լ. Քալանթար), «Լյուբով Յարովայայում՝» Սեմյոն:
10. 30/12.37 թ., Բաքվի հայկ. թատրոն (ռեժ.՝ Ա. Իսկենդերով և Ա. Հովսեփյան), «1905 թվինում՝» Գորաձե:
11. 23/2.38 թ., Բաքվի հայկ. թատրոն (ռեժ.՝ Մ. Սաղյան), «Հայրենիքում՝» Ավագ:
12. 28/4.38 թ., Բաքվի հայկ. թատրոն (ռեժ.՝ Արտ. Հովսեփյան), «Արշալույսինում՝» Մուրադ:
13. 11/6.38 թ., Բաքվի հայկ. թատրոն (ռեժ.՝ Կ. Ալվարյան), «Արսենում»՝» Մ. Միտրոխին:
14. 5/10.38 թ., Բաքվի հայկ. թատրոն (ռեժ.՝ Արտ. Հովսեփյան, Նոր խաղաշրջանի բացում), «Պատիվում» («Հայրենիք»)՝ Վախթանգ:
15. 26/10.38 թ., Բաքվի ՀԹ (ռեժ.՝ Արտ. Հովսեփյան), «Կամոյում՝» Կուլիկ:
16. 4/12.38 թ., ԲՀԹ (ռեժ.՝ Ժ. Ավետիսյան), «Անուշում՝» Կարո:
17. 20/5.39 թ., Բաքվի ՀԹ (ռեժ.՝ Կ. Ալվարյան), «Պավել Գրեկովում» (թարգմ.՝ Արտ. Հովսեփյանի և Կ. Ալվարյանի)՝ Գրեկով:
18. 5/1.40 թ., Բաքվի ՀԹ (ռեժ.՝ Արտ. Հովսեփյան, թարգմ. Համո Ամիրխանյանի, երաժշտ.՝ Անտ. Մայիլյանի), «Լենինում՝» Սինցով, իսկ Նինա Սամոկրանյանը[1]՝ Նատաշա:
19. 23/5.40 թ., Բաքվի Երամյանի անվան թատրոն (ռեժիսորներ՝ Կ. Ալվարյան և Ժասմեն), «Իմ որդինում՝» ոստիկանական խորհրդատու:
20. 1/10.40 թ., Բաքվի Երամյանի անվան թատրոն (ռեժ.՝ Ժասմեն), «Հայրենիքում» («Երդում»)՝ Վարդան:
21. 28/10.40 թ., Բաքվի Երամյանի անվան թատրոն (ռեժ.՝ Կ. Ալվարյան), «Օղակում՝» դասակապետ:
22. 16/1.41 թ., Բաքվի Երամյանի անվան թատ. (ռեժ.՝ Ա. Հովսեփյան), «Գանձում՝» Վանո:
23. 10/2.41 թ., Բաքվի ՀԹ (ռեժ.՝ Արտ. Հովսեփյան), «Ռուզանում՝» Ջոլլա:
24. 16/1.41 թ., Բաքվի ՀԹ (ռեժ.՝ Արտ. Հովսեփյան), «Դավաճանությունում՝» Կարա Յուսուֆ:
25. 5/5.41 թ., Բաքվի Երամյանի անվան թատ. (ռեժ.՝ Արտ. Հովսեփյան), «Վարազդատում՝» Զավեն:
26. **Հարությունյան Բաբկեն**—«Սովետահայ թատրոնի տարեգրություն», Ե., 1961 թ., գիրք I, էջեր՝ 258,, 273, 321, 351, 364, 366, 381, 434, 506, 512, 528, 534, 545, 547, 554 576, 611, 630, 646, 650, գիրք II, Ե., 1969 թ., էջեր՝ 15, 20, 25, 32:
27. **Գրիգորյան Սասուն**— «Այսպիսին էր հայրդ, Նորա՛» (Նրա մասին և լուսանկարը), ԳԹ, 1980 թ., 9 մայիսի:
28. **Գրիգորյան Սասուն**— «Ռազմաճակատը՝ վերջին բեմ», ԳԹ, 11 մայիսի 1979 թ., էջ 4:
29. **Գրիգորյան Սասուն**—«Հայրենի հողը՝ ռազմաբեմ», ԹԵ, 1985 թ., № 9, էջ 5:

---

[1] Նինա Սամոկրանյանը Ծերուն Սամոկրանյանի կինն էր:

ԴԵՐԵՐ ԲԱՇԽԵԼԻՍ ԻՆՁ ՀՄՈՒԱՆԱՔ

ԿՈՐՅՈՒՆ (ԹՈՐՈՍ) ՎԱՂԻՆԱԿԻ ՍԱՐԳՍՅԱՆ (1918—1943)

Նեվելի մոտ, Պոդշիշշե գյուղի եղբայրական գերեզմանոցում է հանգչում քսանհինգամյա հայորդի Կորյուն Վաղինակի Սարգսյանը: 1918 թվականի մայիսի 28-ի ծնունդ է նա: Դիլիջանի շրջանի Պողոսքիլիսա (այժմ Կույբիշև) գյուղն է նրա օրրանը: Մանուկ էր, երբ ծնողները ընտանյոք տեղափոխվեցին Ղարաքիլիսա (Կիրովական): Կորյունն այստեղ հաճախում էր Երկաթգծի № 41-րդ դպրոցը: Դեռ աշակերտական տարիներից անհուն սիրով էր համակված հայ դասական դրամատուրգիայի, քնարերգության և բեմական խոսքի հանդեպ: Որպես ասմունքող 1935 թ. նոյեմբերին (Հայաստանի խորհրդայնացման 15-րդ տարեդարձի հանդիսությունների ժամանակ) նա գրավեց համաքաղաքացիների և Երևանից ժամանած բեմի երախտավորների ուշադրությունը: 10-րդ դասարանի աշակերտ էր, երբ Կիրովականի պետթատրոնը նրան հրավիրեց հանդես գալու մասսայական տեսարաններում: Մի տարի անց այստեղ բեմադրվող «Մրցանավանջ» կամ «Խավարի աշխարհում» (ըստ Պ. Պոդշյանի «Հացի խնդիր» և «Ցեցեր» վեպերի) Տ. Հախումյանի բեմականացման մեջ 18-ամյա Կորյունը Աղաջանի դերակատարն էր (ռեժ.՝ Ա. Արևշատյան): Հետո (7.5.1937 թ.) կիրովականցի թատերասերները Կ. Սարգսյանին իրենց քաղաքի բեմում տեսան Շիլլերի «Ավազակները» ստեղծագործության մեջ Շվարցի դերում: «Որպես հաջող դերակատարման խրախուսանք ես Կորյունին նվիրեցի Հովհ. Աբեղյանի մեծադիր լուսանկարն ու Շիլլերի երկերի հատընտիրը»,—բեմադրությունից երեսուն տարի անց պատմում էր «Հայֆիլմ» կինոստուդիայի ռեժիսոր Ջ. Ժամհարյանը՝ այդ նույն բեմադրության այն ժամանակվա ռեժիսորը, և հիշում այն մեծ սերն ու նվիրվածությունը, որոնք ստիպել են, որ Կորյունը տեղափոխվի Ալավերդու պետթատրոն: Այստեղ բանվորական թատրոնի ռեժիսոր և դերասան Գևորգ Ասլանյանը Կորյունին առաջարկեց խաղալ Լ. Շեյնինի և Տուր եղբայրների «Առերեսում» պիեսում (թարգմ.՝ Գ. Գաբրիելյանի): «Մեր այդ բեմադրության և դերասաններիս խաղի մասին «Պղնձի ֆրոնտում» շրջանային թերթում գովասանական գրախոսություն տպեց Ա. Արշարունին: Տեսնեիք,— շարունակում է մեր զրույցը Հայկ. ԽՍՀ ժողովրդական արտիստուհի Վերջալույս Միրիջանյանը,— թե ինչքան էր ուրախացել Կորյունը՝ Կաշիրինի դերակատարը: Նա այդ մասին նամակով տեղեկացրեց լրագրող եղբորը՝ խնդրելով, որ նա էլ մի բան գրի: Կորյունը համեստ էր, բարի, մեղմ և հումորասեր: Նա շատ մոտ էր Արփիար Նավասարդյանի հետ: Ցավում եմ, որ երկուսն էլ ռազմադաշտից չվերադարձան»:

1939 թվականի մայիսի 15—20-ին Ալավերդում անցկացվեց շրջանային թատրոնների հանրապետական ստուգատես: Ստուգատեսի կազմխորհրդի նախագահ Հրաչյա Ներսիսյանը այնպես էր հավանել Կորյունի՝ Կաշիրինի դերակատարումը, որ կողքին նստած երիտասարդ ռեժիսոր Գարիկ Մուշեղյանին խնդրեց. «Մանչը աղվոր դերասան է: «Մեծապատիվ մուրացկաններ» բեմականացմանդ մեջ Գնորգին ըսե, թող դեր մը հատկացնե անոր»: 1941 թվականի ապրիլին պարոնյանական այս ստեղծագործության բեմադրության մեջ Կ. Սարգսյանը փաստաբանի դեր խաղաց...

Բռնկվեց Մեծ հայրենականը: Հազարավոր հայորդիների պես Կորյունն էլ ցասումով և վրեժով լցվեց մեր հայրենիքը ստրկացնողների հանդեպ: 1941 թվականի հունիսի 24-ին՝ պատերազմից երկու օր հետո, դերասան հայորդին որպես Դիքանի դերակատար («Դավիթ Կոպերֆիլդ») վերջին անգամ հայ թատրոնի բեմ բարձրացավ: Վերջին վարագույրից հետո, ծափերից և բռավոներից հուզված, մոտեցավ բեմադրության ռեժիսոր Արմո Արմենյանին, ողջագուրվեց և բարձրաձայն ասաց.

— Գնում եմ պատերազմ: Դերեր բաշխելիս

ինձ չմոռանաք, հաղթանակից հետո կգամ և կխաղամ: Մնաք բարով... Գնում եմ...

Գնաց ու էլ ետ չեկավ: Գազազած թշնամու ոհմակների դեմ երեկվա դերասանը որպես անվեհեր մարտիկ քաջաբար մարտնչեց Մոսկվայի մատույցներում: Որպես դասակի հրամանատար նա ստորաբաժանման իր զինվորների հետ քանի-քանի անգամ կասեցրեց հակառակորդի գրոհը, պայթեցրեց մի քանի տանկ, աչքի ընկավ Ի՛լիկի Լուկի և Նեվելի ազատագրության համար ծավալված կատաղի մարտերում, արժանացավ «Կարմիր աստղի» շքանշանի: Ծարունակվում էր մարտը դեմ դիմաց: Աշնանային սաղարթամերկ ծառերը չէին կարողանում թաքցնել շրջափակման մեջ ընկած վիրավոր զինվորներին: Ու երբ հիտլերականները գաղտագողի հետ նահանջեցին, թշնամու ինքնաթիռները վերևից սկսեցին ռմբակոծել Պոդշիշչեն: Ու մինչ խորհրդային հրաձիգները վար կգցեին թշնամու ինքնաթիռը, վերջինիս արձակած ռումբերի պայթյունը գետին տապալեց բազմաթիվ կարմիրբանակայինների, նրանց թվում՝ Կորյունին: Դա 1943 թվականի հոկտեմբերի 18-ին էր, Նեվելից 20—30 կմ հեռու:

— Խնդրում եմ՝ հիշատակեք, որ եղբայրս՝ Կորյունը,— մեր հանդիպման վերջում, որին ներկա էր լրագրող Կաուլեն Ազարյանը, ասում է Կիրովականի «Կայծ» թերթի վաստակաշատ խմբագիր Արծրուն Սարգսյանը,— խաղացել է նաև «Օղակում», «Փարոսի կրակները», «Արշալույսին», «Նամուս», «Գոշ» և բազմաթիվ այլ բեմադրություններում: Ես ամեն տարի այցի եմ գնում եղբայրական այն գերեզմանին, ուր հանգչում է եղբայրս՝ Կորյուն (Թորոս) Վաղինակի Սարգսյանը:

ԿՈՐՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

11.3.1936 թ., Կիրովականի պետթատրոն (ռեժ.՝ Ա. Արևշատյան, նկ.՝ Ռ. Նալբանդյան), «Մղձավանջում»՝ Աղաջան:
7.5.1937 թ., Կիրովականի Հովհ. Աբելյանի անվան պետթատրոն (ռեժ.՝ Ջ. Ժամհարյան), «Ավազակներում»՝ Շվարց:
7.2.1938 թ., Ալավերդու պետթատրոն (ռեժ.՝ Գ. Ասլանյան, նկ.՝ Ժ. Կարապետյան), «Առերեսումում»՝ Կաշիրին:
4.4.1941 թ., Ալավերդու պետթատրոն (ռեժ.՝ Գ. Ասլանյան, նկ.՝ Ժ. Կարապետյան, երաժշտ. Գ. Էյրամջյանի, բեմականացումը Գ. Մուշեղյանի), «Մեծապատիվ մուրացկաններում»՝ փաստաբան:
24.6.1941 թ., Ալավերդու պետթատրոն (ռեժ.՝ Ար. Արմենյան), «Դավիթ Կոպերֆիլդում»՝ Դիքսն:

ԶՈՀՎԵՑԻՆ՝ ՀԻՆԳԻՑ ՁՈՐՍԸ

ՀԱՅԿ ԹԱԴԵՎՈՍԻ ՔՈՉԱՐՅԱՆ (1917—1943)

Նրանք հինգ եղբայր էին: Երբ պատերազմի գույժը խուժեց Ալափարս, Թաթոս հայրիկի հինգ որդիներն էլ ոտքի ելան: Գնացին: Գնացին ու էլ չեկան: Հմայակը, որ երկու տարի էր, ինչ իր զինվորական պարտքն էր կատարում, ծառայում էր «Սիբիր» շոգենավի վրա, զոհվեց Տալլինում, կռվի առաջին տարում: Կիևը գերմանական հրոսակներից ազատագրելիս թշնամու մահաբեր գնդակը խլեց Արամի կյանքի թելը: Երեմը հերոսաբար կռվեց ոսոխի դեմ Տուապսեում, Գելենջիկում, Նովոռոսիյսկում և Սևաստոպոլում: 1943-ին Կերչը հիտլերյան ավազակներից ազատագրելիս նա մահացու վերք ստացավ և զոհվեց: Քոչարյան եղբայրներից թեև Հմայակը, Արամն ու Երեմը զոհվել էին, բայց և այնպես նրանց դերասան եղբայրները՝ Մելիքն ու Հայկը, վրեժով և ատելությամբ շարունակում էին կատաղի մարտեր մղել գերմանացի ելուզակների դեմ: 1943-ի հուլիսի 5-ից մինչև օգոստոսի 22-ը թշնամին, դիմելով հազար ու մի խարդախության և ստորության, Գերմանիայից, Նորվեգիայից և Ֆրանսիայից Կուրսկ էր տեղափոխել հետևակային, տանկային և ավիացիոն 50 դիվիզիա և ձգտում էր Օրյոլ—Կուրսկի աղեղում ծունկի բերել խորհրդային զինվորներին: Թշնամու նպատակները հօդս ցնդեցին: Հազարավոր խորհրդային քաջորդիների պես, կուրծքը դեմ տված թշնամու «Հովազ», «Վագր» նոր տանկերին և «Ֆերդինանտ» հրանոթներին, բեռնատեսի թատրոնի ապագա սյուներն էին... ափսոս երկուսն էլ զոհվեցին: Ի՞նչ ասեմ... Ա՜յ, նայի՛ր այս լուսանկարին. մի քանի պատառիկներ են նրա դերերից: Այս լուսանկարները իմ Լուվրն են, իմ Էրմիտաժը... Խնդրում եմ՝ արտանկարելուց հետո բնօրինակները վերադարձնեք ինձ...»:

Սիրով ընդունելով նախկին զինվորի առաջարկը՝ խնդրում եմ պատասխանել ևս երեք հարցի. ե՞րբ է ինքը զորակոչվել բանակ, որտե՞ղ է ծառայել և ի՞նչ է գրել պատերազմական թեմայով:

— 1929-ին, հիմնադրման հենց առաջին տարում, ընդունվեցի պատանի հանդիսատեսի թատրոն. դերասան էի: Բեմից 1941 թ. հունիսի 23-ին զորակոչվեցի բանակ: Ծառայում էի 408-րդ հայկական հրաձգային դիվիզիայում: Կռվեցի Հյուսիսային Կովկասում: Դիվիզիան այստեղ ծանր կորուստներ տվեց: Ինձ գործուղեցին սովորելու Թբիլիսիի ռազմաքաղաքական ուսումնարանում: Լեյտենանտի կոչումով վերադարձա ռազմաճակատ: Քանի որ չորս եղբայրներս զոհվել էին, ինձ կրակի առաջին գիծ էլ չուղարկեցին, նշանակեցին 261-րդ դիվիզիայի թերթի պատասխանատու քարտուղար, իսկ երբ թամանցիները Բեռլինից վերադարձան, նրանց թերթի խմբագրի տեղակալը դարձա:

Այնուհետև նախկին ճակատայինը տեղեկացնում է, որ գրել է շուրջ 60 պիես, որոնցից «Կույր երաժիշտը», «Սամվելը», «Հարազատ մարդիկ», «Մուսա լեռան զավակները», «Հին հիվանդություն» և այլ գործեր բեմադրվել են Երևանում, Փարիզում, Նյու-Յորքում, Բեյրութում, Մոնրեալում և այլուր, իսկ պատերազմական թեմաներով հյուսած «Կինը ուսադիրներով» և «Գնդապետ Քաջիկը» ստեղծագործություններն այսօր էլ դեռ շարունակում են մնալ հանրապետական թատրոնների խաղացանկում՝ հանդիսատեսին դաստիարակելով հայրենիքի նկատմամբ անհուն սիրով և նվիրվածությամբ:

Պատերազմի հաղթական ավարտից տարիներ են անցել: Թագուհի մայրիկի Արամ, Հմայակ,

մական համազգեստը փոխարինած մարտական-ով, գերմանական «Ֆոնկե-Վուլֆ-190» և «Հայնշել-129» կործանիչ ինքնաթիռների վրա հակատանկային մարտկոցի իր ընկերների հետ կրակի հեղեղ էր բացել Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնի, արտիստ Հայկ Քոչարյանը: Թշնամու գերակշռող ուժերի հարձակման պահին ֆաշիստական ռումբի պայթյունը գործեց իր սև ոճիրը. Հովհաննես Բաղրամյանի ղեկավարությամբ գործող 11-րդ գվարդիական բանակի անվեհեր հայ մարտիկն ընկավ ռմբակոծության տակ:

Հուլիս ամիսն էր: Օրյոլ—Կուրսկի ռազմաճակատից ստացվեց Հայկի «սև թուղթը»: Անցավ երեք տարի: 1946-ին հինգ եղբայրներից միայն մեկը՝ Թամանյան դիվիզիայի թերթի խմբագրի տեղակալ Մելիք Քոչարյանը, հայրենի տուն վերադարձավ՝ հոգում և մարմնի վրա պատերազմի սպիներն ու հետքերը: Տխրեցին բոլորը. հինգից չորսը զոհվել էին, զոհվել էին ծաղկահասակ՝ կարոտ Ալափարսի կապույտ երկնքին, գյուղի ժայռերը լիզող և արտերին կյանք ու կենդանություն պարգևող Հրազդանին, որի ափերին անցել էր նրանց մանկությունը:

«Ամեն մի վերք բուժվում է, բացի հիշողության վերքից...— աչքերը լցված զրուցում է վաստակաշատ դրամատուրգն ու ինձ ծանոթացնում իր կրտսեր եղբոր կարճատև կյանքին.—Հայկը ծնվել է 1917-ին Ալափարսում: 1932-ին տեղափոխվեց ինձ մոտ՝ Երևան, ուսումը շարունակեց Ծաղիկյանի անվան դպրոցում: Հետևում էր ինձ՝ բանաստեղծություններ և պիեսներ էր գրում: 7-րդ դասարանն ավարտելուց հետո իբրև սիրող դերասան բախեց պատանի հանդիսատեսի թատրոնի դուռը: Նրան էլ ընդունեցին. «Թոմ Կենտիում» նա խաղաց սպասավոր, «Անվեհերներում»՝ դաշնակցական Գևորգ, «Ինչպես է կոփվում պողպատում»՝ պետլյուրական Պատոչկին: Պատմագիր Վաղեսի («Անահիտ») և Հասանի («Գիքոր») դերակատարումներն ապացուցեցին, որ Հայկը իսկական դերասան է, ունի պիեսը խորությամբ ըմբռնելու կարողություն և արտիստորեն մեկնաբանելու ներքին հմտություն և կուլտուրա[1]: Նա և Վազիկը Պատանի հանդիսատեսի թատրոնի ապագա սյուներն էին... ափսոս երկուսն էլ զոհվեցին: Ի՞նչ ասեմ... Ա՜յ, նայի՛ր այս լուսանկարին. մի քանի պատառիկներ են նրա դերերից: Այս լուսանկարները իմ Լուվրն են, իմ Էրմիտաժը... Խնդրում եմ՝ արտանկարելուց հետո բնօրինակները վերադարձնեք ինձ...»:

Սիրով ընդունելով նախկին զինվորի առաջարկը՝ խնդրում եմ պատասխանել ևս երեք հարցի. ե՞րբ է ինքը զորակոչվել բանակ, որտե՞ղ է ծառայել և ի՞նչ է գրել պատերազմական թեմայով:

— 1929-ին, հիմնադրման հենց առաջին տարում, ընդունվեցի պատանի հանդիսատեսի թատրոն. դերասան էի: Բեմից 1941 թ. հունիսի 23-ին զորակոչվեցի բանակ: Ծառայում էի 408-րդ հայկական հրաձգային դիվիզիայում: Կռվեցի Հյուսիսային Կովկասում: Դիվիզիան այստեղ ծանր կորուստներ տվեց: Ինձ գործուղեցին սովորելու Թբիլիսիի ռազմաքաղաքական ուսումնարանում: Լեյտենանտի կոչումով վերադարձա ռազմաճակատ: Քանի որ չորս եղբայրներս զոհվել էին, ինձ կրակի առաջին գիծ էլ չուղարկեցին, նշանակեցին 261-րդ դիվիզիայի թերթի պատասխանատու քարտուղար, իսկ երբ թամանցիները Բեռլինից վերադարձան, նրանց թերթի խմբագրի տեղակալը դարձա:

Այնուհետև նախկին ճակատայինը տեղեկացնում է, որ գրել է շուրջ 60 պիես, որոնցից «Կույր երաժիշտը», «Սամվելը», «Հարազատ մարդիկ», «Մուսա լեռան զավակները», «Հին հիվանդություն» և այլ գործեր բեմադրվել են Երևանում, Փարիզում, Նյու-Յորքում, Բեյրութում, Մոնրեալում և այլուր, իսկ պատերազմական թեմաներով հյուսած «Կինը ուսադիրներով» և «Գնդապետ Քաջիկը» ստեղծագործություններն այսօր էլ դեռ շարունակում են մնալ հանրապետական թատրոնների խաղացանկում՝ հանդիսատեսին դաստիարակելով հայրենիքի նկատմամբ անհուն սիրով և նվիրվածությամբ:

Պատերազմի հաղթական ավարտից տարիներ են անցել: Թագուհի մայրիկի Արամ, Հմայակ,

---

[1] Հայկ Քոչարյանը խաղացել է նաև Լ. Կարասևի «Փարոսի կրակները» պիեսում որպես նավաստի (ռեժ.՝ Ա. Աղասյան), Հ. Ստեփանյանի «Քաջ Նազարում»՝ գյուղացի, իսկ Պ. Վասիլև—Սեերյանինի «Գալիլեո Գալիլեյում» նա կատարել է վանականի դերը: Հ. Քոչարյանի այս կատարումների մասին վկայում է նաև Բ. Հարությունյանը «Սովետահայ թատրոնի տարեգրության» I գրքում: Տես էջեր՝ 534, 549, 555, 565, 572, 618, 626:

Հայկ, Երեմ և Մելիք որդիներից միայն դրամատուրգ Մելիք Քոչարյանին է բախտ վիճակվել ապրել կյանքի յոթերորդ տասնամյակը, իսկ նրա չորս եղբայրները զոհվեցին՝ մնալով հավերժ երիտասարդ և իրենց ռազմի լուսանկարների ոսկեգօծ շրջանակում ուս-ուսի սեղմված՝ կարծես աշխարհի խաղաղությունն են հսկում:

ՀԱՅԿ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. 12/4.38 թ., ՊՀԹ (պատանի հանդիսատեսի թատրոն, նոր խաղաշրջանի բացումը պիոներպալատի նորակառույց շենքում. Ռեժ.՝ Սարգիս Քոչարյան), «Ջյամկա Կոպաչում»՝ Վիկտոր:
2. 10/6.38 թ., ՊՀԹ (ռեժ.՝ Ա. Աղասյան), «Փարոսի կրակներում»՝ Նավաստի:
3. 20/10.38 թ., ՊՀԹ (ռեժ.՝ Ա. Մարտիրոսյան), «Ինչպես է կոփվում պողպատում»՝ Պատոյկին:
4. 15/12.38 թ., ՊՀԹ (ռեժ.՝ Ա. Աղասյան), «Թոմ Կենտիում»՝ («Արքայազն ու աղքատը») սպասավոր, եղբայրը՝ Մ. Քոչարյանը, Մայլս (տես Ա. Դեբենցի գրախոսությունը, «Ավանգարդ», 24/12.38 թ.):
5. 5/3.39 թ., ՊՀԹ (ռեժ.՝ Ա. Մարտիրոսյան), «Անվեհերնեռրում»՝ Գևորգ.
6. 14/4.39 թ., ՊՀԹ (ռեժ.՝ Ս. Քոչարյան), «Քաջ Նազարում» (նոր բեմադրություն)՝ գյուղացի:
7. 21/10.39 թ., ՊՀԹ (ռեժ.՝ Ս. Քոչարյան, Շիլլերի ծնընդյան 18-ամյակի առթիվ), «Ավազակներում»՝ ավազակ:
8. 25/2.40 թ., ՊՀԹ (ռեժ.՝ Ս. Քոչարյան) «Անահիտում»՝ Վաղես:
9. 27/4.40 թ., ՊՀԹ (ռեժ.՝ Ա. Աղասյան) «Գալիլեո Գալիլեյում» (թարգմ.՝ Լ. Քալանթարի)՝ վանական:
10. 23/5.41 թ., ՊՀԹ (ռեժ.՝ Տ. Շամիրխանյան), «Դավիթ Կոպերֆիլդում»՝ ոստիկան:
11. **Հարությունյան Բաբկեն**—«Սովետահայ թատրոնի տարեգրություն», Ե., 1961, գիրք I, էջեր՝ 527, 534, 549, 555, 572, 600, 618, 626, 656, գիրք 2, Ե., 1969, էջ 22:
12. **Գրիգորյան Սասուն**—«Նրանք հավերժ երիտասարդ են» (Հայկ Քոչարյանի և իր եղբայրներ Հմայակի, Արամի, Երեմի և Մելիքի մասին: Կա նաև նրանց լուսանկարները), ՍՀ, 9 մայիսի 1979 թ., էջ 4:
13. **Գրիգորյան Սասուն**—«Ռազմաճակատը՝ վերջին բեմ», ԳԹ, 11 մայիսի 1979 թ., էջ 4:
14. **Հակոբյան Արշավիր**—«Մուսաները չէին լռել», ԳԹ, 29 փետր. 1980 թ., № 9, էջ 2:
15. **Գրիգորյան Սասուն**—«Հայրենի հողը՝ ռազմաբեմ», ԹԵ, 1985 թ., № 9:

ԱՆԱՎԱՐՏ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ[1]

Վանյա Դանիելյան— Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան, հանդես է եկել նաև «Հայֆիլմ» կինոստուդիայի 1930-ական թվականների վերջերին նկարահանված տարբեր ֆիլմերում: Նրա հարազատներին չենք գտել, նրա մասին կենսագրական տեղեկություններ չունենք:

ՎԱՆՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԽԱՂԱՑԱՆԿԸ

1. 29/11.32 թ., ՊՀԹ (ռեժ.՝ Տ. Շամիրխանյան), «Կրակե օղակում»՝ Սարգիս:
2. 19/5.33 թ., ՊՀԹ (ռեժ.՝ Գ. Գաբրիելյան), «Հեռու ծամփորդությունում»՝ բանտապետ:
3. 9/1.43 թ., Երևանի պետթատրոն (ռեժ.՝ Ա. Բուրջալյան), «Ռևիզորում»՝ վաճառական:
4. 19/3.34 թ., Երևանի պետթատրոնում (ռեժ.՝ Տ. Շամիրխանյան), «Ինտերվենցիայում»՝ Ալի:
5. 18/5.34 թ., Երևանի պետթատրոնում՝ երիտասարդ արվեստագետների օլիմպիադայի առթիվ (ռեժ.՝ Գ. Մուշեղյան), «Մեծապատիվ մուրացկաններում»՝ խմբագիր:
6. 4/11.34 թ., Երևանի պետթատրոնում (ռեժ.՝ Ա. Գուլակյան, Գ. Գաբրիելյան), «Նապոլեոն Կորկոտյան կամ համառոտ երջանկությունում»՝ Պավլի:
7. 11/12.34 թ., Երևանի պետթատրոնի արտիստներից կազմված շրջիկ թատերախումբը (Թ. Դիլաքյանը, Վ. Միրիջանյանը, **Վ. Դանիելյանը** և ուրիշները՝ Գ. Գաբրիելյանի գլխավորությամբ) բեմադրում է Տպագրիչների ակումբում «Մասշտաբներ կամ «Քոսոտ շունը» պիեսը:
8. 28/5.35 թ., Երևանի պետթատրոնում (ռեժ.՝ Գ. Մուշեղյան), «Հրաշալի ծուլվաձքում»՝ Գոշա:
9. 24/6.38 թ., Երևանի Գ. Սունդուկյանի անվան թատրոն (ռեժ.՝ Գ. Գաբրիելյան), «Կապուտանում»՝ Թորոս:
10. 6/7.35 թ., Երևանի պետթատրոնում (ռեժ.՝ Ա. Գուլակյան), «Ամպրոպում»՝ քաղաքացի:
11. 22/5.36 թ., Երևանի պետթատրոնում (ռեժ.՝ Գ. Մուշեղյան), «Քաղքենին՝ ազնվականում»՝ երաժշտության ուսուցիչ (Նորիկ Գևորգյանն էլ՝ պարերի ուսուցիչ):
12. 24/2.37 թ., Երևանի պետթատրոնում (ռեժ.՝ Գ. Ժուրլի), «Աոսենում»՝ Դրանքա:
13. 14/12.37 թ., Սունդուկյանի անվան թատրոնում (ռեժ.՝ Ա. Գուլակյան), «Հացի խնդիրում»՝ Կարո:
14. 2/2.38 թ., Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում (ռեժ.՝ Ա. Գուլակյան), «Քանդաձ օջախում»՝ գիժ Մոզի:

[1] Նրանց կենսագրական տվյալները չենք կարողացել գտնել և տալ նրանց ստեղծագործական լրիվ դիմանկարը **(հեղինակ)**:

15. 17/3.38 թ., ԵՍԹ (ռեժ.՝ Վ. Վաղարշյան), «Սեր և խարդավանքում»՝ Կամերդիներ:
16. 5/11.38 թ., ԵՍԹ (ռեժ.՝ Վ. Վարդանյան), «Հրացանավոր մարդում»՝ Վոլոդյա:
17. 26/1.39 թ., ԵՍԹ (ռեժ.՝ Գ. Գաբրիելյան), «Վինձորի զվարճասեր կանայքում»՝ Պիստոլ:
18. 17/7.39 թ., ԵՍԹ (ռեժ.՝ Գ. Գաբրիելյան, նկ.՝ Ս. Արուտչյան), «Մեծ բարեկամությունում»՝ Պարոն Տիգրան:
19. 6/1.40 թ., ԵՍԹ (ռեժ.՝ Ա. Բուրջալյան, ռեժ. ասիստենտ՝ Գ. Մուշեղյան), «Ռևիզորում»՝ հյուրանոցի ծառա:
20. 5/3.40 թ., ԵՍԹ (ռեժ.՝ Թ. Սարյան), «Խաթաբալում»՝ Սարգիս:
21. 20/40 թ., ԵՍԹ (ռեժ.՝ Վ. Վարդանյան), «Ջրպարտությունում»՝ Նահապետ:
22. 4/2.40 թ., ԵՍԹ (ռեժ.՝ Վ. Աճեմյան, հարակից ռեժ.՝ Հր. Ներսիսյան), «Մեծապատիվ մուրացկաններում»՝ Աբրահամ աղա:
23. 6/9.41 թ., ԵՍԹ (ռեժ.՝ Տ. Շամիրխանյան), «Պրոֆեսոր Մամլոկում»՝ Սիմոն:
24. 15/11.41 թ., ԵՍԹ (ռեժ.՝ Վ. Վարդանյան), «Գևորգ Մարզպետունիում»՝ Մուշեղ:

ԿԱՄԵՆԿԻՆ ՊԱՎԵԼ

1. **Գրիգորյան Սասուն**— «Հայրենի հողը՝ վերջին բեմ», Ավանգարդ, 9 մայիսի 1982, էջ 4:
2. **Գրիգորյան Սասուն**—«Ռազմաճակատը՝ վերջին բեմ», ԳԹ, 11 մայիսի 1979, էջ 4:

ԱԼԵՔՍԵԵՎ ՎԱՍԻԼԻ

1. **Գրիգորյան Սասուն**—«Ռազմաճակատը՝ վերջին բեմ»: ԳԹ, 11 մայիսի 1979, էջ 4:
2. **Գրիգորյան Սասուն**— «Հայրենի հողը՝ վերջին բեմ»: Ավանգարդ, 9 մայիսի 1982, էջ 4:

ՄԵԼԻՔՈՎ (ՄԵԼԻՔՅԱՆ) ԳԱՐԻԿ

1. **Գրիգորյան Սասուն**—«Ռազմաճակատը՝ վերջին բեմ»: ԳԹ, 11 մայիսի 1979, էջ 4:
2. **Գրիգորյան Սասուն**—«Հայրենի հողը՝ վերջին բեմ»: Ավանգարդ, 9 մայիսի 1982, էջ 4:
3. Русский театр им. Станиславского XXX лет. Е, 1967.

ՀՈՒՇԱՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀՈՒՇԱՑԱՆԿ ՋՈՀՎԱԾ ՀԱՅ ՌԵԺԻՍՈՐՆԵՐԻ, ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ, ԿԻՆՈԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԵՎ ԲԵՄԱՐՎԵՍՏԻ ԱՅԼ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԻ[1]

Աբգարյան Արտավազդ (Արթիկի թատրոնից)
Ալեքսեև Վասիլի (Երևանի ռուսական թատրոնից)
Ասլանյան (ով) Գ. («Սոյուզկինոխրոնիկայից»)
Ասրյան Գրիգոր (Կիրովաբադի հայկական թատրոնից)
Ասրյան Թադևոս (Թևադրոս) «—» «—»
Բոթոյան Հմայակ Գրիգորի (Լենինականի թատրոնից)
Բարսեղյան Մուրադ («Հայֆիլմ» կինոստուդիայից)
Գևորգյան Տելուշ (Թելման) (Լենինականի թատրոնից)
Գրիգորյան Սուրեն (Աշտարակի թատրոնից)
Դանիելյան Վանյա (Երևանի Սունդուկյանի անվ. թատրոնից)
Եղոյան Հայկ (Երևանի Սունդուկյանի անվ. թատրոնից)
Ջիրոյան Հովհաննես («Հայֆիլհարմոնիայից», պարող)
Էլոյան Սերյոժա (Լենինականից. պարող)
Խալաթյան Արտավազդ (Երևանի Սունդուկյանի անվ. թատ.)
Խաչատրյան Հայկ (Լենինականի թատրոնից)
Խզմալյան Ալեքսանդր (Երևանի Սունդուկյանի անվ. թատ.)
Կարաողլանյան Յոլ՝ակ («Հայֆիլմ» կինոստուդիայից)
Կամենկին Պավել (Երևանի ռուսական թատրոնից)
Կաֆաֆյան Սուրեն («Սոյուզկինոխրոնիկայից»)
Հայրապետյան Հովհաննես (Երևանի պատանի հանդիս. թ.)
Հակոբյան Վարդգես («Հայֆիլհարմոնիայից», պարող)
Հարությունյան Երվանդ («Հայֆիլհարմոնիայից», պարող)
Հովակիմյան Գուրգեն Աղանի (Լենինականի թատրոնից)
Հովսեփյան Հովսեփ (Ստեփանավանի թատրոնից)
Մարինոսյան Գուրգեն (Լենինականի թատրոնից)
Մանասերյան Վարդգես (Երևանի ՊՀ թատրոնից)
Մելիքով (Մելիքյան) Գարիկ (Երևանի ռուսական թ.)
Մելքոնյան Շաքրո (Կիրովականի թատրոնից)
Մուրադբեկյան Վազգեն (Վազիկ) (Երևանի ՊՀ թատրոնից)
Նազարեթյան Նիկոլ (Երևանի Սունդուկյանի անվ. թ.)
Ջառայան (Ջառենց) Սահակ (Երևանի Սունդուկյանի անվ. թ.)
Սարգսյան Կորյուն (Թորոս) (Ալավերդու թատրոնից)
Սամոկրանյան Ծերուն (Երևանի Սունդուկյանի անվ. թ.)
Քաջազնունի Կարեն («Մոսֆիլմ» կինոստուդիայից)
Քիշմիշով (Ռեժիսոր, Մոսկվայից)
Քոչարյան Հայկ (Երևանի ՊՀ թատրոնից)

ՀՈՒՇԱՑԱՆԿ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄ 1941—1945 ԹԹ. ԾԱՌԱՅԱԾ ՌԵԺԻՍՈՐՆԵՐԻ, ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ, ԿԻՆՈԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԵՎ ՀԱՅ ԲԵՄԱՐՎԵՍՏԻ ԱՅԼ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԻ

Ալ. Սպանդարյանի անվան օպերայի և բալետի ակադեմ. թատրոնից

Հովհաննիսյան Նար
Ոսկանյան Հակոբ
Ազարյան Վրույր
Մելիք-Անդրեասյան Գուրգեն
Ռյաբկով Դմիտրի
Բեկզադյան Միքայել
Ճախիջանյան Սուրեն
Ճինջյան Սուրեն

Երևանի Գ. Սունդուկյանի անվ. պետթատրոնից

Աբեղյան Սուրեն
Ալվարյան Լենա
Աջաբխանյան Ստեփան
Ավագյան Կարո[2]
Բախչինյան Տիգրան
Գալոյան Հովակ
Գևորգյան Նորայր
Գևորգյան Նշան
Եղշատյան Վահրամ
Ջրաղացպանյան Ավետիք
Միրզախանյան Ժիրայր

Երևանի դրամատիկական թատրոնից

Բարսեղյան Քաջիկ
Ղափլանյան Հրաչյա

Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնից

Աբրահամյան Հակոբ
Ասատրյան Լևոն
Գասպարյան Արշակ
Գևորգյան Պերճ
Հարությունյան Սերոբ
Հովհաննիսյան Ջավեն
Սանթրոսյան Պարույր
Սարգսյան Վազգեն
Սողոմոնյան Վարդգես
Ներսիսյան Կոլյա
Տրդատյան Բախշո
Ղազարյան Արշավիր
Մարինոսյան Մարատ

Երևանի երաժշտական կոմեդ. թատրոնից

Մելիք-Ստեփանյան Արտավազդ

Երևանի Հովհ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնից

Հարությունյան Վիրաբ

[1] Բացթողումների և վրիպումների համար ներողություն ենք խնդրում: Հաճելի կլինի, որ Ձեր լրացումներն ու ուղղումները ուղարկեք **Երևան-9, Մարշալ Բաղրամյան պ. № 3, Հայաստանի գրողների միություն, Սասուն Գրիգորյանին:**

[2] Կ. Ավագյանի մասին տես Գ. Ղուկասյանի «Պատերազմի ծամփաներով» գրքում, Ե., Պետհրատ, 1963 թ., էջ 33—34:

Երևանի Կ. Ստանիսլավսկու անվ. ռուսական թատրոնից

Սարոյան Դավիթ
Սելիմխանով Ադիլ-Քյազիմ
Ռուդովիչ Վալենտին
Ներսիսյան Եվգենի
Պանասենկո Անտոնինա
Մեդվեդև Իգոր

Լենինականի Ալ. Մռավյանի անվ. թատրոնից

Մկրտչյան Վահե
Սաղաթելյան Ռուբեն
Հովակիմյան Վահագն
Խաչատրյան Հարություն
Զոլախյան Սերգել
Գևորգյան Աշոտ

Կիրովականի Հովհ. Աբելյանի անվ. թատրոնից

Աղայան Կոլյա
Հովհաննիսյան Սուրեն
Ջալյան Մամիկոն
Նազարյան Ղազար
Սիմոնյան Ասյա

Թբիլիսիի Ստ. Շահումյանի անվ. թատրոնից

Եղիազարյան Սուրեն
Ալիխանյան Ստեփան
Բաբայան Լևոն

Կիրովաբադի հայկական թատրոնից

Գրիգորյան Միքայել
Պիճիկյան Սուրեն
Բարսամյան Գ.
Փչեմյան Ալեքսանդր

Ղափանի Ալ. Շիրվանզադեի անվ. թատրոնից

Ղազարյան Միլիտոս

Կամոյի Լ. Քալանթարի անվ. թատրոնից

Հակոբյան Գևորգ Մնացականի

Տարբեր թատրոնների դերասաններ, ռեժիսորներ, կինոյի, ֆիլհարմոնիայի և բեմի այլ երախտավորներ

Ասլամազյան Ալբերտ Պավելի
Աբաջյան Գևորգ Համբարձումի
Անդրեասյան Սարգիս
Բարսեղյան Ամատունի
Գալոյան Մուսայել Անուշավանի
Գևորգյան Գևորգ (Վեքիլի Գևորգ, Աշտարակից)
Դարոնյան Սերգել Կարապետի
Երանոսյան Հայկազ Լևոնի
Թոնունց Գուրգեն
Թախտամիշյան Քրիստափոր
Կագրամանյան Ներսես Ոսկանի
Հարությունյան Վահան
Հակոբյան Մաքսիմ
Սաֆարյան Աղասի (Արտաշատից)

Հայֆիլհարմոնիայի և ռադիոյի երաժշտ. անսամբլներից[1]

Թեմուրյան Սերգել Տիգրանի
Այվազյան Գևորգ Թովմասի
Համբարձումյան Հրայր Միքայելի
Նավասարդյան Վլադիմիր Մամիկոնի
Ավետիսյան Վազգեն Արտաշեսի
Մուրադյան Հայրիկ Մանուկի
Մնացականյան Հայկ Գաբրիելի
Ազատյան Սերգել Ազատի
Ղարիբյան Ազատ Թորգոմի
Գալստյան Սերգել Արտեմի
Գրիգորյան Բաղդասար Մարտիրոսի
Վարդանյան Հովհաննես Ավետիքի
Ուստոյան Կարապետ Հովհաննեսի
Ջելթակյան Վաղինակ Սարգսի
Մամոյան Ստեփան Մանուկի
Մանուկյան Հակոբ Պետրոսի
Բարոյան Կոնստանդին Իսահակի
Այվազյան Վաղարշակ
Այվազյան Վահան Հովհաննեսի
Թովմասյան Սուրեն
Հարությունյան Լևոն
Գասպարյան Աշոտ
Սոսյան Բաբկեն Միքայելի
Առաքելյան Պարգև Ջաքարի
Հովհաննիսյան Գևորգ Գրիգորի
Գրիգորյան Մամիկոն Սեդրակի
Խաչատրյան Կարապետ Գեղամի
Խաչատրյան Սաքո
Համբարյան Գուրգեն Արշակի
Սարգսյան Վազգեն Ստեփանի
Փիլոսյան Անդրանիկ Քրիստափորի

Լենինականի արևելյան ժողգործիքների անսամբլից

Ղազարյան Աշիկ
Սահակյան Մկրտիչ
Հակոբյան Հակոբ
Էլոյան Հովհաննես
Օղլախչյան Խաչիկ
Գրիգորյան Գրիգոր
Ռաֆայելյան Արամայիս
Շաբոյան Կարո

Կինոյի և հեռուստատեսության ռեժիսորներ, օպերատորներ և էկրանի այլ երախտավորներ

Ասլանյան Հայկ (Գայ) Գրիգորի
Աբաջյան Գևորգ Գարեգինի
Ավետիսյան Մարտին Աբրահամի
Մելիք-Ավագյան Գրիգոր
Ղզնունի Դանիել
Կևորկով Ստեփան Աղաբեկի
Մելիք-Քարամյան Էրազմ
Եղիազարյան Հմայակ
Ռիզաև Սաբիր
Ջալալյան Արտաշես
Թորոսյան Ավիկ
Բալասանյան Գուրգեն
Հեքեքյան Էլմիրա
Հովհաննիսյան Հենրիկ Բ.
Դիլդարյան Իվան
Եղիազարյան Գուրգեն
Սահակյան Լևոն Նիկողոսի (Լեոն Նիկոլայի Սահակով)
Սանամյան Գևորգ
Սիմոնյան Նորայր
Գասպարյան Ռոբերտ
Արամյան Գարեգին
Եսայան Հովհաննես
Լիսիցյան Թամար
Գրիգորյան Գառնիկ
Գրիգորյան Կանյա
Մարտիրոսյան Ստեփան
Մարտիրոսյան Մարտիրոս
Մելիքսեթյան Մխիթար
Քոչարյան Յակով
Արզումանով Լ.[2]
Արիստակեսով Լ.
Կաչուրյան Լ.
Պետրոսով Ն.
Խինկոյան Գ.
Պողոսով Ա.
Հայկազյան Վիլյամ
Մաղաքյան Օ.
Մելիքով Ն.

[1] Հայֆիլհարմոնիայի ՀՄՊ-ի վետերանների անվանացանկը մեզ է տրամադրել վետերանների խորհրդի նախագահ **Վլադիմիր Նավասարդյանը:**

[2] Ներքոհիշյալ ինն անունները վերցված են «1941—1945 թթ. ՀՄՊ-ի կինոտարեգրությունը» գրքից (ռուսերեն) Մոսկվա, 1975 թ.:

ՀՈՒՇԱՑԱՆԿ ՀՄՊ-Ի ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941—1945 ԹԹ.) ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ, ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

1941

ՊԻԵՍՆԵՐ

1. Դ. **Դեմիրճյան**— «Քաջ Նազար», Հայպետհրատ, Ե., 1941 թ.:
2. Դ. **Դեմիրճյան**— «Երկիր հայրենի», ՍԳԱ, 1941 թ., № 7, էջ 50:
3. Ն. **Զարյան**— «Վրեժ», ՍԳ, 1941 թ., № 9, 10, 11, 12:
4. Ան. **Վարդանյան**—«Հայրենասերները», ԳԹ, 30 հոկտեմբերի և 20 նոյեմբերի 1941 թ., № 30 և 32:
5. Կ. **Ֆինն, Մ. Գուս.**— «Բեռլինի բանալիները» (թարգմ. Վահե Միքայելյանի), ՍԳ, Ե., 1941 թ., № 7:
6. Մոսկվայում ռուսերեն լույս տեսան Շիրվանզադեի «Պատվի համար» և Լևոն Սաղաթելյանի «Մի կտոր հող» (թարգմանիչ՝ Յակով Խաչատրյան) պիեսները, «Իսկուսստվո» հրատարակչություն, 1941 թ:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

7. **Արմ. Արմենյան**—«Ալավերդու թատրոնը Հայրենական մեծ պատերազմի օրերին», «Պղնձի ֆրոնտում», 28/12.41 թ.:
8. Տ. **Հախումյան** ա) «Ժամանակակից թեմատիկան մեր դրամատուրգիայի մեջ», ՍԳԱ, 1941 թ, № 2, 3, էջ 25—30:
   բ) «Մտորումներ սովետ. հերոսի մասին», ՍԳԱ, 1941 թ. № 4:

1942

ՊԻԵՍՆԵՐ

3. Դ. **Դեմիրճյան** —«Բագրատունու ընտանիքը», Ա. Արաքսմանյան—«Անտառները շարժվում են», Հ. Բելլերյան—«Հայրենիքի համար», Ա. Գուլակյան—«Առաջին օրը», Ան. Վարդանյան—«Դատաստան», Ա. Տեր-Հովհաննիսյան—«Թռչնորս», Ա. Շայբոն—«Խանգարող հանգամանք», Ս. Մելիքյան—«Կրիժառուները, Հայպետհրատ, Ե., 1942 թ.:
2. **Սուրեն Քոչարյան**—«Հանուն հայրենիքի» (գրական կոմպոզիցիա ըստ Շեքսպիրի երկերի, թարգմ. Ս. Սուքիասյանի), ՍԳԱ, 1942 թ., № 3:
3. Դ. **Դեմիրճյան**— «Երկիր հայրենի», ՍԳԱ, 1942 թ., № 9—10:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Վ. **Վաղարշյան**—«Սունդուկյանի անվան թատրոնը Հայրենական պատերազմի տարիներին», ՍՀ, 3/1.1942 թ., № 2:
2. Ալավերդու շրջանային թատրոնը, ՍՀ, 16/1.1942 թ., № 13:
3. Ս. **Հարությունյան**—«Միկոյանի անվան պատանի հանդիսատեսի թատրոնը Հայրենական պատերազմի օրերին» ՍՀ, 31/1.1942 թ., № 26:
4. Հ. **Մկրտչյան**— «Լենինականի թատրոնն այսօր», ՍՀ, 3/2.1942 թ., № 28:
5. **Шагинян А.** — Работники искусства — Красной Армии, «Коммунист», 22.II. 1942, № 45.
6. **Лисицян П.** — Фронтовые записки артиста. «Коммунист», 11. III. 1942, № 59.
7. Հ. **Կարենց**— Միկոյանի շրջանի թատրոնը Հայրենական պատերազմի օրերին», «Ստալինյան կոլխոզնիկ», 17/5.1942 թ., № 35:
8. Ալ. **Արաքսման**—«Լենինականի դրամթատրոնը պատերազմի օրերին», «Բանվոր», 13/8.1942 թ., № 99:
9. **Театры Армении в дни Отечественной войны**, Коммунист, 3. 9. 1942, № 213.
10. Վ. **Մկրտումյան**, Գ. **Ասլանյան**—«Ալավերդու շրջանի պետթատրոնը Հայրենական պատերազմի օրերին», «Պղնձի ֆրոնտում», 7/11.1942 թ., № 57:

1943

ՊԻԵՍՆԵՐ

1. Ա. **Գուլակյան**—«Ցասում», Ե., Պետհրատ, 1943 թ.:
2. Ալ. **Կորնելչուկ**—«Ռազմաճակատ» (թարգմ.՝ Աշիկ Ղազարյանի, 1942 թ.):
3. **Աշփալ**—«Շախ և մատ», Ե., 1943 թ.:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Գ. **Ասլանյան**—«Ցուցադրենք մեր հերոսների անմահ կերպարները», «Պղնձի ֆրոնտում», 20/5.1943 թ., № 18:
2. Վ. **Թերզիբաշյան**—«Կարմիր բանակայինը և պարտիզանը դրամատուրգիայում», ՍԳԱ, 1943 թ., № 2, էջ 55—59:
3. **Գյուլիքևխյան** Հ.—«Սովետահայ դրամատուրգիան Հայրենական պատերազմի օրերին», ՍԳԱ, 1943 թ., № 1, էջ 35—42, № 2 (10—11), էջ 113—123:

1944

ՊԻԵՍՆԵՐ

1. Վ. **Շեքսպիր**—«Հուլիոս Կեսար», թարգմ.՝ Խ. Դաշտենցի, Ե., 1944:
2. **Մուրացան**—«Ռուզան», Ե., 1944 թ.:
4. Ն. **Զարյան**—«Արա Գեղեցիկ», ՍԳԱ, 1944 թ., № 12 և 1945 թ., № 1:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. **Заславский Д.** — Патриотическая поэма (о С. Кочаряне), Красная звезда, 18 марта 1944 г., № 86.

1945

ՊԻԵՍՆԵՐ

1. Թ. **Հայրյան**—«Ֆրիկ», Ե., 1945:
2. Ն. **Զարյան**—«Արա Գեղեցիկ», Ե., 1945:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Միկոյանի անվան ՊՀԹ (գրույց Տ. Շամիրխանյանի հետ), ԳԹ, 28/2, 1945 թ., № 6:
2. Հովհ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնը Հայրենական պատերազմի օրերին, ԳԹ, 10/3, 1945 թ., № 7:
3. Երաժշտական կոմեդիայի պետական թատրոնը, ԳԹ, 10/4, 1945 թ., № 10:
4. **Микадзе.** — Батумский армянский драматический театр, «Батумский рабочий», 17 июля 1945 г., № 138.

ԵՂԵԳՆՅԱ ԳՐՉՈՎ ԵՐԳԵՑԻ ՓԱՌՔԵՐ

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր,
— Քեզի ընծա, իմ Հայրենիք ...

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆՈՒՄ

ԳՐՉՈՎ ԵՎ ՋԵՆՔՈՎ

Երևան, Պուշկինի փողոց, № 3 ա, Ժուռնալիստի տուն:

Հայաստանի մշակութային այս օջախում հանախ են բազմամարդ միջոցառումներ, երեկոներ, ցերեկույթներ և ցուցահանդեսներ կազմակերպվում: Այստեղ ոտք դնելիս հենց առաջին հայացքից քեզ գրավողը զոհված ժուռնալիստների հիշատակը հավերժացնող մարմարե հուշատախտակն է, որի դեմ կանգնում ես լռակյաց և մտովի կարդում՝

Աղաբեկյան Անդրանիկ
Առաքելյան Դրաստամատ
Բաղալյան Արտեմ
Գասպարյան Վաչագան
Գևորգյան Սերոբ
Գրիգորյան Մամիկոն
Դանիելյան Գալուստ
Զաքարյան Աշոտ
Զոհրաբյան Գրիգոր
Լիլոյան Մկրտիչ
Իսրայելյան Ավետիս (Ավետիս Դեբենց)
Խաչատրյան Սոկրատ
Խաչյան Թևան
Մատուրյան Նապոլեոն
Կարապետյան Վարդան
Կոլեշկին Գեորգի
Հակոբյան Բագրատ
Հակոբյան Գրիգոր (Գրիգոր Գարունց)
Հակոբյան Միկիտ
Հովակիմյան Միհրան
Հովհաննիսյան Արսեն
Հովհաննիսյան Գուրգեն
Մալխասյան Գուրգեն
Մարգարյան Զավեն
Մանուկյան Մկրտիչ
Մարտիրոսյան Ալեքսանդր (Ալ. Մարտին)
Մարտիրոսյան Արշավիր
Մեսրոպ Մերուժան
Միրիջանյան Սիմոն
Մուրադյան Բենիկ
Նազարյան Խաչիկ
Նալբանդյան Հմայակ
Շահբազյան Արտավազդ (Արտյոմ Շահբազ)
Ոսկանյան Գառնիկ
Պետրոսյան Լյուդվիգ
Պետրոսյան Մկրտիչ
Պողոսյան Ներսես
Սարգսյան Անդրանիկ
Սարուխանյան Արամայիս
Սիմոնյան Մնացական
Վարդանյան Վաղարշակ
Փորսուղյան Ռուբեն
Օհանյան Համբարձում
Օրդինյան Վանո
Օքմինյան Սուրեն

Հուշատախտակի ցանկը, պատերազմից քառասունհինգ տարի հետո էլ նորից համալրում է պահանջում. չէ որ նրանք շատ էին, քառասունհինգը չէին միայն:

Այստեղ, չգիտես ինչու, տեղ չեն գտել **Իսրայել Հասրաթյանի, Գուրգեն Համբարյանի, Մանվել Երեմյանի, Հովնան Սարգսյանի, Ագրիպաս Սարգսյանի, Վլադիմիր Օրբելովի (Օրբելյան), Հայկ Ճշմարիտյանի, Բագրատ Միրզոյանի, Անդրանիկ Մինասյանի...** և մի շարք այլ լրագրողների անունները: Չէ որ նրանք ևս մինչ Մեծ հայրենականը աշխատել են հանրապետական և շրջանային մամուլի օրգաններում, ռադիոյում և հրատարակչություններում, և երբ պայթել են ռումբերը, երբ հայրենի հողը ի զեն է կոչել իր որդիներին, նրանք ևս չեն հապաղել. անավարտ թողած առաջնորդող և հոդված, ակնարկ և ռե-

պորտաժ, ֆելիետոն և ռադիոհաղորդում, բանաստեղծություն և շարժ, մնաս բարով են ասել իրենց մուսաներին և, գրիչները փոխարինած սըվիններով, դուրս են եկել մահու և կենաց պայքարի: Քաղաքական հրապարակախոսությունը և ոսոխին անվրեպ խոցելը եղել է նրանցից յուրաքանչյուրի գրչի և զենքի պարտքը:

«Հայրենական մեծ պատերազմի օրերին խոսքի նշանակությունն էլ ավելի ահեղ է, էլ ավելի պատասխանատու: Խոսքը, գեղարվեստական խոսքը,— գրել է գրականագետ Խորեն Սարգսյանը,— զենք է՝ մյուս զենքերի կողքին: Խոսքը նոնակ է, գնդացիր, հրացան...»:

Եվ իրոք խոսքը որպես նոնակ, գնդացիր և հրացան օգտագործեցին հայ լրագրողները: Այդ նրանք էին, որ Մեծ հայրենականի տարբեր ստորաբաժանումներում մայրենի լեզվով խոսում էին հայ քաջորդիների հետ:

Ռազմաճակատում լույս տեսնող հայերեն թերթերը ունեին մի նպատակ, որը որպես հավերժասուրբ պատգամ-նամակ ուղղված էր հայ քաջորդիներին. «Ոչ մի րոպե մի՛ մոռացեք, որ հիտլերյան արյունարբու բորենու դեմ մղվող պատերազմում վճռվում է Սովետական Միության բախտը, հայ ժողովրդի բախտը: Բազմապատկեք ձեր զենքի ուժը, էլ ավելի կոփեք ձեր սրտերը: Կանգ մի առեք ոչ մի դժվարության առաջ, քար ու քանդ արեք ֆաշիստական ամրությունները, ոչնչացրեք նրանց տեխնիկան և կենդանի ուժը: Անընդհատ շարժվեք դեպի Արևմուտք»:

Հայ ժողովրդի այս նամակը՝ ռազմաճակատում գտնվող իր որդիներին, 1943 թ. տպագրվեց ոչ միայն «Սովետական Հայաստան» և «Կոմունիստ» թերթերում, այլև ռազմաճակատային գրեթե բոլոր հայ պարբերականներում: **Հրաչյա Քոչարի, Վախթանգ Անանյանի, Հմայակ Սիրասի, Գարեգին Բեսի, Գուրգեն Հովնանի, Հարություն Մկրտչյանի, Արտյոմ Շահբազի, Ավետիս Դեբենցի, Զավեն Մարգարյանի, Քրիստափոր Թափալցյանի, Գուրգեն Բորյանի, Ստեփան Կուրտիկյանի, Արսեն Հովհաննիսյանի, Արշալույս Սարոյանի** ռազմի առօրյան պատկերող փաստալի ակնարկները, պատմվածքները, հարցազրույցները լույս էին տեսնում ոչ միայն ռազմաճակատային թերթերում, այլև ուղարկվում էին թիկունք, երբեմն էլ բանակի քաղվարչության կողմից թարգմանվում և տեղ էին գտնում կենտրոնական մամուլի էջերում:

«Նամակներ գործող բանակից» շարքով էր հանդես գալիս այդ տարիներին զինվորական թղթակից Հրաչյա Քոչարը:

Ռազմաճակատային հայ մամուլի խմբագիրներ և զինթղթակիցներ: Նստած են (ձախից) **Բաբկեն Կարապետյանը, Արամայիս Մնացականյանը, Հրաչյա Քոչարը,** կանգնած են (ձախից) **Ստեփան Կուրտիկյանն ու Մկրտիչ Ասլանյանը:** Հյուսիս—կովկասյան ռազմաճակատ, 1942 թ.:

Ռազմաճակատային զինթղթակից, աննկուն թամանցի **Խիկար Բարսեղյան** (այժմ պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր):

Ռազմաճակատային հայերեն լույս տեսնող չորս թերթերի ակտիվ զինթղթակից և պատասխանատու քարտուղար, հետագայում՝ փիլիսոփայական գիտությունների թեկնածու, Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի դասախոս, դոցենտ **Մինաս Կարապետի Մարտիկյան:**

Քաղաքական, գեղարվեստական, պատմական, ռազմական հրապարակախոսությունը, պոետական ջերմ խոսքը ճակատային թերթերի ոգին էին: Պատերազմի տարիներին հատկապես ճակատային թերթերի էջերում գեղարվեստական յուրօրինակ վերելք ապրեց ռազմական ակնարկը. դրա լավագույն վկաներն են Հր. Քոչարի «Ճակատային ակնարկներն» ու Վ. Անանյանի «Նամակ ակնարկները»:

Ինչ խոսք, որ «Կարմիր զինվորն» ու «Հայկական սնայպերը», «Մարտական գրոհն» ու «Սովետական ռազմիկը», «Մարտ հանուն հայրենիքին» ու «Մարտական աստղը» և մյուս ճակատային հայ պարբերականները միայն գրականագեղարվեստական նյութերով չէ, որ ապրում էին: Ինչպես մյուս ռազմաճակատային թերթերը, նրանք իրենց դիվիզիաների հետ քայլում էին առաջ, և ամեն մի հերոսություն, ամեն մի քաջություն նրանց էջերում իր արձագանքն էր գտնում: Իսկ ովքեր էին այն ժուռնալիստները, որ հրաժեշտ տալով թիկունքի իրենց խաղաղ աշխատանքին, զինվորի կոշտ շինելի գրպանում խցկած փոքրիկ բլոկնոտներում մի կերպ գրառում, հետո կերտում էին շարքային ռազմիկի, գնդացրորդի, տանկիստի, հետախույզի, օդաչուի, սակրավորի, զինվորական բժշկի և գթության քրոջ՝ հայրենիքի իսկական զինվորների, լիարյուն կերպարները, ոգևորում նրանց և ապացուցում, որ պետք է միայն «ապրել և մեռնել հայրենիքի համար» (Խ. Աբովյան):

ՆԵՐՍԵՍ ՊՈՂՈՍՅԱՆԸ հանրապետության անվանի լրագրողներից էր, նա մինչ Մեծ հայրենականը եղել էր «Սովետական Հայաստան» օրաթերթի խմբագիր: Թշնամական առաջին ռումբերը չթողեցին, որ նա տուն վերադառնա:

«Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» կոչեց անսասան մարտիկը Թերեքի ափերին, Կուբանի անծիր հարթություններում, իր հերոսական վարքագծով օրինակ ծառայելով շատերին: Ցավոք, թշնամու մահաբեր գնդակը ոչ միայն ցած դրեց նրա գրիչն ու հրացանը, այլև խզեց Պողոսյանի կյանքի թելը:

«Սովետական Հայաստան» լրագրի նախապատերազմական համարները թերթելիս հանախ կհանդիպենք ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ անվանը: Նա այստեղ աշխատում էր որպես բաժնի վարիչ: Գրիգորը ևս մասնակցեց Մեծ հայրենականին և Օդերի ափին 1945 թ. ապրիլին զոհվեց: Նրա մասին գովեստով են խոսել «Զնամյա ռոդինի» և «Կարմիր զինվոր» ռազմաճակատային թերթերը:

Հայրենական մեծ պատերազմի տարբեր ռազմաճակատների հայ մարտիկների համար հրա-

Մեծ հայրենականի տարիներին հաճախ էին գրողների բրիգադներ (խմբեր) այցելում ռազմաճակատի հայ մարտիկներին: 408-րդ հայկական հրաձգային դիվիզիայի օրգան «Հանուն հայրենիքի» թերթի հյուրերն են բանաստեղծներ **Գեղամ Սարյանն ու Վահան Գրիգորյանը:** Նրանցից ձախ թերթի խմբագիր, կապիտան, այժմ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Արշավիր Հակոբյանն է:** Տուապսե, 1942 թ. հոկտեմբեր:

«Սովետական ռազմիկ», «Մարտիկ», «Առաջ դեպի հաղթանակ», «Առաջ հանունի հայրենիքի», «Հանուն հայրենիքի» ռազմաճակատային այս թերթերի նշանաբանը երևում է այդ թերթերի խորագրերից անգամ:

Պլակատ «Մարտի՛կ, փրկի՛ր»՝ տպագրված ռազմաճակատային հայ մամուլում

տարակված «Մարտական գրոհ», «Հայկական սնայպեր», «Հայրենիքի փառքի համար», «Կարմիր զինվոր», «Մարտական դրոշ», «Սովետական ռազմիկ», «Մարտ հանուն Հայրենիքի», «Մարտական աստղ» և այլ թերթերում և բանակի քաղվարչության կողմից տպագրված թռուցիկներում անուններ կան, որ չվերադարձան տուն: Նրանք բոլորն էլ երիտասարդ էին, գեղեցիկ, առույգ, լեցուն բազում երազներով: Ինչպե՞ս, ինչպե՞ս կարող են մոռանալ «Ավանգարդի» հընագույն աշխատակիցները թերթի նախկին խմբագիր և ասպիրանտ ՄԿՐՏԻՉ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ, որը «Իմ ետևից հանուն Հայրենիքի...» կոչելով նետվել է պատերազմի բոցերի մեջ՝ կռվելու և հաղթելու անսպառ հավատով և զոհվել Կերչի համար մղվող ազատամարտերում: Կերչում են զոհվել նաև «Ավանգարդի» բաժնի վարիչ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՆ (Ալ. Մարտին) ու թերթի պատասխանատու քարտուղար, բանաստեղծ ԹԵՎԱՆ ԽԱՉՅԱՆԸ:

Ավանգարդցիներից ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ (խմբ. տեղակալ) զոհվեց Մոսկվայի մատույցներում, ԱՆԴՐՈՒԾ ՍԱՐԳՍՅԱՆԸ (բաժնի վարիչ)՝ Լենինգրադի մոտ, ԱՐՏՅՈՄ ԲԱԴԱԼՅԱՆԸ (բաժնի վարիչ)՝ Արևմտյան Բելոռուսիայում: Ո՞ւր, որի՞ն հիշատակես, որ հին վերքը չմխա:

1940 թ. Հայպետհրատը հրատարակեց «Երկրի գույները» ակնարկաշարը: Գրքույկի հեղինակը՝ Ավ. ԴԵՐԵՆՑԸ, աշխատել էր «Պիոներական», «Ավանգարդ», «Սովետական Հայաստան» թերթերում, նոր էր տեղափոխվել ՀՀԳ (այժմ Արմենպրես), աշխատում էր որպես կառավարիչի տեղակալ, երբ սկսվեց Մեծ հայրենականը: Նա ևս ռազմաճակատ մեկնեց ինչպես իր երեք եղբայրները և 1942 թ. մարտի 18-ին Կերչի մոտակայքում՝ Կարպեչում, զոհվեց կյանքի երրորդ տասնամյակը դեռ չլրացած:

Պատերազմից չվերադարձան նաև «Արմենպրեսի» տաղանդաշատ աշխատողներ ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐԱՄԻ ԾԱՀԲԱԶՅԱՆԸ (Արտյոմ Ծահբազ) և ՄԱՄԻԿՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ (ծնունդով Աշտարակի շրջանի Փարպի գյուղից): Նրանք ևս գրչով ու զենքով մաքառեցին հիտլերյան վայրագների դեմ, քանզի քաջ գիտակցում էին, որ Հայրենիքի ազատության համար մղվող պատերազմը արդար պատերազմ է:

Ոչ միայն թիկունքի, այլև ռազմաճակատային «Սովետական ռազմիկ», «Դեպի թշնամու ջախջախումը», «Հայկական սնայպեր» և այլ թերթերում ու պարբերականներում զինվորական մամուլի խմբագիրներ **Արշալույս Արշարունին, Սիմոն Նալբանդյանը, Սուրեն Գրիգորյանը, Վարդան Վարդանյանը, Արամայիս Մնացականյանը, Արշավիր Հակոբյանը, Հմայակ Սիրասը, Մովսես Գրիգորյանը, Խաչիկ Աբեղյանը, Գառնիկ Իսահակյանը** և ուրիշները խրախուսում, ոգևորում էին մարտիկներին, ապրում այն տառապանքը, որը ծնում էր հայախոս թերթ, ուր հաճախ էին հանդես գալիս երիտասարդ ռազմիկները, մեկը՝ իր հրապարակախոսությամբ, մյուսը՝ ակնարկով, մեկ ուրիշը՝ բանաստեղծությամբ: Այսօր էլ ավելի հարուստ կլիներ լրագրողների խորհրդահայ բանակը, եթե ռազմաճակատում չխոցվեին և հայրենիքի զոհասեղանին իրենց կյանքը չնվիրաբերեին Գորիսի «Կարմիր Զանգեզուր» շրջանային թերթի խմբագիրներ ՄԿՐՏԻՉ (ՄԻԿԻՏ) ՀԱԿՈԲՅԱՆՆ ու ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ, նույն թերթի պատասխանատու քարտուղար ԱՆԴՐԱՆԻԿ ԱՂԱԲԵԿՅԱՆՆ ու ԲԱԳՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԸ և էլի ուրիշներ: Արտաշատից մարտադաշտում խոցվեցին «Բոլշևիկյան կոլխոզ»

Կարմիր բանակի գլխավոր քաղվարչության՝ 1943 թ. հրատարակած պլակատ-թերթիկներից:

Բանակի գլխ. քաղվարչության կողմից 1943 թ. հրատարակած թռուցիկ (Անդրկարպատյան զինվորական օկրուգի թանգարան, ք. Լվով):

թերթի խմբագիրներ ԻՍՐԱՅԵԼ ՀԱՍՐԱԹՅԱՆՆ ու ԲԱԳՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆԸ: Խորհրդահայ գրականագետների ավագ սերունդը երբեք չի մոռանա «Սովետական Հայաստան» օրաթերթի նախկին պատասխանատու քարտուղար, հետագայում «Գրական թերթի» խմբագիր, գրաքննադատ ԳԱՌՆԻԿ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ: Տաղանդավոր լրագրող գրականագետը հանուն հաղթանակի կռվեց Կերչում և Նովոռոսիյսկում, զոհվեց հոսպիտալը ռմբակոծելու ժամանակ՝ 1943 թ. օգոստոսի 29-ին, ուր բերվել էր եռակի վիրավոր վիճակում: 1942 թ. Հյուսիսային Կովկասի Չեչենո-ինգուշկի պետտնտեսության շրջակայքում թշնամու գնդակին զոհ գնաց «Ավանգարդ» և «Խորհրդային Հայաստան» թերթերի նախկին աշխատակից, բանաստեղծ, ակնարկագիր ԳՈՒՐԳԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆԸ 31 տարեկան հասակում: Մի տարի անց կյանքի քսաներկուսը նոր բոլորած, նորից Հյուսիսային Կովկասում, գերմանական գնդակը մահացու խոցեց Գուրգենի կրտսեր եղբորը՝ տաղանդավոր արձակագիր ԽԱՉԻԿ ՄԱԼԽԱՍՅԱՆԻՆ: Նա բանակ էր զորակոչվել «Պիոներ կանչից»: Մեծ Հայրենականում զոհվեց Հրազդանի շրջանի Ռնդամալ գյուղում ծնված Գուրգեն և Խաչիկ Մալխասյանների ավագ եղբայրը՝ Աբրահամը: Երեքը՝ մի տանից:

Սկսնակ և փորձառու մոտ 500 հայորդի լրագրողներ, թողած տուն ու տեղ, քաջաբար մարտնչում էին թշնամու դեմ Կերչում, Ստալինգրադում, Սևաստոպոլում, Բրեստում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում, Հունգարիայում, Ռումինիայում և այլուր: Հաղթանակի նկատմամբ հավատ և մարդու հանդեպ սեր դրվատող բազում գրիչներ չհասցրին վայելել իրենց իսկ արյունով նվաճած հաղթանակի բերկրանքը:

ՋԱՎԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ անվան հետ մեծ հույսեր էին կապել ոչ միայն լրագրողները, այլև նրա գրական բարեկամները: Ցավոք թշնամու դավադիր գնդակը անավարտ թողեց Արտաշատի շրջանի Այգեստան գյուղում ծնված (1914 թ.) Զավեն Մարգարյանի կյանքի ուղին: Զոհվեց Ալավերդու «Պղնձի ֆրոնտում» շրջանային թերթի աշխատակիցը երեսուն տարեկան հասակում 1944 թ.: Խիստ սկզբունքային, անաչառ, աշխույժ և կյանքով լեցուն Զավենի բազմաթիվ նովելները, ակնարկները, հոդվածներն ու ռեպորտաժները գրվել են Կովկասի, Ուկրաինայի, Բելոռուսիայի մարտական ճանապարհներին: Որպես ռուսական թերթի թղթակից, հայկական դիվիզիայի թերթի խմբագրի տեղակալ, որպես ավագ քաղղեկ և անկկուն մարտիկ նա իր անվեհեր սիրանքի և լրագրային աչքի ընկնող ծառայությունների համար պարգևատրվել էր Կարմիր աստղի շքանշանով, արժանացել (հետմահու) Հայրենական մեծ պատերազմի առաջին աստիճանի շքանշանի: Նրա կուրծքն էին զարդարում Խիզախության համար և մի շարք այլ մեդալներ: Մարգարյանի մասին № զորամասի մի խումբ քաղաշխատողներ «Սովետական Հայաստան» թերթին հասցեագրած նամակում գրել են.

«...Ծանր մարտերում միշտ խիզախ էր, անվհատ, հաստատակամ ու պայծառատես: Նա շատ ու շատ անգամ իր անձնական օրինակով ոգեշնչել է մեր մարտիկներին՝ նրանց տանելով վճռական գրոհի: Դուք կարող եք պարծենալ Զավեն Մարգարյանի անունով, որը միշտ անթառամ կմնա մեր սրտերում»:

Մեր սրտերում հավերժ անթառամ են նաև «Կոմունիստ» հայկական թերթի (Բաքու) բաժնի վարիչ, ճանաչված բանաստեղծ և ժուռնալիստ ԹԱԹՈՒԼ ՀՈՒՐՅԱՆԻ (զոհվեց Սևաստոպոլում),



Թամանյան 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի օրգան «Կարմիր զինվոր» թերթի խմբագրության և տպարանի մի խումբ աշխատողներ, (ձախից) 2-րդը Գ. Ղարիբջանյանն է, 3-րդը՝ Ս. Նալբանդյանը, 4-րդը՝ Արծվի Կարապետյանը: Կերչ, 1943 թ.:

ռադիոյի հատուկ թղթակից, Հրազդանի շրջանային թերթի նախկին գրական աշխատող, «Սովետական դպրոց» թերթի բաժվար ՄԵՍՐՈՊ ՄԵՐՈՒԺԱՆԻ (զոհվեց 1942 թ. Կերչում), Արտաշատի և Թալինի շրջանային թերթերի նախկին բաժնի վարիչ ԳՐԻԳՈՐ ԳԱՐԵԳԻՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ (Գարունց, նա ևս թշնամու գնդակին զոհ գնաց 1942 թ. մայիսի 15-ին Կերչում) և շատ ու շատ ուրիշ լրագրողների անուններ:

Հայաստանի կոմերիտմիության պատմության պետական թանգարանի՝ Հայրենական մեծ պատերազմի սրահի երրորդ ցուցավահանակում ցուցադրված է ռազմաճակատային մի նամակ և նամակի տիրոջ՝ ՍԵՐՈԲ ԱՎԱԳԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ № 6605881 կոմերիտական տոմսը: Թանգարանի ֆոնդադարանից վերցնում ենք Գևորգյանի անձնական գործը: Փաստաթղթերը մեզ տեղեկացնում են, որ Սերոբն աշխատել է Աշտարակում որպես «Այգեգործ կոլխոզնիկ» շրջանային թերթի և ռադիոյի տեղական հաղորդումների խմբագիր: Զոհվել է նա 1943 թ. փետրվարի 9-ին Ն. Խուտորում (Կրասնոդարի մարզ): 1945 թ. ապրիլի 16-ին կապիտան ԱՐՍԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ գումարտակը ճեղքեց թշնամու պաշտպանական գիծն ու մտավ Ֆրանկֆուրտ: Մանկավարժ բանաստեղծը «Հայրենիքի փառքի համար» զինվորական թերթում էր ծառայել, հետո Թամանյան եռակի շքանշանակիր հրաձգային դիվիզիայի № 526-րդ գնդի 2-րդ գումարտակի հրամանատարի քաղգծով տեղակալն էր: Նա իր մարտաշունչ պոեզիայով, կրակոտ ու հախուռն զգացումներով զինվորներին նորանոր սխրանքների էր կոչում: Անհերկյուղ և հաղթանակի հավատով լեցուն, քաջաբար կռվեց նա թշնամու դեմ Կուբանում և Թամանում, Սևաստոպոլում և Վիսլայի ու Օդերի ափերին, մինչև որ ոսոխի գնդակը խոցեց նրա 37-ամյա սիրտը՝ թողնելով սերունդներին մի պայծառ անուն: Նրա անյունը ամփոփվեց Լեհաստանի Ցիբինկա քաղաքի եղբայրական գերեզմանոցում, Պապիկ Ավալյանի և բազմաթիվ այլ թամանցիների շիրիմների կողքին:

Արսեն Հովհաննիսյանի լրագրային հանրահայտ հոդվածներից «Հայ մարտիկները Սևաս-

[1] Մեր ուսումնասիրությունների ժամանակ (1970—1973 թթ.) ՀԼԿԵՄ պատմ. պետթանգարանը գտնվում էր Մասիսի շրջանի Ղուկասավան գյուղում, հետո այն տեղափոխվեց Երևան, երիտասարդական պալատի շենք (Ծանոթ. Ս. Գ.-ի):

տոպոլի ճակատամարտում» փաստագրությունը նրա անունը անթառամ է պահում հայ ռազմի մամուլի պատմության մեջ:

Եղեգնաձորի «Վերելք» շրջանային թերթի 1934—35 թթ. համարները ուսումնասիրելիս կը-հանդիպեք թերթի նախկին պատասխանատու քարտուղար, հետագայում «Ավանգարդի» բաժնի վարիչ ՀՄԱՅԱԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ոչ միայն բանաստեղծություններին, այլև ակնարկներին, հոդվածներին ու մանրապատումներին: Նրանց հեղինակն այսօր չկա: Իր գրչեղբայրների պես նա ևս զոհվեց հայրենի տանից հեռու, 30 տարեկան հասակում, 1945 թ. փետրվարին՝ «Ա՜խ, հեռու ես, հայրենի՛ք» երգի տողը շուրթին, հավատարիմ իր զինվորական և պոետական ուխտին.

Քո նեղ ժամին արհավիրքի
Կառնեմ զինյալ թևեր,
Կասեմ.—հանուն քո մեծ փառքի
Առ արյունս նվեր...

Ռազմի բոցերում Նալբանդյանը սխրանքներով օծվեց և արժանացավ Կարմիր աստղի, Հայրենական մեծ պատերազմի առաջին և երկրորդ աստիճանի շքանշանների և մի շարք մեդալների:

«Դեպի թշնամու ջախջախումը» թերթի 1942 թ. համարներից մեկում «Հիշիր և վրեժ լուծիր» խորագրով տպագրված է «Հավերժ նզովք գերմանական պատժիչներին» հոդվածը, «Ահա թե ինչ են արել գերմանական պատժիչները ռուսական փոքրիկ Գուսովկա գյուղում» ենթավերնագրով: «Հաստամոռթ, շեկ գերմանացիների պատժիչ ջոկատը աղմուկով ու սուլոցով խուժել է Օրյոլի մարզի Լյուդինովսկի շրջանի Գուսովկա գյուղը և հենց այդտեղ՝ փողոցում, գնդակահարել է առաջին իսկ պատահած կոլխոզնիկներ ընկ. ընկ. Լենկինին, Կնյազևին, Գորինին, Զայցևին և Նեֆեդկինին:— Այնուհետև կարդում ենք,— Հարբած զինվորները հարձակվել են 16 տարեկան Պելագեյա Գրիշկինայի վրա, գազանաբար ծաղր ու ծանակի են ենթարկել և սպանել նրան: Շեկ իժերը մի ուրիշ աղջկա՝ Մարիա Կուզնեցովային քարշ են տվել իրենց բանդիտ սպաներին զվարճություն պատճառելու համար: Իսկ հետո իրենց գազանային ռեխին հաճույք պատճառելու համար աղջկան ոտքերից կախել են ծառից և նայել նրա արնակալած ու տանջալից դեմքին:

Գերմանական պատժիչները պատանի Եգոր Տիմաշևին կապել են աթոռից և ծեծել մինչև գիտակցությունը կորցնելը»:

Եվ ոչ միայն «Դեպի թշնամու ջախջախումը», այլև ռազմաճակատային բոլոր թերթերում էլ կարելի է հանդիպել ժուռնալիստների կողմից արձանագրված նման ցնցող փաստերի: Իսկ ընման դեպքերն ականատեսներին ոչ միայն վրեժով էին լցնում թշնամու հանդեպ, այլև զինում, մարտակոչի էին հրավիրում նրանց: Մի՞թե եղերական այդ օրերին անտարբեր և սառնասիրտ կարող էին ապրել հայ լրագրողները:

Բզովդալցի ՆԱՊՈԼԵՈՆ ԾԱՏՈՒՐՅԱՆԸ, որ պատերազմի առաջին ամիսներին հյուսել էր իր «Անսահման սերը» թռվիչ բանաստեղծությունը և աշխատում էր Կիրովականի «Սոցարշավ» թերթում, մնաս բարով ասաց Գուգարաց լեռներին և մեկնեց ռազմաճակատ: Նա ևս մինչև իր եղերական մահը՝ 1942 թ. գարունը, իր սուրը պատյան չդրեց և ավագ եղբորը՝ Վազգենին, հղած նամակում գրել է.

Ես հավատում եմ մեր հաղթանակին,
Ես հավատում եմ, որ տուն կդառնամ:

Ցավոք, նա Կերչից տուն չվերադարձավ. զոհվեց և թաղվեց այնտեղ՝ Կերչի ռուսական եկեղեցու բակում:

1945 թ. մայիսին, երբ խնդության սեղան էր բացվել ամենուր, ստեփանավանցի երեխաները վազում էին երկաթգծի կայարան՝ դիմավորելու մարտադաշտից հաղթանակով վերադարձողներին: Նրանց հետ քանի-քանի անգամ կայարան գնացին և հուսախաբ վերադարձան Զուլիետա և Յուրի Ճշմարիտյանները: Նրանց հայրը՝ «Փարոս» թերթի նախկին խմբագիր ՀԱՅԿ ՃՇՄԱՐԻՏՅԱՆԸ, ետ չեկավ, զոհվել էր Բելոռուսիայում կռվի հենց առաջին տարում:

Արյունախում թշնամու գնդակին զոհ գնացին նաև «Փարոսի» աշխատակիցներ ՍԱՐԳԻՍ ԱԲՈՎՅԱՆԸ, ԿՈԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ, ԱՆԴՐԱՆԻԿ ՂԱՐԱՋՅԱՆԸ, ՍԱՐԳԻՍ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԸ, ՍԱՐԳԻՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ, ՄՈՒՇԵՂ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆՆ ու ԿՈՍՏԻԿ ՉՈԲԱՆՅԱՆԸ:

Թղթակցություններից, ակնարկներից բացի իրենց գրական առաջին թոթովանքներով էին ուրախացնում գրասերներին ՍԱՐԳԻՍ ՋԱԼԻՆՅԱՆԸ, ՋԱՆԻԿ ԵՂԻՆՅԱՆՆ ու ԱՐՏԱՇԵՍ ՊԱՊՈՅԱՆԸ: Նրանց անվան հետ ստեփանավանցիները մեծ հույսեր էին կապել: Ցավոք բոլոր այս «փարոսցիների» բախտի փարոսը չլուսարձակեց. զոհվեցին նրանք:

Հայրենական մեծ պատերազմում նույն ճակատագիրը և նույն նպատակը՝ հայրենիքն ազատագրելը և ժողովրդին խաղաղ տեսնելը, էլ ավելի մտերմացրին մեր բազմազգ երկրի զավակներին: Նրանք ոչ միայն կռվում էին գերմանական զավթիչների դեմ, այլև միասին թերթ էին տպագրում: Հյուսիսային Կովկասի հայ ռազմիկների համար հրատարակվող «Առաջ հանուն հայրենիքի» թերթի ռուս գրաշար Մորոզովը խմբագրության ու տպարանի՝ դիվիզիայի ետևից Կրոպոտկինոյից Կրասնոդար տեղափոխվելու ժամանակ ընկել է վիրավոր՝ իր արյամբ ներկելով հայկական թերթը:

Որքան ծաղիկ պիտի բուսներ,
Որ չբուսավ ես հողին...

Հանճարեղ լոռեցու խոսքերն ես ակամա հիշում, երբ ծանոթանում ես Հայրենական մեծ պատերազմում զոհված ԴԵՐԵՆԻԿ ՁԱՐԽՉՅԱՆԻ (Ախալցխայի շրջանային թերթից), ԵՓՐԵՄ ԼՈՌԵՆՑԻ (Բաքվի «Կոմունիստից»), ԱՐՇԱՎԻՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ («Խորհրդային Ղարաբաղից»), ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻ (Թալինի շրջ. թերթից), ԱՐՄԵՆ ԱՓԻՆՅԱՆԻ, ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ-ՍԵՎԱՆՅԱՆԻ, ՆՈՐԻԿ ՆԱԶԱՐՅԱՆԻ, ՍԵՐՅՈԺԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ, ՀՈՒՍԻԿ ՇԱՀԵՆԻ, ՎԱՂԱՐՇԱԿ ՇԱՀԻՆՅԱՆԻ, ԳՐԻԳՈՐ ԱՐՏՈՒՆՈՒ, ԵՆՈՔ ԱԶԱՐՅԱՆԻ (հանրապետական ու շրջանային տարբեր թերթերի խմբագրություններից)[1] և մի շարք ուրիշ բանաստեղծ լրագրողների թղթակցություններին, բանաստեղծություններին և հոդվածներին, որոնց մի մասը լույս է տեսել նրանց մահից հետո:

Պատերազմի ահեղ բոցերում անգամ խորհրդահայ մամուլը քայլեց ռազմիկների ճանապարհով, նրանց հնքով շնչեց, երգեց նրանց մարտական, երբեմն և տխուր, բայց միշտ առնական և անկոտրում սրտի և կամքի երգը, ոգևորեց և ժողովրդի խոսքն ուղղեց իր անվեհեր որդիներին: Եվ այդ բոլորի արտահայտիչները հայ լրագրողներ էին՝ եկած ոչ միայն Հայաստանի քաղաքներից, շրջաններից ու գյուղերից, այլև եղբայրական հանրապետություններից: Եվ եթե այստեղ հանգամանալի խոսք չի ասվում Արցախի և վրացահայ լրագրող ռազմիկների մասին, պատճառը միայն պահանջվող փաստագրական նյութերի պակասն է[2]:

[1] Զոհված բանաստեղծ լրագրողների մասին մանրամասն տեղեկություն կտանք «Մուսաները չլռեցին» 2-րդ գրքում:

[2] Պատերազմին մասնակից և զոհված լրագրողների անվանացանկը տես բաժնի վերջում:

ՆՐԱՆՔ ԶՈՀՎԵՑԻՆ ԶԵՆՔԸ ՋԵՌՔՆԵՐԻՆ

ՄԻ ԲԱՐԻ ԱՆՈՒՆ

ԴՐԱՍՏԱՄԱՏ
ԳՐԻԳՈՐԻ
ԱՌԱՔԵԼՅԱՆ
(1914—1943)

1941 թ. հունիսի հինգերորդ շաբաթ: «Պղնձի համար» թերթի խմբագիր Սողոմոն Օրբելյանն ու խմբագրության կոլեկտիվը հուզված էին: Թերթի բաժնի վարիչ, կոմունիստ Դրաստամատ Առաքելյանը եկել էր իր աշխատանքային ընկերներին մնաս բարով ասելու և կամավոր մեկնելու ռազմաճակատ: «Մինչև թշնամու ոտը մեր հողից դուրս չգա, ես Զանգեզուր չեմ վերադառնա»,— թիկունքի այս երդումը մարտադաշտում դարձավ կ.անքի ուղենիշ: Բանակում նկատի ունենալով, որ Դրաստամատն ունի էլեկտրակապի տեխնիկի մասնագիտություն (1938 թ. ավարտել է Թբիլիսիի էլեկտրակապի տեխնիկումը), նրան սերապատրաստում են որպես կապավոր, միևնույն ժամանակ՝ հետախույզ-ռադիստ: Հմտորեն ուսումնասիրելով դարանակալած թշնամու գրաված տեղանքն ու ուժերի դասավորությունը, մի ուսից կախ ռադիոսարքավորումները, մյուսից՝ ատրճանակն ու նռնակները, նա Հյուսիսային Կովկասից թշնամուն հետապնդելով հասնում է մինչև Ղրիմ: Գրոզնի, Մոզդոկ, Ստավրոպոլ, Կրասնոդար, Նովոռոսիյսկ, Կերչ, Սիմֆերոպոլ—ահա մարտական այն ուղին, որ անցավ Ղափանի շրջանի Բեխ գյուղի ծնունդ (1914 թ. մայիս), նույն շրջանի Վաչագան գյուղի դպրոցի ուսուցիչ Դրաստամատ Գրիգորի Առաքելյանը: Հիտլերյան բարբարոսների դեմ ծավալված ահեղ մարտերում Սյունաց լեռնաշխարհի անվեհեր քաջորդին մնաց անսասան: Ցավոք նա իր վերջին նամակը հասցրեց գրել Նովոռոսիյսկից: Դեսանտ իջած կապավորը առաջին անգամ այստեղ վիրավորվեց ձախ ձեռքից: Արյան հոսքը կանգնեցնելու համար կապավորն ընկերոջը խնդրեց պահեստային հեռախոսալարից պոկել 50—60 սմ և թևքը ուժեղ կապել «մինչև սանքատ» հասնելը: Մահացու երկրորդ ծանր վերքը մարտիկ ժուռնալիստն ստացավ Սիմֆերոպոլի համար մղված կատաղի մարտերում, տեղափոխվեց հոսպիտալ, որտեղ էլ 1943 թ. հավետ փակվեցին ազատությանը և հայրենի բնաշխարհին կարոտ նրա խաժ աչքերը:

«Եթե առողջացա,— կարդում ենք Դրաստամատի՝ Սողոմոն Օրբելյանին հասցեագրած մի նամակում,— նորից կկռվեմ շուն Հիտլերի դեմ, իսկ եթե չվերադառնամ, մեկ էլ չտեսնեմ Սյունաց չնաշխարհիկ լեռները, ինձ համարեք զոհված և ոչ թե մեռած: Մեռնում են նրանք, ովքեր ապրում են աննպատակ, վայելում աշխարհը: Ես աշխարհի խաղաղության համար եմ զոհվում, ես զոհվում եմ իմ գաղափարների համար: Ես զոհվում եմ՝ մի ձեռքիս հրացան ու հռնակ, մյուսին՝ ռադիոհեռախոս: Սիրելի՛ բարեկամներ, հավատացեք եղեք, որ հաղթանակը մերն է: Ազնիվ հաղթանակի համար զոհվելը նշանակում է անմահություն գտնել: Մնաք բարով»:

Թերթում եմ «Պղնձի համար» լրագրի նախապատերազմական համարները, կարդում Դրաստամատ Առաքելյանի հոդվածներն ու ակնարկները: Դրաստամատի մասին ինձ անծանոթ Մա-

կեդոնի գրած նամակը ընթերցողիս մտովի տեղափոխում է ժուռնալիստ մարտիկի անցած՝ աներով ու մահերով լի ռազմուղին: Թվում է՝ ուր որ է դեմս կկանգնի ինձ անծանոթ, բայց արդեն հարազատ դարձած մի հերոս և հպարտությամբ կկրկնի իր այնքան սիրած Սասդիի անմահ միտքը.

— Աշխարհի բոլոր պարգևներից մնում է միայն մի բարի անուն, և դժբախտ է նա, ով նույնիսկ դա չի թողնում:

«ԱՎԱՆԳԱՐԴԻ» ԱՐՏԵՄԸ

ԱՐՏԵՄ
ԵՂԻՇԵԻ
ԲԱԴԱԼՅԱՆ
(1913—1941)

Հաղպատցիները մինչ օրս գովեստով են խոսում Եղիշ ապոր կրտսեր որդու՝ Արտեմի մասին: Ինչպես իր հասակակիցներից շատերը փոքրիկ Արտեմը ևս չունեցավ ուրախ ու երջանիկ մանկություն: Ծնողները հողագործ էին: Հայրը վաղ մահացավ: Արտեմի և իր եղբայրների հոգսն ընկավ մոր ուսերին: Համաշխարհային առաջին պատերազմը և 1918—1920 թ. հայ-թուրքական ընդհարումները իրենց ծանր կնիքը թողեցին նաև Արտեմենց ընտանիքի վրա: Յոթ տարեկան էր, երբ Հայաստանում ճառագեց նոյեմբերյան փրկարար արևը: Փոքրիկ Արտեմը հաճախեց դպրոց: Մոր հետ հանդ էր գնում, ամառվա ամիսներին աշխատում էր կոլտնտեսությունում: Միջնակարգն ավարտելուց հետո տեղափոխվեց Երևան: Ապրում էր Կնունյանցի փողոցի № 61 տանը՝ եղբոր մոտ: Աշխատանքի անցավ «Ավանգարդի» խմբագրությունում: Հայոց լեզվի և գրականության ուսուցչի երկամյա փորձը, կոմերիտական աշխատանքի անցած ուղին օգնեցին, որպեսզի Արտեմը հանդես գա երիտասարդական մամուլում հետաքրքիր ու բովանդակալից ակնարկներով, հոդվածներով և լրատվությամբ: Աշխատանքին զուգահեռ 1935 թ. նա ընդունվեց Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ: 1940 թ. ապրիլին համալսարանի ղեկավարությունն ու պատմության ֆակուլտետի դեկան Ներսես Պողոսյանը ամեն կերպ ուզեցին Արտեմին որպես ասպիրանտի պահել համալսարանում, սակայն չկարողացան: Ժուռնալիստիկան նրա տարերքն էր: Որպես «Ավանգարդի» ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ նա ոչ մի ջանք ու եռանդ չէր խնայում՝ երիտասարդությանը դաստիարակելու վառ հայրենասիրությամբ, պատվաստելու նրա մեջ աշխատասիրություն և արտացավություն, ուշադրություն և մարդասիրություն: Իր եղերական մահով անգամ Արտեմն ապացուցեց, որ ինքը մեծ ինտերնացիոնալիստ է: Արևմտյան Բելոռուսիայում էր ծառայում, երբ պայթեցին թշնամու առաջին ռումբերը: Հենց այստեղ էլ, մարտական պոստում 1941-ին խզվեց ավագ լեյտենանտի կյանքի թելը: Արտեմը 1939 թ. ԽՄԿԿ անդամ էր (ընդունվել էր համալսարանում):[1] Զեռքիս տակ են Արտեմի Երևանի պետական համալսարանից 1940 թ. ստացած № 560010 դիպլոմը և մի քանի նամակներ: Նրանցից մեկը հասցեագրված է Մոսկվայի արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ եղբորը՝ Ավետիք Բադալյանին, մյուսը՝ Թելավում ծառայող ավագ եղբորը՝ Գերասիմին: Ինչպես կյանքում, նամակներում ևս Արտեմը պարզ է, արտացավ և ուշադիր : Նա ապրեց ընդամենը կյանքի քսանութ գարուն:

---

[1] Տես ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆոնդ 1, ցուցակ 78, գործ 2986:

ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ՈՐԴԻՆ

ՍԵՐՈԲ
ԱՎԱԳԻ
ԳԵՎՈՐԳՅԱՆ
(1915—1943)

Նիժնի Խուտոր. այսպես է կոչվում Կրասնոդարի մարզի այն գյուղը, որի ազատության համար մարտնչած հայրենանվեր զինվորների հետ Հերոսների ծառուղի զբոսայգում 1943 թ. փետրվարի 9-ից հանգչում է ՀԼԿԵՄ Աշտարակի շրջկոմի առաջին քարտուղար և նույն շրջանի «Կոլխոզնիկ» թերթի խմբագիր Սերոբ Գևորգյանը: Ծնվել է նա Բյուրականում 1915 թ.: Յոթնամյակն ավարտելուց հետո աշխատել է որպես Բյուրականի գյուղխորհրդի քարտուղար, հետո տեղափոխվել է շրջկենտրոն: Աշտարակում միջնակարգն ավարտելուց հետո Սերոբն իր ուսումնառությունը շարունակեց Երևանի պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում: Երկու տարի ուսուցիչ աշխատելուց հետո նրան նորից հրավիրեցին շրջկենտրոն, այս անգամ՝ խմբագրությունից: Շրջանային թերթում գրական աշխատողից Ս. Գևորգյանն աճեց և դարձավ «Կոլխոզնիկ» շրջանային թերթի խմբագիր: Սակայն երկար չտևեց քսանհինգամյա երիտասարդի աշխատանքային ուղին: Պատերազմն ստիպեց, որ նա հրաժեշտի համբույրներ տա իր փոքրիկներին, ողջագուրվի յուրայինների հետ և մնաս բարով ասի Արագածին ու Բյուրականին, իր մանկության կապույտ ու խաղաղ երկնքին: «Միք անհանգստանա,— կարդում ենք կնոջը՝ Շուշիկին, Սերոբի ուղարկած առաջին օրերի նամակներից մեկում,— միևնույն է, հաղթանակը մերը կլինի, թշնամին կջախջախվի, և մենք տուն կգանք հաղթանակի ճանապարհով: Մնա ամուր և կայուն, թող փոքրիկներս՝ Ստյոպիկս և Սպարտակս, չտխրեն»:

1942 թ. աշուն: Կուբանի անծիր հարթություններում, Կրասնոդար քաղաքից քիչ հեռու, Սերոբ Գևորգյան երկաթուղու ուղղությամբ կատաղի մարտեր էին մղում թշնամու վայրի ոհմակների դեմ խորհրդային բանակի 675-րդ, 677-րդ և 684-րդ հրաձգային գնդերը: Նրանց միասնական շարքերում էր նաև 409-րորդ հայկական հրաձգային դիվիզիայի ուսումնական հատուկ գումարտակի անկնուն քաղղեկ Սերոբ Գևորգյանը: Հաճախ էր պատահում. դադարի ժամին հիշում էր հայրենի գյուղը, իր դեռատի մանչուկներին, կնոջը, և կովելն ու թշնամուն սպանելը դառնում էին ոչ միայն հրամայական պահանջ, այլև բանաստեղծություն.

Թող բախտը լինի
Դաժան ու անգութ,
Չեմ դավի ես քեզ,
Իմ հայ ժողովուրդ:

Զայրույթն ու վրեժխնդրությունը դառնում էին կիրք, հույզ և չափածո խոսք, գործող բանակից հասնում հայրենի գյուղ, եռանկյունե նամակի տեսքով անցնում ձեռքից ձեռք: Իսկ նրանց հեղինակը շարունակում էր մարտեր մղել թշնամու դեմ Կերչում, Հյուսիսային Կովկասում ու Կուբանում: Հաճախ էր նռնակներով ու ավտոմատով զինված, ատրճանակը կողքից կախ, դուրս գալիս խրամատից և իր դասակի մարտիկների հետ գրոհում թշնամու դարանակալած խմբերի վրա: Քանի-քանի՜ անգամ է նա Կերչում ռազմամարտերի ականատեսի իր տեսածն ու լսածը հանձնել թղթին և որպես փաստագրություն ու ականատեսի վկայություն ուղարկել ռազմաճակատային մամուլին: Հակագրոհներից մեկի ժամանակ (1942 թ.) Սերոբը ձախ ուսից վիրավորվում է: Այդ մասին յուրայիններին չի տեղեկացնում: Ահա վիրավորվելուց հետո գրած նամակից մի հատված. «Շուշիկ ջան, մի տխրիր, որ չտխրեն երեխաները: Նրանց երբեք մի հիշեցրու պատերազմի մասին: Համբուրիր Սպարտակիս, Ստյոպիկիս աչքերը: Կարոտել եմ:

Քեր **Սերոբ:**

Գործող բանակ, 1942 թ.»:

1943 թ. ձմռան սկզբներին Անդրկովկասյան ռազմաճակատի մյուս զորամիավորումների կազմում 409-րդ հայկական հրաձգային դիվիզիան անցավ հակահարձակման. Թերեքի ափերից մինչև Ազովի ծով և Կուբանի հարթություններ նա ազատագրեց հարյուրավոր քաղաքներ ու գյուղեր: Նիժնի Խուտորն (այժմյան Կորենևսկի շրջանում) ազատագրելիս թաքստոցներից արձակած թշնամու գնդացրային կրակը գետին տապալեց լեյտենանտներ **Վարդան Պողոսյանին, Անդրանիկ Սարգսյանին, Աղասի Խուրշուդյանին,** միաժամանակ մահացու վերք ստացավ ավագ սերժանտ **Վահան Հարությունյանը:** Վերջինիս աչքի դեմ գերմանական երկու կրակահերթ ուղղվեց վաշտի քաղղեկ Սերոբ Գևորգյանի կրծքին: Օրորվեց ու ընկավ: Ու մինչ դիվիզիայի հետախուզական խումբը **Սենիկ Այվազյանի գլխավորությամբ** կհասներ օգնության, արդեն դադարել էր բաբախելուց զինթղթակից և քաղղեկ Սերոբ Գևորգյանի սիրտը:

Նիժնի Խուտորի դպրոցի բակում կանգնեցված հինգ մետրանոց հուշարձան-կոթողի վրա այսօր փորագրված են այն երեսուներկու քաջորդիների (և Սերոբի) անունները, ովքեր հերոսաբար մարտնչեցին թշնամու դեմ և զոհվեցին այստեղ 1943 թ. փետրվարի 9-ին: Ս. Գևորգյանի մարտական սխրագործությունների մասին բազմիցս գրվել է հանրապետական մամուլում, ինչպես նաև Ար. Մնացականյանի «Միասնական շարքերում», հեղինակիս «Հայաստանի կոմերիտմիության ինտերնացիոնալ կապերի պատմությունից» գրքերում և այլուր: Քաջարի հայ քաղղեկի և «Մարտական դրոշ» զինթերթի թղթակցի անունով պիոներական դրուժինաներ կան և՛ Նիժնի Խուտորում, և՛ Բյուրականում: Ս. Գևորգյանի անունն անմահացել է Հայաստանի ժուռնալիստի տան նախասրահի մարմարե հուշատախտակին և Հայաստանի ԼԿԵՄ պատմության պետական թանգարանի ցուցասրահում:

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ՀԱՄԱԳՅՈՒՂԱՑԻՆ

ՄԱՄԻԿՈՆ
ԵՂԻԾԻ
ԳՐԻԳՈՐՅԱՆ
(1913—1943)

Հասմիկ, Հրանուշ և Փերիհան քույրերից յուրաքանչյուրի բնակարանում որպես սուրբ մասունք պահպանվում են Թամանյան 89-րդ հրաձգային դիվիզիայի 390-րդ գնդի վաշտերից մեկի քաղղեկ Մամիկոն Գրիգորյանի ռազմաճակատային նամակներն ու լուսանկարները:

— Եթե ուզում եք քեռուս մասին ճշգրիտ տեղեկություններ իմանալ, եկեք միասին Փարպի գնանք, փոքր քեռուս՝ Վարդգեսի մոտ,— մեր զրույցի հենց սկզբից լինում է զոհված լրագրող Խաչիկ Նազարյանի որդու՝ Ռոլանդի առաջարկը, և ես նրա հետ միասին ուղևորվում եմ Փարպի: Տարեց կոլտնտեսականը ընտանյոք է մեզ դիմավորում: Սեղանի շուրջ էլ կայանում է մեր «հարցաքննությունը»: Պարզվում է, որ Մամիկոնի նախնիք Փարպի են գաղթել անցյալ դարի սկզբներին Պարսկաստանի Խոյ-Սալմաստ գավառից: Մամիկոնը, ինչպես իր եղբայրներ Վարդգեսն ու Գրիգորը, ծնվել է այստեղ՝ Փարպիում, 1913 թ.: Հարևան Բազմաղբյուր գյուղի կոլերիտ յոթնամյա դպրոցն ավարտելուց հետո իր ուսումնառությունը շարունակել է Երևանում: Դեռ Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետի ուսանող էր, երբ հանրապետական մամուլում երևաց նրա ստորագրությունը:

«Հիմա թղթակցություն կգրի, հետո էլ՝ վեպ»,— հպարտությամբ կրկնում էր Ռոզա մայրիկը, երբ ուրիշները խոսք էին բացում իր ժուռնալիստ որդու մասին: Երևանի պետհամալսարանն ավարտելուց հետո Մ. Գրիգորյանը աշխատանքի է անցնում Հոկտեմբերյանի շրջանային թերթում որպես պատասխանատու քարտուղար, որոշ ժամանակ անց տեղափոխվում է «Ավանգարդի» խմբագրություն, հետո էլ (մինչ 1942 թ. սեպտեմբեր) աշխատում «Սովետական Հայաստան» թերթում և ՀՀԳ-ում որպես բաժվար և հերթապահ խմբագիր:

— Պատերազմին երեքս էլ մասնակցեցինք: Ես և Գրիգորը վերադարձանք, իսկ Մամիկոնը զոհվեց: Նրա մասին Արամայիս Մնացականյանը, Սիմոն Նալբանդյանը, Նվեր Սաֆարյանը հաճախ են իրենց ելույթներում, հուշերում ու գրքերում խոսել ու գրել... Է՜, ի՞նչ պատմեմ,— ծանր հոգոց է հանում Վարդգես քեռին,— չը-

հասցրեց ամառանոց, գոնե մի երեխա ունենար...

Տարեց կոլտնտեսականին չնուզելու համար կարճում եմ հարցազրույցս՝ ինձ հետ վերցնելով Թամանյան դիվիզիայի «Լարմիր զինվոր» թերթի ակտիվ թղթակից և և անսասան քաջամարտիկ Մամիկոն Գրիգորյանի ռազմի լուսանկարն ու Վարդգես քեռուն հիշեցնում.

— Գիտե՞ք, Մամիկոնի անունը փորագրված է Երևանում, Ժուռնալիստի տան և ՀԿԿ Կենտկոմի հրատարակչության նախասրահներում՝ Մեծ հայրենականում զոհված ժուռնալիստների հիշատակը հավերժացնող մարմարե հուշատախտակներին: Մամիկոնը մինչ պատերազմ մեկնելը սովորել է Բաքվի հրամանատարական կարճատև դասընթացներում, կապիտանի կոչումով ավարտել **89-րդ** հայկական հրաձգային դիվիզիա, որ և նշանակվել է գնդի քաղղեկ: Խիզախաբար է դրսևորել իրեն Նովոռոսիյսկում, Տուապսեում, Թաման կղզում: Մի անգամ վիրավորվել է Հաչիմուշկայի համար ծավալված մարտերում, երկրորդ անգամ՝ դեսանտայիններին օգնության հասնելիս՝ Թեոդոսիայի մոտ...

Աչքերում կուտակված արցունք, դողդողացող ձեռքեր, և անկախ իրենից Վարդգես քեռին ալերսանքով ինձ հետ է պահում, նստեցնում թախտին ու ստիպում.

— Եթե եղբորս մասին էլի բան գիտեք, գոնե ինձ ասեք...

Ես Վարդգես քեռուն ցույց եմ տալիս Մամիկոնի այս ու այնտեղից հայթայթած ձեռագիր նամակներն ու բացիկները՝ հասցեագրված իրեն, Գրիգորին, Հասմիկ քրոջ դուստրերին՝ Էլֆային և Ժաննային, տեղեկացնում եմ, որ մարտերում ցուցաբերած սխրանքի և զինառաջադրանքները հաջող իրագործելու, մարտական-քաղաքական պատրաստության համար Մամիկոնն արժանացել է Կարմիր աստղի և Հայրենական մեծ պատերազմի 2-րդ աստիճան շքանշանների, ծառայել Թամանյան դիվիզիայի 390-րդ հրաձգային գնդի առաջին մարտկոցի 3-րդ վաշտում որպես քաղղեկ: Հետո կարդում եմ 1942 թ. նոյեմբերի 12-ի մատիտագիր մի բացիկ, որ ասված է.

«Հասմիկ ջան, սիրելի Էլֆա.

Հենց առաջավոր գծում, երբ գրոհից նոր էինք վերադարձել, ամսի 11-ին, ստացա ձեր երկուսի նամակները: Ես շատ լավ եմ: Գսպիրյանը թեթև վիրավորվեց և գնաց, երևի գա այդտեղ: Ինչպես տեսնում եք, «գլուխս պինդ է». մեկ օրում հինգ անգամ հարձակման գնացինք, ինձ ոչինչ չպատահեց: Ստացել ենք հոկտեմբերյան նվերները: Ույի՜նչ: Գորգենին ասա, բ տեսած տեղում չենք: Ամբողջ օրն անց ենք կացնում զեմլյանկայում (խրամատ): Այսօր հանդիպեցի Լիպոցին[1], նա մեր բաղբաժնի պետն է: Բարևիր Արիսին: Ես այժմ աշխատում եմ արիշ տեղ, բայց նույն գումարտակում՝ Գսպիրյանի փոխարեն: Շատ լավ է Սիմոնը[2], հիմա մոտս է: Բարև բոլորիդ:

Համբույրներով՝ **Մամիկոն**

Դաշտային փոստ—1662, զինմաս 021»:

Տեսնելով, որ Վարդգես քեռուց պրծում չունեմ, մի այլ նամակից մի հատված ևս ընթերցում եմ նրան. «...Արդեն երկու ամսից ավելի է, որ կրակային առաջավոր գծում ենք, դաժան դատաստան ենք տեսնում մարդակեր հիտլերականների հետ: Վրեժ կլուծեմ նրանցից մեր հարազատների թափած արյան համար: Երբ գնում եմ գրոհի, էլ ավելի է ուժեղանում կիզող ատելությունը դեպի թշնամին: Եթե այդ պահին նրանք ձեռքներս ընկնեն, սաղ-սաղ կուլ կտանք (ինչպես ընդունված է ասել): Ամեն օր տասնյակ հիտլերականներ ենք վայր գցում, անա մեր սրբ գործը: Հասմիկ ջան, Էլֆա ջան, շուտով կգանք՝ հաղթանակով... Ժամանակը անցնում է ամեն տեսակի հրաձգությամբ: Միշտ գնում եմ հետախուզության՝ շատ հետաքրքիր և միաժամանակ վտանգավոր ապառնալիքի տակ: Բայց եթե չես վախենում, առանձին բան չկա: Երեկ մեր բլինդաժում թնդում էր ուրախ երգը»:

1942 թ. դեկտեմբերի 20-ին եղբոր գրած այս նամակը Վարդգեսի ձեռքը չի անցել, քանզի նա էլ էր մարտադաշտում, իսկ հիմա կլանված լրսում է. ամեն մի բառ և կարծես զրույցի է նստել եղբոր հետ. «...Սիմոնը և Գրիգորը ինձանից հեռացել են. Սիմոնը թերթում է, Գրիգորը մի ուրիշ տեղ»: Այն հարցիս, թե ինքը գիտե՞ Սիմոնին և Գրիգորին, հազիվ զսպելով հուզմունքը, Վարդգես քեռին շշնջում է.

— Իհարկե, խմբագրության տղերքն են. «Սովետական Հայաստանում» էին աշխատում Մամիկոնի հետ: Սիմոնի ազգանունը Նալբանդյան է: Նա կովից հաղթանակով վերադարձավ, իսկ Գրիգոր Զոհրաբյանը զոհվել է: Ինչքա՜ն են եկել մեր տուն, ի՜նչ օրեր ենք անցկացրել...

Տեսնելով, որ փաստագրական տեղեկություններս խիստ նոսիատոի են, Վարդգես քեռին ավելացրեց իր վերջին հարցն է. ինձ ուղղում և ձեռքս առնում ափերի մեջ.

— Մամիկոն եղբայրս ե՞րբ և որտե՞ղ է զոհվել

— Զոհվել է 1943 թ. մարտին, Մոլդավիայում, — լինում է վերջին նոսիատատությունս, և ես ու Վարդգեսը մի անուժոր տխրությամբ թողնում ենք Փարպին:

ԻՆՉ ՊԱՊԵՐ ԵՆՔ ՄԵՆՔ ՈՒՆԵՑԵԼ, ԻՆՉ ՊԱՊԵՐ...

ՎԱԼՈՒՍՏ
ԳՐԻԳՈՐԻ
ԴԱՆԻԵԼՅԱՆ
(1909–1945)

Համո Մանուկյանի հետ ծանոթացել եմ Թալինում. նա այստեղ խմբագրությունում էր աշխատում, գրական թոթովանքներս քաջալերողներից էր: Տարիներ անց նրան հանդիպեցի Մարալիկում: Թե ինչն էր ինձ տարել այնտեղ, նա չիմացավ: Միայն երբ խոսք բացվեց զոհված ժուռնալիստների և գրողների մասին, նրա ակնոցների տակ արցունքի շիթեր երևացին.

— Զոհվել է նաև մեր լավագույն ընկերն ու մեր թերթի նախկին խմբագիրը՝ Գալուստ Դանիելյանը: Նա երեք երեխայի հայր էր, երբ մեկնեց ռազմաճակատ: Հիմա չասեմ-չասեմ՝ արդեն տասից ավելի թոռներ ունի, մեկն էլ կրում է հենց իր անուն-ազգանունը և ապրում է Նոր Գեղիում: Կինը կա, անունը Փառանձեմ է, տղաներից մեկը Մարալիկի սանիտարական բաժակ է, մյուսը՝ գյուղում մեխանիզատոր...

Առօրյա զրույց, կատակ և հրաժեշտ, ու ես գնում եմ Գալուստի հետքերով: Պարզվում է, որ Անիի «Սահմանապահ կոլխոզնիկ» շրջանային թերթի նախկին խմբագիր Գալուստ Գրիգորի Դանիելյանը ծնվել է Շիրակավան գյուղում (նախկինում՝ Տավշանշլաղ), միջնակարգն ավարտելուց հետո ուսանել է Լենգյուղֆակում: Բանֆակը փակվելուց հետո ընդունվել է Երևանի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետ: Աշխատանքային գործունեությունը սկսել է 1932 թվականից. եղել է ուսուցիչ, դպրոցի տնօրեն՝ Բարձրաշեն, Լուսապբյուր, Այրի գյուղերում, հետո (1939 թ.) նշանակվել է շրջանային թերթի խմբագիր: Մանկավարժ պատմաբանի և կոմունիստ (1937 թ.) լրագրողի աշխատանքային գրքույկը այնտեղտեղ լռում է: Խոսում են նրա ռազմաճակատային նամակները՝ նրա մարտական ճանապարհի հավերժախոս վրկանները՝ ուղարկված Հյուսիսային Կովկասից, Հարավային Ռուսաստանից, Ուկրաինայից, Լենինգրադից, Գերմանիայից: Այո՛, այո՛, Գերմանիայից: Քիչ էր մնացել մինչ Բեռլին մտնելը, երբ ուժասպառ եղած թշնամու վրիժառու գնդակը խոցեց ավագ լեյտենանտին: Դա 1945 թ. ապրիլի 14-ին էր, Օդերի արևելյան ափին: Մահացու վերք ստացած, արյունաքամ Գալուստ Դանիելյանին ռազմընկերները մի կերպ հասցրին սանվաշտ, բայց այդտեղ ոչ էր: Նրա անունը **Շավարշ Սիմոնի Աբովյանի, Ռոստոմ Գրիգորի Ղարիբյանի, Արտաշես Հովհաննեսի Բարսեղյանի, Տիգրան Մինասի Գրիգորյանի, Վարազդատ Գասպարի Հովհաննիսյանի, Գրիգոր Գաբրիելի Հովհաննիսյանի** և տասնյակ այլ հայորդիների անունների հետ իր վերջնական հանգիստը գտավ Լենինականի Ցիբինկա-Բյալկով քաղաքի խորհրդային զինվորների եղբայրական գերեզմանում: Նովոռոսիյսկի, Գելենջիկի, Տուապսեի, Մալայա Զեմլյայի, Ուկրաինայի և Լենինականի ազատագրության համար գիտակցված մահով անմահացած գվարդիայի ավագ լեյտենանտ, խիզախ թամանցու անունը այսօր անմահացել է, ոչ միայն իր հարազատների, ծանոթների և ռազմընկերների սրտում, այլև եղբայրական Լենինա-

---

[1] Խոսքը Լիպարիտ Վարդանյանի մասին է (Ս.Գ.)

[2] Նկատի է ունեցել Սիմոն Նալբանդյանին (Ս.Գ.)

[1] Տես ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆոնդ 1, ցուցակ 78, գործ 5271, թերթեր՝ 7, 8, 9.

տանում լույս տեսած Յ. Պշիմանովսկու «Հիշողություն» գրքում (Վարշավա, 1987 թ., էջ 263): Այսօր ապրում է ոչ միայն զոհված լրագրող մարտիկի անունը, այլև՝ նրա նամականին: Վառ հայրենասիրություն, ազնիվ հավատ, անկեղծ նվիրում և հարգանք աշխատանքի և մարդու հանդեպ— ահա զոհված զինվորի նամակների հիմնական բովանդակությունը:

«Սիրելի Փառանձեմ,— կարդում ենք կնոջը հասցեագրած նամակներից մեկում,— պատերազմը մահ է ու դժբախտություն: Բայց երբ այն մղվում է ոչ թե զավթելու, այլ պաշտպանելու համար, այդ մարտում հաղթելը կրկնակի հաղթանակ է: Այդ հաղթանակի ուրախությունը մահվան աչքի մեջ անթարթ նայող տղամարդու աչքերից էլ կարող է արցունքներ քամել: Եթե միայն ժամանակ լիներ Վերջի պաշտպանության մասին գրեի... էլաց եղա այսօր նամակդ ընթերցելիս: Մարդիկ սովորաբար դժբախտության պահին են լաց լինում: Ռազմի դաշտում ճիշտ հակառակն է. այստեղ ուրախությունն է լացացնում, հուշում, որ խրամատներից հեռու ոչ թե սպանող, այլ կառուցող մարդ կա...

Գիտես, որ երազների չեմ հավատում, բայց այստեղ դրանք ամենացանկալին են, դրանք են մեղմացնում կարոտը, հաճախ տուն բերում, որ տեսնեմ հայրիկիս, սիրելի Աննային, ուրախանամ քեզանով, գրկեմ բալիկներիս...»:

Կարդում, կարդում եմ զոհված խմբագրի երազանուշ տողերը, և ակամայից միտս է գալիս Մարո Մարգարյանի նուրբ և դիպուկ չափածոն.

Երազ կա, որ մի կյանք արժե,
Կյանք կա—չարժե մի փուչ երազ...

Անաղարտ կյանքի և անաղարտ երազների ջատագով էր Գալուստը, դրա համար էլ նա ամենամեծ նվիրվածությունը համարում էր Հայրենիքի համար կռվելն ու զոհվելը: Ահա թե ինչ է գրել վիրավոր մարտիկը 1943 թ. սեպտեմբերին քրոջը. «Սիրելի Ազգանուշ, թանկագին քույրս, գրում եմ քեզ Կիսլովոդսկ քաղաքի հոսպիտալից: Վերքս ծանր չէ, այնպես որ մեկ և կես ամսից հետո նորից շարքերում կլինեմ: Փառանձեմին սրտապնդիր: Ուշադիր եղեք, որ թիթեռներս լավ մեծանան, աշխատեք, որ թիկունքը ամուր լինի... Պետք է դիմանաք: Չէ՛ որ մեծ զոհողությունները Հայրենիքի համար են»:

Հայրենիքի համար, իր այնքան սիրած թիթեռնիկների՝ Նինայի, Ժորայի և Յուրիկի համար կյանքից վաղաժամ հեռացավ ժուռնալիստ մարտիկը՝ հետնորդներին ժառանգելով.

Գործն է անմահ, լավ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երնեկ նրան, ով իր գործով
Կապրի անվերջ, անդադար:
(Հ. Թ.)

Գալուստ Դանիելյանի
վերջին լուսանկարներից

Անվերջ, անդադար է ապրում Անիի շրջանային թերթի 1939—1941 թթ. խմբագիրը: Նրա մասին՝ հայրենիքի իսկական զինվորի մասին, ահա թե ինչ է գրել «Պիոներ կանչ» թերթի 1977 թ. փետրվարի 2-ի համարում կրտսեր Գալուստ Դանիելյանը. «Տատս բոլորից շատ ինձ է սիրում: Նա ուրախանում է, երբ ես դպրոցում լավ եմ սովորում: Ասում է՝ պապիդ ես քաշել: Ես պապիս չեմ տեսել:

— Իսկ դու տեսե՞լ ես պապիկին, հայրի՛կ,— մի օր միամտաբար հարցրի հորս:

Տատս տխրեց: Ես զգացի իմ «սխալը» և ձեռքս վերցրի Վրույր Սարգսյանի «Հերոսական 225 օր» գիրքն ու սկսեցի թերթել: Առաջին նախադասությունները մատիտով գծված էին: Կարդում եմ. «Վաշտի քաղղեկ Գալուստ Դանիելյանի (Անիի շրջանից) օգնությամբ խիզախ ծովայինին դուրս բերեցին կրակի գոտուց»:

— Գալուստ Դանիելյա՞ն,— բարձրաձայն ասացի ես:

— Քո պապն է, Գալուստ ջան,— արցունքների միջից շշնջաց տատս»:

Անցել են տարիներ: Դեռ սերունդներ կգան, դեռ կգան թոռներ ու ծոռներ և կուսումնասիրեն Մեծ հայրենականի անսպառ պատմությունը, և պոետներ, որ «չեն պղծել իրենց շուրթերն անեծքով», պիտի կրկնեն զոհված բանաստեղծ Հմայակ Նալբանդյանի պատգամի պես հավերժող բառերը.

— Ի՞նչ պապեր ենք մենք ունեցել, ի՞նչ պապեր...

ԿԳԱՄ ՀԱՂԹԱՆԱԿՈՎ...

(Ներկայացնում ենք ըստ արձակագիր ԲԵՆԻԿ ՍԵՅՐԱՆՅԱՆԻ ինձ տված տեղեկանքի)



ՄԱՆՎԵԼ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ
ԵՐԵՄՅԱՆ
(1910—1942)

Վրաստանի ժուռնալիստների պայծառ դեմքերից էր Մանվել Հարությունի Երեմյանը: Ծնվել է 1910 թվականին Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում: Առաջին հանրաշխարհային պատերազմի սկզբներին (1914 թ.) նա իրենց ընտանիքի հետ փոխադրվում է Վրաստան, ավարտում Թբիլիսիի արդյունաբերական-տնտեսական տեխնիկումը, աշխատանքի անցնում Ախալքալաքի շրջկենտրոնում՝ սկզբում որպես Անդրպետտառի բաժանմունքի մթերման կետի վարիչ, ապա՝ շրջգործկոմի հատուկ բաժնվար:

1938 թվականին Մանվելը փոխադրվում է Թբիլիսի, աշխատանքի անցնում «Սովետական Վրաստան» հանրապետական թերթի խմբագրությունում, ղեկավարում թերթի ինֆորմացիայի բաժինը:

Ժուռնալիստի անուրանալի ընդունակությունը, որ նա դրսևորեց խմբագրական աշխատանքի առաջին օրերից, օգնեց նրան աշխուժացնելու և իր կոչման բարձրության վրա դնելու թերթի հատկապես չորրորդ էջը: Գրագետ, վերին աստիճանի պարտաճանաչ, բարեկիրթ, իր և ընկերների նկատմամբ խստապահանջ Երիտասարդը մամուլի աշխատողի օրինակ հանդիսացավ:

1941-ին պայթեց Մեծ հայրենականը, և Մանվել Երեմյանին մենք տեսանք զինվորականի համազգեստով: Ջերմ հայրենասերի կրքով նա նետվեց պատերազմի թոհուբոհը, կռվեց ֆաշիստական զավթիչների դեմ և հերոսաբար զոհվեց Վերջում 1942 թվականին:

Ցավոք, խմբագրություն ուղարկած նրա նամակներից ոչ մեկը չկա: Բայց մենք՝ թերթի հին աշխատողներս, լավ ենք հիշում, թե հաղթանակի ինչ մեծ հավատ կար այդ նամակների ամեն մի տողում:

Երդումի նման էին հնչում ռազմաճակատ մեկնելուց առաջ նրա ասած խոսքերը.

— Կգա՛մ հաղթանակով...

Այն, ինչ չկարողացավ կատարել Մանվելն ինքը, կատարեցին նրա բյուրավոր ճակատային ընկերները:

...ԵՍ ՄԻՇՏ ԱՐԹՈՒՆ ԵՄ

ԳՐԻԳՈՐ
ԳԵՎՈՐԳԻ
ՋՈՒՐԲԱՅԱՆ
(1914—1945)

Վարպետ Գևորգը համեստ մարդ էր, ընտիր կոշկակար: Բարձրահասակ էր, գեղեցիկ, երկար ու թավ բեղեր ուներ: Մացառներ հիշեցնող հոնքերը կամարել էին սև-սև աչքերը, նրան տվել չվերծանվող հմայք ու վեհություն: Թիկնեղ էր, բարի ու անշահախնդիր: Բարեկամների և ընկերների կոշիկները կարելիս կամ նորոգելիս փող չէր վերցնում: Եվ քանի որ նրանց թիվը մեծ էր, վաստակի զգալի մասը իրենը չէր: Չնայած դրան վարպետ Գևորգի կինն ու երեխաները երբեք կարիքի մեջ չէին ընկնում: Զավակներից ավագը Գրիգորն էր: Նա հորից ժառանգել էր այն ամենը, ինչ գեղեցիկ էր, բայց հոր ճանապարհով գնալ չէր ուզում, արհեստավոր դառնալու ոչ մի ցանկություն չուներ: Դեռ մանկուց նվիրվել էր գրքին, գիշեր ու զօր գրում էր ու կարդում, կարդացածը պատմում էր եղբորը՝ Խորենին: Տեսնում էր այդ բոլորը վարպետ Գևորգն ու

ներքուստ ուրախանում: Հետո Գրիգորը փորձեց ոտանավորներ գրել: Թոթովանքներ էին: Ոչ մեկի ցույց չտվեց: Մանկավարժական տեխնիկումում էր սովորում, սկսեց թղթակցել շրջանային թերթին: Երբ ավարտեց տեխնիկումը, ընկերները մանկավարժ դարձան, իսկ ինքը աշխատանքի հրավիրվեց «Սոցարշավի» խմբագրություն իր հայրենի քաղաքում՝ Կիրովականում, ուր ծնվել էր 1914-ին: Բաժնի վարիչ էր, կարճ ժամանակ անց «Սովետական Հայաստանի» սեփական թղթակիցը դարձավ Կիրովականում: 1936 թ. Գր. Զոհրաբյանը գործուղվեց Մոսկվա՝ ժուռնալիստների խմբագրական-հրատարակչական համամիութենական ինստիտուտում սովորելու: Ավարտելուց հետո վերադարձավ Երևան, նշանակվեց «Սովետական Հայաստան» թերթի բաժնի վարիչ: Թերթի նախապատերազմյան տարիների տարբեր համարներում այսօր էլ ընթերցողը կհանդիպի Գր. Զոհրաբյանի ակնարկներին, հոդվածներին ու թղթակցություններին: Ղ. Կոմունու, Գ. Ոսկանյանի, Հր. Քոչարի, Բ. Կարապետյանի, Ս. Նալբանդյանի, Գ. Հայրյանի... մայր թերթի բոլոր երիտասարդ ուժերի հետ 1942 թ. հայրենիքի պաշտպանությանը կամավոր զինվորագրվեց նաև Գրիգորը: Սկզբում նա 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի «Կարմիր զինվոր» թերթում էր աշխատում: Հրամանատարական դասընթացներն ավարտելուց հետո (1943 թ.) Զոհրաբյանը նշանակվում է Թամանյան դիվիզիայի 526-րդ գնդի ականանետային վաշտի հրամանատար: «Թերթում լավ է, բայց այն գրեթե թիկունք է: Ես պետք է միշտ առաջին գծում լինեմ»,— ասում է նա բանաստեղծ գործընկերոջը՝ Արսեն Հովհաննիսյանին, և երկուսի վճիռն էլ լինում է մեկ՝ մեկնել կրակային գիծ: Դիվիզիայի հրամանատարությունը չի մերժում զինլրագրողների խնդրանքը: Հյուսիսային Կովկաս—Կերչ—Սևաստոպոլ—Կրիվոյ Ռոգ-Դնեպրոպետրովսկ — Խարկով — Գոմել—Բրեստ — Լյուբլին — Լոձ—Պոզնան—Օդեր—Ֆրանկֆուրտ— ահա արյան, ավերի, կրակի, մահվան և հերոսության սխրալի այն ճանապարհը, որն անցավ կապիտան Գրիգոր Զոհրաբյանը: 1945-ի ապրիլին 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի 400-րդ, 390-րդ, 526-րդ գնդերը հատուկ առաջադրանք էին ստացել՝ գետանցել Օդերը: Ապրիլի 16-ին, հրետանային նախապատրաստությունից հետո, սկսվեց ուժեղ հարձակումը: Սերգեյ Ղազարյանի (Կազարով) 9-րդ վաշտի հետ կողք-կողքի կռվում էին Հրանտ Բաբայանը, Պապիկ Ավալյանը, Արսեն Հովհաննիսյանը և բազմաթիվ այլ քաջորդիներ: Պապիկի և Արսենի զոհվելուց մի քանի օր հետո՝ ապրիլի 20-ին, երբ արդեն հաղթանակը գրեթե նվաճված էր, թշնամու գնդակը գործեց իր սև ոճիրը, սպանեց 31-ը նոր թնակոխած, սևահոնք ու քաղցրաժպիտ հրամանատարին՝ Գրիգոր Զոհրաբյանին, որը չէր հասցրել դաշտային փոստ գցել կնոջն ու միակ որդուն հասցեագրած սույն նամակը.

«Սիրելի՛ Օլգա, իմ պաշտելի Սպարտակ, եթե այս տարտարոսից անվնաս դուրս գամ, գիտցեք՝ արդեն տանն եմ: Շուտով մեր բանակը կմտնի Բեռլին: Հաղթանակի ցայգալույսը արդեն զենիթ է բարձրանում, հաղթանակը մոտ է... երևակ նրան, ով կհասցնի բաժակ բարձրացնել հաղթանակի կենացը, ազատության կենացը»: Ու մինչ վերջնականապես կգային հաղթանակն ու ազատությունը, կոշկակար Գևորգն ու Շողիկ մայրիկը ստացան երկու սև թուղթ՝ մեկը Գրիգորի, մյուսը՝ Խորենի: Մեկ շաբաթում երկու որդու երկու սև թուղթ՝ նույն ռազմադաշտից: Խեղճ ծնողներ, սիրտ էր պետք, որ դիմանար. կսկիծն ու ցավը միանգամից ներխուժեցին կյանքից ու աշխարհից խռով ամուսինների սրտերը: Ծերացան վշտահար ծնողները ժամանակից շուտ և վախճանվեցին: Նրանց տոհմածառն այսօր նորից է ընձյուղվել, մեծացել է Գրիգոր պապի թոռը՝ Սպարտակի որդին, իր պապի անունով կնքված Գրիգորը: Եվ ամեն-ամեն անգամ, երբ կիրովականյան իրենց խաղաղ բնակարանում հայր և որդի Սպարտակ և Գրիգոր Զոհրաբյանները քուն են մտնում, պատից կախված մի զինվորական լուսանկար կարծես շշնջում է.

— Դուք հանգիստ ննջեք, ես միշտ արթուն եմ... ես ձեզ հետ եմ միշտ...

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. «Զնամյա ռոդինի», 2.9.1943 թ., № 234:
2. Նալբանդյան Ս., «Կայծ», Կ., 14 և 17.2.1965 թ.:
3. Նալբանդյան Ս., Մարտական «Կարմիր զինվորը», Ե., 1981 թ.:

ՍՈՎԻՆՖՈՐՄԲՅՈՒՐՈՅԻ ԹՂԹԱԿԻՑԸ

ՄԿՐՏԻՉ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԼԻԼՈՅԱՆ (1913—1944)

«Մեր Լիլոն այլևս չկա: Խորապես վշտացած եմ: Կորուստը կիսում եմ ձեզ հետ: Համոզված եմ, որ թանկագին Լիլոյի պատկերը ընդմիշտ կմնա մեր հիշողության մեջ»,— 1944 թ. հոկտեմբերի 30-ին Ռումինիայի Տիմոշոարա քաղաքում զոհված Ուկրաինական առաջին ռազմաճակատի սովինֆորմբյուրոյի թղթակից Մը-կըրտիչ Լիլոյանի մահվան գույժը բելոռուսական ռազմաճակատի մարտիկներն իմացան «Պրավդայի» թղթակից Բորիս Պոլևոյի այս հեռագրից: — Նա եղել է իմ մոտիկ բարեկամն ու գրչեղբայրը: Ես նրան մոռանալ չեմ կարող,— Մոսկվայի մեր հանդիպումների ժամանակ հաճախ էր հիշում Կոնստանդին Սիմոնովը և ավելացնում,— Լիլոյի մասին քաղցր հուշեր ունեն Էրենբուրգը, Կալինինը, Կիրսանովը: Երևանում դիմիր Գուրգեն Բորյանին, նա ևս ձեզ Լիլոյի մասին տեղեկություններ կտա: Լիլոն թաղված է Բելգրադի Վուկու Կարադժիչի անվ. զբոսայգում...

Մկրտիչ Հովհաննեսի Լիլոյանը կամ, ինչպես մերձավորներն են կոչել նրան, Լիլոն ծնվել է 1913 թվականի հունվարի 9-ին՝ Կաղզվանում (Արևմտյան Հայաստան): Դեռ մանկուց ճաշակելով եղեռնի ու գաղթի դառնությունները՝ փոքրիկ Մկրտիչը ատելությամբ լցվեց մարդասպանների հանդեպ: Նրա մտքից երբեք չէր հեռանում արյունախում Վիլհելմ Կայզերի լպիրշ ցուցումը. «Հայերից պետք է թողնել մեկ մարդ իբրև էթնոգրաֆիկ թանգարանի օբյեկտ»:

Խորհրդային կարգերի հաստատումը նոր հեռանկարներ բացեց թուրքական յաթաղանից փրկված հայորդու առջև (ուսումնառություն, կոմերիտական-կուսակցական աշխատանք, ժուռնալիստական ընդունակությունների դրսևորում): 1935 թ. 22-ամյա Մկրտիչը անդամագրվում է ԽՄԿԿ-ին: Ուսման պակասը նա լրացնում է Մոսկվայի Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիայում, «Պրավդային» առընթեր թղթակիցների պատրաստման միամյա դասընթացներում (1939 թ.), հետո էլ՝ կուսակցական բարձրագույն դպրոցի (ՎՊՇ) ժուռնալիստիկայի ֆակուլտետում:

Բռնկվեց Մեծ հայրենականը: Սովինֆորմբյուրոն ամեն օր հաղորդումներ էր տալիս մեր երկիրը նվաճող հիտլերյան հրոսակախմբերի և նրանց դեմ մարտնչող խորհրդային քաջարի մարտիկների մասին: «Ինչպե՞ս կարելի է չլինել կրակային գծում, չտեսնել զինվորներին, չծանոթանալ նրանց ապրումներին, բայց գրել, ներկայացնել նրանց»— գիտակցված այս ինքնամեղադրանքը թելադրեց, որ սովինֆորմբյուրոյի Մերձմոսկովյան մարզի հայ թղթակից Լիլոյանը զինվորի շորեր հագնի, ռումբերի և ականների պայթյունի տակ, ավիացիոն և գնդացրային գնդակների տարափի ներքո միանա ռուս, ուկրաինացի, բելոռուս, հայ, վրացի զինվորներին, ուսումնասիրի նրանց «վարքն ու բարքը» և գրչով ու զենքով մարտնչի թշնամու դեմ: Ինը հարյուրից ավելի ակնարկներ, հոդվածներ, պատմվածքներ, ռեպորտաժներ և հրապարակախոսական նյութեր ծնվեցին նրա գրչի տակ: Հարավային (1942 թ.) և Առաջին ուկրաինական (1943 թ.) ռազմաճակատների մարտիկների համար նա ոչ միայն սովինֆորմբյուրոյի թղթակից էր, այլև՝ մարտական ընկեր, խորհրդատու բարեկամ և օրինակելի հայրենասեր: Լիլոյանի ռազմաթղթակցական ճանապարհն ընկընվեց Մոսկվայից, հասավ Կովկաս, այնտեղից՝ Հարավսլավիա և Ռումինիա: Լիլոյանի պարզ, շիտակ, անսասան և մարդամոտ բնավորության մասին դրվատանքով է խոսել խորհրդային ականավոր ժուռնալիստ Պավել Տրոյանովսկին: Լիլոյանի հետ նա ծանոթացել է 1942 թ. հոկտեմբերին Հյուսիսային Կովկասում: Ահա մի պատառիկ «Ժուռնալիստ» ամսագրում տպագրված՝ Պ. Տրոյանովսկու «Մեր Լիլոն» հուշապատումից.

«Ռազմաճակատային բոլոր թղթակիցները մարդատար մեքենաներ ունեին, իսկ Լիլոյին մի ինչ-որ անծանոթ տեսակի փոքրիկ բեռնատար էր հասել: Նա նրբազգաց ու բարի մարդ էր, այդ

պատճառով էլ բառացիորեն ոչ ոքի չէր մերժում, երբ խնդրում էին իր մեքենան: Նա այն տալիս էր հետախույզներին, զենիթայիններին, քաղաքի պարետին, հոսպիտալներին:

Լինում էր, որ շաբաթներ շարունակ նա չէր տեսնում իր մեքենան և միանում էր մեզանից որևէ մեկին: Լիլոն երկու որդի ուներ: Ընտանիքը, չեմ հիշում, Սիբիրում, թե Ղազախստանում էր ապրում: Պարբերաբար, երկու օրը մեկ, նա նամակ էր գրում կնոջը և տղաների համար տարբեր նկարներ նկարում ռազմի դաշտից...»:

Այնուհետև Պ. Տրոյանովսկին տեղեկացնում է, որ թղթակից հայորդին զինվորական տարբեր ստորաբաժանումներում հանդես է եկել դասախոսություններով, առաջին գծում գտնվող զորամասերի հարձակումների մասին ինֆորմացիա հաղորդել Մոսկվա: Հյուսիս-կովկասյան ռազմաճակատից և Կուբանից հետապնդելով թշնամուն, ականատեսը դառնալով խորհրդային ռազմիկների հերոսական սխրանքների, նա փաստաշատ և ճշմարտապատում հաղորդագրություններով էր հարստացնում սովինֆորմբյուրոյի ռազմաճակատային փոստը:

— Շատ և շատ ռազմաճակատային թղթակիցների պատերազմը դարձրեց անվանի գրողներ և բանաստեղծներ: Չեմ կասկածում, որ Լիլոն, եթե չզոհվեր, այսօր պատերազմի մեր ճանաչված փաստագիրներից մեկը կլիներ: Նրա տաղանդն ու գրիչը այդ երկու առավելություններն էլ ունեին:— Մոսկվայում, Չերնյախովսկի փողոցում զբոսնելիս առինքնող վստահությամբ հավաստիացնում էր Կոնստանտին Սիմոնովը: Ականջումս այսօր էլ դեռ հնչում են նրա «Է՞խ, Լիլո՛, Լիլո՛» հոգեցունց բառերը, և մտապատկերիս անտեսանելի ժապավենը պտտվելով կարծես հուշում է.

— Մարդի՛կ, ձեր սրտերում վերաձայնագրեք Բորիս Պոլևոյի հեռագիրը՝ «Չկա՛ այլևս մեր Լիլոն: Խորապես վշտացած եմ: Կորուստը կիսում եմ ձեզ հետ: Համոզվա՛ծ եմ՝ թանկագին Լիլոյի պատկերն ընդմիշտ կմնա մեր հիշողության մեջ»:

ՄԿՐՏԻՉ ԼԻԼՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Հովհաննիսյան Ալ.**—Գրչով ու սվինով, Ե., 1964:
2. ՀՍՀ, 1978 թ., հատոր IV, էջ 614:
3. **Գրիգորյան Սասուն**— Սովինֆորմբյուրոյի թղթակիցը, Կուսակցական խոսք, 1985, № 8, էջ 26—27:

ԶՈՀՎԵՑ ԻՐ ԾՆՆԴՅԱՆ ՕՐԸ

ՍՈԿՐԱՏ ՆԻԿՈԼԱՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ (1920—1941)

Սոկրատ Նիկոլայի Խաչատրյանը Զանգեզուրից է: Ծնվել է 1920 թ. նոյեմբերի 25-ին Ղափանի շրջանի Ճակատեն գյուղում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի տարրական դպրոցում: Աշակերտել է Նիկոլայ Աթաջանյանին, Աշոտ Պետրոսյանին, Տիգրան Անանյանին և այլոց: Հետո Սոկրատն իր ուսումը շարունակել է Ղափանի № 1 (այն ժամանակ յոթնամյա) դպրոցում: Եղել է պիոներ և կոմերիտական ակտիվիստ, դրա համար էլ 1936-ին, դպրոցն ավարտելուց հետո, նրան պահել են դպրոցում որպես ջոկատավար:

Աշոտ Սայունցը (Մարտիրոսյան, ժուռնալիստ), Շավարշ Ավետիսյանը («Սովետական Հայաստան» թերթի խմբագրի նախկին տեղակալ), Աշոտ Մինասյանը (գյուղատնտեսական գիտ. թեկնածու), ղափանցիներ Արտաշես Ղոնյանն ու Միքայել Խարազյանը սիրով են հիշում իրենց դասընկերոջը: Սոկրատի մասին խնդրանքս բավարարելու համար ահա թե ինչ է գրում աշխատանքի և կուսակցության վետերան Սողոմոն Օրբելյանը. «Տասնամյակն ավարտելուց հետո իբրև շնորհալի երիտասարդ, գրագետ ու ակտիվ կոմերիտական նրան հրավիրեցի ինձ մոտ՝ «Ղը-ղընձի համար» ամենօրյա թերթի խմբագրությունում աշխատելու որպես գրական բաժնի վարիչ: Նա այստեղ ընդունվեց կուսակցության շարքերը... 1939 թ. դեկտեմբերին զորակոչվեց կարմիր բանակ: Նրանից մի քանի նամակ ստացա մինչև պատերազմն սկսվելը. ցավոք դրանք չեն պահպանվել: Այդ նամակներից մեկում Սոկրատ Խաչատրյանը գրում էր, որ ինքը գնդի թերթում գրական աշխատող է, զինվորական թղթակից... Նրանից հետո էլ ոչ մի նամակ չըստացա: Միայն մի քանի լուսանկար ուղարկեց»:

Բրեստի բերդամրոցի թանգարանում փընտրում ենք 84-րդ հրաձգային գնդի առաջին վաշտի քաղղեկի օգնական Սոկրատ Խաչատրյանի հետքերը: Թանգարանի ավագ գիտաշխատող Մայա Իոսիֆովնա Գլայզերը ևս մտատանջվում է Սոկրատի համար. նրա ձեռքին է զոհված մարտիկի եղբոր՝ Մխիթար Խաչատրյանի նամակը. «Ե՞րբ է զոհվել եղբայրս, ի՞նչ կոչում ուներ, ի՞նչ պարգևներ, որտե՞ղ է թաղված...»,— հարցերը նրան ևս հանգիստ չեն տալիս: Սոկրատի զինվորական գործունեությունը ճշտելու համար ԽՍՀՄ պաշտպանության մինիստրության Պոդոլսկի զինվորական կենտրոնական արխիվում միայն հնարավոր եղավ պարզել, որ Սոկրատ Նիկոլայի Խաչատրյանը բանակ է զորակոչվել 1939 թվականի դեկտեմբերին Հայկական ԽՍՀ Ղափանի շրջզինկոմիսարիատից: 1940 թ. սովորել է Բրեստի մեկամյա կրտսեր սերժանտական դպրոցում, եղել է ուսման գերազանցիկ (դպրոցի դիրեկտոր՝ Ֆ. Ս. Շիրյան, տեղակալ՝ Մ. Կիսլիցկի): 1940 թ. Բրեստի կրտսեր սերժանտական դպրոցում Սոկրատի հետ սովորել են նաև երկու գերազանցիկ հայ կուրսանտներ՝ Ռ. Գ. Խաչատրյանն ու Ե. Պ. Միքայելյանը: Կրտսեր սերժանտական դպրոցի գերազանցիկ շրջանավարտների այդ խմբում Սոկրատի լուսանկարը զբաղեցնում է ներքևից երկրորդ շարքի երկրորդ տեղը (ձախից սկսած), նրա աջ կողմում Իբրանն է, ձախում՝ Գ. Ա. Լատուշկինը: Արխիվային հետազոտությունները վկայում են, որ ժուռնալիստ մարտիկը ֆաշիստական հորդաների դեմ երես առ երես մարտի է բռնվել կռվի հենց առաջին ամիսներին: Մինչև հոկտեմբեր ամիսը նա անգիջում մարտնչել է Բրեստի և Բելոռուսիայի ամեն մի թիզ հողի համար, կրելով նահանջել և մի օր էլ (1941 թ. նոյեմբերի 25-ին) Բրեստից 40—50 կիլոմետր դեպի հյուսիս-արևելք ընկել է թշնամու շրջապատման մեջ, զոհվել անտառում՝ ռմբակոծության ժամանակ:

Թերթում եմ Բրեստի կրտսեր սերժանտական դպրոցի 1940 թ. շրջանավարտների մայր մատյանը, նայում գերազանցիկ շրջանավարտներ Ս. Ա. Սելեդցովի, Բ. Ս. Լեբեդևի, Կ. Մ. Մարտինովի, Ս. Մ. Կուվալինի, Ի. Զ. Տարասովի, Մ. Ն. Կարլովիչի... և Սոկրատի մյուս դասընկերների (թվով 25 մարդ) սերժանտական լուսանկարներին ու խորհում. տեսնես նրանցից քանի՞սն են զոհվել, քանի՞սն են ողջ, հիշու՞մ են զանգեզուրցի այն քաջ ու խիզախ տղային, որը կյանքից հեռացավ նոյեմբերի 25-ին՝ թշնամու ռումբերի և գնդացիրների ճարճատյունի տակ, չհասցնելով հիշել, որ այդ օրը լրանում է իր քսանմեկ տարին, թե՞ մոռացել էն նրան:

«ԱՎԱՆԳԱՐԴԻ» ՎԱՐԴԱՆԸ

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (1914—1943)

Նա սկզբում ցրիչ էր աշխատում «Խորհրդային Հայաստանի» խմբագրությունում, հետո դարձավ գրաշար, շատ չանցած Վարդանն արդեն գրական աշխատող էր կամ, ինչպես կոչում էին այն օրերին, բրիգադիր՝ արդյունաբերության բաժնում: Առույգ էր, աշխատասեր, համեստ ու կազմակերպիչ: Այստեղից նրան տեղափոխեցին «Ավանգարդի» խմբագրություն որպես կուլտուրայի և կրթության բաժնի վարիչ: 1935-ին «Ավանգարդի» գործուղմամբ Վարդան Կարապետյանը (ծնվ. 1914 թ.) ընդունվեց Երևանի պետհամալսարան: Զուգակցելով աշխատանքն ու ուսումնառությունը՝ երիտասարդ լրագրողը օր-օրի կատարելագործվում էր, շարունակում թղթակցել հանրապետական մամուլին, հատկապես իր սիրած «Ավանգարդին»: Եվ երբ ավարտեց Երևանի պետական համալսարանը, նորից վերադարձավ երիտասարդական թերթ: Մի քանի ամիս պատասխանատու քարտուղար աշխատելուց հետո ՀԼԿԵՄ

Կենտկոմը նրան նշանակեց խմբագրի տեղակալ: 1940 թ. նոյեմբեր: Հայաստանի խորհրդայնացման 20-ամյակի առթիվ մամուլի մի խումբ աշխատողներ պարգևատրվում են Հայկ. ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով: Նրանց թվում է և ջրվեժցի Գրիգորի որդին՝ «Ավանգարդի» խմբագրի տեղակալ Վ. Կարապետյանը:

1941 թ. նոյեմբեր-դեկտեմբեր: Թշնամին գործադրում է ամեն ջանք՝ գրավելու Մոսկվան:

Խորհրդային երկրի մայրաքաղաքի պաշտպանությանն է զինվորագրվում նաև կոմունիստ հայ լրագրողը՝ դառնալով հրետանային գնդի նշանառու: Հրետանային ուսումնարանն ավարտելուց հետո լեյտենանտ Վարդան Կարապետյանը գործուղվում է կրակի առաջին գիծ: Խիզախաբար է նա մարտնչում թշնամու դեմ Սոժի և Դնեպրի վճռական գետանցումների ժամանակ, այստեղից քրոջն ու եղբորը՝ Հռիփսիկին և Աշոտին, տեղեկացնելով. «Տասն օր է, որ կատաղի կռիվներ են գնում գետի ափին... Իմ քաջերը հրետանային հուժկու հարվածներ են հասցնում թշնամուն»: Մեկ ուրիշ նամակում էլ թե՝ «...Շուտով կփշրենք հիտլերականների համառ դիմադրությունը, և նրանք ետ կշպրտվեն Դնեպրի աջ ափը... Հաղթանակը մոտ է»: Վարդան Կարապետյանի նամակները վկայում են, որ նա հաղթանակի պայծառ հավատով և վրեժխնդրությամբ է հետևել թշնամու ոչնչացմանը: Կուրսկի, Խարկովի, Կիևի, Դնեպրոպետրովսկի ազատագրման համար ծավալված մարտերում դասակի հրամանատար և ակտիվ քաղաշխատող (կուսկազմակերպության քարտուղար), լեյտենանտ Կարապետյանը քանի՞-քանի՞ անքուն գիշերներ, հոգու որչափ ցավ ու տառապանք է կրել Շևչենկոյի և Լեսյա Ուկրաինկայի հայրենի հողը հավերժ ազատ տեսնելու համար: Ցավոք 1943-ի վերջերին Վարդանի «սև թուղթը» պղտորեց թե հարազատների, թե ավանգարդցիների անդորրը. զոհվեց մարտիկ լրագրողը Մոսկվայի մատույցներում՝ հաստատ համոզված լինելով, որ Գերմանիան կպարտվի, որ Գյորինգի «կանաչ թղթապանակը» սեով կներկվի:

Ինչպես ավանգարդցիներ Հմայակ Նալբանդյանի, Արտեմ Բաղալյանի, Մկրտիչ Մանուկյանի անունները, այնպես էլ Վարդան Գրիգորի Կարապետյանի անունը հավերժացել է Հայաստանի ժուռնալիստի տան նախասրահում՝ մարմարե հուշատախտակին, Ջրվեժի միջնակարգ դպրոցի մարտական փառքի սրահում և երախտապարտ սերունդների սրտերում:

ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Գրիգորյան Սասուն**—«Լրագրող զինվորը», Ավ., 9 մայիսի 1986 թ., №56, էջ 3:
2. **Սարգսյան Վրույր**—«Արյունով գրեց վերջին տողը», ԵԵ., 26 Նոյեմբերի 1981 թ., № 274, էջ 3:

«Ավանգարդ» թերթի ստեղծագործական կազմը: Առաջին շարքում ձախից առաջինը Վարդան Կարապետյանն է, 2-րդ շարքի ձախից 3-րդը՝ Վախթանգ Անանյանը, 4-րդը Ստեփան Կուրտիկյանն է, 3-րդ շարքի աջից 2-րդը՝ Արամայիս Մնացականյանը, 1932 թ.:

...ԿԱՊԻԵՆՔ ՆՈՒՐ ՈՒ ԵՐՋԱՆԻԿ ԿՅԱՆՔՈՎ...

ԲԱԳՐԱՏ ԱՌԱՔԵԼԻ ՀԱԿՈԲՅԱՆ (1903—1942)

Մինչ կհասնեի Արտաշատ, աշխատանքային ժամն ավարտվել էր, խմբագրությունում ոչ ոք չկար: Ստիպված էի դիմել կուսշրջկոմի օգնությանը: Ագիտպրոպագանդայի բաժնում ուժերը մոբիլիզացրին՝ գտնելու Մեծ հայրենականում զոհված Բագրատ Հակոբյանի՝ «Արտաշատ» թերթի նախկին խմբագրի հետքերը: Եվ ահա Նշավանում ենք: Երկհարկանի, տուֆակերտ առանձնատան ճակատին փորագրված է «Վանիկ Բագրատի Հակոբյան». նշանակում է՝ ճիշտ ենք եկել: Վանիկը տասներկու տարեկան է եղել, երբ հայրը զինվոր է դարձել: Կռահելով, որ իրեն բազմաթիվ հարցերով պիտի «խեղդենք», զոհված ժուռնալիստի որդին ինքնակամ ներկայացնում է հորը. «Պապիս անունը Առաքել էր, տատիս՝ Յուղաբեր: Նրանք ունեցել են երկու որդի՝ Բագրատն ու Հակոբը: Հայրս՝ Բագրատը, ծնվել է 1903 թ. Վեդու (այժմ Արարատ) շրջանի Զնջրլու գյուղում: 1919 թվականին թուրքական յաթաղանից մազապուրծ՝ տատս ընտանյոք տեղափոխվում է Քեշիշքենդ (այժմ Եղեգնաձոր): Ենիչերիները գյուղը հրդեհում են, ձեռքն ընկածներին առևանգում ու սպանում, գյուղը լրիվ ավերվում է: Այսօր գյուղատեղը միայն տարեցներին է հայտնի: Եղեգնաձորում քառամյա դպրոցն ավարտելուց հետո հայրս և իր եղբայրը բազմաթիվ համագյուղացիների հետ ետ են գալիս և հանգրվանում Արտաշատի շրջանի Արփավար (այժմ Նշավան) գյուղում: 1927 թվականին հայրը ընդունվում է կոմերիտմիության շարքերը, դառնում գյուղի կոմբջջի հիմնադիրը, նշանակվում իր ծննդավայրում գյուղխորհրդի քարտուղար: Ուսման ծարավը նրան հանգիստ չի տալիս: Ինքնայրությամբ լրացնում է ուսումնառության պակասը: Նկատի ունենալով հորս կազմակերպչական ձիրքը՝ նրան ընտրում են Բուրատանի, Այգեզարդի և Դիլիջանի այգեգործական միացյալ կոոպերատիվ ընկերության նախագահ: Կուսակցության մեջ ընդունվելը էլ ավելի է ոգևորում հորս, նա որոշում է ամեն կերպ բարձրագույն կրթություն ստանալ, սակայն գյուղի կոլեկտիվացումը հետաձգում է այն: 1930 թ. Արփավարում հորս ջանքերով հիմնվում է կոլտնտեսություն (կոլխոզ): «Մեր գյուղի նախագահը մեր գյուղից պիտի լինի»,— վճռում են կոլտնտեսության նորընտիր վարչության անդամները և նրան ընտրում կոլվարչության նախագահ: Ահա Հայաստանի կոմունիստական բարձրագույն գյուղատնտեսական դպրոցից հորս ստացած դիպլոմը,— ցույց տալով այն՝ Վանիկը շարունակում է:— Հայրս այստեղ սովորել է 1932—1935 թվականներին: Ավարտելուց հետո երկու տարի որպես ագիտատոր և պրոպագանդիստ աշխատել է Արտաշատի կուսշրջկոմում: Որոշ ժամանակ շրջխորհրդի գործկոմի հողբաժվարն է եղել, այստեղից է տեղափոխվել Միչչան (նախագահ): Մի տարում գյուղը «ոտքի» կանգնեցնելուց հետո նա վերջնականապես նվիրվել է իր սիրած գործին՝ ժուռնալիստիկային: Սիմոն Նալբանդյանին «Սովետական Հայաստանի» խմբագրություն տեղափոխելուց հետո հայրս նշանակվել է «Բոլշևիկյան կոլխոզ» (նախկինում՝ «Հարվածային բրիգադ», այժմ՝ «Արտաշատ») շրջանային թերթի խմբագիր...»:

Ու մինչ Նշավանի մշակույթի տան տնօրեն Վանիկ Հակոբյանը կշարունակի ներկայացնել իր հորը, ես ծանոթանում եմ զոհված ժուռնալիստի՝ մասունքի պես պահպանվող հատուկ թղթապանակին: Այստեղ հին թերթերի համարներ են, հին լուսանկարներ, ռազմաճակատային նամակներ: Նրանք տեղեկացնում են, որ «Արտաշատը» տարբեր ժամանակներում խմբագրել են Դավիթ Առաքելյանը, Արշավիր Սոլախյանը, Աղավնի Ստեփանյանը, Իսրայել Հասրաթյանը, Սիմոն Նալբանդյանը, Բագրատ Հակոբյանը, Արիստակես Գրիգորյանը, Վարազդատ Սահակյանը, Խաչիկ Զուռնաչյանը, Գարսևան Հակոբյանը և Նորայր Սահակյանը (Գեղունի):

— Նրանք, գրեթե բոլորը, Մեծ հայրենա-

կանի մասնակիցներ են: Խմբագիրներից Իսրայելն ու Բագրատը զոհվել են, դրա համար խմբագրության միջանցքի հուշատախտակում նրանց նկարները «սևի» մեջ է առնված,— ասում է թերթի աշխատակից Ռուբեն Սարգսյանը և հուշում, որ մեր գրելիք նյութում մոռացության չդատնենք արտաշատցի ամենատաղանդավոր լրագրողին և գրողին՝ Զավեն Մարգարյանին: Չէ՞ որ նա ևս զոհվել է, նա՝ Բագրատի մոտիկ ընկերն ու խորհրդատուն:

— Ամուսինս,— միջամտում է մեր զրույցին մշեցի Հերիքնազ մայրիկը,— 1940 թ. օգոստոսին ժուռնալիստական ակտիվ գործունեության համար պարգևատրվեց Հայկ. ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով: Շրջկոմի քարտուղար Սամսոն Ղազարյանը չէր ուզում, որ Բագրատը բանակ գնա, ասում էր՝ «թերթի համար խմբագիր առայժմ չկա, և դու էլ տարկետում ունես, ու՞ր ես գնում»: Չլսեց, 1941 թ. նոյեմբերի 7-ի երեկոյան ժամը 9-ի մոտերքը եկավ, թե՝ գնում եմ: Ու գնաց:

Ու մինչ Հերիքնազ մայրիկը թաշկինակը կմոտեցնի արցունքալի աչքերին, կզսպի հուզմունքը, Վանիկը շարունակում է.

— Հայրս սկզբից Բաքվում, խորհրդային բանակի քաղաշխատողների դասընթացներում սովորեց երեք ամիս: Նրա հասցեն էր՝ Բաքու—13, փոստարկղ—203, լիտեր 4, կուրսանտ Բ. Ա. Հակոբյան: Հետո ուղարկվեց Հյուսիս-կովկասյան ռազմաճակատ: Գործող բանակում հայրս ծառայել է 789-րդ հրաձգային առանձին գնդի երրորդ գումարտակի գնդացրային վաշտում որպես ավագ քաղղեկ: «Իմ մասին չմտածեք,— կարդում ենք նախկին ժուռնալիստի՝ Կերչից գրած, հագիվ ընթեռնելի մի նամակում:— Շուտով կոչընչացնենք ֆաշիստական շներին և հաջողությամբ կվերադառնանք տուն: Այն ժամանակ հայրենիքի հանդեպ իմ սրբազան պարտքը կատարած լինելով՝ կապրենք նոր ու երջանիկ կյանքով...»:

Նոր ու երջանիկ կյանքով ապրելու բախտ չէր վիճակված ավագ լեյտենանտ Բագրատ Հակոբյանին: Զոհվեց նա 1942 թ. Կերչում՝ հագիվ բոլորած կյանքի 38-րդ գարունը:

ԳՈՐԻՍԵՑԻ ՄԻԿԻՏԸ

ՄԻԿԻՏ
ՍԱՄՍՈՆԻ
ՀԱԿՈԲՅԱՆ
(1910—1943)

Ծնվել է Միկիտը Գորիսում, չքավոր գյուղացու ընտանիքում: Նրա հայրը՝ Սամսոնը, հողագործությամբ և որմնադրությամբ էր պահում իր ընտանիքը: Հոր մահից հետո ութամյա որդու հոգսը ընկնում է մոր ուսերին: Վերջինս ուրիշների համար հաց թխելով մի կերպ պահում է իր ընտանիքը:

Յոթնամյա կրթություն ստանալուց հետո տասնյոթամյա պատանին որպես ուսուցիչ աշխատեց Ղափանի շրջանի Ճակատեն գյուղում: 1928—29 թթ. Գորիսի մանկավարժական տեխնիկումի սովորող էր: 1930 թ. Միկիտն ընդունվում է Երևանի մանկավարժական ինստիտուտ, նախավերջին կուրսից ՀԼԿԵՄ Կենտկոմի կողմից մոբիլիզացվում է և ուղարկվում Գորիս ուսուցչական աշխատանքի:

«1931 թ. սկսած մինչև 1935 թ. աշխատել եմ Գորիսի լրիվ միջնակարգ դպրոցում և մանկավարժական ուսումնարանում որպես մայրենի լեզվի և գրականության դասատու,— կարդում ենք Մ. Հակոբյանի ինքնակենսագրականում: Այնուհետև նա գրում է.— 1935 թ. աշխատում եմ Գորիսի «Ստալինյան դրոշով»-ի խմբագրությունում որպես պատասխանատու քարտուղար»[1]:

Ժուռնալիստական անուրանալի ձիրքով օժտված զանգեզուրցի հայորդուն կուսակցության շրջկոմի բյուրոն նշանակեց շրջկոմի ագիտպրոպագանդայի բաժնի վարիչ, իսկ 1941 թ. մարտի 12-ին նա ընտրվեց Գորսի կուսշրջկոմի 2-րդ քարտուղար:

[1] Տես ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆոնդ 1, ցուցակ 70, գործ 218, թերթ 3:

Մ. Հակոբյանը 1939 թ. ԽՄԿԿ անդամ էր: Նա Գուրգեն Հովհաննիսյանի (թերթի նախկին խմբագիր). Անդրանիկ Ադաբեկյանի, Բագրատ Միրզոյանի և մյուս գործընկերների հետ պատերազմի ծանր օրերին մնաց բարով ասաց յուրայիններին և մեկնեց ռազմաճակատ:

Դաժան բախտ վիճակվեց ժուռնալիստ, կուսաշխատող և մարտիկ հայորդուն: Կերչից գրած նամակներից մեկում կարդում ենք. «Մարո ջան, երևակ էն օրերը, որ դու թերթում էիր աշխատում, իսկ ես՝ շրջկոմում: Հիմա, երբ շուրջս թշնամու ռումբերն ու գնդացիրները են ոռնում, ես քեզ եմ հիշել, հիշել եմ մերոնց: Կարոտել եմ բոլորիդ: Ի՞նչ լուր մեր տղերքից, ո՞վ է գնացել բանակ, ո՞վ է մնացել: Ամուր եղե՛ք, հույսերդ միք կրտրի, վաղ թե ուշ կջարդենք Հիտլերի և նրա շների մոթոր, կվերադառնանք և մեր հայրենի օջախները կծխացնենք: Հավատա՝ քո Միկիտը չի դավանանի քեզ, իր ժողովրդին, իր հողն ու ջուրը:

Համբուրում եմ՝ կոմիսարական իմ փոշոտ շուրթերով և քրտնած ու վիրավոր ճակատս դնում քո սուրբ ձեռքերին:

Հավերժ քո **Միկիտ**:

Գործող բանակ 1942 թ.»

Հասավ նամակը Գորիս: Օջախկուլի № 3 տանը շատ ուրախացան: Բայց կարճ եղավ Մարգո Հակոբյանի և յուրայինների խնդությունը, քանզի չուշացավ և կոմիսարի «սև թուղթը». զոհվեց նա Ղրիմում 1943-ին:

ՐԱՖՖՈՒ ՀԱՄԱԳՅՈՒՂԱՑԻՆ

ԻՍՐԱՅԵԼ
ՍԱՀԱԿԻ
ՀԱՍՍՐԱԹՅԱՆ
(1908—1942)

Ով այցելի «Արտաշատ» թերթի խմբագրություն, նախասրահում, մարմարե հուշատախտակին կկարդա Իսրայել Հասրաթյանի և Բագրատ Հակոբյանի անունները: Թերթի այս խմբագիրները զոհվել են Մեծ հայրենականում: Իսրայել Հասրաթյանը ծնվել է 1908 թ. Իրանում, Սալմաստի գավառի Փայաջուկ գյուղում, մեծահանճար Րաֆֆու ծննդավայրում: Րաֆֆին էր պատճառը, որ նա, չնայած այգեգործի իր մասնագիտությանը, միշտ կապված մնաց գրականությանն ու մամուլին: Իսրայելի ծնողները հողագործ էին: Մինչ Խորհրդային Հայաստան տեղափոխվելը (1922 թ.) փոքրիկ Իսրայելը ստիպված էր օգնել հորը. խճուղու և շինարարության վրա բանվորություն անել: Սալմաստից Վերին Արտաշատ տեղափոխվելուց հետո նրա դեմ բացվեցին կյանքի նոր հեռանկարներ: 1922—1927 թվականներին փայաջուկցի Իսրայելը Արտաշատի կոմերիտական եռանդուն դեմքերից և կոլխոզ-շարժման ղեկավարներից էր: Աշխատեց շրջանի Գյուղանտառ միությունում, սկզբում՝ հրահանգիչ, հետո՝ պատասխանատու քարտուղար, ապա՝ նախագահ: Գյուղանտառ հանրապետական միության աշխատանքի և աշխատավարձի բաժնի վարիչ էր, երբ ընդունվեց Երևանի գյուղատնտեսական ինստիտուտ: Գերազանց առաջադիմությունը և կազմակերպչական շնորհառատ ձիրքը նկատի ունենալով՝ նրան ընտրեցին ինստիտուտի կուսակցական սկզբնական կազմակերպության քարտուղար: 1934 թվականին առաջին կարգի դիպլոմով նա ավարտեց ինստիտուտը՝ ստանալով գյուղատնտես-այգեգործի որակավորում և անմիջապես աշխատանքի նշանակվեց ՀԿԿ Երևանի քաղկոմում որպես ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչի տեղակալ:

Ի. Հասրաթյանի ժուռնալիստական գործունեությունը սկսվեց 1935 թ., երբ որպես պատասխանատու խմբագիր աշխատանքի անցավ Արտաշատի «Բոլշևիկյան կոլխոզ» (այժմ «Արտաշատ») թերթի խմբագրությունում: Շրջկոմի բյուրոյի և շրջգործկոմի անդամ կոմունիստ ժուռնալիստը ոչ մի ջանք չէր խնայում՝ լուսաբանելու գյուղական առօրյան, կոլտնտեսային կյանքի բացերը, ձաղկելու թերությունները, խարազանելու բյուրոկրատիզմն ու ծուլությունը, դրվատելու հողի ազնիվ մշակին, երկիրը շենացնողին: Անհատի պաշտամունքի և ռեպրեսիաների ամենածանր

շրջանում (1937 թ.) Ի. Հասրաթյանը ևս ենթարկվեց հալածանքների: «1937 թ. հուլիսին,— կարդում ենք ՄԼԻ հայկական մասնաճյուղի արխիվում պահպանվող նրա ինքնակենսագրականում,— Ղամարլուի շրջկոմում նստած ժողովրդի թշնամիների անհիմն մեղադրանքով ինձ հեռացրին կուսակցությունից, իսկ կուսկոլեգիան ինձ վերականգնեց»[1]: Եվ ով զարմանք. 29-ամյա իրանահայ (կոմունիստ 1930 թ.) Ի. Հասրաթյանը մեղադրվում էր նրա համար, որ արտասահմանում գտնվող իր եղբոր հետ նամակագրական կապ էր ունեցել...

ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի որոշմամբ Ի. Հասրաթյանն Արտաշատից տեղափոխվեց Երևան և նշանակվեց «Արարատ» գինու և կոնյակի տրեստում ղեկավար աշխատանքի:

...1941 թ. հունիսի 23-ին Երևանի երկաթուղու կայարանում տեղուդադար չկար: Պարտադիր զինակոչն ու կամավոր ռազմաճակատ մեկնելը հազարավոր երիտասարդների կառամատույց էին բերել: Այստեղ էր նաև Թավրիզի հայկական դպրոցի սան Իսրայել Հասրաթյանը: «Ճիշտ է՝ տարկետում ունեմ, չորս երեխաների հայր եմ, բայց միևնույն է, պետք է գնամ:— Այնուհետև Սրբուհուն՝ կնոջը, պատվիրեց.— Խնդրանքս մեկը՝ Ջոնիս ու Ռադիկիս, Ջեմմայիս ու Ժանայիս լավ նայես, որք չմեծանան»:

Մի շաբաթ անց խորհրդային բանակի քաղաշխատողների հատուկ դասընթացներում Իսրայելը կուրսանտ էր: Հայերեն, ռուսերեն, պարսկերեն լեզուների փայլուն իմացությունը, ռազմական տեխնիկային ու տակտիկային արագ տիրապետելը երիտասարդ հայորդուն դարձրել էին բոլորի սիրելին:

— Աշխույժ էր ու կատակասեր, անհրաժեշտության դեպքում՝ անաչառ ու խստապահանջ: Այսպիսին էր 390-րդ հրաձգային գնդի վաշտերից մեկի քաղղեկ Իսրայել Հասրաթյանը,— պատմում է նրա մասին «Կարմիր զինվոր» ռազմաճակատային թերթի նախկին խմբագիր Սիմոն Նալբանդյանն ու ավելացնում,— Իսրայելը իրեն քաջաբար դրսևորեց Հյուսիսային Կովկասում, Թերեքի ափերին և Ղրիմում, երբ մեր զորքերը կենաց ու մահու մարտեր էին մղում մինչ ուղն ու ծուծը զինված գերմանական 22-րդ տանկային դիվիզիայի դեմ: Քաղղեկներ Պապիկ Ավալյանի, Երվանդ Հարությունյանի, Սուրեն Թովմասյանի, Հայկ Պարոնյանի և այլոց հետ Իսրայել Հասրաթյանը հաճախ էր լինում դիվիզիայի հրամանատար Սիմոն Զաքյանի մոտ, նրանից խորհուրդներ և ցուցումներ ստանում...

«Պաշտպանման և հարձակման պլան», «Ինչպես օգտվել ռազմական քարտեզից և տեղանքից», «Հետախուզությունը բանակի աչքն է» և բազմաթիվ այլ թեմաներով ավագ քաղղեկ Հասրաթյանը հաճախ էր հանդես գալիս խրամատներում, ոգեշնչում մարտիկներին: Ու երբ դադարում էին փոխհրաձգությունն ու պայթյունները, նորից նա մտոք տեղափոխվում էր Արտաշատ ու Երևան, զրույցի բռնվում ընկերների, բարեկամների և յուրայինների հետ: Ահա 1942 թ. ապրիլին կնոջը գրած նամակից մի հատված. ...«Սրբուհի ջան, հիմա մեզ մոտ՝ Կերչի թերակղզում, դաժան մարտեր են: Մենք արյան գնով պաշտպանում ենք խորհրդային յուրաքանչյուր թիզ հողը, որ ապրի երկիր հայրենին: Թշնամուն, անշուշտ, պարտության կմատնենք, հաղթանակը մերը կլինի: Այս նամակը գրելուց հետո իմ գումարտակի զինվորներին նորից պետք է գրոհի տանեմ: Գրոհից վերադառնալուց քեզ նորից նամակ կգրեմ:

Սրբուհի ջան, գիտեմ ծանր դրության մեջ ես, երեխաները փոքր են, կարիքը՝ մեծ: Ի՞նչ արած: Եթե ես և իմ ընկերները թշնամու դեմը չառնենք, նա, որ հեռվում է թողել Օդերը, կգա, Արաքսն էլ կանցնի, ինչպես Եվրոպայի բազմաթիվ ժողովուրդներին, մեզ էլ ծունկի կբերի: Նա դա չի տեսնի: Ես մեծացել եմ Արարատի աչքի դեմ, ինձ դաստիարակել է Ռաֆֆու Սամվելը... Աչքս, թեկուզ մտոք, Արարատին հառած, թող զոհվեմ, միայն թե դուք աննվաճ, առողջ և կենսախինդ մնաք: Նամակս երկարեց: Գումարտակն արդեն հավաքվում է: Ցտեսություն և համբույրներ: Կգամ հաղթանակով...»: Վերջին նամակ, վերջին զրույց, վերջին համբույր: Թշնամին պարտվեց: Իրենց հայրենի օջախները վերադարձան «Արտաշատ» շրջանային թերթի նախկին խմբագիրներ և աշխատողներ Սիմոն Նալբանդյանը, Արիստակես Գրիգորյանը, Նորայր Սահակյանը և էլի ուրիշներ: Բախտը դաժան վերաբերվեց թերթի նախկին խմբագիրներ Բագրատ Հակոբյանի և Իսրայել Հասրաթյանի հանդեպ. երկուսն էլ զոհվեցին Կերչում 1942-ի մայիսին:

[1] Տես ՄԼԻ-ի կուսարխիվ, ֆ. 1, ց. 78, գ. 2562:

ՄԱՐԴԸ ՄԵՌՆՈՒՄ Է, ԵՐԲ ԷԼ ՉԻ ՀԻՇՎՈՒՄ

ՍՈՒՐԵՆ ՄԵԼԻՔԻ ՕՔՄԻՆՅԱՆ (1918—1945)

1941-ին Սանամ և Մելիք Օքմինյանները չորս որդի ուղարկեցին ռազմաճակատ: Նրանցից Ռոբենը, Մինասն ու Գրիգորը հայրենի տուն վերադարձան հաղթանակով, զինվորական բլուզներին՝ շքանշաններ ու մեդալներ, նորից ծխացրին հայրենի օջախը, ընտանիք կազմեցին: Ռոբենն այսօր Երևանում է ապրում: ՀՄՊ-ի առաջին խմբի հաշմանդամ է, թոշակառու: Մինասը հայրենի գյուղում վաստակած հանգստի է անցել, Գրիգորը բարի համբավ ունի Իջևանի ավտոտրանսպորտային ձեռնարկությունում: Ռազմադաշտից չվերադարձավ միայն նրանց ժուռնալիստ, բանաստեղծ և լեյտենանտ եղբայրը՝ Սուրեն Օքմինյանը:

— Եթե գնաք Իջևան, երկրագիտական թանգարանում կհանդիպեք հին պարտիզան հորս՝ Մելիք Օքմինյանի լուսանկարին: Հայրս 1937-ին ենթարկվեց ռեպրեսիաների, Եղիշե Չարենցի և Պետիկ Թորոսյանի հետ նույն բանտախցում ենթարկվեց կոտտանքների, հոգեկան և ֆիզիկական տանջանքների և միայն քսաներկու ամիս անց հրաշքով փրկվեց: Թեև «վերականգնվեցին» նրա իրավունքները, բայց թե նրան՝ նախկին դատախազին, էլ պատասխանատու պաշտոն չվստահեցին, որովհետև «ժողովրդի թշնամի էր»: Այդ նույն թանգարանում այսօր այցելուն կտեսնի նաև եղբորս՝ Սուրենի լուսանկարը,— հուզված շարունակում է մեր հեռախոսային հարցազրույցը Մեծ հայրենականի վետերանն ու ավելացնում.— Սուրենի մասին փաստագրական նյութեր՝ նամակներ, լուսանկարներ, ձեռագրեր, կան նաև Սևքարի միջնակարգ դպրոցի թանգարանում...

Սուրեն Օքմինյանը Սևքարի ծնունդ է (1918 թ.): Տարրական կրթությունը ստացել է ծննդավայրում: 1932 թ. Օքմինյանների ընտանիքը տեղափոխվել է Կիրովական: Այստեղ միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Սուրենը վերադարձել է հայրենի գյուղ, զբաղվել մանկավարժությամբ և գրական-ստեղծագործական փորձեր կատարել: Կարճ ժամանակ անց նա արդեն Իջևանի շրջանային թերթի («այժմ «Լենինյան ուղիով») գրական աշխատող էր, հետո էլ՝ կուլտուրայի և կենցաղի բաժնի վարիչը: Օրավուր կատարելագործվում էր նրա գրիչը: Սուրենի տպագրած հոդվածները, ֆելիետոնները, բանաստեղծությունները ու ակնարկները ամենուր ընդունվում էին ջերմությամբ, դրա համար էլ նրան նշանակեցին «Հորհրդային Հայաստանի» սեփական թղթակից Դիլիջանի, Իջևանի, Շամշադինի և Նոյեմբերյանի շրջաններում:

— Պատերազմը չթողեց, որ Օքմինյանի տաղանդը ծաղկի,— ասում է ՀՄՊ-ի վետերան, Իջևանի շրջանային թերթի խմբագիր Սուրեն Նազինյանն ու ավելացնում.—նա ռազմադաշտ մեկնեց կամավոր, հենց կռվի առաջին օրերին: Թշնամու դեմ մարտնչեց Հյուսիսային Կովկասում, Ղրիմում, Ուկրաինայում: Մասնակցեց Բելոռուսիայի, Լեհաստանի ազատագրմանը և զոհվեց Գերմանիայում Մեծ հաղթանակից մի քանի շաբաթ առաջ: Լսել ենք, որ նրա անունը տեղափոխվել է Լեհաստան: Օքմինյանը շարքային զինվորից բարձրացել է մինչև ավագ սպայի աստիճանի: Նրա ռազմաճակատային ստեղծագործությունները մեզ չեն հասել...

«Հայրենիքիս» բանաստեղծությունը Սուրենը գրել է Սիմֆերոպոլում 1941 թ. և մի լուսանկարի հետ ուղարկել մորը: Այն զինվորի ուխտ է, երդում, ծնված ազնիվ սիրուց և հայրենանվիրվածությունից: Ահա այն.

Միլիոնների հետ ելել եմ մարտի,
Ես Հայրենիքիս հինվորն եմ այսօր,
Մոութն Հիտլերի ջախջախեմ պիտի,
Որ դու միշտ ծաղկես, Հայրենի՜ք հազոր:

Էլ ի՞նչ հայորդի, թե իր մոր համար,
Իր հող ու ջրին կյանքն իր չզոհի,
Ով ազնիվ է միշտ, կլինի համառ,
Գերի չի դառնա երբեք հազորին:

Հայրենի՜ իմ հող, երդվո՛ւմ եմ ահա.
Ջահել գլուխս չեմ դնի բարձին,
Մինչև ոսոխին չտամ Ահ ու Մահ,
Մինչև չտեսնեմ Սևքարի բարդին:

Հավատարիմ իր զինվորական ուխտին, հիտլերյան վայրակների դեմ կռվում էր իջևանցի քաջորդին, երբ մի խումբ համագյուղացիների

հետ գյուղի ակումբ գնաց Սանամ մայրիկը՝ նյութական օգնություն ներդնելու Կարմիր բանակի ֆոնդին: Փող չուներ խեղճ մամիկը. ստիպված իր հարսանեկան պսակի արծաթե գոտին նվիրեց և մտոք աստծո օգնությունն աղերսեց: Եկավ 1945 թվականի խաղաղաբեր Մայիսը: Դիմավորեց զինվորամայրը ռազմադաշտից վերադարձող իր որդիներին: Մինասի կրծքին Կարմիր Աստղի երկու, ՀՄՊ-ի ևս երկու շքանշաններ ու Գերմանիայի դեմ տարած հաղթանակի և բազմաթիվ այլ մեդալներ էին փայլփլում: Նույնանման շքանշաններ ու մեդալներ էին զարդարում Ռուբենի և Գրիգորի կուրծքը: Նայում էր մայրը մտասույզ ու կարոտախեղդ և մտքի մեջ կրկնում. «Երնեկ, թե Սուրենս էլ գար, թեկուզ վիրավոր... Նրան էլ պսակեի, հետո մեռնեի...»: Սուրենը չեկավ. տվեց ոսոխին Ահ և Մահ, բայց չտեսավ Սևքարի բարդին. զոհվեց նա կյանքի քսանյոթերորդ գարնանամուտին՝ 1945 թ., Հղերի գետանցման ժամանակ: Իսկ մա՞յրը. նա մինչ մահը շարունակում էր սպասել որդու վերադարձին: Եվ չնայած ամեն անգամ գյուղամիջյան աղբյուրից ջուր տանելիս Մեծ հայրենականում զոհված 260 սևքարեցի քաջորդիների հուշակոթողին կարդում էր նաև իր որդու անունն ու ազգանունը, ներքուստ հպարտանում նրանով, բայց էլի չէր հավատում, թե Սուրենը չկա. չէ՛ որ Մարդը մեռնում է, երբ էլ չի հիշվում: Սուրեն Մելիքի Օքմինյանը միշտ հիշվում է. նրա անունն այսօր հավերժացել է նաև Երևանում՝ Ժուռնալիստի տան նախասրահի մարմարե հուշատախտակին: Հայրենի գյուղում ամեն անգամ հուշացերեկույթների և հիշատակի երեկոների ժամանակ փոքրիկ սևքարեցիները որպես զինվորի սրբազան պատգամ սիրում են քեմերից կրկնել Սուրենի երդումը.

Մինչև թշնամին մահն իր չգտնի,
Հավատա՛, մա՛յր իմ, ես տուն չեմ մտնի...

...ԱՅՍ ՀՈՂՈՒՄ ԾԱՏԵՐՆ ԵՆ ՀԱՆԳՉՈՒՄ

ԱԼԵՔՍԱՆԴՐ
(ԱԼԻԿ) ՈՍԿԱՆԻ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(1925—1943)

«Հայկանու՛շ, սիրելի՛ս, ներիր ինձ, որ այս նամակով քեզ ուրախություն չեմ պատճառում: Պատերազմն այսօր ավարտում է մեր սիրո պատմությունը: Անիծվի պատերազմը: Հիմա ես ոչ թե ծանր վերքերի ցավն եմ զգում, այլ բաժանման: Պատերազմը մեզ բաժանեց ու կիսատ թողեց մեր սիրո հեքիաթը: Իսկ հիմա մեռնում եմ: Ես դա զգում եմ: Նկատում եմ, թե զինքծիշկը ինչպես է հուսակտուր շարժում ձեռքերը: Նա մեղավոր չէ, վերքերս ծանր են:

...Ես մեռնում եմ հոգատար ձեռքերի վրա և դեռ ի վիճակի եմ շարադրել այս նամակը: Թելադրում եմ, իսկ նա գրում է: Ձեռքերս ջարդված են: Բուժքույրը՝ Աննան, նայում է ինձ ու թաքուն արտասվում: Նա դեռ շարունակում է հուսադրել, որ ամեն ինչ լավ կլինի, գիտակցությունս տեղն է, զգում եմ, հասկանում: Ինչ լավ է, որ մարդ գիտակցում է, թե ինչի համար է մեռնում: Ներիր ինձ այս տխուր խոսքերի համար: Ես պետք է գրեի մեր սիրո հուզիչ պատմությունը, որ աշխարհի բոլոր, բոլոր մարդիկ կարդային ու ասեին. «Ի՜նչ լավ է»: Միայն թե ապրեի...

Մնաս բարով, սիրելի՛ս, ես այլևս չեմ տեսնի վաղվա լուսաբացը: Մեռնում եմ՝ հավատալով, որ լավ օր կգա, և ուրիշները կտեսնեն աշխարհի վրա բացվող խաղաղ ու արևոտ առավոտը:

Խնայիր քեզ և իմացիր, որ կյանքը գեղեցիկ է և պետք է լավ ապրել այդ գեղեցկությունը: Հետո, երբ խաղաղ կշնչի այս կրակե հողը, դու այցի կգաս շիրիմս: Գուցե չգտնես, քիչ չեն անանուն շիրիմները: Այս հողում շատերն են հանգչում, և նրանք նույնն են ապրողների համար: Հիշեք բոլորին:

Քո Ալեքսանդր»:

Այս նամակի հեղինակը 242-րդ լեռնահրաձգային դիվիզիայի թերթի սիրված թղթակից Ալիկ (Ալեքսանդր) Հովհաննիսյանն է, ծնունդով Բելեստովո (Վրաց. ԽՍՀ) ռուսական գյուղից: Ալիկն այստեղ ստացել էր միջնակարգ կրթությունն և դեռ հասունության վկայականը տուն չբերած, իրեն որդեգրած հորեղբայր Ոսկանի հետ մեկնել է ռազմաճակատ: Ալիկը փաստավավերագրող Ալբերտ Հովհաննիսյանի հորեղբոր որդին էր: Նա քաջաբար մարտնչեց թշնամու դեմ Տուապսեում, Նովոռոսիյսկում, Գելենջիկում և Մալայա Զեմլյայում: Ռազմածովային ուսումնարանն ավարտելուց հետո 1942 թ. ադմիրալ Հ. Իսակովի ղեկավարությամբ որպես դեսանտային Ալիկը «Կովկաս» ռազմանավի վրա կենաց և մահու մարտեր էր մղում հիտլերականների դեմ Սև և Ազովի ծովերի ափերին: Փոքր ցամաքամասի՝ Միսխակոյի (Մալայա Զեմլյա), ազատագրության համար ծավալված կատաղի մարտերում ցուցաբերած սխրանքի և անվեհերության համար Ալիկը պարգևատրվում է «Խիզախության համար» մեդալով, ստանում սերժանտի կոչում: Մի քանի ամիս անց խաժաչյա և մշտաժպիտ հայորդուն շնորհվում է Կարմիր աստղի շքանշան: Թշնամին նոր ուժերով էր համալրում իր դիվիզիաները և ստիպում, որ Սևծովյան ափերից մերոնք նահանջեն: Բոլորի պես կուրծքը դեմ արած թշնամու մահաբեր գնդակին, կարոտ յուրայիններին և սիրած աղջկան, Գելենջիկում, Նովոռոսիյսկում, Կերչում և Թեոդոսիայում կռվում էր Ալեքսանդր Հովհաննիսյանն ու մարտադաշտից թղթակցություններ ուղարկում դիվիզիայի թերթին, նկարագրում ռազմաճակատի առաջավոր գծի առօրյան, պատմում հերոս նշանառուների, հմուտ ծովայինների, օդաչուների, հետախույզների ու կապավորների, դեսանտայինների ու գնդացրորդների սխրանքների մասին, ոգևորում և հավատացնում. «...կյանքը գեղեցիկ է և պետք է լավ ապրել այդ գեղեցկությունը»: Չորրորդ բարձունքի գրավման ժամանակ, Մալայա Զեմլյայում 1943 թ. թշնամու արձակած արկից ջարդվեցին դիվիզիայի դրոշը բարձունքում ծածանող Ալիկի ջլապինդ ձեռքերը: Արյունաքամ կրտսեր սերժանտին տեղափոխեցին դաշտային հոսպիտալ: Նրա կյանքն անհնար էր փրկել, քանզի վերքերը ծանր էին:

Ալիկ Հովհաննիսյանն ապրեց ընդամենը կյանքի տասնութ գարուն, չհմանալով, որ Մալայա Զեմլյայի պաշտպանությունը տևեց 225 օր:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. Հովհաննիսյան Ալբերտ—«Մեր գյուղի տղերքը», I գիրք, էջ 80—82:

ԽՄԲԱԳԻՐՆ ԷԼ ԶԻՆՎՈՐ ...

ԳՈՒՐԳԵՆ
ԲԵԳԼԱՐԻ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(1907—1943)

Ի տարբերություն իր գրչակից ընկերների հարուստ է Գուրգեն Բեգլարի Հովհաննիսյանի անձնական արխիվը: Այնտեղ բացի նրա կոմերիտական, կուսակցական գործունեությունը հաստատող փաստաթղթերից պահպանվում են նաև երեք ռազմաճակատային նամակ և զինհագուստով մի լուսանկար:

Առաջին նամակում (հասցեն՝ Դաշտային փոստ. 89519, Լիտեր «Ա»), որը գրվել է 1943 թ. փետրվարի 7-ին, կարդում ենք. «Բարև, սիրելի՛ Նվարդ, ջերմ համբույրներս Լալոյին, Լարիսային, Օֆիկին... Մենք բոլորս միասին ապրում ենք հերոսական Կարմիր բանակի հաղթանակներով: Մեր բանակը կենաց և մահու պայքար է մղում՝ հայրենի հողն ազատագրելու գերմանական սրիկաներից: Հեռու չէ այն ժամը, երբ մեր ժողովուրդները կտոնեն Կարմիր բանակի հաղթանակները. թշնամին լրիվ կերպով կջախջախվի: Այն ժամանակ կանանց ամուսիններն ու մայրերի զավակները կվերադառնան իրենց ընտանիքների գիրկը և կշարունակեն իրենց խաղաղ ու ստեղծագործ աշխատանքը: Իսկ նրանց վրա, ովքեր զենքը ձեռքներին փառքով ընկան Հայրենական մեծ պատերազմի ճակատներում, կարմիր դրոշներ կխոնարհվեն և անմահական պսակներ կդրվի նրանց եղբայրական գերեզմաններին...»:

Գուրգեն Բեգլարի Հովհաննիսյանին շատերի պես բախտ չվիճակվեց վերադառնալ յուրայինների գիրկը, շարունակել խաղաղ ու ստեղծագործ աշխատանքը: Նրա շիրմին ևս դրոշ-

ներ խոնարհվեցին և ծաղիկներ դրվեցին: Լավրենտին և Լարիսան անհայտ մեծացան: Ղափանի շրջանի Շիկահող գյուղում մի կին ևս այրիացավ. զոհվեց Նվարդի ժուռնալիստ ամուսինը՝ Գորիսի «Ստալինյան դրոշով» թերթի խմբագիրը 36 տարեկան հասակում:

Գուրգեն Հովհաննիսյանը կուսակցական եռանդուն գործիչ էր: Նրա անձնական արխիվում ցայսօր պահպանվում է Գորիսի կուսշրջկոմի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ կոնֆերանսների մանդատները, իսկ № 45 մանդատը վկայում է, որ նա եղել է Հայաստանի կոմկուսի 12-րդ համագումարի պատգամավոր: Գուրգեն Հովհաննիսյանը 1932 թ. ավարտել էր ՀԿԿ Կենտկոմին կից Ս. Սպանդարյանի անվան կենտրոնական կուսակցական դպրոցը, 1934-ին էլ՝ Հայաստանի կոմունիստական գյուղատնտեսության բարձրագույն դպրոցը, իսկ 1938-ին օգոստոսից երկու ամսով վերապատրաստվել էր Բաքվի կուսակցական բարձրագույն դասընթացներում[1]:

Զոհված ժուռնալիստի և կուսաշխատողի անձնական արխիվում պահպանվում է մի բնութագիր: Մեջբերում ենք այն լրիվ. «ԸՆԿ. Գուրգեն Հովհաննիսյանը 1907 թ. ծնված, սոցդրությամբ բանվոր, կուսանդամ 1928 թ., 1933—34 թ. շրջանավարտ: 1932—33 թ. եղել է կոմ. համալսարանի կուսկազմակերպության անդամ, այդ ժամանակվա ընթացքում կատարել է հետևյալ պարտականությունները. եղել է քաղխմբավար՝ կուսքաղկոմի գծով, իր լավագույն աշխատանքի համար ստացել է հարվածայինի կոչում: 1932 թ. ամառային արձակուրդների ժամանակ արտադրական պրակտիկան լավ կատարելու համար արդարացրել է իրեն, որի համար ստացել է լավ գնահատական: Ընկերը կարողացել է իրեն հանձնարարած պարտականությունները կատարել ճիշտ ժամանակին: Կուսբյուրոն տալիս է դրական կարծիք ընկերոջը կուսաշխատանքի բնագավառում օգտագործելու համար:

ՀԿԳԲ դպրոցի կուսկոլբյուրոյի

քարտուղար՝ **Գևորգյան**

Տեխքարտուղար՝ **Մինասյան»:**

Կուսակցական աշխատանքի բնագավառ: Արխիվային փաստաթղթերի շնորհիվ այսօր կարողանում ենք ասել, որ Գուրգենն աշխատել է ՀԿԿ Մեղրու շրջկոմում որպես ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ, 1934—1935 թթ. եղել է Մարքսիզմ-լենինիզմի համալսարանի ունկընդիր: Գորիսի կուսշրջկոմում նա հրահանգիչ էր, Ապարանի կուսշրջկոմում՝ ագիտ-պրոպագանդայի բաժվար: Նրա գործունեությունն ու օրինակելի վարքագիծը ժամանակին արժանացել են մամուլի ուշադրությանը (տե՛ս ՍՀ, 16 մայիսի 1940 թ.):

Ինչպես աշխատանքում, այնպես էլ մարտադաշտում Գուրգեն Հովհաննիսյանը հայրենանվեր էր, լավատես: Մի՞թե դրա առհավատչյան չէ 1943 թ. մայիսի 4-ին գրած նամակը, ուր, մինչ ձեռքս անցնելը, կարմիր մատիտով ընդգծված են սույն տողերը. «...Սիրելի Նվարդ, մեր ընտանիքը իր պարտքը առանց մնացորդի կատարել է Հայրենական պատերազմի օրերին. այն ամենը, ինչ ինձ համար թանկ էր, տվել եմ Հայրենիքիս, եղբայրներիս, ազգական-բարեկամներին... Եվ ահա այսօր կատարում ենք մեծ Ստալինի № 195 մայիսմեկյան հրամանը: Գերմանական բանակը ապրում է իր կրիզիսը: Նա խորհրդային զենքի հարվածների տակ կքայքայվի, այն ժամանակ մեր ժողովուրդը կտոնի հաղթանակի տոնը...»:

Հաղթանակի տոնից երկու տարի առաջ՝ 1943 թվականին ԴՓ № 12389, լիտեր «Ա». հետադարձ հասցեով Ղափանի № 1 փողոցի վրա գտնվող հյուրանոցի № 27 սենյակ բերվեց Նվարդ Գրիգորի Հովհաննիսյանին հասցեագրված իր զինվոր ամուսնու եռանկյունի նամակը, իսկ մինչ այդ ուղարկած՝ ժուռնալիստ մարտիկի նախկին (22/4.43 թ.) նամակին դրոշմված էր՝ «Ստուգված է, զինվորական ցենզուր: Մախաչկալա, № 6»: Հենվելով նամակներին կնիքված ամսաթվերի և սպրդած տեղանունների վրա (տեղանքը պատերազմի տարիներին արգելված էր նամակներում նշել), պարզ երևում է, որ Գորիսի շրջանային թերթի խմբագիրը բանակ է զորակոչվել 1942-ին, սովորել է Թբիլիսիի զինվորական դպրոցում, այնուհետև որպես Հարավային ռազմաճակատի հրաձգային դիվիզիայի զինվոր և լեյտենանտ քաջաբար մարտնչել է թշնամու դեմ Մախաչկալայում, Գրոզնիում, Մոզդոկում:

«Ես լավ եմ,— գրել է նա վերջին նամակներից մեկում,— Դաղստանի չքնաղագեղ բնությունը, որտեղ հերոսաբար գործել է Հյուսիսային Կովկասի ժողովուրդների լեգենդար հերոս Շամիլը գրեթե 30 տարի (սրանից 80 տարի առաջ), այժմ ծաղկել է: Այդ գեղեցիկ բնությունը գեղատեսիլ տեսք է ընդունել. ծաղկել են ծառերը, կանաչել սարերը... Նրանք նույնպես նախապատրաստվում են ողջունելու մայիսմեկյան տոնակատարությունը, իրենց քաջարի պաշտպան հերոսական Կարմիր բանակին են ողջունում, նրան, որը Կովկասյան նախալեռներում ջախջախեց մարդկության ամենաոխերիմ և կատաղի թշնամուն՝ գերմանաֆաշիստական ավազակային զորքերին: Այդ բնությունը ձմռանը ամեհի ու կատաղի է, իսկ գարնանն ու ամռանը՝ խաղաղ ու գեղեցիկ»:

Խաղաղ ու գեղեցիկ բնություն տեսնելու համար քանի-քանի անգամ է ժուռնալիստ մարտիկը մտովի տեղափոխվել իր հայրենի Սյունաց սարերը, խմել սառնաղբյուրների պաղպաջուն ջուրը, հիշել իր փոքրիկներին ու նորից ղեկավարելով հրաձգային գումարտակը, նետվել մարտի: Զոհվելուց առաջ Գորիսի «Ստալինյան դրոշով» շրջանային թերթի (1936—1940 թթ.) խմբագիրը միայն հասցրեց փոստարկղ գցել ևս մի եռանկյունի նամակ, ուր գրված էր. «Նվարդ ջան, հույսդ մի՛ կտրիր, երեխաներին լավ նայիր: Ուղարկում ես ատեստատս: Մայիս ամսից այդտեղի ռազմական կոմիսարիատից ամսական կստանաս 440 ռուբլի: Գրիր քո, երեխաների, Սաթիկի, մայրիկի, հայրիկի, քույրիկի և Արամի երեխաների մասին: Արամ[1]ից եթե նամակ կըստանաք, հասցեն ինձ ուղարկեք: Տեսնու՞մ ես՝ Սուրիկիս մասին ոչինչ չեմ գրում... Սիսիանից ի՞նչ տեղեկություններ ունես... Գրիր այնտեղի կյանքից մանրամասը: Բարևիր Խիկարին, Դրեվին, Գուրգենին, Արփիկին, պապիկին, հարևան-բարեկամներին: Մնամ քո նամակին սպասող՝

միշտ քո Գուրգեն Հովհաննիսյան

22.4.43 թ., պատերազմի 22-րդ ամիս»:

Մի քանի ամիս անց՝ 1943 թ. նոյեմբերին, Գուրգեն Բեգլարի Հովհաննիսյանի «սև թուղթը» գուժեց Գորիս: Կյանքից ընդմիշտ հեռացավ ժուռնալիստական բյուրեղյա մի կերպար, որը հաճախ էր սիրում իր ելույթներում և ընկերների մոտ կրկնել Բելինսկու հանճարեղ խոսքերը. «Հայրենասիրությունը, ում մոտ էլ որ լինի, ապացուցվում է ոչ թե խոսքով, այլ գործով»:

«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԽՄԲԱԳԻՐԸ

ՆԵՐՍԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՊՈՂՈՍՅԱՆ (1905—1943)

Առաջին համաշխարհային պատերազմի ծանր օրերին թուրք մարդասպանները չխնայեցին Հարությունին: Նրան և իր չորս որդիներին սպանեցին: Հրաշքով փրկվեց միայն Ներսեսը: Նրա աչքի դեմ քուրդ ասկյարները թուրքական բեկերի հրամանով հենց իր հայրենի գյուղում՝ Հարություն-Մոջարում (Զիլանի շրջան) սրախողխող արեցին հարյուրավոր հայերի: Տեսավ տասնամյա հայ մանչուկը գեհենական այս ողբերգությունը, տեսավ և ատելությամբ լցվեց բոլոր տեսակի բռնակալների հանդեպ: Որքանոցից որքանոց ընկավ (Դիլիջան, Պողոսքիլիսա): Բատրակություն արեց մի կտոր հաց վաստակելու համար: Խորհրդային կարգերի հաստատումը և Երևանի «Արարատ» կոնյակի գործարանում աշխատանքի անցնելը պատանի Ներսեսի կյանքում բեկումնային եղան: 1924 թ. կոմերիտմիության Կենտկոմի ուղեգրով նա ընդունվեց Թբիլիսիի Անդրկովկասյան կոմունիստական համալսարանի հայկական մասնաճյուղ: Երկու տարի անց ՀԼԿԵՄ Երևանի քաղկոմի և ՀԼԿԵՄ Կենտկոմի պատասխանատու աշխատող էր: 1932—1935 թթ. Ներսեսը Բաքվում հետևում էր Կարմիր պրոֆեսուրայի դասընթացներին (մանկավարժության ճյուղ), հաճախում էր Մարքսիզմ-լենինիզմի Բաքվի համալսարան, միևնույն ժամանակ դասախոսում Բաքվի մանկավարժական ինստիտուտում: 1935 թ. հոկտեմբերին Ն. Պողոսյանը նշանակվում է Շուշի քաղաքի կուսակցական դասընթացների

[1] Հիմք՝ 20.8.1938 թ., ՀԿԿ Գորիսի շրջկոմի № 3/70 տեղեկանքը և ՀԿԿ կենտկոմի 22.10.1938 թ., № 5181 գրությունը՝ Ղուկասովի և Ծատուրովի ստորագրությամբ:

տնօրեն, այստեղից տեղափոխվում է Երևան և պաշտոնավարում Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտում (այժմ ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղ) որպես ուսումնական մասի վարիչ[1]:

Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտում աշխատած տարիներին նա միաժամանակ դասախոսում էր կուսպատմության ինստիտուտում և Երևանի պետհամալսարանում: Նկատի ունենալով Ն. Պողոսյանի պատմական հարուստ գիտելիքներն ու հասարակական-քաղաքական ակտիվ գործունեությունը՝ ՀԿԿ Կենտկոմը 1937 թ. փետրվարին նրան նշանակում է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի խմբագիր: Ենթարկվելով ռեպրեսիաների տարիներին բնորոշ զրպարտությունների և հալածանքների՝ 1938 թ. կեսերին մանկավարժ գիտնականն ազատվում է ժուռնալիստի իր զբաղեցրած պաշտոնից և նորից անցնում գիտա-մանկավարժական գործունեության, այս անգամ արդեն՝ ԵՊՀ-ում պատմության ֆակուլտետի դեկան: 1941թ. Ն. Պողոսյանը կամավոր մեկնեց Կարմիր բանակ: Մեծ հայրենականին նրա ունեցած մասնակցության մասին ահա թե ինչ է գրել ռազմաճակատային մամուլի նախկին խմբագիր Արամայիս Մնացականյանն իր «Հայ ռազմիկների հերոսության տարեգրությունը» գրքում. «Հայրենիքի համար մղվող մարտերում զոհվեց «Սովետական Հայաստան» թերթի նախկին խմբագիր ընկեր Ներսես Պողոսյանը: Պատերազմի առաջին օրերից ընկ. Ն. Պողոսյանը մեկնեց ռազմաճակատ և կատարում էր ղեկավար քաղաքական աշխատանք միավորումներից մեկում: Նա սովետական Կովկասի պաշտպանների մեջ դաստիարակում էր հայրենասիրություն և արիություն: Թերեքի ափերից մինչև Կուբան հարձակողական մարտերին մասնակցեց նա, իր քաջարի օրինակով ոգևորելով զինվորներին... Դաժան կռիվներից մեկում Ն. Պողոսյանն ընկավ հերոսի մահով»[1]:

[1] Տես ՄԼԻ-ի հ. մ. կուսարխիվ, ֆոնդ 1, ց 70, գործ 1897, թերթ 7՝ ՀԿԿ Կենտկոմի որոշումը Ա. Խանջյանի ստորագրությամբ:

[1] Տես նշված գիրքը, Ե., 1947 թ., էջ 369:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՎ ԵՎ ՆԱՄԱԿՆԵՐՈՎ ՃԱՆԱՉՎՈՂ ՀԱՅՐԸ

ՀԱՅԿ
ՍԵԴՐԱԿԻ
ՃՇՄԱՐԻՏՅԱՆ
(ՄԱՐՏՅԱՆ)
(1910—1941)

Կոմերիտմիության հանրապետական գրեթե բոլոր միջոցառումներին տարիներ առաջ մասնակցում էինք թե՛ Յուրին, թե՛ ես:

Յուրին ՀԼԿԵՄ Ստեփանավանի շրջկոմի առաջին քարտուղարն էր: Թեև նա օգնում էր ինձ՝ հայտնաբերելու Մեծ հայրենականում զոհված ստեփանավանցի արվեստագետներին, բայց երբեք չէր բացում իր ներաշխարհը: Երբ ընկերներով 1975-ին ծաղիկներ էինք դնում Անհայտ զինվորի գերեզմանին, Յուրիի աչքերում արցունքի ծովացած շիթեր երևացին: Բնական համարեցի, չէ՛ որ ես էլ էի հուզված. հորս էի ուզում հիշել, չէի կարողանում. նրան ճանաչում եմ միայն լուսանկարով: Ըստ մորս պատմելու հայրս՝ Սերոբ Թորոսյանը, 1903-ի ծնունդ է, գաղթել է Սասնո Քաշենք գյուղից, աշխատել է գյուղում նալբանդ, 1942-ին զորակոչվել է բանակ: Մի քանի ամիս Հոկտեմբերյանի շրջանի Լուկաշինի անվան պետտնտեսությունում է եղել, մայրս գնացել է նրան տեսակցության: Այստեղ՝ թիկունքում է կազմվել հայկական մի դիվիզիա: Որքան ինձ այսօր հայտնի է՝ այն 408-րդ հայկական հրաձգային դիվիզիան է եղել: Հորիցս մենք վերջին նամակը ստացել ենք Մայկոպից: Հետո, տատիս պատմելով, դեռ 1945-ի ձմռանն էլ հորս տեսնողներ են եղել: Թե երբ, որտեղ, ինչպես է կռվել ու զոհվել հայրս, ինչ զինվորական կոչում կամ պարգև է ունեցել— մեզ անհայտ է: Նրա հինգ փոքրիկներս, աշխարհի չարին ու բարուն անտեղյակ, երբ տուն էինք գալիս, տեսնում էինք, որ տատս երկաթե մահճակալին հենված ծխում է երկար-երկար և գոգնոցի ճոթով բանտում արցունքի հոսքը, հետո էլ սաստում մորս, որ լացը կտրի, հորդորելով՝ «Տղիս պատիվը բա՛ր պահի: Մեռնողի հետևից են լացում: Զինվորի համար արցունք չե՛ն թափի»:

— Մեր ճակատագրերը նման են: Կարծես իմ մանկության մասին ես պատմում: Հայրս էլ է զոհված: Ես էլ նրան միայն լուսանկարով և նամակներով եմ ճանաչում: Դու ասացիր, որ հորիցդ միայն մի նկար է պահպանվել: Ես հիշեցի մեր պատից կախված՝ հորս ռազմի լուսանկարը, նրա նամակներն էլ են հետաքրքիր...

Ու էլ ոչինչ չի ավելացնում Յուրին:

Տարիներ են անցել, գրող Վիկտոր Բալայանն ու ժուռնալիստ Վալերի Հարությունյանը, քաջատեղյակ նախաձեռնությանս, մի օր էլ ինձ են հանձնում դեղնած, եռանկյունի նամակներով լի մի ծրար և հնությունից փայլը կորցրած զինվորական մի լուսանկար՝ «Հայկ Ճշմարիտյան. Յուրիկից» մակագրությամբ: Ահա դրանք:

Նամակ առաջին

«Սիրելի Լուսիկ, դեկտեմբերի 31-ին մեր ապրելավայրից ճանապարհվեցինք գնդացրային դպրոց, ուր հասանք հունվարի 3-ին: Ճանապարհին նոր տարվա առիթով Սուրենի հետ հեռագիր ուղարկեցինք: Այժմ ես և Նիկոլայը գտնվում ենք նույն դպրոցում... բավականին հարավում ենք, համարյա Ուկրաինայի սահմանի մոտ. քարտեզի վրա կարող ես գտնել Գոմել քաղաքը և Պոլեսեն, նրանց արանքում ենք: Այստեղ սովորելու ենք մեկ տարի ութ ամիս, դառնալու ենք լեյտենանտ... Ստեփանավանցի տղերքով միասին ենք, արդեն սովորել ենք բանակի կյանքին, և մեր օրերը բավական ուրախ են անցնում: Այստեղ կկոփենք մեր մարմինները, կարգին կտիրապետենք զենքին և ռուսերենին...

Իմ մասին շատ խոսեցի, որովհետև շատ ես անհանգստանում: Հապա ինչ անեն նրանք, ովքեր Ֆինլանդիայի ձյունապատ լեռներում ամիսներով անքուն և անտուն կռվում են կամ մեռնում: Դժվարությունները ու հաջողությունները ստեղծված են մարդկանց համար: Ծինելս հագնում եմ, գնում ընթրիքի: Ետ կգամ, կշարունակեմ...

Լուսի՛կ ջան, գրիր նորություններից, ձեր կյանքից, կամ «նոր դուրս եկած գազեթից, բանից»: Տեսնու՞մ ես, ես որքան մանրամասն եմ գրում, չնայած որ այդքան չի կարելի... Սկսվեց երեկոյան ստուգումները, շտապում եմ:

Կարոտալի բարևներով՝ **Հայկ**

6/1.40 թ.:

Հասցեն է՝

ԲԽՍՀ, Պոլեսկի մարզ, Կապատկևիչի շրջան, Միշենսկոյի փոստային բաժանմունք, ԴՓ-12, լիտեր-Ժ, 1-5»:

Մինչ այս նամակը գրելը, մինչև հերթական զինծառայության մեկնելը Հայկ Ճշմարիտյանը Ստեփանավանի շրջանի «Սոցիալիստական աննասնապահություն» թերթի խմբագիրն էր: Ծնվել է նա 1912 թ. Գյառգյառ գյուղում: Տարրական կրթությունը ստացել է ծննդավայրում, միջնակարգը՝ Ստեփանավանում:

1927—1930 թթ. սովորել է Ստեփանավանի անասնաբուժական տեխնիկումում, ավարտելուց հետո նշանակվել է ենթաշրջանային գլխավոր մասնագետ-գյուղատնտես:

Մարտիկ ժուռնալիստի արխիվային մյուս փաստաթղթերը տեղեկացնում են, որ նա ակտիվ մասնակցություն է ունեցել գյուղի կոլեկտիվացմանն ու սոցիալիստական շինարարության վերելքին: Նկատի ունենալով Հայկի հասարակական-կազմակերպչական շնորհառատ ձիրքն ու տնտեսագիտական ունակությունները՝ ՀԼԿԵՄ Ստեփանավանի շրջկոմը նրան գործուղել է սովորելու Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում: Գերազանց առաջադիմությամբ համալսարանն ավարտելուց հետո (1938 թ.) Հայկ Ճշմարիտյանն ընդունվում է Մոսկվայի համալսարանի ասպիրանտուրայի հեռակա բաժինը, վերադառնում Ստեփանավան և աշխատում դպրոցում որպես ուսուցիչ: Կոմունիստ Հայկ Ճշմարիտյանը բացի գյուղատնտեսական, ֆինանսա-տնտեսագիտական գիտելիքներից և մանկավարժական հմտությունից ուներ նաև գրելու ձիրք և քաղաքական մեծ պատրաստականություն, դրա համար էլ կուսակցության Ստեփանավանի շրջանային բյուրոն նրան միաձայն նշանակեց շրջանային թերթի խմբագիր:

— Այն ժամանակ,— պատմում է Ճշմարիտյանի մասին կուսակցության և աշխատանքի վետերան Արշավիր Մելիքյանը,— հեշտ չէր գտնել մեկի, որ կարողանար թերթի խմբագիր աշխատել: Հայկը դեռ փոքր հասակից բանաստեղծություններ, պատմվածքներ էր գրում, թղթակցում մամուլին: Դրա համար էլ, երբ նա եկավ Ստեփանավան, մի քանի ամիս չանցած «Սոցիալիստական աննասնապահությունը» (այժմ «Փարոս») իր թեմատիկայով, հոդվածների բովանդակությամբ, գեղարվեստական ու լեզվաոճական մա-

կարդակով դարձավ բոլորին հոգեհարազատ: Ափսոս, երկար չտևեց մեր հրճվանքը. 1939-ի նոյեմբերին Հայկը կանչվեց բանակ:

Նամակ երկրորդ

Այն գրվել է առաջին նամակից ճիշտ մեկ ամիս հետո՝ թվագրված է 6.2.40 թ.: Հասցեն նույնն է: Տանից, յուրայիններից բաժանված, հայրենի բընաշխարհին կարոտած 27-ամյա Հայկը կնոջը՝ Լուսիկին, «մեղադրում է» նամակներ չգրելու մեջ և հիշեցնում. «Տղաներից որևէ մեկը, երբ նամակ է ունենում, մյուսներն ասում են «տանցույ» (պարիր), որ նամակդ տանք: Ես դեռ չեմ պարել... Լուսիկ ջան, Նիկոլը Հայկուշից երեք ծրար էր ստացել: Որոշեցի նրանից մեկը վերցնել և ահա մեռյալ ժամին չեմ քնել, նստած քեզ նամակ եմ գրում: Պատկերացնում եմ քո կյանքը: Ի՞նչ կյանք, դա կարող է միայն երազ կոչվել. իրականությունից շատ է հեռու: Այդ մասին չեմ ուզում քեզ հիշեցնել, որ չտխրես... Դպրոցում բոլորը միջնակարգ կրթություն ունեն (իհարկե ռուսական), բոլորից մեծը ես եմ թե՛ կրթությամբ, թե՛ տարիքով: Մեր գնդի կուսկազմակերպիչն եմ և պատի թերթի խմբագիրը: Մի կերպ ռուսերենով «ջարդում եմ» ժողովներում և դաս պատմելու ժամանակ: Այնպես որ խելքը գլխին մարդը, ուր էլ գնա, պատիվ կունենա...

Գրի՛ր, ո՞նց են ապրում ձերոնք, մերոնք, ուրիշները: Ի՞նչ նորություններ կան Հայաստանում, Ստեփանավանում, գյուղում: Մեկ-մեկ թե «Պրավդայում» կարդամ Հայաստանի մասին, ուրիշ թերթ այստեղ ձեռքներս չի ընկնում:

Կարոտալի բարևներով՝ **Հայկ»:**

Նամակ երրորդ

Մեկ շաբաթ անց՝ 12/2.40 թ., Հայկ Ճշմարիտյանն իր նոր նամակը այսպես է սկսել. «Իմ այս նամակը նվիրում եմ իմ անդրանիկ տղային, որին դեռ չեմ տեսել...»: Այնուհետև տեղեկացնում է, որ 1941 թ. սեպտեմբերին կավարտի գնդացրային դպրոցը, կգա Հայաստան, կտեսակցի յուրայիններին, կգրկի իր այնքան սիրած, բայց դեռ չտեսած անդրանիկ որդուն:

«Հանրակացարանում շաշկի էինք խաղում,— կարդում ենք նամակում,— երբ մեր ռուս ընկերներից մեկը եկավ և ասաց՝ «Ճշմարիտյան, կոնցերտ իզ Արմենի...»: Բոլոր հայերս հավաքվեցինք լենինյան անկյունում. ռադիոն հաղորդում էր Սայաթ-Նովայի երգերը... Հուզվեցինք: Կարծես ձեզանից մեր կարոտն առանք... Ա՜խ, մեր երգը... Դուն էն գլխենը... Լոռվա հորովելը... Ինչպե՞ս, ինչպե՞ս ես եմ կարոտել բոլորիդ՝

Երնեկ-երնեկ երազ լինիմ,
Թռնիմ մոտդ, մայրիկ ջան...

Լուսի՛կ, ինչպես գիտես, ես ոչ ոքի նամակ չեմ գրում, բայց ամենքի մասին ուզում եմ տեղեկություններ ունենալ: Թե կարող ես, վեպանման մի նամակ գրիր: Գուցե շատացել է չարչարանքդ, ոչի՛նչ, հաղթահարի՛ր. մեկ և կես տարի հետո ամեն ինչ նորմալ կընթանա: Եթե Յուրիին էլ Ջուլիետայի նման պահես և նրա պես երկու տարեկան դարձնես, ես քո պարտքը մինչև կյանքիս վերջ հազիվ կարողանամ մարել...»:

Ավա՛ղ, ի՞նչ իմանար կուրսանտ գնդացրորդը, որ էլ բախտ չի վիճակվի տեսնելու իր փոքրիկ Յուրիին և Ջուլիետային:

Ի՞նչ իմանար, որ մեկուկես տարի հետո պայթելու է Մեծ հայրենականը՝ Երկիր մոլորակից խլելով 50 միլիոն զոհ, որ իր հայրենի Գյառգյառում պիտի նոր-նոր հուշարձան հայտնվի՝ վրան փորագրված՝ «Հավերժ փառք 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում զոհված մեր համագյուղացիներին», նրանց թվում և՝ Հայկ Սեդրակի Ճշմարիտյանին:

Նամակ չորրորդ

«Երկար ժամանակ (իմ տարկետման տարիներին) ես շատ անհարմար էի զգում, որ բանակ չեմ գնացել: Բարձր խոսում և պատմում էի հայրենիքի պաշտպանության մասին՝ առանց նրա զինվորը լինելու: Ոչի՛նչ, այս պահին, երբ գերմանա-իտալական հրձիգների վառած իմպերիալիստական պատերազմի հրդեհի լեզվակները լիզում են մեր երկրի սահմանները, նման պահերին խորհրդային քաղաքացու, էլ չեմ ասում Լենինի-Ստալինի մեծ կուսակցության անդամի համար, չկա էլ ավելի մեծ պատիվ, քան աշխարհի ամենաուժեղ և խաղաղասեր բանակի շարքերում ծառայելը:

Սիրելի Լուսիկ, այդ նույն հպարտության զգացումով պետք է աշխատես և՛ դու, և՛ մեր ընտանիքի մնացած անդամները: Սրանով ես արտահայտում եմ ոչ միայն իմ և Նիկոլի, այլև խորհրդային երկրի ողջ ժողովուրդների կամքը»:

Սիրո, հայրենանվիրվածության, մարդասիրության, ազգանվեր դաստիարակության օրինակելի վավերագիր է մարտիկ լրագրողի նամականին: Հայկ Ճշմարիտյանի նամակները, որպես սուրբ մասունք, այսօր հանախ է վերընթերցում իր երեխաներին Յուրի Ճշմարիտյանը, չէ որ այդ նամակներում տրոփում է հայրենանվեր մի սիրտ, կարճատև մի կյանք:

Նամակ հինգերորդ

Գրվել է այն 1940-ի փետրվարի 25-ին: Տեղեկացնում է, որ պետք չէ անհանգստանալ. ինքն արդեն զինվորական «երդում է տվել», գընալու է Երևի Մոգիլև կամ Լվով:

Նամակ վեցերորդ

Այն ծնվել է 1940-ի մարտի 7-ին: Երևում է, որ գնդացրորդ կուրսանտի «քեֆը» լավ չէ: Կյանքի, մարդու, աշխարհի մասին խորհրդածությունները նրան բերել է փիլիսոփայական այն եզրահանգման, որ «Լավ է մարդիկ ապրեն թեկուզ կարճատև, բայց մարդավարի...»: Նամակի երկրորդ էջում Ճշմարիտյանը կնոջը հիշեցնում է, կատակում. «Ջուլիետային մեկ-մեկ քեզ օգնության կանչիր: Յուրին ինչքան էլ մեծ ու ծանր լինի, Ջուլետս նրան «կխեղդի»: Ժիրիկի լեզվով ասած՝ նա «ամենակարող է»:

Անհայր մեծացած Ջուլիետա Ճշմարիտյանն այսօր քիմիական գիտությունների թեկնածու է, դոցենտ, աշխատում է Երևանի պետական համալսարանում և ամեն անգամ, երբ թերթում է «Փարոսի» նախապատերազմական համարները, թվում է, թե նրա նախկին խմբագիրը հարցնում է. «Դու բոլոր հոդվածներս, ստորագրված նյութերս կարդացե՞լ ես, աղջիկս: Հիշո՞ւմ ես ինձ, թե արդեն մոռացել ես. քառասունհինգ տարի է անցել մեր բաժանումից: Խոստացել էի տուն վերադառնալ, քեզ մի սիրուն տիկնիկ բերել, բա՞յց... չեկա: Չեկա՝ ինձանից անկախ, ների՛ր, աղջիկս: Կարդա՛ և հիշիր Մարզպետունու խոսքերը՝ կարծես ես գրած լինեմ. «Երդվում եմ ձեր առաջ, երդվում եմ հավիտենական անունով, երդվում եմ իմ հայրենիքի արևով և այս սուրբ գերեզմանով, որ ես չեմ վերադառնա այլևս իմ ընտանյաց գիրկը, չեմ մտնի իմ հարկի տակ, մինչև վերջին հաղթացին չհալածեմ հայրենի սահմաններից...»:

Խմբագիր գնդացրորդ Հայկ Ճշմարիտյանը հավատարիմ մնաց Գևորգ Մարզպետունու իր ուխտին: Եվ երբ գերմանական վայրագները ներխուժեցին խորհրդային սահմանից այս կողմ, լոռեցի քաջորդու շուրթերը 22նջացին Մուրացանից ևս մի երկտող. «Եթե պիտի մեռնենք, ապա թող այդ լինի սուրը մեր ձեռին և կռվի դաշտի վրա: Անարդար կյանքից ավելի, ազատ մահն է գովելի» («Ռուզան» դրամայից):

Նամակ յոթերորդ

18 մարտի 1940 թ.: Տնային, անձնական հարցերի մասին է:

Նամակ ութերորդ

3 ապրիլի 1940 թ.:

«Լուսիկ ջան,

ինձ շատ հետաքրքրեց Լուսժողկոմատի իմ անունով ստացված նվերը, բայց չհասկացա, թե ինչ են ուղարկել, ինչու և երբվա համար: Մի գովասանագիր էլ մնաց խմբագրության դարակում...»: Տեսնես պահպանվո՞ւմ են այդ նվերն ու գովասանագիրը, հանձնվե՞լ են որևէ թանգարանի, թե՞ կորել են անհետ կամ ննջում են զոհված ժուռնալիստի այրու հարսանեկան սնդուկում որպես հավերժասուրբ մասունքներ:

Նամակ իններորդ

1940 թ. ապրիլի 26-ին գնդացրային դպրոցի կուրսանտն իր մանկավարժ կնոջն ուրախացնում է. «Ես արդեն երեխաների համար կոշիկներ եմ գնել, բատինկաներ՝ շատ գեղեցիկ: Երևի շորերիս հետ կուղարկեմ մայիսի վերջերին: Շուտ ուղարկելու հնարավորություն չունեմ, թե չէ կուղարկեի: Ձմեռվա համար շատ լավ կլինի, մինչև 26-համարի մեծություն ունեն: Յուրաքանչյուր զույգը 16 ռ. արժե: Իմ թոշակը հավաքվել էր՝ 120 ռ., խանութում հանգստյան օրը հանդիպեցի և վերցրի: Երկու զույգ չէին տալիս: Ես փողը տվեցի տղաներից մեկին, նա վերցրեց ինձ համար: Յուրիկս ու Ջուլիկս թող ուրախանան: Մյուս անգամ փող հավաքելուց մորս և քեզ համար մի հարմար բան կուղարկեմ:

Նկարվելու համար բոլորս ենք չարչարվում, ի՞նչ արած. ոչ լուսանկարիչ կա, և ոչ էլ մենք ենք քաղաքում, որ նկարվենք և շուտ-շուտ ուղարկենք: Երեխաների հետ միասին մի օր գնացեք Ստեփանավան, Ռուբիկի մոտ, նկարվեք, փողը ես այստեղից կուղարկեմ...»:

Նամակի մեջբերումներն ինքնին հաստատում են, որ Հայկ Ճշմարիտյանը եղել է արտացավ ամուսին, ուշադիր և հոգատար հայր, անկեղծ հայրենասեր: Տանից հեռու նրան տանջողը նորից յուրայինների հոգսն էր, չէ որ երեխաները փոքր էին, վաստակող ձեռքը մնացել էր միայն Լուսիկը: Զինվորի բոլոր անհանգստություններն ու ապրումները օբյեկտիվորեն պատճառաբանված են:

Նամակ տասներորդ

6 հունիսի 1940 թ.

Վերջանում է այսպես. «Ես շատ լավ եմ, Նիկոլը՝ նմանապես. մեր մասին չմտածեք, ձեզ լավ պահեք: Կովի-բանի մասին ապահով կացեք— ոչինչ չկա և չի լինելու:

Կարոտալի բարևներով՝ Հայկ»:

Մինչև իր եղերական մահը անսասան զինվորը հավատով էր լցված խաղաղության և մարդու հանդեպ: Պատերազմները բռնկվում են, երբ մեռնում են արտացավությունը, սերն ու հավատը: Հայկ Ճշմարիտյանի սիրո և հավատի լուսաստղը միշտ անաղարտ, միշտ ճանաչափայլ ու միշտ լուսաշատ մնաց:

Նամակ տասնմեկերորդ

27 հունիսի 1940 թ.

«...Լուսիկ ջան.

Քո ուղարկած լուսանկարները ուղղակի իմ զրուցակիցներն են: Համարյա մեր ողջ վաշտը բոլորիդ էլ նկարով ճանաչում է: Մեծագույն հաճույքով եմ նայում նրանց: Իմ ամբողջ հարստությունը՝ քո նկարը և երկու երեխաներիս, ամփոփել եմ կուստոմսիս մեջ: Դա այնպիսի հարստություն է, որ ժամանակի ընթացքում աճում է և մեծանում...»:

Հայկ Ճշմարիտյանի շառավիղներն այսօր իրոք մեծ հարստություն են: Երեսունմեկամյա զինվորը քսանհինգ տարուց ավելի է, ինչ արդեն պապիկ է: Նրա բոլոր թոռներն այսօր ունեն մի նշանաբան՝ հարազատ մնալ պապի պատգամներին. սիրել աշխարհը, սիրել մարդուն, միշտ պաշտպան կանգնել հայրենիքին, խաղաղությանն ու ժողովուրդների բարեկամությանը:

Նամակ տասներկուերորդ

1940 թ. օգոստոսի 7-ի նամակը տեղեկացնում է, որ Լուսիկին ժողկրթաժնում համապատասխան աշխատանքով չեն բավարարել, և թերթի նախկին խմբագիրը ստիպված նամակով դիմում է Մացակ Պապյանին (ըստ երևույթին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդ) և խնդրում օգնել:

Նամակ տասներեքերորդ

Ծ՞րթ է գրել՝ պարզ չէ: Անձնական նամակ-մենախոսություն է՝ կնոջ հետ, կյանքի և մարդկային հարաբերությունների վերլուծություն՝ լի պայծառ լավատեսությամբ մարդու և նրա գալիքի հանդեպ:

Նամակ տասնչորսերորդ

19 սեպտեմբերի 1940 թ.

«Սիրելի Լուսիկ,

Երեխաների խնամքը քո ամենամեծ համալսարանական քննությունն է, չնայած այն քեզ չի տալու կրթական ատեստատ, բայց կտա խորհրդային քաղաքացիություն՝ մեր հասարակության ամենամեծ գնահատականը. կվաստակես իմ հավերժական սերը, հարգանքն ու երախտիքը...

Հայրիկիդ լավ նայիր, մեկ-մեկ խմիչքով մըտիկ արա, խաթրից դուրս չգաս, թող հանգիստ և ուրախ ապրի: Նեղությունը նրա հասակին վտանգավոր է... Գրիր-տեսնեմ՝ ձերոնք ինչպե՞ս են: Կարոտով համբուրում եմ քեզ, երեխեքին, մերոնց: Բարևներս հաղորդիր հարևաններին, ընկերներիս, մեր լավ կամեցողներին...

Քո **Հայկ»:**

Նամակ տասնհինգերորդ

21 սեպտեմբերի 1940 թ.

«...Այսօր Դրոյի հետ առավոտյան դուրս եկանք քաղաք՝ էհ, ի՞նչ պետք է հետաքրքրի մեզ այս փոքրիկ քաղաքում՝ միայն գրախանութն ու գրադարանը: Գրադարանում նստեցինք, մի քանի ամսագիր նայեցինք: Դրոն նայեց «Սպարտակ» վեպը՝ ռուսերեն: Մեծ հետաքրքրությամբ ես երկրորդ անգամ այն կարդացի (մեկ անգամ կարդացել էի հայերեն): Կարդացի Սպարտակի նամակը իր կնոջը: Հոգեկան բավականությունը և հանգիստը գտնում եմ ազատ ժամերին ընթերցանության մեջ: Թե ի՞նչ գրքեր են ընթերցածներս՝ որոշակի ասեմ. գեղարվեստական, պատմական և քաղաքական: Մարքսի և Էնգելսի 1-ին և 2-րդ հատորները պայուսակումս են...»:

Այնուհետև գնդացրային դպրոցի կուրսանտը, նկատի ունենալով, որ իր բացակայությունը ազդած կլինի ընտանիքի ապրելակերպի վրա, կնոջը հուսադրում է, ոգևորում՝ հավաստիացնելով, որ մի տարի հետո ինքը լեյտենանտի կոչումով կվերադառնա, և ամեն ինչ լավ կլինի. «Քո ամբողջ աշխատանքը կլինի իմ և երեխաների խնամքը... Իմ ստանալիքը լրիվ կբավարարի մեր ընտանիքին: ...Դուրս գալով հայկական, հատկապես Լոռվա գյուղական միջավայրից, մարդը հաղորդակից է լինում մարդկության ստեղծած դարավոր մշակույթին և քաղաքակրթությանը: Կյանքի ամենամեծ և երջանիկ պահերից մեկը ճամփորդելն է. դա սոսկ միջավայր փոխել չէ, այն աշխարհ տեսնել և այն հասկանալ է նշանակում...

Դեռ ինչե՞ր, ինչե՞ր են մեզ սպասում. քեզ հետո ճանապարհորդելը մեր անծայրածիր հայրենիքում և արտասահմանում մի՞թե պիտի ինձ համար երազանք մնա... Բարի՛ նայիր աշխարհին: Այն ե՞րբ է եղել, որ մութից հետո լույսը չի բացվել...

Համբուրում եմ բոլորիդ՝ Քեր **Հայկ»:**

Նամակ տասնվեցերորդ

Ծրարը չի պահպանվել, նամակում էլ նշում չկա, բայց երևում է, որ գրված է 1940-ի հոկտեմբերին: Մեջբերում ենք մի քանի տող, որոնք պարզ հուշում են, որ Հայկ Ճշմարիտյանը հետևողական է եղել իր արտահայտած մտքերի հանդեպ, քաջ գիտակցելով, թե ինչ են ներկայացնում իրենցից Լուսիկին ուղարկած իր նամակները. «...Եթե մի գրող-խմբագիր լինի և հավաքի բոլորը, կստացվի մի լավ գիրք՝ նվիրված ընտանեկան հարցերին, երեխաների դաստիարակությանը: Այդ նամակները կարդացողը կտեսնի, կընկալի մի ամբողջ աշխարհ՝ մարդկային հոգեբանության, ապրումների, բարոյականության և սիրո մասին, գաղափար կկազմի տնտեսության և քաղաքականության մասին... Անկախ ամեն ինչից նամակներս որքան պարզ, այնքան բարդ են ստացվում. դա կապված է իմ ներաշխարհի հետ... Միակ ճշմարիտը մարդու սիրտն է, որի խորքերը լեզվով անհնար է բացահայտել, ինչևէ: Կյանքը բարդ է: Չխեղճանաք:

Բարևներով և կարոտով դրոշմում եմ համբույրներս բոլորիդ թուշիկներին:

Քեր **Հայկ»:**

Նամակ տասնյոթերորդ

28 հոկտեմբերի 1940 թ.

«Սիրելի Լուսիկ,

...Նամակ ստանալը մեր այստեղի կյանքի ամենահետաքրքիր և ուրախ պահերից մեկն է: Բայց գրելը քիչ դժվար է, ավելի ճիշտ գրելու նորություն չի լինում, քանի որ մեր կյանքն ամեն օր նույնությամբ կրկնվում է:

Պտտվիր, պտտվիր կարուսել,
Ես քո երգը վաղուց եմ հյուսել...

Ինչ լավ է ասել Տերյանը: Առավոտվա ժամը 6-ին վեր ենք կենում, 10 րոպե զբաղվում մարմնամարզությամբ, սպորտով: Սկսվում է դասը՝ դրսում կամ լսարանում: Երկու դասից հետո նախաճաշում ենք: Հետո՝ նորից դաս, 8-րդ դասից հետո ճաշ են տալիս, այնուհետև մեկ ժամ հանգիստ և նորից երկու դաս և զենքերի ստուգումմաքրում, որից հետո ընթրիք և 1,5 ժամ՝ ազատ ժամանակ: Դրան հաջորդում է շարքով զբոսանքը, հետո քնում ենք երկու հարկանի մահճակալների վրա, որ նոր են սարքել: Այո, բոլորը գրում եմ, որպեսզի պատկերացնես իմ առօրյան և չանհանգստանաս: Ծանրոցի, թաթմանների և ֆուֆայկաների համար շնորհակալ ենք: Նիկոլայն է հագնում... Այսօր կարդում էի Լաֆարգի հիշողությունները Մարքսի ընտանիքի մասին: Ժենի Մարքսը իր ամուսնու առաջին ընթերցողն ու քննադատն էր, դու էլ եղիր իմ հեռավոր նեցուկն ու երեխաներիս գուրգուրող մայրը:

Կարոտով և օդային համբույրով սիրտը չի հագենում, ի՞նչ արած. մնա առողջ և համբերատար:

Անդավաճան սիրով՝ **Հայկ»:**

Թերևս մեկնաբանեինք Հայկ Ճշմարիտյանի բանակային նամակներից յուրաքանչյուրը, բայց երբ մտուրերում ենք նրա մտքերը, համոզվում ենք, որ իրոք «սիրտը և նամակը, որքան էլ խոր լինեն, չեն դատարկվի»:

Նամակ տասնութերորդ

1940 թ. հոկտեմբերի սկզբներին էր: Զեփյուռ մայրիկը իր տնամերձ բոստանում Արշալույսի, Նապոլեոնի և Լիզայի հետ կարտոֆիլի բուգլիցով էր զբաղված: Յուրիկն ու Ջուլիկը բակում տուն-տուն էին խաղում: Լուսիկը արևածաղկի կոթուկներն էր դարսում, երբ գյուղի փոստատարը հպարտությամբ բակ մտավ.

— Մա՛մ, հայրիկից նամա՞կ է եկել,— Ջուլիետայի հարցին հետևեցին փոստատարի «աչքդ լույս» բառերը: Ծրարը բացեց Լիզան: Ու երբ հասնում էր նամակի վերջը, բարձրաձայն ընթերցեց եղբոր գրածը. «Լուսիկ ջան, Զեփյուռի խաթրը մեկ-մեկ առ, թե չէ տանը շատ նեղվելով, նրան էլ կնեղացնես, հետո կոիվ կըլի, միասին ապրելը կդժվարանա: Հիշու՞մ ես, որ համալսարան էի ընդունվել, Ալեքսի քեռին ասաց. «Աէրոպլան քշող Ափունանց աղջկանը ձեռքիցդ չգցես: Որ ետ գամ, նրան կհանդիպեմ և շնորհակալություն կասեմ...»:

Ու մինչև Լիզան կավարտեր նամակը, Զեփյուռ մայրիկը լսողություն դարձած հետևում էր նրա ամեն մի բառին, մտքին, համբուրում որդու զինվորական լուսանկարը, չզգալով, որ աչ-

քերից գլորվող արցունքները լվանում են գոգնոցից կառչած թոռան թաթիկները:

Նամակ տասնիններորդ

13 հոկտեմբերի 1940 թ.

«Լուսի՛կ, իմ սե՛ր,

նամակներիս շուտ-շուտ ուղարկելը կարծես թե քեզ կասկածանքի մեջ է գցում. չլինի՞ թե պատերազմը սկսվելու է: Հանգի՛ստ մնա. Գերմանիան մեզ հետ խաղաղ գոյակցության դաշինք է կնքել: Ուրիշ էլ ո՞վ այսօր մեր դեմ դուրս կգա: Համենայն դեպս մենք պետք է մարզվենք և վարժվենք, սովորենք տիրապետել զենքին: Զենքին տիրապետելը հզորացնում է հայրենիքի պաշտպանությունը: Մեր երկիրը, մեր պետությունը դեռ երիտասարդ են՝ 20—23 տարեկան: Ինչպես մարդու, նրա օրգանիզմն էլ դեռ նոր-նոր պիտի պնդանա: Ես այս բոլորը հուշում եմ, որ դու չվախենաս: Իսկ եթե պատերազմ լինի, ի՞նչ կարևոր է՝ ես Բելոռուսիայում եմ, թե Հայաստանում. միևնույն է՝ զինվորը ամեն տեղ զինվոր է, եթե նրան հայրենիքն է կանչում...

Ինչ բան է մարդ արարածը: Տղա է ծնվել-ապագա զինվոր: Ես նրա հայրն եմ, նրան դեռ չեմ տեսել, բայց կարոտից գժվում եմ: Գնա՛, գնա՛ Ստեփանավան, խմբագրություն. լուսանկարչին խնդրիր իմ անունից, թող երեխեքիս (քեզ էլ կենտրոնում) նկարի և էն մեր Դեբեդի ձորի մի քնքուշ ծաղկի, մի անթառամի հետ ծրարիր և ուղարկիր ինձ: Լուսիկ ջան, նամակ գրելուց էլ ձանձրացա: Տեսնես, էդ ո՞նց են վեպ գրում, ես ժուռնալիստ եմ, խմբագիր, արդեն թղթերից հոգնեցի: Ոչ արևը, ոչ կարոտը, ոչ համբույրը էլ չեն կարող սիրտս դատարկել: Սիրտս քեզ եմ ուղարկում:

Նամակիդ սպասող՝

հավերժ քո ամուսին և քո երեխաների հայր

Հայկ Ճշմարիտյան:

(Ազգանունիս նայի՛ր, է՛, Ճշմարիտյա՛ն, չէ՞ մի՝ Պրավդա. ծիծաղ): Հասցես նույնն է՝ Բելոռուսիա: Հետո՝ քո անգիր արածը»:

Կարդում, կարդում ես մոտ հիսուն տարվա վաղեմություն ունեցող, դեղնած ու քրքրքրված այս նամակները, որոնք իրենց տիրոջից արդեն մեծ են տասնինը-քսան տարով և ակամայից զարթնում են քո մեջ անգլիացի մեծ գրող Սամուել Սմայլսի մարգարեական տողերը. «Տարիների մեծագույն թիվը դեռևս չի վկայում կյանքի երկարատևության մասին. մարդու կյանքը չափվում է այն բանով, թե նա կյանքում ի՛նչ է արել, ի՛նչ է զգացել»:

Հ. Ճշմարիտյանի վերջին լուսանկարը:

Հայկ Ճշմարիտյանը կյանքը զգացել է խոր և արել է այն, ինչ միայն հերոսին է վայել՝ զոհվել հանուն Հայրենիքի, հանուն Մեծ գալիքի:

Նամակ քսաներորդ

27 հոկտեմբերի 1940 թ.:

Հայկ Ճշմարիտյանի նամակները հոգեբանական, մանկավարժական նամակներ են, լի փիլիսոփայական խորհրդածություններով: Նրանք երբեմն թողնում են արձակ բանաստեղծության տպավորություն: Իրենց հուզական լիցքով, պատկերավոր մտածողությամբ, երևույթների մատերիալիստական մեկնությամբ մեկ անգամ ևս վկայում են, որ իրոք Ճշմարիտյանը մոսկովյան ասպիրանտուրան ավարտելուց հետո լուրջ, խորաթափանց գիտնական կարող էր դառնալ: «Իմ երեխաները պետք է լինեն շատ խելացի, հասկացող և սկզբունքային: Վերջինս փոքր հասակում նրանց մոտ հանդես է գալիս կապրիզի ձևով,— գրում է նա կնոջը (նամակ № 20, էջ 2) և խորհուրդ տալիս,— հանկարծ չլինի թե երեխաներին ծեծով վախեցնես: Երեխաների աշխուժության վրա (ուժի ու խելքի) շատ մի զարմանա, դա բնական երևույթ է. գլխավորը այժմ նրանց հասակին համապատասխան բնական ընդունակությունների զարգացումն է, իսկ ընտանեկան դաստիարակությունն այստեղ հանդիսանում է հիմնականը»:

Մարդը բոլոր ժամանակներում սովորելու և դաստիարակվելու կարիք ունի՝ այս է հիմնականում ժուռնալիստ զինվորի նամակների հիմնական բովանդակությունը:

Նամակ քսանմեկերորդ

«Եթե շարունակ պետք է մենակ ինքդ խոսես, միշտ իրավացի կլինես»— Օնորե դը Բալզակի հանձարեղ այս զգացում-դիտողությունը իր նամակագրության ընթացքում ուշադրության կենտրոնում էր պահում Հայկ Ճշմարիտյանը: Նա սիրում էր կարդալ իր և իր հետ միասին ծառայող իր եղբոր՝ Նիկոլային հասցեագրած նամակները, վերլուծել ուրիշների մտքերը. գալ ճիշտ եզրահանգման և նոր ապա պատասխանել մարդկանց: Ուշադրությունից զատ հոգատարություն և սրտացավություն պետք է ցուցաբերվի նամակագրի (և բոլորի) նկատմամբ: Հարկավոր է տեսնել դիմացինի մեջ գեղեցիկը, լավը, ազնիվն ու մնայունը, քաջալերել նրան: Միջավայրը, հասարակական երևույթները, քաղաքական առօրյան պետք է ճիշտ ընկալել և կարողանալ ճիշտ գնահատել, պետք է տեսնել, զգալ սեփական երջանկությունը—ահա հարցեր, խնդիրներ, դրույթներ, տեսակետեր, որոնք սրփրված են նախկին մանկավարժ լրագրողի զինվորական նամակներում: «Լուսիկ ջան... քո կյանքի կարճատև, բայց երջանիկ պահը դու տեսնում ես երեխաների հետ խաղալու մեջ,— կարդում ենք Հայկի № 21 նամակում:— Դա ծնողական օրինական հրճվանք է և բախտավորություն, որից պետք է օգտվի յուրաքանչյուր ծնող, իսկ անշնորհք ծնողը պետք է տանջվի...:

Լուսիկ ջան, սիրիր, գուրգուրիր Ջուլիկիս և Յուրիկիս, երջանկացիր նրանցով: Երևի քո նման մայրերին է նկատի ունեցել Մաքսիմ Գորկին, երբ գրել է. «Փառաբանենք Մայր-կնոջը, որի սերը արգելքներ չի ճանաչում, որի կրծքով է կերակրվել բովանդակ աշխարհը: Մարդու մեջ գեղեցիկ ամեն ինչ Արևի ճառագայթներից է և Մոր սիրուց»: Լավ է ասել, չէ՞: Ո՛ղջ մնա: Համբուրում եմ: Քո **Հայկ»:**

Նամակ քսաներկուերորդ

16 նոյեմբերի 1940 թ.

Գնդացրորդ-լեյտենանտ— այսպիսին էր Հայկ Ճշմարիտյանի զինվորական մասնագիտությունը: Մինչդեռ ռազմատեխնիկական գիտելիքներից բացի նա իրեն նվիրել էր նաև պատմա-ռազմական գիտելիքների ձեռքբերմանը: Ալեքսանդր Մակեդոնացու, Նապոլեոնի, Կուտուզովի և Սուվորովի մասին փաստագրական գրականությունը անբաժան էր նրա պայուսակից: Լինել ինտերնացիոնալիստ, լինել քաղաքակիրթ, կյանքի գլխավոր պայմանը համարել ազնիվ աշխատանքը, տեսնել և գնահատել դիմացինի արժանիքները, բարեկամությունը ապացուցել գործով, քաջություն ունենալ տեսնելու և վերացնելու սեփական թերությունները— այս բոլորը նա շոշափել է իր զինվորական նամակներում: Հավատի զգացումը Հայկի նամակների հոգեբանական, դաստիարակչական զարդն է՝ լեցուն լավատեսությամբ և անաչառությամբ: Ահավասիկ մի հատված 1940 թ. նոյեմբերի 16-ին գրած նամակից. «...Լուսիկ ջան, միջազգային դրության մասին շատ չանհանգստանաս— ամեն ինչ գնում է շատ խաղաղ: Երևի Մոլոտովի և Հիտլերի գրույցի մասին թերթերից իմացած կլինես: Դա հազվագյուտ բարեկամություն է և հարգանք երկու երկրների միջև: Մոլոտովը Բեռլինում այնպիսի հարգանքի է արժանացել, որպիսին հայտնի չէ պատմությանը»:

Բայց ինչու՞, ինչու՞ հավատիրմ չմնաց իր կրնքած խորհրդա-գերմանական անխախտ դաշինքին Հիտլերը: Ինչու՞ խմբագիր-զինվոր Հայկ Ճշմարիտյանը դարձավ գնդացրորդ և մարտիկ: Ինչո՞ւ փշրվեց մարդու հավատը: Մի՞թե Գյոթեի և Հայնեի Գերմանիան պիտի սպաներ Պուշկինի, Լերմոնտովի, Տուրգենևի թոռներին, ավերեր նրանց տուն-թանգարանները, կործաներ Վարշավայում Միցկևիչի արձանը, Բուդապեշտում ողջ-ողջ այրեր Ճանոր Պետեֆիի ծոռնուհուն:

Ինչու՞, ինչու՞ փշրվեց 30-ամյա հայ զինվորի հավատը: Ինչու՞ այրիացավ Լուսիկը, ինչու՞ որբացան Յուրիկն ու Ջուլիետան, ինչու՞ զինվորը տուն չվերադարձավ...

Նամակ քսաներեքերորդ

31 դեկտեմբերի 1940 թ.:

«Սիրելի Լուսիկ: Գրում ես, թե մենք շատ լավ ենք, մեր մասին չմտածես... իհարկե, նամակով ասենք թե չմտածեցի: Կհավատա՞ս...

Հեռվից հեռու ձեզ համար եմ միայն տանջվում: Զգում եմ, որ սասանվել են արդեն ընտանիքիս նյութական և հոգեկան ամրությունները: Հույսը, որով ապրել և ապրում է ամբողջ մարդկությունը, իր դերը կկատարի: Բոլոր կարգի դժվարություններն ու նեղությունները անցողիկ են և ժամանակավոր: Հիմնականը մարդու աշխատանքային անունն է, որն ամենամեծ փաստաթուղթն է և բնութագիրը: Այն կապրի ներկայումս և ապագայում...»:

Եվրոպայի արտում անտես աճող պատերազմի սաղմերը կարծես նախազգուշացնում էին Բեյլոռուսիայում ծառայող հայ զինվորին, որ հուսադրի յուրայիններին, բայց պատերազմ հրահրող մարդկանցից հույսը չկտրի: Եվ երբ գընդացրային դպրոցից Հայկ Ծշմարիտյանը տեղափոխվեց արդեն Գոմել (այստեղի նրա հասցեն էր՝ փոստարկղ—21, Լիտեր— «Դ»), նրա մեջ արդեն մի ներքին սարսափ էր գլուխ բարձրացրել. չլինի՞, թե պատերազմ լինի, և ինքն էլ այդպես իր միակ տղային չտեսած զոհվի:

Նամակ քսանչորսերորդ

Այստեղ չկա էլ ոչ հասցե, ոչ տարի, ոչ ամիս-ամսաթիվ. նամակն սկսվում է այսպես.

«Սիրելի Լուսիկ, չնայած հաճախակի են փոփոխվում տեղս և հասցես՝ բայց նամակներիս հերթականությունն ու կարգը չեն խախտվում, դա, իհարկե, իմ և քո ուշադրությունն է միմյանց հանդեպ: Այսօր՝ 8.1.41 թ. թե ես և թե Նիկոլը նամակներ ստացանք ձեզանից: Շատ ուրախ եմ քեզ և երեխաներին առողջ տեսնելու համար (ուր է թե տեսնեի): Քեզանից այնքան եմ գոհ, որ այլևս տեղ չունեմ ուրիշներից գոհ լինելու: Իմացի՛ր, կշեռքի ծանր կողմն անցնելը մարդկության մեծամասնության հատկությունն է, որը հիշեցնում է նրանց կենդանական անցյալը, վախկոտ ներկան և երկչոտ ապագան: Մարդկության գիտակից փոքրամասնությունը կյանքի մասին ունի հետևյալ կարծիքը. կյանքին միայն նա է արժանի, ով միշտ պատրաստ է մահվան, որովհետև գոյության կռվում վախկոտներն ու երկչոտները ավելի շուտ կանհայտանան: Իսկական մարդը, որը լրիվ տարբերվում է կապիկից, դա այն հազվագյուտ մարդն է, որը հավասար չափով է մտածում իր և ուրիշների (թեկուզ այլ դասակարգի) գոյության մասին: Ավելի արժանավորը ուրիշի գոյությունը էլ ավելի բարձր է դասում...»:

Նամակ քսանհինգերորդ

31 մայիսի 1940 թ.:

Լուսիկ ջան, թեև դու չես գրում, բայց պատկերացնելով ասեմ՝ ձեր ընտանեկան հոգսերը ինձ հանգիստ չեն տալիս: Շուտով կստանամ գնդացրորդ-լեյտենանտի կոչում, զինվորական դպրոցը կավարտեմ և կգամ Ստեփանավան: Զգիտեմ՝ ինչու՞ վերջերս քառասային մտքերս ինձ հանգիստ չեն տալիս: Միջազգային դրությո՞ւնն է, ձեր կարո՞տը, իմ ներքին անհանգստությո՞ւնը... ի՞նչն է պատճառը՝ չգիտեմ: Այսօրվա իմ մելանխոլիկ տխրությունն ավարտում եմ ռուսերեն մի բանաստեղծության թարգմանությամբ, որից մի տուն ուղարկում եմ քեզ.

Կյանքիս գարունն է անցել ամպամած,
Մոտենում է ինձ ամառն անարև,
Աշնան քամին է կաղկանձում հոգնած,
Դարձել եմ թոշնած ես ընկնող տերև:

Նամակ քսանվեցերորդ

Այն ոչ գրվեց, ոչ ամիս, ամսաթիվ ունեցավ և ոչ էլ տեղ հասավ, միայն պարզ է նրա հետադարձ հասցեն՝ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ:

•

Տարիներ են անցել: Մեծ Հաղթանակից հետո գլորվել է քառասունչորս գարուն: Երևանի Հաղթանակի զբոսայգում, Խորհրդային Հայաստանը մեծ Հայրենականում թանգարանից հուզված դուրս են եկել Հայկն ու Մհերը՝ Յուրիի և իմ որդիները:

Թանգարանի շենքի աջ կողմում պատերազմի վկա վիրավոր գնդացիրներ, ինքնաթիռներ... հրասայլեր են ցուցադրված: Շրջում են այստեղ բազմաթիվ պապիկներ՝ իրենց թոռների ձեռքից բռնած: Հուզված իրար են նայում երկուսը... և էլի ուրիշներ:

— Հա՛յկ, մենք ինչու պապիկներ չունենք:

— Եսի՞մ... Թո՛ղ Հիտլերն ասի: Հայրիկս ասում է, որ պապիկին Հիտլերն է սպանել...

— Այ թե նրա թոռը մեր ձեռը կընկնի, հա՞,— վրա է բերում Մհերը...

Լուռ կռանում են երկու մանուկ և ծաղիկներ դնում Անհայտ զինվորի գերեզմանին: Նրանց գլխավերևում աղավնիներն են խաղաղ թևածում:

ԼԻՏՎԱԿԱՆ ՀՈՂԸ՝ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՎԱՆ

ԲԵՆԻԱՄԻՆ
ԿԱՐԱՊԵՏԻ
ՄՈՒՐԱԴՅԱՆ
(1912—1944)

Բենիամին Կարապետի Մուրադյանը ծնվել է 1912 թվականին Արևմտյան Հայաստանի Սպարկերտ գավառի Վերին Հյուրուք գյուղում (Բիթլիսի վիլայեթ): Երեք տարեկան էր, երբ թուրքական վայրագները Թալիաթ փաշայի գլխավորությամբ կազմակերպեցին հայերի մասսայական ջարդը: Շատերի պես Մուրադյանների ընտանիքը ևս բռնեց գաղթի ճանապարհը: Խուճապահար գաղթականների խառնամբոխի մեջ նրանք միմյանց կորցրեցին: Ահաբեկված մայրը մանկանը գրկած գալիս դեմ է առնում վարարած Սպար և Կեցան գետերին, որոնց արյունախում ալիքները շատերին սուզում էին մինչ հատակ, ապա խեղդամահ շպրտում ափ: Որդու կյանքը փրկելու համար նա անօգնական փոքրիկին թողնում է գետի այն ափին, իսկ ինքը սարսափահար ու խելակորույս իրեն գցում գետի այս ափը: Կեցանի վարարած ջրերը կարծես հայ որբերի մահերգն էին հյուսում, և հանկարծ մայրն այստեղ խառն ամբոխի մեջ հանդիպում է իր Արամ որդուն, որին կորցրել էր մի քանի շաբաթ առաջ: Իմանալով եղբոր մասին, տասնամյա Արամը, արհամարհելով մահը, թուրքական գնդակների ուղեկցությամբ կտրում է գետը և եղբորը շալակած հասցնում այս ափը: Անզեն և անպաշտպան գաղթականների խմբին միացած Մուրադյանների գերդաստանի փրկված բեկորները փախչում են դեպի Ռուսահայաստան: Գաղթի գեհենական ճամփաներին նրանք նորից են կորցնում միմյանց: Տարիներ անց միայն Էջմիածնի վանքի բակում հազարավոր անտուն և անտեր որբերի մեջ Բենիկը պատահաբար հանդիպում է իր ծնողներին, եղբորն ու քրոջը:

«Գոնե կանաչով կանվենք» մտմտում է հյուրուքցի Կարապետն ու իր ի մի բերած ընտանիքի գլուխն անցած ճանապարհվում դեպի Արագածոտն գավառի ծաղկած լանջերը: Ալագյազում, դեռ նոր տան հիմքերը չփորած, գաղթ ու կոտորածից հյուծված վախճանվում է ընտանիքի մեծը: Մուրադյանները ստիպված տեղափոխվում են Ապարան: Բենիկն այստեղ հանախում է դպրոց: Հայրենի փայլուն ուսումնառության հետ նա զարգացնում է գաղթի ճամփաներին քուրդ երեխաներից կիսատ-պռատ սովորած իր քրդերենը, մտերմություն հաստատում Հաջիե Ջընդու, Ամինե Ավդալի, Ջարդոե Գենջոյի և թուրքական յաթաղանից փրկված քրիստոնյա շնորհաշատ քուրդ այլ տղաների հետ, ծանոթանում նրանց ժողովրդական բանահյուսությանը, խորանում քրդական գիր ու գրականության մեջ: Ու մի օր էլ, երբ Երևանում հիմնվեց «Ռյա թազա» քրդերեն լույս տեսնող թերթի խմբագրությունը, նրան հրավիրեցին այստեղ աշխատելու: Սկզբում պատասխանատու քարտուղար, իսկ հետո խմբագրի տեղակալ աշխատեց: Որոշ ժամանակ անց տեղափոխվեց «Խորհրդային Հայաստանի» խմբագրություն: Մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետն ավարտելուց հետո Բ. Մուրադյանն աշխատեց Գլավլիտում որպես խմբագիր: Բռնկվեց Մեծ հայրենականը: Կնոջ՝ Ռոզայի խնամքին թողնելով իր ինն ամսական Ալբերտ, երեք տարեկան Հենրիկ որդիներին և հինգ տարեկան դստերը՝ Լարիսային, կոմունիստ (1932 թ.) Բենիամին Մուրադյանը շատերի պես 1941-ի սեպտեմբերին զինվորի համազգեստ հագավ: Ռազմաճակատից հաճախ էր նա նամակներ գրում կնոջը: Նամակներից մեկում կարդում ենք՝ «...Երեխաները միտս են ընկնում: Զգիտեմ՝ ի՞նչ անեմ, մի անբացատրելի զայրույթով եմ լցված թշնամու հանդեպ, չեմ համբերում, շտապում եմ նրան հարվածել, կարծես ինձանից է կախված պատերազմի ավարտը...»:

Պատերազմի ավարտը, նրա վաճխանը շուտ տեսնելու և հայրենի տուն դառնալու վճռականությամբ էր կռվում գերմանական ելուզակների դեմ 6-րդ գվարդիական բանակի 46-րդ հրաձգային դիվիզիայի 139-րդ հրաձգային գնդի գումարտակի հրամանատարի շարային գծով տե-

ղակալ, գվարդիայի ավագ լեյտենանտ Բենիամին Կարապետի Մուրադյանը: Առաջին անգամ (19 մայիսի 1942 թ.) նա վիրավորվեց Խարկովի համար մղվող կատաղի մարտերում: Մի քանի ամիս անց՝ 1943-ի հունվարի 29-ին, Ստալինգրադյան ռազմաճակատում վիրավորված խիզախ հայորդուն ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը պարգևատրեց «Ստալինգրադի պաշտպանության համար» մեդալով: Թեժ մարտեր էին ամենուր, թշնամին ուզում էր մեր մեծ Միությանը ծնկի բերել: Խորհրդային ամեն մի զինվորի աչքի դեմ իր հայրենի հողն էր, յուրայինների պատկերը: Բոլորի պես քաջարի կռվում էր Բենիկը և գազազած հիտլերականներին նահանջի մատնում: Թե ինչպիսի սխրանքներ է գործել նա, այդ մասին վառ պատկերացում են տալիս ԽՍՀՄ պաշտպանության մինիստրության կենտրոնական արխիվում (Պոդոլսկ) պահպանվող նյութերը: Բենիկին պարգևատրման ներկայացնող իր միջնորդագրում 139-րդ հրաձգային գնդի հրամանատար, գվարդիայի գնդապետ Կրուգլիկովը 1944 թ. հուլիսի 21-ին գրել է.

«1944 թ. հուլիսի 11—12-ին Սալոկաս բնակավայրի համար մղված մարտերում ընկ. Մուրադյանը ցուցաբերել է արիություն, խիզախություն: Սալոկաս տեղավայրի գրավման ժամանակ իր օրինակով անձնակազմին մոբիլիզացրել է նպատակասլաց գրոհի: 9-րդ վաշտից հետո նա ներխուժել է հարավ-արևմուտքից, հակառակորդի համար մեծ վտանգ ստեղծելով՝ կտրել նրա նահանջի ճանապարհը: Ծակատամարտը թեժ էր և համառ, թշնամին կրեց մեծ կորուստ: Ընկ. Մուրադյանի ղեկավարությամբ 9-րդ վաշտը ազատագրեց փողոց փողոցի ետևից:

1944 թ. հուլիսի 12-ին, օրվա վերջին Մուրադյանի ղեկավարությամբ 9-րդ վաշտը ազատագրեց տեղանքը, այս գործում մեծ էր ընկ. Մուրադյանի ծառայությունը:

Ներկայացվում է «Կարմիր աստղի» շքանշանով կառավարական պարգևատրման»:

Ժուռնալիստ մարտիկ Բ. Մուրադյանի կուրծքը էին արդեն զարդարում Ստալինգրադի պաշտպանության համար մեդալն ու Կարմիր աստղի շքանշանը, երբ նա ոսոխի դեմ մարտի մտավ Լիտվայում: Այդ մասին ահա թե ինչ է պատմում արխիվային մեկ այլ վավերագիր.

«1944 թ. հուլիսի 27-ին գումարտակի առջև Յուրկիշկիս բնակավայրը գրավելու խնդիր էր դրված: Ընկ. Մուրադյանը թշնամու կրակի տակ վաշտը տարավ հարձակման և բնակավայրը թշնամուց մաքրեց:

Թշնամին ձեռնարկեց կատաղի գրոհ՝ պաշտպանվելով հրետանային կրակով և երկու տանկերով, մեր ստորաբաժանումը գյուղից ետ մղելու նրա փորձերը ապարդյուն անցան:

Եղբայրական այն գերեզմանը Յուրկիշիսում, ուր 1944 թ. հուլիսից հանգչում է գվարդիայի ավագ լեյտենանտ Բենիամին Մուրադյանը:

Նա կենդանի ուժի և տեխնիկայի մեծ կորուստներով ետ շպրտվեց, հենց այդ մարտում էլ հերոսի մահով ընկավ ընկ. Մուրադյանը:

Ներկայացվում է «Հայրենական մեծ պատերազմի I աստիճանի» շքանշանով կառավարական պարգևատրման:

139-րդ գվարդիական հրաձգային գնդի հրամանատար, գվարդիայի գնդապետ՝ ԿՐՈՒԳԼԻԿՈՎ:

14.8.1944 թ.»[1]:

Տարիներ են անցել: Սրբությամբ պաշտպանելով իր լրագրող ամուսնու հիշատակը՝ տիկին Ռոզան, մեծ զրկանքներով պահել, մեծացրել և բարձրագույն կրթության է տվել իր երեք փոքրիկներին:

— Դա ամուսնուս վերջին իղձն էր:— Հուզված ասում է Երևանի 26 կոմիսարների անվան դպրոցի վաստակաշատ ուսուցչուհի Ռ. Բեգլարյանն ու ավելացնում:— Աղջիկս՝ Լարիսան, բժշկական գիտությունների, իսկ ավագ որդիս՝ Հենրին, տեխնիկական գիտությունների թեկնածուներ են: Փոքր տղաս՝ Ալբերտը, ինժեներ է, սեկտորի վարիչ՝ հաշվիչ մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում, 10-ից ավելի գիտական աշխատությունների հեղինակ...

Յուրկիշիսը փոքրիկ գյուղ է, ծառ ու ծաղկով պատված: 1944-ի հուլիսին Բենիամին Մուրադյանի պես քանի-քանի՞ քաջորդիներ, կուրծքը դեմ տված թշնամու գնդակին, կյանքի գնով թիզ առ թիզ ազատագրեցին լիտվական այս հողակտորը: Այստեղ, նրանց հիշատակը հավերժացնող եղբայրական գերեզմանոցում, բազմաթիվ աստղակիր շիրիմներ կան: Նրանցից մեկի վրա փորագրված է.

«Հավերժ փառք հերոսներին.

Գվարդիայի ավագ լեյտենանտ՝ ՄՈՒՐԱԴՅԱՆ Բ. Կ.

զոհվեց մարտում 27 հուլիսի 1944 թ.»:

Ամեն տարի հուլիսի 27-ին երկու եղբայր և մի քույր իրենց որդիների հետ մեկնում են Լիտվական ԽՍՀ Դվինսկի մարզի Կամայսկի շրջանի Յուրկիշիս գյուղը: Նրանք այստեղ պատվավոր գյուղացի են, չէ որ այստեղ է հերոսական մահով իր կյանքը հայրենիքի, նրա ժողովուրդների և իր որդիների ազատության համար զոհել ժուռնալիստ մարտիկ և իսկական հայրենասեր գվարդիայի հայ լեյտենանտը:

[1] Պարգևատրման թերթիկների պատճենները ուղարկված են ԽՍՀՄ պաշտպանության մինիստրության արխիվի կողմից (2-րդ բաժին) 1968 թ. մայիսի 15-ին (№ 64252) և պահվում են ՀԽՍՀ զինկոմիսարիատի III բաժնում (Ս. Գ.):

ՆԱ ԵՂԵԼ Է «ԱՎԱՆԳԱՐԴԻ» ԽՄԲԱԳԻՐԸ

ՄԿՐՏԻՉ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ (1904—1941)

Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվում պահպանվում է Ստեփանավանի շրջանային թերթի պատասխանատու քարտուղար (1931 թ.), Նոր Բայազետի (այժմ Կամո) շրջանային թերթի նախկին խմբագիր Մկրտիչ Մանուկյանի անձնական գործը:

Նրանից տեղեկանում ենք, որ կիրովականցի Խաչատուրի որդին խմբագրել է նաև ՀԼԿԵՄ Կենտկոմի օրգան «Ավանգարդ» թերթը (1938—1939 թ.), որտեղից առաջ է քաշվել կուսակցական պատասխանատու աշխատանքի՝ ՀԿԿ Կենտկոմի ապարատում: Կադրերի հաշվառման անձնական թերթիկից իմանում ենք, որ Մկրտիչը ծնվել է Ղարաքիլիսայում 1904 թ. դեկտեմբերին, նախնական կրթությունը ստացել է գյուղի երեքդասյա դպրոցում, ապրել զրկանքներով լի մանկություն և պատանեկություն: Հոր մահից հետո (1919 թ.) քաղցից մահանում են Մկրտիչի չորս եղբայրներն ու քույրը: Դա ստիպում է տասնըհինգամյա պատանուն մի կտոր հացի համար թողնել հայրենի խրճիթը: Թբիլիսիում նա դառնում է ժամագործի աշակերտ: Ու երբ ավագ եղբայրը զորացրվում է բանակից (1923 թ.), երկու եղբայրներով միասին զբաղվում են ժամագործությամբ:

— Ժամացույց ո՞վ ունի, որ բերի նորոգման: Դրանով փոր չի կշտանա,— մոր այս գգուշացումը հուշում է, որ որդին նոր աշխատանք փնտրի: Այգեգործ-կուլակ Բ. Աղաբաբովի մոտ Մկրտիչը դառնում է դռնապահ և բատրակ: Կոմերիտմիությանը անդամագրվելուց հետո (1922 թ.) անցնում է պիոներական աշխատանքի:

Պիոներական-երիտասարդական աշխատանքում հասարակական կազմակերպչի շնորհառատ ձիրքը զորավիգ է դառնում, որպեսզի կոմերիտմիության Ղարաքիլիսայի գավկոմը նրան գործուղի Երևան՝ ուսանելու ՀԿԿ Կենտկոմին կից 2-րդ աստիճանի խորհրդային կուսակցական դպրոցում: Ավարտելուց հետո Մկրտիչը մի քանի ամիս Ալավերդում աշխատում է որպես լեռնագործների ակումբի վարիչ: Այստեղից կանչվում է հերթական զինծառայության (3-րդ Լենինգրադյան գունդ):

1929 թ., բանակից զորացրվելուց հետո, 25-ամյա Մ. Մանուկյանը որպես ուսուցիչ աշխատանքի է անցնում Համզաչիման գյուղում: Այնուհետև, ինչպես տեղեկացնում է նրա ռուսերեն ինքնակենսագրականը, կուսակցական (1928 թ.) մանկավարժին տեղափոխում են Երևան՝ ՀԿԿ Կենտկոմ, որպես ինֆորմատոր: 1930—1931 թթ. Մ. Մանուկյանը աշխատանքին զուգահեռ սովորում է Երևանի պետական համալսարանի երկամյա երեկոյան բաժնում: 1931 թ. ՀԿԿ Կենտկոմը մի խումբ կուսակցական պատասխանատու աշխատողների մոբիլիզացնում է և ուղարկում շրջաններ՝ հասարակական-քաղաքական աշխատանքի: Մկրտիչը նշանակվում է Ստեփանավանի շրջանային թերթի քարտուղար, մի տարի հետո (1932 թ.) նա արդեն Նոր Բայազետ (այժմ Կամո) շրջանային թերթի խմբագիրն էր: Ուսումնառության պակասը նեղում էր նրան: 1933—1937 թ. փայլուն առաջադիմությամբ երիտասարդ ժուռնալիստը սովորում և ավարտում է Երևանի պետական համալսարանի պատմագիտական ֆակուլտետը (առաջին կարգի դիպլոմով) և ընդունվում ասպիրանտուրա: Սակայն չհաջողեց ասպիրանտուրան ավարտել և պաշտպանել դիսերտացիա. 1938 թ. դեկտեմբերին Մ. Մանուկյանը նշանակվեց «Ավանգարդ» թերթի խմբագիր: Ճիշտ մեկ տարի անց նա ՀԿԿ Կենտկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի մամուլի սեկտորի վարիչ նշանակվեց, միևնույն ժամանակ և՝ «Պրավդայի» Հայաստանի թղթակից[1]: Ու մինչ պատմագիտության և ժուռնալիստիկայի մեջ էլ ավելի կխորանար և կհմտանար, ՀԿԿ Կենտկոմը Մ. Մանուկյանին հաստատեց ՆԳՄ կուսակցական կազմակերպության առաջին քարտուղար: Կուսակցական-քաղաքական այս աշխատավայրից էլ մանկավարժ, պատմաբան, լրագրող և կուսաշխատող Մ. Մանուկյանը զինվորագրվեց պաշտպանելու մեր մեծ հայրենիքը գերմանական ելուզակներից:

Պատերազմի հենց առաջին տարում էլ մայոր, գնդի քաղղեկ Մկրտիչ Խաչատուրի Մանուկյանը Կերչում ընկավ թշնամու ուժեղ շրջափակման մեջ և զոհվեց իր ծննդյան օրը՝ դեկտեմբերի 15-ին՝ երեսունչորս տարեկան հասակում:

---

[1] Տես ՍԼԻ-ի հ. մ. կուսարխիվ, ֆ. 1, ց. 70, գործ 1352, թ. 6:

ԱԼ—ՄԱՐՏԻՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԵՍՐՈՊԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (ԱԼ-ՄԱՐՏԻՆ) (1908—1942)

Ալեքսանդր Մարտիրոսյանին ընթերցողները ճանաչում էին Ալ-Մարտին ստորագրությունից:

— Անաչառ էր և օբյեկտիվ, խստապահանջ ու կատակասեր,— պատմում էր նախկին ավանգարդցի Զարզանդ Դարյանն ու ավելացնում.— Ալ-Մարտինը 1908 թ. ծնունդ էր: Որքան հիշում եմ, Նախիջևանի Փարադաշտ գյուղում է ծնվել: Հետո ընտանյոք որոշ ժամանակ ապրել են նույն լեռնամասի Թազագյուղում, Մանուկ Աբեղյանի ծննդավայրում, այնտեղից էլ տեղափոխվել էին Երևանին մերձակա ներքին Զարբախ...

— Սկզբնական կրթությունը,— միջամտում է մեր զրույցին կոմերիտմիության վետերան Դարչո Հովհաննիսյանը,— Ալ-Մարտինը ստացել է Թազագյուղում: 1929-ին ընդունվել է Երևանի գեղարդ տեխնիկում (նա նաև շնորհառատ նկարիչ էր), հետո էլ սովորել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում:

Արտակարգ ընդունակությունները վաղ էին զարգացել պատանու մոտ: Սիրում էր նկարել, նվագել, գրում էր բանաստեղծություններ: Թղթակցում էր հանրապետական մամուլին: Մտերմական կապերով էր կապված բանաստեղծ և ժուռնալիստ Թևան Խաչյանի հետ: Թե տեխնիկումում և թե համալսարանում կոմերիտական ակտիվիստ էր, ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար: Նա իր աշխատանքային մկրտությունը սկսեց բանվորությունից, թեև ուսանող միևնույն ժամանակ ագրոինդուստրիալում (մանկավարժական ինստիտուտի պոլիտեխնիկական ֆակուլտետ) մետաղագործ բանվոր էր աշխատում (տես անձնական գործ, I թերթ): Ալ-Մարտինին պատկանող 1937 թ. նոյեմբերի 23-ին տրված արխիվային մի այլ վկայականում կարդում ենք. **«Ալեքսանդր Մարտիրոսյանը «Ավանգարդ» թերթի կուլտուրայի և կրթության բաժնի վարիչն է: Պատասխանատու քարտուղար՝ Գեղամ Սարյան»:**

— Ուրիշ որտե՞ղ է աշխատել Ձեր ամուսինը,— հարցիս Մելանյա Հակոբջանյանն ավելացնում է.

— Պետական համալսարանում մարքսիզմ-լենինիզմի հիմունքներ էր դասավանդում, ՀԼԿԵՄ Երևանի քաղկոմում երկրորդ քարտուղար էր, հետո որպես ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ աշխատեց Երևանի Կիրովյան կուսշրջկոմում: Որոշ ժամանակ էլ Սաշան (այսպես է կոչում ամուսնուն տ. Մելանյան) աշխատեց Երևանի № 34 տարրական դպրոցում որպես տնօրեն: Բանակ զորակոչվեց Կիրովյան կուսշրջկոմում աշխատած ժամանակ...

Մինչ զոհված զինվորի այրին կզսպի իր հուզմունքն ու արցունքները, ես թոուցիկ ծանոթանում եմ նրա ամուսնու ռազմաճակատային նամակներին ու լուսանկարներին, լրագրային հոդվածներին ու ակնարկներին, բանաստեղծություններին և կենսագրական փաստաթղթերին: Պարզվում է, որ երիտասարդ կոմունիստին 1941-ի մայիսի 3-ին Ադրբեջանում զինվորական վերապատրաստման դասընթացների են ուղարկել: Սկսվել է պատերազմը, և կուրսանտ հայորդին դարձել է զինվոր. ծառայել է Լենինականում,

Ալ Մարտինը Տուապսեում, 1941 թ. դեկտեմբեր:

Սպիտակի, Ջուլֆայի հրաձգային գնդերում, եղել է Խոյում և Թավրիզում (հետաքրքիր են Ալ-Մարտինի Իրանից ուղարկված նամակները): Այնուհետև ժուռնալիստ զինվորի հացեները փոխվում են: Վրեժ թշնամու հանդեպ, պայքար և հաղթանակ— ահա այն հիմնականը, որ հատուկ է նրա նամականուն: «Սիրելի Էռնեստ, պապայի քաղցր բալիկ: Խելոք եղիր, մայրիկին և տատիկին, մանկապարտեզի դայակներին ուշադիր լսիր, շուտ մեծացիր, որ գաս պապայի մոտ, ֆաշիստներին սպանենք... Սիրելի բալիկ, երբ պատերազմը վերջանա, պապան տուն կգա և քեզ համար լավ նվերներ կբերի: Քեզ կնստեցնի ավտո և կտանի մաս ածելու:

Եղի՛ր խելոք, շուտ մեծացիր, լավ սովորիր. Կարոտալի բարևներով ու համբույրներով՝

քո **պապա:**

26.6.1941 թ.»:

Տուապսե, Նովոռոսիյսկ, Գելենջիկ, Անապա, Թամաև, Կերչ: Կռվում էր թշնամու դեմ ավագ լեյտենանտ Ալ. Մարտիրոսյանը: Դադարի պահին նորից ձեռքն էր առնում թուղթն ու մատիտը, այս անգամ ոչ թե որդուն էր խորհուրդներ տալիս, այլ կնոջը գրում.

«Մելան ջան,

Այսօր արդեն ապրիլի 24-ն է: Անձնական կյանքումս չկա և ոչ մի փոփոխություն: Առողջ

եմ, տրամադրությունս բարձր, աշխատանքս մարտական գործողություններն են: Նամակս գրում եմ խրամատից: Վաղուց ես ուղարկել եմ իմ հասցեն, բայց դեռ նամակ չեմ ստացել: Գրիր շտապ. անհանգիստ եմ: Գրիր նորությունների մասին: Մելան ջան, մայիսի 1-ից կստանաս նոր ատեստատ և ամիսը 500 ռուբլի... Ինձ փող պետք չէ, ստացածս կուղարկեմ, անհանգիստ մի՛ եղեք: Գրիր՝ ինչպե՞ս եք ապրում: Ձերմ բարևներս բոլորին-բոլորին: Համբուրիր մամային:

Ամուր գրկում և համբուրում եմ Մելանիս, Էռնեստիս և Ժաննայիս:

Ձերմ համբույրներ նորից:

Ձեր **Սաշա»:**

1942-ի ապրիլի 24-ին Կերչից ուղարկված գրավոր այս համբույրները միգ կհասնեին Երևան, թշնամու գնդակը գործեց իր ոճիրը. Ալ-Մարտինը զոհվեց: Եվ նրա ռազմանակատային հասցեով (Դ/փ—471, 63 լեռնահրաձգային գունդ, I վաշտ) ուղարկված յուրայինների նամակները մնացին անպատասխան: Որդու մահվան ծանր լուրը չկարողացավ տանել Մեսրոպ դային. վախճանվեց:

Տարիներ են անցել, մեծացել են Էռնեստն ու Ժաննան: Կինոռեժիսոր Էռնեստ Մարտիրոսյանին ամեն անգամ, երբ առաջարկվում է պատերազմական թեմայով ֆիլմ նկարել, հրաժարվում է, պատճառաբանելով, թե.

— Չէ՛, ախպե՛ր, թեկուզ կինոնկարում ես չեմ կարող մարդ սպանել. աչքիս դեմ հա՛յրս է... չէ՛:

— Ձեր հայրիկից որևէ ստեղծագործություն պահպանվե՞լ է,— հարցնում եմ «Հայֆիլմ» կինոստուդիայի ռեժիսոր Էռնեստ Մարտիրոսյանին:

Պատասխանի փոխարեն արվեստագետ ընկերս բացում է «Հորս անձնական գործերը» թղթապանակը և կարդում «Գերմանիա» խորագրով մի անտիպ բանաստեղծություն, ուր որպես բնաբան Ալ-Մարտինն օգտագործել է Հայնրիխ Հայնեի աշխարհահռչակ տողերը.

Գերմանիա, մենք քեզ պատան ենք գործում:

Ու մինչ ֆաշիստական Գերմանիան կհագներ խորհրդային զինվորի ձեռքով գործած «սև պատանը», Կերչի մատույցներում իր հազարավոր ընկերների հետ հավերժ դադարեց բաբախելուց երիտասարդ լրագրողի սիրտը, մի սիրտ, որը հավատացած էր. «Գերմանիա, մենք քեզ պատան ենք գործում»:

ԱԼ—ՄԱՐՏԻՆԻ ՄԱՍԻՆ

1. **Գրիգորյան Սասուն**—Նրանք ընկան երգը շուրթերին, Ե., «Գիտելիք», 1970 թ., էջ 9:
2. **Գրիգորյան Սասուն**—Լրագրող գինվորը, Ավ., 9 մայիսի 1986 թ., էջ 3:

ՕՇԱԿԱՆՑԻ ՍԻՄՈՆԸ

ՍԻՄՈՆ ԱՍԱՏՈՒՐԻ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ (ԴԱՐՅԱՆ) (1914—1945)

Դղրում, որտեղ ուսուցիչ էր աշխատում Խաչիկ Ադամյանի, Պետրոս Մեխակյանի և այլոց հետ, Աշտարակի շրջանի «Այգեգործ կոլխոզնիկ» թերթում, ուր վարում էր կուլտուրայի և կենցաղի բաժինը, բոլորը նրան օշականցի Սիմոն էին կոչում, չնայած բոլորը քաջ գիտեին նրա Միրիջանյան իսկական ազգանունն ու Դարյան գրական կեղծանունը: 1914-ի ծնունդ էր: Սիրում էր ընկերների հետ ամառվա շոգ օրերին իջնել Քասախի կիրճը, լողալ գետում, քարե դարավոր կամուրջին հենված դիտել ալիքների խաղը, իսկ կիրակի օրերին՝ գնալ Եկեղեցի. ծաղիկներ դնել Մեսրոպ Մաշտոցի և Վահան Ամատունու շիրիմներին: Հաճախ էր Մագդա մայրիկը գիշերները ճրագը վառ թողնում, չէ որ նրա շուրջ հավաքված Սիմոնն ու իր ընկերներ Հարություն Ստեփանյանը, Լիպարիտ Խաչատրյանը, Սուրեն Մարգարյանը փոխեփոխ բարձրաձայն «Սամվել» էին կարդում, մեղադրում դավաճաններին ու խողովկաններին, ոգևորվում Սամվելի ու Մամիկոնյան քաջերի հայապաշտ ազատասիրությամբ, չիմանալով, որ մի քանի տարի անց իրենք ևս պաշտպան պիտի կանգնեն հայրենի հողին և ժողովրդին:

Օշականում՝ իր ծննդավայրում, միջնակարգն ավարտելուց հետո Սիմոնն ընդունվեց բանասիրական ֆակուլտետ: Այդ են վկայում նրա ձեռքով սղագրված դասախոսությունները, կուսպատմությունից և փիլիսոփայությունից հանձնարարված գրականությունների մշակումներ-կոնսպեկտները: Բայց թե որտեղ՝ Երևանի պետհամալսարանում, թե մանկավարժական ինստիտուտում է սովորել նա, չկարողացանք պարզել: Ըստ երևույթին Սիմոնը Դղրում ուսուցիչ աշխատած ժամանակ հեռակայել է Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտին:

— Աշտարակի թերթում տպված Սիմոնի բանաստեղծություններին, հոդվածներին, ակնարկներին ու թղթակցություններին այսօր էլ կարող եք ծանոթանալ... Սիմոնը սիրած աղջիկ ուներ, անունը՝ Մարո: Հայրս ուզում էր նրանց պսակել, ախպերս չհամաձայնեց, ասաց՝ գնամ բանակ, գամ, նոր: Գնաց ու չեկավ: Հենց կռվի առաջին օրերին էլ գնաց: Ճիշտ է՝ Մարոն մեր հարսը չդարձավ, բայց մենք նրան էսօր էլ հին օրերի պես սիրում ենք: Նրա մոտ էլ, երևի, Սիմոնի նամակներից կլինի... Ախպերս Սևաստոպոլում էր ծառայում, լեյտենանտ էր, վաշտի հրամանատար:— Հազիվ զսպելով հուզմունքը, վերհիշելով եղբորն ու նրա հետ կապված դեպքերն ու դեմքերը՝ Նվարդ մայրիկը, որ երկար տարիներ Օշականում բրիգադիր է աշխատել և այժմ թոշակառու է, թաշկինակը մոտեցնում է աչքերին ու շարունակում,— 1945 թ. մայիսի 5-ին գրած Սիմոնի նամակը մեզ շատ ուրախացրեց: Բայց կարճ տևեց մեր ուրախությունը: Հաղթանակն եկավ, կոմունիստ ախպերս՝ չէ: Որ դիվիզիայում է ծառայել, վիրավորվել է, թե չէ, ինչ շքանշան կամ մեդալ է ստացել ռազմանակատում, չգիտենք: Մենակ գիտենք, որ բանակում Սիմոնը գերմանացու դեմ կռվել է աշտարակցի Վեբիլի Գևորգի հետ... Մանրամասը, եթե կարող եք, նրանից իմացեք...

Որպեսզի երկար չհուզվի Նվարդ մայրիկը, ես խնդրում եմ եղբոր լուսանկարն ու հրաժեշտ տալիս նրան: Ինձ հետ իր տատի շեմը թողնում է նաև լեյտենանտ Աշոտը, որի ուղեկցությամբ այստեղ ենք եկել Էջմիածնի շրջանի Ամբերդ գյուղում զոհված մարտիկների հիշատակին կառուցված հուշակոթողի հանդիսավոր բացումից հետո, ծանոթացել պատահաբար, չիմանալով, որ Գերմանիայում, այժմ էլ Հայաստանում խորհրդային բանակում ծառայող զրուցակիցս իմ անհայտ հերոսի քրոջ թոռն է:

— Դե որ քեռուս մասին կգրեք,— հրաժեշտի պահին լինում է Նվարդ մայրիկի որդու՝ Ֆրունզիկի առաջարկը,— խնդրում եմ՝ շեշտեք, որ պատերազմում զոհվել են նաև նրա ընկերները՝ Խաչիկն ու Պետրոսը: Քեռուս մասին ձեզ կարող է տվյալներ տալ նաև Խաժակ Գյուլնազարյանը, նա մեր գյուղից է... Չմոռանաք նշել, որ քեռուս անունը Երևանում, Ժուռնալիստի տան պատին, մարմարե հուշատախտակի վրա փորագրված է:

Գարնանային խաղաղ կեսօր է Օշականում: Ծառ ու ծաղկով զուգված տուֆակերտ մի տան երկրորդ հարկում, Նվարդ մայրիկի ննջասենյակի պատից, մտասույզ հայացքով նայում, կարծես քրոջ, նրա թոռների ու աշխարհի խաղաղությունն է հսկում մեծադիր մի լուսանկար. դա զոհված մանկավարժ, բանաստեղծ, ժուռնալիստ և ավագ լեյտենանտ Օշականցի Սիմոնն է՝ Ասատուր քեռու քսանհինգամյա միանուագ որդին:

ԽՈՒԹԵՑԻ ԽԱՉԻԿԸ

ԽԱՉԻԿ ՂԱՆԴԻԼԻ ՆԱՋԱՐՅԱՆ (1906—1942)

Աքրակը Տարոն-Տուրուբերանի նահանգի Խութ գավառի գյուղերից էր, որը ողջ բնակչությանը մեծ եղեռնի տարիներին սրի քաշեցին թուրքական դահիճները, նրանց թվում՝ և Խաչիկի ծնողներին և երկու եղբայրներին: Խաչիկը, որ ընտանիքի վեց երեխաներից ամենակրտսերն էր, իր մյուս երկու եղբայրների՝ Ավագի և Ղուկասի հետ, օսմանյան յաթաղանից փրկվեց մի կերպ և միացած հազարավոր անտուն-անտեր որբերի խմբին, իրեն գտավ Արաքսի այս ափին՝ Ալեքսանդ-

ռապոլի ամերիկյան որբանոցում: Գաղթի գեհենական ճամփաներին միմյանց կորցրած եղբայրները այստեղ պատահաբար գտան միմյանց և տեղափոխվեցին Աշտարակի, հետո էլ Բազմաղբյուրի (Նախկին Թաքիա) «Կոմունա» որբանոց: Մոտերմությունը Նվեր Սաֆարյանի, Էզրաս Հասրաթյանի, Սարմենի և գաղթական այլ որբերի հետ, գրքասիրությունն ու ընթերցասիրությունը Խաչիկին և «Կոմունա» որբանոցի բազմաթիվ սաներին կյանքի տարբեր ուղիներով տարան. Նվերը դարձավ անվանի զորապետ, Էզրասը՝ աշխարհահռչակ ֆիզիոլոգ, ակադեմիկոս, Սարմենը՝ բանաստեղծ, իսկ Խաչի՞կը... Նա 1924-ին ընդունվեց Լենինյան կոմերիտմիության շարքերը, ավարտեց «Կոմունայինն» կից յոթնամյա դպրոցը և իր ակտիվ մասնակցությունը բերեց Փարպի, Թաքիա և Նազրվան գյուղերի հասարակական կյանքին և կոլեկտիվացման գործին: 1930 թ. Խ. Նազարյանն անդամագրվում է ԽՄԿԿ-ին: Նկատի ունենալով նրա կազմակերպչական և քաղաքական պատրաստվածությունը՝ ՀԿԿ Աշտարակի շրջկոմը Խաչիկին նշանակում է շրջկոմի հրահանգիչ, հետո՝ շրջանային թերթի բաժնի վարիչ: Խ. Նազարյանի տարերքը ժուռնալիստիկան էր. աշխատանքին զուգընթաց նա թղթակցում էր տեղական և հանրապետական մամուլին, գրում հոդվածներ ու ակնարկներ, վեր հանում առօրյայում տեղ գտած թերությունները, քննադատում բյուրոկրատիզմն ու հոգևոր սնանկությունը, գովում հողի աշխատավորին, երկիրը շենացնող մարդուն: Այսօր էլ Աբովյանի (նախկին Կոտայքի), Ծամշադինի և Կամոյի շրջանային թերթերի հավաքածուներում ընթերցողը կհանդիպի Խ. Նազարյանի ստորագրությանը, չէ որ 1934—1936 թվականներին նա այդ թերթերի խմբագրություններում աշխատել է որպես պատասխանատու քարտուղար, խմբագրի տեղակալ և խմբագիր:

1936—1937 թթ. կոմունիստ Խ. Նազարյանը սովորել է ՀԿԿ Կենտկոմին կից մեկամյա դասընթացներում, ավարտելուց հետո աշխատանքի է նշանակվել «Սովետական Հայաստան» թերթի խմբագրությունում որպես «Կուսակցական կյանք» բաժնի վարիչ, միևնույն ժամանակ ղեկավարել խմբագրության սկզբնական կուսկազմակերպությունը (մինչև 1939 թ.): Պատերազմին նախորդած երկու տարիներին Խաչիկը ՀԿԿ Երևանի քաղկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնում պատասխանատու աշխատող էր:

Պայթեցին գերմանական ռումբերը: Խորհրդային հայրենիքի պաշտպանությունը դարձավ սրբազան պարտք: Միլիոնների պես թշնամու դեմ պայքարին ինքնակամ զինվորագրվեցին նաև նախկին որբերը՝ Ղուկասը, Ավագն ու Խաչիկը: Ցավոք, երեք եղբայրն էլ զոհվեցին: «Ծանր մարտեր են: Մահը մեզ մոտ սովորական բան է. բոլորս Հաղթանակի և Անմահության համար, Ձեր և աշխարհի խաղաղության համար ենք կռվում: Սիրելի Հասմիկ,— գրում է Խ. Նազարյանը կնոջը Հյուսիսային Կովկասից,— եթե թշնամու մահաբեր գնդակը խլի իմ կյանքը, շատ չողբաս՝ զոհվում եմ իմ ժողովրդի համար, իմ այնքան սիրած երեխաներիս՝ Ժաննայիս, Էլֆայիս, Ռոլանդիս համար: Բոլորիդ ջերմ-ջերմ գրկում եմ և համբուրում. ի՞նչ իմանաս, թե այս օդային, մտային համբույրից հետո ո՞ղջ կմնամ. չէ՛ որ երկու կողմից էլ կրակ է, իրարանցում: Հիտլերը նույնն է անում մեր գլխին, ինչ Թալիաթը՝ գաղթի ժամանակ: Ոչինչ, մենք կհաղթենք, խորհրդային ժողովուրդը կհաղթի, արդար գործն ու արդար պայքարը կհաղթեն: Նորից եմ համբուրում բոլորիդ: Հասմիկ ջան, գրիր Մամիկոնի մասին, ինչ լուր ունես Փարպիից, մերոնց-ձերոնցից... Երեխեքին ժամանակավորապես տար այնտեղ: Կգամ հաղթանակով...»:

Հայաստանի հեղափոխության թանգարանում պահպանվող Խ. Նազարյանի նամակները որքան սեր և նվիրվածություն են ամբարում դեպի յուրայինները, այնքան էլ ոխով, վրեժով և ատելությամբ են լեցուն դեպի ֆաշիզմը, դեպի հիտլերյան բարբարոսները:

Եկավ հաղթանակը, ցավոք Խ. Նազարյանն արդեն զոհված էր, հազիվ բոլորած կյանքի 36-րդ գարունը: Իսկ Մամիկո՞նը՝ Մամիկոն Գրիգորյանը, «Սովետական Հայաստան» թերթի բաժնի վարիչը, աշխատանքային ընկերն ու մերձավոր բարեկամը, որի մասին նա սիրով հարցում էր անում իր կնոջից. նա ևս զոհվեց:

Կոմունիստ, լրագրող, Թամանյան 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի անվեհեր մարտիկ Խաչիկ Նազարյանը, որին մտերիմներն ու ընկերները Խոթեցի Խաչիկ էին կոչում, 1942 թ. Կերչի մոտ, Կարպեչ գյուղում, Ավետիս Դեբենցի հետ միասին ընկավ թշնամու ռմբակոծության տակ և զոհվեց: Նրա անունն այսօր անմահացել է հանրապետության Ժուռնալիստի և Մամուլի տների նախասրահներում՝ Մեծ հայրենականում զոհված հայաստանցի ժուռնալիստների հիշատակը հավերժացնող մարմարե հուշատախտակներին և երախտապարտ սերունդների սրտերում:

ԽԱՉԻԿ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. Գրիգորյան Սասուն—Խոթեցի Խաչիկը, ՍՀ, 9 մայիսի 1989 թ., էջ 3:
2. Տես ՄԼԻ-ի հ. մ. կուսարխիվ, ֆ. 1, ց. 70, գործ 1677:

«ԲԱՆՎՈՐ» ԼՅՈՒԴՎԻԳԸ

ԼՅՈՒԴՎԻԳ ԳԵՎՈՐԳԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ (1909—1944)

1974 թվականի հոկտեմբերի 8-ին Լատվիական ԽՍՀ-ի Լիպայի շրջանի Պրիսկուս գյուղի պատվավոր հյուրերն էին մայր և որդի Ամալյա և Հենրիկ Պետրոսյանները: Նրանք եկել էին այստեղ մեկ անգամ ևս ծաղիկներ դնելու եղբայրական այն գերեզմանին, ուր 1944 թ. հոկտեմբերից հանգչում է իրենց սիրելի Լյուդվիգ Պետրոսյանը՝ Լենինականի «Բանվոր» թերթի բաժնի վարիչն ու կոմերիտմիության Լենքաղկոմի նախկին աշխատողը: Հենրիկին և իր մորը հանդիպում ենք Ռիգայում, որտեղ և հաստատվում է մեր մտերմությունն, ու փոխայցելությունները շարունակվում են Երևանում:

— Դուք որտեղի՞ց գիտեիք հորս մասին,— Հենրիկի հարցին ես կոնկրետ եմ պատասխանում:

— Հորդ՝ Լյուդվիգ Պետրոսյանի մասին ինձ պատմել է «Բանվոր» թերթի նախկին պատասխանատու խմբագիր Հովհաննես Բաղդասարյանը: Նրա ձեռքով է տպագրության ուղարկվել գործող բանակից (I Մերձբալթյան ռազմաճակատ) ուղարկված ձեր հոր վերջին թղթակցությունը, որի վերնագիրն է «Գվարդիականները»: Ձեր հոր ռազմաճակատային այս նամակ թղթակցությանը դուք այսօր էլ կարող եք ծանոթանալ «Բանվոր» թերթի 1944 թ. նոյեմբերի 5-ի համարում: Նրանում «Բանվորի» զինթղթակիցը պատմում է իր ղեկավարած գվարդիական միավորման քաջարի մարտիկներ, ավտոմատավոր Հմայակ Սիմոնյանի, սերժանտ Սերգեյ Շիբանի, ավագ սերժանտ, մեքենավար Տիմոֆեյ Մուրավյովի և այլ քաջորդիների սխրանքի և անվեհերության մասին:

Մեր հաջորդ հանդիպումների ժամանակ ադիթներ են լինում և «Հայէլեկտրաշարժիչ» արտադրական միավորման ինժեներ Հենրիկ Պետրոսյանն ու Հայկ. ԽՍՀ ԳԱ ֆիզիկայի ինստիտուտի ավագ գիտաշխատող Մարզիկ Պետրոսյանը ինձ ծանոթացնում են կոմունիստ լրագրող, գվարդիայի կապիտան Լյուդվիգ Գևորգի Պետրոսյանի անցած ուղուն: Ծնվել է ժուռնալիստ մարտիկը 1909 թ. Կարսի մարզի Օրդաղալա գյուղում: 1918 թ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ ընկել է Բաքու, այստեղից 9-ամյա տղան փախել է Ալեքսանդրապոլ (այժմ Լենինական), պատահաբար հանդիպել իր ծնողներին և երեք քույրերին:

Ուսումնառությունը թե դպրոցում և թե մանկավարժական ինստիտուտում Լյուդվիգն ստացել է Լենինականում: Նա ավարտել էր նաև կոմունիստական համալսարանը: Պիոներական և կոմերիտական աշխատող էր, երբ սկսեց թղթակցել մամուլին: Նրա օբյեկտիվությունն ու օպերատիվությունը, պարզ գրելաոճն ու ժուռնալիստական ազնիվ նվիրումը դարձան այն գրավականները, որոնց շնորհիվ մի քանի տարի անց արդեն «Բանվոր» թերթում Լ. Պետրոսյանը դառնա ոչ թե արտահատիքային թղթակից, այլ մշտական աշխատող, հետո էլ՝ արդյունաբերության և տրանսպորտի բաժնի վարիչ: Թեև տարիներն ու կրած տանջանքները ճերմակով են օծել զոհված զինվորի այրուն, բայց նա շարունակում է հին օրերի սիրով այսօր էլ զրուցել իր Լյուդվիգի հետ: Ավելի ճիշտ նրա մշտական զրուցակիցները ամուսնուց մընացած մասունքներն են, նրանց ընտանեկան լուսանկարները, Լյուդվիգի տպագրված և անտիպ

հոդվածներն ու իրեն ձոնված բանաստեղծությունները, նրա ռազմաճակատային նամակներն ու նրա գրավոր խորհուրդները, պատգամները: Ու թեև 45—50 տարի է անցել Ամալյայի և իր ամուսնու «բաժանումից», բայց և այնպես ամուսնու արխիվը Երևանի թույլ զարգացած երեխաների գիշերօթիկ դպրոցի երկարամյա դաստիարակ Ամալյա Պետրոսյանի անդավաճան ընկերն է: Ահա արխիվային մի նամակ (հետադարձ հասցեն է Դ/փ № 44105): Նրանում կարդում ենք. «Շուրջս ամայի ու բարձրաբերձ լեռներ են, որոնք հիշեցնում են չքնաղ Լոռին: Նստած եմ մի քարանձավում ինչպես փոքր Մհերը և դիտում եմ բոցավառվող հորիզոնը: Մի քանի օր առաջ հանգստանում էինք, այժմ այն դարձել է հեռավոր հիշողություն: Մեզանից ոչ այնքան հեռու գտնվում է հերոսական քաղաքը (խոսքն ըստ երևույթին Լենինգրադի մասին է— Ս. Գ.), որն ահավոր էջեր է թողել մարդկության պատմության մեջ: Ինչեր ասես չի կատարվում այդ հեքիաթային քաղաքի պարիսպների տակ, այն վերարտադրելու համար հարկավոր է մի Հոմերոս կամ Ֆիրդուսի:— Այնուհետև 1944 թ. Մայիսի 1-ին գրած այս նամակում Լ. Պետրոսյանը կնոջը տեղեկացնում է.— Այս նամակը գրում եմ ծանր մարտերի պահին. մահու և կենաց կռիվ է մղվում գազազած թշնամու դեմ: Գերմանական «շուն ասպետները» մահամերձի իրենց վերջին րոպեին կառչում են յուրաքանչյուր մետր հողից ու քարից, բայց մեր փառապանծ գվարդիականները գրողի ծոցն են ուղարկում նրանց՝ իրենց ֆյուրերի հետ: Մեր մարտական գործողությունները գտնվում են իրենց ավարտման շրջանում:

Սիրելի Ամալյա, իմ թանկագին ընկեր, իմ մասին կարող ես բոլորովին չանհանգստանալ: Ես լավ եմ և կլինեմ միշտ այդպիսին: Այսօր մայիսի մեկն է: Մեզ պատշաճ նվերներ բաժանեցին: Առաջին բաժակը խմել եմ քո և մեր այնքան ջերմ սիրո կենացը: Այսօր փոխանցեցի Ձեզ 2000 ռուբլի որպես իմ ֆրոնտային, մայիսմեկյան նվերը...

Գտնվում եմ առաջավոր գծում...

Ձերմ համբույրներով՝

Քո **Լյուդվիգ»:**

1944 թ. աշուն: Նահանջող և ջախջախվող հիտլերյան հորդաները խորհրդային քաջարի մարտիկների ճնշման տակ կամաց-կամաց ետ էին շարտվում: Որպե առ որպե ազատագրվում էին թշնամու կողմից զավթված մերձբալթյան գյուղերն ու քաղաքները: Առաջին Մերձբալթյան ռազմաճակատի գումարտակներից մեկի հրամանատար Լյուդվիգ Պետրոսյանը մտոք տեղափոխվել է յուրայինների մոտ, կարոտած իր կնոջն ու փոքրիկներին՝ Հենրիկին, Մարգիկին ու Լիդային, խրամատում զինվորական ուսապարկը ծնկին դրած՝ հազիվ ճարած տետրակի մի թղթի վրա գրում է. «Բարև Ամալյա ջան:

Ամալյա Պետրոսյանը որդու՝ Հենրիկ Պետրոսյանի հետ այցի է եկել Պրիսկուս գյուղում (Լատվիական ԽՍՀ) հանգչող իր ամուսնու՝ Լյուդվիգի շիրմին, 1974 թ.:

Ներիր, որ գրում եմ շտապ և կարճ: Օրս անցնում է կատաղի մարտերում, բայց ինձ ըզգում եմ շատ լավ: Աշխատում եմ որպես բատալիոնի հրամանատար: Երեկ (10—9—44) ստացա հրաման և բատալիոնը ընդունեցի խրամատում՝ մարտի ամենաթեժ պահին: Հանգիստ եղիր, սիրելի՛ս, կպահպանեմ առողջությունս և միաժամանակ ոչ մի ֆաշիստ չեմ թողնի, որ անցնի իմ պաշտպանած գծից:

Ամալյա ջան, այսուհետև նամակներ կգրես նոր հասցեով: Այն է՝

Դ/փ № 34482 «Կ»:

ՀԳ. Բարևիր բոլոր հարազատներիս:

Հետևիր Սովինֆորմբյուրոյի Առաջին Մերձբալթյան (I прибалтийский) ֆրոնտի գործողություններին, որտեղ կռվում է նաև քո Լյուդվիգը:

Մի լավ համբուրում եմ քեզ և երեխաներիս:

Քո Բանվոր Լ.»:

Հայրական համբույրի կարոտ մեծացան Լյուդվիգ Պետրոսյանի երեխաները: Նախկին ժուռնալիստ մարտիկի մահվան մասին ահա թե ինչ է գրել ռազմընկերոջ կնոջը Միխայիլ Իվանովիչ Նարդը.

«Բարև ձեզ, հարգելի ընկ. Պետրոսյան

Կատարելով իմ ընկերոջ, Ձեր ամուսնու՝ Լյուդվիգ Գեորգի Պետրոսյանի, խնդրանքը, հայտնում եմ, որ 1944 թ. հոկտեմբերի 28-ին նա ծանր վիրավորվեց մարտում և ուղարկվեց հոսպիտալ:

Չգիտեմ, նա գրե՞լ է Ձեզ այդ մասին, թե ոչ: Ես նրան էլ չեմ տեսել: Հոսպիտալից հայտնեցին, որ 44 թ. նոյեմբերի 5-ին Լյուդվիգ Պետրոսյանը մահացել է: Բացի մեր նախնական պայմանավորվածությունից (եթե մեզանից մեկին ինչ-որ բան պատահի, մյուսը հարազատներին տեղեկացնի) նա Ձեզ հանձնելու համար ինձ ոչինչ չի թողել: Մարտական սխրանքների համար Լյուդվիգ Գեորգևիչը պարգևատրվել է Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով, բայց ստանալ չհասցրեց: Շքանշանը մոտ ժամանակներս Ձեզ կուղարկեն: Իսկ ես ուղարկում եմ արտոնագիր և ծանուցագիր: Ասեմ, որ Լյուդվիգ Գեորգևիչը 9 բ խնայդրամարկղում ուներ 2400 ռ. գումար: Քանի որ այն ոչ մեկին կտակած չէր, ուղարկվել է Մոսկ-

«Բանվոր» թերթի բաժնի վարիչ Լյուդվիգ Պետրոսյանը (ձախից առաջինը) և իր ռազմաճակատային ընկերը Մերձբալթյան առաջին ռազմաճակատում: Դադարի պահ է: 1944 թ.:

Հայրենական մեծ պատերազմից մի քանի ամիս առաջ Լենինականի «Բանվոր» թերթի խմբագրության հյուրն էր աշխարհահռչակ Վահրամ Փափազյանը (առաջին շարքի կենտրոնում): Նրա ձախ կողմում արձակագիր և դրամատուրգ Լյուդվիգ Միքայելյանն է, աջում՝ թերթի խմբագիր Հովհաննես Բաղդասարյանը: Թիկունքում կանգնած են (ձախից) ժուռնալիստ Լյուդվիգ Պետրոսյանն ու գրականագետ Արամ Գրիգորյանը (այժմ ապրում է Մոսկվայում), Լենինական, 1940 թ.:

վա: Դուք պետք է հայտնեք Ձեր հասցեն, որպեսզի այդ գումարը ուղարկեն: Ահա այն հասցեն, որով գումարն ուղարկվել է՝ Մոսկվա—16, Նեգլիննայա—12, Պետբանկի դաշտային հիմնարկների վարչություն, խնայգրքույկ № 561723, տրված է ՊԿԳ 1189, դաշտային փոստարկղ 83274-ի կողմից: Այն Մոսկվա է ուղարկվել 9;12.44 թ.:

Եթե որևէ բան անհասկանալի լինի, գրեք, ես կպատասխանեմ:

Իմ հասցեն է՝ Դաշտային փոստ 28354

Նարդ Միխայիլ Իվանովիչ

Մարտական ողջույններով՝ **ստորագրություն:**

ՀԳ. Ներեցեք, որ Ձեր անուն-հայրանունը չեմ հիշում»:

Մոտ հինգ տասնամյակ է գլորվել խիզախ հայորդու մահվան օրից: Բայց այսօր էլ երբ Հենրիկը, Մարգիկն ու Լիդան ծանոթանում են իրենց հոր ռազմաճակատային նամակներին, միշտ հանդիպում են այդ նամակներում իրենց հոր մուրացանական պատգամին. «Հայրենիքի թշնամու դեմ կռվելը, նրա ազատության համար մեռնելը սրբազան պարտք է...»: Լյուդվիգ Պետրոսյանը հավատարիմ մնաց Գևորգ Մարզպետունու սրբազան այս ուխտին:

ԹՈՒԽ ԱՉՔԵՐՈՎ, ՈՍԿԵ ՍՐՏՈՎ ՏՂԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ (ԱՆԴՐՈՒՇ) ԵՐԱՆՈՍԻ ՍԱՐԳՍՅԱՆ (1912—1943)

Երևանի № 3 մասսայական գրադարանում է աշխատում Շուշանիկ Սարգսյանը: Եվ ամեն անգամ աշխատանքից տուն (Պուշկինի № 48) վերադառնալիս նրան թվում է, թե պատից նայող նրա զոհված ամուսնու լուսանկարն ասում է. «Շնորհակալ եմ, Շուշիկ, պատիվս և երեք որբուկներիս սուրբ ու քաղցր պահելու համար: Ինչ արած, ես զոհվեցի, զոհվեցի, որ դուք խաղաղ ապրեք, որ Ժորաս երբեք չիմանա, թե ինչ է պատերազմը...»:

Մի՞թե որբ մեծացածը մի օր չի իմանա, թե ինչ է պատերազմը: Մի՞թե Ժորան չգիտի, որ իր հայրը ապրել է ընդամենը երեսուն տարի, զոհվել է 1943 թ. Կրասնոդարում: Մի՞թե Ժորան չգիտի, որ իր հայրը ևս որբ է մեծացել Ֆրանկանոցում (այժմ՝ Ամբերդ, Էջմիածնի շրջանում): Այստեղ է նա ծնվել, հաճախել դպրոց, գրել առաջին թղթակցությունները: Հետո՞. հետո տեղափոխվել է Երևան, ուսանել և աշխատակցել «Սոցիալիստական գյուղատնտեսություն» (հետագայում «Կոլխոզնիկ») թերթին: Անդրուշը եղել է ակտիվ կոմերիտ, սովորել է կոմունիստական համալսարանում, աճել օր-օրի: Նա լավ է ճանաչել գյուղն ու գյուղացուն, սիրել է հայրենի հողն ու ջուրը, բերքն ու բարիքը, գրել հանուն բարձր բերքի և հանուն մարդկային ազնվության՝ հոդվածներ, ակնարկներ, և բոլորը՝ ջերմ, սրտացավ ու բարի: «Ավանգարդում» Անդրուշը գյուղերիտ բաժնի վարիչ էր: ՀԼԿԵՄ 9-րդ համագումարի պատգամավոր ընտրվեց: Իր հույզերի, խոհերի, ցանկությունների մասին սիրում էր կիսվել Հմայակ Նալբանդյանի, Արտեմ Բաղալյանի, Թևան Խաչյանի հետ: Երբ հոգնում էր, մտնում էր խմբագիր Մկրտիչ Մանուկյանի սենյակը կամ Ալ-Մարտինին դիմում, թե «Ե՛կ, մեզ էս ծանր վեճերից հանիր»:

Բայց ուխտադրուժ Գերմանիան ի զեն կոչեց վերը նշված ավանգարդցիներին: Նրանք էլ հետ չդարձան. զոհվեց և Անդրանիկ Սարգսյանը կամ, ինչպես խմբագրությունում էին կոչում նրան, Անդրուշը: 1941 թ. սեպտեմբերի 4-ին նրա գրած մի նամակում կարդում ենք. «Շուշիկ ջան, եթե նամակ չստանաս, մի՛ տխրիր: Քաղցր բարևներըս՝ բոլոր-բոլորին: Համբուրում եմ մորս (նրան, խնդրում եմ, լավ նայես), քեզ և երեխեքիս: Եթե գամ, հաղթանակով կգամ, եթե ես չգամ էլ, հաղթանակը կգա, Ձեզ կգտնի: Շուշիկ ջան, ի՞նչ լուր ունես Վախթանգից և Արամայիսից... Համբուրում եմ բոլորիդ, հետո կգրեմ, մեկնում ենք գրոհի»:

Վերջացավ պատերազմը: «Ավանգարդի» խմբագիր Արամայիս Մնացականյանն ու արձակագիր Վախթանգ Անանյանը հաղթանակով ետ վերադարձան: Նրանք տարբեր առիթներով միշտ գովասանքի խոսքեր էին ուղղում իրենց էջմիածնեցի ընկերոջ հասցեին: Այսօր էլ կարծես դեռ ականջիս հնչում է Լուսակերտի իր ամառանոցում հանգստացող «Որսորդական պատմվածքների» անզուգական վարպետի դիպուկ և պատկերավոր խոսքը Անդրուշի մասին.

— Թուխ աչքերով, ոսկե սրտով տղա էր: Նա վերջին անգամ գործուղման գնաց Լենինական: Չհասցրեց նյութ գրել, հենց հունիսի 22-ին էլ ետ դարձավ և հաջորդ առավոտյան ինքնակամ գնաց զինկոմիսարիատ, «ինձ էլ տարեք» խընդրանքով: Է, ես արդեն ծեր եմ, իսկ Անդրո՞ւշը: Նա միշտ ջահել է մնում, հավերժական ջահել:

Անդրուշի մասին Գևորգ Դևրիկյանը լավ ակնարկ է գրել Էջմիածնի շրջանային թերթում, հրեն՝ սեղանիս է: Լավ էլ վերնագրել է՝ «Տուն դարձ՝ սրրտի ճանապարհով»: Անդրուշը, ինչպես իր զոհված ժուռնալիստ ընկերները, իրենց սխրանքով ու կյանքով ընթերցողների գիտակցության և սրտի մեջ թողել են մի կանաչ արահետ, որը գնալով պիտի ծաղկի և դառնա երախտիքի պոռոտա...

Լեյտենանտ Անդրուշ (Անդրանիկ) Սարգսյանի անունը հավերժացել է Հայաստանի ժուռնալիստների միության նախասրահի մարմարե հուշատախտակին: Անդրանիկը, ինչպես լրագրող Սերոբ Գևորգյանը (Աշտարակի շրջ. թերթից), զոհվեց 1943 թ. փետրվարին Կրասնոդարի մարզում: Նա հայկական 409-րդ հրաձգային դիվիզիայի գնդերից մեկի ավագ քաղղեկն էր:

ՆԱՄԱԿԸ՝ ՎԵՐՋԻՆ ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՍՏԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ (1912—1942)

«Մանկալ», «Խորհրդային Հայաստան», «Ավանգարդ», «Սոցիալիստական գյուղատնտեսություն», «Պիոներ կանչ» և բազմաթիվ այլ թերթերի նախապատերազմական համարներում Հովհան Սարգսյանը հանդես էր գալիս փոքրիկ ինֆորմացիաներով, հոդվածներով ու ռեպորտաժներով: Առօրյա ամեն մի դրական երևույթ դրվատում էր նրա գրիչը: Անհաչառ էր և խստապահանջ: Որպես ուսուցիչ և դպրոցի տնօրեն աշխատեց Էջմիածնի և Աշտարակի շրջանի գյուղերում (Աղավնատուն, Դոխս, Հայթաղ): Հիմնական աշխատանքին զուգահեռ մամուլի արտահաստիքային լիազոր էր Արարատյան դաշտում: Որքան բարի էր և հետևողական որպես ուսուցիչ, այնքան հեռատես էր և օբյեկտիվ որպես լրագրող: Երբ հայրենիքը ի զեն կոչեց, նա իր եղբայրներ Գերասիմի, Աղասու և Աբիսողոմի հետ դուրս եկավ թշնամու դեմ: Մնաս բարով ասաց գյուղացիներին, իր մանկության ու պատանեկության ընկերներին ու երբ զինակոչիկների հավաքակայան եկավ, տեսավ՝ գյուղի գրեթե ողջ տղամարդիկ այնտեղ են: Կատակով ասաց՝ «Գոնե մեկդ մնացեք, որ նախագահ աշխատեք...»: Բոլորը ծիծաղեցին, չնայած որ բոլոր ուղեկցողների աչքերը լի էին արցունքով:

Հովհանը ծնվել է 1912 թ. Աղավնատուն գյուղում: Եղել է պիոներական և կոմերիտ ակտիվիստներից: Ավարտել էր Էջմիածնի երկրորդ աստիճանի դպրոցը: Տնտեսական պայմանների թելադրանքով չէր կտրվում գյուղից: Պատերազմի դաժան օրերին Մոլդավիայից, Բեսարաբիայից ստացված նրա նամակները նորից պարունակում էին մի հոգս. «Խոմ ձյուն շատ չեկա՞վ: Վազերը ցուրտը չի՞ տարել: Հաց ունե՞ք, թե՞ չէ... մի քիչ էլ յոլա գնացեք, հեսա, ուր որ է՝ էս շուն Հիտլերի մոռթը կջարդենք և էլի կգանք՝ մեր տուն ու տեղին տեր կկանգնենք: Ամուր պահեք ձեզ: Միք վախի: Տանից նայեք Մասիսին ու նրա պես կանգուն մնացեք: Համբուրում եմ բոլորիդ: Աստղիկ ջան, իմ կյանքի ընկեր, քրոջս՝ Արուսին, ասա, իրեն շատ եմ կարոտել: Խրամատում

մի պահ ննջեցի, նա աչքիս դեմ եկավ: Միք անհանգստանա: Մինչև աշուն կգամ: Ձեր Հովնան»: Ու մինչ յուրայինները կատանային մանկավարժ զինվորի հաջորդ նամակը, ոսոխի գնդակը գործեց իր սև ոճիրը՝ զոհվեցին և՛ Հովնանը, և՛ Գերասիմը, և՛ Աղասին: Վերադարձի բախտ վիճակվեց միայն Աբիսողոմին: Նա երկար տարիներ բուժական բնագավառի աշխատող է (այժմ Երևանի № 1 բուժ. ուսումնարանում) և ամեն-ամեն անգամ, երբ ձեռքն է առնում օրվա մամուլը, աչքի դեմ է գալիս իր մանկավարժ և լրագրող Հովնան եղբայրը, որն իր մահկանացուն կնքեց 1942 թ. Կերչում, երեսուն տարեկան հասակում:

ՀՈՎՆԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Հարությունյան Ա. և ուրիշներ**—Հայաստանի ուսուցիչները Մեծ հայրենականում. Ե., 1982, էջ 270—271.

...ԵՍ ՀԱԶԱՐ ՀՈԳՈՎ ԱՊՐՈՒՄ ԵՄ ՀԻՄԱ

ԱՐԱՄԱՅԻՍ ԲԱՐԽՈՒԴԱՐԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ (1910—1913)

— Ամուսինս՝ Արամայիս Սարուխանյանը, ապրեց ընդամենը կյանքի երեսուներեք գարուն, իսկ ե՞ս, ես արդեն յոթանասունին եմ մոտենում:

— Հին և հավերժական վշտից հուզված, թաշկինակը սեղմելով ափի մեջ, շարունակում է զոհված լրագրողի այրին՝ Աշխեն Վարդանյանը:

— Այս տանը նա էլ է ապրում. ահա նրա լուսանկարը: Նա միշտ մնքում է՝ ջահել, իսկ ես ծերանում եմ...

Ու մինչ զոհվածի այրին կվերադառնի իրեն, ես ծանոթանում եմ Արամայիս Սարուխանյանի «Անձնական արխիվին»: Ծնվել է 1910-ին Սիսիանի շրջ. Բոնակոթ գյուղում: Վաղ մանկությունից կրել է որբության կնիքը. ծնողները շուտ են մահացել: Դեռ երեխա՝ սեփական աշխատանքով է ապրել (եղել է գառնարած): Գյուղում տարրական կրթություն ստանալուց հետո կյանքի ճանապարհը նրան բերել է Երևան: Պատանու գեղջկական, արևախանձ դեմքը, ամոթխած նայվածքն ու անհամարձակությունը զգացնել են տալիս նրա աշխատասիրությունն ու նուրբ հոգին: Կոմերիտ երիտասարդի նկատմամբ անհուն համակրանքով է լցվում ժողովրդական ուսուցիչ Սիմակ Սահակյանը: Վերջինս Արամայիսին դասախոսում էր Երևանի բանֆակում: Տեսնելով իր սանի խոհեմ և խելացի, աշխատասեր և բանիմաց վարքագիծը՝ Սիմակը աջակցում է սիսիանցի տղային իր ուսումնառությունը շարունակելու Երևանում նոր բացված Հայաստանի կոմունիստական գյուղատնտեսական բարձրագույն դպրոցում: 1931 թ. Արամայիսն ընդունվում է ԽՄԿԿ շարքերը: Ծնորհաշատ ուսանողը տարվում է հասարակական եռանդուն գործունեությամբ: Բարձրագույն կրթություն ստանալուց հետո (1934 թ.) նշանակվում է ՀԼԿԵՄ Դիլիջանի շրջկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ: Այնուհետև որպես պատասխանատու քարտուղար և խմբագիր աշխատում է Աշտարակի և Դիլիջանի շրջանային թերթերում: 1936—1941 թթ. Արամայիս Սարուխանյանը «Սովետական Հայաստան» թերթի գիշերային հերթապահներից էր: Նա մայր թերթում աշխատեց նաև որպես կուսակցական բաժնի հրահանգիչ՝ ակտիվորեն թղթակցելով հանրապետական մամուլին և ռադիոյին:

— Ե՞րբ է Արամայիսը զորակոչվել բանակ, որտե՞ղ է ծառայել, որտե՞ղ է զոհվել.— մեր հարցերին պատասխանում է նրա այրու ձեռքով գրված ամուսնու կենսագրականը: Ահա նրանից մի հատված. «Հայրենական պատերազմի հենց առաջին օրը ամուսինս բանակ զորակոչվեց Սպանդարյանի շրջանի զինկոմիսարիատի կողմից: Բանակում ծառայել է որպես քաղաշխատող՝ լեյտենանտի կոչումով: Արամայիս Սարուխանյանը մասնակցել է Կովկասյան լեռնաշղթայի (երևի Հյուսիսային Կովկասի—ՍԳ) պաշտպանությանը, հետո խիզախաբար մարտնչել է Կրասնոդար քաղաքի ազատագրման համար ծավալված մարտերում, այդ ընթացքում որովայնից ստացել է ծանր վերք և 1943 թ. մայիսի 16-ին մահացել հոսպիտալում...»:

Երեկոն մութի իր վերմակն է փռում Երևանի վրա: Լենինի պողոտայի № 16 շենքի 13-րդ բնակարանից դանդաղ իջնում եմ աստիճաններով, մտապատկերումս զոհված մարտիկ ժուռնալիստի՝ կնոջը հասցեագրած նամակի վերջին խոսքերն են.

Ես հազար հոգով ապրում եմ հիմա ու կապրեմ դարձյալ,
Մահվան չոր ձեռքը, օ՜, չի՜ կարող ինձ փոշի դարձնել.
Բնության գոկում հավերժ ապրելու համար եմ ծնվել:

Միքելանջելոյից բերված անմահությունը խորհրդանշող այս տողերը մեկ անգամ ևս ապացուցում են, որ ժուռնալիստ, մարտիկ և քաղաքաշինող Արամայիս Սարուխանյանը իր գիտակցված անմահությամբ և «հազար հոգով ապրում է հիմա ու կապրի դարձյալ»:

«ՀԱՅՐԵՆԻՔԸ»

ՄՆԱՑԱԿԱՆ ԱՎԱԳԻ ՍԻՄՈՆՅԱՆ (1905—1943)

Բանաստեղծ Արշալույս Սարոյանի հետ նորից գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի տանն ենք: Արշալույսի ջերմ, բարձրաձայն զրույցն ու ծիծաղը, գեներալի հետ նրանց անմնացորդ կիսվելը հանախ էին ինձ հնարավորություն տալիս միջամտելու նրանց հուշապատումին: Ու երբ ես ուզեցի իմանալ, թե որտեղացի է, որտեղ է կռվել և զոհվել ժուռնալիստ Մնացական Սիմոնյանը, նրանք կիսազարմացած՝ հարցիս հարցով պատասխանեցին:

— Հայրենիքին որտեղի՞ց գիտես... Նրա մասին ահա թե ինչ ենք գրել այսօր Արթիկի շրջխորհրդի գործկոմին:— Ու մինչ բանաստեղծ ընկերս կվերծաներ «Հայրենիք» բառի գաղտնիքը, պաշտոնաթող զորապետը ինձ ցույց է տալիս մի միջնորդագիր.

«Արթիկի շրջանային սովետի գործկոմի նախագահ ընկ. ՀՐԱՆՏ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

89-րդ Թամանյան հայկական եռակի շքանշանակիր հրաձգային դիվիզիայի վետերանների կոմիտեն դիմում է Ձեզ ձեր շրջանի Գետափ գյուղացի Մնացական Ավագի Սիմոնյանի հիշատակը հավերժացնելու համար:

Կապիտան Սիմոնյանը Հայրենական մեծ պատերազմի սկզբից զինվորագրվել է 89-րդ հայկական դիվիզիայում մարտնչելու թշնամու դեմ: Դիվիզիայի մարտերի դժվարին օրերին կապիտան Սիմոնյանը 400-րդ հրաձգային գնդում որպես պրոպագանդիստ հերոսական գործ կատարեց. վաշտից վաշտ, դասակից դասակ անցնելով ոգեշնչում էր գնդի անձնակազմը նորանոր սխրագործությունների համար: Անձնական քաջության համար գնդի անձնակազմը սիրում և հավատում էր ընկ. Սիմոնյանին: 1943 թ. հերոս քաղաք Նովոռոսիյսկի տակ կապիտան Մնացական Ավագի Սիմոնյանը իր կյանքը նվիրեց հայրենիքի զոհասեղանին:

89-րդ Հայկական Թամանյան դիվիզիայի վետերանների կոմիտեն սույն նամակով ցանկանում է Ձեզ հիշեցնել կապիտան Սիմոնյանի սխրանքների մասին, որպեսզի քննարկեք Ձեր նիստում և ինչ-որ ձևով նրա հիշատակը հավերժացնեք: Այն մեծ դաստիարակչական նշանակություն կունենա:

89-րդ Հայկական Թամանյան դիվիզիայի
վետերանների կոմիտեի նախագահ՝ Ն. Գ. ՍԱՖԱՐՅԱՆ
Կոմիտեի քարտուղար՝ Ղ. Մ. ԴԱԼԼԱՔՅԱՆ»

Զանցած մի քանի ամիս զոհված մարտիկի հայրենի գյուղում բարձրացավ բազալտե մի հասեստ հուշակոթող, որձաքարե սրբատաշ պատվանդանին քաջարի մարտիկի կիսանդրին է՝ կրծքին շքանշաններ:

Գարնանային կեսօրը, թռչունների ճռվողյունն ու Արագածից փչող մեղմ զեփյուռը անհուն հրճվանքով են լցրել սրտերս: Սառնաղբյուրից Արթիկ ենք գալիս Արշալույսի և Քրիստափոր Թափալցյանի հետ: «Լենինագործի» խմբագրությունում ենք: Ահա 1943 թ. նոյեմբերի 20-ին

լույս տեսած երկէջանոց թերթի 2-րդ էջը: Այնտեղ տպագրված «Ջերմ հանդիպում» լրաբերը տեղեկացնում է. «Մի քանի օր առաջ Երևան ժամանեց Թամանյան 89-րդ դիվիզիայի հատուկ դելեգացիան՝ Հայաստանի աշխատավորությանը պատմելու դիվիզիայի հերոսական պայքարի ու հաղթանակի մասին: Դելեգացիայի մեջ է մեր շրջանի Սառնաղբյուր գյուղացի, կոմերիտական Արշալույս Սարոյանը: Նա եղավ իր հայրենի գյուղում, որտեղ հանդիպում ունեցավ աշխատավորության հետ: Գրող-մարտիկ, շքանշանակիր Արշալույս Սարոյանը նույնպիսի խանդավառ հանդիպումներ ունեցավ շրջկենտրոնի, Պեմզաշենի աշխատավորների հետ...»: Ա. Սարոյանի՝ թերթում տպագրված «Ռազմաճակատից» բանաստեղծության ձախ կողմում ընթերցողը կհանդիպի զինվորական մի լուսանկարի՝ հետևյալ մակագրությամբ.

«Նկարում— (ձախից-աջ) ավագ Վանիկ Հովսեփյան՝ պարգևատրված Կարմիր աստղի շքանշանով, մայոր Գևորգ Կարապետյան՝ Կարմիր աստղի շքանշանով (իսկ պատերազմից առաջ՝ «Պատվո նշան» շքանշանով), ավագ Արշալույս Սարոյան՝ Կարմիր աստղի շքանշանով»:

Երեսուն տարվա վաղեմություն ունեցող այս լուսանկարն ու անցյալի դառը հուշերը հուզում են բանաստեղծ ընկերոջս: Առանց այն էլ սիրտը բանաստեղծ թամանցուն դավաճանում էր: Ու երբ աչքն ընկավ ավագ լեյտենանտ Խիկար Բարսեղյանի (այժմ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր) գործող բանակից՝ «Լենինագործի» նույն էջում տպագրված ակնարկին և մի լուսանկարի, իրեն բնորոշ անմիջականությամբ շուտ գալով կողմս՝ բարձրաձայն գոչեց.

— Հայրենի՛քն է, ...ահա՛ քո փնտրածը:

Ռազմաճակատային սույն թղթակցությունից, զրուցակիցներիս ջերմ հուշերից ու գովեստներից արդեն հայտնի է դառնում, որ Մնացական Սիմոնյանին ամբողջ մի դիվիզիա Հայրենիք է կոչել: Ահա թե ինչպես է սկսել «Լենինագործին» ուղարկած իր ակնարկը ռազմաճակատային թղթակիցը.

«Բոլորը անվանում էին նրան «Հայրենիք»: «Հայրենիք» էր կոչում նրան մի ամբողջ զորամաս:

— «Հայրենիքն» է խոսում,— ասում էին ռազմիկները, երբ նրանց առաջ կրակոտ ելույթ էր

Կապիտան **Մնացական Սիմոնյան**

ունենում գնդի ագիտատոր կապիտան Մնացական Սիմոնյանը:

— «Հայրենիքն» է հրամայել,— կրկնում էին նրանք՝ կատարելով սովետական այդ սպայի մարտական այս կամ այն առաջադրանքը:

Հայրենիքը կապիտան Մնացական Սիմոնյանի ամբողջ էությունն էր, նրա ներքին աշխարհի ամբողջ բովանդակությունը, նրա բոցավառ հոգու ու կյանքի ամբողջ իմաստը...»:

— Դպրոցն ավարտելուց հետո,— միջամտում է մեր զրույցին «Լենինագործի» նախկին խմբագիր, ՀԿԿ Արթիկի շրջկոմի առաջին քարտուղար Ալբերտ Հովհաննիսյանը,— Մնացական Սիմոնյանը որոշ ժամանակ աշխատել է ուսուցիչ, գյուղխորհրդի և կոլտնտեսության նախագահ: Հասարակական ակտիվ գործունեության համար ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի կողմից 1938 թ. առաջ է քաշվել կուսակցական աշխատանքի. նշանակվել «Լենինագործ» թերթի խմբագրի տեղակալ և ՀԿԿ Արթիկի շրջկոմի ագիտացիայի ու պրոպագանդայի բաժնի վարիչ: Ամուսնացած էր: Կնոջ անունը Սիրանուշ է, Երևանում է ապրում, քրոջը՝ Պարզիկ: Նրանք էլ ձեզ հետաքրքիր տեղեկություններ կարող են տալ...

Առիթից օգտվելով, որ «Լենինագործի» խմբագրությունում ենք, թերթում եմ ոչ միայն պատերազմական օրերի, այլև հետագայում լույս տեսած «մարտական», հոբելյանական համարները: Ահա 1975 թ. մայիսյան մի համար: «Երեսուն տարի անց» թղթակցությունից ներքև տպագրված «Գետափցի հայրենասերը» իրապատումում Մեծ հայրենականի մասնակից, պահեստի փոխգնդապետ Մովսես Հակոբյանը գրում է. «Ես որպես ակնատես ու մարտական ընկեր հանախ եմ եղել Մնացական Սիմոնյանի կողքին, կռվել ու խիզախել ահեղ մարտերում ու զգացել, թե նա որքան էր նվիրված իր հայրենիքին: Ինչ էլ ծրագրեր Մնացականը, նպատակը մեկն էր՝ «Ասեն ինչ հանուն Հայրենիքի»: Եվ պատահական չէ, որ տղաները Հայրենիք էին կանչում նրան: Կարճ ժամանակ անց նրա կրծքին շողացին Կարմիր աստղի, Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանները: ...Նովոռոսիյսկի ճակատամարտերից մեկի ժամանակ մենք առաջադրանք էինք ստացել ճեղքել թշնամու օղակն ու գրավել Սախարնայա Գոլովկա բարձունքը: Աչքիս առաջ քաջաբար կռվում էր Մնացականը: —Այնուհետև ակնատեսը վկայում է.— Առաջադրանքը կատարվեց, ու երբ կամաց-կամաց քաշվեց վառոդաբույր փոշին, ինձնից ընդամենը մի քանի քայլ հեռավորության վրա, հրացանը կրծքին սեղմած, պառկած էր գետափցի զինվորը: Մոտեցա, աջով բարձրացրի ուսերին անզոր թեքված գլուխն ու վերջին անգամ համբուրեցի նրա արնաներկ ճակատը...»:

Ու մինչ Գետափում կստացվեր «Հայրենիքի» սև թուղթը, փոստատարը Պարզիկ Սիմոնյանին՝ մարտիկի քրոջը, հանձնեց եղբոր ձեռքով գրած նամակ-պատգամը.

«...ես գիտեմ, թե ինչի համար եմ գնացել կռվի և ում համար եմ զոհվելու: Այսպես՝ իմ պես պետք է մտածի ոչ միայն յուրաքանչյուր ազնիվ կոմունիստ, այլև յուրաքանչյուր խորհրդային քաղաքացի: Ահա թե ինչու ես ձեզանից պահանջում եմ՝ լինել հպարտ, քաջ, անվախ, արհամարհել բոլոր դժվարությունները, աշխատել գիշերցերեկ՝ առանց ձեռքերը ծալելու հանուն Հայրենիքի, հանուն Ստալինի:

Ով ուզում է՝ իր հարազատը շուտ գա, նա պետք է գիտենա, որ դրա համար հարկավոր է հպատակեցնել գերմանական ֆաշիզմը...

...Յուրաքանչյուր խորհրդային քաղաքացի պետք է օրինակ վերցնի կապիտան Գաստելլոյից, 28 գվարդիականներից...

Պարզիկ ջան, ջերմագին բարևներս հայտնիր տանջված քրոջս՝ Մարմարին և երեխաներին: Քեզանից խնդրում եմ, եթե երեխաները հիվանդանան, ինձանից չթաքցնես, հեռագրիր, ես կգամ: Համբուրում եմ բոլորիդ:

Քո և Ձեր **Մնացական»:**

Տարիներ են անցել: Թբիլիսիի ռազմա-հետևակային ուսումնարանի սան, Թամանյան դիվիզիայի 400-րդ հրձագային գնդի քաղպրոպագանդիստ և անվեհեր մարտիկ Մնացական (Հայրենիք) Սիմոնյանի անունն այսօր անմահացել է Երևանի Ժուռնալիստի տան նախասրահում՝ զոհված լրագրողների հիշատակը հավերժացնող մարմարե հուշատախտակին, Գետափում կառուցված զոհվածների հուշակոթողին: Եվ ամեն, ամեն անգամ, երբ խոսք է բացվում թշնամու գնդակից կյանքից վաղաժամ հեռացած հայորդի հերոսների՝ Հունան Ավետիսյանի, Վարդգես Ռոստոմյանի, Սուրեն Առաքելյանի, Ջահան Կարախանյանի և մարտադաշտերում փառքով անմահացած թամանցիներ Մամիկոն Խաչանյանի, Սուրեն Մարգարովի, Պապիկ Ավալյանի, Ժորա Աղաջանովի, Արսեն Հովհաննիսյանի և այլոց մասին, ակամայից հաղթանակով վերադարձած նախկին թամանցիները հպարտությամբ են վերհիշում նաև իրենց Հայրենիք ընկերոջը՝ Մնացական Սիմոնյանին: Թերևս նրան ավելի դիպուկ կարելի է բնութագրել մեծանուն զորավար Գայի խոսքերով. «Կոմունիստի կոչումը շատ է պարտավորեցնում, բայց տալիս է միայն մեկ արտոնություն՝ առաջինը մարտնչել հայրենիքի համար»: Հայրենիքի համար մարտնչողների հենց առաջին շարքում էլ 1943-ին Նովոռոսիյսկի մոտ, Գորա Դոլգայա բարձունքն ազատագրելիս , խոցվեց ժուռնալիստ կոմունիստ (1929 թ.), քաղաշխատող և հայրենիքի իսկական զինվոր, 38-ամյա Հայրենիքը՝ ղասմալեցի Ավագի որդին[1]:

---

[1] Ս. Սիմոնյանին վերաբերող կենսագրական տվյալներին կարելի է ծանոթանալ ՍԼԻ-ի հայկական մասնաճյուղի արխիվում, ֆ. 1, ցուցակ 70, գործ 2070, 11 թերթ:

ԼԵՌՆԱԳՈՐԾՆԵՐԻ ԿԵՆՍԱԳԻՐԸ

ՎԱՂԱՐՇԱԿ
ՂԱԶԱՐԻ
ՎԱՐԴԱՆՅԱՆ
(1910—1943)

Հայաստանի ժուռնալիստների միությունը Լենինական քաղաքի Սվերդլովի փող. № 270 շենքի 41-րդ բնակարանի տիրոջից ստացավ մի նամակ: Այն սկսվում էր այսպես.

«Հարգելի ժուռնալիստներ, համաձայն տրված հայտարարությունների[1] ես՝ Յուրիկ Վաղարշակի Վարդանյանս, ուղարկում եմ իմ զոհված հոր՝ «Լեռնագործ» թերթի նախկին խմբագիր Վաղարշակ Ղազարի Վարդանյանի մասին տեղեկություններ, մեկ հատ լուսանկար և նամակներ՝ նրա ձեռքով գրված ռազմաճակատից...

Հարգանքներով՝ **Յուրիկ Վարդանյան»:**

Գրասեղանիս Յուրիկի ուղարկած «Հայրական գործն է»: Պարզվում է, որ Վաղարշակ Վարդանյանը ծնվել է 1910 թ. Ախուրյանի շրջանի Դիրաքլար (այժմ Կառնուտ) գյուղում: Նրա մանկությունը համընկել է Առաջին համաշխարհային պատերազմի և քաղաքացիական կռիվների տարիներին, իսկ Երկրորդ համաշխարհայինը վերջակետ է դրել նրա կյանքին: Վաղարշակ Վարդանյանը հայկական 89-րդ Թամանյան դիվիզիայի 400-րդ գնդի գումարտակներից մեկի հրամանատարի քաղաքով տեղակալն էր: Նա Արթիկի շրջգինկոմիսարիատից բանակ զորակոչվեց, երբ Երևանում կազմավորվում էր հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան: Տանը թողեց իր երկու որդիներին՝ Մաքսիմին և Աշոտին, փոքրիկ դստեռը՝ Ռիմային: Կինը՝ Հրանուշը, սպասում էր իր չորրորդ զավակին: Բաքվից, նախնական զինվորական վերապատրաստման դասընթացներն ավարտելուց հետո, «Լեռնագործի» խմբագիրը կապիտանի ուսադիրներով մեկնեց կրակային գիծ: Գիշեր ու ցերեկ Թերեքի ափերին պայթում էին թշնամու ռումբերը, նրանց գընդացիրների փողերը անընդմեջ կրակոցներից շիկացել էին, ֆաշիստները գործադրում էին ընդունակ և հրացան, սվին և ատրճանակ, երբեմն գործը հասնում էր ձեռնամարտի: Քանի-քանի՛ անգամ է խմբագիր Վաղոն՝ անվարան նայել մահվան աչքերին և շահել վճռական մարտը, իսկ դադարի պահին էլ ծոցաբլոկնոտից պոկել մի թերթիկ և վրան գրել. «Բարև, Մաքսիմ և Աշոտ ջան: Ես շատ լավ եմ: Լավ սովորում եմ և սովորեցնում: Իմ պահանջն է ձեզանից, որ դուք լավ և գերազանց սովորեք, բացի այդ՝ լինեք շատ կարգապահ ինչպես տանը, այնպես էլ դպրոցում և դրսում: Մայրիկին կլսեք, ինչ որ կհանձնարարի, կկատարեք: Եթե Հրանուշը գրեց, որ դուք լավ չեք սովորում և իրեն չեք լսում ու չարություն եք անում, այն ժամանակ ես ձեզանից կխոովեմ...

Համբույրներով՝ Ձեր հայր **Վաղ. Վարդանյան**
10 նոյեմբերի 1942 թ.»:

Հյուսիսային Կովկասում դաժան օրեր էին: Հողը հագեցել էր արյունից, երկինքը՝ ծխից ու փոշուց: Թշնամին ռմբակոծում էր տուն ու դպրոց, հիվանդանոց ու մանկապարտեզ, գործարան ու թանգարան, թալանում էր խանութներն ու հրդեհի մատնում անշարժ գույքը: Աղբյուրները պայթեցրած ժայռերի ավազաքարերից խեղդվում էին, հրդեհված անտառը օգնություն էր աղերսում մշուշապատ երկնքից, վախվորած գայլն ու եղնիկը, գնդացրային կրակից կուչ եկած, մեջքները դեմ էին տվել ձորապանկի ժայռին, աչքները փակել, իրենց վայրի բնազդով հաշտվել էին սպասվող մահին: Վաղինակը հիշել էր Մանթաշը, Արագածի չքնաղ ծաղկունքն էին իրեն կանչում: Թերեքի արյունածուփ ալիքները նրա աչքին Ախուրյանի եղեռնական օրերի կոհակներն էին հիշեցնում, դադար էր, բայց ինչպիսի՞ դադար...

— Տանից նամակ ունես, Վաղո: Աչքալուսանքը կովից հետո, հաղթանակից հետո Արթիկում կխմենք,— կատակեց շամշադինցի Պապիկ Ավալյանն ու Վարդանյանին մեկնեց թիկունքային մի ծրար՝ ռազմիկի ամենամեծ ուրախությունը: Ներքին երջանկությունից աչքերը լցվեցին, երբ կարդաց կնոջ ավետիսը. «Վաղո ջան, աչքդ լույս, տղա ծնվեց: Քեզ շատ է նման: Մաքսիմը, Աշոտը ու Ռիման եղբայր ունեցան: Անունը Յուրիկ ենք դրել, դու շատ էիր սիրում այդ անունը»:

Յուրիկ Վարդանյանի պաշտելի սեփականությունն են այսօր իր հոր ռազմաճակատային նամակներն ու լուսանկարները: Նրանցից մեկը բացիկ է՝ առաջին էջի վրա ռուսերեն մարգարտաշար ձեռագրով լրացված.

«Հայկական ԽՍՀ,
Արթիկի շրջան,
Բանավան Արթիկ-տուֆ, տուն 10:—
Բաժանման գծից ներքև հետադարձ հասցեն է,—
Դաշտային փոստ 17300—
Վարդանյան Վ. Ղ.»:

Նամակը գրվել է 1943 թվականի ապրիլի 29-ին: Թամանցի հայորդին կնոջը տեղեկացնում է, որ ինքը առողջ է և գտնվում է նույն տեղում, հետո էլ թե. «Հրանուշ ջան, հայրենիքի պաշտպանությունը յուրաքանչյուրիս սրբազան պարտքն է, իսկ ես այդ պարտքը պատվով, ազնվաբար եմ կատարում, դու դրանում համոզված եղիր և հպարտացիր»:

1943 թ. փետրվարի 12-ին Հյուսիս-կովկասյան ռազմաճակատի հրամանատարի հրամանով 89-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար է նշանակվում գնդապետ Նվեր Սաֆարյանը: Դեռ վաղ մանկությունից կոտորած, գաղթ, տեղահանություն տեսած արճեշցի տղան այսօր արդեն զենք ու զրահ կապած անխնա կռվում էր «Թուրքիայի արյան ու գաղափարի» ընկերոջ՝ ֆաշիստական Գերմանիայի դեմ՝ ի մարտ առաջնորդելով հազարավոր հայածին քաջորդիների: Նրանց հետ էր և Վաղարշակ Վարդանյանը: 400-րդ գունդը թշնամու դեմ կռվում էր աջ կողմից, իսկ 526-րդը՝ ձախից: Վրեժխնդրության և ցասման այդ օրերին, երբ «Պրավդայում» տպագրվեց հայ ժողովրդի նամակը ռազմադաշտում գտնվող իր որդիներին, դիվիզիայի քաղբաժնի պետ Ազիզ Կիրակոսյանը մոտեցավ Վաղարշակին և կատակով հարցրեց.

— Բացի հաղթանակից հիմա ի՞նչ ես ուզում:

— Տուն գնալ, նորածին տղայիս տեսնել,— «Լեռնագործի» խմբագրի պատասխանը հուզեց քաղբաժնի պետին, և նա խոստացավ. «Մի քիչ էլ կռվենք, հետո քեզ մի խումբ զինվորների հետ կուղարկենք մի քանի օրով Հայաստան, թիկունքային հերթերի առջև ելույթ ունենալու և ձերոնց տեսնելու»:

«Լեռնագործի» աշխատողների հիշողության մեջ այսպիսին է թերթի նախկին խմբագիր **Վաղարշակ Վարդանյանը:**

Ինչպես վկայում են ԽՍՀՄ պաշտպանության մինիստրության արխիվի 89-րդ հրաձգային դիվիզիայի ֆոնդերը (ց. 209926, գործ 11, թերթ 16) հայ թամանցիները միայն 1943 թ. մայիսի 1-ից մինչև օգոստոսի 15-ը անց են կացրել 150 վաշտային, 37 գումարտակային, 16 գնդացրային և 15 շտաբ-հրամանատարական վարժություններ՝ պատճառելով թշնամուն մեծ թվով մարդկային և ռազմական վնաս: Մարտական այդ բոլոր գործողությունների ընթացքում տուֆագործների թերթի խմբագիրը իրեն խիզախաբար է դրսևորել և նամակներով հուսադրել թիկունքում յուրայիններին. «Թշնամին շուտով կստանա իր արժանի պատիժը, հաղթանակը մերը կլինի»: Այնուհետև նույն «կարճամետրաժ» նամակում կապիտան Վարդանյանն իր հորը՝ Ղազարենց Ղազարին գրում է. «Ամի ջան, լավ նայիր Հրանուշիս ու երեխաներիս: Թող չերևա, որ ես այդտեղ չեմ, նրանք որևէ պակաս կամ կարիք ունեն...»:

Վերջին նամակ, վերջին ցանկություն և վերջին զրույց: Թե ինչպե՞ս, որտե՞ղ և ե՞րբ զոհվեց թամանցի զինվորը, ականատեսներից բանաստեղծ Արշալույս Սարոյանն իր «Համազարկեր հազարաձայն» հուշագրությունում (Ե., 1975 թ.) պարզ և հավաստի ձևով է այն ներկայացրել:

---

[1] Խոսքը թերթերում եղած ՀԺՄ հայտարարության մասին է, որով զոհված ժուռնալիստների վերաբերյալ ՀԺՄ պահանջել էր տվյալներ—ՍԳ:

Այստեղ՝ գրքի 69—70 էջերում կարդում ենք. «Կրակը մեղմացավ: Արդեն իրիկնային մշուշն էր իջել բարձունքի վրա ու լանջերին, երբ մերոնք նկատեցին, թե ինչպես գերմանացիներից մեկը սողալով մոտենում է դիակներին:

— Տեսե՛ք, դիակներից մեկը տանում է... Ես հիմա քեզ տանել ցույց կտամ,— Սուրենը ձեռքը պարզեց ավտոմատին:

— Պե՛տք չէ, մի՛ կրակի,— կոմիսարի սաստող ձայնի մեջ կար և՛ տխրություն, և՛ ինչ-որ անբացատրելի մի մեղմություն,— ո՞վ գիտե, գուցե եղբայրն է. եկել է եղբոր դիակը տանելու: Զինվորները տարակուսանքով նայեցին միմյանց:

— Իրենց զոհված ընկերների դիակները տեսնելով՝ գերմանացիները էլ ավելի կսարսափեն մեզանից,— շարունակեց կոմիսարը:— Նրանցից շատերը այլևս նախկին մոլեգնությամբ չեն համարձակվի գրոհել....

Կոմիսարը ձեռքը տարավ դեպի երկարաճիտ կոշիկներն ու փողի միջից դուրս քաշեց մի փայտիկ՝ ծայրին կարմիր մի կտոր.

— Ով առաջինը կբարձրանա այս բարձունքը,— բառերը մեկ-մեկ շեշտելով ասաց Ավալյանը,— թող այս դրոշը իր հետ տանի և ամրացնի կատարին:

— Տվեք մեր դասակին, —պատրաստակամություն հայտնեց Մալխասյանը:

— Տվեք Մալխասյանի դասակին՝ այս խիզախների դասակին,— կրտսեր լեյտենանտին պաշտպանեց գումարտակի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ կապիտան Վաղարշակ Վարդանյանը՝ Արթիկի «Լեռնագործ» շրջանային թերթի նախկին խմբագիրը: Պապիկը Սամվելին պարզեց դրոշը: Մալխասյանն այն վերցրեց, կտորը խնամքով փաթաթեց ձողի վրա և անցկացրեց գոտու արանքը:

Մի քանի օր հետո թշնամին նահանջեց և ամրացավ Կուրբադսկայա բարձունքի վրա: Այս անգամ արդեն մերոնք էին գրոհի գնում: Նորից բարձունքն ի վեր գրոհում էին Սամվել Մալխասյանի դասակի մարտիկները, որոնք գրոհող գնդի կենտրոնում էին՝ ջրհորի մոտ:

Մարտի ամենաթեժ պահին ծանր վիրավորվեց Վաղարշակ Վարդանյանը: Սամվելը միայն մի ակնթարթ կարողացավ խորունկ վշտով նայել ընկած սպային. նա զինվորներից մեկին հանձնարարեց կապել վերքն ու տանել համեմատաբար անվտանգ մի տեղ՝ մինչև մարտը հանդարտվի: Իսկ ինքը շարունակեց գրոհը: Դեռ նոր էին մոտենում բարձունքի կատարին, երբ ծանր վիրավորվեց նաև Մալխասյանը: Սուրենը տեսավ ընկնող հրամանատարին, արագորեն մոտեցավ նրան և տեսնելով, որ նա արդեն դուրս է գալիս շարքից, նրա գոտուց հանեց Ավալյանի տված դրոշը, անցկացրեց իր գոտու մեջ և դարձավ զինվորներին.

— Դասա՛կ, լսի՛ր իմ հրամանը, իմ հետևից առա՛ջ...»:

Թերևս, սիրելի՛ Յուրա, փաստական այս մանրամասերին դուք տեղյակ չեք, միգուցե կարդացած կլինեք Ալբերտ Հովհաննիսյանի «Բարի լույս, աշխարհ» և Սիմոն Նալբանդյանի «Մարտական Կարմիր զինվորը» գրքերն ու Սաշիկ Գրիգորյանի «Այրված օրագրի չգրված էջերը» ակնարկը: Վերջինս ամբողջապես նվիրված է ձեր հայրիկին, իսկ առաջին երկու գրքերում հատուկ դրվատանքով և մտերմիկ տոնով ու սրտացավությամբ է խոսվում ձեր հայրիկի կյանքի և ռազմի սխրանքների մասին: Այդ նրանք են ինձ հաղորդել, որ ձեր հայրը զոհվել է Կուրբադսկում, երեսուներեք տարեկան հասակում, որ նա ձեզ չի տեսել և ունեցել է միայն մեկ փափագ.

Շրջեի նորից Կառնուտի լանջին,
Մանթաշի ձորում՝ ես մի գառնարած,
Թող որդուս ծիլը հասներ ականջիս,
Ու ես լռեի, ես՝ ավեր ջաղաց:

Իրագործվեց հաղթանակի նրա հույսը, բայց հայրենի խրճիթ՝ Կառնուտ, վերադառնալ չվիճակվեց մանկավարժ, ժուռնալիստ և զինվոր Վաղարշակ Վարդանյանին: Լեռների, լեռնագործների սովոր ու սիրահար նրա աչքերը փակվեցին՝ կարոտ խաղաղության ու ազատության, կարոտ հայրենի անուշաբույր ծաղիկներին և Արփաչայի պաղ-պաղ ջրերին:

Բատրակ, նախարապահ, դաշտավարական բրիգադի բրիգադիր, բատրակմիության հրահանգիչ, ՀԼԿԵՄ շրջկոմի կազմբաժնի վարիչ, Լենինականի պրոֆխորհրդի կազմհրահանգիչ, կոլտնտեսության նախագահ, ՀԿԿ Կենտկոմին կից պրոպագանդիստական դպրոցի սովորող, 1937 թ. Արթիկի շրջանային «Լեռնագործ» թերթի խմբագիր— ահա Վ. Վարդանյանի անցած ճանապարհը մինչև զինվոր դառնալը[1]:

[1] Տես ՄԼԻ-ի կուսարխիվ, ֆոնդ 1, ցուցակ 78, գործ 3556:

ԵԹԵ ՉՈՀՎԵՄ ԷԼ, ԳԻՏԵՄ, ԹԵ ԻՆՉՈՒ...

ՌՈՒԲԵՆ
ԱՐՇԱԿԻ
ՓՈՐՍՈՒՂՅԱՆ
(1909—1944)

Ռուբեն Արշակի Փորսուղյանի ինքնակենսագրականից իմանում ենք, որ ծնվել է 1909 թ. հունվարի 1-ին Կարս քաղաքում, ուսուցչի ընտանիքում: Առաջին համաշխարհային պատերազմն ու Հոկտեմբերյան հեղափոխությունը փոխեցին Արշակ Փորսուղյանի ընտանիքի և կյանքի հասցեները՝ Կարսից Երևան: Պատանի Ռուբենը (մտերիմները Ռուբիկ էին կոչում) Երևանի Աբովյանի անվան դպրոցն ավարտելուց հետո դարձավ պիոներական և կոմերիտական աշխատանքների շնորհալի կազմակերպիչ: Այդ են վկայում նրա արխիվում պահպանված կոմերիտմիության Երևանի գավկոմից և Կոտայքի շրջկոմից տրված տարբեր բնութագրերն ու ՀԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար Ավակովի ստորագրությամբ հաստատված բնութագիրը: Ռ. Փորսուղյանը ՀԼԿԵՄ Կենտկոմի բյուրոյի անդամության թեկնածու էր, ՀԼԿԵՄ Կենտկոմի գյուղբաժնի վարիչ:

1933—1934 թթ. նա Երևանի պետական համալսարանում ոչ միայն գերազանցիկ ուսանող էր և ՀամԼԿԵՄ 15-ամյակի անվան անհատական թոշակառու[1], այլև այստեղ նոր հիմնադրվող «Հարվածային ուսանող» բազմատիրաժ թերթի խմբագիրը (1933—1936), միևնույն ժամանակ՝ «Հարվածային բանվորի» հատուկ թղթակիցը (այստեղ մինչ ուսանելը բաժվար էր): Որպես բացարձակ գերազանցիկ ուսանողի 1934—1936 ուսումն. տարիներին Ռուբենին թույլատրել էին ՀԱՄԽ-ի պրոֆդպրոցում կուսպատմություն դասավանդել:

Համալսարանի պատմության ֆակուլտետն ավարտելուց հետո (նորից գերազանցությամբ) Ռ. Փորսուղյանը հանձնում է ասպիրանտուրայի քննությունները և որպես թարգմանիչ ու գիտաշխատող 1939—1940 թթ. ձգտում իր նպաստը բերել հայրենի պատմագիտության զարգացմանը՝ ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղում:

— Ռուբենն իմ ասպիրանտն էր: Նրա թեման՝ «Հայաստանի խորհրդայնացումը», գրեթե պատրաստ էր պաշտպանության, երբ բռնկվեց Մեծ հայրենականը: Կամավոր գնաց: Ես էլ գնացի: Վերադարձից հետո միայն սևեր հագած նրա կնոջ՝ Ռուզան Նանումյանի արտաքինից իմացա, որ Ռուբենը զոհվել է:— Զրույցի ժամանակ ասում է ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը: Ռ. Նանումյանը և իր որդի Ռոմիկ Փորսուղյանը այսօր էլ սրբությամբ են պահպանում մասունք դարձած, դեղնած և եռանկյունի այն նամակները, որ գրել է Ռուբենը Հյուսիսային Կովկասից, Ուկրաինայից և Բելոռուսիայից: Սակրավորների ջոկի հրամանատար, հետո էլ ստորաբաժանման քաղղեկ Ռուբեն Փորսուղյանի նամակները լեցուն են ֆաշիզմի հանդեպ ատելությամբ և ոխով: Դեռ 1942-ին, հաղթանակի հավատը սրտում, նա կնոջը գրում է. «...Սիրելի Ռուզան, համոզված եղիր, որ 1942 թվականը մեր ժողովրդի համար կլինի մեծագույն պատմական հաղթանակների տարի: Հավատա, ես կվերադառնամ. կվերադառնամ հաղթանակով և կավարտեմ սկսածս դիսերտացիոն աշխատանքը: Ուրախ եմ գիտության ասպարեզում քո ձեռք բերած հաջողություններով: Գրկում եմ—համբուրում:

Քո **Ռուբեն**»:

Հայկ. ԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Ռուզան Նանումյանն այսօր էլ, պատերազմի հաղթական ավարտից քառասուն տարի հետո, գիտական աշխատանքով տարված, երբ հոգնած է լինում, նորից ու նորից խոհերով ու հույզով ծանրաբեռ, թերթում է ամուսնու նամականին, լուսանկարներն ու հուշատետրերը, ու երբ հույզի, ցավի ու սիրո արցունքները խեղդում են նրան, կարծես անտեսանելի մի ձայնաժապավեն հուշում է ամուսնու ռազմանա-

[1] Տես՝ ՀամԼԿԵՄ Կենտկոմի 1934 թ. նոեմբերի 4-ի № 157 արձանագրությունը, կետ՝ 15. անվանական թոշակառուների ցուցակ:

կատային պատգամը՝ իր միակ որդուն. «Իմ լավ, իմ խելոք Ռոմիկ: Լսիր մայրիկին, լավ սովորիր: Ապրիր ուրախ ու զվարթ, սիրիր մամային շատ ու շատ»: Ռուբենի նամականուց պարզ երևում է, որ նա շատ է սիրել ոչ միայն յուրայիններին՝ մորը, քրոջն ու եղբորը՝ գրականագետ Գ. Վանանդեցուն, այլև պաշտել է հայրենի հողն ու ջուրը, ընկերների շրջանում սիրով է արտասանել Կարսին նվիրված բանաստեղծություններ ու երգեր:

— Զարենցը Կարսի ամենամեծ երգիչն է,— հաճախ է կրկնել նա ամենքի մոտ, բացեիբաց, չվախենալով ռեպրեսիաներից ու հալածանքներից:

— 1942-ի հոկտեմբերն էր: Հյուսիսային Կովկասում թշնամին կենտրոնացրել էր մեծ թվով զենք և զորք,— հիշում է Փորսուղյանի ռազմաճակատային ընկեր Սերգեյ Քրիստափորի Շահնազարյանը (Հայկ. ԽՍՀ շինարարության նախկին մինիստր):— Երբ ստորաբաժանումը գրոհի հրաման ստացավ, մի քանիսի դեմքի արտահայտությունը Ռուբենին դուր չեկավ: Նա կտրուկ ասաց. «Ով չի հավատում մեր հաղթանակին, թող զենք չվերցնի... թող մեզ հետ չգա...»: Քիչ հետո կրակային գծում էինք: Անհավասար մարտեր եղան, զոհեր՝ շատ: «Առանց զոհերի պատերազմ չի լինի»,— եղավ Ռուբենի հանգըստացնող վերջնախոսքը, և դադարի պահին ծնկին դրած բլոկնոտում ինչ-որ նշումներ արեց ու ասաց. «Մի հուսադրող նամակ էլ կնոջս գրեմ...»:

Գրասեղանիս նախկին խմբագրի ձեռագիրն է՝ ուղարկված Հյուսիս-կովկասյան ռազմաճակատից 1942-ի հոկտեմբերին: Նրանում կարդում ենք. «Հիտլերը կպարտվի. դրանում ոչ մի կասկած: Մեր գաղափարը՝ մարքս-լենինյան գաղափարը՝ լուսատու այդ աստղը, անպայման կհաղթանակի: Դրանում խորապես համոզված ենք: Ես էլ, իբրև այդ մեծ գաղափարների համար կռվող բանակի մի զինվոր, ամեն ինչ անում եմ, որպեսզի այդ հաղթանակն արագանա: Որքան էլ օրգանիզմս թույլ լինի, այնուամենայնիվ իմ սրբազան պարտքը պատվով կկատարեմ և չեմ արատավորի ոչ իմ անունը, ոչ ինձ ջերմորեն սիրող կնոջ ու երեխայի անունը, և ոչ էլ այն մեծ կուսակցության անունը, որի անդամը եմ ես...»:

Հավատարիմ իր մարտական երդմանն ու իրեն ջերմորեն սիրող կնոջն ու երեխային, հավատարիմ իր կուսակցությանն ու հայրենի հողին, չորս տարի գիշեր ու զօր մաքառելով թշնամու դեմ, Ռուբեն Փորսուղյանը Հյուսիսային Կովկասից հասավ մինչև Մոլդավիա, Բելոռուսիա և այստեղ էլ՝ Յանկա Կուպալայի հայրենիքում հաղթանակի պայծառ հավատով, զենքը ձեռքին կյանքին հրաժեշտ տվեց:

«...Սիրելի Ռուզան, իմ պաշտելի Ռոմիկ, կկատարեմ սրբազան պարտականությունս, ես կգամ հաղթական ժպիտով, ու մի այնպիսի կյանք կստեղծենք, որի նմանը ոչ մի տեղ չի լինի...» Ռուբենի բոլոր ցանկությունները չէ, որ իրագործվեցին: Թեև հաղթանակը եկավ, բայց նա չվերադարձավ, նրան բախտ չվիճակվեց գրկել-համբուրել իր միակ որդուն՝ Ռոմիկին:

Ռուբեն Արշակի Փորսուղյանի անունը անմահացել է ՀԿԿ Կենտկոմի հրատարակչության՝ Մամուլի տան նախասրահում և Հայաստանի ժուռնալիստների տանը կանգնեցված մարմարե հուշատախտակներին, ինչպես նաև երախտագետ սերունդների սրտում՝ բոլորին հիշեցնելով նախկին ժուռնալիստի և գիտաշխատողի սրբազան ինքնազգացումը. «Եթե զոհվեմ էլ, գիտեմ թե ինչու...»:

ՌՈՒԲԵՆ ՓՈՐՍՈՒՂՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Վարդանյան Փառանձեմ**—«Երազներ, որ մնացին անավարտ. «Երևանի համալսարան», 17 մայիսի 1968 թ., № 17, էջ 1—2:
2. **Վարդանյան Սեդա, Վեքիլովա Անդա, Ասատրյան Նվարդ, Իսկենդերովա Խանում, Էլբակյան Լաուրա**—«Խմբագրություն չվերադարձան», «Ավանգարդ», 14 ապրիլի 1974 թ., № 45:
3. **Սուքիասյան Դ.**— «Շատերից մեկը», «Երեկոյան Երևան», 2 ապրիլի 1985 թ., № 77, էջ 3:

ԵՐԿՈՒ ԿՅԱՆՔ ԵՎ ՄԻ ՍԵՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱԿՈԲԻ ՕՀԱՆՅԱՆ (1909—1942)

Իջևանի շրջանի «Լենինյան ուղիով» (այն ժամանակ «Հարվածային կոլխոզնիկ») թերթի խմբագրությունը պատերազմի թեժ օրերին լրիվ դատարկվեց: Պատերազմից դեռ մի տարի առաջ բանակ էր մեկնել թերթի պատասխանատու քարտուղար Լյուդվիգ Նիկողոսյանը: 1942-ին Լենինգրադյան ռազմաճակատում նա, ոտքից վիրավոր, հոսպիտալում բուժվում է, հետո նորից մեկնում կրակային գիծ: Մեկ տարի անց 43-րդ դիվիզիայի 181-րդ հրետանային գնդի շարքային, վիրավոր զինվորը ֆիզիկապես արդեն ի վիճակի չէր դեմ դուրս գալ թշնամուն: Նրան զորացրեցին: Այդ նույն ամիսներին ոտքի դեմ կռվում էին Իջևանի թերթի խմբագիր Համբարձում Օհանյանն ու բաժվար Սուրեն Օքմինյանը: Սուրենը սևքարեցի էր, օժտված բանաստեղծական ձիրքով: Նրա գրական առաջին թռթռվանքներն արդեն լուրջ հույսեր էին ներշնչում: Ցավոք թշնամու գնդակից խոցվեց «Հարվածային կոլխոզնիկի» բաժնի վարիչը և էլ խմբագրություն չվերադարձավ: Նույնը վիճակվեց նաև թերթի խմբագրին՝ Համբարձում Օհանյանին:

— Համբարձումը իմ մոտիկ ընկերներից էր...— պատմում է Իջևանի շրջանային թերթի նախկին խմբագիրներից Իսկանդար Էլլարյանն ու ինձ ծանոթացնում Օհանյանի կենսագրությանը:— Ծնվել է Ծամշադինի շրջանի Վերին Կարմիր Աղբյուր գյուղում: Որքան գիտեմ՝ 1909 թվականին: Նա էլ պիոներական-կոմերիտական աշխատանքից եկավ մանկավարժության և մամուլի աշխարհը: 1937-ին ավարտեց Երևանի կոմունիստական համալսարանը, Իջևանում աշխատեց պատմության ուսուցիչ, հետո՝ դպրոցի տնօրեն, այնուհետև մեր թերթի խմբագիրն էր...

Թերթում եմ «Հարվածային կոլխոզնիկի» հին ու նոր համարները: Միքայել Մարկոսյան, Համբարձում Օհանյան, Անդրանիկ Միրզոյան, Շամիր Օթարյան, Իսկանդար Էլլարյան, Մուսայել Մկրտումյան, Գերասիմ Դավթյան: Նրանք, գրեթե բոլորը, եղել են իրենց հայրենիքի զինվորը. երբ պետք է եղել՝ հող են վարել, մաճ են բռնել, երբ դպրոցն է կանչել նրանց— ուսուցիչ են դարձել, երբ ռումբեր պայթեցին— զինվորի շինել հագան: Գրչի և գրքի սովոր նրանց ձեռքերը հրացան ու գնդացիր, ռումբ և նռնակ են բռնել, որպեսզի պատերազմի ամպերը չհասնեն Իջևան և Ծամշադին, որպեսզի օրոցքում հանգիստ ննջեն իրենց մանկիկները և, աշխարհի դավին ու ցավին անտեղյակ, երբ մի քիչ մեծանան, էլ «Հիտլեր-Հիտլեր» չխաղան: Երնեկ պատերազմը միայն մանկական խաղ լիներ և դառն արցունքներ չքամեր փոքրիկ Օֆիկի (այժմ տնտեսագետ) և նրա քրոջ՝ Յունիկի (այժմ Իջևանի սանէպիդկայանի գլխավոր բժիշկ)աչքերից: Ինչպե՞ս, ինչպե՞ս նրանք լաց չլինեին, երբ իրենց տան կտուրը կաթում էր, երբ տաշտում հաց չկար, երբ տեսնում էին, թե ինչպես է մայրը լացախառն կարդում եռանկյունածալ մի թուղթ. «Օֆիկ ջան, քեզ համար լավ նվեր կբերեմ: Փողոցում մաճ չգաս. ավտոյի տակ կընկնես: Առավոտները շուտ վեր կաց, երեսդ լվա, հաց կեր, քեզ լավ պահիր... մամային կլսես, Յունիկին չծեծես: Կծում եմ թուշիկներդ:

Քո **հայրիկ**»:

Զանցած մեկ շաբաթ Օհանյանի հասցեն փոխվեց: Նա Երևանից բազմաթիվ զորակոչիկների հետ գնում էր դեպի հյուսիս՝ դեպի ռազմաճակատ և Աղստաֆայով անցնելիս օդային համբույրներ էր հղում կնոջն ու իր փոքրիկ դուստրերին, խոստովանելով. «Աշխեն ջան, չնայած մի քանի օր է, որ տանից դուրս եմ եկել, բայց շատ ու շատ եմ կարոտել Քեզ. ամեն գիշեր երազում քեզ և երեխաներին եմ տեսնում...»:

1941-ի հուլիսին ռազմաճակատ կամավոր մեկնած իր ամուսնուց շաբաթը գոնե մեկ անգամ Աշխենը նամակ էր ստանում, և որպեսզի այդ մասունքները չկորցներ, նա հետագայում այդ բոլորը արտագրեց մի ընդհանուր տետրում և

այն խորագրեց «Երկու կյանք և մի սեր...», կցելով նրան մի «գիտական առաջաբան».

«Այս տետրում արտագրելով ամուսնուս պատերազմական շրջանի նամակները՝ մի քանի նպատակ եմ հետապնդում: Նախ, որ նրա ամեն մի բառը կարդալով վերհիշեմ միասին անցկացրած մեր երիտասարդական անգնահատելի օրերը. հետո. կարծես թե ամեն օր ընթերցելով՝ նրանք որոշ հանգստություն են պատճառում վիրավոր սրտիս (բայց չեն բուժում), ապա՝ ի մի հավաքելով նրա ոսկյա բառերը, ուզում եմ, որ այսօրվա միամիտ, անմեղ մանուկները կարդան և համոզվեն, որ իրենց համար բաբախել է հայրական առողջ մի սիրտ...»:

Հայրական առողջ մի սիրտ... Իրոք այսպիսին էր Հ. Օհանյանի սիրտը. վկա նրա նամականին, որում կան այսպիսի տողեր. «...Բալիկներ ջան, ես շատ լավ եմ, աշխատում եմ Կարմիր բանակում, ձեզ համար հավերժական ազատության, ուրախ ու երջանիկ կյանքի կերտման մեծ գործին եմ մասնակցում...

Աշխեն ջան, նորից եմ խնդրում՝ երեխաներին ուրախ պահես: Քո մասին ոչինչ չեմ գրում, որովհետև քո ուրախությունը ես եմ, իսկ իմ ուրախությունը՝ Դու...

Համբույրներով՝
քո **Համո**

2 օգոստոսի 1941 թ.»:

Նախնական զինվորական պատրաստություն ստանալով Բաքվի ռազմական ուսումնարանում, Հմ. Օհանյանը ռազմաճակատ մեկնեց որպես կապավոր: Սեպտեմբերին արդեն որպես № զորամասի (դաշտային փոստ № 384) 76-րդ գնդի աննկուն քաղղեկ, նա քաջաբար մարտնչում էր թշնամու դեմ Գրոզնու, Մախաչկալայի, Մոզդոկի, Օրջոնիկիձեի, Նալչիկի ազատագրման համար մղվող մարտերում: Նովոռոսիյսկից 1941-ի դեկտեմբերի 16-ին Օհանյանը կնոջը տեղեկացնում է. «...Աշխեն ջան, վերջին շրջանում հերոսական Կարմիր բանակը կործանիչ հարվածներ է հասցնում գերմանական բանակին: Գերմանացիները մեծ կորուստներ են կրում արևելյան ֆրոնտում. մեր ամբողջ ժողովուրդն ու հերոսական Կարմիր բանակը այժմ կրում են հաղթանակը: Մենք արդեն ջարդում ենք գերմանական ավազակախմբերին...

Ջերմ բարևներով, քաղցր համբույրներով՝
քո **Համո**»:

1942 թ. հունվար: Զինվորական նոր տարի: Բոլորը միմյանց ամենաառաջինը Հաղթանակ են բարեմաղթում, հետո՝ Առողջություն, Քաջություն և Տունդարձ: Մեկն իր հորն է հիշել, մեկը՝ մորը, մյուսը՝ կնոջն ու երեխաներին: Քիչ այն կողմ առանձնացած քաղղեկը նորից յուրայիններին է մտաբերել և ցուրտ խրամատից գրում է. «...Թանկագինս, Աշխեն ջան, մեր անցած կյանքի քաղցրությունը ինձ ձգում է անվերջ դեպի քեզ. սիրո ապրումներս, երեխաներիս անհուն կարոտը մի րոպե ինձ հանգնում են տուն: Սակայն տուն գալու մասին այժմ չեմ մտածում: Դստրիկս՝ Օֆելյան, ճիշտ է ասել. «Մինչև կարմիրները սպիտակներին (ֆաշիստներին) չջարդեն, պապան չի գա...»:

Մեր խնդիրն է վերջնականապես ոչնչացնել ֆաշիստական ավազակախումբը և իրավունք վերցնել Հայրենիքից, մեծ Ստալինից ու գալ ձեզ տեսության: Աշխեն ջան, քաղղեկ մարդ եմ, եթե այսպես շարունակեմ, շատ կգրեմ, մանավանդ այսօր քաղինֆորմացիա եմ անցկացրել «Մեր զորքերի հաջողությունները Ղրիմում և Սևաստոպոլի հերոսական պաշտպանությունը» թեմայի շուրջ: Աշխեն ջան, չնայած մի անգամ էլ եմ գրել, բայց նորից հիշեցնում եմ, որ հունվարի 1-ին ստացանք կոլխոզնիկների կողմից ուղարկած ծանրոցը: Բաժանեցինք: Բոլոր բանակայինները նամակներ գրեցին նվեր ուղարկողներին՝ հայտնելով իրենց շնորհակալությունները: Այժմ մեր բանակը լավ է զգում կուսակցության, կառավարության և մեր ժողովրդի անդուլ հոգատարությունը իր նկատմամբ: Ինչպես երբեք ինձ բաժին հասան քիշմիշ, կոնֆետ, պեչենի, թաչկինակ, գինի... և շատ ու շատ բաներ: Տոնը լավ անցկացրինք: Հունվարի մեկի օրն էլ մեզ համար ազատ օր էր:

Գրիր տեսնեմ՝ Ս. Բորյանը որտեղ է, Միսակ Շահնազարյանը մի օր պատահական մարդու միջոցով մեզ նամակ էր գրել. ասում է՝ կամա՛ց գնացեք, գամ—ձեզ հասնեմ: Նա էլ մեր հետևից է գալիս, մոտիկ է...

Իմ փոխարեն համբուրիր Օֆիկիս և Յունիկիս...

Ջերմագին բարևներով և համբույրներով՝
Քո Համո:

Մեր հասցեն նույնն է՝
Դաշտային փոստ. 384, 76-րդ հետախուզական գունդ,

7.1.1942 թ.»:

Վերջին նամակ, վերջին գրավոր զրույց: Նամակի վերջում քաղղեկը, կարծես զգալով մոտալուտ մահը, գրել է.

«Մնաս բարով, իմ առաջին սեր...»:

Այսօր էլ «Խորհրդային Հայաստան», «Մանկական», «Սոցիալիստական գյուղատնտեսություն», «Կոլխոզնիկ» և բազմաթիվ այլ թերթերի ու պարբերականների նախապատերազմական համարները թերթելիս ընթերցողը կհանդիպի Համբարձում Օհանյանի լուսանկարներին և ստորագրությանը:

Ցավոք այդ ստորագրությունը չշարունակվեց. այդ անուն-ազգանունին շատերն այսօր կհանդիպեն մարմարե հուշատախտակին՝ Մամուլի տան ու Ժուռնալիստի տան նախասրահներում: Այդ անունը, նրա հիշատակն ու սխրանքը իր կյանքի բաղադրամասն է համարում կուսակցության և աշխատանքի վետերան, ժողովրդական դատարանի ատենակալ Աշխեն Սարգսի Օհանյանը, չէ՞ որ Նովոռոսիյսկից դեպի Թեմրյուկ ձգվող ռազմի ճանապարհին, նրա խմբագիր և ռազմիկ ամուսինը ընկավ քաջի մահով վասն հայրենյաց, հաստատ համոզվելով, որ ետմահու կապրեն ամենաքիչը երկու կյանք և մի սեր:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՕՀԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1. **Դանիելյան Ջ.**— Երկու կյանք և մի սեր,—«Լենինյան ուղիով», Իջևան, 1968 թ. մայիս:
2. **Մելյան Բալաբեկ**— «Անթեղած կրակներ— «Լենինյան ուղիով», Իջևան, 8 մայիսի 1976 թ., էջ 3:
3. **Նիկողոսյան Լյուդվիգ**—Մեր գրչակից ընկերը, «Սովետական Հայաստան», 6 սեպտեմբերի 1978, № 209, էջ 4:

«ՍՈՎԵՏՍԿԻ ՍՊՈՐՏԻ» ՀԱՅ ԹՂԹԱԿԻՑԸ



ՕՐԲԵԼՈՎ ՎԼԱԴԻՄԻՐ
(...—1941 թ.)

«Կրասնի սպորտ» (ներկայումս «Սովետսկի սպորտ») թերթի պատասխանատու խմբագրի տեղակալ Սոժինի ստորագրությամբ 1941 թ. հունիսի 18-ից պահպանվող մի տեղեկանքում կարդում ենք.

«Տրվում է սույնը ընկ. Վ. Լ. Օրբելովին առ այն, որ նա աշխատում է «Կրասնի սպորտ» թերթում որպես գրական աշխատող և 19/6—16/7 1941 թ. գտնվում է արձակուրդում»:

Այս ժամանակահատվածում Վլադիմիրը եկել է Գագրա՝ հանգստանալու և բուժվելու: Նրա արխիվում առ այսօր պահպանվում է մի նամակ, որով Ֆիզկուլտուրայի և սպորտի պետական հրատարակչությունը 1941 թ. ապրիլի 18-ին առաջարկում է մասնակցել «Սպորտը ԽՍՀՄ-ում» ժողովածուի նյութերի պատրաստմանը: Հրատարակչության գլխ. խմբագիր Սմիրնովը երիտասարդ ժուռնալիստին հուշում է, որ վերջինս գրքի համար գրի «Ձեռնամարտ», «Ըմբշամարտ» բաժինները:

Թերթում ենք Օրբելովի անձնական գործում պահպանվող մյուս փաստաթղթերը: Պարզվում է, որ սպորտային ժուռնալիստը ամուսնացել է 1940 թ. հունիսի 18-ին: Մի տարի անց արձակուրդ էր վերցրել և կնոջ հետ մեկնել Գագրա: Որոշել էր այստեղից մի քանի օրով գալ Հայաստան, լինել Զանգեզուրում և Տաթևում: Երրորդ օրն էր այստեղ, հանկարծ լսեց Գերմանիայի ուխտադրուժ հարձակման մասին և առանց կնոջ հետ խորհրդակցելու Վոլոդյան գնաց փոստ, հեռագրեց Մոսկվա՝ կամավոր բանակ մեկնելու համար: Արձակուրդն ու իր հանգիստը թողած՝ նա հուլիսի 28-ին արդեն մեր մեծ Միության մայրաքաղաքում էր: Աշխատում էր վերջացնել կիսատ գործերը: Անցավ մեկ ամիս. օգոստոսի 28-ին ընկերներն ու բարեկամները կրտսեր լեյտենանտ Օրբելովին Մոսկվայի մարզի Ռամենսկի շրջանի զինհավաքակայանում հրաժեշտ տվեցին: Քսան օր հետո, սեպտեմբերի 18-ի ստորագրությամբ «Մոսկվա, գլխավոր փոստ, Ա/ՅԱ-№ 957» հասցեով Մ. Ն. Օրբելովան ստացավ ամուսնուց մի նամակ.

«Թանկագին Միլա, ինձանից անկախ պատճառներով քեզ հազվադեպ կգրեմ: Հասցես մի քիչ փոփոխվում է: Ինձ լավ եմ զգում: Արդեն մարտական մկրտություն եմ ստացել: Երկու անգամ մասնակցել եմ գրոհի: Քեզանից դեռ նամակ չունեմ: Ինչպե՞ս ես դու այնտեղ ապրում: Այսօր հրամկազմը ուղարկեց քեզ փողի վկայական: Այն ստանալուց հետո զինկոմիսարիատից

ամսական կստանաս 600 (վեց հարյուր) ռուբլի: Եղիր առողջ: Համբուրում եմ,

Քո **Վոլոդյա:**

Հասցեն է՝

Գործող բանակ

Դաշտային փոստ № 610, լիտեր «Ա»

2-րդ գումարտակ, 2-րդ վաշտ»:

Լենինգրադյան ռազմաճակատում մասնակցելով Լոսինոստրովսկի, Վոլոգդայի, Չերեպովեցի, Բաբանոյի ազատագրման համար մղվող մարտերին՝ խիզախ քաջորդին ջախջախում էր թշնամու արյունռուշտ մոռթը, մտածում հայրենի հողի, հայրենի խաղաղ երկնքի, սպորտային նորույթների և իր այնքան սիրած կնոջ՝ Միլայի մասին: «Թանկագին հոգյակս,— կարդում ենք նրա 1941 թ. սեպտեմբերի 24-ի գրած նամակում,— հասցես, որ գրված է նամակիս մյուս երեսին, պարզվում է, որ վերջնական է: Քեզանից անհամբեր նամակներ եմ սպասում: Միայն քեզանից լուրեր ստանալուց հետո եմ մի քիչ հանգիստ լինում... Ինչպե՞ս եք դուք այնտեղ ապրում: Ես շատ եմ անհանգստանում: Խնդրում եմ՝ քեզ չզրկես սննդից: Ես գերազանց եմ սրնվում, ամեն օր ուտում եմ կարագ և մսով տաք ճաշ, երեկոյան անգամ նորմայից ավելի հավի բուլյոն կերա: Այսօր գտնվում եմ առաջավոր գծում, ինձ համար ոչինչ խորթ չէ, չնայած որ մահը այստեղ սպասում է ամեն մեկին, ամեն մի քայլի վրա: Այդ սրիկա գերմանացիներին ատում եմ ամբողջ հոգով: Մնա առողջ, Դետա, Բարևիր մայրիկին, հայրիկին, քույրիկներին և քեռիներին:

Ուժեղ համբուրում եմ, քո **Վոլոդյա»:**

Ու մինչ 3-րդ լեռնահրաձգային գումարտակի ավագ լեյտենանտ, սպորտի, երգի և գրականության սիրահար Վլադիմիր Օրբելյանի նամակը կհասներ **«Մոսկվա, Ուդելնայա Պլատֆորմա, Լենինսկ Ե-Գ** (Ж. Д), **Պոլևայա փողոց, № 7, Միլա Օրբելովային»,** թշնամու ինքնաթիռից արձակված ռումբը գործեց իր սև ոճիրը. զոհվեց գետնահյուղից գլուխը նոր դուրս հանած, հատուկ ծառայության 3-րդ գնդացրային գումարտակի շտաբի պետ, անվեհեր հայորդին: Դա պատահեց պատերազմի հենց առաջին տարում, 1941-ի սեպտեմբերի 24-ին՝ Միլային նամակ գրելու օրը, Խանդրովո գյուղի շրջակայքում, 80 կիլոմետր Լենինգրադից հեռու, որտեղով անցնում է Կիրովսկայա երկաթուղին:

Մանրամասն նկարագրելով Վլադիմիր Օրբելովի զոհվելու տեղն ու պայմանները, 3-րդ գընդացրային հատուկ գումարտակի կոմիսար Գ. Ի. Մաքսիմովը զոհված ժուռնալիստի այրուն տեղեկացնում է. «...Նրան թաղեցինք երեք կիլոմետր Ռուսանովկա կառամատույցից հեռու՝ օդանավակայանի կողքին: Ցավոք, ուժեղ մարտերի պատճառով չկարողացանք նրան թաղել ինչպես վայել է մարտում զոհվածին»:

Քանի՜, քանի՜ տարի է անցել, դեռ Սողոմոն Օրբելյանն ու յուրայինները սպասում են իրենց Վոլոդյային: Դեռ ապրում է զոհված ժուռնալիստի այրին՝ Միլա Օրբելովան, և ամեն-ամեն անգամ ձեռքն առնելով «Խորհրդային սպորտի ճանաչված վարպետները» սերիայով 1941-ին լույս տեսած փոքրիկ գրքույկը, «Սովետսկի սպորտում» հրատարակած ամուսնու հոդվածներն ու ակնարկները, նրա լուսանկարն ու նամակները, սպասում է, թե ուր որ է սիրալիր ժպիտը դեմքին ներս կմտնի ատլետիկ կազմվածքով իր Վովան ու կառաջարկի.

— Միլա՛, հագնվի՛ր, գնալու ենք ստադիոն: Այսօր այնտեղ մրցումներ կան, թերթի համար հոդված պիտի գրեմ...



Սասուն Գրիգորյանը Երևանում, Ժուռնալիստի տանը, զոհված հայ լրագրողներին նվիրված մարմարե հուշատախտակի առջև:

ՆՐԱՆՔ ԽՄԲԱԳՐԵԼ ԵՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԱՅԻՆ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

ԽԱՉԻԿ ԱՆԴՐԵՅԻ ԱԲԵՂՅԱՆ (1909—1987)

Նրա ամբողջ կյանքը հայ պարբերական մամուլին ծառայելու պայծառ օրինակ էր: Ծնվել է Խաչիկ Աբեղյանը պատմական Նախիջևանի գավառի Թազաքենդ գյուղում 1909 թվականի նոյեմբերի 2-ին: Դեռ վաղ դպրոցական հասակից սիրում էր հայ, ռուս և համաշխարհային գրականության դասականներին ընթերցել: Դպրոցական էր, երբ սկսեց գրել առաջին թղթակցությունները: 17—18-ամյա պատանու ստորագրությունը առաջին անգամ երևաց «Մուրճ-մանգաղ» («Գրոհ») Հյուսիս-կովկասյան երկրամասային հայկական թերթում: Նա այդ ժամանակ Ռոստովի ծխախոտի ֆաբրիկայում էր աշխատում: Հետո, 1928—29 թվականներին, նա «Մուրճ և մանգաղ» թերթում գրական աշխատող դարձավ, կուսակցական բաժնի վարիչ, ապա՝ թերթի պատասխանատու քարտուղար: Այնուհետև Խ. Աբեղյանը որպես ուսուցիչ երկու տարի աշխատեց Կրասնոդարի մարզի Գոյթղ (այժմ Տուապսեի շրջան) հայկական գյուղում: 1931—1935 թթ. նա «Գրոհ» թերթի պատասխանատու քարտուղարն էր, հետագա հինգ տարիներին՝ Դոնի-Ռոստովում «Ուդարնիկ» բանվորական թերթի խմբագրի տեղակալը: Մի տարի (1941 թ.) նա ուսանեց Մոսկվայի Ստալինի անվան ակադեմիայում, հետո տեղափոխվեց Երևան և 1941—1942 թթ. աշխատեց «Կոմունիստ» թերթում որպես բաժնի վարիչ: Խ. Աբեղյանը գերազանց էր տիրապետում հայերեն և ռուսերեն լեզուներին: Նա ոչ միայն գրում էր ակնարկներ և հոդվածներ, այլև կատարում թարգմանություններ: Երբ բռնկվեց Մեծ հայրենականը, ինչպես իր հարյուրավոր գրչընկերները, Խ. Աբեղյանը ևս ինքնակամ զինվորագրվեց Հայրենիքի պաշտպանությանը: 1942—1952 թվականներին մայոր հայորդին որպես խմբագրի տեղակալ ծառայեց «Բոյեվայա զվեզդա» («Մարտական աստղ») թերթի խմբագրությունում: Գրողներ Գևորգ Հայրյանի, Մարտին Քարամյանի, Վահան Արամունու, Սարգիս Բայանդուրի հետ նա գործադրում էր ամեն ջանք ու եռանդ, որպեսզի կերտի հայ մարտիկի դիմանկարը, նրան ներարկի ուժ և կորով ընդեմ մեր հողն ու պատիվը ոտնահարողների:

— Ես այդ թերթի խմբագիրը դարձա Գուրգեն Հովնանից հետո: Այն 45-րդ բանակի օրգանն էր, նրա մարտական տարեգիրը: Հետո,— մեր հանդիպումներից մեկի ժամանակ ասաց նախկին զինվորը,— ես ծառայության անցա 7-րդ գվարդիական բանակի քաղբաժնում որպես մամուլի գծով ավագ հրահանգիչ: Պատերազմական օրերի իմ խոհերի ու ապրումների մասին ես գրում էի մորս՝ Շուշանիկին և կնոջս՝ Գայանեին: Տղաներս՝ Ցոլակը, Աշոտն ու Վալերին, այն ժամանակ փոքր էին, նրանց հետ ես չէի կարող նամակով կիսվել:

[1] Մնացած ռազմաճակատային թերթերի խմբագիրների մասին, քանի որ տարբեր ստեղծագործական միությունների անդամներ են, կարդացեք համապատասխան բաժիններում (**հեղինակ**):

1952 թվականին Հայրենական մեծ պատերազմի առաջին և երկրորդ աստիճանի շքանշաններով և մի շարք մեդալներով կուրծքը զարդարած մարտիկ ժուռնալիստը հրաժեշտ տվեց զինծառայությանը և անցավ նորից իր «հին փեշակին»՝ լրագրությանը: «Սովետական մանկավարժ» ամսագրի, ապա «Սովետական Հայաստան» թերթի պատասխանատու քարտուղար, «Կոմունիստ» թերթի խմբագրի տեղակալ, 1965—1971 թվականներին էլ «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի խմբագրի տեղակալ աշխատեց նա: Ոչ միայն ակտիվ, անբասիր լրագրող էր Խ. Աբեղյանը և օրինակելի ծնող, այլև շնորհաշատ թարգմանիչ և մեծ հայրենասեր: Նրա տաղանդաշատ գրիչը հաջերեն է թարգմանել Կ. Մարքսի, Վ. Լենինի բազմաթիվ աշխատություններ: Կոմունիստ (1939 թ.), ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ Խ. Աբեղյանը կյանքի վերջին տարիներին (1979—1984 թթ.) Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի թարգմանության սեկտորի վարիչն էր: Մեծ է նրա ավանդը Վ. Ի. Լենինի «Երկերի լիակատար ժողովածուի» հայերեն հինգերորդ հրատարակության իրականացման գործում: Բացի մարտական շքանշաններից՝ և մեդալներից Խ. Ա. Աբեղյանը պարգևատրվել էր «Պատվո նշան» շքանշանով և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով:

— Ոչ միայն գրականագետ-հայագետներ և նկարիչներ, այլև տաղանդաշատ լրագրողներ և հայրենապաշտպան զինվորներ էլ են ծնում Աբեղյանները,— ակնարկելով իր Խաչիկ հորեղբորորդուն՝ կատակով ավարտում է մեր «Աբեղյանների տոհմաճշգրտումը» հարցազրույցը Հայկ. ԽՍՀ ժողովրդական նկարիչ Մհեր Աբեղյանը՝ խորհուրդ տալով Խաչիկ Աբեղյանին վերաբերող նյութերը ձեռք բերել նրա որդիներից՝ Ցոլակից, Աշոտից և Վալերիից:

«Մարտական աստղ» ռազմաճակատային թերթի նախկին խմբագիր, պահեստի մայոր, վաստակաշատ լրագրող և թարգմանիչ Խ. Ա. Աբեղյանը կյանքին հրաժեշտ տվեց 1987 թ. նոյեմբերին[1]:

[1] Խ. Աբեղյանի մասին մանրամասն տես ՄԼԻ-ի կուսարխիվում. ֆ. 1, ցուցակ 78, գործ 60:

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ (1912—1980)

Տարիների մտերմությունը Սուրեն Գրիգորյանի հետ և համատեղ աշխատանքը հեռուստառադիոպետկոմում մեզ այնպես էին հարազատացրել, որ ես երբեք չէի էլ մտածում, թե մի օր գուցե նա էլ դառնա իմ ակնարկների հերոսներից: Թվում էր, թե ես նրան լրիվ գիտեմ, չէ որ գնում-գալիս եմ իրենց տուն, մոտ եմ Արմենպրեսում բաժնի վարիչ աշխատող նրա քրոջ՝ Վիկտորյայի հետ, իր դուստրը՝ Աիդան և փեսան՝ Ստեփան Գևորգյանը, իմ հարազատ ընկերներից են... Ավաղ, ես գիտեի Սուրեն Սարգիսովիչի միայն քաղաքացիական տարիների կենսագրությունը: Եվ ահա, տասնամյակներ անց, ռազմաճակատային հայ մամուլի էջերում հանդիպում եմ նրա ստորագրությանը: Պարզվում է, որ Երևանի ցուցադրական դպրոցն ավարտելուց հետո (1932 թ.) ավագ գործընկերս որպես ուսուցիչ աշխատել է իմ ծննդավայրից 4—5 կմ հեռու գտնվող Իրինդ գյուղում: Հետո տեղափոխվել է շրջկենտրոն՝ Թալին: Այստեղ են երևան եկել երիտասարդ Սուրեն Գրիգորյանի ժուռնալիստական ընդունակությունները: Շրջանային թերթում (այժմ «Կոմունիզմի դրոշով») Ս. Գրիգորյանը գրական աշխատողից աճել է, դարձել թերթի պատասխանատու քարտուղար, խմբագրի տեղակալ, ապա՝ խմբագիր (1935 թ.):

— Այսօրվա պես խմբագիրը այդ ժամանակ ծառայողական ավտոմեքենա չուներ: Ոտքով, երբեմն էլ ձիով էի գնում գյուղից գյուղ, ծանոթանում աշխատանքային առօրյային և որպես ականատես գրում փոքրիկ հոդված կամ ակնարկ: Գերիշխողը շրջանային թերթերում ինֆորմացիան էր: Ձեր տանը շատ եմ եղել: Հայրը՝ Նալբանդ Սերոբը, ձիս շատ է պայտել...

Զրույցներից պարզվում է, որ Ս. Գրիգորյա-

նը քաջածանոթ է Թալինի շրջանի բոլոր գյուղերի նշանավոր մարդկանց և 30-ական թվականների անց ու դարձերին: Նա այդ օրերին «Սովետական Հայաստանի» և «Կուլտֆրոնտ» թերթերի սեփական թղթակիցն է եղել Թալինի շրջանում: Այստեղից է տեղափոխվել «Սովետական Հայաստանիի» խմբագրություն որպես գրական աշխատող, հետո էլ պատասխանատու քարտուղար, միաժամանակ խմբագրել «Բանգյուղթղթակից» թերթիկը:

1941 թ. մայիսին Ս. Գրիգորյանը կանչվեց զինծառայության: Խորհրդային բանակի քաղաշխատողների դասընթացներում կուրսանտ էր, երբ պայթեց Մեծ հայրենականը: Կրտսեր լեյտենանտ Ս. Գրիգորյանը ուղարկվեց Հարավային ռազմաճակատի քաղվարչության տրամադրության տակ՝ որպես «Հայրենիքի պատվի համար» զինվորական թերթի պատասխանատու քարտուղար (1941 թ.):

— Հայրիկիդ անշուշտ չես կարող հիշել: Գիտե՞ս, որ ես ու նա ծառայել ենք նույն դիվիզիայում՝ Հայկական 408-րդ հրաձգային դիվիզիայում, Հյուսիսային Կովկասում:— Կռահելով, որ հուզվում եմ, Սուրեն Գրիգորյանը «խոսքը կտուրն է գցում», ինձ առաջարկում գնալ գեներալ Նվեր Սաֆարյանի մոտ և որպես Երևանի քաղաքային խորհրդի դեպուտատության թեկնածուի նրա մասին ակնարկ գրել:

Ես կատարում եմ «Երեկոյան Երևանի» խմբագրի տեղակալի հանձնարարությունը: Ակնարկը տպագրվում է: Տարիներ հետո, երբ փորձում եմ վերլուծել Ս. Գրիգորյանի ջերմ և ուշադիր վերաբերմունքը, նոր եմ զգում, որ այն ունեցել է մտերմության հին արմատներ՝ սասունցիների հետ, Թալինի հետ, հորս հետ՝ աշխատանքային և մարտական օրերից... Ձեռքիս տակ է 408-րդ հայկական հրաձգային դիվիզիայի օրգան «Հանուն հայրենիքի» թերթը: Նրա ողջ ստեղծագործական անձնակազմը՝ Արշավիր Հակոբյանը (խմբագիր, այժմ դոկտոր, պրոֆ.), Մելիք Քոչարյանը, Արմենակ Թամազյանը, Մկրտիչ Ասլանյանը, Սիմոն Սարգսյանը (գրողներ) ինձ այսօր անձամբ ծանոթ են և հարազատ: Ի՞նչ, ի՞նչ իմանայի, որ այդ թերթի պատասխանատու քարտուղարը Սուրեն Գրիգորյանն է եղել, համեստ, նուրբ և բարի մի մարդ, որը երբեք հուշեր չէր պատմում կամ դժգոհում ոչ ուրիշներից, ոչ իրենից: Ահա ռազմաճակատային մեկ ուրիշ թերթ՝ «Մարտ հանուն հայրենիքի»: Այն Հայկական 261-րդ հրաձգային դիվիզիայի փաստացի տարեգիրն է, լույս է տեսել 1943 թ. ապրիլից մինչև 1945 թ. նոյեմբերը: Գուրգեն Հովնանից հետո որոշ ժամանակ ի տեղի խմբագրի աշխատեց բանաստեղծ Բաբկեն Կարապետյանը: Հետո թերթի խմբագիր նշանակվեց Սուրեն Գրիգորյանը: 1943-ի հունվարից 47-րդ բանակի քաղբաժնում որպես հրահանգիչ ծառայեց հայ քաջորդին: Քանի-քանի անգամ ռազմաճակատային գծից, ռումբերի պայթյունների ու գնդացիրների կրակի տակ, արհամարհելով մահը, Ս. Գրիգորյանը փաստացի, ականատեսի վկայությամբ, ակնարկներ և հոդվածներ պատրաստեց ռազմաճակատային մամուլի համար:

— Շուտ էր կողմնորոշվում, երբեք խուճապի չէր մատնվում, Կարո Ալավերդյանի, Մելիք Քոչարյանի, Հենրիկ Թումանյանի, Բաբկեն Կարապետյանի գործող բանակից ուղարկված թարմ նյութերով Սուրենը միշտ համալրում էր թերթի էջերը: Նեղն ընկած ժամանակ գրաշարները նրա օգնությանն էին դիմում,— պատմում է «Մարտ հանուն հայրենիքի» թերթի նախկին խմբագիր, այժմ պրոֆեսոր Գուրգեն Հովնանն ու ավելացնում.— ինձանից հետո թերթը խմբագրեց Սուրենը, իսկ 1945-ի նոյեմբերից, երբ այն դադարեց, Գրիգորյանը տեղափոխվեց Անդրկովկասյան ռազմաճակատի օրգան «Լենինյան դրոշի» խմբագրություն: Տասը տարուց ավելի նա այստեղ պատասխանատու քարտուղար էր: Նրա գործընկերներն էին գրողներ Մկրտիչ Ասլանյանն ու Մարտին Քարամյանը (Թբիլիսիից), Վարդան Վարդանյանը ու Հրաչյա Մուրադյանը (Երևանից), Հրանտ Պետրոսյանն ու Մնացական Մարկոսյանը և էլի ուրիշներ...

Շքանշաններով ու մարտական մեդալներով կուրծքը զարդարած միայն 1956 թ. մայոր լրագրողը զորացրվեց զինծառայությունից: Աշխատեց Հայպետհրատի քաղաքական գրականության բաժնում: Երբ հիմնվեց «Երևան» (հետ. «Երեկոյան Երևան») թերթը, նա նշանակվեց նորաստեղծ թերթի խմբագրի տեղակալ: 1963 թ. վաստակաշատ ժուռնալիստը Հայկ. ԽՍՀ Հեռուստառադիոպետկոմիտեի արտասահմանի հայության համար տրվող հաղորդումների պատասխանատու խմբագիրներից էր:

Սուրեն Սարգսի Գրիգորյանը վախճանվեց Երևանում 1980 թ.:

ՄՈՎՍԵՍ
ՄԱՆՈՒԿԻ
ԳՐԻԳՈՐՅԱՆ
(1905—1985)

ԽՄԿԿ Կենտկոմին կից հասարակական գիտությունների ակադեմիայում սրանից դեռ մի քանի տարի առաջ (սկսած 1949 թ.) արևմտաեվրոպական և ռուս փիլիսոփայության պատմություն էր դասավանդում Մովսես Գրիգորյանը: Նրան, ինչպես իր հազարավոր հասակակիցներին, մանկուց դաժան բախտ էր վիճակվել. գաղթ, կոտորած, տեղահանություն: Տասը տարեկան էր (ծնվ. 6(19).3.1905 թ.), երբ թողեց հայրենի գյուղը՝ Սասիկը (Բիթլիսի վիլայեթ) և, միացած անտուն-անտեր որբերի քարավանին, հանգրվանեց Արաքսի այս ափին: Նրան ևս, ինչպես Չարենցը կասեր.

Երկինք մի մաքուր, արև մի բոսոր
Լոկ Հոկտեմբերյան հողմերը տվին:

Միջնակարգն ավարտելուց հետո նախկին գրաշարին և Ալավերդու ԼԿԵՄ շրջկոմի քարտուղարին գործուղեցին սովորելու Անդրկովկասի կոմունիստական համալսարանում: 1926 թ. այն հաջողությամբ վերջացնելուց հետո ԽՄԿԿ անդամ (նույն թվականից) Մ. Գրիգորյանը անցավ կոմերիտական և կուսակցական ղեկավար աշխատանքի (ՀԼԿԵՄ Կենտկոմի ագիտբաժվար, ՀԿԿ Նոր Բայազետի գավկոմի քարտուղար), հետո էլ (1930 թ.) ընդունվեց Մոսկվայի Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտ: 1934 թ. փայլուն գիտելիքներով Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտն ավարտելուց հետո Մովսեսը հաջողությամբ հանձնեց ասպիրանտուրայի քննությունները և մշտական աշխատանքի անցավ ԽՍՀՄ ԳԱ փիլիսոփայության ինստիտուտում: Ասպիրանտուրայում սովորելու տարիներին արդեն լրիվ բացահայտվեցին Մովսես Գրիգորյանի փիլիսոփայական ունակությունները, գիտական և պարբերական մամուլում ավագ գիտաշխատողն սկսեց հանդես գալ պատմափիլիսոփայական հոդվածներով:

Պատերազմի հենց առաջին տարիներին որպես գումարտակային կոմիսար Մ. Գրիգորյանը Հյուսիսային Կովկասում մարտնչում էր գերմանական վայրագների դեմ, երբ Մոսկվայում «Փիլիսոփայության պատմություն» գրքում լույս տեսան նրա «17-րդ դարի անգլիական մատերիալիզմը» (հատ. 2-րդ, 1941 թ.) և «Լյուդվիգ Ֆոյերբախ» (հատ. 3-րդ, 1943 թ.) հոդվածները: Պատերազմից հետո Ն. Չերնիշևսկու, Չադաևի, ռուս փիլիսոփայության պատմության, գիտական աթեիզմի և բազմաթիվ այլ թեմաներով գրված աշխատությունները նրան փիլիսոփայական գիտությունների դոկտորի (1955 թ.) և պրոֆեսորի կոչումների արժանացրին:

— Ե՞րբ և որտե՞ղ եք մասնակցել Մեծ հայրենականին, ի՞նչ զինկոչում և շքանշաններ ունեք,— հարցերից տարեց գիտնականն ու հայրենիքի նախկին զինվորը, մինչ պատասխանելը, ինքն է անցնում «հարցաքննության»: Հետաքրքրվում է Հայաստանով, սասունցիներով, Երևանի մանկավարժական ինստիտուտի դասախոս, փիլիսոփա Մինաս Մարտիկյանի մասին է հարցնում, Հայաստանի փիլիսոփաների, ակադեմիայի պատմության ինստիտուտի և բազմաթիվ ու բազմաժանր այլ մարդկանց, հիմնարկների, դեպքերի ու դեմքերի մասին է ուզում մանրամասն իմանալ և նոր միայն ինձ հակիրճ պատասխանում է.

— Բանակում խմբագրել եմ «ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓԱՌՔԻ ՀԱՄԱՐ», «ԱՌԱՋ ԴԵՊԻ ՀԱՂԹԱՆԱԿ» և «ԱՌԱՋ ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ» թերթերը: Հյուսիսային Կովկասից մինչև Բեռլին է ձգվել ռազմի ճանապարհս: Պարգևատրվել եմ Կարմիր աստղի և Հայրենական մեծ պատերազմի 2-րդ աստիճանի շքանշաններով, արժանացել եմ Մարտական ծառայության համար, Կովկասի պաշտպանության համար, Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար և բազմաթիվ այլ մեդալների և շնորհակալագրերի: Որպես «Փիլիսոփայության պատմության» հեղինակներից մեկը պատերազմի ժամանակ, երբ ես մարտադաշտում էի (1944 թ.), ինձ ևս շնորհվեց Ստալինյան (այժմ պետական) մրցանակ: Զինվորա-

կան կոչումս մայոր է: Որպեսզի իմանաք, թե ում հետ եմ ծառայել, ասեմ, գործընկերներս եղել են՝ Մինաս Մարտիկյանը, Արսեն Հովհաննիսյանը, Ղևոնդ Կոմունին, Վախթանգ Անանյանը: Որպես քաջարի ռազմիկ, անձնվեր էջկապ և տպագրիչ երբեք չեմ մոռանա Խաչիկ Պետրոսյանին: Նա քանի անգամ փրկել է ինձ մահից: Դաժան դեպքեր և դեմքեր շատ եմ տեսել, վերհիշելն անգամ ցնցող է, այդ մասին չխոսեք: Լավ կլինի պատերազմի մասնակից մյուս լրագրողների մասին էլ գրեք, չէ որ նրանք ռազմաճակատային մամուլի համար թղթակցություններ, ակնարկներ և հոդվածներ էին գրում կրակային առաջին գծից, իրենց կյանքը վտանգի տակ դնելով... Իրոք, քանի՜, քանի՜ ժուռնալիստներ մարտադաշտից չվերադարձան:— Հիշում է շատերին վաստակաշատ գիտնականն ու մեր զրույցի վերջում ասում.

— Ես տեսել եմ թե՛ Առաջին, թե՛ Երկրորդ համաշխարհային պատերազմները: Թշնամիս էլ թող պատերազմ, արյուն, արցունք, ավերներ չտեսնի: Կորչի պատերազմը...

ԳԱՌՆԻԿ ԴՐԱՍՏԱՄԱՏԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ (1908—1980)

Նա ծնունդով Թբիլիսիից էր (ծնվ. 1908 թ.): Ավարտել էր Վրաստանի մայրաքաղաքի 76-րդ հայկական դպրոցն ու նույն տարում էլ (1926 թ.) իր ուսումնառությունը շարունակել Երևանի պետհամալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում: Հետո Գառնիկն ընդունվել է Թբիլիսիի Անդրկովկասի պետպլանին կից ասպիրանտուրան, երեք տարի անց (1933 թ.) առաջ է քաշվել կուսակցական աշխատանքի ՀԿԿ Կենտկոմում, միևնույն ժամանակ դասախոսել է Երևանի պետհամալսարանում: 1939—1941 թթ. պետպլանում բաժնի պետ էր նա, երբ հիտլերյան ֆաշիստները սողեսող մոտեցան մեր հայրենիքի արևմտյան սահմաններին: Մեծ հայրենականի բռնկվելու հենց առաջին օրերին տնտեսագետ-մանկավարժը կամավոր զինվորագրվեց ընդդեմ թշնամու. ծառայեց 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայի 675-րդ գնդում որպես կուսկազմակերպության քարտուղար: Խիզախաբար մարտընչեց նա թշնամու դեմ Հյուսիսային Կովկասի քաղաքների և գյուղերի ազատագրման համար մղվող մարտերում: «1943 թ. մարտին,—մեր զրույցներից մեկի ժամանակ պատմում էր «Կարմիր աստղի» և «Կարմիր դրոշի» շքանշանակիր փոխգնդապետ Գ. Իսահակյանը,— Կրասնոյարսկ կայարանի համար ծավալված մարտերում զոհվեց մեր գնդի հրամանատարի տեղակալը, ինձ նշանակեցին նրան փոխարինող: Նույն թվականի վերջերին մեր՝ 409-րդ դիվիզիան մեծ կորուստներ կրեց, հարկ եղավ ուժեղացնել մարտական պրոպագանդան: Ինձ նշանակեցին այդ դիվիզիայի հայերեն նոր լույս տեսնող «Սովետական ռազմիկ» թերթի խմբագիր: Ինձանից հետո թերթը խմբագրեց Վարդան Ղազանչյանը»: «Սովետական ռազմիկը» Հարավ-արևմտյան, ապա 2-րդ ուկրաինական ռազմաճակատի օրգանն էր: Այստեղ են իրենց ժուռնալիստական-մարտական մկրտությունն ստացել Եղիշե Հովհաննիսյանը, Գարսևան Շառոյանը, Հարություն Մնացականյանը, Սուրեն Ազատյանը և էլի ուրիշներ, որոնց մի մասը պատերազմից հետո անցավ կուսակցական աշխատանքի, որոշ ընկերներ էլ՝ (Վարդան Ղազանչյան, Գարսևան Շառոյան)՝ գիտամանկավարժական գործունեության:

— Ովքե՞ր էին ձեր ակտիվ զինթղթակիցները: Այսօր, պատերազմի ավարտից 40 տարի հետո, նրանցից ո՞ւմ եք հիշում:

— Շատերին. Մ. Գուլյանին, Լ. Հովհաննիսյանին, զինվոր-գրաշարներ Սմբատ Գրիգորյանին, Սերգո Հարությունյանին, Վարդգես Ավագյանին: Ռազմաճակատային ընկերը չի մոռացվում:

Տնտեսագետ, ժուռնալիստ և մանկավարժ հայորդին սիրով էր հիշում իր բոլոր այն ընկերներին և զորահրամանատարներին, ում հետ 1944 թ. Թամանում և Ղրիմում Սևծովյան բանակի քաջարի մարտիկների հետ կենաց և մահու ազատագրական մարտեր էր մղել թշնամու դեմ՝ արժանանալով մի շարք շքանշանների, մարտա-

կան մեդալների և գլխավոր հրամանատարության շնորհակալագրերին: Մեծ հայրենականի հաղթական ավարտից հետո ժուռնալիստ, փոխգնդապետ Գառնիկ Իսահակյանը տասը տարուց ավելի ռազմագիտություն էր դասավանդում: Աշխատանքին զուգահեռ նա 1952 թ. պաշտպանեց թեկնածուական դիսերտացիա, նորից անցավ լրագրական աշխատանքի: 1955-ին նա զորացրվեց բանակից և նշանակվեց «Հայաստանի ժողովրդական տնտեսություն» ամսագրի գլխավոր խմբագիր: Հետագայում (1955—1960) նա աշխատեց Հայկական ԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում, իսկ մահից առաջ դասախոսում էր Երևանի պետհամալսարանում:

ԱՐՇԱՎԻՐ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ (1908)

Պատերազմի վետերան, պաշտոնաթող մայոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արշավիր Հակոբյանի հետ պատերազմական թեմայով մեր զրույցը երկար տևեց: Նա հիշեց առաջինն իր ծննդավայրը՝ Սարիղամիշի շրջանի Ստհան գյուղը (Բասենի գավառ), հիշեց գաղթն ու կոտորածը, հիշեց պատանեկան ու երիտասարդական իր տարիները. գրաշար էր, կոմերիտ ու կուսակցական աշխատող Ախտայում (այժմ Հրազդան), Լենինականում և Երևանում: 1939—1941 թթ. Արմֆանի պատմության ինստիտուտի կրտսեր գիտաշխատողը զինվոր դարձավ, դիսերտացիան պաշտպանելու փոխարեն պաշտպանեց հայրենի հողը: 1941—1947 թվականներին Արշավիր Հակոբյանը որպես ավագ քաղղեկ, խմբագիր և մայոր Հյուսիսային Կովկասից անցավ Ղրիմ, հետո Բելոռուսական ռազմաճակատում մարտնչեց հիտլերյան հորդաների դեմ, եղավ կրակային առաջին գծում: «Ե՞րբ և որտե՞ղ եք ծառայել, մարտական ի՞նչ շքանշաններ և մեդալներ ունեք» հարցերիս Հայկ. ԽՍՀ ԳԱ ակադեմիայի պատմության ինստիտուտի Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պատմության բաժնի վարիչը շատ կոնկրետ է պատասխանում.

— Եղել եմ հայկական 408-րդ դիվիզիայի 672-րդ հրաձգային գնդի պրոպագանդիստ, ապա՝ նույն դիվիզիայի «Հանուն հայրենիքի» կարմիրբանակային թերթի խմբագիր: Հյուսիս-կովկասյան ռազմաճակատում խմբագրել եմ «Առաջ հանուն հայրենիքի» հայկական թերթը: 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայում ծառայել եմ որպես քաղաքաժնի ագիտատոր, ապա որպես 526-րդ հրաձգային գնդի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ թշնամու դեմ մարտնչել եմ մինչև իր որջը՝ Բեռլին: Պարգևատրվել եմ մարտական հինգ շքանշաններով, դրանք են՝ Հայրենական մեծ պատերազմի առաջին աստիճանի երկու շքանշան, Հայրենական մեծ պատերազմի երկրորդ աստիճանի մեկ շքանշան, Կարմիր աստղի երկու շքանշան և տասնչորս մեդալ: Ութ անգամ արժանացել եմ գերագույն գլխավոր հրամանատարության շնորհակալագրերին: Խաղաղ տարիներին պարգևատրվել եմ Պատվո նշան շքանշանով:

— Լսել եմ, որ դուք բանակից զորացրվելուց հետո, 1947-ին, անմիջապես պաշտպանել եք թեկնածուական, իսկ 1954 թ. դոկտորական դիսերտացիաներ՝ պատմության գծով, 1985 թ. Հայկական ԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր եք (որպես «Հայ ժողովրդի պատմության» ութ հատորների հեղինակներից), 12-ից ավելի գրքերի և մենագրությունների հեղինակ: Կուզենայի որպես զինվորական թերթի խմբագիր հիշատակեիք ձեր գրական աշխատողներին... Ո՞ւմ հետ եք ավելի շատ ծառայել ռազմաճակատային թերթերի խմբագրություններում:

— Սիրով: Ահա այս լուսանկարը,— ցույց է տալիս և մեզ տրամադրում այն:— Այստեղ իմ ռազմի գործընկերներն են՝ Վախթանգ Անանյանը, Ղևոնդ Կոմունին, Մարտին Զարյանը, Գրիգոր Սարգսյանը, Մինաս Մարտիկյանը, իմ քաղցրքաղցր բանաստեղծ ընկերը՝ Արսեն Հովհաննիսյանը, որը զոհվեց աչքիս դեմ, 1945 թ. ապրիլի 16-ին Օդեր Ֆրանկֆուրտում: Մոռանալ չեմ կարող թերթի գրաշար և էջկապ Խաչիկ Պետրոսյանին, Ալբերտ Զաղինյանին: Նրանց հետ ծառայել եմ 1943 թ. հունվարից մինչև 1944 թ. Ան-

Հայկական 408-րդ դիվիզիայի օրգան «Հանուն հայրենիքի» թերթի մի խումբ աշխատողներ, ձախից՝ Վախթանգ Անանյան, Արշավիր Հակոբյան, Իվանով, Ղևոնդ Կոմունի: Մայիս, 1942 թ., Կրասնոդարի մարզ:

դբրկովկասյան ռազմաճակատի հյուսիսային զորամիավորումում, հետո՝ Հյուսիս-կովկասյան ռազմաճակատում:

— 408-րդ դիվիզիայի «Հանուն հայրենիքի» թերթում, որի խմբագիրն էիք, ովքե՞ր էին թերթի աշխատողները, ի՞նչ պաշտոններ էին վարում,— հարցերիս վաստակաշատ գիտնականը, զոռ տալով վերհուշին, պատասխանում է.

— Սուրեն Գրիգորյանը պատասխանատու քարտուղարն էր: Գրական աշխատողները ալափարսեցի Մելիք Քոչարյանն ու ալավերդցի Արմենակ Թամազյանն էին: Տուապսեի մոտ, ռըմբակոծության ժամանակ Արմենակը ոտքից ծանր վիրավորվեց:

Ու մինչ ցտեսություն ասելը պրոֆ. Արշավիր Հակոբյանին՝ հասցնում եմ ծանոթանալ նրա հեղինակած գրքերից երկուսին՝ «Հավասարների եղբայրությանը» և «Հերոսական մարտերումին»: Իմանալով, որ իր մարտական ծառայությունը մայոր Արշավիր Հակոբյանն անց է կացրել նաև 89-րդ Թամանյան դիվիզիայում, ես խնդրում եմ նախկին մարտիկին, որ ինձ ցույց տա գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի կողմից իրեն տրված պարգևատրման երաշխավորող բնութագրի պատճենը, եթե, իհարկե, այն պահպանվել է:

— Այդ մասին որտեղի՞ց գիտեք,— զարմանում է զրուցակիցս:

— Պոդոլսկի զինարխիվից,— հետևում է կտրուկ պատասխանս, և բեռլինյան փողոցային մարտերի անհաղթ մասնակիցը կարծես «պարտված» ներկայացնում է պահանջածս բնութագիրը՝ գրված Բեռլինում, Ն. Սեֆարյանի ձեռքով: Այն կարդում ենք. «Փողոցային մարտերի ընթացքում ընկեր Հակոբյանը, կատարելով մարտական առաջադրանքները, կարողացավ կազմակերպել կուսակցական-քաղաքական աշխատանքը, անձնակազմի մեջ հարձակողական ոգի դաստիարակելու նպատակով: Հանախում էր գնդի մարտակարգերը, համախմբում էր կոմունիստներին, կոմերիտականներին և գրոհային խմբերին՝ Բեռլինի փողոցային կռիվների վճռական գործողությունների համար: Երկաթուղու և մետրոյի կատաղի մարտերում, հակառակորդի ուժեղ կրակի տակ շրջում էր բոլոր ստորաբաժանումները, բոլշևիկյան խոսքով և անձնական օրինակով անձնակազմին ոգեշնչում մարտական սխրագործությունների: Նրա եռանդուն աշխատանքի շնորհիվ գունդը հաջողությամբ կատարեց իր առջև դրված խնդիրը»:

Երեկոն կամաց-կամաց մթնում է: Պատրաստվում եմ հրաժեշտի: Տարեց մանկավարժ գիտնականն ու ռազմաճակատային թերթերի նախկին խմբագիրը նորից ինձ զրույցի է հրավիրում: Հիշելով, որ իր ծննդավայրում՝ Ստահանում է ծնվել Մոզդոկում զոհված հայտնի գեղանկարիչ, 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայի 677-րդ գնդի զինվոր Կորյուն Սիմոնյանը, ես ակամայից

հարցնում եմ, թե արդյո՞ք ինքը ճանաչում, հիշում է նրան՝ իրենից երկու տարով փոքր Սիմոնենց Ստեփանի Կորյունին:

— Ինչպես չէ, նա քեռուս տղան էր: Նրան որտեղի՞ց գիտես:

— Նրա մասին էլ եմ գրել: Նրա մասին էլ կա այս գրքում,— լինում է պատասխանը, և ես հրաժեշտ եմ տալիս գաղթ, եղեռն, Մեծ հայրենական տեսած, հուզմունքից հեծեծացող զրուցակցիս՝ նախկին զինվորին և ռազմաճակատային թերթի նախկին խմբագրին:

ԱՐԱՄԱՅԻՍ ՆԱՎԱՍԱՐԴԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ (1912—1984)

Արամայիս Մնացականյանի ամառանոցում այդ օրը յուրօրինակ աշխուժություն էր: Պարզվեց, որ նախորդ օրը՝ դեկտեմբերի 28-ը, իր ծննդյան օրն է եղել: Այստեղից՝ Բյուրականից է ձգվել նրա ճանապարհը դեպի Երևան: Ավարտել է մայրաքաղաքի Աբովյանի անվան դպրոցը, հետո՝ ՀԿԿ Կենտկոմի բարձրագույն կոմունիստական համալսարանը (1934 թ.): Այնուհետև երկու տարի (1938—1940 թթ.) սովորել է մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում, որը վերջացնելուց հետո (1940 թ.) ընդունվել է ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի ասպիրանտուրան: Ժուռնալիստիկան դեռ դպրոցական վերջին դասարաններից բյուրականցի Նավասարդի որդու նախասիրությունն էր, և նա դրան էլ նվիրվեց: 30-ական թվականների պարբերական մամուլը թերթելիս Դիլիջանի (Սեմյոնովկայի սովխոզի քաղաքաթերթ), Ստեփանավանի («Սոց. անասնապահություն») և Գորիսի («Կարմիր Զանգեզուր») շրջանային թերթերի վերջին էջերում կհանդիպեք նրա ստորագրությանը որպես խմբագրի: Այնուհետև Ա. Մնացականյանը խմբագրել է ՀԼԿԵՄ Կենտկոմի օրգան «Ավանգարդ» թերթը, որտեղից էլ առաջ է քաշվել էլ ավելի պատասխանատու ժուռնալիստական աշխատանքի («Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրի տեղակալ): Հայրենական մեծ պատերազմը բռնկվելուն պես ՀԿԿ Կենտկոմի որոշմամբ մի խումբ կուսակցական աշխատողներ մոբիլիզացվում են և որպես քաղաշխատողներ ուղարկվում ռազմաճակատ: Ա. Մնացականյանը նշանակում է ստանում ծառայելու Ղրիմում: 1942 թ. հունվար—մայիս ամիսներին ավագ քաղղեկ Արամայիս Մնացականյանը Ղրիմյան ռազմաճակատի օրգան «Մարտական գրոհ» թերթի խմբագիրն էր: Զինվոր գրողներ և լրագրողներ Ստեփան Կուրտիկյանի, Բաբկեն Շահումյանի, Ավետիս Դեբենցի, Աշոտ Թադևոսյանի, Բաբկեն Կարապետյանի հետ նա հանախ էր լինում առաջին գծում, ոգևորում հայ մարտիկներին, նրանց վրիժառության, սիրո և սխրանքի գովքն անում:

— Այս թերթի խմբագրությունում են ծառայել նաև Աշոտ Աբրահամյանն ու Մինաս Մարտիկյանը: Աշոտն արդեն պատմական գիտությունների թեկնածու էր, երբ զորականչվեց խորհրդային բանակ: Նա հետո դարձավ դոկտոր, պրոֆեսոր: Իսկ Մինասը փիլիսոփայական գիտությունների թեկնածուի աստիճան ստացավ զորացրվելուց հետո և մանկավարժական աշխատանքի անցավ Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում:— Դեկտեմբերյան այդ ուշ երեկո երկար տևեց Ար. Մնացականյանի հետ մեր հարցազրույցը: Հետո ինձ պարզ դարձավ, որ նա եղել է նաև «Մարտական ղրիմյան» թերթի խմբագիր և միայն 1942 թ. մայիս—օգոստոս ամիսներին, խորհրդային բանակի քաղաշխատողների բարձրագույն դասընթացները ավարտելուց հետո է ստացել գումարտակի կոմիսարի, ապա մայորի կոչում: Կովկասի պաշտպանության ծանր օրերին բյուրականցի հայորդին տեղափոխվեց Անդրկովկասյան ռազմաճակատ, որպես զինհրատի կազմակերպիչ ծառայեց քաղվարչությունում, ղեկավարեց մարտական գրականության թողարկումը, հետո նշանակվեց Անդրկովկասյան զինհրատի օրգան «ԲԳԿԲ մարտիկ» («Լենինյան դրոշով») զինթերթի խմբագիր՝ միաժամանակ վարելով Անդրկովկասյան ռազմաճակատի զինհրատի միացյալ կուսակցական կազմակերպության քարտուղարի պատասխանատու պաշտոնը: Խմբագիր Մնացականյանը

հաճախ էր լինում գործող զորամասերում, զրուցում զինվորների հետ, մասնակցում ռազմական գործողությունների քաղաքական նախապատրաստմանն ու անցկացմանը, ռազմաճակատային մամուլում և այլուր հանդես գալիս մարտաշունչ հոդվածներով, զինվորների մեջ դաստիարակում տոկունություն և գիտակցված հայրենանվիրվածություն: Ռազմաճակատում հրամանատարության մարտական առաջադրանքները հաջող կենսագործելու, հանդես բերած արիության և քաջության համար 1943 թ. սեպտեմբերին մայոր Արամայիս Նավասարդի Մնացականյանը պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով, հետո արժանանում մարտական այլ շքանշանների ու մեդալների: Ար. Մնացականյանի պատմագիտական հետազոտությունների ստվար ցանկում առանձնահատուկ ուշադրության է արժանի նրա «Հայ ռազմիկների հերոսության տարեգրությունը» (1947 թ.), «Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում» (1954 թ.), «Միասնական շարքերում» (1975 թ.) և «Մարշալ Բաղրամյան» (1978 թ.) կոթողային հետազոտությունները, որոնցում պատմական ճշմարտությունը ներկայացվում է փաստերի անաղարտ շարադրմամբ, գիտական խոր ու բազմակողմանի վերլուծմամբ և շրջահայացությամբ՝ առանց դեմքերն ու դեպքերը գունազարդելու:

1946 թ., Խորհրդային բանակից զորացրվելուց հետո, 34-ամյա նախկին զինվորը նորից անցավ գիտական գործունեության, աշխատեց նախ ԳԱ-ում որպես Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետի վարիչ, ապա ՀԿԿ Կենտկոմի օրգան «Կուսակցական կյանք» (այժմ «Լենինյան ուղիով»), այնուհետև «Ագիտատորի և պրոպագանդիստի բլոկնոտ» (այժմ «Կուսակցական խոսք») հանդեսների գլխավոր խմբագիր: Երկար տարիների իր լրագրական-խմբագրական գործունեության ընթացքում, (ինչպես նկատել է մեզ տված իր հոր կենսագրականում Երևանի պետական համալսարանի դասախոս Ստեփան Մնացականյանը), կոմունիստ (1938 թ.), պատմական գիտությունների դոկտոր (1957 թ.), պրոֆեսոր (1966 թ.) Արամայիս Մնացականյանը իր խմբագրած և հանրապետական ու միութենական մամուլում («Պրավդա», «Կրասնայա Զվեզդա», «Կոմսոմոլսկայա պրավդա», «Զարյա Վոստոկա», «Կոմունիստ» և այլուր) տպագրած 1500-ից ավելի գիտաքաղաքական, պատմագրականագիտական հոդվածներում, ակնարկներում և քննադատական թղթակցություններում լուսաբանել է ԽՄԿԿ-ի և խորհրդային պետության սոցիալտնտեսական և գաղափարաքաղաքական գիծը՝ միշտ հավատարիմ մնալով պատմագիտության մարքս-լենինյան տեսությանն ու իր ժողովրդի բարոյաքաղաքական շահերին: Ար. Մնացականյանը ոչ միայն հմուտ ժուռնալիստ էր և պատմաբան հայրենասեր, այլև՝ շիտակ ու սկզբունքային կուսակցական գործիչ: 1948—1950 թվականներին նա Երևանի Կիրովյան կուսշրջկոմի առաջին քարտուղարն էր, 1950—1951 թվականներին՝ ՀԿԿ Կենտկոմի ագիտպրոպագանդայի բաժնի վարիչը, երկու տարի (1952—1953 թթ.) նա աշխատեց որպես ՀԿԿ Երևանի Օկրուգկոմի առաջին քարտուղար, որից հետո՝ Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն: «Հայ ժողովրդի ողբերգությունը», «Ռևոլյուցիան Անդրկովկասում և Ռուսաստանի պատվիրակները», «Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը», «Հոկտեմբերի բարիկադների վրա», «Ալեքսանդր Մյասնիկյան» մեծարժեք մենագրությունների հեղինակը ևս նախկին ռազմիկ խմբագիրն է: Հայաստանի կոմկուսի 15—18-րդ համագումարներում Արամայիս Մնացականյանը ընտրվել է ՀԿԿ Կենտկոմի անդամ, իսկ Հայկ. ԽՍՀ Գերագույն խորհրդի III—IV գումարումների ժամանակ եղել է Հայկ. ԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատ:

Վաստակաշատ ժուռնալիստ, գիտնական, պատմաբան և կուսակցական եռանդուն աշխատող Ար. Մնացականյանը վախճանվեց Երևանում 1984 թվականին և թաղվեց իր հայրենի գյուղում՝ Բյուրականում:

ՍԻՄՈՆ ՍԱՐԳՍԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ (1906—1987)

Մինչև մահը նա իր գրիչը ցած չդրեց, թղթակցում էր հանրապետական մամուլին, հատ-

նապես «Երեկոյան Երևանին», հաճախ էր հանդես գալիս ռազմահայրենասիրական հոդվածներով: Չգիտեմ, կա՞ արդյոք մի թամանցի զինվոր, որի մասին Ս. Նալբանդյանը գրած չլիներ: Նա մարտական **89-ի** կենդանի կենսագիրն էր: Թերևս նրա պայծառ հիշողությունն ու մարդասիրությունն էին այն գրավականը, որ պատճառ էր դառնում ճշտել այս կամ այն թամանցու ով լինելը, նրա սխրանքն ու նարտական ուղին: Բոլորի մասին կհայտներ ստույգ տեղեկություն, անգամ գիտեր շատերի ոչ միայն հասցեները, այլև՝ նրանց հարազատներին, մտերիմներին ու ընկերներին:

— Ընկեր Սարոյան, ինչո՞ւ չեք գրում Թամանյան դիվիզիայում ծառայած հայ գրողների և արվեստագետների մասին,— կատակով մի անգամ հարցրեցի բանաստեղծ Արշալույս Սարոյանին:

— Սիմոն Նալբանդյանը որ կա, մեր դիվիզիայի քայլող պատմությունն է: Նա թող գրի,— եղավ նախկին մարտիկի պատասխանը, և նա ինձ ծանոթացրեց իրենց դիվիզիայի օրգան «Կարմիր զինվոր» թերթի խմբագրի կյանքի կեռմաններին ու անցած ուղուն:

Սիմոն Նալբանդյանի (ձախից) և Խաչիկ Աբեղյանի՝ ռազմաճակատում հաստատված մտերմությունը տևեց մինչև նրանց կյանքի վերջը:

Ծնվել է Ս. Նալբանդյանը 1906 թ. Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի Մեծկերտ գյուղաքաղաքում: Ինչպես իր հասակակիցներից հազարավորներին, փոքրիկ Սիմոնին ևս դառը բախտ վիճակվեց. ականատես դարձավ հայոց մեծ Եղեռնին: Գաղթի և կոտորածի գեհենից հրաշքով փրկվեց, ընկավ որբանոցից որբանոց: Եվ ո՞վ գիտի, ինչպես կընթանար նրա կյանքը, եթե խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում նրան փրկության ձեռք չմեկներ: Պատանի էր, երբ զինվորագրվեց ծառայելու Կարմիր բանակում: Զորացրվելուց հետո աշխատանքի անցավ «Արարատ» գործարանում որպես բանվոր: Այստեղ ընդունվեց կոմերիտմիության շարքերը, առաջ քաշվեց կոմերիտական ղեկավար աշխատանքի՝ Հրազդանի և Եղեգնաձորի շրջաններում: 1928 թ. նա արդեն կոմկուսի անդամ էր: Մի քանի տարի հետո հանրապետական մամուլում երևաց «Ս. Նալբանդյան» ստորագրությունը: Համեստությունն ու աշխատասիրությունը, օբյեկտիվությունն ու սրտացավությունը սկսնակ ժուռնալիստին ամենուր սիրելի դարձրին: 1931 թ. Սիմոնն արդեն «Ավանգարդ», «Հարվածային կառուցող», «Կոլխոզֆրոնտ» թերթերի աչքի ընկնող թղթակիցներից էր, այդ խմբագրություններում նա ձևավորվեց որպես կոմունիստ լրագրող: Որոշ ժամանակ նրան վստահվեց Արտաշատի շրջանային թերթի խմբագրի պաշտոնը, այստեղից տեղափոխեցին «Խորհրդային Հայաստանի» խմբագրություն որպես բաժնի վարիչ: Պատերազմը, ինչպես շատերին, զինվորի համազգեստ հագցրեց նաև Սիմոն Նալբանդյանին: Խորհրդային բանակի քաղաշխատողների դասընթացներն ավարտելուց հետո նա նշանակում ստացավ ծառայելու հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայում: Սկզբում գնդի կուսբյուրոյի քարտուղարն էր: Ներսես Ղահրամանյանից (Կագրամանով) և Գուրգեն Հարությունյանից հետո դիվիզիայի ղեկավարությունը նրան նշանակեց դիվիզիայի մարտական օրգան «Կարմիր զինվոր» թերթի խմբագիր:

— «Կարմիր զինվորում» տպագրած բազմաթիվ նյութեր անմիջապես հուշում են, թե ովքեր են ծառայել այդտեղ: Գեղամ Ղուկասյան, Հրայր Հովակիմյան, Քրիստափոր Թափալցյան, Արշալույս Սարոյան, Գուրգեն Բորյան: Մեր թերթի



89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի օրգան «Կարմիր զինվոր» թերթի ստեղծագործական կազմը. (Ձախից) Սիմոն Նալբանդյան (խմբագիր), Արշալույս Սարոյան, Հրայր Հովակիմյան, Գեղամ Ղուկասյան, Կերչ, 1943 թ.:

աշխատակիցներից Գրիգոր Զոհրապյանն ու Արսեն Հովհաննիսյանը զոհվեցին: Զոհվեց նաև իմ մարտական ընկերը՝ Մամիկոն Գրիգորյանը, որի հետ մինչ պատերազմը աշխատել էինք «Սովետական Հայաստանի» խմբագրությունում: Այսօր էլ,— պատմում էր զրուցակիցս,— աչքիս դեմ են թերթի գրաշարները, էջկապն ու տպագրիչները: Երբեք չեմ կարող մոռանալ Խաչիկ Պետրոսյանին, Սիմոն Սահակյանին, Սամսոն Մարտիրոսյանին, Մկրտիչ Մինասյանին, Արամայիս Թերզյանին, Գուրգեն Միրզոյանին, Խաչիկ Բդոյանին... և էլի, էլի փառահեղ այլ տղաների, որոնց հետ արյուն և քրտինք թափելով, դիվիզիայի հետ նահանջելով և առաջ գնալով թերթ ենք հրատարակել...

— Չմոռանաս նշել,— մեկ այլ զրույցի ժամանակ հիշեցրեց Ս. Նալբանդյանը,— որ մեր թերթում են իրենց ռազմաճակատային գրական թռթռվանքները տպագրել Դանիել Սարգսյանը, Գուրգեն Ադունցը, Սուրեն Ստեփանյանը, Արշալույս Սարոյանը, Ծավարշ Մարտիրոսյանը, Պարգև Գևորգյանը և ուրիշ զինվոր բանաստեղծներ: Ակտիվ զինթղթակիցներից հաճելի կլինի, որ ընթերցողը իմանա Խիկար Բարսեղյանի, Արշակ Անանյանի, Մովսես Բաբախանյանի, Սերգեյ Դարոնյանի, Վաչագան Աբգարյանի մասին: Սիրտը կծկվում է, երբ հիշում եմ ակտիվ զինվորներից Մնացական Սիմոնյանի զոհվելը Նովոռոսիյսկի մատույցներում, Արթիկի շրջանային թերթի նախկին խմբագիր Վաղարշակ Վարդանյանի մահը, արձակագիր Գուրգեն Մալխասյանի ողբերգական վախճանը: Հապա Ավետիս Դեբեցը: Նա մի քանի ամսվա ամուսնացած էր: Կերչի մոտ՝ Կարպեչում զոհվեց: Տաղանդավոր ակնարկագիր էր, ազնիվ, սրամիտ, ընկերասեր և աչալուրջ հետախույզ...

Սեղանիս «Կարմիր զինվորի» հավաքածուն է՝ տպագրված Մալգոբեկում, Մոզդոկում, Պրոխլադնիում, Միներալնիե Վոդիում, Լեհաստանում, Գերմանիայում և այլուր: Ահա մի քանի կոչեր. «Ռազմի՛կ, սովորի՛ր կռվել այնպես, ինչպես այդ պահանջում է հաղթանակի գործը», «Լավացնել հետախուզությունը՝ բանակի աչքն ու ականջը», «Ամրացնել ու զարգացնել ձմեռային մարտերի հաջողությունները»: Ոչ միայն կոչեր, լոզունգներ, հրապարակախոսական ակնարկներ և հոդվածներ, այլև նամակներ, բանաստեղծություններ, պատմվածքներ կան տպագրված Թամանյան դիվիզիայի այս տարեգրությունում: Ընթերցողն այստեղ կհանդիպի ոչ միայն Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Ստ. Զորյանի և մեծանուն հայ այլ գրողների ստորագրություններին, այլև մարտադաշտ այցելած բանաստեղծներ Նաիրի Զարյանի, Սողոմոն Տարոնցու, Ազատ Վշտունու, նկարիչ Էդուարդ Իսաբեկյանի քաղաքացիական և հայրենասիրական կրքոտ ելույթներին: Եվ բոլոր այս նյութերին ուղղություն տվողը թերթի խմբագիրն էր՝ Սիմոն Նալբանդյանը: Քանի՜, քանի՜ անգամ է նա հանձնարարել, որ հատուկ ակնարկ-դիմանկար գրվի Խորհրդային Միության հերոսներ Հունան Ավետիսյանի, Սուրեն Առաքելյանի, Զահան Կարախանյանի, Սերգեյ Օհանյանի և պանծալի այլ հայորդիների մասին: Եվ դրանք գրվում ու տպագրվում էին:

«Կարմիր զինվորում» տպագրված գրական, հրապարակախոսական նյութերը, ռազմաճակատային առաջին գծից ստացված թղթակցությունները վկայում են, որ նրա խմբագիրը եղել է մեծ ինտերնացիոնալիստ և ժողովուրդների բարեկամության ազնիվ ջատագով: Ի. Էրենբուրգի, Կ. Սիմոնովի, Ալ. Տոլստոյի և ռուս խորհրդային ականավոր այլ գրողների բոցավառ խոսքը հաճախ էր զբաղեցնում թերթի էջերը:

Մարտական «Կարմիր զինվորը» Ս. Նալբանդյանը խմբագրել է 1942 թ. մինչև 1956 թվականը: Սեր և հավատ, հայրենանվիրվածություն և ժողովուրդների բարեկամության ամրապնդում, խաղաղություն և համերաշխություն, տոկունություն և նպատակամղվածություն—ահա «Կարմիր զինվորի» գաղափարական դավանանքը: Մեծ հայրենականից տասը տարի անց միայն դադարեց «Կարմիր զինվորի» տպագրությունը: Նրա երկարամյա խմբագրի գրիչը նորից հանգիստ չառավ. բազմաթիվ փաստագրական հոդվածներ և գրքեր գրեց. («Թամանցիներ», «Կոմիսարի կյանքը»): Իսկ «Մարտական «Կարմիր զինվոր» (Ե., 1981 թ.) գիրքը անմիջապես գտավ իր ընթերցողներին: 1955—1959 թթ. Ս. Նալբանդյանը աշխատեց «Կուսակցական կյանք» (հետագայում՝ «Լենինյան ուղիով») ամսագրում որպես խմբագրի տեղակալ: Կյանքի վերջին տարիներին որպես պատերազմի վետերանների խորհրդի անդամ Ս. Նալբանդյանը հասարակական-քաղաքական ակտիվ գործունեություն էր ծավալել, հանդես էր գալիս բազմամարդ լսարաններում, կարդում զեկուցումներ և դասախոսություններ:

Ս. Նալբանդյանը պարգևատրվել էր մարտական և աշխատանքային բազմաթիվ շքանշաններով և մեդալներով:

Պահեստի փոխգնդապետ, լրագրող և հասարակական եռանդուն գործիչ Սիմոն Սարգսի Նալբանդյանը վախճանվեց Երևանում 1987 թ. դեկտեմբերին:

ՎԱՐԴԱՆ ԳԱԼՈՒՍՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ (1910—1984)

Ով ընթերցել է «Գեներալ Ս. Ի. Կարապետյան» (Ե, 1956 թ.) և «Պատերազմի տարիներ» (Ե., 1968 թ.) փաստագրական գրքերը, անմիջապես կզգա, որ դրանց հեղինակը Մեծ հայրենականի բոցերով անցած նախկին զինվոր է՝ օժտված պատերազմի իսկական դեմքը վերարտադրելու ժուռնալիստական ակնառու ձիրքով: Եվ իրոք մինչ Մեծ հայրենականը Վարդան Վարդանյանը «Իզվեստիայի» թղթակիցն էր Հայաստանում (1938—1941 թթ.), իսկ բանակ զորականչվելուց առաջ Քաղհրատի տնօրենը՝ Երևանում: 1941 թ. նոյեմբերից մինչև 1942 թ. մարտ ամիսը նա Շադրինսկի Վ. Ի. Լենինի անվան բարձրագույն քաղաքական դասընթացների կուրսանտ էր, ավարտելուց հետո լեյտենանտի կոչումով ուղարկվեց Բրյանսկի ռազմաճակատ, ուր և նրան նշանակեցին «Դեպի թշնամու ջախջախումը» ռազմաճակատային թերթի խմբագիր: Թերթը լույս էր տեսնում խորհրդային ժողովուրդների բազմաթիվ լեզուներով, հրատարակվում էր Բրյանսկի անտառներում՝ 1942 թ. հուլիսից մինչև 1943 թ. սեպտեմբեր: Թերթի հայերեն թարգմանիչն էր ավագ լեյտենանտ Վարդան Սիմոնյանը, գրաշար-էջկապ-տպագրիչները՝ Խաչիկ Թորոսյանը, Մելիք Գևորգյանն ու Գարիկ Պողոսյանը: Թերթի գլխավոր խմբագիր Ա. Մ. Վոլովեցը հաճախ էր քաջալերում Վարդան Վարդանյանին, երբ իմանում էր, որ նա ճակատային գծից ստանում է թարմ թղթակցություններ հայ զինվորներ Ա. Խառատյանից, Զ. Զատինյանից, Արիստակես Սարգսյանից և Այբերտ Դիդիչյանից:

— Այսօրվա պես հիշում եմ, թե ինչպես էի հանպատրաստի նյութեր թելադրում Անուշ Սարգսյանին, և նա դրանք մեքենագրում էր արագ-

Ռազմադաշտում անակնկալներ էլ են լինում: Հանկարծակի իրար են հանդիպել (Մադոնա, Լատվիա, 1944 թ.) մտերիմ ընկերները՝ գրող Հրաչյա Քոչարն ու լրագրող Վարդան Վարդանյանը:

արագ, որպեսզի հասցնեինք բեռնատար ավտոմեքենայի վրա տեղավորած մեր տպարանում տպելու: Անդրկովկասյան ռազմաճակատի օրգան «Մարտիկ» թերթը ինձանից առաջ խմբագրել է Արամայիս Մնացականյանը, ինձնից հետո՝ Վարդան Ղազանչյանը: «Մարտիկը» հանախ էր իր էջերում տեղ տալիս Գուրգեն Բորյանի, Ղևոնդ Կոմունու, Մկրտիչ Ասլանյանի, Ստեփան Կուրտիկյանի չափածո և արձակ հայրենասիրական ստեղծագործություններին: Բազմաթիվ թարգմանություններ էր կատարում մեր թերթի համար Կարո Սաղաթելի Վարդանյանը: Ռումբերի, ականների տարափի տակ, մթության մեջ էին գրաշարներ Ատոմ Գաբուզյանն ու Վաչե Գրիգորյանը իրագործում իրենց դառը և պատասխանատու աշխատանքը: Քանի-քանի՜ անգամ են գործընկերներս՝ Թադևոս Դավրիշյանն ու Սուրեն Արևշատյանը հրաշքով փրկվել մահից... Ի՞նչ, ի՞նչ պատմեմ, ո՞րը մոռանամ... Ատում եմ պատերազմը...,—այսպես ավարտեց մեր զրույցը Հայկ. ԽՍՀ Մինիստրների խորհրդի խորհրդատու, գվարդիայի պաշտոնաթող փոխգնդապետ Վարդան Վարդանյանը: 1944—1946 թվականներին նա Երկրորդ մերձբալթյան ռազմաճակատի «За родину» («Հանուն հայրենիքի») թերթի խմբագիրն է եղել, հետո որպես ավագ հրահանգիչ ծառայել է 7-րդ գվարդիական բանակի քաղբաժնում և 45-րդ բանակում: 1947—1956 թվականներին Վ. Վարդանյանը Անդրկովկասյան զինվորական օկրուգի օրգան «Լենինյան դրոշով» («Ленинское знамя») թերթում էր ծառայում, Թբիլիսիում: 1956 թ. փոխգնդապետը հրաժեշտ տվեց զինվորական համազգեստին և անցավ քաղաքացիական ծառայության, աշխատեց «Բժշկական աշխատող», «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», «Հայաստանի արդյունաբերություն» ամսագրերի խմբագրություններում և «Հայպետհրատում»:

Մարտական, աշխատանքային ընկերներից սիրված, ազնիվ հայրենասեր և համեստ լրագրող մարտիկի ծառայությունները հայրենիքը միշտ բարձր է գնահատել՝ արժանացնելով նրան Կարմիր աստղի (1944 թ.), Հայրենական մեծ պատերազմի երկրորդ աստիճանի (1945 թ.) և տասից ավելի մարտական մեդալների:

ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ Վ. Վարդանյանին 1970 թ. շնորհվեց հանրապետության վաստակավոր ժուռնալիստի պատվավոր կոչում: Մինչև կյանքի վերջին օրերն էլ նախկին զինվոր լրագրողը հանդես էր գալիս պարբերական մամուլում ոչ միայն հայրենասիրական հոդվածներով, այլև թարգմանություններով: Վ. Վարդանյանը կյանքին հրաժեշտ տվեց 1984 թ. կյանքի 74-րդ տարում:

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (1904—1963)

«Կարմիր զինվոր» ռազմաճակատային թերթի նախկին խմբագիր Գուրգեն Հարությունյանը ծնվել է Ղուկասյանի շրջանի Ղուկասյան գյուղում 1904 թ. մարտի 20-ին: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում, իսկ կուսակցական դպրոցն ու մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետն ավարտել է Երևանում 1941-ին: Տասնվեց տարեկան էր 1920 թ., դեռևս պատանի, երբ իր ակտիվ մասնակցու-

Գուրգեն Հարությունյանը (2-րդ շարքի աջից 2-րդը) և իր ռազմընկերները 1945 թ. մարտի 15-ին Գերմանիայում (Օդերի արևմտյան ափին, պլացդարմում):

թյունը բերեց Մայիսյան ապստամբությանը: 1922-ին նա անդամագրվեց Հայաստանի Լենինյան կոմերիտմիությանը, իսկ 1925-ին՝ ԽՄԿԿ-ին: Նրա երիտասարդական խանդավառ գործունեության շնորհիվ Շիրակի դաշտի մի շարք գյուղերում հիմնվեցին կոմերիտական և կուսակցական առանձին բջիջներ, անց էին կացվում գյուղական խորհուրդների ընտրություններ, կազմակերպվում էին լիկբեզներ, պայքար էր տարվում անգրագիտության դեմ: Իր աչքաբացությամբ, աշխատասիրությամբ, կազմակերպական ձիրքով և համեստությամբ Գուրգենը շրջապատում վայելում էր ամենքի հարգանքն ու ուշադրությունը: 1925—1929 թթ. երիտասարդ կոմունիստն ընտրվում է ՀԿԿ Աղինի շրջկոմի, հետագայում (1930—1933 թ.) Լենինականի երկաթուղու կայարանի կուսբյուրոյի, Լենտեքստիլ գործարանի կուսկոմիտեի քարտուղար՝ դրսևորելով հասարակական-քաղաքական ժողովրդական գործունեություն: 1933—1934 թվականներին Գ. Հարությունյանը Կիրովականի կուսշրջկոմի ագիտացիայի և պրոպագանդայի, հետո էլ կազմբաժնի վարիչն էր: 1934 թ. նա ընտրվեց կուսակցության Ստեփանավանի շրջկոմի քարտուղարի տեղակալ, որտեղից էլ տեղափոխվեց Երևան: Որպես կուսկազմակերպիչ Կաուչուկի կոմբինատում աշխատելուց հետո նա կուսակցական պատասխանատու աշխատանքի անցավ ՀԿԿ Կենտկոմի ապարատում: 1937 թվականին «որպես խանջյանական» Գ. Հարությունյանը հանիրավի մեղադրվում է և հեռացվում կուսակցությունից, չանցած երկու ամիս առանց տույժի վերականգնվում է և անցնում ժուռնալիստական գործունեության: «Սովետական Հայաստան» թերթի խմբագրությունում որոշ ժամանակ նա հրատարակչության վարիչն էր, հետո՝ կուսակցական կյանքի բաժվարը: Համատեղության կարգով, այդ նույն ժամանակ, նա «Պարտիական կյանք» ամսագրի պատասխանատու քարտուղար աշխատեց և «Ագիտատորի բլոկնոտ» պարբերականի խմբագրի տեղակալ: Իր համեստությամբ, օբյեկտիվությամբ և օպերատիվությամբ մամուլի աշխարհում Գ. Հարությունյանը շահել էր և՛ գործընկերների, և՛ ընթերցողների սերն ու ուշադրությունը: 1940 թվականին, երբ կազմակերպվեց Հայկ. ԽՍՀ պետվերահսկողության ժողկոմատը, վերադաս օրգանները որպես ավագ վերահսկիչ նրան տեղափոխեցին այստեղ: Իր անկողմնակալ և անշահախնդիր, բարի և ճշմարտապահ բնավորությամբ նոր աշխատատեղում ևս Գուրգենը փայլեց: Նոր վերելքներ էին սպասում նրան, բայց պատերազմը անավարտ թողեց բազում ծրագրեր: 1941-ի սեպտեմբերի 6-ին հազարավոր զինակոչիկների պես երեսունյոթամյա Հարությունյանն էլ կամավոր զինվոր դարձավ: Հենց առաջին օրից զինծառայությունը սկսեց 89-րդ

հայկական հրաձգային դիվիզիայում: Իր հետ էին այստեղ «Սովետական Հայաստանի» խմբագրության նախկին աշխատակիցները՝ Գրիգոր Զոհրաբյանը, Խիկար Բարսեղյանը, Սիմոն Նալբանդյանը, Գեղամ Ղուկասյանը և այլ լրագրողներ: Մեծ եղավ նրա ուրախությունը, երբ դիվիզիայի քաղբաժնում Ազիզ Կիրակոսյանը նրան հաղորդեց, որ ինքն արդեն նշանակվել է «Կարմիր զինվորի» խմբագիր՝ Ներսես Ղահրամանյանին (Կագրամանով) այլ դիվիզիա տեղափոխելու կապակցությամբ: Եվ գործի անցավ նախկին ժուռնալիստը: Եկավ Երևան, տառատեսակներ և տպագրական սարքեր տեղափոխեց Հյուսիսային Կովկաս, գրաշար Արամայիս Թերզյանի, տպագրիչ Սիմոն Սահակյանի և այլոց հետ 1942-ի աշնանը լույս ընծայեց հայ ռազմիկների սխրանքների և հերոսության տարեգրությունը՝ իր իսկ խմբագրած «Կարմիր զինվորի» նոր համարները: Գնալով մարտերը թեժանում էին: Շուրջբոլորը մահ էր և ավեր: Ու երբ դիվիզիան և խմբագրությունը նոր լրագրողներով (Քր. Թափալցյան, Արշ. Սարոյան, Հր. Հովակիմյան և էլի ուրիշներ) համալրվեց, մարտիկ ժուռնալիստը և իր բանաստեղծ ընկերը՝ Արսեն Հովհաննիսյանը, խնդրեցին իրենց տեղափոխել կրակային գիծ: Որպես 400-րդ գնդի հրամանատարի քաղգծով տեղակալ կուղեց Գ. Հարությունյանը թշնամու դեմ Հյուսիսային Կովկասում, Թերեքի ափերին, Կուբանում, Ղրիմում, Ուկրաինայում և Լեհաստանում, թշնամուն հետևեց մինչև իր վերջնական ջախջախումը և միայն 1946 թվականի գարնանը զորացրվեց բանակից: Հիտլերյան զավթիչների դեմ մղվող մարտերում ցուցաբերած անվեհեր սխրանքի և արիության համար հրամանատար, մայոր Գ. Խ. Հարությունյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի և ՀՄՊ-ի I և II աստիճանի, Կարմիր աստղի շքանշաններով, Կովկասի պաշտպանության համար, Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար և բազմաթիվ այլ մեդալներով: Մեծ հայրենականի հաղթական ավարտից հետո նախկին թամանցին աշխատեց պետվերահսկողության մինիստրությունում, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի ապարատում: Այստեղ նա հայրենադարձների հետ տարվող աշխատանքների բաժնի վարիչն էր, հետո էլ՝ մամուլի սեկտորի վարիչը: 1949 թ. Գ. Հարությունյանը ընտրվեց Արտասահմանի հետ մշակութային կապերի հայկական ընկերության վարչության նախագահ: 1952—1953 թվականներին հայրենիքի նախկին զինվորն ու ժուռնալիստը ղեկավարեց Հայկ. ԽՍՀ կուլտուրայի մինիստրության կինոֆիկացիայի վարչությունը: Կյանքի վերջին տարիներին (մինչև կենսաթոշակի անցնելը, 1962 թ.) «Կարմիր զինվորի» նախկին խմբագիրը աշխատում էր Հայկ. ԽՍՀ Մինիստրների խորհրդին կից ռադիոհաղորդումների պետական կոմիտեում որպես քաղաքական հաղորդումների գլխավոր խմբագիր: Իր հասարակական-քաղաքական և ժուռնալիստական անբասիր գործունեության համար Գուրգեն Խաչատուրի Հարությունյանը 1957 թվականին պարգևատրվել է հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով: Վախճանվեց նա կյանքի 59-րդ տարում՝ 1963 թվականի ապրիլի 12-ին Երևանում[1]:

[1] Գ. Խ. Հարությունյանի կենսագրական տվյալները վերցված են Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի կուսարխիվից, վերջնականապես ճշգրտված են նրա դստեր՝ «Լույս» հրատարակչության խմբագիր **Իզիդա Հարությունյանի** կողմից:

ՀՈՒՇԱՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀՈՒՇԱՑԱՆԿ
ՀՄՊ-Ի ՏԱՐԲԵՐ ՈԱՋՄԱԾԱԿԱՏՆԵՐՈՒՄ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ՀԱՅԵՐԵՆ ԹԵՐԹԵՐԻ ԵՎ ՋԻՆՔԱՂԲՐԱՏԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՅ ԱՆՁՆԱԿԱՋՄԻ

«ՄԱՐՏԱԿԱՆ ԳՐՈՀ»— Օրգան Ղրիմի ռազմաճակատի: **Խմբագիր՝ Արամայիս Մնացականյան**, աշխատակիցներ՝ Աշոտ Թադևոսյան, Ստեփան Կուրտիկյան, Բաբկեն Ճահումյան, Մինաս Մարտիկյան, Բաբկեն Կարապետյան, Ավետիս Դեբենց, (զոհվեց), Լևոն Վաթյան, Աշոտ Աբրահամյան, Վոլոդյա Պողոսյան, գրաշարներ՝ Սուրեն Պողոսյան, Մամիկոն Մովսիսյան, Հայկ Միքայելյան (վերջին երկուսը զոհվեցին Սև ծովում 1942 թ.), տպագրիչ՝ Վարդան Սարգսյան:

Հրատարակվել է 1942 թ. հունվար—մայիս ամիսներին:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՄՆԱՑՊԵՐ»—Օրգան 390-րդ հայկական հրաձգային դիվիզիայի: **Խմբագիր՝ Գուրգեն Հովհաննիսյան (Հովնան)**, խմբագրի տեղակալ՝ Աշոտ Դիլանյան, պատասխանատու քարտուղար՝ Լյուդվիգ Քոչարյան: Գրաշարներ՝ Հովնան Անդրյան, Փ. Գրիգորյան, տպագրիչներ՝ Բ. Հարությունյան, Ի. Իվանով:

Հրատարակվել է 1942 թ. մարտ—մայիս ամիսներին:

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓԱՌՔԻ ՀԱՄԱՐ»— Օրգան Հարավային, հետո՝ Հյուսիս-կովկասյան ռազմաճակատի: **Խմբագիր՝ Մովսես Գրիգորյան**, գրական աշխատողներ՝ կապիտան Մինաս Մարտիկյան, Արսեն Հովհաննիսյան, գրաշար՝ Խաչիկ Պետրոսյան:

Հրատարակվել է 1942 թ. հունիս-օգոստոս ամիսներին:

«ԱՌԱՋ ԴԵՊԻ ՀԱՂԹԱՆԱԿ»— Օրգան Հյուսիս-կովկասյան, ապա Անդրկովկասյան ռազմաճակատի Սևծովյան խմբի: **Խմբագիր՝ Մովսես Գրիգորյան**, գրական աշխատողներ՝ Արսեն Հովհաննիսյան, Մինաս Մարտիկյան: Թերթը փաստորեն «Հայրենիքի փառքի համարի» շարունակությունն էր:

Հրատարակվել է 1942 թ. օգոստոսից մինչև 1943 թ. մարտ ամիսը:

«ԴԵՊԻ ԹՇՆԱՄՈՒ ՋԱԽՋԱԽՈՒՄԸ»—Օրգան Բրյանսկի ռազմաճակատի: **Խմբագիր՝ Վարդան Վարդանյան**, թարգմանիչ՝ ավ. լեյտենանտ Վարդան Սիմոնյան, գրաշարներ՝ Խաչիկ Թորոսյան, Մելիք Գևորգյան և Գառնիկ Պողոսյան: Ակտիվ թղթակիցներ՝ Ա. Խառատյան, Ջ. Զատինյան, Արիստակես Սարգսյան, Ալբերտ Դիդիչյան:

Բոլոր լեզուներով լույս տեսնող այս թերթի գլխ. խմբագիրը՝ Ա. Մ. Վոլովեցը, զոհվեց Բրյանսկի անտառներում:

Հրատարակվել է 1942 թ. հուլիսից մինչև 1943 թ. սեպտեմբեր ամիսը:

«ԲԳԿԲ ՄԱՐՏԻԿ»—Օրգան Անդրկովկասի ռազմաճակատի: **Խմբագիրներ՝ Արամայիս Մնացականյան, Վարդան Ղազանչյան**, ապա՝ **Վարդան Վարդանյան**: Աշխատակիցներ՝ Գուրգեն Բորյան, Կարո Վարդանյան, թարգմանիչներ՝ Ստեփան Կուրտիկյան, Ղևոնդ Կոմունի: Գրաշարներ՝ Ատոմ Գաբուզյան, Թադևոս Դավրիշյան և Սուրեն Արևշատյան, հետագայում այստեղ աշխատել են արձակագիր Մկրտիչ Ալանյանը, Գևորգ Ղարիբջանյանը, գրաշար Վաչե Գրիգորյանը և մեքենագրուհի Անուշ Սարգսյանը:

Հրատարակվել է 1942 թ. հոկտեմբերից մինչև 1943 թ. հունվար ամիսը:

«ԱՌԱՋ ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ»—Օրգան Անդրկովկասյան ռազմաճակատի հյուսիսային զորախմբի, ապա՝ Հյուսիս-կովկասյան ռազմաճակատի: **Խմբագիրներ՝ Արշավիր Հակոբյան, Մովսես Գրիգորյան**, գր. աշխատողներ՝ Վախթանգ Անանյան, Մարտին Զարյան, Ղևոնդ Կոմունի, Գրիգոր Սարգսյան, Լևոն Վաթյան, Մինաս Մարտիկյան, Արսեն Հովհաննիսյան: Ակտիվ թղթակիցներ՝ Ղևոնդ Դալլաքյան, Ալբերտ Ջաղինյան: Թերթի գրաշարը, էջկապը և տպագրիչն էր Խաչիկ Պետրոսյանը:

Հատարակվել է 1943 թ. հունվարից մինչև 1944 թվականը:

«ԿԱՐՄԻՐ ԶԻՆՎՈՐ»—Օրգան 89-րդ հայկական Թամանյան հրաձգային դիվիզիայի: **Խմբագիրներ՝ Ներսես Կագրամանով, Գուրգեն Հարությունյան, Սիմոն Նալբանդյան:** Աշխատակիցներ՝ Գեղամ Ղուկասյան (պատ. քարտուղար), Հրայր Հովակիմյան, Գրիգոր Զոհրապյան, Արսեն Հովհ Ննիսյան, Քրիստափոր Թափալցյան, Արշալույս Սարոյան, Գուրգեն Բորյան (վերջինիս այստեղ գործուղեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմը օգնության համար): Ակտիվ թղթակիցներն էին Խիկար Բարսեղյանը («Թամանցիների քայլերգի» տեքստի հեղինակը), Մամիկոն Գրիգորյանը, երիտասարդ բանաստեղծներ Սուրեն Ստեփանյանը, Դանիել Սարգսյանը, մարտիկներ Սաղյանը, Գարեգին Պապյանը և էլի ուրիշներ: Գրաշար և տպագրիչ զինվորներն էին Խաչիկ Պետրոսյանը, Սիմոն Սահակյանը, Մկրտիչ Մինասյանը, Արամայիս Թերզյանը, Սամսոն Մարտիրոսյանը, Գուրգեն Միրզոյանը, Ս. Հարությունյանը և Խաչիկ Բդոյանը:

Հրատարակվել է 1942 թ. մինչև 1956 թվականը:

«ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ»— Օրգան 408-րդ հայկական հրաձգային դիվիզիայի: **Խմբագիր՝ Արշավիր Հակոբյան,**

պատասխանատու քարտուղար՝ Սուրեն Գրիգորյան, գրական աշխատողներ՝ Մելիք Քոչարյան, Արմենակ Թամազյան: Ակտիվ թղթակիցներ՝ Մկրտիչ Ասլանյան, Սիմոն Սարգսյան և ուրիշներ:

Հրատարակվել է 1942 թ. փետրվարին:

«ՄԱՐՏԱԿԱՆ ԴՐՈՇ»—Օրգան 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայի: **Խմբագիր՝ Հարություն Մկրտչյան,** պատասխանատու քարտուղար՝ Գարեգին Բես (Սարինյան), գրական աշխատողներ՝ Վախթանգ Անանյան, Գարսևան Շառոյան, Համազասպ Քոսյան, ակտիվ զինթղթակիցներ՝ Ջավեն Մարգարյան, Գևորգ Սահակյան, Գառնիկ Իսահակյան, Սահակ Ներսիսյան, Խաչիկ Փոշոտյան, Մկրտիչ Գուլյան, Սերոբ Գևորգյան (Աշտարակի շրջ. թերթի նախկին խմբագիրն էր), Ռուբեն Ասրյան, Լյուդվիգ Պետրոսյան («Բանվորից») և ուրիշներ:

Հրատարակվել է **1942** թ. փետրվարին:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԻԿ»— Օրգան Հարավ-արևմտյան, ապա 2-րդ Ուկրաինական ռազմաճակատի: **Խմբագիրներ՝ Գառնիկ Իսահակյան, Վարդան Ղազանչյան:** Գրական աշխատողներ՝ Եղիշե Հովհաննիսյան (զորացրվելուց հետո Հայկ. ԽՍՀ կուլտմինիստրության պոլիգրաֆիայի և հրատարակչության վարչության պետ, մահից առաջ՝ ՀԿԿ Կենտկոմի հրատարակչության տնօրեն), Գարսևան Շառոյան, Հարություն Մնացականյան, Սուրեն Ազատյան, ակտիվ թղթակիցներ՝ Լ. Հովհաննիսյան, Մ. Գուլյան, գրաշար զինվորներն էին Սմբատ Գրիգորյանը, Սերգո Հարությունյանը և Վարդգես Ավագյանը:

Հրատարակվել է 1943 թ. հուլիսից մինչև 1945 թ. ապրիլ ամիսը:

«ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԱԳԻՏԱՏՈՐԻ ԲԼՈԿՆՈՏ»— Կարմիր բանակի գլխավոր քաղաքական վարչության հրատարակչություն: **Խմբագիր՝ Հմայակ Ոսկանյան (Սիրաս),** գրական աշխատող և խմբագիր՝ Արշալույս Արշարունի:

Հրատարակվել է 1943 թ. ապրիլից մինչև 1945 թ. նոյեմբեր ամիսը:

«ՍՈՒԿՈՐՈՎԱԿԱՆՆԵՐ»— Օրգան Մերձբալթյան 2-րդ ռազմաճակատի: **Խմբագիր՝ Վարդան Վարդանյան,** գրական աշխատողներ՝ Հրաչյա Քոչար, Վարդան Սիմոնյան, Գուրգեն Խանամիրյան, սրբագրիչ՝ Միհրան Սահակյան, գրաշարներ և տպագրիչներ՝ Գարիկ Պողոսյան և Մանուկ Աբգարյան:

Հրատարակվել է 1943 թ. հուլիսից մինչև 1944 թ. մայիս ամիսը:

«ՄԱՐՏ ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ»—Օրգան 261-րդ հայկական հրաձգային դիվիզիայի: **Խմբագիրներ՝ Գուրգեն Հովհաննիսյան (Հովնան), Բաբկեն Կարապետյան, Սուրեն Գրիգորյան,** խմբագրի տեղակալ՝ Կարո Ալավերդյան, գրական աշխատողներ՝ Մելիք Քոչարյան, Հենրիկ Թումանյան, իրենց ռազմաճակատային գրական ստեղծագործություններն են այստեղ տպագրել սերժանտ Խ. Հարությունյանը, կարմիր բանակայիններ Ա. Պետրոսյանը, Ս. Էպիսենցը, Ա. Բելյանը և էլի ուրիշներ:

Հրատարակվել է 1943 թ. ապրիլից մինչև 1945 թ. նոյեմբեր ամիսը:

«ՄԱՐՏԱԿԱՆ ԱՍՏՂ»—Օրգան 45-րդ բանակի: **Խմբագիրներ՝ Գուրգեն Հովհաննիսյան (Հովնան), Խաչիկ Աբեղյան:** Աշխատողներ՝ Մարտին Քարամյան, Վահան Արամունի, Սերգո (Սարգիս) Բայանդուր, Գևորգ Հայրյան:

Հրատարակվել է 1943 թ. ապրիլից մինչև 1945 թ. մայիս ամիսը:

«ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱԴՐԵՐ»— Օրգան 38-րդ պահեստային միավորման (բրիգադի), խմբագիր՝ **Մ. Ասրյան,** պատասխանատու քարտուղար՝ Մելիք Քոչարյան: Ակտիվ թղթակիցներ՝ Վարշամ Հարությունյան, սերժանտներ՝ Գ. Հարությունյան, Ֆ. Խվորոստյան և ուրիշներ:

Հրատարակվել է 1945 թ. մարտին:

ՀՈՒՇԱՑԱՆԿ

ՌԱԶՄԱՃԱԿԱՏԱՅԻՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ ԾԱՌԱՅԱԾ ԽՍՀՄ ԳՄ ՀԱՅ ԱՆԴԱՄՆԵՐԻ

Անանյան Վախթանգ
Անդրիասով Միխայիլ
Արշարունի Արշալույս
Արամունի Վահան
Արղության (Արգուտինսկայա) Լուսյա
Ասլանյան Մկրտիչ
Բայանդուր Սարգիս
Բես (Սարինյան) Գարեգին
Բորյան Գուրգեն
Գալֆայան Վահան
Գարնակերյան Աշոտ
Դանգիլով Սավա
Դարբնի Արշավիր
Դարոնյան Սերգեյ
Դեբենց (Իսրայելյան) Ավետիս
Էլ-Ռեգիստան (Ուրեկյան) Գաբրիել
Թափալցյան Քրիստափոր
Թամազյան Արմենակ
Թումանյան Հենրիկ
Կարապետյան Բաբկեն
Կարենց Վահագն
Կոմունի Ղևոնդ
Կուրտիկյան Ստեփան
Խոլոպով (Խոլոփյան, Խալափյան) Գեորգի
Հայրյան Գևորգ
Հովակիմյան Հրայր
Հովհաննիսյան Արսեն
Հովնան (Հովհաննիսյան) Գուրգեն
Հուրունց Լեոնիդ
Ղազանչյան Վարդան
Ղարիբջանյան Գևորգ
Մարգարյան Ջավեն
Մկրտչյան Հարություն
Մարյան Յուրի
Շաթիրյան Միքայել
Շահումյան Բաբկեն
Սարգսյան Գրիգոր
Սարոյան Արշալույս
Սերեբրյակով Կոնստանդին
Սիրաս Հմայակ
Ստեփանյան Գառնիկ
Վիվան (ԱՆ. Ջիդեջյան)
Քարամյան Մարտին
Քոչար Հրաչյա
Քոչարյան Մելիք

ՀՈՒՇԱՑԱՆԿ ՀՄՊ-ում ՋՈՀՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ

(Ովքեր զբաղվել են գրական կամ նկարչական աշխատանքով, նրանց անունները տես զոհված գրողներին կամ զոհված նկարիչներին նվիրված բաժիններում)

Աբովյան Սարգիս
Առաքելյան Դրաստամատ
Բադալյան Արտեմ
Գասպարյան Վաչագան
Գևորգյան Սերոբ
Գրիգորյան Կոլյա
Գրիգորյան Մամիկոն
Դանիելյան Գալուստ
Երեմյան Մանվել
Ջաքարյան Աշոտ[1]
Ջոհրաբյան Գրիգոր
Թումանյան Սարգիս
Լիլոյան Մկրտիչ
Խաչատրյան Սոկրատ
Կարապետյան Վարդան
Կոլեշկին Գեորգի
Հակոբյան Բագրատ
Հակոբյան Միկիտ
Հակոբյան Վահան
Հասրաթյան Իսրայել
Հաշիմով Ալամդար
Հովակիմյան Միհրան
Հովհաննիսյան Գուրգեն
Ղարաբյան Անդրանիկ
Ճշմարիտյան (Մարտյան) Հայկ
Մանուկյան Մկրտիչ
Մարտիրոսյան Արշավիր
Միրիջանյան Սիմոն
Մուրադյան Բենիկ
Նազարյան Խաչիկ
Նավասարդյան Մուշեղ
Ոսկանյան Վիգա
Զոբանյան Կոնստանդին
Պայազատյան Աշոտ
Պետրոսյան Լյուդվիգ
Պետրոսյան Մկրտիչ
Պողոսյան Պողոս
Պողոսյան Ներսես
Սարգսյան Ագրիպաս
Սարգսյան Անդրանիկ (Անդրուշ)
Սարգսյան Հովնան
Սարուխանյան Արամայիս
Սիմոնյան Մնացական
Սուքիասյան Սարգիս
Վարդանյան Վաղարշակ
Վանեսյան Հրանտ
(թղթակից ծուռո)[1]
Փորսուղյան Ռուբեն
Օհանյան Համբարձում
Օրբելով (Օրբելյան) Վլադիմիր
Օրդինյան Վանո
Օքմինյան Սուրեն

[1] Ջոհվեց 1945-ին Բեռլինի վրա հարձակվելիս:

[1] Ջոհվել է Կուբանում, տես «Բանվոր», Լ., 5 մայիսի 1975 թ., էջ 3:

ՀՈՒՇԱՑԱՆԿ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՎ 1941—1945 ԹԹ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄ ԾԱՌԱՅԱԾ ԽՍՀՄ ԺՄ ԱՆԴԱՄ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ, ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ, ՀԵՌՈՒՍՏԱՌԱԳԻՈՅԻ ԵՎ ՄԱՄՈՒԼԻ ՕՐԳԱՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ

Աբրահամյան Աշոտ Գարեգինի
Առաքելյան Արտաշես Արկադիի («Բոլեվոյ պոստ» թերթի աշխատակից)
Աբեղյան Խաչիկ Անդրեյի
Առաքելյան Բաբկեն Նիկոլայի
Աբգարյան (Մուրադյան) Վաչագան Վարազի
Ազիզբեկյան Հայկազ Հարությունի
Ազիզբեկյան Լենդրուշ Աբիսողոմի («Կարմիր զինվորի» գրաշար)
Ազատյան Սուրեն Դավթի (զինթղթակից)
Ազատյան Ֆրունզիկ Ասատուրի
Ալլավերդյան Կարապետ Տիգրանի
Ամիրբեկյան Միքայել Արշակի
Ամիրյան Աղասի Սմբատի
Արզումանյան Մակիչ Վահանի
Արսենյան Սամվել Սուրենի
Անանյան Արշակ Աղաբեկի
Ավետիսյան Արտաշես Հովհաննեսի
Ավետիսյան Շավարշ Մովսեսի
Ավետիսյան Գեղամ Սիրեկանի
Ավագյան Փաշո Կարապետի
Ավագյան Սմբատ Դարչինի
Այվազյան Ջավեն Հարությունի
Այվազյան Հակոբ Ռաֆայելի
Ասատրյան Արամ Հովհաննեսի
Ասրյան Գուրգեն Հովհաննեսի
Ասրյան Ռուբեն
Ասրյան Մ.
Անտաշյան Գարեգին
Ալի Սամեդով Աբդուլռահմանի
Աթաբեկյան Գուրգեն Պատվականի
Աքպերով Մամեդ
Աֆանդյան Արտաշես Բարսեղի
Առաքելյան Գրիգոր Ավետիքի (թղթակից)
Առուստամյան Բագրատ
Բաբաջանյան Միքայել Հմայակի
Բաբաջանյան Գուրգեն Հմայակի
Բաբախանյան Մովսես (զինթղթակից)
Բաբլոյան Մանվել Ավետիքի
Բադալյան Գագիկ Գեղամի
Բարսեղյան Խիկար Հակոբի
Բաբայան Լևոն Հովհաննեսի
Բարսեղյան Սերգել (Սարգիս) Մնացականի
Բայանդուր Սարգիս Բագրատի
Բաղդասարյան Արշալույս Արմենակի
Բաղդասարյան Վարդան Սիմոնի
Բաղդասարյան Սուրեն Մարտիրոսի
Բաղդասարյան (Բաղդենց) Մնացական
Բալայան Արամ («Գր. Ադրբեջանի» պատ. քարտ.)
Բզնունի Վարազդատ
Բելուբեկյան Աշոտ Արշակի
Բոյաջյան Վարդգես
Բեգլարյան Արշավիր Նիկոլայի
Բրոյան Խաչիկ Ստեփանի («Կարմիր զինվորի» գրաշար)
Գասպարյան Արտավազդ Գասպարի
Գազազյան Բաղդասար Աբրահամի
Գևորգյան Այվազ Ներսեսի
Գևորգյան (Թուրաջյան) Աղասի Աբգարի
Գևորգյան Գևորգ Արտաշեսի («ՍՀ»-ի թարգմանիչ)
Գևորգան Սոս Գեղամի
Գրիգորյան Արիստակես Խաչատուրի
Գրիգորյան Սուրեն Սարգսի
Գրիգորյան Արմեն Համբարձումի
Գրիգորյան Մովսես Մանուկի
Դադայան Խաչատուր Ջավենի
Դալլաքյան Ղևոնդ Մեխակի
Դարյան Վահրամ Մարտիրոսի
Դավթյան Գերասիմ Ավետիքի
Դանիելյան Աբգար (ԼՂԻՄ)
Դիլանյան Աշոտ Եգորի
Դիդիչյան Ալբերտ (զինթղթակից)
Եսայան Հայկազուն
Երանոսյան Վ. (Սիբիրյան № 204 դիվիզիայի «Բոլեվոյ Կրասնոարմեց» թերթի խմբագիր)
Եղիազարյան Արսեն Եգորի
Ջուտնաչյան Խաչիկ

Էլլարյան Իսկանդար Բարսեղի
Թավաքալյան Նիկոլայ Ավետի
(«Կրասնիյ վոյին» զինթերթի թղթակից)
Թանգյան Գուրգեն Կարապետի
Թադևոսյան Ալբերտ Լևոնի
Թադևոսյան Աշոտ Երվանդի
Թովիկ (Թովմասյան) Բաղդասար Թովմասի
Թաղիև Մ.
Իբրահիմով Աբդուլլա
Իկիլիկյան Հրաչ Սիմոնի
Իսահակյան Գառնիկ Դրաստամատի
Իշխանյան Սերգեյ Թովմասի
Իսմայիլով Իսմայիլ Ալեսքերի
Ինձիկյան Հովհաննես Գրիգորի
Լիլոյան Ցոլակ
Խալելյան Երվանդ Մկրտիչի
Խանամիրյան Գուրգեն
Խաչատրյան Ս. (302-րդ հրաձգ. դիվիզիայի «За родину» թերթի խմբագիր)
Խաչատրյան Ռոբերտ Հրաչի («Նաստրաժե» թերթի թղթակից)
Խաչատրյան Սուրեն Կարապետի
Խաչիկյան Սուրեն Միքայելի
Խոսրոև Սուրեն Արամի
Ծովակ Արմեն
Կագրամանով Ներսես Ռսկանի
Կարապետյան Արծվիկ Գալուստի
Կարապետյան Հրաչ Սարիբեկի
Կարապետյան Տոնիկ Եղիազարի
Կարապետյան Մանուկ Հակոբի
Կարապետյան Ռուբեն Ավագի
Կոստյուչենկո Նիկոլայ
Կուսիկյան Հովսեփ Կարապետի
Հալաջյան Մարատ Սինասի
Հակոբյան Հովհաննես Սուշեղի
Հակոբյան Արշավիր Մնացականի
Հակոբյան Բենիկ
Հակոբյան Գրիգոր Միսակի
Հակոբյան Գառնիկ Մովսեսի
Հակոբյան Սամսոն
Հակոբյան Սիմոն Գլումուշի
Հակոբյան Սերգեյ Մարտինի
Հակոբյան Ստեփան Մկրտիչի
Հակոբյան Գարսևան Գեղամի
Հայրապետյան Արտաշես Պետրոսի
Հարությունյան Արսեն
Հարությունյան Գուրգեն Խաչատուրի
Հարությունյան Գևորգ Սամվելի
Հարությունյան Վաչե (Վաչագան) Արմենակի
Հարությունյան Սերգեյ Հարությունի («Մարտական դրոշից»)
Հարությունյան Նիկոլայ Վասիլի
Հարությունյան Նագուշ Խաչատուրի
Հարությունյան Կարշամ (զինթղթակից)
Հարությունյան Ալբերտ
Հարությունյան Աշոտ Հովսեփի
Հովհաննիսյան Ալբերտ Սմբատի
Հովհաննիսյան Միքայել Կարապետի
Հարոյան Բաբկեն Միսակի
Հովհաննիսյան Եղիշե Կարապետի
Հովհաննիսյան Տիգրան
Հովհաննիսյան Համո
Հովսեփյան Ավագ Մկրտիչի
Հովսեփյան Հրանտ Սաղաթելի
Հովսեփյան Գարեգին («Ս. դպրոցից«)
Հովսեփյան Հովսեփ
Հովհաննիսյան Հրանտ Գրիգորի
Հունանյան Ֆերդինանդ
Հուսեյնով Էլբեյի Մամեդօղլի (Ազիզբեկովի շրջ. թերթից)
Հուսեյնով Լատիֆ Կուլու օղլի
Հեքեքյան Արտեմ Տիգրանի
Հեքեքյան Հակոբ Տիգրանի
Ղազարյան Անդրանիկ
Ղարիբջանյան Գևորգ Բագրատի
Ղասաբյան Ռուբեն Հակոբի
Ղազարյան Մուշեղ Արամի
Ղազարյան Սուրեն Սարգսի
Ղահրյան Վաչե (զին. թերթի խմբագիր)
Ղահրամանյան Ղևոնդ
Ղարիբյան Լևոն
Ղուկասյան Գեղամ Հովհաննեսի
Ղուլյան Մկրտիչ (Գլավլիտից)
Մալխասյան Արմո Եղիայի
Մարկոսյան Միքայել
Մարտիկյան Աշոտ Կարապետի
Մարտիկյան Մինաս Կարապետի
Մաղաքյան Հովհաննես (Իվան) Գևորգի
Մարտիրոսյան Գրիգոր Խաչատուրի
Մաթևոսյան Գևորգ Մարտիրոսի
Մանասյան Սիրակ Մեսրոպի
Մանվելյան Սուրեն
Մադաթյան Թոմ
Մարկոսյան Սերգեյ Գրիգորի
Մարկոսյան Մանվել Գրիգորի
Մարկոսյան Մնացական Կիրակոսի
Մարության Հենրիկ Սուքիասի
Մանոյան Խաչիկ
Մանոյան Ռուբեն Խաչիկի
Մաթևոսյան Խաչատուր Բախշիի
Մայիլյան Սոս
Մատղաշյան Գուրգեն
Մատղաշյան Աղասի Հակոբի
Մարության Ֆրոբել Մարտիրոսի
Մարության Հովհաննես
Մանուչարյան Իշխան Իսախանի
Մարգարյան Արշալույս Դավիթի
Մարտիրոսյան Հակոբ Հայկի
Մկրտչյան Երվանդ Մկրտիչի
Մնացականյան Արամայիս Նավասարդի
Մնացականյան Հարություն Միքայելի
Մնացականյան Հարություն
Մելիքսեթյան Վասպուր
Միրզոյան Անդրանիկ
Միրզոյան Բենիկ
Միրզոյան Շամիր
Միքայելյան Վարդգես Ալեքսանի
Մեժլումյան Մամիկոն Մնացականի
Մելիքյան Սուրեն Հովհաննեսի
Մկրտումյան Մուսայել
Միրաս Արշալույս (զինթղթակից)
Մուրադյան Հրաչյա
Մուրադյան Վիկտոր Ասլանի
Մուրադով Գեորգի Բորիսի
Մուրադով Տիտալ Զաթոյի
Մուրադխանյան Գևորգ Բաղդասարի
Մովսիսյան Սուրեն Համբարձումի
Մովսիսյան Սոս Միքայելի
Մովսիսյան Գուրգեն Գարեգինի
Մնեյան Սաղաթել Մանուկի
Մուսայելյան Համբարձում Հայրապետի
Մուղնեցյան Գեղամ Մինոյի
Միլգրոմ Իգոր Բորիսի
Միերյան Տիգրան Հովհաննեսի
Նազարյան Գրիգոր («Հայգրքից»)
Նազինյան Սուրեն Արշակի
Նալբանդյան Սիմոն Սարգսի
Ներսիսյան Մկրտիչ Գեղամի
Ներսիսյան Սահակ
Նիկողոսյան Լյուդվիգ Երեմի
Շահնազարյան Էդուարդ Սուրենի
Շահնազարյան Միհրդատ
Շառոյան Գարսևան Վանոյի
Շառոյան Սուրեն Տիգրանի
Շարիֆով Սուրեն Ալի օղլի
Շիրոյան Ռաֆայել (Ռաֆիկ)
Շիրինյան Ցոլակ
Չարյան Մարտին Ենոքի
Չաթինյան Ջիվան (զինթղթակից)
Չիլինգարյան Սամվել Սերգոյի (թղթակից)
Պակով Նիկոլայ Ալեքսանդրի
Պարոնյան Հայկ Արշակի
Պապյան Գարեգին (զինթղթակից)
Պետրոսյան Գևորգ
Պետրոսյան Խաչատուր Սեդրակի
Պետրոսյան Հովհաննես
Պետրոսյան Գարեգին Բախշիի
Պողոսյան Անուշավան Նշանի
Պողոսյան Իվան (Վանյա) Պողոսի
Պողոսյան Ջավեն Պողոսի

Պողոսյան Վլադիմիր Հարությունի
Պլուզյան Աղասի
Ջանփոլադյան Եսայի Նիկոլայի
Ջաղինյան Ալբերտ (զինթղթակից)
Սադաղյան Արամայիս Արշակի
Սարգսյան Արսեն
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Սեմյոն Մկրտիչի
Սարգսյան Կրույր Հովհաննեսի
Սարգսյան Վահան Սաֆարի
Սարգսյան Սուրեն Սարգսի
Սահակյան Գևորգ Հարությունի
Սահակյան Վարազդատ Մկրտիչի
Սահական Միհրան Հովակիմի
Սահակյան (Գեղունի) Նորայր Գեղամի
Սահրադյան Արիստակես Թադևոսի
Սաֆարյան Մնացական Կնյազի
Սիմոնյան Արշալույս Ցոլակի
Սիմոնյան Հրանտ Ցոլակի
Սիմոնյան Աբել Պողոսի
Սիմոնյան Շավարշ Ստեփանի
Սիմոնյան Վարդան
Սինանյան Հայկ Եգորի
Սիրցև Վենիամին Անդրեյի
Սիրավյան Ասատուր Սիմոնի
Սոլախյան Արշավիր
Սուքիասյան Վաչագան Թադևոսի
Սուքիասյան Սաքո Գրիգորի
Ստամբուլցյան Գևորգ Պողոսի
Ստեփանյան Հակոբ (ՀՀԳ-ից)
Ստեփանյան Սուրեն (զինթղթակից)
Սարգսյան Դանիել (զինթղթակից)
Սարգսյան Հարություն Ներսեսի («В бой за родину» թերթի խմբ. տեղակալ)
Սարգսյան Արիստակես
Սուլթանով Ջումշիդ
Սուքիասյան Աղվան Ղազարի
Սերեբրյակով Գ.[1]
Վաթյան Լևոն Ավետիսի
Վարդանյան Կարո (Կարապետ) Սաղաթելի
Վարդանյան Վարդան Գալուստի
Վարդանյան Վաչագան Լևոնի
Վարդանյան Հովհաննես («Խ. գրողից»)
Վարդանյան Ստեփան Հմայակի
Վանեսյան Սիրաք Հովհաննեսի
Վահանյան Գվիդոն Հովհաննեսի
Վորոնով Ադոլֆ Բորիսի
Տոնոյան Կարո Հովհաննեսի
Տուչին (Իցկո Խայմովիչ) Իսահակ Եֆիմովիչ
Ցուցուլյան Սամվել Գրիգորի
Ումրշատ Գագիկ Ավետիսի (թղթակից)
Ութմազյան Հայկարամ Մուրադի
Փաշինյան Ռաֆիկ Խորենի
Փարիկյան Հարություն Մարտիրոսի
Փարսյան Թադևոս Գալուստի
Փոշոտյան Խաչիկ Սարիբեկի
Քոսյան Համազասպ Հովհաննեսի
Քոչարյան Լյուդվիգ Միքայելի
Քոչարյան Միրա Հովակիմի
Օթարյան Շամիր
Օհանջանյան Հրաչյա
Օրուջալիև Դադաշ Նամազի

[1] Տես «Կոմունիստ» ամսագիրը, 1976 թ., № 3, էջ 90—91.

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՈՒՇԱՑԱՆԿ
ՀՄՊ-ԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՎ 1941—1945 ԹԹ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄ ԾԱՌԱՅԱԾ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ[1]

Ադամյան Խաչիկ Մնացականի
Ազարյան Շմավոն Ռուբենի
Ալահվերդյան Միքայել Գրիգորի
Ալահվերդյան Նորայր Հայկի
Ալթունյան Կոնստանդին Տիգրանի
Ամիրբեկյան Հրաչյա Նիկոլայի
Անանյան Կառլեն Մարտիրոսի
Ասլանյան Բաբկեն Եղիշի
Ավագյան Լևոն Գերասիմի
Արամյան Արամ Մկրտչի
Արևշատյան Վարազդատ Աբրահամի
Արզումանյան Բաղդասար Հայրապետի
Արզումանյան Միսակ Սիմոնի
Բաբայան Լևոն Միքայելի
Բաղդասարյան Բաղդասար Տիգրանի
Բաղդասարյան Վրույր Նիկոլայի
Բախչիև Ստեփան Նիկոլայի
Բախշինյան Ջավեն Տիգրանի
Գալիկյան Արծրուն Գաբրիելի
Գևորգյան Սահակ Երեմի
Գյոլեցյան Ռաֆայել Համազասպի
Գյուլխասյան Շմավոն Ասատուրի
Գորյան Լևոն Սարգսի
Գրիգորյան Հենրիկ Արմենակի
Դուխիկյան Օնիկ Հմայակի
Ջաքիև Գեորգի Արտեմի
Ջուրաբյան Սուրեն Տիգրանի
Թադևոսյան Գառնիկ Անուշավանի
Թամանյան Յուլի Ալեքսանդրի
Թորոմանյան Գառնիկ Թորոսի
Թովմասյան Գ.[2]
Թումանյան Պետրոս Պետրոսի
Ժամհարյան Ալբերտ Երվանդի
Խուդոյան Արտավազդ Անուշավանի
Կարապետյան Հրանտ Մելիքսեթի
Կնդղցյան Սպարտակ Աղասու
Հակոբյան Կորյուն Հարությունի
Հակոբյան Լևոն Ցոլակի
Հակոբյան Հովհաննես Համազասպի
Հաջիև (Խաջիև) Պետրոս Մարտինի
Հարությունյան Սուրեն Անդրանիկի
Հարությունյան Վարազդատ Մարտիրոսի
Համբարձումյան Եղիշե (զոհվել է)
Հարությունյան Օնիկ (Հովհաննես) Մարտիրոսի
Հովհաննիսյան Կոնստանդին Լևոնի
Հովհաննիսյան Սուրեն Հակոբի
Մանուկյան Փայլակ Սարգսի
Մանուկյան Սոս Մնացականի
Մարգարյան Գուրգեն Թադևոսի
Մարտիրոսյան Մանուկ Մուրադի
Մանուկյան Լևոն Սմբատի
Մելքոնյան Լևոն Սմբատի
Մելքումով (Մելքումյան) Գրիգորի Ասատուրի
Մնացականյան Ստեփան Խաչատուրի
Մուրզա Գրիգորի Ստեփանի
Մուշեղյան Գևորգ Ռուբենի
Մխիթարյան Բաբկեն Դավթի
Մսրյան-Օքսուզյան Պերճուհի Համբարձումի
Ներսիսյան Սերյոժա (Սարգիս) Ռուբենի
Շահինյան Գուրգեն Թադևոսի
Շահսուվարյան Սուրեն Վլասի
Շահվերդյան Սամսոն Հովհաննեսի
Պողոսյան Հմայակ Արտաշեսի
Սահակյան Վարուժան Սահակի
Սարապյան Էդուարդ Արամի
Սարդարյան Ժորես Սարիբեկի
Սաֆարյան Էդուարդ Արամի
Սիմոնյան Սամսոն Հարությունի
Վաթինյան Խորեն Մկրտչի
Վարդանյան Արշալույս Ալեքսանի
Տեր-Ջաքարյան Ջաքար Հայկի
Տեր-Կարապետյան Արշավիր Գաբրիելի
Փինաջյան Վարոս Վաղարշակի
Օհանջանյան Կոնստանդին Սերգեյի
Ֆարսյան Արտավազդ Մարտիրոսի

[1] Բացթողումների և վրիպումների համար հեղինակը ներողություն է խնդրում և սպասում ձեր լրացումներին, քանզի նա Հայաստանի ճարտարապետների միությունից ոչ մի օժանդակություն-օգնություն չի ստացել անհրաժեշտ տվյալներ ձեռք բերելու և ՀՄՊ-ի մասնակից ճարտարապետներին գրքում առանձին բաժին հատկացնելու համար —ՍԳ:

[2] Նրա մասին տես Խ. Գյուլնազարյանի «Մասունքներ» հոդվածը «Գարունում», 1968 թ., № 7, էջ 27—32:

ՀՈՒՇԱԳՐՔՅՈՒՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՇԱՏԵՂԵԿԱՏՈՒ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Միտինգ Հայֆիլհարմոնիայում, Ստալինեց (այժմ «Կոմսոմոլեց»), 15 հուլիսի 1941 թ.:
2. **Ստեփանյան Հարո**— Թշնամին պիտի ջախջախվի, Ստալինեց, 24 հունիսի 1941 թ.:
3. **Դանիելյան Հայկանուշ**—Ելույթ, ՍՀ, 10 սեպտեմբերի 1941 թ.:
4. **Սարաջև Կոնստանդին**—Ողջ խորհրդային ժողովուրդն է հայրենիքի համար ելել ոտքի, Կոմունիստ, 26 հունիսի 1941 թ.:
5. Հայրենիքի պաշտպանության ֆոնդին (կոմպոզիտորների միության, Սպանդարյանի, Ապարանի և Ախտալի շրջանների կոլեկտիվներից), ՍՀ, 8 օգոստոսի 1941 թ.:
6. **Կոմպոզիտոր Ազատ Մանուկյանի հայրենասիրական երգերը,** ՍՀ, 18 սեպտեմբերի 1941 թ.:
7. **Մանուկյան Ազատ**—Ստեղծագործական ավյունով, ՍՀ, 28 հունիսի 1941 թ.:
8. Պաշտպանական նոր երգեր (հայ կոմպոզիտորների հայրենասիրական նոր երգերի մասին), ՍՀ, 14 նոյեմբերի 1941 թ.:
9. **Սաթյան Աշոտ**— Առաջ, հաղթանակի երգով, ՍՀ, 24 հունիսի 1941 թ.:
10. **Տալյան Շարա**—Մեր գործն իրավացի է, ՍՀ, 24 հունիսի 1941 թ.:
11. **Համերգ զինվորների և հրամանատարների համար,** Կոմունիստ, 6 օգոստոսի 1941 թ.:
12. **Վարդանյան Ջավեն**—Հայֆիլհարմոնիան ՀՊ օրերին, ՍՀ, 11 փետրվարի 1942 թ.:
13. **Տոնիկյան Ա.**—Սովետական Հայաստանի կոմպոզիտորները և երաժիշտները ՀՊ օրերին, ՍՀ, 13 հոկտեմբերի 1942 թ.:
14. **Սազանդարյան Տաթևիկ**— Որպեսզի երգս հասնի քեզ, Հակոբ, Կոմունիստ, 1 հունվարի 1942 թ.:
15. **Ստեփանյան Հարո**—Թող գերմանացիները մեր օդը չշնչեն, Կոմունիստ, 12 հոկտեմբերի 1943 թ.:
16. **Խանջյան Հակոբ**— Մեր ջազը (զինվորական ջազ-նվագախմբի մասին), ՍՀ, 25 ապրիլի 1943 թ.:
17. **Ստեփանյան Հարո**—Սրտանց ողջույն, Կոմունիստ, 1 հունվարի 1943 թ.:
18. **Վարդանյան Վ.**— Երաժիշտը (գվ. ավագ լեյտենանտ Ս. Գևորգյանի մասին), Կոմունիստ, 10 սեպտեմբերի 1944 թ.:
19. **Գրիգորև Ս.**— Ռազմաճակատային ջազ-նվագախմբի համերգները Երևանում, Կոմունիստ, 17 սեպտեմբերի 1944 թ.:
20. **Խաչատրյան Արամ**— Ողջույն իմ երկրին, Կոմունիստ, 29 նոյեմբերի 1944 թ.:
21. Հայկական ժողովրդական երգի-պարի անսամբլը մեկնեց ռազմաճակատ (I Մերձբալթյան ռազմաճակատ), Կոմունիստ, 29 սեպտեմբերի 1944 թ.:
22. Հայֆիլհարմոնիայի արտիստները ռազմաճակատում, Կոմունիստ, 7 ապրիլի 1944 թ.:
23. **Պետրոսյան Ա.**—Անմոռանալի հանդիպում (հայ մշակույթի գործիչները թամանցիների մոտ՝ Սիմֆերոպոլում և Սևաստոպոլում), ՍՀ, 26 օգոստոսի 1945 թ.:

ՀՈՒՇԱՏԵՂԵԿԱՏՈՒ ՆԿԱՐՉԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Սարյան Մ.**— Փառապանծ տարեդարձ, ՍՀ, 29 նոյեմբերի 1941 թ.:
2. **Սարյան Մ., Բաբենչիկով Մ.**— Քեզ համար, քաղաք անվեհեր (հանուն Մոսկվայի), Կոմունիստ, 6 նոյեմբերի 1941 թ.:
4. **Շավարշ Հ.** (խոսք՝ Ս. Տարոնցու)— Գեբելսի հերթական հաչոցը, ՍՀ, 26 դեկտեմբերի 1941 թ.:
5. **Հարությունյան Ս.**— Պաշտպանական խոշոր ցուցահանդես, ՍՀ, 1 նոյեմբերի 1941 թ.:
6. **Նկարիչների պաշտպանական աշխատանքը,** ՍՀ, 26 հուլիսի 1941 թ.:
7. **Ցուցահանդես՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմին** (Երևանի նկարչի տանը), ՍՀ, 6 դեկտեմբերի 1941 թ.:
8. **Քանդակագործ Թ. Զորեքչյանի հակաֆաշիստական գործերը** («Աշխարհազորայինը» և «Իսպանուհին», ՍՀ, 12 օգոստոսի 1941 թ.:
9. **Շավարշ Հ.** (խոսք՝ Ս. Տարոնցու)— Ֆաշիստ ավազակապետերի բանդան (պլակատ), ՍՀ, 28 դեկտեմբերի 1941 թ.:
10. **Բաբենչիկով Մ.**— Արիության, սխրանքի և փառքի մասին (ցուցահանդես՝ նվիրված ՀՄՊ-ին), Կոմունիստ, 19 դեկտեմբերի 1941 թ.:
11. **Սարյան Մ.**— Շնորհավորում եմ կարմիր բանակի հերոս մարտիկների նոր տարին, ՍՀ, 1 հունվարի 1942 թ.:
12. **Սարգսյան Գրիգոր**— Ստեղծագործական խանդավառություն (գեղարվեստի ուսումնարանի սաները ընդդեմ ֆաշիզմի), ՍՀ, 20 փետրվարի 1942 թ.:
13. **Սարյան Մ.**— Նկարչի խոսքը, Կոմունիստ, 1 հունվարի 1942 թ.:
14. **Քոլոզյան Բ.**— Ռազմաճակատի մարտիկները նվերներ են ստանում (նկար): ՍՀ, 15 նոյեմբերի 1942 թ.:

15. **Արվեստագետների նվերները** (տաք հագուստ են ուղարկել կարմիր բանակի մարտիկներին), ՍՀ, 15 հունվարի 1942 թ.:
16. **Բաբենչիկով Մ.**— Ազնվության, արիության և խիզախության կերպարներ («Հայաստանի սովետական նկարիչները ՀՄՊ-ին» ցուցահանդեսի մասին): ՍՀ, 4 հունվարի 1942 թ.:
17. **Բացվեց «Կարմիր բանակի հերոիկան»** ցուցահանդեսը (Նկարչի տանը): ՍՀ, 31 մարտի 1942 թ. (նաև Կոմունիստ, 8 ապրիլի):
18. Երևանի թատերական թանգարանը պատրաստում է Հայրենական մեծ պատերազմին նվիրված թատերական ցուցահանդես, ՍՀ, 18 հոկտեմբերի 1942 թ.:
19. **Մամաջանյան Աշոտ** (խոսք՝ Ս. Տարոնցու)—Թիկունքից ռազմաճակատ, ռազմաճակատից թիկունք (ծաղրանկար): ՍՀ, 11 հունվարի 1942 թ.:
20. **«Հայաստանի նկարիչները ՀՄՊ-ին»** ցուցահանդեսը Լենինականում: ՍՀ, 18 հոկտեմբերի 1942 թ.:
21. **«Հայրենական մեծ պատերազմը»** թեմատիկայով ցուցահանդես բացվեց Երևանի հեղափոխության թանգարանում: ՍՀ, 17 հոկտեմբերի 1942 թ.:
22. **Գալստյան Ս.**— «Ֆյուրերի երկու ճառը» (Նկար), ՍՀ, 10 փետրվարի 1942 թ.:
23. **Գենչ Լևոն**—Հիտլերը իր շան հետ (ծաղրանկար), ՍՀ, 24 ապրիլի 1942 թ.:
24. **Շավարշ Հովհաննես**—Արյունարբու խեղկատակը տրիբունի վրա (ծաղրանկար), ՍՀ, 14 մայիսի 1942 թ.:
25. **Շավարշ Հովհաննես**—Կտրիճ է ոչխարի առաջ, ոչխար է կտրիճի առաջ (ծաղրանկար), ՍՀ, 9 մայիսի 1942 թ.:
26. **Շավարշ Հովհաննես**—Հիտլերը չորս գործողությամբ (ծաղրանկար), ՍՀ, 28 ապրիլի 1942 թ.:
27. **Շավարշ Հովհաննես**— Հիտլերի ողբը (ծաղրանկար, տեքստը՝ Ս Տարոնցու), ՍՀ, 6 հունվարի 1942 թ.:
28. **Սարգսյան Մինաս**—Հայաստանի կերպարվեստագետների հոբելյանական ցուցահանդեսը: ՍՀ, 15 նոյեմբերի 1942 թ.:
29. **Սովետական Միության հերոս, մայոր Անտոնովի կիսանդրին** (գործ Այզեմնիկ Ուրարտուի), ՍՀ, 1 մարտի 1942 թ.:
30. **Բարսեղյան Սերգեյ**—«Արմտագի պատուհան», Կոմունիստ, 29 մարտի 1942 թ.:
31. **Նալբանդյան Դմիտրի**— «Նամակ ռազմաճակատից» (կտավի լուսանկարը Նեմրութի), Կոմունիստ, 29 մարտի 1942 թ.:
32. **Սարյան Մարտիրոս**— «Օդաչու Պատրիկ Գազազյանի դիմանկարը» (լուսանկարը Նեմրութի), Կոմունիստ, 15 մարտի 1942 թ.:
33. **Սարյան Մ.**— Կամք հաղթանակի հանդեպ, Կոմունիստ, 11 նոյեմբերի 1942 թ.:
34. **Սարյան Մ.**—Նախապատրաստվում եմ Կարմիր բանակի 24-րդ տարեդարձին նվիրված ցուցահանդեսին (զրույց նրա հետ), ՍՀ, 13 հունվարի 1942 թ.:
35. **«Խորհրդային ժողովրդի Հայրենական պատերազմը»** (ցուցահանդես Մոսկվայի հեղափոխության թանգարանում, ցուցադրված էին նաև 4-րդ դարի հայ նկարիչների ստեղծագործություններից), ՍՀ, հունվար, 1942 թ.:
36. **Կոջոյան Հակոբ**—Գերմանական բարբարոսներին պետք է ոչնչացնել, Կոմունիստ, 11 հունվարի 1942 թ.:
37. **Սարգսյան Արա**—Գվարդիայի կապիտան Արամ Միրզոյան (դիմաքանդակ): ՍՀ, 4 դեկտեմբերի 1943 թ.:
38. **Սարյան Մ.**— Փառք մեծ առաջնորդին և զորավարին, Կոմունիստ, 18 սեպտեմբերի 1943 թ.:
39. **Ղաֆադարյան Կարո**—Ռազմավարի ցուցահանդես Երևանում: ՍՀ, 24 փետրվարի 1943 թ.:
40. **Գրքեր և պլակատներ Կարմիր բանակի մասին,** Կոմունիստ, 13 փետրվարի 1943 թ.:
41. **Կոջոյան Հակոբ**— Փառք մեր բանակին, Կոմունիստ, 23 փետրվարի 1944 թ.:
42. **Արուտչյան Սերգեյ, Չիլինգարյան Արմեն**—Ծաղրանկարներ (տեքստով), Կոմունիստ, 23 փետրվարի 1944 թ.:
43. **Գենչ Լևոն**—1944 թվականի շեմին (Նկար), ՍՀ, 1 հունվարի 1944 թ.:
44. **Գենչ Լևոն**— Ամենացավոտ տեղին (ծաղրանկար), ՍՀ, 11 հունիսի 1944 թ.:
45. **Գենչ Լևոն**—Անելանելի դրություն (ծաղրանկար), ՍՀ, 3 մարտի 1944 թ.:
46. **Գենչ Լևոն**— Դժբախտությունը եկավ, դարբասները բաց (ծաղրանկար), ՍՀ, 4 հուլիսի 1944 թ.:
47. **Գենչ Լևոն**—Դիմացկուն պարան (ծաղրանկար), ՍՀ, 5 դեկտեմբերի 1944 թ.:
48. **Գենչ Լևոն**—Հատուցման նախօրյակին: Հիտլերը նոր երդում պահանջեց իր գեներալներից (ծաղրանկար), ՍՀ, 1 օգոստոսի 1944 թ.:
49. **Գենչ Լևոն**— «Ձմեռային սեզոնը» եռում է (նկար): ՍՀ, 5, փետրվարի 1944 թ.:
50. **Գենչ Լևոն**— Պետական սահմանի վրա (Նկար), ՍՀ, 1 մայիսի 1944 թ.:
51. **Գենչ Լևոն**—Հարկադրական «զորահանդես» (ծաղրանկար), ՍՀ, 23 փետրվարի 1944 թ.:
52. **Գենչ Լևոն**— Պա-դը Կալեում (ծաղրանկար), ՍՀ, 12 մայիսի 1944 թ.:
53. **Գենչ Լևոն**—«Ճանապարհորդի» փորձությունները (ծաղրանկար), ՍՀ, 30 մայիսի 1944 թ.:
54. **Գենչ Լևոն**—Վատ անեկդոտ (ծաղրանկար), ՍՀ, 8 փետրվարի 1944 թ.:
55. **Գենչ Լևոն**—26-րդ տարեդարձի նախօրյակին՝ մաքրում տոնից առաջ (նկար), ՍՀ, 15 փետրվարի 1944 թ.:
56. **Գենչ Լևոն**—Ուկրաինայում: Գարնան մաքրման կամպանիա (ծաղրանկար): ՍՀ, 14 մարտի 1944 թ.:
57. **Գենչ Լևոն**—Վերջապես երշիկագործ ֆրիցը տեսավ իրեն խոստացված «Կայծակը» (ծաղրանկար), ՍՀ, 18 ապրիլի 1944 թ.:
58. **Գենչ Լևոն**— Վտանգավոր բարձունք (ծաղրանկար), ՍՀ, 16 մայիսի 1944 թ.:
59. **Գենչ Լևոն**—Ուղղամիտ պատասխան (ծաղրանկար), ՍՀ, 23 մայիսի 1944 թ.:
60. **Գենչ Լևոն**—Քավության նոխազը (ծաղրանկար), 6 հունիսի 1944 թ.:
61. **Հակաֆաշիստական ցուցահանդեսի բացում,** ՍՀ, 25 ապրիլի 1944 թ.:
62. **Լևոն Գենչի** ցուցահանդեսի բացումը Երևանում: ՍՀ, 9 հունվարի 1944 թ.:
63. **Շավարշ Հովհաննես**— «Գերմանական տոտալ մոբիլիզացիա» (ծաղրանկար), ՍՀ, 15 ապրիլի 1944 թ.:
64. **Հայաստանի կերպարվեստագետների ստեղծագործությունների ցուցահանդեսը Մոսկվայում,** ՍՀ, 19 սեպտեմբերի 1944 թ.:
65. **Մելքոնյան Վ.**—Գերմանական վիրավոր գազանը սողում է դեպի իր որջը (նկար), ՍՀ, 13 օգոստոսի 1944 թ.:
66. **Փալանջյան Աշոտ (Աշփալ)**—Սուր ծաղրի վարպետը (Լևոն Գենչի—Գենչօղլյանի մասին), ՍՀ, 15 հունվարի 1944 թ.:
67. **Իսաբեկյան Էդուարդ**—Թամանցինե՛ր, առա՛ջ, Կոմունիստ, 24 օգոստոսի 1945 թ.:
68. **Սարյան Մարտիրոս—Մեր հպարտությունը,** Կոմունիստ, 24 օգոստոսի 1945 թ.:
69. **Սարգսյան Արա**—Փառք հաղթողներին, Կոմունիստ, 26 օգոստոսի 1945 թ.:
70. **Սարյան Մարտիրոս**—Պատմական օր (դիմանկար), Կոմունիստ, 3 մայիսի 1945 թ.:
71. **Սարյան Մարտիրոս**—Ցնծություն (Հաղթանակի օրվա առթիվ), ՍՀ, 12 մայիսի 1945 թ.:
72. **Ցուցահանդես՝ նվիրված խորհրդային հրետանուն** (Երևանի Կարմիր բանակի տանը), ՍՀ, 18 նոյեմբերի 1945 թ.:
73. **Աբեղյան Մհեր**—Հայ կերպարվեստի վերջին տարիների նվաճումները և հետագա զարգացման խնդիրները (զեկուցում Հայաստանի նկարիչների I համագումարում), ՍՀ, 5 սեպտեմբերի 1945 թ.:
74. **Գենչ Լևոն**—Գեբելս (նկար), ՍՀ, 16 հունվարի 1945 թ.:
75. **Ադամյան Նորա**—Նկարչի աչքերով (Մ. Սարյանի և ծովակալ Լ. Իսակովի հանդիպումը), Կոմունիստ, 26 հուլիսի 1945 թ.:
76. **Ստեփանե Ալեքսանդր**—Հայ զինվորները կերպարվեստում (ԽՍՀՄ կրկնակի հերոս Ն. Ստեփանյան—գործ՝ Մ. Սարյանի և Ռ. Ստեփանյանի, ծովակալ Հովհ. Իսակով—գործ՝ Մ. Սարյանի, գնդապետ Ս. Ջաքյան— գործ՝ Դ. Նալբանդյանի, Թամանյան դիվիզիան Ն. Սաֆարյանի հետ—գործ՝ Է. Իսաբեկյանի և այլն): Կոմունիստ, 25 մայիսի 1945 թ.:
77. **Շահինյան Անդրանիկ**—Մեր նկարիչների ստեղծագործությունները (ռազմահայրենասիրական թեմաներով), ՍՀ, 7 դեկտեմբերի 1941 թ.:

ՀՈՒՇԱՏԵՂԵԿԱՏՈՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Արմենյան Ա.**— Ողջույն ձեզ (խոսք ռազմաճակատ մեկնող զինվորներին), ՍՀ, 26 հունիսի 1941 թ.:
2. **Դանիելյան Հայկանուշ**—Թշնամին պիտի վերացվի հողի երեսից: Կոմունիստ, 23 հունիսի 1941 թ.:
3. **Ավելի համախմբված**—(արվեստի աշխատողների միտինգ), ՍՀ, 26 հունիսի 1941 թ.:
4. **Մեր բեմական հագուստը կփոխարինենք կարմիրբանակայինի հագուստով** (սունդուկյանցիների միտինգը), ՍՀ, 24 հունիսի 1941 թ.:
5. **Միասնական ուժի և կամքի ցույց** (մշակույթի գործիչների քաղաքային միտինգ Երևանում: Վաղ. Վարդարշյանը, Հայկ. Դանիելյանը, Ավ. Ավետիսյանը, Ար. Ոսկանյանը, Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը Ստ. Ջորանը և ուրիշներ ելույթներ ունեցան): ՍՀ, 11 դեկտեմբերի 1941 թ.:
6. **Ստեղծեցեք պաշտպանական հզոր ֆոնդ** (արվեստի վարչության նախագահությունում), ՍՀ, 1 օգոստոսի 1941 թ.:
7. **Հովհաննիսյան Թ.**—Նվերներ հարազատ Կարմիր բանակին (ուղարկված Մ. Սարյանի, Հ. Կոջոյանի, Մ. Աղայանի, Վ. Բունիի, Արտ. Այվազյանի միջոցներով), ՍՀ, 20 սեպտեմբերի 1941 թ.:
8. **Շողերյան Վարդգես**—Պատանի հանդիսատեսի թատրոնում (նվիրատվություն Կարմիր բանակին), ՍՀ, 16 սեպտեմբերի 1941 թ.:
9. **Հարությունյան Բաբկեն**— Սովետահայ թատրոնի տարեգրություն, I և II գրքեր, Ե., 1961 և 1969 թ.:
10. **Ջանիբեկյան Գուրգեն**—Արվեստի շիտակ խոսքը (թատրոնը՝ պատերազմին), ՍՀ, 6 մարտի 1942 թ.:
11. **«Սովետական արտիստ»** հակատանկային ինքնաթիռների էսկադրիլայի օգտին (վախթանգովցիներին արձագանքում են հայ արտիստները), ՍՀ, 25 հունվարի 1942 թ.:
12. **Վարդանյան Ռուզան**—Արտանց ողջունում եմ, ՍՀ, 14 ապրիլի 1942 թ.:
13. **Արտիստների նվերները** (սունդուկյանցիները ռազմաճակատ են ուղարկել 116 ծանրոց): ՍՀ, 20 փետրվարի 1942 թ.:
14. **Խորհրդահայ արտիստների հյուրախաղերը Իրանում** (Սուրեն Քոչարյան, Ավետ Գաբրիելյան, Պավել Լիսիցյան, Ալեքսանդր Դոլուխանյան): Կոմունիստ, 18 ապրիլի 1942 թ.:
15. **ՄԽԱՏ-ի և Մեծ թատրոնի վարպետների հանդիպումը** № զորամասում (Հայաստանում), Կոմունիստ, 24 հունվարի 1942 թ.:
16. **Հայաստանի թատրոնները Մեծ հայրենականի օրերին:** Կոմունիստ, 3 սեպտեմբերի 1942 թ.:
17. **Շահինյան Անդրանիկ**—Արվեստի աշխատողները՝ Կարմիր բանակին, Կոմունիստ 22 փետրվարի 1942 թ.:
18. **Դանիելյան Հայկանուշ**— Կանգնեցնենք թշնամուն, ՍՀ, 24 օգոստոսի 1942 թ. (նաև «Կոմունիստում»):
19. **Սազանդարյան Տաթևիկ**—Ավելի բարձր պահենք մեր մարտական, հաղթական դրոշները (ելույթ Անդրկովկասի երիտասարդական հակաֆաշիստական միտինգում), ՍՀ, 1 հոկտեմբերի 1942 թ.:
20. **Սազանդարյան Տաթևիկ**— Ուժեղացնենք օգնությունը ռազմաճակատին (ելույթ օպերային թատրոնում): Կոմունիստ, 30 սեպտեմբերի 1942 թ.:
21. **Գուլակյան Արմեն**— Մենք երբեք չենք մոռանա և չենք ների: Կոմունիստ, 11 հունվարի 1942 թ.:
22. **Ավետիսյան Ավետ**—Առաջ դեպի վերջնական հաղթանակը: Կոմունիստ, 18 սեպտեմբերի 1943 թ.:
23. **Դանիելյան Հայկանուշ**—Հաղթանակի փառքով պսակենք կարմիր բանակը, ՍՀ, 1 հունվարի 1943 թ.:
24. **Ալիխանյան Ա.**—Թող ավելի ուժգին որոտան թնդանոթները: ՍՀ, 1 հունվարի 1943 թ., նաև՝ Կոմունիստում:
25. **Դանիելյան Հայկանուշ**—Հաղթանակի փառքով պսակենք կարմիր բանակը, «Կոմունիստ», 1 հունվարի 1943 թ.:
26. **Վաղարշյան Վաղարշ**—Փառք պանծալի օրերին, Կոմունիստ, 1 հունվարի, 1943 թ.:
27. **Ավետիսյան Ավետ**—Հաղթանակը մերն է, ՍՀ, 18 սեպտեմբերի 1943 թ.:
28. **Վաղարշյան Վաղարշ**—Հայ ժողովուրդը համախմբված ու միասնական է: ՍՀ, 14 օգոստոսի 1943 թ.:

29. **Վաղարշյան Վաղարշ**—Վերջնական հաղթանակի տարին: ՍՀ, 1 հունվարի 1944 թ.:
30. **Ավետիսյան Ավետ**—Կարմիր բանակը մեր հպարտությունն է, Կոմունիստ, 12 փետրվարի 1944 թ.:
31. **Հակոբյան Հասմիկ**—Թանկագին եղբայրներ և քույրեր, ՍՀ, 24 օգոստոսի 1945 թ.:
32. **Դանիելյան Հայկանուշ**—Մեր հաղթանակի հիմքը, ՍՀ, 10 մայիսի 1945 թ.:
33. **Մալյան Դավիթ**—Հաղթանակի ուրախությունը, Կոմունիստ, 10 մայիսի 1945 թ.:
34. **Գուլակյան Արմեն**—Համաժողովրդական ցնծության օր, Կոմունիստ, 12 մայիսի 1945 թ.:
35. **Գուլակյան Արմեն**—Անմար փառքի օրը, ՍՀ, 4 սեպտեմբերի 1945 թ. (նաև՝ Կոմունիստ):

ՀՈՒՇԱՏԵՂԵԿԱՏՈՒ ԿԻՆՈԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ[1]

1. Հաղթանակը մերը կլինի (միտինգ «Նաիրի» կինոթատրոնում), ՍՀ, 23 հունիսի 1941 թ.:
2. **Հովհաննիսյան Գ. Ա.**— Խորհրդային կինեմատոգրաֆիան Մեծ հայրենականի օրերին (նաև Հայկինոյի մասին) Կոմունիստ, 3 մարտի 1942 թ.:
3. **«Գերմանական զորքերի ջախջախումը Մոսկվայի մոտ»** փաստագրական ֆիլմի ցուցադրումը Երևանի «Մոսկվա» կինոթատրոնում, ՍՀ, 10 մարտի 1942 թ. (Այդ նույն ֆիլմի ցուցադրման մասին տես նաև ՍՀ-ի 1942 թ. մարտի 13-ի համարում Հ. Դանիելյանի, Հր. Ներսիսյանի, Արա Սարգսյանի, Մ. Սարյանի և այլոց խոսքը):
4. Ռազմապաշտպանական ֆիլմերի տասնօրյակ հանրապետությունում, ՍՀ, 17 փետրվարի 1943 թ.:
5. **Ամալյան**—Կադր «Դավիթ Բեկ» կինոֆիլմից (լուսանկար), Կոմունիստ, 20 փետրվարի 1944 թ., նաև՝ 27 փետրվարի 1944 թ.:
6. **Ֆիլմ Նելսոն Ստեփանյանի մասին** (Նկարահանում է ռեժիսոր Գ. Բալասանյանը), Կոմունիստ, 22 հուլիսի 1945 թ.:
7. **Թոթովենց Վ.**— Կինոն և գրականությունը: ԽՀ, 10.6.33 թ.:
8. **Թարյան Ս.**— Կինոն և նկարչությունը: «Խորհ. արվ.», 1933 թ., № 6, էջ 7—8:
9. Գրողների և կինոաշխատողների հանդիպումը: ԳԹ, 30. 3.34 թ.:
10. **Արշարունի Ա., Վելտման Ս.**— Ազգային կինոյի ուղին: «Խորհ. արվ.», 1934 թ., № 2, էջ 20—23:
11. **Հայկինոյի անցած ուղին**, Ավ., 20.3.35 թ.:
12. **ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանի գրույցը Հայկինոյի ղեկավարների, ստեղծագործական աշխատողների և Հայաստանի խորհրդային գրողների հետ**, ԳԹ, 31.3.35 թ.:
13. Գրողները «Պեպո» ֆիլմի մասին (Վ. Ալազանի, Ն. Զարյանի, Գ. Մահարու, Վ. Նորենցի, Գ. Սարյանի, Ս. Տարոնցու հոդվածները): ԳԹ, 31.3.35 թ.:
14. **Աշոտ Շալբոն**— Հայրենասիրական պայծառ կինոֆիլմ («Զանգեզուր»), ԳԹ, 26.6.38 թ.:
15. «Սևանի ձկնորսները»: ԽՀ, 12.7.38 թ.:
16. **Ջանիբեկյան Գ.**— Մեր դեպուտատները «Սևանի ձկնորսները» ֆիլմում: ԳԹ, 20.7.38 թ.:
17. **Շալջյան Հ.**— Խորհրդային կինեմատոգրաֆիայի 20 տարին: ԳԹ, 20.2.40 թ.:
18. Կինոֆիլմեր ՀՕՔՊ-ի մասին: ՍՀ, 25.7.41 թ.:
19. «Մարտական կինո-ժողովածու» № 1, ՍՀ, 29.8.41 թ.:
20. **Գասպարյան Ա.**— «Մարտական կինո-ժողովածու № 3, 16.9.41 թ.:
21. **Քարամյան Մ., Բարսեղյան Խ.**—«Հայրենասերների ընտանիքը» և «Հրդեհ անտառում»: ՍՀ, 24.9.41 թ.:
22. «Մարտական կինո-ժողովածու № 4», Ստորագր. Լ., ՍՀ, 21.10.41 թ.:
23. **Գասպարյան Ա.**— «Արյան դիմաց արյուն», «Սովետական լեզվի դասը», ՍՀ, 21.10.41 թ.:
24. **Մինասյան Գ.**— Խրոնիկայի կինոթատրոն Երևանում: ՍՀ, 25.11.41 թ.:
25. **Ջարյան Ն., Վաղարշյան Վ.**— «Կոմիտաս» (գրական սցենար), ՍՀա, 1941 թ., № 4, էջ 44—62:
26. «Աղջիկը» («Դուստրը») նոր կինո-ֆիլմի նկարահանում: ՍՀ, 17.10.42 թ.:
27. **Հովհաննիսյան Գ.**—Ստեղծագործական նոր նվաճումների համար: ՍՀ, 27.2.44 թ.:
28. **Ներսիսյան Հ.**— Թող նկարը շուտ հասնի ճակատ («Դավիթ Բեկ»), ՍՀ, 27.2.44 թ.:
29. **Իսահակյան Ավ.**— «Դավիթ Բեկ», ՍՀ, 27.2.44 թ.:
30. **Ավետիսյան Ա.**— Իմ մասնակցությունը ֆիլմում («Դավիթ Բեկ», ՍՀ, 27.2.44 թ.:
31. **Դեմիրճյան Դ.**— Նշանավոր ֆիլմ («Դավիթ Բեկ»), ՍՀ, 27.2.44 թ.:
32. **Սարգսյան Ա.**— Հայրենասիրական նկար («Դավիթ Բեկ»), ՍՀ, 27.2.44 թ.:
33. **Մալյան Դ.**— Ինչ եմ ես ցանկացել («Դավիթ Բեկ») ՍՀ, 27.2.44 թ.:
34. **Հովհաննես Շիրազ**—«Դավիթ Բեկ», ՍՀ, 27.2.44 թ.:
35. **Ռադկո**—Գեղեցիկ, հուզիչ ֆիլմ («Դավիթ Բեկ»), ՍՀ, 27.2.44 թ.:
36. **Սարյան Գ.**— «Դավիթ Բեկ», ՍԳԱա, 1944 թ., № 2—3, էջ 107—110:
37. «Ծիաձան» ֆիլմը հայերեն լեզվով: ՍՀ, 4.10.45 թ.:
38. «Ադմիրալ Նախիմով» ֆիլմի հայերեն թարգմանության ձայնագրումը, ՍՀ, 10.4.47 թ.:
39. «Պատմվածք իսկական մարդու մասին» կինոնկարի հսկայական հաջողությունը: ՍՀ, 2.12.48 թ.:
40. «Բեռլինի անկումը» կինոֆիլմի հսկայական հաջողությունը: ՍՀ, 4.2.50 թ.:
41. «Բեռլինի անկումը» կինոֆիլմի 2-րդ սերիայի հաջողությունը, ՍՀ, 24.2.50 թ.:
42. **Շահինյան Ա.**— Ստեղծել բարձրորակ կինոսցենարներ: ԳԹ, 30.9.51 թ.:
43. «Հայկական կինոարվեստը», Ե., ԳԱ հրատ. (հոդվածների ժողովածու, I և II գրքեր, կազմող՝ Սաբիր Ռիզան), 1958 թ., 1960 թ.:

[1] Հեղինակը միշտ օգտվել է «Ֆիլմ» շաբաթաթերթից և «Էկրան» ամսագրից, որոնք լույս են տեսնում Երևանում հայերեն:

44 **Кеворков С., Карамян Э.** — фильм о Красной Армии. «Коммунист», 8.VI.40 г.
45 **Новые оборонные фильмы**. «Коммунист», 13.VII.41 г.
46. **Учебно-оборонные фильмы**. «Коммунист», 30.VII.41 г.
47 **Киноплакат**. «Коммунист», 14.VIII.41 г.
48 Новые фильмы, «Коммунист», 7. IX. 41 г.
49 **Сергеев Б.** — «Боевой киносборник», «Коммунист», 17.IX.41 г.
50 **Адамян Н.** — Новые фильмы, «Коммунист» 21.IX.41г.
51 **Боевые киножурналы**, «Коммунист», 1. X. 41 г.
52 **Новые фильмы Ереванской киностудии**, «Коммунист», 4.X.41 г.
53 **Сергеев Б.** — Оборонные киноновеллы. «Коммунист», 19.X.41 г.
54 **Чахирьян Г.** — Работать еще лучше, «Кино» 1.XI.41 г.
55 **Сергеев Б.** — Фильм об искусстве Советской Армении, «Коммунист», 11.XI.41 г.
56 **Синанян Г.** — В Ереване открывается кинотеатр хроники, «Коммунист», 22.XI.41 г.
57 **«Давид-Бек»**, «Коммунист», 6.I.42 г.
58 **Кинофестиваль в колхозе (Камарлу)**, «Коммунист», 23.I.42 г.
59 **Бек-Назаров А.** — За художественные патриотические фильмы, «Коммунист», 29.I.42 г.
60 **Журнал «Медь Армении»**, «Коммунист» 11.II.42 г.
61 **Ованесян Г.** — Советская кинематография в дни Отечественной войны, «Коммунист», 3.III.42 г.
62 **Новые киножурналы**, «Коммунист», 5.III.42 г.
63 **Новые киножурналы**, «Коммунист», 4.IV.42 г.
64 **Летние кинотеатры**, «Коммунист», 12.VI.42 г.
65**День Отечественной войны**, «Коммунист», 4.VII.42 г.
66 **Съемки фильма «Закавказье сегодня»**, «Коммунист», 16.X.42 г.
67 **Новые короткометражные фильмы**, «Коммунист», 10.XII.42 г.
68 **Съемки фильма «Давид-Бек»**, «Коммунист» 13. XI. 42 г.
69 **На съемках фильма «Давид-Бек»**, «Коммунист», 13.XII.42 г.
70 **Декада военно-оборонных фильмов**, «Коммунист», 16.II.43 г.
71 **Армянской конторе Главкинопроката присуждена вторая премия**, «Коммунист», 11. V. 43 г.
72 **Армянская контора Главкинопроката завоевала первенство, «Коммунист»**, 11. VII. 43 г.
73 **Передвижное кино в колхозах**, «Коммунист», 1. X. 43 г.
74 **Фильм «Давид-Бек» принят с высокой оценкой**, «Коммунист», 26. II. 44 г.
75 О звуке в кинотеатрах, «Коммунист», 8.II.44 г.
76. **Леонидов О.** — «Давид-Бек», «Моск. больш.», 17.II.44 г.
77 **Эль-Регистан Г.** — «Давид-Бек», «Правда», 18. II. 44 г.
78**Астахов И.** — «Давид-Бек», «Веч. Москва», 19.II.44 г.
79 **Жданов Н.** — «Давид-Бек», «Труд», 19.II.44 г.
80 **Сарьян М.** — Страницы истории («Давид-Бек»), «Лит. и иск.», 19. II. 44 г.
81 **Чиаурели М.** — **«Давид-Бек», «Лит. и иск.», 19.II.44 г**
82 Фильм «Давид-Бек» на экранах Москвы, «Коммунист», 26.II.44 г.
83 **Эль-Регистан Г.** — «Давид-Бек» («Правда», 18. II. 44 г.), «Коммунист», 26. II. 44 г.
84 **Производственное совещание Ереванской киностудии**, «Коммунист», 27.II.44 г.
85 **Кино на селе**, «Правда», 24.III.44 г.
86 **Чиаурели М.** — «Давид-Бек», (Литература и искусство», 19. II. 44 г.), «Коммунист», 25. III. 44 г.
87 **Леонидов О.** — «Давид-Бек» (Московский большевик», 17. II. 44 г.), «Коммунист», 25. III. 44 г.
88 **Кино на селе** («Правда» 24. III. 44 г.), «Коммунист», 25. III. 44 г.
89 **Огромный успех фильма «Давид-Бек»**, «Коммунист», 15.IV.44 г.
90 **Петросян М.** — Чаще показывать новые фильмы, «Коммунист», 21.IV.44 г.
91. **Республиканское совещание работников кинофикации**, «Коммунист», 21.IV.44 г.
92 **Геворгизов Г.** — Лучше использовать кинопередвижки, «Коммунист», 21. IV. 44 г.
93 **Награждение работников кинематографии**, «Коммунист», 25.IV.44 г.
94 90.000 зрителей смотрели фильм «Давид-Бек», «Коммунист», 5.V.44 г.
95 **Большаков И.** — Задачи художественной кинематографии, «Лит. и иск.», 3.VI.44 г.
96. Դ. Զգնունի— Ուրվագիծ «Հայաստանի կինեմատոգրաֆիայի պատմության», Ե., Հայպետհրատ, 1961 թ..

ՀՈՒՇԱՏԵՂԵԿԱՏՈՒ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ[1]

ԳՐՔԵՐ

1. **Ամիրբեկյան Վազգեն**—«Հայաստանի մամուլը Հայրենական մեծ պատերազմի տարիներին» (1941—45 թթ.), Ե., ԳԱ, 1971 թ., 286 էջ:
2. **Գրիգորյան Սասուն**—«Նրանք ընկան երգը շուրթերին», Ե. «Գիտելիք», 1970 թ., 135 էջ:
3. **Առաքելյան Գուրգեն**—«Գրականություն՝ ծնված պարբերական մամուլում», Ե., Հայաստան հր., 1971 թ., 226 էջ:
4. **Գրիգորյան Սասուն**—«Հուշամատյան սիրո և սխրանքի», Ե., 1975 թ., 256 էջ:
5. **Մնացականյան Արամալիս**—Հայ ռազմիկների հերոսության տարեգրությունները, Ե., 1947 թ.:
6. **Սարգսյան Սուրեն**— Սովետական Ռուսաստանի հայ մամուլը, Ե., 1968 թ.:
7. **Ֆելեքյան Հարություն**— «Հայաստանի պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման պայքարում», Ե., ԳԱ, 1970 թ., 559 էջ:
8. **Սկլան Վլադիմիր**—«Հայ երիտասարդական մամուլի պատմությունից», Ե., 1975 թ., 205 էջ:
9. **Овсепян Армен** — Партийно-советская печать Армении в годы ВОВ 1941—1945 гг., Автореферат диссертации на соискание ученой степени канд. ист наук (570. Л-1969, 21 стр.).
10. **Նալբանդյան Սիմոն**— Մարտական «Կարմիր զինվորը», Ե., 1981 թ.:
11. **Գրիգորյան Սասուն**— «Հայաստանի կոմերիտմիության ինտերնացիոնալ կապերի պատմությունից», Ե., «Գիտելիք», 1972 թ., 77 էջ:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. **Ամիրբեկյան Վազգեն**— Այն ահեղ օրերին (1941—1945 թթ. հայերեն թերթերի մասին)—ՍԴ, 5 դեկտեմբերի 1973 թ., № 49, էջ 4:
2. **Ամիրբեկյան Վազգեն**— Ռազմաճակատային հայերեն թերթերը մարտական դիրքերում (1942 թ. ստեղծված «Մարտական գրոհ», «Կարմիր զինվոր», «Մարտական դրոշ», «Հայկական սնայպեր», «Հանուն հայրենիքի», «Մարտ հանուն հայրենիքի», «Դեպի թշնամու ջախջախումը» թերթերի մասին), «Լենինյան ուղիով», Ե., 1973 թ., № 10, էջ 103—112:
3. **Ատրյան Վարդան**—«Հայ գրականությունն ու մամուլը Սովետական Վրաստանում», «Սովետական Հայաստան», Ե., 1952, № 9, էջ 25—26:
4. **Բարսեղյան Խիկար**— «Ռազմաճակատային ժուռնալիստները», Ե. Ե., 10 մայիսի 1983 թ., (զոհված ժուռնալիստների հիշատակին Հայաստանի ժուռնալիստների տանը փակցված հուշատախտակի մասին):
5. **Հարությունյան Կլիմենտ**— «Սովետահայ զինվորական մամուլը 1920—1930 թվականներին», ԳԱ, Լրաբեր հաս. գիտ., 1968 թ., № 3, էջ 17—23:
6. **Հովսեփյան Ա. Ա.**—Հայաստանի կուսակցական մամուլի պատմությունից (1941—1945), ԳԱ, Լրաբեր հաս. գիտ., 1976 թ. № 8, էջ 25—32:
7. **Հովսեփյան Ա. Ա.**—«Մեր մամուլը և սփյուռքի հայությունը Հայրենական մեծ պատերազմում», Լենինյան ուղիով, Ե. 1968 թ., № 5, էջ 97—100:
8. **Մնացականյան Արամալիս**—«Հայ զինվորական մամուլը Հայրենական պատերազմում, 1941—1945 թթ.», ԳԱ, Տեղեկագիր հաս. գիտ., 1947 թ., էջ 61—65:
9. **Ստեփանյան Միհր**—«Գրչով և զենքով» (հայ զինվորական մամուլի մասին), ԵԵ., 5 մայիսի 1971 թ., № 102, էջ 214:
10. **Ստեփանյան Մ. Ս.**— «Զինվորական մամուլը որպես պատմագիտ. աղբյուր», Լրաբեր հաս. գիտ., 1971 թ., № 5, էջ 18—28:
11. **Գրիգորյան Սասուն**—«Մեծ Հայրենականում զոհված հայ լրագրողները», ՍԴ, 1974 թ., 17 հոկտեմբերի, № 42, էջ 4 (Այստեղ խոսվում է ներքոհիշյալ ժուռնալիստների մասին.
Մկրտիչ Լիլոյան, Ներսես Պողոսյան, Գրիգոր Ջոհրաբյան, Մկրտիչ Մանուկյան. Ալեքսանդր Մարտիրոսյան, Թևան Խաչյան, Վարդան Կարապետյան, Անդրուշ Սարգսյան, Արտյոմ Բաղալյան, Արտյոմ Շահբազ, Ավետիս Դեբենց, Մամիկոն Գրիգորյան, Միկիտ Հակոբյան, Անդրանիկ Աղաբեկյան, Գառնիկ Ոսկանյան, Հմայակ Նալբանդյան. Ջավեն Մարգարյան, Գուրգեն Մայրասյան, Խաչիկ Մալխասյան և ուրիշներ):

1. Հեղինակը խնդրում է բոլոր ընթերցողներին իրենց լրացումներն ու առաջարկություններն ուղարկել Երևան-19, Մարշալ Բաղրամյանի պողոտա № 3, Գրողների միություն, Սասուն Գրիգորյանին:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ՍՐԲԱԶԱՆ ՀԻՇԱՏԱԿՆԵՐԻ ՆՇԽԱՐԱՐԱՆ

Նշխարարան: Այլ անուն ես հարմար չգտա Սասուն Գրիգորյանի «Մուսաները չլռեցին» մատյանին տալու: Եվ երբ սկսեցի երկյուղած թերթել այս մատյանը, ականջիս հասավ ավելի քան հիսուն տարի առաջ լսածս մի աղոթքաշունչ երգի պատառիկը.

Կտուրները կանաչել են,
Զարդարվել են տները.
Թռչունները ճանաչել են
Իրենց հերվա բները...

Ի՜նչ նուրբ, ի՜նչ քնքուշ կյանք՝ գարուն, զգացմունք՝ խոր մարդկային, հույս՝ ապրելու: Եվ սա 1935-ին ինձ շշնջաց Նորիկ Նազարյանը, ընդամենը տասնութ տարեկան:

Երբ պատերազմից վերադարձա, Նորիկը չկար: Նրա պոեզիայի կտուրները խամրել էին: Չկար: Զոհվել էր նա Մեծ հայրենականում:

«Մուսաները չլռեցին» ժողովածուն պատերազմում հանգած տղաների հոգիներն են, նրանց սրտերը, որ ահա կենդանացած բաբախում են մեր ափերի մեջ, մեր հոգու մեջ, մեր աչքերին երախտագիտության արցունքներ ընծայելով:

Ապրում են զոհված բանաստեղծները, զոհված կոմպոզիտորներն ու զոհված նկարիչները, զոհված դերասաններն ու զոհված լրագրողները: Նրանց մուսաները չլռեցին:

Քառասունմեկ տարի է, ինչ ռազմաճակատներում լռել են գնդացիրները, հրանոթները...

Բայց մի՞թե:

Ո՛չ, չեն լռել: Նրանք դեռ մեր օջախների մեջ են, մեր սուփրա-սեղանին, մեր կենցաղում և մեր թոռների օրորոցների մեջ: Ճակատամարտի որոտմունքը չի մարում հիշողության մեջ: Դա տարի-տարի նորոգվում է, ինչպես արևի ծագելը և՝ ամեն օրը:

Տիեզերք ցնցող մահվան ու սարսափի այդ դժոխային որոտմունքի մեջ, ինչպես հույսի ղողանջ, ահա լսվում է կյանքի ձայնը՝ սպանված ապրողների երգը, զինվորի երգը...

Ինձ հետ այսպես է կատարվում և այն էլ ամեն օր, ամեն ժամ, ամեն ակնթարթ: Երևի այդպես է նաև բոլոր իմ ռազմաճակատային եղբայրների մոտ, որոնք դեռ ապրում են այսօր: Սպանվածները իրենց հետ գերեզման չտարան հացի պես սուրբ ռազմաճակատային երգը: Նրանք այդ երգը թողեցին մեզ: Մենք էլ ի պահ կտանք մեզանից հետո եկողներին. վկա Թաթուլ

Հուրյանի չափածոն, Կորյուն Սիմոնյանի կտավները, Թունիկ Հովհաննիսյանի երաժշտությունը, Գուրգեն Մարինոսյանի «Սևանի ձկնորսները» կինոնկարը, վկա՝ լրագրող, զոհված իմ ընկերների խոսքը: Այո, մուսաները չեն լռում:

Սիրելի բանաստեղծ Սասուն Գրիգորյանը, առասպելական ջանքեր թափելով, ահա երեսուն տարի ընկած գյուղ ու քաղաք, կանաչած խրամատներ ու հանգած օջախներ, թել առ թել, հատիկ առ հատիկ հավաքում է նահատակված գրող, նկարիչ, դերասան, երաժիշտ, լրագրող տղաների թողած մասունք-նշխարները: Եվ ոչ միայն զոհվածների: Գրքի յուրաքանչյուր բաժին ունի համառոտ ակնարկ այդ ճյուղի գծով Մեծ հայրենականի մասնակիցների մասին, ինչպես նաև՝ տեղեկատու մատենագիտություն, վավերագրեր, հուշացանկ և հուշաղբյուր գրականություն:

Ի՜նչ նվիրական գործ: Ինչպիսի ջանասիրություն և ինչպիսի պաշտամունք դեպի այն, ինչ ծագել է սպանված մուսաներից: Փույթ չէ, թե այդ ոտանավորները, անավարտ այդ կտավներն ու երգ-երաժշտությունը երբեմն խակ են, երբեմն պարզունակ, անպաճույճ: Ո՛չ, փույթ չէ: Զէ որ դրանք սպանված տղաների, հայրենիքի համար զոհվածների վերջին խոսքերն են, վերջին հնքը... վերջին գունանկարներն ու վերջին երգը, որը նրանք չհասցրեցին խմբագրել կամ սրբագրել...

Վերջինը, բայց ոչ վերջացած:

Քիչ է ասել, թե սա գրական-գեղարվեստական և պատմաբանասիրական գործ է: Ոչ միայն: Այստեղ պատմական անցյալներ կան, մատենագիտություն, գիտնականի ազնիվ քրտինք, մեծ ինտերնացիոնալիզմ և անձնվեր հայրենասիրություն: Ես պատկերացնում եմ, թե արխիվային ինչպիսի զանգվածներ է քրքրել, զոհվածների հարազատների քանի տուն գտել, զոհվածների ողջ մնացած ընկերների դռներն ընկել: Նպատակը՝ խոր մարդկային և գերազնիվ. փրկել կորստից և մոռացությունից այն տաղանդներին, վերականգնել բոլոր նրանց դիմանկարները, որոնց գրական-ստեղծագործական վաստակը պետք է որ մինչև օրս հայ ընթերցողի և արվեստասեր հասարակայնության սեփականությունը դարձնեին հանրապետության ԳԱ պատմության, արվեստի և գրականության ինստիտուտները, պատմության և մշակույթի մեր թանգարանները: Կրտսեր բարեկամիս հուշամատյանը լրացնում է այս խիստ նկատելի բացը: Այս գործի աշխարհագրական ընդգրկումը միայն Հայաստանը չէ: Անդրկովկասը չէ: Այդ տարածքը, ծագելով Արարատյան դաշտից, հասնում է Հեռավոր Արևելք, Լեհաստանի անտառները, Բրեստի արյունոտ փլատակները, Ֆրանսիա, Հռոմ, Բաղդադից մինչև Մուրմանսկ: Եվ ուր ասես, որ չի եղել հեղինակը՝ նյութեր հայթայթելու համար: Եռակի արժեքավոր է դառնում Ս. Գրիգորյանի ստեղծած այս գործը, քանի որ շատ ազգերի նշխարներ է փեթակավորում՝ հայի, ռուսի, վրացու, ուկրաինացու, ֆրանսիացու մարած կյանքերի մրմունջներ (տես հեղինակի «Նրանք ընկան երգը շուրթերին» և «Հուշամատյան սիրո և սխրանքի» ժողովածուները, տես զոհված և Մեծ հայրենականին մասնակից գրողներին նվիրված այս հուշակոթողի երկրորդ գիրքը):

Արդյո՞ք մահվան կրակի տակ, խրամատի մեջ, արյան գույնով պերճացած հողից բանաստեղծություն, երաժշտություն, գունանկար կամ երգ է ծնվում: Զարմանալի՞ է: Ո՜չ: Այո՛, ծնվում է: Աչքովս եմ տեսել, սրտովս զգացել: Ծնվում է նույնիսկ վիրավոր շրթունքներից՝ աղաղակ՝ ինչու՞ ես

խավարում իմ կյանքը, երկի՛նք: Ծնվում է այրող կարոտից, հրաժեշտից պատանությանը, կյանքին, նաև հավատից՝ նորից կապրեմ, այս անգամ բոլորովին այլ կյանքով, որի անունը Հավերժություն է: Հավերժության քանի՜ փակ դուռ է բացել զոհված հայ արվեստագետների առջև այս մատյանի հեղինակը... Մեզ համար մի երազային, հրաշք տաճար է վերականգնել զոհված զինվորի որդի, Հայաստանի գրողների միության ռազմա-հայրենասիրական գրականության հանձնաժողովի նախագահ, բանաստեղծ Սասուն Գրիգորյանը: Այդ տաճարը, խնդրում եմ, մտնեք գդակներդ հանած, մաքուր ձեռքերով շոշափեք դրա նշխարները:

Զեմ հաշվել, բայց զգում եմ, որ այստեղ ավելի քան չորս հարյուր հիսուն սպանված հայ սիրտ է բաբախում, քնքույշ պոեզիայի հետ նաև բազմաթիվ հայ կոմպոզիտորների, նկարիչների, քանդակագործների, արտիստ-դերասանների և ռեժիսորների սրտեր, լրագրող տղաների նշխարված խոհեր և՝ նորից հավատ, կարոտ, սեր, ծաղկի վիրավորվելուց մղկտացող, մանկան օրորոցի ջերմության դարման՝ վերքի վրա:

Այսպես շատ հույզեր: Կարևորը՝ առանց արցունքի, առանց ախուվախի: Թաթախված երբեմն Հայոց մեծ աշխարհի լեզվական անուշիկ հյութերով՝ Շիրակի, Ղարաբաղի, Արարատյան դաշտի, Ջավախքի, Սյունիքի, Լոռվա ու Էլի-Էլի հայոց լեզվական «աշխարհների» լույսերով:

Հայ տղաների շիրմաքարեր դարձած անունները սփռված են ամեն տեղ՝ երկրի արևմուտքում, Եվրոպայում, Արևելքում, ծովերի եզրերին, գետերի ափերին: Ամեն տեղ: Նրանք իրենց կենդանությամբ հիշեցնում են ֆաշիզմի դեմ մղած կենաց ու մահու կռիվների ահեղ օրերի էպոսային դյուցազներգության պատառիկներ, դրանցով իսկ պահապան կանգնելով իրենց արյամբ ևս փրկած և ապրող մեծ Խաղաղությանը: Հիշենք և խոնարհվենք Միսաք Մանուշյանի, Լասի և Սեմայի հիշատակի առջև: Դառնանք, զօղորմին տանք տաղանդաշատ բանաստեղծ Դերենիկ Զարխչյանին, նկարիչ Սարգիս Ալեքսանյանին, կոմպոզիտոր Հրաչյա Մելիքյանին՝ Սպիրիդոն Մելիքյանի զոհված միակ որդուն, դերասան Սահակ Ջառայանին՝ Կերչում զոհված բանաստեղծ Մեսրոպ Մերուժանի եղբորը... բոլոր բոլորին...

Տասնյակ ու տասնյակ անուններ կան, որոնցից շատերը առաջին անգամ ենք լսում՝ մի Հակոբ, երկու Հարություն, Արամ, Արմեն, մեկը սիրո կամուրջ դարձած մարդու համար, երկրորդը՝ մոր հանգած օջախի ծուխ, որ նորից պիտի կրակ դառնա: Հինգը՝ հողագործ, քսանը՝ ջահել ուսուցիչ, բժիշկ, գյուղխորհրդի քարտուղար, տասներորդի ավարտական չստացած, գրչով, վրձնով ու զենքով Հայրենիքի ամրահիմն այուներ դարձած, ընկած, բայց նորից իրենց թողած մասունք-մասունք գործերով՝ Հայրենիքի հետ, ապրողների հետ:

Եվ՝ ոչ մի տրտունջ:

Մեր առջև են կիսատ թողած սերեր, կորած սերեր, որ մի ողջ սերնդի կբավարարեր: Մեկը՝ ինը քույրերի միակ եղբայր, մյուսը՝ օրորոցի կարոտ, որ տուն է բերել՝ զավակի ծննդյան օրը... Մեկը չհասցրեց ցուցահանդես բացել, մեկը չտեսավ իր առաջին գիրքը տպագրված, մեկի սիմֆոնիան մնաց անավարտ, մյուսի երգը, մեկ ուրիշի բանաստեղծությունը, դերակատարումը, կինոնկարը կամ առաջնորդողը... Սիրտս ամեն անգամ ծագում է, երբ միտս է գալիս Գորիսի շրջանային «Կարմիր Զանգեզուր» թերթի խմբագիր Միկիտ Հակոբյանը. մարտադաշտից նա էլ չվերադարձավ,

զոհվեց ինչպես իր տասնյակ լրագրող հայ ընկերները՝ Ներսես Պողոսյանը («Սովետական Հայաստանի» խմբագիրներից), Մկրտիչ Մանուկյանը («Ավանգարդի» խմբագիրներից), Խաչիկ Նազարյանը (սիրված ժուռնալիստ և քաղաքախատող)... և էլի շատ ուրիշներ:

Հազարից ավելի հերոսներ կան այս մատյանում՝ հայ մշակույթի համեստ երախտավորներ, մարտական շքանշաններով ու մեդալներով պարգևատրված հայ քաջորդիներ: Քանի՞ քանիսը նրանցից խոցվեցին մինչ Բեռլինի գրավումը, մինչ 1945 թ. Մայիսի 9-ի մեծ հաղթանակը...

Այդ ասպետներից ոմանց գիտեմ, իմ տարեկիցներն էին, իմ ընկերները... Չկան... Չեկան... Զոհվեցին...

Երազանքնե՞ր... Կարոտնե՞ր... Անեծքով ու հառաչանքով չէին նրանք հեռանում կյանքից, այլ՝ սրտառուչ «Մնաք բարո՞վ, մնաք բարո՞վ...» մաղթանքներով: Սրա հետ՝ «Վրե՞ժ, սուրբ վրե՞ժ»... Սա էր նրանց վերջին խոսքը:— «Զամուսնանաք, աղջիկնե՛ր, մինչև որ մենք ետ գանք տուն»:— Ետ չեկան: Աչքերը ճանապարհներին մաշող աղջիկները... ծերացան:

— Ապրեցե՛ք, որ ոչ մի երգ էլ անկատար չմնա...

— Կյանքս կտամ, հողս՝ երբեք...

Սասուն Գրիգորյանի այս մատյանը նորից է հիշեցնում ապրողներիս, որ պատերազմը մեծագույն չարիք է մարդկության համար: Բռնեցեք Պատերազմի արյունոտ բազուկը և ոլորեցեք:

Այո՝ մուսաները չլռեցին: Նրանք հիմա էլ մեզ հետ են ու՝ ընդմիշտ:

Շնորհակալությո՛ւն, գրչեղբա՛յր Սասուն, քո կերտած այս հուշակոթող Մատյան-Պատկերասրահի համար, քո ազնիվ ջանքի և նվիրումի համար:

ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ

Սոցիալիստական աշխատանքի հերոս,
ԽՍՀՄ Գերագույն խորհրդի դեպուտատ,
Հայրենական մեծ պատերազմի վետերան

4 ապրիլի 1986 թ.
Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խոսք ընթերցողիս (հեղինակի կողմից) . . . 3

ԵՍ ԵՐԳԵԼՈՎ ԿՈՒԶԵՄ ՄԵՌՆԵԼ

Հայ կոմպոզիտորները և երաժիշտները հանուն հայրենիքի)

Որ ինչեց ռազմի շեփորը . . . 7

ՈՒՀԱԾ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ

ս երգելով կուզեմ մեռնել (Թունիկ Հովհաննիսյան) . . . 25
ոմպոզիտորի կոմպոզիտոր որդին (Հրաչյա Մելիքյան) . . . 34
աշնամուրը բաց մնաց (Միքայել Զաղալյան) . . . 38
բալինի սիրած աշակերտը (Կոնստանդին Շիլտով) . . . 43
թսունից մեկը (Ստեփան Տերտերյան) . . . 45
ազախստանը չի մոռանա երբեք (Հովհաննես Նադիրյան) . . . 49
ցախցի կոմպոզիտորը (Անդրանիկ Պախարյան) . . . 53

ՈՒՀԱԾ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ ԵՎ ՄԵՆԱԿԱՏԱՐՆԵՐ

սագոտիստ և կլարնետիստ եղբայրները (Սամվել և Միքայել Ավետիսյաններ) . . . 55
Մենք ձեզ հետ ենք միշտ (Դանիել և Հակոբ Բանդուրյաններ) . . . 56
ղջիկը վերականգնում է հոր դիմանկարը (Արմենակ և Սերյոժա Էլոյաններ) . . . 59
սշնակահար մանկավարժը (Վալենտին Իգրաիլով) . . . 63
պի բարձունքը մահի ու փառքի (Պարույր Իսահակյան) . . . 64
հաղթանակից հետո կգամ (Ռաֆիկ Մեհրաբյան) . . . 73
ոչ մի երգ էլ անկատար չմնա (Սուրեն Միրզոյան) . . . 75
ակի փոխարեն ավտոմատն էր ձեռքին (Գագիկ Ջալալբեկյան) . . . 77
ցի, յարս տարան (Կարո Մնդոյան) . . . 78
ո իմացա, որ հայր եմ արդեն (Սիմակ Ռամազյան) . . . 80

ՀԻՇԱՏԵՂԵԿԱՏԱՌ

ԳՐ թիկունքում և ռազմաբեմում (երաժշտական հուշաթերթիկ-մատենագիտություն) . . . 83
ուշացանկ ՀՄՊ-ում զոհված հայ կոմպոզիտորների, երաժիշտների և երաժշտական մշակույթի երախտավորների . . . 91
ուշացանկ ՀՄՊ-ին մասնակից և 1941—1945 թթ. խորհրդային բանակում ծառայած հայ կոմպոզիտորների, երաժիշտների և երաժշտական բնագավառի երախտավորների . . . 92
Հուշացանկ ՀՄՊ-ում զոհված ԽՍՀՄ կոմպոզիտորների միության անդամների և անվանի երաժիշտների . . . 92

ԿՏԱՎՆԵՐԸ ՄՆԱՑԻՆ ԱՆԱՎԱՐՏ

(Հայ նկարիչները թիկունքում և ռազմաճակատում)

Շիկացած ներկապնակ . . . 95

ՋՈՒՀԱԾ ՆԿԱՐԻՉՆԵՐ ԵՎ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՆԵՐ

Կյանքս կտամ, հողս՝ երբեք (Սարգիս Ալեքսանյան) . . . 127
Շահաբցի նկարիչը (Մլնաս Անտոնյան) . . . 132
Երկու եղբայրներն էլ զոհվեցին (Ներսես և Բենիկ Խոշաբցյաններ—Իսրայելյաններ) . . . 132
Չհասցրեց նկարել սիրած աղջկան (Վանիկ Կարապետյան) . . . 135
Ուստա Մանուկը (Մանուկ Հարությունյան) . . . 137
Ռազմասերը (Ռազմասեր Հարությունյան) . . . 139
Սաքոյին չմոռանաք (Սարգիս Հովհաննիսյան) . . . 141
Լեյտենանտ նկարիչը (Ջորիկ Մադաթյան) . . . 142
Որ Հրազդանը չլացի (Գևորգ Մանդակունի) . . . 145
Թատերական նկարիչը (Կոնստանդին Մարգարյան) . . . 146
Լույսի և գեղեցկության սերմնացանը (Անդրանիկ Մարկոսյան) . . . 147
Քեզ համար, Լենինգրադ (Սահակ Մովսիսյան) . . . 149
Երեք նկարիչ մի տանից (Սուրեն Սարգսյան) . . . 152
Թամանցի Վանիկը (Վանիկ Սևաչերյան) . . . 154
Գուլների վարպետը (Կորյուն Սիմոնյան) . . . 156
Կրունկ Լևոնը (Լևոն Տոնականյան) . . . 164
Ընկերոջս եղբայրը (Սուրեն Ադամյան) . . . 167
Ցուցահանդեսից մի ուշանա (Ջազիկ Ալթունյան) . . . 169
Ստավրոպոլում նրան լավ գիտեն (Սուրեն Ավագյան) . . . 174
Հարսանեկան սեղանը չբացվեց (Սերոբ Անծարակյան) . . . 175
Բեմանկարչին ներկայացնում են քույրերը (Գևորգ Բաբայան) . . . 178
Էսպերանսը (Էսպերանս Բալազգյան) . . . 179
Դիմանկար ըստ հուշատետրի (Համլետ Գևորգյան) . . . 182
«Ավարայրի» նկարիչը (Հայկազ Գրիգորյան) . . . 185
Երնեկ մահը սուտ լիներ (Հակոբ Եկմալյան) . . . 186
Սիրուն Լևոնը (Լևոն Թոթովենց) . . . 187
Չհասցրեց ցուցահանդես բացել (Բաբկեն Գևորգյան) . . . 189
Անավարտ դիմանկարներ (Դեդուշ Արշակունի, Գաբրիել Գաբրիելով, Հակոբ Հակոբյան և ուրիշներ) . . . 195

ՀՈՒՇԱՏԵՂԵԿԱՏՈՒ

Հուշացանկ զոհված Նկարիչների՝ Հայաստանի պետական պատկերասրահում պահպանվող ստեղծագործությունների 197
Հուշացանկ զոհված հայ նկարիչների 198
Հուշացանկ ՀՄՊ-ի մասնակից և 1941—1945 թթ. Խորհրդային բանակում ծառայած Հայաստանի Նկարիչների միության անդամների և հայ նկարիչների 198
Հուշացանկ ՀՄՊ-ում զոհված ԽՍՀՄ ՆՄ անդամ նկարիչների և արվեստագետների . . . 199

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ ՌԱԶՄԱԲԵՄ

(Ջինվոր՝ թե բեմում, թե մարտադաշտում)

Հարցազրույց Վարդան Աճեմյանի հետ . . . 203
Հայրենի հողը ռազմաբեմ 205
Հայ կինոգործիչը ընդդեմ ֆաշիզմի . . . 221

ՋՈՒՀԱԾ ԴԵՐԱՍԱՆՆԵՐ ԵՎ ՌԵԺԻՍՈՐՆԵՐ

Վեցը՝ մի տանից (Արտավազդ Աբգարյան) . . 232
Երկխոսություններ դիմանկարի համար (Գրիգոր և Թևադրոս Ասրյան եղբայրներ) . . . 236
Տելուշը (Տելուշ Գևորգյան) 242
Զապաև Հայկը (Հայկ Եղոյան—Մանվելյան) . . 243
Քանի դերեր թողեց անկատար (Արտավազդ Խալաթյան) 246
Մշեցի Հայկը (Հայկ Խաչատրյան) . . . 249
Օպերատորը չվերադարձավ ստուդիա (Սուրեն Կաֆֆյան) 252
Դերասանի դերասան եղբայրը (Հովհաննես Հայրապետյան) . . . 252
Դերասանը, ռեժիսորը, մարտիկը (Հովսեփ Հովսեփյան) 254
Արձիվները բարձրում են մեռնում (Գուրգեն Մարինոսյան) 255
Դերասանը՝ հրամանատար (Վարդգես Մանասերյան) 258
Քառասունութհազարից մեկը (Ճաքրո Մելքոնյան) 264
Բոլորից սիրված Վազիկը (Վազգեն Մուրադբեկյան) 268
Դերասանը՝ կոմերիտմիության քարտուղար և ռազմիկ (Սահակ Ջառայան) 272
Ճանաչիր քո հորը, Նորա (Ծերուն Սամկրանյան) 275
Դերեր բաշխելիս ինձ չմոռանաք (Կորյուն Սարգսյան) 281
Զոհվեցին հինգից չորսը (Հայկ Քոչարյան) . . 282
Անավարտ դիմանկարներ (Վանյա Դանիելյան, Կամենկին Պավել, Վասիլի Ալեքսեև և Գարիկ Մելիքով) 284

ՀՈՒՇԱՏԵՂԵԿԱՏՈՒ

Հուշացանկ զոհված ռեժիսորների, դիրիժորների, դերասանների, կինոգործիչների և մշակույթի այլ երախտավորների 286
Հուշացանկ ՀՄՊ-ի մասնակից և 1941—1945 թթ. խորհրդային բանակում ծառայած ռեժիսորների, դիրիժորների, դերասանների, թատերագետների և մշակույթի այլ երախտավորների 286
Հուշացանկ ՀՄՊ-ի մասնակից՝ կինոյի և հեռուստատեսության ռեժիսորների, օպերատորների և կինոմշակույթի այլ երախտավորների . . . 287

ԵՂԵԳՆՅԱ ԳՐՉՈՎ ԵՐԳԵՑԻ ՓԱՌՔԵՐ

(Հայ լրագրողները Մեծ հայրենականում)

Գրչով և զենքով 291

ՆՐԱՆՔ ՋՈՒՀԵՑԻՆ ՋԵՆՔԸ ՁԵՌՔՆԵՐԻՆ

Մի բարի անուն (Դրաստամատ Գրիգորի Առաքելյան) 298
«Ավանգարդի» Արտեմը (Արտեմ Եղիշի Բադալյան) 301
Բյուրականի որդին (Սերոբ Ավագի Գևորգյան) . 302
Ղազար Փարպեցու համագյուղացին (Մամիկոն Եղիշի Գրիգորյան) 303
Ի՞նչ պապեր ենք մենք ունեցել, ի՞նչ պապեր (Գալուստ Գրիգորի Դանիելյան) 305
Կգամ հաղթանակով (Մանվել Հարությունի Երեմյան) 307
Ես միշտ արթուն եմ... (Գրիգոր Գևորգի Ջոհրաբյան) 307
Սովինֆորմբյուրոյի թղթակիցը (Մկրտիչ Հովհաննեսի Լիլոյան) 309
Առանց մահվան սարսափի (Սոկրատ Նիկոլայի Խաչատրյան) 310
«Ավանգարդի» Վարդանը (Վարդան Գրիգորի Կարապետյան) 311
Կապրենք նոր ու երջանիկ կյանքով (Բագրատ Առաքելի Հակոբյան) 313
Գորիսեցի Միկիտը (Միկիտ Սամսոնի Հակոբյան) . 314
Ռաֆֆու համագյուղացին (Իսրայել Սահակի Հասրաթյան) 315
Մարդը մեռնում է, երբ էլ չի հիշվում (Սուրեն Օքսինյան) 317
Այս հողում շատերն են հանգչում (Ալիկ Ոսկանի Հովհաննիսյան) 318
Խմբագիրն էլ զինվոր է (Գուրգեն Բեգլարի Հովհաննիսյան) 319
«Սովետական Հայաստանի» խմբագիրը (Ներսես Հարությունի Պողոսյան) 321
Լուսանկարներով և նամակներով ծանաչվող հայրը (Հայկ Սեդրակի Ճշմարիտյան) 322
Լիտվական հողը՝ վերջին հանգրվան (Բենիամին Կարապետի Մուրադյան) 331
Նա եղել է «Ավանգարդի» խմբագիրը (Մկրտիչ Խաչատուրի Մանուկյան) 333
Ալ-Մարտինը (Ալեքսանդր Մեսրոպի Մարտիրոսյան) . 334
Օշականցի Սիմոնը (Սիմոն Ասատուրի Միրիջանյան) . 336
Խութեցի Խաչիկը (Խաչիկ Ղանդիլի Նազարյան) . 337
«Բանվոր» Լյուդվիգը (Լյուդվիգ Գևորգի Պետրոսյան) 339

Թուխ աչքերով, ոսկե սրտով տղան (Անդրուշ Երանոսի Սարգսյան) 342
Նամակը՝ վերջին թղթակցություն (Հովնան Կոստանի Սարգսյան) 343
Ես հազար հոգով ապրում եմ հիմա (Արամայիս Բարխուդարի Սարուխանյան) 344
«Հայրենիքը» (Մնացական Ավագի Սիմոնյան) . 345
Լեռնագործների կենսագիրը (Վաղարշակ Ղազարի Վարդանյան) 348
Եթե զոհվեմ էլ, գիտեմ, թե ինչու (Ռուբեն Արշակի Փորսուղյան) 351
Երկու կյանք և մի սեր (Համբարձում Հակոբի Օհանյան) 353
«Սովետսկի սպորտի» հայ թղթակիցը (Վլադիմիր Օրբելով) 355

ՆՐԱՆՔ ԽՄԲԱԳՐԵԼ ԵՆ ՌԱԶՄԱԾԱԿԱՏԱՅԻՆ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

Խաչիկ Անդրեյի Աբեղյան 358
Սուրեն Սարգսի Գրիգորյան 359
Մովսես Մանուկի Գրիգորյան 361
Գառնիկ Դրաստամատի Իսահակյան 362
Արշավիր Մնացականի Հակոբյան 363
Արամայիս Նավասարդի Մնացականյան . . . 365
Սիմոն Սարգսի Նալբանդյան 366
Վարդան Գալուստի Վարդանյան 369
Գուրգեն Խաչատուրի Հարությունյան . . . 370

ՀՈՒՇԱՏԵՂԵԿԱՏՈՒ

Հուշացանկ ՀՄՊ-ի տարբեր ռազմաճակատներում լույս տեսնող հայերեն թերթերի և զինքաղիրատի ստեղծագործական հայ անշնակազմի . . 373
Հուշացանկ ռազմաճակատային մամուլում ծառայած ԽՍՀՄ ԳՄ հայ անդամների . . . 374
Հուշացանկ ՀՄՊ-ում զոհված հայաստանցի լրագրողների 375
Հուշացանկ ՀՄՊ-ի մասնակից և 1941—1945 թթ. խորհրդային բանակում ծառայած ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ հայաստանցի լրագրողների, հրատարակչության, հեռուստառադիոյի և մամուլի այլ օրգաններում աշխատողների . . . 375

ՀԱՎԵԼՎԱԾ՝ հուշացանկ ՀՄՊ-ին մասնակից հայ ծարտարապետների 378
ՀՈՒՇԱԳՐՅՈՒՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ . . . 379
ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ. Սրբազան հիշատակների նշխարարան—Սերո Խանզադյան 385

Գիտա-փաստագրական հրատարակություն

Սասուն Սերոբի Գրիգորյան

ՄՈՒՍԱՆԵՐԸ ՉԼՌԵՑԻՆ

(Հայաստանի մշակույթի գործիչները 1941—1945 թթ. ՀՄՊ-ում, զոհված հայ արվեստագետներ)

Գիրք առաջին

Պատմա-փաստագրական հոդվածներ, ակնարկներ, վավերագրեր և մատենագիտություն

Երևան, «Խորհրդային գրող» հրատարակչություն, 1989 թ.

Научно-документальное издание

Сасун Серопович Григорян

МУЗЫ НЕ СМОЛКЛИ

(Деятели искусств Армении в ВОВ 1941—1945 гг., погибшие армянские искусствоведы)

Книга первая

Историко-документальные статьи, очерки, документы и библиография

Ереван, издательство «Хорурдаин грох», 1989

На армянском языке

Խմբագրության վարիչ՝ **Ս. Ա. Խաչատրյան**
Խմբագիր՝ **Լ. Լ. Սիմոնյան**
Նկարիչ և գեղ. խմբագիր՝ **Հ. Մ. Կարապետյան**
Մակետը և տեխ. խմբագրությունը՝ **Է. Հ. Ծանծապանյանի**
Վերստուգող սրբագրիչ՝ **Ա. Ս. Աբրահամյան**

ԻԲ № 5892

Հանձնված է շարվածքի 16.03.89 թ.: Ստորագրված է տպագրության 30.X 1989 թ.: ՎՖ 00131: Ֆորմատ 84×108 1/16: Թուղթ՝ օֆսեթ: Տառատեսակ՝ Նորք, Արմենուհի: Տպագրություն օֆսեթ, 41,16 պայմ. տպ. մամ. 123,48 պայմ. ներկ. թերթ. 36,5 հրատ. մամ. + 37 թ. ներդիր: Տպաքանակ 30000 (1—15000 1-ին թող.): Պատվեր 396, Գինը՝ 5 ռ. 60 կոպ.:

«Խորհրդային գրող» հրատարակչություն, Երևան-9, Տերյան փ. № 91:
Издательство «Хорурдаин грох», Ереван-9, ул. Теряна, 91

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի գունավոր տպագրության տպարան, Երևան—82, Ծովակալ Իսակովի պող. 48:

Типография цветной печати Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР Ереван-82, пр. Адмирала Исакова, 48.